ՊԱՏՄԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Copyright by « LA RENAISSANCE »
73, Avenue des Champs-Elysées — PARIS (8e)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

Ն. ԱԴՈՆՑ

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

★

Լոյս ընծայեց

Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ

1948
ՊԱՐԻՍ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

(1875—1942)

Հայ անուանի գիտնական պրոֆ. Նիկ. Ադոնց ծնուել է Զանգեզուր գաւառի Բռնակոթ գիւղում 1875թ. յունուար 23ին: Իր նախահայրն է եղած Բաֆֆու «Դաւիթ Բէկ» վէպի հերոս Տէր-Աւետիք քահանան, եւ Թիֆլիզի գիմնազիոնում ուսանելու ժամանակ Ն. Ադոնց կրել է Աւետիքով (Աւետիքեան) ազգանունը:

Նախնական կրթութիւնը հանգուցեալը ստացել է Տաթեւի ծխական դպրոցում, իսկ յետոյ գնացել է Էջմիածին եւ մտել Գէորգեան ճեմարանը: Հակառակ որ երկար չէ մնացել ճեմարանում եւ նրա լրիւ դասընթացը չէ աւարտել, Էջմիածնում տիրող մթնոլորտը դրել է իր կնիքը ապագայ գիտնականի ու հանրային գործիչի վրայ եւ գծել նրա կեանքի հետագայ ուղին:

1891 թուին Ն. Ադոնց թողնում է ճեմարանը եւ մեկնում Թիֆլիզ, որտեղ մէկ տարի պատրաստուելուց յետոյ, մտնում է ռուսական գիմնազիոնի 6րդ դասարանը: 1894 թուին յաջողութեամբ աւարտում է այդ դպրոցը եւ գնում Պետերբուրգ, շարունակելու իր բարձրագոյն ուսումը համալսարանի պատմա-բանասիրական եւ արեւելեան լեզուների ֆակուլթէներում: Պետերբուրգում Ն. Ադոնց աշակերտում է յայտնի պրոֆեսոր Ն. Մառին, որի ղեկավարութեան տակ խորանում է իր ընտրած մասնագիտութիւնների (հայոց պատմութիւն եւ բանասիրութիւն) մէջ եւ, խրախուսուած իր ուսուցչի քաջալերանքներով, վերջնականապէս որոշում է նուիրուել հայագիտութեան: 1899 թուին, դեռ պետական քննութիւնները չտուած, ներկայացնում է ֆակուլթէի յայտարարած մրցանակին իր մէկ ուսումնասիրութիւնը Հայկական յայսմաւուրքների եւ վարք սրբոցների մասին եւ արժանանում ոսկենշանի: Համալսարանը աւարտելուց յետոյ, Ն. Մառի միջնորդութեամբ, ընտրւում է ֆակուլթէի կողմից գիտական թեկնածու եւ պատրաստւում է պրոֆեսորութեան համար: Այս նպատակով Ն. Ադոնց մեկնում է արտասահման կատարելագործելու իր ուսումը: 1899 թուի աշնանը նա հաստատւում է առժամապէս Միւնխենում, որտեղ հետեւում է համալսարանի բանասիրական եւ բիւզանդագիտական դասընթացքներին եւ աշխատում նաեւ քաղաքի մատենադարանում: Միւնխենից անցնում է Պարիս եւ ապա Լոնդոն ու Վենետիկ: Երկու տարի արտասահման մնալուց յետոյ, վերադառնում է Պետերբուրգ եւ շարունակում իր գիտական աշխատանքները:

1903թ. կատարում է մի ոչ երկարատեւ ճամբորդութիւն դէպի Կովկաս։ Թիֆլիզում գտնուած ժամանակ կատարելագործում է իր սովրած վրացերէնը, մասնաւոր դասեր առնելով քաղաքի վրացի մէկ քահանայից։ Այնտեղից անցնում է Էջմիածին, օգտուելու համար Մատենադարանի ճոխ ձեռագրներից։ Այստեղ առաջարկ է ստանում մնալ Էջմիածնում եւ դառնալ դասախօս Գէորգեան Ճեմարանում, բայց չի ընդունում այդ առաջարկը։

Անհրաժեշտ նիւթերը ամբարած՝ Ն. Ադոնց վերադառնում է Պետերբուրգ եւ ձեռնամուխ լինում պատրաստելու իր «Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում» («Армения въ эпоху Юстиніана») թէզը, մագիստրոսի գիտական աստիճան ստանալու համար։ 1908 թուին երիտասարդ գիտնականը փայլուն կերպով պաշտպանում է Արեւելեան լեզուների ֆաքիւլթէի առջեւ իր վերոյիշեալ թէզը եւ Ն. Մառի ու Ի. Ջալաֆովի ներկայացրած նպաստաւոր եզրակացութեանց հիման վրայ ստանում է հայկական բանասիրութեան մագիստրոսի աստիճան եւ իրաւունք՝ դասախօսելու համալսարանում, իբրեւ պրիվատ-դոցենտ։

«Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում», որ գրուած եւ հրատարակուած է ռուսերէն լեզուով, մի մեծածաւալ աշխատութիւն է, երկու մասից բաղկացած։ Առաջին մասը նուիրուած է Արեւմտեան կամ Բիւզանդական Հայաստանին, իսկ երկրորդը՝ Արեւելեան կամ Պարսկական Հայաստանին։ Գրքի սկզբի էջերում հեղինակը պատմականն է տնում Հայաստանի բաժանման եւ գծում երկու Հայաստանների սահմանը։ Ապա անցնում է Արեւմտեան Հայաստանի քաղաքական աշխարհագրութեան եւ ճշտում է Ա. Բ. Գ. եւ Դ. Հայքի սահմանները, ինչպէս նաեւ մեծ քաղաքների եւ աւանների տեղագրութիւնը։ Շարունակութեան մէջ վեր է լուծում Յուստինիանոսի քաղաքացիական եւ զինուորական «բարենորոգումները», որոնք, ինչպէս ցոյց է տալիս Ն. Ադոնց, ուրիշ նպատակ չունէին, բայց եթէ Հայաստանի հելլենացումը։ Աշխատութեան երկրորդ մասը նուիրուած է Պարսկական կամ Արեւելեան Հայաստանին, որտեղ շարունակում է իշխել նախարարական կարգուսարքը։ Ն. Ադոնց կանգ է առնում Մարզպանական Հայաստանի վարչական վիճակի վրայ եւ որոշում է նրա սահմանները։ Ապա անցնելով նախարարական կարգին, քննութեան է ենթարկում նախարարութիւնների քանակը, նրանց սահմանները եւ տեղագրութիւնը եւ ծանրանալով նախարարութիւնների ծագման հարցի վրայ, պարզում է նրանց տոհմական եւ աւատապետական հիմերը։ Այս վերջին գլխում ուսումնասիրութեան նիւթ դարձնելով հայ աւատապետութեան հարցը, մանրամասն վերլուծութեան է ենթարկում նրա էութիւնն ու առանձնայատկութիւնները։

Ն. Ադոնցի երկրորդ մեծ գործը իր դոկտորայի թէզն է՝ «Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները» («Діонисій Ѳракійскій и армянскіе толкователи»), որ նա ներկայացնում է ֆաքիւլթէին 1915թ. եւ հրապարակային փայլուն պաշտպանութիւնից յետոյ, ստանում է 1916 թուին

հայկական բանասիրութեան դոկտորի գիտական աստիճան և կարգւում համալսարանի պրոֆեսոր։ Գիտական մեծ արժէք ներկայացնող այս գործը, որ բաղկացած է 307 մեծադիր էջերից, հրատարակուած է նոյնպէս միայն ռուսերէն լեզուով։

Մինչեւ 1917 թուի համայնավարական յեղաշրջումը Ն. Ադոնց ապրում է մշտապէս Պետերբուրգում, դասախօսելով համալսարանում եւ աշխատակցելով ռուս եւ հայ գիտական պարբերաթերթերում իր մասնագիտութեան վերաբերեալ նիւթերի շուրջը գրուած մենագրութիւններով։ Պէտք է ասել, որ վերը մատնանշած երկու թէզերից զատ, հանգուցեալի գիտական գրեթէ բոլոր աշխատութիւնները կարճ մենագրութիւնների բնոյթ են կրում. մի հանգամանք, որ Ն. Ադոնց ինքը բացատրում էր Ն. Մառի դպրոցի ազդեցութեամբ։

Տալ այստեղ ցանկը հանգուցեալ պրոֆեսորի գիտական աշխատասիրութիւնների՝ աւելորդ ենք համարում, քանի որ Մելգոնեան Ֆոնդի Ցանձնախումբի հրատարակութեամբ լոյս տեսած Ն. Ադոնցի Հայոց Պատմութիւն (Histoire d'Arménie) ֆրանսերէն հատորի մէջ տպուած կենսագրական ակնարկը՝ գրուած մեր կողմից, վերջանում է մեծանուն գիտնականի գլխաւոր գործերի ցանկով եւ միւս կողմից, Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ»ի 1947թ. մայիսի գրքոյկում զետեղուած է նրա աշխատասիրութիւնների ամբողջական ցուցակը։

1917 թուի համայնավարական յեղաշրջումը վերջ դրաւ մեծ գիտնականի պետերբուրգեան շրջանի գործունէութեան։ 1920թ. ապրիլին նա անցնում է արտասահման եւ, մօտ մէկ տարի, Լոնդոն մնալուց յետոյ, հաստատւում է Պարիսում։ 1930ին հրաւիրւում է Բրիւսել, ստանձնելու այնտեղի Ազատ Համալսարանի հայոց լեզուի ու գրականութեան եւ բիւզանդագիտութեան ամբիոնները։

Արտասահմանում եւս, չնայած նիւթական ծանր պայմաններին, Ն. Ադոնց շարունակում է իր գիտական գործունէութիւնը։ Պարիս եւ Բրիւսել եղած ժամանակ տպագրում է հայերէն եւ օտար (գլխաւորապէս ֆրանսերէն) լեզուներով հրատարակւող պարբերաթերթերում մի շարք ուսումնասիրութիւններ հայագիտական եւ հայ-բիւզանդական յարաբերութիւնները շօշափող նիւթերի շուրջը, ձեռք բերելով միջազգային չափանիշով գիտնականի համբաւ։ Իր գլուխ գործոցը պիտի ընդունէր «Հայոց Պատմութիւնը», որ սկսեց գրել ֆրանսերէն իր կեանքի վերջին տարիներին։ Վաղահաս մահը, որ տեղի ունեցաւ Բրիւսել 1942 թուի յունուար 27ին, չթոյլատրեց որ աւարտուի այս գործը։ 1946ին Պարիսում լոյս տեսաւ Հայոց պատմութեան նախնական շրջանին նուիրուած մասը։

Մեր նպատակից դուրս է, կենսագրական այս ակնարկի մէջ, տալ վերլուծութիւնը Ն. Ադոնցի ձգած գիտական ժառանգութեան։ Այդ կ'անեն, անշուշտ, մասնագէտները՝ բանասէր եւ պատմագէտ։ Բայց

իբրեւ տպաւորութիւն, ստացած հանգուցեալի երկերի ընթերցումից եւ գիտական զանազան հարցերի շուրջը տարիներ շարունակ նրա հետ ունեցած զրոյցներից, պիտի յայտնեմ, որ իր ամբարած հսկայածաւալ պաշարով, ձեռք բերած նիւթը մշակելու առանձնայատուկ մէթոդով եւ սեփական ու ինքնուրոյն եզրակացութիւնների յանգելու ու դրանք հիմնաւորելու բացառիկ կարողութեամբ Ն. Ադոնց, ապահովաբար, համարուելու է մեր ժամանակուայ հայ ամէնաականաւոր գիտնական – պատմագէտը:

Բայց այս ամէնը չէ: Ն. Ադոնց հայ կեանքի միւս մարզերին անհաղորդ եւ միայն իր մասնագիտութեան խեցիի մէջ ամփոփուած գիտունը չեղաւ երբեք: Նա ունեցաւ իր մասնակցութիւնը հայ հասարակական կեանքի առաջադրած հարցերի քննութեան մէջ, հանդէս գալով իբրեւ պարագլուխ հանրային որոշ հոսանքի: Այն հոսանքը, որին պատկանում էր Ն. Ադոնց և որին մնաց հաւատարիմ մինչեւ իր կեանքի վերջը, հայ կղերա–պահպանողական հոսանքն էր:

Կովկասի նուաճումից յետոյ, ինչպէս յայտնի է, հայերը դարձան ցարերի սոսկական հպատակներ: Ջուրն ընկան ոչ միայն մեր ազգային անկախութեան, այլ նոյնիսկ ազգային–քաղաքական ինքնօրինութեան ծրագրները: Միայն հայ եկեղեցին ստացաւ մի կազմակերպութիւն, որ պարունակում էր ինքնօրինութիւնը հեռաւոր կերպով յիշեցնող տարրեր: Դրա հետեւանքով էլ հայ հասարակական մտքի ճիւղաւորումը տեղի ունեցաւ ոչ թէ պետական–քաղաքական, այլ զեղրաղանցապէս եկեղեցական, զղրոցական եւ մշակութային հարցերի շուրջը: Այս հարցերի նկատմամբ երեւան եկած տարբեր ըմբռնողութիւնները ծնունդ տուին հասարակական տարբեր հոսանքների, որոնցից գլխաւորները եղան կղերա–պահպանողական եւ ազատական հոսանքները: Պայքարը նրանց միջեւ, որ տեղի ունեցաւ մամուլի էջերում եւ սկսուեց Մոսկուայում («Հիւսիսափայլ» եւ «Ճոռաքաղ»), փոխադրուեց այնուհետեւ Թիֆլիս, որտեղ Գր. Արծրունու ազատական օրգանի՝ «Մշակ»ի դէմ դուրս եկաւ Պ. Սիմէոնեանի պահպանողական «Մեղու Հայաստանի»ն եւ ապա Սպ. Սպանդարեանի «Նոր Դար»ը: Գալով հայ մտաւոր միւս կեդրոնին՝ Էջմիածնին, այնտեղ իշխեցին մենատիրաբար հայ կղերա–պահպանողականները եւ այն էլ ոչ միայն պահպանողական Մակար կաթողիկոսի օրով, այլ նաեւ ազատականների քուէներով ընտրուած Խրիմեանի ժամանակ:

Ն. Ադոնց, ինչպէս յիշատակեցինք վերը, բացեց իր աչքերը գիտակից կեանքի առջեւ Էջմիածնի ճեմարանում, որ ամբողջովին գլխաւորում էր կղերա–պահպանողական ուսուցիչների ձեռքին եւ, նրանց ազդեցութեան տակ էլ կազմաւորուեց պատանի ճեմարանցու հոգին ու միտքը: Եւ երբ «հասունութեան վկայականը» գրպանում նա Թիֆլիզից Պետերբուրգ մեկնեց բարձրագոյն կրթութիւն ստանալու համար, արդէն արել էր իր ընտրութիւնը: Ցարերի մայրաքաղաքում նա փնտռեց

ու գտաւ նախեւառաջ Կ. Եղեանին, որ կղերա–պահպանողական հոսանքի ամէնահեղինակաւոր պարագլուխներից մէկն էր: Ն. Ադոնց սերտ յարաբերութիւններ հաստատեց Կ. Եղեանի հետ եւ զործակցեց նրան՝ վարելու համար եկեղեցու շուրջը խմբուած հայ զաղութի զործերը: Երկար տարիներ եղաւ անդամ Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդի, իսկ իշխան Արամելիք–Լազարեւի մահուանից յետոյ, Մոսկուայի եւ Պետերբուրգի հայ համայնքների կողմից ընտրուեց այս վերջինի տեղ հոդաբարձու Լազարեան ճեմարանի:

Բայց վերը մատնանշած պահպանողական եւ ազատական հոսանքների բախման կենտրոնները հեռու էին Պետերբուրգից եւ այդ պատճառով էլ Ն. Ադոնց զործօն մասնակցութիւն չունեցաւ Թիֆլիզում, Բաքուում, Երեւանում եւ Կովկասի հայաշատ միւս քաղաքներում տեղի ունեցող պայքարի մէջ, մի պայքար, որ մղում էին հակառակորդ կողմերը ազգային եկեղեցական հաստատութիւնները եւ հանրային – մշակութային կազմակերպութիւնները իրենց ազդեցութեան ենթարկելու նպատակով:

Գաղափարական պայքարի մէջ, սակայն, նա ունեցաւ իր բաժինը: Իր բազմակողմանի զարգացումը, հրապարակագրի տաղանդը եւ մասնաւորապէս ազգային անցեալի խորահմուտ ծանօթութիւնը նա լիուլի օգտագործեց հիմնաւորելու համար ճշմարտութիւնը պահպանողական հոսանքի գաղափարաբանութեան: «Նոր Դար»ի եւ կղերա–պահպանողական միւս օրգանների մէջ գրած յօդուածներով, ինչպէս նաեւ հրապարակային ելոյթներով նա պաշտպանեց հայ եկեղեցին, հայ հոգեւորականութիւնը, հայ դաւանանքը, գրաբար լեզուն եւ ազգային աւանդութիւնները ազատականների յարձակումների դէմ, որոնցով «Մշակ»ի մարդիկ աշխատում էին նսեմացնել ազգային այդ արժէքների նշանակութիւնը հայ անցեալ, ներկայ եւ ապագայ կեանքում եւ պահանջում էին բարենորոգումներ մտցնել եկեղեցական եւ հանրային կազմակերպութիւնների մէջ:

Երբ յեղափոխական կուսակցութիւնների ստեղծումով դործնապէս դրուեց Հայ Դատի լուծման խնդիրը յեղափոխական միջոցներով, Ն. Ադոնց պահպանողական հոսանքի միւս ներկայացուցիչների հետ միասին, դիրք բռնեց յեղափոխական կուսակցութիւնների, նրանց ուսաջադրանքների եւ, մանաւանդ, զործելակերպի դէմ: Հետագայում իր զաղափարակիցներից շատերը փոխեցին իրենց դաւանանքը, ուղղեցին դարձան ծայրայեղ նպատակներ հետապնդող քաղաքական նորակազմ հոսանքների, բայց նա մնաց հաւատարիմ հայ պահպանողականութեան հիմնական սկզբունքներին մինչեւ իր մահը: 1928 թուին Բոստոնի «Հայրենիք» ամսագրի յունիսի դրքոյկի մէջ տպագրած «Մեծ եղեռնի տարելիցին» իր մէկ յօդուածի մէջ Ն. Ադոնց, քննութեան առնելով հայ ազատագրական շարժման ձախողման պատճառները, յանգում է այն եզրակացութեան, որ տաճկահայ ժողովուրդը՝ «ցնցոտիների մէջ մարմնով և

հոգով», հասունացած չէր այդ ազատագրման համար, որի կոչը, գրում է նա, «դրսեցի էր յղացումով և գործադրութեամբ»: Ն. Ադոնցի տեսակէտով միակ ուղիղ ճանապարհը մինչեւ այսօր էլ մնում է քաղաքական այն շաւիղը, որ գծել է դեռ 18րդ դարում «անդրանիկ յեղափոխական ղօղանջը» անիծող Սիմէոն Կաթողիկոսը, մեր օրերի որակումով՝ այդ յայտնի «հակայեղափոխականը»: «Վաղաժամ էին, գրում է Ն. Ադոնց, եւ Հնչակների ղօղանջը ե՛ւ Դրօշակների ծածանումը»: «Հող եւ ջուր, վարժապետ, քահանայ, հաշտ կեանք, պետական հաւատարմութիւն, համերաշխ դրացիութիւն» — ահա այն ծրագիրը, որ պէտք էր հայ ժողովրդին: Պահպանողական գաղափարները, որ դաւանում էր Ն. Ադոնց, գտել են իրենց արտայայտութիւնը պատմական այն վերլուծումների մէջ, որ անում է նա այս հատորում տեղ գտած իր մի քանի յօդուածներով:

Մեծ գիտնականի, ականաւոր ու չիտակ հրապարակագրի եւ հանրային գործիչի իր անվիճելի կարողութիւններին Ն. Ադոնց միացնում էր նաեւ հմուտ գրականագէտի ձիրքեր: Վկայ իր խմբագրած «Բանբեր Գրականութեան եւ Արուեստի» պարբերաթերթը, որի երկու հատորները լոյս տեսան Պետերբուրգում 1903 եւ 1904 թ.թ. եւ որի հրատարակութեան դադարումը ցաւով պիտի արձանագրուի հայ գրականութեան պատմութեան մէջ: Թէ իր բովանդակութեամբ եւ թէ արտաքին յարդարումով «Բանբեր»ը աննախընթաց երեւոյթ էր իր ժամանակի համար եւ չափազանցութիւն չի լինի եթէ ասենք, որ նմանը չունեցաւ նաեւ հետագային: Ն. Ադոնց «Բանբեր»ի մէջ յայտնաբերեց նախեւառաջ խմբագրի անառարկելի հմտութիւն: Նա կարողացաւ իր շուրջը համախմբել ժամանակի ամէնայայտնի գրողներին եւ, ինչ որ խիստ հաճելի նորութիւն էր, ապահովեց արեւմտահայ գրագէտների մասնակցութիւնը Պետերբուրգում հրատարակուող իր պարբերաթերթին: Միւս կողմից, Գրական նշմարներ ընդհանուր վերնագրի տակ նոյն «Բանբեր»ի մէջ տպագրած իր յօդուածներով, եւ Եֆրոն – Բրոքհաուզ Հանրագիտակում Հայաստան (Армения) բառի տակ գետեղած ընդարձակ մենագրութեամբ, նուիրուած հայ պատմութեան եւ գրականութեան, ինչպէս նաեւ «Պէշիկթաշլեան եւ կցորդ խնդիրներ» («Հայրենիք», 1931 թ. յուլիս) յօդուածով, ցոյց տուաւ, որ լեզուական եւ պատմական հարցերի հետ միասին իւր եւ լայն ծանօթութիւն ունի նաեւ օտար եւ հայ գեղարուեստական գրականութեան ու գրադատութեան մասին:

Մեծ գիտնական, հմուտ հրապարակագիր ու գրականագէտ, այլ նաեւ պարկեշտ հանրային գործիչ ու հայրենասէր — ահա այն բազմապիսի յատկութիւնները, որ կենտրոնացնում էր իր մէջ Ն. Ադոնցը:

Ա. Խ.

Ա. ՄԱՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՓԱՌՔԸ.— ՀԻՆ ՀԱՅ ՇԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵՀԱՆՔԸ.— ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

I

Դարերից ի վեր սովորութիւն է դարձած վատաբանել հայ ազգութիւնն իր որպէս թէ հակահասարակական յատկութեան համար: Ներքին խռովութիւններն ու ընդհարումները հասարակական կեանքի ասպարէզում որակւում են միշտ իբրեւ հետեւանք անմիաբան և հակառակիչ ոգու: Անմիաբանութեան համբաւը համարւում է ընդարձակ խորշում մեր ալեւոր ճակատին: Նա ինքն է պատճառ կարծւում և մեր ճակատագրական դժբախտութեանց: Ցան եւ ցրիւ, մանաւանդ ներհակ եւ հակասուն գործունէութիւնն է, որ տանում է մեզ դէպի վտանգների եւ դառնութեան նեղուցները:

Այսպէս էին մտածում հները եւ նրանց հետեւելով՝ նորերը:

Հայ ազնուականութիւնը, երկրի ամենակարեւոր առաջնորդ ոյժը, ներկայանում է մեզ յետնորդներիս հին մատենագիրների մօտ այնպիսի սեւ գծերով, որ միայն հառաչել կարելի է: Երկպառակութիւն, գժտութիւն, դաւադրութիւն, տեսակ տեսակ մեքենայութիւններ հիմն ունենալով եսասիրութիւն, փառամոլութիւն, քսութիւն, ամեն ստորին ձգտում, բայց ոչ հասարակական բարձր խոյացում, — ահա ինչպէս է նկարագրւում նախարարական միջավայրը:

Կողմնակալ գրիչներն ուզում են հաւատացնել յամառօրէն, որ հայ իշխանները այնքան տկարամիտ էին, որ գերադասում էին օտար կուսակալին սեփական թագաւորից եւ կամ նրանց համար աւելի յարգի էին Զունակներն ու Բրքիչոները քան Ներսէս - Սահակները:

Զափազանցութիւնը երբեք առաքինութիւն չէ մանաւանդ մատենագրի համար, որից պահանջւում է անաչառ եւ խոհուն կշռանք: Մեր նախնիք յաճախ մեղանչած են արդարութեան դէմ, աղաւաղելով ժամանակակից իրողութիւնները: Շնորհիւ նրանց միակողմանի եւ թիւր լուսաբանութեան մեզ ներկայանում է անցեալը շատ անգամ որպէս անհատա-

կան սանձարձակութեանց ասպարէզ, զուրկ գաղափարական ղեկավար նշանաբաններից:

Հարկաւ հներից չի կարելի սպասել երեւոյթների վերլուծում, անցքերի գնահատում այնպէս, որպէս պահանջում է արդի քննիչ միտքը: Ոչ մատենագիրների տեսակէտը եւ ոչ նոցա յանձնարարականները չեն կարող պարտադիր համարուել մեզ համար: Նրանց յայտարարութիւններն անգամ յարգի են լոկ իբրեւ կուսակցական ապրումների արդիւնք:

Եթէ պատմական ստոյգ իրողութիւնների վրայից հանենք այն պատրանքը, որ պատկանում է մատենագիրների անձնական տեսութեան, եւ հետեւենք անցքերի յաջորդական ելեւէջներին, կը տեսնենք, որ նրանց հիմը կազմում են երկու քաղաքական գործելակերպ, երկու ուղղութիւն, ձգուած ամբողջ դարեշրջանի երկարութեամբ: Հայրենասէրներ եւ դաւաճաններ չէին եւ ոչ էլ բարեմիտ եւ չարագործ ոյժեր, որ դէմ առ դէմ կանգնած պայքարում էին ընդգրկած ուղիների վրայ: Երկու խոշոր հոսանքներ էին, որ ձգտում էին միեւոյն նպատակին տարբեր միջոցներով, միեւնոյն մարմնի հարազատ հատուածներ, բռնուած նոյն քաղաքական տենդով:

Ի՞նչ էր նրանց գաղափարական ինքնորոշումը:

Հարցս միայն տեսական չահ չունի: Թւում է, որ հին դարերի քաղաքական հոսանքները մի տեսակ նախաչուիղներ են նոր ժամանակուայ մեր կուսակցական խմորումների:

Ասել է թէ ազգային մտայնութիւնը քաղաքական մեծ հարցի հանդէպ մնացել է հաւատարիմ հնութեան աւանդներին: Հաւատարմութիւնը բնաւ գիտակցական չէ այս դէպքում, այսինքն, նա արդիւնք չէ հին ուղիների ծանօթութեան: Նման պարագաներն են, որ ծնել են նման հոգեբանութիւն և նման քաղաքական տրամադրութիւն ու ուղեգիծ, հին եւ նոր ժամանակները:

Անցեալում ունինք մի լայն շրջան, որ իր քաղաքական տոգորումներով նման է մեր տակաւին թարմ ազատագրական շարժման եւ խրատական՝ շատ նկատումներով:

* * *

Իններորդ դարի կէսերին իրականացաւ Հայի քաղաքական երազը: Հայաստանի մի մասը, փոքր բայց կարեւոր բաժինը, ազատւում էր արաբական լծից:

Այն արիւնը, որ թափեցին Հայերը վերջին անգամ Արշակունի թագի պաշտպանութեան համար, ուղիղ չորս դարով էր անջատուած երջանիկ օրից, երբ կորցրած թագը գալիս էր զարդարելու Բագրատունի իշխանի գլուխը:

Աշոտը իրաւունք ունէր տօնելու իր յաղթանակը տակաւին 861 թուին:

Չորս դարը խաղաղութեան, անոյշ քնի ոսկէ ժամանակամիջոց չէր: Գրեթէ անընդհատ պատերազմների, խռովքի, անկումի եւ ամբարձի փոթորկալից շրջան էր: Ի՞նչ գործօն եւ կամ ղեկավար ոյժեր կային հրապարակի վրայ եւ ի՞նչպէս էին դասաւորուած ձգտելի նպատակի հանդէպ: Նրանք տարբեր էին քան այժմեան ուժերը, ինչպէս եւ տարբեր է այն ժամանակուայ եւ արդի հայ հասարակական կեանքի կառուցուածքը:

Յայտնի է, որ հին Հայաստանում տիրող իրաւակարգն էր ֆէոդալականութիւնը կամ հայ բառով նախարարութիւնը:

Շատերը կարծում են, որ նախարարական կարգը մեծ չարիք էր մեր երկրի համար: Արդարութիւնն ընդդէմ է այս կարծիքին: Այսպէս մտածել, նշանակում է բռնանալ պատմութեան վրայ, մեղանչել իրականութեան դէմ եւ ոտնահարել պատմական հեռանկարները: Ֆէոդալականութիւնն ընդունուած էր ամբողջ իրանական քաղաքակրթութեան լայնատարած աշխարհում եւ նրա հասարակական եւ քաղաքական կազմակերպութեան հիմն էր: Արդ ոչ միայն իրանական պետութեանց, այլ եւ Իրանի քաղաքակրթութեան ստեղծող ոյժը, ինչպէս հեղինակաւոր իրանագէտներն են կարծում, հէնց նոյն ֆէոդալ իրաւակարգն էր: Նրա քայքայմամբ տապալւում, կործանւում է պարսկական այն բարձր քաղաքակրթութիւնը, որ ծաղկել եւ բարգաւաճել էր Աքիմենեան, Արշակունեաց եւ Սասանեան հարստութեանց ժամանակ: Պարսից ազնուականութիւնն էր այդ քաղաքակրթութեան ստեղծողն ու պահպանողը եւ, երբ նա բնաջինջ եղաւ Արաբների ձեռքով, ընկաւ եւ նրանց գործը:

Նոյնանման դրութեան մէջ էր ե՛ւ Հայաստանը: Քանի որ չէն եւ կանգուն էին նախարարական տները, քաղաքական կեանք կար երկրում: Նրանց անկումով մեր հայրենիքի դրոները մնացին միշտ բաց աշխարհակալների եւ արկածախնդիր հրոսակների առաջ: Արաբները հեշտութեամբ տիրացան Հայաստանի այն մասերին, ուր ազնուականութիւնը գրեթէ անհետացել էր, ծծուելով Բիւզանդական կայսրութեան մարմնի մէջ:

Այսօրուայ գեղջուկ Հայաստանը, կար ժամանակ, որ աշխարհիս ամենից արիստոկրատ երկիրն էր: Քանի՛ քանի

տասնեակ մեծ ու փոքր իշխանական տոհմերը թառած էին Հայոց լեռների կրծքին: Ամեն մէկն ունէր իր անառիկ ամրոցը եւ իր այրուձին, որ է յայտնի թուով հեծեալ մարտիկներ: Այրուձին բաղկացած էր գրեթէ բացառապէս իշխանական ընտանիքների պատկներից եւ մերձաւորներից: Հայ ազատանի, որեւար կամ մանկան ասելով պատմագիրները հասկանում են ազատ դասի որդիներ:

Այրուձին պատմական իմաստով համազօր է արեւմուտքի միջնադարեան chevalierի եւ կազմում է հայ ասպետութիւնը: Միակ մշտական զինուորական ոյժն էր այրուձին ընդդէմ արտաքին թշնամիների եւ հայ աշխատաւոր շինականութեան նեցուկը:

Այս կոչումով հայ նախարարները կարող են քաւել իրենց մեղքերը, եթէ ժամանակակից պահանջկոտ մտքերը հակամէտ են նրանց կեղեքող դաս անուանել:

Հների աչքում նախարարները բարերար պահապաններ էին: Երբ Արաբների նենգութեան դէմ գնաց նախարարական տոհմերի մի խոշոր մասը, ահա թէ ինչ է ասում ժամանակակից պատմագիրը այդ առթիւ. «Բնակիչք աշխարհիս մնացին իբրեւ զխանձող ծխեալ ի հրոյ եւ իբրեւ զօրան փիսրեալ առ ոտն կոխեալ խոզից, թափուր եղեալ աշխարհս Հայոց ի տոհմէ նախարարաց, մատնէին որպէս զոչխարս ի մէջ գայլոց»:

Այս սրտառուչ համեմատութիւնն արդէն բաւական է ինքնին ընդգծելու նախարարութեան պատմական դերը: Նա է երկրի առաջնորդը, առանց որի, ինչպէս առանց հովուի, ոչխարները ընկնում են գայլերի բերանը. նա է ժողովրդի պահապանը, առանց որի ծխում է նա խանձողի նման եւ ինչպէս խուրձը կոխոտւում խոզերի ոտի տակ:

Շնորհիւ մշտապէս սպառազինուած ազնուականութեան, Հայաստանը երբեք այն օրին չի հասել, որ դիմաթաւալ փուսի յարձակման թշնամու առջեւ, ինչպէս տեսանք այդ նախարարութեան անկումից յետոյ: Նրա օրով մեր երկիրը նուաճուած չի եղել բառի բուն իմաստով: Հոռոմ, Պարսիկ, Արաբ եւ Բիւզանդիոն չեն կարող պարծենալ, որ նախարարական Հայաստանը պարտուած դարձել է նրանց սովորական նահանգը: Դարերի ընթացքում հայ ֆէոդալները կարողացան կռուել եւ պահել իրենց դիրքը եւ ազատութիւնը: Նրանց թշնամի պետութիւնները ծանր փորձերից յետոյ ընտելացան մեղմելու իրենց յաւակնութիւնը: Տարեկան տուրք եւ զինուորական օգնութիւն,— ահա այն երկու համեստ յանձնառութիւնները, որոնցով նախարարութիւնը գնում էր իր եւ երկրի ազատութիւնը արտաքին թշնամուց:

Արշակունեաց անկումից յետոյ «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն», ասում է պատմիչը:

Թագաւորի պարտականութիւնը Պարսից վեհապետի հանդէպ կատարում են, ուրեմն, նախարարները: «Գանձն յարքունիս Պարսից երթայր, շարունակում է պատմագիրը, սակայն, այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարաց առաջնորդէր ի պատերազմի»:

Նախարարները յօժար են արքունի գանձը, սովորական տուրքը վճարելու, բայց երբեք յանձնելու այրուձին օտարի ձեռքը: Հրաժարուել այրուձիից, նշանակում է զինաթափ լինել, որ է ինքնասպանութիւն գործել:

Երբ Արաբները խուժեցին Հայաստան է դարում, հայ իշխանները արիաբար դիմադրեցին զէնքով:

Թէոդորոս Ռշտունեաց իշխանը արտասովոր հեռատեսութեամբ զգալով նոր աշխարհակալների անպարտելի հեղեղը, բարւոք համարեց հաշտութիւն կնքել այն պայմանով, որ երկրի ամենէն կարեւոր առնդը, տեղական իրաւակարգը չտուժէ եւ անվրէպ պահպանուի: Նրանից յետոյ Հայերը աւելի նպաստաւոր դաշինք կնքելու պատեհութիւն չեն ունեցել: «Ոչ առնում ի ձէնջ սակ դերեամ մի եւ ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ եւ դուք կամիջիք եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ժե հաղար եւ հաց յաշխարհէն տուք եւ ես սակս արքունի անդարեմ: Եւ հեծեալս յԱսորիս ոչ խնդրեմ, բայց այլ ուր եւ հրամայեմ, պատրաստ լիցին ի գործ. եւ ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս եւ ոչ տաճիկ սպայ ի բազմաց մինչեւ ցմի հեծեալ: Թշնամի մի՛ մտցէ ի Հայս եւ եթէ դայ Հոռոմ ի վերայ ձեր, արձակեմ ձեզ զաւրս յօգնականութիւն, որչափ եւ դուք կամիջիք»:

Արաբների այս գիջող եւ մեղմ ոգին քաղաքական մեծ խորհուրդ ունէր: Զինական ուժերով տակաւին հարուստ Հայաստանի համակրութիւնը քաղել եւ նրա զօրութիւնը լրել ընդդէմ Բիւզանդիայի, իրենց խսկական ախոյեանին, խոհական մեծ քայլ էր Արաբների կողմից:

Հայ նախարարութիւնն անդէտ չէր իր խոշոր հարեւանների քաղաքական նկատումներին: Հասկանում էր իր մէջպետական դրութեան նշանակութիւնը եւ ձգտում էր ե՛ւ արժեցնել իր կարեւորութիւնը ե՛ւ չահաւէտել ոսոխների թշնամութիւնը իւր համար: Հայերը խուլ հանդիսատեսներ չեն եղել Արեւելքի եւ Արեւմուտքի մրցութեան եւ կամայ թէ բռնի խառնուել են նրանց ընդհարումներին:

Թէ որքան կարեւոր էր համարւում Հայի մասնակցութիւնը, վկայ են պատմութիւնը և երէկուայ տակաւին թարմ յիշողութիւնները:

Հայ զէնքի կշիռը ցոլում է մի սքանչելի պատմուածքում, հնութիւնից մեզ հասած: Վասակ Մամիկոնեան, հայ այրուձիի սպարապետը, որ երկար տարիներ մեծ անախորժութիւններ էր պատճառել Պարսից թագաւորին, վերջապէս գերի է ընկնում Պարսից ձեռքը: Շապուհ թագաւորը դառնում է հայ զօրականին հետեւեալ խօսքերով.

«Աղուէս, դու էիր խանգարիչ որ այսչափ աշխատ արարեր զմեզ, դու ես այն, որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, եւ զի՞ գործես. զմահ աղուեսու սպանից զքեզ»:

Քաջարի զօրավարը, Վասակը, թէեւ գերի, պատասխանում է խրոխտաբար. «Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ, զի ցայժմ ես քեզ առիւծ էի եւ արդ աղուէս: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի· մի ոտնս ի միոյ լերին կայր եւ միւս ոտնս ի միոյ լերին կայր: Յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի, յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի»:

Գոռոզ արքան զարմացած, բացատրութիւն է խնդրում: Հայ իշխանը մեկնում է աներկիւղ, որ երկու լեռները Պարսիկ եւ Հոռոմ պետութիւններն են եւ նրանց բախտն է, որ կախուած էր իրենից:

Անձամբ փոքր, բայց հսկայ Վասակը մարմնացումն է հայ մարտական նախարարութեան:

Վիպական հոյակապ պատկերը ցոյց է տալիս, որ հայ իշխանները գերազանցօրէն գիտակցում էին իրենց դերը միջազգային բախումների ժամանակ: Բայց ի՞նչ էր նրանց ուղեգիծը երկու սլաքների միջև, արդեօ՞ք հետամուտ էին սեփական քաղաքականութեան թէ զուրկ ազգային ձգտումներից ճօճւում էին հարեւանների ինքնահաճ հովերից:

Պէտք է խոստովանել, որ ֆէոդալ կարգերը վատ համբաւ ունին գրեթէ ամենուրեք: Հայ նախարարութիւնը, որ նմանապէս ֆէոդալականութիւն է, բնական է, որ մասնակից լինի ե՛ւ նրա թերիներին ե՛ւ վատ անուան:

Անշուշտ, հայ իշխանական մեծութեանց մէջ կային այնպիսիները, որոնց մտքի հորիզոնը աւելի հեռու չէր գնում քան աչքի տեսութիւնը եւ որոնց համար հայրենիքի սահմանները կանգ էին առնում այնտեղ, ուր վերջանում էր իրենց կալուածը: Բայց ընդհանրութիւնն այդպէս չէր: Ինչպէս դասակարգ հայ ազնուականութիւնը ոչ միայն հայրենասիրութիւն եւ ազգային բարձր ձգտումներ ունէր, այլ եւ անձնուիրութիւն եւ կորով հետապնդելու իր ձգտումների իրագործումը:

Հայրենիքի եւ ազգի սէրը մի բնական զգացմունք է, որ բխում է մարդու բնութիւնից իսկ եւ կապուած է անգամ անհատական ինքնասիրութեան, եւ միայն արատաւոր մարդիկ կարող են թափուր լինել այդ զգացմունքից, ինչպէս դատարկ են եւ սեփական արժանապատուութիւնից: Ինքնաճանաչ հասարակութեան համար վէճը հայրենասիրութեան սկզբունքի շուրջ չէ, այլ այն միջոցների եւ գործերի, որով արտայայտւում է սկզբունքը: Ճշմարիտ հայրենասիրութիւնը ուրիշ նպատակ չունի, եթէ ոչ ապահովել հայրենիքին այնպիսի պայմաններ, ուր նա կարողանայ զարգանալ ազատօրէն եւ իր բաժին ծաղիկը բերէ համամարդկային քաղաքակրթութեան փնջին:

Անկաշկանդ բարգաւաճելու ամենակարեւոր պայմանը քաղաքական անկախութիւնն է: Ազատութեան համար մղուած կռիւները եւ ջանքերը գրեթէ կլանում են ազգերի պատմութիւնը:

Հայ նախարարութիւնը եւս ծարաւի էր ինքնուրոյնութեան: Ոչ մի ժամանակ այնքան ճիգ եւ արիւն չէ թափուած օտար լուծը թեթեւացնելու եւ կամ խպառ թօթափելու համար, որքան նախարարական շրջանում:

Երկու տրամադրութիւն էր տիրում առաջնորդող ուժերի մէջ համաձայն երկու ճանապարհի, որ տանում է դէպի քաղաքական տենչանք: Ըմբոստութեան արիւնոտ ուղին եւ խոհեմութեան զգուշաւոր դիրքերը, գործունէութեան տարբեր միջոցներ են, տարբեր դրօշակներ: Սրանց շուրջն էին դասաւորուած երկրի գործօն ուժերը, ղեկավար ունենալով երկու նշանաւոր տներ:

Մի ուղղութեան դրօշակակիրներ էին Մամիկոնեան սխրագործ իշխանները, միւսի՝ ծանրախոհ Բագրատունիները:

Տեսականօրէն երկու հոսանքները միմիանց չեն բացառում, բայց գործնական դետնի վրայ ծնում են բախումներ, աղետալի հետեւանքներով: Այստեղից է եւ Մամիկոնեան եւ Բագրատունի տոհմերի ողբերգական թշնամութիւնը:

Նախարարական շրջանների պատմութիւնը էապէս այս երկու տների պատմութիւնն է:

Բաւական չէ նրանց նկարագիրը տալ: Կ'ուզէի աչքի անցնել թեթեւակի բոլոր նշանաւոր քաղաքական անցքերը, որ տեղի են ունեցել Հայաստանում Արշակունեաց անկումից

մինչեւ Բագրատունիների բարձրանալը: Ամեն ոք ի վիճակի կը լինի անձամբ համոզուելու, թէ ի՞նչ դեր են կատարել երկու դրօշակակիր տները հայ անցեալում եւ ի՞նչ է նրանց ընտանեկան եւ քաղաքական զիմամարտութեան հիմը:

Հայերը դեռ սգի մէջ էին:

Հազիւ սթափուած այն ընդարմացնող հարուածից, որ Պարսիկները հասցրել էին Արշակունեաց գահին, պատասխանատու դասը հետամուտ եղաւ վերականգնելու կորցրած թագը: Վարդանանց եւ Վահանանց կռիւները անդրանիկ փորձերն էին, որ անյաջող անցան:

Նրանց քաղաքական ընոյթը տարակուսանքից դուրս է, թէեւ սքօղուած է եկեղեցական չքեղ շուրջառի տակ: Այդ կեղծ ծածկոցը, որ այնքա՜ն խնամքով եւ ոգեւորութեամբ փռել են ցայժմ մեզ համար սրբազան ձեռքեր, ինքն իրեն վերանում է Վասակի դատի ժամանակ, որպէսզի ցոյց տայ ամբաստանուած մարդու վեհութիւնը իր անկման մէջ, վերանում է, որպէսզի մերկացնէ, ազատէ ճշմարտութիւնը սոսկալի կրքերի բռնութիւնից:

Պարսիկները առանձին փափկանկատութեամբ գահազուրկ Հայոց մարզպանութիւնը յանձնել էին Սիւնեաց իշխան Վասակին, նախարարների մէջ ամենակարող դէմքին: Նրա շրջանում է ծագում ապստամբութեան միտքը:

Հետագայի պատմութիւնը իրաւունք է տալիս կարծելու, որ գործին խառն էր եւ Բիւզանդական դուռը, թերեւս իսկական դրդիչը:

Յազկերտի գահակալութեան առաջին տարիները պարսիկները ասպատակել էին յանիրաւի կայսերական հողերը հակառակ 422 թուին կնքած դաշինքի: Թէոդոս կայսրի խաղաղասիրութիւնն էր պատճառը, որ ապօրինի արշաւանքը ծանր հետեւանքներ չունեցաւ:

Վասակի ծրագիրը կարող էր ներշնչուած լինել Բիւզանդիայից որպէս հակացոյց կամ վրէժ պարսիկներից կրած վիրաւորանքի համար:

Թէոդոս կայսրը մասնակից էր չարժման եւ խոստացել էր օգնութիւն: Վասակը նախապէս ապահովելով թիկունքը Յունաց կողմից, համաձայնութեան էր եկել նաեւ անմիջական դրացիների՝ Վրաց, Աղուանից եւ Աղձնեաց աշխարհների հետ, որպէսզի միահամուռ ուժերով նեռեն պարսկական լուծը:

Սակայն, Թէոդոս կայսրը մեռնում է 450 թուին 28 յունիսի: Ծրագիրը մնում է կախուած օդի մէջ, քանի որ նոր կայսրը, Մարկիանը, չի ուզում Հայերի պատճառով վրդովել խաղաղութիւնը Արեւելքում, մանաւանդ որ քաղկեդոնական վէճերը արդէն սպառնում էին տակնուվրայ անել ամբողջ պետութիւնը:

Այս պայմաններում այլ բան չէր մնում, եթէ ոչ հրաժարուել կամ յետաձգել խռովութեան ծրագիրը: Խոհեմութիւնն էր թելադրում այս նահանջը և՛ խոհականութիւնը, որպէսզի սուրբ գործը չվիժէ անխորհուրդ արկածախնդրութեամբ:

Տարաբախտաբար ուշ էր: Ցուզուած ամբոխը չատ էր յառաջացել եւ արդէն արիւն թափել: Դիւրաբորբոք գլուխները ծանր վիրաւորանք էին հասցրել պարսիկ կրօնաւորներին եւ պետական մեծ ոճիր գործել, աւերելով ատրուշանները եւ ջուրը նետելով սրբազան հուրը: Հրդեհը արդէն վառուած էր:

Խռովարարների գլուխն է անցնում Մամիկոնեան կրտրիճ տունը: «Ամենայն իրք այսպիսի գործոց, ինչպէս վկայում է Մամիկոնեան պատմիչը, ի բնէ յոլով Մամիկոնէիցն ազգաւ եւ նոցա միաբանութեամբ ելեալ էին ի գլուխ» եւ «առանց առաջնորդութեան ազգին այնորիկ եւ ոչ մի ինչ իրք եւ գործք աշխարհիս Հայոց երթեալ էին ի գլուխ»:

Այսպիսով նախարարների ուխտը քակւում է: Ապստամբները բաժանւում են երկու բանակի, մէկն ուզում է շարունակել գործը, միւսը, տեսնելով ձախորդ հանգամանքները, նախագասում է յետ կենալ եւ ամեն ինչ մոռացութեան տալ: Առաջնի ղեկավարներն էին Վարդան Մամիկոնեան եւ Ներշապուհ Արծրունի, երկրորդի՝ Վասակ Սիւնի եւ Տիրոց Բագրատունի:

Ոչ ուրացութեան եւ ոչ դաւաճանութեան մասին խօսք անգամ չի կարող լինել: Երկու կողմն էլ հաւասարապէս հասարակական շահն ի նկատի ունէին: Տարբեր էին նրանց տեսակէտները, երկուսն էլ կասկածելի իրենց առաւելութեամբ:

Ապստամբութեան ծրագիրը հիմնուած էր Արեւմուտքից ակնկալած օգնութեան վրայ: Ունայն յոյս. կայսրը ոչ պակաս փութով քան Պարսիկները վերացրել էր Արշակունեաց թագը Յունական բաժնում: Թեթեւամտութիւն էր յուսալ, որ այդ կայսրը օգնէր Հայերին վերականգնելու կորցրած անկախութիւնը Պարսկական բաժնում:

Ուխտապահների դիրքը աւելի նպաստաւոր չէր: Մի ժողովուրդ որ այնպիսի անտարբերութեամբ վերաբերուեց Արշակունիների վերջին հառաչանքին, անընդունակ էր կամ անկարող նորէն խոյանալու դէպի քաղաքական բարձունքը:

Հայի ոյժերը չէին ներում խրոխտանալ մեծ պետութեան դէմ:

Ուխտանենգները սթափուելով երազներից փրկեցին երկիրը ահեղ փորձանքից, իսկ ուխտապահները մարտիրոսացան, դիտակցօրէն մահը գրկեցին, որ անմահանան եւ օրինակ ծառայեն սերունդներին եւ խրատ՝ բռնաւորին, որ բռնութիւնն էլ իր սահմաններն ունի եւ որ հայ ժողովուրդը չէ ուզում գլորուել մինչեւ ստրկութեան յատակը:

Հայաստանի խռովեալ վիճակը տեւեց գրեթէ տասը տարի մինչեւ գերուած նախարարների դարձը:

Քսան տարի չանցած վերստին աղմկում է երկիրը: Առանձին պատճառ չկար, եթէ ոչ հին վէրքի մորմոքը:

Ժամանակակից պատմիչը գանգատւում է, որ «աւազակ, անպիտան, հացկատակ, վատտոհմիկ» որեարները յառաջ էին քշւում, իսկ արժանաւոր մարդիկ յետ մղւում:

Այսպիսի չարիք լուրջ շարժառիթ չէ կարող նկատուել քաղաքական ծանր քայլերի: Թւում է որ բանսարկուն դարձեալ արեւմտեան կեղծ բարեացակամն էր:

Հայ աւագանիները, սրտացաւ իշխանները Գիւտ կաթողիկոսի մօտ հաւաքուած խորհրդակցում են իրերի դրութեան մասին եւ ուրիշ դարման չեն գտնում, եթէ ոչ «ի խընդիր լինել օգնականութեան և ապստամբել: Առաքէին գաղտ եւ պատգամաւորս միանգամ եւ երկիցս առ Թագաւորն Յունաց Լեւոն, որոյ թէպէտեւ յանձն առեալ կամէր օգնել, յերկարէր ժամն եւ խափանէին խորհեալքն»:

Լեւոնը Մարկիանի յաջորդն էր եւ թագաւորեց 457-474 թիւը: Եթէ նոր ապստամբութիւնը, որ պայթեց 482 թուին, պատրաստւում էր դեռ Լեւոնի օրով, նշանակում է, որ նա նոր բան չէր իսկապէս, այլ հին կրակը՝ վառուած 451 թուին, որ շարունակում էր մխալ:

Հրապարակի վրայ նոյն հին կուսակցութիւններն են, հին երկփեղկ մտածողութիւնը: Մէկի պաշտպանը դարձեալ Մամիկոնեան տունն է, շրջապատուած նախկին համակիրներով՝ Արշարունեաց, Վահեւունի, Պալունի եւ այլ տոհմերով: Հակառակ բանակում կանգնած են Գատիչոյ Մախազ Խորխոռունեաց իշխանը և Վասակի համախոհը, և Սիւնեաց իշխան Գդեհոնը: Վասակի նման Գատիչոյ Մախազն եւս, որ դատապարտուել է սեւ բախտի եւ ընկել սերունդների անէծքի տակ, միանգամայն անպարտ է: Գատիչոն ապրել էր անձամբ նախորդ անցքերի դառնութիւնը, նրա յիշողութեան մէջ դեռ չէր ցամաքել թափուած անմեղ արիւնը: Իրաւամբ

կարող էր խորշելի համարել նոր ցնցումները եւ աղետաբեր՝ երկրի համար:

Պէտք է խոստովանել, որ Վարդանանց կռուից յետոյ Պարսիկները ամեն զիջումներ արին Հայոց: Արքունի հրամանով Ատրորմիզդ մարզպանը յայտարարել էր կրօնական ազատութիւն, «ի կամս մարդոյն թողեալ ըստ իւրաքանչիւր մտաց որպէս զինչ եւ կամի պաշտել՝ պաշտեսցէ»: Ներումն էր շնորհւում բոլոր փախստականներին եւ քաղաքական յանցաւորներին, բացի ձերբակալուած անձերից, որոնց մեծ մասը ազատ թողնուեցին: Այլ եւ «թողուլ հրամայէր զհարկս աշխարհին եւ գայրուձին եւս զարքունի թեթեւացոյց առ ժամանակ մի»:

Այսքան ներողամիտ քաղաքականութիւնից յետոյ նոր աղմուկներ յարուցանել, խաղաղութիւնը վրդովել պիտի թուէր անիմաստ:

Շատերը կարծում էին, որ նոր ցոյցերը ծնունդ են Մամիկոնեան խռովասէր ոգու: «Ոչ է հնար սմա (այսինքն Վահանայ) առանց ապստամբութեան կեալ ի հայս: Յիշեցուցանէին Արեաց եւ զնախնեացն նորա զմիոյ միոյ թէ ո՞վ ի նոցանէ ոչ խռովեցոյց զԱրեաց աշխարհ եւ ոչ արար մեծամեծ վնասս եւ մահունս: Արդ երբեւէ, ասեն, սա զնոյն խռովութիւն յարուցանելոց է ի վերայ ձեր»:

Վահանը Վարդանի եղբօր՝ Հմայեակի որդին էր: Հմայեակն եւս ընկել էր խռովութեան տարին: Հնարաւոր է, որ Վահանին օտարոտի չէր եւ ընտանեկան վրէժխնդրութեան ոգին: «Ի հարցն իմոց ես տղայ մնացի, ասում է Վահանը, ո՛չ զվաստակս նոցա, որ առ Արեաց աշխարհն լեալ է, գիտեմ եւ ո՛չ յանցման նոցա հաղորդ ինչ էի»:

Արդեո՞ք այս խօսքերով պատմագիրը չէ ուզում արդարացնել իր հերոսին այն կասկածներից, որ նա իբրեւ թէ մերձաւորների մահուան վրէժը լուծելու աղագաւ է որ ըմբոստացել է:

Ճշմարիտ է Վահանի զէնքի չաչիւնը այն ժողովրդականութիւնը չունէր, ինչ որ Վարդանինը, բայց նրա չարժառիթները նոյնչափ ազնիւ էին և հեռու անձնականութիւնից:

Խնդիրն այն է, որ ինչ որ տանելի էր Գատիչոյի և նման իշխանների համար, անհանդուրժելի էր թւում Մամիկոնեան կտրիճների տեսակէտից: Երբ որ Վահանի համախոհները առաջարկում են նրան գործի գլուխն անցնել եւ պարզել ապստամբութեան դրօշը, խոստանալով նաեւ Վրաց եւ Հոնաց օգնութիւնը, Մամիկոնեան իշխանը պատասխանում է. «զԱրեաց ուժն և ստամբակութիւնն քաջ գիտեմ և զՀոռոմոց

զթութիւնն և զխաբէութիւնն. և զձեր ծանուցեալ է փորձիւ իմ թէ որպէս հարանց մերոց ուխտեցին երդմամբ և ստեցին: Եւ վասն Վրաց արքայի և Հոնացդ զորս ասէք, Վիրք առանձին թեթեւ ինչ աշխարհ են և այրուձիով սակաւաւորք, բայց վասն Հոնաց ո՛ գիտաց, հաւանի՞ն գալ թէ ոչ, որք չենն ի միջի եւ չերեւին: Բայց քան զամենայն եւս առաւել յանձանց երկերուք, վասն զի մարդիկ սուտք էք եւ անվստահք»:

Ծանր յանդիմանութիւնից առնուած՝ պատասխանում են խօսակիցները. «Զամենայն զոր ասացերդ, լի ասացեր, ճշմարիտ ասացեր եւ արդար: Բայց զյոյս մեր ոչ ի Հոռոմս եղեալ է և ոչ ի Հոնս, բայց նախ յողորմութիւնն Աստուծոյ, բարեխօսութեամբ սրբոյն Գրիգորի եւ ի մահ նախնեացն որ նահատակութեամբ իւրեանց հաճոյ եղեն Փրկչին Քրիստոսի, և ապա ի մահ անձանց մերոց, քանզի լաւ համարիմք մի ժամ մեռանել, քան թէ զամենայն օր զեկեղեցւոյ եւ զքրիստոնէից զարհամարանս տեսանել եւ զքակտումն»:

Ապստամբ բանակի չունչը Մամիկոնեաններն էին: Տրամախօսութիւնը ուրիշ նպատակ չունի պատմագրի գրչի տակ, եթէ ոչ ընդգծել Մամիկոնեան իշխանի յեղափոխական խառնուածքը: Վահանը ապստամբում է եւ երկու տարի շարունակ ճակատում է պաքսկական հետապնդումներին ամենայն յաջողութեամբ: Պերոզ թագաւորը սպանւում է Հոնաց արշաւանքում 484 թուին եւ նրա յաջորդ Վաղարշը հաշտութեան է կանչում ըմբոստներին, մեղքը ձգելով իր նախորդի ամբարտաւան ուսերին:

«Մեք որ ապստամբեցաք, ասում է Վահանը յաղթանակի օրը, ոչ եթէ գիտէաք եթէ մեք Արեաց առաջի ինչ կարեմք կալ, զի և զմեր տառապանացս ոյժ գիտեմք և զԱրեաց այնպիսի մեծ եւ զանհամար գնդի եւ ուժոյ զսաստկութիւն, բայց միայն զմեռանելն եդաք առաջի եւ նմին պատրաստ եմք եւ առաւել եւս ուրախ եմք զի զանուանի զլաւ մահ մեռանեմք»:

Գեղեցիկ խօսքեր են, վայել կրօնաւորի, բայց ո՛չ քաղաքական գործիչի: Կրօնաւոր հեղինակը դրանով ուզում է բնորոշել այն հոսանքը, որի առաջնորդն է Մամիկոնեան տոհմը: Վահանը յաղթող հանդիսացաւ եւ ձեռք բերեց մարզպանութիւնն ինքը եւ իրենից յետոյ իր եղբայր Վարդը:

Հակառակ հոսանքը կարող էր զսպել յաղթականների հրճուանքը եւ արդարացնել իրենց վերապահ դիրքը, ցոյց տալով, որ յաղթութիւնից յետոյ Հայերը աւելի բան չստացան, քան ունէին ապստամբութիւնից յառաջ:

* * *

Աւելորդ անապարծութիւն կը լինէր վերագրել Վահանի յաջողութիւնը միմիայն նրա զէնքին: Գահակալական վէճերը եւ մօտալուտ պատերազմի վտանգը Բիւզանդիայի հետ, հարկադրեցին Պարսից Դուռը օր առաջ խաղաղացնելու Հայաստանը:

Վաղարշի յաջորդ Կաւատի օրով արդարեւ սկսուեց պատերազմը, որ տեւեց ամբողջ դար և եթէ երբեմն դադրում էր՝ միայն նորա համար, որ վերսկսուի աւելի լայն ծաւալով: Այս շրջանը խրատական է նրանով, որ հայ գործիչներին բերում էր դառն հիասթափութիւն քրիստոնեայ Արեւմուտքի նկատմամբ: Ցուսախաբութիւնն այնքան մեծ էր, որ ստիպուած էին Մամիկոնեաններն և Բագրատունիք միացած ոյժերով դուրս գալ կայսերական ոտնձգութիւնների դէմ:

Ցուստինիանոսի օրով եւ նրա հրամանով արեւմտեան կամ բիւզանդական Հայաստանը ենթարկուեց արմատական փոփոխութեան: Նախարարական իրաւակարգը վերացւում էր: Հարաւային Հայաստանի հինգ նախարարութիւնները, որ անկախ իշխանութիւններ էին, ճանաչուած 298 թուի դաշինքով, կորցնում էին ընդմիշտ իրենց ինքնուրոյնութիւնը:

Ամբողջ երկիրը Փոքր Հայքի հետ միասին բաժանւում էր նոր վարչական միութիւնների, որոնք կոչւում էին Առաջին, Երկրորդ, Երրորդ եւ Չորրորդ Հայաստան: Առաջինի մայրաքաղաք եւ վարչական կեդրոն էր նշանակւում Կարին կամ Թէոդոսիոպոլ, երկրորդի՝ Սեբաստիա, Երրորդի՝ Մելիտինէ, Չորրորդի՝ Նփրկերտ կամ Մարտիրոպոլ, այժմ Մուֆարդին: Ամէն մէկի կառավարութիւնը յանձնւում էր սովորական պաշտօնեայի կոմէս (որ է կոմս) անունով, որ նստում էին յիշածս կեդրոններում:

Կարինում այն ժամանակները տակաւին ապրում էին Արշակունեաց վերջին շառաւիղները: Ցայտնի էր մանաւանդ Արտաւանը, որ յետոյ անցաւ Բիւզանդիա եւ մեծ անուն հանեց: Արշակունիներին սահմանակից էին Սպերի Բագրատունիք եւ Տայքի Մամիկոնեանները:

Երեք նշանաւոր տների ներկայութիւնն ախոյեան պետութիւնների սահմանագլխին յղի էր ամեն անակնկալներով: Տների մրցութեան թէ պետութիւնների նենգամիտ քաղաքականութեան հետեւանքով միշտ հնարաւոր էր սպասել բարդութիւններ:

Սպերի ոսկեհանքը մի գայթակղիչ կռուախնձոր էր

չրջակայ իշխանների համար: Այս առթիւ ծագած տեղական դժտութիւնները չուտով քաղաքական բնաւորութիւն ստացան: Կայսեր կողմից նշանակուած մի պաշտօնեայ Ակակի-(ոս) անունով, որ ծագումով նոյնպէս հայ էր, աչք ունենալով ոսկեհանքի վրայ, սպանեց նրա տիրոջը իշխան Համազասպին եւ գրաւեց Թանկարժէք գոյքը: Այս մարդը, որ օտարներին ծառայելով չէր աշխատում գոնէ չվնասել իր արենակիցներին, անհանդուրժելի էր եւ իր ապօրինի գործի պատիժն ստացաւ, սպանուելով Հայերի ձեռքով:

Բիւզանդիայից եկաւ նոր պաշտօնեայ, Սիտտա անունով, որ ականաւոր զինուորական էր: Սա եւս ընկաւ Հայերի սրից: Երրորդ պաշտօնեան, որ փոխարինեց Սիտտային, անունը Բուզ(էս), անձամբ ծանօթ էր յիշեալ Արտաւանի հօրը, Յովհան Արշակունի իշխանին, ուստի իր մօտ է հրաւիրում նրան բանակցելու պատրուակով եւ սպանում է նենդօրէն իր վաղեմի բարեկամին:

Յովհանին ուղեկից էր Վասակ իշխանը, որ եւ նրա փեսան էր, աղջկայ ամուսինը: Հաւանօրէն Վահանի եղբօր Վասակի թոռն էր, եւ որդի այն Գրիգորի, որ հայ գնդով գնաց Վաղարշ Թագաւորի օգնութեան՝ Վահանի կողմից: Վասակը զգալով լարած թակարդը, խորհուրդ տուեց իր աներոջ հաւատ չընծայել Բուզին եւ յետ դառնալ: Յովհան չանսաց եւ զոհ գնաց իր միամտութեան եւ բիւզանդական խարդախութեան: Իսկ Մամիկոնեան իշխանը փախչելով ազատուեց կորուստից:

Կայսերական պաշտօնեայի տմարդի վարմունքը լցրեց դառնութեան բաժակը: Հայ իշխաններն արդէն զայրացած էին Յուստինիանի քաղաքականութիւնից: Ընդհանուր դժգոհութեան եւ տրտունջի թարգման է հանդիսանում Վասակ Մամիկոնեանը: Դեսպանութեան գլուխ անցած՝ նա ներկայանում է Պարսից Խոսրով Թագաւորին եւ բացատրելով կայսերական քաղաքականութեան վտանգաւոր հետեւանքները Արեւելքի համար, խորհուրդ է տալիս պատերազմ յայտարարել, քանի ուշ չէ, խոստանալով Հայոց աջակցութիւնը: Եւ այն մեծ քրիստոնեայ Թագաւորը, որի անունով եւ յուսով այնքա՜ն արիւն էր թափուել երէկ միւս օրը, տրտունջի առարկայ էր եւ թշնամի, որի դէմ օգնութեան էր կոչւում անօրէն համարուած Թագաւորը:

Պատերազմասէր Պարսից արքան առիթ էր որոնում, որ բանակը չարժէ: Կռիւն սկսուեց: Համատարած ժանտախտը խանգարեց Խոսրովի զէնքի յաջողութիւնը: Բիւզանդական զօրքերը յառաջացան անարգել մինչև Դուին, Պարսկահայոց

մայրաքաղաքը: Նոր հիասթափութիւն տիրեց Հայերին: Վասակ եւ Արտաւան, չարժման ղեկավարները, ստիպուած էին հաշտուել կայսեր հետ եւ մտան նրա ծառայութեան մէջ:

Պատերազմական գործողութիւնները դադարեցին 543 թուին, որ յարմար առիթ վերստին արծարծուեն:

572 թուին սոյն Վասակի որդիքը՝ Վարդան եւ Վարդ սուսերահար արին Դուինում Պարսից մարզպան Սուրէնին, լուծելով իրենց աւագ եղբօր Մանուէլի մահուան ոխը, որի սպանութիւնը վերագրում էին Սուրէնին: Խաղաղութիւնը նորէն վրդովուեց երկրում: Միաժամանակ եւ Վրաց Գուրգէն թագաւորը ոտի կանգնեց Պարսից դէմ: Նրան միացան լեռնական ցեղերը:

Անտարակոյս էր, որ ընդարձակ չարժման ետեւը թաղնուած էր դարձեալ կայսեր չարաչուք պատկերը: Յուստինիանի պատերազմները դադար առին 526 թուին խաղաղութեան դաշնագրով, որի կէտերից մէկը պարտաւորում էր կայսերական կառավարութեան վճարելու Պարսիկներին տարեկան 500 լիտր ոսկի, որ է 30 հազար ոսկեդրամ, յիսուն տարուայ ընթացքում:

Յուստին կայսրը առիթ էր փնտռում, որ խախտէ դաշինքը եւ հրաժարէ ծանր պարտականութիւնից: Քրիստոնեայ Հայերի և Վրացիների խլրտումները լաւագոյն պատրուակն էր:

Երբ Պարսից դեսպանը գալիս է դրամը պահանջելու, Յուստին կայսրը հարկաւոր է համարում նկատելու, որ «դրամի վերայ հիմնուած բարեկամութիւնը գովելի չէ» եւ անմիջապէս նշանակալից հարց է տալիս Հայոց չարժման մասին: Դեսպանը պատասխանում է, որ խառնակութիւն կար, բայց ներկայումս կարգը վերականգնուած է:

Կայսրը, որ խորամանկ է քան խորագէտ, յայտարարում է, որ «ինքը պատրաստ է պաշտպանելու ապստամբ Հայերին եւ չպիտի ներէ որեւէ բռնութիւն նրանց դէմ, քանի որ միեւնոյն քրիստոնեայ հաւատն են դաւանում»:

Խելացի դեսպանը, որի անունը Սիբուխտ էր եւ ինքն քրիստոնեայ, հաւանօրէն ասորի, եթէ ոչ հայ, առարկում է, որ հէնց քրիստոնէութեան շահերն են որ պահանջում են հրաժարուել պատերազմներից, որովհետեւ ընդհարումների միջոցին ամենից շատ վնասուելու են քրիստոնեաները, քանի որ նրանց երկիրն է ռազմարեմ լինելու: Այլ եւ հասկացնել է տալիս նրբօրէն, որ պատերազմի հետեւանքը դեռ յայտնի չէ թէ ինչով կը վերջանայ, եւ երբեք մարդու կամքից չէ կախուած:

Սիբուխտի խօսքերը իմաստութեան դաս է, որին պէտք ունէինք դեռ երէկ մենք անուղղելի երազատեսներս, նմանապէս մեր եւ քրիստոնէութեան կասկածելի հովանաւորները:

Պատերազմը սկսուեց, բայց կայսրը չուտով ստիպուեց զինադադար խնդրելու: Բանակցութեան ժամանակ երեւաց, որ գոնէ Պարսիկների կարծիքով Հայոց ապստամբութեան պատճառը բիւզանդական դաւադիր խաղերն էին:

Պարսից Որմիզդ թագաւորը զոհ դնաց պալատական յեղաշրջումի: Մօր կողմից թուրք էր, դաժան և բիրտ, և ատելի նոյնիսկ մերձաւորներին, որոնք և սպանեցին նրան: Վահրամ Զորին, որ Պահլաւ կամ Պարթեւ իշխանական տնից էր, փորձեց տիրանալ գահին և վերականգնել Արշակունեաց թագը: Թերեւս յաջողէր, եթէ Արեւմուտքի անպատեհ միջամտութիւնը չլինէր: Մաւրիկ կայսրը հարկաւոր գտաւ Որմիզդի որդուն Խոսրովին պաշտպան կանգնել եւ հաստատել նրան հայրական գահի վրայ:

Զորինի խռովութիւններին մասնակից էին եւ Հայերը: Նախ քան ապստամբելը Զորին կոչ է անում Հայերին, յորդորելով յարել իրեն և ընդհանուր ոյժերով ջնջել «տիեզերական պատուհասը՝ Սասանեան տունը»: Ըմբոստ իշխանը խոստանում էր Հայերին անկախութիւն. երդւում էր տալ նրանց նախկին թագաւորութիւնը հին սահմաններով՝ մինչեւ Կապկոհ (Կովկաս) լեռները եւ Աղուանից դուռը (Դերբենդը), մինչեւ Արուաստան ու Մծբին:

Կոչը պատրիչ էր: Հայ իշխանները, որ առիթ էին որոնում գլուխ բարձրացնելու Պարսից բռնութեան դէմ, միացան Զորինին: Առաջնորդը դարձեալ Մամիկոնեան տունն էր ի դէմս Մուշեղ զօրավարի:

Հայ պատմագիրը անպարտ է համարում Մուշեղին եւ այնպէս է ձեւացնում, որ իբրեւ թէ նրա օգնութեամբ է որ Պարսիկները կործանեցին Զորինին:

Բայց Պարսից տեղեկութեամբ Մուշեղն մասնակից եւ օգնական է եղել ապստամբներին: Այս է պատճառը, որ պատերազմից յետոյ հայ զօրավարը կոչւում է Դուռը, իբրեւ քննութեան և կամ յանդիմանութեան համար: Մուշեղ գնում է արքունիք, առնելով հետը երկու հազար ձիաւոր: Թագաւորի հրամանով ուզում են Մուշեղին զինաթափ անել և ապա թոյլ տալ ներկայանալու նրան: «Լոյծ զկամարդ եւ զսուսերդ ի միջոյ քումմէ, ասում են նրան, և մերկեա ի քէն զսպառազինութիւն քո, զի ոչ է օրէն մտանել առաջի թագաւորին»:

Մուշեղի սիրտը կասկած է ընկնում եւ պատասխանում է համարձակ. «Ի մանկութենէ իմմէ սննդակից եղեալ թագաւորաց ի նախնեաց իմոց եւ հաւուց եւ այժմ հասեալ կամ ի դուռն արքայի ի տեղի հանդիսի: Ե՞ս զսպառազինութիւնն իմ յանձնէ իմմէ ի բաց մերկացայց եւ լուծից զկամարս եւ զզօտիս յանձնէ իմմէ զոր ոչ երբեք լուծանեմ ի տան իմում յուրախութեան, եւ կամ ինձ արժա՞ն իցէ գիտել զչարութիւնդ Պարսից»:

Այս խօսքերով հայ զօրականը թողնում է եւ հեռանում առանց տեսնել ուզելու թագաւորին:

Խոսրով զիջում է, բայց սառն է ընդունում, «ոչ ձգեաց արքայ զձեռն որպէս յերեկն եւ յեռանդն»:

Մուշեղը հեռանում է դժգոհ:

Պարսից թագաւորը դրկում է եռեւից «երդումն աղ կնքեալ» ի նշան հաշտութեան, գիտենալով որ Մամիկոնեան առիւծը միշտ վտանգաւոր է երբ տրտնջող է:

Այս միջադէպը գեղեցիկ դծեր է բերում Մամիկոնեան իշխանների նկարագրին:

II

Խոսրով, հայրենի գահը նստելով, իր բարերար Մաւրիկի հետ բարեկամութեան դաշն կնքեց 591 թուին եւ ի տրիտուր զիջաւ նրան Հայաստանի մեծագոյն մասը, թողնելով իրեն Դուին, Սիւնիք եւ Վասպուրական:

Հակառակորդ պետութիւնների հաշտութիւնն իսկ աղետաբեր եղաւ մեզ համար ոչ նուազ քան նրանց թշնամութիւնը: Ինչպէս այժմ, այնպէս էլ հնում ե՛ւ կռւում եւ համբուրւում էին զօրեղները մեր դիակների վրայ:

Քրիստոնեայ կայսրը բարեմիտ էր դէպի Հայերը, երբ Հայաստանը Պարսից ձեռքին էր: Հէնց որ դրաւեց հայ հողերը, փոխեց իր դոյնը:

Մաւրիկ կայսեր վերագրում էին Հայերը մի քստմնելի ամբաստանագիր, ուղղուած Խոսրովին. «Ազգ մի խոտոր եւ անհնազանդ, ասէ, կան ի միջի մերում եւ պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ եւ ի Թրակիա գումարեմ եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յարեւելս տանել, զի եթէ մեռանին, թշնամի մեռանին, եւ եթէ սպանանեն, զթշնամիս սպանանեն եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանդչել ոչ լինի»:

Դժուար թէ կայսրի բարոյական սնանկութիւնն այնքան յառաջացած լինէր, որ այսպիսի թուղթ գրէր: Զարգելի ծրագրները չեն սիրում լոյս եւ ծնում ու հասունանում

են մթութեան մէջ: Հայ զրոյցը, սակայն, արտացոլում է ստուգիւ իրական դրութիւն:

Պարսիկները գումարել էին հայ այրուձին եւ փակել Սպահանում, իսկ իշխաններին տարել Տիզբոն: Ցոյներն եւս իրենց բաժնի հայ ոյժերը տեղափոխել էին Թրակիա, կռուելու ընդէմ Թշնամիների:

Այսպիսի պայմաններում հայ ղեկավար ոյժերը հարկադրուած էին մաքառել եւ Պարսիկների եւ Ցոյների դէմ: Պարսկական բաժնում նրանք սպանում են պետական համարակարին եւ խլում գանձած տուրքը. «Ի գանձուդ այդորիկ զՀայաստան մեր արասցուք եւ առեալ ի նոցանէ օգնութիւն պատերազմեսցուք ընդ երկոսին թագաւորսդ և բռնութեամբ դերկիրդ մեր ի մեզ դարձուսցուք»:

Այսպէս մտածողների թւում էին նաեւ Մամակ Մամիկոնեան եւ Գագիկ Մամիկոնեան:

Ցունական բաժնում եւս ժայթքում է դժգոհութիւնը: Կայսրը պահանջում է հայ այրուձին երկու նշանաւոր եւ ազդեցիկ ցեղի ներկայացուցիչների, Սահակ Մամիկոնեանի եւ Սմբատ Բագրատունու, առաջնորդութեամբ, որ ուղարկէ Թրակիայի ճակատը:

Իշխանները խորհում են եւ վճռում են ապստամբել. «Խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Ցունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ եւ մեռանիլ ի վերայ աշխարհին իւրեանց»:

Հայ նախարարների հայրենասիրական բարձր զգացումը վկայում են եւ օտար աղբիւրները:

Սահակ Մամիկոնեանը հնազանդւում է կայսեր հրամանին, իսկ Սմբատ Բագրատունին ճանապարհից յետ է դալիս եւ ապստամբների գլուխն անցնում: Նա է որ սպանում է Ցովհան պատրիկին, յունական բաժնի կառավարչին 591ին:

Մամիկոնեան տրամադրութեանց արտայայտիչն էր Համազասպ Մամիկոնեանը, որ Ցունաց Հերակլ զօրավարի հետ էր եւ ընդդէմ ապստամբական ցոյցերին: Այս ժամանակներից սկսած հետզհետէ զօրանում է Մամիկոնեան հոսանքի թեքումը դէպի Արեւմուտք, իսկ Բագրատունեացը դէպի Արեւելք:

Սմբատի յանդուգն սպանութեան գործը քննելու եկաւ մայրաքաղաքից սենատոր Դոմենտը: Հետեւանքը եղաւ՝ բռնել Սմբատին եւ տանել կայսեր: Քրիստոնեայ թագաւորը ուրիշ միջոց չգտաւ պատժելու ըմբոստ իշխանին քան ձդելու կրկէս գազաններին կուր: Սակայն, հայ կորիզը զլացաւ եւ

այդ հաճոյքը պատճառելու ցնցող տեսարանների ծարաւի վեհապետին:

Ցոյն պատմագիրը վկայում է, որ Սմբատը հրաշքով ազատուեց սոսկալի մենամարտից: Իսկ հայ պատմիչը բացատրում է հրաշքի էութիւնը: Ցուսահատ իշխանը բռունցքով ուշաթափ է անում արջին, եղջիւրներից կախուած տապալում է կատաղի ցուլին, եւ ճարպիկ ոստիւնով վերելակում առիւծը եւ կոկորդը սեղմելով խեղդում: Ամբոխը եւ ամենից առաջ կայսրուհին ի տես այս անսովոր քաջութեան պահանջում են ազատութիւն, եւ փոչոտ իշխանը կրկէսից ելնելով հրաւիրւում է արքունիք:

Ահա այս հսկայի սերունդն է, որ պիտի մի օր ժառանգէր Հայոց թագը: Սմբատ չմնաց կայսրի մօտ եւ յարմար առիթով անցաւ Խոսրովի ծառայութեան եւ նշանակուեց Վրկանի եւ յետոյ Հայաստանի մարզպան: Նրա որդին Վարազ-Տիրոց եւ սրա որդին Սմբատ արժանացան Պարսից թագաւորի վստահութեան նոյն պաշտօնում:

Արաբները նուաճեցին Իրանը եւ նրա հետ եւ Հայաստանի մի մասը: Բագրատունիք առժամանակեայ ճնշումներից յետոյ կանգ առան նոյն քաղաքական գծի վրայ, ինչ որ ընտրել էին Պարսից օրով: Արաբները եւս, անծանօթ նախարարական բարքերին, սկզբում փորձեցին բռնի ուժով վերջ տալ վտանգաւոր տոհմերին, բայց չուտով ստիպուեցին աւելի հաշտ ուղի դտնել: Բագրատունի իշխանների խոհեմութիւնն ու զգուշութիւնը սանձեց արաբական բրտութիւնը, և Աշոտ Վասակեան նշանակուեց իշխան իշխանաց 732 թուին:

Մամիկոնեանների հեղինակութիւնը նսեմանում էր: Աշոտի բարձրացումը ոչ միայն նշան էր հակառակ հոսանքի պարտութեան, այլ եւ հարուած Մամիկոնեան տան անուան: Այրուձին, որի ժառանգական սպարապետներն էին Մամիկոնեան իշխանները, անցնում էր Բագրատունեաց ձեռքը:

Տոհմական ինքնասիրութիւնը վիրաւորուած տեսնելով, երկու եղբայր՝ Գրիգոր եւ Դաւիթ Մամիկոնեանք՝ փորձեցին խլել Աշոտից առաջնութեան պատիւը: Աշոտն ունէր սակայն զօրեղ հովանաւոր յանձին երկրի պետի՝ Մրուանին, խալիֆայութեան գահի թեկնածուին: Հազիւ իշխանութեան գլուխ անցած Գրիգոր, պէտք է տեղի տար Աշոտին Մրուանի հրամանով:

Մամիկոնեանների փորձը ծանր նստեց, հետեւանք ունենալով Դաւիթի կորուստը:

Օմայեան հարստութիւնը վերջացաւ ութերորդ դարի կէսին Մրուանի մահով, զիջանելով իշխանութիւնը Աբաս-

եան տան: Խառնակ դրութիւնից ուզեցին օգտուել Մամիկոնեաններն եւ ազատուել Արաբներից: Շարժման ոգին Գրիգոր Մամիկոնեանն էր:

Առանց Աշոտի համաձայնութեան, որ երկրի պատասխանատու տէրն էր, գործը դատապարտուած էր անյաջողութեան: Ուստի աշխատում են համոզել Աշոտին: Երկու հոսանքները վերատին բախւում են, եւ հայ պատմութեան ամենէն դրամատիկ էջերն են, որ ծաւալւում են մեր առջեւ, որ յաւէտ կանաչ պիտի մնան մեր յիշողութեան եւ գիտակցութեան մէջ:

Պարոք եւ պէտք եմ համարում բերել Աշոտի խրատը ըմբոստացողներին: «Ով եղբարք, ասում է Աշոտ, ոչ տեսանեմ խոհական մտաց գործ անզգայութեանդ, այլ անուղղայ խորհուրդ եւ բանս տարապարտս: Քանզի ահա նուազունք են զօրքս մեր ի մէջ բռնութեանն Իսմայէլի եւ ոչ կարեմք զդէմ ունել զօրաց նոցա եւ ոչ զերկիր մեր հանել ի բերանոյ վիշապացն: Եւ միայն աշխատութիւն եւ վտանգ հասուցանեմք ի մտածումս մեր: Այլ եթէ կամիջիք ընդունել զխրատ իմ, ոչ արասցուք զբանդ զայդ եւ հարկեսցուք նոցա որպէս ցարդ եւս եւ կալցուք զստացուածս մեր, զայգիս, զանտառս եւ զանդաստանս մեր»:

Ահա մի պարզ եւ պայծառ խորհուրդ: Սակայն, Գրիգոր Մամիկոնեանի համախոհները, որ հակառակ հոսանքին էին պատկանում, չեն համաձայնում ընդունել իմաստութեան խրատը, այլ սպառնում են: «Եթէ ոչ միաբանեսցիս ի խորհուրդս մեր, ոչ մնասցէ առ քեզ եւ ոչ մի ոք ի զօրաց քոց: Չկարեմք ժուժկալել տագնապիս, յորում կայ երկիրս Հայոց»:

Այս յուսահատական ճիչը չէր, որ բռնաղատեց Աշոտին միանալ խռովարարներին: Մամիկոնեան իշխանը, Գրիգորը, կենտրոնացրեց իր ոյժերը իր սեփական կալուածում, Տայքում, ոչ միայն նրա դիրքն ու ամրութիւնը նկատի առնելով, այլ գլխաւորապէս այն հաշուով, որ օգնութեան խոստում էր ստացել կայսերական զօրքերի կողմից, որ նըստած էին Պոնտոսում. «Քանզի էր ի մէջ նոցա ուխտ խաղաղութեան հրամանաւ կայսերն Կոստանդնի»:

Դարձեալ օտարի ստայօդ խոստումներն էին, որ յոյս էին ներշնչում ապստամբութեան նախաձեռնողներին: Թւում է որ այս հանգամանքն էր, որը ստիպել էր Աշոտին տալ իր ակամայ հաւանութիւնը:

Արդարեւ, Կոստանդին Կոպրոնիմ կայսրը արշաւեց եւ առաւ Կարին եւ Մելետինէ քաղաքները, բայց հեռու էր Հայերին դարման հասցնելու մտքից: Ապստամբութեան ծրագիրը վտանգուեց եւ օդ ցնդեց: Իշխանների միաբանութիւնն քակուեց. Աշոտը հեռացաւ, որ գնայ Բագրեւանդ եւ ներկայանայ արաբական հրամանատարին:

Ծրագրի վիժման պատճառը, անշուշտ, Աշոտն էր: Մամիկոնեան Գրիգորը ոխացաւ եւ, գիշերը յարձակուելով Աշոտի վրայ, բռնեց եւ տուեց իր սպանուած եղբօր Դաւթի ծառաներին «բառնալ զլոյս աչաց նորա»:

Երկրի մտաւոր աչքը կորցրեց իր տեսութիւնը, Աշոտը կուրացաւ և աչքի լոյսի գնով փրկեց Հայաստանը նոր փորձանքից:

Պէտք կա՞յ նկատելու, որ Աշոտն իր վարմունքով նուազ ուխտանենդ չէր Գրիգորի նկատմամբ, քան Վասակ Սիւնին՝ Վարդանի: Բայց տե՛ս, որ պատմիչը «որդիք յանցանաց» է անուանում Գրիգորի կուսակից ուխտապահներին եւ ինքը Գրիգորը «սատակէր ի կենաց անյիշատակ բարձեալ ի միջոյ», մինչդեռ Աշոտը դառնում է «պսակ պերճութեան եւ փառք ազգիս Հայոց»:

Աշոտին յաջորդեց իր հօրեղբօր Բագարատի որդի Սահակը, «զեղաղէշ երեսօք, երեւելի հասակաւ եւ ազնուական բնութեամբ»:

Հաւանօրէն Խորենացու հովանաւոր Սահակ իշխանն է, որ անմահ յիշատակ թողեց իրը նախաձեռնող «Հայոց Պատմութեան»:

Զախողուած ընդվզումի դառնութիւնը մնաց Մամիկոնեանների սրտում որպէս հանգած կրակի ծուխ եւ մի օր պիտի պայթէր: Հէնց որ անցաւ քսանամեայ օրհասական ժամանակը, երկիրը ծածկուեց խռովքի նոր ամպերով: Մարտական ոյժերը ոգի առած ասպարէզ ելան մի անգամ եւս փորձելու ազատուել ատելի անուրից, «լաւ համարեալ զմահ քաջութեամբ, քան զկեանս վտանգաւորս», ասում է ականատես պատմիչը:

Ապստամբութեան դրօշակը ծածանում էր կրկին եւ կրկին անգամ միեւնոյն ձեռքերում: Արտաւազդ Մամիկոնեանը Դուին քաղաքում զէնքի պատրաստութիւն տեսնելուց յետոյ, քաշուեց Շիրակ եւ զարկեց արաբական հարկահանին Կումայրի աւանում (որ է արդի Ալեքսանդրապոլ, վերակնքուած վերջերս Լենինական, փոխանակ վերականգնելու հին անունը, որ պահել է ցարդ ժողովուրդը՝ Գիւմրի):

Նշանը տրուած էր: Մուշեղ Մամիկոնեանի սրից ընկաւ մի ուրիշ հարկահան և ինքն ամրացաւ Արտագերս հինաւուրց բերդում: Լուրը հասաւ Դուին մայրաքաղաքը: Զորս հազա-

բանոց բերդապահ գունդը եկաւ Մուշեղի վրայ, բայց ջարդ կերաւ եւ նահանջեց:

Ամբոխն արդէն խուժել էր փողոցները, կանայք ողբով և վայով ընդառաջում էին սիրելիներին: Ցանկարծ որտեղից ուր յայտնուեցին չրջիկ քարոզիչներ, որ գրգռում էին ժողովուրդին եւ քաջալերում յաղթութեան յոյսով. «Մերձեալ է ահա ժամանակ փրկութեան ձերոյ, դոչում էր մի կրօնաւոր. զի այժմ ընդհուպ դարձցի գաւազան թագաւորութեանն միւս անգամ ի տուն Թորգոմայ առնուլ ձեօք զվրէժ յաղգէն Իսմայէլի: Եւ դուք մի զանգիտէք յերեսաց նոցա թէ նուազունք իցէք, զի մի այր ի ձէնջ հալածեսցէ զհազարսն եւ երկուքն զբիւրսն»:

Սակայն, այս բոլորը լոկ ինքնախաբէութիւն էր կամ, ինչպէս պատմիչն է որակում, «տեսիլ սուտ եւ բաղձալի սրբոտի»: Ապստամբները յաջողեցին իրենց կողմը քաշել Սմբատ սպարապետին, կուրացած Աշոտի որդուն: Նա Մամիկոնեանների փեսան էր եւ ստիպուած էր զինջանել: Երկրի պետը, իշխանաց իշխանը Աշոտն էր, յիշեալ Սահակի որդին, «այր խոհական հանճարով», որ բացէ ի բաց ընդդիմացաւ ապըստամբութեան, խրատեց չանսալ մոլեկան մոնոզոնի (կրօնաւորի) քարոզին եւ յետ կենալ վնասակար ձեռնարկից:

Կուսակցական հայեացակէտների ընդհարման սուր վայրկեան էր: Աշոտի դիրքը փափուկ էր: Քսան տարի առաջ նոյն վիճակի մէջ էր միւս Աշոտը, այս Աշոտի պապի եղբայրը: Նրա նման եւ հետեւութեամբ Աշոտը պատասխանատուութեան ծանր բեռը ուսերին չյապաղեց, չվեհերեց արտասանել այս վճիտ եւ խոհուն խօսքերը:

«Մանկունք էք եւ կրտսերագոյնք հասակաւ եւ գիտեմ եթէ ոչ կարէք զդէմ ունել զօրութեան բազմագլուխ վիշապին, զի հզօր է զօրութիւն նորա եւ անթիւ բազմութիւն ընդ ձեռամբ նորա եւ անչափ պատրաստութիւն զինուց ի գանձս նորա: Եւ ամենայն թագաւորութիւնք որք հակառակ կային իշխանութեան նորա, փշրեցան որպէս զանօթ բրտի: Զի թէ հռովմայեցւոց թագաւորութիւն ոչ կարաց համբառնալ զձեռս ի վեր, այլ սարսեալ դողաց յերեսաց նորա եւ ոչ յանդգնիլ ընդդէմ տէրունական հրամանին, զի եւ դուք չէք անտեղեակ ամենայն զօրութեան արքային յունաց, քաջութեան անձին նորա եւ բազմութեան եւ պատրաստութեան զորաց նորա, զի ամենեւին ընդ միտ անգամ ոչ էառ ածել զմտաւ առնուլ զաշխարհս հայոց ի ձեռաց նորա, Կոստանդին, որդի Լեւոնի, որ մենամարտեալ ի միում աւուր ընդդէմ ահաւոր գազանացն, սպան զառիւծն իբրեւ զուլս այծեաց: Արդ որ զայս ոյժ զօրութեան ունէր, այնպէս ընթադրբեալ է յահէ չարաթոյն գազանին որ ապականէ զերկիր: Իսկ դուք յո՞վ արդեօք ապաւինեալ և կամ որով զօրութեամբ եւ որով ուժով կարէք զդէմ ունել անյաղթելի իշխանութեան նոցա:

«Արդ՝ եթէ հաճոյ թուի անձանց ձերոց, ընկալարուք զխրատ իմ, քանզի զօգուտն ձեր եւ զպիտոյսն եւ զանդորրութիւն աշխարհիս տեսանեմ ես: Զի այս լինի ելք գործոցդ, կամ դառնալ ձեզ եւ մտանել ընդ հնազանդութեամբ նոցա եւ հանդարտիլ եւ կեալ խաղաղութեամբ յերկրիս ձեր եւ կամ մերժիլ փախստեամբ համօրէն ընտանեօք յերկրէս ձերմէ եւ լքանել, թողուլ զժառանգութիւն հարցն ձերոց, զբնակութիւնս ձեր, զանտառս եւ զանդաստանս, նաեւ զգերեզմանս հարց ձերոց եւ երթալ բնակիլ նժդեհութեամբ ընդ արքային յունաց եւ կամ թէ ոչ՝ անկանիցիք ի ձեռս նեղչաց ձերոյ ի կենացս, զի գիտեմ ես զբարս աստուածութեան իշխանին Իսրայէլի, զի ոչ դադարէ մինչև կատարէ զկամս անձին իւրոյ»:

Հեռատես իշխանի իմաստուն խրատը, որ մինչիսկ մեզ համար քաղաքական գործունէութեան հիմ կարող էր համարուել մօտիկ անցեալում, մնաց ձայն բարբառոյ յանապատի: Ապստամբները արդէն պաշարել էին Կարինը: Դուինը սարսափի մէջ էր: Ցանկարծ մի տխուր լուր ցնցեց երկիրը. արաբական բանակը, բաղկացած 30 հազար վարձկան թուրքերից ոմն Ամրի հրամանատարութեամբ եկել հասել էր Խլաթ քաղաքը: Աշոտն այս պահին նոյն քաղաքումն էր եւ տեսնելով ահաւոր վտանգը, պատուէր ղրկեց իբրեւ թէ ամենուրեք միանալ եւ հաւաք ոյժերով դէմ դնել թշնամուն: Թւում է, թէ պատմագրի կողմից արդարացման տկար փորձ է: Աշոտը հաւանօրէն գնացել էր թշնամու բանակը հաշտութեան առաքելութեամբ:

Ապստամբները հաւատ չընծայեցին Աշոտի պատուէրին, կարծելով որ նա ուզում է նենգօրէն ազատել Կարինը պաշարումից եւ հաճոյանալ արաբներին:

Մի գունդ ապստամբներ անցան Արճէշ քաղաքը, բայց անյաջողութեան դիպեցան չնորհիւ քաղաքացիների մատնութեան: Արաբները յառաջացան Բագրեւանդ եւ բանակ զարկեցին Արճէնի գիւղի մօտ:

Արճէշի գոյժը Կարին հասած, հայերը լքեցին պաշարումը եւ խոյացան դէպի թշնամին: Պատմիչն անգամ զարմանում է, որ փոխանակ փախչելու յունական սահմանը եւ ազատելու իրենց կեանքը, ճակատեցին թշնամու դէմ, «լաւ

համարեցան ընտրել զմահ անձանց, քան տեսանել զկորուստ աշխարհիս եւ զանպատուութիւն եկեղեցւոյ Քրիստոսի»:

Հազիւ հինգ հազար էին, իշխանազունք եւ չինական ժողովուրդ: Սկզբում քաջութեամբ յետ մղեցին Թշնամու գրոհը, բայց յետոյ ընկճուեցին բազմութեան առաջ, մանաւանդ որ ռամիկ ոյժերը չուտով լքեցին իրենց դիրքերը եւ ցրուեցին: Մնաց միայն իշխանական որեաբը, որ իրար քաջալերելով նետուեցին գիտակցաբար մահուան գիրկը· «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր եւ մի տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զսրբարանս մեր»:

Այս սրբազան մրմունջը չրթունքին ընկան երեք հազարի չափ նահատակներ եւ նրանց թւում Մուշեղ Մամիկոնեան եւ Սմբատ Բագրատունի: Հայրենիքի զոհերը մնացին անթաղ, անձրեւի եւ արեւի տակ· «ոչ լալ եւ ոչ հաց սղոյ բեկանել ի տունս իւրեանց եւ ոչ տալ գերեզմանի, այլ բացընկեցիկ օթագացեալ ի վայրի յարեւու եւ ի փոչւոջ եւ յանձրեւի եւ ի մրրիկս հողմոց»:

Երկիրը հառաչեց եւ ողբաց ինքնուրաց քաջերի մահը, առանց նրանց «մնացին թափուր յօգնականութենէ նոցա եւ մատնեցան ի ձեռս գազանաբարոյ թշնամւոյն»:

Արճէշի կռիւը տեղի ունեցաւ հրոտից 4 շաբաթ օր, իսկ Արձնի՝ նոյն ամի 13 = 775 ապրիլի 15 եւ 23ին: Արիւնալից ամպերն անցան հայ հորիզոնից, երկիրը խաղաղեց եւ նորէն լծուեց չինարար աշխատանքի: Ապստամբ Սմբատի որդին Աշոտ Մսակերը խոհեմ քաղաքականութեամբ հիմը դրեց Բագրատունիների իսկական զօրութեան: Կամսարականներից գնեց Արշարունիքը եւ Բագարան տեղափոխեց իր նիստը: Որդին Բագարատը հաստատուեց Տարօնում, միւսը, Սմբատը, յաջողեց հօրը:

Թ դարը հայութեան համար նշանաւոր էր առանձնակի: Ոչ միայն իրենց հայրենիքում էին յառաջանում Հայերը, այլեւ Բիւզանդական պետութեան մէջ ամուր դիրքեր էին գրաւում, որ մի օր տիրանան Կոստանդին Մեծի դահին: Իսկ արաբական պետութիւնը նշաններ էր ցոյց տալիս քայքայման: Խալիֆաները փառքի վերելքը կատարած սկսել էին իմանել, որ մօտ ապագայում խաղալիկ դառնան վարձկան թիւրք զինուորների ձեռքին: Բաբեկի շարժումը, որ ոչ միայն քաղաքական գոյն ունէր այլեւ ընկերային, մեծապէս հարուածեց պետութեան վարկը: Ծայրագաւառների ամիրաները գլուխ բարձրացրին եւ ձգտում էին անջատուելու:

Այս բոլորը դաղտնիք չէր նաեւ Հայերից: Անարդար կը

լինէր յանդիմանել, որ երբեւիցէ Հայերը բաւականին չրջանկատ չեն եղել քաղաքական մեծ գալիքների հանդէպ: Հեռուն տեսնել, շատ հեռուն թափանցել, անհնարին չէ եղել մեզ համար: Մեր ազգային թերութիւնն այն է, որ անկարող ենք ընթանալ իրերի հետ ոտն առ ոտն, չտապում ենք կանխել դէպքերը, առջեւն ընկած վազում ենք, փոխանակ ետեւից գնալու, գնալու յամրաքայլ:

Մսակերի որդին, Բագարատը, ինչպէս եւ Արծրունեաց իշխանը, զգալով Արաբների տկարութիւնը, վճռեցին չվճարել սովորական հարկը: Պէտք եղաւ ճնշումի, որ արքունի տուրքը դանձուի: Մի օր էլ պետական հարկահանները սպանուեցան Տարօնում: Քաղաքային բնոյթի մահափորձերը դառնացրին Արաբներին: Մուտտավաքիլի օրով մի կատաղի փոթորիկ անցաւ Հայաստանի վրայից և այն վերջինն էր և լաւագոյն ապացոյց պետութեան թուլութեան: Որքան հզօր է պետութիւնը, նոյնչափ վեհանձն է դէպի հպատակ ժողովուրդի ըմբոստացումը, եւ որքան թոյլ, այնքան դաժան:

Ապիկար եւ մեղկ խալիֆայի կողմից իններորդ դարի կէսին եկաւ մի թիւրք Բուղա անունով, որ թէեւ 80 տարեկան էր, բայց բնածին անգթութիւնը չէր մեղմացել նոյնիսկ զառամ տարիների ծանրութեան տակ, եկաւ ողողելու Հայաստանը արիւնով: Արիւնոռուշտ էր Բուղան ի բնէ եւ խարդախ, զի խարդախութիւնը անգթութեան կարապետն է: Նենգօրէն եւ ողոքիչ լեզուով իր մօտ կանչեց գրեթէ բոլոր ազդեցիկ իշխաններին Տարօնի, Վասպուրականի, Սիւնիքի, Գարդմանի, մինչեւ իսկ Խլաթի եւ Թիֆլիսի կասկածելի մուսուլման ամիրաներին, բոլորին կալանաւորեց եւ տարաւ Բաղդադ:

Շատերը մահացան օտարութեան մէջ: Նահատակուեց եւ Սմբատ իշխանը, որի արաբական անունն էր Աբլաբաս: Բայց նրա որդին Աշոտ լուծեց հօր եւ միւս մարտիրոսների արեան վրէժը իր յաղթանակով: Արաբական լուծն ընկաւ Հայաստանում ճիշտ այն միջոցին, երբ Հայի միւս զաւակը՝ Վասիլ բարձրանում էր Բիւզանդիայի դահը:

Աշոտի յաղթութիւնը Բագրատունեան հոսանքի յաղթանակի օրն էր եւ Մամիկոնեանների՝ պարտութեան: Աշոտ իզուր չէր, որ Մամիկոնեան Կուրդիկ իշխանի գլուխը կլտրած ղրկեց Սամարրա խալիֆին:

Կուրդիկ իշխանի արիւնոտ գլխի հետ ընկաւ ընդմիշտ եւ այն կարմիր դրօշը, որ ծածանում էր այնպէս պերճօրէն չորս յիշածս դարերի պատմութեան վրայ: Կարմիր դրօշը տանում էր դէպի քաղաքական ազատութիւն արեան ուղինե-

լով: Բռնութեան դէմ բռնութիւն, ոյժի դէմ ոյժ, արեան փոխարէն արիւն — ահա դրօշի նշանաբանը: Նախնիք զարդարել են Վարդանին, Աւարայրի հերոսին, Կարմիր կոչումով: Նրա քաջարի սերունդը, որ նոյն վեհութեամբ փայլեց հետագայում, իրաւունք ունի նոյն կոչման իր այնքան պանծալի եւ յառաջամարդիկ անուններով:

Դժուար է գտնել որեւէ պատմութեան մէջ մի իշխանական տուն, որ դարերի ընթացքում մնար այնպէս հաւատարիմ իր տոհմական մտայնութեան եւ աւանդներին: Ութերորդ դարի Մուշեղը յար եւ նման է չորրորդ դարի Մուշեղին: Արեան հետ ժառանգում էին ընտանիքի հերոսական ոգին: Անուններն անգամ որ անցնում էին սերունդէ սերունդ յուշարարներ էին իրենց անցեալի: Մամիկոնեան տունը՝ հայ զինուորական կորովի մարմնացումն է, հայ ասպետական կարողութեան կենդանի պատկերը:

«Արի երկիւղը անծանօթ է մեր տոհմին, ասում է Վարդանը, և մեզնից և ոչ մէկը և ոչ մի ժամանակ չէ քաշուել սրի ահից: Եւ թէ ինչպէս աւելի բարի ընկերի մասին ենք հոգացել քան մեր անձի, բոլորին յայտնի է»:

Ճշմարիտ նկարագիրը Մամիկոնեան տան, որ տալիս է պատմիչը Վարդանի բերանով:

Հայ երկրի ու ժողովրդի արժանապատուութեան ուխտուած զինուորներն էին, որ անհաւասար կռիւների մէջ ուժասպառ եղան, հերոսներ, որ այրուեցին անձնուիրութեան հրդեհներում: Ի՞նչ է հերոսութիւնը, եթէ ոչ արհամարհանք մահուան յանուն մերձաւորի:

Մամիկոնեան կարիճները կրօք մի մի հերոսներ էին, աննման ծաղիկներ, սփռուած մեր անցեալի ապառաժոտում, եւ պատուաբեր ամեն մի պատմութեան: Այդ չքնաղ ծաղիկները արեւակէզ ընկան:

Իրաւ է նոյն Վարդանի արտունջը, ուղղուած նախարարներին.

«Ցանկ ձեր մղեալ է զմեզ ի նեղ եւ զձեր անձինս ի բաց ունելով՝ մեր միայն ազգս պատահեալ է վշտաց մեծաց եւ մահուց»:

Վշտերն ու մահերը սաստկացան մանաւանդ Վարդանից յետոյ, ինչպէս տեսանք, եւ Մամիկոնեան որեարը արենաքամ իջաւ պատմական դաշտից այն ժամանակ, երբ նորա երջանիկ մրցակիցը Բագրատունեաց տունը բարձրանում էր աջողութեան սանդուխտով դէպի արքայական ապարանքը:

Այլ էր Բագրատունիների նկարագիրը, նրանց խառնուածքը եւ ընտրած ուղին: Ոչ պակաս քաջ եւ հայրենասէր,

Բագրատունի իշխանը միեւնոյն ժամանակ չրջանկատ է եւ գործնական: Զկարենալ գսպել կրքերը, զայրոյթը պահել իր ամանի մէջ թուլութիւն է: Բռնութեան դարեր էին, երբ կոպիտ ոյժի հանդէպ հասարակական շահը յաճախ պահանջում էր լռել քան խօսել եւ տոկալ քան յուզուել: Անհատական խիզախութիւնը, հարկաւ, պատրիչ է, բայց շատ անգամ ապատարեր ընդհանրութեան: Պատասխանատու գործիչը սոփրուած է յաճախ հրաժարիլ շահատակութիւններից, եւ կեանքի դառնութիւնները պահել իր ներսը, համբերութեան երկանաքարի տակ մանրել ոչնչացնել ծանր ապրումները առանց որեւէ արտաքին պայթոցի:

Սկզբում Բագրատունի Սմբատները Մամիկոնեանների նման սովոր էին ձեռքը պահել դաշոյնի վրայ, իսկ հետագայում Աշոտները սոփրուած էին ձեռքը դնել ճակատին: Ծանրախոհ եւ խորաթափանց՝ Բագրատունիք համակիր չէին ցնցումների, ընդունակ էին անգամ չարիք գործելու, աւելի մեծ չարիքի առաջն առնելու համար:

Եթէ Մամիկոնեանները հայ խաչելութեան եւ սրի շողշողուն քարերն են, Բագրատունիք հայ խոհականութեան քարէ սիւներն են: Գագիկ Թագաւորի արձանը, որ երեւան եկաւ Անիում, ներկայացնում է մեզ ասպետների թագակիր գաւակին ոչ նժոյգը սանձած, նիզակը ճօճելիս, սաղաւարտը դրբիին, այլ որպէս ալեփառ ծերունի, նման աւելի վանահօր քան զինուորականի — երկար վերարկու, մէջքը պնդած գոտիով, մանրածալ փաթեթը գլխին, եւ պարզած բաղուկների վրայ կանգուն հայրենի սրբարանը:

Աշոտի համար, ասում է ժամանակակից պատմիչը. «Ոչ ի հակառակութիւնս ինչ կամ ի կռիւս ընդ թշնամիսն մաքառեալ, քան թէ բարեզգեաց բանիւք և բարի օճանաւ ածեալ զնոսա յուղղութիւն եւ ի կամս իւր»:

Այս ողոք եւ հաշտ քաղաքականութիւնը, որին աշխատում էին հետեւել Բագրատունիները ընդհանրապէս, այնքան էլ դիւրին չէր: Համակերպման ուղին խեծբեկ է եւ ծանր բարոյապէս: Կորանալ մինչեւ ստորութիւն բռնաւորի առջեւ, ուխտանենդ լինել, եղբայրասպանութեամբ, ուրացութեամբ խղճի ձայնը խեղդել — ահա փչերն ու տատասկներն այն կածանների վրայ, որ տանում էին դէպի Բագրատունեաց թագն ու գահը:

Սմբատի սերունդները, այն Սմբատի, որ գազաններից ահ չունէր, հարկադրուած էին իջնել մինչեւ հրութեան ստորիքը, որպէսզի հողեկան կսկծոտ գայթակղումների գնով ապահովեն հայրենիքի բարօրութիւնը: Աշոտ Թագաւորի հայրը

Սմբատ կոչւում է Խոստովանող: Նոյն կոչումին արժանի է նրա թագակիր որդին, այն, որ բարձրացաւ գահ Կուրդիկ Մամիկոնեանի արենաթաթախ դիակի վրայից...

* * *

Մրցակից հոսանքների մէկի յաջողութիւնը յաճախ մոռանալ է տալիս միւսի արժէքը: Միակողմանի վերաբերումն է, եւ դալիս է այն դատաւորներից, որոնք դասուած են կուսակցական շարքերում:

Առաջին շրջանում մինչեւ Սասանեան հարստութեան անկումը զօրեղ էին եւ ազդեցիկ Մամիկոնեան տրամադրութիւնները: Նախարարական կարգը տակաւին ատոք վիճակի մէջ էր: Տենչանքները կապուած էին զէնքի եւ զրահի շաչիւնին եւ բոլորում էին տոհմական սպարապետների անուան չուրջը: Ընդհանուր համակրութիւնը նրանց կողմն էր: Հայ մտաւորականութեան եւ գրի ներկայացուցիչները՝ Փաւստոս, Եղիշէ, Ղազար, Յոհան Մամիկոնեան, բոլորն էլ Մամիկոնեան տան փառաբանիչներն են եւ նրանց ուղղութեան կողմնակից: Եօթներորդ դարը յոյսերի եւ համակրութեանց ճօճման ժամանակ էր, եւ այդ դարի պատմագիր Սեբէոսը աշխատում է բարեխիղճ լինել եւ անաչառ՝ մրցող ոյժերի հանդէպ:

Արաբների հաստատուելուց յետոյ զգալապէս յառաջանում են Բագրատունիք եւ հետզհետէ գրաւում են երկրի համակրութիւնը: Մամիկոնեան արծիւները, ճիշտ է, դեռ շարունակում են խոյանալ մարտի դաշտերում, բայց երդիչներ չունին: Պատմագիրները՝ Ղեւոնդ, Յովհան կաթողիկոս, Շապուհ Բագրատունի, Ասողիկ գովաբանում են բացառապէս Բագրատունի իշխաններին, նրանց ջատագովներն են:

Այս պատմիչների թւումն է հոչակաւոր պատմահայր Մովսէս Խորենացին: Բագրատունիների գուսանն է նա եւ Մամիկոնեանների նզովիչը: Իր Բագրատունի մեկենասին հաճոյանալու համար չէ, որ գովում է նրա տոհմը: Պատմահօր անձը եւ կոչումը կասկածի իրաւունք չեն տալիս բնաւին: Խորենացին գաղափարական հակառակորդ է Մամիկոնեան քաղաքականութեան, եւ սիրող հասարակական անդորրութեան:

Պատմահայրը մեծ հայրենասէր էր. նրա հայեացքը պարտաւորիչ կը լինէր, եթէ վերաբերէր իր ժամանակուան կացութեան: Բայց ցաւն այն է, որ նոր կշռով մօտենում է հին պատմութեան եւ այնտեղից է ուզում հանել Մամիկոնեան փայլուն անունները, ջնջել նրանց յիշատակը: Արտաւազդ, Մուշեղ, Վասակ, Մանուէլ չորրորդ դարի այս չնաշխարհիկ հերոսները, որոնց այնքա՜ն յուզիչ նկարագիրը Փաւստոսի լաւագոյն էջերն են կազմում, չգոյ են համարւում Խորենացու մօտ, բայց յիշւում է Վահան Ուրացողը՝ Մերուժանի ընկերը, հարկաւ, առանց Սամուէլի, որ սպանելով դաւաճան հօրը, սրբեց Մամիկոնեան անբիծ անունը այդ միակ արատաւոր ստուերից:

Փաւստոսի հերոսների քաջագործութիւնները Խորենացին վերագրում է ուրիշներին՝ Առաւանեան, Ամատունի եւ կամ Բագրատունի տներից: Հայ մտքի խոշոր մեծութիւնը՝ Խորենացին այսքան յաչաղկոտ է եւ նեղսիրտ, այսքան կուսակցական: Թւում է որ շատ դառնացած է եղել իրեն ժամանակուան Մամիկոնեան ազմուկներից:

Դժուար է ուրանալ Մամիկոնեանների կարմիր հետքը մեր պատմութեան մէջ: Եթէ ներելի է համեմատել հասարակական մարմինը անհատի հետ, Մամիկոնեան տոհմը Խորենացուց յառաջ եւ յետոյ էր եւ մնաց հայ ազգի բարախուն սիրտը:

Խորհուն գլուխը, իմացականութիւնը, եթէ անդամ չոյենք հակառակ հոսանքը նրան վերապահելով այդ կարողութիւնը, անյուսալի ոյժ է առանց սրտի ներշնչումների: Գործնական ասպարէզում զգացական զեղումներն են մտքի իսկական թեւն ու թափը: Մամիկոնեան հոսանքն էր պատրաստել այն սերմերը, որից բուսաւ Բագրատունիների հունձը: Ազատասիրութիւնը եւս պէտք ունի հոդածու ձեռքերի: Խիզախումները եւ բողոքի որոտումները որքան եւ անհետեւանք, այն նշանակութիւնն ունին, որ չեն թողնում, որ ժողովրդի խոնարհութիւնն ու հլութիւնը հաւասարուի ստրկութեան:

Պէտք զգալ և պարտք պաշտպանելու քաղաքական իրաւունքները անդամ մահուան գնով, ահա այն հողը, որի վրայ կանգնեց Բագարանի արքունիքը եւ որի պատրաստութեան են ծառայած եւ նախորդ գինական շարժումները:

Սխալ կը լինէր կարծել սակայն, որ երկու խոշոր հոսանքները, որ ակօսում են մեր անցեալի չորս դարը, երկու իշխանական ընտանեկան տրամադրութեանց սոսկական ծընունդն են, կամ նրանց տոհմային ընդունակութեանց արտայայտութիւնը: Մամիկոնեան եւ Բագրատունի տները երկու ուղղութեանց առաջնորդներն են, զեկավար ոյժերը եւ ոչ նրանց ստեղծագործողները: Եթէ այդ իշխանական տոհմերը բնաջինջ չլինէին կամ եղած լինէին շատ առաջ, հոսանքները պիտի շարունակուէին: Գուցէ կը կորցնէին որոշ երանգը, որ

պայմանաւորուած է երկու տների տնտեսական յատկութեամբ, բայց իրենց էութիւնը ոչինչ չէր տուժի:

Գծածս քաղաքական հոսանքներն աւելի խոր արմատներ ունին եւ հանդիսանում են պատմական կեանքի զարգացման տարբեր տնտեսական-հասարակական երեւոյթների վրայ: Դրանք են հին նախարարական կարգը եւ նորածին քաղքենիութիւնը:

Սկզբում պիրական էր Հայաստանում, ինչպէս եւ ամբողջ Իրանում ֆէոդալականութիւնը: Սասանեանների անկումով պիտի թուլանար եւ չքանար արեւելեան այդ հինաւուրց իրաւակարգը: Արաբները նպաստեցին նրա քայքայման: Զորս դարուան անընդհատ կռիւներում նախարարական յիսունի չափ տոհմերը ջնջուել էին եւ մնացել միայն մի տասնեակ: Այդ՝ Մամիկոնեան հոսանքը հայ ֆէոդալականութեան, հայ դինուած ազնուականութեան ասպետական չունչն էր: Ազնուականութեան տկարացման եւ անկումի հետ պիտի վերանար հրապարակից եւ նրա գաղափարական յայտարար Մամիկոնեան տունը: Արաբները չէին, որ պիտի հովանաւորէին Մամիկոնեաններին:

Անցնող ազնուականութեան դիրքերը հեղհեղէ դրաւում էր նոր բիւրգերական դասը, քաղքենի հասարակութիւնը: Իշխանական ամրոցները մամռոտում էին եւ քաղաքները շենանում: Ահա այդ նոր հասարակական ոյժին է, որ յենում են Բագրատունիները, նօսրացած ազնուականութեան պետերը:

Նախարարական Հայաստանի իւրաքանչիւր անկիւն կեանքի փոքր բայց անկախ հնոց էր, ինքնամփոփ եւ ինքնաբաւ տնտեսական եւ հասարակական մի միութիւն: Ինքն իր պիտոյքներն է հայթայթում, պարապելով հողագործութեամբ եւ անասնապահութեամբ: Ուրիշ դասակարգ չկար բացի աշխատաւոր շինականութիւնից: Սա պէտք ունէր իր իշխանին, որ պահպանէր տոհմանները արտաքին թշնամիներից, օտար յարձակումներից եւ տա ու կողոպուտից:

Քաղաքային բնակչութեան հաշիւները այլ են: Սրա զբաղմունքն է զլխաւորապէս վաճառաշահութիւն եւ արհեստներ: Երկուսն էլ պահանջում են դործունէութեան լայն եւ մեծ շրջան եւ ճանապարհների ապահովութիւն: Միահեծան իշխանութիւնը դերազանցել է քան մանր տէրերի ցանցը, որ իրապէս մի թակարդ է ապրանք տանող եւ բերող կարաւանների համար: Նկատելու է նաեւ, որ քաղաքների բնակչութիւնը բաղկացած էր մեծ մասամբ օտարներից. աւելի

արաբ, հրեայ, ասորի եւ պարսիկ կային քան հայ, որ տակաւին ընտել չէր առեւտրի:

Խաղաղ քաղաքականութիւնն աւելի էր համապատասխանում քաղաքներին քան ազատագրական իրարանցումները: Արճէշի օրինակը խրատական է: Երբ հայ ոստիկանները՝ 772 թուին գնացին Արճէշի վրայ, քաղաքացիները դադնի իմաց տուին Խալիֆ արաբական բանակի հրամանատարին, որի հետ էր Աշոտ Բագրատունին. «Եւ իբրեւ մօտ հասանէին ի քաղաքագիւղն, ընակիչք քաղաքին յոտոյ դպացուցին ի քաղաքն Խալիֆ առ Ամր զօրավար Իսմայէլի զգալուստ նախարարացն Հայոց»:

Արաբները գալով դարան մտան եւ յանկարծակի յարձակուելով հայ զօրքերի վրայ, մօտ հաղար եւ հինգ հարիւր մարդ կոտորեցին:

Ֆէոդալների, գեղջուկների եւ քաղաքների բնակիչների բախումը նկատել եւ արձանագրել է Խորենացին: Վաղարշակի բերանով յայտարարում է. «Հրաման տայ քաղաքացեաց մարդկան արդոյ եւ պատիւ լինել քան զգեղջկաց եւ գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս: Եւ քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերքնանալ, այլ եղբայրաբար վարել, վասն բարեկարգութեան եւ աննախանձոտ կենաց, որ է շինութեան եւ խաղաղութեան կենաց պատճառք եւ որ ինչ նման այսոցիկ»:

Ցղփացած քաղքենիութիւնը նկրտում է բռնել թատամած իշխանների տեղը: Պատմագիրը բնական է համարում այս ձգտումը եւ յորդորում է գեղջուկ դասին՝ տալ նրան պատկանելի իշխանական յարգանքը: Մարդասիրաբար խորհուրդ է տալիս, որ քաղաքացիք էլ չատ չպերճանան եւ եղբայրաբար վարուեն շինականների հետ ի շահ բարեկարգութեան երկրի: Հասարակագիտական կարեւոր յեղաշրջումն է, որ տեղի է ունեցել կեանքում:

Մանուկ բայց արդէն պերճացած դասակարգի համար ցանկալի էր եւ նպաստաւոր Աշոտների քաղաքականութիւնը՝ կամաց կամաց հաւաքել երկիրը, ընդլայնել իշխանութեան սահմանները եւ երկարել հաղորդակցութեան ուղիներն տանց խցելու կապերը հարեւան մեծ պետութեանց հետ: Նորաստեղծ դրութեան փայլուն արտայայտութիւնը, նրա արքունքը դառնալու էր չուտով արքայական Անին, խոշոր վաճառաշահ կենտրոն արեւելեան առեւտրի: Նոյն Անին էր դառնալու այն հնոցը, ուր պիտի ձուլուէին հայ ազնուականութեան դէնքերը, որպէսզի նոր պայմաններին համա-

կերպուելով փայլէ հայ նոր հանճարը առեւտրական եւ արդիւնաբերական աշխարհում:

Մինչ Անիում մարում էին ֆէոդալականութեան վերջին ճառագայթները, Արեւմուտքը նոր էր ողջունում նրա արշալոյսը: Հասարակագիտական տեսակէտից Արեւելքին էր պատկանում առաջնութիւնը, եւ նա էր կարապետը նոր բուրժուական իրաւակարգի:

Այսպիսով՝ մի թագից դէպի միւս թագը տանող չորս դար ժամանակամիջոցը ընթացել է զարգացման հետեւողական շաւղով: Որքան էլ բեկուած, խզուած լինի յառաջդիմութեան թելը արտաքին արհաւիրքներից բայց եւ այնպէս կեանքը սահել է նրանց վրայից: Պսակաւոր Բագրատունիների հովանու տակ հայ աշխատանքը կարողացել է պարփակուել իր ազգային սահմանների մէջ եւ իր նպաստը բերել համամարդկային քաղաքակրթութեան շտեմարանին:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՓԱՌՔԸ [1]

Հաղուագիւտ են պատմութեան մէջ այնպիսի իշխանական տներ որպիսի են Բագրատունիք, հաղուագիւտ Արեւելքում թէ Արեւմուտքում: Տոհմ է բազմադարեան, աշխարհաշէն և աշխարհակալ և փայլեց իր հանճարով յատկապէս արաբական շրջանում:

Իններորդ դարը ընկճուած ազգութիւնների սթափումի եւ զարթումի դար էր: Արաբական պետութիւնն այլեւս ահարկու չէր թւում: Ամիրապետների երեկուան հուժկու ձայնը սկսել էր նուազել: Նրանց կուսակալներն անգամ անջատական հակումներ էին ցոյց տալիս և պատրաստ էին պատեհ առթիւ խզել իրենց կապերը կենտրոնական իշխանութիւնից: Խալիֆների պետութիւնն անպայման քայքայման մէջ էր, մինչ նրա ախոյեան Բիւզանդական կայսրութիւնը նոր ոգի առած ընթանում էր դէպի բարձրութիւն:

Քաղաքական մթնոլորտի լոյծ դրութիւնը գաղտնիք չէր: Խլրտումներ ու խռովութիւններ անպակաս էին որպէս բնական հետեւանք: Ազգային ճնշուած զգացումներն արթնացած հետամուտ էին իրենց օրինական իրաւունքների: Պարսկաստանը, կրօնական աղանդաւոր պատրուակի տակ, սնում էր եւ ծաւալում քաղաքական ազատագրութեան ծրագիրներ: Զօրաւոր շարժումը ծայր էր տուել Հայաստանի սահմանադլխում, Ատրպատականի մէջ: Մուսուլման ներքին գժտութիւնները հնարաւորութիւն տուին Հայերին հանգիստ առնել եւ վերակազմուել մերձաւոր անցեալի ահաւոր հարուածներից:

Տարաժամ ապստամբութիւնն որ պայթեց ութերորդ դարի երկրորդ կէսին ջլատել էր հայ մարտիկ ոյժերը: Մամիկոնեան առիւծները, ըմբոստութեան այդ աներկեւան դրօշակակիրները, վերջին հրաժեշտն էին տուել հայ կեանքին: Ասպարէզը մնացել էր նրանց հակառակորդ եւ մրցորդ Բագրատունի իշխաններին: Խոհեմութիւն չէր, անշուշտ, Մամիկոնեանների կողմից՝ կանխել ապագան եւ բաց ճակատ յար-

1 Ներկայ յօդուածս հիմնովին վերամշակումն է այն գրութեան որ երեւաց Հայրենիքի մէջ նոյն վերնագրի տակ: Վերջինիս հազիւ քանի մի էջեր են մնացել անփոփոխ:

դարել թշնամու դէմ մի այնպիսի ժամանակ, երբ սա, թէեւ արդէն անկման ճանապարհի վրայ, բայց տակաւին բաւականին զօրեղ էր սանձելու անհնազանդութեան ճիգերը: Պէտք էր սպասել հիւծման վերահաս ժամին, որպէսզի կարելի լինէր յանգել յաջողութեան, յանգել մանաւանդ առանց մեծ զոհողութեան:

Բայց եւ այնպէս 775 թուի ապստամբութեան խիզախ փորձն անպտուղ չանցաւ: Պարտութիւնները, ռազմական դաշտերի անյաջողութիւններն ևս իրենց յատուկ խորհուրդն ունեն: Մամիկոնեան ընդվզումը թողեց այն կտակը որ յաղթական Արաբը բնաւ անպարտելի չէ եւ ո՛չ էլ հայ քաղաքական տենչանքը՝ սին երազ:

Երազն իրականացաւ չնորհիւ Բագրատունիների, որոնք հեռուներից եւ պատկեցին յաջողութեամբ մի քաղաքականութիւն որի հիմը դրել էր Բագրատունի Աշոտ Կոյրը, նա որ զոհեց հայրենիքին իր աչքերի լոյսը: Տոկուն աշխատանքով, շրջանկատ հեռատեսութեամբ, կշռելով հանգամանքները, չանտեսելով ո՛չ մի միջոց, նաեւ դէնքի դիմելով ի հարկին, Աշոտ Կոյրի սերունդը կարողացաւ պատկառանք ազդել հայ անուան եւ թագը կապել ոչ միայն հայրենի երկրում, այլ եւ նրանից դուրս: Բագրատունի տոհմը, որպէս հինաւուրց մայրի, փռեց իր յայնաստրած ճիւղերը հայ եւ հարեւան երկիրների վրայ: Առաջին փորձն էր կապել հայ, Վրացի, ապուան եւ միւս դրացի ժողովուրդները համերաշխութեան օղակով Բագրատունի հարստութեան հովանու ներքոյ:

Մեծախորհուրդ է, որ Վրաց ազգային յիշատակարանը, յայտնի Քարթլիս ցխովրեբան, բացում է այն նշանաւոր յայտարարութեամբ թէ Հայ, Վրացի, Ապուան, Մինգրել, Լեզգի եւ միւս կովկասեան ժողովուրդները կազմում են մի բնաւնիք եւ սերում են հսկայ Թորգոմից որ յաղթեց Ներրոթին եւ հաստատուեց Արարատի ստորոտում:

Վրաց յիշատակարանը խմբագրուած է ոչ յատաջ քան ԺԱ դարը, մի այնպիսի ժամանակ, երբ Վրաց ազգային ինքնագիտակցութիւնն ու քաղաքական կեանքը մեծ խոյանքի մէջ էր: Շատերին խորթ է թւում որ այսպիսի պայմաններում վրացի դրիչը հնարաւոր է դտել խոստովանել եւ տալ Հային առաջնութեան պատիւ: Սակայն պէտք չէ մոռանալ որ յիշատակարանի հեղինակը եկեղեցական անձ է: Որքան եւ կաշկանդուած լինէր նրա միտքն ազգային ինքնատիրութեամբ, նա չէր կարող, վանականին յատուկ բարեպաշտութեամբ, ուրանալ Սուրբ Գրքի հեղինակութիւնը որի համաձայն նորոգ մարդկութեան որորանը Արարատն է, Հայաստանը, չէր կարող անտեսել պատմական ճշմարտութիւնը որ Հայաստանը թէ իր տարածութեամբ եւ թէ անցեալ կեանքով «հանուրց հիւսիսականաց վեհագոյնն» է: Նա քաջածանօթ էր հայ պատմական մատենագրութեան, որի նմանը չունէին դրացիները եւ որից քաղած նիւթերն եւ ներշնչումները զգալի են նրա առասպելական երկի մէջ: Այս բոլորի հետ հաշուի է առնելու եւ Բագրատունեաց կատարած խաղաթաթ դերը, նրանց չաղկապող քաղաքականութիւնը: Հայ գաւակ լինելով, գործեցին Վրաստանում որպէս Վրացի, եւ Ապուանքում ծառայեցին տեղական շահերին: Այն դիտակցութիւնն, որ միեւնոյն կոճղի արենակից ոստերն են, պահեց նրանց մէջ հաշտ համակեցութեան ոգին և սովորական մրցութեան եռանդը երբեք չարատաւորուեց արիւնահեղ տեսարաններով և ո՛չ էլ երբեմնակի ընդհարումները տեղի մեծ ծաւալ ստացան քան այն յուզումները որ պայթում էին միջավայրի յատուկ ելեկտներով, միեւնոյն երկրի զանազան տարրերի մէջ: Բագրատունեան շրջանի բարի հարեւանութիւնը եզակի երեւոյթ է, երբ յիշենք մարդկային այն տարութիւնը որ ամէն տեղ եւ ամէն ժամանակներում դրացի ժողովուրդները համակուած են փոխադարձաբար անբարի զգացումներով:

I

Բագրեւանդի արիւնահեղութիւնը 775 թուին հիմը դրեց նոր քաղաքականութեան: Ըմբոստական ցոյցերը տեղի տուին խոհեմութեան: Մամիկոնեան կարմիր գինուորները իջան պատմութեան ասպարէզից: Մուշեղն ընկաւ մարտի դաշտում: Նրա երկու որդիները փախան Վատպուրական: Վրիժառու թշնամին հալածում էր նրանց: Մեհրուժան Արծրունին սպանեց ամարդաբար Մամիկոնեան պատանիներին, սեւ անուն թողնելով պատմութեան մէջ: Նրանց քոյրը ամուսնացաւ Ջահապ մուսուլման իշխանի հետ, վերահաս վտանգից փրկուելու համար:

Մամիկոնեան իշխանուհին Արաբի հարսանեկան ուստագաստում՝ որպիսի ողբերգութիւն է Մուշեղների մարդ ուտի մէջ:

Քիչ յետոյ կորաւ նաեւ Կամսարական նշանաւոր տունը: Խաղբաց արշաւանքին, նրանց դէմ ելնելով, մեռաւ Ներսեհ Կամսարականը 785 թուին եւ նրանով վերջացաւ Կամսարական տոհմը, Մամիկոնեանների ազգական եւ հաւատարիմ

դաշնակիցը: Այս երկու փայլուն ասողերն ընկան գրեթէ միաժամանակ հայ երկնակամարից:

Մնացին Բագրատունիք պատասխանատու դերում մի-դապատ ապագայի հանդէպ: Ուղին դժուարակոխ էր, թէեւ նրանց ընտրած քաղաքական թելը թւում էր հաստատ: Քանի մի սերունդ նոյն ուղիով էին ընթացել: Աշոտ Կոյրի թողած աւանդին հետեւեցին նրա հօրեղբօրորդի Սահակը, եւ սրա որդի Աշոտը, և այն բաղարատը որ ընկաւ Ներսեհ Կամսարականի հետ Խազարաց եւ Հոնաց դէմ ճակատելով 785 թուին:

Աշոտ Կոյրի որդին Սմբատ սպարապետ մասնակցեց 775 թուի ապստամբութեան, թերեւս, այն պատճառով որ Մամիկոնեան փեսայ էր: Մի քայլ էր որ կարող էր վարկարեկել արաբական իշխանութեան առ Բագրատունիներն ունեցած վստահութիւնը: Իշխանաց իշխան կարգուեց Արաբների կողմից Տաճատ Անձեւացին որ այդ միջոցին, 782 թուին, թողել էր բիւզանդական ծառայութիւնը եւ անցել Արաբների կողմը: Օթման ոստիկանը դժուարանում էր կատարել ամիրապետի կարգադրութիւնը, տեսնելով հայ իշխանների ընդդիմութիւնը: «Ցղէր դեսպանս առ իշխանն իւրեանց, ասում է Ղեւոնդ, եթէ ոչ է կամք միաբանութեան նախարարաց Հայոց, եթէ զայր մի ապստամբեալ յիշխանութենէդ քումմէ և ձեռն տուեալ առ արքայն Յունաց կացուցանել իշխան ի վերայ այսոցիկ որ նուաճեալ են ընդ իշխանութեամբ քով, դուցէ եւ դաւաճան գօրաց մերոց լինիցի»[1]:

Տաճատ Անձեւացին առաջին ապստամբութեան ժամանակ թողել էր հայրենիքը, մտել բիւզանդական բանակը եւ մեծ հռչակ ստացել քսաներկու տարուայ ծառայութեան ընթացքին: Սրա թեկնածութեան ընդդիմացող իշխանները, հարկաւ, Բագրատունիներն էին, որ իրենց ժառանգական իրաւունքն էին համարում իշխանաց իշխանի կոչումը: Ոստիկանը ստիպուած էր տեղի տալ բարձր հրամանին եւ իշխանութիւնը տալ Տաճատին, որ Հարունի անձնական բարեկամն էր:

Տաճատ սպանուեց Խազարաց արշաւանքին Բագարատ Բագրատունու եւ Ներսեհ Կամսարականի հետ 785 թուին: Ասպարէզը մնաց Սմբատի որդիներին:

Սմբատի եղբայրը, ուրեմն Աշոտ Կոյրի միւս որդին, որ կոչւում էր Վասակ, յիշւում է 775 թուի ապստամբութեան ատեն, բայց յայտնի չէ թէ անմիջական մասնակցութիւն ունեցաւ Բագրեւանդի կուռին: Վասակ թողեց հայրենի

1 Ղեւոնդ, գլ· ԼԲ· (Ս· Պետերբուրգ, 1887 թ.):

ամրոցը Դարոյնք, այժմու Բայազիտը, եւ հեռացաւ Տայք: Սա է, այս Վասակը, Վրաց Բագրատունիների նախահայրը, ինչպէս կը տեսնենք:

Սմբատ երկու որդի ունէր, Աշոտ որ կոչուեցաւ Մասակեր, եւ Շապուհ: Սրանք են, որ սկիզբը դրին Բագրատունեաց մեծութեան: Ի՞նչ պայմաններում և ինչպէ՞ս գործեցին երկու եղբայրները եւ իրենց յետնորդները, հայ աշխարհի նորոգ չինարարները:

Խռովարար ցոյցերի հետեւանքով արաբ իշխանութիւնը հեռամուտ եղաւ զօրացնելու արաբական գաղութները Հայաստանում:

Ինչպէս արեւելեան բոլոր աշխարհակալները, ամիրապետները սովորութիւն ունէին ցեղակից գաղութներ հաստատել նուաճուած երկիրներում, որպէս բնական նեցուկ իրենց տիրապետութեան: Հարկաւ, ամենից առաջ աշխատում էին բռնել խոշոր կենտրոնները և ռազմական նշանակութիւն ունեցող ամրոցները ստուար զինուորական ոյժերով, որոնց յարում էին անմիջապէս իրենց ընտանիքները և այսպիսով կազմում էին մուսուլման ազդեցիկ համայնքներ:

Հայաստանի, բառիս լայն, արաբական ըմբռնումով, բոլոր գլխաւոր քաղաքները հոծ արաբական բնակչութիւն ունէին: Ոչ միայն վարչական եւ զինուորական կենտրոնները, Դուին, Պարտաւ, Թիֆլիս, Կարին, Խլաթ այլ եւ միւս խոշոր աւանները, Արճէշ, Բերկրի, Դատուան, Նախճուան, Հեր, Սալմաս, մուսուլմանների ձեռքին էին:

Ղեւոնդ երէցի ասելով, Եզիդ որդի Ուսադի, որ ոստիկան եկաւ Խալիֆ Մանսուրի առաջին տարին, ուրեմն 754 թուին, «ածեալ արս յորդւոցն Իսմայէլի բնակեցոյց ի նմա նոցին ընտանեօք պահել զքաղաքն եւ զգուշանալ ի թշնամեացն: Եւ կարգեաց նոցա պատրաստութիւն կերակրոց յաշխարհէս Հայոց»:

Երբ Մուշեղ Մամիկոնեան ապստամբելով սպանեց Բագրեւանդում Ապումճուր անուն արաբ պաշտօնեային, նրա վրայ եկան «յորդւոցն Իսմայէլի ի քաղաքէն Կարնոյ որք էին արք իբրեւ երկերիւր վառեալք կուռ սպառազինութեամբ»:

Սրանց պարտութեան լուրը Դուին հասնելուն պէս, քաղաքի մուսուլմանները չտապեցին օգնութեան ոմն Ապունջիպ արաբացու առաջնորդութեամբ եւ ունենալով «ընտիրս հեծելոց իբրեւ արս չորս հազար» յարձակուեցին Մուշեղի վրայ:

Հայ ապստամբները պաշարեցին Արճէշ, անշուշտ, որովհետեւ Արաբների կենտրոն էր: Բնակիչները իմաց տը-

ւին Խլաթ արաբ ոյժերին քաղաքի պաշարման մասին: Արաբական զօրքը, Խորասանեան մեծ բանակը, մօտ 30 հազար մարդ, արդէն ժամանել էր Խլաթ: Ապստամբութիւնը ճնշելուց յետոյ, հաւանական է որ հազարաւոր Խորասանցիների մի մասը ևս մնաց Հայաստանում, որպէս մշտական բնակիչ:

Ութերորդ դարի վերջին քառորդին արաբ իշխանութիւնը մեծաքանակ ցեղեր գաղթեցրեց Հայաստան եւ նաեւ էեղաւ նրանցից կազմելու հողատիրական միութիւններ, որպէս հակակշիռ նախարարական կարգերին:

Արաբական յայտնի եւ ազդեցիկ ցեղերը վաղուց բոյն էին դրել հայկական Միջագետքում, Ամիդի, Եդեսիայի եւ Մծբնի շրջաններում: Անապատի որդիները դիւրաւ տարածեցին Սասանեանների աշխարհասասան պետութիւնը մասամբ այն պատճառով, որ ցեղական յենարաններ ունէին գլխաւոր ճանապարհների վրայ: Դարերի ընթացքում արաբական հեղեղը հասել էր կամացուկ եւ լճացել Եփրատ եւ Տիգրիս գետերի տափաստաններում, ծնունդ տալով մեծամեծ իշխանական տների, որ բնական հանգրուաններ դարձան նոր ալիքների համար:

Հիւսիսային Միջագետքը, հին Ասորեստանը, որ Արաբները կոչում էին Ջեզիրա «կղզի», բաժանուած էր երեք շրջանի՝ Դիար-Բակր, Դիար-Ռաբիա եւ Դիար-Մուդար: Դիար յոգնակի ձեւն է 'Դար բառի որ նշանակում է «բնակութիւն», իսկ Բակր, Ռաբիա եւ Մուդար արաբական նշանաւոր ցեղերն են, որ գրաւել էին այդ շրջանները: Առաջին կենտրոնն է Ամիդ, որ ցայժմ էլ պահել է արաբական Դիարբակր կամ Թուրք արտասանութեամբ Դիարբեքիր անունը, երկրորդի՝ Մծբին եւ երրորդի՝ Եդեսիա կամ Ուռհա (Թուրքերէն՝ Ուրֆա):

Արաբները, յայտնի է, բաժանուած էին երկու մեծ հաւաքածի՝ հիւսիսային, որ կոչւում է Նիզար, եւ հարաւային՝ Եաման կամ հին գրութեամբ Յաման: Յիշեալ երեք ցեղերը պատկանում են հիւսիսային հաւաքածին: Սրանցից շատ յառաջ Միջագետքում հաստատուել էին Եաման կամ Եմեն հաւաքածին պատկանեալ ցեղեր, որոնց թւում Տայ ցեղը: Այսպէս են կոչում Ասորիները Արաբներին: Նոյն Տայ անունից է ծագում եւ պարսկական Տաճիկ բառը, ընդունուած մեզ մօտ:

Թւում է թէ ամենահին գաղթականութիւնը Հայաստանում հարաւային կամ Եաման ցեղերն էր: Սրանք կողմնակից էին Օմմայեան տան, մինչդեռ Նիզար ցեղը պաշտպան էր Արասեան խալիֆներին:

Մեր պատմագէտները յիշում են Յամանիկ իշխան արաբացի Պարսաւ քաղաքում: Երեւում է որ Յամանիկ զաղութ է եղել Աղուանից մայրաքաղաքի շրջանում: Հաւանական է նաեւ որ զաղութը Օմմայեանների ժամանակներից լինի, նկատի առնելով այդ ցեղի համակրութիւնը Օմմայեան խալիֆներին:

Աւելի դրական տեղեկութիւն կայ Նիզար ցեղի մասին: Հարուն ալ Ռաշիդի առաջին տարին, ուրեմն 786 թուին, ասորական եկաւ Իւսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամի, որը մեծ գաղթականութիւն բերեց Նիզար ցեղից: Մեծ հաւաքածները կային նմանապէս Բակր եւ Մուդար ցեղերից: Բակրի արիւն ունէր Շայբանի տոհմը, որ հաստատուած էր Ամիդ եւ զօրանալով ձգտում էր ձեռք դնել մերձակայ հայ հողերի վրայ: Կուսակալութեան պաշտօնը, որ յաճախ տրւում է այդ տոհմի ներկայացուցիչներին, նպաստաւոր միջոց էր նրանց զօրացման:

Շայբանի տոհմից էր Եզիդ իբն Մազիադ, որ երեք անգամ կուսակալ նշանակուեց Հայաստան 775–800 տարիների ընթացքին: Առաջին կուսակալութեան ժամանակ, մօտ 787 թուին, տեղափոխեց Հայաստան Ռաբիա ցեղից մեծ բազմութիւն: Բակր ցեղը, որին պատկանում էր ինքը, մի ճիւղաւորումն էր Ռաբիայի, ուրեմն, իր ցեղակիցներին էր բերել հաստատելու Հայաստան, ամրացնելով նրանց միջոցով եւ իր տոհմի ազդեցութիւնը:

Իսկ Եզիդի յաջորդ Աբդալ Կաբիրը գաղթականութիւն հանեց Մուդար ցեղից նմանապէս մեծ չափով: Այս ցեղը մի քանի ճիւղեր ունէր, որոնց մէջ յայտնի էին մանաւանդ Կայս եւ Ուրման: Կայս տարածուած ցեղ էր եւ այնքան ազդեցիկ, որ երբեմն նրա անունով էր կոչւում ամբողջ Նիզար խումբը:

Աբդալ Կաբիր ոստիկանի բերած գաղթականները Կայս եւ Ուրման ցեղերից էին, որ մեր հեղինակների մօտ կոչւում են Կայսիկ եւ Ուրմանիկ (ինչպէս Տաճիկ, Պարսիկ, Խուժիկ): Կայսիկները հաստատուեցին Ապահունեաց գաւառում, կենտրոն ունենալով Մանազկերտ, այժմ Մելազկերտ, քաղաքը, իսկ Ուրմանիկները՝ նրանց հարեւան Արբերանի գաւառում, Բերկրի քաղաքի և Ամիւկ բերդի սահմաններում:

Սեբէոս պատմիչը հաւաստացնում է որ տակաւին Թէոդորոս Ռշտունիի օրով արաբ զինուորները հաստատուեցին Արբերանի գաւառում: Բիւզանդական Մաւրիան զօրավարի դէմ Ռշտունի իշխանը որպէս թէ խնդրած էր Արաբներից օգնական զօրք և Մաւրիանին վանելուց յետոյ բնակեցրել էր եօթն հազար արաբ զինուորներ Արբերանի եւ Ադիովիտ, այսինքն

այն շրջանում, ուր ոտ դրին Կայսիկ եւ Ութմանիկ ցեղերը:

Դժուար թէ Ռշտունի իշխանի ժամանակակից արաբական գաղութը յարատեւած լինի մինչեւ Կայսիկների գալուստը: Հաւանօրէն, երբ Ռշտունուց յետոյ Հայաստանը նորէն Բիւզանդիոնին անցաւ, Արաբները հեռացան կամ ոչնչացան: Նրանց մասին խօսք չկայ հետագայ դարերի շարժումների ժամանակ:

Ցամանիկ եւ Նիզար ցեղերը բերել էին իրենց նոր բնակավայրը իրենց հին փոխադարձ ատելութիւնը եւ թշնամութիւնը: Ի՞նչ գժտութիւններ էին ծնել նրանց մէջ, յայտնի չէ: Հաւաստի է միայն այն, որ նոյն Եզիդ Բ Մազիադ Շայբանի, որ Նիզարներին բերել էր Հայաստան, նորէն կուսակալ գալով, մերձ 799 թուին, ստիպուած էր մեղմացնել եւ հաշտեցնել Նիզար եւ Ցաման ցեղերը:

Այս տեղեկութիւնները ստոյգ են, որովհետեւ ծագում են արաբ Եակուբի մատենագրից, որ երկար տարիներ ապրել է Հայաստանում և քաջածանօթ է տեղական պատմութեան[1]:

Այսպէս, ուրեմն, Հարուն ալ Ռաշիդի օրով (786-809) երեք յաջորդական ոստիկան բերեցին Հայաստան երեք ցեղերից զանգուածներ, Նիզար, Ռաբիա եւ Մուդար:

Թւում է որ հոսանքը չդադարեց և հետեւեալ դարում: Նոյն Եզիդի որդին Խալիդ երկու անգամ ոստիկան նշանակուեց Հայաստան 830 եւ 843-844 թուերին եւ երկու անգամն էլ իր պաշտօնատեղին եկաւ Ռաբիա-ցեղի բազմութեամբ: Սրանց մի մասը, հաւանական է, մնացած լինի երկրում: Նրան է վերագրւում Դանձակ քաղաքի շինութիւնը, որ պէտք է հասկանալ վերաշինութեան մտքով[2]: Անբնական չէ, որ նոր քաղաքում արաբ բնակչութիւն թողած լինէր:

Տխրահռչակ Բուղա զօրավարը եւս իր հետ արաբ դերդաստաններ էր բերել, ինչպէս վկայում է Թովմա Արծրունին. «սկսան այնուհետեւ աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն տաճկաց որ ելեալ էին զհետ նորա (Բուղայի) ընտանեօք իւրեանց, եւ ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս»[3]:

Ամիդ քաղաքի Շայբանի տոհմին հարեւան էր մի ուրիշ մուսուլման իշխանական տուն, որ մեր մատենագիրները կոչում են Զօրահա, իսկ Արաբացիք՝ Զուրարա: Այս տան ոստանն էր Արզն, Աղձնիքի գլխաւոր քաղաքը, նրա ձեռքն էր նաեւ Նփրկերտ (այժմ Մուֆարղին) և Բաղէշ: Շայբան տոհ-

1 **Marquart**, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, p. 453.
2 Մովսէս Կաղանկ. գ. գլ. Ի.
3 Թովմա Արծրունի, գ. Ե, էջ 170 (կ. Պոլիս, 1852):

մի հարեւանութիւնը վտանգաւոր էր եւ մշտական սպառնալիք, ուստի Զուրարի որդիք հակամէտ էին մշակելու բարի յարաբերութիւն հայ իշխանների հետ:

Արաբները միակ օտարամուտ տարրերը չէին:

Ութերորդ դարի կէսին Հունգար կամ Մաջար ժողովրդեան մի հատուած, ճեղքելով կովկասեան շղթան, եկաւ հեռաւոր հիւսիսից եւ հաստատուեց Ուտեաց աշխարհի սահմաններում: Դրանք յայտնի են մեր մատենագիրների մօտ Սեւորդիք անունով: Սակայն, յաջորդ Թ դարում սրանք արդէն ձուլուել էին Հայերի հետ եւ աւելի դաշնակից էին ընդդէմ Արաբների, քան թշնամի:

Իններորդ դարի կէսին զօրավար Բուղա բաց արաւ Դերբենդի պահակը եւ 300 ընտանիք խազար ժողովրդից բերեց եւ բնակեցրեց Շամքորի շրջանում: Իսկ Դարիալի (Ալանաց դուռն) մօտերքից բերեց նոյնքան Օս ընտանիք եւ հաստատեց Դմանիս[1]:

Կարեւորը եւ վտանգաւորը, սակայն, արաբ բնակչութիւնն էր թէ՛ քանակով եւ թէ՛ քաղաքական արժէքով: Քաղաքները, երկրի այդ զարկերակները, նրանց ձեռքն էին: Եւ որովհետեւ քաղաքները կապուած էին միմեանց կանոնաւոր ճանապարհներով, ուստի արաբ դաղթականութիւնը աւելի սերտ եւ կազմ միութիւն էր, քան անջատ եւ անմատոյց ամրոցներում փակուած նախարարական ոյժերը:

Ղեւոնդ Երէցը յիշում է արքունի պողոտայ, որով հասկանալու է պետութեան կողմից խնամուած ճանապարհ: Ոստիկանական մայրաքաղաքից, Դուինից, մի չարք գծեր տանում էին դէպի երկրի ծայրերը.

Դուին, Մանազկերտ, Արճէշ, Խլաթ:
Դուին, Նախճուան, Հեր, Արտաւիլ:
Դուին, Սիսական, Կաղանկատու, Պարտաւ:
Դուին, Բագարան, Կարին:

Պարտաւ միացած էր նաեւ կարեւոր կենտրոնների՝ Թիֆլիսի, Դերբենդի, Վարդանակերտի եւ Արտաւիլի հետ:

Հայկական բարձրաւանդակի երկու նշանաւոր դռները, Խլաթ եւ Նախճուան, բաց էին եւ դիւրին էր ի դէպ հարկի զօրամասեր հանել Ատրպատականի եւ Միջագետքի բանակներից եւ շարժել երկրի ներսը:

Մոռանալու չէ նաեւ, որ քաղաքացի արաբները լաւ կազմակերպուած էին: Իւրաքանչիւր քաղաք ինքնավար համայնք էր յատուկ ազգապետի եւ դատաւորի առաջնորդու-

1 **Brosset**, Histoire de la Géorgie, I, 266.

թեան տակ: Իսկ հողատէր բազմութիւնները, ինչպէս Կայսրիկ եւ Ուլթմանիկ ցեղերը, հաստատեցին իշխանական տներ: Կայսրիկների իշխանական տոհմը կոչւում էր Ջահապ, արաբերէն Ջահաֆի, (որ իսկապէս իրանական Շահապն է) սկիզբն առնելով այն անձից, որ փեսայացաւ Մամիկոնեանց:

Օտարամուտ համայնքները բարեկամ չէին տեղական շահերի: Նրանք պտուտակներ էին պետութեան վարչական մեքենայի եւ պատրաստ էին ամեն կերպ պիտանի լինել երկրի արաբ պաշտօնէութեան: Երբ խուժում էին արաբական զօրքերը, նրանք էին առաջնորդում: Եթէ հարկաւոր էր ամրաստանել կառավարութեան առաջ որեւէ անախորժ հայ իշխան, յօժարակամ վկաները դարձեալ տեղացի արաբ բնակիչներն էին: «Տաճիկք Հայաստանեայց, որ բնակեալ էին ի կողմանս կողմանս աշխարհիս առաջնորդէին Բուհայի ի մուտ և ելս աշխարհիս», գոչում է Թովմա Արծրունին: «Ամբաստան յոյժ լինէր (Աբուսեթ) զԱշոտոյ հանդերձ Թղթովք Տաճկաց որք էին ի կողմանս Հայոց», վկայում է դարձեալ նոյն պատմագիրը:

Արաբ գաղութները կատարեալ որոգայթներ էին, լարած երկրի սրտում: Առանձին կեցուածք ու քայլուածք, առանձին շարժ ու ձեւ էր հարկաւոր հայ ղեկավար ոյժերի կողմից այն կատաղի պայքարում, որ սկսուեց Հայաստանում ընդդէմ արաբական բռնութեան իններորդ դարու սկզբում և որ նոյն դարու վերջում-յանգելու էր քաղաքական ազատութեան:

II

Աշոտ Մսակերն էր այն մեծ անձը, որ իր եղբօր Շապուհի հետ հանեց երկիրը վհատ եւ լքուած վիճակից եւ մեծագործ հիմնադիրն եղաւ նոր եւ լուսաւոր շրջանի:

Սմբատ սպարապետի, 775 թուի զոհերից մէկի, որդիքն էին: Երկար ժամանակ ապրում էին անյայտութեան մէջ: Արդեօք պատա՞նդ էին ամիրապետի արքունիքում թէ ապաստանել էին հեռու Սպեր գաւառը, խուսափելով Արաբների վրէժխնդրութիւնից, եւ խոհուն լռութեան մէջ պատրաստւում էին առաջիկայ պայքարին: Նրանց հօրեղբայր Վասակը նմանապէս քաշուել էր Տայք, որտեղից հիմը պիտի դնէր Վրաց քաղաքական վերածնունդի:

Աշոտը կոչւում է Մսակեր գուցէ այնպէս, ինչպէս Արծրունի իշխաններից մէկը կոչւում էր Կովակեր: Հնարաւոր է նաեւ, որ հակապահեցողական ազատամտութեան արդիւնք է

այս յորջորջումը: Ցայտնի է Աշոտի յարաբերութիւնը Խառանի եպիսկոպոս Թէոդոր Աբիկուրայի հետ կրօնական խնդիրների առթիւ:

Աշոտի առաջին գործը եղաւ նոր եւ ապահով ոստանի հոգսը: Բագրատունեաց բնիկ ոստանը Դարոյնքն էր, այժմեան Բայազիտը, Կոգովիտ գաւառում, Մասիսի ստորոտում: Դարոյնքի ապահովութիւնը վտանգուել էր եւ ռազմագիտական արժէքը նսեմացել այն օրից, երբ արաբ ցեղերը, Կայսրիկ եւ Ուլթմանիկ, եկել եւ հաստատուել էին հարեւան Հարք եւ Ապահունիք գաւառներում: Մի կողմից սրանք միւս կողմից ոստիկանական Դուինը մշտական պահակազօրքով, մէջտեղը Դարոյնքն էր երկուստեք հարուածի տակ: Հայրենի միւս կալուածը Սպեր հեռու էր եւ անապահով Բիւզանդիայի կողմից:

Դարոյնք եւ Սպեր, մէկը մօտ Արեւելեան մեծ պետութեան, միւսը՝ Արեւմտեան, Բագրատունի տոհմի երկու ոտներն էին, ամուր կռուանները, որոնց յենւում էին փոփոխակի, նայելով թէ ո՞ր պետութեան դէմ էին ծառանում եւ որի՞ն ծառայում: Դարոյնք այժմ կորցրել էր իր նշանակութիւնը յիշեալ պատճառով:

Տեսանք, որ 775 թուին մեռաւ Խազրաց դէմ պատերազմելիս Ներսեհ Կամսարական: Այնուհետեւ Կամսարական իշխաններ չեն յիշւում: Պէտք է ենթադրել որ տոհմը սպառուել էր: Աշոտ Մսակերն օգտուեց այս հանգամանքից եւ Կամսարականների ժառանգներից գնեց Արշարունիքի մի մասը, ուր Բագարանն էր, եւ հաստատուեց այնտեղ:

Անակնկալ խոչընդոտ: Արշարունիքի մի մասը Արտագերս հռչակաւոր ամրոցով պատկանում էր Մամիկոնեաններին: Այստեղ էր ամրացած Մուշեղ Մամիկոնեան իր ընտանիքով, Բագրեւանդի ճակատի հերոսը: Արաբ Ջահապ իշխանը, այն որ ամուսնացել էր Մուշեղի դուստրներից մէկի հետ, «յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց եւ խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին»:

Ջահապ եկուոր արաբ ցեղերի պետն էր, որոնց պատճառով Աշոտ իր հայրենի ոստան Դարոյնքից քաշուել էր Բագարան: Այս անախորժ հարեւանութիւնն այժմ հետապնդում էր նրան, որ անհանդուրժելի էր: Աշոտ, իր եղբօր Շապուհի հետ, ընդդիմացան Ջահապի յաւակնութեան: Ոչ միայն տիրացան Արշարունիքին, այլ եւ «ելեալք զկողմամբքն Շիրակայ հարին զզօրսն Իսմայէլի որ անդ եւ գրաւեցին յինքեանս զՇիրակ եւ զԱշոցք եւ զգաւառն Տայոց»[1]:

1 Վարդան, ԽԱ (= Շապուհ Բագրատունուց):

Ասել է թէ Բագրատունի եղբայրները ձեռք բերին Ախուրեանի ամբողջ հովիտը եւ Տայք, եւ քանի որ Դարոյնք եւս չթողին, ուրեմն նրանց երկիրը տարածւում էր Կոգովիտից մինչեւ Սպեր: Այս յաջողութեան համար է, որ Աշոտ կոչւում է նաեւ քաջ:

Ուղիղ հարիւր տարի առաջ Աշոտի նախնիքներից մէկը, Սմբատ Բիւրատեան, թողել էր Դարոյնք եւ հաստատուել Տայքի Թուխարք բերդում, «որպէս զգուշութիւն ի Իսմայելացւոց»[1]:

Կայսիկ եւ Ութմանիկ Արաբները ցանկալի հարեւաններ չէին բնաւ:

Գնունեաց տունը, որ ապրում էր Աղիովիտ գաւառում, շուտով զգաց նոր դրացիութեան դառնութիւնը եւ դիմեց Աշոտին: Հազար մարդով Աշոտ մտաւ Աղիովիտ, հանեց Գնունեաց տոհմը, տարաւ բնակեցրեց Տայք:

Այս կտրուկ միջոցը բացատրելու է նրանով, որ Գնունիք նեղւում էին ոչ միայն հարեւան արաբացիներից, այլ և արաբ իշխանութիւնից: Մոռանալու չէ, որ նրանք եւս մասնակցել էին Մամիկոնեանց ապստամբութեան ի դէմս Վահան Գնունու, որ կոչւում էր Դաշնակ (երաժի՞շտ):

Նոյն ժամանակները տեղի ունեցաւ նաեւ Շապուհ եւ Համամ Ամատունեաց իշխանների գաղթը 12 հազար մարդով դէպի Տայք, այնտեղից Պարխար լեռները: Այրուձին եւ իշխանները մտան բիւզանդական ծանակը, իսկ հասարակ ժողովուրդը հաստատուեց այնտեղ, որ ցայժմ էլ կոչւում է Համշէն, այսինքն Համամաշէն, Շապուհի որդու Համամի անունով: Եթէ ստոյգ է, որ Ամատունիք ապրում էին Արտազի շրջանում, անհաւանական չէ ընդունել, որ այս չուն եւս արդիւնք էր նոյն վատ հարեւանութեան մի կողմից Կայսիկ ցեղի, մեւս կողմից Դուինի արաբների:

Աշոտի եւ Շապուհի առաջին նուաճողական փորձերը յաջողեցին: Հանգամանքները նպաստաւոր էին: Հայ շարժման հետ զուգաբար ընթանում էր պարսկականը: Ցուզումները բազմանում էին եւ պատրաստում էին մեծ փոթորիկ: Աբբասեան հարստութեան յաղթանակը կատարուած էր պարսիկ ոյժերի օժանդակութեամբ: Իրանական ազդեցութիւնը աճում էր հետզհետէ:

Առաջին խռովութիւնն ընդդէմ Օմմայեան տան ի նպաստ Աբասեանների, որ տեղի ունեցաւ Խորասանում, ոմն Աբու-Մուսլիմ պարսիկի գործն էր: Հարուն ալ Ռաշիդի օրով

1 Ղեւոնդ, էջ 26 (Ս. Պետերբուրգ, 1887 թ.):

Աբու-Մուսլիմի քարտուղարը Ատա ալ Մոկանա խմորեց քաղաքական մեծ շարժում ընդդէմ Արաբների, թագնուելով կրօնական վարագոյրի ետեւ:

Ատա հռչակեց ինքն իրեն որպէս մարմնացեալ աստուած: Նրա գործունէութեան ասպարէզը արաբական Հայաստանի արեւելեան ծայրերն էին աւելի քան բուն Ատրպատականը: Փայտակարանն էր նոր աստուծու ընտրեալ վայրը, արաբական Բայլական քաղաքը, որ գտնւում էր Պարտաւից 14 փարսախ հեռաւորութեան վրայ դէպի Երասխի ուղղութեամբ:

Արաբ փորձառու զօրավարները եկան պատժելու օտարոտի աղանդաւորին: Չկարողացան: Վարդանակերտի մօտ ճակատեցին, յաղթեց Ատա և գնաց ու առաւ Քալաթ ալ Կիլաբ (չների բերդ) կոչուած ամրոցը, որ Սիւնիքի սահմաններում է որոնելու: Պարտաւից նոր զօրք եկաւ, դարձեալ ճախողեց եւ զօրապետները ընկան կուում:

Ատա ալ Մոկանա խրախուսուած արշաւեց Դուին եւ պաշարուած պահեց չորս ամիս: Եւ դարձաւ Բայլական:

Հարուն ալ Ռաշիդ ղրկեց իր երկու նշանաւոր զօրավարներին, մեզ ծանօթ Եզիդ բ. Մազիադ ալ Շաբայնի եւ Եահեա ալ Հարաշի: Մէկը մտաւ Ատրպատական 12 հազարանոց գընդով, միւսը՝ Հայաստան 10 հազար մարդով: Երկուսը միացան յարձակուելու աղանդաւորի վրայ: Սակայն Ատա մեռել էր արդէն եւ նրան յաջորդել Բայլականցի ոմն Սական, աղանդաւորի մերձաւոր բարեկամը:

Առաջին անյաջողութիւնից յետոյ Բայլականցիք լքեցին ապստամբներին եւ ընդունեցին քաղաք ամիրապետի զօրավարներին: Սական փախաւ Քալաթ ալ Կիլաբ ամրոցը, բայց յետոյ ստիպուեց զէնքը վայր դնել եւ ներում խնդրել խալիֆի զօրավարներից: Եզիդ բ. Մազիադ բարւոք համարեց ղրկել նրան ամիրապետին: Երկիրը խաղաղեց:

Խառնակ դրութիւնից օգտուելով անձնական հաշիւներ էին յարդարում իրար յաջորդող կուսակալները եւ քաղաքապետները: Հիւսիսային անհանգիստ հարեւանները՝ Խազարները եւ Ծանարք եւս գլուխ բարձրացրին եւ պատեհ առիթ համարեցին հարաւ սուրալու աւարառութեան նպատակով:

Այս պայմաններում, երբ խալիֆի մտահոգութիւնը կենտրոնացած էր այլուր, Աշոտ եւ Շապուհ կարող էին հարուածել մուսուլման Զահապին, առանց վախենալու խալիֆի բարկութիւնից:

Ռաշիդի մահից յետոյ ծագեցին գահակալական աղմուկներ: Նրա ցանկութիւնն էր բաժանել պետութիւնը իր

երեք որդիների մէջ։ Սակայն Ամին, որ ծնուած էր իշխանուհի մօրից, յաջողեց գրաւել գահը (809-813)։ Մամուն սպանեց նրան եւ խլեց իշխանութիւնը։ Նոր խռովութեանց դուռը բացուեց։

Նոր գահակալը Հայաստանի եւ Ատրպատականի կուսակալութիւնը յանձնեց Տահիր իբն Մուհամմատ աս Սանանի։ Այդ ժամանակ Հայաստանում կուսակալ էր Իսհակ բին Սոլիման ալ Հարաշի, նշանակուած սպանուած ամիրապետի կողմից։ Սա չանսաց նոր խալիֆի հրամանին եւ չուզեց զիջանել երկիրը նորեկ կուսակալին։ Կուսակցական յուզումներ բարձրացան նոր եւ հին խալիֆի, նոր եւ հին կուսակալների շուրջը։

Տահիր աս Սանանի Ատրպատականի Վարդանակերտ կամ Վարթան, ինչպէս Արաբներն են ասում, քաղաքը ժամանելով, բանակցութեան մէջ մտաւ հայ սպարապետների եւ իշխանների հետ եւ սրանք ընդունեցին Մամունի իշխանութիւնը։ Հաւանօրէն, խօսքը Աշոտի եւ Շապուհի մասին է։

Սրանց հակառակ, Իսհակ բին Սոլիմանի կողմը բռնեցին այն քաղաքները որ աղանդաւոր Ատա ալ Մոկանայի առաջնորդութեամբ ապստամբել էին խալիֆի դէմ, եւ ամենից առաջ Բայլականը։ Իսհակի կուսակից յայտարարեցին իրենք իրենց նաեւ Ներսեհ և Աբդ ալ Ռահման տեղական իշխանները[1]։

Ոստիկանական մայրաքաղաք Պարտաւ Տահիրի կողմն էր։ Ուստի Իսհակ բին Սոլիմանը յարձակուեց Պարտաւի վրայ, բայց պարտուեց Տահիրի ղրկած զօրքերից եւ փախաւ, թողնելով իր որդուն թշնամու ձեռքին գերի։

Ահա այդ ժամանակ է որ Տահիրի դէմ դուրս եկաւ Աբդ ալ Մելիք ալ Զահաֆի, որ ոչ այլ ոք է, բայց եթէ որդի մեզ արդէն ծանօթ Զահապ իշխանի, հակառակորդի Աշոտի եւ Շապուհի։

Բայլականցիք քաջալերուած արշաւեցին Պարտաւի վրայ եւ պաշարեցին այնտեղ Տահիրին։ Շուտով օգնութիւն հասաւ ամիրապետից։ Տահիր ազատուեց։ Ինչ որ զարմանալի է, Աբդ ալ Մելիք ալ Զահաֆի պատիժ չկրեց իր ըմբոստութեան համար, այլ ներման արժանացաւ։ Կարգը վերահաստատուեց երկրի մէջ։

Այս թանկագին տեղեկութիւնները, որ պարտական ենք

1 Սրանց հետ էին նաեւ Օմար եւ Հազուն, որ թերեւս մի անձի անուն է և խանգարուած։ Գուցէ կարդալու է Համզա Արզուն, այսինքն Համզա Արծրունի։ Ցայտնի է որ Աշոտ Արծրունին, Բուղայի զոհերից մինը, կոչւում էր որդի Համզայի։ Թերեւս, խօսքն այս անձի մասին է։

նոյն արաբ Եակուբի մատենագրին, լոյս են սփռում Վարդան պատմիչի հակիրճ խօսքի վրայ, որ քաղուած է Շապուհ Բագրատունու, անցքերին ժամանակակից հեղինակի, պատմական երկից. «Իսկ Զահապն ապստամբեալ յիւրմէ իշխանէն զայ նստի ի Դուին բռնութեամբ որդւով իւրով Աբդլայիւ»[1]։

Քիչ յետոյ պատմագիրը դաւնալով Զահապին հաղորդում է, որ Զահապի տունը զօրացաւ Դուինում այնքան, որ հինգ հազար զօրքով կամեցաւ գնալ Տարօնի վրայ, որ պատկանում էր Աշոտ իշխանին, այսինքն Մսակերին։ «Ողջախոհ եւ քաջ» Աշոտ առանց սպասելու զօրքերի հաւաքման, երկու հարիւր ձիաւոր եւ երեք հարիւր հետեւակ մարդով յարձակուեց Զահապի որդու վրայ, կոտորեց նրա զօրքերից երեք հազար հոգի եւ աւարի տուաւ բանակը։ Միեւնոյն ժամանակ Շապուհ, Աշոտի եղբայրը, ասպատակեց Դուինի կողմերը եւ աւարով դարձաւ։ Մինչ քաղաքից դուրս են գալիս զօրքերը հետապնդելու Շապուհին, քաղաքացիք յարձակւում են Աբդ ալ Մելիքի վրայ եւ սպանում։ Լքուած զօրքերը ցրւում են։

Զահապ իշխանը հաստատուած էր Ապահունիք։ Մամունի գահակալութեան առթիւ ծագած կուսակալական հակառակութիւններից օգտուելով Զահապի որդին, Աբդ ալ Մելիք, ձեռք էր դրել Դուինի վրայ, կամենալով ապահովել իր բնիկ կալուածը Ապահունիք, նաեւ արեւմտեան կողմից, ուր ընկնում էր Տարօն նոյն Արածանի գետի հովտում։ Աբդ ալ Մելիք աչք է ածում Տարօնի վրայ։ Բայց չի յաջողում եւ ինքն էլ զոհ է գնում իր բռնութեան։

Այստեղից հետեւում է, որ Աշոտի եւ Զահապի մրցութիւնը՝ տիրանալու հայ երկրին, շարունակւում էր եւ ներքին խուլ մաքառումը պայթում էր երբեմն պատերազմով։ Երեւում է նաեւ, որ բախտի ժպիտը Զահապի երեսին չէր, եւ որ Աշոտ յաջողել էր տիրանալ Տարօն գաւառին։

Յաջորդ հերթական ընդհարումը Աբդ ալ Մելիքի ժառանգ Սեւադայի հետ էր։ Հաշիմից յետոյ կուսակալ է գալիս Հատիմ իբն Հարթամա իբն Այան։ Քիչ յետոյ նա լսում է որ Մամուն ամիրապետը սպանել է իր հօրը՝ Հարթամին։ Մամուն յաղթել էր իր եղբօրը չնորհիւ Պարսիկների։ Նրա արքունիքում զօրացել էր պարսկական ազդային հոսանքը ընդդէմ արաբական կուսակցութեան։ Հարթամի մահը վերադրւում էր պարսիկ ազդեցութեան։ Սպանուածի որդին Հատիմ ապստամբեց խալիֆի դէմ, թողեց Պարտաւ քաղաքը եւ

1 Վարդան, էջ 77։

քաշուեց Վրաստան: Հօր սպանութիւնը տեղի ունեցաւ 201 հիջրի = 816-817 թուին: Ապստամբութիւնն ուրեմն այս ժամանակներն էր, հաւանաբար հետեւեալ 817-818 թուին:

Հատիմ կոչ է անում երկրի իշխաններին եւ «հայ ժողովրդի պետերին», այլ եւ բանակցութեան մէջ է մտնում Բաբեկ, հայ հեղինակների Բաբան, աղանդաւորի հետ, որ Խուռամեան կոչուած կրօնական շարժման գլուխն անցած սպառնում էր արաբ իշխանութեան նոր եւ վտանգաւոր ցնցումով:

Ապստամբ Հատիմի տեղ եկաւ կուսակալութեան պաշտօնով Եահեա իբն Մուադ 204 հիջրի = 819-820 թ. քանի անգամ ճակատեց, բայց միշտ անյաջող: Օգնական զօրքով ղրկուեց խալիֆ Մամունի կողմից Իսա իբն Մուհամմադ 205 հիջրի = 820-821 թուին: Սա եւս պարտուեց եւ թողեց Ատրպատականը, ուր տեղի ունեցան կռիւներ ընդդէմ Բաբեկի եւ եկաւ Հայաստան:

Այստեղ Սեւադա իբն Աբդ ալ Համիդ ալ Ջահաֆի նոյնպէս ըմբոստացած էր կենտրոնական իշխանութեան դէմ: Իսա իբն Մուհամմադ խոստանում է նրան տալ Հայաստանի կուսակալութիւնը, միայն թէ ետ կենայ չար մտքից: Սակայն Սեւադա խուլ մնաց: Իսա ելաւ նրա դէմ եւ ընկճեց զէնքի ոյժով[1]:

Սրանից յետոյ է, որ Սեւադան ընդհարուեց Աշոտի եւ Շապուհի հետ: «Իսկ Սեւադա ոմն ի տանէ Ջահապայ չորիւք հազարօք կռուեալ ընդ Աշոտոյ եւ ընդ եղբօր իւրում Շապհոյ, մեռաւ Շապուհ ի պատերազմին եւ զկնի երկուց ամաց մեռաւ Աշոտ ի տան իւրում եւ ա՛ռ զիշխանութիւնն Սմբատ որդի նորա»:

Ասողիկի վկայութեամբ Աշոտ իշխեց քսան տարի: Աղբիւրը Շապուհ Բագրատունին է, ուրեմն, վստահելի: Հարուն ալ Ռաշիդ մեծ արշաւանք սկսեց Բիւզանդիայի դէմ 806 թուականին[2]: Անհաւանական չէ, որ իր թիկունքը ապահովելու համար Հայաստանում, իշխանութիւնը յանձնած լինի Աշոտին հէնց նոյն տարին: Այս հաշուով Աշոտը մեռած պիտի լինի քսան տարի իշխանութիւնից յետոյ 826 թուին: Նրա եղբայր Շապուհը մեռաւ երկու տարի յառաջ Սեւադայի դէմ կռուելիս, ուրեմն կռիւը եւ մահը տեղի ունեցան 824 թուին:

Դարձեալ Ասողիկից գիտենք, որ Աշոտի որդին Սմբատ պատանդ էր դրուած խալիֆի դրան եւ վերադարձաւ հայոց

1 Եակուբի, II, 562; **Marquart**, Streifzüge, էջ 458:

2 **Theophanes**, էջ 747–748 (հր. Բոննի):

275 թուին, որ է Քրիստոսի 826: Եթէ իշխանի դարձը կապ ունի հօր մահուան հետ, ապա իրաւ է որ Աշոտ մեռել է նոյն տարին:

Որպէսզի Հարուն հիմ ունենար Աշոտին իշխանութեան կոչելու 806 թուին, պէտք է որ նա արդէն անուն հանած եւ ազդեցիկ անձն լինէր երկրում: Սխալ չէր լինի ենթադրել, որ Աշոտի առաջին գործերը, մանաւանդ Ջահապի դէմ մղած կռիւը Արշարունիքի համար, յառաջ են քան 806 թիւը եւ կատարուել են, ինչպէս յիշեցինք վերեւ, Ատա հերձուածողի շարժման նպաստաւոր մթնոլորտում:

Վարդանի ասելով, Աշոտ եւ Շապուհ «հասարակ բաժանեցին զհայրենիս իւրեանց»: Շապուհին բաժին էր ընկել Սպեր գաւառը, ուր 837 թուին Թէոփիլ կայսրը նրա որդի Աշոտին պատրկութեան պատիւ տուաւ: Տարօնը Աշոտի իշխանութեան մէջ էր:

Երբ Ջահապը իր որդի Աբդ ալ Մելիքի հետ բռնացել էր Դուինում, Վրաց երկրի իշխան Աշոտը, որ կիւրապաղատութեան պատիւ ունէր, Լեւոն Հայկազն (813-820) կայսրին դիմեց օգնութեան ընդդէմ արաբ իշխանների, բայց չյաջողեց: Սա Մսակերի ազգակիցն էր, նրա հօրեղբօր թոռը եւ իշխում էր Կղարջքում:

Արդեօ՞ք սրա խեթալը Դուինի բռնաւորի վրայ արենակցական պարտք էր հանդէպ Մսակերի, թէ որեւէ յաւակնութիւն ունէր մերձակայ հողերի վրայ: Հաւանական է առաջին ենթադրութիւնը, քանի որ Մսակերը հաստատուած էր Բազարան: Աշոտի միջամտութիւնը նշան է, որ տոհմական կապերը տակաւին սերտ էին Կղարջքի եւ Շիրակի Բագրատունիների մէջ:

Աշոտ Մսակեր եւ Շապուհ տիրացել էին ոչ միայն Տարօնին, այլ եւ Մոկաց աշխարհին: Թովմա Արծրունին գիտէ Սմբատ եւ Մուշեղ Մոկաց իշխեցողք: Սմբատից առաջ թւում է թէ նոյն գաւառի իշխան էր Մսակերի որդի Սահակը:

Ասորի մատենագիր Դիոնիս Թելմահրէ Յակոբիկ եկեղեցու պատրիարք (812-845) իր պատմական երկում, որից միայն քաղուածներ են մնացել Միքայէլ Ասորի ժամանակագրի մօտ, հաղորդում է հետաքրքիր մի ինքնադէպ պարսիկ Խուռամեան կոչուած աղանդաւորական շարժումից, ուր յիշատակւում է Իսհակ որդի Աշոտի, որպէս իշխեցող Կորդուաց աշխարհին սահմանակից երկրի, որ կարող է լինել Մոկաց աշխարհը:

Խուռամեան շարժումը շարունակութիւն էր Ատա ալ Մոկանա աղանդաւորի գործի, աւելի սուր կերպարանք ստա-

ցած: Քաղաքական եւ անգամ ընկերվարական յոյզեր էին կրօնական կեղաւորումով: Կարելի է ասել, որ Խուռամեանք այն ժամանակուայ կոմմունիստներն էին: Քարոզում էին ինչքի եւ կանանց ընդհանրութիւն, ժխտելով սեփականութեան իրաւունքը: Հաւատ ունէին, որ մի օր իրենցից մի թագաւոր է ելնելու, մի Մահդի, որ վստահութիւն ներշնչելով դէպի իր անձը, պիտի հոչակուի աստուած: Ով նրան հաւատայ, մեռնելուց 40 օր անցած յարութիւն պիտի առնէ եւ վերադառնայ իր ընտանիքը, որպէսզի յետոյ անյայտանայ մի գաղտնի անկիւնում:

Հարուն ալ Ռաշիդի վերջին տարիներին երեւան եկաւ ակնկալուած Մահդին, որ երեսին քող ձգած, հոչակում էր իրեն մերթ Քրիստոս, մերթ սուրբ հոգի: Շատ չանցաւ եւ խուռներամ բազմութիւնը չրջապատեց նոր մարգարէին: Կողոպուտի եւ աւարի յոյսն էր մանաւանդ, որ ոգեւորում էր շատերին: Մահդի հաստատուեց Կորդուաց լեռներում եւ սարսափ տարածեց իր շուրջը Ծաւդէք եւ Տուր-Աբդին: Մամուն խալիֆն անգամ երկիւղ էր կրում նրանցից: Քրիստոնեայ մի վանք կողոպտելու ժամանակ մեծ հարուած ստացան զօրավար Հասանից: Մահդի, քողը մի կողմ նետելով, փախաւ Աշոտի որդի Սահակի երկիրը: Սահակ բռնեց և չղթայեց կարծեցեալ մարգարէին: Խուռամեանները յարձակուեցին գիշերով Սահակի վրանի վրայ ազատելու իրենց թագաւորին: Սահակ չտապեց գլխատել Մահդիին և առնելով նրա գլուխը, իր դոյզը եւ ընտանիքը փախուստ տուաւ:

Քիչ յետոյ, երբ Սահակ զօրքով գնացել էր կռուելու Արաբների դէմ, Խուռամեանք ուզեցին Սահակի ընտանիքը եւ որդիները բռնել: Գաղտնիքը բացուեց: Սահակի կնոջ եղբայրը, որ կրօնաւոր էր, ժողովրդեան բազմութեան հետ մտաւ ամրոցը, ուր Սահակի ընտանիքն էր, դիմադրելու թշնամու յարձակման: Մեծ յոյս ունէին բարեպաշտ կրօնաւորի աղօթքի վրայ: Սահակի կինը ստնդի մանուկը դրկին աղաչում էր Աստուծուն որ գոնէ անմեղ մանկան համար օգնէ եւ փրկէ վտանգից: Պաշարողները բերդի դուռն այրեցին եւ ներս խուժեցին: Մի ուրիշ կրօնաւոր նիզակը ձեռքին յառաջ նետուեց եւ մի հարուածով տապալեց նրանց առաջնորդին: Սահակի կինը վճռել էր մեռնել քան ընկնել ամբարիշտների ձեռքը: Ամբողջ գիշերը չքնեց եւ առաւօտեան զէնքի պահեստից առաւ մի ոսկեզօծ թուր, յուսալով որ նրա փայլի վրայ կը դան թշնամիները եւ կը սպանեն իրեն: Փորձանքն անցաւ: Ամբոխը՝ անուշադիր տիկնոջ սկսեց կողոպուտի ետեւէ լինել եւ հետապնդել փախչողներին: Մինչ այս մինչ

այն, վրայ հասան Սահակի մարդիկը, ապա ինքն իր բանակով, եւ հալածեցին թշնամիներին:

Նոյն պատմագիրը հաւատացնում է, որ Մահդիից յետոյ Խուռամեան աղանդաւորների պետը եղաւ մի ոմն Հարուն եւ նրա սպանութիւնից յետոյ Բաբեկ[1]:

Վերեւ տեսանք, որ Բաբեկի մասին առաջին անգամ լսում է Հատիմ իբն Հարթամի ապստամբութեան ժամանակ 816-817 թուին: Մովսէս Կաղանկատուացու վկայութեամբ, Հայաստանի սահմաններում, Սիւնիքում, երեւում է Բաբան (այսինքն Բաբեկ) 270 հ. = 821 թուին: Եթէ արդարեւ այն անձը, որ սպանուեց Սահակի ձեռքով, Բաբեկի նախորդներից է, ապա սպանութիւնը տեղի է ունեցել 821, գուցէ եւ 817 թուից յառաջ:

Ո՞վ է Մահդին եւ իրօք նրա բնակավայրը Կորդուաց լեռներումն է՞ր թէ Ատրպատական, ինչպէս հաւատացնում են արաբ մատենագիրները, դժուար է ասել:

Մեր նպատակի համար բաւ է այսքանը, որ Սահակի միջնադէպը դասելու է հաւանօրէն 820 թուից ոչ ուշ: Կորդուաց աշխարհի մօտերքը իշխում էր այդ ժամանակ Սահակը, Աշոտ Մսակերի որդիներից մէկը: Խօսքը Մոկաց գաւառի մասին է որ իրապէս սահմանակից է Կորդուքին եւ Բագրատունեաց ձեռքին էր:

Այս Սահակի որդին պէտք է լինի Սմբատ Մոկաց իշխեցողը, որ Բուղայի ձեռքից ազատեց Վասպուրականի գերիներին[2]: Սա Բուղայի բարեկամն էր: «Յոյժ սիրեցեալ եղեւ ի զօրավարէն», ուստի եւ շատերը շփոթում են Մսակերի որդու եւ յաջորդի՝ Սմբատ-Աբլաբասի հետ, մինչդեռ սրա մասին առաջին անգամ խօսում է պատմագիրը, երբ սկսում է պատմել Բուղայի գալստեան երկրորդ տարուան անցքերը[3]:

Սմբատ Մոկաց իշխեցողի որդին է Թերեւս Մուշեղ Մոկաց իշխեցող (եւ ոչ իշխեցողք, ինչպէս տպուած է), որ յիշւում է Թովմա Արծրունու մօտ եւ սպանուեց ծեր հասակում Անձեւացեաց Գուրգէն իշխանի ձեռքից[4]:

Բիւզանդական սահմանների վրայ հաստատուած էին Մսակերի եղբայրը Շապուհ Սպերում եւ Մսակերի հօրեղբօր թոռը (կամ որդին) Աշոտ Կիւրապաղատ Կղարջքում: Շապուհ ընկաւ, ինչպէս տեսանք, Սեւաղայի դէմ կռուելիս 824 թուին, թողնելով իշխանութիւնը իր Աշոտ որդուն: Սրա սե-

1 **Michel le Syrien** (éd. Chabot), III, էջ 50:
2 Թովմա Արծրունի, Գ. 2, էջ 154, 155 (կ. Պոլիս, 1852):
3 Նոյն, Գ. 9:
4 Նոյն, Գ. 17 եւ 19:

ընդդէմն էր Շապուհ Բագրատունի պատմագիրը: Հաւանական է, որ առաջին Շապուհը, Մսակերի եղբայրը այն Շապուհ Բագրատունին է, որի պատուէրով Ղեւոնդ երէց գրեց իր պատմութիւնը:

Շապուհի դրացին էր Աշոտը որ Լեւոն Հայ կայսրից (813-820) կիւրապաղատութեան պատիւ ստացաւ: Սրա պապ Վասակ Բագրեւանդի խռովութեան ժամանակ քաշուել էր Տայք եւ Կղարջք: Աշոտ կարողացաւ ընդարձակել իր իշխանութիւնը եւ «տիրեաց ի Կղարջաց մինչեւ ի Տփխիս լեռնակողմամբ հանդերձ»[1]: Աշոտ փորձեց իր ազդակիցներին՝ Մսակերին եւ Շապուհին օգնել ընդդէմ Զահապի, երբ սա Դուինը գրաւել էր:

Ըստ Վրաց Տարեգրքի, Աշոտ սպանուեց Քրոնիկոնի 46, այսինքն (780+46=) 826 թուին: Մսակեր եւս մեռաւ նոյն տարին:

Աշոտ Մսակեր ունէր չորս որդի եւ երկու դուստր: Աւագ որդիները Դաւիթ եւ Բագարատ հաստատուել էին Տարօն, իսկ Սահակ եւ Մուշեղ՝ Մոկաց աշխարհում: Մուշեղ Մոկաց իշխեցող, որոշ չէ թէ Մսակերի՞ որդին է թէ Սահակի: Մսակերի կրտսեր որդին Սմբատ ժառանգեց կենտրոնական իշխանութիւնը:

Հին աշխարհին եւս ծանօթ էին քաղաքական ամուսնութիւնները: Մսակեր իր մէկ դուստրը տուաւ կնութեան Աղձնիքի յայտնի մուսուլման իշխան Մուսէին, Զորահայի որդուն: Այս ծայրագաւառի իշխանութիւնը դժուար հարուածելի էր և մշտական վտանգ հարեւան Տարօնի համար: Աշոտ յոյս ունէր խնամիական կապերով սանձելու եւ չեղոքացնելու հնարաւոր սպառնալիքը: Վարդանը յիշատակում է, որ Մսակերի որդիք «Դաւիթ եւ Սահակ եւ Մուշեղ եւ Բագարատ առեալ զմայրն իւրեանց չոգան ի Նփրկերտ առ Խալիֆն ամիրայ, սիրով ընկալեալք ի նմանէ»[1]:

Նփրկերտ, ինչպէս Բաղէշ, մտնում էին Մուսէի իշխանութեան մէջ: Արդեօք ընտանեկան այդ էր մօր կողմից իր դստեր, թէ աւելի լուրջ պատճառ կար, ինչպէս կարելի է ենթադրել որդիների ուղեկցութիւնից:

Աշոտի միւս դուստրը, Հռիփսիմէն, ամուսնացաւ Արծրունեաց իշխանի հետ, որի անունը մեր մատենագիրները չեն պահել: Հռիփսիմէն երեք որդի ունեցաւ, Աշոտ, Գուրգէն եւ Գրիգոր: Արաբները Աշոտին անուանում են Աշոտ իբն

1 Վարդան, էջ 78:

Համզէ իբն Գագիկ: Ուրեմն Աշոտի հայրը եւ Հռիփսիմէի ամուսինը Համզէն էր եւ սա որդի Գագիկի:

Ութերորդ դարու սկզբում, յայտնի են Գրիգոր եւ Կորիւն Արծրունիք: Աշոտ Կոյրի ժամանակ Վահան Արծրունու որդիք, Սահակ, Համազասպ, Գագիկ եւ վերջնիս զաւակները, Համազասպ, Սահակ եւ Մեհրուժան, նշանաւոր դէմքեր էին հրապարակի վրայ, մարտնչող արաբական բռնութեան դէմ, թեւակից Մամիկոնեան կտրիճներին: 786 թուին, յայտնութեան օրը, մարտիրոսութեան պսակ ստացան Համազասպ և Սահակ: Արաբ բռնակալի վրէժխնդրութիւնն էր, որ ճայթեց յետին եւ դաւող ժամին ընդդէմ խռովարար եղբայրների: Մեհրուժանը ուրացաւ հայրենի հաւատը, «զգենոյր զկերպարան գայլոց» եւ փրկեց իր կեանքը: Գուցէ սիրելի եղբայրների մահն էր այն «մեծ աղէտը», որի համար Մեհրուժան սպանեց Մուշեղ Մամիկոնեանի երկու որդիներին, որ ապաստանել էին Վասպուրական, սպանեց, ուզենալով վրէժ լուծել նրանց հօրից, որպէս աղէտի պատճառից: Նահատակուած իշխանների վարքում յիշւում է, որ Մեհրուժան անպատիժ չմնաց: Դաւիթ Մամիկոնեան խողխողեց նրան: Դիւրին բան չէր խթել Մամիկոնեաններին:

Մամիկոնեանների անկումից յետոյ միակ ակնածելի տունը, որ կարող էր մրցել Բագրատունիների հետ Արծրունիք էին: Հեռատեսութիւն էր Մսակերի կողմից՝ ամուսնական կապերով պահել կասկածելի ախոյեանին քաղաքական համերաշխութեան շրջանում:

Բագրատունի իշխանուհին Հռիփսիմէ վերածնեց Արծրունի տոհմը, պարգեւելով երեք քաջարի զաւակ: Նրանցից Աշոտը եղաւ Արծրունիների համար այն ինչ որ իր պապ Մսակերը՝ Բագրատունիների:

Աշոտ Մսակերը բոլորեց իր կեանքի ընթացքը պատմական խոշոր գործիչի պատասխանատու դերում, եւ բոլորեց փայլով եւ փառքով: Արաբական բռնութեան ծանրագին օրերն էին, երբ Աշոտ հրապարակ իջաւ: Երկիրը աւեր, կազմալոյծ նիւթապէս եւ բարոյապէս, լաւագոյն ոյժերը քամուած, մնացորդները քաշուած ասպարէզից: Հազարացիք սպառսպուռ տիրել բռնել էին Հայաստանեայց, հեծեծում է ժամանակակից պատմագիրը, աշխարհիս մեծամեծները նրաւզել, իսկ «մնացեալք ղօղեալք ղադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա»:

Այս դրութիւնից հանեց երկիրը Աշոտ, հանեց իր բազուկներով եւ ծանրախոհ գլխով: Իր օգնականները իր մերձաւորներն էին՝ իր ընտանիքը, եղբայրը, չորս որդին, եր-

կու դուստրը, բոլորն էլ ծառայեցին միեւնոյն գործի: Մի քանի տարուայ ընթացքում յաջողեց ամուր դիրք բռնել մայր երկրի սրտում, մի ոտը Շիրակ, միւսը Տարօն, մի բազուկը դրած Սպերի եւ Տայքի վրայ, միւսը պարզած դէպի Վասպուրական:

Քաջ եւ իմաստուն իշխանը չնչաւորեց երկիրը, վերականգնեց բեկուած հաւատը դէպի ապագան, աշխուժեց գործունէութեան նոր տենդով:

Յաջորդներին մնում էր շարունակել սկսած գործը արթնութեան մէջ, աչքերը յառած գալիք արշալոյսին: Գիշերն անցել էր եւ վերացող աղջամուղջը խոստանում էր յուսալից պայծառ օրեր:

III

Բուղայի շահատակութիւնները տեւեցին երեք տարի 852-855:

Իւսուֆը եկաւ 300 թ. Հ. որ սկսւում է 851 թ. ապրիլի 28ից, իսկ ըստ արաբական տեղեկութեան, հիջրի 237, որ գալիս է նոյն 851 թ. սկսած յուլիսի 5ից: Եկած պիտի լինի ուրեմն յուլիսի 5ից յետոյ: Նենգութեամբ ձերբակալեց Բագարատ իշխանին եւ գնաց Մուշ ձմերելու: Այստեղ նրան սպանեցին Խութեցիք, ըստ արաբական վկայութեան հիջրի 237 ռամազան ամսին, որ է 852 փետրուար-մարտ: Նրա վրէժը առնելու եկաւ Բուղան 852 թուի ամառը, «ի հասանել ամառնային ջերմութեան»[1]: Կռուեց Արծրունի Աշոտ և Գուրգէն իշխանների դէմ, բռնեց նրանց եւ անցաւ ձմերելու Դուինում:

Յաջորդ 853 թուի գարնան ելաւ Թիֆլիսի եւ Ծանարքի դէմ եւ գնաց անցնելու ձմեռը Պարտաւ:

Հետեւեալ 854 թուին գարնան սկսուեցին պատերազմական գործողութիւնները Աղուանից իշխանի դէմ: «Եւ եղեւ մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի գալստեան նորա, էլ գնաց ի կողմանս Աղուանից»:

Բուղան եկել էր 852 ամառն, հետեւապէս 854ի գարնան մօտ էր լրանալու նրա գալստեան երկրորդ տարին: Աղուանից կռիւները տեւեցին ամբողջ տարի, ուրեմն մինչեւ 855ի գարունը, եթէ չափազանցութիւն չէ պատմագրի խօսքը՝ «յերկարեցաւ գործ պատերազմաց սոցա իբրեւ մօտ ի լնուլ ամի միոյ»[2]:

1 Թովմա Արծրունի, Գ. 8, էջ 188 (Կ. Պոլիս, 1852):
2 Նոյն, էջ 206:

Եսայի ձերբակալութիւնը, հետեւապէս, պիտի պատահած լինէր 855ին: Նոյն տարուայ մէջ է նաեւ միւս հայ իշխանների կալանաւորումը: Սրանց բոլորին ուղի ձգեց դէպի Սամառա, իսկ ինքը «եմուտ ի Պարտաւ ձմերել անդ»:

Բուղայի Հայաստանից մեկնումն ընկնում է այսպիսով 856ի սկիզբը:

Սոյն 856 տարին համարելու է Աշոտ Բագրատունու իշխանութեան առաջին տարին:

Բուղան յետ կանչուեց: Նրա փոխարէն ոստիկան եկաւ Մուհամետ իբն Խալիդ Շայբանի Բուղայի գալու չորրորդ տարին. «ապա ի չորրորդ ամին եղեւ գալն Մահմետայ Խողթի (կարդա՛ Խալթի) որդւոյ»[1], ուրեմն 856 թուին:

Սա պատուէր ունէր խաղաղացնել երկիրը, ներումն չնորհելով ըմբոստացած ոյժերին: Արաբական քաղաքականութիւնը փոխում էր իր վերաբերումը դէպի Հայերը, ընտրելով հաշտութեան ուղին: Պէտք էր օր առաջ վերականգնել անդորրութիւնը, մեղմել յուզուած կրքերը խաղաղ եւ զիջող միջոցներով: Գերուած իշխանների դարձը ևս ուշանալու չէր:

Բռնութեան այս նահանջը մի նշան էր որ արտաքին վտանգ կայ եւ պետութիւնը պէտք ունի ոչ միայն ներքին խաղաղութեան, այլ եւ Հայերի համակրութեան: Արդարեւ, Բիւզանդական բանակն արդէն հասել էր Եփրատ եւ հրամանատարը ոչ այլ ոք էր եթէ ոչ Պետրոն(աս), Թէոդորա կայսրուհու եղբայրը և Մամիկոնեան չառաւիղը: Ձիշտ 856 թուին առել էր Սամոսատ եւ Ամիդ[2]: Պատերազմական գործողութիւնները շարունակուեցին մինչեւ 863 թիւը: Մելիտինի արաբ ամիրան եւ նրա դրդմամբ Պաւլիկեան աղանդաւորները, բոյն դրած այժմեան Դերսիմում, յաճախակի ասպատակութեամբ վրդովում էին խաղաղութիւնը: Կայսերական զօրքերը գալիս էին նրանց պատժելու:

859 թուին ինքը Միքայէլ կայսրը արշաւանքի գլուխն անցաւ, բայց իսկական հրամանատարը հռչակաւոր Վարդ(աս)ն էր, Պետրոնի եղբայրը[3]: Երկրորդ անգամ եկաւ Պետրոն, եւ յաջողեց յաղթական վերջ դնել պատերազմին 863 թուին: Սոյն թուին ընկաւ Նէփրկերտի (Մուֆարդին) մօտ արաբական զօրավարներից Ալի իբն Եահեա ալ Արմանի: 862 թուին հոկտեմբեր-նոյեմբեր ամսին Ալի եկած էր Հայաստան որպէս ոստիկան, բերելով իր հետ խալիֆի հրամանը՝ նշանակել Աշոտ Բագրատունուն իշխան իշխանաց: Դարձին Նէփրը-

1 Մովսէս Կաղանկատ. Գ. 20 (Փարիզ, 1860):
2 Theoph. Cont. 167.
3 Gen. 91.

կերտի մօտ ընդհարում ունեցաւ բիւզանդական մի գնդի հետ եւ սպանուեց:

Արաբների պարտութիւնը նշանակալից էր: Խալիֆայական աստղը թեքուել էր: Թիւրք վարձկան գնդերը, որոնք սկզբում մեծ ծառայութիւն մատուցին ամիրապետներին, հետագայում այնքան ոյժ եւ ազդեցութիւն ձեռք բերին, որ իրենց սանձարձակութեան խաղալիկ չինեցին արքայական գահը: Մուտաւաքիլ սպանուեց 861 թուին իր որդու ձեռքով եւ թիւրք զօրքերի թելադրանքով: Այնուհետեւ խալիֆայական գահը արիւնահեղ դաւերի առարկայ դարձաւ: Իրար ետեւից արիւնոտ ձեռքերով գահ բարձրացան տասն տարուայ ընթացքում հինգ հոգի: Մուտաւաքիլին յաջորդեց իր որդին Մունտասիր 861-862, յետոյ եղբօրորդին, Մուստային 862-866, եւ ապա իր որդիք, Մուտազ 866-869, Մուհտադի 869-870 եւ Մուտամիդ 870-892:

Իսկապէս խառնակ շրջան էր, արաբական աշխարհը չէր սեւեռած Հայաստանի վրայ: Հայ իշխանները օգտուեցին բարենպաստ պայմաններից բուժելու իրենց վէրքերը, կազդուրուելու Բուղայի հասցրած հարուածներից: Կարճ միջոցում Հայ երկիրը նորից թեւաւորուեց քաղաքականապէս: Արաբների ձախորդութիւնները օգտագործեց մանաւանդ Աշոտ Բագրատունին: Նրանց եօթնամեայ պատերազմը (856-863) Բիւզանդիայի հետ բերեց Աշոտին իշխանաց իշխանի պատուաւոր դիրքն ու կոչումը 862 թուին, իսկ յաջորդող դահակալական գժտութիւնները յարդարեցին ուղին դէպի արքայական թագը 885 թուին:

Քաղաքական մեծ յաղթանակ էր, որ տարաւ Աշոտ Բագրատունին, գործելով իր տոհմին յատուկ խոհականութեամբ: Մեծամեծ դժուարութիւններ կային, որ բղխում էին երկրի ներքին եւ արտաքին կացութիւնից, ծանր պայմաններ, որ սեփական են ֆէոդալական միջավայրերին՝ լի մրցող եւ հակամարտ սլաքներով: Հարթել բոլոր այլազան բախումները, քայլելով անվրէպ դէպի որոշ նպատակ, մի գործ էր, որ պահանջում էր առանձին կարողութիւն եւ վարպետութիւն: Բագրատունի իշխանը եղաւ այդ վարպետը:

Բուղայի դարձի կարաւանը մեծ էր եւ հարուստ կալանաւոր խոշոր դէմքերով, բայց եւ այնպէս երկիրը դեռ չէր զսպուած, հակառակ նրա բռնութեան եւ խստասիրտ նենգութեան: Թափած արեան եւ աւերակների մէջ հեւում էր տակաւին ապստամբութեան ոգին: Վասպուրականի իշխանները, նրանք, որ հաւատ չընծայելով Բուղայի երդումներին, ազատ էին մնացել, կառչած իրենց ամրութեանց, հէնց որ

լսեցին Բուղայի անյաջողութիւնը Ծանարքի դէմ, նորից սիրտ առան, չորս հազարանոց բանակ կազմեցին եւ Աբուլֆարը Արծրունու առաջնորդութեամբ ասպատակեցին Ճուաշ եւ Թոնաւան գաւառները: Նրանց վրայ եկաւ Նախճուանի արաբ ամիրան, ոմն Աբրահամ: Ընդհարումը տեղի ունեցաւ Խոզաղբերք գիւղի մօտ եւ չնայելով, որ արաբ գնդին օգնութեան հասաւ Բերկրի արաբ ազգաբնակութիւնը, Հայերն յաղթեցին: Արաբներն արդէն նահանջում էին, երբ Աբուլֆարի քեռորդի Սահակ Աբումկդեմ իշխանը, որ կռուի ղեկավարն էր, ձիուց ընկնելով, տեղն ու տեղը սպանուեց թշնամու սրից: Նրա մահուամբ հայ զօրքերը ցրուեցին:

Երկրորդ անգամ Աբուլֆար կազմեց նոր գունդ Վասակ Կովակեր իշխանի հրամանատարութեան տակ:

Սմբատ Բագրատունին կողմնակից չէր ապստամբական ցոյցերի: Թովմա Արծրունու ասելով, Սմբատն էր, որ դրդեց արաբ Աբրահամին ելնել Աբուլֆարի դէմ: Նոյն պատմագիրը հաւատացնում է, որ դարձեալ Սմբատն էր, որ ուղարկեց Գուրգէն Արծրունուն Վասակ Կովակերի դէմ:

Վասպուրականի նշանաւոր իշխաններից էր Գուրգէն, Արծրունի տոհմից, որդի Աբուբելչի: Բուղայի բռնութեան ժամանակ, չուզենալով «կալ հակառակ չարի», քաշուել էր Բագրեւանդ իր քեռի Քուրդիկ Մամիկոնեանի մօտ: Այնտեղից անցնում է Սպեր, ուզում է կայսեր ծառայութեան մէջ մտնել, բայց յետոյ միտքը փոխում է եւ գալիս է Սմբատ Սպարապետի մօտ:

Ահա այս իշխանն է, որի միջոցով Սմբատ ձգտում է խեղդել Վասպուրականի շարժումը: Գուրգէն եկաւ ամբացաւ Զղմար եւ Սրինդ բերդերում, ձերբակալեց Վասակ Կովակերին եւ գրաւեց Վասպուրականի տէրութիւնը:

Սակայն, Գուրգէն չարդարացրեց Սմբատի բոլոր յոյսերը: Նա եւս Արաբների դէմ ելաւ, յարձակուեց նախապէս այն արաբ ազգաբնակութեան վրայ, որ Բուղայի հետ եկել եւ հաստատուել էր երկրում, սրի անցրեց, խսպառ ջնջելով «զամենայն ազգս տաճկաց որ բնակեալ էին ի Վասպուրական տէրութեան»:

Բուղայի հրամանով Գուրգէնի դէմ եկաւ ոմն Բուտել զօրավար, որ միանալով Ութմանիկ Արաբների հետ, այլ եւ թիկն ունենալով մի քանի հայ ազատներ՝ թշնամի Գուրգէնի, յարձակուեց վերջինիս վրայ Որդոք գիւղի մօտ, Հայոց Զորի արեւմտեան սահմանագլխում: Գուրգէն 400 մարդով ջարդեց արաբ երկու հազարանոց գունդը եւ քշեց իր սահմաններից: Բուղան ստիպուած էր ճանաչել պաշտօնապէս

Գուրգէնի իշխանութիւնը: Մինչեւ անգամ բերել տուեց նրա համար Խալիֆայի կողմից «սուսեր իշխանական, գօտի արիական, քուրք խիզախողք եւ երիվար բարձրավիզ»:

Ինչպէս որ Սմբատի կալանաւորումից յետոյ նրա իշխանութիւնը անցաւ Աշոտին, այնպէս էլ Աշոտ Արծրունու գերութեամբ Վասպուրականի իշխանութեան տէր դարձաւ Գուրգէն Աբուբելը:

Գերեվարութեան վեցերորդ տարին, Հայոց 306 թիւը լրացած, եօթերորդ տարու, ուրեմն 307ի, սկիզբը, դարձան կալանաւորուած իշխանները: Հայոց 307 սկսւում է 26 ապրիլ 858 տարին: Այս հաշուով գերիների դարձը ընկնում է 858ի ամառը: Ըստ Թովմա Արծրունու այս ժամանակն էր, որ եկաւ գերութիւնից Գրիգոր իշխանը, որ կոչւում էր Դերենիկ, Աշոտ Արծրունու որդին, եկաւ արքունի հրամանով տիրելու աշխարհին իր հօր փոխարէն: Գրիգոր հազիւ 12 տարեկան էր, երբ յաջորդեց հօրը: Նախորդ 857 տարին դարձել էր Ափխազաց աշխարհից Աշոտ Արծրունու եղբայր Գրիգորը: Իսկ 859 թուին գերութիւնից ազատ արձակուեց Աշոտի միւս եղբայրը՝ Գուրգէնը: Ինքն Աշոտը մնաց գերութեան մէջ երկար տարիներ, եւ վերադարձաւ միմիայն 868 թուին:

Սոքա բոլորը թեկնածու էին Վասպուրականի իշխանութեան եւ ընդհարումը Գուրգէն Աբուբելի հետ անխուսափելի էր: Գրիգոր եւ Գուրգէն եղբայրները չուտով մեռան, առաջինը 858ին, երկրորդը 860ին, այսինքն իրենց գալուց մի տարի յետոյ: Վէճը այսպիսով սահմանափակւում էր Դերենիկի եւ Գուրգէն Աբուբելի միջեւ: Վերջինս պատրաստ էր իշխանութիւնը զիջանել Դերենիկին եւ հեռանալ Բիւզանդիա մտնելու կայսեր ծառայութեան մէջ եւ արդէն ուղի էր ընկել, երբ ձերբակալուեց Աշոտ Բագրատունու դրդմամբ եւ յանձնուեց Ատրպատականի արաբ կուսակալին, որ եւ բանտարկեց նրան:

Այնուհետեւ Գուրգէնի կեանքը նմանում է արկածաւոր վէպի, ուր նա ներկայանում է որպէս ժողովրդական հերոս և այդ ոգւով գրի է առել նրա կեանքը, հաւանօրէն, Շապուհ Բաղրատունին, որից քաղում է Թովմա Արծրունին:

Գուրգէն փախչում է բանտից և գալիս Վասպուրական: Դերենիկ զինւում է նրա դէմ եւ նորից կալանաւորում եւ ձգում Հաղամակերտի բանտը: Այստեղից եւս փախչում է, գիշերում մի վանքում, բայց վանահայրը նենգօրէն մատնում է նրան Դերենիկին: Զաքարիա կաթողիկոսի եւ Աշոտ Բագրատունու միջնորդութեամբ հաշտութիւն է կնքւում Դերենիկի եւ Գուրգէնի միջեւ: Գուրգէն բաժին է ստանում

Մարդաստան գաւառը, որպէս «բուն բաժին Գուրգենայ»:

Թւում է թէ Գուրգէն Արծրունեաց տան Մարդպետական ճիւղի շառաւիղն է: Սրա հայրը Աբուբելը սպանուած է եղել Դերենիկի պապի ձեռքով: Ի՞նչ է եղել գժտութեան պատճառը, յայտնի չէ: Գուրգէն յիշում է ընտանեկան թշնամութիւնը, բայց ոխակալ չէ ուզում լինել: Նա աւելի կասկած ունի Աշոտից, թէ «գուցէ իբրեւ զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց», ուստի եւ չմնաց Մարդաստանում, այլ գերադասեց ապրել չրջիկ կեանքով, «չրջաբերական յեղափոխմամբ»:

Գուրգէնի կասկածն անհիմն չէր: Աշոտ Բագրատունին աշխատում էր գրաւել արաբ կառավարութեան վստահութիւնը իր քաղաքական ծրագիրների համար: Հաւատարմութեան հաստատուն ապացոյց էր Արաբների աչքում թշնամական վերաբերումը դէպի կայսրը եւ նրան համակիր անձերը: Գուրգէն Աբուբելը յարաբերութեան մէջ էր Միքայէլ կայսրի հետ եւ ցանկութիւն ունէր անցնելու սահմանը: Կայսրը չրջապատուած էր Մամիկոնեան իշխաններով, իր մայրն իսկ Մամիկոնեան իշխանուհի էր: Գուրգէնի երակների մէջ եւս Մամիկոնեան արիւն կար: Նրա մայրը Բագրեւանդի Քուրդիկ իշխանի քոյրն էր: Քուրդիկն արդէն անցել էր Բիւզանդիա եւ մեծ հռչակ հանել: Գուրգէն ուզում էր նրա օրինակին հետեւել:

Աշոտ Բագրատունին արդելք հանդիսացաւ, ինչպէս որ անյաջող անցաւ եւ նրա առաջին փորձը Աշոտի հօր Սմբատի օրով: Բագրատունի իշխանը հասկանում էր որ բիւզանդական բանակում ընդդէմ Արաբների գործող հայ ոյժերը մեծապէս վարկաբեկում էին եւ դժուարացնում այն հայ գործիչների դրութիւնը, որոնք երկրի ներսը մաքառում էին իրենց վիճակը բարւոքելու համար: Աշոտ քաղաքական հակառակորդ էր այսօրինակ փախստականների: Նա խափանեց Գուրգէնի փախուստը, խափանեց նաեւ մի ուրիշ իշխանի նման քայլը շատ արատաւոր պայմաններում: Դա Գրիգոր Մամիկոնեանն էր, յիշեալ Քուրդիկ իշխանի որդին: Գրիգորը գերուած իշխանների մէջ էր և մինչ բոլորը ազատութիւն ստացան հաւատուրացութեան սեւ գնով, Գրիգորը մնաց անդրդուելի իր կրօնի մէջ եւ բանտից փախաւ եկաւ Բագրեւանդ իր կալուածը:

Արժէ բերել պատմագրի եղերական տողերը. «Եւ Գրիգոր Մամիկոնեան արիաբար պահեալ զհաւատն, ելանէ ի բանտէն և գայ մտանէ ի գաւառն իւր Բագրեւանդ, և կամէր ամրանալ ի գաւառն Գաբեղինից ի Գազանածական, որ եւ

զկնի եօթն աւուրց մեռանի: Եւ իմացեալ ոստիկանին Մահմետի որ ի Հայս, առաքէ առ Աշոտ որդի Սմբատայ, զի ուր եւ իցէ ըմբռնեալ առ նա տարցի: Եւ նորա հատեալ զգլուխ մեռելոյն, առաքէ առ նա ասելով թէ կամեցաւ անցանել առ Յոյնս եւ իմ զկնի առաքեալ սպանի եւ ահա գլուխ նորա: Եւ խնդաց Մահմետ և զգացուցանէ Ջաֆրի և նորին հրամանաւ պատուէ զԱշոտ, տալով նմա զգաւառն Բագրեւանդ եւ արծաթ բիւրս հինգ: Եւ յայնմհետէ բարձաւ ի Հայոց յաշխարհէս ազգն Մամիկոնէից»[1]:

Մահմետը Մուհամետ իբն Խալիդ Շայբանին է, որ ոստիկան եկաւ Բուղայից յետոյ եւ նոյն պաշտօնին էր դեռ, երբ բանտից փախած՝ եկաւ Գրիգորը: Մահմետը պատուէր ունէր բռնել փախստականին եւ այդ ծանր գործը յանձնւում է Աշոտին, որ եւ կատարում է այնպէս, ինչպէս ինքն է հաղորդում իր իշխանաւորին:

Այս տեղեկութիւնը Վարդան պատմագիրը պարտական է Շապուհ Բագրատունուն: Սա իր ազգակցին՝ Աշոտին (Աշոտի հետ Շապուհ երկու եղբօր թոռներ էին) արդարացնելու համար տալիս է Գրիգոր Մամիկոնեանի սպանութեան տարօրինակ բնոյթ, կամ կրկնում է ժողովրդական մի զրոյց, յօրինուած նոյն նպատակով: Աշոտը խառն էր անբախտ իշխանի սպանութեան մէջ: Քաղաքագէտը գուցէ եւ արդարացնէ այս ոճիրը, բայց այլապէս երբեք չպիտի ներուի մեծ իշխանին այս եղբայրասպան սուրը եւ ոչ այն անարդ արծաթը:

Աւելի պերճախօս վկայական չէր կարող լինել Աշոտի հաւատարմութեան, քան այս արիւնոտ գլուխը: Հայոց 311 թուին նստաւ գահ Ամիրալմումնին Ահմատ, ասում է Ասողիկ, եւ «տայ զերկիրս Հայոց Ալեայ՝ որդւոյ Յահէի. սա կացուցանէ իշխանաց իշխան զԱշոտ»:

Ահմատ՝ Մուստային խալիֆի անունն է, որ գահ բարձրացաւ հիջրի 248 թ. ռամազան ամսին, որ է 862 թ. հոկտեմբեր 18ից նոյեմբեր 17: Հայոց 311 թուականը համապատասխանում է 862 ապրիլի 25 մինչեւ 863 ապրիլի 24: Ալի որդի Յահէի մեզ ծանօթ Ալի իբն Եահան ոստիկանն է, որի գալուստը հետեւապէս ընկնում է 862 հոկտեմբերի 18 մինչեւ 863 ապրիլի 24 ժամանակամիջոցը: Հաւանական է, որ եկած լինի Մուստայինի դահակալութիւնից անմիջապէս յետոյ, 862 տարին դեռ չբոլորած: Սոյն այս 862 թուին պէտք է նշանակուած լինի Աշոտ Բագրատունին իշխանաց իշխան: «Եւ այսպէս ապա զկարգ սպարապետութեան քաղաքա-

1 Վարդան, էջ 81:

վարեալ, ասում է Յովհաննէս կաթողիկոսը, մինչեւ համբաւ բարւոյն ի դուռն արքունի հասանէր»: Ապա Ալի Արմանի ոստիկանը գալիս է եւ Աշոտին նշանակում իշխանաց իշխան ամիրապետի հրամանով «բազում զգեստիւք եւ արքունական պատուով ճոխացուցեալ, ի նա հաւատալով զսակս Հայոց եւ զամենայն բեկար արքունի»:

Այսպիսով Աշոտը եղաւ «պատուականագոյն եւ առաջին քան զամենայն նախարարութիւնս Հայոց», և բոլորը դաշինք էին կնքում նրա հետ որպէս «արդարեւ ընդ թագաւորական զարմի»[1]:

Թովմա Արծրունին հաղորդում է, որ երբ Աշոտ ստանձնեց Հայոց աշխարհի վերակացութիւնը որպէս իշխան իշխանաց, հետամուտ եղաւ նուաճելու «զիշխանս Հայոց, զՎրաց եւ զԱղուանից, որ եղեւ իսկ»:

Այստեղից երեւում է որ Աշոտին յանձնած Հայաստանը հասկանալու է աւելի ընդարձակ, արաբական, իմաստով, այսինքն նրա մէջ մտնում էին նաեւ Վրաց եւ Աղուանից երկրամասերը:

Երկրի ներսը իր դրութիւնը ամրապնդելու համար, Աշոտ հաշուի պիտի առնէր մանաւանդ Վասպուրականի եւ Սիւնեաց զօրաւոր իշխանական տները: Թովմա Արծրունին պատմում է որ իշխանաց իշխանը գնաց Դերենիկի վրայ եւ կալանաւորեց նրան, որպէս անհնազանդի: Լսելով այս լուրը, Գուրգէն Արուբելը, որ Վասպուրականից հեռացած ատանդական կեանք էր վարում, իսկոյն վրայ հասաւ Տարօնի կողմերից պաշտպանելու Դերենիկին ընդդէմ Աշոտի: Սա ստիպուած էր ազատ թողնել Դերենիկին եւ հաշտութիւն կնքել: Հաշտութիւնը սրբագործուեց ընտանեկան մերձեցումով: Իշխանաց իշխանը իր դուստրը Սոփին տուաւ կնութեան Դերենիկին, որը թէեւ հազիւ 15 թէ 17 տարեկան էր, բայց արդէն այրի էր: Փեսան գնաց Աշոտի հետ Բագարան եւ այնտեղ կատարուեց հարսանեկան հանդէսը 311 թուին Հայոց, որ է 862-863:

Քանի որ հարսանիքի ժամանակ Աշոտ յիշւում է Թոմայի մօտ որպէս իշխանաց իշխան, ուրեմն եւ այս պարագան վկայում է, որ Աշոտ իրօք իշխանաց իշխան նշանակուած պիտի լինէր 862ի վերջերին:

Արծրունիների մէջ ազդեցիկ էր այդ ատենները Վահան իշխանը, Վասակ Կովակերի եղբայրը: Վահանին իրեն քաշելու նպատակով Աշոտ իր միւս դուստրը ամուսնացրեց նրա հետ:

1 Յովհ. Կաթողիկոս, էջ 74 (հրատ. Էմինի):

Միեւնոյն ժամանակ Գուրգէն Աբուբելչ վերջնականապէս հաստատուեց Անձեւացեաց աշխարհում: Մուշեղ Անձեւացու մահուամբ, նրա այրին Հեղինէ առաջարկեց Գուրգէնին իր ձեռը եւ Անձեւացեաց իշխանութիւնը: Այսպիսով Վասպուրականի տեղական վէճերն ու խռովութիւնները առայժմ դադարեցին:

Աշոտը բարեկամական յարաբերութիւններ հաստատեց նաեւ Սիւնիքի հետ: Գրիգոր Սուփանին յաջորդել էր իր որդին Վասակ Գաբուռը Գեղարքունիքում: Վայոց Ձորի իշխանն էր Վասակ Իշխանիկ վերակոչուածը: Գաբուռին Աշոտ փեսայացրեց իրեն, տալով նրան իր Մարիամ դուստրը, եւ պաշտօնապէս ճանաչել տուաւ նրա իշխանութիւնը խալիֆի կողմից: Գաբուռ շուտով մեռաւ, թողնելով մի ժառանգ, որ կրում էր իր պապի անունը, Գրիգոր Սուփան:

Վասակ Իշխանիկը եւս մեծ պատկառանք ունէր դէպի Աշոտը եւ ինչպէս ասում է պատմագիրը, «խրատու նորա զունկն մատուցանէր խնամով իբրեւ զօրէնս միշտ ի սրտի իւրում պահելով»:

Աշոտի աչքը նմանապէս Տարօնի վրայ էր, ուր գերուած Բագարատի փոխարէն իշխում էին իր երկու որդիք Աշոտ եւ Դաւիթ: Դաւթի որդին, Աշոտ, ամուսնացաւ յետոյ Շապուհի դստեր հետ, որ Աշոտի որդին էր[1]:

Այսպէսով բարեկամական եւ խնամէական ցանցով կապուած էր Աշոտ իր շրջապատի հետ: Ըմբոստ իշխաններին սաստելու հմտութեամբ Աշոտ հեղինակութիւն էր: Հարկերի կանոնաւոր վճարումով ապահովել էր իր դիրքը նաեւ բարձրագոյն իշխանութեան առաջ: Ներքին վէճերը եւ գժտութիւնները վերացան: Երկիրը խաղաղեց յուզումներից եւ սկսեց ազատ շնչել: Տասն տարին 862ից մինչեւ 871, անդորրութեան շրջան էր:

Իշխանաց իշխանի վարչական ձիրքերը, արդիւնաւէտ յանգումները, երաշխիք էին լաւագոյն օրերի: Շատերն արդէն զգում էին մօտիկ ապագան: Ոչ միայն «ամենեքեան դաշինս ընդ նմա դնէին», այլ խորհում էին, որ «եթէ դէպ ինչ պիտոյից գտցէ», այսինքն եթէ առիթը ներկայանայ, առաջարկեն նրան արքայական գահ:

Առիթը մօտալուտ էր: Թագակիրները դիւրութեամբ չեն զիջանում թագը ուրիշներին: Հարկաւոր էր մի վերջին փորձութիւն նախ քան թագ կապելը:

Իշխանաց իշխանական տասնամեայ շրջանի վերջերին

1 Յովհաննէս Կաթողիկոս, էջ 96:

քաղաքական հորիզոնը սկսուեց պղտորուել: Բիւզանդական զօրքերը նորից Եփրատի ափերին էին: Պատերազմը սկսուեց 871 թուին եւ շարունակուեց մինչեւ 874 թիւը: Կայսրը, հայազն Վասիլը, ինքն էր ղեկավարում շարժումները: Մի տարի ընդհատուեց կռիւը եւ վերստին արծարծուեց 876 եւ 877 թուերին:

Ամիրապետական գահի շուրջը տարիներից ի վեր սաստկացող խռովարար մրցութիւնը վերջացաւ Մուտամիդի դահակալութեամբ (870-892): Կայսեր պատերազմը, ճիշտ է, Պաւլիկեան իշխանութեան և Մելիտինի արաբ ամիրայի հետ էր, բայց գաղտնի չէր, որ սրանց ետեւը կանգնած էր արաբ պետութիւնը: Սահմանագլխի ընդհարումները կարող էին յուզումներ խմորել հայ իշխանական միջավայրում, ուր կրքերը հազիւ զսպուած՝ պատրաստ էին հրդեհուել ամեն պատեհ առթիւ:

Մուտամիդ խալիֆը, այս վտանգաւոր հնարաւորութիւնը նկատի ունենալով, պատերազմի սկզբից եւ եթ Հայաստան ղրկեց Ցիսէ որդի Շէյխի: Սա քաջածանօթ Շայբանի ցեղից էր:

Ամեն անգամ երբ Հայաստանում քաղաքական կացութիւնը երկիւղ էր ազդում, ամիրապետները դիմում էին Շայբանի իշխանական տան աջակցութեան: Տիրելով Ամիդի շրջանին, սրանք սահմանակից էին Հայերին և յարմարագոյն գործիք խալիֆի ձեռքում ընկճելու հայ ըմբոստութիւնը:

Ի՞նչ էր Ցիսէի պաշտօնը, մօտէն յայտնի չէ: Թովմա Արծրունին ասում է որ Ցիսէ «զզօրապետութիւնն Հայոց ունէր»[1]: Արաբները պահակ զօրքեր ունէին կարեւոր դիրքերում: Հաւանական է, որ Ցիսէ նրանց հրամանատար էր նշանակուած: Նա եկաւ ճիշտ պատերազմի տարին 871 թուի գարնան[2]:

Ցիսէ Հայաստան մտաւ թէ չէ, կռուի բռնուեց Աշոտ Արծրունու հետ: Աշոտը նոր էր վերադարձել գերութիւնից: Կալանաւորուած 852ին, արձակուեց միայն 868ին, գերութեան մէջ մնալով 17 տարի: Թովմայի բնագրի մէջ դրչագրական սխալներ են սպրտուած եւ խանգարած ժամանակագրութիւնը: Ստոյգ ընթերցումը վերականգնելու համար ինքը Թովման հաստատուն ելակէտ է ընծայում: Նա պատ-

1 Թովմա Արծրունի, էջ 242:

2 Կաղանկատուացին խօսում է Ցիսէի մասին 318 թուի շարժը յիշելուց անմիջապէս յետոյ, 318 թ. Հ. = 869 ապրիլից – 870 ապրիլ: Արաբական տեղեկութեամբ նա նշանակուեց հիջրի 256ի վերջը, 870 նոյեմբեր, Tabari III, 3 էջ 1841: Ըստ Եակուբի, 621, Ցիսէ եկաւ 257 ջումմատ բ. ամսում, որ է 871 ապրիլ: Երեւի, նշանակումը տեղի է ունեցել 870 նոյեմբերին, իսկ գալը՝ 871 ապրիլին:

մում է որ Աշոտն ընկերացաւ Բուղայի որդի Մուսէին, երբ սա գնում էր Կզուին քաղաքացիների դէմ, որ ապստամբել էին Տաճիկներից: Մուսէն խոստացել էր Աշոտին արշաւանքից յետոյ միջնորդել եւ նրան ազատ արձակել իր հայրենիքը: Մուսէն յաջողութեամբ վերջացրեց կռիւը, բայց զլացաւ կատարել իր խոստումը: Աշոտը փախաւ եւ եկաւ հայրենիք: Ապստամբ Կզուինը Ատրպատականի Կազուին քաղաքն է, ուր ըմբոստացել էր Աբումուլիբ իշխանը եւ սրան սանձելու ուղարկուեց արդարեւ Մուսէ:

Կռիւը տակաւին շարունակւում էր, երբ գահակալական խռովութիւնները ստիպեցին Մուսէին յետ դառնալ Բաղդատ: Խալիֆ Մուհտադի սպանուեց 870 թուին յունիս ամսին[1]: Մուսէի դարձը այդ թուից առաջ է: Բուղան ինքը սպանուեց 868 թուին: Այս ժամանակներն է տեղի ունեցել Աշոտի դարձը[2]:

Աշոտ Արծրունի տուն դառնալով, սկսաւ խէթ աչքով նայել այն հանգամանքի վրայ, որ Գուրգէն Աբուբելը հաստատուել էր հարեւան Անձեւացեաց աշխարհում: Աշոտը պահանջում էր որ Գուրգէնը իր երկրի մի մասը զիջանի Դերենիկին: Գործը արիւնհեղութեան պիտի հասնէր, եթէ իշխանաց իշխանը իր որդի Սահակի միջոցով չմիջամտէր վէճին եւ հաշտութեամբ վերջ չդնէր եղբայրասպան կռուին:

Աշոտ Արծրունու հետեւեալ ընդհարումն եղաւ արաբ Ութմանիկ ցեղի հետ: Այս անհանգիստ տարրը սպանել էր Ռոստոմ Վարաժնունի իշխանին եւ գրաւել Ամիւկ բերդը: Տիրացել էր նաեւ Վարաղ վանքին, բանտարկելով վանահօր: Արծրունեաց իշխանը պատրաստւում էր զէնքի ոյժով պատժել Ութմանիկ գերփիչներին, երբ սրանց օգնութեան հասաւ Ցիսէ տասն եւ հինգ հազար հեծելազօրի գլուխ անցած: Այս անդամ միջնորդ հանդիսացաւ իշխանաց իշխանի փեսան, Վահան Արծրունին իր որդի Գագիկ Աբումրուանի հետ եւ ստիպեց զէնքը վայր դնել: Ցիսէ թւում է մտադիր է եղել խուժելու Վասպուրական, ինչպէս կարելի է եզրակացնել

1 **Masudi**, Prairies d'Or, VII, 12.

2 Թովմա, էջ 236, տալիս է դարձի ստոյգ թուականը. «ի ՅԷ ամի Հայոց թուականութեանս եկն Աշոտ Վասպուրական իշխան ի գերութենէն»: Անտարակոյս, ՅԷ = 307, ուղղելու է ՅԺԷ 317, որ է 868–9 թիւր: Արդարեւ, նոյն պատմագիրը, էջ 244, վկայում է որ Աշոտը ապրեց յետ գերեդարձի 6 տարի եւ մեռաւ ՅԻԳ թ. Հ. հինգշաբթի օր 6 հոսի, որ է 874 թիւր մայիսի 27: Հետեւապէս դարձել էր 868 թուին, Թովմայի խօսքերը, էջ 243, «Ե ամ ի գերութեան արարեալ եւ զ ամ կնցեալ յետ գերեդարձն լինելոյ» յայտնի հայագէտ **Dulaurier**, Recherches de la Chronologie, p. 265, սրբագրում է «Է ամ ի գերութեան եւ ԺզԱ ամ յետ գերեդարձն լինելոյ»: Մինչդեռ ուղղելու է միայն գերութեան Ե տարին ԺԷ (կամ ԺԷ): Աշոտ կայանաւորուեց 852 եւ ազատուեց 868, հետեւապէս մնաց գերութեան մէջ 853–867, այսինքն՝ 15 տարի:

պատմագրի այն նկատողութիւնից թէ Աշոտ եւ Դերենիկ յանձնառու եղան Ցիսէի առաջ արքունի հարկերը վճարել եւ «դարձուցին ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալ էր, ոչ թողացուցին նմա ելանել ընդ աշխարհն Վասպուրական»: Ցիսէ թողեց գնաց Պարտաւ և «այլ ոչ եւս այնուհետեւ համարձակ յանձն առնոյր մտանել ընդ աշխարհս Վասպուրական»[1]:

Ցիսէ երկար չմնաց Աղուանից մայրաքաղաքում: Երեւի ձմերելուց յետոյ, յաջորդ 872 թուին, հեռացաւ, թողնելով այնտեղ քաղաքապետ մի ոմն Ցամանիկ իրեն հաւատարիմ մի անձն: Սակայն Ցամանիկ չարդարացրեց նրա վստահութիւնը եւ Արծրունի իշխանների նման սա եւս ծառացաւ իր տիրոջ դէմ, ձգտելով անկախութեան: Ցիսէն հարկադրուած էր զէնքի դիմել անհնազանդ Ցամանիկին սաստելու համար: Հայ իշխանների օգնութեամբ պաշարեց Պարտաւը, պատերազմեց Ցամանիկի դէմ գրեթէ մի ամբողջ տարի եւ առանց յաջողելու հեռացաւ Ասորիք: Նորէն եկաւ, կռուեց եւ դարձեալ ձախողեց:

Մովսէս Կաղանկատուացին պահել է մեզ Ցամանիկի անունը որ էր «Մահմուտ որդի Ապդմեհդի և կոչիւր Եմեմիկ» (կարդա՛ Եմենիկ): Այս Եմենցի Մահմետի դէմ եկաւ Ասորեստանից Եսայի որդի Շեխայ, այսինքն Ցիսէ, արաբերէն Իսա իբն Շեյխ, կամակից ունենալով իշխանաց իշխան Աշոտին: Ասորիք կամ Ասորեստան ասելով հասկանալու է այս դէպքում Ամիդի շրջանը, Շաբան ցեղի տունը:

Պարտաւի վրայ գնացին Ցիսէ եւ Աշոտ եւ «քաջամուխ կան ի մարտի դամս 13»[2]: Նոյն օրերում վախճանուեց Աղուանից հայրապետը: Սամուէլ եպիսկոպոսը Աշոտի հաւանութեամբ ընտրուեց յաջորդ 326 թ. Հ. այսինքն 877-878 թուին:

Ասել է թէ Ցամանիկի եւ Ցիսէի կռիւը պատահել է այս ժամանակ եւ թերեւս երկրորդ կռիւն է: Ուշադրութեան արժանի է պատմագրի նկատողութիւնը որ մարտը տեւեց 13 տարի: Եթէ ներելի է կարդալ զամիսս 13 փոխանակ զամս, 13 ամիսը կը համապատասխանէ Թովմայի մի տարուան, «տուեալ պատերազմ ընդ քաղաքին զտարի մի»[3]: Իսկ եթէ այնպէս հասկացուի, որ Ցամանիկ մնացել է սանձարձակ ըմբոստ 13 տարի չարունակ, պէտք է ենթադրել, որ ընդվզումը սկսուել է Ցիսէի հեռանալուց յետոյ 872 թուին եւ տեւել է մինչեւ Աշոտի թագաւորելու նախօրեակը, ուրեմն իրօք 13 տարի:

1 Թովմա Արծրունի, էջ 243:
2 Մովսէս Կաղանկատուացի, Գ. գլ. 21.
3 Թովմա Արծրունի, էջ 245:

Պարտաւի ապստամբ իշխանի փառասիրական ձգտումներն աւելի հեռուն էին գնում: Նա ուզում էր ձեռք դնել ամբողջ Հայաստանի վրայ: Յիսէն հեռացաւ 878ին: Յաջորդ տարին նա Միջագետքում կուռում էր Կունդաջիկ իշխանի դէմ հիջրի 266=879-880:

Յամանիկ երազում էր նրա տեղը բռնել եւ «թուղթս եւ դեսպանս մի զմիոյ կնի առնելով առ իշխանս աշխարհիս», առաջարկում էր իր թեկնածութիւնը «ի վերակացութիւն Հայոց»: Հայերը սակայն գերադասեցին իրենց մէջ տեսնել Ահմաթ որդի Հալթի, որ է արդէն ծանօթ Մուհամետ իբն Խալիդ, այն անձը, որ Բուղայից յետոյ կուսակալ եկաւ եւ մեղմ քաղաքականութեամբ վերականգնեց խաղաղութիւնը խռովուած երկրում: Իշխանների ցանկութիւնը յարգուեց եւ Մուհամետ նշանակուեց Հայաստան:

Արաբական իշխանութիւնը իր զօրութեան վայրէջքին հասած՝ ստիպուած էր յարմարուել երկրի տրամադրութեան, երբ կուսակալ էր նշանակում: Տրամադրութեան յայտարարը Աշոտ իշխանաց իշխանն էր: Ակնածելի ոյժ ոչ միայն տեղացի արաբ իշխանաւորների աչքում, այլ եւ խալիֆի ներկայացուցիչ կուսակալի: Իրերի ընթացքը ցոյց էր տալիս, որ կամ պէտք էր զիջանել ասպարէզը նրան, կամ փորձել տապալելու եւ մէջտեղէն հանելու վտանգաւոր իշխանին: Բախումը անխուսափելի էր:

Նոր կուսակալը ոտ կոխեց Հայաստան: Ընդառաջ ելան մինչեւ Դաղուան ազդեցիկ իշխանաւորները, Դերենիկ Արծրունին իր իշխաններով, Տարօնի Աշոտ Կիւրապաղատը, Մոկաց իշխան Մուշեղը, Ապահունեաց բռնաւոր Աբլբաս Կայսիկը: Միայն իշխանաց իշխանը չշարժուեց տեղից, այլ իր կողմից ուղարկեց Շապուհ եղբօրը: Այսպիսի չքախումբով Մուհամետ իբն Խալիդը ուղղուեց դէպի Դուին:

Խալիդի որդին չարդարացրեց այն մեծ վստահութիւնը, որ ցոյց էր տուել դէպի նրա անձը Հայ երկիրը եւ ամենից առաջ իշխանաց իշխան Աշոտը: Արդեօք բարձրից յանձնարարութիւն ունէր, դժուար է ասել, բայց փաստ է, որ ընտրուած կուսակալը Աբլբաս Կայսիկի հետ միասին ծրագրում են նենգութեամբ բռնել հայ իշխաններին եւ զինաթափ անել երկիրը: Այս նպատակով գաղտնի յարաբերութեան մէջ են մտնում Պարտաւի ըմբոստացած Յամանիկ բռնաւորի հետ եւ խորհուրդ տալիս, որ նա թշնամի ձեւանալով դուրս գայ որպէս թէ կռուելու նորեկ կուսակալի դէմ, բայց իրօք միանալու նրա եւ Աբլբասի ոյժերին ընդդէմ իշխանաց իշխան Աշոտի եւ միւս հայ իշխանների:

Ահա այս ճգնաժամին է որ Աշոտը փայլեց իր խորիմաց կարողութեամբ եւ հեռատեսութեամբ: Պատմագիրը իրաւամբ կոչում է նրան «առաւելեալն իմաստութեամբ»: Տարիների փորձառութիւնը գանձարան էր բարի խորհուրդների, որ չչնչում էին թէ արաբական միջավայրում պէտք է միշտ արթուն մնալ, որովհետեւ գողը կարող էր գալ ամեն ժամու: Աշոտ անհոգ չէր նստած: Մուհամետի գալու օրից նա բռնել էր վաղօրօք բոլոր կարեւոր դիրքերը, «կամուրջների խելերը եւ ձորերի կիրճերը» եւ յաջողել էր ձեռք ձգել այն նամակը, որ Մուհամետ եւ Աբլբաս գրել էին եւ յատուկ սուրհանդակով ղրկել Յամանակին:

Արաբ դաւադիրները սկսել էին արդէն իրենց մութ գործը, ջանալով միեւնոյն ատեն պառակտել հայ ոյժերը: Բանսարկութեամբ դժտեցին Դերենիկ Արծրունուն Տարօնի իշխանի՝ Աշոտ Կիւրապաղատի հետ:

Քսու մարդիկ հաւատացրել էին Դերենիկին որ Աշոտ ձգտում է խլել նրանից իշխանութիւնը: Ամբաստանութեան զոհ եղաւ Կիւրապաղատը, որ յանկարծակի կալանաւորուեց Դերենիկի հրամանով: Ասում են, որ Դերենիկի յաւելեալ չարժառիթն էր, Կիւրապաղատի տեղ, Տարօնի իշխանութիւնը տալ նրա եղբօր Դաւիթին, որ կոչւում էր Արքայիկ եւ որ իր՝ Դերենիկի քրոջ Մարիամի ամուսինն էր: Արծրունի իշխանն արդարեւ նոր կուսակալի ձեռքով հաստատեց իր փեսային Տարօնում[1]:

Ահմատ կամ Մուհամատ իբն Խալիդը եւ Աբլբաս Կայսիկը Դուինում ետեւէ եղան չար ծրագիրն իրագործելու: Իշխանաց իշխանը, որ «բարձրագոյն եւ հանճարեղագոյն էր քան զբնաւ Հայաստանեայս եւ զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից», անդէտ ձեւանալով դաւադրութեան, եկաւ ներկայացաւ արաբ ամիրային առատաձեռն պարգեւներով: Բարեմիտ եւ զգոյշ իշխանը, երեւում է, յոյս ունէր մի կերպ

---

1 Ըստ Թովմայի (էջ 248) Դաւիթ Արքայիկը իշխեց Տարօնում «ամս է»: Սմբատ Թագաւորի «յերրորդ ամի» Դուինի չարժը եղաւ, եւ «յետ այսր յերկրորդ ամի», Յոյները պաշարեցին Կարին քաղաքը: «Եւ ի նմին ամի մեռաւ Աբքայն իշխան Տարօնոյ» (Թովմա Արծր. էջ 260): Սմբատի երրորդ տարին է 892, որանից 2 տարի յետոյ, կը լինի 894 թիւը: Այս թուին մեռած Աբքայիկը եթէ եօթն տարի է իշխել, նշանակում է սկսել է 894–7=887: Անհնարին է, քանի որ այս ժամանակ Աշոտ արդէն թագաւոր էր, մինչդեռ Աբքայիկի Տարօն հաստատուելը Մուհամետ իբն Խալիդի գալրտեան տարին էր: Նրա հալածուելուց յետոյ է որ Ահմատը, Յիսէի որդին, թագը բերեց: Պարզ է, որ է ընթեռնելու է ԺԷ, կամ գուցէ աւելի ճիշդ ԺԵ: Այս հաշուով Աբքայիկի իշխանութեան սկիզբը կը ստացուի 894–17/15=878/880 եւ միեւնոյն ժամանակ կ'որոշուի Մուհամեդ իբն Խալիդի գալստեան տարին:

վանել սպառնացող փոթորիկը հայ երկնքից: Երբ համոզուեց, որ խաղաղ միջոցները ի դերեւ պիտի ելնեն, դիմեց զէնքի: Նա պատուէր տուաւ իր քաջարի եղբօր Աբասին, որ սպարապետն էր, պատրաստ լինել: Առաւօտեան մինչ արաբ կուսակալը սպասում էր իշխանների ողջոյնին, Աբասը մտաւ մենակ կուսակալի մօտ եւ յանձնեց նրան այն թուղթը, որ ինքը կուսակալը գրել էր Ցամանիկին դաւադրական նպատակով: Ապա սպարապետը բռնելով նրա ձեռքից, հանեց դուրս, սիրտ տուաւ նրան, որ չվախենայ և նստեցրեց ջորու վրայ ու հրամայեց դառնալ այնտեղ, որտեղից եկել էր: Իշխանաց իշխանի որդին Շապուհ ուղեկցեց արտաքսուած կուսակալին մինչեւ Ասորեստանի սահմանները: Վեհանձն յաղթութիւն առանց կաթիլ արիւնի:

Կուսակալի դաշնակից Աբլբառ Կայսիկ իշխանը եւս արժանի էր պատժի: Աշոտ իշխանաց իշխանը պաշարեց Մանազկերտը, Աբլբառի ոստանը: Այդ ժամանակ եկաւ գուժկան, որ Աշոտ Կիւրապաղատ ազատուել է բանտից եւ ձերբակալել Դերենիկին: Իշխանաց իշխանը թողեց Մանազկերտի պաշարումը եւ գնաց իր փեսայ Դերենիկին օգնութեան եւ հանեց նրան բանտից ոչ առանց դժուարութեան:

Դաւադրութեան երրորդ անդամը Ցամանիկը կուսակալի անարգալից արտաքսումից յետոյ փորձեց միայնակ գլուխ հանել մշակուած ծրագիրը: Երկպառակութեան որոմն ցանեց իշխանների մէջ, գրգռելով Դերենիկին իշխանաց իշխանի դէմ, ինչպէս եւ Աբլբառ Կայսիկին: Միւս կողմից բանսարկեց, որպէս թէ Դերենիկը դաւեր է սարքում Աշոտի դէմ: Դերենիկը սպանուեց, երբ գնում էր Ճուաշ դաւառը ձմերելու Մառական աւանում: Ճանապարհին Հեր քաղաքի պետը ոմն Աբլբերս դարան մտնելով յարձակուեց Արծրուն իշխանի վրայ, երբ սա անցնում էր Անձախի ձորից, եւ սրով խողխողեց:

Լուրեր էին պտտւում, որ իշխանաց իշխանի մատը խառն էր այդ սպանութեան մէջ: Դերենիկի մահուան մի երկրորդ պատմութեան մէջ, Հերի քաղաքապետը կոչւում է որդի Ապումսարայ, եւ դաւադրութեան մասնակից է համարւում Գագիկ Աբումբրուան, որ իշխանաց իշխանի դստեր որդին էր: Կարելի է կարծել, որ Գագիկի մասնակցութիւնը թելադրանք էր իշխանաց իշխանի կողմից:

Մի ուրիշ տեղեկութեամբ, Դերենիկի սպանիչները Իսմայէլեան ազգի գլխաւորներն էին, որ սեփականել էին Հեր

եւ Զարեւանդ գաւառներում ինչ ինչ հողեր Դերենիկին պատկանեալ[1]:

Ինչպէս վերջացան Աշոտի հաշիւները Ցամանիկի հետ, ի մօտոյ յայտնի չէ, բայց պէտք է ենթադրել, որ Աշոտը կարողացաւ ընկճել այս խարդախ եւ խռովասէր բռնաւորին: Սանձուած էր նաեւ Մանազկերտի Կայսիկ իշխանը, ինչպէս տրամադրում է կարծել Կոստանդին Ծիրանածնի վկայութիւնը[2]:

Այսպիսով Աշոտի հակառակորդները, երկրի խաղաղութիւնը վրդովող արտաքին թէ ներքին ոյժերը, պարտուեցին: Աշոտ միակ խոշոր անձն էր հրապարակի վրայ, առանց ախոյեանի, առանց հայ թէ արաբ մրցորդի: Բարոյական հեղինակութիւնը եւ զինուորական ոյժը լռութեան եւ անգործութեան էին մատնել խռովարար յոյզերն ու ձգտումները: Անպայման Աշոտ երկրի տէր ու տիրական էր: Եթէ արաբ եւ պարսիկ ամիրաների համարձակութիւնն ու վճռականութիւնը ունենար, Բագրատունի իշխանը կարող էր խզել իր կապերը ամիրապետի հետ եւ յայտարարել իրեն ինքնիշխան: Սակայն, Աշոտի ամենամեծ արժանիքը խոհեմութիւնն ու զգուշութիւնն էր եւ չէր սիրում խաղալ անյայտութեանց հետ: Ուստի միշտ գերադասելի էր նրա համար պահել եւ չկորցնել ծանր աշխատութեամբ վաստակած վստահութիւնն ու հաւատը ամիրապետի: Առանց աղմկարար ցոյցերի, առանց դըրժելու խալիֆի հետ ունեցած յարաբերութիւնը, իշխանաց իշխանը չտատանուեց մի կարեւոր եւ գործնական քայլ անել, ստեղծած դրութիւնը սրբագործել արքայական ծիրանիով: Ընդհանուր ցանկութիւնն էր:

Պատմագրի խօսքերի մէջ ճշմարտութիւն կայ թէ հայ իշխաններն ու նախարարները տեսնելով Աշոտի «քաջատոհմիկ պերճութիւնը», խորհուրդ արին եւ որոշեցին թագաւորացնել նրան իրենց վրայ: Այս մասին յայտնեցին ամիրապետին եւ սա ընդունեց «արժանահայց խնդիրը» եւ ղրկեց Աշոտին արքայական թագ: Խալիֆ Մուտամիդ չէր կարող այլ կերպ վարուել առանց վախենալու նորանոր փորձանքներից: Կայսերական քաղաքականութիւնը անգործ չէր: Տարօնի Բագրատունի իշխանը արժանացել էր պալատական բարձրագոյն տիտղոսի՝ կիւրապաղատութեան: Բիւզանդական գահի վրայ բազմած էր հայազն Վասիլ:

Ոչ ոք չէր կարող երաշխաւորել, արդեօք իշխանաց իշ-

1 Յովհաննէս Կաթողիկոս, էջ 79:
2 **De Administrando Imperio, c. 44.**

խանը, եթէ մերժում ստանար ամիրապետից, երեսը չէ՞ր դարձնի Արաբներից, եւ կայսեր հովանաւորութեան հետ միասին չէր ստանայ ըղձալի թագը Բիւզանդիայից: Այս դէպքում Հայաստանը պէտք է ընկնէր ընդմիշտ Արաբների ձեռքից եւ անցնէր նրանց ոխերիմ թշնամիներին:

Մուտամիդ գոհացում տուաւ երկրի բաղձանքին: Գէորգ կաթողիկոսը հոգեւոր օրհնութեամբ պսակեց Աշոտին թագաւոր Հ. թ. 334=885-886 թուին: Վասիլ կայսրը շտապեց չնորհաւորել Աշոտի յաջողութիւնը, «խաղաղութեան, նուաճութեան եւ սիրոյ» դաշինք հաստատելով եւ «որդի սիրելի անուանելով» եւ «հաղորդակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս տէրութեան իւրոյ»: Վերջին խօսքերիս իմաստն է՝ առնել Աշոտին կայսերական հովանաւորութեան տակ:

Քաղաքական ոգորումները պսակուեցին յաղթանակով: Բագրատունի իշխանի համար թագ բերողը ոչ այլ ոք էր եթէ ոչ Շայբանի տան զաւակ՝ Ահմատը, որդի Ցիսէի (եւ ոչ Ցիսէ, ինչպէս մեր մատենագիրների մօտ է): Այս եւս մի խոշոր յաջողութիւն էր: Աղձնիքում բոյն դրած և կենտրոնական իշխանութեան կոթնած արաբ իշխանական տունը, Բագրատունիների կատաղի հակառակորդը, ստիպուած էր հրաժարուել պայքարից: Աշոտի թագաւորելովը փակւում է քաղաքական ապրումների մի ամփոփ շրջան, մի ամբողջութիւն: Զգումները յանգել էին իրենց նպատակին:

Այստեղ կարող ենք կանգ առնել եւ հետեւել Բագրատունեաց երկրորդական ճիւղերի գործունէութեան դրացի երկիրներում:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

Աշոտի թագաւորութեան տարին յայտնի չէ հաստատապէս, ուստի եւ տարաձայնութեան նիւթ: Մատենագրական տեղեկութիւնները, տարաբախտաբար, աղքատ են: Եղածները բղխում են մի աղբիւրից որ է Թովմա Արծրունի: Աչքի անցնենք բոլոր յայտնի տեղեկութիւնները նրանց ծագումը եւ փոխադարձ կապը պարզելու համար:

1. Յովհաննէս կաթողիկոս, ժամանակակից և թերեւս ականատես Աշոտի թագադրութեան, զլացել է աւելի բան հաղորդելու քան որ Աշոտին պսակեց Գէորգ հայրապետը եւ որ այս առթիւ Բարսեղ (Վասիլ Ա) կայսրը յարաբերութեան

մէջ մտաւ Աշոտի հետ սիրոյ եւ խաղաղութեան անունով[1]:

2. Թովմա Արծրունի հաղորդում է որ Աշոտ ապրեց «ե ամ յիշխանական ճոխութեան, իե ամ յիշխանաց իշխանական պետութեանն, դ ամ ի թագակալ չքեղութեանն եւ մեռաւ յԼԲ թուականութեանն և ի ժե ամի հայրապետութեանն Գէորգայ Հայոց կաթողիկոսի»: Ուրեմն իշխան եղաւ հինգ տարի, իշխանաց իշխան՝ քսանեւհինգ տարի, թագաւոր՝ չորս տարի եւ մեռաւ 339 թուին Հայոց, Գէորգ կաթողիկոսի 15րդ տարին[2]:

3. Ասողիկ յայտնում է որ Աշոտի թագադրութիւնը տեղի ունեցաւ Ցունաց Վասիլ թագաւորի օրով եւ կամքով յԼԼԳ թուականութեանս Հայոց և ի գալստենէ Փրկչին մերոյ Տեառն Աստուծոյ ամք պԱԸ, յաւուրս տեառն Գէորգայ յԺԲ ամի հայրապետութեան նորա»: Այլ եւ որ «նախ քան զթագաւորութիւնն, երեսնամեայ ժամանակօք իշխան եւ իշխանաց իշխան եղեալ Հայոց եւ Վրաց»[3]:

4. Սամուէլ Անեցի ունի. «պԱԷ (կարդա՛ պԱե), յԼԴ ի բառնալոյ Արշակունեաց թագաւորացն մինչեւ ցթագաւորութիւնս Բագրատունեաց լինին ամք ՆԼԴ: Աշոտ իշխանաց իշխան թագաւորեաց Հայոց ամս ե»[4]:

5. Կիրակոս կրկնում է Սամուէլին. «ի բառնալոյ թագաւորութեան Արշակունեաց մինչեւ ցթագաւորութիւն Բագրատունեաց լինին ամք ՆԼԴ. որ յԼԴ թուին թագաւորեաց Աշոտ» աւելացնում է «զամս Լ եւ Բ իշխանաց իշխան կացեալ եւ ե ամ թագաւորեալ»[5]:

6. Վարդան քաղում է Ասողիկից. «Զնոյն (զթագն) և կայսրն Վասիլ առաքէ և օրհնէ զթագն տէր Գէորգ յԼԼԳ թուին և յԺԲ ամի հայրապետութեան իւրում և յպԱԸ ամի ծնընդեան տեառն: Որ բարիոք կարգաւորեաց զյօրինուածս թագաւորութեանն ամս ե . . կատարի իՔրիստոս հա ամաց»[6]:

Արդ այս տեղեկութիւններից կարեւոր է առաջին երկու պատմագիրների, Յովհաննէս Կաթողիկոսի եւ Թովմա Արծրունու հաղորդածը: Ասողիկ աւելի բան չգիտէ քան ինչ որ հանել է Թովմայից: Արդարեւ, ըստ Թովմայի Աշոտ մեռաւ 339 թուին, չորս տարի թագաւորելուց յետոյ: Ասել է թէ թագաւորել է 336 թուին, ինչպէս հաշուել է Ասողիկ: Եթէ մահուան տարին, 339 համապատաս-

1 Հրատ. Մ. Էմինի, էջ 78:
2 Հրատ. Կ. Պոլիս, 1852 թ., էջ 258:
3 Հրատ. Տէր-Միքայէլեանի, էջ 95:
4 Հրատ. Վենետիկի, էջ 45:
5 Հրատ. Վենետիկի, էջ 86:

խանում է Գէորգ Կաթողիկոսի 15րդ տարուան, գահակալութեան տարին 336 կը գայ ուղիղ նոյն կաթողիկոսի 12րդ տարին: Ասողիկ աւելցրել է իր կողմից միմիայն Քրիստոսի համապատասխան թուականը, 336 = 887-888: Թովմա տալիս է Աշոտին հինգ տարի որպէս իշխանի եւ 25 տարի որպէս իշխանաց իշխանի: Ասողիկ գումարել է երկու թուերը հաշուելով 30 տարի իշխանի եւ իշխանաց իշխանի համար:

Ասողիկ մի նոր բան է յայտնում որ չկայ Թովմայի մօտ. «Աշոտ կեցեալ ամս լԲ, թագաւորեալ ամս Ե մահուամբ փոխի առ Քրիստոս»: Աշոտ որի իշխանութիւնը հաշուում է 34 տարի, չէր կարող 32 տարի ապրած լինել: Ակներեւ է որ 32 թիւը հարազատ չէ: Վարդան այստեղից գիտէ որ Աշոտ 71 տարի է ապրել եւ հինգ տարի թագաւորել: Հետեւապէս 32 ուղղելու է 71: Ասողիկի առաջին հրատարակութեան մէջ 32ի փոխարէն կարդացւում է 21, որ հաստատում է 71ի միաւորը ընդդէմ 32ի միաւորի: Ստորեւ կը տեսնենք որ 71 եւս հարազատ չէ, եւ պէտք է լինի 61: Ամէն պարագային կարեւոր տեղեկութիւն է, անկախ Թովմայից և առնուած հաւանօրէն Շապուհ Բագրատունու կորած գործից: Ասողիկ հարկ է համարել յիշել որ Աշոտ թագաւորեց հինգ տարի, թէեւ այս հակասում է Թովմայից քաղած տեղեկութեան, որի համաձայն Աշոտ թագաւորել է չորս տարի 336, 337, 338 եւ 339 տարիները:

Սամուէլ տալիս է Աշոտին հինգ տարի թագաւորութիւն, անշուշտ Ասողիկի ազդեցութեան տակ, ուստի և թագաւորութեան սկիզբը դնում է 334 թ. Հ.=885, ընդունելով մահուան 339 թուականը, 339—5=334: Արշակունեաց անկումը համարում է Սամուէլ 451 թուին[1], որտեղից մինչեւ Աշոտի գահակալութիւնը 885 թուին հաշուում է ուղիղ 434 տարի:

Կիրակոսը հետեւում է Սամուէլին[2], Վարդանը՝ Ասողիկին: Սրանց տեղեկութիւնները ուրեմն անկախ արժէք չունին, ինչպէս չունին եւ իրենց աղբիւրները, Ասողիկ եւ Սամուէլ: Միակ հիմնական աղբիւրը մնում է Յովհաննէս Կաթողիկոս եւ մանաւանդ Թովմա Արծրունի:

Տարաբախտաբար Թովմա Արծրունու մօտ մի գրչի վրիպակ կայ, որ չէ նկատել Ասողիկ եւ որ դիւրին է վերհանել: Արծրունեաց պատմագիրը դնում է Աշոտի մահը 339

1 Սամուէլ, էջ 70:
2 Կիրակոսի՝ 32 տարին հետեւանք է հնգի (Ե) եօթ (է) սխալ ընթերցման, որով 30 փոխարէն 32:

Հ.թ. եւ Գէորգի 15րդ տարին: Հետեւապէս Գէորգի առաջին տարին գալիս է 324 թ.Հ., ինչպէս հաշուել է Ասողիկ: Գէորգի նախորդ Զաքարիա Կաթողիկոսը, նոյն Թովմայի վկայութեամբ, վարեց հայրապետական աթոռը 18 տարի[1], ուրեմն աթոռակալած պիտի լինի (324 — 18 =) 306 թուին Հայոց: Սակայն այս հակասում է նոյն պատմագրի այն վկայութեան թէ 306 թիւը կշռում է Զաքարիայի երրորդ տարին. «և եղեւ ի լնուլ վեցերորդ ամի գերութեանն Հայոց որ է յզ ամ ըստ թուոյ հայերէն տումարին և ունի յոբելեանք զ եւ ոլոմպիադՔ (կարդա՛ ոլիմպիադf) և ընդիքտիոնք<ի>, եւ գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, եւ մուտ եօթներորդ ամի»[2]:

Եթէ 306 լրացած եւ 307 սկսած համապատասխանում է Զաքարիայի 3րդ տարուն, ուրեմն առաջին տարին կը գայ 304 լրացած եւ 305 սկսած տարին: Արդ 304 Հ.թ. սկսւում է 855 ապրիլ 26, լրանում 856 ապրիլ 26, որտեղից սկսւում է հետեւեալ 305 տարին: Կարելի է ասել, որ Զաքարիա գահակալել է 855 վերջը, կամ 856 սկիզբը, և որովհետեւ աթոռը վարել է 18 տարի, նրա վերջին տարին կը հասնէ մինչև 321ի վերջը եւ 322ի սկիզբները, այսինքն 873 ապրիլ 22ից յետոյ:

Զաքարիայի յաջորդ Գէորգ կարող էր գահ բարձրանալ 873ի վերջերը կամ 874 սկիզբները: Հետեւապէս Աշոտի մահուան տարին, 339 Հ.թ. որ է 890 մինչեւ 891 ապրիլ, չի համապատասխանի Գէորգի 15րդ տարուն, այլ 17րդ: Պէտք է ենթադրել որ Թովմայի ԺԵ գրչական սխալ է փոխանակ ԺԷի:

Յովհաննէս կաթողիկոս տալիս է Զաքարիային 22 տարի[3] և ոչ 18 ինչպէս Թովմա Արծրունին: Ասողիկ նախընտրել է 22 տարին և չորս յաւել տարիները չահելու համար, երկու տարով յառաջացրել է Զաքարիայի ընտրութիւնը եւ նոյնչափ տարով յետաձգել նրա մահը, հաշուելով նրա աթոռակալութիւնը 302 Հ.թ. մինչեւ 324, կամ 853 մինչեւ 875:

Յովհաննէս կաթողիկոսի վկայութեամբ, Զաքարիայի նախորդ Յովհաննէս Ովայեցի կաթողիկոս կենդանի էր տակաւին 302 թուին մեհեկան ամսին: Սոյն ամսի 25ին նա սահմանեց տօնել Բուղայի զոհերից Ատոմեան 150 վկաների յիշատակը: Այնուհետեւ կաթողիկոսն ելաւ չրջագայելու Գեղարքունեաց վիճակը եւ վախճանուեց Մաքենոց վանքում:

Ասողիկ այստեղից հետեւցրել է որ Յովհաննէս կաթո-

1 Թովմա Արծրունի, Գ. ժբ. էջ 245:
2 Նոյն, Գ. ժդ. էջ 226: Յոբելեան հաշուում է 50 տարի, ուրեմն 6 յոբելեան, 300 տարի: Ինդիկտիոն՝ 15 տարի, բաց է թողած 20=ի. 20×15=300:
3 Յովհաննէս Կաթողիկոս (հրատ. Էմինի), էջ 76:

ղիկոս մեռել է նոյն 302 թուին եւ նոյն տարին յաջորդել է Զաքարիա: Սակայն 302 Հ.Թ. մեհեկան 25 կշռում է փրկչական 853 նոյեմբ. 17: Ծերունի կաթողիկոսը չէր կարող ձրմբան ցրտերին շրջագայութեան գնալ մինչեւ Մաքենոց վանքը: Հարկ է կարծել որ Հայրապետի դրօսանքը կատարուել է ոչ յառաջ քան դարուն 874 տարուան: Սոյն տարին Բուղան կռիւ էր մղում Ադուանից Աբու Մուսէ իշխանի դէմ: Արաբ զօրավարի բանակումն էր Սմբատ սպարապետը իր որդի Մուշեղի հետ: Կռիւը տեւեց զրեթէ մի ամբողջ տարի: Հետեւեալ 855 տարին էր, երբ Բուղան հեռանալով Հայաստանից, հրամայեց Սմբատին միանալ իր կարաւանին: Սմբատ նախքան հեռանալը ժողով գումարեց Երազգաւորք եւ ընտրել տուեց Զաքարիային: Սա աշխարհական էր եւ մի օրուան մէջ բարձրացաւ մինչեւ կաթողիկոսական աթոռը: Հիմք կայ կարծելու որ Ովայեցու մահից յետոյ հայրապետական աթոռը թափուր մնաց մի ու ժամանակ մինչեւ Զաքարիայի ընտրութիւնը որ չէ կարող յառաջ լինել քան 855: Տեսանք որ Թովմա Արծրունին նրա գահակալութեան առաջին տարին համարում է 304 Հ.Թ. որ է 856, սկսած ապրիլից: Ակներեւ է որ Ասողիկի հաշիւները ստոյգ չեն: Ստոյգ չէ նաեւ նրա ցուցումը թէ Աշոտ թագաւորեց Գէորգի 12րդ տարին, որ հիմնուած է Թովմայի բնագրի հին վրիպակի վրայ, ինչպէս տեսանք:

Աշոտի թագաւորութեան սկզբնաւորութեան մասին այլ աղբիւր չունինք հայ մատենագրութեան մէջ քան Թովմա Արծրունին: Սա է միակ եւ հիմնական աղբիւրը որից քաղել են միւսները:

Արդ Թովմայի գիտութեամբ Աշոտ մեռաւ 339 թուին Հայոց, որ է 890 ապրիլ 18 մինչեւ 891 ապրիլ 18: Եւ որովհետեւ թագաւորեց չորս տարի, այստեղից սխալ կը լինէր հետեւցնել թէ թագ կապեց 336 Հ. Թ. 887-888, սխալ որովհետեւ յայտնի չէ որոշակի թէ 339 թուի ո՞ր ամսին վախճանեց: Եթէ մեռած է 890 թուին չորս տարին կը հաշուի 886ից: Յովհաննէս կաթողիկոս մի նեցուկ է տալիս իր տեղեկութեամբ թէ Վասիլի կենդանութեանն է թագ կապել Աշոտ: Վասիլ մեռաւ 29 օգոստոս 886, հետեւապէս Աշոտի թագադրութիւնը կանուխ է քան այս թիւը, եւ մահը կանուխ քան 890 օգոստոս 29: Ոչ մի հիմ չկայ կասկածի ենթարկելու ո՛չ Թովմայի եւ ո՛չ Յովհաննէս կաթողիկոսի արժանահաւատութիւնը: Մնում է ներդաշնակել, հաշտեցնել: Եթէ ենթադրենք անգամ որ թագադրութիւնը տեղի է ունեցել 886 գարնան թէ ամառը, յառաջ քան 29 օգոստոսի, մահը կը դայ չորս

տարի ուշ 890 գարնան թէ ամառ, այսինքն 339 Հ. Թ. ընթացքին որ սկսւում է 890 ապրիլ ամսից, համաձայն Թովմայի:

Սակայն մի արգելարեր հանդամանք կայ: Հայ հնագոյն գրչագիրներից մէկը, Լազարեան Ճեմարանի աւետարանը գրուած է ճիշտ 336 թուին Հայոց եւ գրիչն ասում է. «Գրեցաւ ի Հայրապետութեան Գէորգայ Հայոց Կաթուղիկոսի եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի, ի ազգութեան Սմբատայ Բագրատունւոյ»: Ահա մի ժամանակակից որ Աշոտին անուանում է իշխանաց իշխան 336 Հ. Թ. = 887 թուին: Նշանակում է Աշոտի թագաւորութիւնն ուշ էր քան 887 թիւը: Այս չէ հակասում Թովմային, բայց ընդհարւում է Յովհաննէս կաթողիկոսի վկայութեան հետ, որի համաձայն Վասիլ կենդանի էր թագադրութեան ժամանակ, այն ինչ եթէ թագադրութիւնը 887ին դեռ չէր կայացել, նշանակում է Վասիլի մահից յետոյ է կայացել:

Այս յիշատակարանի դէմ խօսում է մի ուրիշ յիշատակարան: 1910 թուին Էջմիածնի մատենադարանը մտաւ մի ձեռագիր աւետարան ԺԴ թէ ԺԵ դարուց, բայց գրիչը գովական ջանքով արտագրել է նաեւ իր օրինակի յիշատակարանը, որ է. «Գրեցաւ ի սկիզբն թագաւորութեան Բագրատունեաց Աշոտոյ ձեռամբ անարժան Գրիգոր Մաշկեւորի ի ժամանակս հայրապետութեան Գէորգա կաթողիկոսի որ օծեաց զԱշոտ թագաւոր Հայոց ի թվ. մերում գՃԼգ, եւ քաղոց ամսոյ ԺԴ ի անուն սրբոյն Սքանչելագործին վանիցն»[1]:

Գրչութեան թերութիւնները պատկանում են հաւանօրէն անփոյթ արտագրողին, ինչպէս օծեաց փոխանակ աւծեաց: Վերջին նախադասութիւնը կրճատուած է: Հին աւետարանը գրուած է եղել քաղոց Ժ եւ ի վանս յանուն սրբոյն Սքանչելագործի, կամ ձեռագիրը ընդօրինակողի ձեռքն է ընկել ի վանիցն որ յանուն սրբոյն Սքանչելագործին: Կասկած չկայ որ յիշատակարանը հին է եւ հարազատ: Մեզ հետաքրքրում է գրութեան ժամանակը որ է 334 Հ.Թ. (գՃԼԴ եւ ո՛չ գՃԼգ), այսինքն 885 ապրիլ — 886 ապրիլ: Ահա մի անակնկալելի վկայութիւն որ Աշոտ օծուել է թագաւոր այս թուին: Ասողիկի խօսքը թէ Աշոտ թագաւորեց հինգ տարի ուռանձին արժէք է ստանում, մանաւանդ եթէ ծագում է, ինչպէս ենթադրեցինք, Շապուհ Բագրատունի պատմագրից: Հինգ տարին կը բերէ թագաւորութեան սկիզբը 334 տարին, ինչպէս հաշուի էր առել նաեւ Սամուէլ Անեցի: Հաւանական է որ Աշոտ թագաւորած լինի եթէ ոչ լրիւ հինգ տարի, ամեն

1 Արարատ, 1910, յուլիս, էջ 623:

պարագային աւելի քան չորս տարի: Ամիրապետից թագ ստանալը եւ օծումը կամ թագադրութեան հանդէսը, հարկաւ, միաժամանակ չեն կատարուած: Թերեւս ժամանակագրական տարաձայնութիւնը բացատրելու է նրանով որ մի դէպքում Աշոտի թագաւորութիւնը հաշուած է օծման հանդէսից, միւս դէպքում թագը ստանալու օրից: Կարծում ենք որ 886ի սկիզբները կարող են ծառայել հաշտութեան կէտ տարաձայնութիւնների:

Սակայն մեծագոյն խոչընդոտը մնում է Լազարեան Ճեմարանի ձեռագրի յիշատակարանը: Խոչընդոտը կարելի է հարթել կամ ենթադրելով որ թագադրութեան հանդէսը տեղի է ունեցել 887ից յետոյ, ուստի գրիչը տակաւին թագաւոր չէ անուանում Աշոտին, կամ իշխանաց իշխան զուգակշռում է Աշոտի պաշտօնական տիտղոսը ἄρχων τῶν ἀρχόντων , ընդունուած բիւզանդական արքունիքից: Տարաձայն վկայութիւնների մէջ դժուար է ժխտել մի կէտ որ Աշոտի թագադրութեան ժամանակ Վասիլ տակաւին կենդանի էր: Այս կէտը համարում ենք հաստատուն: Յովհաննէս կաթողիկոս չէր կարող յերիւրել այնպիսի մի նշանաւոր փաստ, որպիսին Վասիլի յարաբերութիւնը նորապսակ Աշոտի հետ: Թուական հաշիւները կարող են չփոթուել մանաւանդ երբ զանազանութիւնը մեծ չէ, բայց մեծազօր կայսրի անունը չէ կարող երեւակայութեան պտուղ լինել:

Աշոտի տարիքը եւս քննութեան պէտք ունի: Վարդան վկայում է որ Աշոտ մեռած է 71 տարեկան հասակում[1]: Տեղեկութիւնն առել է Ասողիկից, իսկ սա՝ Շապուհ Բագրատունուց: Ասողիկի բնագիրը խաթարուած է: Վարդան աւելի լաւ օրինակ է ունեցել, բայց ոչ բոլորովին հարազատ:

Աշոտի հայրը, Սմբատ, պատանդ էր արաբական արքունիքում եւ ազատ արձակուեց 275 Հ.Թ. = 826-827[2]: Արդ վերադարձից յետոյ էր որ Սմբատ ամուսնացաւ Դաւթի քրոջ հետ եւ ունեցաւ երկու զաւակ, Աշոտ եւ Շապուհ, նաեւ մի դուստր որ կնութեան գնաց Տայքի եւ Կղարջքի Բագարատ իշխանին[3]: Այս հաշուով աւագ որդու, Աշոտի, ծնունդը կարող էր պատահել առ առաւելն հետեւեալ 827-828 տարուան: Ապա մահուան տարին, 890ին Աշոտ չէր կարող 71 տարեկան լինել: Կարծում ենք որ ՀԱ սխալ ընթերցուած է փոխանակ ԿԱ=61: Արդարեւ 890-61=829, որ է ծննդեան ստոյգ տարին:

1 Վարդան, էջ 86:
2 Ասողիկ, էջ 106:
3 Վարդան, էջ 79:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վասակ Բագրատունին թողեց խռովայոյզ Հայաստանը 775 թուի ապստամբութեան օրերին, անցաւ Կղարջք եւ հիմը դրեց Բագրատունեաց վրացի ճիւղին: Մի նոր եւ փառաւոր շրջան բացուեց Վրաց պատմութեան մէջ:

Մինչեւ Բագրատունիների երեւումը Վրաստանի անցեալը բաւականին մութ է եւ, որքան յայտնի է, անգոյն է: Ցիշւում են ցանուցիր իշխանական թէ թագաւորական անուններ որոնք վկայում են որ նման կարգեր են տիրել, ֆէոդալական կարգեր, ինչպէս Հայաստանում եւ քաղաքական թէ քաղաքակրթական կեանքը հոլովել է համաչափ ընթացքով եւ կրել յարափոփոխ պայմանների նոյն վերուվայրը ինչոր Հայաստան: Նիւթերի պակասութիւնը, տրամադրելի ցանցառ տեղեկութիւնները չեն ներում որեւէ դաղափար կազմել անցեալի ամբողջական պատկերի մասին: Այս տարտամ վիճակը վերանում է, երբ Բագրատունիք ոտ են կոխում Վրաստան: Երկիրը վերածնւում է քաղաքականապէս, մտնում նոր փուլի մէջ եւ ընթանում ուրոյն եւ փայլուն ուղիով:

Մեծ է Բագրատունեաց դերը հայ պատմութեան մէջ, բայց անհամեմատ աւելի նշանաւոր գործօն եղան նրանք վրական հողի վերայ: Բաւական է յիշել որ վրական տոհմածառը հաշւում է երեքհարիւրից աւելի անձ, որից վաթսունը թագաւոր: Ոստեր արձակելով ամեն կողմ Վրաց Բագրատունիք կարողացան իրենց հովանու տակ առնել վրական ցեղերի ամբողջութիւնը: Մեզ հետաքրքրում է մասնաւորապէս նրանց Վրաստանում հաստատուելը եւ Վրաց քաղաքական վերածնութեան սկզբնաւորութիւնը նրանց շնորհիւ:

Ո՞վ էր Վրաց Բագրատունիների նախահայրը:

Երեք կարգի նիւթեր կան այս մասին, հայ, յոյն եւ վրացի: Հակասական չեն, բայց նրանց համերաշխութիւնը պարզելու համար պէտք կայ մասնաւոր քննութեան: Հայ աղբիւրը որոշ է եւ դրական[1]: «Բայց ասելի է աստ զսկիզբն թագաւորացն Հայոց եւ Վրաց, ասում է Վարդան, որք ի Բագրատունեաց անտի սերեցան: Քանզի, որպէս ասացաւն, զկնի քաջին Վարդանայ իշխանք Հայոց կացին ըստ դիպելոյ մինչեւ ի Սմբատ Բագրատունի, եւ զկնի նորա Աշոտ, որդի

1 Հայրենիքի մէջ լոյս տեսած յօդուածիս մէջ մի անախորժ վրիպակ կայ. փոխանակ «հնութեան տեսակէտից» տպուած է «հայութեան տեսակէտից»:

Վասակայ, զոր կուրացուցին Մամիկոնեանքն: Սմա լինին երկու որդիք, Սմբատ՝ նախնի Թագաւորացն Հայոց եւ Վասակ՝ սկիզբն Թագաւորացն Վրաց, որոյ որդին Ատրներսեհ, սորա՝ Աշոտ, սորա՝ Բագարատ, որոյ եղբայր՝ Գորամ: Հետ սմա Դաւիթ որդի Բագարատայ, որ սպանաւ ի Գորամայ հօրեղբօրէ իւրմէ, որոյ որդին Ատրներսեհ, սորա որդին Դաւիթ: Սմա եղբօրորդի Գուրգէն որոյ որդին Բագարատ որ առ իւր կին զդուստր Սենեքերիմայ Թագաւորին Վասպուրականի: Այս է կարգն:

«Իսկ Հայոց նախնւոյն Սմբատայ՝ որդի Աշոտ Մասկիր, որոյ որդին Սմբատ Խոստովանողն, որոյ որդին այս Աշոտ Բարեպաշտ որ անուանեցաւ իշխանաց իշխան ի յԱլեայ որդւոյ Վահէի հրամանաւ ամիրապետին Զաքրայ»[1]:

Այս սերնդաբանութիւնը կ՚արտայայտուի հետեւեալ պատկերով:

Աշոտ Կոյր († 762)

Սմբատ († 775)	Վասակ
Աշոտ Մասկիր († 826)	Ատրներսեհ
Սմբատ Խոստովանող († 857)	Աշոտ Կիւրապաղատ († 826)
Աշոտ Թագաւոր († 890)	Բագարատ Կիւրապաղատ († 876)
	Դաւիթ Կիւրապաղատ († 881)
	Ատրներսեհ Թագաւոր († 923)

Տարաբախտաբար յայտնի չէ թէ Վարդան ո՞ւմ է պարտ այս կարեւոր տեղեկութիւնը Վրաց Բագրատունիների ծագման մասին[2]: Տեղեկութիւնը քաղուած է յաւ աղբիւրից եւ հաստատւում է ուրիշ նիւթերի քննութեամբ:

Կոստանդին Ծիրանածին կայսրը պատմում է որ Վրաց

1 Վարդան, էջ 81–82:

2 Մարկուարթի հետ մենք ես կարծում էինք որ աղբիւրը Շապուհ Բագրատունու կորած երկն է: Սակայն դժուար է պնդել այս ենթադրութեան վրայ: Վարդան առել է մի աղբիւրից ուր թուած են եղել Վասակից մինչեւ Սենեքերիմի փեսան որ էր ո՛չ թէ Բագարատ, այլ սորա որդի Գիորգի: Ինչպէս երեւում է Վարդանի բնագիրը կամ խանգարուած է կամ ինքն է սխալ ընդօրինակել իր աղբիւրը: Գէթ է կարդալ. «սորա որդի Դաւիթ, սմա եղբօրորդի <Բագարատ, որոյ որդի> Գուրգէն որոյ որդի Բագարատ <որոյ որդի Գիորգի> առ իւր կին զդուստր Սենեքերիմայ»: Այս ծննդաբանութիւնը չէ կարող քաղուած լինել Մխիթար Անեցուց, որին Վարդան յիշում է քանի մի

կիւրապաղատները պարծենում են որ սերում են Դաւիթ մարգարէից եւ Ուրիոսի կնոջից եւ որովհետեւ նոյն սերնդից է Մարիամ Աստուածածին, ուստի եւ ազգական են համարւում Ս. Կոյսին: Ասում են որ երկու եղբայր, Դաւիթ եւ Սպանդիատ, տեսել են տեսնում եւ թողնում Երուսաղէմ եւ հեռանում Պարսից կողմերը ուր այժմ ապրում են Վրացիները: Աստուած մի դարմանալի յատկութիւն էր շնորհել Սպանդիատին: Սրա մարմնոր բոլորովին անխոցելի էր պատերազմներում: Վիրաւորել կարելի էր միմիայն սիրար որ տակայն պաշտպանուած էր զրահով: Այս կարողութեամբ եղբայրներին դիւրին էր յաղթել Պարսիկներին եւ տիրանալ երկրին: Երբ Հերակլ կայսրն արշաւեց Պարսից դէմ, երկու եղբայրները յարեցին նրան եւ նրա ձեռնտուութեամբ ձեռք բերին շատ հողեր:

Սպանդիատ մեռաւ անզաւակ, իսկ Դաւիթից ծնեց Բագարատ, Բագարատից՝ Աշոտ, Աշոտից՝ Ատրներսեհ, որին Լեւոն կայսրը մեծարեց կիւրապաղատութեան պատուով: Երուսաղէմից զաղթելէ հետէ այն երկիրը ուր ապրում են այժմ անցել է չորս թէ հինգ հարիւր տարի, մինչեւ ինդիկտիոն 10, արարչութեան 6460 թիւը, Կոստանդին եւ Ռոմանոս Ծիրանածին կայսրների թագաւորութիւնը[1]:

Այս հետաքրքրական զրոյցը ոչատ չէ տարաբախտաբար անհաւթութիւններից: Անտարակոյս պատմողը թէ դրի առնողը շատ բան չիմացել է: Ուրիոս Քեռացին Դաւիթի զօրականներից էր, որին Դաւիթ սպանել տուեց եւ առաւ նրա գեղեցիկ կնոջ Բերսարէին[2]: Դաւիթ եւ Սպանդիատ ուրեմն սրանց սերնդից էին, ex tuo proprio, որ չի նշանակում անհրաժեշտօրէն որ անմիջական զաւակներն էին: Ստորեւ կը քննենք այս երկու կարծեցեալ նախահայրերի ուանդութիւնը: Այժմ մեզ հետաքրքրում է նրանց սերունդը:

Արարչութեան տարին եւ ինդիկտիոն համապատասխանում է Քրիստոսի ծննդեան 952 թուին, երբ Կոստանդին դահի վրայ էր, թագակից ունենալով իր որդի Ռոմանոսին: Դաւիթ եւ Սպանդիատ եկած պէտք է լինեն այս թուից չորս կամ հինգ հարիւր տարի յառաջ, այսինքն 452 կամ 552 թուին: Զարմանալի է որ այսքան ժամանակամիջոցում Դաւ-

էջ յետոյ եւ որից առնելով պատմում է «յաղագս Վրաց թագաւորացն սկզբանց», էջ 91, ուր Գուրգէն համարւում է որդի Աշոտի Ողորմածի, մինչդեռ անծանօթ աղբիւրից քաղած ծննդաբանութեան մէջ Գուրգէն Դաւիթի եղբօրորդին է:

1 De Administrando Imperio, գլ. 45. էջ 197–199:

2 Բ. Թագաւոր. ժա:

թին վերագրում է միմիայն երեք սերունդ, որդի, թոռն և թոռնորդի: Գիծը չի հասցրած մինչեւ 952 հակառակ խոստումի, այլ մինչեւ Լեւոն կայսր (886-912), որից Ատներսեհ ստացաւ կիւրապաղատութիւն: Ատներսեհից յետոյ յայտնի էր Աշոտ Կիւրապաղատ, որին քաջ ծանօթ է մատենագիր կայսրը, բայց այստեղ չէ յիշուած: Ատներսեհ այցելել էր մայրաքաղաք մերձ 822ին եւ մեծ ընդունելութիւն գտել Ռոմանոս Լեկապեն կայսրի կողմից: Կարելի է կարծել որ այս զրոյցը գրի առնուած լինի Ատներսեհի կամ իր ուղեկիցներից մէկի բերանից նոյն 922 թուին եւ Կոստանդին դրուած լինի պալատական դիւանում եւ մոցրած իր երկի մէջ առանց ուշադիր լինելու նշանակել նաեւ յաջորդ կիւրապաղատների անունները մինչեւ իր ժամանակ: Կամ Կոստանդին կայսրի բնագիրը հարազատ վիճակի մէջ չէ հասած մեզ, կամ պէտք է ընդունել որ օգտուել է մի թղթից որ գրուած է եղել Ատներսեհի այցելութեան տարին:

Աշոտ Կիւրապաղատ եւս մայրաքաղաք էր գնացել կիւրապաղատութեան պատիւն ստանալու առթիւ եւ Կոստանդիանոսի ու Ռոմանոս Լիկապենի օրով: Այնուհետեւ հողային վէճեր ունեցաւ Աշոտ Կիւրապաղատը կայսրութեան հետ: Պէտք եղաւ ուղարկել կայսրի մօտ իշխան Զորտուանէլին որ նշանաւոր վանական Թոռնիկի հայրն էր: Զորտուանէլ մայրաքաղաք էր մօտաւորապէս 949-950 թուականներին: Հաւանական էր ենթադրել որ հէնց այս վէճերի առթիւ է որ Կոստանդին կայսրը հետաքրքրուել է կիւրապաղատների պատմութեամբ եւ թերեւս նոյն Զորտուանէլից գրի անցրել ինչ որ մեզ պատմում է: Սակայն այս հաւանականութեան արգելք է այն պարագան որ կիւրապաղատների գիծը հասցրած է մինչեւ Ատներսեհ: Կրկնում ենք կամ բնագիրը աղճատ է կամ զրոյցը գրի է առնուած աւելի յառաջ քան Կոստանդիանոսի ժամանակ, 952 թիւը[1]:

Մի ուրիշ եւ աւելի ծանր սխալ որ նկատւում է զրոյցի մէջ եւ որ չէ սպրտել Մարկուարտի սուր աչքից: Դաւիթի սերնդի շարքը՝ Դաւիթ, Բագարատ, Աշոտ, Ատներսեհ ուղիղ չէ: Առաջին եւ երրորդ անդամները փոխել են իրենց տեղերը, այսինքն պէտք է կարդալ՝ Աշոտ, Բագարատ, Դաւիթ,

1 Կոստանդին յիշատակում է Աշոտին նոյն De Adm. Imp. գործի յաջորդ 46 գլխի մէջ, էջ 207, τοῦ Ἀδρανασή τοῦ κουροπαλάτου, τοῦ πατρὸς τοῦ ἀρτίως Ἀσωτίου τοῦ κουροπαλάτου, այլեւ էջ 213, Ἀσώτιον τὸν υἱὸν Ἀδρανασῆ τοῦ κουροπαλατου. Վրաց Տարեգիրքի համաձայն, Ատներսեհին յաջորդեց իր որդի Դաւիթ († 937) եւ ապա սորա եղբայր Աշոտ: Մարկուարտի կարծիքը թէ Աշոտ որդին էր ոչ այս Ատներսեհի, այլ մի ուրիշ համանուն անձի, հիմնաւոր չէ:

Ատներսեհ: Այս է չիտակը, համապատասխան Վարդանի և Վրաց Տարեգրքի տեղեկութեան: Անշուշտ Դաւիթ մարգարէի, կիւրապաղատների կարծեցեալ նախահօր, անուան ազդեցութեամբ է բացատրելու տեղի ունեցած չփոթութիւնը պատմողի թէ գրի առնողի կողմից:

Դաւիթի (իմա՛ Աշոտի) հօր եւ պապի, Ատներսեհի եւ Վասակի մասին յիշատակութիւն չկայ: Խօսք չկայ նաեւ կիւրապաղատների հայկական ծագման մասին: Արդեօք զրոյցին անծանօթ էին այս կէտերը թէ սղուած են այնքան սեղմ պատուածքի մէջ, դժուար է ասել: Դաւիթը ոչ 452 եւ ոչ 552 թուի անձ չէր, այլ ութերորդ դարու վերջի եւ իններորդի սկզբի: Զրոյցի մէջ տեսնում ենք թերեւս առաջին փորձը հնացընել կիւրապաղատների ծագումը, բայց տակաւին չկայ այն կեղծ ծննդաբանական շղթան որ պիտի յօրինուէր հետագայում՝ ապացուցանելու ծագման հնութիւնը: Սպանդիատի մասին կը խօսենք ստորեւ: Հետեւենք առ այժմ նրա եղբօր Դաւիթի բախտը:

Բարեբախտաբար Վրաց մատենագրութիւնը պահել է Բագրատունիների ծագման հնագոյն վարկածը: Ճիշտ է վրական տեղեկութիւնները շատ խառնակ են: Բայց չինծու զրոյցները չեն խեղդել իրենց ծալքերի մէջ պատմական սաղմը:

Արքայազն Վախուշտ կազմել է «Վրաց Կեանքը», օգտուելով զանազան ձեռագրական նիւթերից, աշխատել է հարթել տարբերութիւնները եւ մի ուղիղ գծի վերայ շարել Վրաստանի իշխողների յաջորդութիւնը: Սակայն դժուար չէ նկատել որ կան հին տեղեկութիւններ որ հետագայ գրիչները խաթարել են: Այդ կարգի տեղեկութիւն ենք համարում ինչ որ պատմուած է Արշիլ թագաւորին նուիրուած հատուածում: Արշիլի պատմութիւնը պատկանում է Ջեւանշէր Ջեւանշէրի դրչին, որ իրեն համարում է ժամանակակից եւ անդամ փեսայ Արշիլի: Այս յաւակնութիւնը պարզ կեղծիք է: Գէթ այն ձեւով ինչպէս որ իր գործը հասել է մեզ չի կարող վերագրուել ժամանակակից դրչի, առասպելականը մեծ տեղ բռնելով այնտեղ[1]: Կեղծ-Ջեւանշէրը պահել է մեզ ամեն պա-

1 **Brosset,** էջ 253, ծանօթ. 1, բերում է մի յիշատակարան ուր ասուած է թէ «Արշիլի վկայաբանութիւնը, Վրաց թագաւորների պատմութիւնը և Վրաց դարձը գրել է Լէոնտի Մրուէլ, Ռուիսի եպիսկոպոսա, եւ այժմ գրում եմ ես Յովհանէ Դեկանոս»: Հետեւապէս Վրաց պատմութեան հնագոյն շրջանի, սկզբէն մինչեւ Արշիլ, բուն հեղինակն է Լէոնտի եպիսկոպոսը: Յովհանէ, հաւանօրէն, սոսկ գրիչ չէ, այլ հեղինակ Արշիլի որդիների՝ Յովանէի եւ Ջեւանշէրի պատմութեան, որ հետեւում է Արշիլի վկայաբանութեան:

բաղային Բագրատունիների ծաղման վրական հնագոյն եւ սոյդ վարկածը։

Վրաց ազգային հինաւուրց իշխանական տունը ոպասեց ութերորդ դարու վերջին Ջեւանշէր իշխանի մահուամբ, բան Վախուշտի, 787 թուին։ Ջեւանշէրի հայրը եւ նախորդը Արշիլն էր, որի մասին պատմում է հետեւեալը։ Արշիլ վերաղատնում էր Եգերքից, երբ Խիզար իշխանում իրեն ներկայացաւ Դաւիթ մարզպանի սերնդից մի իշխան որ էր Ատրներսեհ կոչի եղբօրորդի Ատրներսեհը։ Եկւորի հայրը ոպղակից էր Բագրատունի տան եւ Ցոյներից իշխան կարգուած Հայոց կողմերում, ապա ոպասատանել էր Կղարջք Մրուան Ղրուի արշաւանքների միջոցին եւ մնացել այնտեղ Գուսամ կիւրապաղատի զաւակների մօտ։ Սրա որդին, եկւոր Ատրներսեհը, այժմ խնդրում էր Արշիլից մի կալուած հոգատարութեան պայմանով։ Արշիլ նրան ղրկեց Շուլաւեր եւ Արման (= Արտահան)։

Արշիլի մօտ եկան նմանապէս նոյն Ատրներսեհ կոչի երեք եղբօրորդիները, նրանք որ խաբել էին իրենց հօրեղբօր աչքերը, եկան Տարօնից Շաբի եւ հաստատուեցին այնտեղ Արշիլի հաւանութեամբ, ու գրաւեցին երկիրը մինչեւ Գուլդուլա։

Նոյն ժամանակներում մի քանի ըդեչիս տեղ չգտնելով կղարջքում, գնացին Տայք եւ բռնեցին Կարմախ ժայռը, մի մասն էլ գնաց Կարեթ[1]։

Արդ կասկած չկայ որ Ատրներսեհ կոչը այլ ոչ չէ քան Աշոտ կոչը։ Հօր եւ որդու փախուստը միեւնոյն անցքի կրկնութիւնն են, ինչպէս նկատել է Մարկուարտ։ Մեր կարծիքով ոչ միայն անցքն է կրկնուած այլ եւ անձը, այսինքն հայրը եւ որդի միեւնոյն անձն են, Վասակ Բագրատունին։ Սակայն թւում է թէ այստեղ լուում է եւ մի հին դէպքի արձագանգ։ Ատրներսեհի հայրը որպէս թէ փախել էր Կղարջք Մրուան-Ղրուի ժամանակ։ Մրուան-Ղրու կրկնակի անունը կրկնակի դէմք է ներկայացնում։ Վրացերէն ղրու նշանակում է խուլ։ Այս արատն ունէր Արզլաղիզ ոստիկանը որ ուղարկուեց Հայաստան Վալիդի օրով (705-715) եւ որին Ղուտնդ պատմագիրը կոչում է խաւր լսելեօք։ Ութերորդ դարու սկզբում մեծ խռովութիւններ ծագեցին Հայաստանում Արաբների դէմ եւ Ցունաց կայսրի դրդմամբ։ Խռովութիւնների հետեւանքն եղաւ Նախճաւանի եւ Խրամի ահաւոր ապիտը։ Հայ նախարարները զոհ գնացին արաբական նենգութեան եւ ողջակէզ եղան եկեղեցու մէջ։ Ապստամբութեան ոգին Սմբատ Բագրատունին էր որ արժանացել էր կիւրապաղատութեան պատուի եւ որ կարողացաւ մի քանի նախարարների հետ փախչել եւ ապաւինել կայսեր։ Սա տուեց նրանց «զքաղաքն որ անուանեալ կոչի Փոյթ ի կողմանս Եգեր աշխարհին եւ բնակեցան ի նմա ամս զ»։

Նոր ոստիկանը, խուլ Արզլաղիզ, պատուէր ունէր խաղաղացնել երկիրը։ Սա յարաբերութեան մէջ մտաւ Սմբատ կիւրապաղատի հետ եւ համոզեց վերադառնալ։ Փախստականները վերադարձան մօտ 712 թուին։

Արդ եթէ չենք ուզում Ատրներսեհի հօր փախուստը ձուլել իր որդու փախուստի հետ, պէտք է ընդունել որ Սմբատ Բագրատունու եղբօրի Փոթի քաղաք ապաստանելն է որ անդրադարձել է որպէս Ատրներսեհի հօր փախուստ Կղարջք։ Ղրու 'խուլ' մակդիրը որ վերաբերում է Արզլաղիզին եւ ոչ Մրուանին երաշխիք է այս ենթադրութեան։

Մրուան նշանակուեց ոստիկան 732 թուին եւ Աշոտին կարգեց իշխանաց իշխան։ Աշոտի հակառակորդները նրան կուրացրին 17 տարի իշխանութիւն վարելուց յետոյ, ուրեմն 749 թուին։ Նրա հովանաւոր ոստիկան Մրուան գրաւեց խալիֆայական գահը 744 եւ ապանուեց 749։ Հաւանական է որ նրա մահից անմիջապէս յետոյ տեղի ունեցաւ եւ Աշոտի աղէտը։

Վրաց Տարեգիրքն եւս գիտէ որ Մրուան եկաւ Էշինի, այսինքն Հիշամի (724-743) կողմից։ Արշիլի պատմութեան մէջ յիշւում է որ Մրուան-Ղրուից 50 տարի յետոյ Արաբները մտան Վրաստան եւ մանողը մի կուսակալ էր, անունը Ջիլում, որ կոչւում էր նաեւ Ասիմ։ Սա էր որ նահատակել տուեց Արշիլին։ Եթէ յիսուն տարին հաշուենք 732 թուից երբ եկաւ Մրուան, կը ստանանք նահատակութեան տարին մօտ 784։ Ղեւոնդ պատմագրից յայտնի է որ Խազմ անուն արաբ ոստիկան ապանեց մարտիրոսական մահով Համազասպ եւ Սահակ Արծրունի իշխաններին Դուինում մլգ կարգա՛ մլդ Հայոց թուին, յայտնութեան օրը, այսինքն 786 յունուար 6, Մուսէ խալիֆի օրով։ Այս խալիֆի ժամանակ ապանեցին նաեւ «զիշխանն Վրաց չարաչար մահուամբ, զի վերամբարձ առեալ զոտիցն եւ զձեռացն ընդ մէջ կարէր զմատաղութիւն հասակի նորա»[1]։

Այս անանուն իշխանն, անտարակոյս, Արշիլն է, ինչպէս արդէն նկատել են Բրոսսէ եւ Մարկուարտ։ Նահատա-

1 **Brosset,** էջ 249-251։

1 Ղեւոնդ, գլ. Խ։

կուԹեան տարին եւ ոստիկանի անունը երաշխիք են: Հայ պատմագրի Խազմ ոստիկանը Խուզիմա բին Խազիմ արաբն էր, նոյն ինչ որ Ջիզում - Ասիմ, որ աղաւաղուած է Թերեւս սխալ ընԹերցումի հետեւանքով, փոխանակ Խիզում-Ասիմի:

Այսպիսով որոշւում է Արշիլի ժամանակը: «ՄատաղուԹիւն հասակի» խօսքը ցոյց է տալիս որ Արշիլ չէր կարող յիսուն տարի իշխած լինել, որպիսին հաշւում է նրա վկայաբանութեան հեղինակը, անշուշտ, կամենալով ուղղել սխալ ժամանակագրութիւնը եւ հասցնել նրան մինչեւ 786 թիւը:

Արշիլի մօտ Ատրներսեհ եկաւ 775 թուին: Ատրներսեհ ինքը Վասակն է: Արճէշի ճակատի հերոսը Մուշեղ Մամիկոնեանն էր, որ իր կողմը քաշեց Սմբատ Բագրատունի իշխանին որ սպարապետ էր եւ Մուշեղի փեսան: «Կոչէին ի Թիկունս օգնականութեան զՎասակ որդի Աշոտոյ, զեղբայր Սմբատայ սպարապետի ի տոհմէ Բագրատունեաց եւ զզօրսն նորին»[1]: Վասակ այդ միջոցին Դարիւնք էր, արդի Բայազիտ, որ Բագրատունեաց կալուածն էր: Ցայտնի չէ Թէ Վասակ արճաղա՞նդ տուեց կոչին եւ գնաց եղբօրն օգնութեան, Թէ մեկուսացաւ միւս Բագրատունիների նման: Ամեն պարագային 775ի ճակատից յետոյ այլեւս չի յիշւում: Ապստամբ իշխաններից, որոնք կենդանի մնացին արիւնահեղ մարտից յետոյ, հետապնդուեցին արաբ իշխանութեան կողմից եւ մահուան դատապարտուեցին, ինչպէս Արծրունի եղբայրները: Ակներեւ է որ Վասակ հեռացել էր Հայաստանից եւ իր ոյժերով քաշուել հաւանօրէն Սպեր, իրենց տոհմական կալուածը: Այստեղից էլ պէտք է անցնէր Կղարջք: Ի՞նքը գնաց Կղարջք Թէ իր որդի Ահրներսեհը, որոշ չէ: Եթէ Ատրներսեհը, որ Արշիլին դիմեց, եկել էր Հայաստանից, նա միայն Վասակ կարող էր լինել: Իսկ եթէ ճշմարիտ է որ Ատրներսեհի հայրը եւս փախած է եղել Կղարջք, պէտք է կարծել որ խօսքը վերաբերում է Վասակին, որ 775 թուին ապաստանել էր Սպեր, որտեղից հետագայում իր որդին գնաց Արշիլի մօտ: Հօր փախուստը տեղափոխած է Մրուան-Ղրուի ժամանակ, հաւանօրէն, շփոթելով Սմբատ Կիւրապաղատի համանման արկածի հետ, ինչպէս վերեւ յիշեցինք:

Դժուար է անտեսել Վարդանի կրկնակի վկայութիւնը Թէ Վասակ ունէր Ատրներսեհ անունով որդի: Մէկը յիշեցինք վերեւ: Երկրորդ անգամ կրկնում է նոյնը Ատրներսեհի որդու Աշոտի Վրաց իշխան կարդուելու առթիւ: «Եւ տայր իշխանն Իսմայէլի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի զերկիրն Վրաց, որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան եւ կայսրն առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան»[1]:

Կայսրը Լեւոն Ե Հայն է (813-820): Վասակ եւ Ատրներսեհ այնքան յառաջացել էին որ երկու հարեւան մեծ պետուները հնարաւոր գտան Ատրներսեհի որդուն Աշոտին բարձր դիրքի կոչել: Վարդան այս տեղեկութիւնը պարտական է Շապուհ Բագրատունուն, ուստի եւ անպայման յարգի է: Ատրներսեհը հետեւապէս ո՛չ Թէ Ատրներսեհ Կոյրի, այսինքն Աշոտ Կոյրի եղբօրորդին է այլ Թոռը: Վասակի անունը մոռացութեան է տուած:

Միւս կողմից Վրաց մի ուրիշ աղբիւր համարում է Ատրներսեհին որդի Ատրներսեհի: Արշիլի որդու և յաջորդի՝ Զեւանշէրի պատմութեան մէջ ասուած է որ Զեւանշէր առաւ Ատրներսեհի դուստրը Լատաւրէ: Զեւանշէրի մայրը ընդդիմանում էր այս ամուսնութեան, բայց երբ իմացաւ որ Ատրներսեհ Դաւիթ մարգարէի ցեղից է, հաւանութիւն տուեց եւ օրհնեց պսակը: Զեւանշէր դեռ կենդանի էր երբ Ատրներսեհ տէր դարձաւ Կղարջքի, Շաւշեթի, Աջարայի, Նիգալի, Ասեաց-Փորի, Արտահանի և ստորին Տայքի: Մինչ այդ բոլոր այս երկիրները Վախթանգի սերունդի ժառանգութիւնն էր: Ատրներսեհ հաստատուեց Կղարջք, ուր եւ մեռաւ: Իր որդին Աշոտ Կիւրապաղատ յաջորդեց Զեւանշէրին եւ հիմ դրեց Բագրատունեաց հարստութեան: Հետեւում է մի նորաւուր ծննդաբանութիւն Ատրներսեհի, որպէս Թէ սրա հայրն էր Ներսեհ, Ներսեհի հայրը՝ Վարազբակուր, սրա հայրը՝ Գուռամ եւ վերջինիս հայրը՝ Ստեփանոս Ա[2]:

Զեւանշէրի կենսագիրը չէ յօրինել այս ծննդաբանութիւնը, այլ առել է մի երկից, որի հեղինակն է Սմբատ: Միայն Սմբատի գործում չէ ասուած որ Ներսեհի հայրը Վարազբակուրն էր: Ներսեհ, իր որդի Ատրներսեհ և սրա որդի Աշոտ Կիւրապաղատ կազմում են ուրոյն գիծ: Սմբատի նպատակն է եղել իսկապէս կապել Ներսեհին Վարազբակուրի եւ նրա նախնիքների հետ, եւ Զեւանշէրի կենսագիրը իրաւունք ունէր Ներսեհին Վարազբակուրի որդի անուանելու, բայց եւ այնպէս ուշադրութեան արժանի է որ Սմբատ այդպէս չէ վարուել: Թւում է Թէ սա հաւատարիմ է մնացել մի ստոյգ աւանդութեան: Ներսեհ անունն այստեղ համազօր է Ատրներսեհի, սրա կրճատումն է: Ճիշտ այսպէս Վարդան պատմա-

1 Ղեւոնդ, գլ. ԼԴ:

1 Վարդան, էջ 77:
2 Վախուշտ, I էջ 259:

դիրը Սմբատ Թագաւորի ժամանակակից Վրաց Ատրներսեհ Թագաւորին մի անգամ անուանում է Ատրներսեհ, միւս անգամ Ներսեհ[1]:

Արդ Ատրներսեհի հայը Ներսեհը (իմա՛ Ատրներսեհը) ո՞վ կարող է լինել: Տեսանք որ Ատրներսեհն եղբօրորդի է կոչուած Ատրներսեհ Կոյրի: Եղբօրորդի գրչի սխալ է փոխանակ որդի: Ատրներսեհի եղբօրորդիք էին Տարօնից եկած երեք եղբայրները, որոնց համար չէ ասուած թէ Ատրներսեհի եղբայրներն էին: Ասել է թէ Ներսեհ-Ատրներսեհը նոյն Ատրներսեհ Կոյրն է: Սրանով այժ է ստանում վերև յայտնած կասկածս որ Արշիլին դիմող Ատրներսեհը ոչ թէ Վասակի որդին է, այլ ինքը Վասակը: Արդարև հետեւեալ ճիւղագրութիւնը

Աշոտ Կոյր

- Սմբատ († 775)
  - Աշոտ Մսակեր († 826)
- Սմբատ († 775)
  - Ատրներսեհ
    - Աշոտ Կիւրապաղատ († 826)

եւս վկայում է որ Ատրներսեհ նոյն Վասակն է, սրա վրական անունը: Ստիպողական չէ յամառել այս ենթադրութեան վրայ, եթէ Վարդան Շապուհից է քաղել այն տեղեկութիւնը թէ Վասակ եւ Ատրներսեհ հայր եւ որդի են: Բայց եւ անտեսել չենք ուզում վրական կրկնակի աւանդութիւնը որ պատահաբար պահուել է որպէս վերջին զօրանջ անհետացող ստոյգ պատմական յիշողութեան:

Վրաց Բագրատունիների հայկական ծագումը մոռացում է կամայ թէ ակամայ, տեղի տալով նոր զրոյցների: Խորենացու տեսութիւնը թէ Բագրատունիք հրէական ծագում ունին թեւաւորում է վրաց միտքը հայ և վրացի Բագրատունիների համար ընդհանուր նախահայր գտնելու ջանքի մէջ: Այդ նախահայրը Դաւիթ մարգարէն է: Այս միտքը եւս ծագած է նախ հայ դեռնի վերայ: Ճշմարիտ է, Խորենացին չէ տալիս Դաւիթի կամ նրա որդու Սողոմոնի անունը, բայց հրէական ծագումն աւեւելուց յետոյ խիստ դայթակղիչ է դատնում կանգ առնել սաղմոսերգու Դաւիթի եւ իմաստուն Սողոմոնի վերայ:

Աշոտ Մսակերի որդու Բագարատի որդիներից մէկը

1 Վարդան. էջ 82. Ատրներսեհ, էջ 87. Ներսեհ:

կրում էր արդէն Դաւիթ անունը: Բագարատ կալանաւորուեց 851 թուին, ուստի Դաւիթի անունը այս թուից յառաջ է: Թերեւս աւելի հին է Աշոտ Սահակեանի որդու Դաւիթի անունը, եթէ ընդունենք Հ. Ակինեանի հետ որ Վարդանի յիշած Աշոտը չէ Մսակերը, այլ Աշոտ Կոյրի հօրեղբօր որդի Սահակի զաւակը: Նոյն 851 թուի շարժումների միջոցին ծանօթ է նաեւ Սողոմոն անունով մի Բագրատունի իշխան[1]: Վրաց Բագրատունիների մէջ Դաւիթ անունը երեւան է գալիս առաջին անգամ Աշոտ Կիւրապաղատի որդու Բագարատի († 876) օրով, որի որդին կոչւում էր Դաւիթ († 881) եւ ծնուած էր Սմբատ Խոստովանողի դուստրից:

Դաւիթ եւ Սողոմոն անունները արդէն ապացոյց են որ Խորենացու ենթադրութիւնը հաստատուն հող է գտել եւ անգամ ձգտում յառաջ բերել հրէական ծագումը հաստատելու մինչեւ Դաւիթ մարգարէն եւ Սողոմոն իմաստունը, հրէական անցեալի ամենափայլուն դէմքերը:

Այստեղից օգտուել է վրաց ազգայնական միտքը եւ յերիւրել մի զրոյց, նպատակ ունենալով ցոյց տալ որ վրաց Բագրատունիները չեն սերում հայ Բագրատունիներից, այլ որ երկու ճիւղերն էլ միեւնոյն ծագումն ունեն եւ միեւնոյն հնութիւնը: Ի՞նչ կերպով: Պատասխանը տալիս է Սմբատ որդի Դաւիթի, անուանենք Սմբատ Դաւիթեան, որի գործը հրապարակ հանեց վրաց յայտնի բանասէր Ե. Թաղայշուիլի[2]:

Սմբատ սկսել է Ադամից եւ սրա սերունդն ուղիղ գծով հասցրել մինչեւ Դաւիթ եւ իր որդի Սողոմոն, որ Ադամի 33րդ սերունդն է ներկայանում: Այնուհետեւ շարունակել է գիծը մինչեւ Քրիստոս, մինչ Յովսէփ և իր եղբայր Կլէոպա, 60րդ սերունդ: Անունների շարքը համաձայն է հին եւ նոր Կտակարանի տուեալներին: Բրոսէի հրատարակութեան մէջ պակաս անուններ կան, բայց խնդիրը չէ: Շարքը շարունակել է մեր հեղինակը, հնարել նոր անուններ եւ հասցրել մինչեւ ոմն Սողոմոն 88րդ սերունդ Ադամից: Ահա այս Սողոմոնի եօթ որդիներն են որ դարձան Բագրատունիների նախահայրերը:

Ուշադրութեան արժանի է Սողոմոն անունը: Սմբատ ընդունել է չրջուն կարծիքը թէ Բագրատունիք սերում են Սողոմոնից, բայց որովհետեւ դժուար էր Բագրատունիների սերնդական գիծը տանել մինչեւ Սողոմոն, նախընտրել է Սո-

1 Թովմա Արծրունի. Գ, գլ. 14. էջ 230: Ի

2 Երեք ժամանակագրութիւն (Տրի խրոնիկի (սուսերէն) նիւթերի ժողովածու Կովկասի գեղերի եւ տեղերի նկարագրութեան համար (= Սբորնիկ մատերիալով) սուսերէն պարբերականի 28րդ (1900) հատորում:

զոմոնի գիծը իջեցնել մինչեւ մի շատ աւելի մերձաւոր Սողոմոն, որպէսզի Բագրատունեաց յաւակնութիւնը խելքի մօտ երեւայ, առանց խախտելու Սողոմոն իմաստունից սերելու գաղափարը:

Սողոմոնի եօթն որդիները գալիս են Փղշտացւոց աշխարհից Եկլեց գաւառը Ռաքայէլ թագուհու մօտ: Սա նախ մկրտել է տալիս նրանց եւ փոխում է երեքի անունները, մէկին անուանելով Մոշալէ (Մուշեղ), միւսին՝ Բագարատ, եւ երրորդին՝ Աբգաւար (Աբգար): Սրանցից մէկին թագուհին իր դուստրը կնութեան է տալիս, միւս երկուսին խնամեցնում Հայոց թագաւորների հետ: Եօթ եղբայրներից չորսը գնում են Վրաստան: Նրանցից Գուռամը դառնում է իշխան Վրաստանի, Սահակ մեկնում է Կախեթ, եւ Ասամ[1] ու Վարազվարդ գնում են Կամբեճան, սպանում պարսիկ զօրավարին եւ տիրանում երկրին: Ահա այս Գուռամից է որ սերում է Վրաց Բագրատունի տոհմը: Գուռամ կիւրապաղատ էր, նրան յաջորդեցին որդուց որդի հետեւեալ անձերը.

1 Գուռամ Կիւրապաղատ
|
2 Ստեփան, (եղբայր՝ Դիմիտրէ)
|
3 Ատներսեհ
|
4 Ստեփան Բ
|
5 Գուռամ Բ Կիւրապաղատ
|
6 Վարազ-Բակուր
|
7 Ներսեհ
|
8 Ատներսեհ (եղբայրներ՝ Փիլիպպոս, Ստեփան)
|
9 Աշոտ Կիւրապաղատ (եղբայր՝ Գուռամ)

Այս շարքի մէջ միայն վերջին երեք անուններն են պատմական եւ Բագրատունի, ինչպէս տեսանք վերեւ: Միւսները հնարածոյ են և առնչութիւն չունին Բագրատունիների հետ: Միայն մի դէպք է յայտնի, երբ Եկեղեաց գաւառը երեւան է գալիս նրանց պատմութեան մէջ: Այս մասին պարագայօրէն խօսել ենք այլուր[2]: Այստեղ բաւ է յիշել որ Ժ դարու սկզբում

1 Ասամ, թերեւս Արշամ անունն է, կամ Սամ:
2 Les Taronites en Arménie et à Byzance, **Byzantion**, t. IX, 1934.

Տարօնում իշխում էր Գրիգոր, կամ ինչպէս Բիւզանդացիք են անուանում Գրիգորիկ, Բագրատունի իշխանը: Կարող եւ քաղաքականապէս ազդեցիկ մի դէմք էր: Լեւոն (886 - 912) եւ Ռոմանոս Լեկապեն (920-945) կայսրները աշխատում էին թուլացնել նրա արաբական կապերը եւ ծառայացնել կայսրութեան շահերին: Գրիգոր ընդունեց, երկար տատանումից յետոյ, կայսերական հրաւէրը եւ գնաց մայրաքաղաք: Լեւոն կայսրը ամեն ուշադրութիւն ցոյց տուեց, մագիստրոսութեան մեծ պատուի հետ թոշակ կապեց եւ մի ապարանք շնորհեց մայրաքաղաքում: Ռոմանոս կայսրի օրով Գրիգոր ցանկութիւն յայտնեց ապարանքի փոխարէն ստանալ մի կալուած Եկեղեաց գաւառում: Գրիգոր ստացաւ τὸ προάστειον τοῦ Γρηγορᾶ ἐν Κελτξηνῇ, այսինք Գրիգորասի կալուածը Եկեղեաց գաւառում:

Գրիգորի յաջորդ և որդի Բագարատը եւս այցելեց մայրաքաղաքը, պատրիկութեան պատուի արժանացաւ եւ կնութեան առաւ թէոփիլակտ բարձրաստիճան պալատականի դուստրը: Այս առթիւ Բագարատ խնդրեց հաստատել իր վերայ յիշեալ կալուածը որ Գրիգորի մահից յետոյ վէճի նիւթ էր դարձել իր եւ իր եղբօրորդիների մէջ: Գրիգորի բացատրութեամբ, կալուածն անհրաժեշտ էր որպէսզի արաբական արշաւանքների ժամանակ, որոնց ենթակայ էր Տարօնը, կարելի լինի այնտեղ ապաստանել: Բագարատը մի յաւելեալ հիմ եւս ունէր պնդելու նոյն կալուածի վերայ, որպէս մի ապահով տեղի իր կնոջ, բիւզանդական այդ իշխանուհու, համար:

Այս կերպով Տարօնի Բագրատունիները դէպ դէպ Եկեղեաց գաւառում: Հետեւանքը յայտնի չէ: Ուրիշ շօշափման կէտ չեն ունեցել նրանք այս գաւառի հետ:

Այդ եօթ եղբայրների Եկլեց գալը, եթէ միայն ունայն երեւակայութեան պտուղ չէ, այլ խուլ արձագանգ որեւէ իրողութեան, այդ իրողութիւնը կարող է լինել միմիայն յիշեալ դէպքը, մանաւանդ որ, միւս աւանդութեան մէջ, Ատներսեհ Կոյրի երեք եղբօրորդիք Տարօնցի էին: Այս պարագային մեր զրոյցը պէտք է յօրինուած լինի ուշ քան Լեկապենի ժամանակը եւ այնքան ուշ որ իրողութիւնն աղօտանար յիշողութեան մէջ եւ տեղափոխուէր մօտիկ անցեալից հին դարերը:

Հնութեան նշան չէ բնաւ եւս այն որ եօթ եղբայրներից երեքը գնում են Կախեթ եւ Կամբեճան: Կախեթի իշխանները որ քորեպիսկոպոս էին կոչւում յայտնի են յանուանէ Թ դա-

ըից մինչեւ ԺԱ: Նրանք Բագրատունի ծագում չունէին: Բագրատունիք կոխեցին Կախեթի եւ Հերեթի հողը եւ նուաճեցին Բագարատ Գ և Դ թագաւորների օրով ԺԱ դարի առաջին կէսում[1]: Զրոյցը նպատակ ունի հաստատելու թէ Բագրատունիք հնուց ժառանգական իրաւունք ունեն յիշեալ երկիրների վերայ:

Հայ Բագրատունիների նախնահայրերը իրենց Մուշալէ, Բագարատ եւ Աբգաւար անուններով այլ բան չեն հաստատում քան հեղինակի կատարեալ անգիտութիւնը: Աբգաւար, աղճատումն Աբգարի, ծանօթ է նրան անտարակոյս Խորենացուց: Մուշալէ, յունական ձեւն է Մուշեղի, Μωσαλέ, որ Մամիկոնեան անուն է եւ յայտնի է հեղինակին երեւի Διήγησις գրուածքի վրացերէն թարգմանութիւնից: Մեծ հնարագիտութիւն չկայ Բագրատունիների նախահօր Բագարատ անուանելուն մէջ: Զարմանալի է որ Վրաց Բագրատունիների նկատմամբ համապատասխան անունով նախահայր չէ նշանակել եւ ոչ էլ բացատրել թէ ինչո՞ւ Գուռամի սերունդը պիտի Բագրատունի անունը կրէր: Թագաւորազն Վախթանգ նկատել է այս բացը եւ փորձել է լրացնել իր անձնական ենթադրութեամբ, ինչպէս կը տեսնենք ստորեւ:

Այսպէս թէ այնպէս Բագրատունիների նախահայրը Գուռամն է, հրեայ Սողոմոնի որդին: Կեղծիքը կանգ չէ առել: Լաւ չէ՞ր լինի որ Գուռամ մի կերպ ազգակից, արենակից լինէր նաեւ մեծ թագաւոր Վախթանգին: Հարկաւ ցանկալի էր ազգային ղղացումի տեսակէտից: Գայթակղիչ միտքը իրականացել է: Գտել են որ Գուռամ հրեայ էր միայն հօր կողմից, իսկ մօր գծով բուն վրացի էր, լինելով Վախթանգի դստեր որդի, այսինքն աղջկաթոռը: Հետեւապէս Սողոմոն հրեան ամուսնացած է եղել Վախթանգի դստեր հետ: Սակայն Սողոմոնը չէր եկել Փղշտացւոց աշխարհից Վրաստան, այլ միմիայն իր եօթ որդիք: Կեղծարարի փոյթը չէ: Այս գիւտն անելուց յետոյ, բնական է որ Գուռամ իշխած լինէր Վախթանգի յաջորդների կարգին: Արդարեւ նա յաջորդ է նշանակուած Բակուր Գ-ի, որ Վախթանգի թոռան թոռնորդին էր, այսինքն հինգերորդ սերունդը: Գուռամի միջամտութիւնը խանգարում է Վախթանգի յաջորդների կարգը և չփոթութիւն է ծագում սրանց եւ Գուռամի սերունդի յաջորդականութեան մէջ, ինչպէս կը տեսնուի հետեւեալ աղիւսակից:

1 **Brosset**, I, էջ 299 եւ 317–318:

Վ ա խ թ ա ն գ

1 Դաչի	Դուստր
2 Բակուր Բ	
3 Փարաման Ե	
4 Փարաման Զ	
5 Բակուր Գ	
	6 Գուռամ Կիւրապաղատ
	7 Ստեփան Ա
8 Ատրներսեհ	8 Ատրներսեհ
9 Ստեփանոս Բ	9 Ստեփան Բ
10 Միհր	10 Գուռամ Կիւրապաղատ
11 Արչիլ	11 Վարազ–Բակուր
12 Յոհան եւ Զեւանչէր	12 Ներսեհ
	13 Ատրներսեհ
	14 Աշոտ Կիւրապաղատ

Ութերորդ և իններորդ անունները, Ատրներսեհ և Ստեփան գտնւում են թէ մէկ թէ միւս գծի վրայ: Ո՞րն է ճիշտը: Ատրներսեհ Բակուր Գ-ի որդի՞ն է թէ Ստեփանի: Ուրիշ խօսքով, ո՞վ ումնից է առել: Վախթանգի սերնդաբանութեան հեղինակը Լէոնտիոս եպիսկոպոսն է, միւսինը՝ Սմբատ Դաւթեան: Տարաբախտաբար սրանց յարաբերական հնութիւնը յայտնի չէ ստուգօրէն: Լէոնտիոսի գործի հայ թարգմանութեան մէջ Գուռամ չի յիշւում: Ստեփան ընկնում է Թիֆլիսի պաշարման ժամանակ: Իսկ Ատրներսեհի մասին ասուած է «յազգէ Դաչէի», ուրեմն որդի Բակուր Գ-ի (որ եւս չի յիշւում, երեւի մոռացուած է): Յոհան եւ Զեւանչէր իշխանների նայող հատուածի մէջ եւս Ատրներսեհ եւ Ստեփան չեն յիշատակուած Գուռամի գծի վերայ. եւ Վարազբակուրը համարւում է Ստեփան Ա-ի որդին: Այս երկու պարագաները հիմ են տալիս կարծելու որ վիճելի անունները առաջին գծից

են անցել երկրորդը: Վախթանգեան Ատներսեհին եւ Ստեփանին զուգակշռում են իսկապէս Գուռամեան Գուռամ Բ եւ Վարազբակուր, եւ հետեւեալ երեք անձերին, Միհրին, Արշիլին եւ Ջեւանշէրին՝ Գուռամեան Ներսեհ, Ատներսեհ եւ Աշոտ Կիւրապաղատ. Ատներսեհ եւ Ստեփան անցել են Գուռամի գիծը եւ Ներսեհ, Ատներսեհ եւ Աշոտ գրաւել են Միհրի, Արշիլի եւ Ջեւանշէրի տեղերը:

Այս կէտում Սմբատ Դաւթեանի եւ Լէոնտիոս եպիսկոպոսի մէջ ներքին մի կապ կայ: Եւ կապը նշմարւում է նաեւ այլուր: Լէոնտիոս հաշւում է Ադերկ իշխանից մինչեւ Գուռամ Ա երեսուն իշխան: Ադերկ Փառնաւազի 10րդ յաջորդն է, իսկ Գուռամ 39րդ: Ադերկ ապրում էր Քրիստոսի ծննդեան տարիներին: Արդ Սմբատ Դաւթեանի հաշուով, Սողոմոն հրեան 29րդ սերունդ կամ ծունկ էր աստուածահօր Յովսէփից եւ սրա եղբօր Կլէոպից սկսած, Գուռամ Ա, ուրեմն 30րդ սերունդը: Այս զուգադիպութիւնը դիպուածական լինել չի կարող, մէկը ձեւած է միւսի վերայ: Եթէ ամեն մի ծունկ համարենք քսան տարի կը ստանանք Քրիստոսի ծննդից մինչեւ Գուռամ 600 տարի եւ որովհետեւ Լէոնտիոս տալիս է նրան 25 տարի իշխանութիւն, ուրեմն Գուռամ իշխել է 575–600: Այս է Լէոնտիոսի կեղծ ժամանակագրութեան բանալին: Երեսուն ծունկերի մերձաւոր վեցհարիւր տարին բաժանել է երեսուն առասպելական թագաւորների մէջ, տալով ամեն մէկին կամայական մի թիւ, մեծ մասամբ տասնեւհինգական տարի, աւելի երկար իշխանութիւն վերապահելով քանի մի նշանաւոր անձերի:

Լէոնտիոսի երեսուն թագաւորները և Սմբատ Դաւթեանի նոյնչափ թուով հրեայ ծունկերը մինչեւ Գուռամ եկած են միեւնոյն մտաւոր գործարանից: Ակամայից կասկած է ծագում, արդեո՞ք Սմբատ Դաւթեանը մի ուրիշ կեղծանուն չէ նոյն հնարագէտ Լէոնտիոս եպիսկոպոսի, ինչպէս էր Ջեւանշէր Ջեւանշէրեանը:

Գուռամ պատմական դէմք չէ, այլ երեւակայութեան ծնունդ, իսկ նրա Բագրատունի ծագումը յերիւրուած է այնպիսի անարուեստ կերպով որ կեղծարարն անտեսել է թէ ինչո՞ւ Գուռամի սերունդը Բագրատունի է կոչւում: Այս անպատեհ լռութիւնը չփոթել է Վախուշտին եւ սա պատրաստ է լրացնել պակասը, իր կողմից նոր դէմքեր ստեղծելով: Հաւանական է համարւում որ Գուռամ Կիւրապաղատը չէր Վախթանգի փեսան, այլ իր պապը, որ, երեւի, նոյնպէս Գուռամ էր կոչւում և որի որդին էր Բագարատ: Գուռամ Կիւրապաղատը լինելով այս Բագարատի որդին կրել է հօր անունը եւ աւանդել իր տոհմին:

Սողոմոն հրեայի զրոյցը նմանութիւն է Խորենացու հիմնովին սխալ տեսութեան թէ Բագրատունիները հրեական սերում ունին: Զրոյցը յօրինուած է ոչ յառաջ քան ԺԱ դար: Եօթ եղբայրներից երեքը, որ Հայք են գնում, ներկայացնում են Բագրատունի երեք ճիւղը Հայաստանում, Անի, Կարս եւ Տաշիրք (Կիւրիկեան): Ժ դարու երկրորդ կէսին երեւան եկան Կարսի եւ Տաշիրքի Բագրատունիք: Իսկ Վրաստան ուղղուած չորս եղբայրները արձագանգ են նոյն տոհմի չորս ճիւղաւորման, որ վերաբերում է ԺԱ դարու սկիզբներին:

Պատմութեան համար միակ արժէքաւոր նիւթ մնում է այսպիսով միմիայն Ատներսեհ Կոյրի աւանդութիւնը: Ստոյգ արտացոլք է պատմական իրողութեան, Ատներսեհ Կոյրը անդրադարձումն է Աշոտ Կոյրի, եւ Կոյրի որդին (և ո՛չ եղբօրորդի) Ատներսեհը ինքը Վասակն է: Ինչո՞ւ Աշոտ եւ Վասակ անունները տեղի են տուել Ատներսեհի: Կոյր դիպուածո՞վ թէ որեւէ հիմ կայ: Վասակի Վրաստան քաշւելու միջոցին այնտեղ իշխում էր Ատներսեհ անունով մի իշխան եւ որի որդին կոչւում էր Ներսեհ: Սա մի արաբ ծառայ ունէր որ քրիստոնէութիւն էր ընդունել եւ մեռաւ մարտիրոսական մահով յունուարի 7ին 786 թուին: Անունը Աբոյ էր որի յիշատակը ցայժմ տօնում է Վրաց եկեղեցին[1]: Ինչպէս տեսանք ուղիղ նոյն օրը նահատակուեցին եւ Արծրունի երկու եղբայրները ու նաեւ Վրաց մի իշխան: Արդեո՞ք Արշիլն էր այս իշխանը թէ Աբոյ, խնդիր չէ: Հնարաւոր է որ երկուսն էլ նահատակուած լինեն միաժամանակ: Արշիլ թերեւս իշխում էր Վրաստանի մի մասի վերայ, իսկ Ատներսեհ՝ մի ուրիշ մասի: Եթէ անգամ հաւատանք որ Ատներսեհ Կոյրի որդուն ընդունողն Արշիլն էր, ներելի է մտածել որ ժամանակակից Վրաց Ատներսեհ իշխանի եւ իր որդու Ներսեհի անունները կառչել են Աշոտի եւ Վասակի վերայ, ձուլելով այսպէս այս անձերը:

Ուշադրութեան արժանի է նաեւ Վասակ - Ատներսեհի դստեր անունը, Լատաւրի: Ի՞նչ է նշանակում այս խորթ անունը: Որքան մեզ յայտնի է որեւէ մեկնութիւն չէ առաջարկուած, ուստի աւելորդ չենք համարում, հարկ եղած վերապահութեամբ, յայտնել մի ենթադրութիւն:

Հայ-պարթեւ հրապարակ բառը դարձել է վրացերէնում

1 **Brosset**, I, էջ 262:

լապարակի, այսինք hp փոխուել է l-ի: Հետեւապէս Լատաւրի կարող է կշռել հայ-պարթեւ Հրատաւրի, ուր առաջին մասը սղումն է Հրահատ անուան, որ աւելի սեղմ Ռատ ձեւով ընդունուած էր Օրբելեան տոհմի մէջ[1]: Այդպէս էր կոչւում Լիպարիտի որդին: Կեդրին(ոս)ի մօտ Ռատ դարձել է Ὀράτιο անշուշտ Հորացիոս անուան ազդեցութեան տակ: Հրահատ: Կամսարականի անունը Պրոկոպ տառադարձել է Ἀράτιος[2] Հրատ-աւրի երկրորդ մասը այլ բան չէ քան հայ-պարթեւ -ուհրի: Հայ թարգմանութեան մէջ կարդացւում է Լատորի: Այսպիսով կը ստանանք Հրատուհրի, այսինքն Հրահատուհրի (հետագայում Հրահատուհի) իշխանական անունը:

Ստուգաբանութեանս նպաստաւոր է նաեւ այն պարագան որ Վասակի եղբայր Սմբատ ամուսնացած էր Հրահատ Մամիկոնեանի թոռան հետ, դուստր Մուշեղի եւ քոյր Սամուէլի, որ ընկան 775 թուի կռուին: Սմբատի կինը կարող էր կոչուած լինել իր պապի անունով Հրահատուհրի, կամ Հրատուհրի, ինչպէս սովորութիւն էր: Նոյն անունը կարող էր անցնել եւ Վասակի ընտանիքին, նախարարական միջավայրում տիրական սովորոյթի համաձայն:

Հրեայ Սողոմոնի երկրորդ որդին Սպանդիատ եւս համարւում է Բագրատունիների նախահայր: Սպանդիատ հրէական անուն չէ եւ իր կրողը չէ կարող հրէական ծագում ունենալ և Հրեաստանից եկած լինել Վրաստան: Անտարակոյս մի չփոթութիւն կայ այս աւանդութեան մէջ: Դաւիթ մարգարէն Աբիտալայ (մեր թարգմանութեան մէջ Ամիտալայ) կնոջից մի որդի ունէր Սափատիա անունով: Մարկուարտ կարծում է որ Վրացիք Սափատիա անուան մէջ տեսել են Սպանդիատ եւ յերիւրել սրա նախահայր լինելու զրոյցը: Սակայն Խորենացու մօտ Սպանդիատի մասին յիշատակութիւն չկայ: Հրէական օրէնքը թողնելուց յետոյ Բագրատունիները, մեր հօր ասելով, խժական անուններ էին կրում, ինչպէս Բիւրատ, Տրդատ (եւ ո՛չ Սմբատ, ինչպէս տպագրուած է)[3]: Յառաջ նրանց սովորական անուններն էին՝ Բագադիա, Տուբիա, Սենեքիա, Ասուդ, Սափատիա, Վազարիա, Ենանոս: Ապա այն կարծիքն է յայտնում որ այս անուններից մնացել են Բագադիա, Ասուդ, Վազարիա եւ Շամբաթ, այլափոխուած՝ Բագարատ, Աչոտ, Վարազ եւ Սմբատ ձեւով:

Սպանդիատ անունով Բագրատունի անծանօթ է Խորենացուն, ինչպէս Վրաց մատենագրութեան մէջ: Մի Սպանդիատ Բագրատունի է յիշւում անցեալում, 505 թուին ժողովի ժամանակ, եւ միմիայն: Այս միակ օրինակով Սպանդիատ չէր կարող Բագրատունի տոհմական անունների կարգն անցնել եւ նիւթ տալ զրոյցի:

Աւելի հաւանական է կարծել որ Սպանդիատ գործ չունի Դաւթի հետ, այլ մի աւելի հին զրոյցի բեկոր է նոյն Բագրատունիների ծագման վերաբերեալ: Սպանդիատ միջին պարսիկ ձեւն է Աւեստայի Սպենտադատա անուան, որ նշանակում է սրբատուր, ուր սուրբը ինքն Արամազդն է: Նոյն անուան պարթեւ համազօրն է Սպանդարատ: Իրանի մեծ հերոսներից մէկն է Սպանդիատ, Վշտասպի որդին եւ որին սպանեց Ռուստամ: Այս հերոսն իր տեղն ունի Արշակունիների եւ անգամ Սասանեանների սերնդաբանութեան մէջ: Սպանդիատ կրում է Պահլաւ մակդիրը, որով վկայում է իր յաւակնութիւնը նախահայր լինելու Արշակունի տոհմին: Հայ կամսարականների մէջ ընդունուած է Սպանդարատ անունը: Կամսարական տունը պահլաւ ծագում ունէր եւ, թերեւս, նոքա նոյնպէս արենակից էին համարւում Սպանդիատ հերոսին:

Արդ անսպասելի չէ որ նախքան Խորենացու գայթակղիչ գիւտը, Բագրատունիները նախահայր ընտրած լինէին նշանաւոր իրանական հերոսին, Սպանդիատին: Իշխանական տոհմերը՝ հայ, պարսիկ, անգամ արաբ, սնապարծ սովորութիւն ունէին, կեղծ ծննդաբանութեամբ հանել իրենց ծագումը որևէ հինաւուրց և ժողովրդական դիւցազնից: Բագարատ անունը հնագոյն Բագադատա ձեւով երեւան է գալիս առաջին անգամ բուն Պարսկաստանում, այսինքն Փարսիստանում, 220 թ. նախքան Քրիստոս: Փարսիստանը լինելով Աքիմեան հարստութեան որրան, հնուց վայելել է արտօնեալ վիճակ, եւ պահել յայտնի չափով ինքնավարութիւն ոչ միայն Աքիմեան, այլ եւ Պարթեւական շրջանում: Առաջին իշխանը կոչւում էր Բագադատա, որտեղից պարթեւ Բագարատ ձեւը: Սա եւս նշանակում է Բագա-տուր, ինչպէս Սպանդիատ՝ սրբատուր, ուր բագա 'աստուած' նոյն Արամազդն է: Դարեհ Նախշ-ի-Ռուստամի արձանագրութեան մէջ կոչում է Արամազդին բագա վազրակա, 'աստուած մեծ':

1 Թալինի մի արձանագրութիւնից ծանօթ է Հատ., սղումն Հրահատի, Վիմական Տարեգիր, էջ 2:

2 Կեդրինոս, II, 572, Պրոկոպ, II, 59:

3 Այս անունների մասին խօսում է Խորենացին Տրդատ Բագրատունի ոմն ցոփ իշխանի արարքի առթիւ հանդէպ Նաղենիկ Վարձակ կնոջ: Ահա այս Տրդատ անունն է խժական համարում նման Բիւրատի: Տպագրի Բիւրատ եւ Սմբատ պէտք է ուղղել Բիւրատ եւ Տրդատ, ինչպէս ունեն քանի մի ձեռագիրներ:

Բագրատունիների անունը չօշափման կէտ ունի Սպանդիատի հետ եւ այս կարող էր թելադրել արենակցական մերձաւորութեան համապատասխան զրոյց:

Վրացի կիւրապաղատները դուցէ եւ աղօտ յիշողութիւն ունէին Սպանդիատի նայող հին զրոյցի եւ բնականօրէն ձուլել են հին հերոսին Խորենացու առաջարկած նոր եւ հրապուրիչ Դաւթի հետ եւ ստեղծել զոյգ նախահայրեր: Բնական է հարց տալ, արդեօ՞ք այս կարգի չչունչների դէմ չէ ուղղուած Անանունի այնքան վճռական ձայնը թէ Բագրատունիք սերում են Արամանեակի որդիներից: Ասել է թէ այս նշանաւոր տոհմը օտարածին չէ, այլ բուն ազգային: Ափսոս որ Անանուն չէ բացատրում թէ ի՞նչ հիմ ունէր իր տեսակէտը: Այս պակասը, հարկաւ, պիտի դիւրացնէր Խորենացու հերքումը, թէեւ պատմահօր նոր կարծիքն եւս այլ հիմ չունի քան ստուգաբանական սխալ մերձեցումներ:

Անանունի տեսութեամբ, Արայի մահից յետոյ Հայաստան ընկաւ Ասորեստանի իշխանութեան տակ մինչեւ Սենեքերիմի սպանութիւնը: Այս միջոցին Հայերը ապստամբեցին եւ երկրի տէր դարձաւ Արամանեակի որդիներից Զարեհ եւ ապա յաջորդաբար Արմոգ, Սարհանդ, Շաւաշ եւ Փառնաւազ: Վերջինս հնազանդուեց Նաբուգոդոնոսորին, և մնացին Բաբելացիների, յետոյ Մարաց եւ Մակեդոնացիների իշխանութեան տակ մինչեւ Պարթեւաց երեւալը: Երբ առաջին Արշակունի թագաւորն եկաւ Մծբին, նրան ընդառաջեց Բագրատ Փառազեան եւ պսակեց հայրենի թագով, տալով նաեւ իր դուստրը կնութեան:

Անտարակոյս Ս. Գրքի ազդեցութեամբ է որ Անանունը հինգ թագաւոր թէ իշխան է նշանակում Սենեքերիմից մինչեւ Նաբուգոդոնոսոր, որպիսի ժամանակամիջոցում Հրեաները ունեցան նոյնչափ թագաւոր՝ Եզեկիա, Մանասէ, Ամոն, Յովսիայ եւ Յովակիմ:

Զարմանալի է որ Բագարատ Փառազեան որ ժամանակակից էր Նաբուգոդոնոսորի, ուրեմն ապրում էր եօթներորդ դարում Ն. ք. Քրիստոս, տակաւին կենդանի էր Արշակունի թագաւորի Մծբին ժամանելու միջոցին, մօտաւորապէս երկրորդ դարի կէսերին: Անանուն չգիտէ Արտաշէսեան կամ Տիգրանեան հարստութիւնը, կամ աւելի ճիշտ, ձուլել է Արշակունեաց հարստութեան հետ: Փառնաւազի որդիք են Բագամ եւ Բագարատ. Բագարատի որդին Բիւրատ եւ սրա որդին Ասպատ: Բագարատի որդիք ժառանգեցին արևմտեան կողմում Անգեղ տուն. Բագարատը կոչեցաւ եւ Անգեղ, որ է բարբարոսների աստուած:

Զնայելով որ Բագարատի որդիք սերում են Զարեհից, նրանք չեն կրում Զարեհի անունը: Բագարատը Փառազեան (այսինքն Փառաւազեան) է կոչուած, բայց նրա որդիք, այսինքն Բագրատունիք, որակուած են որպէս որդիք Բագարատի եւ ո՛չ Փառնաւազի եւ ո՛չ էլ Զարեհի: Ակներեւ է որ հեղինակի աչքում եւս Բագարատն է իսկապէս նախահայր իր անունը կրող տան բիւրատ եւ ասպետ պատուանուններով, իսկ Բագարատ – Զարեհ գիծը արուեստական չէնք է:

Մեզ հետաքրքրում է Փառնաւազ անունը, բայց նրա արժէքը գնահատելու համար պէտք է գաղափար ունենալ նաեւ միւս անունների էութեան վերայ:

Զարեհ որպէս հայ անկախութեան հիմնադիր յիշեցնում է պատմական մի պատկառելի դէմք, Զարիադր (այս անուան պարթեւական ձեւն է Զարեհ), որ հիմնեց Ծոփաց թագաւորութիւնը այն ժամանակ երբ իր զինակից Ատաքսիաս (Արտաշէս) անկախ հռչակեց Արեւելեան Հայաստան: Դեռ եւս չորրորդ դարում Ծոփաց մի իշխան կրում էր նոյն Զարեհ անունը: Երկիրը չէր կորցրել իսպառ անցեալի յիշողութիւնը:

Միւս կողմից Զարեհ որպէս ժամանակակից Սենեքերիմի, ուրեմն շատ աւելի հին դէմք, կարող է համեմատուել իրանական մի հռչակաւոր հերոսի հետ որ կոչւում էր Զարիադր: Սա Վշտասպի եղբայրն էր, ինչպէս Սպանդիատը: Աղէքսանդր Մակեդոնացու պատմագիրներից մէկը[1] աւանդում է որ Վշտասպը թագաւորեց Մարաստան եւ ստորին երկիրների վերայ, իսկ Զարիադր, որ կրտսեր եղբայրն էր, ունէր իր իշխանութեան տակ Կասպից պահակից վեր մինչեւ Տանայիս գետը (= Դոն գետը), ուրեմն Կովկասեան երկիրները:

Կարելի էր կարծել որ Զարեհ այս երկու Զարիադրների, հեռաւոր անցեալի այս երկու դէմքերի, միացեալ ստուերն է, որ մի հրաշքով հասել է մինչեւ Անանուն: Սակայն վերջինս մեծ վստահութիւն չէ ներշնչում, նրա հորիզոնը սահմանափակ է եւ կարողութիւնը այնքան հեռուները չէ գնում:

Աւելի հաւանական է ընդունել Մարկուարտի հետ թէ Անանուն հանել է Զարեհ անունը Զարեհ – աւանից, որ գտնուում էր Բագրատունեաց կալուածում, Բագաւանի մօտ: Այս վերջնից էլ հանել է Բագամ անունը: Շաւաշ, կամ Շաւարշ նոյն կերպով կապուած է Շաւարշան-ի հետ[2]: Համամիտ

1 Քարէս Միտիլենցի, Fontes historiae religionis Persicae coll. C. Clemen, էջ 25:

2 Շաւարշ կրճատ ձեւն է Շաւարշունի որ նշանակում է «սեւ արու ձի ունեցող», ինչպէս Շաւասպ նշանակում է «սեւ մատակ ձի ունեցող»:

չենք Մարկուարտին թէ Անգեղ տուն ասելով Անանուն հասկանում է Անգղ բերդը Ծաղկուտ գաւառում: Անանուն գիտէ Անգեղ տուն արեւմուտքում, որ թիւրիմացութեան տեղիք չի տալիս: Ս. Գրքից նրան յայտնի է որ Անգեղ անունով աստուած կար բարբարոսների մօտ: Բագարատ համեմատելով բագին բառի հետ դժուար չէ նրան կռահել որ Բագարատ անուան մէջ աստուծոյ գաղափար կայ, ուստի եւ նոյնանիշ է համարում Անգեղ եւ Բագարատ: Անգեղ տնից է որ Բագարատ Փառազեան գնաց դիմաւորելու Արշակունի թագաւորին Մծբնում: Նկատենք անցողակի որ Անանունի արտայայտութիւնից հետեւում է որ ինքն ապրում էր Հայաստանի արեւելեան մասում, հաւանօրէն Բագրատունեաց ոստանի, Դարոյնքի շրջանում: Բագրատունիք լքեցին Դարոյնք (այժմեան Բայազիդ) Աշոտ Մսակերի օրով († 826): Եթէ ճիշտ է որ Անանունի ստեղծած Զարեհ, Բագամ, Շաւաշ անուններըը կապ ունին Դարոյնքի շրջանի աւանների հետ, ինչպէս ընդունում է Մարկուարտ, ապա ընդունելի չէ նրա կարծիքը թէ Անանուն ժամանակակից էր Բագարատին († 851):[1] Անանուն յառաջ է քան Մսակեր, յառաջ քան Դարոյնքից տեղափոխուիլն Արշարունիք:

Ուշագրաւ է մեր նիւթի համար Արմոգ եւ Փառնաւազ անունները: Սարհանգ, որ պարսկերէն հերոս է նշանակում, առանձին հետաքրքրութիւն չունի: Ուշագրաւ է որովհետեւ Արմոգ եթէ սրբագրուի Արտոգ կը յիշեցնէ Վրաց մի թագաւորի անունը Ἀρτώκης. Այսպէս էր կոչւում Տիգրան Մեծի ժամանակակից Վրաց թագաւորը: Փառնաւազ, հին ձեւ Փառնաբազ, եւս Վրաց թագաւոր էր Տիգրան Մեծի որդի Արտաւազդի ժամանակ, Φαρνάβαξος որ նշանակում է փառաբազուկ: Արմոգ անունը կարելի է անտեսել, քանի որ հաւաստի չէ, մանաւանդ որ Ἀρτώκης եւս հաստատուն ընթերցուած չէ, այլ վիճելի է, Ἀρτώκης է՞ թէ Ἀρτάκης. : Կանգ առնենք Փառնաւազի վերայ:

Փաւստոս միակ պատմագիրն է որ ծանօթ է այս անուան. «զՓառաւազեանսն հրաման տայր սպարապետն Մուշեղ հանել ի խաչ ի մէջ աշխարհին Վրաց»: Նա է դարձեալ որ պահել է ինչ ինչ յիշողութիւններ Տիգրան Մեծի մասին: Ո՞ր տեղից է քաղել այդ յիշողութիւնները, յայտնի չէ: Հաւանօրէն միեւնոյն գրաւոր թէ բանաւոր աղբիւրից գիտէ եւ Փառաւազեան անունը: Թերեւս մի աւելի հին Փառաւազ է եղել

1 Caucasica, fasc. 2 1930.

քան այն որ ժամանակակից էր Արտաւազդին եւ նա՛ է որ տուել է իր անունը տոհմին:

Արտաշէսեան հարստութիւնը, Անանունի մօտ, ձուլուած է յաջորդ Արշակունի տան հետ եւ համարուած Արշակունի: Աւելի հին է կարծում նոյն հեղինակը Բագրատունի տոհմը, որ թէեւ սերում է Արմանեակեան Զարեհից, բայց բուն նախահայրը Բագարատն է, որին անուանում է որդի Փառնաւազի: Ի՞նչ է նշանակում այս արենակցութիւնը, եթէ այս Փառնաւազը Վրաց թագաւորական տան անդամ է: Տիգրան Մեծ Ասորիքը նուաճելուց յետոյ փոխարքայ կարգեց այնտեղ մի անձ, որ կոչւում էր Բագադատ, այսինքն Բագարատ, որ հաւանօրէն Բագրատունիների նախահայրն է: Փառնաբազ Վրաց թագաւորն էլ այդ ժամանակներն էր ապրում: Անանունի տրամադրած նիւթերը այնպիսի որակի չեն որ կարելի լինի ենթադրել նրա մօտ հեռաւոր անցեալի մի հաւատարիմ զօղանջ եւ Փառնաւազի մէջ տեսնել հին Փառնաբազի պատկերը կամ կարծել որ առաջին Բագարատն այդանուն հայր կարող էր ունեցած լինել: Անանունի Փառաւազեանն իրապէս այլ ոք չէ, քան Փաւստոսի ծանօթ Վրաց թագաւորական տունը եւ այստեղից գիտէ նա այդ անունը: Իսկ թէ ինչո՞ւ Փառաւազին Բագարատի հայր լինելու պատիւն է տուած, պէտք է կարծել որ այս դէպքում եւս Անանուն, իր սովորութեան համեմատ, աշխարհագրական մերձաւորութիւնը վեր է ածել ցեղականի: Յայտնի է որ Սպեր գաւառը Ճորոխի հովտում կազմում էր Բագրատունիների սեպհականութիւնը, որով նրանք դրացի էին վրական հողերին: Հնագոյն վրական իշխանական տուներ հայ մատենագրութեան մէջ Փաւստոսի յիշած Փառաւազեանն է: Սպերը, վրական հողերի մի անկիւնը, թարգմանուել է Անանունի մտքում որպէս թէ նրա տէր Բագարատը լինէր որդի նոյն հողերի տէր Փառնաւազի: Ուրիշ մեկնութիւն չենք գտնում, ինչպէս չէ գտել եւ Մակուարտ: Բախտախնդրութիւն կը լինէր բառացի հասկանալ եւ արեան կապ որոնել Բագրատունիների եւ Փառաւազեանների մէջ եւ կամ հետեւցնել թէ Անանունին ծանօթ էր Բագրատունիների հաստատուելը Կղարջքում:

Անանունի առեղծուածը դեռ լուծուած չէ, բայց նա այդքան ուշ հեղինակ չէ: Նրա հարցը կապուած է Խորենացու խնդրի հետ: Պատմահայրը շատ բան է պարտական Անանանունին: Սրա պարզ, բայց հանճարեղ մտքի սերմերն են որ այնպէս խնամքով հնձել է Խորենացին, հակառակ իր արհամարհական վերաբերումին:

Անանուն գիտակցօրէն չեշտում է Բագրատունիների Հայկեան ծագումը եւ զգուշութեամբ հակադրում Մամիկոնեանների օտարածին ծագման, «քանզի ոչ են սոքա որդիք ազգածնին Արամանեկայ, այլ են եկեալ ի ճենաստանէ»: Ինչ որ Անանուն պատմում է Մամիկ, Կոնակ եւ ճենբակուրի մասին պատմական երաշխիք չունի: Մամիկոնեան տան ճենական ծագումի լուրը գիտէ նա Փաւստոսից: Մամիկ եւ Կոնակ անունները հանած են Մամ-ի-կոն անուան ընդգծուած մասերից: Մամիկոնեանների նախահայր եղբայրները որպէս թէ եկած են Հայաստան Խոսրով Հայոց թագաւորի եւ Արտաւան Պարթեւի ժամանակ: Անանուն որպէս թէ առիթ է ունեցել խօսելու այս մասին Խոսրով արքայի մօտ եկած ճենական մի պատգամաւորի հետ: Եթէ այս Խոսրովը Պարսից թագաւոր հռչակաւոր Ապրուէզն է, Անանուն պէտք է Է-րդ դարու հեղինակ համարուի:

Փաւստոս յիշում է Մամիկոնեանների ճենական ծագումը նրանց գովելու, պանծացնելու նպատակով: Լինելով ճենական թագաւորի ցեղից նրանք ոչնչով պակաս չեն Արշակունիներից: Մինչդեռ Անանունի աչքում օտարածին Մամիկոնեանն այնքան վստահելի չէ որքան ազգածին Բագրատունին: Վեցերորդ դարու վերջերին ծագած ապստամբական շարժումները, որոնց առաջնորդները Վարդան եւ Մուշեղ Մամիկոնեաններն էին, հաճելի չեն Անանունին: Այդ խռովութիւնները իրենց աղէտաբեր հետեւանքներով հակապատկեր են Սմբատ Բագրատունու պարսկական հաշտ քաղաքականութեան միջոցով ստեղծած խաղաղ վիճակին: Կարելի էր հաւատալ, որ Անանուն իրօք Սմբատի եւ իր հովանաւոր Խոսրով Ապրուէզի ժամանակակից գրիչ է:

Սակայն կան երեւոյթներ որոնք չեն արդարացնում այս եզրակացութիւնը: Բաւական է յիշել Բիւրատ եւ ճենբակուր անունները: Բիւրատ անունը երեւան է գալիս առաջին անգամ ութերորդ դարի սկզբներին: Ասողիկ մի անծանօթ աղբիւրից յայտնում է որ Բիւրատեան էր կոչւում Սմբատ Կիւրապաղատ, այն իշխանն որ Կաղանկատուացու վկայութեամբ մեռաւ 727 թուին: Անանուն եւ նրա հետեւութեամբ Խորենացին ըմբռնել են բիւրատեան որպէս որդի Բիւրատի եւ վերջինս դարձել է նրանց մօտ յատուկ անուն: Զարմանալի է որ Վրացիք պահել են Բիվրիտիան, այսինքն Բիւրատեան,

ձեւը, թէև Խորենացուց գիտեն այդ անունը[1]: Խնդիրը մնում է բաց թէ Սմբատ Կիւրապաղատ ինքն էր վաստակել Բիւրատեան տիտղոսը թէ ժառանգել էր իր հօրից, ուրեմն ենթադրելով որ հայրը կոչուել է Բիւրատ: Սմբատի հայրը Վարազտիրոցն էր եւ ոչ Սմբատ, ինչպէս սխալմամբ նշանակում է Յովհաննէս Կաթողիկոսը: Այս Վարազտիրոցի մասին ուրիշ բան չէ յայտնի քան այն որ սպանուել է Հոռոմներից եւ հետեւապէս անկարելի է որոշել թէ ի՞նչ գործերի համար պէտք է տիտղոս ստանար: Գիտենք որ Սմբատ Գուրգան - մարզպան արժանացաւ Խոսրով-չնում պատուաւոր տիտղոսի որ նշանակում է Խոսրովի ուրախութիւն: Նրա որդին Վարազտիրոց ստացաւ նոյն Պարսից թագաւորից աւելի շողշողուն կոչում որպիսին է Ջաւիտեան-Խոսրով, 'յաւիտեան-Խոսրով': Վարազ-Տիրոցի որդին Սմբատ եւս կ'արժանանար նման պատուի, եթէ չխորտակուէր Պարսից պետութիւնը: Սմբատ սկզբում գտնւում էր կայսերական ծառայութեան մէջ եւ կարգուեց դրունգար, ապա բռնեց Թէոդորոս Ռշտունու տեղը, յետոյ Գրիգոր Մամիկոնեանի հետ պատանդ գնաց Արաբների մօտ եւ վերադարձաւ 662 թուին: Սրա որդին էր Վարազ-Տիրոց «զոր սպանին Հոռոմք», Սմբատ Բիւրատեանի հայրը[2]:

Անանուն եւ Խորենացի Բիւրատեան հասկացել են որպէս որդի Բիւրատի: Վերջնիս մօտ Սմբատ Բագրատունին որդի է «Բիւրատայ Բագրատունւոյ»: Եթէ այսպէս հասկացուի, պէտք է ընդունել որ Սմբատ Բիւրատեանի հայրը՝ Վարազտիրոց կոչուել է բիւրատ: Նրա բռնի մահը թերեւս ապացոյց համարուի որ նա արիական ելեւել է ունեցել կայսերութեան դէմ, քաջագործութիւններ գործել եւ կոչուել բիւրատ:

Բիւրատեան յիշեցնում է արտաքուստ Ջաւիտեան, բայց իմաստ չունի պարսկերէն: Հաւանական է որ բիւրատ կազմուած է բիւր և հատանել բառերից փոխան լրիւ բիւրահատ, ինչպէս կայ փայտատ փոխան փայտահատ, եւ կը նշանակէ բիւր մարդ կոտորող, շատ յաղթութիւնների տէր անձ:

---

1 **Brosset**, I, 66, Սմբատ Բիվրիտիան սպանեց Երուանդին եւ հաստատեց Արտաշանին գահի վերայ: Վրացին ծանօթ է Խորենացուն, որտեղից քաղում է այս տեղեկութիւնը, միայն ուշագրաւ է որ խուսափում է Սմբատին, որ Բիւրատ Բագրատունու որդին է, անուանել Բագրատունի, այլ որակում է Բիւրատեան անունով: Նպատակն է չհակասել ինքն իրեն Բագրատունիների ծագման խնդրում: Մի ուրիշ տեղ, էջ 163, Վախթանգի բերանով ասում է. «Դուք, Հայերդ, Արշակունիք, Բիվրիտեան ըդեշխներ, մոռացե՞լ էք Գրեգոր Պարթեւին»: Վախթանգի մեծամեծներից մէկը, Օձբէի տէրը ոմն Բիվրիտիան է, 183, 200:

2 Այս ծննդաբանութիւնը հետեւում է Սեբէոսի եւ Ղեւոնդի վկայութիւններից:

Պատշաճում է նման վիպական մակդիր մանաւանդ Սմբատ Խոսրով-Շնումին, որի անօրինակ ոյժը եւ կարող զէնքը փառաբանել է Սեբէոս: «Եւ էր սա այր անհեթեթ անձամբ եւ գեղեցիկ տեսլեամբ եւ բարձր եւ լայն հասակաւ եւ բուռն եւ ցամաք մարմնով»: Ցայտնի է թէ մարմնական ոյժի եւ բարոյական անվեհերութեան որպիսի հրաշքներ կատարեց բիւզանդական մայրաքաղաքում կրկէսի մէջ վայրի գազանների դէմ կռուելիս, ապշութիւն եւ հիացում պատճառելով հանդիսականներին: Պակաս նշանաւոր չէր նրա քաջարի մենամարտը Հեփթաղաց թագաւորի հետ որին նիզակի կուռ հարուածով գետին տապալեց:[1] Տարիներ շարունակ ճակատեց պետութեան հիւսիս-արեւելեան սահմանագլխում Քուշան եւ Հեփթաղ հրոսակների դէմ եւ միշտ յաղթական եղաւ: Ահա մի կեանք որ իրական վէպ է: Զամչեան անուանել է նրան բազմայաղթ: Նոյն իրաւամբ հները կարող են կոչել Բիւրատ այն իմաստով ինչ որ մեկնեցինք: Նոյն անունը կարող էին կրել եւ իր ժառանգորդները եւ մանաւանդ վերջին ծանօթ շառաւիղը Սմբատ Կիւրապաղատ: Այս բոլորը, հարկաւ, որպէս սոսկ ենթադրութիւն, չեն կարող մրցել հաստատուն փաստի հետ, որ Բիւրատեան անունը յայտնի է միայն Սմբատ Կիւրապաղատի անուան կից: Այս փաստը հարկադրում է ընդունել որ Անանուն այստեղից գիտէ Բիւրատ անունը եւ ապա ուրեմն ուշ է քան Սմբատ Բիւրատեանի մահը 727 թ.:

Ճենբակուր անունն ևս նպաստաւոր չէ Անանունի հնութեան: Առաջին անգամ հանդիպում ենք Ճենբակուր անունը Ղեւոնդի մօտ: Վալիդի օրով (705–715) Մահմետ զօրավարը արշաւեց Ճենաց աշխարհի վերայ եւ պահանջեց 35 հազար աղջիկ: Ճենաց թագաւորը կոչւում էր Ճենբակուր: Աղջիկների փոխարէն ղրկեց նոյնչափ ծպտեալ զինուոր, եւ ամբարտաւան զօրավարը պարտութիւն կրեց եւ նահանջեց: Խորենացու անունով հասած Աշխարհագրութիւնը եւս յիշում է «արքայն Ճենբակուր» Ճենաց աշխարհի նկարագրութեան մէջ[2]: Բայց այս երկը Ղեւոնդից հին չէ: Եթէ Անանուն Ղեւոնդից գիտէ Ճենբակուր անունը, նա չէ կարող ութերորդ դարու վերջերից յառաջ լինել: Առաւաւելն կարող էր նոյն դարու մարդ լինել եւ Ղեւոնդի հետ մի ընդհանուր աղբիւրից ծանօթ լինել նոյն անուան: Անանունի փոքրիկ, անշուք,

1 Սեբէոս, էջ 107 (Թիֆլիս, 1912 թ.) ասում է այս երկու ախոյեանների մասին. «զի արք սկսյազարք (եւ ո՛չ սակաւազարք, ինչպէս տպուած է) էին երկոքինն եւ կուռ սպառազինեալք»:

2 Մարկուարտի բացատրութեամբ Բակուր կազմուած է բազ եւ փուր բառերից, որ նշանակում է 'աստուծոյ որդի' եւ թարգմանութիւն Ջինաց թագաւորի տիտղոսի:

բայց նորաշունչ գրուածքը ոգով և գաղափարաբանութեամբ համապատասխանում է ութերորդ դարու կէսերից սկսուած քաղաքական շարժման հիմը կազմող ակնկալութեանց, այն շրջանին երբ ոգեշունչ մոնոզոնները գոչում էին թէ «ահա մերձեալ է ժամանակ փրկութեան ձերոյ, զի այժմ ընդհուպ դարձցի գաւազան թագաւորութեանն միւս անգամ ի տուն Թորգոմայ»: Անանուն հասկացնում է որ դաւազանի իրաւունքը պատշաճում է ազգածին Բագրատունիներին քան օտարազգի Մամիկոնեաններին: Ոչ միայն իր այս գաղափարով, այլ եւ ժամանակով թւում է թէ հեռու չէ Խորենացուց:

Անանունի մօտ Բագրատունի տոհմը ներկայացնում է Արամանեակի այսինքն Հայոց ազգը եւ Փառնաւազեանները՝ Վրաց ազգը: Բագարատի եւ Փառնաւազի արենակցութիւնն այլ բան չէ նշանակում քան որ երկու ազգերը եղբայրակից են եւ համերաշխ քաղաքական ազատութեան ճանապարհի վերայ, եւ գործակից արաբական լուծը թօթափելու ջանքերի մէջ:

Այսպէս, ո՛չ Անանունի ծննդաբանութիւնն եւ ո՛չ վրական աւանդութիւնները, որոնք բացառապէս գրական հողի վերայ են զարգացած, ո՛չ մի արժէք չունեն Բագրատունիների ծագման խնդրում: Միակ ճշմարիտ տեղեկութիւնն է ինչ որ պահուած է Վարդանի մօտ, այսինքն որ Վրաց Բագրատունիք ծագում են հայ Բագրատունիներից եւ նրանց նախահայրն է Վասակ որդի Աշոտի: Վասակի որդին էր Աշոտ որ խելացի քաղաքականութեամբ կարողացաւ շահել արաբական իշխանութեան վստահութիւնը եւ Վրաստանի իշխան կարգուեց: Այս յաջողութեան անմասն չէր անտարակոյս այն վարկը որ Բագրատունիք ձեռք էին բերել Հայաստանում: Լեւոն Ե Հայազն կայսրը (813-820) չնորհեց Աշոտին կիւրապաղատութեան պատիւ, անշուշտ, հակակշռելու համար արաբական ազդեցութիւնը: Աշոտ ստանձնելով Վրաստանի իշխանութիւնը, սկիզբը դրեց նրա քաղաքական վերածնութեան, եղաւ Վրաստանի համար այն ինչ որ Աշոտ Մսակեր Հայաստանի համար: Երկու Աշոտների սերունդը գրեթէ միաժամանակ թագ կապեց: Տեսանք, ինչպէս Մսակերի թոռը Աշոտ թագաւորեց 885 թուին: Աշոտ Կիւրապաղատի թոռնորդին Ատրներսեհ նոյն պատուին հասաւ 899 թուին:

Ինչպէս յիշեցինք վերեւ, երբ Ջահապ արաբ իշխանը գրաւեց Դուինը, Աշոտ Մսակերի ժամանակ, Աշոտ Կիւրապաղատը դիմեց Լեւոն կայսրին եւ խնդրեց օգնել նրան ազատելու Դուինը: Բայց Լեւոնի վերահաս մահը Միքայէլի ձեռքով Աշոտի խնդիրը անկատար թողեց: Պէտք է կարծել, որ Աշոտ

Կիւրապաղատը իշխան ճանաչուեց Արաբների կողմից Աշոտ Մսակերի հետ միաժամանակ: Կարճ միջոցում խոհուն գործունէութեամբ կարողացաւ «տիրել ի Կաղրջաց մինչեւ ի Տփղիս լեռնակողմամբ հանդերձ»[1]:

Վրաց Տարեգիրքը համաձայն է այս կէտում, երբ վկայում է որ Աշոտ նուաճեց Կղարջեթից մինչեւ Քսան գետը: Նուաճումը, ըստ Տարեգրքի, հետեւանք էր այն յաղթութեան, որ Աշոտ տարաւ Թիփլիսի արաբ ամիրայի վրայ:

Արդարեւ այդ ժամանակները Թիփլիսը գտնուում էր Մուհամատ իբն Հատաբ արաբ ամիրայի ձեռքին: Հիւսիսից Աշոտ Կիւրապաղատին հարեւան էր Ափխազաց թագաւորութիւնը: Ափխազները օգտուելով Բիւզանդիայի և Խազարների մրցութիւնից յաջողել էին արդէն հիմնել նոր իշխանական հարստութիւն եւ բաւականին ընդարձակել իրենց տէրութեան սահմանները, որոնց մէջ մտնում էին ոչ միայն բուն Ափխազիան, այլ եւ Մինգրելիան եւ Գուրիան գրեթէ ամբողջ ծովափնեայ աղեղը:

Աշոտի կողմից պարզ հաշիւ էր բարեկամական յարաբերութիւն ստեղծել այս հարեւանի հետ, որ հակառակ դէպքում կարող էր ահաւոր լինել: Աշոտ Կիւրապաղատը բարի համարեց Ափխազաց Թեւդաս թագաւորին փեսայացնել իր դստեր: Այս կերպ կարողացաւ իրեն զինակից անել Թեւդասին եւ միասին դէմ դնել Թիֆլիսի ամիրային:

Տարեգիրքը հաւատացնում է, որ Կիւրապաղատը Քսան գետի մօտ ճակատեց ամիրային, որին օգնական էր Կախեթի իշխանը, եւ յաղթեց: Շուտով Աշոտի վրայ եկաւ Խալիլ՝ Եզիդի որդին, եւ Աշոտ փախաւ իր ընտանիքով դէպի Ճունաստան: Ջաւախքի լեռներում, Փարուան լճի ափին հանգըստանում էր, երբ յարձակուեցին նրա վրայ Արաբները, բայց Աշոտ յետ մղեց նրանց եւ գնաց Կղարջք և հաստատուեց Արտանուջ: Վերանորոգեց հին աւեր բերդը, չինեց Պետրոս եւ Պօղոս առաքելոց անունով մի եկեղեցի, ջանաց երկիրը շէնցնել, խմբել բնակչութիւնը, որ տակաւին Մրուանի գործած աւերածութեան ծանր հետեւանքների տակ էր գտնուում: Քիչ յետոյ նենգութեամբ սպանուեց 826 թուին, յունուարի 29ին:

Այս պատմութեան մէջ ճշմարտութիւնն այն է, որ Աշոտ Կիւրապաղատը Ջաւախքից հետզհետէ յառաջ է գնացել եւ հաստատուել Արտանուջում, եւ չի կարողացել շարժուել դէպի բուն Վրաստան, դիմադրութեան հանդիպելով Թիֆլիսի ամիրայի եւ Կախեթի իշխանների կողմից: Խալիլ, որդի Եզիդի, սխալ ընթերցումն է, փոխանակ Խալիդի (վրացերէն l եւ դ տառերը չփոթելի են), որ մեզ յայտնի Շայբանի իշխանն է, կուսակալ Հայաստանի 827–832 տարիները: Որովհետեւ Աշոտ Կիւրապաղատի մահը Տարեգիրքը դնում է 826 թուին, ուստի սխալ է գործում Խալիդ Շայբանի կուսակալին Աշոտի դէմ հանելով: Տարեգրքի օրինակներից մէկում չի յիշւում այստեղ Խալիդը յանուանէ: Հաւանական է որ ե՛ւ այս ընդհարումը նոյն Մուհամատ իբն Հատաբի հետ է եղած: Կամ պէտք է ընդունել, որ Աշոտի մահուան տարին սխալ է, ինչպէս Մարկուարտն է ընդունում, որ քիչ հաւանական է:

Խալիդ ընկճեց Թիֆլիսի ամիրային եւ նրա տեղ նշանակեց Ալի՝ որդի Շուաբի, ինչպէս վկայում են Տարեգիրքը և արաբ աղբիւրները: Ալի եղբայր էր Իսմայէլի որ Հատաբից յառաջ նոյն քաղաքի տէրն էր: Ալիից յետոյ յաջորդեց Իսմայէլի որդի Իսահակը:

Կիւրապաղատի որդիները մանկահասակ էին երբ ինքը մեռաւ: Երէց որդին կոչւում էր Ատրներսեհ (վրացերէն Ադարնասէ), կրտսերը՝ Բագարատ: Իշխանութեան գլուխն անցաւ Բագարատ: Ինչ վիճակի մէջ էր Արտանուջի մանուկ իշխանութիւնը Կիւրապաղատի որդիների անչափահասութեան ժամանակ, անորոշ է: Գիտենք, որ Խալիդ Շայբանի այնուհետեւ վերստին եւ վերստին եկաւ կուսակալութեան պաշտօնով եւ կռիւներ մղեց Վրաստանի սահմաններում Ծանարքի դէմ, ինչպէս Իսահակ ամիրայի: Սրա վրայ էր գնում, երբ ճանապարհին մեռաւ Ջաւախքի Խոզաբիր գիւղում 844 թուին, որ այժմ էլ կանգուն գիւղ է: Խալիդից յետոյ կուսակալ եկաւ իր որդին՝ Մուհամետ: Սրա օրով է որ հրապարակ է գալիս Բագարատը, նոյնպէս Կիւրապաղատի կոչումով:

Բագարատ առաւ կնութեան Սմբատ Աբլաբասի դուստրը: Քաղաքական ասպարէզում որդեգրեց մի ուղեգիծ, որ յար եւ նման էր Սմբատի վարելակերպին: Ի՞նչ դիրք էր բռնել նա Բիւզանդիայի հանդէպ, յայտնի չէ: Բայց Արաբների նկատմամբ նրա քաղաքականութիւնը որոշ էր: Առանց վարանելու Բագարատ յարեց ոստիկան Մուհամետ Շայբանիին, երբ նա կռւում էր Թիֆլիսի ըմբոստ ամիրայի դէմ: Արաբների ձեռքով իսկ կործանել վտանգաւոր հակառակորդին պարզ հաշիւ էր:

Նոյն գործելակերպին հաւատարիմ մնաց եւ Բուղայի

1 Վարդան, էջ 78:

արշաւանքի ժամանակ։ Տարօնը եւ Վասպուրականը պատժելուց յետոյ, տեսանք, որ Բուղան գնաց Թիֆլիսի Իսահակ Շուաբի վրայ, եւ բռնեց ու սպանեց ամիրային։ Ափխազաց թագաւորը Թեւդասը փորձեց պաշտպանել Իսահակին։ Բուղան նրա դէմ ղրկեց ուրիշ ոյժերի հետ նաեւ Բագարատ Կիւրապաղատին։ Զնայելով որ Թեւդասը Բագարատի քեռայրն էր, բայց եւ այնպէս Կիւրապաղատը եկաւ նրա դէմ կռուելու։ Իսկ երբ Բուղան բանակը շարժեց դէպի լեռնականները, Բագարատն իր եղբօր Գուռամի միջոցով, ինչպէս եւ Սմբատ Խոստովանողը կամ Աբլաբասը զգուշացրին նրանց, որ արաբ զօրքերը ներս չթողնեն։ Լեռնականները ճանապարհները կտրեցին եւ արաբ բանակը ստիպուեց յետ քաշուել խոստովանելով իր անյաջողութիւնը։ Բուղայի ձեռքով Իսահակին կործանելուց յետոյ, հերթական հարցն էր ազատուել Բուղայի ճիրաններից։ Լեռնականների դէմ ունեցած ձախորդութիւնը կոտրեց թիւրք զօրավարի վարկը եւ յետ կանչուեց։ Նրա տեղը եկաւ նոյն Մուհամեա Շայբանին յուզուած երկիրն անդորրացնելու։

Բագրատունեաց քաղաքական ծրագիրների տեսակէտից Թիֆլիսի ամիրայի անկումը վճռական նշանակութիւն ունէր։ Շուաբի տունը վտանգաւոր էր ոչ միայն Վրաստանին, այլ և արգելաւոր Հայաստանի բարգաւաճման։ Չէր կարելի վստահել, որ մի օր իրական տէր չէր դառնայ երկու երկիրներին էլ։ Թւում է, որ նա զուրկ չէր շրջապատի համակրութիւնից։ Իսահակի կինը քրիստոնեայ դշխուհի էր, նրա զօրքերի մէջ կար Խոյթեցիներից կամ Սասունցիներից կազմուած յատուկ գունդ[1]։

Անուրանալի է որ Շուաբի տունը բարերար եղաւ այն մտքով, որ կենտրոնական իշխանութեան ուշադրութիւնը իր վրայ առնելով, յարմարութիւն տուաւ Բագրատունիներին հաստատուն ոտ դնել Կղարջք, յենուելով բիւզանդական պատուարին։ Սակայն, Ճորոխի հովտից յառաջանալ դէպի Վրաստան եւ գրաւել բուն վրական հողերը անկարելի էր Բագրատունիների համար, քանի որ Թիֆլիսում բուն էր դրել Շուաբի տունը։ Ճշմարիտ է Մարկուարտի կարծիքը, որ Բագրատունիները միմիայն Կղարջքի իշխաններ էին եւ Վրաստանի հետ կապ չունէին որչափ ատեն որ Թիֆլիսի մէջ նստած էին Շուաբի բռնաւորները։

Սրանց անկումից յետոյ Վրաստանը դառնում է կռուախնձոր հայ Բագրատունիների եւ Ափխազի տէրերի մէջ։ Բու-

1 Տարաբի. III, 1416. **Marquart**, Streifzüge, 460.

ղայի հեռանալով, Հայաստանի իշխանութիւնը ստանձնեց Սմբատ Խոստովանողի որդին Աշոտ, որ 862 թուին եղաւ իշխանաց իշխան եւ 886ին թագաւոր։

Վերեւ տեսանք, որ Աշոտն իշխանաց իշխան նշանակուելուց յետոյ ձեռնամուխ եղաւ նուաճելու եւ հնազանդեցնելու «զիշխանս Հայոց, զՎրաց եւ զԱղուանից»։ Պատմագիրն ասում է՝ «որ եղեւ իսկ»։ Պէտք է կարծել, ուրեմն, որ Աշոտի գերիշխանութեան տակ էր նաեւ Արտանուջի իշխան Բագարատ Կիւրապաղատը։ Արդեօք սա ևս գերուե՞ց Բուղայի կողմից նման Սմբատ Խոստովանողի, եւ յետոյ վերադարձաւ, յայտնի չէ։ Վրաց Տարեգիրքը նրա մահը դնում է 876 թուին։ Բագարատը Աշոտի կողմնակից էր, երբ վերջինս պատերազմի բռնուեց Ափխազաց Գիորգի Ա. թագաւորի հետ Վրաստանի պատճառով։ Բագարատի եղբայրը Գուռամ իր որդի Նասրա (=Ներսեհի) հետ Ափխազաց համակիր էր, մինչեւ Բագարատի որդին Դաւիթ եւ Լիպարիտ, Օրբելեանների նախահայրը, որ առաջին անգամ երեւում է պատմութեան մէջ, Հայոց կողմն էին։ Կռուի մանրամասնութիւնները յայտնի չեն, բայց արդիւնքը կասկածից դուրս է որ յօգուտ Հայոց էր։ Աշոտ յաղթանակեց եւ իր իշխանութեան տակ առաւ Վրաց եւ Աղուանից երկիրները եւ Կովկասեան լեռնականները։

Հաւանօրէն այս կուսակցական պայքարի հետեւանքով էր, որ Գուռամ սպանեց իր որդու Նասրի ձեռքով Դաւիթ Կիւրապաղատին՝ Բագարատի որդուն և յաջորդին, ըստ Տարեգրքի, 881 թուին։ Որ Գուռամը կուսակից էր Ափխազաց երեւում է նաեւ նրանից, որ իր դուստրը տուել էր Ափխազաց Ատրներսեհ թագաւորին կնութեան։

Տարեգիրքը չփոթում է Գուռամին Բագարատի հետ, երբ Աշոտ իշխանաց իշխանին անուանում է եղբայր Գուռամի կնոջ։ (Մի տեղ սխալմամբ եղբայր Գուռամի, բայց թողնելով կնոջ բառը)[1]։

Բագարատն էր Աշոտի քրոջ ամուսինը եւ ոչ Գուռամը, ինչպէս գիտենք Վարդանից։ Սա ասում է, որ Աշոտը Բագարատի մահից յետոյ «զնէ իշխան Վրաց զքեռորդի իւր», այն է Բագարատի որդուն՝ Դաւթին։ Սրա սպանութիւնից յետոյ յաջորդեց իր որդին՝ Ատրներսեհը, երբ հայերի օգնութեամբ քշուեց նրա հակառակորդ և հօրը մահուան պատճառ Նասրը։

Ատրներսեհը վայելեց եւ իշխանաց իշխանի որդու՝ Սմբատ թագաւորի հովանաւորութիւնն ու բարեկամութիւնը

1 **Brosset**, I, 191.

եւ նրա չնորհիւ արժանացաւ թագաւորական թագի։ Ահա ինչ է ասում ժամանակակից պատմագիրը. «Մեծ Կուրապաղատն Վրաց՝ Ատրներսեհ անվրդով եւ անշուշտ ուխտ խաղաղութեան եւ սիրոյ միաբանութեան ընդ արքայի Սմբատայ պահէր ի բոլոր մասունս առ ի բովանդակ մտաց եւ ի զօրութենէ իւրմէ մեծաւ պատկառանօք իբրեւ հօր հնազանդ լեալ, կամ թէ եւս առաւել քան զայս, իբրեւ զծառայ ի տեառնէ իւրմէ կամաւ կրեալ զսահման երկիւղի չափաւոր մոլութեամբ եւ զաչս իւր մշտակարկառ յարքայ հարեալ համակեալ մեծաւ զգուշութեամբ եւ նմա զանձն եւս հաւատացեալ։ Ընդ որ յաւէտ իմն հաճեալ հաւանեալ արքայն Սմբատ բազմազեղ նախախնամութեամբ յինքն զնա ածէր յանձանձէր։ Ապա թագ կապեալ նմա մեծապատիւ ճոխութեամբ եւ գեղեցկայարմար զարդու, նաեւ զինու զարդարեալ ըստ օրինի թագաւորաց, կացուցանէ զնա թագաւոր Վրաց աշխարհին եւ երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատէ»[1]։

Ըստ Վրաց Տարեգրքի, թագադրութիւնը կատարուեց 899 թուին։

Այսպիսով Բագրատունեաց վրական ճիւղը եւս հասաւ արքայական թագի եւ տէր դարձաւ Վրաստանի։ Ատրներսեհ շարունակեց զգալ եւ պահել ստեղծուած դրութիւնը հանդէպ Հայոց թագաւորի Սմբատի։ Միեւնոյն ծառի երկու ոստերն էին եւ Սմբատ միայն աւագութեան կապակից մեծարանքն էր, որ վայելում էր։ Երբ Եգերաց թագաւոր Կոստանդինը, որ ամուսնացել էր Ատրներսեհի դստեր հետ, փորձեց գրաւել սրա հողերը Ալանց դրան շուրջը, Սմբատ ընդդիմացաւ եւ Ատրներսեհի հետ միանալով սանձեց Կոստանդինին։ Այն ազգերը «հաւանեալք եւ հնազանդեալք եւ նուաճեալք էին ընդ ձեռամբ արքային Սմբատայ», ասում է պատմագիրը, մինչ սպասելու էր, որ այս հողերը պատկանէին Ատրներսեհ թագաւորին։

Տոհմական ընդհանուր սեփականութեան գիտակցութիւնը տակաւին արթուն էր այդ ժամանակ։ Արդարեւ, Սմբատ իր տէրութեան սահմանները հաշւում էր «մինչեւ ցկարնոյ քաղաք եւ անդր եւս քան զկղարջս քերեալ մինչեւ առ ափն ծովուն մեծի եւ մինչեւ ցսահմանս Եգերացւոց եւ մինչեւ ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս, եւ զԾանարս մինչեւ ցդուռն Ալանաց առեալ եւս յինքն եւ զամրոց դրան պահակի նոցա. եւ անտի ի հարաւակողմն կոյս

1 Յովհաննէս Կաթողիկոս, էջ 101–102։

զկուր գետով մինչեւ ի քաղաքն Տփղիս եւ զՈւտի գաւառ մինչեւ ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր»[1]։

Սմբատ իր տէրութեան մէջ էր համարում գրեթէ բոլոր այն երկիրները, որ պատկանում են Վրաց Բագրատունիներին, եւ անգամ գրաւել էր Դարիալի պահակը պաշտպանող ամրոցը, ասել է թէ հիւսիսային սահման էր Կովկասեան շղթան։ Սմբատը նայում էր Ատրներսեհի վրայ, որպէս միեւնոյն ընտանիքի անդամի։ Հակառակ կրօնական խտրութեան Ատրներսեհ հնարաւոր էր գտնում Զատիկը անցնել Սմբատի մօտ եւ նրա հետ միասին։ Սմբատ եւ Ատրներսեհ, երկու եղբօր թոռան թոռներ էին. բացի դրանից Ատրներսեհ Սմբատի հօրաքրոջ թոռն էր։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ ԱՂՈՒԱՆԻՔՈՒՄ

Տեսանք որ Ատրներսեհ Կոյրի երեք եղբօրորդիք Տարոնից եկան Շաքի եւ հաստատուեցին այնտեղ։ Ատրներսեհ Կոյրը Աշոտ Բագրատունին է եւ ուրեմն նրա եղբօրորդիք նոյն տոհմից են։ Նրանք խարել էին իրենց հօրեղբօր աչքերը։ Այս ոճիրի իսկական հեղինակը, գիտենք, որ Գրիգոր Մամիկոնեանն էր։ Սակայն Բագրատունիք եւս անպարտ չէին։ Աշոտի ոստիներն ոչ միայն Մամիկոնեան Դաւիթ եւ Գրիգոր եղբայրներն էին, այլեւ «Սմբատայ որդիք», որոնց անունները պատմագիրը չէ տալիս։ Այս կէտը պէտք ունի բացատրութեան։

Ղեւոնդ պատմագրի արտայայտութիւնն այնքան անորոշ է որ անուշադիր ընթերցողը կարող է այն տպաւորութիւնն ստանալ թէ Սմբատի որդիք նոյն Մամիկոնեան եղբայրներն էին։ Մինչդեռ Սմբատ անունը յատուկ է Բագրատունի տան եւ նրա որդիները զատելու է Մամիկոնեան եղբայրներից։

Արաբական ոստիկանի հրամանով, Աշոտի հակառակորդները կալանաւորուեցին որպէս խռովարարներ և ղրկուեցին Դամասկոս։ Երբ Օմմայեան տան դէմ ելան Աբբասեան-

1 Յովհաննէս Կաթողիկոս, էջ 89–90։

ները և դահակալական խռովութիւններն սկսուեցին, Մրուան ստիպուեց հեռանալ Հայաստանից: Ասթից օգտուեցին եւ փախան «զերծեալ որդիքն Սմբատայ ի կալանաւոր պատանդէն» եւ եկան Վասպուրական: Լի վրէժխնդրութեամբ, սրանք աղմկեցին Աշոտի դէմ եւ մինչեւ անգամ յարձակում գործեցին Աշոտի վրայ եւ կամենում էին սպանել: Աշոտը դիպուածով փրկուեց փորձանքից:

Երբ Աշոտի հովանաւոր Մրուան յաղթեց եւ ամիրապետ դարձաւ, Աշոտի դիրքը նորից ամրացաւ: Մրուան, «տեղեկացեալ զամբաստութիւնն զորդւոցն Սմբատայ և զոր ինչ արար ընդ նա (այսինքն ընդ Աշոտ) Դաւիթ եղբայր Գրիգորի», հրամայեց բռնել Դաւթին և ձեռքն ու ոտը կորելով սպանել: Խօսքը Աշոտի սպանութեան փորձի մասին է: Յարձակուել էին Սմբատի որդիք, բայց մեղադրւում է և տուժում միայն Դաւիթ: Եթէ Սմբատի որդիք Դաւիթ և Գրիգոր եղբայրները լինէին, պէտք է որ Գրիգոր եւս պատիժ կրէր: Բնագիրը երկդիմի է եւ ուելի հաւանական որ Սմբատի որդիների ամբաստանութիւնը հակադրւում է Դաւթի գործին: Պատմագիրն անաչառ չէ Մամիկոնեանների հանդէպ: Գրիգոր կազմակերպեց նախարարների համաձայնութեամբ ապստամբութիւն Արաբների դէմ: Գրիգոր ուաջարկեց Աշոտին միանալ ընդհանուր գործին: Սա հաւանութիւն տուեց, բայց յետոյ հրաժարուեց: Գրիգոր չարացաւ, բռնեց Աշոտին եւ յանձնեց Դաւթի ծառաներին, որոնք եւ խարեցին նրա աչքերը:

Ղեւոնդը չէ քաշւում յայտարարելու որ Գրիգորի ապստամբական քայլը մի «խորամանկութիւն էր վասն հանելոյ զիշխանութիւնն Աշոտոյ»: Այսպիսի միակողմանի եւ աչառու պատմագրից բնական էր սպասել որ կատարուած ոճիրը բարդուէր միմիայն Մամիկոնեանների վրայ: Մինչեւ վրական ուանդութեամբ ոճրագործները անբախտ իշխանի եղբօրորդիքն էին, ուրեմն Բագրատունիներ: Բնական է սրանց մէջ տեսնել Սմբատի որդիներին: Երկու հակառակ վկայութիւնները կարելի է հաշտեցնել, ընդունելով որ յանցանքը գործել էին Մամիկոնեանները, գործակից ունենալով Բագրատունի Սմբատի որդիներին: Ղեւոնդ անուանում է Գրիգորին «ի Մամիկոնեան տոհմէ», «ի տանէն Մամիկոնեան», եւ ո՛չ երբեք որդի Սմբատայ, որ սպասելի էր եթէ իրօք Գրիգոր Սմբատի որդին լինէր:

Սմբատի որդիք, որոնք նախանձում էին Աշոտի յաջողութեան, կարծում ենք, նշանաւոր Սմբատ Կիւրապաղատ Բիւրատեանի որդիներն են: Սրանք ամենայն իրաւամբ կարող էին թիկնածել այն պատուին որին արժանացել էր Աշոտը: Սմբատ Բիւրատեան, սակայն, Աշոտի ոչ եղբայրն էր եւ ոչ հօրեղբայրը: Եթէ իրօք մերձաւոր կապ կար Աշոտի եւ Սմբատի որդիների մէջ, ինչպէս վկայում է վրական ուանդութիւնը, հնարաւոր է մտածել մի ուրիշ Սմբատ Բագրատունու մասին: Ղեւոնդի տեսլով, Սմբատի որդիք ազատուելով պատանդութիւնից եկան մտան Վասպուրական եւ այստեղ սկսեցին իրենց չահատակութիւնները: Արդեօ՞ք խօսքն այն Սմբատի մասին չէ, որ Վասպուրականի իշխան է կոչւում եւ ընկաւ Նախճաւանի ոստիի ժամանակ 705 թուին: Թերեւս, այս Սմբատը Աշոտի հօրեղբայրն էր: Աշոտի հայրը Վասակն էր եւ սրա եղբայրը՝ Բագարատ: Աշոտից յետոյ Բագարատի որդին Սահակ կարգուեց իշխան Հայոց: Եթէ Սմբատն եւս Աշոտի հօրեղբայրն էր, հնարաւոր է որ նրա որդիք իրաւունք ունէին թիկնածու համարուել այն պատուին, որ վիճակուել էր Աշոտին, իրենց հօրեղբօր որդուն:

Տարաբախտաբար, յայտնի չէ այս ղոյգ Սմբատների որդիների եւ ընդհանրապէս հետագայ սերնդի վիճակը: Ինքներդ դարի սկզբում մի Բագրատունի զօրեղ ձայն է լսում հեռաւոր Աղուանքից: Հայոց 270 = 821-822 թուին Պարատից արար մի գունդ արշաւեց Ամարաս գաւառը, գերեց հազար մարդ և դարձաւ ամրացաւ Մեծիրանց գաւառի սահմանում Շիկաքար կոչուած տեղը: «Արի եւ չքեղատեսակն Սահկի Սմբատեան Եռանչահիկն տէր քաջայօր եղբօրօքն (sic) իւրովք եւ զօրօք» յարձակուեց լուսապէմին ասպատակաւորների վրայ, ցիրուցան արեց եւ ազատեց գերիներին[1]:

Սահղի Սմբատեան ուղղելի է Սահլի Սմբատեան, այսինքն Սմբատի որդի Սահլ: Սա այն նշանաւոր իշխանն է որ 837 թուին ձերբակալեց հռչակաւոր ասպատմբ ազանդաւոր Բաբեկին կամ Բաբանին, ինչպէս անուանում են մեր մատենագիրները, եւ յանձնեց արաբ զօրավար Ափշինին[2]: Այս մասին խօսում են ոչ միայն արաբ, այլ եւ հայ պատմագիրները: Հայոց 286 թուին = 837-838 Բաղդատից գրկուած 12 հազարանոց հեծեալ մի գունդ մտաւ Աղուանից աշխարհ, պատմում է Կաղանկատուացին, եւ Սահլ Սմբատեան որ «յարքայից Զատմիհրական տոհմէն էր», յարձակուեց ինչպէս արծիւ որ խոյանում է տկար թռչունների վրայ եւ հալածեց Արաբներին: Նոյն տարին Սահլ Սմբատեան ձերբակալեց աշխարհաւեր Բաբանին եւ տուեց ամիրապետի ձեռքը եւ որպէս

1 Մովսէս Կաղանկատ. Գ. գլ. ժբ. էջ 53, 54 (Փարիզ, 1860 թ.):
2 **Marquart**, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, 460.

վարձատրութիւն ստացաւ «իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից տիրել արքայաբար»[1]:

Զնայելով իր մատուցած ծառայութեան եւ բարձր դիրքին, նենգաւոր Բուղան չկասեց Սահլին եւս կցել կալանաւոր իշխանների կարաւանին 855 թուին, ինչպէս վկայում է Թովմա Արծրունին: Կարեւոր է այս վկայութեան մէջ այն որ էր «Սահլ Սմբատայ որդի Շաքեոյ տէր որ գիաբան կալաւ»[2]:

Արդ Սահլ միակ հայ իշխանն է որ յիշւում է որպէս Շաքիոյ տէր: Ի՞նքն էր գրաւել այդ երկիրը թէ իր հայր Սմբատը կամ անծանօթ պապը, յայտնի չէ: Անտարակոյս, Սահլի ընտանիքը ներկայացնում է Ատրներսեհ Կոյրի եղբօրորդիներին որոնք եկան Շաքի: Ապա ուրեմն գործ ունենք Բագրատունեաց մի ճիւղի հետ որ հաստատուած է Շաքի, որ է արդի Նուխի քաղաքի շրջանը:

Կաղանկատուացու խօսքը թէ Սահլ Եռանշահիկ եւ կամ Զառմիհրական տոհմից էր արժէք չունի: Եռանշահիկ ասելով հասկանում է հին Հայկազնեան տունը, որ սակայն, իր իսկ վկայութեամբ, տեղի տուեց Միհրական տոհմին: Միհրան նենգօրէն կոտորեց նախկին տոհմի բոլոր ներկայացուցիչներին, խնայելով միայն Զառմիհրին որը փեսայացել էր նորեկ տան: Ի՞նչ եղաւ Զառմիհրի սերունդը, յայտնի չէ: Պատմագրի որակումն այն իմաստն ունի թէ Սահլ չէր պատկանում Աղուանիքում տիրող Միհրական տոհմին: Իսկ վրական աւանդութիւնը Շաքի գաղթող հայ իշխաններին համարելով Ատրներսեհ Կոյրի, այսինքն Աշոտ Կոյրի, եղբօրորդիք, վկայում է նրանց Բագրատունի ծագումը: Սահլի հօր Սմբատ անունը որ զուտ Բագրատունի է, հաստատում է նրա ծագումը: Ոչ Աղուանքի եւ ոչ Սիւնեաց իշխանական տոհմերի մէջ չէ պատահում Սմբատ անունը նախ քան նրանց Բագրատունիների հետ խնամութիւն հաստատելը:

Առանց վարանելու կարելի է պնդել որ Սահլի հայր Սմբատ սերում էր «Սմբատայ որդիներից», սրանցից մէկի որդին էր հաւանօրէն եւ իր անունը պարտական իր պապին, Սմբատ Կիւրապաղատին կամ Սմբատ Վասպուրականի իշխանին: Բաբեկի ձերբակալումով Սահլը կարգուեց Հայոց, Վրաց եւ Աղուանից իշխան 838ին: Բուղայի խարդախութեան զոհուեց 855ին:

1 Կաղանկատուացու նորագիւտ հատուած, հրատ. ԽԱՉԻԿ վարդապետի, Արարատ, 1897, ապրիլ:

2 Թովմա Արծրունի, Գ. գլ. ժա, էջ 214, (Կ. Պոլիս, 1852): Այս տեղեկութիւնն այնքան վստահելի չէ երեւում: Կալանաւորների թւում Թովման յիշում է «Գրիգոր Սիւնեաց տէր», որ է Սուփան, իսկ ըստ Կաղանկ. (հր. Էմինի) Գ. գլ. ի, էջ 60, «Սուփան վախճանեցաւ ի Վայոց ձոր 852 թուին եւ ի միւս տարին եկն Բուղա ի Հայս»:

Սահլ արաբական անունն է: Նրա բուն հայ անունը մոռացուած է: Սահլ ղրկեց կալանաւորուած Բաբեկին Բաղդատ իր որդու Մուաւիայի միջոցով: Հիջրի 238 = 852 յունիս – 853 յունիս Մուաւիա յիշատակւում է որպէս պատրիկ, այսինքն իշխան, իր հօր նման, Հայոց, Վրաց եւ Աղուանից[1]:

Մեծարանց Ս. Յակոբի վանքի մի արձանագրութեան մէջ յիշւում է Յովհաննէս անունով մի իշխանի անուն. «Յի թուականութե<ա>ն Հայո<ց> ի ժամանակ Յովանէսի Աղվան<ից> իշխանի ես Սողոմ<ոն> Մեծարանց եպիսկ<ոպոս> կանգնեցի զս<ուրբ>"...[2]:

Հայոց 302 թ. համապատասխանում է 853-854 թ.: Այս ժամանակ Աղուանից իշխան էր Մուաւիա: Թւում է որ Յովհաննէս Մուաւիայի հայ անունն է, ուրեմն Սահլի որդին: Արդարեւ, Կաղանկատուացու վերեւ յիշուած նորագիւտ հատուածի մէջ, Ամորիայի արշաւանքը յիշատակելուց յետոյ Հայոց 287=838 թուին, կարդացւում է հետեւեալը. «Ի սոյն ամի տերանց տէրն Յովանէս որ Հայոց Վրաց եւ Աղուանից եղեւ տէր, խնդրեաց յարքունեացն կրկին անգամ զԲու(ղ)խար Խոյտա Փատգոս երիցս այսոցիկ աշխարհաց»:

Նոյն 287=838 տարին, տեսանք, որ Սահլի որդի Մուաւիան էր հրապարակի վրայ: Այստեղից եւս հետեւում է որ Յովհաննէս նոյն Մուաւիան է: Յովհաննէս 838 տերանց տէր էր, իսկ հետագայում տէր, այսինքն, պատրիկ կամ իշխան եղաւ երեք աշխարհների: Վահեվանի մի արձանագրութեան մէջ Շապուհ Բագրատունին, Աշոտ Ա Թագաւորի որդին եւ Սմբատ Թագաւորի եղբայրը իրեն անուանում է «Հայոց սպարապետ, տէրանց տէր, որդի Աշոտոյ, Թագաւորի ի ժամանակս Հայոց Թագաւորի մեծին Սմբատայ, հարազատ եղբաւր իմոյ»[3]:

Ինչպէս որ Շապուհ, իր եղբօր Թագաւորութեան ժամանակ, «տէրանց տէր» է, նոյն մտքով եւ Յովհաննէս «տէրանց տէր» է իր հօր Սահլի իշխանութեան ժամանակ: Արուճի մի արձանագրութեան մէջ, 869 թուից, գրուած է «յիշխանութեան Աշոտոյ եւ ի տէրութեան Սմբատայ Հայոց սպարապետի Բագրատունւոյ»[4]:

1 Բուղան հեռացաւ Հայաստանից, տանելով իր հետ գերուած իշխաններին, 241 հիջրի = 855 – 856: Եթէ գերիների մէջ էր նաեւ Սահլ, ի՞նչպէս մեկնել որ 852ին արդէն իր որդին պատրիկ էր, այսինքն իր տեղն էր բռնել:

2 Խաչիկ վարդապետն է ընդօրինակել և հրատարակել, Արարատ, 1897, ապրիլ:

3 Ստեփանոս Օրբելեան, գլ. լգ. Կ. Կոստան. «Վիմական Տարեգիր», էջ 6:

4 Կ. Կոստանեան, «Վիմական Տարեգիր», էջ 3, արտատպած Յով. եպ. Շահխաթունիի «Ստորագրութիւն»ից, 384:

Այսուեղ ակրութիւն նոյն իմաստն ունի ինչ որ ակրանց ակրութիւն:

Մխիթար Այրիվանեցին Հայոց 320=871 թուի տակ ունի մի արտաքոյ կարգի կարեւոր նկատողութիւն, այն է «Համամ որ եւ Յովհաննէս Բագրատունի»: Սրանով հաստատում է նախ մեր տեսութիւնը Սահլի Բագրատունի ծագման մասին: Սոսկ մի ենթադրութիւն դառնում է դրական փաստ: Ապա յայտնում է որ Մուսխա-Յովհաննէսը մի երրորդ անուն ևս ունէր, Համամ: Եռակի անուանակոչումը հատնական չենք համարում եւ կարծում ենք Համամ անունն իրաւունք է տալիս որբագրելու արաբ հեղինակների Մուսխա որպէս ազատագրում հայ Համամի: Արաբ գիրը դայթակղիչ է այս կարգի չփոթութիւնների համար: Աբուլ Կասիմ Մուհամմադ Հաուկալ ամիրապետի կողմից զրկուեց Բուլղարների մօտ դեսպանութեամբ 948 թուին: Հաուկալ անցաւ Հայաստանից, այցելեց Աղուանից երկիրը եւ, ինչպէս սովորութիւն ունէին արաբ ճանապարհորդները, գրի առաւ հետաքրքրական տեղեկութիւններ կովկասեան ժողովուրդների մասին: Այս հեղինակն ասում է որ Կուր գետի և Շիրուանի միջև մի երկիր կայ որ կոչւում է Շաքի եւ որի ժողովուրդը քրիստոնեայ է, թէեւ կան նաեւ մուսուլման տեւտրականներ եւ արհեստաւորներ: Իր այցելած պահին Շաքի երկրի իշխան էր Աղեր Բ. Սիմեոն Բ. Համային, ادر بن سمة بن هماين 1: Դժուար չէ նկատել որ իշխանի անունը սխալ է կարդացուած և որ պէտք է կարդալ ادرنسه بن همام , այսինքն Ատրներսեհ որդի Համամայ: Ինչպէս որ Համամ դարձել է այստեղ Համային, անհնար չէ որ Տարարի[2] մօտ նոյն անունը աղճատուէր եւ դառնար Մուսխա:

Թէ արդարեւ Համամ Ատրներսեհ անունով որդի ունէր, այդ դիտենք Անանիա կաթողիկոսի վկայութիւնից: Տասներորդ դարու կէսին, երբ Հաւկալից քիչ յետոյ, Անանիա Հայրապետը դնաց Աղուանից աշխարհը եկեղեցական վարչական դժուարութիւնները վերացնելու նպատակով: Այս առթիւ յիշում է տեղական իշխանների անունները իր Յաղագս ապստամբութեան տան Աղուանից գրութեան մէջ: «Ունէր դաժան թագաւորութեան, ասում է ի միջի այլոց, յայնժամ Իշխանակ, որդի տեառն Ատրներսեհի, Թոռն Երանել<ւ>ոյն Համամայ, բարեպաշտ թագաւորին Աղուանից եւ էր դարձեալ յաղանդն Քաղկեդոնի եւ մոռացեալ զհարցն դաւանութիւն»[3]: Այսուեղից իմացւում է որ Համամի որդին էր Ատրներսեհ եւ սրա որդին՝ Իշխանակ: Այսպիսով դիտենք Սահլ Սմբատեանի երեք յաջորդական սերունդը:

1 M. C. D'Ohsson, Des peuples du Caucase, 1828, p. 18-19.
2 Tabari, III, 1232.
3 Հրատ. Գ. Տէր-Մկրտչեան. «Արարատ», 1897, մարտ:

Համամ-Յովհաննէսը յարգելի դէմք է հայ հեղինակների մօտ: Նկատենք նախ որ Մխիթար Այրիվանեցու յի = 320 թիւը վրիպակ է իր թէ գրչի կողմից: Եթէ կարդանք յբ=302 կը ստանանք Մեծարանց Ս. Յակոբի վանքի արձանագրութեան թիւը: Յովհաննէս կաթողիկոսը պատկառանքով է խօսում Համամի մասին: Երբ Գէորգ կաթողիկոսը Սմբատ թագաւորի հրահանգով դնաց Ատրպատականի Էմիր Ափշինի մօտ հաշտութեան առաջարկով, Ափշին ձերբակալեց կաթողիկոսին եւ ազատելու համար փրկանք էր պահանջում: Յովհաննէս կաթողիկոսը որ այն ժամանակ դրան եպիսկոպոս էր հաւաքեց պահանջած գանձը եւ ուղարկեց «ստ մեծ իշխան Արեւելից Համամ»: Սա իր կողմից շրացրեց փրկագինը եւ ազատեց մուսուլման իշխանի կապանքներից թշուառ հայրապետին[1]:

Կաղանկատուացու վկայութեամբ, Ափշինի դրսէր եւ կաթողիկոսի կալանաւորումը տեղի ունեցաւ Հայոց 312 = Քրիստոսի 893 թուին և ազատողը «բարեպաշտն Համամ որ եւ Աղուանից եղեւ թագաւոր»: Այս միջոցին Համամ թուում է թէ դեռ թագաւոր չէր, թէեւ հետեւեալ խօսքերն կարծես հակառակն է ցոյց տալիս. «զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից Համամ նորոգէր, որպէս Աչոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն: Այսք ի միում ժամանակի գործեցան»[2]: Զնայելով այս վերջին խօսքերին, կարծում ենք որ Համամ տակաւին թագ չէր կապել 893 թուին: Յովհաննէս կաթողիկոս «մեծ իշխան» է անուանում նրան Գէորգ կաթողիկոսի դէպքի առթիւ խօսելիս, մինչդեռ Ատրներսեհին կոչում է թագաւոր: Ասողիկի մօտ, Համամ թագաւոր է երբ ազատեց Գէորգ կաթողիկոսին, թերեւս յետին թուով է թագաւոր անուանուած[3]:

Աղուանից պատմագրի մի խաչ նկատողութիւնն արժանի է ուշադրութեան: Համամ յանցանք էր գործել, «վասն սնոտի այս կենացս զպարտ արեան եղբօրն ժողովեալ յանձին իւրում»:

Ասել է թէ Համամ սպանել էր իր եղբօրը, արդեօ՞ք իշխանութիւնը գրաւելու համար թէ որեւէ ուրիշ պատճառով, յայտնի չէ:

1 Յովհաննէս Կաթողիկոս. էջ 94 (հրատ. Մ. Էմինի):
2 Մովսէս Կաղանկատ. Գ. գլ. իա:
3 Ասողիկ. Գ. գ:

Համամին ժամանակակից է Համամ Արեւելցի անունով ծանօթ հեղինակը որին Ասողիկ վերագրում է մի շարք երկեր[1]: Շատ հաւանական է որ այս հեղինակը նոյն Համամ Թագաւորն է, թէեւ մատենագիրների լռութիւնը այս մասին երաշխիք չէ այս ենթադրութեան:

Համամ ուշագրաւ դէմք է եւ իր գործունէութեան ոգով շատ նման իր ժամանակակից Աշոտ Թագաւորին: Աշոտի հայրը Սմբատ դերի ընկաւ Բուղայի ձեռքը, բայց ինքն Աշոտ մնաց իր ղիրքում եւ մտացի քաղաքականութեան հետեւելով հասաւ արքայական Թագի: Համամի հայրը Սահլ Սմբատեան եւս չկարողացաւ վրիպել Բուղայի կապանքներից, չնայելով այն խոշոր ծառայութեան որ ինքնաբերաբար բերել էր արաբ իշխանութեան, ձերբակալելով այնպիսի մի վտանգաւոր թշնամու որպիսին էր ահաւոր Բաբեկը: Սահլի որդին Համամ, Աշոտի նման, գերծ մնաց աղետից եւ խոհուն քայլերով յառաջացաւ մինչեւ արքայական դահ: Մեծ արժանիք էր որ կարողացաւ լեզու գտնել Ատրպատականի էմիր Ափշինի հետ, երբ սա կռիւ էր մղում Սմբատ Թագաւորի դէմ:

Համամի որդու՝ Ատրներսեհի եւ թոռան՝ Իշխանակի մասին շատ բան չգիտենք: Յովհաննէս կաթողիկոս անձամբ ճանաչում էր Ատրներսեհին եւ Յուսուփի ու Սմբատի կռիւների փոթորկալից շրջանին, երբ կաթողիկոսը ստիպուած էր աստանդական կեանք վարել, այս կամ այն իշխանի մօտ ապաւինել, վայելեց նաեւ Ատրներսեհի հիւրընկալութիւնը: Կաթողիկոսը գնաց նախ Աղուանից մեծ իշխան Սահակի մօտ, եւ ապա «առ Թագաւորն նոցունց Ատրներսեհ, որ ըստ արեւելից հիւսիսոյ Կովկասու, զի եւ նոքա ի ժողովրդենէն մերմէ եւ խաչն արօտի մերոյ էին»[2]:

Իրն Հաւկալի այցելութեան 948-949 թուերին Ատրներսեհ տակաւին կենդանի էր: Իսկ երբ Անանիա կաթողիկոս երկրորդ անգամ գնաց Աղուանք 958 թուին, Ատրներսեհին արդէն յաջորդել էր իր որդի Իշխանակը, որ «էր դարձեալ յաղանդն Քաղկեդոնի եւ մոռացեալ զհարցն դաւանութիւն»: Այս անձը ծանօթ է նաեւ Վրաց պատմութիւնից ուր կոչւում է Իշխանիկ: Սա Հերեթի իշխանն էր եւ յայտնի դարձաւ նրանով որ Հերեթը որ մինչեւ այն ժամանակ աղանդաւոր էր ընդունեց ուղղափառութիւն շնորհիւ Իշխանիկի մօր՝ Դինարի[1]: Վերջինս Գուրգէնի քոյրն էր, իսկ Գուրգէն Աջարայի և Կուելի իշխան իշխանաց էր (896-941), ժամանակակից Աղուանից Ատրներսեհի: Դինար եւ Գուրգէն, քոյր եւ եղբայր, Աշոտ Կիւրապաղատի թոռան թոռներն էին: Դինար, վրացի իշխանուհի, հարս գալով Համամ Թագաւորի տունը, պատուաստեց վրական դաւանանքը, այսինքն քաղկեդոնականութիւնը, նախ իր որդուն Իշխանիկին և ապա նրա միջոցով ամբողջ երկրին, Հերեթին որ է Շաքի: Յովհաննէս կաթողիկոս համարում էր Ատրներսեհի ժողովուրդը «մեր արօտի խաչն», քանի որ այն ժամանակ դեռ հայ դաւանութիւն ունէր, եւ յետոյ, Իշխանիկի մօր ջանքով, խորթացաւ, միանալով Վրաց: Կրօնափոխութիւնը համանիշ էր ազգուրացութեան:

Վրական տեղեկութեամբ, Կախեթի տէրը Կիւրիկէ († 918) որ քորեպիսկոպոս էր կոչւում, եւ Ափխազի Թագաւոր Կոստանդին († 920) միասին գնացին Հերեթի Վեջին քաղաքի դէմ եւ պաշարեցին: Քաղաքն ընկնելու մօտ էր, երբ Ատրներսեհ պատրիկը բանակցութեան մէջ մտաւ եւ հաշտութիւն առաջարկեց, համաձայնելով զիջանել պաշարողներին քանի մի վայրեր եւ նրանց թւում Գաւազնի քաղաքը[2]:

Հերեթի իշխանը, պատրիկ Ատրներսեհը, ոչ այլ ոք է քան մեզ ծանօթ Ատրներսեհ, Համամի որդին եւ յաջորդը եւ Իշխանիկի հայրը ու նախորդը: Անցքը տեղի ունեցաւ 915 թուին, երբ Հերեթի - Շաքիի իշխանն Ատրներսեհն էր: Այս տեղեկութիւնը խիստ յարգի է ուրիշ նկատումով: Շաքի բռնում է այժմեան Նուխի քաղաքի շրջանը, Այրի գետակի աւազանը: Սա ստորին Ալազանի գլխաւոր վտակն է: Գաւազնի քաղաքը գտնւում է Ալազանի վերին հովտում, Թելաւ քաղաքի հանդէպ, գետի արեւելեան ափի վրայ: Հետեւապէս Շաքիի Բագրատունիների իշխանութիւնը ընդգրկում է Ալազանի ձախակողմեան եզերքը գրեթէ ամբողջապէս, այսինքն Ալազանի և Կովկասեան շղթայի մէջ սեղմուած երկայնաձիգ հովիտը:

Իշխանակի հետ Անանիա յիշում է 958ի ժողովի անդամներից նաեւ մի «Սենեքերիմ իշխանաց իշխան», որ տարբեր անձ է համանուն իշխանից որ Խաչենի Գրիգորի որդին էր: Իշխանակը Թագաւոր էր, ուստի իշխանաց իշխան Սենեքերիմ կարող էր լինել նրա որդին եւ գահաժառանգը: Ինչպէս վերեւ յիշեցինք Թագաժառանգները կոչւում էին իշխան իշխանաց կամ տէր տերանց: Կարծում ենք որ այս տոհմին են պատկանում նաեւ Համամ եւ իր որդի Գագիկ որ յիշում է

1 Ասողիկ, Գ. բ, հաշւում է՝ Վերլուծութիւն Առակաց, Մեկնութիւն Յովբայ՝ Ով է դա հատուածի, Սաղմոսագլուխների Օրհնութիւնք, Ամբիծք եւ Վերլուծութիւն քերականի։ Վերջինս հրատարակուած է մեր Արուեստ Դիոնիսեայ և հայ մեկնութիւնք ռուսերէն աշխատութեան մէջ։

2 Յովհաննէս Կաթողիկոս, էջ 119:

1 Brosset, I, 279:

2 Brosset, I, 277-278.

Վարդան մի բաւականին չփոթ պատմութեան մէջ: Մամանուն մի պարսիկ կնոջ երեք որդիները յաջողում են գրաւել տեղական մուսուլման իշխաններից Գանձակ, Պարտաւ եւ Շամքոր քաղաքները: Կրտսեր եղբայրը Փաւլուն ձեռնամուխ է լինում մօտիկ հայ իշխանների հողերին, ձերբակալում է Խաչենի իշխանին եւ խլում ինչ ինչ վայրեր, որի մասին խօսք կը լինի ստորեւ: Նաեւ կանչում է իր մօտ Համամի որդուն Գագիկին, «զԳագիկ որդի Համամայ զտէրն Տանձեաց», սպանում եւ տիրանում նրա երկրին:

Այս Փաւլունը Շեղաղեան համանուն իշխանն է (985 - 1030): Համամ և Գագիկ ապրում էին ուրեմն 985-1030: Այս պարագան նպաստաւոր է համարելու Համամին որդի կամ յաջորդ Սենեքերիմի, եթէ միայն Համամ իրօք պատկանում է նոյն տոհմին: Այս վերապահութիւնը ծագում է այն հանգամանքից որ Համամ եւ Գագիկ յիշւում են որպէս տէր Տանձեաց, մինչդեռ իրենց ենթադրեալ տոհմը տիրում էր Շաքէ: Տարաբախտաբար Տանձիքի տեղը յայտնի չէ[1]: Մինչեւ անգամ եթէ Շաքէի շրջանում չգտնուի, կարելի է որ Շաքէի տոհմը հետզհետէ տկարանալով, պահել է իր հին կալուածներից միայն Տանձիքի շրջակայքը ունենալ մօտ հայ սահմաններին քան Շաքէ: Արցախի մի արձանագրութիւնից 997 թուից յայտնի է Գագիկ իշխանաց իշխան: Թուականը ներում է նոյնացնել նրան Համամի որդու հետ, երբ նա տակաւին իշխանաց իշխան էր, բայց դժուար է պնդել: Եթէ մեր այս թէական վարկածները ընդունելի են, Շաքէի Սահլի վերջին շառաւիղները կը լինեն՝ Սենեքերիմ, Համամ և Գագիկ, և շարունակուած մինչեւ 1030 թուականները:

Թւում է թէ Սահլի սերունդը թեւակոխել է մինչեւ Խաչեն եւ Սոթք եւ այստեղ հիմ դրել տոհմական մի նոր գծի որ կարելի է անուանել Արցախի գիծ:

ԱՐՑԱԽԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

Հնում Արցախ էր կոչւում Խաչեն և Տրտու (Թարթառ) գետերի լեռնակողմը, որի էական մասը կազմում է այսօր լեռնային ինքնավար Ղարաբաղը: Մովսէս Կաղանկատուացին եւ հետագայ պատմագիրները Աղուանիք ասելով հասկանում էին առաւելապէս Արցախ եւ Ուտիք: Նոյն ըմբռնումն ունի նաեւ Խորենացին: Անանունի մօտ չկան Սիսակ եւ Առան եպոնիմները: Պարսիկները կոչում էին Սիւնիք Սիսական, եւ Աղուանք՝ Առան: Այստեղից մեր պատմահայրը ստեղծել է Սիսակ եւ Առան որպէս նախահայրեր երկու երկրների: Առան «Ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն Հնարակերտ»[1]: Վերջինը գտնում էր մօտաւորապէս արդի Աղտաեւի (Աղստաֆայի) շուրջը: Ասել է թէ, ըստ Խորենացու, Աղուանիք կամ Առան բռնում էր դաշտային եւ լեռնային Ղարաբաղ եւ Ուտիք որ ձգւում էր Պարտաւից (Բարդա) մինչեւ Աղտաեւի շրջանը:

Առանը սերում էր Սիսակից, ուստի եւ Առանի իշխանական տունը Կաղանկատուացին կոչում է Հայկազեան[2]: Այս տունը իշխեց հնուց մինչեւ վեցերորդ դարի վերջերը, երբ Միհրան Պարսիկը գրաւեց երկիրը եւ հիմ դրաւ Միհրական հարստութեան: Վերջին շառաւիղը Միհրական տան, Վարազ-Տրդատ սպանուեց Փիլիպպոս Սիւնեաց իշխանի որդու Ներսեհի կողմից 821 թուին, ուղիղ այն տարին երբ Սահլ Սմբատեան հալածեց Պարտաւի հրոսակներին Մեծերանց գաւառի Շիկաքար գիւղից: Ներսեհ չխնայեց նաեւ Վարազ-Տրդատի մանուկ որդուն Ստեփանին: Վարազ-Տրդատի կինը կարողացաւ փրկել իր դուստր Սպրամին, ապաւինելով Խաչենի բերդը, ուր ամուսնացրեց նրան «Ատրներսեհի Սահլի որդւոյ որ էր ի Տոհակայ եւ տէր Սիւնեաց, եւ բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ եւ որդին իւր Ատրներսեհ հանդիպեցաւ կնոջ զդստեր»[3]:

Ո՞վ է այս Սահլը: Մեզ թւում է որ նոյն քաջածանօթ Սահլ Սմբատեան, Շաքեոյ տէր: Արդարեւ, ուրիշ համանուն իշխան յայտնի չէր ոչ յառաջ եւ ոչ յետոյ: Շաքեոյ տէրը միակն է որ կրում է այս անունը: Ատրներսեհ Սահլեան ժամանակակից էր Սահլ Սմբատեանին: Այս պարագան եւս նպաստաւոր է Ատրներսեհի հօր Սահլի եւ Սահլ Սմբատեանի նոյնութեան:

Տոհակ աշխարհագրական անունն անծանօթ է այլուստ: Կարելի էր կարծել որ սխալ ընթերցում է փոխանակ «Սահակայ», այսինքն Սահլի հայ անունն է: Բայց աւելի հաւանական է որ Տոհակ իրօք տեղի անուն է: Այնտեղից Սահլ եկել եւ բռնի գրաւել էր «Գեղամայ գաւառը»: Խօսքը Գեղարքունեաց գաւառի մասին չէ: Այս գաւառի ժամանակակից իշխանը Սիւնեաց Վասակն էր, որ մեռաւ 821 թուին, եւ որին յա-

1 Մ. Կաղանկատուացին. Բ. ծ. յիշում է Տանձիք, որտեղից էր Յովսէփ անապատական: Կարծես թէ այս Տանձիքը Արցախի շրջանումն էր: Սոյն անունով գիւղ կարող է նաեւ այլ տեղ լինել:

1 Խորենացի. Բ. ը:
2 Մ. Կաղանկատ. Բ, ժէ, «զնախնական ազգն Հայկազանց»:
3 Մովսէս Կաղանկատ. Գ. իբ:

ջորդեց իր որդի Սահակը († 831)։ Վայոց Ձորում եւ բուն Սիւնիքում իշխում է նոյն միջոցին Վասակի միւս որդին Փիլիպպոսը։ Ապա ուրեմն Սահլ չէր կարող տէր համարուել ոչ Գեղարքունիքի եւ ո՛չ Սիւնիքի։ Նրա գրաւած «Գեղամայ գաւառը» նոյնանիշ է Սոթքի, Սեւանայ լճի նիստի աջ անկիւնը[1]։ Սոթք, աւելի ճիշտ Սոդք, անունը պահուել է ցայժմ. այսպէս է կոչւում Թարթառի ակունքները Սեւանայ լճի աւազանից զատող լեռնադաշտակը։

Արդարեւ, Սոթքումն էր որ Ատրներսեհ, իր ամուսնութիւնից յետոյ, չինեց Հանդու բերդը։ Այնտեղ էր եւ վայկունիք ուր հաստատեց իր ապարանքը։ Բուղայի վայրագութեան ժամանակ, Ատրներսեհ եւս տուժեց եւ տարուեց Սամառա միւս գերուած իշխանների հետ։ Սպրամ չվհատեց, տոկունութեամբ վարեց իշխանութիւնը եւ չինեց Նորավանք նոյն Սոթից գաւառում։

Ատրներսեհ վերադարձաւ գերութիւնից 858 թուին եւ շուտով մեռաւ։ Երկու որդի թողեց, Գրիգոր եւ Աբուսեթ։ Գրիգոր չինեց Հաւախաղացի բերդը եւ «յայն կողմն ճգէ զձեռն իւր իշխանութեանն»։ Հաւախաղաց բերդը, հաւանօրէն, նոյնն է ինչոր հետագայում եւ ցայժմ կոչւում է Հաւապտուկ, Մեծիրանեց գաւառում, որ Խաչենի մի մասն է[2]։

Գրիգոր երկու որդի ունեցաւ։ Աւագ որդին Աբուալի սպանուեց իր ազգակից Սմբատից 898 թուին, իսկ կրտսերը՝ Սահակ Սեւադայ, «այր քաջ եւ յաջող», նուաճեց Գարդմանայ եւ Քուստի-Փառնայ գաւառները եւ ընկճեց Ձորոյ գետի «աւազակապետներին»։ Կաղանկատուացու ասելով Սահակ բախում է ունեցել Սմբատ թագաւորի հետ։ Իսկ Յովհաննէս կաթողիկոսից գիտենք որ Սմբատի որդին Աշոտ Երկաթ ամուսնացաւ Սահակի դստեր հետ և սկզբում համերաշխ էին Սահակ և Աշոտ, բայց յետոյ գժտուեցին գլխաւորապէս Ուտի և Ձորափոր գաւառների առթիւ։ Աշոտ բռնեց Սահակին և իր որդի Գրիգորին և երկուսի աչքերը խարանել տուեց։ Յովհաննէս կաթողիկոս հիւր եղաւ Սահակին 910 թուին, Կաղանկատուացին գովում է այս իշխանին որպէս հովանաւոր «գրագիտութեան»։

Սահակի որդիներն են Գրիգոր եւ Դաւիթ։ Գրիգոր ունեցաւ երկու որդի, Սեւադայ Իշխան եւ Ատրներսեհ։ Սեւադայ Իշխանը՝ չորս որդի, Յովհաննէս, Գրիգոր, Ատրներսեհ եւ Փիլիպպէ։ Յովհաննէս որ կոչւում էր նաեւ Սենեքերիմ արքայական թագ կապեց Պարսից թագաւորի հաճութեամբ որ տուեց նրան իր հօր թագն ու երիվարը։ Յունաց Մագիստրոս Դաւիթ ուղարկեց թագ եւ ծիրանի։

Արցախի Բագրատունի գիծը կը ներկայանայ այսպէս.

1 Սահլ
|
2 Ատրներսեհ, կինը՝ Սպրամ
|
3 Գրիգոր, Աբուսեթ
|
4 Սահակ–Սեւադայ, Աբուալի
|
5 Գրիգոր, Դաւիթ
|
6 Սեւադայ–Իշխան, Ատրներսեհ
|
7 Յովհաննէս–Սենեքերիմ, Գրիգոր, Ատրներսեհ, Փիլիպպէ։

Անանիա կաթողիկոսը, ինչպէս առիթ ունեցանք յիշելու, 949 թուին այցելեց Խաչեն։ Երկրի իշխանն այդ միջոցին Գրիգորն էր, որն ընդունեց կաթողիկոսին և խնդրեց որ նեղողամտաբար թողնէ Գագիկ եպիսկոպոսին իր աթոռի վրայ։ 958 թուին կաթողիկոսը նորից անցաւ այն կողմերը, մտաւ նախ Բաղք, կարգաւորեց եկեղեցական գործերը եւ մտադրութիւն ունէր գնալ Աղուանք, բայց լուր ստացաւ Սենեքերիմ իշխանից թէ Իսմայէլացիք մտել են իր աշխարհը եւ որ հայրապետի ճանապարհորդութիւնը վտանգաւոր է։ Այս իշխանը նոյն է ինչոր յետոյ կաթողիկոսը կոչում է «Սենեքերիմ որդի Գրիգորի Խաչեան իշխանի»։

Սենեքերիմ, անտարակոյս, Յովհաննէս - Սենեքերիմն է։ Սակայն վերջինս Սեւադայ իշխանի որդին էր, մինչդեռ Անանիայի յիշած Սենեքերիմը Գրիգորի որդին է։ Արդեօ՞ք Գրիգոր Սեւադա-Իշխանի բուն անունը չէ։ Ուրիշ հնար չկայ հաշտեցնելու երկու տարակարծ վկայութիւնները[1]։

1 Համեմատել Օրբելեան, գլ. ծա. «էր գիւղ մի ի Գեղամ գաւառի ի Սոդից սահմանին»։

2 Մով. Կաղանկատ. Գ. իբ Հաւախաղաց կամ Հաւաքախաղաց, Հանդաբերդի, Խաչենաբերդի և Հաթերքի հետ յիշատակւում է 1182 թ. արձանագրութեան մէջ որպէս կալուած Սակռեցի Հասան Վախթանգեան իշխանի։ 1289 թուին Հասանի որդի Գրիգոր մեծ իշխան է Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողգահո եւ Ծար գիւղի։ Աւելի ուշ, 1430 թուին, Շանչի որդի Սայտի տէր էր «Փոքր–Սիւնեաց Ականայ Հաթերքոյ, Հանդաբերդոյ եւ ծովակին Գեղամայ մինչեւ Շաղվաքայ»։ Վակունիս յիշւում է 1241 թուի արձանագրութեան մէջ։ Կոստանեան, «Վիմական Տարեգիրք», էջ 34, 130, 172 եւ 84։

1 Օրբելեան, խզ, բերում է Տաթեւի սահմանների մի վկայագիր Հայոց 355 = 906 թուից, ուր վկաների թւում յիշւում են ի մէջի այլոց «մեք Գրիգոր եւ Եսայի եւ Ատրներսեհ Աղուանից իշխանք», այլ եւ «մեք Սահակ Գարդմանայ տէր եւ Աշոտ եւ Վասակ Գնթունի»։ Վերջին երկու իշխանները յայտնի են Յովհ. կաթողիկոսից, էջ 160 եւ 171։ Գարդմանայ տէր Սահակը, անշուշտ, Սահակ–Սեւադան է։ Հակառակ կաղանկատուացու, Միհրական տոհմը չպատեց բոլորովին Վարազ–Տրդատի սպանութեամբ 821 թուին։ Բուղայի գերիների մէջ յիշւում է Ներսեհ իշխան Գարիթայանից, որ պէտք է կարդալ Գարդմանից։ Սահակ–Սեւադան է որ «տիրեաց Գարդմանայ եւ Քուստի–Փառնայ»։ Առաջին երեք իշխաններից, Եսային՝ նշանաւոր Աբու Մուսան է, Ատրներսեհը՝ Համամի որդին, իսկ Գրիգորը հաւանօրէն Սահակ–Սեւադայի հայրն է։

Յովհաննէս–Սենեքերիմ եւ իր եղբայր Գրիգոր ծանօթ են Ասողիկին: Սրանք են Փառիսոսի թագաւորներ Սենեքերիմ և Գրիգոր, որոնց քոյրը Կարսի թագաւոր Մուշեղի (953-984) կինն էր, Աբասի մայրը[1]: Գագիկ թագաւորը որ գահ բարձրացաւ 989 թուին գրաւեց չատ բերդեր եւ գաւառներ «ի սահմանացն Վայոց Ձորոյ եւ Խաչենոյ եւ Փառիսոսոյ»[2]: Իսկ Հայոց ՆԾԲ = 1003 թուին, Սենեքերիմ եւ Գրիգոր իշխանների մահուամբ, Գագիկ և Գանձակի Փառլուն ամիրան բաժանեցին նրանց աշխարհը[3]:

Սենեքերիմ եւ Գրիգոր միաժամանակ չմեռան: Գրիգոր չարունակեց իշխել իր եղբօր մահից յետոյ եւ իշխեց իր որդու հետ, որի անունն է Փիլիպպէ: Վարդան պատմում է Փառլունի ծագումն եւ յառաջադիմութիւնը «Փառիսոսի Գրիգոր փառաւոր իշխանի» ժամանակ: Սրա մահից յետոյ, իր որդին Փիլիպպէ հիւր գնաց Փառլունի մօտ, բայց վերջինս նրան կալանաւորեց եւ «ասնու ի նմանէ զՇաչուապ եւ զՇօթս»[4]: Շաչուապ կարդալու է Շաղուապ, եւ Շօթք, թերեւս, նոյն Սօթքն է:

Անանիա կաթողիկոս անուանում է այս Սենեքերիմին իշխան եւ ո՛չ թագաւոր ինչպէս Ասողիկ: Պէտք է կարծել որ 958 թուին Սենեքերիմ տակաւին թագաւոր չէր հռչակուած: Տարաբախտաբար, յայտնի չէ ստուգօրէն թէ ո՞վ էր «թագաւորն Պարսից» եւ ո՞վ «Ցունաց Մագիստրոս Դաւիթ» որ թագ ղրկեցին Ապուանից իշխանին: «Պարսից» բառը, հարկաւ, Տաճկաց չէ նշանակում, այլ պէտք է հասկանալ բուն իմաստով: Ցայտնի է որ Բոյեան (կամ Բոյեկեան) իշխանական տոհմը որ տիրում էր Պարսկաստանում ազդեցիկ դիրք

1 Ասողիկ, Գ. ժէ:
2 Անդ. Գ. լ.
3 Անդ, խբ:
4 Վարդան. ծզ. Փառլունի յաջողութիւնները պատմում է 1048 թուից յետոյ: ինչ որ չփոթութեան տեղիք է տալիս: Ցիրականին ծզ. գլուխը չարունակութիւն է ծբ–ի: Փառլուն զօրանալով, բան պատմագրի, «զոր դնէ ընդ Գագկայ թագաւորին Զարեհայոյ եւ ընդ Կիւրիկէի թագաւորին Ապուանից եւ ընդ Բագարատայ թագաւորին Վրաց»: Ո՞վքեր են այս անձերը: Վրաց տեղեկութեամբ, (Բրոսէ, Ա. 299), Փառլուն այժ առնելով սկսեց ապատակել Հերեթ և Կախեթ: Բագարատ Դ. թագաւորը (980–1014) բարկացաւ եւ ատաջարկեց Գագիկ Շահնշահին (989–1021) գնալ միասին ասնձելու յանդուգն իշխանին: Գնացին և պաշարեցին Շամքոր, և Փառլուն ստիպուած թնդրեց խաղաղութիւն: Այստեղից հետևում է որ Վարդանի յիշած Բագարատ և Գագիկ Զորաղեցոյին Բագրատ Դ և Գագիկ Շահնշահն է: Կիւրիկէն հաւանօրէն Կախեթի իշխան մեծ Կիւրիկէն է (1010–1039): Անցքը պէտք է տեղի ունեցած լինի ուրեմն 1010–1014 թուին եւ ոչ մի կերպ 1048ից յետոյ, երբ Փառլուն մեռած էր չատուց: Բագարատ Դ (1027–1072) եւս ընդհարում ունեցաւ Փառլունի հետ Մեծ Կիւրիկէի մահից անմիջապէս յետոյ եւ դաշնակցութեամբ Դաւիթ Անհոգնի որդու Գագիկի հետ, Բրոսէ, Ա. 317: Սակայն, այսպէս յիշուած Փառլուն չի կարող վերոյիշեալ անձը լինել, որ մեռել էր 1030, եւ որովհետեւ Կախեթի Մեծ Կիւրիկէ եւս մեռել էր 1039, ուրեմն անցքը վերաբերում է 1039–1040 թուերին: Վարդան, հաւանօրէն, ձուլած է Փառլունի եւ նրա յաջորդի օրով կատարուած միանման պատերազմական գործողութիւնները:

ստեղծեց Բաղդադի արքունիքում Ահմետ Բոյեան իշխանի օրով այն աստիճան որ իր որդին Աբուսանասուր Բախտիար խալիֆ հռչակուեց (967-977): Սրան յաջորդեց իր հօրեղբօր որդին իբն Խոսրով, այն անձը որի մասին գովասանքով է խօսում Ասողիկ եւ յայտնում որ «թագ եդեալ թագաւոր թագաւորաց կոչեցաւ», այսինքն ամիր-ալ-ումարա կամ խալիֆ (977–982): Այս երկուսից մէկը պէտք է լինի ակնարկած «Պարսից թագաւորը»: Դաւիթ Մագիստրոսի անձնաւորութիւնը եւս անորոշ է: Հարկաւ, Ցունաց մագիստրոս չի նշանակում յոյն մագիստրոս, այլ Ցունաց կողմից մագիստրոսութեան տիտղոս ստացած անձ: Դաւիթը վրական Բագրատունիներից է: Մեր նիւթին նայող ժամանակամիջոցում միայն մի Դաւիթ կայ մագիստրոսական տիտղոսով, Ատներսեհ թագաւորի († 923) թոռնորդին: Միւս թոռնորդին է հռչակաւոր Դաւիթ Կիւրապաղատ:

Ատներսեհ († 923)

- Բագարատ († 945)
  - Ատներսեհ († 961)
    - Դաւիթ Մագիստրոս
- Սմբատ († 958)
  - Ատներսեհ († 983)
    - Դաւիթ Կիւրապաղատ † 1000 (ո՛չ 1001)

Դժբախտաբար, Դաւիթ Մագիստրոսի մասին տեղեկութիւնները ներդաշնակ չեն: Մի տեղեկութեամբ, Դաւիթ Մագիստրոս երիսթաւ երիսթաւաց (այսինքն իշխան իշխանաց) էր եւ մահացաւ 966 (կամ 969) թուին: Միւս տեղեկութեամբ, «Դաւիթ կիւրապաղատ էր եւ դարձաւ մեծ», ուրեմն նոյն անձն ինչ որ Դաւիթ Կիւրապաղատ († 1000)[1]: Այսպիսով խնդիր է ծագում թէ նշանաւոր կիւրապաղատն Ատներսեհ թագաւորի ո՞ր որդու թոռն էր, Բագարատի թէ Սմբատի: Աւելի հիմ կայ Բագարատի թոռն համարելու քան Սմբատի: Արդարեւ Դաւիթ Կիւրապաղատ հրապարակի վրայ էր արդէն 978 թուին, երբ ապստամբ Վարդ Սկլերոսը օգնութեան դիմեց նրան: Եթէ այն Ատներսեհի որդին լինէր որը մեռաւ 983 թուին, Դաւիթ չէր կարող ինքնուրոյն դիրք ունենալ 978ին, իր հօր կենդանութեան ժամանակ: Մինչդեռ միւս Ատներսեհը մեռաւ 961 թուին և երկու որդի ունէր, Բագարատ որ մեռաւ 966 եւ Դաւիթ որ յաջորդեց եղբօր 966

1 **Brosset**, I. 280 և 285: Տարբեր աղբիւրներ չեն, այլ միեւնոյն հեղինակի գործի տարբեր ձեռագիրներ:

(կամ 969 համաձայն կենսագրական տարբեր ցուցումի), սկզբում որպէս մագիստրոս, հետագայում նաեւ կիւրապաղատ: Դաւիթ Կիւրապաղատ մեծ հռչակ ունի հայ հեղինակների մօտ եւ շատ հաւանական է որ այդ բարեացակամ իշխանն էր որ թագ դրկեց Սենեքերիմին:

Բախտիար դահ բարձրացաւ 967 թուին, ուրեմն գրեթէ միաժամանակ Դաւթի հետ: Այս թուից յետոյ է որ Սենեքերիմ թագ կապեց, բայց ե՞րբ, մնում է անորոշ: Հետեւապէս Անանիա կաթողիկոսի կողմից զանցառութիւն չէր որ նրան թագաւոր չէ անուանում 958 թուին, ինչպէս անուանում է Իշխանիկին: Սենեքերիմ թագաւոր հռչակուեց, ինչպէս թւում է, միևնոյն ժամանակ և միևնոյն պայմաններում, ինչ որ իր փեսայ Սմբատ Սիւնեաց իշխանը: Սա ամուսնացած էր Շահանդուխտի հետ, որ էր դուստր Սեւադայի, ուրեմն քոյր Սենեքերիմի: Սմբատ տակաւին թագաւոր չէր 963 թուին, եւ մեռաւ թագաւոր 998 թուին: Խաչենի տոհմը չսպառեց Սենեքերիմի եղբօր Գրիգորի որդու՝ Փիլիպպէի սպանութեամբ: Ժամանակագրական նկատումները ներում են Փիլիպպէի որդին համարել այն Սեւադան որի դուստրը, որ կոչւում էր նոյնպէս Շահանդուխտ, հարս գնաց Սիւնեաց տուն: Սմբատ թագաւորին յաջորդեց իր որդի Վասակը որ 1026ին դեռ կենդանի էր: Սա որդի չունէր, այլ մի դուստր, հռչակաւոր Կատրամիտէ, որ կին եղաւ Գագիկ Շահնշահի: Վասակից յետոյ իշխանութիւնն անցաւ իր քրոջ որդիներին, Սմբատին եւ Գրիգորին: Սմբատ թագաւոր է յիշւում 1043 թուին: Սրանից յետոյ էր իր եղբայր Գրիգորը: Ահա այս անձն էր որ կին առաւ Շահանդուխտին: Գրիգոր եւ Շահանդուխտ անզաւակ էին, ուստի յաջորդ ընտրեցին Շահանդուխտի եղբօր Սենեքերիմին, Սեւադայի որդուն: Սենեքերիմ եւ իր երկու որդիները, Գրիգոր եւ Սմբատ, իշխեցին Սիւնիք: Գրիգորի դուստրը կատա ամուսնացաւ Խաչենցի Հասանի հետ, որպէսզի յաջորդէ Գրիգորին, բայց Հասան իր կնոջ հետ հեռացաւ իր հայրենի Խաչեն 1170 թուին[1]:

Մոնգոլները պաշարեցին 260 թուին Մարտիրոսաց քաղաքը, այժմեան Մուֆարդին: Նրանց բանակումն էր «Սեւադա Խաչենցի, որդի մեծ իշխանին Գրիգորի», որ ընկաւ քաջի մահով: Ասել է թէ Խաչենի իշխանական տոհմը չէր սպառել: Խաչենցի Սենեքերիմը, Շահանդուխտի եղբայրը, որ Սիւնեաց իշխան դարձաւ, ունէր բացի Գրիգորից եւ Սմբատից, որ իրեն յաջորդեցին, նաև մի երրորդ որդի, Սեւադա: Մեզ թւում է որ այս Սեւադայի որդին է Գրիգորը, Մոնգոլ-

1 Օրբելեան, ծբ–կ:

ների դաշնակից Սեւադայի հայրը: Սեւադա կրում էր ուրեմն իր պապի անունը: Խաչենի գիծը կը լրացուի հետեւեալ կերպով.

7 Յովհաննէս–Սենեքերիմ, Գրիգոր, Ատներսեհ, Փիլիպպէ
|
8 Փիլիպպէ († 1003)
|
9 Սեւադա
|
10 Սենեքերիմ, Շահանդուխտ († 1116)
|
11 Գրիգոր (1166), Սմբատ (1166), Սեւադա
|
12 Գրիգոր
|
13 Սեւադա († 1260)

Ուռհայեցին չփոթել է յայտնապէս Խաչենի Փիլիպպէն կամ Փիլիպպոսը մի ուրիշ իշխանի հետ եւ սխալ ծննդաբանութիւն կազմել: Կարեւոր է պարզել այս երկրորդ Փիլիպպէի ինքնութիւնը: Սա պատկանում է մի այլ իշխանական տան որ կապ չունի Խաչենի գծի հետ:

Ուռհայեցին պատմում է որ Հայոց ՃԺ=961-962 թուին Անի քաղաքում գումարուած ժողովին մասնակցելու հրաւիրուեցին Աղուանից Յովհաննէս կաթողիկոսը եւ Աղուանից թագաւոր Փիլիպպոսը, «որդին Գոչազդակայ, որդւոյ Վաչագանայ»: Ժողովը նպատակ ունէր որպէս թէ տալ «զօծումն թագաւորութեանս Աշոտ Գագկայ» (sic): Աշոտ «օծաւ եւ նստաւ ի գահոյս» և ժողովականները «ուրախ լինէին յաղագս քաջութեանն Գագկայ»[1]:

Այս տեղեկութիւնները շատ խառնակ են: Նախ 961-2 թուին Աղուանից կաթողիկոսը Յովհաննէսը չէր, այլ Դաւիթ, որին ձեռնադրեց Անանիա կաթողիկոսը 958 թուին, երբ մեռաւ նախորդ Գագիկ կաթողիկոսը: Դաւիթ վարեց իր աթոռը վեց տարի ուրեմն 958-964: Նրա մերձաւոր յաջորդների մէջ Յովհաննէս անունով կաթողիկոս չկայ: Ապա Աշոտ դահ բարձրացաւ 953 թուին եւ դժուար թէ իր օծումը յետաձգուած էր մինչև 961 թիւր[2]: Աշոտի հետ յիշւում է Գագիկ որ գահակալեց 989, իր եղբօր Սմբատից յետոյ: Ակներեւ է որ մեր պատմագիրը իրազեկ չէ անցքերին: Հաւանական է

1 Մատթ. Ուռհայեցի, գլ. ի. եւ գ.:
2 Սմբատ Սպարապետ, որ հետեւում է Ուռհայեցուն, պահել է 961 թիւը, բայց Աշոտի փոխարէն դրել է Գագիկ:

որ 961ի հանդէսը կազմակերպուած էր արքայական գահը Երազգաւորից Անի տեղափոխելու առթիւ: Մեր նպատակի համար կարեւոր է ամէն պարագային որ այս միջոցին թէ յետայ Աղուանից թագաւորն էր Փիլիպոս, որդի Գուչազգակի եւ թոռն Վաչագանի:

Փիլիպոս յիշատակւում է նոյն պատմագրի մօտ Զմշկիկ կայսրի Հայաստան գալու առթիւ 975 թուին: Կայսրին դիմաւորող իշխանների թւում կային «թագաւորն Կապանից Փիլիպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն»[1]: Կապանք Սիւնիքի Կապան գաւառը չէ, այլ Դերբենտ, ինչպէս հեղինակը բացատրում է մի ուրիշ տեղ, ուր խօսելով հայրապետական աթոռի միաժամանակ չորս գահակալ ունենալու մասին — Գրիգոր, Թէոդորոս, Բարսեղ եւ Պօղոս —, հակադրում է այս քայքայուն վիճակը Աղուանից կաթողիկոսութեան եւ յիշում է այս առթիւ Աղուանից վերջին հայրապետները, Յովհաննէս, Գէորգ, Յովսէփ, Մարկոս, Ստեփանոս, թագաւորները, Գագիկ, Դաւիթ եւ Կորիւէ «որ նստէին այժմուս ի Լօռէ քաղաք Հայոց», նոյնպէս այն թագաւորները որ «էին ի Դարբանդ աշխարհին, Վաչական, եւ նրա որդի Գուչակատակ, Փիլիպէ՝ որդի Գուչակատակին, Սեւադա՝ որդի Փիլիպէի, Սենեքերիմ՝ որդի Սեւադայի, Գրիգոր՝ որդի Սենեքերիմայ «որ դեռ եւս կենդանի էր մինչեւ զրէաք զայս մատենագրութիւնս մեր»[2]: Ուրեմն.

Վաչական
|
Գուչակատակ
|
Փիլիպէ
|
Սեւադա
|
Սենեքերիմ
|
Գրիգոր:

Պատմագիրը սիալ է: Վերջին երեք անձերը չեն սերում այս Փիլիպէից, այլ Խաչենցի Գրիգորի որդի Փիլիպէից, ինչպէս տեսանք վերեւ:

Առաջին երեքը նոյն Վաչագան, Գուչազգակ եւ Փիլիպոս անձերն են որոնք յիշուած են 961 ժողովի առթիւ: Գուչազգակ թէ Գուչակատակ, երկուսն էլ այլուստ անծանօթ

1 Սմբատ Սպարապետ. գլ. ժդ:
2 Սմբատ Սպարապետ. գլ. ՁԿԶ:

անուններ են, հաւանօրէն աղաւաղուած: Սրանք Դերբենտի թագաւորներ չեն: Ուռհայեցին տակաւ է իր ծննդավայրից հեռու աշխարհների դիտութեան մէջ: Բաւական է յիշել որ Պարտաւ քաղաքը նոյնացնում է Փայտակարանին:

Անանիա կաթողիկոսի քանիցս յիշատակած թղթից դիտենք որ 958 թուի ժողովին ներկայ էր ուրիշ իշխանների թւում «Վաչագան Գորոզուաց իշխան»: Սա Ուռհայեցու Վաչագանն է: Իբն-Հաւքալի մի թանգագին տեղեկութիւնը պարզում է Վաչագանի ինքնութիւնը: Արաբ մատենագիրը դիտէ وشغيان ابن موسى Վաչագիան իբն Մուսի: Տակաւին Սեն - Մարտէն[1] դուշակել է որ Վաչիան է Վաչագան անունը, բայց չէր նկատել որ նրա հայր Մուսի Ուռիայեցոց յայտնի իշխան Մովսէսն է:

Աշոտ Երկաթ իր անբարոյ Սահակ - Սեւադայի հետ արշաւանք գործեց Ուտիք ընկճելու «զբիրտ ապստամբութիւնն Մովսիսի զոր իւր իսկ կացուցեալ էր զնա իշխան եւ հրամանատար ճուաղաբարոյ ազգացն այնոցիկ Ուտի գաւառի»: Օգնութեան եկաւ թագաւորին նաեւ մեծ քորեպիսկոպոսը որ ունէր «զմատն Գուղարաց մերձ ի գրունս Աղանաց»: Մովսէս փախաւ Սիւնեաց Սմբատ իշխանի մօտ: Սա Սիւնեաց համանուն թագաւորի հօրեղբայրն էր եւ իր որդու Վասակի հետ յիշուած է Անանիայի առաջին ճանապարհորդութեան, 943 թուին: Մինչ Աշոտ Երկաթ զբաղած էր նուաճելու «խոտապարանոց աւագակաց» Ուտիացիներին, Մովսէս փորձեց Սիւնիքից փախչել գնալ «առ մեծ քորեպիսկոպոսն Ծանարայ», յուսալով նրա օգնութեամբ ազատել իր երկիրը: Բայց Երկաթը յաջողեց բռնել նրան եւ խարանել աչքերը[2]:

Ծանարայ քորեպիսկոպոսը նոյնն է ինչ որ Գուղարայ: Պատմագրի աշխարհագրական ծանօթութիւնը փայլուն չէ: Գուղարայ աշխարհը, ըստ Կեղծ-Խորենացու աշխարհագրութեան, Հայաստանի 15 աշխարհներից մէկն էր Հայաստանի եւ Վրաստանի միջեւ, Կուր գետի աջակողմը Բերդաջ գետից մինչեւ Ճորոխ: Ծանարք ընկնում է Ալազան գետի ակունքների ձախակողմեան լեռները, Գուղարքից հեռու: Այնտեղ տիրող իշխանները կոչւում էին քորեպիսկոպոս: Մովսէսի դիմելը քորեպիսկոպոսին նշանակում է, թերեւս, որ Ուտիացոց իշխանը հողեր ունէր նաեւ Կուրի միւս ափին, Կոմբեճանի կամ Հերեթի շրջանում:

Մովսէսի անկումով, նրա իշխանութիւնը չոչնչացաւ: Սահակ-Սեւադան իր որդու Գրիգորի հետ նոյնպէս ծանր պա-

1 **Mémoires sur l'Arménie**, I, 231.
2 Յովհաննէս Կաթողիկոս, էջ 163–164:

տիժ կրեց Աշոտ Երկաթից, բայց Գրիգորի որդին ժառանգեց հայրենի իշխանութիւնը: Մեզ թւում է որ արաբ մատենագրի Վաչաղիանի հայր Մուսէ Ուտիացի Մովսէսն է իր որդին՝ Վաչագան Գորոզուաց իշխանը: Իբն-Հաւքալ կոչում է Վաչաղիան Իբն Մուսէին իշխան Հարարի: Այսանուն աշխարհագրական վայր յայտնի չէ: Կեղծ-Խորենացու աշխարհագրութեան համառօտ խմբագրութեան առաջին հրատարակութեան մէջ, որ լոյս տեսաւ Լոնտոն, Վիստոն եղբայրների ջանքով, յիշուած է Աղուանից գաւառների թւում Էnon, որ նման է Հարարի: Արդեօ՞ք նոյն անունն է: Տեղը յայտնի չէ:

Գորոզուքի դիրքը եւս ծանօթ չէ: Կաղանկատուացին գիտէ Գորոզու բերդը եւ յիշում է հետեւեալ առթիւ: Դաւոն եւ Շապուհ անձերը սպանում են Ստեփանոս Աբլ-Ասադ իշխանին, որը կանչել էր Բաբանին, այսինքն հռչակաւոր աղանդապետ Բաբեկին, եւ նրա օգնութեամբ հարուածել Բաղակացիներին: Սպանիչներն աւերում են քանի մի վայրեր, որոնց թւում եւ Հակարի: Այնուհետեւ ըմբոստանում են Բաբանի դէմ եւ ամրանում «ի բերդն Գորոզու», եւ բռնանում 12 տարի հետեւեալ գաւառների վրայ, Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պաղկանք, Մխանք, Սոդից գաւառ: Աբլ-Ասադի մերձաւորները վրէժ են լուծում, սպանելով Դաւոնին եւ Շապուհին: Աբլ-Ասադի քեռորդին «Ցիսայի անուանեալն Աբու-Մուսէ» տիրանում է նոյն գաւառներին: Բաբան գալիս է Ամարաս, խաղաղութեան կոչ է անում եւ առաջարկում հնազանդութիւն: «Ոմանք հնազանդեցան եւ յետոյ դաւեալք անհնազանդ եղին»: Բաբան թողնում է Ռոստոմ անունով մի զօրավար եւ ինքը հեռանում Ատրպատական[1]:

Դաւոն և Շապուհ սկսեցին խռովութիւնները Հայոց 276 թուից երկու տարի յետոյ, ուրեմն 278=829 մայիս - 830 մայիս, իշխեցին 12 տարի, ուրեմն մինչեւ 841-842 տարին, երբ նրանք սպանուեցին: Նոյն տարին որպէս թէ Բաբան մտաւ Ամարաս: Սակայն յայտնի է որ Բաբան ձերբակալուեց օգոստոս - սեպտեմբեր 837 թուին: Հետեւապէս կամ 12 տարին է սխալ, կամ պատմագիրը ձուլել է Բաբանին իր որդու Աբդ - Ալլայի հետ որին ձերբակալեց Իսա իբն Իւսուֆ իբն Ստեփանոս, այսինքն Եսայի Աբու - Մուսէ: «Ոմանք դաւեալք» ակնարկը վերաբերում է թերեւս այս սպանութեան: Մեր պատմագիրը շատ փափկանկատ է Եսայի Աբու - Մուսէի վերաբերմամբ: Դաւոնի եւ Շապուհի սպանողն էլ ինքն է, բայց պատմագիրը վերագրում է մերձաւորներին: «Խաղաղութեան այր» է անուանում Եսային, մինչդեռ սա գոռ պատերազմող էր եւ պանծացաւ այն հերոսական դիմադրութեամբ որ ցոյց տուեց Բուղայի հանդէպ եւ յաղթեց արաբ զօրավարին, ինչպէս Թովմա Արծրունին պատմում է, քսան եւ ութ ճակատում, թէեւ ի վերջոյ զոհ գնաց պարտեալի նենգութեան, կալանաւորուեց եւ ղրկուեց Սամառա: Թովման անուանում է նրան Եսայի կամ Ապումուսէ երիցու որդի, իշխան Աղուանից: Ստեփանոս Աբլ-Ասադի քեռորդին էր, հօր անունը Յովսէփ էր, իսկ պապինը՝ Ստեփանոս: Կարծում եմ որ սա մօր կողմից է պապ, այսինքն նոյն Աբլ - Ասադ:

Արաբական տեղեկութեամբ Եսային Բայլականի իշխան էր: Բայլական, հին Փայտակարանն է, որի գլխաւոր քաղաքն արաբական շրջանում կրում էր նոյն անունը եւ գրտնըւում էր Պարտաւից դէպի Երասխ տանող ճանապարհի վրայ, հաւանօրէն Ամարասի շրջանում: Կաղանկատուացու Բաղակացիք (Բաղական-ցիք) նոյն Բայլականի բնակիչներն են[1]: Խռովարար իշխանների՝ Դաւոնի եւ Շապուհի գրաւած վայրերից յայտնի են իրենց դիրքով Հաբանդ, որ է Ամարասի շրջանը, այժմեան Քեօնդալան կոչուած գետի աւազանը, եւ Սոդից գաւառը, Սեւանայ լճի արեւելեան անկիւնը: Այս սահմաններում էր գտնւում եւ Գորոզու բերդը, մեր հետաքրքրութեան բուն առարկան: Եթէ Սոդքի մօտ էր, կարող էր պատկանել Ուտիքի իշխանին: Իսկ եթէ Բայլականի մօտերքն էր, պէտք է ընդունել որ Վաչաղիան իբն Մուսէ ոչ թէ Ուտիքի այլ Բայլականի իշխան էր, եւ որ Մուսէ կապ ունենալու է Աբու - Մուսէի հետ: Աբու - Մուսէ նշանակում է բառացի Մուսէի հայր, եւ իբն - Մուսէ՝ Մուսէի որդի: Այս վերջինը որ Վաչղիան կամ Վաչագան էր, ուրեմն որդի էր Եսայի Աբու - Մուսէի: Հարցը մթագնում է եւ մնում երկբայելի, արդեօ՞ք Վաչագան, Գոչազգակ թէ Գուչակտակ եւ Փիլիպպէ Կապանից թագաւորները Մովսէս Ուտիացու սերնդից են թէ Եսայի Աբու - Մուսէի: Մէկը Ուտիքի եւ մասամբ Հերեթի իշխան է, միւսը՝ Բայլականի: Եթէ կշիռ տանք Ուռհայեցու խօսքին թէ նրանք իշխում էին «ի Դարբանդ աշխարհի», պէտք է առաւելութիւն տալ Ուտիքի:

Կարեւոր է նաեւ դիտել, որ Ուտիք մեզ հետաքրքրող ժամանակում կոչւում էր Սեւորդեաց աշխարհ և տարածւում էր Գանձակի եւ Գարդմանի շրջանից մինչեւ Տաշիր: Հաղբատ եւ Սանահին վանքերը, ըստ Ասողիկի, գտնւում են Սե-

1 Մովսէս Կաղանկատուացի, Գ. գլ. ԺԲ:

1 Օրբելեան, գլ. ԼԳ, Բաղակաց-ի փոխարէն ունի Բաղասականայ, որ գատ է Բայլականից, բայց նրան կից է արեւելեան կողմից, ընդգրկելով Երասխի երկու ափերը:

ւորդեաց աշխարհում: Կոստանդին Ծիրանածնի օրով, բիւզանդական արքունիքը ճանաչում էր եւ պաշտօնական յարաբերութիւն ունէր մի շարք հայ իշխանութեանց հետ, որոնց թւում յիշատակւում են Սիւնիք, Խաչեն եւ Սեւորդեաց երկիր իշխանութիւն: Բուղայի շահատակութեանց ժամանակ Սեւորդեաց իշխան էր Ստեփանոս կոն, որ մարտիրոսացաւ 855 թուին, իսկ Գարդմանի իշխանն էր Կարիճ, ըստ Յովհաննէս կաթողիկոսի, իսկ ըստ Թովմա Արծրունու՝ Ներսեհ իշխան (Գարիթայանից կարդալ Գարդմանից), որից հետեւում է որ Կարիճ նոյն Ներսեհն է: Ստեփանոս Սեւորդին ձերբակալուեց Տուս գիւղում[1], որ է Տաուշ, այժմ, Թրքական արտաքսանութեամբ, Թովուզ, Ագստաֆա և Զեղամ գետակների միջև, համանուն գետակի վրայ: Բուն Գարդման կազմում էր Շամքոր գետի վերին հովիտը, ուր ցայժմ Կրտմանքք գիւղը պահել է հին անունը Թրքական երեւոյթի տակ: Տեսանք որ Խաչենցի իշխան Սահակ - Սեւադա նուաճեց Գարդման եւ Փառիսոս: Հաւանօրէն Ծիրանածնին ծանօթ Սեւորդեաց երեք իշխանութիւններն էին Գարդման, Փառիսոս եւ Ուտիքի արեւմտեան մասը:

Իրն Հաւկալ յիշում է նաեւ Քաբալա որպէս առանձին իշխանութիւն եւ անուանում է «աւազակների եւ մուրացիկների որջ»: Քաղաքի բնակիչները մեծ մասամբ մահմեդականներ էին, իսկ գաւառի՝ քրիստոնեաներ: Քաբալայի իշխանը կոչւում էր Անբասա ալ-Ահվեր: Առաջին բառը արաբերէն նշանակում է առիւծ, երկրորդը՝ միականի: Քաբալա կամ Կապաղակ իսկապէս Շաքէի քաղաք էր եւ հին բերդի աւերակների մօտ այժմս էլ կայ Թրքական մի գիւղ նոյն Ղաբալա անունով, Տուրիան գետի եւ իր Ջուղա վտակի խառնուրդի մօտ: 'Միականի առիւծ' անունը արդեօք թարգմանութիւն է տեղական որեւէ անուան, դժուար է ասել: Հետաքրքրական է որ Խորենացուն վերագրած աշխարհագրութեան համառօտ խմբագրութեան մէջ որ հրատարակեցին Վիսսոն եղբայրները 1726 թուին Լոնդոն յիշատակուած է Ադուանից գաւառների թւում նաեւ Համբասի որ, անտարակոյս, նոյն Անբասա անունն է: Արդեօք իշխանն էր տուել իր անունը գաւառին թէ, ընդհակառակը, իշխանը այդպէս էր կոչւում գաւառի անունով, մնում է անորոշ: Իշխանի ազգութիւնը եւս մութ է:

Շաքէից հիւսիս, Ալազանի գետի արեւելեան կողմը բարձրացող լեռնաշղթայի վրայ ապրում էր Ծանարք կոչուած ժողովուրդը: Իրն Հաւկալ նշանակում է Սանարիա

1 Յովհաննէս Կաթողիկոս, էջ 71:

իշխանութիւնը Ալանաց դրան եւ Վրաստանի միջեւ: Սանարիա նոյն Ծանարքն է եւ իշխանը կրում է քորեպիսկոպոս տիտղոսը, իբն Հաւկալի եւ Յովհաննէս կաթողիկոսի համեմատութեամբ: Ըստ վերջինիս, մեծ քորեպիսկոպոսը «պայազատէր իսկ զմասն Գուգարաց մերձ ի դրունս Ալանայ»[1]: Տեսանք որ քորեպիսկոպոսն օգնութեան եկաւ Աշոտ Երկաթին 918ին եւ յետոյ Ուտիացի Մովսէս փորձեց փախչել նրա մօտ: Իրն Հաւկալ հաղորդում է որ քորեպիսկոպոսը կոչւում էր Սենեքերիմ 950ի մօտերքը: Հաւանական է որ Աշոտ Երկաթի եւ Ուտիացի Մովսէսի ընդհարման միջամտող քորեպիսկոպոսը ինքը Սենեքերիմն էր[2]: Անունս վկայ է նրա հայ ծագման:

Ծանարների մասին մի ուշագրաւ զրոյց է պահուած Վարդանի մօտ: Մի քանի Քաղդէացի գայիս են Գարդման եւ խնդրում Հերակլի նուիրած խաչից մի բեկոր: Նրանց խնդիրը կատարւում է: Սակայն վախենալով Բաղդադի ամիրապետից թողնում են Գարդման եւ հեռանում «յոտն Կովկասու» եւ տիրում այնտեղի երկրներին: Նրանցից մէկը թագաւորում է եւ խնամենանում Զոր գետի թագաւորի հետ: Զրոյցիս հեղինակը կարծում է որ նրանք Ծանարք կոչուեցին «զի անդ ծանեան զտեղի բնակութեան իւրեանց»: Գարդմանի իշխանը կոչեց նրանց իշխանին քորեպիսկոպոս «ըստ լեզուին Վրաց (իմա՛ Յունաց, գաւանաբանական տեսակէտից)[3]:

Վերջին մեկնութիւններն արժէք չունին, բայց Ծանարքի կապը Գարդմանի հետ արժանի է ուշադրութեան: Հերակլի նուիրած խաչի մասը Հայոց Սենեաց խաչն է որի պատմութիւնը յայտնի է: Նուէրն ստացաւ Սիւնեաց իշխանուհի Բիւրեղ: Գարդմանն, ինչպէս երեւում է, բաժին էր ստացել այդ սրբութիւնից, բայց ե՞րբ եւ ի՞նչպէս, զրոյցը լռում է այդ մասին: Ծանարք եւս անբաժին չեն մնացել: Այս վերջին պարագան, ի հարկէ, ուրիշ բան չէ նշանակում քան որ Ծանարքի առաջին քրիստոնեայ քարոզը եկել է Գարդմանից: Քաղդէացիների Գարդման գայը կարող է արձագանգ լինել մի հին դէպքի որ յիշատակւում է Կաղանկատուացու մօտ: Եղիա կաթողիկոսի օրով Պարտաւում զումարուած ժողովի անդամներից մէկը պատկանում էր Յակոբիկ համայնքին որ եկել հաստատուել էին Կամբիճան, «ի Մադիանացւոցն պարսից Յակոբիկ հաւատով, որք եկեալ ի Կամբիճան բնակեցան»[4]: Մադիանացիք արաբական ցեղ էին Կարմիր ծովի

1 Յովհաննէս Կաթողիկոս, էջ 163–164:
2 Նաեւ Մասուդի, I, 233:
3 Վարդան, գլ. ծգ, էջ 101:
4 Մովսէս Կաղանկատուացի, գ. ժ:

ափին, Սինայի մօտ, եւ կապ չունեն Պարսից հետ եւ ոչ Յակովբիկ համայնքի հետ: Խօսքը ասորական Յակովբիկների մասին է, որ թերեւս խուսափելով նեստորական հալածանքներից, գաղթել էին Կամբիճան:

Քրիստոնէացած Ծանարքի հոգեւոր տէրերը համարուել են եպիսկոպոսներ կամ քորեպիսկոպոսներ Գարդմանի աթոռի եւ պահել են այդ կոչումը անգամ, երբ հոգեւոր տեսչութիւնը տեղի է տուել զուտ աշխարհիկ եւ քաղաքական իշխանութեան: Երկիրն էլ մայր աթոռ Գարդմանի անունով կոչուել է Գարդման: Այս է պատճառը որ Ծանարաց երկիրը յայտնի է Վրաց մօտ Գարդաբան անունով: Գարդաբան վրական հնչիւնն է հայ Գարդմանի եւ գործ է ածւում կրկնակի իմաստով, նշանակելով բուն Գարդման[1] եւ Ծանարաց աշխարհ:

Առաջին քորեպիսկոպոսն էր Դաշի որ ընտրուեց Գարդաբանցիների կողմից 827 թուին եւ որին յաջորդեցին Սամուէլ եւ Գաբրիէլ մինչեւ 881 թիւը: Այնուհետեւ ոմն Գաբլուց, «Թիֆլիսի Սահակ ամիրայի ազգական եւ Աշոտ Ա. Թագաւորի հօրեղբօրորդին»[2], գրաւեց Գարդաբան:

Սրանից յետոյ՝ Փաղլա Արեւմանելի եղաւ քորեպիսկոպոս: Այս անձի, ինչպէս եւ իր նախորդի ծագումն անյայտ է: Պարտաւի 707 թուի ժողովին ներկայ էր Աղուանից իշխաններից Թէոդորոս Վստամ յԱրեւմանեան[3]. իշխանութիւնը անցաւ Կորիկէի (893–918) եւ ապա իր որդուն Փաղլային (918–929): Սրանց ծագումը նոյնպէս անորոշ է:

Կորիկէ Բ-ի օրով (929–976) Գարդաբանն ըմբոստացաւ: Սա Կախեթի իշխան էր իսկապէս, ինչպէս եւ իր յաջորդն եւ որդին Դաւիթ (976-1010) որ կոչւում է «քորեպիսկոպոս Կախեթի»: Կորիկէ Գ կամ Մեծ (1010-1039) ընդհարուեց Վրաստանի թագաւոր Բագարատի հետ որ խլեց նրանից Հերեթ եւ Կախեթ եւ, ինչպէս թւում է, նորից տիրացաւ իր գահին Բագարատի մահից (1014) յետոյ: Սա թագաւոր էր Ռանի,

1 Աւելի ճիշտ, Գարդմանի արեւմտեան մասը որ յարում էր Բերդուջ գետին: Գարդմանի Սեւորդեաց իշխանութիւնը տարածւում էր մինչեւ այս գետի հովիտը: Վրաց հասկացողութիւնը Գարդմանի մասին վերաբերում է այն շրջանին, երբ բուն Գարդմանը եւ նրա արեւելեան մասը անցել էր Խաչենի եւ հետագայում Գանձակի տէր Փատլունին, ուստի և վրաց Գարդաբանը ընդգրկում է միմիայն մեծ Գարդմանի արեւմտեան մասերը:

2 Շփոթ տեղեկութիւն է: Սահակ ամիրան մահմեդական էր, որի ազգակցութիւնը Գաբլուցի հետ խնդրական է, եթէ իրօք Գաբլուց հայ առաջին Բագրատունի թագաւորի հօրեղբօրորդին է: Աշոտ Ա-ի հօրեղբայրները յայտնի են, բայց Գաբլուց անունով հօրեղբօրորդի անծանօթ է:

3 Մ. Կաղանկատուացու այս հատուածը պակասում է տպագրի մէջ եւ հրատարակուած է Սամուէլ Երէցի «Քրոնիկոն»ի յաւելուածում, էջ 286:

այսինքն Առանի եւ Կախեթի, երբ սպանուեց 1039 թուին: Այս Կորիկէի քոյրը Դաւիթ Անհողինի կինն էր: Կորիկէի մահից յետոյ, Անհողինի որդին Գագիկ ժառանգեց իր քեռու իշխանութիւնը:

Որքան ստոյգ են Վրաց Տարեգրքի այս տեղեկութիւնները, դժուար է կշռել[1]: Թւում է թէ այստեղ չփոթութիւն կայ Կախեթի եւ Գարդաբանի մէջ: Եթէ ոչ բոլորը գէթ մի քանիսը իրապէս Կախեթի իշխաններ էին եւ յաջողել էին տիրանալ նաեւ Գարդաբանին եւ նրա իշխանական տիտղոսին, քորեպիսկոպոսութեան: Արդարեւ, տեսանք որ արաբական անսխալ վկայութեամբ, Ծանարաց, այսինքն Գարդաբանի քորեպիսկոպոսն էր 950 թուականներին ոմն Սենեքերիմ, մինչդեռ այս անունը յայտնի չէ Վրաց աղբիւրին եւ նրա փոխարէն Գարդաբանի իշխան է նոյն միջոցին Կիւրիկէ Բ (929–976): Պէտք է կարծել որ վերջինս իրապէս Կախեթի իշխան էր եւ գրաւել էր կամ իր նախորդից ժառանգել էր նաեւ Գարդաբանը: Կիւրիկէի օրով Գարդաբանն ապստամբեց եւ հաւանօրէն վերականգնեց իր անկախութիւնը: Ապստամբը, հետեւապէս, նոյն Սենեքերիմը պէտք է լինէր, 950ի քորեպիսկոպոսը:

Անանիա կաթողիկոսից յայտնի է որ 958 թուի ժողովի անդամների մէջ կար մի իշխան որ կոչւում է Գուրգէն Արեւելից իշխան եւ որի ինքնութիւնը մինչեւ այժմ պարզուած չէ: Մեզ թւում է որ այս Գուրգէնն ոչ այլ ոք է եթէ ոչ Կիւրիկէ Բ, Կախեթի ժամանակակից իշխանը: «Արեւելից իշխան», խորթ որակում չէ: Յովհաննէս կաթողիկոսը Շաքէի Ատրներսեհ թագաւորին կոչում է իշխան «Արեւելից հիւսիսոյ Կովկասու»: Նոյն իրաւունքով եւ Անանիա կարող էր Շաքէի հարեւան Կախեթի թագաւորին համարել «Արեւելից»:

Կորիկէի - Գուրգէնի մասնակցութիւնն 958 թուի ժողովին մատնում է նրա հայ ազգութիւնը: Կարծում ենք որ Կախեթի Կիւրիկէ Ա (893-918) սկսած տոհմը հայ Բագրատունի ծագում ունի: Կորիկէ Գ-ի ժառանգութեան անցնելը հայ Դաւիթ Անհողինի որդուն Գագիկին միանգամայն բնական է: Այսպիսով Շաքէի Ատրներսեհը եւ իր որդի Իշխանակը, Ծանարք - Գարդաբանի Սենեքերիմը, այլ եւ Կախեթի Կորիկէ - Գուրգէնը հայ իշխաններ էին: Հայ ազդեցութեան զօրացումը այս երկրների մէջ նոր թափ ստացաւ մանա-

1 Սամուէլ և Գաբրիէլ անունները պատկան են քորեպիսկոպոսի և աւելի պատմական են թւում քան Դաշի եւ մանաւանդ Փաղլա: Վերջին անունս որ նոյն է ինչ որ Փաղլուն երեւան է գալիս առաջին անգամ տասներորդ դարու վերջերին:

*ւանդ Սմբատ Ա-ի թագաւորութեան ժամանակ։ Յովհաննէս կաթողիկոսը չէ չափազանցում, երբ գծում է Սմբատի տէրութեան սահմանները, նրանց մէջ առնելով Գուգարք, Ծանարք մինչեւ Ալանաց Դուռն։ Բերենք իր խօսքերը. «եւ այսպէս ձգեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարեւմտից հիւսիսոյ մինչեւ ցկարնոյ քաղաք եւ անդր եւս քան զԿղարջս, քերեալ մինչեւ առ ափն Ծովուն մեծի և մինչեւ ցառհման Եգեբաւոց. եւ մինչեւ ցառաջոտ մեծի լերինն Կովկասու, ցԳուգարացիս եւ զԾանարս մինչեւ զԴուռն Ալանաց, առեալ եւս յինքն և զամրոց դրան պահակի նոցա։ Եւ անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչեւ ի քաղաքն Տփղիս եւ զՈւտի գաւառ մինչեւ ի քաղաքն Հունարակերտ եւ մինչեւ ի Տուս եւ ի Շամքոր»[1]։ Իշխանակը, տեսանք, որ իր մօր Դինարի շնորհիւ, ուրացաւ հայրենի հաւատը։ Բայց պէտք չէ կարծել որ հայ գաւառներ վերացաւ անհետ այս երկիրներից։ Արտակարգօրէն ուշագրաւ է յոյն 1673 թուին գրած մի ձեռագրի հետեւեալ նկատողութիւնը որ աւելորդ չենք համարում բերել ամբողջապէս εἶναι οἱ Ἰακωβῖται ὁποῦ ὀνομάζονται Χεψοῦροι, ὁμοίως εἶναι καὶ ἄλλη φυλὴ ὁποὺ λέγεται Τοῦχοι, καὶ εἶναι χριστιανοὶ καθολικοί. Εἶναι καὶ ἄλλη φυλή ὁποῦ λέγονται Δίδο καὶ ἑτέρα ὁποῦ λέγεται Καίστὴ այսինքն, «Կան Յակոբիկներ ուր նրանք կոչւում են Խեւսուրք, կայ նաեւ մի ուրիշ ցեղ որ կոչւում է Թուշք, որոնք կաթուղիկեայ քրիստոնեայք են։ Յայտնի է մի այլ ցեղ որ կոչւում է Դիդոյք եւ մի ուրիշը որի անունն է Քիստք»[2]։

Այստեղ թուած ցեղերը, Խեւսուրք, Թուշք, Դիդոյք եւ Քիստք, ծանօթ են եւ ցայժմ ապրում են հին Ծանարաց աշխարհի սահմաններում։ Խեւսուրները կոչուած են Յակոբիկ։ Այսպէս է կոչւում հակաեստորական եւ հակաքաղկեդոնական Աստրական եկեղեցին, որ գաղափարակից է Հայ եկեղեցուն դաւանաբանական խնդիրներում։ Անշուշտ խօսքը ութերորդ դարու սկզբին Կամբեճան գաղթած Յակոբիկների մասին չէ։ Եթէ անգամ նրանց մի հատուածը տեղափոխուած լինի Ծանարք, ապաստան գտած Դաղեստանի լեռներում, դժուար թէ այդպիսի մի չնչին բեկոր կարենար իր ինքնակացութիւնը անխախտ պահել մինչեւ 17րդ դարը։ Կարծում ենք անյայտ գրիչը Յակոբիկ ասելով ակնարկում է հաւանօրէն Հայոց եկեղեցուն։ Իսկ այս այլ բան չէ նշանակում քան որ հին հայ գաղթականութիւնը ձուլուել է տե-

1 Յովհաննէս Կաթողիկոս, էջ 89–90։
2 Վ. Բենիշեւիչ, «Ὀψιανικὴ ῥητορικὴ ποιοτικὴ» (սուտերէն), II, 449։

ղական ցեղերի հետ, մասնաւորապէս Խեւսուրների հետ, բայց պահել իր կրօնական ինքնութիւնը։

* * *

Այսպէս Բագրատունեաց տոհմային ծառը, վերընձիւղելով հինաւուրց արմատից, ծաղկեց եւ դարպացաւ ամբողջ Թ դարու ընթացքում, եւ փարթամ ոստերով փռուեց երեք երկիրների վրայ, Հայք, Վիրք եւ Աղուանք։

Հարաւում Բագրատունի աշխարհաշէնները չկարողացան թեւակոխել Տաւրոսեան շղթան։ Ամիղում հաստատուած Շայրանի մուսուլման իշխանական տունը կանգնեցրեց նրանց յառաջխաղացութիւնը։ Արեւելքից մրցորդ հանդիսացան Արծրունի իշխանները եւ տիրացան Վասպուրականին, սահման դնելով Բագրատունիների ծաւալուն ազդեցութեան։ Սիւնեաց իշխանական տունը եւս վերածնուած՝ հակամէտ չէր ասպարէզը թողնել Շիրակի տէրերին։ Բագրատունիների թափը բնականօրէն ուղղուեց դէպի հիւսիս, Վրաստան և Աղուանք։ Նրանց շարժումը դիւրացրեց այն հանգամանքը, որ ամուր կռուան ունէին Սպերում հնուց ի վեր եւ նորը ձեռք բերին հարեւան Տայքում։ Այստեղից, որպէս մի անառիկ ամրութիւնից, Բագրատունեաց զօրութիւնը ծաւալուեց եւ ողողեց ամբողջ վրական երկիրները մինչեւ Կովկասեան շղթան։ Մի դար աշխարհաւաք գործունէութիւնը նրանց ձեռքը տուեց Մոկաց աշխարհից եւ Տարօնից մինչեւ Ծանարք եւ Ափխազից ու Կարինից մինչեւ Շաքէ։

Դէպի Վրաստան պարզուած ճիւղը չյապաղեց անցնել կրօնական խորութեան կամուրջը եւ ապազգայնացաւ, դառնալով վրական ազգային հարստութիւն։ Վրաց ազդեցութեամբ Աղուանից ճիւղը եւս չրջեց իր երեսը նոյն ուղիով դէպի ապազգայնացում։

Բնական երեւոյթ։ Երկու երկիրներն իրենց սեփական ժողովուրդն ունէին, լեզուն ու բարքերը եւ ինչպէս որ Պարթեւ իշխանները հայացան հայ միջավայրում, այնպէս էլ հայ Բագրատունիները համակերպուելով պէտք է դառնային վրացի վրական չրջանում եւ աղուան՝ աղուանականում։

Սակայն, գլխաւոր գործօնը հայ Բագրատունիների օտարացման Վրաստանում եւ Աղուանքում որոնելու է բիւզանդական քաղաքականութեան մէջ։ Կայսրներն էին, որ իրենց մեքենայութեամբ խափանեցին երեք դրացի երկիրների քաղաքական հաւաքումը Բագրատունեաց տոհմի ղեկավարութեան եւ հովանու տակ, նախ կրօնական խտրոցով, ապա եւ

քաղաքական, անջատելով Հայերից Վրացիներին եւ Աղուաններին եւ այդպիսով տապալեցին Բագրատունեաց ջանքերը՝ ստեղծելու միահեծան պետութիւն երեք երկիրներից:

Ցայտնի է, որ Բիւզանդիոնը վաղուց բարեկամական յարաբերութիւններ էր մշակել կովկասեան լեռնականների, եւ նրանցից հիւսիս հաստատուած Խազարների եւ նման անհանգիստ ցեղերի հետ: Հարկաւոր դէպքում դրդում էր նրանց սուրալ դէպի արաբական երկիրները եւ իրենց ասպատակութիւններով ջլատել թշնամու ոյժերը:

Բագրատունեաց դարում կայսրների ազդեցութիւնը հիւսիսաբնակ ցեղերի վրայ աւելի զօրացաւ: Երբ նրանք համոզուեցին, որ անճարակ են Եփրատի ափերին հրամայական դիրք բռնել հանդէպ Արաբների, եւ ընդհակառակը չնորհիւ արաբական սահմանների զինուորական կուռ կազմակերպութեան, ոչ միայն բիւզանդական փորձերն էին յետ մղւում, այլ եւ յաճախ Արաբներն իրենք էին նախայարձակ լինում եւ սրի, աւերածութեան ու կողոպուտի ենթարկում բիւզանդական հողերը, կայսրները հետամուտ եղան ամուր ոտ դնել Սեւ ծովի արեւելեան եզերքին, յենուելով Կովկասեան շղթային եւ լեռնականներին:

Այս է պատճառը որ Ափխազները յանկարծ երեւան են գալիս քաղաքական ասպարէզում որպէս առաջնակարգ ոյժ: Ամենից առաջ նրանք կազմակերպուեցին եւ գրաւեցին ծովափնեայ հողերը մինչեւ Տրապիզոնի շրջանը, վերականգնելով նախնի լազական պետութիւնը: Իրապէս Ափխազները ենթակայ էին բիւզանդական գերիշխանութեան:

Դարձեալ նոյն Բիւզանդիայի տեսանելի թէ անտես աջն էր, որ նպաստեց Տայքի Բագրատունի կիւրապաղատութեան յառաջանալուն եւ խրախուսեց նրա մեկուսացումը Հայաստանից: Այս քաղաքագիտութեան անմիջական արդիւնքն էր, որ Արաբները չկարողացան մօտենալ Սեւ ծովի ափերին կամ Ճորոխի հովտին եւ ոչ արմատ ձգել Ափխազիա:

Միւս կողմից, կայսերական ազդեցութիւնը հեռու մնաց Հայաստանից: Արաբ - բիւզանդական հակամարտը ծնաւ համապատասխան տրամադրութիւններ. Բագրատունիք Հայաստանում անպայման թեքուած էին Արաբների կողմը առաւելապէս, մինչ Տայքում նրանք համակիր էին Բիւզանդիային: Նոյն քաղաքական թեքումն ունէր եւ Ափխազեան իշխանութիւնը: Շահերի այս ներհակութիւնը սաստկացաւ, ստանալով ազգային եւ կրօնական գունաւորում, ճեղքեց Բագրատունեաց տոհմը, բաժանելով միմիանցից նրա հատուածների քաղաքական ուղիները:

Կրօն եւ եկեղեցի բիւզանդական քաղաքականութեան մէջ յետին գործօններից չեն: Աշխարհակալ ծրագիրներ յառաջ վարելիս, նա բնաւ չի անտեսել յենարան գտնել կրօնական եւ դաւանաբանական համերաշխութեան մէջ: Փորձութեան մատնուած եկեղեցիները յաճախ ընկճուել են, խոնարհել կայսերական հարկադրանքի առջեւ եւ յարմարուել տիրող քաղաքական կացութեան:

Ճշմարիտ է, եկեղեցին բարոյական խոշոր հաստատութիւն է, որի պատմութիւնը եւ կեանքն իր սեփական անիւներն ունին, բայց անուրանալի է, որ նրանց պտոյտները կատարուել են գրեթէ միշտ քաղաքական ելեւէջների շրջանակի մէջ: Հայ-վրական եւ հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերութիւնները, նրանց բեկումները եւ վերջնական դասաւորումը, անկախ տեղական բովանդակութիւնից, դաւանաբանական, վարչական և ազգային խթաններից վերջին հաշուով չիտակ անդրադարձումներ են երկու հարեւան մեծ պետութիւնների մրցութեան եւ նրանց քաղաքական գերակշիռ ազդեցութեան:

Հայ եկեղեցու ուրոյնութիւնը պարտական ենք Պարսից պետական քաղաքականութեան, որ ձգտում էր անջատել Հայերին քրիստոնեայ Բիւզանդիայից, խրամատել հայ եւ բիւզանդական, եւ ընդհանրապէս արեւելեան եւ արեւմտեան քրիստոնէութիւնը: Երբ Զ դարում բիւզանդական զօրքերը մտան Հայաստան եւ 591 թուին դաշնագրով մեր երկրի մեծագոյն մասը անցաւ քրիստոնեայ կայսեր, հայ եկեղեցականութիւնը ցնցուեց եւ հակամէտ էր ընդհանուր գետին գտնել արեւմտեան մեծ քրիստոնէութեան հետ:

Վրացիք աւելի վճռական գտնուեցին եւ օգտուեցին առիթից խզելու իրենց կախումը Հայ եկեղեցուց եւ կապուելու Բիւզանդական եկեղեցուն: Քիչ յետոյ, ինչպէս Վրաց Տարեգիրքն է յայտնում, Հերակլ կայսրը մկրտեց Գարդաբանի, իմա Գարդմանի, իշխանին: Խօսքը, անշուշտ, վերամկրտութեան մասին է քաղքեդոնական դրոշմով: Գարդմանը վաղուց քրիստոնեայ էր եւ պէտք չունէր մկրտութեան: Եթէ Հայերը պահ մի Հերակլի եւ Կոստանդինի առաջ խոնարհելուց յետոյ, չարունակեցին տատամսել և երկբայելի դիրք բռնել, պատճառն այն էր, որ նոր ոյժ էր երեւան եկել յանձին Արաբների: Արեւելքի եւ արեւմուտքի զինական մրցութիւնը Հայաստանի շուրջը նորից արծարծուեց եւ յայտնի չէր, թէ որ կողմին է ընծայելու բախտը իր վերջին ժպիտը:

Ութերորդ դարու սկիզբը քաշուեց մթութիւնը քաղաքական հորիզոնից եւ այլեւս կասկած չկար, որ Հայաստանի

մեծագոյն բաժինը մնալու է արաբական իշխանութեան տակ: Հիշամ խալիֆայի հրամանով 724 թուին կազմեցին պաշտօնական աշխարհագիր, այսինքն վիճակագրութիւն Հայաստանի, երկրի վարչական ձեւակերպումը հաստատելու համար:

Այդ նոյն տարեն էր, 726 թուին, երբ Յոհան Օձնեցի կաթողիկոսը գումարեց Մանազկերտի յայտնի ժողովը եւ վերջ դրաւ երկարատեւ վարանումին, թօթափեց ընդմիշտ բիւզանդական եկեղեցու յաւակնութիւնն ու քաղքեդոնական համակերպութեան խմորը և վերահաստատեց Հայ եկեղեցին իր հինաւուրց հունի մէջ: Աչոտ պատրիկն արդէն հրապարակի վրայ էր, նա որ 732 թուին նշանակուեց իշխան Արաբների կողմից, հուչակաւոր Աչոտ Կոյրը, Բագրատունեաց վերածնունդի հայրը: Հայ քաղաքականութիւնը թեքւում էր Արաբների կողմը կամաւ թէ ակամայ: Եկեղեցին չտապեց ճշտել իր դիրքը նոր կացութեան հանդէպ: Մանազկերտի ժողովը երկրի տրամադրութեան անխաբ յայտարարն էր եւ այս մտքով արժէքաւոր ոչ միայն եկեղեցական, այլ եւ քաղաքական պատմութեան տեսակէտից:

Վրաց եկեղեցու վիճակը այնքան էլ պարզ չէ: Եօթներորդ դարու վերջերից ընդհատւում է Վրաց կաթողիկոսների շարքը երկար ժամանակով: Սակայն, անկասկած է, որ Վրաստանը, ինչպէս եւ Բիւզանդական Հայաստանը մնացին փարած պետական դաւանութեան: Արաբական ազդեցութիւնը երբեք չթանձրացաւ Տայքի եւ Կղարջքի շրջանում, իսկ Ափխազական երկիրները մնացին ազատ: Ինչ եւ լինէր այս կողմերում եկեղեցու վիճակը, կարելի էր նախատեսել, որ պիտի կլանուէր կայսերական եկեղեցու կողմից, մանաւանդ այն օրից երբ Բիւզանդիան սկսեց ծանրանալ այս շրջանի վրայ եւ ստեղծեց կիւրապաղատական իշխանութիւն:

Թ դարում Ճորոխի հովիտն արդէն նուաճուած էր քաղքեդոնական եկեղեցու կողմից: Կրօնափոխութեան առաջին հետեւանքն եղաւ ազգափոխութիւն: Դաւանութիւնն էր ազգութեան յատկանիշը, եւ քաղքեդոնիկ Հայը համարւում էր Հոռոմ, Վրացի, բայց ոչ Հայ: Երբ Բագրատունիները յանձին Վասակի մտան եւ հաստատուեցին Տայք եւ Կղարջք, երկրի բնիկ ազգագրական պատկերը փոխուած էր կրօնական դեռնի վրայ: Նոր իշխանական տունը համակերպուելով տեղական միջավայրին, նոյն ուղիով ընթացաւ, մանաւանդ որ կենդրոնն էր ընտրել Արտանուջ, վրական շրջանը: Շուտով դարձաւ վրական ազգային հարստութիւն:

Այս հանգամանքով Բագրատունեաց տան միութիւնը

ջլատուեց եւ նրանց քաղաքական յղացումները կանգ առան կէս ճանապարհին:

Բագրատունեաց գործունէութեան դաշտն էր Հայաստանն արաբական լայնարձակ մտքով, այսինքն ամբողջ Կովկասը, որի աշխարհագրական եւ քաղաքական կենդրոնն էր իրապէս Շիրակը, իշխանական նոր ոստանը: Այստեղից բղխած կամ ներշնչուած ջանքերը տանում էին դէպի մի հոյակապ կառուցում որ է՝ հաւաքել խմբել կովկասեան բոլոր ցեղերը մի եւ հանուր քաղաքական յարկի տակ, ներդաշնակել նրանց կեանքն ու գործունէութիւնը համագործակցութեան եւ համերաշխութեան դեռնի վրայ, Բագրատունի ծառի հովանու ներքեւ:

Արեւելքի բոլոր պետութիւնները միշտ հարստենական (դինաստիկ) են եղել, ոչ միայն Իրանում, այլ եւ Ասորեստան - Բաբելոնում: Բազմացեղ եւ բազմալեզու ժողովուրդները պետական օղակով շաղկապելու ուրիշ միջոց չի գտել հին պատմութիւնը: Բագրատունեաց ձգտումները եզակի երեւոյթ չէին: Նրանց ժամանակ նման տենչանքով տոգորուած էին եւ Տահիրեանք, Սաֆֆարեանք եւ Սամանեանք, որոնք Թ–ԺԱ դարերի ընթացքին գուն գործեցին վերականգնել Իրանի միութիւնը համաձայն նրա պատմական աւանդութիւններին:

Բագրատունիք յաջողեցին իրենց ծրագիրը մինչեւ մի որոշ աստիճան: Բաւական է վերյիշել Վրաց Տարեգրքի զրոյցը, որ Թորգոմի ութ որդիները, գլուխ ունենալով Հայոսին, կազմում էին մի ընտանիք, որ նրանք բոլորը խօսում էին մի լեզու եւ այդ լեզուն հայերէն էր:

Եթէ չենք ուզում արհամարհել այս զրոյցները, որպէս անարժէք եւ մտացածին առասպելներ, ապա պէտք է ընդունենք, որ նրանք պատմական յայտնի շրջանի ոչ միայն դաղափարական որոնումների, այլ եւ իրական հասումների արձագանգ են:

Այդ շրջանը Բագրատունեաց դարն է: Բագրատունի կորովի գործիչներն էին, որ հարթեցին, պատրաստեցին այն հողը, որի վրայ իրաւ կարող էին բողբոջել կովկասեան եղբայրակցութեան սերմերը եւ նրանց ճայնատու եւ դաղափարախօս զրոյցները:

Սակայն, կրօնական եւ ֆէոդալական խրամատները, որ ինքնին բարերաստիկ չեն պետական խոշոր կազմակերպութեանց, դառնում են որոշ պայմաններում պայթուցիկ նիւթ ամեն մի հաւաքարար գործի համար: Բիւզանդ եւ Արաբ յաջոտիչ քաղաքականութիւնը բորբոքեց կրքերը,

խրախուսեց ինքնիշխանութեան անջատիչ տենչերը եւ ցրեց դարաւոր ճիգերի արդիւնքը, խափանելով գլուխ բերել քաղաքական մեծ չէնքը: Այն թագերը եւ կամ կիսաթագերը, որ ամիրապետները բաշխում էին Բագրատունի թէ այլ իշխաններին եւ կայսրներն ողջունում, իրապէս այլ խորհուրդ չունէին քան արգելել, խանգարել իսկական թագի երեւումը: Թագերը դարձան անջատ ուղիների գլխաքարեր:

Բաղրատունեաց փորձը՝ ընդգրկել համայն Կովկասը, ինչպէս մի մեծ ընտանիք, մի քաղաքական կենակցութեան շաղկապի մէջ, ներկայանում է մեզ որպէս մի խիզախում՝ դաղափարական լայնութեամբ անօրինակ միջնադարեան նեղսիրտ մթնոլորտում և կազմում է այս նշանաւոր տոհմի պատմական փառքը:

ՀԱՅ ՀԻՆ ՇԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ անդրանիկ համալսարանը հրատարակել է իր անդրանիկ «Գիտական տեղեկագիրը»:

Առիթը Հայաստանի խորհրդայնացման հնգամեակն է եւ տեղեկագիրը նուիրուած է հայ բանուոր-գիւղացիներին (իմա՛ բանուորներին եւ գիւղացիներին): Հրատարակութիւնը տօնական երեւոյթի հանգամանք ունի եւ օրուան պատշաճ յօդուածն է «Դիտողութիւններ հին Հայաստանի չինականների դրութեան մասին»: Հեղինակն է պ. Յակոբ Մանանդեան, Երեւանի համալսարանի պրոֆեսոր եւ իմ անձնական բարեկամը:

Յօդուածագիրը իրաւամբ գանգատւում է որ մեր անցեալը մնում է տակաւին մութ, «մանաւանդ հայոց պատմական կեանքի ներքին իրական կողմերը, նրա սոցիալ-տնտեսական ու քաղաքական առանձնայատուկ հիմնական ոյժերը»: Հետեւում է տխուր յայտարարութիւն, որ այդպիսի աշխատութիւններ չկան եւ որ իր յօդուածը նախապատրաստական աշխատանք է միայն, մի շարք դիտողութիւններ, որոնց նպատակն է պարզել «չինական դասի դրութեան հաւանական ընդհանուր գծերը մարզպանական Հայաստանում»:

Յօդուածագիրը յայտնում է, որ չինականների վիճակը «ամենադժուար ուսումնասիրելի խնդիրներից մէկն է», որ մատենագրական աղբիւրները յատկապէս այս մասին «լուռ ու մունջ» են: Այսպէս է խօսում յօդուածի ներածականում: Իսկ վերջը, ուսումնասիրութիւնը կատարելուց յետոյ, յայտարարում է, որ չինական դասի դրութիւնը «այնքան էլ մութ եւ անորոշ չէ, ինչպէս մինչեւ այժմ կարծուել է»: Ասել է թէ դժուարութիւնները հարթուել են, մութ խնդիրը լուսաւորուել:

Տեսնենք, ի՛նչ լոյս է բերում պ. Մանանդեանը չինական դասին: Առաջին միտքն այն է թէ հնում համայնական հողատիրութիւն է եղել Հայաստանում, Արշակունեաց շրջանում եւ նրանից յետոյ:

Սակայն իրաւամբ կարելի է խրտչել այս նորութիւնից: Հայաստանի երկու խոշոր հարեւան պետութիւնները, իրա-

նական արեւելքը եւ բիւզանդական արեւմուտքը, որոնց ազդեցութեան տակ կերտուած է հայ կեանքը, ծանօթ չեն բնաւ համայնական հողատիրութեան: Արեւելեան ֆէոդալականութիւնը դիտէ տոհմային հողատիրութիւն, բայց ոչ համայնական: Ինչ վերաբերում է Բիւզանդիային, մինչեւ վերջին ժամանակները արդարեւ ընդունուած կարծիք էր, որ համայնատիրական տնտեսութիւններ են եղել, բայց այժմ հերքուած է այս տեսութիւնը խնդրին նայող պատմական յիշատակարանների լուրջ քննութեամբ:

Այսպիսի պայմաններում ի՞նչ հիմ ունի պ. Մանանդեան համայնատիրական կարգեր որոնել Հայաստանում:

1. Բաժանումն ըստ մարդաթուի.

Խորենացին պատմում է, որ Վաղարշակ թագաւորը տոհմանեց որ միայն անդրանիկ որդին ապրէ իր մօտ արքունիքում, իսկ միւսները դնան բնակելու Հաշտենից դաւառը: Արտաւազդ թագաւորը նոյն նկատումով իր մօտ է պահում միայն երէց որդուն, իսկ միւսներին յատկացնում է Աղիովիտ եւ Ասբերանի դաւառները:

Տիրան արքայի ժամանակ Հաշտեանցիք նեղ դտնելով իրենց տոհմանները խնդրում են, որ ընդարձակէ իրենց ժառանգութիւնը: Թագաւորը հրամայում է, որ մի մասը դնայ Աղիովիտ եւ Ասբերանի, իրենց ազգակիցների մօտ: Սակայն վերջիններս արտնջում են, տոտրկելով որ իրենց հողն եւս պակաս է: Տիրանը վճռում է «ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունին հաւասար որոհել յինքեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթուի զտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկեալ ի դաւառն Աղիովիտի եւ Ասբերանոյ»[1]:

Ընդգծածս բառերն են այն դայթակղութեան քարը, ուր սայթաքել է պ. Մանանդեան:

«Հողերի հաւասար եւ ըստ մարդաթուի բաժանումը, որքան յայտնի է, համայնական հողատիրութեան որոշ կարգ է»,— կոչում է յօդուածագիրը:

Ճշմարիտն ասած, ինձ գոնէ յայտնի չէ եւ շատ տարօրինակ է լսել, որ հողի հաւասար բաժանումը նշան լինի համայնական կարգի: Բաժանման որեւէ եղանակ ինքնին չէ կարող յատկանիշ համարուել հողատիրութեան: Այն ինչ որ բնորոշում է հողատիրութիւնը, սեփականութեան իրաւունքն է ամենից առաջ: Որպէսզի հողը համայնական համարուի, պէտք է ցոյց տրուի, որ նրա իրաւատէրը համայնքն է: Իսկ բաժանման եղանակը համայնական արժէք կ'ունենայ միայն այն դէպքում, երբ նա ծագում է համայնքից որպէս արտայայտութիւն նրա իրաւունքի:

Արդ Խորենացու մօտ խօսքը համայնական հողի մասին չէ, այլ տոհմական, որ բնաւ չփոթելու չէ: Եւ հողի տնօրէնը համայնքը չէ, այլ թագաւորը, որ գործում է կամ վեհապետութեան եւ կամ անդրանիկութեան իրաւունքով:

Բացի սրանից, Խորենացու խօսքերն անդամ անճիշտ եւ կամ միակողմանի են ըմբռնուում պ. Մանանդեանի կողմից: Որպէսզի իր ենթադրութեան համար ապատ դաշտ պատրաստէ, նախ նա փորձում է հերքել իմ անձնական տեսութիւնս: Ուստի կուզէի այստեղից սկսել, որով եւ դիւրութիւն տուած կը լինենք ընթերցողին ունկնդիր մօտէն հետեւելու խնդրի էութեան:

Խորենացու խօսքը աշխատել ենք արժեցնել, ի թիւս ուրիշ ապացոյցների, բացատրելու համար սեփական կոչուած ազատութեան ծագումը: Մեր խորհրդածութիւնները միաժամանակ պարզում էին նաեւ սեփական կամ սեպհական բառի այժմեան նշանակութիւնը:

Մատենագիրները սեպուհ են կոչում հայ իշխանական տան բոլոր արու գաւակներին, բացի տան դլխաւորից, որ է նահապետ կամ նախարար: Երեքն էլ պարթեւիկ բառեր են: Սեպուհ, լրիւ ձեւը սեպուհր, է պարթեւ visapuhr, որի առաջին մասը նոյնն է ինչ որ լատին vicus 'դիւղ', յոյն οἶκος 'տուն', իսկ երկրորդը նշանակում է որդի: Ուրեմն սեպուհ նշանակում է բառացի տան, տոհմի որդի:

Նահապետ բառի ստուգաբանութիւնը եւս որոշ է գոնէ ինձ համար: Նահ համապատասխանում է պարսիկ naf բառին, հնագոյն ձեւն է napha, եւրոպական հաւասարակր հնչում է nabha, որից լատին, յոյն եւ դերման umblicus, omphalos, nabel բառերը: Բոլորի հիմնական միտքն է 'պորտ', փոխաբերաբար 'սերունդ, ցեղ': Նահապետ ասել է թէ նշանակում է բառացի 'ցեղապետ, տոհմապետ':

Հաւանօրէն նոյն նահ բառն է թագնուած եւ նախարարի մէջ, որի պարսիկ ձեւը թւում է թէ է Nahodar, եւ յիշւում է Ամմիան Մարցելինի մօտ որպէս յատուկ անուն: Թերեւս նախ բառի ազդեցութեամբ նահարարը դարձել է նախարար: Նշանակութիւնը՝ 'ցեղի, տան պահապան', դրեթէ նոյն ինչ որ նահապետ: Երկուսին փոխարինող զուտ հայկական բառն է տանուտէր:

1 Խորենացի. (Վենետիկ, 1865) Բ. կբ. էջ 140:

Հայ նախարարները մի մի տուն էին, տոհմ, եւ նրանց հողերը տոհմի անբաժանելի սեփականութիւն էր: Անմիջական տէրն ու տնօրէնը տան աւագ անդամն էր, նահապետը, տանուտէրը: Անդրանկութեան սկզբունքը համարւում էր անձեռնմխելի: Տան մնացեալ արու զաւակները կոչւում էին սեպուհ:

Նախարարական հողին իրաւական բնոյթ էր տալիս զինուորական ծառայութիւնը: Զօրահաւաքի սովորոյթը չկար հնում: Ամեն մի իշխանական տուն պարտաւոր էր որոշ թուով մարտիկ տալ: Զինուորական տեսակէտից շատ էլ ցանկալի չէր իշխանական հողերի բաժանումը մանր կտորների: Մի տուն, որ ի վիճակի էր մի քանի տասնեակ հեծեալ տալ, բաժան բաժան լինելով, կարող էր հասնել այնպիսի դրութեան, որ նրա մասերը առանձին առանձին անզօր կը լինէին անգամ մի մի ձիաւոր պահել: Երկրի պետին, հարկաւ, ձեռնտու չէին մեծամեծ տներ այնքան զօրեղ, որ ըսպառնային թագին, բայց բնաւ նպաստաւոր չէր նաեւ տների պառակտումը:

Սակայն, խօսքը այն մասին չէ, թէ ինչ էր պատճառը նախարարական իրաւակարգի կայունութեան եւ ի՞նչ նրա քայքայման: Փաստ է, որ սկզբում իշխանական տները կազմում էին մի մի միութիւն տանուտէրի իրաւասութեան ներքոյ, իսկ յետոյ միութիւնները քակւում են սեպուհների կեդրոնախոյս ձգտումների հետեւանքով: Սրանք գերադասում են դուրս գալ տոհմական շաղկապից, ստանալով իրենց հասանելի բաժինը: Սեպուհի բաժինը կոչւում է սեպուհական = սեպհական: Հետագայում այս բառը ստանում է այժմեան նշանակութիւնը, որ արդիւնք է սեպուհի եւ սեպհական բաժնի յարաբերութեան իրաւական բնոյթի:

Պէտք է նկատել, որ հնդիկ-եւրոպական լեզուները ընդհանուր բառ չունին սեփականութեան գաղափարը արտայայտելու համար: Ապրելով տոհմային կեանքով հնդիկ-եւրոպական ցեղը տակաւին անծանօթ է եղել սոյն հասկացողութեան: Միմիայն ցեղի բաժանումից յետոյ է, որ յառաջ է եկել սեփականութեան գաղափարը եւ ամեն ազգ մշակել է, յօրինել իւրովի բառ ըստ իւր կեանքի պայմանների եւ հասկացողութեան: Անգամ լատին եւ յոյն լեզուները չունին ընդհանուր արտայայտութիւն: Լատին proprius, որ ընդունուած է արդի եւրոպական լեզուներում, սղումն է propatrius բառի, որ է անդրհայրական: Ասել է թէ սեպհական է համարուած այն ինչ որ եղել է հօրից յառաջ, ուրեմն հասել է կամ մնացել է պապերից:

Յունարէնում ἴδιος ստուգաբանօրէն նշանակում է 'զատ, առանձին' եւ ստացել է սեփականի իմաստ:

Մեզանում եւս նման մտածութեամբ գործ էին ածուել թերեւս տոհմային սեփականութիւն արտայայտելու համար հայրենի, բուն, բնիկ բառերը:

Ագաթանգեղոսն ասում է՝ «զբուն եւ զձեր սեպհական Պահլաւն», Փարպեցին՝ «զբնիկ եւ զսեպհական տեղիս նախնեաց», «զբնիկ սեպհական կալուած ազգին Արշակունեաց»: Կարծես հին բնիկը մեկնւում է նոր սեպհականով:

Ագաթանգեղոսն ունի անգամ բնութիւն սեփականութեան իմաստով՝ «զբնութիւնն պարթեւական զձեր սեպհական (եւ ոչ սեփական, ինչպէս ունի Էջմիածնի հրատարակութիւնը. երկու ձեռագիր պահել են ստոյգ ուղղագրութիւնը) Պահլաւն ի ձեզ դարձուցից»[1]:

Փաւստոսն ասում է Ս. Ներսէսի մասին. «չրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն, զի հնգետասան գաւառ իբրեւ սեպհական ի բնմէ առանձինն առոյգի էր նոցա կարգեալ»:

Խօսքը եկեղեցու սեփականութեան մասին է եւ գծածս բառերը փորձեր են նոյն գաղափարը արտայայտելու, որոնցից վերջին երկուսը մօտենում են յունական ἴδιος ին:

Ագաթանգեղոս ասում է. «Ժողովուրդ ձեռական անուանեցան» (գլ. ՀԴ) ուր ձեռական նոյնանիշ է սեպհականի:

Ս. Գիրքը, որ ամենայն դէպքում մնում է լաւագոյն աղբիւրը բառաքննութեան համար, գործ է ածում սեպհական բառը ոչ յաճախ եւ այն տեղերում, ուր իմաստը վիճելի է նաեւ յունարէն եւ անգամ եբրայեցի բնագիրներում:

Միայն մի տեղ յոյն «բնակէ ինքն եւ որք ընդ նմա», οἱ παρ' αὐτοῦ հայր դարձնելով բաւականին ազատօրէն «բնակեցաւ սեպհական գնդաւն հանդերձ»[2], թւում է թէ, հասկանում է սեպհական այժմեան իմաստով:

Միւս դէպքերում սեպհական բառը համապատասխանում է յոյն περούσιος յայտնի դարձուածքում՝ «եղիջիք դուք ինձ ժողովուրդ սեպհական յամենայն ազգաց»[3]: Նաեւ «ետու քեզ զՄիկիմ սեպհական արտաքոյ եղբարց քոց»[4]. յոյնն ունի ἐξαίρετον ὑπερ τοὺς ἀδελφούς, այսինքն առաւել քան եղբայրներդ ունին:

Պետրոսի թղթում «սեպհական ժողովուրդ» յոյն λαὸς εἰς περιποίησιν է[5]:

1 Ագաթանգեղոս, էջ 20. հրատ. Էջմիածնի:
2 Ա. Մակաբ. ԺԳ, 53:
3 Ելք, ԺԲ, 5. Օրէնք, Է, 6. ԺԴ. 2 Ի Զ, 18. Տիտ. Բ, 14:
4 Ծննդոց, խբ, 22:
5 Ա. Պետր. Բ, 9:

Սեպհական ժողովուրդ չէ նշանակում Աստուծոյ սեպհականութիւն, այլ 'յատուկ, առանձին, միւս ազգերից զատ': Տակաւին հները, սկսած Ս. Հերոնիմից, դժուարանում էին ըմբռնել յոյն περούσιός եւ εἰς περιποίησιν նորալուր բառերի բուն իմաստը:

Եբրայեցերէն բնագիրն ունի segullah բառը, որ մասնաւոր գանձ, գոյք է նշանակում: Եւ այս իմաստը հանում են մեկնաբանները Ա. Մնաց. Իթ, 3, esti moi ho peripepoiemai chrusion kai argurion խօսքերից, ուր հրէական բնագրում նոյն segullah բառն է կարդացւում:

Դաւիթ մարգարէն ասում է, որ տաճարի շինութեան համար կը նուիրէ ոչ միայն հասարակութիւնից հաւաքած դրամը, այլ եւ իր անձնականը, «ինչ որ ինքը պատրաստել է իր համար», ուրեմն իր սեփականը: Հայ թարգմանիչը չի հասկացել նախադասութեան իմաստը. «եղեւ ինձ գորս նուիրեցիր տեառն ոսկի եւ արծաթ», բնաւ չէ տալիս յոյնի միտքը: Բնագրում խօսքը այն ոսկու եւ արծաթի մասին է, որ Դաւիթը դիպել պատրաստել է իր համար, մինչ հայը կարծում է, որ գոյքը պատրաստած է տիրոջ համար, ուստի յոյն բառը հայը թարգմանում է «նուիրեցի» եւ ուելացնում է տեառն բառը:

Եթէ թարգմանիչը լինէր այն անձը, որ թարգմանել է Մակաբայեցւոց գիրքը, պիտի ասէր՝ «է իմ սեպհական ոսկի եւ արծաթ»:

Հերոնիմը եբրայական segullah թարգմանում է pecularis: Լատիններէն peculium է կոչւում այն դրամը, որ հայրը նուիրում է որդուն կամ տէրը՝ ծառային. եւ ուրեմն pecularis է ամէն գոյք, որ կրում է peculiumի բնաւորութիւն: Դաւթի գոյքը, segullah, է peculiaris անհատական եւ զատ եւ ոչ հասարակաց եւ ընդհանուր: (Այսպիսով մօտենում է յոյն ἰδιωτῆին, որ հակադրւում է demosios 'հասարակաց' կամ koinos 'ընդհանուր' բառերին): Բայց եւ այնպէս ոչ յոյնը եւ ոչ հայը segullah չեն թարգմանել այն բառով, որ նշանակում է սեփական:

Յոյն ἰδιωτի դէմ ամենուրեք հայն ունի իւր մեր, ձեր դերանունները, երբեք սեփական, որ է իսկական իմաստը:

Հայ սեպհական= περούσιος =peculiaris առանձին երանգ ունի, նշանակելով այն ինչ որ զատ է, ուրոյն եւ ոչ նման ընդհանուրի:

Սեպհականը Ս. Գրքում իրապէս իր տեղն է գործածուած:

Տեսանք, որ սեպհական է այն բաժինը, որ զատուած է տանուտէրական ընդհանուր գոյքից, եւ որ չուտով նոյնանալու է սեփականութեան հետ:

Ղազար Փարպեցին պատմում է, որ Դենչապուհը հայ քահանաներին նահատակելուց յետոյ նրանց դիակների վրայ պահապան կարգեց ինը հոգի եւ նրանց թաւում երանելի Խուժիկին «որպէս զկարի սեպհականագոյն եւ պիտոյ իւրում հրամանի»:

Ինչ որ հրէից ժողովուրդն էր Եհովայի համար, նոյնն է Խուժիկը պարսիկ պաշտօնեայի աչքում: Ոչ Խուժիկն էր սեփականութիւն պարսկի եւ ոչ հրէաները՝ Աստուծոյ:

Փարպեցու մօտ բառը պահել է տակաւին սկզբնական երանգը, որպէս 'ուրոյն, բնտիր, բնտրեալագոյն'[1]:

Սեպուհների բաժինը այսպիսով ուրոյնութեան վրայից անցնում է սեփականութեան: Սեպուհների զատումը եւ տանձին տգնուական դաս կազմելը իրը սեպհական ազատութիւն, ապացոյց է մեր մտքի: Ոչ միայն դաղափարները, այլ եւ բառերը միանգամից չեն հասունանում, այլ պէտք ունին ժամանակի:

Սեպուհների անջատումը արդէն նշան է եւ հետեւանք նախարարական աւանդների քայքայման: Արշակունեաց անկումը վճռական մոմենտ էր, որին յաջորդող պայմանները միայն արագացնել կարող էին երէկի կազմալուծումը: Պիտի թառամէր մանաւանդ այն իրաւակարգը, որ գերազանցօրէն Արշակունի ծաղիկ էր:

Հինգերորդ եւ վեցերորդ դարերը համարել ենք սեպհական ազատութեան զարգացման շրջան: Մեզ ասարկում են, որ երեւոյթն աւելի հին է, քանի որ Փաւստոս յիշում է Մեհրուժան Արծրունու եւ Վահան Մամիկոնեանի սեպհական անները:

Հնութիւնը միշտ հնարաւոր է. հասարակական երեւոյթները մի դարնան չեն բուսնում եւ մի աշնան թարշամում: Բայց բերած օրինակը անյաջող է: Փաւստոսի գործը ե դարից յառաջ չէ. այնուհետեւ դաւառման իշխանները՝ կրթնած պարսկական ոյժի կարող էին պահանջել եւ այն, ինչ որ օրինական չէր համարւում երկրի սովորութիւնների տեսակէտից: Մասնակի յիշատակութիւնից շատ աւելի կարեւոր է այն հանգամանքը, որ Փաւստոս տակաւին չգիտէ սեպուհներին որպէս ուրոյն դաս: Նա որ սիրում է շարել՝ «նա-

1 Վրաց Կիւրեղ կաթողիկոսը Սմբատ Վրկանին ուղղած թղթում անուանում է նրան վասպուրականագոյն, որ սեպհականագոյնի հին ձեւն է: Ուխտանէս խորթ է գտել եւ փոխել է «պատուականագոյն»: Գիրք Թղթոց, էջ 170· Ուխտանէս, էջ 97:

խարարք, մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք» (Դ. 3) եւ անգամ սատրապք, ոչ մի անգամ չէ յիշում սրանց շարքին սեպուհք:

Մինչդեռ Փարպեցու մօտ տանուտէրների հետ միշտ հրապարակի վրայ են սեպուհները եւ այնքան ինքնուրոյն են թւում, որ ստորագրում են եւ կնքում քաղաքական դաշինք, ինչպէս երեւում է Վասակի դատից:

Միւս կողմից հաստատապէս գիտենք, որ Արեւմտեան Հայաստանում նախարարական հողերի բաժանում տան այր անդամների մէջ արդէն ընդունուած սովորոյթ էր Զ դարում: Այս մասին ճառում են յատկապէս Յուստինիանոսի նովելները 536 թուից: Պարսկական Հայաստանում նախարարական կարգը աւելի կայուն էր, դուցէ աւելի քիչ վտանգուած, քան Բիւզանդական բաժնում: Սակայն սեպուհների անկախութիւնը փաստ կարելի է համարել Զ դարում նաեւ Պարսկական բաժնի համար:

Եթէ պէտք կայ հասարակական պատմական երեւոյթները դնել ժամանակագրական թելի վրայ, սեպհական աղատութեան թելը ընկնում է Ե եւ Զ դարերի վրայ: Ասել է թէ այդ միջոցին է, որ սոյն երեւոյթը զարգացել, տիրացել է կեանքին: Այս է ընդհանրացման իմաստը:

Խորենացու ժամանակ սեպհական պայազատութիւնը շարունակում էր վէճերի եւ հակառակութեանց նիւթ լինել: Իբրեւ ապացոյց, որ Խորենացին քաջ ծանօթ էր քննածս հարցին, եւ ուրեմն նրա ժամանակ սեպուհների անջատումը տիրական երեւոյթ էր, յիշել ենք պատմահօր տեղեկութիւնը Հաշտեանքի եւ Աղբերան ու Աղիովիտի Արշակունիների վերաբերեալ: Կարեւոր ենք համարել այն, որ հայ պատմիչը հնարաւոր է գտնում հայրենական ստացուածքի բաժանումը տան զաւակների մէջ հաւասար եւ ըստ մարդաթուի:

Արշակունեաց տունը մի մեծ նախարարութիւն է. ինչ որ ընդունուած է նրանց մօտ, կարելի է ասել, հասարակաց է եւ բնորոշ նախարարական միջավայրի: Խորենացու ենթադրած բաժանումը ոչ այլ ինչ է եթէ ոչ սեպհական իրաւունքի արտայայտութիւն:

Մեր այս մեկնութիւնը պ. Մանանդեան համարում է վիճելի: Ինչո՞ւ. որովհետեւ հողի հաւասար բաժանումը «խիստ արտասովոր է եւ անօրինակ կալուածատէր ազնուական դասի համար», դատում է պ. Մանանդեան:

Պատմահօր խօսքերը սխալ է ըմբռնում պ. Մանանդեան: Այլ և կարծում է որ հողի հաւասար բաժանումը «հա-

մայնական հողատիրութեան որոշ կարգ է», եւ երկար պրոտոյտներից յետոյ գտնում է եւ այն միջավայրը, ուր գործում էր այդ կարգը: Դուրս է գալիս որ համայնատիրականները ոստանիկ կոչուած մարդիկ են եղել, եւ սրանց մի մասն էլ այս պատճառով ազնուականների շարքից հանում է եւ դարձնում չինական: Բայց ինչպէ՞ս է եղել, որ պատմահայրը գիւղական սովորոյթը վերագրել է ազնուական, այն էլ թագաւորական, տան:

Սրա պատասխանն էլ է գտել պ. Մանանդեան. Խորենացին որպէս թէ սխալուել է, ոստանիկներին Արշակունեաց սերունդ համարելով:

Մեղադրել մատենագրին նախ քան փորձել պատշաճ եւ բաւարար մեկնութիւն տալ նրա խօսքերին, յանձնարարելի մեթոդ չէ: Մարդաթիւ բառը, որ գայթակղութեան բուն քարն է, երկու կերպ կարելի է հասկանալ, համաձայն մարդ բառի կրկնակի նշանակութեան: Ոչ միայն մեր, այլեւ մեր հարեւան պարսիկ լեզուում, մարդ ասելով հասկացւում է սովորաբար այր մարդ. եւ ինչպէս երեւում է այս գոծածութիւնը հնուց է: Ս. Գրքում միայն մի անգամ է պատահում մարդաթիւ բառը իր լայն իմաստով[1]: Բայց նոյն Ս. Գիրքը յաճախ կրկնում է Թուոց գրքի առաջին գլխում. «առէք զհամար ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի, ըստ թուոց, ըստ գլխոց» եւ իսկոյն բացատրում է. «ամենայն արու ի քսանամենից եւ ի վեր»:

Քանի որ պ. Մանանդեանը իրաւամբ նկատում է որ ֆէոդալ ոգուն ընդդէմ է հողի բաժանումը ըստ չնչի, բնական է սոյն գիտութիւնը վերագրել եւ մեր պատմահօր, եւ մարդաթիւ հասկանալ ոչ ըստ չնչի իմաստով, այլ բառի միւս եւ մասնաւոր նշանակութեամբ, ըստ այր մարդկանց թուի:

Ըստ չնչի բաժանումը խոտելի է, որովհետեւ ֆէոդալ հողատիրութիւնը պարտաւորում է զինուորական ծառայութեան եւ հաշուի առնել կարող էր միայն զէնքի ընդունակ սեռը:

Հաշտենից եւ Աղիովիտի արքայազն գանգատաւորները, անշուշտ, կանայք չէին, այլ Արշակունի սեպուհները, որոնք միայն իրաւազօր էին հող պահանջելու: Թագաւորը հրամայում է եղած տոհմական հողերը բաժանել գանգատողների մէջ հաւասար:

Ռուսական օրէնքի տրամադրութեամբ մեր գիւղերը

1 Եղ, ԺԲ, 4:

եւս տեղ տեղ սովորութիւն էին արել պարբերաբար վերաքաժանել իրենց հողերը: Այսպիսի դիւղերում, որ անձամբ պիտենք, բաշխումը տեղի էր ունենում ըստ գլխի, որով հասկանում էին միմիայն այր մարդկանց: Քանի գլուխ է այս ինչ տունը, կամ քանի գլուխ հող ունի, նշանակում է քանի տղայ անդամ ունի տունը: Երբ ուզում են չունչ հասկանալ, ասում են՝ քանի բերան ուտող ունի:

Այսպիսով հին եւ նոր լեզուն իրաւունք է տալիս պատմահօր մարդաթիւը հասկանալ իրական իմաստով: Պատմահայրը սրանով կը մնայ ազատ ամբաստանութիւնից, խախտած չլինելով «կալուածատէր ազնուական դասի» սեզբունքները:

Բնական ուղին թողած՝ պ. Մանանդեան ընկնում է ենթադրութիւնների աշխարհը եւ «կարելի»ների վրայից սահելով հասնում մինչեւ ոստանիկները, որպէսզի նրանց անցնէ, ինչպէս յիշեցինք, «մարդաթուի» մէջ: Նախապէս հերքում է մեր տեսութիւնը ոստանիկ կոչուած ազատների մասին եւ տալիս նորալուր մեկնութիւն եւ ահա ինչպէս:

2· Ոստան եւ Ոստանիկ

Խորենացու օրով ոստանիկ մարդիկ վաղուց իջել անհետացել էին պատմութիւնից: Նա առաջին բանասէրն է, որ հետաքրքրուել է նրանց հարցով եւ կամեցել է որոշել, թէ ինչ էին ոստանիկ կոչուած ազատները:

Քաղաքական եւ հասարակական հաստատութիւնների հայրը, նրա կարծիքով, միշտ նոյն Վաղարշակն է, Արշակունեաց թագաւորութեան հիմնադիրը: Նա է, որ կարգել է չորս պահապան գունդ արքունի դրան Հայկեան թագաւորների զարմից եւ կոչել ոստան: Հետագայում Պարսից թագաւորները կազմել են նման գնդեր եւ դարձեալ անուանել ոստան: Արդեօք հին գնդերը սպառե՞լ էին թէ բռնի ոչնչացուել Պարսիկների ձեռքով պատմահայրը չգիտէ. պնդում է միայն այն, որ Պարսիկները նրանց տեղը նոր գնդեր են կազմել արքունի անուամբ: Մի ուրիշ առթիւ հաղորդում է, որ Տիգրանակերտի կողմերում եւս ոստան կոչուած ազատութիւն կայ, որ ծագում է Տիգրանուհու սերնդից:

Խորենացին այս խնդրում լրիւ հետախոյզ է, եւ նրա աղբիւրները յայտնի են, ուստի կարելի է նրան հանդիսատ թողնել եւ դիմել անմիջական ակունքին:

Ոստանի եւ ոստանիկ ազատների մասին խօսողներն են Ղազար, Եղիշէ եւ Փաւստոս: Համեմատելով սրանց եւ այլուսաց յայտնի տեղեկութիւնները, պարզել ենք ոստանի յաջորդական նշանակութիւնները, մերկացնելով նրա ստուգաբանական ծագումը: Ոստան նշանակում է սկզբնապէս շեմ, դուռն, յետոյ արքունիք, ապա արքունի կալուած:

Այս մեկնութիւնը կասկածելի է համարում պ. Մանանդեան եւ ապաւինում է Հիւբշմանին, որի կարծիքը շատ աւելի հիմնաւոր եւ համոզիչ է դտնում: Գերման հայագէտի բացատրութեամբ ոստան են անուանուել Դ դարում այն երկիրները կամ քաղաքները, որ Արշակունի թագաւորի (կամ թագաւորական տան որեւէ իշխանի) իշխանութեան տակ են դտնուել: Հիւբշման ոչ մի ստուգաբանութիւն չէ առաջարկում, այլ տալիս է լոկ ոստանի նկարագրական մեկնութիւնը: Գերման գիտնականի եւ մեր մէջ հակասութիւն չկայ: Նրա մեկնութիւնը լրիւ չէ եւ չէ ընդգրկում այն բոլոր նշանակութիւնները, որ տալիս են մատենագիրները:

Այս բանը քաջ պիտի դիտենար մանաւանդ պ. Մանանդեանը, եթէ իրօք «հաւաքած ունի մատենագրական բոլոր վկայութիւնները ոստանի մասին»:

Ահա Փարպեցին ոստան է անուանում Ապար աշխարհի Վրկան քաղաքը, որ Արշակունի կալուած չէ, հարկաւ, եւ անուանում է կրկին անդամ: Վեհ Դենչապուհր հայ քահանաներին հանում է Նիւշապուհից եւ տանում Ռեւան նահատակելու, հրամայելով, որ հայ չթողնեն քաղաքից դուրս դալ մինչեւ «ցժամանակ մտանելոյ ամենայն զօրացն արքունի յոստան»: Եւ երբ որ թագաւորը մտնում է ըստ կարգելոյ ժամանակին յոստանն ի Վրկան, իրաւունք է տրւում Հայերին երթեւեկելու[1]:

Միհրան-Գուշնասպ վկայի հայրը Բաբայ ostandar էր Մծբնի, ինչպէս երեւում է նրա վկայաբանութիւնից[2]: Ակնյ է թէ այստեղ եւս մի ոստան կայ, որի պետը կոչւում է ոստանդար:

Այլեւս ասորի յիշատակարանները ոստան են անուանում Արզն քաղաքը, Աղձնեաց աշխարհի կենդրոնը, եւ նրա շրջանը՝ տուն ոստանի: Այստեղի եպիսկոպոսը ներկայ էր 554 թուի Ժողովին[3]:

Ասել, որ այս վայրերը ոստան էին կոչւում, որովհետեւ արքունի կալուած էին՝ Արշակունի թէ Սասանեան, դժուար թէ հնարաւոր է:

---

1 Փարպեցի, էջ 94· հրատ· Էջմիածնի·
2 **Hofmann,** Syrische Auszüge, p. 93.
3 **Chabot,** Synodicon.

Գիտենք նաեւ, որ ոչ միայն Արշակունի թագաւորները, այլ միւս իշխանները իրենց ոստանն ունէին:

Խորենացին Երուանդաշատը Կամսարականների ոստան է կոչում: Ղեւոնդի համար Դարոյնքն է ոստան Բագրատունիների: Ռշտունեաց ոստանը կանգուն է ցարդ: Ադամակերտը Արծրունիների ոստան է ըստ Փարպեցու, եւայլն:

Այս բոլորը չեն զետեղւում ոստանի իբր արքունի կալուած նշանակութեան մէջ:

Եթէ ընդունէինք այդ նեղ իմաստը անհասկանալի կը մնար Փաւստոսի ոստան արքունի դարձուածը, որ գործ է ածում Անգեղ տան համար: Արքունի մակդիրը ինքնին վկայում է որ կայ եւ ուրիշ կարգի ոստան, որը արքունի չէ:

Արշակ թագաւորը կոտորում է Կամսարականներին եւ «զգաւառսն յոստան ունէր»:

Տարօրինակ թիւրիմացութեամբ պ. Մանանդեան այս, ինչպէս եւ «ոստան արքունի» ասացուածքը, համարում է նպաստաւոր Հիւբշմանի եւ ընդդէմ մեր տեսութեան:

Փաւստոսը Պապի համար ասում է որ եկեղեցու հողը «հատանէր յարքունիս»: Ղազար Փարպեցու մօտ Պարսից թագաւորը հրամայում է կաթողիկոսական տունը «յարքունիս ունել»:

Նոյնանիշ արտայայտութիւններ են, ուր ոստանը համազօր է արքունիքին:

Եթէ ոստանը միայն արքունի կալուած լինէր, պէտք էր ասել «զգաւառսն ոստան առնէր» եւ ոչ «յոստան ունէր»: Լեզուական նրբութիւն է որ պէտք չէ անտես առնել:

Անհարթութիւնները վերանում են, գտնելով իրենց լուծումը մեր առաջարկած ստուգաբանութեան մէջ: Նիւթերի բանասիրական քննութիւնը թելադրում է, որ ոստան նշանակում է արքունիք, ապա արքունի կալուած: Իսկ լեզուագիտական որոնումը բերում է այն հետեւանքին, որ սկզբնական նշանակութիւնն է չեմք:

Պ. Մանանդեան յայտնում է, որ մեր ստուգաբանութիւնը ոչ մի հիմք չունի եւ որ մատենագրութեան մէջ չի գտել եւ ոչ մի հետք, որ արդարացնէր մեր մեկնութիւնը: Առանց հիմքի ուրիշ հիմքի դէմ խօսել, անզգուշութիւն է:

Հայ ոստան բառը համարել ենք իրանական փոխառութիւն եւ կարծում ենք, որ նոյնն է, ինչ որ պարսիկ astan, որ ըստ Ջոնսոնի ընտիր բառգրքի նշանակում է. athreshold, aking court, Royal palace:

Ճիշտ այն նշանակութիւնները, որ ունի մեր ոստանը: Պարսիկ astan գրութիւնը, այսինքն, սկզբի a չպիտի շփոթեցնէ ընթերցողին: Շիտակ ընթերցումն է ostan: Յայտնի ուստա 'վարպետ' բառը գրւում է պարսկերէն asta եւ astad եւ կարդացւում է osta եւ usta:

Վուլլերս եւս գիտէ astan բառը որպէս locus dormiendi կամ quiescendi, այսինքն ննջելու կամ հանգչելու տեղ եւ համարում է ծագած ust բառից, որ է ազդը, որով ustan իբրեւ 'a supino cubitu derivata': Ստուգաբանութիւնը թէեւ կասկածելի է, բայց կարեւոր է այնու, որ astan հանելով ustից հաստատում է նոյն բառի ustan հնչիւնը:

Նոյնը վկայում է մանաւանդ ասորի austn գրութիւնը, որ եւ հիմ է տալիս բառի ստուգաբանական վերլուծման: Հաւանօրէն stana 'տեղ' բառն է սկզբից ածանցուած մի մասնիկով, մի նախդիր, թերեւս au, avi, որ շաղկապուելով stana յայտնի բառի հետ, տալիս է նրան 'մուտքի, շեմի, դրան' իմաստ:

Պարսիկ astan բառը ոչ միայն 'սեամ, դուռն' է նշանակում, այլ եւ 'արքայական դուռն': Այս իմաստը եւ գործածութիւնը պահուել է անգամ օսմանեան լեզուի մէջ: Բարձրագոյն դուռը կոչւում էր բարձր ոճով astan կամ astan i saadet եւ նման ծաղկուն մակդիրներով: Այս մասին վկայում են դարձեալ նոյն Ջոնսոնը եւ ուրիշ բառգրքեր:

Ակներեւ է, որ բառս Իրանից է անցել Օսմանեան դուռը: Ասել է թէ ատենով կենդանի խօսք է եղել Իրանում եւ նշանակել է նաեւ, կամ առաւելապէս, արքայական եւ իշխանական արքունիք:

Իրանից անցել է Հայերին ոստան հարազատ հնչիւնով եւ նշանակել է արքունի դուռն:

Պ. Մանանդեան առնուազն անզգոյշ է, երբ յայտարարում է, որ հայ մատենագիրները քրքրելով, հետք անգամ չէ գտել, որ ոստան նշանակէր դուռն:

Մեր այն աշխատութեան մէջ, որ քննադատում է պ. Մանանդեանը, բերել ենք զինուորական կոչուած գահնամակը, հետաքրքրական գործ, հայ զինուորական ոյժերին նայող: Այնտեղ նշանակուած է, թէ որ նախարարական տունը որքան հեծեալ ունէր: Վերջում կարդում ենք. «եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգաւք յդ-ից հազարաց, թող զսպասաւորս դրանն արքունի որ է ոստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի, եւ մարդպետական որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ դանձուցն. և ընդ ամենայնն թիւ զօրացն Հայոց որ է հարիւր եւ քսան հազարաց»:

Ահա մի կարեւոր վկայութիւն, որ ոստանն է արքունի դուռն:

Ցիշատակարանը որոշում է երեք տեսակի զօրք նախարարական, թուով 84 հազար, սպասաւորներ դրանն արքունի որ է ոստանդ, որոնք պատերազմ էին ելնում թագաւորի հետ, ասել է թէ արքայական զօրք, եւ վերջապէս մարդպետական կամ թագուհու պահապան զօրք: Խորենացին ծանօթ է եղել այս յիշատակարանին եւ այդ մասին պարագայօրէն խօսած ենք Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում գործիս մէջ:

Հարկ է նշանակել, որ որ է ոստանդ վերաբերում է նախընթաց դրանն արքունի խօսքերին եւ ոչ թէ սպասաւորներին, որոնց նայում է որ է ելանէին եւայլն նախադասութիւնը:

Այսպիսով մեր մեկնութիւնը հաստատւում է ոչ միայն ստուգաբանօրէն, այլեւ մատենագրական նեցուկով, հակառակ պ. Մանանդեանի յայտարարութեան:

Ոստան բառի տեսակ տեսակ կիրառումները գտնում են իրենց բանալին: Ոստան կարող էր լինել եւ Վրկանում եւ Մծբնում, այլ եւ Խորասանի և Բաղդադի կողմերում — այս մասին եւս կան տեղեկութիւններ —, ինչպէս եւ Հայաստանի ոչ միայն թագաւորական, այլ եւ ամեն մի իշխանական նստավայր կարող էր ոստան կոչուել: Ասորի austan իրաւամբ Շաբօ թարգմանում է residence de la dynastie:

Հասկանալի է դառնում եւ «յոստան ունել» ասացուածքը որպէս «յարքունիս ունել»:

Վերջապէս, Արշակունիների արքունիքն ու աթոռանիստը, դուցէ եւ կալուածը համարւում է ոստան par excellence:

Անցնենք ոստանիկին, որի կապը ոստանի հետ անուրանալի է: Պարսկական ձեւ է, որի հայկականն է ոստանեայ, որ պատահում է Փարպեցու մօտ: Ոստանիկ ասել է նրանք են, որ ծագում են արքունի ոստանից: Բառացի՝ դրանիկ, իսկ իրական բովանդակութիւնը ի՞նչ է:

Փաւստոսին ծանօթ է ոստան, բայց ոչ ոստանիկ: Փարպեցին եւ Եղիշէն են, որ գիտեն եւ յաճախ յիշում են ոստանիկ ազատներին:

Փարպեցու ոստանիկի փոխարէն Եղիշէն ունի ոստանիկ յարքունի տանէ: Կամ առանց ոստանիկի, միայն յարքունի տանէ, երբ խօսքը այրուձիոյ կամ զօրքի մասին է:

Փաւստոսի լռութիւնը պատահական չէ: Հաւանական է, որ ոստանիկ ազատութիւն կամ աւելի ճիշտ ոստանիկ կոչումը որոշ իմաստ է ստանում Արշակունեաց թագի անկումից յետոյ:

Խորհրդաւոր է նաեւ Եղիշէի յաւելումը՝ յարքունի տանէ, որ չէ խուսափել Խորենացու դիտող աչքից:

Արդարեւ արքունի տունը ընկած էր, ինչո՞ւ պէտք է նրա անունը կրէին որոշ կարգի ազատներ եւ նրանց այրուձին: Պատմահայրը ստիպուած է ենթադրել, որ թերեւս տարբերութիւն կար հին ոստանիկ գնդերի եւ նոր արքունի կոչուածների միջեւ եւ թէ վերջինս գուցէ կազմուած է Պարսից կողմից:

Տիգրանակերտի ոստան ազատութիւնը, որի մասին խօսում է Խորենացին, արձագանգ է Փաւստոսի ցուցման թէ Անգեղ տունը Արշակունի ոստան էր: Այծնի ոստան կոչումը եւս կարող էր ներշնչել նոյն միտքը:

Ոստանիկ համարել ենք հաւաքական անուն Արշակունիների ժառանգորդների բառի լայն նշանակութեամբ, հաշուելով ոչ միայն Արշակունի սեպուհները այլ եւ արքունիքի եւ թագի բոլոր պաշտօնէութիւնը, նմանապէս եւ այն անձինք, որ ազատութիւն եւ կալուած էին ստացել Արշակունի թագից առանձին ծառայութեան համար եւ սերտօրէն կապուած էին նրան: Սրանք էին պարգեւական կոչուած հողերի տէրերը: Արշակի դրան 900 բարձ է համարում Փաւստոս: Ճիշտ է, որ Սասանեան Գահնամակը 600 բարձ ունէր, բայց Խոսրով Փարուէզի ժամանակ աւելի քան 3000 այր ոսպասաւոր կար դրան: Սասանեանների պալատական եւ արքունի պաշտօնէութիւնը վայելում էր ազատներին յատուկ արտօնութիւն:

Նոյնը պէտք է ենթադրել եւ Պարթեւեան արքունիքի համար, ուրեմն եւ հայ Արշակունիների: Սպասաւորները եւ պաշտօնեաները պիտի կազմէին բուն դրանիկների կամ ոստանիկների դասը:

Արտաշէսի անկումով Արշակունի ցեղը չանհետացաւ միանգամից: Բիւզանդական Հայաստանում փայլուն ներկայացուցիչներ ունէին քաղաքական ասպարէզում տակաւին Զ դարում, ինչպէս Յոհան և Արտաւան Արշակունիք, որ մասնակից էին կայսրութեան դէմ կազմակերպուած ապստամբութեան:

Անտարակոյս պարսկական բաժնում եւս յարատեւեցին նրանց շառաւիղները: Փարպեցին երկու ոստանիկ մարդու անուն է տալիս՝ Զանդաղան յոստանեայ տանէն և Պապ Արտակունեաց, որդի Բարոցի, այր ոստանիկ: Արդեօ՞ք այս Արտակունիք Պապ անունը չեն ժառանգել Արշակունիներից, որպէս հեռաւոր արենակից կամ մերձաւոր թագին, նման

Զիւնական, Վարաժնունի մանր տների, որ հաստատուած էին Արշակունի հողերի վրայ:

Կամենալով պարզել ոստանիկի բովանդակութիւնը, կարծել ենք որ երեք կարգի մարդիկ, արենակիցներ, պաշտօնեաներ եւ պարգեւականներ, կարող էին հաւասարապէս կոչուել ոստանիկ, որպէս ընկած թագի մերձաւորներ այս կամ այն մտքով:

Ռուսաց մօտ ազնուականութիւն նշանակող բառը ծագում է դուռն բառից, dvorianin, dvorianstvo նշանակում է 'դրանիկ, դրանկութիւն':

Ոստանիկների իրաւական դրութիւնը համեմատել ենք սեպուհներին, ասելով, որ նրանք ընկած թագի նկատմամբ նոյնն էին ինչ որ սեպուհները նախարարների հանդէպ:

Այս առթիւ պ. Մանանդեան վերագրում է մեզ այն միտքը, իբրեւ թէ սեպուհ անունը յատուկ ենք համարում միմիայն նախարարական ընտանիքներին, եւ ոչ նաեւ թագաւորական տան եւ նշանակում է անդամ գրքիս էջը 451:

Եթէ բաց անենք այդ էջը, կը տեսնենք, որ պ. Մանանդեան ուշադրութեամբ չէ կարդացել ինչ որ շտապում է հերքելու: Կոչ արած տեղը խօսքս այն մասին է թէ տոհմային կենցաղը երբ փոխանցւում է ֆէոդալականի, ի՞նչ փոփոխութիւն են կրում տոհմային տերմինները: Այն բառերը, որ սկզբում նշանակում էին ընդհանրապէս տոհմի զաւակներ, պահում են սովորական իմաստը, իսկ մի քանիսը, օրինակ սեպուհ դառնում է յատուկ իշխանական տներին:

Այստեղ հակադրւում են ոչ թէ իշխանական եւ թագաւորական, այլ իշխանական եւ հասարակ ընտանիքները: Ասել է թէ գիւղացու որդին չի կոչւում սեպուհ, այլ իշխանի, եւ ոչ թէ իշխանի որդին սեպուհ է, ինչպէս պ. Մանանդեան է թիւրաբանել, իսկ թագաւորինը չէ սեպուհ:

Իր հերքումներով պ. Մանանդեան ուղիները հարթուած է համարում, որպէսզի վերջապէս աւետէ մեզ իր նոր խօսքը, վիճելի խնդրի վերաբերեալ:

Ոստանիկները, պ. Մանանդեանի կարծիքով, թագաւորական ծագում չունին: Խորենացին սխալուել է նրանց թագաւորաղն համարելով: Ոստանը արքունիքի հետ կապ չունի: Ոստան է կոչւում արքունի հողը, ուրեմն Եղիշէի 'ոստանիկ յարքունի տանէ' հասկանալու է աշխարհագրական մտքով եւ ոչ տոհմային:

Ասել է թէ ոստանիկները այն մահկանացուներն էին որ ապրում էին թագաւորի հողերի վրայ: Սրանք գործ չունին ո՛չ թագաւորի, ոչ սեպուհների եւ ոչ նախարարների

հետ: Ապա ի՞նչ են: Չէ՞ որ ֆէոդալական դար էր եւ դին ունէր միայն արիւնը, ազնուականութիւնը, իսկ ազատ դասի մէջ մուտք չէին կարող ունենալ բոլոր այն մարդիկ, որ ոչ թագաւորական են, ոչ նախարար, ոչ սեպուհ:

Փակելով հնարաւորութեան դռները պ. Մանանդեան ուրիշ ելք չէ գտնում քան մի սոսկալի թռիչք անել դէպի հեռաւոր անցեալի մեծութիւնները: Նա, որ այնքան սիրում է մատենագրական տեղեկութիւնները, յանկարծ գիր եւ գիրք մի կողմ է նետում եւ սլանում անդիր դարերի վրայից մինչեւ Հայկեան ժամանակները: Եւ ահա ինչ է բարբառում:

«Ոստանը կամ արքունի երկիրը Հայաստանի տանուտիրական բուն այն չրջանն էր, ուր գլխաւորապէս հաստատուած պիտի լինէր հնդկա-եւրոպական եկւոր եւ տիրող ցեղը եւ հիմնած քաղաքական ամենանշանաւոր իր կենդրոնները: Եթէ այդպէս է, չե՞նք կարող արդեօք ենթադրել որ ոստանիկ դասը մեծ մասամբ բաղկացած պիտի լինէր հին այս տիրող ցեղի հատուածներից: Չէ՞ որ Հայկ նահապետը, որի սերունդներից, Խորենացու կարծիքով, ծագել է ոստան ազատութիւնը, ոչ թէ իրօք թագաւոր է եղել, այլ առասպելական մի հսկայ, որը դառել է հայազգի անուանադիր հերոսը եւ նախահայրը»:

Այս բանաստեղծութիւնից յետոյ պ. Մանանդեան միանգամայն վստահելի է համարում Խորենացու վկայութիւնը, որ Պարսիկները ոչնչացրին հին ռազմիկ դասը եւ նրա տեղ ստեղծեցին հլու արքունի գունդ:

Տեսանք, որ Խորենացու խօսքերը այլ բան չեն, եթէ ոչ բանաստէրի փորձ մեկնելու Փարպեցու եւ Եղիշէի տեղեկութիւնները:

Ընթերցողը սակայն սպասում է գիտենալ, ի՞նչ էր այդ ոստանիկ կոչուած ռազմիկ դասը, ինչո՞ւ էր նա ազատ եւ ի՛նչով էր ազատ: Այդքան դիմացկուն քաջարի դասը ի՞նչպէս է որ նախարարական աթոռներ չէ դրաւել:

Մեր քննադատի ցանկութիւնն է, որ նրանք ազատ լինին, բայց չինական: «Ընդունելով որ ոստանիկ են անուանուել Արշակունեաց բուն երկրի ազատները, որոնցից կազմուած գունդն անուանուել է արքունի կամ յարքունի տունէ, դժբախտաբար, աղբիւրների վկայութիւնից չի որոշւում թէ արդեօք այդ ոստանիկ ազատների դասին չե՞ն պատկանել նաեւ ազատ գիւղացիներ, որոնք կարող էին գոյութիւն ունեցած լինել հին Հայաստանում»: Այս դէպքում «հաւասար եւ ըստ մարդաթուի հողաբաժանումը կարող էր վերաբերուել

ոստանիկներին, եթէ միայն գանուէր մատենագրական աղբիւրների մէջ հաստատուն որեւէ ցուցում կամ ակնարկ»:

Թւում է, թէ տարաժամ է յիշել մատենագրական աղբիւրներ, երբ բանասէրի միտքն այդքան հեռու է դնացել մատենագրութիւնից:

3. Հող երդոյ եւ վիճակ

Պ. Մանանդեան կարծում է որ 'Հող երդոյ եւ վիճակ' տեքնիկ տերմիններ են:

Ագաթանգեղոսի ասելով, Տրդատը եկեղեցուն հող բաշխեց: Փաւստոս վկայում է որ Պապ թագաւորը եկեղեցական հողերի մեծագոյն մասը կորեց:

Համեմատելով երկու մատենագիրների վկայութիւնը, պ. Մանանդեան գտնում է որ սրանք միմեանցից անկախ են այս կէտում, որ նրանց տեղեկութիւնը հաւասարի է և սոյդ, և որ Ագաթանգեղոսի վկայութիւնը, որ աւելի լրիւ է, համարելու է նաեւ աւելի ուղիղ:

Ասել, որ երկու մատենագիրները անկախ են միմեանցից, կասկածելի է: Ասել, որ Ագաթանգեղոսն աւելի ուղղախօս է քան Փաւստոսը, եւս տուել կասկածելի է: Եւ պնդել, որ նրանց տեղեկութիւնը պէտք է ընդունել իբրեւ սոյդ, միանգամայն անընդունելի է:

Երբ Ագաթանգեղոս եւ Փաւստոս բախում են եւ կանգնած են դատի առաջ, Փաւստոսն է միշտ արդար եւ Ագաթանգեղոս ամբաստանեալ եւ որքան «ընդարձակ» ճառէ, նոյնքան մեղաւոր է:

Այս կէտում Ագաթանգեղոսի ապրիւրը եւ ներշնչողը Փաւստոսն է:

Պատմականօրէն անընդունելի է որ Լուսաւորիչ կարեւոր եկեղեցիներ չինել «յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի չէնս, ի գիւղս եւ յապարակս»: Լոկ բառեր են, ճարտասանութիւն, զուրկ իրական բովանդակութիւնից: Հաղար հինգ հարիւր տարի անցնելուց յետոյ էլ Հայաստանում կան գիւղեր, որ եկեղեցի չունին տակաւին:

Բնաւ հաւատի չի կարելի համարել որ Տրդատ բոլոր եկեղեցիներին չորս չորս հող երդոյ տար ազարակներում, եւ եօթն եօթն՝ աւաններում: Հայ եկեղեցու հիմնադիրը առաջին քրիստոնեայ տաճարները կանգնեց հին սրբավայրերի աւերակների վրայ: Բաւական էր, որ նրանց դոյքը հասնէր եկեղեցիներին, եւ նոր հողեր տալու պէտք չէր ունենայ բարեպաշտ թագաւորը:

Այս տեղեկութիւնը Լուսաւորչի կենսագիրը պարտական է Փաւստոսին:

Պապ թագաւորին սուացնելու նպատակով, ինչպէս եւ Ներսէսին գովաբանելու, Փաւստոսը դիմում է Տրդատի հեղինակութեան: Պապը «յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, ասում է Փաւստոս, եւ զերկուսն միայն թողոյր երկուս հողս եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ դիւղ մի երէց և սարկաւագ և դայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւագացն»:

Ի՞նչ է այս եօթն կամ հինգն կամ երկու հողը:

Հայոց լեզուի մէջ հողաչափութեան յատուկ բառեր կան, ինչպէս արդու, դրիւ, օրավար, լուծ, կորի, որ պատմագիրը կարող էր գործ ածել տարատեսակ դարձուածքից խուսափելու համար: Հեղինակը գերադասել է անորոշութիւնը:

Ագաթանգեղոս աւելացնում է «երդոյ» բառը, «չորս հողս երդոյ», «եօթն հողս երդոյ»: Արդեօ՞ք այսու վերանում է անորոշութիւնը:

Պ. Մանանդեան կարծում է որ «հող երդոյ» յատուկ հողաբաժին է որ տրւում էր «երդերին, այսինքն տներին»:

Դժբախտաբար, լեզուական նրբութիւնները սպրտում են արդոյ բանասէրի աչքից: Եթէ նրա յայտնած միտքը ճըշմարիտ լինէր եւ երդ նշանակէր որոշ մակարդակի հող, պէտք էր ասել 'երդ հողոյ', ինչպէս ասում ենք մի տուն հող:

Ոչ մի հիմ չկայ կարծելու, որ երդ ունեցել է նման նշանակութիւն: Երդերը հաւասար եւ որոշակի մեծութիւններ չեն, որ նրանց յատկացրած հողերը հաւասարամեծ լինեն:

Սակայն, պ. Մանանդեանին մոլորեցրել է այն հանգամանքը որ յունարէն թարգմանութեան մէջ Ագաթանգեղոսի հող երդոյ դարձրած է arouras: Ասել է թէ հող երդոյ յատուկ հողաբաժին է հաւասար aroura-ի: Բայց յոյն արուրա կամ լատին jugerum, որ իրօք հողաչափ է, մեծ բան չէ եւ անում է մօտ քառորդ հեկտար, գրեթէ նոյնչափ դեսիատին[1]:

Այս հաշուով գիւղական երէցը Տրդատի շնորհիւ պիտի ստանար ոչ աւելի քան մի դեսիատին հող, իսկ Պապի կրճա-

1 Հերոդոտ II, 168. յիշում է արուրա որպէս Եգիպտոսում ընդունուած չափ, հաւասար հարիւր քառակուսի կանգուն տարածութեան: Կանգունը մէկուկէս ոտ է եւ ոտը՝ 30 սանտիմետր, ուրեմն հարիւր կանգուն՝ 45 մետր: Եգիպտոս արքայական կանգուն համարում էր մօտ 50 մետր: Իսկ jugerium, ըստ Պլինի Բնակ. Պատմ. 18,3 մի ուղղանկիւն տարածութիւն է, 240 եւ 120 ոտ կողերով:

տումից յետոյ մի քառորդ դեսիատին: Մեծ առատաձեռնութիւն չէր բարեպաշտ Տրդատ թագաւորի կողմից, իսկ Պապը, որքան եւ չար, չէր կարող կարծել որ քառորդ հեկտարով կարելի է տուն պահել:

Պէտք է ընդունել հետեւապէս որ հայ թարգմանը գործ է ածել արորա ոչ իբրեւ հողաչափ, այլ բառի բուն իմաստով որ է հող ընդհանրապէս վարած թէ վարելի: Պ. Մանանդեանի մեկնութեան միակ հիմը ընկնում է:

Ագաթանգեղոսը, ինչպէս ասացինք, ներկայ դէպքում կախուած է Փաւստոսից եւ աւելի բան չէ ասում քան իր աղբիւրը:

Փաւստոս ասում է որ Պապը եկեղեցու հողը կրճատեց եւ թողեց ամեն մի գիւղում երկուական հող, երկու հոգի, մի երէց եւ մի սարկաւագ, պահելու համար, որով ամեն մէկին ընկնում է մի հող: Երէց եւ սարկաւագ երկու հոգի չեն, երկու տուն են, երկու երդ: Երկու երդը երկու հող է ստանում Պապից. ստացած հողը, ուրեմն, կարելի է կոչել հող երդոյ: Տրդատը աւելի աստուածապաշտ էր քան Պապը, ուստի նրան Ագաթանգեղոս վերագրում է երկու անգամ աւելի հող քան Փաւստոսը՝ Պապին, որ է «չորս հողս երդոյ»: Իսկ Փաւստոսի «եօթն հող» մեկնում է այն մտքով որ այդ աւանների քահանայութեան բաժինն էր:

Ագաթանգեղոս ոչնչով չի խանգարում Փաւստոսի անորոշութիւնը: Պատասխանատուն մնում է ինքը Փաւստոս: Ի՞նչ է նշանակում այդ անորոշութիւնը:

Պապը ոչ միայն հողն է կարճում, այլ եւ «զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւագացն», այսինքն՝ եղած հողն էր ծանրաբեռնում նրանով, որ երէցների եւ սարկաւագների որդիներին 'ծառայութեան' էր առնում: Ծառայութիւն այստեղ նշանակ է հարկաւորութեան:

Այս տողերը տանում են մեզ դէպի արտաքին աղբիւր եւ կասկածելի են դարձնում Պապին վերագրուած միջոցները եկեղեցական հողերի դէմ:

Հարկաւոր բացատրութիւնը տալու էինք Փաւստոս որպէս պատմագիր յօդուածի մէջ, որի մի մասը միայն լոյս տեսաւ Պետրոգրադի Christianski Vostok ռուս հանդէսում:

Թէեւ վէճը տերմինի մասին է եւ պատմական հաւաստիութիւնը աննշանակ է այս դէպքում, բայց հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել:

Յայտնի է, որ Ներսէսի կեանքը այն ձեւով որպէս մտած է Փաւստոսի պատմութեան մէջ կրում է օտար ազդեցութեան հետքեր: Կան գծեր, որ առնուած են Բարսեղ Կեսարացու կեանքից:

Կեսարիոյ եպիսկոպոսը ժամանակակից էր Ներսէսին, տեսել էր նրա մահը եւ անծանօթ չէր հայ իրադարձումներին: Նրա թղթերից մէկը ուղղուած է ոմն կոմս Տերենտի, որ նոյն անձն է, որին յիշում է Փաւստոս եւ որը կայսեր զօրքով եկաւ Հայաստան, նպաստելու Պապ թագաւորին գրաւելու հայկական գահը: Կեսարացին պատկառելի դէմք է եւ մեծ հեղինակութիւն մեր եկեղեցու համար: Առանձին արժէք ունի մեզ այժմ զբաղեցնող հարցի տեսակէտից Բարսեղի մի նամակը, գրուած ոմն Մոդեստի: Կեսարիոյ հայրապետն գրում է, որ եկեղեցու պաշտօնեաները «երէցներ եւ սարկաւագներ ըստ հին համարագրի արձակուած էին հարկերից, իսկ այժմ նրանց ցուցակ են անց կացնում»:[1]

Նամակագիրը յիշում է նաեւ, որ կան քահանաներ, որոնք ազատ են մնացել հարկից, աւելի ճիշտ որոշ արտօնութիւն են վայելում, եւ դանգատւում է, որ այդ արտօնութիւնը թողնւում է ժառանգաբար նրանց որդիներին: Հայրապետը գտնում է, որ այս ձեւը անարդար է, որովհետեւ յաճախ որդիները անարժան են վայելելու ժառանգած առանձնաշնորհումը, ուստի առաջարկում է, որ իրեն թողնուի առանձնաշնորհումի բաշխումը եկեղեցականների միջեւ, որպէսզի արժանաւորները ստանան եւ եկեղեցու պետը իրազեկ լինի քահանայութեան դրութեան:

Բարսեղի առաջարկը հասկանալու համար, ինչպէս և արտօնութեան էութիւնը, պէտք է գիտենալ հետեւեալը: Հռովմէական կայսրութեան մէջ Դիոկղետիանոսի օրից հարկահանութեան հիմը կազմում էր jugum, որ նշանակում է բառացի լուծ, եւ իրապէս հողի այն քանակը, որի արդիւնքը բաւական է մի մարդու ապրուստի համար: Հարկային համարագիրը կայանում է նրանում, որ պարզեն եւ գրի առնեն, թէ ով որքան jugum 'լուծ' հող ունի: Ամեն մի լուծի համար պահանջւում է որոշ հարկ:

Արտօնութիւնը, որի մասին խօսում է Բարսեղ Կեսարացին, արտայայտւում է նրանով, որ յայտնի չափով juga զեղչւում է: Եթէ մէկն ունի 20 լուծ հող, արտօնւում է տալ հարկ միմիայն դիցուք կէսի համար, ուրեմն տասն լուծը բաշխւում է նրան:

Բարսեղի նկատողութիւնից երեւում է, որ կային եկեղեցական պաշտօնեաներ, որ կարողացել էին ձեռք բերել

1 Migne, P. G. 32, col. 509.

ուանձնաշնորհում, հետեւապէս, չատ հող ունենալով, քիչ հարկ էին վճարում, կամ դուցէ միանգամայն ազատ էին: Հայրապետը յօժար չէ, որ որդիները եւս օգտուեն հայրերին դիջած արտօնութիւնից: Նա առաջարկում է որ յայտնի թուով անհարկ juga իր տրամադրութեան տակ դնեն, որպէսզի ինքը եւ իր յաջորդները արժանապէս բաշխեն վաստակաւոր երէցների միջեւ:

Կոստանդին Մեծը, ինչպէս որ ակնարկում է և Բասեղ կեսարացին, տրդարեւ ազատ էր յայտարարել եկեղեցական հողերը հարկերից: Օրէնքը հասած է մեզ: Նրա յաջորդների օրով օրէնքը թւում է թէ փոխուած էր եւ եկեղեցականները դրուած էին հարկատու, adscripti censibus: Բասեղ կեսարացու միջնորդութեան հետեւանքը, իրական թէ տեսական, այն պիտի լինէր, որ տրտօնեալ երէցների եւ սարկաւագների ոչխարը և եղջիւրները հարկի տակ պիտի ընկնէին: Ճիշտ այն ինչ որ Փաւստոսն է ասում, որ «դեղբարս եւ դորդիս երիցանցն եւ սարկաւագացն» ծառայութեան տակ: «Եօթն հողի» վերածումը «երկու հողի» կարելի է կապել Բասեղի ակնարկած jugaներին:

Ասորի պատասխանագրքի մէջ jugum բովանդակում է որպէս հողաչափ 20, 40 եւ 60 jugerum, նայելով հողի յատկութեան, այսինքն 5, 8 եւ 12 հեկտար: Եթէ ընդունենք որ Պապը մի մի jugum է թողել դիւղական երէցներին եւ սարկաւագներին, քանակը բաւարար է: Փոքր Հայքում եւ Պոնտոսում 30 jugera էր համարւում jugum:

Պապին վերագրուած դործը դժուար է անջատել այն երեւոյթներից, որ մատհոդութիւն էր պատճառում Բասեղ կեսարացուն: Արդեօ՞ք կայսրներին հետեւելով Պապը բռնացել էր իրօք եկեղեցականների հողային եւ անձնական դրութեան վրայ, որ անկարելի բան չէ: Նոյնչափ հնարաւոր է որ Բասեղի կենսագրութեան միւս դծերի հետ այս կէտը եւս անցած լինի Ներսէսին եւ յարէ Պապի անուան: Այս դէպքում ենթադրելու է որ արեւմտեան jugum չէ դտել հայացի արտայայտութիւն եւ փոխարինուել է հող ընդհանուր բառով:

Ամեն պարագային Փաւստոսի վկայութիւնը պէտք ունի ստուգման: Նրանից քամած հող երդոյ չէ բնորոշում իր նախդադափարի էութիւնը: Բնական է, որ չենք կարող հետեւել պ. Մանանդեանի խորհրդածութիւններին, երբ հող երդոյ համարում է ոչ միայն յատուկ հողաբաժին, այլ եւ «հաստատի նշան որ հողատիրական համայնական կարգերը գոյութիւն են ունեցել նաեւ հին Հայաստանում»:

Բայց ինչպէ՞ս հաշտեցնել համայնական հողատիրութիւնը թագաւորի իրաւունքների հետ: Ահա Տրդատը համայնքներից խլում է հող եւ տալիս եկեղեցիների սպասաւորներին: Նշանակում է, թագաւորը դերագոյն սեպհականութեան իրաւունք ունէր հողերի նկատմամբ: Փոյթ չէ. «համայնքները անտեսապէս ենթարկուած լինելով թագաւորի կամ նախարարների իշխանութեան, կարող էին միաժամանակ պահպանած լինել համայնական հողատիրութեան որոշ կարգեր»:

Նոյն բանասէրն է, որ յարուցանում է այս հարցերը եւ պատասխանում ոլոր մոլոր, եւ յեռաձգում, որ ուրիշ անդամ լուծէ բարդ հանգոյցները: Դարձեալ վերադառնում է նոյն 'հող երդոյ' խօսքին, որ նրանից ճմլէ մի նոր ճշմարտութիւն, այն է 'հող երդոյ' հողաբաժին կոչւում էր իբրեւ թէ վիճակ: Ցարդ կարծել էր տալիս որ հող երդոյ հէնց դիւղական յատուկ հողաբաժինն է, այժմ դուրս է գալիս որ յատուկ հողաբաժինն ուրիշ անուն ունի, որ է վիճակ:

Նախ՝ հերքում է մեր թուսիկ մի խօսքը: Մեր ժողովուրդի մէջ ատանձին բառ չկայ տան հողաբաժնի համար: Սովորաբար ասում են այս ինչի հողը, արտը, եւ նման ընդհանուր բառեր: Արդեօք հնո՞ւմն էլ այդպէս է եղել: Աչքի առաջ ունենալով Եղիշէի մօտ պարսիկ մարզպանի հրաւէրը, այն միտքն էինք յայտնել, որ «կեանք, արար, կալուած» բառերը, որ այդպէս դործ են ածւում ազատների, չինականների եւ եկեղեցականների գոյքի նշանակութեամբ, թերեւս երբեմն յատուկ լինէին դիւղական հողաբաժնի:

Արդեօ՞ք այս դէպքում կարելի է որոշել դիւղական հողի իրաւական բնոյթը: Մի հարց, մի ենթադրութիւն, որն եթէ հետաքրքրութիւն ունի, այդ ուելի հատատումն է քան հերքումը: Արար, որ դրաբարում զանազան նշանակութիւն ունի, իսկ ժողովրդի բերանում մնացել է միայն «արար աշխարհ» ասացուածքում, հատարակ բառ չէ երեւում:

Փաւստոս եւս ասում է որ Արշակի թագաւորութեամբ խաղաղացաւ երկիրը «ժողովեցան ամենայն թագուցեալքն փախուցեալք կորուսեալք երկրին Հայոց... եւ յայնմ հետէ բնակեալք խաղաղութեամբ վայելեալք յիւրաքանչիւր յարարս իւրեանց»:

Չեմ կարծում, որ խօսքը միայն չարժական գոյքի մասին լինի: Սովորական բառ չէ թւում նոյնպէս կեանք գոյքի իմաստով, իսկ կալուած յար և նման է եւրոպական tenureին:

Պ. Մանանդեան երկար ու բարակ վկայութիւններ է բերում, որ այդ բառերը հողի իմաստ չունին, որ կեանք հա-

մապատասխանում է յոյն βίος-ին որ Աւետարանում ապրուստի մտքով է գործածուած եւ, հետեւապէս, արհեստական բառ է: Կարելի է, բայց անհնար չէ նաեւ այն, որ հայերէնում արդէն այդպիսի իմաստ ունեցել է որ յոյն βίος այդպէս են թարգմանել:

Ամեն պարագային կարեւորն այս չէ, այլ այն որ իմ որոնած բառը, Մանանդեանի կարծիքով, 'վիճակ'ն է: Եւ իբրեւ ապացոյց քաղում է Հայկազեան բառգրքից Մխիթար Գոշի մի խօսքը, Երեմիայ մարգարէի մեկնութիւնից. «Վիճակ զանդաստանս սովոր են ասել, եւ մեք սովոր եմք զժողովուրդս վիճակ կոչել»:

Այս վկայութիւնը «պարզ ցոյց է տալիս որ վիճակ սովորաբար գործ է ածուել անդաստանների, այսինքն՝ արտերի կամ վարելահողի համար», եզրափակում է պ. Մանանդեան:

Դժուար թէ կարելի է աւելի դաւաճան օրինակ բերել քան այս վկայութիւնը, որի իմաստը չէ հասկացել պ. Մանանդեան: Մխիթար Գոշի խօսքը Ս. Գրքի մասին է: Ս. Գիրք «սովոր են ասել վիճակ զանդաստանս», եւ ոչ թէ Հայերը: Իսկ մեք, հայերս, «սովոր եմք զժողովուրդս վիճակ կոչել»:

Բոլորովին հակառակ հետեւանք. Հայերը անդաստաններին վիճակ չեն ասել:

Սրանով ընկնում են եւ միւս երկու ապացոյցները, որ քաղած են Ս. Գրքից: Հարկ ենք համարում սակայն կանգ առնել նրանցից մէկի վրայ, այն է՝ որ Ս. Գրքում յունական σχοίνισμος բառը հայերէն թարգմանուած է վիճակ: Եւ որովհետեւ յոյն բառը նշանակում է պարանով չափած հողամաս, ուրեմն վիճակ եւս հողամաս է:

Նախ՝ ոչ միայն հողամասը, այլ ամեն գոյք կարող է վիճակ կոչուել, ձեւաւոր ոճով, եթէ վիճակով է ստացուած: Երկրորդ՝ չի երեւում, որ պ. Մանանդեան ստուգած լինի Հայկազեան բառգրքի կոչումը: Յոյն բառը իրօք դժուարութեան մէջ է դրել Ս. Գրքի հայ թարգմանիչներին: Տեսակ տեսակ բառեր են ընտրել միտքը մի կերպ արտայայտելու: Միայն վիճակ բառը չէ որ տեսնում ենք σχοίνισμος ի դէմ, որ աւելի իմաստն է տալիս քան բառը թարգմանում: Մի տեղ գործ է ածում պարանի (II Թագ. Ը. 2), մի տեղ՝ ապաւանդակի (Ես. ԾԴ. 3), մի ուրիշ տեղ՝ լարաքաշին (Ամովս Է 18, Միք. Բ. 5) եւ վերջապէս վիճակ՝ (Յես. ԺԷ 15, Եզ. ԽԷ 13): Եւ ոչ միայն σχοίνισυα κληρονομίας է թարգմանում վիճակ

ժառանգութեան, այլ եւ կլերոնոմիա առանձին, (Եզ. 47, 18) առանց սխոյնիսմաս բառի:

Չի երեւում որ վիճակ հող նշանակէր անկախ հրէական հասկացողութիւնից:

Եթէ արդարեւ վիճակ արմատացած լինէր Հայոց մէջ որպէս «համայնական-տոհմական հնագոյն շրջանի տերմին», թարգմանիչները դոնէ դուռ չէին ընկնի պատշաճաւոր բառ գտնելու, այլ ամենուրեք կը դնէին վիճակ, նման նահապետ, նախարար խօսուն բառերի:

Անտեղի է յիշել նաեւ Թովմա Արծրունու խօսքը Արաբների մասին թէ «արկանէին վիճակս եւ լարս ձգէին», ապացուցանելու համար որ լար ու վիճակ ձգելը եղել է հողաբաշխի ձեւ նաեւ Հայերիս մօտ:

Միամտութիւն կը լինէր կարծել, որ հրէշաւոր Բուղային ուղեկցող արաբները հողեր գրաւելու ուրիշ միջոց չունէին քան լարով չափել եւ վիճակ ձգել: Թովմայի խօսքը ոճային սեթեւեթ է եւ ոչ իրական պատկեր, մի ձեւաւոր ասացուածք, առնուած Ս. Գրքից:

Հարկաւ, այս չէ նշանակում որ լարն ու վիճակը ծանօթ չէին Հայերին, ինչպէս եւ ծանօթ լինելուց բնաւ չի հետեւում, որ վիճակ տեքնիկ բառ լինի հողային իմաստով:

Մեղմ խօսելով, «վիճակ»ը շատ աւելի վատ վիճակի մէջ է գտնուում քան ակնարկածս երեք բառերը, որոնց տեղն ուզում է բռնել: Բայց եւ այնպէս պ. Մանանդեան կարծում է, որ իր «լեզուական այս նոր դիտողութիւնները» գալիս են հաստատելու «իր ենթադրութիւնը համայնական հողատիրութեան գոյութեան մասին հին Հայաստանում»:

4. Ռամիկ եւ շինական

Գիւղացիութեան դիրքը նախարարական կազմի մէջ որոշելու համար անհրաժեշտ է պարզել նախապէս երկու կարեւոր տերմին, ռամիկ եւ շինական: Կարեւոր է մանաւանդ սրանց փոխադարձ յարաբերութիւնը որոշել:

Պ. Մանանդեան կարծում է, որ ռամիկ եւ շինական նոյնանիշ չեն եւ որ առաջինն աւելի լայն հասկացողութիւն է եւ բովանդակում է իր մէջ ո՛չ միայն շինականը, այլ եւ քաղաքացին կամ քաղաքի ազգաբնակչութեան մի մասը: Եւ պէտք է տեսնում մատենագրական աղբիւրներին դիմել իր կարծիքը հաստատելու համար: Ոչ միայն Բիւզանդը և Փարպեցին են վկայութեան կոչւում, այլ անգամ Ժ. դարում ապրող Յովհան կաթողիկոսը:

Ինչ վերաբերում է բառի ստուգաբանութեան, նա յարում է Հիւբշմանի կարծիքին, որ ռամիկ նոյնն է, ինչ որ «երամ, երամակ»: Կոչ է անում նաեւ ոսկեդարեան թարգմանութեանց եւ ուզում է հաւատացնել, որ ռամիկ այնտեղ համապատասխանում է իբրեւ թէ յոյն ὄχλος, ὀχλοῦντες բառերին, որ նշանակում են ամբոխ, խառնիճաղանճ բազմութիւն:

Դժուար թէ կարիք կայ նկատելու, որ Հիւբշմանի ստուգաբանութիւնը եւ նրա վրայ հիմնուած դատողութիւնները ոչինչ չեն աւելացնում այն նշանակութեան, որ հետապնդում ստուգել է ռամիկ բառը:

Յոյն ὄχλος խուժան չէ, ինչպէս եւ հայ ռամիկը: Ս. Գիրքը գործ է ածում ամբոխ համաձայն յոյն ὄχλος կամ θόρυβος, եւ խառնիճաղանճ կամ խառնաճաղանճ՝ յոյն σύμμικτος. Ռամիկ պատահում է ոչ յաճախ եւ միշտ ունի իր դէմ յոյն բնագրում տարբեր բառեր՝ ἔθνος, ὄχλος, θόρυβος, որ նշանակում են «ժողովուրդ»: Մի անգամ ռամիկ համապատասխանում է յոյն ἐλάχιστος, որ է «նուազագոյն»: Արժանի է ուշադրութեան որ հակադրւում է իշխանի կամ թագաւորի եւ կամ հեծեալ այժերի: «Դատաստան անաչառ իշխանաց լինի, ռամիկն ներելի ողորմութեամբ» (Իմ. Զ. 7): «Եւ հեծելազօրքն վառեալք երկոտասան հազար, թող զայլ ռամիկն ամենայն» (Յուդ. Է. 2), երկրորդ անգամ (Յուդ. Է. 10): «Արար կոչունս սիրելեաց իւրոց եւ մեծամեծաց... եւ ամենայն իշխանաց նախարարացն», եւ «դարձեալ միւս անգամ եւս կոչել ի հարսանիսն զռամիկ քաղաքակիցս իւր» (Եսթ. Ա. 3–5):

Շինական բառը միայն մի անգամ է պատահում Ս. Գրքում եւ այն՝ շինականագոյն խորթ ձեւով, որի դէմ յոյն բնագիրն ունի ἀγροικότερος (Բ. Մակ. ԺԴ. 30), որ է գեղջուկի, գուեհիկ: Թւում է թէ շինականն ոչինչով բարձր չէ ռամիկից: Վահան Մամիկոնեան Վաղարշ թագաւորի առաջ խօսելիս իր հակառակորդների հացէին ասում է որ նրանք այնպիսի ստոր մարդիկ են, որ «կրտսեր շինականք աշխարհին հայոց հաց գարշէին ուտել»: Կրտսեր շինական արհամարհական չեչա ունի, հաւասար գուեհիկի: Պատմիչների գործածութիւնից մի բան է հետեւում միայն, որ ռամիկ եւ շինական նա է, որ ազնուական չէ, իսկ ինչ տարբերութիւն կայ երկուսի մէջ, այդ մասին եւ ոչ մի ակնարկ: Բիւզանդ եւ Եղիշէ աւելի սիրում են գործածել շինական քան ռամիկ, մինչդեռ Փարպեցու մօտ հակառակն է տեսնւում: Շաղագոմի գիւղերում թագնուած ժողովուրդը, որի վրայ յարձակ-

ւեց Հազարաւուխտոր Վահանին հետապնդելիս, Փարպեցին կոչում է ռամիկ: Դուին քաղաքում եւս նախարարների եւ ազատների կից նա գիտէ ռամիկներ: Այն ինչ Խորենացին պատուիրում է գեղջուկներին «պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս»:

Մատենագիրների լեզուն որոշ չէ: Եթէ նրանց չիմաց գործածութիւնից հանենք այն եզրակացութիւնը որ ռամիկը գիւղացին է եւ երբեմն քաղաքի ստորին խաւերը, ինչպէս խորհում է պ. Մանանդեան, մեծ դանձ ձեռք բերած չենք լինի: Հեռուն գնալ եւ ռամիկը բանաւոր կենդանիների երամակ համարել, նշանակում է յառաջուց ուրանալ բառի տեքնիկ բնաւորութիւնը:

Ամեն պարագային ռամիկ այն է, որ ազատ դասին չէ պատկանում, այս կէտում համերաշխ են մատենագիրները: Այս հանգամանքն է, որ թելադրել էր մեզ լծորդել ռամիկը Արամէ ազգագրական անուան: Աւելի Իրանի քան հայերի կողմից պարտուած ու խոնարհեցրած Արամէ ժողովրդի անունը, կարծում էինք, կարող էր ընդհանրանալ պարթեւ Արամիկ ձեւի տակ եւ դառնալ նշանակ հլու, խաղաղ ազգաբնակութեան: Բնաւ չենք յամառում այս մեկնութեան վրայ[1]:

Խնդրի լուծումը կախուած է պահլաւերէնից, ուր դեռ յուսալի է, որ մի օր կը յայտնուի ռամիկ բառը այնպիսի ձեւով որ վերջ կը տայ վարանումներին[2]:

Ամեն պարագային ռամիկ այնպիսի անգոյն հասարակ բառ չենք համարում, ինչպէս Հայկազեան բառգիրքը և նրա հետեւութեամբ Հիւբշման: Պ. Մանանդեան եւս վտարում է ռամիկը նախարարական իրաւակարգի տերմինների շարքից, եւ կենդրոնացնում իր ուշադրութիւնը շինական բառի վրայ, որն այսպիսով մնում է միակ արտայայտիչը գիւղացիութեան որպէս դասակարգի:

---

1 Միւնոյն միտքը պաշտպանած կը լինենք, եթէ համեմատենք պարսիկ aram կամ ram բառի հետ, որ նշանակում է «խաղաղ, հնազանդ, հլու», եւ արմատակից է յոյն ἐρέμα որ նոյն իմաստն ունի: Զենդերլենում ծանօթ է rama բառը կոպտութեան նշանակութեամբ:

Հայերէն գուեհիկ ածանցուած է գուեհ բառից որ է «փողոց»: Վրայ լեցում նոյն բառերը հնչում են գլեխի «գիւղացի» եւ գլախա կամ գլախակի «իսեղմ, ոստրմելի»: Նոյն մատնութեամբ լատին rusticus ծագում է rus բառից, որի համաձեւն է գերմ. Raum: Եթէ ենթադրենք, որ նոյն արմատը, որ ծանօթ է իրանական լեզուներին, յայտնի է եղել նաեւ գերման ածանցով, կը ստանանք rama – «գիւղ», որից ramayaka, ramik «գեղջուկ»:

Ահա մի կարգ հնարաւորութիւններ, աւելի ընդունելի քան երամ, որպէս ազգիւր ռամիկի:

2 Սոգդիական լեզուի մէջ երեւան եկաւ rmknik = ramakanik բառը ὄχλος նշանակութեամբ որ ռամիկ–ի ուրիշ ձեւն է ռամական, բայց չի լուծում ստուգաբանական կնճիռը: E. Benveniste, Essai de Grammaire Sogdienne, p. 95. (ed. 1929).

Շինականը նա է, որ ազատ չէ, եւ ազատը՝ նա որ հարկատու չէ: Այսպէս բնորոշելով շինականի եւ ազատի տարբերութիւնը, պ. Մանանդեան կարծում է, որ շինականների հարկատուութեան համար յատուկ տերմին է եղել, որ է «ի հարկի ծառայութեան»:

Որ շինականները հարկ էին վճարում, այդ դաղտնիք չէ: Բայց որ «ի հարկի ծառայութեան յատուկ եւ առանձին տերմին» է, այդ կասկածելի է: Փաւստոս պատմում է Մուշեղ Մամիկոնեանի զինուորական սխրագործութիւնները, վերագրելով նրան մի շարք երկրների նուաճում: Մուշեղը յարձակւում է յաղթում եւ երկիրը կամ բնակիչները «ի հարկի ծառայութեան կացուցանէր»:

Խօսքը այս դարձուածքի մասին է, որը մինչեւ այժմ որպէս թէ բաւարար կերպով մեկնուած չէ: Անձնական մեկնութիւնս որ այս դարձուածը չէ նշանակում հարկ դնել, այլ հնազանդեցնել, ծառայութեան բերել, պ. Մանանդեանը համարում է «միանգամայն անյաջող»:

Զգալով որ յիշեալ դարձուածքը կարող է սխալ ըմբռնուել եւ կարծել տալ թէ «ի հարկի կացուցանել» նշանակում է հարկ դնել, մենք մեր գրքի մէջ ղղուշօրէն ցոյց ենք տուել անգամ այն աղբիւրը, որտեղից առել է Փաւստոս այդ դարձուածքը, ցոյց ենք տուել, որպէսզի թիւրիմացութեան առաջն առնենք: Բայց մեր ջանքը ի զուր է անցել, գոնէ պ. Մանանդեանի համար:

Պէտք է ասել, որ Մուշեղին վերագրուած նուաճումները անարժէք բնաւին են պատմական տեսակէտից: Յովհան կայսրը 363 թուին կնքեց Պարսից Շապուհ թագաւորի հետ ամօթալի կոչուած դաշինքը, լքելով իր դաշնակից Արշակ թագաւորին, որ ընկաւ Շապուհի ձեռքը եւ զոհ գնաց կայսեր դաւաճան բարեկամութեան: Անմիջական հետեւանքն եղաւ Հայաստանի ծայրագաւառների անջատումը, որ մի առ մի թւում է պատմագիրը: Արդ ճիշտ այս գաւառներն են, որոնց վերստին նուաճումը վերագրւում է Մուշեղ Մամիկոնեանին: Սա չի համապատասխանում պատմական իրականութեան: Ամօթապարտ դաշինքը սկիզբն եղաւ Արշակունեաց պետութեան քայքայման որ քիչ յետոյ բաժանուեց երկու ոխերիմ թշնամիների մէջ:

Մուշեղին նուիրուած այդ էջերը Փաւստոսի ճարտասանութեան արդիւնք են եւ գովք Մամիկոնեան հերոսին: Մակաբայեցւոց գիրքն է, որ աղբիւր է ծառայել մեր պատմագրի ոգեւորութեան: Ոճը եւ բառերը մատնում են նրան: Յուդա Մակաբայեցին «հարկանէր», «ի գերութիւն վարէր

զկանայս», պատանդս առնէր, եւ «զմնացորդս» «ի հարկի ծառայութեան կացուցանէր»: Աւելի բան չէ գտնում Փաւստոս ասել Մուշեղի մասին, քան կրկնել այս բառերը գրեթէ միեւնոյն ձեւով ամբողջ 12 գլուխներում, ուր իր հերոսի պատերազմական շահատակութիւններն է նկարագրում: Որ Փաւստոսը գտնւում է Մակաբայեցւոց ազդեցութեան տակ, ինքը եւս չի թագցնում եւ մի ուրիշ առթիւ յիշում է նրանց «ի նմանութիւն Յուդայ եւ Մաղաթեայ Մակաբէի անկան ի ճակատ պատերազմի»[1]:

Ամբողջ Ս. Գրքի մէջ մի անգամ է միայն պատահում «ի հարկի ծառայութեան կացուցանել» ոճը եւ այդ՝ Բ. Մակաբայեցւոց 8 գլխում, որտեղից քաղում է Փաւստոս եւ միւս յիշածս բառամթերքը:

Որպէսզի խելահաս լինենք բուն իմաստին, մի միջոց կայ եւ դրական միջոց, դիմել յոյն բնագրին: Արդ հայ դարձուածքի դէմ յոյնը ունի καταδουλώσαντο այսինքն՝ ծառայեցուցին[2]:

Ասել է թէ խօսքը հարկատուութեան մասին չէ, այլ հնազանդութեան, ծառայութեան բերելու:

Եթէ պ. Մանանդեան փոխանակ Նորայրի հեղինակութեան ապաւինելու, բանար յոյն բնագիրը, կարծում եմ, ձեռնպահ կը մնար մեր մեկնութիւնը անյաջող համարելու արտորանքից: Հարկ հայերէն չի նշանակում միայն 'տուրք', այլ եւ աւելի լայն իմաստով, 'հարկադրանք': «Ի հարկի ծառայութեան կացուցանել» նշանակում է «պարտաւորացնել, հարկել ծառայելու», «ի հարկի ծառայութեան կալ», պարտաւորուիլ ծառայելու:

Նոյն դարձուածը առանց ծառայութեան, այլ լոկ «ի հարկի կացուցանել», «ի հարկի կալ», կամ «հարկիլ» եւս միեւնոյն նշանակութիւնն ունի, որ է ծառայել: «Ոչ եւս կայցեն նոքա ի հարկի օտարաց», կամ «թէ ոչ հարկեցէք արքային» յոյնն ունի միշտ ἐργῶνται, ἐργάζησθαι[3]:

Երբեմն հարկ թարգմանուած է յոյն φόρος, որ նշանակում է «տուրք, հարկ»: Ս. Գրքի մասնագէտները սակայն վկայում են, որ յոյն բառը եօթանասնից թարգմանութեան մէջ գործ է ածւում առաւելապէս ծանր աշխատանքի, բեկարի մտքով, համաձայն եբրայերէնի mas բառին, մերթ փոխարինուելով ἔργον «գործ, աշխատանք» բառով[4]:

1 Փաւստոս, Գ. ԺԱ:
2 Ա. Մակաբ. Ը, 10:
3 Երեմ. Լ, 8 եւ Իէ 9:
4 Vigourout, Dictionnaire de la Bible, II, 1030.

Հայերէն հարկ իր կրկնակի իմաստով լիովին ծածկում է յոյն բառը: Նշանակալից է՝ «կացոյց գնա ի վերայ հարկաց բեռնակրաց», ուր հարկք է բեկար, corvée: «Արկ արքայ Սողոմոն մարդահարկ յամենայն Իսրայէլ, եւ էր հարկն երեսուն հազար արանց»: Մարդահարկ նշանակում է բեկարի ենթակայ մարդ: Նոյն միտքն ունի եւ հարկատուք բառը որ կարդացւում է Մնացորդաց գրքի համապատասխան տեղում, «ած Սողոմոն ի հարկատուս»[1]:

Ս. Գրքի հեղեւութեամբ Ղեւոնդ պատմագիրն ասում է Եղիսի մասին. «Հասանէր ի քաղաքն Կարնոյ եւ արկանէր մարդահարկ ի վերայ աշխարհին եւ հաւաքեալ զրպտութիւն անթիւ կացուցանէր գործավարս ի վերայ գործոյն եւ փոյթ յանձին կալեալ չինէր զիրամատեալ պարիսպ քաղաքին»: «Արկ Սողոմոն ընդ հարկօք ծառայութեան»[2] դարձեալ վերաբերում է ծանր աշխատանքի: Այսպիսով ոչ «ի հարկի» եւ ոչ «ընդ հարկօք ծառայութեան» դարձուածները չունին այն իմաստը, որ արամագիր է տալ պ. Մանանդեան: Փարպեցու մի վկայութիւնը եւս չէ հաստատում իր տեսութիւնը: Պարսից թագաւորը հրամայում է Աբրահամ և Խորէն երէցներին երթալ Ասորեստան, որ այնտեղ «մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակսն եւ ի հարկի կայցեն մինչեւ ցվախճանս իւրեանց»: Թագաւորի պատուէրը կատարում է եւ երկու երէցների ականջները կարում են և դրկում Ասորեստան «կալ անդ նոցա ի հարկի եւ առնել մշակութիւն»: Խորէնը մեռնում է աքսորում, իսկ Աբրահամը տեղացի քրիստոնեաների երաշխաւորութեամբ, «որք զտունս իւրեանց եւ զարարս փոխանակ ընդ հարկի նորա զրեցին յարքունիս ցվախճան նորա, եւ կատարեցին զկարգեալսն անվնասիւ յաղագս նորա», արձակւում է եւ գալիս Հայաստան:

Պ. Մանանդեանի ըմբռնումով ի հարկի կալ նշանակում է հարկ տալ: Ասել է թէ հայ աքսորական քահանաները ոչ միայն արքունի մշակութիւն պիտի անէին, այլ եւ պարտաւոր էին հարկ տալ եւ ահա այդ հարկատուութիւնից նրանց ազատելու համար Ասորեստանի հաւատացեալները գրաւ են դնում կամ երաշխիք տալիս իրենց գոյքը:

Սակայն հնարաւո՞ր է արդեօք որ ստժանակիր աշխատանքի դատապարտուած աքսորականները դեռ հարկ էլ տան եւ ինչ միջոցներից: Փարպեցին աւելի զգաստ է քան խորհում է պ. Մանանդեան: Նա պատմում է, որ աքսորեալ

1 Գ. Թագ. ԺԱ, 28 և Ե, 13 = Բ. Մնաց. Ը, 8:
2 Գ. Թագ. Թ. 21:

խեղճ երէցներն ապրուստի միջոց չունէին եւ նրանց պիտոյքները հոգում էին տեղացի քրիստոնեաները յօժարակամ ընծայաբերութեամբ: Ուրեմն ո՞րտեղից պիտի վճարէին այդ թշուառականները պետական հարկ, եւ ինչո՞ւ պիտի վճարէին, քանի որ հոգեւորական լինելով չէին պատկանում հարկատու դասին:

Պարզ է որ խօսքը հարկի մասին չէ եւ չէ կարող լինել: «Ի հարկի կալ», անոնք, որ Ս. Գրքում նշանակում է ծառայել, մարմնաւոր աշխատանք կատարել, կամ ինչպէս պատմագիրն է ասում, «առնել մշակութիւն արքունի»: Այս է իսկական իմաստը «ի հարկի կացութեան»: Եղիշէն նոյն պատմութիւնն անելիս ասում է պարզօրէն, «կարեաց զնոցա ունչս և ականջս և եւ տանել յԱսորեստան զի կայցեն ի մշակութեան արքունի»: Դարձեալ կրկնում է դահճապետի բերանով. «Եղեւ հրաման պատուհասիդ ձերոյ եւ ի վերայ դորին պատուհասի՝ երթայ ձեզ յԱսորեստան եւ լինել ձեզ մշակ յարքունիս»: Մի ուրիշ անգամ Եղիշէն նրանց պատիժը կոչում է «արքունի պատուհաս»:

Արտաքին աղբիւրներից յայտնի է, թէ ինչ էր արքունի մշակութիւնը: Այն ինչ որ այժմ կոչւում է հասարակաց կամ հանրօգուտ աշխատանքներ, իսկ մեր ժողովուրդն կոչում է թագաւորական ռեկար: Ճանապարհներ չինել և պահպանել, ջրանցքներ բանալ եւ մաքրել, հեղեղների դէմ ամբարտակներ կանգնել, ուղեւորների համար օթեւաններ, կարաւանսարաներ կառուցանել, կամուրջներ ձգել, աշխատել պետական և արքունի չէնքերի վրայ, դուցէ և արքունի կալուածներում, նաեւ հանքեր մշակել, ահա մի շարք աշխատանքներ, որ կատարւում էին արքունի կոչուած մշակների ձեռքով: Նրանք իրենց պետերն ունէին, գործի ղեկավարները, որ կոչւում էին կարիզպետ, աւելի հին ձեւը լինելու է կարիկպետ: Ճիշտ այն գործավարներն են մարդահարկերի վրայ նշանակուած, որ յիշում է Ղեւոնդ երէցը իր վերեւ յիշածս խօսքերում:

Ահա այն մշակները, որոնց հետ պիտի լծուէին մարմնաւոր տաժանքի նաև մեր երէցները: Պատմագիրը հաւատացնում է որ տեղացի քրիստոնեաներն իրենց երաշխաւորութեամբ ազատ կացուցին Աբրահամին ծանր պատուհասից:

Պ. Մանանդեան կարծում է որ «համերաշխիքը այն հարկերի համար էր, որ նրանից ստացուելու էր մինչեւ նրա վախճանը»: Փարպեցին ուրիշ բան է ասում: Երաշխաւորութեան պլիտուր կէտը զանց է անում պ. Մանանդեան, որ է

«եւ կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորա»։ Քրիստոնեաները, ուրեմն, յանձն են առնում կատարել զկարգեալսն, այսինքն զհրամայեալս ի Թագաւորէն, ինչպէս ասում է պատմագիրը սկզբում, այսինքն այն հարկը, մշակութիւնը, որ ծանրանում է աքսորականի վրայ։ Որպէս ապահովութիւն յանձնառութեան նրանք գրաւ են դնում իրենց գոյքը յարքունիս։

Աւելորդ չէ նկատել, որ Եղիշէն չէ յիշում երաշխաւորութեան հանգամանքը, այլ ասում է, որ Աբրահամը 12 տարի Ասորեստան մնալուց յետոյ դարձաւ հայրենիք։ Փարպեցին, ինչպէս եւ Եղիշէն պատմում են, որ Աբրահամն աքսորի ժամանակ երբեմն գնում էր Ապար աշխարհը կապեալ նախարարների տեսութեան, տանելով հետը նիւթական նպաստ այն տուրքերից, որ տալիս էին նրան Ասորեստանի քրիստոնեաները։ Երթեւեկի այս ազատութիւնը ցոյց է տալիս որ աքսորական երէցը շնորհի էր արժանացել քրիստոնեաների երաշխաւորութեամբ թերեւս սկզբից։ Բայց ինչո՞ւ չէր վերադառնում Հայաստան, եթէ ազատ էր արձակուած։ Թւում է որ Ապար աշխարհ այցելելը եւ երաշխաւորութեան խնդիրը պատմական իրողութիւն չեն։ Սոսկ գովասանք, նրա անձնական առաքինութիւնը դրուատելու միջոց։ Աբրահամի արձակումը կապ ունի գերեալ նախարարների դարձի հետ եւ երկուսն էլ հետեւանք են ընդհանուր ներումի, որ տեղի ունեցաւ Պերոզ Թագաւորի օրով։

Կասկածս սակայն խնդրին չէ վերաբերում։ Փարպեցու վկայութիւնը ամեն դէպքում պահում է իր արժէքը որպէս հնարաւոր կենցաղական երեւոյթ։ Վիճելի ոճերը, «ի հարկի կացուցանել կամ կալ, ընդ հարկօք կացուցանել կամ կալ», չեն նշանակում հարկատու անել կամ լինել եւ ուրեմն խօսք չի կարող լինել եւ այն մասին, որ նրանք «յատուկ տերմիններ են»։ Դրանց իմաստն է արկանել ի ծառայութիւն եւ կալ ի ծառայութեան։ Հարկ հարկանել, արկանել ընդ հարկաւ, դնել ընդ հարկաւ, դնել հարկ, տալ հարկ, սրանք են հարկ նշանակող դարձուածները։

5. Ծառայութիւն, ստրկութիւն եւ ճորտութիւն

Մի կողմ թողած լեզուական խնդիրը, ոչ ոք կարէ ժըխտել, որ գիւղացին հարկ էր տալիս եւ կամ նա կարող էր ծառայ կոչուել իր տիրոջ նկատմամբ, որպէս իշխանը ծառայ է Թագաւորի հանդէպ։ Այլ բան է, եթէ ծառայ իրօք տեքնիկ բառ լինէր նախարարական իրաւակարգում համազօր servus։

Այս աւելի արժէք կ՝ունենար քան այն մատենագրական ցուցումները, որ բերում է պ. Մանանդեան ապացուցանելու հայ գիւղացիութեան ճորտանման վիճակը։ Տեսական արդելք չկայ։ Ֆէոդալականութիւնը բերում է իր եռեւից servage որպէս բնական ստուեր։ Հայ նախարարական կարգը եւս ունենալու էր համապատասխան ստուերը, մի ենթադրութիւն, որ պէտք ունի հաստատութեան, բայց որի համար պատմութիւնը գլանում է փաստեր տալ։

Ինչ ինչ վկայութիւններ, որ բերել եմ գրքումս որպէս նպաստ սեպուհական իրաւունքի լուսաբանութեան, պ. Մանանդեան ուզում է օգտագործել ուրիշ նպատակով։ Դուինի ժողովը 641 թ. տրտունջ է յայտնում թէ «յորժամ ազատք զիւրեանց զերդ և զմարդ բաժանեն, յոլովք չարակնութեամբ առնեն, զժառանգաւորս եկեղեցւոյ Ջանան ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել»։ Եղիշէն պատմում է որ Աղուանից Թագաւորը «հաճեցաւ զսեպհական առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն առեալ էր հազար երդ»։ Այս վկայութիւնը պ. Մանանդեան վերագրում է Մովսէս Կաղանկատուացուն, մինչդեռ աղբիւրը Եղիշէն է, որտեղից քաղում է Կաղանկատուացին։ «Երդերի և մարդկանց» բաժանումը, նրա կարծիքով ակնարկ է, որ գիւղացիները համարւում էին ազատների «յատուկ գոյքը» եւ ուրեմն գտնւում էին ճորտանման վիճակում։

Այս եւս ճիշտ չէ։ Երդ և մարդ նոյնն է ինչ որ երդ, տուն։ Ինչպէս որ բաժանում էին գիւղեր, ագարակներ, կարող էին բաժանուել եւ գիւղի տները, երդերը։ Բաժանումը ոչինչ չի ասում անձնական կապի մասին, որը միայն կարող է բնորոշել ճորտանման վիճակը։ Ինչ վերաբերում է ազատների չարակնութեան, որով եկեղեցու ժառանգաւորներին աշխատում էին ծառայութեան եւ ստրկութեան մէջ ձգել, պէտք ունի տակաւին ստուգութեան։ Եկեղեցու ազատութեան մասին ճառերը յաճախ չափազանցութիւններ են, որ պէտք է ընդունել զգուշութեամբ։ Եղիշէն եւս գանգատւում է, որ Ցաղկերտը «զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն» եւ «միայնակեաց քրիստոնեայք որ բնակեայ էին ի վանորայս, ընդ աշխարհագրաւ էարկ»։ Նոյն հեղինակը միանձանց ճառի մէջ ասում է. «ազատ եկեղեցի անկաւ ի ծառայութիւն հեթանոսաց եւ սուրբ բահանայք նորա կոփին չարչարին յանօրէն հարկահանաց»։

Սակայն, Բիւզանդիայում անգամ բարեպաշտ կայսրների հովանաւորութեան տակ, եկեղեցին բացարձակ ազատութիւն չէր վայելում։ Եկեղեցին իր հողերի համար հարկ էր

վճարում: Հարկ էին վճարում նաեւ մենակեացները, որի ղէմ բողոքում է Բասիլ Կեսարացին, համարելով անարդար[1]: Այլ եւ 409 թուին հրատարակուած մի օրէնք, որ մտել է Յուստինիանոսի Օրինագրքի մէջ, ասում է որ զիւղացին քահանայ ձեռնադրուել կարող է միայն այն պայմանով, որ չարունակէ վճարել իր հարկը կամ գանէ մի փոխանորդ որ մշակէ հողը նրա տեղ: Այս բանի համար պատասխանատու էր նրա տէրը[2]:

Եթէ աստուածապաշտ Թէոդոս կայսրը, որի յիշատակը ոծնում է եկեղեցին, կարող էր այսպիսի հրահանգ տալ, աւելի բան չէ կարելի սպասել չարագործ Յազկերտից: Հարկատ. կայսերական օրէնքը խստութեամբ չէր դործադրւում: Ինչպէս ամեն օրէնք, նա եւս զիտէր բացառութիւններ: Կային առանձնապէս արտօնուած կղերականներ, որոնք կամ թեթեւ հարկ էին վճարում, կամ իսպառ ազատ էին արձակուած:

Եթէ Թէոդոսի օրէնքի արամադրութեամբ մօտենանք այն երեւոյթին, որ պատապարում է Դուինի ժողովը, թերեւս գտնենք որ ազատների «չարաչնութիւնը» որոշ իրաւական հիմ ունէր: Արդարեւ, ահա իշխանական զիւղացին քահանայ է ձեռնադրւում եւ հրաժարւում է իրեն հասանելիք հարկը վճարել այն հիմամբ, որ կան հին քահանայական տներ, ազատ հարկատութիւնից: Իշխանը իրաւունք ունէր ժխտել քահանայի յատկութիւնը եւ նրանից սովորական հարկը պահանջել: Հարկատու վիճակը ծառայական է անշուշտ եւ Դուինի ժողովականները կարող էին ասել «արկանել ի ծառայութիւն», բայց ոչ «ի սարկութիւն»: Իշխանական զիւղացին ամենավատթար դէպքում servus է եւ ոչ sclavus, որոնք տարբեր հասկացողութիւններ են: Սարկութիւն բառը ժողովականների բերանում այլ բան չէ եթէ ոչ հակատակորդի անկշիռ չափազանցութիւն: Ամեն պարագայի եկեղեցու ազատութիւնը կարօտ է ստուգման աւելի անաչառ ապրիւրների հիմամբ քան են եկեղեցականների վկայութիւնները:

Կասկածելի է նաեւ պ. Մանանդեանի դիտողութիւնը Դպրոց Փարպեցու մասին նոյն ճորտութեան խնդրի առթիւ: Վահան Մամիկոնեանին դրած թղթի մէջ Փարպեցին ասում է որ ինքը հասարակ ոմն չէ եւ ոչ էլ «ծառայ ուրուք, քանզի պարեղօտաւորք ազատեալ են ի Քրիստոս. իսկ որ զատոյցն

1 **Migne**, P. G. 32. col. 1019. **A. Piganiol**, L'impôt de capitation sous le Bas-Empire, p. 60.

2 C. J. I. 3, 16. **Piganiol**, p. 61.

զիս պարեղօտիւք ի ծառայութենէ աշխարհիս եւ ազատութեան եղեւ մեզ առիթ, տէր Աղան, քս տեսան քեսի էր»:

Պ. Մանանդեան ուզում է հասկանալ «ազատութիւնն» աշխարհային իմաստով, այսինքն Փարպեցին զիւղացի ազատ էր եւ հարկատու, եւ Աղան Արծրունու շնորհիւ ազատում է հարկատութիւնից, անցնելով կրօնաւորների դասը: Սակայն, այս բացատրութիւնը չի պարզում թէ Աղան ի՞նչ իրաւունքով պիտի Ղազարին հանէր հարկատու վիճակից: Փարպի զիւղը Արծրունիների սեփականութիւն չէր, որ Աղան Արծրունին զործէր որպէս տէր հանդէպ իր ծառայի: Նա սովորական մենակեաց էր, որ տակաւին «ի տիս ազգութեան» քաշուել էր աշխարհի անցաւոր վայելքներից «յանապատս» եւ ճգնողական խստամբեր կեանք էր վարում, դիշեր ցերեկ անդադար աղօթելով: Եկեղեցական վարչութեան մէջ դեր չունէր և ոչ էլ հարկաւոր տասիճանը, որ կարծել տար թէ նրա միջնորդութիւնը Ղազարի համար եկեղեցու անունով էր:

Մութ է մնում դարձեալ թէ ի՞նչ դործ ունի Ղազարը Մամիկոնեան բնտանիքում, ուր տեսնում ենք նրան մանուկ հասակից, «սննդակից եւ խոզակից» Մամիկոնեան որեաբների, Վահանի, Վասակի, Արտաշէսի եւ Վարդի: Ինչո՞ւ պէտք է Զուիկ և Անուշվառ, Արծրունի քոյրեր, մէկը Մամիկոնեան, միւսը՝ մեծ ըդեշխի տիկին այնքան մայրական խնամք տածէին մի դեղջուկ ազգի:

Նոր մեկնութիւնը նոր դժուարութիւններ է յարուցանում: Հաւանականն այն է, որ խօսքը աշխարհային ազատութեան մասին չէ, այլ հոգեւոր: Կրօնաւորի ուրեմն եւ Ղազարի աչքում, բարբ աշխարհականները ծառայ են, ազատ թէ դեղջուկ: Իսկական ազատը նա է, որ «ազատեալ է ի Քրիստոս», վերուած է «ի ծառայութենէ աշխարհիս»: Այդ ազատութիւնն երաշխաւորում է պարեղօտը, հոգեւոր կոչումը: Աղան, որի մօտ «սնեալ եւ ուսեալ է» Ղազարը, տարով նրան եւ պարեղօտ, դառնում է «ազատութեան առիթ»: Այսպիսով թեթեւացած կը լինի Ղազարի վիճակը: Աշխարհից փրկելը աւելի դիւրին է քան «ճորտութիւնից»:

Դժուար թէ կարելի է ողջունել Խորենացու «փախչողք ի ժառանգութենէ» խօսքի նորայուր մեկնութիւնը: Ժառանգութիւն իրրեւ թէ չինականների հողաբաժինն է այնպիսի ծանր պայմանների ներքոյ, որ նրանք չէին ուզում մշակել եւ դերադասում էին փախչելով ազատուել աշխատանքից: Նախ մեր պատմահայրը չինականների մասին չէ խօսում, այլ ժողովրդականների, որոնց անուանում է «վէնք, ատահակք, մեծախօսք, անվատակք, արբեցողք, վնասակարք»:

եթէ ոչ վերջին երեք ածականները գոնէ առաջին երեքը ոչ մի կերպ չեն յարմարում ճնշուած ճորտերին: Խորենացու ողբը որպէս մի քերթուած վատ աղբիւր է պատմութեան, եթէ է: Վարդապետներին, կրօնաւորներին, վիճակաւորներին, աշակերտներին, ժողովականներին, զօրականներին, իշխաններին եւ դատաւորներին վերագրած Ադամայ եօթ մեղքերը նոյնչափ ստոյգ են որքան «տարերց փոփոխել զբնութիւնս իւրեանց»: Եթէ մի բան կայ, որ վերաբերում է հայ կեանքին այդ է «յօտարութիւն վտարումն ազատաց եւ անթիւ նեղութիւնք ռամկաց»:

Այս տողի հեղինակը չի կարող ամբաստանել որ ռամիկը փախչում է իր հողից: Աւելի բնական է ըմբռնել ժառանգութիւնը սովորական իմաստով, այսինքն որ «ժողովրդականք վէնք, ստահակք» փախչում էին հոգեւոր կոչումից, չէին ուզում եկեղեցուն ծառայել:

Պ. Մանանդեանի առարկութիւնը թէ եկեղեցականութիւնը արտօնեալ վիճակ է, ուստի անհեթեթ կը լինի կարծել որ նրանից խուսափում էր ժողովուրդը, անարժէք է: Արտօնութեան կից կայ եւ ծանր պատասխանատուութիւն եւ պահանջ: Ահա Պապ եւ Աթանագենէս թողնում են «հոգեւոր պատիւ», մերժելով «զանձինս իւրեանց ի ժառանգութենէ Աստուծոյ»: Ողբի իմաստն հէնց այն է որ մարդիկ այնքան փչացել են, որ հրաժարւում են անգամ հոգեւոր բարձր կոչումից: Ճարտասանութիւն կամ դառնութիւն լցուած սրտի:

Պ. Մանանդեանի փաստերն այնքան փխրուն են որ ոչինչ չեն աւելացնում այն լոկ տեսական թելադրութեան թէ հաւանական է որ Հայաստանում եւս ճորտանման վիճակ եղած լինի: Նա կարծում է որ ճորտութիւնը համատարած երեւոյթ չէ եղել, ոչ էլ ամեն տեղ միակերպ եւ նոյնանման, այլ որ գանազան վայրեր ունեցել են իրենց առանձնայատկութիւնները: Պատրաստ է անգամ թոյլ տալ որ ճորտերի կից կարող էին լինել եւ ազատ դիւղացիութեան մնացորդներ: Առանձնայատկութիւնների գոյութիւնն ապացուցանելու համար վկայութեան է կոչւում Խորենացին: «Գիւղից եւ գաւառաց եւս եւ իւրաքանչիւր տանց առանձնականութեանց եւ հանուրց հակառակութեանց եւ դաչանց այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն»[1]: Որոնելի առանձնայատկութիւնները պ. Մանանդեան գտնում է ընդգծած առանձնականութեանց մէջ:

Սակայն պ. Մանանդեան հաշիւ չէ տալիս իր մեկնութեան հետեւանքի մասին: Ցիրաւի, գիւղեր, գաւառներ եւ տներ ինչու պիտի վէճի բռնուէին իրենց առանձնայատկութիւնների առթիւ: Առանձնայատկութիւն ասածդ բնական խորոց է, մի տեսակ noli me tangere, որ ընդհարման առիթ չունի: Պատմիչին երկու կերպ հասկանալ կարելի է: Կամ գիւղեր, գաւառներ եւ մասնաւոր տներ առանձին առանձին, մէկը միւսի հետ եւ բոլորը միասին միմեանց դէմ հակառակութիւններ ունէին, եւ կամ ի նկատի ունենալով կոչումի վերջին մասը, պիտի կարծել որ առանձնականութիւնք այն վէճերն են որ ծագում են սեպուհական իրաւունքի չուրջը ընտանիքից բաժանուել, առանձնական դառնալ, ցանկացողների միջեւ: Առանձնայատկութեանց մասին այստեղ խօսք լինել չի կարող, որովհետեւ անիմաստ է:

Պէտք է խոստովանել, որ պ. Մանանդեան ոչինչ չէ կորցնում, եթէ անգամ հրաժարուի իր մեկնութիւնից: Առանձնայատկութիւնները դուրս է գալիս որ «չեն բացատում ճորտանման վիճակը, որ միեւնոյն բնութիւն պիտի ունենար Հայաստանի բոլոր չրջաններում»: Ասել է թէ յայտարարուած առանձնայատկութիւնները այլ բան չեն քան նոյն ճորտական արտի խոտեր:

Յօդուածագիրը բացատրում է վերջապէս թէ ինչ է հասկանում ճորտութիւն ասելով: Նա գտնում է իրաւամբ որ «ճորտ, ճորտութիւն բառերը բաւականին ճապաղ եւ խառնաչփոթ գաղափարներ են»: Փորձում է պարզել: Դուրս է գալիս որ առանձին չփոթ չկայ, որ երկու տեսակ ճորտ է եղել, համաձայն երկու տարբեր տնտեսութեան, որ մի գերման գիտնական եւ նրա հետեւութեամբ մի ռուս անուանում են Grund եւ Gutsherschaft: Լսում ենք նաեւ, որ Հայաստանում առաջին տեսակի տնտեսութիւնը պիտի եղած լինի, այսինքն, որ նախարարները սեփական տնտեսութիւն չունէին, այլ ապրում էին ստացած հարկերով: Հետեւում է ապացոյց, քաղած Բիւզանդից, դժբախտաբար անյայտ: Ներսէսը պատուիրում է թագաւորին, մեծամեծներին եւ «ամենեցուն որ ոք ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ունելով ընդ իւրեանց ծառայս եւ ընդ կրտսերս եւ ընդ աշակերտս, սիրել իբրեւ զընտանիս եւ մի՛ անարժանս եւ աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զչափն, յուշ առնելով զի եւ նոցա տէր գոյ յերկինս»:

Կարծում ենք որ այստեղ խօսքը հարկերի մասին չէ ընաւ եւ ոչ էլ նախարարների: Պատուէրն ուղղուած է բոլոր նրանց ով ստորադրեալ ունի առհասարակ, ինչպէս տէրը որ ծառայ ունի, մեծը որ կրտսեր ունի, ուսուցիչը որ աշակերտ

1 Մ. Խորենացի (Վենետիկ), Ա. գ., էջ 7:

ունի: Սրանց սասում է որ աւելորդ նեղութիւն չասն, աւելորդ բանութիւն չպրծոցրեն եւ մեկմ վարուին փոքրաւորների հետ: Հարկը այսպէս աւելի իմաստ չունի:

Հարկաւ անյայտ ապացոյցը դեռ ապացոյց չէ հակառակ դրութեան, որ նախարարները հարկ չէին սասնում, ինչպէս եւ հարկ սասնալը ինքնին դեռ չի նշանակում որ սեփական անտեսութիւն չունէին: Երկու տեսակ անտեսութիւնն իրար բացասող երեւոյթներ չեն, այլ կարող են կենակցել բարի հարեւանութեամբ:

Գերման գիտնականից պ. Մանանդեան լսում է, որ իսկական ճորտութեան սղբիւրը հէնց սեփական խոշոր տընտեսութիւնն է, ուստի նրան հաճելի է որ մեր նախարարները միմիայն հարկասու դիրք ունենան եւ ոչ սեփական անտեսութիւն, որպէսզի կարելի լինի յանդել մխիթարական եզրակացութեան, որ «հին Հայաստանի չինականներին պէտք չէ համարել իրաւազուրկ կամ ճորտ այդ բառի լրիւ իմաստով»: Իրական մեկմ դրութեան պատճառն այն է, նրա կարծիքով, որ «խոշոր տեւուսրը եւ տեւուրական կապիտալը Հայաստանում չէին կատարում տասնձին մեծ դեր դիւղատնտեսութեան նկատմամբ»:

Օտարոտի միաք: Որքան յայտնի է, տեւուսրը եւ իր կապիտալը ջրկիրներ չեն ֆէոդալական ծառի համար: Ընդհակառակը նրանց բացակայութեամբ է, որ հողը եւ կալուածատիրութիւնը սասնում է կապիտալի այժ եւ նշանակութիւն:

Կամենալով մօտէն որոշել չինական դասի վիճակը, պ. Մանանդեան դիմում է կանոնագրքին, մասնաւորապէս Շապիհանի ժողովի կարծեցեալ կանոններին եւ տեսնում է որ չինականներն իրաւունք են ունեցել դոյք ունենալ եւ ամուսնանալ առանց կալուածատիրոջ հաճութիւնն սանելու: Այսպէս խնդիրը բաւականին պարզուած համարելով, կրնքում է իր յօդուածը յաստես յայտարարութեամբ որ չինականների դրութիւնը «այնքան էլ մութ ու անորոշ չէ, ինչպէս մինչեւ այժմ կարծուել է»:

6. Ղեկավար տեսութիւններ

Բաբեկամական ուշադրութեամբ հետեւելով քայլ առ քայլ Ց. Մանանդեանի հետազօտութեան, տարաբախտաբար, չեմ կարող յարել նրա յայտարարութեան: Զեմ տեսնում իրօք լուսաբեր շող, որ ընդհանուր տեսութիւնների վերայից անցնելով կար մտնէր չինական երդիկից ներս եւ լուսաւորէր նրա մթութիւնը: Մատենագրական նոր եւ փոքր ի

չատէ արժէքաւոր նիւթեր չկան սեղանի վրայ: Կան յայտնի նիւթերի օտարոտի մեկնութիւններ: Մատենագրական ցուցմունքը պահանջում են դիւրաւոր վերաբերում: Նրանց արժէքը մերկացնելու համար բաւական չէ ասելորական համեմատութիւնը, հարկաւոր է առաջնորդող լոպաներ:

Հայ մատենագրութիւնը որքան եւ ծեր, աւելի մանուկ է քան նախարարական կարգի հիմնական հիւսուածքը: Նրա վրայ նստած է Արշակունի կնիք: Արեւելքում ֆէոդալականութիւնը նոյնքան հին է որքան նրա պատմութիւնը: Բայց այն ֆէոդալ կարգը, որ տեսնում ենք Հայաստանում, դիտաւորապէս Արշակունի գործ է: Արշակունիների անկումից յետոյ բնական է որ նրանց ստեղծած եւ հովանաւորած իրաւակարգը սկսուէր եղծուել, քայքայուել: Երբ հայ դիրը երեւան եկաւ, նախարարական չէնքը արդէն փլուած էր էապէս: Չի կարելի ասել որ անդամ անդրանիկ հայ պատմական գործերը փայլում են նախարարական նիստ ու կացի դիտութեամբ: Լաւագոյն պատմիչը, Բիւզանդ, կամ ժլատ է կամ չատ սեղնակ է: Արշակի շինարարութեան մասին խօսելիս պատեհ ասելի էր պարզելու այն կարգերը, որոնց վերականգնումը յատկացնում է Արշակին: Սակայն, աւելի բան չի գտնում ասելու քան այն, որ սպարապետութիւնը տրում է Մամիկոնեաններին, հազարապետութիւնը Գնունի տան, որ չատ գործակալներ կային եւ որ բարձրի թիւր հասնում էր լինն հարիւրի:

Հայ անդրանիկ պատմական գործերում իրատական միտումները բաւականին մթագնում են իրականութիւնը եւ ճոտմարան լեզուն յաճախ խեղդում է պարզ եւ չիտակ խօսքը: Պատմական կարեւոր տեղեկությունները կորցնում են իրենց անհատականութիւնը հարատանական խառնաշփոթի մէջ: Կանգնել նրանց երբեմնեան ուրոյնութիւնը, որոշել նրանց տեղը հասարակական կազմի մէջ դժուար խնդիր է: Մատենագրական համեմատութիւնները բաւարար միջոց չեն դրական արդիւնքի յանգելու: Հարկաւոր է ուրիշ օժանդակ մեթոդ, առաջնորդող տեսական հայեացք:

Անշուշտ պ. Մանանդեան ունի տեսական հայեացք, մշակուած գերման գիտական կնատպի հետեւողութեամբ: Մեկ թուում է որ վերջնի տեսութիւնը միակողմանի է: Պէտք է հաշուի առնել նաեւ ֆրանսական գիտունի՝ Պիգանիոլի՝ տեսակէտը թէ servageի ծագումը որոնել պէտք է ոչ թէ անտեսութեան եղանակի մէջ, այլ վերադրել մանաւանդ հարկահանութեան յատուկ սիստեմի[1]:

1 **A. Piganiol**, L'impôt de capitation sous le Bas-Empire, p. 61.

Թերի է նաեւ պ. Մանանդեանի դիրքը չինականութեան խնդրում, քանի որ ելակէտ ունի միայն հարկաւորութիւնը եւ անտես է առնում միանգամայն հողային սեփականութեան սկզբունքը:

Կոստանդին Մեծի ժամանակից —հեռուն չգնանք — կայսերական օրէնքը զանազանում էր երկու տեսակ հողային սեփականութիւն, territoria եւ possessiones, այն է պետական հող եւ կալուածական: Ըստ հողի զանազանւում էին եւ գիւղացիք:

Տերիտորիայի վրայ ապրում էր ազատ գիւղացիութիւնը, որ կոչւում էր plebeius, իսկ կալուածական հողերի գիւղացին կոչւում էր colonus: Պլեբէ գիւղացին սեփականատէր էր իր հողամասի եւ վայելում էր սեփականութեան իրաւունքները լիովին: Իր հողային սահմանեալ հարկը հատուցանում էր անմիջապէս պետութեան: Կոլոնը, ընդհակառակը, տէր չէր իր հողի, սեփականութեան իրաւունքը պատկանում էր կալուածատիրոջ, ինքը գիւղացին միայն tenancier, 'կալող կամ հողակալ' էր, եւ հողամասի համար հարկ էր վճարում ոչ միայն պետութեան, այլ եւ առանձին հողավարձ կամ կապալագին էր տալիս կալուածատիրոջ, որ կոչւում էր սովորաբար canon: Կալուածական հողերի սեփականատէրերն էին նախ արքայական տունը, յետոյ եկեղեցին, եւ վերջապէս մասնաւոր անձինք:

Կոլոնները անկախ իրենց հողային տէրերից բաժանւում էին երկու կարգի: Պ. Մանանդեան կամ իր առաջնորդ գերման գիտնականը կարծում է, որ բաժանումը բխում է տնտեսական երկու տարբեր սիստեմներից: Առաջինը իբրեւ թէ հողատիրական է, երբ կալուածատէրը ստանում է միայն հարկեր, երկրորդը հողատնտեսական, երբ կալուածատէրը ինքն է մշակում հողը, բռնի աշխատել տալով գիւղացիներին, որտեղից իբրեւ թէ սկիզբն է առնում ճորտութիւնը:

Այս հայեացքը լոկ տեսական կերտուած է: Պատմական իրականութիւնը կոլոնների զանազանութիւնն այլ կերպ է ներկայացնում: Կայ երկու տեսակ կոլոն, մինն է originalis, 'տեղական', միւսը՝ inquilinus 'եկարնակ'. առաջինը հաստատուած է մշտապէս եւ ժառանգաբար հողի վրայ, երկրորդը մշակում է հողը լոկ ժամանակաւորապէս: Առաջինը մուծուած է հարկային ցուցակի մէջ adscripti censibus է, և պարտաւոր է վճարել պետական հարկ, բացի կալուածատիրոջ հասանելի հողագնից: Երկրորդը չէ ցուցակագրուած եւ հարկ չէ վճարում պետութեան, այլ որպէս ազատ ձեռք իր

հողային աշխատանքի համար ստանում է վարձ հողատիրոջից: Առաջինը կոչւում է այս պատճառով adscripticius 'ցուցակագրուած', երկրորդը՝ ազատ կոլոն:

Ցուցակագրուած կոլոնների դժբախտութիւնը սկսւում է այն օրից, երբ պետական գանձարանը հրահանգում է որ կալուածատէրերը պատասխանատու են իրենց կոլոնների հարկերի գանձման համար[1]: Կալուածատիրոջն է պատկանում հողը եւ ուրեմն նա է պատասխանատուն իր հողից պետութեան հասանելիք հարկի համար: Հեռանայ գիւղից կոլոնը, ուրիշ ասպարէզ ընտրէ, կամ մինչեւ իսկ մեռնի, միեւնոյն է, նրա բաժին հողի հարկը պարտաւոր է վճարել կալուածատէրը:

Այս օրէնքն արդէն բաւական է որ կոլոնը կորցնէ տեղաշարժի ազատութիւնը եւ մեխուի հողին: Կալուածատիրոջ անձնական շահը պահանջում է որ չթողնէ կոլոնին լքել իր հողը: Կոլոնը չղթայւում է հողին: Որպէսզի ապահովէ տուրքերի գանձումը կալուածատէրը հարկ է համարում ձեռք դնել գիւղացու գոյքի վրայ, պատրաստ գրաւելու եթէ գիւղացին թերանայ իր պարտքը կատարել: Առաջ կոլոնը պետութեան հպատակ էր, այժմ դառնում է կալուածատէր անհատի հպատակ, անպաշտպան, ենթակայ նրա կամքին: Նախկին colonus դառնում է servus:

Այս փոփոխութիւնը արձանագրուած է արդէն Դ դարի վերջերին: Արկադ եւ Հոնոր կայսրները խոստովանում են, որ ցուցակագրուած կոլոնները, adscripti censibus, գրեթէ մատնուած են ճորտութեան quadam servitute dediti:

Ազատ կոլոնների դրութիւնը եւս վատթարանում է: Օրէնք կար, որ որդին ժառանգում է հօր վիճակը, լինի պլեբէ թէ կոլոն: Անաստաս կայսրի († 518) օրէնքով, մի կոլոն որ 30 տարի աշխատում է միեւնոյն կալուածում, չի կարող այլեւս թողնել իր տեղը եւ մնում է կապուած հողին[2]: Կարծում են, որ այս օրէնքը վերաբերում է իսկապէս ազատ կոլոններին: Սրանք յամենայն դէպս չեն իջնում մինչեւ ցուցակագրուած կոլոնների աստիճանը, պահելով որոշ ազատութիւն:

Հռոմէական վերջալոյսի այս կարգերը յարատեւում են Բիւզանդական շրջանում: Փոխւում են միայն անունները : Սեփականատէր գիւղացիների հողերը կոչւում են ὁμόκενσα կոլոններինը՝ ὁμόδουλος պլեբէ վերակոչւում է χωρίτης կամ

1 C. J. XI, 50, 2. **Piganiol**, L'Impôt, 83.
2 C. J. XI, 48, 19. **Piganiol**, p. 85.

κύριος. Ապա ընդունում է աւելի որոշ անուն μισθωτός 'վարձկալ կամ վարձաւոր', իսկ հետագայում μορτάτης 'բաժնեւոր', ցուցակաւոր կոլոնը պահում է իր անունը յունական թարգմանութեամբ՝ ἐπανόφραφος: Ութերորդ դարում Խոսրովեան օրէնսդրութեամբ կոլոնները յայտարարւում են արձակ իրենց հողային կապակցութիւնից:

Արեւմտեան մեծ հարեւանի գիւղացիութեան վիճակը կարող է ուղեցոյց լինել մեզ համար եւ ոչ միայն տեսական նկատումով: Փոքր Ասիան անծանօթ երկիր չէ Իրանական քաղաքակրթութեան: Աքեմենեան աշխարհակալների օրերից նա ենթակայ է եղել Իրանի ոչ միայն քաղաքական իշխանութեան, այլ եւ կրել է տարրական անտեսութեան ազդեցութիւնը: Փոքր Ասիական երկրները մտնում էին Դարեհի հարկային սիստեմի մէջ: Սելեւկեան շրջանում եւս միեւնոյն տէրերն էին եւ կառավարութեան միեւնոյն եղանակը: Սասանեանների ժամանակ անմիջական դրացիներ էին եւ փոխադարձ ազդեցութեան տակ: Խոսրով Նուշիրուանի նորոգումները, նրա մուծած հարկային նոր սիստեմը, կարծում են, պարզ ընդօրինակութիւն է Բիւզանդական կարգերի, որ հիմնուած են Դիոկղետիանոսի ժամանակ եւ նրա ձեռքով:

Ընդհանուր նմանութիւն, չօշափման կէտեր, հնարաւոր են Բիւզանդիայի եւ Իրանական աշխարհի հարկատու ժողովրդեան դրութեան մէջ: Բիւզանդական կարգերը, որ շատ աւելի որոշ են եւ աներկբայ, կարող են առաջնորդել դէթ ուղիղ շաւղի վրայ դնելու իրանական եւ նրա հետ հայ գիւղացիութեան վիճակի ուսումնասիրութիւնը: Մինչեւ Սասանեանների անկումը Հայաստանը մնում է, ինչպէս էր, իրանական դասական քաղաքակրթութեան մտերանկարը:

Առաջին հարցը վերաբերում է հողերի տեսակին, ինչ որ կոչւում է «պետական» եւ «կալուածատիրական»: Որ Արշակունի թագաւորական տունը ունէր սեփական հողեր, նախարարական տների նման, անտարակոյս է: Սակայն դժուար է ենթադրել, որ ամբողջ երկիրը բաժանուած լինէր թագաւորի եւ նախարարների եւ ընդհանրապէս ազատների միջեւ: Պէտք է կարծել, որ հողի մեծագոյն մասը պետական էր, ուրեմն թագաւորական, բաւական լայն մտքով: Ատենին կեանքում աչքի չէր ընկնում այս տարբերութիւնը, մանաւանդ որ ամբողջ պետութիւնը եւ երկիրը կապուած էր Արշակունի անուան: Ուստի մատենագրութեան մէջ եւս տարբերութիւնը չէ նկատւում: Արտաքերս բերդը, ըստ Փաւստոսի, կրանում է «յերկրին Արշակունեաց»: Ասել է թէ կայ Արշակունեաց երկիր, ինչպէս կան Մամիկոնեան, Արծրունեաց եւ այլ նախարարական երկրներ:

Միւս կողմից՝ պատմագիրը դիտէ ոչ միայն տէրութիւն Արշակունեաց, այլ եւ «տէրութիւն թագաւորութեան Հայոց աշխարհի երկրի»[1]: Ի՞նչ է արքունի տունը եւ ատանը, որպէս հողային հասկացողութիւն: Արդեօք չէ՞ն թագցնում իրենց մէջ արքայական եւ պետական հողերի դրեթէ մոռացուած եւ ձուլուած տարբերութիւնը:

Արշակունեաց տունը, ուրիշ բան չէր, եթէ ոչ մի մեծ նախարարութիւն: Նա էր որ կերտել էր միւս տները բոլոր պատկերի իւրում: Գուցէ եւ արքայական տան եւ պետութեան հողերի հասկացողութիւնը մի էր եւ չէր զատւում միմիանցից: Սակայն, նրանց անկումից յետոյ տեսնում ենք ազատնիկ ազատներ, որ ժառանգել են բուն Արշակունի հողերը, կամ մի մասը: Մնացածը ճանաչւում է պետական սեփականութիւն, երբ վերջապէսական իրաւունքն անցնում է Սասանեան միապետներին:

Հիմք կայ ամենն պարզային զանազանելու երկու տեսակ հող՝ թագաւորական եւ նախարարական, եւ կամ պետական եւ կալուածատիրական, որա մէջ հաշուելով արքայական տան, նախարարների եւ եկեղեցու հողերը: Տարբեր հողերը ենթադրում են եւ տարբեր գիւղացիներ: Արդեօք կարելի՞ է յառաջանալ եւ տարբերութիւն տեսնել չինականի եւ սամիկի մէջ, մէկը համեմատելով պլեբէի հետ, միւսը մերձ համարելով կոլոնի[2]:

Փաւստոս խօսելով Արշակի գործերի մասին, ասում է. «Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն, աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, չինականաշէն ազգն Գնունեաց, հազարապետն ամենայն երկրի»:

Նախադասութիւնը ճոռոմ է, բայց իմաստը պարզ է: Արշակ թագաւորը սկիզբ է դնում կամ վերականգնում է հազարապետութեան գործակալութիւնը, այսինքն պաշտօնը, եւ յանձնում է Գնունեաց ազգին: Հազարապետութիւնը «աշխարհատես խնամակալութիւն է», «աշխարհաշէն դեհկանութիւն», իսկ Գնունիք՝ չինականաշէն:

Ի՞նչ է նշանակում իրապէս հազարապետութիւն, եւ

---

1 Փաւստոս, Դ. գլ. 2:

2 Վերոյիշեալ Սոգդի ռամկանիկ բառը հատնօրէն նոյնն է ինչ որ գահնամակի ռամկանը, որ նոր լոյս է սփռում ռամկան նամա ցուցակի վերայ: Նախարարական հեծեալների ցուցակն է այսպէս կոչում: Հիմ կայ, ուրեմն, կարծելու, որ ռամիկ, ռամկական նախարարական գիւղացիներն են, որոնցից կազմուած էր այրուձին:

ի՞նչ է դեհկանութիւնը: Պարսից դրան հազարապետը նոյնն էր, ինչ որ վզուրկ հրամատար (ոչ հրամանատար): Հոչակաւոր Միհրներսէհին, Յազկերտ Բ.ի մինիստրին, Եղիշէն անուանում է հազարապետ, մինչդեռ ինքը Միհրներսէհ իրեն կոչում է վզուրկ հրամատար <ի> Երան եւ Տաներան: Հրամատարը Սասանեան պետերի առաջին եւ գլխաւոր մինիստրն էր: Նրա ձեռքի տակ էր եւ պալատական թիկնապահ գունդը, որտեղից ծագում է եւ նրա հազարապետ կոչումը: Պարսից հազարապետը աւելի արտաքին գործոց մինիստրի է նմանում, մինչ Հայոց մօտ թւում է որ ներքին գործոց հետ կապ ունի:

Փաւստոսի խօսքերից ակներեւ է, որ հազարապետին ենթակայ էր չինականութիւնը, ուրեմն հարկերի գանձման հոգսը նրա վրայ էր: «Շինականաչէն» Գնունեաց ազգի պաշտօնը կապւում է «դեհկանութեան»: Հինաւուրց տերմին նոր բովանդակութեամբ: Դեհ, որ ժամանակով նշանակում էր աշխարհ, հետզհետէ սեղմուելով յանգում է գիւղի: Դեհկանն էլ, դեհի պետը, ազնուական բարձրութիւնից իջնում է մինչեւ հասարակ գիւղացու աստիճան:

Սասանեան շրջանում դեհկանը գիւղական փոքր կալուածատէր ազնուական էր, եւ երբեմն այնքան աննշան հողատէր էր, որ չէր տարբերւում սովորական գիւղացուց[1]: Յաճախ կառավարութեան ներկայացուցիչներն էին դեհկանները իրենց տեղերում, որոնց յանձնւում էր առաւելապէս հարկերի գանձումը: Դեհկանի վարչական պաշտօնը մի կողմից եւ իր անձնական դրութիւնը որպէս գրեթէ գիւղացի միւս կողմից թելադրում են կրկնակի իմաստ դեհկանութիւն բառի, հարկահանութիւն եւ չինականութիւն: Փաւստոսի մօտ կարծես գործ է ածուած դեհկանութիւն որպէս հոմանիշ հազարապետութեան եւ ուրեմն հարկահաւաքի իմաստով: Նոյն հեղինակը հազարապետութիւնը հակադրում է սպարապետութեան: Մէկի տեսչութեան տակ է գտնւում չինականութիւնը, հարկատու դասը, միւսը տէր է զինուորական ոյժերի, եւ գլուխ ազատ դասի, որի պարտականութիւնը հանդէպ արքայական գահի զինուորական ծառայութիւն էր եւ ուրեմն նրանց այրուձին կազմ եւ պատրաստ պահելը սպարապետի գործն է:

Արդ եթէ Արշակունի թագաւորը առանձին հազարապետ ունէր հարկերը գանձելու համար, նա արքայական տան գիւղերի համար չէր: Այս դէպքում ամեն մի նախարարական

1 Nöldke, Tabari, վերջին գլուխը:

տուն պէտք է իր հազարապետն ունենար, ինչ որ անհաւանական է եւ որի մասին ակնարկ չկայ մատենագիրների մօտ: Պետական հազարապետն աւելի լայն շրջանի չինականութեան համար էր: Եթէ միայն արքայական գիւղերի տնտեսութեան հսկիչ լինէր, թագի անկումից յետոյ պիտի վերանար: Այն ինչ հազարապետութեան պաշտօնը մնում է եւ կոչւում է «հազարապետ աշխարհի»: Եղիշէն աւելացնում է՝ «իբրեւ զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից», որով հաստատւում է Փաւստոսի խօսքերը թէ հազարապետը հարկատու դասի, աշխարհականութեան, խնամակալն ու հոգածուն էր:

Արշակունեաց անկումից յետոյ Պարսիկները նոր աշխարհագիր են անում, հարկերի չափը որոշում եւ նշանակում պարսիկ հազարապետ: Նրանց ժամանակ եւ յետոյ պէտք է ենթադրել որ կար հոծ չինականութիւն, որ մշակում էր իր բաժին հողը որպէս սեփականատէր: Կարող ենք անուանել ազատ չինականութիւն, նրանց գիւղերը vici libri: Մեծամեծ նախարարների, դատաւորների եւ գործակալների կից Փաւստոս յիշում է «դատաւորք չինականաց»: Սրանք վերաբերում են հաւանօրէն այս հողատէր չինականութեան[1]:

Պետական չինականութիւնից զատ է կալուածատիրականը կամ նախարարականը: Կլասիկ հեղինակները մասյ դոյներով են նկարագրում Իրանի գիւղացիութիւնը: Ամմիան Մարկելինը հաստատում է, որ պարսիկ ազնուականութիւնն անգամ մահուան եւ կեանքի իրաւունք ունէր սարկների եւ ժողովրդի վրայ: Հենելաղօրի եռեւից ընթանում էր հեռաւոր խուժանը մատնուած մշտական ստրկութեան, addicta perenni servitio, կարծես զինուորական ծառաներ լինէին, calones[2]:

Աւելի հին պատմիչ Յուստինը բաժանում է պարթեւ հասարակութիւնը ազատների եւ ստրկների, liberi եւ servi[3]:

Անշուշտ դոյները խառնած են եւ վերաբերում են հաւանօրէն ոչ բոլոր չինականութեան, այլ առաւել իշխանական գիւղացիներին: Սրանք իրօք servi էին: Խուսափում են գործածել ճորտ բառը, որը թէեւ հազարամեայ հասակ ունի, բայց մեզ զբաղեցնող շրջանի նկատմամբ շատ նոր բառ է: Հետաքրքրականը հէնց այն է թէ ինչպէս էին կոչում հնում այն ինչ որ հետագայում ճորտ էր առում: Բառն ինքնին շատ բան կը պարզէր գիւղացիների դրութեան մասին, ինչպէս եւ

1 Փաւստոս, Դ. 51:
2 Ammianus Marcellinus, XXIII, 6.
3 Տես մեր՝ Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, էջ 375-ետեւեալներ:

ստրուկ բառի ստուգաբանութիւնը որ տակաւին անյայտ է:

Նոյն Ցուստինը պատմում է, որ պարթեւական ազատները սովորութիւն ունէին պատերազմի տանելու իրենց սերվերին, նախապէս ընտելացնում էին նրան զինական արուեստի եւ հեծելութեան: Կասկած չկայ, որ խօսքը ազատների գիւղացիների մասին է: Հայոց մէջ եւս յիշւում է «ռամիկ այրուձի», «ռամիկսպաս զօրք», թերեւս, «ռամիկ սպասզօրք», որ հաւանօրէն կազմում էին նախարարների հպատակ գիւղացիները: Զինաչարժի վարժեցնել կամ ձի նստել սովորեցնել կարող էր իշխանը իր սեփական գիւղում եւ իր գիւղացիներին:

Տարօրինակ է, որ չի յիշւում երբեք շինական այրուձի: Կարելի՞ է հետեւցնել, որ ռամիկը իշխանական գիւղացին է:

Արիստոտէլին վերագրուած, բայց ապահովապէս նրան չպատկանող Տնտեսութիւն գրուածքում յիշւում են մի քանի տնտեսութիւններ, ի միջի այլոց սատրապականը: Սրա եկամուտների մէջ կարեւոր է համարւում հողային հարկ ἐκφόριος և δεκάτη: Գիտնականները կարծում են, որ մէկը արքայական հողերի հասն է, միւսը՝ պետական: Թերեւս, աւելի ճշմարիտ կը լինէր ասել որ երկու տեսակ հարկը երկու կարգի գիւղերից է, սատրապական եւ պետական: Նոյնը ասելու է եւ հայ սատրապների, նախարարների նկատմամբ: Հայ հեղինակները վկայում են որ նախարարները եւ ազատները ունէին գիւղեր և ագարակներ: Թէ Արշակունի և թէ Սասանեան թագաւորները վարձատրել կամենալով իշխաններին պարգեւում էին «գիւղեան և ագարագս»: Ագարագ ասելով պէտք է հասկանալ այն հողերը, որ մշակում էին իշխաններն իրենք անձամբ թէ ծառաների միջոցով եւ որ կազմում էին նրանց անձնական տնտեսութիւնը: Փաւստոսի պատմութիւնը Խաղի եղների մասին ցոյց է տալիս որ եկեղեցին եւս ունէր սեփական տնտեսութիւն, նմանելով նախարարական տներին: Եկեղեցին շատ կէտերում նախարարացած էր:

Թւում է, որ նախարարների կամ տանուտէրների հետ յաճախ յիշուող ազատները կամ ազատանի, կազմում էին հայ հողային ազնուականութեան աւելի ցած դասը: Ազատ բառը միայն ընդհանուր կոչում չէր նախարարականութեան դասի, այլ նշանակում էր նաեւ մանր ազնուականութիւն, նման Իրանի ազատներին:

Հաւանական է, որ նրանք սկզբնապէս Արշակունիների հետ Հայաստան տեղափոխուած յաղթական Պարթեւ ընտանիքի զաւակներն էին: Պարսիկ ազատները, ինչպէս ենթադրւում է, արիական ցեղի մնացորդներն էին: Հայ ընկճ-

ւած իրականութիւնը չի կարող այդքան հեռու գնալ եւ բարձրանալ մինչեւ Արմենները: Բառը պարթեւական ծագում ունի եւ կրողներն եւս ամենայն հաւանականութեամբ Պարթեւ տոհմեր էին: Հետագայում սրանք կոչւում են հեծեալ, ինչպէս որ Իրանի ազատները կազմում են Սասանեան շրջանում aswar, այսինքն ձիաւորների դասը: Ազատանի ապրում էր գիւղերում եւ խաղաղ ժամանակ զբաղուած էր իր տնտեսութեամբ եւ գիւղերով: Պարսիկ զեհկան ազնուականը դառնում է գիւղի քետխուդա եւ ի վերջոյ ձուլւում գիւղացիութեան հետ: Հայ ազատանին եւս նման բախտ է ունեցել:

Պատահական չէ եւ ոչ էլ գրական ճամբով է, որ հին տանուտէրը եկել դարձել է հոմանիշ գիւղական քետխուդայի: Հասարակական վայրէջք է: Փաւստոսին ծանօթ Կարնազատները հաւանական կարապետներ էին վայրէջի վրայ կանգնած ազատների: Արեւելեան պահպանող ոգին հիմ է տալիս համեմատելու նրանց նոր ժամանակների մանր մելիքների եւ բէկերի հետ, որոնցից շատերը գիւղական քետխուդաներ էին եւ ուրիշները ոչնչով չէին զանազանւում գիւղացիներից, միայն ազատ էին հարկերից: Խոշոր նախարարական տները, նրանք որ «դաւառատերք» էին եւ «կուսակալք, կողմնակալք», եւ կազմում էին փոքր իշխանական մարմիններ, գուցէ և առանձին տնտեսութիւն չունէին: Հինգ յայտնի ինքնավար իշխանութիւնները, որոնց անկախութիւնը ճանաչուած էր Պարսից եւ Բիւզանդիայի կողմից, կարող էին տիպար համարուել հայ մեծամեծ նախարարութեանց, ոչ միայն բդեշխների, այլ եւ Բագրատունի, Արծրունի եւ Մամիկոնեան տների:

Սակայն, երբ զարգանում է սեպուհական իրաւունքը և նրա զօրութեամբ մեծ տները քայքայւում են եւ վեր ածւում մանր սեպուհական կենտրոնների, պէտք է ենթադրել, որ սրանք ոչ միայն տէր էին գիւղերի, այլ եւ ունէին ագարակներ իրենց անմիջական խնամածութեան տակ:

Նախարարական կամ կալուածատիրական հողատիրութեան իրաւական բնոյթը իր մանրամասնութեան մէջ յայտնի չէ: Կան տեսակ տեսակ հողեր՝ հայրենի, պարգեւական եւ սակագին: Սրանց յարաբերութիւնը անմիջական տէրերի հետ կարող էր միակերպ չլինել: Երկրի վեհապետի դիրքը եւս սրանց հանդէպ մութ է:

Չի կարելի անգամ վստահել որ նախարարական հողերը բոլորն էլ ազատ լինէին պետական ծանրութիւնից: Դուինի ժողովի կանոններից մէկը յայտարարում է որ եկեղեցականները «ընդ ազատաց տոհմին են կարգեալ», որ եկեղեցու

հողն ու ջուրը ազատ է, եւ երէցների տները «ի դիւանին եկեալ են, բայց միայն զհասն տալ յարքունիս»: Ասել է թէ ազատ հողը պարտաւոր էր որոշ հաս տալ պետական գանձարանին: Այս ակամայ խոստովանութիւնը կարեւոր է: Եկեղեցին արտացոլում է նախարարական միջավայրի կարգերը եւ իր ազատութիւնը նախարարականի պատճէն է: Իրաւունք ունինք կասկածելու, որ նախարարական հողերին եւս անծանօթ չէ եղել արքունական հասի վճարումը:

Այս պարագան նոր լոյս է սփռում գեհկանների հարկահանութեան վրայ: Ոչ թէ Սասանեան բիւրոկրատիան էր նրանց յանձնել հարկերի գանձումը, այլ հին իրաւունք էր, որ պահել էին փառքի վերջալոյսին դէմ դիւղական նեղ շրջանում: Այս նշանակում է, որ պետական գանձարանը ստանալիք ունէր նաեւ նախարարական գիւղերից: Ուրիշ խօսքով Բիւզանդական կոլոնների նման նախարարական գիւղացիք վճարելու էին canon հողատիրոջ եւ որոշ հաս կամ հողահարկ պետութեան:

Եթէ միայն ճիշտ է այս ենթադրութիւնը, կարելի է ասել թէ պատրաստ է այն դուռը, որ տանում է կոլոնատից դէպի սերված, միայն թէ միւս պայմանները ներեն: Այս պայմանների մէջ պէտք է դասել ամենից առաջ հողի եւ բնակչութեան յարաբերական չափը: Գիւղացու շղթայումը հողին հետեւանք է այն երեւոյթի, որ աշխատող, մշակող ձեռքերն աւելի քիչ են եղել քան հողը և աւելի թանգ: Անընդհատ պատերազմների եւ այլ աղէտների պատճառով Բիւզանդիայում բնակչութիւնը նօսրացել էր եւ բաւական չէր լայնածիր տարածութիւնները մշակելու համար: Հողատէրերի եւ պետութեան շահերը համերաշխաբար պահանջում էին չթողնել որ հեռանան միանգամ ձեռք բերած աշխատող ոյժերը, ուրեմն, գիւղացուն մեխել հողին եւ զրկել նրան տեղաշարժի եւ անձնական ազատութեան իրաւունքից: Սրանով ստեղծւում է կոլոնի համար այն դրութիւնը, որ կոչւում է սերված:

Հայաստանում պակաս չէին սով, սրածութիւն եւ անթիւ կոտորածներ: Սակայն, որքան նուազում է ժողովուրդը, աւելի մեծ չափով պակասում էր եւ հողատէր ազնուականութիւնը: Քաղաքական ազէտների առաջին զոհերը ազատներն էին:

Միւս կողմից երկրագործութեան պիտանի դաշտերը այնքան մեծ ծաւալ չունէին, որ նրանց մշակման համար ձեռքերի սակաւութիւն զգացուէր: Հիմք կայ կարծելու, որ նախարարական կարգերի ծաղկման շրջանում միշտ հողն էր պակաս քան մարդը: Վրացերէն լեզուն ունի բոգանի բառը,

որ նշանակում է հողագուրկ գիւղացի, նման ռուսական «բոբիլ»ի: Սա ուրիշ բան չէ եթէ ոչ հայերէն բոկանի, որ երեմն ունեցել է այդ իմաստը եւ իր հետ տարել է եւ պահել վրաց լեզուում: Կարեւոր տերմին է թւում և ոչ սովորական բառ, եւ հին վկայ սակաւահողութեան: Հողի եւ աշխատանքի համեմատական չափը նպաստաւոր պայման չէր, որ սերվածը բողբոջէր Հայաստանում արեւմտեան ֆէոդալականութեան յատուկ երանգներով:

Կարիք չկայ նկատելու որ այս բոլորը մութ հարցեր են, կարօտ տակաւին հետաքննին լուսաբանութեան: Մեր անցյակի նկատողութիւնները վկայում են խնդրի բարդութիւնը[1]: Թափանցել հինը դժուար է, երբ նոր ժամանակների գիւղական հոգեյին պայմանները, ո՛չ պաշտօնական, այլ սովորութեան դծերը մնում են դեռ այնքան սակաւածանօթ: Թերեւս գանուին ընթերցողներից հետաքրքրուողներ, որոնք կ՝արձանագրեն դէմ այն միջավայրի, որտեղից եկած է, հողատիրական եւ հարկային առանձնայատկութիւնները: Գիտենք որ այդպիսիները կան գանազան վայրերում և գանազանապէս: Սրանով վրկած կը լինեն ինչ որ կարտասի է մատնուած եւ որոշ նպաստ կը բերեն, թերեւս, եւ անցեալի ուսումնասիրութեան:

---

1 Նոյն հարցերին է նուիրուած եւ մեր յօդուածը L'Aspect iranien du servage, extrait du « Recueil de la Société Jean Bodin », 1937.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵՀԱՆՔԸ

Երեւանի «Գիտական Տեղեկագրում» կայ մի յօդուած հայ անցեալին վերաբերեալ, բաւականին մեծաքան վերնագրով, «Յոյն պատմիչների վկայութիւնը հին Հայաստանի ոսկեհանքերի եւ նրանց տեղի մասին. տեղագրական ուսումնասիրութիւն»:

Յօդուածը պատկանում է պ. Ա. Խաչատրեանին, Սանասարեան դպրոցի նախկին ուսուցիչներից մէկին:

Յօդուածի ճակատը զարդարուած է իրատարանական քանդակով, առնուած Վալդեմար Բելկից, որի միտքն է թէ «առանց ընդհանուր աշխարհագրական աղերսների գիտնալու» եւ «առանց տեղական մասնաւոր յարաբերութիւնները ճշտելու» մարդ չի կարող արդիւնաւոր լինել աշխարհագրական խնդիրներում:

Մեծ իմաստութիւն չէ, հարկաւ: Բայց միթթարական է դոնէ կարծել, որ պ. Խաչատրեան իւրացրել է այս իմաստութիւնը, եւ ուրեմն կարելի է յուսալ, որ տեղի վրայ կատարած ուսումնասիրութիւն ունի և այդ ուսումնասիրութեամբ յաջողել է վանել հայ բանասիրութեան երեսից ինչ ինչ աշխարհագրական կնճիռներ:

Յօդուածի մեծ վերնագիրը չպիտի չիթթէ ընթերցողին: Խօսքը միայն երկու յոյն պատմիչի մասին է, Ստրաբոն եւ Պրոկոպ, եւ սրանց վկայութիւնն էլ մեծ բան չէ, դրեթէ einsilbig, ինչպէս կ'ասեն Գերմանացիք: Ստրաբոն յիշում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին աչք է ունեցել Կաբալլայի ոսկեհանքի վրայ, որ գտնւում էր Սի(ս)պիրիտի մէջ: Սի(ս)պիրիտ հայ Սպեր գաւառն է եւ Կաբալլա այն տեղի անունը, ուր էր ոսկեհանքը նոյն գաւառում:

Աւստրիացի դպրոցական մի ուսուցիչ, Մոնցկա անունով, այն միտքն է յայտնել, թէ Սի(ս)պիրիտ որոնելու է Հայաստանի հարաւային սահմաններում, մեծ աշխարհակալի ճանապարհի մօտիկ: Մի անհատական կարծիք, անկարող խախտելու ինչ որ ընդունուած է:

Պ. Խաչատրեան մեծ աշխոյժով արշաւում է Մոնցկայի վրայ եւ, այն ինչ սպասւում է, որ «տեղագրական ուսումնասիրութեամբ» ջախջախէ իր հակառակորդին, ընդհակառակն նա նահանջում է, «մի աւելի կարեւոր առաջարկութիւն անելով ի նպաստ Մոնցկայի կարծիքի» եւ համաձայն է, որ Սի(ս)պիրիտ գտնուելու է Տիգրիսի աւազանում: Իսկ ոսկեհանքե՞րը: Ոչ, հանքերը թողնում է Սպերում, «մինչեւ որ չհաստատուի ոսկու հանքի գոյութիւնը» Տիգրիսի աւազանում:

Այսպէս է սկսում եւ այսպէս փակում յոյն պատմիչի վկայութեան քննութիւնը: Եւ այս կոչւում է «տեղագրական ուսումնասիրութիւն»:

Սակայն, երեւում է, որ պ. Խաչատրեանի ուսումնասիրութեան նիւթը իսկապէս Ստրաբոնը չէ: Կաբալլայի ոսկու խնդիրը նա յարուցանում է որպէս մի մարզանք, մի տեսակ յեսան, ուր սրում է իր գիտական միտքը, որպէսզի աւելի յաջողութեամբ ճակատէ միւս պատմիչի վկայութեան շուրջ:

Պատմիչը Պրոկոպն է եւ Մոնցկայի դերում՝ մենք: Իր աշխատութիւնը վերջացնելուց յետոյ բաւականին ժամանակ է անցնում, եւ պ. Խաչատրեան իմանում է, որ նոյն խնդրով զբաղուել ենք եւ մենք: Դուրս է գալիս, որ «իրարից անկախ (մի՛ տա աէք, քսանից աւելի տարի յառաջ գրածս անկախ նրանից) երկուսս էլ, ինչպէս յայտարարում է պ. Խաչատրեան, յանգել ենք երբեմն նոյն եզրակացութեան, չատ կէտերում էլ իրարից տարբերւում ենք»:

Արդոյ բանասէրը բերում է մեր բացատրութիւնները, քննում է, հակասութիւններ է գտնում, ջրում, հերքում եւ հետեւեալ դատակնիքն է արձակում.

«Հեղինակը չի կարողացել պատկերացնել տեղագրական պայմանները եւ արդէն առանց երկիրը անձամբ տեսած լինելու, կարելի չէ, մանաւանդ երբ ուշադրութեան չառնուին աղբիւրների մանրամասնութիւնները, ինչպէս եղել է այս դէպքում»:

Ահա ծանր ամբաստանութիւն, որից հետեւում է, թէ յօդուածի ճակատագարդ motto, Բելկի խօսքը, ուղղուած է մեր դէմ: Մեղապարտ ենք, ուրեմն, որ տեղագրութեան ծանօթ չենք, եւ աղբիւրների մանրամասնիքը անտես ենք արել: Ասել է, թէ այս երկու արատից զերծ է պ. Խաչատրեան, որ տեսել է երկիրը, ուսումնասիրել աշխարհագրական պայմանները, այլ եւ լիովին օգտաւէտել է պատմական աղբիւրները իրենց մանրամասնութեամբ:

Տեսնենք, որքան արդարացի են այս յայտարարութիւնները:

1. Պրոկոպ յոյն պատմիչը յիշում է երկու աշխարհա-

գրական կէտ, Bolon, որ միշտ կոչում է Phrourion «բերդ», եւ Pharangion, որ երբեք չի կոչում բերդ։ Առաջնի, Բոլոնի, համար ասում է թէ գտնում է Թէոդոսուպոլսի (որ է Կարին = Էրզրում) սահմաններին մօտիկ։ Իսկ Փարանգիոն այն տեղն է, ուր կար սակէհանք, եւ շատ մօտ էր Վոհ կամ Ճորոխ գետի ակունքին։

Բոլոն բերդը ծանօթ է հայ մատենագրութեան։ Սա այն բերդն է, որ Փարպեցին կոչում է Բոզբերդ եւ դնում է Բասենում։ Բասենը Կարինի թիկունքն է, եւ ուրեմն Պրոկոպ իրաւունք ունէր ասելու, որ Բոլոն բերդը Կարինի սահմաններին մօտ էր։

Փարանգիոնը անծանօթ է մեր մատենագրութեան, բայց Պրոկոպի այն ցուցումից թէ գտնում էր Ճորոխի ակունքում եւ թէ յայտնի էր սակէհանքով, պարզ հետեւում է, որ խօսքը Սպերի շրջակայքում գտնուած սակէհանքի մասին է, որովհետեւ Ճորոխի ակունքը իրօք գտնում է Սպերի տակեւ բարձրացող լեռների մէջ։ Նոյն տեղն է Փարանգիոնը, ինչ որ Սարարոնի Կաբալլա։

Լոյսի պէս պարզ է։ Եւ այս ճշմարտութեան դէմ է երթում պ. Խաչատրեան, առարկում է, հակասութիւններ է գտնում մեր խօսքերի մէջ, ասելով նկատելու, որ հակասութեան աղբիւրն ինքն է, իր հիմնովին սխալ հասկացողութիւնը, որով պատմիչի յիշած երկու տեղերը ճուլում է, կարծելով որ նրանք գտնում են միեւնոյն տեղ իրար կից։ Այս պատճառով էլ Փարանգիոնին է վերագրում, ինչ որ պատմիչն ասում է Բոլոնի մասին, եւ ընդհակառակը Բոլոնին է տալիս, ինչ որ վերաբերում է Փարանգիոնին։

Հիմնական սխալ, որ փոչի է դարձնում ոչ միայն նրա առարկութիւնները, այլ եւ ամբողջ ուսումնասիրութիւնը։

«Պրոկոպ Բոզ եւ Փարանգիոն միշտ «անբաժան» է լինում, գրում է պ. Խաչատրեան, եւ որտեղի ասում թէ սակէհանքը գտնում էր նրանց մօտ։ Իսկ Աղոնց սակէհանքը գտնում է Սպերի մօտ, ուստի չէր կարող Բասենի սահմանների վրայ գտնուել»։

Ո՛չ, պ. Խաչատրեան, Պրոկոպ այդ չէ ասում, այլ այն, որ սակէհանքը գտնում է Փարանգիոն, իսկ Բոզ՝ Բասենում։

Տարբերութիւնը մեծ է։

Այս հանգամանքը գանց առնելով պ. Խաչատրեան գրում է, որ մեր տեղագրական բացատրութիւնը չէ նպաստում խնդրի լուծման։ Երեսը դարձնում է մեզնից եւ առաջարկում դիմել Պրոկոպին, որ նրա ասած մանրամասնութիւնների միջոցով կարողանայ ճշտել սակէհանքի տեղը, քանի որ մեզ յանդիմանեց որ ուշադրութեան չենք առել մանրամասնութիւնները։

Արդեւ բանասէրը բերում է միասմի Պրոկոպի տեղեկութիւնները։ Հետեւենք նրան։ Գեղեցիկ ասէթ է ծանօթանալու նաեւ նրա բանասիրական կարողութիւնների հետ։

Պրոկոպ ասում է բուն Խաչատրեանի՝

1. Հոսոմները «պահանջեցին պարսկական մի քանի բերդեր Պարսկահայքում, որոնք են Բոլոնի բերդը եւ Փառանգիոն անուանուած բերդը որն այն տեղում է (!), ուր Պարսիկները ոսկի են հանում, որը ասում են արքային»։

2. Իսոհակ Կամսարականը «Հոսոմներին յանձնեց Բոլոն բերդը, որը շատ մօտ էր գտնում Թէոդոսիուպոլսի սահմանին»։

3. Պարսից թագաւորը «պահանջում է որ Հոսոմները պէտք է վերադարձնեն Փառանդիոն եւ Բոլոն բերդերը(!)»։

4. «Հոսոմները վերադարձնում են պարսիկներին երկու բերդերը(!) Փառանդիոն եւ Բոլոն»։

5. Ճորոխի ձորը «շուրջ երեք օրուան ճամբայ հարկատու է Հոսոմներին, ոսկայն, նրանից անդին սկսում է Պարսկահայքի երկիրը(!) եւ այս տեղումն է ոսկու հանքը, որ կատարի հրամանով մշակում է Սիմէոն անուն հայը... որ Հոսոմներին յանձնեց երեն եւ Փառանդիոն, բայց մերժեց յանձնել հանքի ոսկին»։

6. Վոհ կամ Ճորոխ «բղխում է Ծանի երկրից՝ շատ մօտիկ(!) այն հայերի միջից, որոնք բնակում են Փառանդիոնի շուրջը»։

Թողնենք առայժմ անճշտութիւնները, որ ապրուած են այս կէտերի մէջ շնորհիւ պ. Խաչատրեանի անխուսափելի։ Բաւականանք անգամ նրանով, ինչ որ ինքն է առաջարկում։ Տեսէք, ի՞նչ հետեւութիւններ է հանում պատմիչի վկայութիւններից։

«Արդ՝ այս տեղեկութիւններից նախ հետեւում է, գտնում է պ. Խաչատրեան, թէ սակու հանքերը գտնում էին սահմանի վրայ Փառանդիոն եւ Բոլոն բերդերին շատ մօտ մի տեղում. երկրորդ՝ այս բերդերը մօտ էին Թէոդոսիուպոլսի կամ Կարինի սահմանին. երրորդ՝ Ճորոխը բխում է Փառանդիոն բերդին(!) մօտակայ մի տեղից»։

Անհնարելի է մի բանասէրի, մանաւանդ, երբ քննադատի դերում է, այսպիսի արտաքսող անխուսափելիութիւն, որով պ. Խաչատրեան մեկանչում է իր իսկ բերած «մանրամասնութիւնների» դէմ։

Ոսկու հանքը գտնում է միմիայն Փարանգիոնում, ինչ-

պէս վկայում են պ. Խաչատրեանի բերած առաջին եւ հինգերորդ կէտերը: Բոլոնի մասին խօսք չկայ:

Թէոդոսիուպոլսի սահմանին մօտ է միմիայն Բոլոն, որպէս վկայում է երկրորդ կէտը, և ոչ թէ «երկու բերդերը»:

Ճորոխը բղխում է Փառանգիոնի մօտակայ տեղից, ինչպէս կարելի է տեսնել հինգերորդ եւ վեցերորդ կէտերից, եւ ոչ թէ Փառանգիոն բերդի մօտակայ տեղից: Եւ ընդհանրապէս Փարանգիոն բերդ է անուանուած անգլիական թարգմանութեան մէջ սխալմամբ միայն առաջին կէտում, միւս տեղերում երբեք Փարանգիոն չէ անուանուած բերդ, ինչպէս անում է պ. Խաչատրեան:

Այս տխուր համեմատութիւնից մի բան է հետեւում, որ յարգելի բանասէրը բանասիրական աչք չունի եւ, եթէ ունի, կանխակալ մի կարծիք կուրացրել է նրան: Շփոթելով երկու միմեանցից հեռու ընկած վայրերը, միացնելով մէկը միւսի հետ, կապելով մէկի տեղագրութիւնը միւսին, պ. Խաչատրեան ստեղծում է մի աշխարհագրական երկւորեակ եւ ճգնում որոնելու նրա տեղը: Եւ զարմանալին այն է, որ կարծում է թէ յաջողել է գտնել, եւ ո՞ւր, Թորթումի հովտում: Նախապէս ցուցադրում է իր տեղագրական գիտութիւնը, որովհետեւ երկիրը տեսել է եւ հուշակաւոր Սրտաձորից շատ անգամ բարձրացել է Կուչկուչլար սարի գագաթը եւ յափրշտակիչ զմայլումով դիտել հմայիչ եւ վեհաշուք համայնատեսլարանը:

Նայենք, ի՞նչ նոր բան է ասում, որ յայտնի չէր:

Առաջ հարկաւոր է տեսնում ճշտել Հայաստանի հոռոմ-պարսիկ սահմանագիծը:

«Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, ասենք, թէ Կարին եւ Շաղագոմ Հոռոմներին էին, իսկ Բասեն եւ Ոքաղ՝ Պարսիկներին: Սրանց միջեւ բնական սահմանագիծն են կազմում, որուն հետեւում էր եւ քաղաքականը, նոր անուններով — արեւելքից Բասեն գետի եւ Եփրատի ջրբաշխ՝ Դեվէ - Բոյուն - Քիրեշլի - Ղարղաբաղար կամ Զոբան - Դեղէ լեռնային կատարները: Կարինի հիւսիսից Թորթում վտակի եւ Եփրատի մի կողմից, իսկ միւս կողմից՝ առաջնի եւ վերին Ճորոխի ջրաբաշխ լեռները: Ղարղաբազարի հիւսիս-արեւմտեան ծայրը... Կուչկուչլար դագաթն է, որի հիւսիսից երկարում է մի թեւ կապելու համար այս լեռնակոյտը ուրիշ մի մեծ լեռնաշարքի՝ Զիարեթ-Ղազանբաշի եւ այլն, որոնք ագեղնաձեւ զատում են Թորթում գետի աւազանը Եփրատի և Ճորոխի աւազանից... Այս պատնիշաձեւ լեռնաշղթայի կատարներից ուրեմն անցնում էր հոռոմ-պարսիկ սահմանագիծը եւ Ճորոխի ձորը հաւանօրէն մինչեւ Օլթի

գետի բերանը Հոռոմներին էր պատկանում: Պատմական տեղեկութիւններն էլ գալիս են հաստատելու այս բնական սահմանգծի՝ քաղաքականի հետ նոյն եւ մի լինելը: Փարպեցին յիշում է Գիւղիկ եւ Վարդաշէն» եւայլն:

Այս է պ. Խաչատրեանի աշխարհատեսութեան արդիւնքը:

2. Այժմ թող խօսի մեր հասակաւոր գիրքը, որ քննադատւում է և ուր մանրամասն որոշուած է բիւզանդական և պարսկական Հայաստանի սահմանագիծը սկսած Նփրկերտից մինչեւ Ճորոխի հովիտը:

Ահա ինչ է ասուած մեզ զբաղեցնող աշխարհամասի վերաբերեալ.

«Թէոդոսիուպոլսի շրջանում եւ այն կողմը սահմանագիծը անցնում էր այն լեռնաշղթայի վերայից, որ երկարում է Թէոդոսիուպոլսից մինչեւ Ճորոխ գետը — Էրզրումի աջ կողմից բարձրանում են դէպի հիւսիս նախ Դեվէ Բոյունու լեռները, ապա Ղարղաբաղար, որ վերջանում է Կանղիլ գագաթով եւ այստեղից շրջում է դէպի արեւմուտք եւ միանում Դումլու շղթային: Դումլու ճգւում է Էրզրումի վերեւից եւ շարունակւում է, ուղղուելով դէպի Ճորոխի ափերը Սպերից բարձր: Սոյն այս գծին յարում էին Պարսից կողմից Բասեան եւ Տայոց աշխարհի Բուխա եւ Ոքաղ գաւառները, որոնց դէմ ու դէմ հոռոմ բաժնում էր Կարին եւ Շաղագոմ»:

Այնուհետեւ բերւում են նոյն պատմական ցուցումները, Դու, Մկնառիհ, Գիւղիկ, Վարդաշէն, Ծաղիկ գիւղերի վերաբերեալ, սահմանագիծը պատմականօրէն ևս հիմնաւորելու[1]:

Ի՛նչ զանազանութիւն կայ այս տողերի եւ պ. Խաչատրեանի նկարագրութեան մէջ: Եւ ոչ մի, թէեւ մէկը գրրուած է քսան տարի առաջ «առանց երկիրը տեսած լինելու», իսկ միւսը պատկանում է երկրատես մարդու: Միակ տարբերութիւնն այն է, որ պ. Խաչատրեան չէ տալիս Դումլի լեռան անունը, այլ ծանրանում է նրա արեւմտեան փէչերի վրայ, որ անջատում են Ճորոխի ակունքը Սերչամից եւ սահմանագծի հետ առնչութիւն չունին:

Իրաւունք ունէինք յուսալու, որ Կուչկուչլար լեռների մշտական այցելուն, որ Սանասարեան վարժարանի սաներին անգամ տանում էր հետը «հայրենագիտութեան ծանօթութիւններ ստանալու», գէթ մի հատիկ ծաղիկ բերէր հայ բանասիրութեան այդ լեռների բարձունքից:

Բայց եւ այնպէս պ. Խաչատրեան ներկայացնում է իր

1 Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, էջ 22–23:

տեղագրական նկարագրութիւնը որպէս նորութիւն եւ այդ նկարագրութիւնից հետեւցնում է, որ «Փառանդիոն եւ Բոլոն բերդերը պէտք է փնտռել Թորթում գետի ափերում», փնտռում և գտնում է, որ Վիրիկ գետակի հովտում կան Բարդղոս եւ Բուլուլ գիւղերը եւ խորհրդաւոր հարց է տալիս. «Արդեօ՞ք կարելի չէ այդ գիւղերի անուններում վերագտնել մեզ հետաքրքրող բերդերի անունները»:

Ոչ, կարելի չէ: Կատարեալ անհեթեթութիւն է ամեն նկատումով: Պրոկոպ ասում է, որ Փառանդիոն Ճորոխի ակունքումն է, բայց պ. Խաչատրեան ուզում է, որ Վիրիկ գետահովտում լինի: Փարպեցին ասում է, որ Բողբերդ գրանում է Բասենում, Խաչատրեանը փոխադրում է բերդը Վիրիկ գետի ափը: Եւ ի՞նչ է պատասխանում Փարպեցուն:

«Արդեօք Փարպեցին սխալո՞ւմ է դնելով Բողբերդը Բասենում, խորհում է պ. Խաչատրեան, թէ նոյն անունով երկու բերդ կար՝ Տայքում եւ Բասենում»:

Եւ այս կոչում է տեղագրական ուսումնասիրութիւն:

Իսկ Բարդղոս եւ Բուլուլ գիւղերը արդեօք ինչո՞վ են յայտնի, որ մեր բանասէրի ուշադրութիւնն են գրաւել: Անձամբ տեսե՞լ է, գաղափար ունի՞ նրանց գիրքի մասին: Ո՛չ, նրանց անունները կարդացել է Հ. Սարգսեանի քարտէսի վրայ: Գոնէ ասուցե՞լ է, իբրեւ այդպիսի անուններով գիւղեր կա՞ն: Դարձեալ ոչ:

Ահա Ռիխարդ Կիպերտի նշանաւոր քարտէսի վրայ Բարդղոսի փոխարէն կարդացուում է Պարտոնս: Ո՞րն է ճիշտ: Ինչո՞ւ է պ. Խաչատրեան կանգ առել այդ երկուսի վրայ, քանի որ Վիրիկ գետակի հովտում կան եւ ուրիշ նման գիւղեր դուցէ եւ աւելի յարմար ամրոցային դիրքերով: Թերեւս այնտեղ ոսկեհանք կայ, որ գայթակղել է պ. Խաչատրեանին: Ոչ եւ ոչ: Լոկ լեզուագիտական հաշիւներն են որ բերել են նրան Բարդղոսս եւ Բուլուլ գիւղերի մօտ եւ սրանց «անուններում ուզում է» վերագտնել Փարանդիոն եւ Բող բերդերի յիշատակը:

Սակայն, պ. Խաչատրեան, որպէս Հայոց լեզուի հնամեայ ուսուցիչ, պիտի գիտնայ, որ Հ. Սարգսեանի դրչի Բարդղոսս եւ Բուլուլ կարդալու է Պարտողոս եւ Պուլուլ: Արդ, ի՞նչ խալիֆայական լեզուագիտութիւն է հարկաւոր, որ նմանութիւն տեսնէ այս եւ Փարանդիոն եւ Բող անունների մէջ:

Այսպիսով բանաւոր հիմք չկայ Բողբերդը եւ ոչ էլ Փարանդիոնը տեղահան անել եւ քաշել Թորթումի հովիտը, մէկը՝ Բասենից, միւսը՝ Սպերի մօտերից:

Այս սխալն արուած է երկու մոլար ենթադրութեամբ:

Իբրեւ թէ Բող և Փարանդիոն միշտ «անբաժան» են յիշուում, ուստի պէտք է որ իրար հարեւան լինէին: Երկու վայրերը անբաժան են քաղաքական բախտով, բայց ոչ աշխարհագրապէս:

Պրոկոպը, տեսանք որ, նրանց տեղադրութիւնը տալիս է անջատ եւ միմեանց հետ չէ շփոթում: Ինչ վերաբերում է քաղաքական բախտին, ոչ միայն նրանք իրար հետ էին կապուած, այլ եւ Լազիկէի գոյ բերդերին՝ Շարապանի եւ Սկանդայի հետ, որ իրարից եւ հայ վայրերից հեռու էին:

Միւս թիւրը ենթադրութիւնն է, որ Սպեր Հռոմներին էր պատկանում, ուստի Փարանդիոն չէր կարող այնտեղ լինել, որովհետեւ սա Պարսից բաժնումն էր:

Թուում է թէ Սպեր ասելով պ. Խաչատրեան միշտ հասկանում է Սպեր քաղաքը: Մինչդեռ խօսքը մի դէպքում գաւառի մասին է, միւս դէպքում քաղաքի չրջակայքի: Գիտենք, որ Սպեր գաւառը պատկանում էր Հռոմներին: Խոսրովիանցին չհաշուած (Գ. 43), մեր գիտութեան միակ աղբիւրը Պրոկոպն է, նրա այն վկայութիւնը թէ Ճորոխի հովիտը երեքօրեայ ճանապարհ արեւմուտքից դէպի արեւելք հռոմական հող էր: Բայց եռօրեայ ուղին մինչեւ ո՞ւր էր հասնում, յայտնի չէ:

Մենք հաւանական ենք համարել, որ հռոմ-պարսիկ սահմանագիծը ծառայել է հիմ եւ սահման Տայոց աշխարհի եւ Բարձր Հայքի: Եւ որովհետեւ Սպերը մտնում է Բարձր Հայքի մէջ, ուրեմն պատկանում էր Հռոմներին:

Միւս կողմից՝ Տայքի մէջ էր Ասեայփոր «սա Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Ցոհ գալով ի Սպերայ»: Որով Սպերի եւ Տայքի սահմանագիծը ընկնում է մօտաւորապէս Սպեր քաղաքի մօտերքը: Այս քաղաքը յայտնի չէր հնում, արդեօք Սմբատաւա՞ն է, որը Վարդանը նոյնացնում է սխալմամբ Բարերդի հետ:

Այսպիսի պայմաններում ոչ թէ Սպեր քաղաքն է, որ պիտի լուծէ հռոմ-պարսիկ սահմանագծի խնդիրը, եւ սրա հետեւանքով որոշէ Փարանդիոնի դիրքը, այլ ընդհակառակը: Փարանդիոնի տեղադրութիւնը այնքան որոշ է Պրոկոպի մօտ, որ սա պիտի հիմն ծառայի սահմանագիծը ճշտելու Սպերի շուրջը:

Խաչատրեան այնքան վստահ է իր գիտութեան, մասնաւորապէս Սպերի վերաբերեալ, որ պէտք չէ դգում քննութեան եւ դրանում է անգամ պարզել իր գիտութեան ապրիւրները:

Ցիշելու է նաեւ, որ Փարանդիոն գտնուում էր ուղիղ սահմանակից լեռներում եւ ոչ թէ պարսկական հողի վրայ: Պ. Խաչատրեանին անծանօթ են մնացել երկու ուրիշ յոյն

պատմիչներ՝ Մալալա եւ Թէոփան, որ կարեւոր տեղեկութիւններ են հաղորդում ոսկեհանքի մասին եւ լրացնում Պրոկոպին: Սրանց տեղեկութիւնը բերուած է մեր գրքում[1], որ սպրտել է, թերեւս, մեր քննադատի ուշադրութիւնից:

Մալալա պատմում է, որ ոսկեհանքը գտնուում էր պարսկական սահմանի լեռներում, որ անձրեւի եւ հեղեղի ժամանակ հողը իջնում էր եւ մերկանում ոսկու աւազը: Հանքը տալիս էր տարեկան երկու հարիւր լիտր ոսկի: Մալալա հաւատացնում է, որ Անաստաս կայսեր ժամանակ ոսկեհանքի լեռները անցան կայսրութեան, եւ սա էր միայն վայելում հանքերի հարստութիւնը, մինչդեռ յառաջ Պարսիկները եւ Հոռոմները միասին կապալով էին տալիս մասնաւոր անձանց: Ասել է թէ եկամուտը բաժանում էին:

Ոսկեհանքը Հոռոմները գրաւեցին 527 թուին եւ պահեցին մինչեւ 532: Պատմիչը չփոթել է գրաւման ժամանակը: Բայց իրողութիւնը մնում է իր ոյժի մէջ, որ մինչեւ գրաւումը ոսկեհանքից օգտւում էին երկու պետութիւնները:

Թէոփանը հաստատում է Մալալայի խօսքերը, ասելով, որ առաջին ժամանակները Հոռոմները և Պարսիկները ստանում էին ոսկեհանքից մի մի տալանտ, իսկ այժմ օգտւում են միայն Հոռոմները:

Արդ՝ այս միացեալ տիրապետութիւնը, եթէ անգամ եղած լինի ժամանակաւորապէս, ցոյց է տալիս, որ ոսկեհանքը զուտ պարսիկ հողի վրայ չէր, այլ իրօք սահմանի շերտում, համաձայն Պրոկոպի նկարագրութեան: Հետեւապէս ոչ մի հիմ չկայ որոնելու ոսկեհանքի տեղը Թորթումի հովտում:

Հաւաստին այն է, որ նա գտնուում էր Թորթումի աւազանը զատող Ղազան լեռնաշղթայի արեւմտեան փէշերի վրայ, ուր սկիզբ է առնում Ճորոխ, Սպերի դէմ առ դէմ: Ճորոխի ակունքը բաժանուում է նոյն դետի հովտից Սպերի մօտ Խորտուկ կոչուած լեռներով: Այս լեռներն այժմ էլ հռչակուած են իրենց հանքերով: Խորտուկ գիւղի մօտ կայ արծաթահանք[2]:

Cuinet (Ա. 149) վկայում է, որ Սպերի արծաթահանքը մշակւում է ցարդ: Մի այլ տեղեկութեամբ, Սպերը ժամանակով հանքային հարստութեան կենտրոն էր եւ անուանուած են Կիան, Սիւլէյմանբար, Սեմարիկ գիւղերը, ուր արծաթէ հանքեր կան[3]:

1 Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, էջ 198:
2 Launey, La Géorgie et les richesses minerales de l'Asie, էջ 651: Խորտուկ կոչուած է Խորտակլ:
3 Murray, Handbook Asia Minor, էջ 214:

Մեզ այնպէս է թւում, որ եթէ մի օր պ. Խաչատրեան կուշկուշլար սարի հմայիչ տեսարանից զրկէր իրեն եւ իջնէր Սպերի ձորը եւ այս տեղերի նկարագրութիւնն անէր, շատ աւելի մեծ ծառայութիւն մատուցած կը լինէր հայրենագիտութեան, քան զբաղուել յոյն պատմիչների քննութեամբ, որ երբեք արդիւնաւէտ չի կարող լինել, քանի որ անգէտ է բնագրի լեզուին: Քննելի հեղինակի լեզուն գիտնալը առաջին եւ անհրաժեշտ պայմանն է, որ քննութիւնը լինի եթէ ոչ ուղիղ, գոնէ անկախ եւ գիտակցական:

* * *

Հակառակ որ մենք յատկապէս չեշտել ենք, թէ Փարանգիոն բերդ չէ, պ. Խաչատրեանը իրաւունք է համարում ասել.

«Պրոկոպի անգլիացի թարգմանիչը, որից օգտւում ենք և մենք, միշտ էլ բերդ գիտէ թէ՛ Բոլոն և թէ՛ Փարանգիոն»:

Սրանով ամբաստանում է եւ անգլիացի թարգմանչին: Երկու մեղք է գործում, նախ թարգմանչի դէմ, յետոյ թարգմանչի հետ Պրոկոպի դէմ:

Փաստ է, որ անգլիացի թարգմանիչը միայն մի եւ այն առաջին անգամ բերդ է կոչում Փարանգիոն, այնուհետեւ նոյն անունը պատահում է վեց թէ եօթ տեղ եւ երբեմ բերդ չէ անուանում, այլ համաձայն բնագրին միայն Փարանգիոն:

Ունենալով ձեռքի տակ մի հրատարակութիւն, ուր մի էջի վրայ յունական բնագիրն է, եւ դէմ ու դէմը միւս էջում անգլիերէն թարգմանութիւնը, պ. Խաչատրեան անզօր է ոչ թէ միայն թարգմանութիւնը ճշտել, այլ անգամ թարգմանութեան հետեւել բարեխղճօրէն եւ առանց աղաւաղելու:

Պրոկոպ ասում է, որ Հոռոմները գրաւեցին «Choria, phrourion to Bolon kai to Pharangion kaloumenon», որ է «(երկու) վայրեր՝ բերդն Բոլոն եւ Փարանգիոնն կոչեցեալ»:

Անգլիացի թարգմանիչը հասկացել է եւ «Փարանգիոնն կոչեցեալ բերդն, phrourion», մինչդեռ իսկական իմաստն է եւ Փարանգիոնն կոչեցեալ վայրն, chorion: Այսինքն՝ եթէ պէտք կայ լրացնելու բնագիրը, աւելացնելու է խորիոն եւ ոչ ֆրուրիոն, քանի որ երկու վայրերը choria են կոչուած:

Սխալը լեզուական չէ, այլ իմաստի: Ինչ որ ներելի է թարգմանչին, ներելի չէ հետազօտողին: Պատմիչն այնուհետեւ քանիցս անգամ յիշատակում է նոյն անունները եւ Փարանգիոն, յիշւում է առանձին թէ Բոլոնի հետ, երբեք բերդ չէ անուանւում, մինչդեռ Բոլոն միշտ բերդ է մնում:

Այս վայրերի հետ պատմիչը յիշում է եւ սրանց բախ-

տակից լաղական գոյդ բերդերը՝ Շարապան եւ Սկանդա, եւ միշտ գործ է ածում երկուսի համար phrouria «բերդեր» եւ առանձին phrourion «բերդ»:

Դարձեալ, յիշուած «Փարանգիոնն կոչեցեալ» բառերին հետեւում է անմիջապէս, Οὗτον δὲ χώσαν φρουσσοντες, այսինքն «որոնցից հանում էին ոսկի»: Անգլիացին թարգմանում է ճիշտ՝ which is the place եւայլն:

Պատմիչն այնքան ոխմար չէր, որ կարծէր, թէ բերդի մէջ հանքագործութեամբ էին պարապում: Եւ վերջապէս ի՞նչ է նշանակում պատմիչի բացառիկ դարձուածքը՝ «այսպէս կոչեցեալ Փարանգիոն», որ գործ չէ ածում ուրիշ տեղանունների վերաբերեալ:

Այս դիտողութիւններից եզրափակել էինք, որ Փարանգիոն թերեւս հէնց «հանք» է նշանակում եւ փորձել էինք համապատասխան ստուգաբանութիւն տալ, համեմատելով farhangion հայ-իրանեան hրաhաՒq բառի հետ:

Այս տեսակէտ Խաչատրեան նկատում է, որ «հրահանգին տալիս ենք այնպիսի նշանակութիւն, որ այս բառը չունի բնաւ ոչ պարսկերէնում եւ ոչ հայերէնում», եւ որ «ներելի չէ բառերին տալ այն իմաստը, որը կամենում ենք ունենալ, բոլորովին անտեսելով նրանց բուն նշանակութիւնը», եւ վերջապէս «հնչական պահանջները եւս նկատի չեն առնուած»: Եւ այս ասում է այն մարդը, որ Փարանգիոն վերապահում էր Բարպոպոսի մէջ:

Զարմանալի են այս ինքնաբաւ ասարկութիւնները: Պարթեւ frahang բառը տալիս է հայերէնում hրաhաՒq, եւ պարսկերէնում farhang ինչպէս որ frahat պարթեւ անունը դառնում է հայերէնում Հրաhատ եւ պարսկերէնում Farhad կամ պարթեւ framan, հայերէն Հրաման, պարսկ. farman: Հնչական թերութիւն տեսնել այստեղ, նշանակում է հակասոցութիւն չունենալ հնչարանութեան մասին:

Ինչ վերաբերում է բառի իմաստին, պ. Խաչատրեան եւս սխալում է անպատասխանատու պարսկապիտութեամբ: Farhang շատ նշանակութիւն ունի. ի միջի այլոց այդպէս է կոչւում canalis subteraneus, ինչպէս կարելի է տեսնել Վուլերս հռչակաւոր պարսիկ-լատին բառգրքից: Նոյնը հաստատում է Յենկերի բառգիրքը, մեկնելով որպէս unterirdischer Gang oder Canal: Ներկայումս Պարսիկները հանքին ասում են kan, որ արմատակից է հայ ական բառին եւ նշանակում է ստուգաբանօրէն ստորերկրեայ կամ գետնափոր անցք, նման ֆարհանգի, այլ եւ «գետնափոր ջրանցք», այն որ էջմիածնում կոչւում է քանրան: Նոյն արմատից է նմանապէս

աւելի սովորական kahriz քահրիզ բառը ջրանցքի իմաստով, այլ եւ farghan ջրանցք:

Արդ՝ եթէ kan «գետնափոր անցք», նշանակում է միեւնոյն ժամանակ եւ hաՒf, ինչո՞ւ farhang = «գետնափոր անցք», չէր կարող գործ ածուել նմանապէս հանքի մասով: Անշուշտ, կարող էր: Դարձեալ պարսկերէն kani նշանակում է հանածոյ, նոյն իմաստը կարող ենք ենթադրել եւ farhang ձեւի համար: Աւելացնելով յունական on վերջաւորութիւնը կը ստանանք farhangion. հնարաւոր է նաեւ որ ion վերջաւորութիւնն ամբողջապէս յունական է: Կարծում ենք, պ. Խաչատրեանի վերամբարձ ընդդիմախօսութիւնը անհիմն է:

3. Նոյնչափ անտեղի են եւ պ. Խաչատրեանի ճառերը Բողբերդի խնդրում:

Տեսանք, որ Փարպեցին Բողբերդը գնում է Բասենում, իսկ Պրոկոպ՝ Կարինի սահմանների մօտ:

Պ. Խաչատրեան հարկ է տեսնում մեզ ուսուցանելու, որ այս երկու ցուցումները իրար հակադիր չեն, որ բերդը կարող է լինել Բասենում եւ Կարինի մօտ: Բայց ո՞վ ասաց, որ այստեղ հակադրութիւն կայ: Արդոյ բանաէրի խրատը ամենից շատ իրեն էր պէտք, որպէսզի Բողբերդը Բասենից Թորթում չտանէր:

Բողբերդի անունը չէ պահուել եւ տեղն անյայտ է: Մասնաւոր հետազօտում տեղի վրայ մի օր թերեւս վեր հանի արձանագրութեան կամ մի այլ նշանի միջոցով հինաւուրց բերդի հետքերը: Առայժմ միայն ենթադրութիւններ կարող են լինել:

Ներկայումս Բասենի նշանաւոր բերդն է Հասան-Կալէ: Հին Բողբերդը թւում է որ մի տեսակ հակակշիռ էր Պարսից հողի վրայ ընդդէմ բիւզանդական Կարինի: Ուստի հաւանական է, որ նա գտնւում էր Հասան-Կալէի տեղը եւ ունէր այն ռազմաքաղաքական նշանակութիւնը, որ փակում էր գլխաւոր ուղին, որ գնում էր Կարինից դէպի Պարսկահայաստանի միջնաշխարհ, Այրարատեան դաշտը:

Սակայն, մի քանի դիտողութիւններ դրդել էին մեզ ընդունել, որ Հասան-Կալէի տեղը եղել է Վաղարշակերտ անունով մի քաղաք:

Ներսէս Շինողի համար ասուած է, որ «զՎաղարշակերտոյ սուրբ Աստուածածինն շինեաց»: Կոստանդին կայսրը դալիս է իշեւանում Կարնոյ դաշտում եւ նրան ներկայանում է Վաղարշակերտի վրաց եպիսկոպոսը: Կայսրը Բասենի Սարքորա գիւղում եղած ատեն, նրա մօտ է գալիս դարձեալ Վաղարշակերտի եպիսկոպոսը, անունը Զաքարիա:

Վրաց եպիսկոպոսի ներկայութիւնը խօսում է յոգուտ

Բասենի եւ ոչ Բագրեւանդի Վաղարշակերտի: Կարին եւ Սալքորա վազող եպիսկոպոսը եւս, թուում է թէ, նստած էր Բասենում, քան Բագրեւանդում: Վրաց քաղաքական եւ կրօնական ազդեցութիւնը զօրանում է Տայքում եւ նրա շրջապատում մանաւանդ Դաւիթ Կիւրապաղատի իշխանութեան ժամանակ: Դրացի Բասենը կարող էր այդ ազդեցութեան ենթարկուել եւ անգամ վրացի եպիսկոպոս ունենալ: Իսկ հեռաւոր Բագրեւանդը դուրս է վիրական յաւակնութեան շրջաններից:

Ներսէս Շինող եպիսկոպոս էր Տայոց եւ ծննդեամբ Տայքի Իշխան գիւղից: Կաթողիկոսանալուց յետոյ, երբ գժտուեց Թէոդորոս Ռշտունի իշխանի հետ, քաշուեց Տայք, եւ մնաց վեց տարի: Նրա շինարարութեան արդիւնքն է Թերեւս Բասենի Ս. Աստուածածին եկեղեցին, մօտ Հասան-Կալէի, եւ ոչ Բագրեւանդի Վաղարշակերտի համանուն եկեղեցին:

Այս խորհրդածութիւնները ակամայից ծնում են մի ենթադրութիւն, որ Հասան-Կալէի Ս. Աստուածածնի մօտ Վաղարշակերտ անունով քաղաք է եղել. եւ այս քաղաքը զատելու է ե՛ւ Վաղարշապատից, ե՛ւ Բագրեւանդի Վաղարշակերտից:

Պ. Խաչատրեան, որ մեր գրքի կոչումներից կարող էր կռահել գործի էութիւնը, գերադասում է դիւրին ուղին, ընդգծելով, որ մենք իբրեւ թէ չփոթել ենք Բագրեւանդի Վաղարշակերտը Բասենի Վաղարշաւանի հետ, որ Վաղարշակերտը արաբ և պարսիկ հեղինակների մօտ կոչւում է Վալաշկերտ, որտեղից արդի Ալաշկերտ:

Նախ ոչ մի օտար հեղինակ չէ յիշում Վալաշկերտ անուն քաղաք Հայաստանում: Կայ եւ յիշատակւում է Վալաշկերտ եւ Գուլաշկերտ Պարսկաստանում, որ բոլորովին կապ չունի մերինի հետ, բացի անունից:

Յետոյ՝ Վալաշկերտից ի՞նչպէս է ծագել Ալաշկերտ: Լեման եւ Բելկ կարծիք են յայտնել, որ Ալաշկերտ աւելի հին է քան Վաղարշակերտ եւ որ խալդական անունն է alu Anashi, որից Ալաշկերտ, որպէս Անաշիկերտ:

Վաղարշակերտ, ուրեմն, մի տեսակ վարժապետական հայացումն է, ինչպէս Մենուասի քաղաքը դարձել է Մանուազակերտ, եւ Նախճուանը՝ Նախիջեւան:

Թուում է որ առաջին անգամ Յովհան կաթողիկոսն է, որ հանդէս է բերում Վաղարշակերտը, առանց տեղը որոշելու, Յուսուփի հալածանքի ժամանակ: Սրան հետեւում է Աստղիկ: Իսկ Լաստիվերտցու ցուցումները տանում են մեզ աւելի դէպի Բասեն:

Լաստիվերտցին գիտէ եւ Վաղարշաւան նոյն գաւառում: Եւ այս հանգամանքը արդելք չի կարող լինել, որ Վաղարշակերտը եւս Բասենում լինի: Արշարունիքում երեք քաղաք կար միեւնոյն թագաւորի անունով՝ Երուանդաշատ, Երուանդակերտ եւ Երուանդաւան:

Այսպիսով, չփոթութեան հարց չկայ, այլ մի խուլ ենթադրութիւն, որ վրաց եպիսկոպոսի աթոռանիստ Վաղարշակերտը իր Ս. Աստուածածին եկեղեցիով, թերեւս, որոնելու է Բասենում, Հասան-Կալէի մօտ: Գուցէ սխալւում ենք, եւ Վաղարշակերտը եւ այս դէպքում Բագրեւանդի Ալաշկերտն է հայացրած: Ամեն պարագային՝ թիւրիմացութեան մասին խօսք չի կարող լինել: Բագրեւանդի Վաղարշակերտը նոյնչափ խնդրական է, որքան մեր ենթադրեալ համանուն քաղաքը Բասենում:

Կարծելով, որ Հասան-Կալէի տեղ այս քաղաքն է եղել, մենք փորձել էինք որոնել Բողբերդը ոչ Բասենի դաշտում, այլ այն լեռների մէջ, որ պատում են Բասենը հիւսիսից եւ զատում նրան Բուխա դաւառից:

Բուխա Տայոց աշխարհի հարաւային անկիւնն է, փռուած յիշեալ լեռների հիւսիսային լանջերի վրայ: Բնական ամրութիւն են այս լեռները Բասենի սահմանագլխին, ուր այժմ էլ կան մի քանի բերդեր, ինչպէս նշանակում են աշխարհագրական քարտէսները: Սրանցից մէկը կոչւում է Բուհա-Կալէ: Եթէ միայն անունը ճիշտ է արձանագրուած, կարելի է կարծել, որ հին Բուխա անունն է պահուած Բուհա ձեւով:

Զեռագիրներից յայտնի է եւ Բոխա ընթերցումը Բոխա-բերդ կարող է յանգել Բող-բերդի ինչպէս որ բախտ դառնում է բաղդ, եւ ընդհակառակն Օլթի, ուրեմն հին Ուղթի փոխւում է Ուխտիք կամ Ուխթիք ձեւերի:

Լեզուական անպատեհութիւն չկայ, հակառակ պ. Խաչատրեանի լեզուագիտութեան: Կարեւորը բնաւ այն չէ, որ Բողբերդը Բուհա-Կալէն լինի անունով: Խնդիրը այն է, թէ այս եւ մօտակայ բերդերը իրենց տեղագրութեամբ կարո՞ղ են մտնել Բասենի մէջ եւ կամ համարուել մասն նրա ռազմագիտական ամրութիւնների շղթայի: Պ. Խաչատրեան, որ հրապարակ է գալիս որպէս երկրի տեղագրական պայմաններին ծանօթ անձ, պարտք ունէր պատասխանելու այս հարցին: Եւ եթէ մի օր, փոխան կուշկուշլար սարի, իրեն ձգէր Բուհա-Կալէի շրջանը, այսօր աւելի բան կարող էր ասել, քան իր լեզուագիտական անօգուտ պտոյտները:

Լեզուական նկատումները չեն, որ մեզ դրդել են Բող-

բերդը որոնել Բասենի լեռներում, այլ որ այս լեռները տիրելով ամբողջ դաշտին հանդիսանում են բնական ամրութիւն: Բոզ կարող է կապ ունենալ Բուհա-Կալէի հետ, կարող է պարսկերէն բոյ բառը լինել, որ նշանակում է բարձր, հին բարզ, հայերէն բարձր, որի բոյ ձեւը մնացած է բոյանդ «բարձր» բառի մէջ: Ուրեմն Բոզբերդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ «Բարձր բերդ»: Կարեւոր է տեղագրութիւնն ամենից առաջ:

Քանի որ խօսքը Բուխայի մասին է, աւելորդ չէ նկատել, որ Բուխա ցեղագրական ծագում ունի, այսինքն՝ սկզբնապէս ժողովուրդի անունն է: Ստեփան Բիւզանդացին դիակ «Կարինի եաւեր Եփրատի եւ Կուրի միջեւ Բոնխա ժողովուրդ»: Ծանօթ է նաեւ Պտղոմէ, որի ձեռագիրները տալիս են Բոկխա ընթերցուածը, իսկ հրատարակիչները ուղղում են Բոխա, հայերէն Բուխայի աղղեցութեամբ:

Ստեփանի Բոնխա, որ յունարէն գրում է Bogcha, Պտղոմէի՝ Bokcha, կարելի է կարդալ նաեւ Bolcha: Հնագրական տեսակէտով հնարաւոր է:

Արդեօք հայերէն անունն եւս ընթեռնելու չէ՞ Բոլխա եւ այս չէ՞ եղել արդեօք մերձաւոր ասիթ, որ Խորենացին, համաձայն իր լեզուագիտական մեթոդի, Բլդաբ Վղնդուրին բերել է հիւսիսային Կովկասից եւ բնակեցրել Անփայտ կամ Վերին Բասենում:

Պ. Խաչատրեանի ասարկութիւնների քննութիւնը ցոյց է տալիս, որ նրա յաւակնոտ յայտարարութիւնները չարդարացան, որ «տեղագրական ուսումնասիրութիւնը», ինչպէս և Վխիկ գետի Բարդոդոս եւ Բուլոյ գիւղերի լեզուագիտութիւնը, բնաւ իրաւունք չեն տալիս այն խրոխտ չեչտերին, որ պարոնը նետում է իր յօդուածում եւ որ տեղի չունին բանիմաց բանասիրութեան մէջ:

5. Նոյն բանասէրը չի կարողացել ձեռնպահ մնալ անիրաւ նկատողութիւններից մի իրաւացի խնդրում, որպիսին է Բագրեւանի բառի ստուգաբանութիւնը: Պ. Խաչատրեան չի բաւականանում միայն նրանով, որ բերում է Մարքուարտի նորերս յայտնած աւելի ստոյգ մեկնութիւնը նոյն բառի, այլ իրաւունք է համարում յեռին թուով քրքրելու մեր բացատրութիւնը, որպէս թէ լեզուական օրէնքներին հակառակ առաջարկ:

Պտղոմէի ձեռագիրներն ընծայում են Բագրանդաւան ընթերցուածը. միւս կողմից՝ կան պարսկական ցեղեր Քամալ-աւանդ, Հասան-աւանդ, Սիր-աւանդ անուններով: Այս երկու երեւոյթը մղել էին մեզ Բագրեւանդ վերլուծել՝ Baga-rata-vanda: Տասնեակ տարիներ են անցնում և նորերս Մարքուարտ առաջարկում է աւելի ստոյգ վերլուծում՝ Bagaræ-vand, ասել է թէ Baga-rai-vanda. Պէտք է ասել, որ rata եւ rai միեւնոյն արմատին են: Նոր մեկնութեամբ vand սովորական ածանց է եւ rai-vand նշանակում է «հարուստ» եւ ստուգաբանական մակդիրն է: Մինչդեռ մենք համարել էինք vand հնագոյն ձեւը gund բառի «տուն, բնակութիւն» իմաստով: Նաեւ համեմատել էինք Խուժիստանի մի քաղաքի անուան հետ, որ է Գունդի-չապուհ, կամ աւելի հին ձեւը՝ Վանդի-չապուհ, որ յիշում է մի յոյն հեղինակ՝ Bendo-sabor-on:

Պ. Խաչատրեան այս ասթիւ լեզուագիտական խրատներ է կարդում, որ Բագրատանդ չի կարող դառնալ Բագրատանդ: Ինչո՞ւ: Ահա havatsara դառնում է՝ հաւասար, եւ vardat-gesa Վարդ-գէս:

Արդոյ պարոնի ասարկութեամբ gund տուն չէ նշանակում: Քրդերի մէջ ապրած մարդ է եւ կարելի էր սպասել, որ դիտենար, որ քրդերէն gund նշանակում է գիւղ:

Բերում է նաեւ Մարքուարտի մեկնութիւնը, թէ Վինդիսարը ծագում է Վեհ-Անտիոկ-Սապուր անունից և հետեւապէս ապերս չունի մեր ենթադրած վանդ - գունդ բառի հետ: Եւ այստեղ լոկ իր անծանօթութիւնն է ցուցադրում:

Անգամ մեր կոչումը ստուգելու նեղութիւնը չի քաշել պ. Խաչատրեան, ապա թէ ոչ ցոյց տուած անդամ կը տեսնէր, որ Մարքուարտի կարծիքը նորութիւն չէ եւ ոչ խոկութիւն, այլ նա ծագում է արաբ հեղինակներից եւ յայտնի արեւելագէտ Նեօլդրէք անարժէք է համարում եւ փորձում է այլ կերպ մեկնել: Այսպիսի պայմաններում ներելի է եւ ոչ անդոսնելի կցել խնդրին նաեւ գունդ - գիւղ, բնակութիւն բառը, քանի որ ոմանք Գունդի-չապուհի մէջ պատրաստ են տեսնել մինչեւ անգամ գունդ - զօրք, բանակ բառը, որ նուազ պատշաճաւոր է քան մեր առաջարկը:

Մարքուարտ կարծում է նաեւ, որ յիշեալ քաղաքի անունը Վեհ-ազ-Անտոկ-չապուհ չէ եղել, ինչպէս արաբ մատենագիրներն են գրում, այլ Վեհ-Անտոկ-չապուհ:

Նեօլդրէք, որ չի ընդունում այս ստուգաբանութիւնը, ինչպէս ասացինք, նոյն ուղղումը առաջարկում է մի ուրիշ քաղաքի անուան առթիւ:

Խոսրով Անուշրուան Անտիոքի բնակիչներին գաղթեցրեց եւ հաստատեց Տիգրոնի մօտ հիմնած նոր քաղաքում, որ կոչեց Վեհ-ազ-Անտոկ-Խոսրով:

Ահա այս անունն է, որ նա ուղղում է Վեհ-Անտոկ-Խոսրով: Սեբէոս պատմագիրը ծանօթ է այս քաղաքին, որ ան-

ւանում է Վեհ-Անջաթոք-Խոսրով: Նոյն գիտնականը ուզում է հայ անունն եւս ուղղել Վեհ-Անտոք-Խոսրով:

Կարծում ենք, որ այս առաջարկը վիճելի է: Սերէոսի Վեհ-Անջատոքը հաստատում է արաբ մատենագիրների վկայութիւնը, որ քաղաքի անունն իրօք եղել է Վեհ-ագ-Անտոք, հայ Անջատոք աղաւաղումն է կամ Ագ-Անտոքի կամ աւելի հին ձեւի՝ Աժ-Անտոքի:

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ

Որքան եւ կարեւոր համարուին պատմութեան արտաքին այսպէս կոչուած նիւթական գործօնները, անկարելի է ուրանալ ներքին կամ հոգեւոր ազդակների արժէքը: Եթէ մէկը տալիս է պատմութեան անհրաժեշտ ատաղձը, միւսն է իսկական ճարտարապետը, որ անշունչ նիւթեղէնից կերտում կանգնում է պատմական մշտաբերբառ հրաշագան շէնքը: Միտքը պատմութեան գործօն ոյժերից մեծագոյնն է: Իւրացրած մտքերի եւ հասկացողութիւնների ամբողջութիւնը, այն որ կոչւում է աշխարհայեացք, այն է որ ձեւակերպում է եւ մարդկայնացնում անիմաստ մթերքը:

Ինչ եւ լինեն աշխարհայեացքի ծագման եւ կամ զարգացման պատճառները, որքան և կապակից լինեն արտաքին պայմանների, բայց մի անգամ որ մշակուած, կազմուած է, մի անգամ որ յայտնի ձեւաւորում է ստացած, աշխարհայեացքը երեւան է գալիս այնուհետեւ իբրեւ ուրոյն և ինքնազօր ոյժ եւ գործում է միւս ազդակների առընթեր, անկախ կամ փոխադարձ ազդեցութեամբ:

Պատմութիւնը, որպէս եւ հասկանալու լինենք, ամենէն առաջ գործողութիւնների շարան է: Հոգեբանական տեսակէտից գործն այլ բան չէ, եթէ ոչ հասկացողութեան մարմնացում: Անհատը, մենակ թէ հաւաքաբար, գործում է այն չափով, որչափ ըմբռնում է: Կարելի է համարձակ ասել, որ ազգերի հասունութեան աստիճանը, նրանց տեսութեան հորիզոնները շատ անգամ նախորոշում եւ նախագծում են նրանց պատմութեան շրջանակը: Քաջերի սահմանը զէնքը չէ միայն, ինչպէս ասուած է, այլ եւ այն հոգեկան մղումը, որ տանում է դէպի զէնք:

Նախնական շրջանում աշխարհայեացքն անպայման կրօնական գունաւորում ունէր: Ոչ միայն պատմութեան արեւածագին, երբ մարդկութիւնը թափառում էր տոտեմների եւ ֆետիշների աշխարհում, այլ եւ աւելի ուշ, գիտակից շրջանում, տիրական էր այն հաւատը, որ կեանքի անտես գործիչները աստուածներն են, նրանք են, օրինակ, որ մարդկանց տանում են պատերազմի դաշտ եւ նրանց հետ միասին կռւում թշնամու եւ օտար աստուածների դէմ:

Բնական է հարցնել, արդեօք ի՞նչ էին մեր աստուածները և ո՞ւր էին առաջնորդում մեզ: Աստուածութիւնը և նրա թելադրանքը երկրի համար գաղափարական երկնաճեմ գոլորշիներ են, որ բարի անձրեւներով բեղմնաւորում են պատմական հողը: Մեզնից բխած թէեւ, բայց իշխում է նա մեզ վրայ, ղեկավարում է մեր բարքերն ու գործերը, մեր թուիչքն ու անկումը:

Դժբախտաբար, հուրն ու սուրը, որ հանապազ աւեր են դարձրել մեր երկիրը, չեն խնայել նաեւ մեր ներքին աշխարհը: Իսկ այս կարգի քայքայումը նուազ աղետալի չէ, քան նիւթական փլատակները: Հետեւել մեր աշխարհատեսական ուղիին, պարզել նրա հարազատ եւ խորթ օլորները, եւ կամ վերականգնել նրա այնքան անգամ կտրտուած թելը, անհնարին գործ է: Այն սարսափները, որ տեղալով տեղացել են մեր երկրի վրայ ահաւոր են է՛ւ նրանով, որ խորտակել են ամբողջ աշխարհայեացքներ, չքացրել ապրած անցեալի, կրած փորձառութեան թանգարժէք եւ աննիւթ հարստութիւնը:

Պէտք է զարմանալ, որ հայ յիշողութիւնը, հակառակ բոլոր աննպաստ պայմանների, դեռ կարողացել է պահել դարերի մտաւոր եւ նիւթական աւերածի փոշու մէջ այնպիսի շողշողուն մարգարիտներ, որոնք տանում են մեզ դէպի մարդկութեան ամենահին պաշտամունքների տաճարները:

Հայ երկիրը երբեք կտրուած եւ կղզիացած չէ եղել իր շրջակայ խոշոր քաղաքակրթութիւններից, այլ ապրել է նրանց մէջ իբր կազմակից մաս և կրել նրանց շարժումների անմիջական հետեւանքը: Կարելի է ասել, որ այն ինչ որ ընդունուած է եղել լայն քաղաքակրթական աշխարհում, բնաւ օտար չէ եղել եւ մեր հայրենի շրջանին:

Հայ յիշողութեան հնաւանդ փշուրները, հարեւան երկրներում տարածուած պաշտամունքների լոյսի տակ, կը ստանան իրենց ամբողջութիւնը եւ կարող կը լինեն վերականգնել մեռած աստուածների պատկերները:

Զբաղուել թաղուած աստուածներով այնպիսի ժամանակ, երբ կենդանի աստուածներն են նաեւ ոչինչ համարուում, գուցէ և ունայն աշխատանք է: Սակայն, աստուածաբացութիւը ոչ թէ միայն բարոյական լքումի նշան է, այլ եւ ինքնակոծութեան վատթար տեսակը:

Արդարեւ, ի՞նչ է աստուածութիւնը, եթէ ոչ մարդկութեան վեհաշունչ երազների յայտնութիւն, եւ ի՞նչ է պատմութիւնը, եթէ ոչ նորանոր աստուածութեանց որոնումներ, նորանոր բարձունքի տենչանք:

Այս է պատճառը, որ մարդկութիւնը դժուարութեամբ է թողնում իր կուռքերը, հեշտ չէ բաժանուում իր սրբութիւններից: Մեռնում են աստուածները, բայց նրանց պաշտամունքի բեկորները մնում են սրբազան ուանդ, որ անցնում են սերնդէ սերունդ, տաճարից տաճար, պահպանելով իրենց վաղեմի խորհրդաւորութիւնը: Եւ զարմանալին այն է, որ յարատեւում են յաճախ մանաւանդ կրօնի արտաքին արտայայտութիւնները, որ ուելի մատչելի են հանրութեան, ծէսերն ու արարողութիւնները: Գինիները փոխում են եւ մնում են տիկերը իբրեւ նուիրական անօթներ, պատրաստ ընդունելու նոր բովանդակութիւն:

Աւետարանի վերասլաց վարդապետութիւնն անդամ չի արհամարհել հեթանոսական դատարկուած տիկերը: Քրիստոսի ճայնը հնչելիս հեթանոս երկինքը դրեթէ անբնակ էր, աստուածները կորցրել էին իրենց ոյժն ու հմայքը և տաճարներում մնացել էր միայն նախնի հաւատալիքների չոր կմախքը: Քրիստոնէութիւնը դիւրութեամբ դրաւեց անշունչ կմախքը եւ նոր ոգի տուեց նրան:

Հին կրօնի ծիսական ժառանգութիւնը հարուստ էր ճիշտ այն երկիրներում, որոնք նոր քարոզի անդրանիկ բեմ դարձան եւ նոր ուսմունքի մարտիրոսարան:

Նրանց թւում էր եւ Հայաստանը:

I

Հին աշխարհի կրօնական հասկացողութեան մէջ եթէ կար մի պաշտամունք, որ սկզբից եւեթ առաջնակարգ տեղ էր բռնել եւ ընդհանուր հոչակ վայելում, այդ զուգակից աստուածութեան գաղափարն էր:

Բնութեան մէջ ամենից մեծ եւ խորհրդաւոր երեւոյթը մանաւանդ նախնի մարդու աչքում առնացի եւ կանացի բակրգբունքն էր եւ նրանից բխած բեղմնաւորութիւնն ու համատարած բարիքը: Այդ սկզբունքի մարմնացումը կազմում է հին կրօնական պանթէոնի կենդրոնը:

Տոտեմական շրջանում բեղմնաւորութեան սկզբունքը հաւանօրէն հանդէս է գալիս կենդանական կերպարանքով, այս կամ այն կենդանու, գազանի, սողունի եւ կամ թռչունի նմանութիւն ստանալով: Ցեղոյ է որ այր և կնոջ պատկերով է ներկայանում, հաստամարմին եւ բազմատին կին եւ երիտասարդ գեղանի այր: Առաջինը պատկերացնում է նաեւ մայր-երկիրը, իսկ երկրորդը՝ կայծակնահար երկինքը: Նրանց հանդիպումի եւ միաւորութեան վայրերն են ամպերի

մէջ թաղուած բարձր լեռների գագաթները, ուր կարծես երկինքը իրօք իջնում է մօտենում երկրին եւ նրան բեղմնաւորում է խոնաւութեամբ, յորդ անձրեւներով եւ կեանքի կոչում կանաչագեղ բնութիւնը ձմրան մահացութիւնից:

Միեւնոյն պաշտամունքը տեսակ տեսակ արտայայտութեամբ ծանօթ էր հին քաղաքակրթութեան, սկսած Նեղոսի ափերից մինչեւ Սեւ ծովը ու Բաբելոնից՝ Եգիպական աշխարհը: Տեղի եւ ժամանակի համեմատ փոխւում էր անունը, բայց էութիւնը մնում էր նոյնը: Ամենից յայտնի անուններն են՝ Իշտար եւ Թամմուզ Միջագետքում, Աստարտէ եւ Ադոնիս Ասորիքում, Իզիս եւ Ոզիրիս Եգիպտոսում, Կիբելէ (կամ Կիբէլ) եւ Ատիս Փոքր Ասիայում, եւ եգէական-յունական դիցաբանութեան բազմանուն աստուածները Ռէայից մինչեւ Արիադնէ եւ Զեւսից մինչեւ Դիոնիսիոս:

Բազմատեսակ են անունները մանաւանդ Փոքր Ասիայում: Մեր նպատակից դուրս է կանգ առնել անունների եւ կամ զուգորդ աստուածութեանց վերաբերեալ առասպելների վրայ: Մեզ հետաքրքրողը նրանց պաշտամունքն է այն ձեւով, ինչպէս ընդունուած էր քրիստոնէութեան նախօրեակին դրացի երկրներում, գլխաւորապէս Փոքր Ասիայում և Ասորիքում: Պէտք կայ յիշելու Փոքր Ասիայի Կիբելէ եւ Ատիս զոյգ աստուածութեան դիցաբանական ծագումը, որպէսզի հասկանալի դառնայ նրանց պաշտամունքի ծէսերը:

Կիբելէն մի հրէշաւոր արարած էր սկզբում, երկսեռանի այր եւ կին միանգամայն: Աստուածները զարհուրած կտրում են նրա առնական բաժինը եւ դէն ձգում: Սրանից բուսնում է մի նշենի: Շատ հնում բեղմնաւորութեան ոյժը ներկայացնում էր ցուլը, հետագայում նա արտայայտւում էր կնոջ կերպարանքով: Թերեւս այս հանգամանքն է պատճառը, որ Կիբելէն երկսեռ հրէշ է: Հին յիշողութեան արձագանգ:

Երբ նշենին աճում է եւ պտուղ է տալիս, Սանգար գետի աղջիկը մի օր մի նուշ է քաղում ծառից և պահում իր ծոցում: Նուշից յղանում է եւ ծնում մի մանուկ: Մայրը ամօթից նետում է նորածին երեխային: Մի այծ խղճում է նրան և կաթ է տալիս ու մեծացնում: Դա էր Ատիսը կամ Ատտիսը:

Կիբելէն սիրահարւում է գեղանի պատանի Ատիսին: Մինչդեռ տղայի ազգականները ուզում են նրան ամուսնացնել Պիսինունտի թագաւորի դստեր, հարսանիքի հանդէսին վրայ է հասնում Կիբելէն, խանդից մղուած: Ատիսը գժւում է տեղն ու տեղը եւ խելացնոր անդամահատում է իրեն: Նրան հետեւում է Պիսինունտի արքան, նրա անները: Կիբելէն վրէ-

տացած աղերսում է Զեւսին, որ իր սիրելի մարմինը անհիւծ, անեղծ պահի:

Ասում են, որ Ատիսի դժբախտութիւնը տեղի է ունենում փիճի ծառի տակ: Կիբելէն թաղում է նրա առնականը, որից բուսնում է մանուշակ եւ պատում փիճի ծառը: Զեւսը կատարում է Կիբելէի խնդիրը եւ նրա տարփածուի մարմինը մնում է անապակ, միայն մազերն են երկարում եւ ճկոյթն երբեմնակի շարժւում: Աստուածուհին տանում է Ատիսի մարմինը իր անձաւը եւ այնտեղ ողբում նրա կորուստը:

Առասպելը Կիբելէի բախտը կապում է Ատիսի հետ: Երկուսի յարաբերութիւնը նոյն կարգի է, ինչ որ Հաթեան յիշատակարանների պատկերները, մայր աստուածուհին եւ այր աստուածը կանգնած մի մի ինծի մէջքի վրայ: Այր աստուածը հաւանօրէն Տեշուպն է, որի զուգորդն է անկասկած եւ մեր Ատիսը:

Գուցէ սկզբում Ատիսը անջատ գոյութիւն է ունեցել իբրեւ ուրոյն աստուածութիւն, անկախ եւ օտար աստուածուհուն: Թւում է թէ Ատիսը նախապէս լուսնի աստուածութիւնն է եղել եւ ժամանակի ընթացքում ձուլուել է Տեշուպի հետ իբր ընկեր եւ սիրելի մայր երկրի աստուածուհուն: Ինչպէս եւ եղած լինի, նրա շաղկապը աստուածուհու հետ անտարակոյս է: Այս շաղկապի իմաստը եւ խորհուրդը միակերպ է բացատրւում հին եւ արդի գիտնականների կողմից:

Երիտասարդ աստուածը կենդանի բնութեան եւ առանձնապէս բուսականութեան մարմնացումն է: Ինչպէս որ բոյսը ծլում է հողից, այնպէս էլ Ատիսը ծնունդ է առնում մայր աստուածուհուց, մայր երկրից: Ամառուայ խորշակը խանձում, սպանում է բուսականութիւնը դեռ ատոքութեան չհասած, այնպէս էլ Ատիսը մեռնում է կորցնելով իր առնական զօրութիւնը: Բայց նրա մահը ընդմիշտ չէ: Սառնաշունչ ձմեռուայ օրերն անցնում են, գալիս է գարունը, եւ բնութիւնը վերստին զարդարւում է կանաչ պճրանքով:

Ատիսի մահը նմանապէս ժամանակաւոր է համարւում. գարնանամուտի գեղածիծաղ օրը յարութիւն է առնում, որ յետոյ դարձեալ մեռնի: Այսպէս բնութեան փթիթն ու մահն իր անչեղ յաջորդականութեամբ մարմնանում է գեղանի Ատիսի դարեւոր մահով եւ յարութեամբ: Ատիսը մի հին փիլիսոփայի խօսքով «գարնանային երեսն է երկրի, կամ երեսի ծաղիկը»:

Բնութեան աստուածացումը բնականօրէն լծորդուելու էր մի շարք արարողութեանց հետ, որոնց ամբողջութիւնը կազմում է Ատիսի տօնախմբութիւնը: Նուիրական հանդէսները տեղի էին ունենում մարտի 22ից մինչեւ 27 եւ իրենց

զարդարը, ինչպէս ժողովուրդն է ասում, Աւագ շաբաթուայ հանդէսները, կարծես, իրենց նախատիպն ունին Ատիսեան արարողութեանց մէջ: Նմանութիւնը դիպուածական չէ:

Քրիստոնէական եկեղեցին իր ներքին կազմը մշակելիս համակերպուել է արդէն հնուց արմատացած սովորոյթներին և գրեթէ ողջովին իւրացրել է հանդչող պաշտամունքների ժառանգութիւնը: Ատիսի և Կիբելի երկրպագութեան արարողութիւնները պատրաստի անօթներ էին ընդունելու և պահելու քրիստոնէական նոր գինին: Բաւական էր փոխարինել հեթանոս անունները Տիրամօր եւ Աստուածորդու անուններով եւ հին ծէսերը կարող էին յարատեւել նոր շնչով:

Կրօնի յաջողութիւնը միմիայն ներքին արժէքից չէ կախուած, այլ եւ նրա արտայայտութեան արտաքին ձեւերից: Քրիստոսի կեանքն ու քարոզն աւելի հասկանալի պիտի լինէր այնտեղ, ուր ընդունուած էր Ատիսի պաշտամունքը, քան մի ուրիշ կրօնական միջավայրում:

Ճշմարիտ կը լինէր եւ հակառակ ենթադրութիւնը. ուր քրիստոնէութիւնը դիւրին մուտ է ունեցել, այնտեղ հաւանօրէն ծանօթ է եղել աստուածային զոյգի պաշտամունքը:

Արդ, Հայաստանը լինելով մէկն այն երկիրներից, որ հեշտութեամբ ընդունել է Քրիստոսի թեթեւ լուծը, պէտք է կարծել, որ նրա կրօնական հողը եւս խորթ չէ եղել Ատիսեան պաշտամունքի ծաղիկներին:

Արդարեւ, կան երեւոյթներ, որ հաստատում են այս ենթադրութիւնը: Խնդիրը հարկաւ այն չէ միայն, որ հայ եկեղեցական արարողութեանց մէջ նկատելի են այնպիսի ուրոյն գծեր, որոնք հեթանոս պաշտամունքի հնարաւոր շղերն են: Կան եւ այլ կարգի նիւթեր, թէեւ հատուկտոր, բայց բացորոշ, որոնց թւում յիշելու է նախ Դիորփի առասպելը:

Վերեւ յիշուած առասպելը Ատիսի եւ Կիբելէի մասին շատ եւ բազմատեսակ յեղուածներ (version) ունի: Յիշենք միայն այն, որ ըստ մի յեղուածի, որ պահուած է Պաւսանիասի մօտ և ծագում է աւելի հին հեղինակից, Զեւսը քնած ժամանակ սերմնակաթ է լինում, որից ծնում է երկիրը հրէշաւոր Ագդիստին, Ատիսի մօրը:

Արնոբ(իոս) քրիստոնեայ հեղինակը, որ ապրում էր երրորդ դարի վերջերը եւ չորրորդի սկիզբները, մերձ 305 թուին գրուած Adv. Gentes V, 5 աշխատութեան մէջ ծաղրանքով մէջ է բերում նոյն առասպելի մի այլ յեղուածը: Այն ժայռը, որի վրայ ննջում է Զեւսը, նրա ասելով, կոչւում էր Ագդոս: Ոլիմպոսի մեծ աստուածը, տուփանքից բռնուած,

միաւորւում է այդ ժայռի հետ եւ նրանից ծնւում է Ագդիստիս:

Արդ, այսպիսի մի առասպել ծանօթ է եղել հնում ե՛ւ Հայերին: Կեղծ-Պլուտարքը, De Fluviis գործի մէջ Արաքսի մասին խօսած ատենը բերում է հետեւեալ դիցաբանական զրոյցը:

«Արաքսին յարում է մի սար, որ կոչւում է Դիորփ(ոս) եւ որ իր անունը ստացել է երկրի որդի Դիորփից: Սրա մասին այսպիսի մի պատմութիւն են անում: Միհրը ցանկանում էր զաւակ ունենալ, բայց որովհետեւ ատում էր կանացի սերը, ուստի գրկախառնւում է մի ժայռի հետ: Ժայռը յղանում է եւ սահմանուած ժամանակը լրանալուց յետոյ ծնում է մի մանուկ, անունը Դիորփ: Սա մեծանում է եւ կռուի է կանչում Արէսին յանուն առաքինութեան եւ սպանւում: Աստուածների որոշմամբ Դիորփը կերպարանափոխւում է համանուն լերան»:

Որքան եւ չինծու, անվստահելի լինին Կեղծ-Պլուտարքի յերիւրանքը, մտացածին զրոյցները, բայց եւ այնպէս պէտք է ենթադրել, որ մի որոշ կռուան ունենալու էր չրջուն դիցաբանական կամ ժողովրդական բանահիւսութեան մէջ, այնպիսի զարմանալի առասպելներ յօրինելու համար: Դիորփի զրոյցը յամենայն դէպս իրական հող ունի: Փոքրասիական տարածուած առասպելների հայ յեղուածն է Ատիսի մասին: Զեւսի փոխարէն երեւան է գալիս բնականօրէն Միհրը, հին աւելի ժողովրդական աստուածութիւնը: Դիորփը «երկրածին» է կոչւում, նրա մայրը ժայռն է:

Տեսանք, որ այսպիսի ծնունդ ունէր մայր աստուածուհին Ագդիստը կամ Կիբելէն: Հաւանօրէն Հայերին եւս ծանօթ է եղել, որ Դիորփը Ատիսի նման ծնունդ է ունեցել:

Պլուտարքը տարաբախտաբար միայն առասպելի ըստուերն է մեզ պահել, չփոթ գծերով: Դիորփի մրցումը Արէսի հետ, նրա նահատակումը առաքինութեան համար ձուլում է նրան գրեթէ Արա Գեղեցիկի հետ: Դիորփը փոխւում է լերան ճիշտ այնպէս, ինչպէս Շամիրամը քար է կտրում Խորենացու ասելով: Այստեղ եւս Դիորփին է վերագրուած ինչ որ պատկանում է նրա մօրը:

Գիտենք, որ Կիբելէի բազմաթիւ մակդիրներից մինն է լեռնական մայր, լեռնաբնակի իմաստով: Մայր աստուածուհին գերադասում էր ապրել լեռների բարձունքում, նրա սրբավայրը քարանձաւներն էին: Հիները կարծում էին, որ նրա Կիբելէ անունն իսկ քարանձաւ է նշանակում:

Կեղծ-Պլուտարքի աւանդած հնութեան պատառը ամեն պարագային մի բան է ապացուցանում որոշակի, որ Փոքր

Ասիայի կրօնական երկինքը հարազատ եւ ընտանի է եղել եւ հայ միջավայրում: Այս մի գաղափարական օղակ է, որ կապում է Հայերին արեւմտեան հարեւանների հետ:

Սակայն մեզ հետաքրքրող պաշտամունքը միայն արեւմուտքի սեփականութիւն չէր: Նա ընդունուած էր ամբողջ Առաջաւոր Ասիայում, ուրեմն, ոչ միայն Հայաստանից արեւմուտք, այլ եւ հարաւ՝ Ասորիքի եւ Միջագետքի քաղաքակրթութեան աշխարհում: Նոյն պաշտամունքն այստեղ իր ուրոյն դունաւորումն ունէր: Հայաստանը, մանաւանդ նրա այն մասերը, որ աշխարհագրական կախուած են Միջագետքի հարթութեան վրայ, խնամի էին նրան նաեւ կրօնական սերտութեամբ:

Այդ սերտութեան արդիւնք են համարում Արա-Շամիրամի պատմութիւնը:

Արա Գեղեցիկի պատմութիւնը իրօք մի առասպել է, կրօնական մտայնութեան մի բեկոր մեզ զրաղեցնող սրբութեան տաճարում: Ասել է թէ հին պաշտամունքի հայ տեսակաւորումն է:

Մեր ժողովրդի մէջ տակաւին կենդանի են Արա-Շամիրամեան զրոյցի հետքերը: Բայց վստահ չենք, որ դրանք գրական յետադարձ ազդեցութեան արդիւնք չեն: Աւելի ապահով ենք համարում այն, ինչ որ աւանդուած է մեզ հնութիւնից:

Արայի պատմութիւնը հանրածանօթ է: Շամիրամը Ասորեստանի թագուհին է: Վաւաչոտ եւ զեղխ՝ ամուսնու մահից յետոյ մարդ է ուղարկում Արային եւ առաջարկում դալ Նինուէ եւ կնութեան առնել իրան, տիրանալով Նինուէի գահին:

Արան Հայաստանի թագաւորն է: Նա գեղեցիկ է. «ի բազմաց լուեալ զգեղեցկութենէ նորա, առաքէ հրեշտակս առ Արայն Գեղեցիկ»:

Արան ողջախոհութեամբ մերժում է: Շամիրամը պատերազմ է սկսում, կամենալով բռնի հասնել իր նպատակին: Արան ընկնում է կռուի դաշտում: Շամիրամ վերցնում է նրա դիակը եւ դնում «ի վերնատանն ապարանից», յուսալով, որ նա պիտի կենդանանայ: «Հրամայեցի ատուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա եւ կենդանացի», յայտարարում է թագուհին: Պատմագիրն աւելացնում է, որ յոյս ունէր կենդանացնել «դիւթութեամբ վհկութեան»: Երբ մարմինը նեխում է, Շամիրամը թաղում է եւ «զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ, համբաւէ զնմանէ այսպէս. լեզեալ ատուածոց զԱրայ եւ կենդանացուցեալ լցին զփափաք մեր եւ զհեշտութիւն»:

Այս ատթիւ Շամիրամը «կանգնէ եւ նոր իմն պատկեր յանուն դիւաց և մեծապէս գոհիւք պատուէ»: Նոր պատկերը, հաւանօրէն, Արայինն է եւ ուրեմն նրա ատուած լինելուն բացարձակ ակնարկ:

Պատմում է նաեւ, որ Արան ծնաւ Կարդոսին: Մի ուրիշ անգամ յիշւում է, որ Արան ունէր կին՝ Նուարդ անունով, եւ նրանից մի որս դաւակ 12 ամեայ: Շամիրամը նրան անուանում է Արա ի յիշատակ հօր: Այս Արան թողնում է մի դաւակ, «ամենահարուստ եւ չատահանճար յիր եւ ի բան զԱնուշաւանն որ Սօս անուանիւր, քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի Սօսիսն Արամանեկայ, որ յԱրմաւիր»:

Ինչպէս ասացինք, այս պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հին դիցաբանութեան մի նշխար: Հիմնական իմաստն է Արայի այսպէս ասած մահկանացու անմահութիւնը, նրա մահն ու յարութիւնը: Անցնելով քրիստոնէական միջավայրից, առասպելը հասկանալի փոփոխութիւն է կրել: Արայի յարութիւնը կասկածի է ենթարկուած, որով մարմինը նեխում է եւ ոչ թէ վերակենդանանում: Շամիրամ ինքը մի կախարդ է, Արայի յարութիւնը՝ վհկութիւն: Սակայն, այն կոչը, թէ ատուածները լիզել են վէրքերը եւ ողջացրել, մատնում է պատմուածի նախնի բուն ոգին, որ մեռած Արան իրօք յարութիւն է առել:

Արայի որդին եւս նոյն անունն է կրում, յարուցեալ Արայի արձագանգն է: Սրա որդին կոչւում է Անուշաւան, որ ոգումն է Անուշաւան բառի, որ ասել է «անմահ ոգի»: Այս եւս մի ակնարկ է Արայի անմահութեան իբր հետեւանք յարութեան: Անուշաւանը ձօնուած է սօսիների պաշտամանց. սրանով մերկանում է Արայի սրօղուած էութիւնը: Նա սոսկ թագաւոր չէ, այլ եւ նուիրական պատկեր, կրօնական մեծութիւն:

Արայի և Շամիրամի անուան տակ թաղնուած են երկու հնագոյն ատուածներ, որոնք երկայն ճանապարհ են անցել մինչեւ թագաւոր եւ թագուհի դառնալը եւ ոլոր մոլոր հետքեր են թողել անցած ճանապարհի վրայ, որ պէտք ունին հետազօտութեան եւ լուսաբանութեան:

Խորենացու խստասիրտ քննադատը, հանդուցեալ պրոֆեսոր Խալաթեանցը իր կասկածամտութեամբ այնքան հեռու գնաց, որ չէր ուզում հաւատ ընծայել պատմահօր խօսքերին թէ Արայի եւ Շամիրամի զրոյցը քաղել է գրաւոր աղբիւրից եւ թէ հայ առասպելները արդարացնում են նրա ասածները: Ամբողջ զրոյցը չինծու, մի տեսակ գրական յերկիւրանք էր համարում նոյն գիտնականը: Մերունի պատմութեան պիտենալով Դիոդորից որ Շամիրամի մասին անթիւ

պատմուածներ են եղել Արեւելքում, իբր թէ իրեն իրաւունք է համարել ստեղծել նաեւ հայ մտացածին տարբերակը:

Որքան եւ մեղաւոր լինի Խորենացին, այս կէտում ճըմարտութեան դէմ մեղանչողը նրա քննադատն է: Ցոյն պատմագրի վկայութիւնը աւելի յօգուտ Խորենացու է քան նրա դէմ: Եթէ Շամիրամի զրոյցները տարածուած են եղել Արեւելքում, Հայաստանը եւս կարող էր հաղորդ լինել նոյն զրոյցներին:

Շամիրամի առասպելի հնագոյն եւ Խորենացուն անծանօթ հիւսուածը, ինչպէս կը տեսնենք, ցարդ կենդանի է մեր ժողովրդեան յիշողութեան մէջ: Որ Շամիրամի անունը եւ նրան փարած զրոյցներն ընտանի են եղել հայ աշխարհում, այդ երեւում է, ի միջի այլոց, հետեւեալ վաւերագրից, որ սպրդել է յիշեալ գիտնականի ուշադրութիւնից, եւ որ կարեւոր է մեր նպատակի համար:

1893 թուին, ուղիղ երեք տարի առաջ Խալաթեանի մեղադրական աշխատութիւնից, գերմանացի գիտնական Վիլքէնը հրատարակեց «Հերմէս» հանդիսում մի ուշագրաւ յօդուած «Նոր յոյն վէպ» վերնագրով[1]:

Բերլինի պապիրուսների ժողովածուն քննելիս յիշեալ գիտնականը երեւան հանեց մի սիրային վէպ, որի հերոսն է Ասորեստանի թագաւոր Նինոսը: Թերթերը, դժբախտաբար, շատ մաշուած են, գրեթէ կէսը պակաս: Ընթեռնելի մասի բովանդակութիւնն այս է:

Նինոսը գրեթէ պատանի, 17 տարեկան, սիրահարուած է իր մօրաքրոջ աղջկան, որ աւելի նորատի, 13 տարեկան է: Երկուսի մայրերը, ուրեմն, հարազատ քոյրեր են: Նինոսի մօր անունը Թամբէ է, իսկ նրա տարփածուի մօր՝ Դարկիա: Նինոսը դանդաւում է իր մօրաքրոջ Դարկիային, որ իրեն չեն թողնում ամուսնանալ միայն նրա համար, որ հարսը տակաւին մանկահասակ է, 13 տարեկան, եւ պէտք է սպասել եւս երկու տարի:

Աղջիկն իր կողմից ուզում է խօսել, գուցէ բացատրել իր վիշտը Թամբէին, իր մօրաքրոջը, բայց կարմրում է ամօթխածութիւնից եւ չի կարողանում բերանը բաց անել:

Մայրերը խորհրդակցում են միասին: Արդիւնքը յայտնի չէ բնագրի եղծմամբ:

Այնուհետեւ նկարագրւում է Նինոսի պատրաստութիւնը արշաւելու Հայաստան: Մեծ զօրք է հաւաքում Հելլէններից, Կարիացիներից եւ Ասորեստանցիներից, 70 հազար հետեւակ, 30 հազար այրուձի եւ 150 փիղ: Նինոսը կտրում անցնում է սար ու ձոր, յորդահոս գետեր ոչ առանց դժուարութեան եւ բանակ է զարկում մի դաշտում: Տասնօրեայ հանգըստից յետոյ սկսւում է կռիւը: Այստեղ ընդհատւում է ձեռագիրը:

Վէպի հանգոյցն այնպէս պիտի հասկանալ, որ Նինոսը չի կարողանում իր սիրոյն հասնել, որովհետեւ աղջիկը դեռ անչափահաս է: Ստիպուած արշաւում է Հայաստան, որպէս զի կուսի մէջ անցնէ երկու տարին, մինչեւ որ հարսի օրինական հասակը լրանայ: Գիտնական հրատարակիչը խոստովանում է, որ վէպի հանգոյցը եթէ այս է, բաւականին անհեթեթ է:

Սակայն թւում է թէ այլ կերպ է հասկանալու արշաւանքի շարժառիթը: Ցիշենք որ աղջիկն ուզում է սիրտը բանալ իր մօրաքրոջ առաջ, բայց չի յանդգնում, քաշւում է: Արդեօք պատճառը կուսական պարկեշտութի՞ւնն է, թէ ասելիքի անախորժութիւնը, որ յետ է կասեցնում նրան մօրաքրոջ հետ խօսելուց: Թամբէի նկատողութիւնը՝ «չլինի թէ վատաբանես իմ որդուս» միանգամայն պարզում է, թէ ինչո՞ւ աղջիկը սիրտ չի անում մօրաքրոջ հետ խօսել: Պատճառն այն է, որ աղջիկը չի սիրում Նինոսին, նրա սիրոյ առարկան ուրիշ անձ է: Բնական է, որ դժուար է այսպիսի անախորժ խոստովանութիւն անել տղայի մօրը՝ Թամբէին, ուստի եւ նա կարմրում է եւ լռում:

Արշաւանքի ուղղութիւնը ապացոյց է, որ աղջկայ սէրը ուրիշ տեղ էր, Հայաստանում: Նինոսը զօրահաւաք է անում, որ գնայ եւ ոչնչացնի իր ախոյեանին: Ուշադրութեան արժանի է, որ նոյն յիշատակարանի աղճատուած թերթերը պահել են մի տեղ o Էրոս ընթերցումը, որից քանի մի տող յետոյ յիշւում է Արմէնի: Ուրեմն ախոյեանը ոչ միայն Հայոց թագաւորն է թւում, այլ եւ հաւանօրէն ինքն Արան, որի անունը տեղի է տուած եւ նոյնացած քաջայայտ Էրոսին: Ինչո՞ւ են Հայերը զայրացած կամ կատաղած: Դժբախտաբար, յիշատակարանը թերատ լինելով, հարցիս պատասխանը մնում է անյայտ:

Պապիրուսի սիրավէպը շատ նման է Արա-Շամիրամի պատմութեան: Հերոսուհին, Դարկիայի աղջիկը ուրիշ չէ, եթէ ոչ նոյն Շամիրամը, ինչպէս կը տեսնենք ստորեւ: Տարբերութիւնն այն է, որ պատերազմը մղում է ոչ թէ Շամիրամը, այլ Նինոսը: Բայց որ Շամիրամը մոլուած է սիրով դէպի Հայոց թագաւորը, այս կարեւոր կէտում սիրավէպը համերաշխ է Հայոց աւանդութեան հետ:

Կարծում ենք, որ սրանով Խալաթեանցի կասկածները տապալւում են: Արա Գեղեցկի եւ Շամիրամի պատմութիւնը

1 Wilcken, Ein neuer Griechisaher Roman, Hermes, 28, 161—193.

գրական յերիւրանք չէ, այլ զուտ ժողովրդական զրոյց: Որ Շամիրամի շուրջը շատ աւանդութիւններ եւ առասպելներ են եղել, այդ երեւում է պատմահօր հակիրճ ակնարկներից: Հայ առասպելը դիտէր «զմահ Շամիրամայ եւ զհեռուակ փախուստն եւ զպատքումն եւ զիղձս ջրոյն եւ զարբումն, այլ եւ ի մօտ հասանել սուսերաւորաց եւ զյուսութեան ի ծով եւ բան ի նմանէ՝ Ուլուսիք Շամիրամայ ի ծով»:

Սիրամէպի թերթերից մէկի վրայ կարդացուում է Տրայան կայսեր անունը: Վիլքէնը կարծում է, որ Պապիրուսը գրուած է ոչ ուշ քան առաջին դարը նախքան Քրիստոս:

Զրոյցը, անշուշտ, աւելի հին է. նրա սաղմը առասպելական ծագումն ունի եւ սկիզբը թաղուած է հեռաւոր անցեալի մթութեան մէջ: Որպէսզի կարելի լինի մաքրել կրօնական սաղմը հեռագայ աւելացած կցանքից եւ պարզել հերոսների էութիւնը եւ ընդհանրապէս հասկանալ զրոյցի իմաստը, անհրաժեշտ է նախապէս ծանօթանալ Շամիրամեան առասպելների միւս դանակներին (վարիանտ):

Հին դասական գրականութեան մէջ Շամիրամին բախտակից է Նինոսը:

Գրեթէ բոլոր հին հեղինակները, որոնք հետաքրքրուել են արեւելեան պատմութեամբ, յիշում են Նինոս-Շամիրամեան զրոյցն այս կամ այն չափով: Նրանց սկզբնական աղբիւրն է Կտեսիասը: Սա Պարսից Արտաշէս թագաւորի դրան բժիշկն էր (395) եւ մօտիկ ծանօթ էր ժամանակակից ժողովրդական զրոյցներին: Գրի է առել ի մէջի այլոց եւ Շամիրամի ու Նինոսի վերաբերեալ զրուցախառն պատմութիւնը, բայց նրա երկը մեզ չի հասել: Նրանից օգտուել են հետագայ պատմագիրները, քաղելով կարեւոր կտորներ, որոնց միջոցով կարելի է վերականգնել կորած բնագիրը: Առանձնապէս յարգի են Դիոդոր Սիկիլիացու քաղուածները, որոնք այսպէս են ներկայացնում Շամիրամի առասպելը:

Շամիրամը Ասորիքի Ասկալոն քաղաքի Դերկետա աստուածուհու դուստրն էր: Քաղաքից ոչ հեռու կար մի մեծ եւ խոր լիճ, լի ձկներով: Սրա ափին էր գտնուում հռչակաւոր տաճարը, նուիրուած աստուածուհուն, «որին Ասորիները անուանում էին Դերկետո եւ որի դէմքը կնոջ նման էր, իսկ մնացեալ մասը՝ ձկան»:

Դերկետոյի մասին առասպելաբանում էին, որ Ափրոդիտէին վիրաւորած լինելով, պատժւում է վերջնիս կողմից նորանով, որ սիրահարւում է մի երիտասարդի եւ նրանից ունենում է մի աղջիկ երեխայ: Դերկետոն ամօթահար ձգում է մանկան մի քարոտ եւ անապատ տեղ, եւ ինքը յուսահատ

ընկնում է լիճը եւ դառնում ձուկ: Այդ պատճառով Ասորացիք յարգ ձուկ չեն ուտում եւ սուրբ տեղ են պաշտում:

Ընկեցիկ երեխային շրջապատում են ոգեւորները, սնում եւ խնամում են նրան: Որը թեւերով պաշտպանում է քնքոյշ մարմինը, որը հարեւան հովիւներից կաթնեղէն է բերում եւ կերակրում: Հովիւներից մէկը պատահմամբ նկատում է երեխային, վերցնում տալիս է արքունի խոտապետին, որի անունով կոչում է Սեմիրամիս, որ սորբական բարբառով նշանակում է ոգեւոր: Այդ ժամանակից Ասորիները սկսում են պաշտել ոգեւորն իբրեւ աստուածայ:

Աղջիկն արդէն չափահաս էր, երբ մի անգամ Նինոս թագաւորի մերձաւորներից մէկը, այդի գալով խոտապետին, տեսնում է աղջիկն եւ գմայլում նրա գեղեցկութեամբ: Նրա անունն էր Օնն(էս), թագաւորի առաջին խորհրդականը եւ Ասորիքի հրամանատարը: Սա խնդրում է խոտապետին եւ նրա համաձայնութեամբ առնում է Շամիրամին կնութեան: Այս զոյգից ծնւում է երկու զաւակ, Հիւպատ(էս) եւ Հիւպատոպ(էս):

Նինոս թագաւորը, արշաւելով Բակտրիայի վրայ, տեսնում է հետ նաեւ Օննին: Պատերազմը երկարում է, Օննը ստիպուած է բերել տալ իր կնոջը Շամիրամին: Սա ճանապարհ է ընկնում ամուսնու մօտ, ոգեւորի չոր հագած, որ չիմանան, թէ նա կին է: Բանակ հասնելով՝ Շամիրամը օգնում է պաշարուած քաղաքի տէրերին:

Նինոս թագաւորը, հիացած Շամիրամի գեղեցկութիւնից եւ խելքից, թախանձում է ամուսնուն, որ յօժարի զիջանել իր կնոջը, որի փոխարէն արքան խոստանում է տալ նրան իր հարազատ դուստր Զուչանը:

Օննը անզօր է ընդդիմանալ իր պետի ցանկութեան: Ակամայ հրաժարւում է կնոջից, բայց վշտից պատնեշած խելագարւում է եւ ինքնասպան լինում[1]:

Աթենագորաս, որ ապրում էր երկրորդ դարի վերջին, հեթանոսութիւնը ծաղրելու համար յիշում է օգտուելով Կտեսիասից, որ «Ասորիները պաշտում էին Դերկետոյին, ոգեւորն եւ Շամիրամին եւ որ վերջինս մահից յետոյ աղաւնի է դարձել»[2]:

Հետագայ յոյն եւ լատին մատենագիրները Ալեքսանդրը Պոլիհիստորից (Բազմավէպից) սկսած մինչեւ Սինկելլ կրկնում են սոյն պատմութիւնը քաղուածօրէն, օգտուելով ուղղակի կամ չեղակի Կտեսիասից կամ Դիոդորից:

---

1 Դիոդոր. II, 19:
2 Աթենագորաս, 26:

Արդ Դերկետոյ աստուածուհին նոյնն է, ինչ որ սիրա-
վէպի Դարկիան, որ նոյն անուան փաղաքշական կրճատումն
է: Սրա աղջիկն է, որ գրաւում է Նինոսի սէրը: Անունը վէպի
մէջ չէ յիշուած, բայց Դիոդորի զրոյցից երեւում է, որ նա
ինքը Շամիրամն է, Դարկիայի աղջիկը:

Դերկետոյի աւելի հին եւ լրիւ ձեւն է Ատարգատ(էս):
Բաւ է յիշել Ստրաբոնի վկայութիւնը, թէ Ատարգատ կամ
Աթարա նոյնն է, ինչ որ Կոեսիասն կոչում է Դերկետոյ[1]:

Այսպէս էր կոչւում մայր աստուածուհին Հերապոլ քա-
ղաքում Եփրատի ափին, ինչպէս երեւում է ի միջի այլոց
նոյն քաղաքի դրամներից, որոնցից մէկը, հատած 332 թ.
ն. թ. պահւում է Պարիսի Ազգային Գրադարանում[2]:

Հռչակաւոր երգիծաբան Լուկիանը, որ ապրում էր
Քրիստոսի երկրորդ դարում, հաստատում է այն, ինչ որ
գիտենք Կոեսիաս-Դիոդորից: «Ցաղագս աստուածուհւոյն
Ասորւոց» գրութեան մէջ նա շատ կարեւոր տեղեկութիւններ
է տալիս մասնաւորապէս Հերապոլ քաղաքի նշանաւոր տա-
ճարի մասին, որ նուիրուած էր մայր աստուածուհուն: Լու-
կիանը տեղացի լինելով, ծնուած Կոմագենի Սամոսատ քա-
ղաքում, մօտէն ծանօթ էր հայրենի պաշտամունքներին եւ
կրօնական աւանդութիւններին:

Նրա ժամանակ ընդունուած կարծիք էր թէ յիշեալ
«սրբարանի հիմնադիրը Շամիրամն էր, որ այնքան մեծ չի-
նութիւններ է թողել Ասիայում»: Տաճարը կանգնել է ի յի-
շատակ իր մօր, որի անունն էր Դարկետո: Հերապոլի Դար-
կետոն ամբողջովին կանացի կերպարանք ունէր, մինչդեռ
այլուր Փիւնիկէում Լուկիանը տեսել էր նոյն Դարկետոյի
արձանը զարմանալի տեսքով՝ վերին մասը կին, իսկ գօտուց
ցած կատարեալ ձուկն: Դարկետոն է կոչւում աստուածուհին
իբր թէ այն պատճառով, որ ձուկն այնտեղ սուրբ է համար-

1 Ստրաբոն, XVI, I, 27: Պլին. «Բնական պատմ.» V, 12:

2 Ատարգատէս կազմուած է երկու զատ անուններից, Աթար եւ Հաթէ: Առաջինը արամէական ձեւն է Իշտար դիցուհու անուան, երկրորդը՝ փոքր-ասիական Ատիս աստուծու անունն է, հազագային սկզբնահնչիւնով: Ատարգատէս, ուրեմն, նշանակում է Ատիսի Իշտար, այսինքն այն Իշտարը, որի սիրելին է Ատիսը:

Այս մեկնութիւնը պատկանում է Նեօլդեկէին (The Syrian Goddess, H. Strong և J. Gastrang, p. 27): Իսկ Ֆրեզէր երկրորդ բաղադրեալը համարում է նոյն Աթարի կիլիկեան ձեւը իբր Աթէհ կամ Հաթէհ, ուրեմն Աթարգատ կրկնութիւնն է նոյն անուան (Adonis, I, p. 162):

Աթարի սարէական ձեւն է Ath-tar, որից քանանէական հնչիւնն է Astor, իգական մասնիկով Astor-et, որից ծագում է յունական Astarta: Հայաստանին կից Արամէական երկրներում, ինչպէս Ուռհա-Եդեսիայում գործածական ձեւն էր Թարաթա, Tharatha, այսինքն մեզ արդէն յայտնի Աթարա իգական մասնիկով եւ սկզբի ձայնաւորի յապաւմամբ: Խորենացին յիշում է Թարաթա ի Թիւս այն կուռքերի, որ Արդարը Եդեսիայի չինութիւնից յետոյ իբր թէ այնտեղ է տեղափոխել Մծբնից (Բ. 27): Իր աղբիւրը Ղերուբնան է: Այսպէս ուրեմն, Դերկետո, Ատարգատ, նոյն Իշտար-Աստարտէ աստուածութիւնն է:

ւում, ինչպէս եւ աղաւնին: Իսկ սրանց սրբութեան պատճառը Լուկիանը այն է համարում, որ Դարկետոն ձկնակերպ է եւ Շամիրամը՝ աղաւնակերպ[1]:

Այս երեւոյթի իմաստը հասկանալու համար, պէտք է նկատել, որ ձուկն եւ աղաւնին երբեմն ուրոյն պաշտամունքի առարկայ են եղել, այն ինչ որ տոտեմ է կոչւում: Կենդանակերպ աստուածները փոխանցման օղակներ են տոտեմներից դէպի մարդանման աստուածութիւնը: Կենդանիները, սակայն չեն անհետանում, մոռացւում, այլ յարատեւում են, կառչելով նոր աստուածներին իբր խորհրդանշաններ:

Սուրբ Գրքից յայտնի է, որ Փղշտացիք ունէին ձկան աստուածութիւն, որ կոչւում էր Դագոն[2]: Բաբելական դիցաբանութեան եւս ծանօթ է Օդակոն անուն էակ, որ ձկան եւ մարդու խառնուրդ էր: Եւսեբիոս Կեսարացու ասելով, սկզբում մարդիկ ապրում էին որպէս կենդանիներ, յետոյ յայտնւում է Օդակոնը ծովից եւ սովորեցնում է մարդկանց գիր, օրէնք, գիտութիւն եւ երկրագործութիւն, մի խօսքով, հիմն է դնում քաղաքակրթութեան:

Եւսեբի տեղեկութիւնը ծագում է Բերոսից, որ Բաբելոնում քուրմ էր Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ, եւ գրել է իր հայրենիքի պատմութիւնը: Նրա երկը մեզ չի հասել, բայց նրանից օգտուել են հետագայ գրողները, ինչպէս Ալեքսանդր Պոլիհիստոր (Բազմավէպ), Ապոլլոդոր: Սրանից քաղուածներ ունի Եւսեբիոսը:

Ապոլլոդոր Աթենացին (179-110 Ք. Ա.) Սինկելլի վկայութեամբ ասում է, որ վեց ձուկ մարդ է եղել, առաջինը Օանն(էս), միւս չորսը Աննեդոտ(ոս), և վերջինը՝ Օդակոն[3]:

Քերական Հելլադիոս մօտ 290 թուին յ. Ք. պատմում է, քաղելով անչուշտ ինչպէս եւ Ապոլլոդորը Բերոսից, որ Օէս անունով մի մարդ, մարմնով ձուկն եւ գլխով եւ ոտ ու ձեռքով՝ մարդ, դուրս է գալիս Կարմիր ծովից եւ ուսուցանում դպրութիւն եւ աստղաբաշխութիւն[4]:

Ս. Գրքի Յովնան մարգարէն, իր անունով եւ երեք օր ու գիշեր ձկան փորում ապրելով, դարձեալ նոյն հին դիցաբանութեան անդրադարձումն է:

Դիոդորի վերեւ յիշուած զրոյցի Օնն(էս), սրբայական բարձրաստիճան իշխանը եւ Շամիրամի ամուսինը այժմ հասկանալի պիտի լինի, որ նոյն էակն է, նոյն աստուածը, որ կրում է Oes, Onnes, Oannes, Dagon, Odakon, Annedotos անունները:

1 De dea Syria, 14.

2 Դատ. ժզ, 23, Ա. թագ. ե, 2-5:

3 Syncellos, 71.

4 Photil, Bibliotheca, 28.

Հրէշաւոր էակիս խնամութիւնը ձկան հետ պարզ երևում է մանաւանդ Քսանթ Լիւդացուց մեզ հասած մի առասպելից: Քսանթը Արտաբանոսի թագաւորի ժամանակակից էր եւ Հերոդոտից առաջ: Նրա պատմութիւնից միայն քաղուածներ են մնացել, նրանց թւում եւ մի հատուած Աթենայոսի մօտ: «Մոպս Լիւդացին ասում է Ատերգատին նոր Իքթիւս որդու հետ միասին եւ նեռում Ասկալոն լիճը, որ ձկները կլանում են նրանց»:

Ատերգատի որդին, որ անուանուած է Իքթիւս, այսինքն ձուկն, անտարակոյս, համապօր է մեզ ծանօթ Օնն, Դագոն եւ այլ անունով յայտնի կիսաձուկն աստուածուն:

Դիոդորի մօտ, Օննը Շամիրամի ամուսինն է, իսկ Քսանթի ասելով, նա Ատերգատի որդին է:

Մենք տեսանք, որ Ատերգատ եւ Շամիրամ տարբեր անուններ են միևնոյն աստուածուհու, որ է Իշտար կամ Աստարտէ: Այստեղ Օննը եւ Իքթիւս կամ Ձուկը Իշտարի նկատմամբ և՛ ամուսին է՝ որդի են:

Այժմ հասկանալի պիտի լինի, թէ ինչու Ատարգատը կամ Դերկետոն ձուկ աստուածութեան նշանակութիւն են ստացել: Նա իւրացրել է պարզապէս իր դուդակցի յատկութիւնը: Ասել է թէ աստապելը հիւսուել է այնպիսի ժամանակ, երբ Իշտարի լծորդը համարւում էր ջրային մեծ աստուածը Դագոնը կամ Օաննը: Ուստի եւ Ատերգատի եւ Իքթիւսի աստապելը այլ բան չէ, եթէ ոչ նոյն Ադոնիս-Աստարտէ մի նոր հայուածք:

Թէ յիրաւի Դագոնը մերձ է եղել Ատարգատին իբր նոր Ադոնիս, երևում է նրանից, որ երբեմն կոչւում է «Ձկան արօրի, իբրեւ հացահատիկների եւ արօրի հնարողը»[1]: Սրանով նա նոյնանում է Ադոնիսի հետ, որ բուսականութեան եւ մասնաւորապէս հացահատիկի աստուած է:

Նոյնացման, թւում է թէ, նպաստել է մեծապէս աստուպարանական թիւր մեկնութիւնը, որով Դագոն հասկացուել է երբայական դակոն բառի իմաստով, որ իրօք, նշանակում է հացահատիկ, մինչդեռ նա ծագում է դակ «ձուկ» բառից: Առաջին աստուպարանութիւնը պատկանում է Փիլոն Երբայեցուն: Ժամանակակից դիտնականներից մի քանիսը, ինչպէս Հեգինակատը Սայսը, հնարաւոր են դանում պաշտպանել հին մեկնութիւնը եւ Դագոնին համարել երկրագործութեան աստուած ի բնէ:

Տեսանք, որ ծովից ելած Դագոնը սովորեցնում է մարդկանց ոչ միայն գրագրութեան, այլ եւ երկրագործութեան սր-

[1] Müller, Frag. Hist. III, 567.

հեսաը: Մարդաձուկ Դագոնը իր այս իսկ յատկութեամբ, իբր վարպետ երկրագործութեան, կարող էր, անկախ լեռական թեր ու դէմ հիմքերից, հանդէս գալ Իշտարի լծորդի դերում: Եւդեմ Ռոդոսցին, որ Արիստոտելի աշակերտներից էր եւ Թէոփրաստի դասընկերը, գրել է բաբելական արարչաբանութեան մասին, ուր ասում է, որ Բէլ, աշխարհիս բուն ճարտարապետը, համարւում է Ասսի եւ Դաւիթի որդին: Ասսը յիշեցնում է Հելլադիոսի վերեւ բերած Օէս, այսինքն Օաննէսը: Արուեստագէտները Ասսը նոյնացնում են էա աստուածուհու հետ, որ ջրային անդունդի տէրն էր: Այս է պատճառը, որ ձկան կերպարանքով է ներկայանում:

Նինոսը, Բէլի որդին եւ Օաննէսը, Բէլի հայրը, երկուսն էլ Շամիրամի սիրելի լծորդներն են, որը նա ժառանգել է իր մօրից Ատարգատից: Ուշագրաւ է, որ աւելի հին Օննը հանդիսանում է առաջին եւ օրինաւոր ամուսինը Շամիրամի, մինչ Նինոսը, որ աւելի կրտսեր է, միայն սիրահար է, որ բանի իրում է նրան ամուսնուց՝ Օննից եւ պատճառ լինում վերջինիս կորստեան:

Բաբելաստրական Պանթէոնը կազմուած էր զոյգերից, ամեն մի այլ աստուած ունէր համապատասխան կանացի ընկեր: Իշտարը միակ բացառութիւնն էր, որ կենտ էր ի բնէ: Թերեւս այս նշան է, որ նա օտարամուտ, եկւոր աստուածութիւն է եւ ոչ բնիկ: Որքան աւելի էր աճում Իշտարի հեղինակութիւնը, այնքան առաւել զօրեղ աստուած էր դալիս նրան լծակից լինելու: Ահա ինչու համար մի շարք վերնաբնակներ փառքի գագաթին հասած սկսում են համարուել Իշտարի, սիրոյ զօրաւոր գիւղուհու, սիրահարներ: Նոքանոր համանիները ազդում են իրենց սիրելիի վրայ և փոխում նրան ոչ միայն անուանապէս, այլ եւ էապէս: Ատարգատը ոչ միայն փոխում է իր անունը, այլ եւ ստանում է իր ամուսնուց իբր ժառանգութիւն նրա ձկան նմանութիւնը եւ դառնալով Դերկետոս, միևնոյն ժամանակ իսկ դառնում է Ձուկ աստուածուհի:

Նոյն Ատարգատը մի այլ կերպով փոխում է իր անունը Շամիրամի, կամ ծերանալով տեղի է տալիս իր դստեր, որ առնում է Շամիրամ անունը, առնելով միևնոյն ժամանակ մի նոր՝ աղաւնու կերպարան:

Ինչպէս տեսանք, աղաւնիներն էին, որ փրկեցին Շամիրամի կեանքը: Արքունի ախոռապետը, որ խնամեց նրան, իր անունով կոչեց Շամիրամ, որ իրրեւ թէ նշանակում է աղաւնի:

Անտարակոյս, ժողովրդական ստուգաբանութեամբ Շամիրամ բառը կապւում է ասորական Su-um-ma-tu բառի

հետ, որ արդարեւ նշանակում է աղաւնի: Նոյն բառի արա-
կան ձեւն է Su-um, վարուժան: Ախոռապետի անունը Simma
խնամի է Su-umին

Լեհմանը համեմատում է Simma անունը Samams 'արե-
գակ' բառի հետ, թէեւ ախոռապետի անունը, ինչպէս Դիո-
դորն է ասում, Շամիրամի անուան միջոցով թարգմանւում է
աղաւնի, ասել է թէ Suum, Sum բառն է, որի իգական ձեւը
Summatu իբրեւ թէ Semiramis-ի հիմն է:

Այս ստուգաբանութիւնը, ի հարկէ, հեռու է իսկութիւ-
նից: Շամիրամ անունը կապ չունի աղաւնի նշանակող ասորի
բառի հետ եւ կասկածելի է նոյնիսկ նրա սեմական ծագումը:

Կոռեխաս-Դիոդորի ստուգաբանութիւնը կարեւոր է յա-
մենայն դէպս այն տեսակէտով, որ ցոյց է տալիս Շամիրամի
իրական առնչութիւնը աղաւնու հետ: Ստուգաբանը սխալ-
ւում է իբրեւ լեզուագէտ, բայց արդար է պատմականօրէն:
Աղաւնին անյիշատակ ժամանակներից ի վեր համարւում է
սրբազան եւ այդ նշանակութիւնը չի կորցրել նոյնիսկ քրիս-
տոնէական մթնոլորտում: Նա Իշտարի նուիրական թռչունն
է: Փոքր Ասիա, Փիւնիկէ եւ Եգէական աշխարհում աստուա-
ծուհու կաւէ արձանները անբաժան են աղաւնու կամ աղա-
նակերպ գծագրութիւններից[1]:

Նոյն Լուկիանի ասելով, Հիերապոլի տաճարում աստուա-
ծուհու արձաններից մէկը ունէր իր դագաթին ոսկի աղաւնի
եւ այս է պատճառը, որ կարծում էին թէ արձանը Շամիրա-
մինն է: Այնտեղ աղաւնին համարւում էր թռչուններից ամե-
նից յարգին եւ նուիրականը: Արգելուած էր նրանց ձեռք
տալ, խփել եւ կամ սպանել: Չէր կարելի նրանց դիպչել եւ
հալածել, երբ տուն են մտնում, բոյն չինում եւ կամ երբ
կուտ են ուտում:

Մեզ հասել են նաեւ դրամներ, ուր աստուածային զոյ-
գերի գլխավերեւը գծագրուած է աղաւնու նշանը:

Ցունարէն պերիստերա, որ նշանակում է «աղաւնի»,
սեմական փոխառութիւն է եւ կազմուած է peras-Istar բա-
ռերից, այսինքն «Իշտարի թռչուն»: Եթէ ուրիշ ապացոյց
չունենայինք, միակ այս բառը բաւական էր լուսաբանելու
աղաւնու եւ Աստարտէի փոխյարաբերութիւնը:

Աղաւնու պաշտամունքն եւս տոտեմական շրջանի մնա-
ցորդ է, ինչպէս Աստարգատի ձուկը: Վերջնիս նման նա եւս
ինքնուրոյն աստուածութիւնից փոխանցուել է աղաւնակերպ
էակի, որ հետագայում բաւականանայ խորհրդանշանի հա-
մեստ դերով:

1 Ed. Meyer, Roscher, Lexicon.

Ձկան եւ աղաւնու սերտութիւնը աստուածուհու հետ
հիմք է ծառայել մի առասպելի, որ դիցաբանական խառ-
նուրդի գեղեցիկ օրինակ է: «Երկնից Եփրատ գետն է ընկնում
զարմանալի մեծութեամբ մի ձու, որը ձկները հանում նե-
տում են ափը: Աղաւնիները իջնում են թուխս նստում ձուի
վրայ, որից դուրս է գալիս Ափրոդիտէն, որ կոչւում է Աս-
որիքի աստուածուհի»:

Երկու սրբազան կենդանիների դերերը աստուածային
պաշտամունքում խորհրդաւոր կերպով հիւսուած են այս
առասպելի մէջ: Շամիրամը մօր կողմից ձուկ է, հութեամբ
աղաւնի: Իր մայրը Դերկետոն ջուրն ընկնելով կերպարանա-
փոխւում է ձկան, իսկ ինքն իր կեանքի վերջին թագնւում է
մարդկանցից եւ աղաւնու կերպարանքով վերանում է եր-
կինք:

Այսպիսով Շամիրամը կրօնական աշխարհի տիրուհիներ-
ից է եւ Իշտար-Աստարտէի մի այլ եւ դրեթէ անուանական
տեսքը:

Սակայն անսպասելի կերպով երեւան եկաւ, որ առաս-
պելական տիկինը միայն երկնքի բնակիչ չէ, այլ եւ երկրի
վրայ իր պատմական նախատիպն ունի:

Դեռ 1852 թուին անգլիական հնախոյզները հին Կալախ,
այժմ Նեմրութ քաղաքի աւերակներում գտան Ներբո աստու-
ծու արձանը, կանգնած «վասն կենաց Ադադ-Նիրարի թագ-
աւորի Ասուրի եւ վասն կենաց Սա-ամ-մու-ռա-մատ տիկնոջ
պալատական»:

Վերջերս գերմանացի յայտնի ասորագէտ Լեմանը նոյն
աւերակներում գտաւ Շամիրամի արձանը հետեւեալ գրու-
թեամբ. «Արձան Սա-ամ-մու-ռամատ տիկնոջ արքունեաց
Շամշի-Ադադի, թագաւորի աշխարհի, թագաւորի Ասսուրի,
մօր Ադադ-Նիրարի թագաւորի աշխարհի, թագաւորի Ասսու-
րի, հարսին Սալմանասարի, թագաւորի չորից կողմանց աշ-
խարհի»:

Առաջին արձանի գրութեան անորոշ դարձուածքի հի-
ման վրայ կարծում էին, որ Սամմուրամատը Ադադ-Նիրարի
կինն է: Բայց երկրորդ գիւտը պարզեց, որ նա Ադադ-Նիրա-
րի մայրն է եւ Շամշի-Ադադի կինը եւ ուրեմն սրա հօր Սալ-
մանասարի հարսը: Սալմանասարը թագաւորում էր 859–824,
սրա որդին եւ յաջորդը Շամշի-Ադադ 824–811, եւ սրա որդին
Ադադ-Նիրար 811-782: Շամիրամի նկատմամբ սրանք են
սկեսրայր, ամուսին եւ որդի:

Առասպելական աշխարհակալուհին իրական պատմու-
թեան մէջ ոչնչով յայտնի չէ: Ծագումով նա Բաբելոնից էր
եւ հայրենի Ներբոյի պաշտամունքը մուծել է իր նոր ամուս-

նու Ասուր քաղաքում, չմնալով նրա համար առանձին տաճար եւ կանգնելով նրա արձանը:

Ի՛նչպէս է պատահել, որ մի համեստ պաշտամունքային կենտրոնական անուան շուրջը դիզուել են այնքան առասպելներ եւ մատաղ ծին սխրագործութիւններ: Ճշմարիտ է, նա ապրում էր պատմական շատ նշանաւոր դարում, երբ Ասորեստանը ձիգ էր թափում վերականգնել իր նախկին զինական հռչակը: Շամիրամի ամուսինը, սկեսրայրը եւ որդին անընդհատ կռիւներ էին մղում նոր եւ հնաւոր հարեւանների դէմ: Հիւսիսից սպառնում էին Ուրարտական աշխարհակալները եւ արեւելեան ցեղերի առաջաւոր գնդերը, դյուրս ունենալով Մեդացիներին:

Ասորեստանը յաջողութեամբ դիմադրեց յամառ թշնամիների յարձակումներին: Արդեօք արեւելեան Շամիրամը որեւէ մասնակցութիւն է ունեցել պատերազմական գործողութեանց: Եթէ անձնապէս նա չի վարել, յամենայն դէպս նրա մերձաւորների՝ ամուսնու եւ որդու պատերազմական վարքը կարող էր անցնել հետապայում իրեն Շամիրամին: Կանսիս Դիոդորի զրոյցները, այսպիսով, ամփոփում են որոշ պատմական կորիզ: Նրանք հաստատում անդրադարձ են այն կատաղի կռիւների, որ տեղի են ունեցած Շամիրամի ժամանակ Ասորեստանի և նրա հիւսիսային ախոյեանների միջեւ:

Ուրարտուի մայրաքաղաքը՝ Վան եւ Մեդացիների Համադանը, ահա երկու նշանաւոր մրցարանները սոսկ այժմի:

Բնական է, որ հնոց այս քաղաքների շրջանում են պահուել պայքարի յիշատակը, կապուելով եւ կապելով Շամիրամի անուան Ուրարտական և Մեդական չինարարութեան կոթողները: Նոյնիսկ Շամիրամեան զրոյցները, որ ուանդում է Կտեսիասը, ծագել են ոչ թէ Ասորեստանում, այլ մշակուել են Մեդական շրջանում, ինչպէս հաւատում է Լեմանը:

Զենք կարծում, որ այնտեղից Հայաստան անցած լինի որպէս հակամէտ է ենթադրելու նոյն դիտնականը: Հայ առասպելները ինքնուրոյն բնաւորութիւն ունեն: Հայաստանի այն ժամանակուայ տիրապետները ոչ պակաս վառնդաւոր հակառակորդներ էին Ասորեստանի քան Մեդացիք: Սարմանասարից եւ Արամէից սկսած պայքարը չարունակում էր նորանոր բռնկումներով եւ փոփոխակի բախում: Կային բոպէներ, երբ համաշխարհային գերիշխանութեան պատիր սոսկալուած էին գիշնել Վանի տէրերին:

Անտարակոյս, այս երկարատեւ բնդհարումները չէին կարող անհետ չթանալ ժողովրդական յիշողութիւնից: Պատմական Շամիրամը մի վախտ ուրուական է, որ չէր կարող թնդալ այնպիսի մեծ հռչակով: Իր աշխարհածանօթ անունը

եւ համատարած փառքը պարտական է ողջովին ոչ թէ պատմական համեստ թագուհուն, այլ Իշտարի համազօր աստուածուհի Շամիրամին: Առաջաւոր Ասիայի ամեն մի անկիւնում յայտնի Իշտար աստուածուհու պատկերն է որ Շամիրամ կոչումի ներքոյ տարածուել եւ ծնունդ է տուել զարմանալի առասպելների:

Լեզուական չափաբերումն այստեղ եւս որոշ դեր է խաղացել, ինչպէս Դերկետոյի դէպքում: Սամմուրամատ, բաբելական իշխանուհու անունը, չափաբերել են տասրական Սուրմատ բառի հետ, որ նշանակում է ազատի: Եւ որովհետեւ ազատին Իշտարի թագուհին է և որոշ մտքով նոյնանիշ, ուստի եւ Սամմուրամատ - Շամիրամին նոյնացրել են Իշտարի հետ:

Դիցաբանութեան մէջ սովորական երեւոյթ է, երբ լեզուական շեղումները, շնորհիւ ժողովրդական սուղաբանութեանց, ստեղծում են նոր առասպելներ կամ հին նոր վարիանտներ: Շամիրամ, Ատարգատի դուստրը, ժառանգել է ուղղակի իր հռչակաւոր մօր փառքն ու պատիւը: Ահա նրա արտասովոր ժողովրդականութեան դաղտնիքը:

Հայերին աստուածուհին քաջ ծանօթ էր: Հերապոլի մեհեանի նկարագրութեան մէջ Լուկիանը վկայում է, որ աստուածուհուն նուէրներ են գալիս նաեւ Հայաստանից: Անծանօթ աստծուն երկրպագութեան չէին գնալ այնքան հեռու: Անկասկած մայր աստուածուհին նրանց պանթէոնի մեծութիւններից էր եւ սիրուած պաշտամունքը:

Հայ զրոյցները Շամիրամի մասին ոչ մի նկատումով չեն կարող օտարամոյծ համարուել, այլ ընդարոյս ծաղիկներ են Հայաստանի հողի: Ուրարտական շրջանում մշակուած, այդ զրոյցները արտացոլում են հին քաղաքական եւ կրօնական ապրումները և այնքան մեծ ժողովրդականութիւն են վայելել, որ Ուրարտացիներից անցել են Հայերին, որոնք գրաւելով նրանց երկիրը, ժառանգել են երկրի մատաղ ինչքն ու ուանդները:

Թէ որքան կենդանի եւ շրջուն են եղել հին զրոյցները, այդ երեւում է Լէղք, Շամիրամակերպ անուններից, որ գիւղական երկնքից իջած տեղ են բռնել իրական հողի վրայ: Հեռաւոր անցեալի բարձր ստեղծագործութեան և պաշտամունքի հետքերը մինչեւ այժմ էլ մնացել են կենդանի ժողովրդի մէջ: Հարիւրաւոր դարերի ցարդ կենսունակ ուանդը ապացոյց է, որ Շամիրամեան զրոյցները բնատնի զօրանոցներ են Վանայ ծովի ափին:

Արա - Շամիրամեան առասպելներից յայտնի է Արալէզ կամ Առլէզ աստուածը: Նրա յիշատակը ուանդաբար կապ-

ւած է Լէզք գիւղին, որ Վանի մօտ ցայժմ կայուն գիւղ է։ Ահա ինչ է պատմում ժողովուրդը մի սրբավայրի մասին, որ գտնւում է այդ գիւղի մօտ։

«Լէզք գիւղի մօտերը կայ մի Թոնիրի ձեւով աղբիւրի փոսակ կամ ջրհոր, որ Սուրբ Թոնիր կը կոչեն, ուր յաճախ գնացողներ կան, շատերուն իբրեւ ուխտատեղի, ոմանց ալ հետաքրքրելի։ Մի մի այն մէկ ձուկ կ՝երեւի այդ ջուրին մէջ. եւ որին որ երեւի, անոր բախտն ու ուխտը կը կատարուի։ Դա՝ կնկան կերպարանք ունի եղեր, եւ արծաթէ օղն ալ իր քթին անցուցած՝ կը տեսնուի տակաւին։ Երէցկին է եղեր դա, կին՝ կարի գեղեցիկ, երբ նստած Թոնիրի շուրթն հաց կը թխէ, աղքատ մը կուգայ հաց կ՝ուզէ, կուտայ, կերակուր կ՝ուզէ, կուտայ, գինի կ՝ուզէ, կուտայ։ Թշուառականը կը համարձակի նաեւ պագ մը ուզելու։ Երէցկինը կը վարանի կը վարանի, բայց կը մտածէ թէ աղքատ թէմարզու է, ի՞նչ կայ, մե՛ղք է, գուցէ վարձք է։ Պագն ալ կուտայ։ Եւ յանկարծ նոյն վայրկեանին երէցը ներս կը մտնէ, երէցկինը ամօթէն ու ահէն ինքզինքն կը ձգէ ի Թոնիր կրակին մէջ, տէրտէրն ալ զինքն ի վրէն։ Բայց տէրտէրը կը մրկի, իսկ երէցկինը՝ կրակն ջուր դառնալով, ինքն ալ ձուկ, Աստուծոյ հրամանով յաւիտենական յիշատակ կը մնայ նոյն տեղ»[1]։

1917 թուի ամառը Ռուս. կայսր. Հնագիտական ընկերութեան պատուէրով եւ Աշխարհբէկ Քալանթարեանի ընկերակցութեամբ գիտական նպատակով Վանայ գաւառը այցելեցինք, նաեւ Լէզք եւ տեսանք նշանաւոր Թոնիրը։

Պատերազմի իրարանցումի հետեւանքով գիւղը, ինչպէս եւ ամբողջ շրջանը թափուր էր բնակչութիւնից։ Հազիւ մի քանի տուն վերադարձել էին Երեւանից ամառային աշխատանք կատարելու։ Տեղական ժողովրդական բանահիւսութեան ծանօթ առաջնորդներ չունէինք։ Աղբիւրի մօտ մի քանի տղաների հանդիպեցինք, որոնք այսքան միայն մեզ հաղորդել կարողացան, որ աղբիւրի անունը Եօթոնիր է եւ որ մէջը ձուկ կայ։

Ի՞նչ է նշանակում առաջին վանկը, չկարողացան մեզ բացատրել։ Արդեօք եօթ-Թոնի՞ր։ Հ. Սրուանձտեանը այցելել է լաւագոյն պայմաններում, երբ տակաւին նահապետական կեանքը իր ներքին եւ արտաքին հարստութեամբ ողջ եւ կանգուն էր[2]։

1 Սրուանձտեան, «Գրոց ու Բրոց», էջ 53–54։

2 Ցիշենք նաեւ, որ բանաստեղծ Ա. Իսահակեանը Սուրբ Թոնրի զրոյցը յանգաւոր գեղեցիկ շարադրութեան է վերածել եւ տպուած է «Մարազ» ամսագրի համարներից մէկում։ Արդեօք նրա աղբիւրը եւս Սրուանձտեա՞ն է, թէ քաղած է Շիրակի ժողովրդական զրոյցներից, ինձ յայտնի չէ։

Սուրբ Թոնիրի աւանդութիւնը, դժուար չէ նկատել, զարմանալի հաւատարմութեամբ կրկնում է մեզ արդէն ծանօթ Դարկետոյի առասպելը։ Ակալոնի լիճը հայ միջավայրում դարձել է մի աղբիւրի փոս կամ ջրհոր։ Կնոջ կերպարանքով ձուկը, որ ջրհորի միակ բնակիչն է, նոյն Դարկետոն է։ Իսկ երէցն ու երէցկինը անցեալի ամենազօր աստուծու եւ աստուածուհու ստուերներն են։ Քրիստոնէական աշխարհայեացքը իջեցրել է նրանց երկնային գահից եւ հաւասարեցրել սոսկ երէցի եւ երէցուհու։

Առասպելի կրօնական բնոյթը յամենայն դէպս պահուած է հարազատութեամբ։ Ափսոս, որ երէցի եւ կամ նրա կնոջ անունը չէ յիշուած։ Խօսքը հարկաւ նոյն մայր աստուածուհու մասին է։ Կոտեսիասի պատմածի մէջ Դարկետոն եւ Շամիրամը անջատ էակներ են, մեր զրոյցի մէջ նրանք մի անձն են։ Առաջնի արհեստական երկուութիւնը այստեղ չկայ։ Քահանան և մուրացիկն աստուածուհու սիրահար Օննի և Նինոսի հոմանիշներն են։ Երէցկինը Շամիրամն է։ Մուրացիկի ապօրինի պագը նշանակում է, որ Շամիրամը իր ամուսին Օննից անցնում է Նինոսին։ Ցուսահատ այրը ինքնասպան է լինում։ Դարկետոն ջուրն է նետւում ապօրինի որդեծնութեան ամօթից, իսկ հայ զրոյցում նա ջրհորն է ընկնում ամուսնական անհաւատարմութեան «ամօթէն եւ ահէն»։

Սուրբ Թոնիրի առասպելը միապաղաղ եւ ամբողջական չէնք է, մինչդեռ Կոտեսիասի զրոյցը բաղկացած է երկու տարբերակների ձուլումից, ասենք ձկան եւ աղաւնու տարբերակներ։

Ուշադրութեան արժանի է Թոնիրի և ջրհորի աղերսը։ Երէցկին-Շամիրամն իսկապէս ինքնասպան է լինում Թոնիրի մէջ, որը յետոյ ջրհորի է փոխւում։ Մի ուրիշ զրոյցի մէջ, որ վերաբերում է «Հայոց Թագաւորի եւ Բէլի» կռուին, կրկնւում է նոյն միտքը։ «Հայոց Թագաւորը սպաններ է զԲէլ և հանել Նեմրութայ գլուխ. այնտեղը փորեր, Թոնիր չիներ, մէջը կախեր վառեր է։ Աստուծոյ հրամանքով այն կրակը ջուր կտրեր, զմոխիրն հողի տակ իջեցուցեր, որ չեղնի քամին անոր փոշին տանի»[1]։

Այս մեկնութիւնը անյարիր է երէցկնոջ նկատմամբ։ Այնտեղ կրակը ջուր է կտրել, որպէսզի ամբարիշտ Բէլի ածիւնը քամին չտանի եւ նոր աղետների առիթ չտայ, իսկ այստեղ ջուրն ու ջրհորը առասպելի հիմնական մասն են եւ զոհի յիշատակը յաւերժացնելու համար են, ուրեմն բոլորովին հակառակ տեսակէտ քան Բէլի դէպքում։

1 Սրուանձտեան, «Գրոց ու Բրոց», էջ 48։

Թւում է թէ Թոնիրը զոհարանի կամ զոհարերութեան հնոցի նշանակ է: Յայտնի է, որ մի քանի վայրերում Աղոնիսի պաշտամունքն ունէր տաճարին արքայական կամ քրմական տներ, որոնք ժառանգաբար ներկայացնում էին իրենց կենդանի պատկերները եւ յաճախ զոհաբերում էին: Հեռագոյում փոխանակ կենդանի մարդկանց զոհելու, այրում էին աստուածների խորհրդանշանը, օրինակ, ոգուն:

Շատ կարելի է, որ Սուրբ Թոնիրի զրոյցում պահպանուած է հինաւուրց սովորոյթի արձագանգը: Նախ աստուածային զոյգի տեղ հանդէս են գալիս նրանց պաշտօնեաները, քրմերը, ի դէմս երէցի եւ երիցուհու, երկրորդ նրանք այրում են հնոցում, այսինքն զոհաբերում են:

Զրհորի ծագումը Թոնիրից, այսպիսով, պատահական թուիչք չէ երեւակայութեան, այլ արտացոլում է կրօնական հին սովորոյթ, գեղեցկօրէն հիւսուած աստուածային տրամաբանական իմաստի հետ:

Սուրբ Թոնիրի զրոյցը, երեւում է, շատ տարածուած է եղել Վանայ լճի ոլորում: Դատուան նաւահանգստի դիմաց Գրգուռ լեռան ստորոտում կայ մի գիւղ, որ կոչւում է Զըրհոր, իսկ նրան կից մի այլ գիւղ՝ Շամիրամ: Այս անուններն իսկ վկայում են, որ Զրհորի աստուածը ծանօթ է եղել եւ այս վայրերում եւ որ երէցկինը ոչ այլ ոք է, եթէ ոչ ինքը Շամիրամը[1]:

---

1 Տարօնցի Ներսէս անունով մի անձ բարի է եղել գրկելու մեզ հեաւեւայ գրութիւնը, որ գնում ենք այստեղ հարազատօրէն:

Յարգոյ փրօֆ. Ն. Ադոնցին. Հանգիպով կը կարդամ ձեր Հին Հայոց Աշխարհագրութիւնը ստուգաբանութիւնը, ուր կը հանդիպիմ Սուրբ Թոնիրի պատմուածքին «Հ.» ամսագրի հինգերորդ տարի, թիւ 1. էջ 84: Թոյլ ներում ինձ ասել որ այդ աստուածի մասին, հաւանական բլլայ կը թուի Տարօնի աշխարհին, քան թէ Վանի դատաւ Լէգէ գիւղին: 1903 թուին երբ բաղդ ունեցայ Պէթլիս երթալու իմ դատաւորս, Պ. Մուքայէլի հետ, որ Կարմրուկ վանքը պաշտօն ունէր, հանդիպեցանք որ. Թոնիրի, որ կը գտնուի Զիւրի սահմանին քիւրտ Մանիկ, քիւրտ Նորշէն եւ Օձքաղաք գիւղերուքով, Տարօնի Տիգրիս գետի բիւրեղ ակը, որ տարօնցիք «Մեգրա գետ» կ'ըսեն, թէեւ բիւրեղ ակը խաչոր աստի մը չափ ջուր կը բիւրէ, բայց երթալով ուրիշ աղբիւրներ, գետակներ խառնուելով կը կազմեն Տիգրիսը: Այդ բիւրեղ ակէն 100 կամ 50 քայլ հեռու կը գտնուի վեղարակապ մատուռ մը, շրջապատուած գերեզմաններով, ուր Քիւրտերը իւրացուցեր են իրենց մեռելներուն: Դատաւորս սապէս պատմեց. այսպէս ժամանակին մեծ գիւղ մը եղած է, ան ալ այդ գիւղի եկեղեցին եղած է, ան ջուրի բիւրեղ ակն ալ քահանայի տուն եղած է: Օր մը երէցկին հաց կը թիւէ եղեր. թուրք մուրացիկ մը կուգայ, հաց կ'ուզէ, երէցկին կուտայ, գինի կ'ուզէ՝ կուտայ, հաղուստ կ'ուզէ՝ կուտայ: Երէցկին շատ գեղեցիկ կ'երլայ. թշուառական կը յանդգնի համբոյր մը ուզել, ըսելով՝ քո Աստուած որ կը սիրես, համբոյր մ'ալ տաս, երէցկին, Աստուծոյ սիրոյն: Ան ալ կուտայ: Քիչ վերջ երէց կուգայ. երէցկին կը խոստովանի իր յանցանքը: Տէրտէր կ'ըսէ էթէ այդպէս է, կ'ըսեմ քեզ Աստուծոյ սիրոյն ձգէ քեզ այս վտա Թոնիրը, նայեմ: Եւ երէցկին վայրկենական կը ձգէ գինը Թոնիրը, երբ երէցը այդ կը տեսնէ, ինքն ալ գինը կը ձգէ Լեւէն: Բայց Աստուծոյ հրամանաւ ակրաէր կը մրկի, Թոնիրն ջուր կը բիւրէ, եւ երէցկինն ալ ձուկ կ'ըլլայ, ասկի օղն ալ գիրն է անցուկ: Եթէ արդար մարդ այդ ական կանգնի ըսէ՝ երէցկին, Աստուած կը սիրես դուրս ելիր, կ'ելնէ:

Շամիրամի, ասորական համբաւոյ թագուհու, աստուածացումը եւ ձուլումը մայր աստուածուհու հետ, անօրինակ երեւոյթ չէ: Լուկիան Սամոսատացին յիշածս գրութեան մէջ բերում է մեզ զբաղեցնող Ատիս եւ Կիբելէ առասպելի մի ուրիշ տարբերակը, ուր Կիբելէի փոխարէն հանդէս է գալիս Ատրատոնիկէ: Սա ոչ այլ ոք է, եթէ ոչ Անտիոքի թագաւոր Սելեւկ Նիկատորի կինը: Եթէ մի աննշան իշխանուհի այնպիսի ուշ ժամանակ, ինչպէս Սելեւկեան շրջանը, կարող էր հոչակաւոր աստուածուհու հետ շփոթուել և նրա տեղը բռնել, ի՞նչ զարմանք, որ առասպելների աւելի վառ դարերում ասորական թագուհի Շամիրամը նոյն փառքին է արժանացել եւ մայր-աստուածուհու աթոռը գրաւել:

Մեզ հետաքրքրող առասպելների շրջանին է պատկանում նաեւ մի ուրիշ առասպել, թերեւս նրանց մի ուրիշ յեղուածն է, որի հետքերը ևս մնացել են հայ յիշողութեան մէջ:

Այդ յեղուածում, որ կարելի է կոչել լիդիական, Ատիսին փոխարինում է Տիլոն կամ Թիլոն անուն հերոսը, որ Զեւսի որդին է համարւում: Մի անգամ Հերմէս գետի ափունքին զբօսնելիս նա մահացու խայթ է ստանում օձից և մեռնում: Նրա քոյրը Միրա դիմում է Դամասեն հսկայի օգնութեան և սա յարձակւում է ու սպանում օձին: Մի ուրիշ օձ, սպանուածի էգը, կծում է Զեւսի ծաղիկ կոչուած խոտը եւ դնում ընկածի շրթունքին, որից յետոյ սպանուածը կենդանանում է: Տիլոնի քոյրը հետեւում է օձին, առնում է նոյն խոտը եւ դնելով եղբօր բերանը յարութիւն է տալիս մեռելին:

Այս զրոյցը շատ հին է եւ ծագում է Քսանթ Լիտացի պատմագրից, ինչպէս հաւաստում են Պլին եւ Նոննոս:

Լիդիայի մայրաքաղաք Սարդի դրամների վրայ պատահում են Տիլոնի, սպանուած օձի եւ կենդանարար ոստի դրոշմը, որ ապացոյց է զրոյցի ժողովրդականութեան և վաւերականութեան միանգամայն:

Հայ ժողովուրդի սիրած հաւատալիքներից մէկն այն է, որ կան յատուկ աղբիւրներ, ուր օձերը գալիս են իրենց շապիկը փոխելու եւ երիտասարդ դառնալու: Գաղտնի ծաղիկներ կան, որոնց ոյժը միայն օձերը գիտեն. նրանք բերանն են առնում այդ ծաղիկները եւ աղբիւրի մէջ լողալով նորոգում են իրենց կեանքը:

Թէ որքան տարածուած է եղել այս հաւատալիքը, վը-

Եւ ես այդ պատմութիւնն որ լսեցի, իմ տղայական զգացումներովս վազեցի և մէկի տեղ տասն անգամ ըսի՝ երէցկին, քո անահուն Աստուած որ կը սիրես, դուրս ելիր. բայց չելաւ այդ տիկին ձուկը, որ ոսկի օղն ալ գիրն անցուցած է: Սր. Թոնիրը հաւանական ըլլալ կը թուի հոդ, քանի որ թէ եկեղեցին եւ թէ գերեզմանոցը կան իրը վկայ:

կայ է Բարսեղ Կեսարացին: Նշանաւոր եկեղեցու հայրը, որ հայ մթնոլորտից հեռու չէր ապրում եւ գրեթէ նման միջավայրում է սնուած, ասում է. «Եւ օձից աչք յորժամ ցաւեցին, երթայ ուտէ չումբայ, այսինքն՝ սամիթ վայրենի եւ ողջանայ»[1]:

Եւս առաւել զարմանալի է հետեւեալ պատմութիւնը, որ անում է Հ. Սրուանձտեանը: «Մշոյ լերան կամ Սեմ սարի ստորոտը կը գտնուի Մառնիկ գիւղ: Այս գեղի բնակիչներէն հայ մը Մարգար անուն, ասկից հինգ տարի առաջ մեռաւ: Սա իւր կենդանութեան կը պատմէր, թէ 250 տարեկան էր ինքը. մենք տեսանք զինք 1866ին, իւր ջիղերը պինդ, երկու անգամ նորոգուած էին ակռաները, և դեռ այն տարիքին մէջ կը տեսնար քաջ, կը լսէր, կը խօսէր, կ'ուտէր, կ'ընթանար երիտասարդի մը պէս, եւ ամէն առաւօտ լերան մացառներէն չոր փայտ կը ջարդէր, կը շալկէր կը բերէր Մուշ, կը վաճառէր ձիւն օրերը: Իր անդրանիկ որդին 80 տարեկան էր և ալեօք ծաղկեալ, այն ինչ Մարգարը իւր մօրուքի մէջ չատ քիչ ճերմակ ունէր: Սա կը պատմէր թէ 150 տարու եղածս ժամանակ աշխարհի մեղայ մէջ ինկայ. այսինքն՝ կին առի, թէ Ծովասարու մէկ աղբիւրի մէջ տեսայ մէկ օր, որ ցաւագար ու վիրաւոր օձ մը եկաւ լողցաւ եւ երեք թուփ ունեցող ծաղկէ մը կտրեց կերաւ, նորոգուեցաւ գնաց. դիտեցի, ես ալ նոյն ծաղկէն կտրեցի կերայ. նոյն ջուրը խմեցի, եւ լողցայ, աչքերս լուսաւորան, ուրիշ կերպ դարձայ»:

Մարգարի ասելով, այն ջուրը որ խմեց եւ ծաղիկը որ բերանը դրեց, հոգով վերացաւ մի ուրիշ աշխարհ, նրա «առջեւ բացուաւ մարմար կամարաշէն լուսաւոր պալատ մը, աշխարհից ու մարդոց խելքից դուրս էր անոր շէնքն ու միջի փառքն ու բարիքն. անմահութեան տուն ու տեղ էր»: Գիւղացիների ձայնից վերջապէս արթնանում է Մարգարը այդ անրջական դրութիւնից: «Շատ աղաչեցին որ էդ ծաղիկը, էդ աղբիւրը ու էդ պալատի դուռը ցոյց տամ իրենց, հնար չեղաւ նորէն տեսնայի», հառաչելով ափսոսում էր երազուն գիւղացին:

Հ. Սրուանձտեանը հաւատացնում է, որ Մարգարը եթէ ոչ 250, անշուշտ 150 տարեկանից վեր էր. ապացոյց՝ ի միջի այլոց նրա թուած ու անձամբ տեսած փաշաների եւ առաջնորդների անունները, որ նա յիշում էր[2]:

1 Վեցօրէք, էջ 186:

2 Մարգարի առթիւ վերոյիշեալ Գ. Ներոիսը գրում է. — Նաեւ «Հայ բենիքի» նոյն թուի մէջ, էջ 86 Մշոյ Մառնիկ գիւղի Մարգարի պատմուածքը: Ես տարօրինակ ըլլալով տամ լրիւ տեղեկութիւն այդ մասին, զոր պատմած է ինձ Մարգարի եղբօր տղան, յայտնի յեղափոխական Մառնկայ Աւետիս կամ «Աւէն»: Սա

Այս տարօրինակ պատմութեան մերձաւոր առիթը, անտարակոյս, Մարգարի երկարակեցութիւնն է: Սրան հարկաւ ծանօթ է եղել ժողովրդական հաւատալիքը, որ որոշ աղբիւրներ եւ ծաղիկներ թարմացնում ու նորոգում են մարդու մարմինը, եւ որ դրանց գիտութիւնը տրուած է օձերին: Ապրելով բնութեան ծոցում, Մարգարը չատ աղբիւրների սառնորակ ջուրն է խմել և չատ ծաղիկների հոտը վայելել: Բնականօրէն իր երկարակեաց եւ քաջառողջ կացութիւնը վերագրել է խորագէտ օձի սիրած աղբիւրի ջրին եւ ծաղկին, համաձայն հայրենի միջավայրից որդեգրած հաւատալիքի:

Հաւատալիքն մի ներքին եւ անդիտակից ոյժ է, որի շնորհիւ միամիտ գիւղացին քաջքեր, դեւեր, հրեղէն էակներ եւ այլ նման հրաշալիքներ է տեսնում, ինչպէս վկայում է հին դարերից նաեւ մեր մատենագիր Եղնիկը: Մարգարի տեսիլն այս կարգի հաւատալիքների ներշնչումն է:

Աղբիւրի եւ ծաղկի դիւթիչ զօրութիւնը, որ յայտնի է միայն օձին, հաւանօրէն, կրօնական բնոյթ ունեցող եւ նախաքրիստոնէական առասպելների մէջ տիրական հայեացք

ալ այսպէս կը պատմէր. Մարգար հովիւ եղած է, դէջ հիւանդութեամբ վարակուած, բորոտ և իրեն «ճղատ Մարգար», «քաջալ» կ'ըսեն: Եւ իրեն ուրիշ ընկեր հովիւ ալ կ'ըլլայ այդ հիւանդութեամբ. կը տառապի բաւական ժամանակ, բերբորները չեն ախորժեր իրմէ, ոչխարները կթելու ատեն հեռու տեղ մը կը նստի: Օր մը ալ ոչխարները Մովասարի փէչերուն արածելու ատեն, ոչխարի մը առաջնորդութեամբ, մացառներու մէջ կը հանդիպի աղբիւրի մը, ուր կը պատահի հրաչքը: Կը տեսնէ որ իրեն բաղդակից օձ մը կուգայ կը մտնէ ջուրի մէջ, կը լողանայ, աղբիւրի քովի ծաղիկներէն քանի մը հատի թուփերէն կը փրցնէ կ'ուտէ և կը մտնէ աղբիւրի բրած տեղը, կը լողանայ, իր հապիկը կը ձգէ, կ'ելլայ աղուոր, գեղեցիկ օձ մը եւ կ'երթայ:

Մարգար այդ տեսնելուն կը խորհի որ Աստուած իրեն ցոյց է կ'ընէ: Ինքն ալ օձի ըրածի պէս կ'ընէ, կը թմրի եւ կը քնէ հոգ, աղբիւրին քով: Միւս ընկերը կը նայի Մարգար չի երեւնար. բաւական փնտռելէ վերջ, չի գտներ, ոչխարներով գիւղ կուգայ, կը պատմէ. գիւղացիք յոյսերնին կը կտրեն, կը խորհեն թէ աղատուած է իր դատն կեանքէն: Իսկ Մարգար կը փոխադրուի լուսեղէն աշխարհ, կը պատցնեն դրախտի ամէն կողմը, ցոյց կուտան նաև իր տեղը, եթէ Ադամի մեղքի մէջ չէյնայ, զգոյշ եւայի թոռներէն: Իրեն փոքրիկ տուփ մըն ալ կուտան, մէջը դեղ լեցուած, հիւանդներուն ձրի նայէ, մէկ կաթիլ խմցնելով. նաեւ կ'ըսեն. «Քո ոչխարներէն մէկը զոյգ կը ծնի. այդ դառները բերես այսինչ տեղ մատաղ ընես, դուռը կը բացուի նորէն, ներս կուգաս»: Տեղը ծանօթ է Մարգարի աչքին. այդ տեսիլքի մէջ կ'արթննայ. երկու կամ երեք օր քնացած է եղեր: Գիւղ կուգայ աղուոր երիտասարդ մը եղած, առողջ եւ քաջ: Կը պատմէ իր տեսիլքի մասին: Ջմեռը վրայ կը հասնի. գիւղացիները կը համոզեն որ ամուսնանայ: Ո՛չ, կ'ըսէ, դրախտէն կը զրկուիմ: Ադի տեսիլք է, կ'ըսեն, եւ վերջապէս կը համոզեն, որ եւայի թոռներէն մէկու մը հանի: Վերջապէս կը համոզուի և կենակից մը կը գտնէ իրեն: Դարուն կուգայ այդ ոչխարը զոյգ կը ծնի իրաւ որ. բաւական կը խոշորնան, կ'առնէ կ'երթայ մատղելու համար, որ նորէն երթայ քալելով դրախտը, բայց յուսախար կ'ելլայ՝ ոչ աղբիւր կը գտնէ հոն եւ ոչ ալ ան բլուրը, զոր իր աչքեր տեսեր էին. կուլայ եւ յետ կը դառնայ, անիծելով պատճառ եղողները: Այս է Մարգարի առասպելը: Իր տարիքը չատ չափազանցուած է՝ 250 կամ 150: Մարգարը 120 տարիի չափ ապրած է առոյգ. իր զաւակները 70–80 տարեկան, տեսած է թոռան թոռը, եւ նոր ակռաներ ալ ունեցեր է: Կը պատմեն, որ չատ մը հիւանդներ այդ տեղ գալով ողջացեր են: Կարելի է այդ ծաղիկի թուփերէն չինած է այդ դեղը: Այս է Մառնկայ «քաջալ Մարգարի առասպել պատմուածքը»...

ՏԱՐՕՆՑԻ ՆԵՐՈՒ

է: Թւում է, որ Մարգարի նման խղճուկ չինականին այցելած զօրութիւնը ժամանակով դիւցազունների արտօնութիւն է եղած միայն: Ճշմարտութեան դէմ մեղանչած չենք լինի, եթէ ենթադրենք, որ Տիլոնի նման մի հերոսի շուրջ եղած հինաւուրց առասպելների հեռաւոր բեկորն է այն, ինչ որ մեզ աւանդ է մնացել Մանիկ դիւղի հաւատալիքների աշխարհում:

Տիլոնի առասպելը յարում է Ատիսի զրոյցների շրջանին: Տիլոնն ինքն ոչ այլ ոք է, եթէ ոչ Ատիսի զուգատիպը և օձը, նրա մահուան պատճառը, մայր աստուածուհու կիբելէի խորհրդանիշն է: Դամասենի և օձի պատմութիւնն միջանկեալ է:

Այսպիսով հայ ժողովուրդի յիշողութեան մէջ կառչած հատուկտոր աւանդները տանում են մեզ դէպի այն հաստատուն յեղուածը, որ Հայաստանի սահմանակից Միջագետքի քաղաքակրթութեան ոլորտում ընդունուած մայր աստուածուհու Իշտարի պաշտամունքը Շամիրամ անուան ներքոյ ծանօթ եւ ընտանի է եղած նմանապէս հայ ժողովրդեան: Նոյն պաշտամունքը այլ անունով տիրական էր, ինչպէս յաճախ չեշտած ենք, նաեւ Հայաստանի արեւմտեան դրացիների մօտ Փոքր Ասիայում, ուր նա կոչւում էր Կիբելէ:

Ի՞նչ աղերս կայ երկուսի մէջ անդրանկութեան տեսակէտից, այդ չէ այժմ մեզ զբաղեցնում. ինչ եւ լինի նրանց յարաբերութիւնը, երկու աստուածութիւնները նոյնանիշ են:

Եւ յիրաւի, բաւական է համեմատել ինչ որ Դիոդորը պատմում է Կիբելէի մասին Դերկետո-Շամիրամեան առասպելի հետ, որպէսզի համոզուենք, որ երկու դէպքում էլ գործ ունինք միեւնոյն դիցաբանութեան հետ, բայց տարբեր միջավայրերի երանգաւորումով:

Փռիւգիայի եւ Լիդիայի թագաւորն էր մի ժամանակ Մէոն: Նրա կինն էր Դինդիմենէ, որից ունենում է մի աղջիկ զաւակ: Զուգենալով նրան պահել, թագաւորը ձգում է Կիբելոն կոչուած սարը: Գազանները մօտենում են եւ սնում երեխային: Հարեւան հովիւ կիները, նկատելով այդ, առնում են մանկան եւ անուանում լերան անունով Կիբելէ: Երբ մեծանում, հասունանում է իբր մի գեղանի եւ ուշիմ աղջիկ, սիրահարւում է երիտասարդ Ատտիսին: Ծնողները լսելով, որ նա մերձաւոր կապ ունի Ատտիսի հետ, բերել են տալիս դատեր իրենց մօտ, իսկ Ատտիսին սպանում են եւ մարմինը թողնում անթաղ: Կիբելէն յուսահատ եւ վշտաբեկ ողբում է իր սիրելիի մահը: Մեծ պատուհաս եւ աղետներ են հասնում Փռիւգիային:

Պատգամախօսը դժբախտութիւնը աստուածային վրէժ

է համարում Ատտիսի մարմնի հանդէպ ցոյց տուած անփութութեան համար: Իսկոյն եւ եթ ուղում են իրենց յանցանքը ուղղել: Բայց Ատտիսի մարմինն արդէն հիւծուած եւ անհետացած է լինում: Ստիպուած պատրաստում են երիտասարդի պատկերը եւ ողբում ու յարգանքներ մատուցանում նրան իբր Ատտիսին:

Դժուար չէ նկատել, որ Դինդիմենէ եւ իր դուստր Կիբելէ համազօր են Ասկալոնի առասպելի Դարկետոյին և նրա աղջիկ Շամիրամին: Ապշկայ սիրահար Ատտիսը կատարում է Օնն(էս)ի դերը: Երկուսն էլ ընկնում են ողբերգական մահով: Ատտուածուհին թէ՛ մէկ եւ թէ՛ միւս զրոյցում ընկեցիկ զաւակ է, որին սնում են վայրենի կենդանիները եւ պատահական հովիւները:

Հայաստան եւ հայ ժողովուրդը իր արեւմտեան եւ հարաւային հարեւանների, ասենք, Կիբելէի եւ Իշտարի աշխարհների հետ կապուած է եղել հնուց ի վեր քաղաքակրթական կապերով, իսկ Կիբելէի հետ՝ նաեւ ցեղային: Երկու տիկիններն էլ հաւասարապէս կարող էին տիրապետական դահ եւ պաշտամունքի սեղան ունենալ Հայաստանում:

Տեսանք, որ Իշտարը դէթ Շամիրամ անունով ընտանի է եղել իրօք հայ մթնոլորտում: Թւում է, որ միւս աստուածային տիրուհին եւս ընդունուած է եղել եւ որոշ չրջանում հաւանօրէն կրում էր Անահիտ անունը: Եթէ մէկի գլխաւոր սրբավայրը հին Տոսպն էր, միւսինը՝ Երէզ աւանն էր: Հեռաւոր Եփեսոսում Կիբելէն փոխել էր իր անունը եւ կոչւում էր Արտեմիս եւ մինչեւ իսկ Անահիտ: Աւելի բնական էր նոյն անունը Հայաստանում, որ Իրանական քաղաքակրթութեան այնքան մօտ է կանգնած:

Հայ պանթէոնի միւս դիցուհին՝ Նանէ, նմանապէս նոյն աստուածութեան մի այլ դէմքն է: Ցիշելու է, որ առասպելի փռիւգիական յեղուածում, որ տալիս է Արնոբ(իոս)ը, Ատիսի մայրը կրում է Նանա անունը: Սա Սանդարգետի դուստրն է, որ Ագտիսի արիւնից բուսած նռնենու պտուղն իր ծոցում պահելով, յղանում եւ ծնում է Ատիսին: Անհաւանական չէ, որ նման զրոյցի հետեւանքով Նանան բաղմած լինի Թորգանում իբր ուրոյն աստուածուհի:

Նոյն կարգի աստուած է եւ Աստղիկը: Տարբերութիւնը լոկ անուանական է եւ դուցէ նաեւ տեղական: Աստղիկը Տարօնում նոյնն է, ինչ որ Շամիրամը Վանում եւ Նանէն Բարձր Հայքում:

Ցայտնի է, որ յունական Ափրոդիտէի նախատիպն եւս Իշտարն է, որ անցնելով հելլէն գեղասիրական հանճարի հնոցով, դարձել է գեղանի աստուածուհին: Ափրոդիտէի տե-

սակների մէջ կայ մէկը, որ կոչւում է Անադիոմենէ, պարկեշտ եւ ողջախոհ դիցուհու կուսական պատկեր: Նրան լոգանալիս կամ ջրից ելնելիս տեսնելը համարւում էր բարի նշան, յաջողութիւն, բախտաւորութիւն:

Նոյն հաւատը գոյութիւն է ունեցել եւ հայ Աստղիկի հանդէպ, որի հետքերը մնացել են ցարդ նրա սրբավայր Տարօնում: Եփրատի ափին ցոյց են տալիս մի տեղ Գուդուռ անունով, որի մասին պատմում են, որ Աստղիկի լոգարանն է եղել: «Եւ քանզի դիշերները լուացուելու սովորութիւն ունէր Աստղիկը, ասում է Սրուանձտեանը, Դաղօնաց սարին վրայ մեծ կրակ կը վառէին տարփաւոր կարիճները, որոյ լուսով կը դիտէին Աստղիկի չքնաղ դեղեցկութիւնը, հնարած է Աստղիկը որ մշուշ պատէ այն ամբողջ միջավայրին, այսինքն՝ Մշոյ Դաշտն»[1]:

Հարկաւ տափանքը չէր, որ սոխպում էր Տարօնի կրտրիճներին դիտել անմատչելի աստուածուհու մերկութիւնը, այլ երջանկութեան եւ բախտի ծարաւը, որին սակայն յաղուրդ տալ չէր յօժարում հեչտութեան քմահաճ դիցուհին:

Փոքր Ասիայի հռչակաւոր աստուածուհու հին սկզբնական անունը պահուած չէ, եթէ այն չհամարենք Կապպադովկիայի Կոմանա քաղաքներում ընդունուած Մա անունը, ինչպէս կարծում են մի քանի գիտնականներ: Բոլոր յայտնի անունները, ինչպէս Կիբելէ, Դինդիմենէ, Արտեմիս, Աթենէ, Հերա, Լետո, Հիպպա եւ ուրիշները տեղական ծագում ունին, այսինքն՝ ընդունուած են այս կամ այն վայրում, կենդրոնում: Ոմանք յետոյ ընդհանրացած են այս կամ այն չափով եւ լայն ժողովրդականութիւն ստացած:

Զարմանալի է ուրեմն, որ մեզանում եւս հին անունը մոռացուել է եւ տեղի է տուել նոր եւ հարեւան երկիրներում տիրող անունների:

Մայր աստուածուհու զուգակից այր աստուածը նմանապէս բազմանուն է: Ոչ միայն զանազան երկրներում, այլ և միեւնոյն երկրի տարբեր վայրերում տեսակ տեսակ անուններ է կրում: Անունները փոխւում են եւ ժամանակի համեմատ, փոխւում են միեւնոյն տեղերում ժամանակի ընթացքում: Այս երեւոյթը յատուկ է եւ մեր դիցաբանական աշխարհին:

Որքան եւ սուղ ու պակասաւոր են մեր տեղեկութիւնները, բայց եւ այնպէս նշաններ կան, որ մայր աստուածուհու մտերիմը յայտնի է եղել Հայոց մի քանի անուններով:

1 Սրուանձտեան, «Գրոց ու Բրոց», էջ 97–98:

Ամենից կարեւորը և հինը Արան է, Շամիրամի տարփալին: Որ Արան Թագաւոր չէ եւ ոչ այս աշխարհի բնակիչ, այլ դիցաբանական ստեղծագործութեան պատկեր, ոմն դիւցազն կամ աստուած, այդ անկասկած է: Շամիրամն աստուածուհի է, նրա մտերիմն եւս աստուած է լինելու: Շամիրամն - Աստարտէ կամ Կիբելէ, նրա սիրելին պէտք է որ Ադոնիսի կամ Ատիսի փոխանակը լինի:

Արայի զրոյցը վկայում է արդէն, որ նա այն բարձր էակներից է, որ մեռնում են եւ յառնում, կամ քնանում են եւ արթնում ձմերային եւ գարնանային, բնութեան անչունչ և կենդանի չրջանների հետ: Խնդիրը անուան չուրջը չէ, այլ պաշտամունքի, որի էութիւնից կախուած է եւ անունը: Ցաճախ անունն այլ ծագում ունենալով հանդերձ անցնում է ժամանակի ընթացքում ուրիշ աստուածութեան: Կարեւորը անուան տակ թագնուած եւ յարատեւած պաշտմունքի էութիւնն է: Սա է, որ ի վերջոյ դիւրութիւն է տալիս և անուան մեկնութեան, նրա կրած փոփոխութեան:

Արան մեռնում է: Նրա մահացման կողմնակի պատճառը Շամիրամի կիրքն է, ճիշտ այնպէս, ինչպէս Ատիսը զոհւում է Կիբելէի սիրային հետապնդման եւ կամ Թամուզ - Ադոնիսը ընկնում է Իշտար-Աստարտէի առթած խանդի ու վրէժի հետեւանքով:

Արայի դիակը չի նեխում, ինչպէս հաւատացնում է քրիստոնեայ միջավայրը, այլ վերստին կենդանանում է համաձայն զրոյցի սկզբնական եւ հարազատ հիւսուածին, նրա հիմնական իմաստին, նման Ատիսի եւ Ադոնիսի համազօր առասպելների:

Արայի յարութիւնը միմիայն սոսկ ենթադրութիւն չէ: Նրա չեչտակի ապացոյցը տալիս է մեզ հեռաւոր Պլատոնը: Հռչակաւոր իմաստասէրը Պետուրիւն երկի վերջին գլխում բերում է մի զարմանալի պատմութիւն, որ քաջածանօթ է: Հարկ եմ համարում բերել էական կտորը: «Արդ քեզ պիտի պատմեմ ոչ թէ Ալկին(ոս)ի պատմութիւնը, այլ մի խիզախ մարդու, Հայկազն էրի, ծագումով Պամփիլացի: Սա երբեմն ընկնում է պատերազմում եւ տասներորդ օրը, երբ սկսում են հաւաքել արդէն նեխուած դիակները, տեսնում են որ սա մնացել է անեղծ: Երբ տանում են տուն, որպէսզի թաղեն, տասներկուերորդ օրը արդէն խարոյկի վրայ պառկած վերակենդանանում է եւ յետոյ սկսում է պատմել, ինչ որ տեսել է այն աշխարհում»:

Ուշադրութեան արժանի է Պլատոնի բառախաղը, որով հակադրում է Ալկինոս եւ ալկիմոս էրը: Ալկինոսը Ոդիսականի հերոսներից է, յայտնի իր հնարածոյ պատմուածքնե-

րով: Քաջն Էրի պատմութիւնը նրա յերիւրանքների նման չէ համարում իմաստասէրը: Այս ակամայ հաճոյականն այլ կերպ չի կարելի հասկանալ եւ այլ բան չէ նշանակում, եթէ ոչ այն, որ Էրի զրոյցը իրօք տարածուած է եղել եւ ժողովրդական: Էրի զրոյցը պէտք ունի տակաւին քննութեան, մանաւանդ այն մասում, ուր պատմում է նրա տեսիլը:

Հին հետազօտները, ինչպէս օր. Կղեմենտ Ալեքսանդրացին, կամ Պրոկլը, առանձին հետաքրքրութիւն են ընծայում Էրին եւ համեմատում են եւ մինչեւ իսկ նոյնացնում են նրան Զրադաշտի հետ[1]:

Սակայն Էրի տեսիլը անմիջական աղերս չունենալով մեր խնդրին, նրա քննութիւնն եւս թողնելու է: Մեզ համար կարեւորը հայ Էրի յարութիւնն է: Պատերազմում ընկած, յետոյ կենդանացած, նա յար եւ նման է մեր Արային: Երկուսի ազգակցութիւնն ըստ անուան եւ ըստ առասպելի էութեան կասկածի տեղիք չեն տալիս եւ բացատրուելու է նրանով, որ երկուսի աղբիւրն ընդհանուր է եւ հայ ժողովրդի դիցաբանական աշխարհն է:

Պամփիլացի հայ Էրը մերձաւոր խնամութիւն է դոյց տալիս նաեւ Թրակիական Զալմոքս(իս)ի հետ: Այս կապը զարմանալի պիտի չթուայ, եթէ յիշենք Հայերի արենակցութիւնը Թրակիական ցեղերին: Հերոդոտի պատմելով (Դ. 94-96) Թրակիայի ամենաքաջ եւ արդարասէր ցեղը, որ կոչւում էր Գետ, հաւատում էր հոգու անմահութեան: Այս վարդապետութեան ուսուցիչը համարւում էր Զալմոքս(իս), որ իբր թէ ստրուկ եւ աշակերտ է եղած Պիւթագորին եւ նրանից սովորած հոգու անմահութեան գաղափարը: Դառնալով հայրենիք սա քարոզել է նոյնը իր ժողովուրդին: Ստրկութիւնից ազատուելուց յետոյ Զալմոքս(իս) յաջողում է մեծ հարստութիւն դիզել, որ եւ գործ է ածում իր հայրենակիցների դռեւիկ բարքերը մեղմացնելու, ընտելացնելով նրանց իր մեծ ուսուցչի վարդապետութեան: Այս նպատակով նա յարդարում է մի գեղեցիկ սրահ եւ այնտեղ հաւաքելով իր հայրենակիցներին հիւրասիրում է նրանց մեծ խնճոյքներով, որի ընթացքում քարոզում է հոգու անմահութեան հաւատը եւ յուսադրում անդրաշխարհային կեանքի հաճոյական եւ երջանիկ պատկերով: Այնուհետեւ Զալմոքսը պատրաստում է իրեն համար մի գետնափոր վիհ, մտնում է այնտեղ եւ չքանում իր հայրենակիցների տեսութիւնից: Անցնում է երեք տարի: Ժողովուրդը նրան վաղուց մեռած համարելով, ցաւ է յայտնում եւ ողբում նրա կորուստը: Սակայն չորրորդ տարին նա յայտնւում է: Ժողովուրդը տեսնելով այս հրաշքը, հաւատում է եւ ընդունում նրա վարդապետութիւնը:

1 C. Clemen, Fontes historiae religionis Persicae, էջ 68 եւ 94:

Մի ուրիշ տեղեկութեամբ, որ ծագում է հաւանօրէն Հեկատէից եւ որ պահուել է Փոտի և Սուիդասի մօտ, «Անչուշտ Գետական (Getes) ցեղեր են Տերիզ և Կրոբիզ անուն ժողովուրդները, որ հետեւորդ լինելով Զալմոքսի ուսման հաւատում էին նաեւ, որ մեռնողները նրա մօտ են գնում եւ որ վերստին պիտի յետ դան, այսինքն՝ յառնեն»[1]:

Գետերը իրենց անմահ էին համարում, ինչպէս վկայում է Հերոդոտը և կարծում էին, որ մեռնողը գնում է Զալմոքսի մօտ: Հինգ տարին մի անգամ մի մարդ էին զոհում վիճակով, որ նա իրենց բաղձանքները յայտնի Զալմոքսին:

Յոյն պատմագիրը արդարացի կասկած է յայտնում, որ Զալմոքսը Պիւթագորին աշակերտած լինի եւ նրանից ուսած: Աւելի հաւանական է համարում, որ նա Պիւթագորից յառաջ էր ապրում եւ որ աւելի շուտով աստուած էր քան մարդ:

Յիրաւի Զալմոքսը աստուած է եւ բուսականութեան կամ բարեբեր բնութեան աստուած, նման Ատիսի եւ Ադոնիսի: Նրա երեքամեայ չքացումը եւ վերյայտնութիւնը, ինչպէս մեկնում է Վ. Տոմաշեկ[2], սիմբոլիկ արտայայտութիւն է կամ արձագանգ Թրակիայում ընդունուած այն սովորութեան, որի համաձայն հողն երեք տարի անմշակ էր մնում, հանգիստ էր առնում եւ հերկւում էր միմիայն ամեն չորրորդ տարին: Երեք տարի Զալմոքսը, հողի եւ բուսականութեան ոգին, թաղնւում էր, անհետանում: Նրան ողոքելու եւ չնորհը խնդրելու համար զոհում էին ում որ վիճակ էր ընկնում, այսինքն՝ իրենց հասկացողութեամբ ուղարկում էին զոհին Զալմոքսի մօտ: Տարաբախտ դեսպանը անչուշտ այն անձերի թուին էր պատկանում, որոնք արտօնուած էին վերադառնալու այն աշխարհից, այսինքն՝ կենդանանալու:

Պէտք է ենթադրել, որ աստուծուն այցելելու եւ նորէն դառնալու չնորհը վերապահուած էր առաւելապէս արտասովոր անձերի, հերոսների, որոնք ընդհանուր առմամբ ծագում էին տիրող իշխանական կամ քրմական տոհմերից: Ընթանալով ի հակառակէն կարելի է ասել, ուր որ հաւատում են ընկած հերոսների յարութեան, այնտեղ կրօնական մտայնութիւնը տոգորուած պիտի լինի Զալմոքսեան աշխարհայեացքով:

Քաջագործ Էրը, թագաւոր Արան եւ հերոս Արտաւազ-

1 Tomaschek, Die Alten Thraker, II, էջ 64.
2 Անդ, էջ 63:

դը նոյն աշխարհայեացքի փչրուած բեկորներն են: Զալ-մոքս՝ փթթող և թառամող բնութեան ոգի՝ ոչ այլ ինչ է եթէ ոչ Ատիսի մի ուրիշ հատորը:

Հերոդոտը հաւատացնում է, որ ոմանք կարծում էին որ Զալմոքսը նոյն Գէրեքէզիսն է, ուրեմն նոյն աստուծու մի ուրիշ անունը: Հաւանական է համարւում ուղղել Սեբեքէզիս, այսինքն՝ առաջին տառը u կարդալ: Այս ուղղումը կարող է ներշնչել միաք՝ կապել աստուծու անունը յայտնի աստուածուհու Semele Սեմելէի հետ: Զալմոքս անունը գրւում է նաեւ Սալմոքս: Եթէ իրօք ստուգաբանական աղերս կայ Սալմոքսի և Սեմելէի միջեւ, այդ կը լինէր լաւագոյն մեկնութիւնը պաշտամունքի տեսակէտից: Սեմելէն երկրի աստուածուհի է եւ Սալմոքսը կարող էր նշանակել որդի Սեմելէի:

Սակայն, յատուկ անունների, մանաւանդ հին աստուածների, ստուգաբանութիւնը դժուարին է եւ միշտ վիճելի: Դեռ եւս հները հետաքրքրւում էին Զալմոքս անուան կազմով եւ կարծում էին, որ նա նշանակում է արջի կաշի՝ իբր թէ Զալմոքսը ծնուելիս վրան արջի կաշի են ձգում:

Նորերը փորձեցին արդարացնել այս ստուգաբանութիւնը: Յայտնի աստրագէտ եւ հայագէտ Դը Լագարդը ակզբում տրամադիր էր համեմատել վերջին վանկը — մnfu հայերէն կաշի բառի հետ[1]: Բայց հետագայում նա հրաժարուեց իր մեկնութիւնից, դերադասելով տեսնել առաջին Զալմ վանկում պարսիկ չարմ carm, սանսկրիտ carman, որ նշանակում է կաշի[2]:

Այս մեկնութիւնը հաւանութիւն գտաւ Տոմաշեկի կողմից, միայն հակառակ Դը Լագարդի, որ վերջին մասը -nfu համարում էր հայերէն արջ բառը, առաջարկում է մի ուրիշ մեկնութիւն:

Անտարակոյս հին ստուգաբանութիւնը, որ աշխատում են հաստատել յիշեալ գիտնականները, լուրջ հիմ չունի եւ հեռու է Զալմոքսի իսկական իմաստը մեկնելուց: Սովորական նմուշ այսպէս կոչուած ժողովրդական ստուգաբանութեանց: Հաւանօրէն Զալմnfu որեւէ հնչական մերձաւորութիւն է ունեցել այս կամ այն բառին արջ եւ կաշի նշանակութեամբ: Այստեղից յառաջ է եկել եւ այն յերիւրանքը, որ աստուծու վրան արջի կաշի են ձգել եւ որ միանգամայն անարժէք է: Բառի ծագումը մնում է տակաւին խնդրական: Յատուկ անունների մեկնութիւնը դժուար է:

1 **De Lagarde**, Zur Urgeschichte der Armenien, էջ 39:
2 Նոյն, Gesammelte Abhanglungen, էջ 291:

Թրակիական Զալմոքսին յարակից են Թում հայ Արան եւ նրա նախատիպար Էրը:

Հերոդոտի վկայութեամբ Թրակիայում սովորութիւն կար հարուստ մարդկանց մարմինը մեռնելուց յետոյ երեք օր պահել, որի ընթացքում կենդանիներ էին դոհում, լաց ու կոծ անում եւ թաղումը վերջացնում մեծ խնճոյքով: Ատիս-Ադոնիսեան թաղման ծէսերը եւս երեք օր էին տեւում, որին հետեւում էր յարութիւնը: Երեքօրեայ հանդէսները թում է թէ մի մանրանկար են Զալմոքսի երեքամեայ չքացման:

Պարսիկների մօտ եւս ընդունուած էր մեռելին երեք օր պահել[1], որովհետեւ հոգին երեք օր իբր թէ մնում է անշնչացած մարմնի մօտ: Քրմական մեկնութիւն է, անշուշտ: Իսկական հիմը հոգին որոշ ժամանակ հանգիստ տալու սովորութիւնն է: Մեռելին երեք օր անթաղ պահելու աւանդութիւնը ներշնչուած է այն հաւատով, որ նա կարող է վերստին կենդանանալ:

Նոյն կարգի երեւոյթներ են եւ Էրի կամ Արայի յարութիւնը: Մամիկոնեան կորիճ զօրականի վերակենդանանալու յոյսը նոյն հին հաւատալիքի արձագանգ է:

Պլուտարքին վերագրուած, հաւանօրէն անվաւեր, մի գրութեան մէջ Կլէոմբրոտ խօսակիցը պատմում է, որ իր ճանապարհորդութեան ժամանակ արեւելեան երկրներում լսել է մի զարմանալի անձի մասին, որ տարին մի անգամ էր երեւում մարդկանց, մնացեալ ժամանակն անցնում էր դեւերի և յաւէրժահարների հետ, եւ այսպիսով օժտւում էր հրաշալի ձիրքերով. (De detectu Oraculorum, 21): Այս օտարոտի ճգնաւորն ըստ Կլէոմբրոտի ապրում էր թէեւ Կարմիր ծովի ափերին, բայց երեւում է, որ այլ բան չէ, եթէ ոչ Արեւելքում գոյութիւն ունեցող յայտնի հաւատալիքի արտայայտութիւն:

Հայ հաւատալիքների կամուրջը Թրակիայի հետ ակներեւ է: Այս կարեւոր հանգամանքը կարող է անսպասելի լոյս սփռել էր եւ Արա անունների վրայ, որոնց ծագումը թաղուած է խորհրդաւոր մթութեան մէջ:

Իրանական քաղաքակրթութիւնը այնպիսի մի վարպետ է ձգած հայ անցեալի վրայ, որ ամեն մի հարցի առթիւ պարտաւոր ենք ամենից առաջ հաշուի առնել Իրանի հնարաւոր ազդեցութիւնը: Հայոց հին անձնական անունները սակաւ բացառութեամբ իրանական դրոշմ են կրում: Արդեօք Արան եւս իրանական փոխառութիւն չէ՞, նման Վարդան, Տիգրան, Երուանդ, եւ այլ բազմաթիւ անունների:

1 **F. Cumont**, Mitra I, էջ 32:

Աւեստայում, Իրանի սրբազան գրքում, պատահում է արդարեւ Արա անունը Ara. (Յաչտ, 3, 10): Սա մի սոսկ հաւատացեալի անուն է: Յայտնի իրանագէտ Բարթոլոմէ, հեղինակ նշանաւոր բառգրքի, Արա համարում է կրճատ կամ փաղաքշական ձեւը Aramatay բառի, որ է Arem+matay բարեմիտ, կամ լաւ մտածող: Նոյն բառը Armatay ձեւով ստանում է ի միջի այլոց երկրի նշանակութիւն, ինչպէս եւ երկրի աստուածութեան:

Հայ Սանդ-արամետ, դարձեալ իրանական է, պահել է նոյն Armatayի պահլաւ կամ պարթեւական ձեւը Aramet: Սանդարամետի այլ եւ աւելի հին ձեւն է Սպանդարամետ, որ նշանակում է «սուրբ երկիր» եւ «երկրի ոգի» միանգամայն:

Նշանակալից է, որ Մակաբայեցւոց գրքում Բ. 6, 7 յանարէն բնագրի Դիոնիս(ոս) թարգմանուած է հայերէն Սպանդարամետ: Յայտնի է, որ Դիոնիսը Արիադնէի նկատմամբ նոյնն է, ինչ որ Ատիսը՝ Կիբելէի և Ադոնիսը՝ Աստարտէի: Հետեւապէս Դիոնիս-Սպանդարամետը մօտենում է իր էութեամբ հայ Արային մեր ըմբռնումով, այսինքն իբրեւ երկրին կապակից աստուածութիւն: Եթէ ճշմարիտ է Բարթոլոմէի ստուգաբանութիւնը, ապա ուրեմն, Արա-ն ոչ միայն պաշտամանական լուսանդակութեամբ, այլ եւ լեզուական տեսակէտով, իբր բառ, նոյնանում է իրօք (Սպանդ)-Արա-մետի հետ, որպէս նրա կրճատ ձեւը:

Բարթոլոմէի ստուգաբանութեան օգտին է խօսում եւ Զոնդարա, որ Կապպադովկիական ձեւն է նոյն Spentarmatի եւ սրա նման 12րդ ամսի անուն է[1]:

Սակայն, այս բացատրութիւնը մի թերութիւն ունի: Արա Աւեստայում հասարակ անուն է անհատի, եւ չի յիշւում իբր համանիշ Արամետի: Իսկ եթէ լոկ ժողովրդական ձեւն է, ինչպէ՞ս հասկանալ, որ նա այնպիսի պատուաւոր տեղ է գրաւել հայ միջավայրում, մինչդեռ անհետ կորել Իրանում:

Միւս կողմից մոռանալու չէ բնաւ, որ Արայի կից կայ էրը, որը թելադրում է ընդունել, որ իրօք Հայերի մօտ գոյութիւն է ունեցել մի անուն անկախ իրանական Արայից: Մեզ թւում է, որ Արա ոչ այլ ինչ է, եթէ ոչ զուտ հայ էր իրանական ստուերով սքօղուած: Էրը այն աստուածն էր կամ դիւցազն, որ Հայերը բերել էին իրենց հետ արեւմուտքից: Իրանական մթնոլորտում, չնորհիւ հնչական եւ գաղափարական մերձաւորութեան, էրը տեղի է տուել Արա ձեւին: Իսկ

1 Th. Benfey und M. A. Stern, Über die Monatsnamen einiger alter Völker, 1836.

թէ ինչ էր նախնական էրը, այդ պարզելու համար պէտք է Պամփիլայի վրայից դնանք յետ դէպի Թրակիա:

Հելլէն բազմաստուած պանթէոնում մի անուն կայ, որ նմանութիւն ունի հայ էրին, այդ Արէսն է: Դիցաբանութեան հմուտներին տարօրինակ պիտի թուայ երկու անունների մէջ աղերս որոնելու փորձը: Պատերազմի գոռ աստուածն այնքա՛ն հեռու է երազուն էրից: Սակայն Արէսի յունական նկարագիրը նախնական չէ: Նրա սկզբնական էութիւնն ու ծագումը տակաւին վիճելի է: Կարծողներ կան, որ ստորերկրեայ աստուածութեան գաղափարն է, որ բնորոշում է Արէսի հնագոյն տիպը: Երկրի խորքերից նա կեանք եւ բարերարութիւն է զեղում, կամ մահ եւ աւերածութիւն է սփռում: Վերջին յատկութիւնից զարգանում է պատերազմի եւ սրածութեան ոգին: Նոյն ուղիով, ինչպէս Իշտար դառնում է պատերազմի աստուծու Ասսուրի կինը, այնպէս էլ Արէսն արժանանում է զեղանի Ափրոդիտէի սիրոյն: Ուրիշ խօսքով նա մօտենում է Ադոնիսեան տիպարին: Վկայ է եւ առասպելը, որի համաձայն Արէսը վարազի կերպարանքով սպանում է իր ախոյեանին, դժբախտ Ադոնիսին կամ ինչպէս յոյն-ասորական հիւսուածն է ասում, սպանում է Թամուզին զեղեցիկ Բելտիսի սիրոյն համար:

Արէսը համարւում է նաեւ հայր Ատիսի[1]:

Ադոնիսին սպանելով և Արիսի հայր ձեւանալով Արէսը երեւան է գալիս իբրեւ նրանց վաղեմի ժառանգորդ ոչ որդիական, այլ հայրական իրաւունքով:

Այս դիցաբանական դծերը վերապրումներ են հնագոյն դրութեան, երբ մարտագոչ աստուածը յայտնի էր աւելի մեղմ բարքով, Ատիս-Ադոնիսեան պատկերով, թեւակից ունենալով Ափրոդիտէ-Կիբելէ կանացի էութիւնը:

Արէսը բնիկ Թրակացի է: Հոմերոսը նրա բնակավայրը համարում է Թրակիան: Այստեղից է նա յարձակւում Թեսալիա եւ Բէոտիա, այստեղ է ապաւինում Ափրոդիտէի հետ ունեցած յայտնի սիրային արկածից յետոյ: Յաճախ երեւան է գալիս զինուած Թրակացու նման եւ մարմինը կիսաբաց: Եւ վերջապէս Թրակիան կոչւում է նրա անունով Արէս:

Վիճելին այսպիսով Արէսի հայրենիքը չէ, այլ նրա անուան ծագումը: Արդեօք անունը նմանապէս Թրակիակա՞ն է:

Յունական պանթէոնը հարուստ է այլազան բնակիչներով: Նրանց մի մասը աւանդ է նախահելլէն բնակչութիւ-

1 Tomaschek, Die alten Thraker, II, էջ 55, աղբիւր է ցոյց տալիս Պրոկլի Tetr. II, 97, սակայն կոչումը ճիշտ չէ: Հաւանօրէն ուրիշ տեղից է քաղած:

նից: Ցունական են համաբուելու այն անունները, որոնք մեկնելի են նոյն լեզուի բառամթերքով: Լեզուագէտները տրամադիր են Արէսը հանել յոյն արէ, 'բռնութիւն, վնաս' սանսկ. arus 'վէրք' բառից:

Այս ստուգաբանութիւնը, որի հիմը պատերազմի աստուծու աւերիչ ոգին է, պայմանական է եւ եթէ պարզուի որ Արէսը սկզբնապէս պատերազմի աստուած չէ, պիտի կորցնէ իր արժէքը:

Արդ Արէսի մասին շատ տարբեր կարծիքներ կան: Ոմանք համարում են նրան ամպրոպային աստուած[1], ոմանք՝ երկնքի[2], ուրիշները՝ երկրի կամ ստորերկրեայ եւ վերջապէս կան ընդունողներ, որ նա լոյսի եւ արեւի աստուածութիւն է[3]:

Մեր անձնական դիտողութիւնները բերում են ուրիշ հետեւանքի: Եթէ ուշի ուշով կրկնելու լինենք Արէսի շուրջը դիզուած դիցաբանական ատաղձը, կը տեսնենք այնպիսի գծեր, հնանիշ ակնարկներ, որ վերաբերում են նրա սկզբնական կեանքին եւ լուսաւորում նրա առաջին քայլերը: Հոմերոսի մօտ Արէսի մերձաւորը կոչւում է Ենիո, որը նրա համար ե՛ւ մայր է ե՛ւ աջակից կուում (Իլիական Ե, 592): Այս է պատճառը, որ Արէսը կրում է երբեմն նրա անունը, Ենիական: Արէսի կապը Ենիոյի հետ հին յիշողութիւն է եւ կարեւոր: Թւում է թէ Ենիո կանացի դէմքը ոչ այլ ոք է եթէ ոչ Ափրոդիտէի նախորդը: Պելազգական Ափրոդիտէն գրաւել է Թրակացի Ենիոյի դիրքը Արէսի նկատմամբ: Այնինչ Թեբայում Ափրոդիտէն արդէն Արէսի կինն էր համարւում, Լեմնոսում նրա օրինաւոր ամուսինը տակաւին Հեփեստ(ոս)ն էր եւ Արէսի տարփանքը Ափրոդիտէի հանդէպ ապօրինի էր նկատւում, ինչպէս երեւում է ցանցի սիրային արկածից, երբ Հեփեստը իբր խաբուած ամուսին հետապնդում է իր երջանիկ հակառակորդին, Արէսին: Ենիոյի եւ Արէսի մտերմութիւնը չէր մոռացուած դեռ եւս Դ. դարում: Թրակիայում սովորութիւն կար գերիներին զոհել Արէսին եւ Ենիոյին[4]:

Թւում է, որ այս զոյգի յարաբերութիւնը աւելի բարդ է եղել քան Արէսի եւ Ափրոդիտէի եւ մօտ Ատիս-Կիբելեան սերտութեան: Կարծում ենք, որ Ենիոյի անունն իսկ Enn, Enuo, ուրիշ բան չէ, եթէ ոչ nana, nina անուան մի այլ ձեւը, եւ պատկանում են այն բառերի թուին, որ Կրեչմեր գիտնականը կոչում է Lallnamen այսինքն մանկական թո-

1 Preller, Gr. Mith. I, 226.
2 Lauer, Syst. d. Gr. Mith. 242.
3 Welcker, Gr. Goetterlehre, I, 405.
4 Amm. Marcell. XXVII, 44.

թովք: Մի քանի դիւրահնչիւն ձայների, որպիսին են պ, մ, ն, կրկնութեամբ կազմւում է մանկական առաջին բառարանը, ուղղուած իր ծնողներին: Ենիո, նանա նշանակում են մայր:

Ցիշենք, որ Նանէ էր կոչւում եւ Ատիսի մայրը Սանգար գետի զարմանալի աղջիկը, որ Ագդիստի կամ Կիբելէի արիւնից բուսած նուշն իր ծոցն առնելով յղացաւ եւ կեանքի կոչեց Ատիսին: Հաւանական է, որ նման մի առասպել գոյութիւն ունեցած լինի և Արէսի վերաբերեալ: Ովիդիոսն ասում է, որ Հերան ծնել է Արէսին մի հրաշալի ծաղկից, ուրեմն առանց Զեւսի մասնակցութեան (Fast. V 229): Հերան այստեղ նոյնանիշ է Նանէին եւ ուրեմն Արէսը՝ Ատիսին:

Ուշադրաւ է նաեւ Արէսի կապը վիշապի հետ: Պինդարի հեղինակաւոր վկայութեամբ Արէսի հայրը վիշապն է, եւ նոյնժամայն երկրից եւ Արէսից է ծնուած վիշապը: Այստեղ երկիրը նշանակ է Երինիսի, որ է Արէսի կինը:

Երինիսը մեզ արդէն յայտնի Ենիոյի մի այլ դէմքն է: Միեւնոյն անձը ե՛ւ մայր է ե՛ւ կին, միեւնոյն անձը ե՛ւ հայր ե՛ւ որդի, ինչպէս Արէսն եւ վիշապը, յար եւ նման փռիւգական նուիրախորհուրդի յայտնի ձեւակին. «ցուլը՝ ծնունդ վիշապի եւ վիշապը՝ հայր ցուլի»:

Նկատելու է, որ օձը մայր աստուածուհու խորհրդանշաններից է. սրբազան կենդանի է, որ ապրելով երկրի խորշերում, բնականօրէն աստուածուհու մտերիմն է համարւում: Օձի մի այլ պատկերն է փռիւգական Սաբաձիոս կամ Սաւազիոս աստուածը, որ մայր աստուածուհու վերաբերմամբ համահաւասար է Ատիսին:

Մի ուրիշ հնանիշ գիծ: Հոմեր(ոս)ը (Իլիական Ե. 385) պատմում է, որ Ալոյադները բռնել եւ փակել էին Արէսին «երկաթէ թոնիրում, 13 ամիս չարունակ, որովհետեւ նա սպանել էր Ադոնիսին որսի ժամանակ: Ալոյադները, ինչպէս վկայում է իրենց անունը (յունարէն) ներկայացնում են հունձն եւ կալ ու կուտը: Նրանց զինակցութիւնը Ադոնիսին, բուսականութեան տիրոջ, հասկանալի է: Արէսը, որից վրէժ է խնդրում, եւս օտար ոմն չէ: 13 ամսեայ բանտարկութիւնը նոյն կարգի այլաբանութիւն է, ինչպէս Զալմոքսի եռամեայ անհետացումը եւ ակնարկում է հողի տարեւոր հանգստին:

Ասել է, թէ Արէսին եւս յատուկ էր քնելու կամ մեռնելու եւ յառնելու կարողութիւնը: Կերամոս քաղաքում, որ Արէսի բանտարկութեան տեղն էր, պահւում էր նրա աճիւնը, ապացոյց, որ նա տեսել է մահ եւ կենդանացել:

Բոլոր այս դիտողութիւնները, որ այնպէս բնորոշ են Ատիս-Ադոնիսեան տիպարի աստուածութեան, թելադրում

են ընդունել, որ Արէսն եւս սկզբնապէս, իր երիտասարդ օրերին, նոյն դասի աստուած է եղել: Քանի որ հայ էր-Արան էլ նման բնութիւն ունի, եւ երկնքից ընկնելուց յետոյ շարունակել է երկրի վրայ պահել իր հինաւուրց նկարագրի ամենակարեւոր գիծը, ոչ մի արգելք չկայ մօտիկ արենակցութիւն տեսնել էր եւ Արէսի միջեւ:

Շատ նշանակալից է, որ երկուսն էլ աղերս ունեն չան հետ: Շունը համարւում էր Արէսի նուիրական կենդանի, որպէս պատերազմի դաշտի դիակների անխուսափելի այցելու: Յունաստանի մի քաղաքում շուն էին զոհաբերում Ենիալին, աւելի ճիշտ չան ձագ (Պաւսան, Գ. 14,9), իսկ Ենիալը նոյն Արէսի պատկերն է:

Արային կենդանացնողը Արալէզը կամ Առլէզն էր, որ յատաջ էր եկած չնից, ինչպէս վկայում է մատենագիր Եղնիկը:

Զենք կարծում, որ հին հաւատալիքով բոլոր դիակները անխտիր մատչելի համարուէին շների լափին: Արէսի հակառակորդներին էր անշուշտ վիճակուած անարգ կուր լինել շներին: Նրանք, որ ընկնում էին կռուի դաշտում, վայելելով Արէսի հովանաւորութիւնը իբրեւ նրա կողմնակիցներ, արժանի պիտի լինէին այլ բախտի: Շները նրանց չէին լափում, այլ Արէսի հրամանով լիզում էին ընկածների վէրքերը, բուժում այդ ընտրեալների խոցերը եւ վերակենդանացնում: Առլէզները այսպիսով բարի շներ են և գործ ունեն հերոսների, այսինքն Արէսի սիրելիների հետ:

Նմանութիւնը աչքի է ընկնում եւ այլ կէտերում: Ինչպէս որ սեմական Թամուզն ունէր իր համանուն Թամուզ ամիսը տարուայ մէջ, երբ տօնւում էին նրա հանդէսները, այնպէս էլ Արէսին յատկացուած էր որոշ ամիս: Թեսսալիայում գարնան ամիսն էր, որ կոչւում էր Արէյոս, Բիւթանիայում՝ ամառուայ ամիսը: Բուսականութեան ոգին հակում ունէր դէպի գարնան մեղմ արեւը կամ դէպի լուսինը, որի շողերը այնքան բարերար էին համարւում բոյսերի համար, եւ կամ դէպի արեւը, որի կիզիչ ճառագայթները ե՛ւ կենսատու ե՛ւ կորստաբեր էին նկատւում: Այս հետեւանքով տօները կատարւում էին գարնան եւ կամ ամառը:

Թւում է, որ հայ էր-Արան եւս իր յատուկ ամիսն է ունեցել, եւ թերեւս այնպիսի ծագում ունի հայ տօնացոյցի Արաց խորհրդաւոր ամիսը:

Ատիսի սրբազան ծաղիկն էր մանուշակը, բուսած նրա արիւնից: Ադոնիսն ընտրել էր պուտ ծաղիկը, (անեմոն): Հայերէնում յիշւում է արանց ծաղիկ, որ գուցէ ուղղելի է արաց, եւ կապ ունի Արայի անուան հետ:

Դիցաբանական մերձաւորութիւնը յայտաբերելուց յետոյ անտեղի չէ հարց դնել, արդեօք Արէս եւ էր-Արա անունների մէջ եւս ազգակցութիւն չկա՞յ:

Վելկկեր գիտնականը, որը համարում էր Արէսին աստուած հրատապ արեւի, ինչպէս յիշեցինք վերեւ, հնարաւոր էր գտնում նաեւ ստուգաբանօրէն կապել Արէս հայ արեւ բառի հետ: Տակաւին վիճելի է, արդեօք Արէս հինդ-եւրոպական բառ է, թէ թրակեան ժառանգութիւն է նախնի բնակչութիւնից:

Արէսի պաշտամունքը տարածուած է եղել թրակիայից մինչեւ Փոքր Ասիայի արեւելեան ծայրերը, ոչ միայն Մակեդոնիա, Թեսսալիա, Յունաստան, այլ եւ Փոքր Ասիայի երկիրները մանաւանդ Բիւթանիա, Պամփիլիա, Կարիա, մինչեւ Կողքիս եւ Հայաստան: Կիրասունի դէմ «Արէսի Կղզի», Արեսիաս քաղաքը եւ «Արէսի Պարտէզ», որ էր Կողքիսում ապացոյց են որ Արէսն ընտանի է եղել մերձակայ Պոնտոսի ափերին: Արէսի պարտէզն այն տեղն էր, ուր պահւում էր հռչակաւոր ոսկեղեղմը:

Տեսանք, որ Հայերին եւս յայտնի էր Արէսը իբրեւ ախոյեան առասպելական Դիոբրի: Մի աւանդութեամբ Արէսի որդին էր կարծւում Խալիբս, այսինքն՝ Խալիբ քաջածանօթ ցեղի նախահայրը[1]:

Այս եւ նման զրոյցները նշան են Արէսի ժողովրդականութեան նաեւ կովկասեան կոչուած ժողովուրդների մէջ:

Չի կարելի ժխտել, որ յոյն դաղթականութիւնն է բերել Արէսին Արեւելք: Քրիստոսից առաջ եօթերորդ դարից Յոյներն արդէն հաստատուած էին Տրապիզոնի շրջանում: Արդեօք յունական Արէսի ժողովրդականութիւնը հիմն չունէ՞ր տեղական հին պանթէոնում[2]:

Ամեն պարագային մեր ելակէտն ոչ այնքան լեզուագիտութիւն է, որքան դիցաբանական նկատումները: Հետաքր-

---

1 **Appol. Rhod.** II, 373.

2 Վրացերէն լեզուում կայ արէ բառը, որ նշանակում է կողմ եւ եղանակ: Բառը հին է եւ պատահում է Սազմ. 73, 17, արէ զազափխուլիսա, որ է «զարնան եղանակ»: Եթէ միայն վրացի արէ, յոյն արէ բառը չէ Պոնտոսի տեղական բարբառներից առնուած, որ արմատակից պարսկի **hava**, որտեղից հայերէն ախտա–հաւակ (Խորենացու Ողբի մէջ) պէտք է ենթադրել, որ առայժմ անտես թեւերով կապուած է լիտովերէնի oras «եղանակ, արձակ օդ» նշանակութեամբ: Վայրկի համեմատութիւնը լատիներէն area «արձակ տեղ, կալ» բառի հետ համոզիչ չէ:

Յատուկ անունները, որքան հին, այնքան աւելի անմատչելի են ստուգաբանական վերլուծման: Ճշմարտութեան սահմանները նեղ են, իսկ հնարաւորութեան՝ շատ լայն են: Վրացի արէ բառը կարող է եւ հայ Արայի հոմանակցումն լինել: Հայ դիցաբանութեան մի ուրիշ անուն, որ հետագայում Արայի նման արքայական զգեստով է հանդէս գալիս, անցել է Վրաստան եւ այնտեղ մնացել հասարակ անուան նշանակութեամբ: Ի նկատի ունենք Արտաւազդ անունը, որ Վիսոամեանի (էջ 108, 189) յայտնի վէպում գործ է ածւում հասարակ կախարդի իմաստով:

ջրական է, որ Արէսը եւ Էր-Արան թւում է թէ զարգացման միեւնոյն ուղիով են ընթացել:

Հեսիքիոս իր բառգրքում մակեդոնական Արոտոս *ձեւի հանդէպ դնում է Հերակլէս, այսինքն Արէս: Հայ մատենագրութիւնից յայտնի է, որ Վահագնը նոյնն է ինչ որ Հերակլը կամ Արէսը: Վահագնի վերաբերեալ գուսանական երգը՝* Երկնէր երկին, *եթէ յիրաւի Վահագնին է նայում, նրան նկարագրում է իբրեւ արեւի աստուած: Վահագն Վերեթրագնա, Հրուդենի մականունն է եւ առնչութիւն չունի արեւի հետ: Վահագնի արեւացումը բուն հայկական ընոյթ ունի եւ բացատրելու է նրանով, որ Վահագնին է անցել տեղական մի ուրիշ աստուծու ժառանգութիւնը, լծորդուած արեւին: Ուրիշ խօսքով, իրանական անուան տակ սքօղուած է զուտ հայկական աստուածութիւն, որի հարազատ անունը Էր-Արայի մօտն է որոնելու: Ինչպէս որ մակեդոնական Արէսը, որ է Արոտ(ոս)ը յեղաշրջուած է Հերակլէսի, այնպէս էլ հայ Էր-Արան դառնում է Վահագն, արեւելեան Հերակլէս:*

* * *

Աստուածների կերպարանափոխութիւնը *արձագանգ է հասարակական կեանքի յեղաշրջման հիմնական հանգոյցների:*

Սկզբնական շրջանում, երբ մարդը մաքառում էր առաւելապէս բնութեան և նրա արհաւիրքների դէմ, ամենաչունչ արեւը, կեանքը եւ նրա յարափոփոխ ելեւէջները պայմանաւորող ոյժերը, մարդու եւ շրջապատի մահն ու վերածնունդ պատճառող ոգիները առաջնակարգ տեղ պիտի գրաւէին նախնի պանթէոնում եւ նրա զարդը կազմէին:

Այնուհետեւ բնութեան կուռին աւելանում են նոր յղացումներ, նոր ցաւեր: Համայնքը ստիպւում է զէնք առնել հարեւան ցեղերի դէմ կամ ինքնապաշտպանութեան համար կամ նոր նուաճումներ եւ ապրուստի թարմ դաշտեր գտնելու նպատակով: Ոյժի եւ բռնութեան ահարկու աստուածն է, որ գալիս է այս պայմաններում կապտելու առաջին դահը պաշտելի երկնքում:

Ցաղորդ շրջանը պատկանում է հերոսներին, հրաշագործ դիւցազներին, Հերակլի եւ Վահագնի նմաններին, որոնք սխրագործութեամբ եւ խիզախ արկածներով խմորում են ժողովրդական ոգին համայնական գիտակցութեամբ, բարձրացնելով ցեղային կամ ազգային համերաշխութեան դրօշը:

Բնութեան աստուծու դերը պատերազմի աստուծուն

անցնելիս, նրան են անցնում նաեւ առաջնի երբեմնեան զուգակցի մայր աստուծուհու մտերմութիւնը: Ցեղոյ Ափրոդիտէն Արէսից անցնում է Հերակլին, Իշտարը աշխատում է չահել Գիլգամէշի սէրը:

Նրանց հետեւում է եւ մեր Աստղիկը, որ դառնում է Վահագնի տարփալին եւ «Վահագնի սենեակ»ն է նրա առանձնութեան տեղին:

Դիցաբանական եւ լեգուարանական պատերը այսպէս ասած ճանկռտելով, այստեղ ու այնտեղ կռուաններ որոնելով, աշխատեցինք բարձրանալ դէպի մեր հեռաւոր նախնիքների սրբավայրը, ուր պերճօրէն բազմած էին մայր աստուածուհին եւ իր անբաժան մտերիմը, երկնքի եւ երկրի երբեմնեան վեհապանծ տէրերը:

Որքան թանգ են մարդու համար մայր բնութեան բարիքները, նոյնչափ զօրեղ է նրանց անօրէն գերագոյն էակների հրապոյրը: Թէ որքան խոր արմատներ է ունեցել ժողովրդական աշխարհայեացքում այդ հինաւուրց պաշտամունքը, կարելի է դատել նրանից, որ նրա հեռաւոր զօղանջը տակաւին այժմ հնչում է կենդանի միջավայրում հազարաւոր տարիների տարածութեան վրայից:

Փոքր Ասիայի հռչակաւոր Մեւլեւի դերվիշները, յայտնի իրենց ազմկալից պարերով, որոնք ունին իրենց մենաստանը նաեւ Պոլսում, ոչ այլ ոք են, եթէ ոչ փռիւգական մօր Կիբելէի եւ Ատիսի աւանդակիրները, նրանց gallus *կոչուած քրմերի խօսուն ուրուականները:*

Դարձեալ մուսուլման Շախսէ-վախսէ *կոչուած արիւնուչտ արարողութիւնները բաբելոնեան վերապրումներ են Իշտարի եւ Թամուզի: Իսլամի թանձր եւ հեղձամղձուկ մրթնոլորտը անպօր է եղել արմատախիլ անել հին պաշտամունքը, որ իր արտասովոր տոկունութեամբ յարատեւել է, հարիւր, որ իր արտասովոր տոկունութեամբ յարատեւել է, հարիւր, մակերեսուելով արտաքուստ նոր միջավայրին:*

Եգիտների կրօնը իր մելիք թաուզով, *որ մնում է զարգանալ, չնայելով բոլոր եւ այլազան մեկնութեանց, թւում է նոյնիսկ, որ սերտօրէն կապուած է զոյգ աստուածութեան պաշտամունքի հետ: Մելիք թաուզը ուրիշ ոչ չէ, եթէ ոչ ինքը Թամուզը, Իշտարի սիրելին:* Thawaz-Thamuz: *Այս տեսակէտից պէտք կայ վերհայելու Եգիտների մասին հաւաքուած նիւթերը, որ սակայն ներկայ խնդրից դուրս է:*

Բերածս օրինակները ցոյց են տալիս, որ ամբողջ Առաջաւոր Ասիայում երբեմն տիրական պաշտամունքը պահել է իր վաղեմի շունչը հակառակ պատմական բոլոր հոսքերի եւ հայատանից արեւմուտք և հարաւ: Իրաւունք ունենք սպա-

սելու, որ հայ միջավայրում եւս անհետ պիտի չկորչէին փչրուած սեղանի բեկորները: Եթէ այդ սեղանի վրայ կանգնած հայեացք ձգենք հայ եկեղեցու սկզբնաւորութեան կապակից աւանդութիւնների եւ զրոյցների վրայ, դժուար չէ նշմարել հին դիցաբանութեան ցոլքերը սփռուած ասա եւ անդ:

Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ թագաւոր մի կողմից, սուրբ կոյսեր՝ Հռիփսիմէ, Գայիանէ, Նունէ միւս կողմից, հայ կրօնական վերանորոգութեան այդ սրբազան պատկերները իրենց բարձր հեղինակութիւնն ու սրբութիւնը պարտական են ոչ միայն իրենց մարտիրոսական արեան, այլ թւում է թէ մասամբ եւ այն դարաւոր թանկագին յուշերին, որ հին պաշտամունքից անցել է նրանց: Անբնական զրոյցներն եւ առասպելներն այնպէս են մթագնել Լուսաւորչի եւ նրա գործակիցների կեանքը, որ նրանց պատմական իրական դիմագծերը խեղդուած են կամ հազիւ նշմարելի թանձր մշուշի մէջ:

Մի՞թէ անպատասխանատու երեւակայութեան, պատմիչի կրօնական յափշտակութեան արդիւնք են դրանք: Բայց երեւակայութիւնն անգամ սնւում է իրական կեանքով եւ նրա թեւերը, որքան էլ հեռու գնան դէպի ցնորական հորիզոնները, կերտուած են աշխարհային նիւթերից: Իսկ սրանք յաճախ ոչ այլ ինչ են, եթէ ոչ հին հոգեւոր կեանքի վերապրումները:

Թւում է թէ հին հաւատի մարած արեւի շառագունած երկինքը թողել է մի քանի շողեր նոր աւետաբերների, Լուսաւորչի եւ Տրդատի կեանքի վրայ: Արդարեւ ի՞նչպէս պիտի հասկանանք Լուսաւորչի մուտն ի վիրապն և ելն ի վիրապէն: Բազմազան չարչարանքների վերջաբանութիւն է՝ մեծ նահատակին ընկերացնել օձերի հետ խոր վիրապի մէջ: Ի՞նչ է նշանակում այս արտասովոր պատիժը: Կարծե՞լ որ գրական հետեւութիւն է Դանիէլ մարգարէի արկածին, որին նոյնպէս Նաբուգոդոնոսորը ձգեց մի խոր փոս, ուր պահւում էին առիւծներ: Շատ կարելի է որ նմանութիւն կայ, բայց ոչ այն մտքով, որ հայ դրիչը փոխ է առնում Աստուածաշնչից, այլ որ երկուսն էլ անջատ վերապրումներ են հին անցեալի նման հաւատալիքների:

Հանդուցեալ Գալուստ Տէր Մկրտչեանը հրատարակելով մի հին և ընտիր թարգմանութեամբ վկայաբանութիւն[1], այն միտքն յայտնեց, որ Ագաթանգեղոս օգտուած է այս յիշատակարանից:

1 Ցիշատակ Դատակնքաց Գորիա եւ Շմոնի վկայից, Արարատ, 1896, օգ.–սեպ.:

Գորիա եւ Շմոն Եդեսիացի էին եւ այնտեղ մարտիրոսացել են Դիոկղիտիանոսի օրով, ժամանակակից էին, ուրեմն եւ մեր Լուսաւորչին: Սրանց եւ Լուսաւորչի չարչարանքների մէջ որոշ նմանութիւն կայ: Նախ երկուսին էլ կախում են մի մի ձեռքից, յետոյ մի մի ոտքից, այնուհետեւ նետում են մի փոս եւ հանում գլխատում սրով:

Հետաքրքրական է մանաւանդ փոս ձգելու դէպքը. «Հրամայեաց դատաւորն իջուցանել զնոսա ի կախաղանէն և տանել արկանել ի դուր մի խաւարային, որ կոչի վիրապ, եւ հարկանել զերկոսին ոտս նոցա ի կոճեղս մինչեւ ցառաւօտ: Եւ տարաւ արդել զնոսա ի դուրն խաւարային եւ ծեփեցին զերդ եւ զդուռն զբին... եւ զկնի երից տուրնջեան եւ երից գիշերոյ զի ոչ տեսին նոքա լոյս, բացին զդուրս դրին յերեսաց նոցա եւ պահեցին անդէն ի նոյն դրի, ուր արդիլեալ էին զնոսա զհրոտից ամէս ի գլուխ եւ զնաւասարդի եւ զհոտի մինչեւ ի չորիքտասաներորդն քաղաց»:

Այնուհետեւ հանում են դրից եւ կախում ոտից միմիայն Շմոնին, եւ որովհետեւ դարձեալ յամառում էին, «հրամայեաց իջուցանել և տանել արդիլալ զերկոսեան ի դուրն յորմէ ելին»: «Եւ յաւուրն հինգեւտասաներորդ քաղաց ամսոյ, յորում լուսանայր երեքշաբթին, ի ժամու զի խաւսեալ էր հաւս երիցս անգամ», պրով գլխատում են:

Ցոյն Ցայսմաւուրքի Փարիզի դրչագիր օրինակում ասուած է, «Ի խաւար տեղի բանտին»:

Հետաքրքրական է, որ յոյն λάκκος լակկոս բառը Ս. Գրքում թարգմանուած է սովորաբար «գուբ», օրինակ Ծննդ. ԼԳ. 20 այլ եւ 22, եւ 24, Բ. Թագ. ԺԷ. 18, Դանիէլ Զ. 8, Բ. Մակաբ. Ժ. 37. այլ եւ նայած մտքին երբեմն «հոր», Ելից ԻԱ. 35, կամ «ջրհոր», Ելից ԻԱ. 33, այլ եւ «խորխորատ», Ելից ԼԲ. 23 եւ «լիճ» Ա. Մակբ. Թ. 33: Միայն մի անգամ թարգմանուած է «վիրապ», Ելից ԺԲ. 29, ինչպէս երեւում է, բանտի իմաստով որովհետեւ խօսքը գերիների մասին է:

Ճիշտ այս մտքով է գործ ածում եւ Եղիշէն, երբոր հաւատափոխ մոգպետի հասցէին Դենչապուհն սպառնում է աքսորել մինչեւ Մակուրան եւ «անդ ընկեցեալ զնա ի վիրապ մի եւ ընկալցի զմահ թշուառութեան»:

Գորիա եւ Շմոնի գուբը նմանապէս աւելի բանտ էր քան վիրապ այն մտքով, ինչ որ նա ունի Լուսաւորչի պատմութեան մէջ: Վկաների գուբը երդ եւ դուռն ունի, «ծեփեցին զերդ եւ զդուռն», մի հանգամանք, որ զանազանում է այս գուբը իբրեւ մի սովորական արգելարան Լուսաւորչի վիրապից:

Ցոյն ընդարձակ վկայաբանութեան մէջ, որ հայերէնի

նման թարգմանութիւն է ասորի բնագրից, եւ պահուած է Միխայելեանի մօտ, դրի համար ասուած է. «խաւար դուրը, որ էր այդպէս ըստ անուան և ըստ էութեան»[1]: Սրա փոխարէն հայ թարգմանիչն ունի՝ «դուռ մի խաւարային, որ կոչի վիրապ»:

Յոյնի իմաստն այն է, որ դուրը որ խաւար է կոչում իսկապէս խաւար էր: Նոյն միտքը հայն արտայայտում է դիմելով վիրապ բառի օգնութեան, «խաւար դուրը» համեմատելով վիրապի հետ, իբրեւ աւելի որոշ եւ հասկանալի հասկացողութեան հետ:

Առել է թէ թարգմանչի ժամանակ վիրապ հոգեւորական բառը արդէն ստացել էր այն առանձնայատուկ իմաստը, որ կապուած է Լուսաւորչի անուան: Յոյն լեկոս 'դուռ' յաճախ է պատահում վկայաբանական գրականութեան մէջ, այսպէս դուռ են ձգում Գոլգոթայում կոյսին, Մօրիկ եւ Խոսրով թագաւորների օրով, որ նախապէս պահուած էր «մոռացութեան բանտում», որ նոյնն է ինչ որ Արշակի Անյուշ բերդը:

Բայց Լուսաւորչի դուրը, վիրապն իր ուրոյն դրամն ունի: Ինչ նմանութիւն էլ լինի Գորիա եւ Շմոնի վկայաբանութեան եւ Ագաթանգեղոսի մէջ, միանգամայն անկարելի է որ Լուսաւորչի վիրապի պատմութիւնը փոխառութիւն լինի վկայաբանութիւնից: Պէտք չէ մոռանալ, որ ասորի վկայաբանութիւնն ինքն մի անվաւեր գրութիւն է եւ չէ ծագում բնաւ ժամանակակից եւ չարչարանքին ներկայ դրչից, ինչպէս հաւատացնում է վկայաբանութեան հեղինակ Թէոֆիլոսը: Գարեգին Տէր Մկրտչեանը համարում էր «պարզ և սրատուչ» իբրեւ վաւերական գրութիւն: Սակայն, այժմ պարզուած է, որ վկայաբանութիւնը յերիւրուած է 350–450 միջոցին, հաւանօրէն 390ի մօտերը, այսինքն՝ վկաների նահատակութիւնից գրեթէ մի դար յետոյ, հայ գրագրութեան ծագման նախօրեակին[2]:

Թողնենք առայժմ հայ թարգմանութեան ժամանակի խնդիրը, որին դառնալու ենք ուրիշ անգամ: Նոյնիսկ ասորի բնագրի երեւալու ժամանակ Լուսաւորչին արդէն խոշոր հեղինակութիւն էր ճանաչուած, որպէս սրբութեամբ եւ դերադրաչ զօրութեամբ առաքինացած եկեղեցու հիմնադիր: Նրան վերագրած 12 չարչարանքների մէջ միակը, որ տեղական կերպարանք ունի եւ կապուած է նոյնիսկ աշխարհագրական երկրի հետ, այդ վիրապի պատմութիւնն է: Միւսները, ինչ եւ լինի նրանց պատմական հիմք կամ առիթ, կրում են

1 **Migne**, P. G. 116, col. 136.
2 **Harnack**, Geschichte d. alter. Litterature, II, 474.

ընդհանուր վկայաբանական բնոյթ և թերեւս շատ կէտերում կամ դծերում արդիւնք են վերջին խմբագրի գրական ճաշակի:

Միայն կը լինէր կարծել, որ Լուսաւորչի վասքը հիմնուած է Ագաթանգեղոսի վրայ: Լուսաւորչի կեանքը, թւում է որ, զարդարուած է եղել աւելի շողշողուն եւ հրաշալի դրոյցներով, աւելի կենդանի առասպելներով, որ բնականօրէն պիտի կուտակուէին հին եւ նոր կրօնական հասկացողութեանց ընդհարման կենտրոն կազմող անուան շուրջը: Ագաթանգեղոսի վերջին խմբագիրը իբր քրիստոնեայ լուսամիտ մն զգալ մաքրել է Լուսաւորչի կենսագրութիւնն իր ժողովրդական տարրերից, իր իսկական արդուզարդից եւ վեր է ածել մի սովորական վկայաբանութեան հազար ու մի սրբերի յատուկ անինքնագիծ տանջանքներով, որոնց ուսումնասիրութիւնը միայն գրական հետաքրքրութիւն ունի եւ ոչ պատմական: Արտասով չարչարանքներից հիւսած լուսապրակի մէջ սակայն միայն վիրապի դէպքն է, որ փայլում է կեղծ քարերի մէջ իբր իսկական գոհար հնութեան խորհրդաւոր փայլով:

Վիրապի հրաշքի պատմական հիմք ուրիշ բան չէ, եթէ ոչ այն, որ մահապարտ Գրիգորը բանտարկուած է եղել Արտաշատում: Հաւանօրէն բանտը կոչւում էր Վիրապ, որպէսի իմաստ պահուած է Ս. Գրքում, ինչպէս յիշեցինք:

Սակայն, մեզ թւում է, որ արքայական այդ հասարակ բանտի վրայ ընկել մնացել է հին կրօնի վերջին յիշողութիւնը, ինչպէս հարածական ամպերի յետին բեկորի սաւեր: Եւ այդ սաւերն է, որ սովորական բանտը դարձրել է վիրապ եւ տուել նրան Ագաթանգեղոսեան կամ Լուսաւորչեան իմաստը:

Մեղապարտ Գրիգորը փակւում է անդունդ մի փոսում երկար ամիսներ, դուցէ տարիներ, որպէսզի յետոյ ելնէ եւ լուսաւորէ հայ աշխարհը նոր լոյսով: Հին հաւատալիքի զօրանոցն է, որ լսում է վիրապի շուրջը, այն հաւատալիքի, որի զօրութեամբ Թրակացի Զամոքսը անհետացաւ դեռնի տակ մի փոսի մէջ, մնաց այնտեղ երեք տարի թաղուած, յետոյ ելաւ նոր առաքելութեան համար:

Սարաբոնի տեղեկութեամբ, Զամոքսը սկզբում քուրմ էր, յետոյ ասուածացաւ, եւ որ քաշւում էր անմատոյց տեղեր, եւ ճգնում էր քարայրներում, եւ տեսակցում միմիայն թագաւորի հետ ու նրան պատգամներ տալիս: Այս է պատճառը, աւելացնում է հոչակաւոր աշխարհագիրը, որ այժմ

Եվ Դեռ Թրակիական Ժողովուրդի Թագաւորը միչա մի խորհրդական ունի, որ եւ համարւում է ասուած[1]:

Նոյն կերպ եւ Ատիսը, Ադոնիսը եւ նման ասուածութիւններն ու դիւցազները տարէց տարի անյայտանում էին, որ յետոյ երեւան, մեռնում էին, որ յետոյ յարութիւն առնեն: Արէսն էլ, տեսանք, մնաց 13 ամիս կալանաւոր երկաթէ թոնիրի մէջ, ուրեմն փոսի մէջ եւ յետոյ արձակուեց:

Հոչակաւոր Զրադաշտը, Իրանի մեծ մարգարէն, նմանապէս փակուեց Թագաւորի հրամանով, փոսի մէջ Zendani gah, ուր մի բարեպաշտ ամեն օր հաց էր ձգում[2]:

Հայ բուն ժողովրդական միջավայրում, ոամիկ խաւերում (ոչ տիրող նախաքրիստոնեական շրջանում) տակաւին մեռած չի եղել հինաւուրց հաւատալիքը: Եւ այդ է, որ Գրիգորին 13 տարի ապրել է տալիս խոր եւ անլոյս վիրապի մէջ:

Զարմանալի չէ: Յայտնի է, որ նոյնիսկ մեծ վարդապետի Յիսուսի կեանքը զերծ չէ հին վերապրումներից, քանի որ նրա շարշարանքը եւ երեքօրեայ յարութիւնը որոշ չափով մի խորհրդաւոր անդրադարձ է Ադոնիսեան կարգերի: Զատատական ոտները տեսանք որ Ադոնիսեան հանդէսների ընդօրինակութիւնն են նոր բովանդակութեամբ: Հրէական Պասեքը իր արմատով եւս Թամուզի պաշտամունքի հեռանկարն է, որ քահանայապետական դիտուն մեկնութիւնը աշխատել է յարմարեցնել հրէական անցեալի նշանաւոր երեւոյթներին: Գարնան հասարակածի շուրջը բեւեռած ոտնական հանդէսները նոյն հին պաշտամունքի աղօտացած յուշերն են:

Եթէ եկեղեցու տեսակէտից Զատիկը հրէական Պասեքի արտատիպն է, ժողովրդեան համար հնի նոր կերպարանաւորումն է:

Ագաթանգեղոսի ասելով, Լուսաւորիչը մնում է վիրապի մէջ 13 տարի (ԺԱ.ԺԲ.): Նկատենք անցողակի, որ գլ.Ի. ԻԱ. ԻԲ. նոյն պատմիչը հաշուում է 15 տարի, ակներեւ ապացոյց է, որ Ագաթանգեղոս խմբագրական դործ է, տարբեր աղբիւրներից քաղած:

Տեսանք, որ Ատիս-Ադոնիսը կենդանանում են երեքօրեայ մահից յետոյ. Զարմոքսը չքանում է երեք տարի, իսկ Արէսը պահւում է թոնիրի մէջ ուղիղ 13 ամիս:

Արէսի եւ Լուսաւորչի թուերի մէջ նկատելի է դուդադիպութիւն, մանաւանդ որ Ագաթանգեղոսի ձեռագիրները տալիս են երբեմն 13 ամիս ընթերցումը:

Թւում է, որ 13 ամիսը սկզբնական է, որ շատ վաղ դարձել է տարի, որի հետեւանքով առաջացել է եւ ժամանակագրական չփոթ, եւ ոչ միայն Գրիգորի կեանքն է երկարացրած մինչեւ Նիկիոյ Ժողովը, այլ եւ թերեւս յետաձգած հայ լուսաւորութեան տարին մինչեւ չորրորդ դարու սկիզբը:

Եթէ Զարմոքսի եռամեայ քունը այլաբանական արտայայտութիւն է Թրակիայում ընդունուած սովորոյթին, որով հողին երեք տարի հանդիստ էին տալիս, ապա եւ Լուսաւորչի 13 ամիսը (կամ տարին) նոյնպիսի փոխաբերական չափ է հայ երկրագործի համար: Տասնեւերեք ամիսը կազմում է հայ տոմարական տարին, հաշուած եւ Աւելեաց պակասաւոր ամիսը:

Ասել է, թէ Հայերի մօտ սովորութիւն է եղել տարեկան հանդիստ տալ հողին, որ մինչեւ այժմ էլ մնացել է շատ տեղերում մանաւանդ անջրդի արտերի նկատմամբ:

Կլէմէրրոտի դրոյցը խորհրդաւոր արեւելքու մասին, որ ամբողջ տարին ապրում էր ոգիների հետ եւ միայն մի անգամ էր երեւում մարդկանց, օժտուած չնաչխարհիկ յատկութիւններով, դարձեալ պատկերաւոր արտայայտութիւն է հողի տարեկան դադարին:

Փռիգիական խորհրդում, որի նիւթը Կիբելէի և Ատիսի կեանքն էր, ընդունուած էր նորընծայ հաւատացեալին ձգել մի փոս եւ այնտեղ պահել երեք օր: Այդ միջոցին կատարում էին դանազան արարողութիւններ, նպատակ ունենալով քաւել, մաքրել նորընծային եւ արժանացնել աստուածային խորհրդին:

Այլապէս ասած, ամեն մի նորընծայ կրկնում էր կամ վերապրում էր այն, ինչ որ կրել էր մեծ վարդապետ Ատիսը[1], ինչպէս որ քրիստոնեայ պատարագը եւ պատարագիչը պատկերաւորումն են Քրիստոսի եւ նրա տնտեսութեան:

Անցնենք Լուսաւորչի թագակիր դործակցին՝ Տրդատին: Թւում է թէ նրա դիւցազնական եւ արկածաւոր նկարագրի մէջ եւս խարխափում են մի քանի հնաւանդ դծեր:

Ազգային աւանդութեամբ, որ արձանագրած է Ագաթանգեղոսը, Տրդատ թագաւորը պատժւում է ի վերուստ առ Լուսաւորիչ եւ սուրբ կոյսերը ցոյց տուած վերաբերմունքի համար, ստանալով խոզի կերպարանք. «Թագաւորն փոխեալ էր ի կերպարանս ագրեւայոյդ խոզաց, քանզի թաւացեալ էին առհասարակ ամենայն մարմինքն եւ ընդ անգամս ոսկերացն բուսեալ էր խոզանաստեւ իբր մեծամեծ վարազաց վայրենեաց: Եւ եղնդունք ծայրից մատանց ոտիցն եւ ձեռացն կճղակացեալք էին իբր զգեռնարիր զարմատակեր կնճացն:

1 Strabon, VII, 3, 5.
2 Fr. Rosenberg, Le livre de Zoroastre, Zaratustnama (1904), էջ 49:

1 H. Graillot, Le culte de Cybèle, p. 155.

Նաեւ պատկեր երեսացն դիմացն չբջեալ էր ի պատկեր եւ ի կնճիթ զոճանացն յեղեգան բնակելոցն»[1]:

Տակաւին Տրդատի կենսագիրը, ուղենալով մի կերպ բացատրել այս տարօրինակ երեւոյթը, համեմատում է Նաբուզոզոնոսորի հիւանդութեան հետ: Նոր քննադատները նրա մանապէս փորձում են հասկանալ խոզացման իմաստը: Գուտշմիդը, Ագաթանգեղոսի այդ խոր քննադատը, կարծում է որ վարազ անուն թէ մականուն, որ հայ իշխանական չբջանում, ինչպէս Վարազ Տիրոց, Վարազ-Շահունի, Վարազ Դիմաքսեան եւ Վարազ-Բակուր, Վարազ-Շապուհ, կարող էր առիթ տուած լինել խոզացման զրոյցին: Գիտենք, նաեւ, որ հայ իշխանները վարազի պատկերով մատանի էին կրում, որ միեւնոյն ժամանակ կնիքի տեղ էր ծառայում: Վարազի այս արտօնեալ դրութիւնը, ինչպէս եւ Վարազդատ եւ Վարազդէն անունները ցոյց են տալիս, որ վարազը թերեւս, կապ է ունեցել հին պաշտամունքի հետ:

Տրդատի խոզանալը իրապէս մի խորհրդալից յիշողութիւն է մեզ հեառաքրքրող դիցաբանական շրջանում յայտնի վարազի: Գիտենք, որ Արէսը վարազի կերպարանք ստացաւ, որպէսզի սպանէ Ադոնիսին: Ատիսը եւս ընկաւ վարազի հարուածից, այն վարազի, որ զրկել էր վրէժխնդիր Զեւսը: Հայ առասպելի Դիոքիր նմանապէս կռուի բռնուեց Արէսի հետ եւ սպանուեց: Հաւանական է, որ Արէսը այստեղ եւս վարազի կերպարանքի տակ էր թաղնուած: Այս կերպարանափոխութիւնը նշանակում է, որ վարազը հին տոտեմ է, որ հետագայում տեղի է տուել ուրիշ աստուածութեան, այս դէպքում Արէսին: Տրդատը կարող էր հիւանդանալ այնպէս, ինչպէս Կոստանդին Մեծը, նրան կարող էին վերագրել մի սովորական ախտ: Խոզանալը կապ չունի լիկանթրոպի կոչուած հիւանդութեան հետ:

Անշուշտ մի հիմք պիտի լինէր, որ հայ ժողովրդական երեւակայութեան մէջ կապուէր վարազի պատկերը: Վարազը, Տրդատի նկատմամբ, մարած արեւի յետին մի շղոն է, որ կանգ է առել նրա սէգ ճակատին: Տրդատը միայն մահկանացու թագաւոր չէ, այլ եւ զիւցազն, որ «սիգալոյն աւերեաց զթումբս գետոց եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զարձանս ծովուց»:

Տոփամոլ արքայի պայքարը՝ տիրանալու գեղանի կոյսին եւ նրա անփառունակ պարտութիւնը, որքան եւ սովորական, վկայաբանութեանց մէջ յաճախ կրկնուող արկածը, եւս նշանակալից է: Հռիփսիմէ-Գայիանէի վկայաբանութիւնը ուրոյն զորձ է: Սկզբում զոյութիւն է ունեցել անկախ, յետոյ մտել եւ հիւսուել է Տրդատի եւ Գրիգորի պատմութեան հետ: Նրանք կարող են իրական անձինք լինել: Յայտնի է, որ Դիոկղիտիանոսի կինը՝ Գրիսկա և դուստրը՝ Վալերիա քրիստոնէութիւն ընդունեցին եւ բուսականին արկածուը կեանք ունեցան: Վալերիան ամուսնացած էր Գալերիոս կայսեր հետ եւ բաժանուած: Մաքսիմին Դայա, այն, որ փորձեց ընկճել քրիստոնէութիւնը Հայաստանում, ցանկացաւ կնութեան առնել Վալերիային, բայց մերժում ստանալով, աքսորեց նրան մօր հետ Միջագետք:

Նոյն անձերը յայտնի են նաեւ Սերենա եւ Արքեմիա անուններով[1]:

Եթէ ուրիշ հիմք չլինի, այս երկու կանանց դժբախտ կեանքը կարող է նկատուել իբր պատմական յատակ Հռիփսիմէի եւ Գայիանէի վկայաբանութեան: Ինչ եւ լինի սուրբ կոյսերի ծագումը, նրանց պատմութիւնը ինչպէս որ հասած է մեզ, հեռու է վաւերական լինելուց: Եթէ Գայիանէ եւ Հռիփսիմէ սրեւէ պատմական անձերի ուրուականներն են, ամեն պարագայում նրանք քողաբերբուած են դիցաբանական չերտով: Տրդատի բռնութիւնը Հռիփսիմէի դէմ արդեօ՞ք չէ անդրադարձնում Ադոնիսի եւ Ատտարատէի, կամ Ատիսի եւ Կիբելէի յարաբերութեանց հետաւոր յուշերը եւ մանաւանդ Ատիսի եւ Միդաս թագաւորի ազգիկայ սիրային դէպքը:

Հռիփսիմէի հովանաւոր Գայիանէն, որ բառացի նշանակում է 'երկրային', զրեթէ մայրական վերաբերմամբ դէպի Հռիփսիմէն կարող է համեմատուել մայր աստուածուհու հետ: Նրա անունն պատչաճում է Հռիփսիմէ անուանը, որ է, 'ընկեցեալ', ինչպէս Ագաթանգեղոսն ինքն է թարգմանում: Ընկեցիկ էր Փրիգիայի թագուհու Դինդեմէնի ազգիկը, այդպէս էր եւ Դերկետոյի դուստրը, որ յետոյ անուանուեց Շամիրամ:

Ագաթանգեղոսի «ըստ անուանդ քում արդարեւ ընկեցեալ եղեր... ի մահուանէ ի կեանս», հարկաւ, չինծու մեկնութիւն է: Բնաւ հիմք չկայ Հռիփսիմէի անունը հանել յունարէն 'ῥίπτω' (սիպաս) բայի կատարեալից իբր 'սիմասմենէ', որ լոկ ժողովրդական կոչուած ստուգաբանութեան նմուշ է, մի բառախաղ: Բայց բառախաղի հիմը ընկեցիկ ստուգաբանուհու հանդէպ վերյուշերն են: Հռիփսիմէ անունն աւելի խոր արմատ ունի քան թւում է եւ իսկական նշանակութիւնը՝ դեռ խնդրական: Անուան վերջին մասը յիշեցնում

1 Ազար. (Թիֆլիս), ճԱ, էջ 371:

1 Migne, P. L. II, 694.

է Ասորիքում ընդունուած եւ ոչ այնքան աննշան աստուածուհու անունը, որ է Սիմա, Սիմէա:

Բէյրութ քաղաքի մօտերքը գտնուած արձանագրութեան մէջ յիշւում է Բաալ եւ Հերա աստուածների հետ «եւ աստուածուհուն ի Սիմա»[1]: Լուկիան Սամոսատցին, Ասորիքի մեծ աստուածուհուն նուիրած նկարագրութեան մէջ, յիշւում է նաեւ Սիմէյոն, որ անկասկած նոյնն է ինչ որ արձանագրութեան Սիմա-ն: Մելիտոն եպիսկոպոսը Անտոնին կեսարի առաջ արտասանած ջատագովական ճառի մէջ կոչ է անում ի միջի այլոց եւ հեթանոս Սիմէ աստուծուն, անուանելով նրան դուստր Հաղադի[2]: Ճշմարիտ է, նորադոյն քննութիւնը վաւերական չէ համարում Մելիտոնի անունով հռչակուած այս ճառը, բայց չէ ժխտում նրա հնութեան արժէքը:

Ուշադրութեան արժանի է նմանապէս, որ Ս. Գրքում յիշւում է Ասիմաթ անունով աստուած՝ «արք եմաթացիք արարին զԱսիմաթ», 2 Թագ. 17,30: Ասիմաթի ար իղական մասնիկը վկայ է, որ Ասիմա կին աստուած է:

Sima կամ Semea արամէական Semaia բառն է համարւում, որ նշանակում է 'երկինք': Սակայն, պաշտամունական բովանդակութեամբ նոյնն է ինչ որ մայր աստուածուհին եւ կամ Շամիրամը, որը նրա մի այլ դէմքն է: Սիմայի, աստրական արտասանութեամբ՝ Շիմայի եւ Սեմիրամի կամ Շամիրամի միջեւ մինչեւ իսկ անուանական մերձաւորութիւն կայ: Արամէական Բարսեմիոս անունը, անտարակոյս, պարտական է իր ծագումը Սիմա աստուածուն: Հեմես քաղաքի քրմապետական տոհմի մէջ ընդունուած էր ի միջի այլոց Սօսիմիս անունը: Այդպէս էր կոչւում Ելագաբալ մականունով յայտնի հռովմէական կայսեր մայրը: Դժուար թէ այս անունը կապ ունենայ Սիմէի հետ: Խնդիրը սակայն անունների առնչութիւնը չէ:

Գիտենք, որ Սոյեմ էր կոչւում եւ հայ թագաւորներից մէկը, որ երկու անգամ տիրացաւ գահին, առաջին անգամ Անտոնին կայսեր ձեռնտուութեամբ, բայց ստիպուեցաւ տեղի տալ Պարսից թեկնածու Բակուրին, և երկրորդ անգամ Մարկ Աւրելի օրով, քշելով իր հակառակորդին: Գահի շուրջը ծագած կռիւներին զոհ գնաց հին մայրաքաղաքը, Արտաշատը: Հռովմէական զօրքերը կործանեցին հիմնովին եւ երկրի կենտրոն դարձրին Վաղարշապատ աւանը, անուանելով այն Նոր Քաղաք: Այստեղ էր Սոյեմ թագաւորի աթոռը:

Սոյեմի ծագումը խնդրական է: Անունից երեւում է,

1 **Roscher**, Lexicon der Mythololgie, **Semea** բառը:
2 **Migne**, P. G. V. 1228: Sime filiam Hadadi.

որ Ասորիքից պիտի լինէր, թէեւ հռովմէական կրթութիւն էր ստացած եւ Ծերակոյտի անդամ էր: Ցամբլիք մատենագիրը, որ յայտնի է իբրեւ հեղինակ մի առասպելական վէպի, որի բովանդակութիւնը բերում է Պատրիարք Փոտը, վայելել է Սոյեմի բարեկամութիւնը և ուղեկցել է նրան մինչեւ Նոր Քաղաք[1]: Լատիներէնի սխալ թարգմանութիւնը մոլորցրել է Հ. Գաթրճեանին, կարծել տալով, որ Աքեմենեսը Սոյեմի հօր անունն է, որով եւ հայ թագաւորների ցանկը հարստացել է մի նոր անձով: Մինչդեռ Ցամբլիքի խօսքերի իմաստն այն է թէ Սոյեմը է՛ւ Աքեմենիդ էր է՛ւ Արշակիդ, այսինքն՝ եւ Աքեմենեան եւ Արշակունի տոհմերից:

Եթէ չողոքորթութիւն չէ, հռետորական չափազանցութիւն է ասորի հեղինակի կողմից Սոյեմին արեւակից համարել Արեւելքի երկու ամենանշանաւոր արքայական տներին: Եթէ Ցամբլիքը յայտնի չլինէր իր երեւակայութեամբ, կարելի էր ենթադրել, որ Սոյեմի մայրը Արշակունի ծագում է ունեցել եւ որովհետեւ Արշակունիները իրենց սերուած էին համարում Աքեմենեան նախահօրից, ուրեմն Սոյեմի կրկնակի յաւակնութիւնը հիմք ունէր[2]:

Ասորի բնորոշ անունը կապում է Սոյեմին Հեմես քաղաքի քրմական եւ միեւնոյն ժամանակ իշխանական տոհմին: Հեմեսի Ելագաբալ աստուծու տաճարի քրմերից մէկը, յափշտակելով կայսերական գահը, թագաւորեց Ելագաբալ անունով եւ հայրենի աստուծու պաշտամունքը պատուաստեց Հռոմում, կանգնելով նրա անուան վայելուչ տաճար:

Անհաւանական չէ, որ նոյն կերպով եւ Սոյեմը բերած լինէր իր հայրենի Սիմա աստուածուհու երկրպագութիւնը եւ հաստատած իր նոր մայրաքաղաքում: Վանքերից շատերը նախապէս հեթանոս մեհեաններ են եղել եւ Հռիփսիմէի վանքը եւս կարող էր կանգնած լինել այնտեղ, ուր երբեմն Սիմայի սրբարանն է եղել: Քանի որ Սիմա պատկերակից է Շամիրամին, նրա մի այլ հատորը, ապա դժուար պիտի չլինէր, որ նա ժողովրդականանար մի միջավայրում, ուր այնպէս ծաղկում փառաբանւում էր Շամիրամը հնուց ի վեր:

Երկու կանանց մերձաւորութիւնը մատնւում է եւ Ուլունֆի պատմութիւնից, որ նրանց կեանքում դեր է կատարում: Սուրբ կոյսերը Վաղարշապատում իրենց նիւթականը հայթայթում էին նրանով, որ «ոմն ի նոցանէ» ապակեգործութեան արհեստ գիտէր եւ «ուլունս ապակեղէնս» էր շինում եւ վաճառում: Հռիփսիմէն ազնուական էր, «ի թագա-

1 **Photii**, Bibliotheca, 94.
2 Տես եւ Մարկուարտի կարծիքը, Untersuchungen zur Geschichte von Iran, II, 222.

կապ ստհմէ», եւ ի հարկէ նրան չէր վայելի ապակեղծ լինել, ուստի եւ այս արհեստը վերագրւում է նրա ընկերներից մէկին:

Թւում է թէ արհեստի խնդիրը գիտական մեկնաբանութեան արդիւնք է հին նիւթերը մշակողի եւ կամ խմբագրողի կողմից: Ուլունքի զրոյցը Հռիփսիմէի կեանքում արդեօ՞ք նոյն բնաւորութիւնը չէ ունեցել ինչ որ Շամիրամի ուլունքը, որ նեռուեցաւ ծովը: Ուլունքը մի թանկագին աւանդ է, որ Շամիրամը ժառանգել է իր մօրից՝ Դարկեատից: Լուկիանը պատմում է, որ սիւրիական ասատուածուհու տաճարից ոչ հեռու կար մի լիճ, որ նուիրական էր համարւում իր ձկներով: Ձկները բազմաթիւ էին եւ անուններ ունէին, երբ կանչում էին, մօտենում էին աներկիւղ: Առանձնապէս յարգի էր համարւում մէկը, որ ոսկէ զարդարանքներ ունէր իր վրայ: Եթէ յիշենք, որ այդ պճնուած ձուկը ինքը Դարկեատն է, Շամիրամի մայրը, նրա հնագոյն տոտեմը, այն ժամանակ հասկանալի կը լինի, որ Շամիրամի ուլունքը նոյն իմաստն ունի, ինչ որ ձկան ոսկեթերթ զարդարանքը: Գուցէ այդ է պատճառը, որ համաձայն հայ հին զրոյցների, ինչպէս վկայում է մեր պատմահայրը, Շամիրամը մահից առաջ նետում է իր ուլունքը ծով. «եւ զյոռուութն ի ծով եւ բան ի նմանէ՝ Ուլունք Շամիրամայ ի ծով»:

Այստեղ յոռուութքը նոյնանում է ուլունքի հետ եւ նրան տալիս է մի իմաստ, որ հետագայի գիտուն մեկնաբանութեան արդիւնք է: Յոռուութք բառը յարել է Շամիրամին եւ Հայաստանից դուրս: Այս հանգամանքը պարզում է մեզ անսպասելի կերպով նրա ծագումը:

Հայ յոռուութը փոխառութիւն է պարսկերէնից, ուր հընչում է harut: Վուլլերսի բառգրքում բացատրւում է, որ harutը մի ոգի է, հրեշտակ եւ ընկեր marutի: Կախարդութեան պատճառով իբր պատիժ նա կախուած է Բաբելոնում մի ջրհորի մէջ գլխիվայր: Ով որ ուզում է կախարդութիւն սովորել, գալիս է ջրհորի մօտ եւ հասնում է իր նպատակին:

Հետաքրքիր նմուշ կրօնական խառնաբանութեան: Harut եւ marut հրեշտակները Աւեստայի յայտնի ոգիներն են haurvatat եւ ameretat, Արամազդի եօթ համեշասպանտներից: Սրանց համապատասխանում են հին հայրենի հաւրոտ եւ մաւրոտ, Պարթեւեան չրջանի փոխառութիւն են եւ ստացել են ծագկի նշանակութիւն, երեւի նրա համար, որ մաւրոտը բուսականութեան ոգի էր: Հաւրոտը կամ haurvatatը ջրի ոգի էր, ուստի եւ ջրի մէջ է գտնում իր պատիժը: Բայց որ ջուրը ներկայանում է ջրհորում, այս արդէն աւելի հին հասկացողութեան, բաբելոնեան մեզ յայտնի առասպելի

վերյուշն է, յար եւ նման Շամիրամի եօթոնիր կոչուած ջրհորի: Երկու հանգած հաւատալիք իրանական եւ բաբելոնեան երկնքից խաչաձեւել են հաւրոտի վրայ և նրան դարձրել կախարդութեան վարպետ, ջատու: Harut բառը իր այս նոր նշանակութեամբ անցել է եւ Հայերին իբրեւ յոռուութ, harut նշանակում է ջատութիւն, կախարդութիւն, որից եւ հայերէնի իմաստը: Բառի փոխառութեան ժամանակ հայերէն յ բառերի սկզբում հնչուելիս է եղել որպէս h:

Դառնալով Հռիփսիմէ անուան, պիտի ասել, որ առաջին վանկը Հռիփ մութ է, եթէ երկրորդը յիշածս ասատուածուհու անունն է:

Ազգային աւանդութեամբ Հռիփսիմեանց կոյսերի խմբին է պատկանում նաեւ Վրաստանի առաքելուհին, Նունէ կամ Նինո կոյսը: Ամեն պարագայում Նունէն բախտակից է Հայաստանի կոյսերին այն մտքով, որ նրա պատմական դէմքն եւս մթագնած է դիցաբանական մառախուղով: Նունէի կեանքն ու քարոզչութիւնը շատ վաղ պարուրուել է անհաւատի զրոյցների ցանցով: Հնագոյն յիշատակութիւնը պատկանում է լատին եկեղեցական մատենագիր Ռուփին(ոս)ին, որ ծաղկել է Դ դարում: Սա գրել է եկեղեցական պատմութիւն, սկսելով այնտեղից, ուր կանգ է առնում Եւսեբիոսի նման գործը, այսինքն 325 թ. եւ հասցրել է մինչեւ 395 թիւը: Նրա մահը ընկնում է մերձ 402 թ.: Երկար տարիներ անց է կացրել Պաղեստինում, որտեղ ծանօթացել է Վրաց թագաւոր Բակուրի հետ: Գահընկէց թագաւորը հռովմէական ծառայութեան մէջ էր մտել եւ զինուորական մեծ պաշտօն ունէր Պաղեստինի սահմաններում: Ահա այս անձից է, որ Ռուփինը քաղել է իր թանկագին տեղեկութիւնը Վրաց առաքելուհու մասին եւ աւանդել մեզ իր պատմութեան մէջ:

Բակուրի ասելով, Վրաստանը քրիստոնէութիւն է ընդունում չնորհիւ մի գերի ընկած քրիստոնեայ կնոջ, mulier captiva, հետեւեալ պայմաններում: Վրաստանում ընդունուած սովորութիւն էր, որ երբ մէկի երեխան հիւանդանում էր, մայրը դանէ դուռն էր ընկնում եւ հարցնում, թէ ո՞վ կարող է բժշկել հիւանդին: Դիպուածով մի անգամ մի հիւանդ մանկան մայր գալիս է գերի կնոջ մօտ, որ իր սրբակեաց կեանքով եւ վարքով բոլորի ուշադրութեան առարկայ էր դարձել, եւ սա աղօթելով բժշկում է երեխային: Լուրը տարածուելով հասնում է երկրի թագուհուն: Եւ երբ քիչ ժամանակից յետոյ թագուհին «բռնւում է մի ծանր ախտով» dolore quodam graviss.mo, յիշում է զարմանալի կնոջ եւ նրան է դիմում դարման խնդրելու: Գերին նրան էլ է բժշկում,

դարձեալ աղօթքով: Թագուհին ընդունում է քրիստոնէութիւն եւ սկսում է յորդորել ամուսնուն նոյն քայլն անելու: Շուտով ներկայանում է առիթը: Թագաւորը մի օր որսի է գնում իր ուղեկիցների հետ: Ցանկարծ օր ցերեկով պատում է նրանց խորին խաւարը և, անկարող գտնել ճանապարհը, թափառում են մթութեան մէջ մոլորուած: Յուսահատ թագաւորը մտածում է: «Եթէ յիրաւի Աստուած է այն Քրիստոսը, որին քարոզում է իր կնոջ գերուհին, թող նա փարատէ այս խաւարը եւ այն ժամանակ ինքը կը հաւատայ»: Ցանկարծ փայլում է արեւը, վանելով խաւարը եւ թագաւորը ընդունում է նոր հաւատը:

Մի ուրիշ հրաշք: Ժողովուրդը հետեւում է թագաւորին: Սկսում են շինել եկեղեցի: Երկու սիւն արդէն կանգնել էին եւ երբ ձեռնամուխ եղան բարձրացնելու եւ իր տեղը դրնելու երրորդ սիւնը, չկարողացան: Բոլոր ջանքերը և մեքենագիտութիւնն իզուր անցան: Սակայն հետեւեալ առաւօտը թագաւորը մեծ զարմանքով տեսաւ, որ այն սիւնը, որ այնքան մարդիկ եւ մեքենաներ չկարողացան շարժել, դրուած է իր տեղը, միայն ոչ բոլորովին կպած խարիսխին, այլ մի ոտնաչափ բարձր խարսխից, կախուած օդի մէջ:

Ռուփինի կամ Բակուրի այս պատմութիւնը կրկնում են քաղուածօրէն միւս մատենագիրները, Սոկրատ, Սոզոմեն, Թէոդորիտ եւ միւսները:

Խորենացու պատմածը ընդհանուր առմամբ նման է, բայց կան եւ զգալի տարբերութիւններ: Նախ Ռուփինը անուններ չէ յիշատակում ոչ գերուհու եւ ոչ թագաւորի: Վրաց վարդապետուհին Խորենացու մօտ գերի չէ, այլ Հռիփսիմեանց ցրուած ընկերներից, որ «փախստեամբ հասեալ էր յաշխարհն Վրաց ի Մծխիթայ», եւ անունն էր Նունէ: Նրա բժշկութեան շնորհը ծանօթ է պատմահօրը, որով բժշկում են շատ ախտաժետներ եւ «կին Միհրանայ առաջնորդին Վրաց»: Երեխայի բժշկութեան մասին առանձին խօսք չկայ, այլ մասնաւոր դէպքը ընդհանրացած է, «զբազում ախտաժետս»:

Սոկրատին համաձայն է Խորենացին, որի ասելով թագաւորը «մոլորեցաւ ի դժուարս լերանց խաւարեալ օդով»: Խորենացու անձնական յաւելումն է, երեւի, որ Միհրանը զարհուրում է, յիշելով Տրդատի աղետը:

Կախուած սեան գրոյցը ծանօթ է Խորենացուն ուրիշ յեղուածով: Նախարարները ուզում են իմանալ թէ կործանուած կուռքերի փոխարէն ի՞նչ բանի պիտի երկրպագեն: Նրանց ասում են, որ պաշտելին Քրիստոսի խաչն է, որ կանգնել էին մի բլրի վրայ քաղաքից դուրս: Բայց երբ որ բլուր բարձրանալով տեսան որ խաչ ասածդ «կոփեալ փայտ է, ոչ ճարտարաց ինչ գործ», շատերը սկսեցին արհամարհել թէ «այնպիսեաւ լի իցէ ամենայն անտառն նոցա»: Ահա այդ ժամանակ է, որ Աստուած «առաքեաց յերկնից սիւն ամպոյ» եւ օդի մէջ երեւաց փայտէ խաչի մեծութեամբ լուսախաչ, տասներկու աստղերով շրջապատուած:

Ռուփինի ծանօթ Բակուր Վրացին յիշում է Ամմիան Մարկելինի պատմութեան մէջ Bacurius Hiberus: Սա հռոմէական բանակում կուում էր Գոթերի դէմ Թրակիայում 378 թ.[1]: Թրակիայից պէտք է որ տեղափոխուած լինի Պաղեստին այդ թուից յետոյ: Ռուփինը Երուսաղէմ էր հաստատուած 380 թուից սկսած մինչեւ 395, երբ դառնում է Հռոմ: Նշանակում է, Բակուրի զրոյցը ծագում է Դ դարու վերջերից:

Բակուրի թագաւոր լինելը տարակուսական է: Վիճելի է նաեւ նրա ծագումը: Չորրորդ դարի երկրորդ կէսում Սուրմակ եւ Ասպակուր թագաւորներն էին, որ թեկնածու էին Վրաց գահին մէկը՝ պարսից, միւսը հռոմէացւոց կողմից: Բացի սրանից Զոսիմ հեթանոս պատմագիրը, որ ապրում էր Ե դարի երկրորդ կէսում, Բակուրին Հայ է անուանում, եւ անկախ Ռուփինից, միեւնոյն բարձր կարծիքն ունի նրա ազնուութեան եւ զինուորական կորովի մասին: Հաւանական է, որ Բակուրը Գուգարքի բդեշխ էր, որով կարելի է հաշտեցնել երկու համարժէք վկայութիւնը:

Աւելի շփոթեցուցիչ է այն հանգամանքը, որ Բակուր իշխանի պատմածը գրեթէ նոյնութեամբ կրկնում է Յոհան Նիկիոյ եպիսկոպոսը ոչ թէ Վրաստանին, այլ Հնդկաստանին վերագրելով անցքը:

Յոհան եպիսկոպոսը, որ եօթերորդ դարու հեղինակ է, պատմում է, որ Հնդկաց թագաւորի դեսպանը կայսեր մօտից դառնալիս, գերի է տանում հետը մի քրիստոնեայ կոյս, Թէոդոստէ անունով: Հնդկաց թագաւորը կոյսին նշանակում է իր կանանոցի վերակացու: Մի օր թագաւորը հիւանդանում է: Կոյսը խաչակնքելով բուժում է նրան: Մի անգամ թագաւորը պատերազմի է գնում եւ յանկարծ նրան պատում է փոչու եւ մթութեան մառախուղը: Իսկոյն յիշում է կոյսի խաչը և յաղթելով թշնամիներին դառնում է տուն և գրկում քրիստոնէութիւնը: Նորադարձ արքան ուզում է տաճար շինել, բայց հարկաւոր սիւները պակասում են: Կոյսի աղօթե-

1 Amm. Marc. XXXI, 12, 16.

լով հարեւան հեթանոս տաճարի հրաշալի սիւները տեղափոխում են տաճարը[1]:

Յոհանի աղբիւրը Ռուփինը չէ, ինչպէս ենթադրում է Յոտնբերգը, այն պարզ պատճառով, որ Ռուփինի մօտ չի լիշւում Թէոդոսատէ անունը: Յակոբիկ եկեղեցու Յայսմաւուրքում Թոթ ամսի 17, որ է սեպտեմբերի 14, նշանակուած է Ս. Թէոդոսատէ կոյսի տօնը, եւ համաձայն վարքը, որ Յոհանի պատմութեան կրկնութիւնն է[2]: Խնդիրը բարդանում է նրանով, որ Յոհանի եւ Յայսմաւուրքի ասելով Թէոդոսատէն ժամանակակից էր Հոնոր եւ Արկադ կայսրների:

Ռուփինի եւ Յոհանի համեմատութիւնից մի բան է հեռւում, որ Նունէ անունը սկզբնական չէ եւ պատմական լիներու յատկութիւն ունենալ չի կարող: Այլ եւ, քանի որ միւնոյն պատմութիւնը վերադրւում է եւ Հնդկաստանին, որանով ե՛ւ ամբողջ զրոյցի հաւաստիութիւնը խախտւում է որոշ չափով:

Լատին եկեղեցականը գովում է Բակուր իշխանի սէրը ղէպի կրօնն ու ճշմարտութիւնը, cui summaerat et religionis et veritatis[3]: Զնայելով Բակուրի ճշմարտասիրութեան, նրա պատմածի մէջ մեծ տեղ է տրուած երեւակայութեան: Իշխանի երկու գովական յատկութիւններից ջերմեռանդութիւնն է որ յաղթանակել է: Բակուրը դուցէ եւ անպարտ է եւ դիւրահաւատութեամբ ուանդել է օտարին այն զրոյցները, որ լսել է իր հայրենի միջավայրում, իր նման ջերմեռանդ վանականներից:

Ինչպէս ամեն տեղ, Վրաստանում եւս քրիստոնէութիւնը մուտ է գործել հրաշագործութեան շաւիղներով: Իրականութիւնը չուտով զիջել է երեւակայական աշխարհին, եւ ճշմարտութեան հատիկները կորել են առասպելների փունջի մէջ: Քրիստոնէական առասպելները մեռնող կրօնական հայեացքների արդիւնք են, կերտուած են նրանց ազդեցութեան տակ եւ պահում են իրենց մէջ հնի գունաւոր հետքերը:

Վրաց դարձի զրոյցը նման է Հայոց, չափուած միեւնոյն կաղապարով եւ երկուսը նման ուրիշ շատ դարձերի: Թագաւորի հիւանդութիւնը, առաքեալի աղօթքով բուժուելը, լուսեղէն սիւնը օդի մէջ, էական հանգոյցներն են դարձի պատմութեան: Վրաց լուսասիւնը՝ օդի մէջ կախուած՝ այլ բան չէ, եթէ ոչ մի բողբոջ Լուսաւորչի տեսելքի հսկայական ծառի: Կարելի էր կարծել, որ Տրդատի եւ Միհրանի հիւանդութիւնը անդրադարձումն է Աբգարի օրինակի: Պահանջկոտ Եդեսացիք իրենց թագաւորին, որ ապրում էր Քրիստոսից երկու դար ուշ, բուժել են տալիս իրեն Քրիստոսի և նրա մերձաւոր առաքեալի ձեռքով, մինչ Հայերը եւ Վրացիք բաւականանում են աւելի համեստ բժիշկներով: Սակայն ճշմարտութեան դէմ մեղանչած չէինք լինի, եթէ ասէինք, որ երեք թագաւորների նմանօրինակ պատմութիւնները կարող էին անկախօրէն եթէ ոչ ծնունդ, նպաստ առնել նախորդ կրօնի աւանդներից:

Արդարեւ, կրօնական յեղաշրջումը որեւէ երկրում, որեւէ ժողովրդի համար պատմական խոշոր հարց է: Քրիստոնէութիւնը մի գաղափարական եւ հասարակական լայն շարժում էր, որի յախուռն ալիքները վաղուց ի վեր զարկում էին հեթանոս տաճարների պատերին և մի օր պիտի տապալէին: Որեւէ հիւանդութիւն, մինչեւ իսկ թագաւորի, չի կարող պատճառ եւ ոչ առիթ համարուել գաղափարական մի մեծ բեկման: Քրիստոնեայ եպիսկոպոսները բժշկական մեծամեծ ծառայութիւններ են մատուցել Սասանեան թագաւորներին, ինչպէս հաստատ գիտենք պատմութիւնից: Բայց այս հանգամանքը նրանցից եւ ոչ մէկին չի բերել եկեղեցու դուռը իբրեւ զղջացող Աբգար, Տրդատ կամ Միհրան: Դարձի կապակից հիւանդութիւնները ունայն զրոյցներ են եւ հեթանոս մատյանութեան շաղախներ:

Մեզ արդէն ծանօթ Մելիտոն եպիսկոպոսը վերեւ յիշածս գրութեան մէջ ասում է.«Սիրիացիք պաշտում էին Ատի Ադիաբենացուն, որը զրկում է Բալաթ բժշկուհուն եւ սա առողջացնում է Սիմէին, որ էր դուստր Սիւրիայի թագաւոր Հադադի: Հուսկ յետոյ ինքը Հադադը բռնութեամբ, Ատին խնդրում է հրեայ Եղիսէին, որ գալիս է եւ բժշկում նրան»:

Ատի, որ Ադիաբենացի է համարւում այստեղ, քաջածանօթ Ատիսն է, թէեւ կնոջ կերպարանքով: Բալաթ Բէլ կամ Բաալ աստուծու իգական ձեւն է եւ ինքը դուստր Ատիսի: Սիմէի մասին խօսեցինք վերեւ: Հադադ Միջագետքի յայտնի աստուած է, երբեմն դերակատար Թամուզի, այստեղ կոչւում է Սիւրիայի թագաւոր: Հադադ եւ Սիմէ երկրից իջել են երկիր եւ սոսկ մահկանացուներ են դարձել թէեւ թագակիր: Ատիսը իր դստեր Բալաթի հետ տակաւին աստուած է: Նախ հիւանդանում է Հադադ թագաւորի աղջիկը եւ բժշկութիւն է դանում կին Բալաթից: Յետոյ նոյն եւ աւելի վատթար ցաւ բռնում է Հադադ թագաւորին եւ բժշկողը հրեայ Եղիսէն է:

Ահա մի հեթանոսական նախատիպ քրիստոնէական նը-

1 Chronique de Jean, ev. de Nicée, trad. de Zotenberg, p. 309.
2 Le Synaxaire arabe Jacobite, redaction Copte, Pat. Orient, I, 227.
3 Migne, P. L. XXI, col. 482.

ման զրոյցների, ուր գործող անձինք են միչտ Թագաւորը և նորա կինը կամ դուստրը: Սրանց հիւանդութիւնը ոչ միայն այլաբանական պատկեր է հեթանոսութեան, որից պիտի իրեւ ախտից թօթափուէին, այլ եւ արդիւնք հեթանոս մտածողութեան, որի համաձայն աստուածները կոչուած են մարդկանց բուժելու զանազան ցաւերից:

Վրաց դարձի անձերի եւ ամենից առաջ կոյս Նինոյի դէմքին տեսնում ենք մեզ հետաքրքրող դիցաբանական շրջանի աստուածութեան կնճիռները: Վրացի զրոյցները Նինոյի մասին կրում են հայկական դրոշմ, եւ հիւսուած են հայ միջավայրի ազդեցութեան տակ: Այս հանգամանքը աւելորդ է դարձնում կանգ առնել այն հարցի վրայ, արդեօք մեզ զբաղեցնող դիցաբանութիւնը կամ Աստարտէ-Ադոնիսի պաշտամունքը ծանօ՞թ է եղել Վիրական ցեղերի շրջանում:

Համաձայն Վրաց ազգային աւանդութեան, Նինոյի պատմութիւնը ծագում է Սալոմէից, որ ոչ այլ ոք էր, եթէ ոչ Տրդատ Թագաւորի աղջիկը եւ Միհրան Թագաւորի որդի Ռեւի կինը: Սալոմէն, ուրեմն, ժամանակակից և ականատես է անցքերին, եւ ահա թէ ի՞նչ է նա պատմում Նինոյի ծագման եւ կեանքի մասին:

Նինոն Կապպադովկիացի ծնողների զաւակ է, ասել է թէ Լուսաւորչի նման նա եւս արեւմուտքից է գալիս: Նրա մօր անունն էր Սուսանա, այն է Շուշան: Քրիստոնէական դաստիարակութիւնը Նինո ստանում է հայազն Նիափոր անունով մի բարեպաշտ կնոջ մօտ, որ Դուին քաղաքից էր: Նիափորի յորդորմամբ Նինո պատրաստւում է գնալ Վրաստան, «որ է լեռնային գաւառ Հայաստանի», երբ պատեհ առիթ է ներկայանում եւ Նինո ուղեւորւում է Հռոմ: Այստեղ ծանօթանում է Հռիփսիմէ եւ Գայիանէ արքայազն կոյսերի հետ եւ նրանց 50 ընկերների հետ միասին: Այնուհետեւ Հռիփսիմեան խմբի հետ գալիս է Հայաստան եւ կոյսերի նահատակութիւնից յետոյ փախչում է Զաւախք: Այս է այն լեռնային գաւառը Հայաստանի, ուր Նիափորն էր ուզում ղրկել Նինոյին: Փարաւան լճի մօտ պատահում է ձկնորսների, որ ձուկ էին որսում, տեսնում է հովիւներ, որ զոհ էին մատուցանում Արմազ եւ Զադէն աստուածներին: Նինոն նրանց հետ խօսում է հայերէն, որ սովորել էր Նիափորի մօտ:

Զաւախքից Նինո անցնում է Մծխեթ, Վրաստանի մայրաքաղաքը: Առաջին գործն է լինում կործանել տեղական կուռքերը: Պատահում է Շրոշանա անունով մի աղջկայ, որի հետ յունարէն է խօսում, եւ որը առաջարկում է Նինոյին արքունիք գնալ: Նինո ծանօթանում է հրեայ Աբիաթարին և

նրա դստեր Սիդոնիային: Եւ այժմ սրանք են եւ ոչ Սալոմէ, որ պատմում են, առաջինը՝ Նանա Թագուհու, երկրորդը՝ Միհրան Թագաւորի դարձը: Առաքելուհին, որ այլուր կոչւում է Թէոդոսատէ, այստեղ կրում է Նինո կամ Նունէ անունը: Նրա մօր անունը Շուշան է, Թագաւորի անունը՝ Միհրան եւ Թագուհու՝ Նանա:

Անունները պատահական չեն: Նունէ, լատիներէն nonna, յունարէն Νόννα նշանակում է 'մայր', ինչպէս տեսանք վերեւ: Ատիսի առասպելում այդպէս էր կոչւում Սանդարատի աղջիկը, որին վիճակուած էր դառնալ դեղանի եւ երիտասարդ աստուծու մայր: Նոյն անուն էր կրում հայ պանթէոնի աստուածուհիներից մէկը, Նանէն, որի տաճարը գտնւում էր Եկեղեաց գաւառի Թիլն աւանում: Թագուհին, որ Միհրանի երկրորդ կինն է, պահել է իր վրայ Նանա աստուածուհու անունը:

Սուսանա, որ է Շուշան, յայտնի է մեզ Դերկետո-Շամիրամեան առասպելից, որ քննեցինք վերեւ: Նինոս Թագաւորի աղջիկն էր Սուսանէ, որին հայրը տուեց Օննին Շամիրամի փոխարէն: Շուշանը, ուրեմն, Շամիրամի տեղակալն է, այլապէս նրա մի այլ հայուածքը: Վրաց Սուսանա կամ Շուշանը, որովհետեւ Նինոյի մայրն է, նախադոյն է Նինոյից: Ինչպէս Դերկետոն իր դիրքը դիջանում է իր դստեր Շամիրամին, այնպէս էլ Սուսանան տեղի է տալիս իր հարազատին, Նինոյին: Գիտենք, որ Դերկետոն այնուհետեւ չչքացաւ պանթէոնից, այլ կերպարանափոխուեց ձկան: Վրաց Սուսանան եւս չի վերանում անհետ, այլ պահում է իր դէմքը Շուշանիկի հոչակաւոր պաշտամունքի մէջ:

Շուշանիկը մեծ ժողովրդականութիւն էր վայելում ոչ միայն Վրաց, այլ եւ Հայոց մէջ եւ երկու երկրների միջակայ նահանգի, Գուգարքի, տեղական մեծ սրբութիւն էր համարւում: Անունների կրկնութիւնը, թերեւս արդիւնք զրոյցի տարբեր հիւսուածքների, ամեն պարագային ապացուցանում է պաշտամունքի ժողովրդականութիւնը[1]:

Նանէ Թագուհու ամուսինը Միհրանն է, Նունէի հետե-

---

1 Նինոյի զրոյցի մէջ Շուշան անունը մտել է հաւանօրէն Ս. Շուշանիկի վկայաբանութիւնից: Վերջինս նուիրած ֆրանսերէն մի յօդուածի մէջ, որ ցարդ ինչ ինչ պատճառներով չկարողացաւ լոյս տեսնել, ցոյց ենք տուել որ Շուշանիկը Վարդանի դուստրը չէր, այլ Վրաց առաքելուհու աղօտացած պատկերը, իսկ ինքն առաքելուհին ոչ այլ ոք է եթէ ոչ Հռիփսիմէն, և Բակուրի պատմածը նոյն Հռիփսիմէի արկածն է, տեղափոխուած Վրաստան, այսինքն նոյն արկածի վրական կամ գուգարական հիւսուածքը: Նինո անուանը ծանօթ է Վրացիներին Խորենացուց: Սա է որ առաջին անգամ հրապարակ է նետել Նինո-Նունէի պատմութիւնը, օգտուելով Սոկրատի հայերէն թարգմանութիւնից: Մոռացուած աւանդութիւնը, չնորհիւ պատմագրի, վերակենդանանում է: Նինոյի զրոյցի վրաց ծանօթ խմբագրութիւնը ԺԱ դարուց յառաջ չէ, ուստի և

ւորդը: Ուրիշ աղբիւրից գիտենք, որ Վրաց առաջին քրիստոնեայ թագաւորի անունը Բակուր էր[1]: Վրաց դարձի զրոյցը ընտրել է Միհրան կամ Միրիան անունը: Սոսկ դիպուած չէ: Հարկաւ, Միհրան կարող է լինել Ամմիան Մարկելլինի ծանօթ Վրաց Meribanes, այսինքն Մերուան, կամ Միրիան թագաւորը որ իշխում էր 361 թուականներին: Բայց հաւանական է որ այս մի պատահական զուգադիպութիւն է եւ իսկապէս Միհրանը այլ ոք չէ, եթէ ոչ Միհր աստուծու պատկերը, նրա դրօշակակիրը: Միհրը, Արեւելքի այդ հին եւ զօրեղ աստուածը վաղուց մրցման մէջ էր Փոքր Ասիայի մեղմ եւ կանացի Ատիսի հետ եւ շատ տեղ կորզել էր նրա փառքը եւ գիրքը: Հայ Դիոնիսի առասպելում եւս Միհրն է երեւան գալիս:

Միհրանը որպէս երիտասարդ մոլորւում է լեռներում «խաւարեալ օդով, այլ ոչ տեսանելիօք»: Արեւ եւ համատարած լոյսի աստուծու համար աւելի մեծ պատիժ չէր կարելի երեւակայել: Միհրը չէ կորցնում տեսնելու ընդունակութիւնը, այլ բնութիւնն ինքն է խաւարում: Հեթանոս լոյսը հանդչում է, որպէսզի նրա տեղը ծագէ նոր եւ «մշանջենաւոր» լոյսը:

Պարզ է, որ Նունէի յանդիման կանգնած թագաւորը հասարակ մահկանացու չէ, կամ միայն այդ չէ, այլ եւ ինքը Միհրը արքայական թագով: Հեռեւապէս եւ առաքելուին սովորական կոյս չէ միայն, այլ եւ մայր դիցուհու փոխանորդ:

Մանի կամ Մանէ կոյսը եւս պատմական դէմք չէ: Ագաթանգեղոսը չի յիշում նրան, այլ գիտէ միայն Մանեայ այրք կամ Մանայարի որպէս ճգնարան Գրիգոր Լուսաւորչի: Այստեղից Խորենացին հանել է Մանի անունը եւ ենթադրել որ նա եւս պատկանում էր Հռիփսիմեանց խմբին, միայն յետ էր մնացել, «ո՛չ չուրթափեաց հետեւել նոցա ի դարն առ մեզ», այլ բնակուեց Դարանաղեաց լեռներում մի այրի մէջ որ կոչուեց նրա անունով Մանեայ այրք:

Պատմահօր արտայայտութիւնը կարծել է տալիս, որ նա Մանի անունը կապում է իրանական ման արմատի հետ, որ նշանակում է 'սպասել' եւ խնամի հայերէն մնալ բառին:

լի մատցածին պաճուճանքներով: Մինչեւ Խորենացու յայտնաբերութիւնը, հին աստուածներ վրաց առաքելուհու մասին մնացել էր Շուշանիկի անուան և պաշտամունքի ձեւով: Շուշան անունը ժառանգութիւն է մեզ դրպիցնող դիցարանական հնութեան:

1 Petrus der Iberer, ed. Raabe, էջ 15: Ռաուերն թրգմ. Պետրոսի վարքի, Palestinskij Sbornik, XVI: Պետրոս միաբնակ էր եւ ապրում էր Ե. դարու վերջերը: Դժուար թէ Բակուրին վերագրած պատիւը պատմական ատուգութիւն ունենայ: Թերեւս Բակուր իշխանի անուան արձագանգն է:

Ստուգաբանական մի ուրիշ փորձ դտնում ենք Պրոկոպ Կեսարացու մօտ: Սա Զ դարի մատենագիր է, քաջածանօթ Արեւմտեան Հայաստանին եւ կարեւոր աղբիւր է նոյն դարու Հայոց պատմութեան: Խօսելով Եկեղեաց դաւառի մասին, Պրոկոպը բերում է հայկական մի զրոյց Իփիգենիայի եւ Օրեստի վերաբերեալ: Հայերի ասելով, առասպելում յիշած Տաւրոսը Հայոց Տաւրոսն է եւ այստեղ են փախել քոյր եւ եղբայր: Ճանապարհին Օրեստը հիւանդացել է: Պատգամախօսը ասատել է, որ հիւանդը չապաքինուի, մինչեւ որ տաճար չկանգնէ Արտեմիսի անուան: Օրեստը լսում է պատգամին եւ չինում է Երեզ աւանում Արտեմիսի տաճարը: Խօսքը Անահիտի հռչակաւոր սրբարանի մասին է, որի ծաղումն, ուրեմն, Հայերը վերագրում էին Օրեստին:

Նոյն զրոյցը շարունակում է, որ Իփիգենիան փախուստի ժամանակ կորում է իր մազերը այնտեղ, ուր Կոմանա քաղաքն է: Այլ և աւելացնում է, որ ասողներ կան, թէ Օրեստի հիւանդութիւնը μανία այսինքն 'խելագարութիւն' էր[1]:

Զրոյցիս միտքն է՝ մեկնել Կոմանա նշանաւոր քաղաքի անունը յոյն κόμη 'մազ' բառից ի յիշատակ Իփիգենիայի մազերին, որ խուզել էր այդտեղ, եւ ուր կանգնել էին Արտեմիսի հռչակաւոր տաճարը: Մեզ թւում է, որ Օրեստի խելագարութիւնը, մանիա, չեշտելով, զրոյցը ձգտում է մեկնել Մանայարքը, որ մեծ սրբարան է եղել նման Երեզի եւ Կոմանի:

Խորենացու եւ Պրոկոպի առաջարկած ստուգաբանութիւնները լեզուագիտական արժէք չունին: Նախ յայտնի չէ հատուկապէս Մանեայ այրք է՞ թէ Մանայարք: Բնական է Ման կապել հարեւան Մանանդի գաւառի անուան. թերեւս Մանդի է բուն անունը եւ դարձել է Մանանդի Դարանաղիի ազդեցութեամբ: Ենթադրելով որ Մանդի ոչ միայն կազմութեամբ, այլ եւ իմաստով նման է Դարանդիի, կարելի է կարծել որ man պարսկերէն բառն է որ նշանակում է 'տուն', manbed 'տանուտէր': Հեռեւապէս, Մանդի է 'տուն աղի', ինչպէս Դարանդի է 'դարան աղի':

Բայց հնարաւոր է որ Նունէ եւ Մանէ, ինչպէս ունին հին տօնացոյցները, բախտակից են նաեւ ծագումով, այսինքն որ Մանէ նմանապէս թրթռոյ բառ է եւ նշանակում է մայր, որպէս կոչում որեւէ անձաւաբնակ աստուծուհու, նման Կիբելէի, որի անունը հանում են Կիբելա 'այր, քարանձաւ' բառից:

---

1 Procop. Pers. I, 17; Goth. IV, 5. Զրոյցս յայտնի է արդէն Սարաբոնին, XII, 2, 3, ուրեմն շատ հին աւանդութիւն է:

Մանէ, ուրեմն պատմական անձ չէ, այլ երբեմնեան աստուածութեան թափուր մնացած այրի եւ սրբութեան ժառանգորդ:

Այսպիսով, Հայոց եւ Վրաց դարձի պատմութեան մէջ, քրիստոնէութեան արշալոյսի մթնշաղի մէջ տակաւին նշմարելի են հեռացող աստուերները: Հին կուռքերը միանգամից չեն փչրւում, դարաւոր փառքերը հեշտութեամբ չեն չքանում: Երբեմն չքեղազարդ աստուածների, դիցուհիների ծիրանին պատռտուած է թէեւ խպառ, բայց նրա ծուէնները մնացել են տակաւին այն անձերի ուսերին, որ եկել էին տապալելու նրանց սրբութիւններն ու տաճարները նոր խօսքով, նոր ուսմունքով: Մեր տեսութիւնը զարմանալի չպիտի թուայ, եթէ յիշենք, որ ընդհանուր քրիստոնէական եկեղեցին անդամ զերծ չէ մնացել մեղ դրաղեցնող հեթանոս պաշտամունքի աղդեցութիւնից: Զատկական տօները որոշ մասքով այլ բան չեն, եթէ ոչ մի նոր խմբագրութիւն Ատիսեան հանդէսների: Գարնանային աստուծու տօնը, որ դարնանամրտին էր եւ բաղկացած էր մի կարդ հանդէսներից, քրիստոնէական եկեղեցում, մեծ պասի ընդմիջումով, բաժանուած է երկու հատուածի՝ Բարեկենդանի եւ Զատկի օրեր:

Հայ եկեղեցին, ճշմարիտ է, ստացել է պատրաստի այդ տօները ընդհանուր եկեղեցուց քրիստոնէութեան հետ միասին, բայց թւում է, որ նեղական միջավայրն անմասն չի մնացել որոշ երանգաւորում տալու նրանց: Այսպէս, օրինակ, Ծաղկազարդ կոչումը բնաւ չի յարմարում այն տօնին, որի իսկական անունն է տօն արմաւենեաց կամ ուռենեաց եւ կամ ողոդոմեան: Ոչ Ծաղկազարդ եւ ոչ մանաւանդ Ծառազարդ, ինչպէս ժողովուրդն է ասում, չեն արտայայտում օրուայ եկեղեցական իմաստը: Մինչդեռ նա միանգամայն համապատասխանում է Ատիսի ծառի հանդէսին: Մեր դիւղերում մինչեւ այժմ էլ ծառ են բերում եկեղեցի եւ ոչ ճիւղեր: Եկեղեցին աշխատել է հինաւուրց տօնը յարմարեցնել Քրիստոսի Երուսաղէմ մտնելու հանդէսին: Աւետարանի խօսքը՝ «այլ հատանէին ոստս ի ծառոց եւ տարածէին ի ճանապարհի», տալիս էր ամեն իրաւունք, որպէսզի նոր ճիւղերով ծածկէին հին ծառը:

Նոյնպիսի կասկած է յարուցանում եւ Բարեկենդանը: Օտար եկեղեցիները այդ օրերը կոչում են պանրուտիք: Պանիր ուտելու կամ մի քանի ուտիք օրերը Բարեկենդան կոչելը խիստ թէական է: Հայ գիւղերում Բարեկենդանը մեծ ժողովրդականութիւն ունի եւ ի միջի այլեւայլ խաղերի, պարերի եւ ուրախութեանց ընդունուած է դիմակ հագնել:

Տեսանք, որ դիմակաւորուելը յատուկ սովորութիւն էր Ատիսեան տօներին, եւ ծէսի էական մասն էր կազմում: Ատիսի յարութեան օրերին, երբ աստուծու հետ ամբողջ բնութիւնը վերակենդանանում է իր քնից, անպայման ճաշաւոր եւ վայելուչ էր Բարեկենդան թէ Բարեկենդանութիւն կոչումը: Կարծելու է, որ այս դէպքում եւս եկեղեցական տօնը կլանել է հին հեթանոս ժառանգութիւնը:

Առաջաւորաց պահքը հայ եկեղեցու ուրոյն սովորութիւններից է եւ առեղծուածային իր բնաւորութեամբ: Բիւզանդական եկեղեցին խորշելի էր համարում այդ պասը, ամեն աութիւ չնչաւելով նրա հեթանոսական դայթակղիչ բնաւորութիւնը:

Պասը վերջանում է Սուրբ Սարդիս զօրավարի յիշատակով, ուստի եւ ժողովրդի մէջ յայտնի է աւելի Ս. Սարգսի պաս անունով: Պասը լուծւում է փոխինդով, կամ փոխինձով, որ յայտնի է Հայաստանի ամեն մի անկիւնում: Միակ պասն է, որ ունի իր նուիրական կերակուրը: Փոխինձը, անշուշտ, նուիրական ծագում ունի եւ նշանակ է որեւէ հեթանոս պաշտամունքի:

Ատիսը իր յատուկ պահքն ունէր, ապաշխարութեան շաբաթը, երբ հաւատացեալները պատրաստւում էին մեծ խորհուրդին: Այս պասը զանազանւում էր քրիստոնէական պասերից նրանով, որ արգիլուած էին մի շարք ուտելիքներ, որոնց մէջ հացը եւ հացահատիկից պատրաստած կերակուրները կարեւոր տեղ էին բռնում: Բնական էր, ուրեմն, որ պահեցողութիւնը լուծուէր արգիլուած ուտեստների ճաշակմամբ, ինչպէս օրինակ քրիստոնէական պասը թոյլատրւում է լուծել այսպէս կոչուած Նաւակատեաց կերակուրներով: Ասել է թէ փոխինձն է այն առանձնայատուկ հացը, որով կատարւում էր թաթախումը Ատիսի պասը լրանալուց յետոյ: Իսկ թէ ինչո՞ւ էր հացը պահեցողութեան նիւթ համարւում, այդ բացատրւում է նրանով, որ Ատիսը մարմնացումն էր բուսականութեան եւ ամենից առաջ հացահատիկների եւ պտուղների, «Ադոնիսը ինքն է ցորեն սերմանեալ»:

Յիշենք ի դէպ, որ Սաբազիոս փրիգական աստուածութիւն էր եւ մայր աստուածուհու նկատմամբ մօտ Ատիս - Ադոնիսին: Նրա պաշտամունքի մէջ ընդունուած էր նորահաւատին մկրտել, գլխին ալիւր ցանելով և երեսը տրորելով ցորենի պաճով[1]: Հայ ժողովրդի մէջ սովորութիւն է

1 Gruppe, Grich. Mythol. էջ 903.

երեխայի գլխին հատիկ, այսինքն խաչած ցորեն թափել, երբ երեւում է նրա առաջին առամը: Հին մկրտութեան ծէս է, որ այնքան ոգեւորութեամբ մնացել է հեթանոս դարերից ի վեր:

Փոխինձը եւ փոխինձից պատրաստած ապուրը, որ կոչւում է խաշիլ, բաւական են ցոյց տալու Առաջաւորաց պասի նախաքրիստոնէական ծագումը: Նոյնն է վկայում և բիւզանդական մատենագիրներից յայտնի առասպելախառն պատմութիւնը Արցեւուրիոսի մասին, որ է Առաջաւորը: Եւթիմեոս Զիդաւին (կամ Զիդադին) Պոլսի վանականներից մէկը Ալեքս կայսեր Ժամանակ (1081 - 1118), եւ հայ կրօնավոր ոմն Իսահակ, ԺԲրդ դարու կէսին, գրել են հայ եկեղեցու դէմ ամբաստանութիւններ, առանձնապէս ծանրանալով «Արցեւուրի (իմա՛ Առաջաւորի) առասանայական պասի» վրայ:

Սրանց դիտութեամբ Առաջաւորը Սարգսի կարապետն էր, որ չրջում էր քաղաքէ քաղաք եւ գիւղէ գիւղ եւ աւետում, որ շուտով գալու է իր վարդապետ Սարգիսը: Շրջադայութեան ժամանակ Առաջաւորը մեռնում է: Սարգիսը ողբում է նրա մահը եւ սահմանում է Առաջաւորաց պասը ի յիշատակ նրա: Աղղներ էլ կան, որ Առաջաւորը խոկապէս Սարգսի շունն է[1]:

Գագիկ Թագաւորը բիւզանդական կայսեր Դուկասին (1071 - 1078) ուղղած Գիր Հաւատոյ թղթի մէջ աշխատում է պաշտպանել Սարգսին անտեղի զրպարտութիւնից: «Բայց ի տօնի յորում զատարտեալն Ս. Սարգիս յիշատակեմք եւ ճշմարիտ մարտիրոսն, որ վկայեցաւ յորդւոցն Հաղարու յաշխարհն Բազրեւանդի յորդւոյն Մահմետի յաւուրս Թէոդոսի Թագաւորի, եւ ոչ ասի սա իշապանն Սարգիս աստուածուրացն, այն, որ շանն տայր երկրպագանել»[2]:

Հայ պատկառը դատանգէտ դանդաղում է նահատակ Սարգսին իշապան Սարգսից, ասել է թէ չի ժխտում նրա գոյութիւնը, միայն յայտնում է, որ Հայերը տօնում են առաջինի, որ իբրեւ թէ մահմետականութեան զոհ է եղել, եւ ոչ իշապանի յիշատակը:

Այլ դիրք է բռնում Ներսէս Շնորհալին Սարգսի հանդէպ, երբ հարկադրւում է բացատրութիւն տալ Մանուէլ կայսեր Հաւատոյ խոստովանութեան դրով: «Ասասցուք փոքր ինչ եւ վասն Առաջաւորացն ի մէնջ անուանեալ պահոց, գրում է Շնորհալին, զոր հայհոյէք անդիտաբար, Սարգսի ուրումն ասելով կախարդի էշ եւ սկունդ ունողի. ի յապրատամբելոցն ի հաւատոյս մերոյ առասպելաբանելով ի զանազան իրս վասն սորին եւ պատմելով ստայօդ բանիւ առաջի ձեր»:

1 Migne, P. G. CXXX և CXXXII:
2 Մատթ. Ուռհայեցի, էջ 213:

Ակնարկը դատաճան Իսահակի հոգէին է: «Սարգիս այս ոչ գոյութիւն ունի յազգս մեր եւ ոչ անուն», հաստատում է հայ եկեղեցականը: Բայց զգուշաբար ասելացնում է. «Զոր թէ է որ ուրեք թէպէտ եւ մեզ անյայտ է, նզովէ զնա կաթուղիկէ եկեղեցի եւ զէշ նորա եւ զսկունդ եւ զդիտող նորա եւ չընդունող»:

Հակառակ Գագիկի, որի տեղեկութեամբ Սարգիս հայ էր եւ մարտիրոսացել էր Արաբներից Թէոդոս Թագաւորի ժամանակ, որը կարող է լինել միայն Թէոդոսրոս Գ. կայսրը (716 - 717), Շնորհալին համարում է Սարգսին Կապպադովկայի իշխան, որ Յուլիան Ուրացողի կողմից հալածւում է Արեւելք եւ նահատակւում է Պարսից Շապուհ Թագաւորի հրամանով:

Երկու տեղեկութիւններն էլ հեռու են ստուգութիւնից: Նոյնիսկ Սարգսի պաշտպանները չդիտէին, թէ ո՞վ է այդ ժողովրդական սուրբը: Շնորհալին ասկաւին եօթ տարի առաջ քան կայսեր գրելը հարկաւոր խուզումներ էր արել եւ տարի վանականի միջոցով կազմել մեզ հասած վարքը: Շնորհալին յունուարի 31ին է գնում Սարգսի յիշատակը: Սրանից երեւում է, որ նա աչքի առաջ է ունեցել նոր տօնացոյցը: Հին տօնացոյցում Սարգսի տօնը նշանակուած է մարտերի 23: Համապատասխան վկայաբանութիւնը գուցէ մի օր երեւան գայ ճարտնտիրների ծալքերից:

Ճշմարիտ է, նոյն տօնացոյցում տեսնում ենք եւ Սարգսի եւ Բաքոսի յիշատակն առանձին տեղի 30, բայց մեզ այնպէս է թւում, որ մեր Սարգիս զօրավարը ոչ այլ ոք է, եթէ ոչ նոյն Սարգիսը, Բաքոսի ընկերը: Սա զօրական էր հռոմէական բանակում եւ մարտիրոսացաւ Դիոկղետիանոսի օրով Միջագետքում, ուր եւ նրա յիշատակը մեծ հռչակ էր վայելում: Թւում է, որ վաղ անջատելով Սարգսին Բաքոսից չփոթել են ազանգատոր Սարգսի հետ, որ Յոհան Մայրագոմեցու աշակերտն էր եւ որի «Գիր վնասու» կարդացել է ինքն Յովհաննէս կաթուղիկոսն իր խոկ վկայութեամբ:

Խնդիրը, սակայն, Սարգսի անձնաւորութիւնը չէ: Առաջաւորաց պասի հետ նա անմիջական կապ չունի: Գագիկն եւ Ներսէսը այս կէտում արդար են, որ պասը Սարգսի անունով է կոչւում երբեմն, որովհետեւ շաբաթ օրը նրա յիշատակն է տօնւում: Սարգսին յատկացնելով այդ օրը եկեղեցու հայրերը, կարծես, ուզեցել են վանել Առաջաւորացի

հետ կապուած հեթանոսամիտ զրոյցները: Հետեւանքն այն է եղել, որ Սարդսին են անցել հին յիշողութիւնները:

Առաջաւորք պասի ծագումը խնդրական է: Մեր նախնիք շատ փորձեր են արել մի կերպ մեկնել զուտ հայկական պասի ծագումը: Ենթադրենք, որ եկեղեցին վերջապէս գտել է խելահաս մեկնութիւն: Սրանով խնդիրը չի փակւում: Առաջաւորի կամ Սարգսի առասպելաբանութիւնը, անտարակոյս է, որ արմատներ ունի եկեղեցուց դուրս: Առասպելի իսկական անունները մոռացուած են: Նրանց տեղը դրաւել են Սարգիսը եւ Առաջաւորը:

Ի՞նչ է զրոյցի խորհուրդը, դժուար է ասել: Սարգիսը կարծես ներկայանում է իբրեւ մի տեսակ Քրիստոս: Ունի իր սեփական կարապետը, որը քարոզում է եւ պատրաստում ուղին: Ունի իր էշը, որի վրայ արդեօք մո՞ւտ է գործել աչխարհ: Սարգիսը ողբում է իր սիրելու մահը, որը թւում է թէ ակնարկ է Ղազարի յարութեան նման մի դէպքի:

Սակայն Քրիստոսի նման են եւ Ադոնիսն ու Ատիսը իրենց կեանքի արտաքին դծերով եւ նուիրաբերհուրդով: Արդեօք Սարգիսը պատահական ժառանգորդ չէ՞ Ատիսի նրման մի հին աստուածութեան պաշտամունքի, եւ նրա վրայ չէ՞ն մնացել հնութեան գծեր:

Յիշենք, որ հայ Ատիսը, Արան, եւս բարեկամ է չան, ինչպէս Սարգիսը: Հայ աւանդութեամբ չանից են ծագում այն արայէները, որոնք յարութիւն տուին Արային: Սարգիսը ողբում է իր մերձաւորի մահը, որի յիշատակին նշանակուած է Առաջաւոր պասը: Թւում է, որ մի ապաւաղ արձագանգ է այդ՝ մայր աստուածուհու ողբին իր մտերիմ Ատիսի անկման առթիւ: Կին աստուածուհու պատկերը նսեմացել եւ վերացել է առասպելից:

Հայ եկեղեցին հնում սուն վերաբերում ունէր դէպի Մարիամ Աստուածածնի պաշտամունքը, երեւի, մասամբ այն պատճառով, որ վերակոչում էր հեթանոս աստուածուհու յիշողութիւնները, որ նմանապէս աստուածամայր էր կոչւում: Սրա հետքերը բնաջինջ անելու նպատակով եկեղեցին պատրաստ էր ստուերի տակ պահել եւ մինչեւ իսկ ուրանալ Մարիամի իրաւունքները:

Սարգսի մասին այժմ էլ շատ զրոյցներ կան ժողովրդեան բերանում: Պատմում են, որ պասի դիշերը Սուրբ Սարգիսը ձին հեծած փախցնում է մի գեղեցիկ աղջիկ: Զուգակից աստուածուհու խաւարած հետքերը չէ՞ն արդեօք. Ատիսը՝ կարիճ զօրավար, իսկ ընկերուհին՝ առեւանգելի աղջիկ:

Ասելս այն է, որ Առաջաւորի զրոյցը իր սկզբնական աւելի հին ձեւով կարող է պահած լինել մեզ հետաքրքրող

դիցաբանութեան վերապրումները, որ ժողովրդից անցել է եկեղեցուն եւ սուրբ հայրերը ընդունելով ջանացել են դրանել պատշաճաւոր մեկնութիւն եւ տեղ եկեղեցական տօների շարքում:

Կարող է պատահել, որ յիշածս սրբերի ուսերին թառած լինին եւ այլ հեթանոսական ոգիներ, այս արդելք չէ մեր տեսութեան: Ինչպէս նիւթի մէջ, անշուշտ, կան եւ ուրիշ շերտեր, որ զատելու եւ հետազօտուելու են առանձին: Տեսանք, որ շատ բարդուած է եկամուտ տարրերով եւ այն դիցաբանութիւնը, որ հիմն եւ ելակէտն է ներկայ հետազօտութեան: Դարկետոն կլանել է Միջագետքի ամենահին, եւ անտարակոյս նախասեմական մեծ աստուածութիւնը, որ հանդիսանում էր իբրեւ ձուկն: Ինքը տեղի է տուել Շամիրամին, Շամիրամը՝ Անահիտին: Անահիտի տաճարը կանգնած է Շամիրամի բլուրի վրայ Զելա քաղաքում, որ Փոքր Հայքի մէջ էր մտնում: Նոյնպէս Շամիրամի բլուրի վրայ է նստած Արտեմիսի սրբարանը Կապպադովկիայի Տիանա քաղաքում, որ յաջորդականութեան ճշմարիտ արտայայտութիւններն են:

Կիբելէն իր կողմից կլանել է Փոքր Ասիայի մի հին պաշտելիք, որ է ջրերի աստուածութիւն եւ որ ներկայանում է առասպելում իբրեւ Սանգար գետի աղջիկ: Ձուկն աստուածը յայտնի է եղել եւ Հայաստանում: Անժխտելի վկայ են այն վիթխարի քարէ ձկները, կամ քարէ սիւները ձկան նկարագրով, որ գտան պրոֆ. Մառ եւ Սմիրնով Սեւանայ լճի ափերին: Փռիւգիական ջրի աստուածութեան յուշերը եւս մնացել են հին Հայաստանում, եւ կապ ունին ջրհեղեղի աւանդութեան հետ, որի տեղական եւ ինքնուրոյն հիւսուածքը յայտնի է եղել Փռիւգիայում եւ Հայաստանում: Ձկան եւ թէ ջրի փառագուրկ աստուածները ապաստան են գտել Կիբելէի եւ Դերկետոյի տաճարներում:

Imp. NAVARRE, 11, rue des Cordelières, Paris.

Բ. ՄԱՍ

ԱՐՏԱԻԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ. — ՎԱՐԴ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ. — ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԳԱՀԻ ՎՐԱՑ. — ՎԱՍԻԼ ՀԱՑԱԶՆ. — ՀԱՑ ԳԻՏԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ ԲԻԶԱՆԴԻԱՑՈՒՄ.

ԱՐՏԱՒԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Յուստինիանոսի ինքնակալութեան տասներեւիններորդ տարին էր, 545 թիւը:

Հեռաւոր Լիբիայից մայրաքաղաք էր վերադառնում Արտաւան հայ իշխանը, որ օրուան հերոսն էր, մի յաղթական զօրավար, որ գալիս էր ստանալու գեղանի Պրիսկայի, կայսեր քրոջ դստեր, ձեռքը, որպէս հատուցում իր քաջարի գործի համար: Պատրաստ էր, հակառակ դէպքում, ծառանալ նոյնիսկ մեծազօր ինքնակալի դէմ:

Արտաւանը Արշակունեաց տոհմի վերջին շառաւիղներից էր: Հայ արքայական տունը մեռնում էր, հանգչում էր ընդմիշտ հնադարեան ճրագը, շաղ տալով իր վերջին ճառագայթները կայսրութեան հեռաւոր հորիզոնների վրայ: Խորհրդաւոր երեւոյթ: Արտաւանի կեանքը կարծես մի մանրանկար էր, մի նշանակալից ուրուագիծ, այն առաքելութեան, որ պիտի կատարէր հայութիւնը Բիւզանդական տէրութեան մէջ գալոց դարերում:

Արշակունի իշխանը նոր էր հեռացել հայրենիքից եւ հեռացել էր, թողնելով այնտեղ բարի անուն, մեծ գործերի յիշատակ: Տարիներով մաքառել էր կայսերական իշխանութեան դէմ, պաշտպանելով իր հայրենիքի շահերը: Այժմ իրերի քմահաճ բերումով ծառայում էր նոյն իշխանութեան պատերազմի դաշտերում:

Յուստինիանոսի գահակալութեան առաջին տասնամեակը խռովութիւնների շրջան էր Հայաստանում: Բիւզանդական իշխանութիւնը հետամուտ էր ոտնձգելու երկրի աւանդական ինքնայատուկ կարգերը: Ուզում էր ներմուծել պետական վարչաձեւը, նպատակ ունենալով հայ հողամասերը սերտօրէն շաղկապելու պետութեան հետ:

Բիւզանդական Հայաստանը անջատւում էր Պարսկաստանից Կարին – Նփրկերտ (Մուֆարդին) գծով եւ բաժանւում էր երկու մասի իրաւական դրութեան տեսակէտից: Հիւսիսային մասը, որ կոչւում էր Մեծ կամ Ներքին Հայք, կենտրոն ունենալով Կարինը, գտնւում էր կայսերական կու-

սակալի կառավարութեան ներքոյ: Հարաւային մասը բաղկացած էր հինգ անկախ եւ ինքնավար իշխանութիւններից, նման Ղարաբաղի Խամսա (որ արաբերէն նշանակում է հինգ) մելիքութեանց: Սրանք էին՝ Հանձիթ, այժմեան Խարբերդի շրջանը, Բալահովիտ, այժմեան Բալու, Հաշտեանք, արդի Ճապաղջուր եւ Գենջ, Անգեղտուն, Արղանայի շրջանը, եւ Ծոփք, որ ընդարձակ երկիր էր Տիգրիսի ձախ եւ աջ ափերին, Նփրկերտից մինչեւ Բնաբեղ եւ Փիտար՝ հին եւ ցայժմ կանգուն գիւղերը:

Փոքր Հայքը վաղուց մտած էր պետութեան վարչական կազմի մէջ եւ բաժանուած էր երկուսի, Առաջին եւ Երկրորդ Հայք, կենտրոն ունենալով Սեբաստիա եւ Մելիտինէ քաղաքները:

536 թուին ելաւ կայսերական հրամանագիրը, որով բոլոր յիշածս հողամասերը ենթարկւում էին նոր տրոհումի, բաժանուելով չորս մեծ շրջանների, Ա. Բ. Գ. եւ Դ. Հայք անուններով: Հին Ներքին Հայքը, կոչուելու էր այսուհետեւ Առաջին Հայք, մէջն ունենալով նաեւ Տրապիզոն քաղաքը ծովափեայ հողերով: Նախկին Երկրորդ Հայքը, այսինքն Սեբաստիայի շրջանը, կոչուելու էր Երկրորդ Հայք, և նախկին Երրորդ Հայքը, Մելիտինէն՝ Երրորդ Հայք, եւ վերջապէս Չորրորդ Հայք անուան տակ միացում էին հինգ ինքնավար իշխանութիւնները: Միաժամանակ ջնջւում էին տեղական առանձնայատկութիւնները, տեղի տալով ընդհանուր վարչական կարգերի:

Այս նորոգութիւնը հարուածում էր ամենից առաջ նախարարական արտօնութիւնները եւ փոխում էր երկրի հասարակական հինաւուրց պատկերը:

Վարչական վերակազմութեան նախորդել էր արդէն զինուորականը: Հայ հողամասերից կազմուած էր մի քանի տարի յառաջ զինուորական մի մեծ շրջան միահեծան սպարապետի հրամանատարութեան տակ: Նախարարական այրուձին, այսինքն հեծեալ գնդերը, առել էին պետական զօրամասերի մէջ: Զինուորական առաջաւոր կայաններն էին սահմանագլխի վրայ Կարին, Կիթառիճ եւ Նփրկերտ, մշտական բերդապահ գնդերով եւ մեծ մասամբ հայ իշխանների ձեռքի տակ:

Այս արմատական փոփոխութիւնները պէտք է բնակնօրէն յուզէին երկիրը, մանաւանդ ազնուականութիւնը, որի իրաւունքներն էին խոցւում: Մի պատեհ առիթ էր հարկաւոր, որ զսպուած դժգոհութիւնը ժայթքէր: Առիթը տուին երկրի պաշտօնակալները:

Բիւզանդական–պարսկական պատերազմները վերջացել էին խաղաղութեան դաշինքներով 532 թուին: Պատերազմի ընթացքին Սպերի շրջանում դտնուող ոսկեհանքի տէրը, ոմն Սիմէոն հայ իշխան, անցնում է կայսեր կողմը: Կայսրը չի պահանջում ոսկեհանքից այն բաժինը որ Սիմէոնը տալիս էր յառաջ Պարսից թագաւորին: Սիմէոն օգտուելով կայսերական հովանաւորութիւնից բռնի տիրանում է մի քանի գիւղերի, որ պատկանում էին Պերոզ իշխանին, հաւանօրէն Արշակունեաց ժառանգներից: Սրա երկու որդիները սպանում են Սիմէոնին եւ փախչում Պարսկական Հայաստան: Կայսրը վիճելի գիւղերը չնորհում է Սիմէոնի ազգականին, Համազասպին, նշանակելով նրան միաժամանակ երկրի կառավարիչ:

Պալատական պաշտօնեայ մի հայ Ակակ(իոս) անունով զրպարտում է կայսեր առաջ, որպէս թէ Համազասպ հաւատարիմ չէ եւ ուզում է նորից Պարսից կողմն անցնել: Կայսրի հաւանութեամբ ամբաստանիչը յաջողում է սպանել Համազասպին եւ երկրի դեկը իր ձեռքն առնել:

Ակակը չարաբարոյ անձն էր: Հայ լինելով հանդերձ թշնամական վերաբերում ունէր դէպի իր ցեղակիցները: Որպէս կառավարիչ ատելի էր ամենին: Նոր հարկեր դրեց երկրի վրայ, բաւականին ծանր: Զայրոյթը ընդհանուր էր: Հայերը դաւադրութիւն կազմեցին եւ վերջ դրին Ակակի կեանքին:

Դաւադրութեան հեղինակը եւ Ակակի սպանիչը Արտաւան Արշակունին էր իր եղբօր Յովհաննէսի հետ: Յովհաննէս Արշակունու որդիքն էին:

Խռովութիւնները ծայր տուին: Մայրաքաղաքից եկաւ Սիտտա կամ Ցիտտա նշանաւոր զօրականը: Նա երկրի պայմաններին եւ գործիչներին ծանօթ անձ էր: Նորակազմ զինուորական շրջանի պետն էր եղած եւ պարսկական պատերազմների ժամանակ զօրքերի հրամանատար: Սիտտան ետեւէ եղաւ մեղմ միջոցներով վրդոված խաղաղութիւնը վերականգնելու, ընդառաջելով Հայերի ցանկութեան եւ վերացնելով ամենից առաջ Ակակի սահմանած արտակարգ հարկերը:

Սակայն Ակակի որդին՝ Ադոլ(իոս), որ արքունիքում պաշտօնեայ էր, հօր սպանութեան ոխիր սրտում՝ կարողացաւ տրտունջ յարուցանել Սիտտայի դէմ որ իբրեւ թէ դանդաղկոտ է Հայերի հանդէպ եւ անփոյթ՝ չարագործներին պատժելու հրահանգում: Կայսերական սաստը մղեց զօրապետին աւելի վճռական միջոցների: Սիտտա բանակցութեան

մէջ մտաւ Ասպետեան, այսինքն Բագրատունի տան հետ, «որ ամենից հեղինակաւորն և մեծ տոհմն էր», նկատում է յոյն պատմիչը: Հաշտութիւնը կնքելու վրայ էր, երբ Սիտտայի զօրքերը յանկարծակի ընկան հայ բանակի վրայ, որ կանգնած էր Բասենի Աւնիկ քաղաքի մօտ՝ ակնդէտ բանակցութեան ելքին: Յառաջ եկաւ խռնումն: Սիտտան արտաւորեց իր անունը, կոտորել տալով քարանձաւում ապաստանած հայ կանանց եւ երեխաներին: Հայերը զայրացած թշնամու նենգ եւ վատահոգի վարմունքից, խոյացան նրա վրայ: Արտաւան Արշակունին մի անգամ եւս փայլեց իր քաջութեամբ, տապալելով նիզակի շեշտակի հարուածով Սիտտային:

Այսպէս ընկաւ կայսեր մեծագոյն զօրավարը, որ Վելիսարի հաւասար ոյժ էր համարւում պետութեան մէջ: Նրա տեղ եկաւ մի ուրիշ զօրավար, Բուզ կամ, նոր արտասանութեամբ, Վուզ: Սա եւս խաղաղ միջոցների կողմնակից էր, կամ այդպէս էր, գոնէ ձեւանում: Բուզ առաջուց մօտիկ ծանօթ էր եւ անձնական բարեկամ Արտաւանի հօր Յովհաննէս Արշակունի իշխանին: Իր մօտ կանչեց Յովհաննէսին, յուսալով նրա միջոցով խռովութեանց վերջ տալ: Յովհաննէս գնաց իր վաղեմի բարեկամի մօտ, առնելով հետը Վասակ Մամիկոնեանին, որ իր փեսան էր: Մամիկոնեան իշխանը իր տոհմին յատուկ հոտառութեամբ զգաց որ ճանապարհը բարի չէ եւ խորհուրդ տուաւ իր աներոջ խոհեմութեամբ յետ դառնալ: Յովհաննէսը չանսաց, շարունակեց միայնակ իր ուղին եւ գոհ գնաց այն վստահութեան, որ ունէր դէպի իր բարեկամը: Հոռոմ զօրավարը նենգեց եւ տմարդօրէն սպանել տուեց Յովհաննէս իշխանին:

Թշնամութիւնը սաստկացաւ: Ապստամբները անոյժ էին երկարելու դիմադրութիւնը: Կամ պէտք է զէնքը վայր դնէին եւ կամ դիմէին արտաքին օգնութեան: Հարեւան խոշոր պետութիւնների հակամարտութիւնից երբեմն օգտւում էին հայ նախարարները մեծ յաջողութեամբ: Խորհեցին պպտորել Պարսից թագաւորի եւ Յուստինիանոսի յարաբերութիւնը, գրգռելով Խոսրովին նրա դէմ:

Դեսպանութեան գլուխն անցաւ Վասակ Մամիկոնեանը: Արտաւանը անմասն չէր գործին, նա, որ ապստամբութեան ոգին էր: Կրկնակի ոճիր գործելուց յետոյ կայսրութեան դէմ, անխոհեմութիւն կը լինէր նրա կողմից դանգատաւորի դերն ստանձնել: Նրա փեսայ Վասակն է, որ խօսում է Խոսրով թագաւորի առաջ: Յոյն պատմագիրը հետեւեալ ճառն է դնում Վասակի բերանը:

«Տէր արքայ, մեզնից շատերը ծագումով Արշակունի են, այն Արշակի շառաւիղները, որ արենակից էր Պարթեւ թագաւորներին, Պարսկաստանի նախկին տէրերին: Նա ոչնչով պակաս չէր իր ժամանակուան թագակալներից եւ ոչ մէկից: Այն ինչ ներկայումս մենք կանգնած ենք ձեր առաջ որպէս ստրուկներ եւ փախստականներ, կանգնած ենք ոչ մեր յօժար կամքով, այլ բռնութեամբ: Եւ բռնացողը թւում է թէ Հռոմ զօրութիւնն է, ո՛վ մեծ արքայ, բայց ոչ: Այն մարդը, որի անփութութեան շնորհիւ կատարւում է բռնութիւնը, նա է իսկական պատասխանատուն գործած անարդարութեան համար: Թո՛ղ սկսենք մեր պատմելիքը քիչ հեռից, որպէսզի հասկանալի լինենք: Արշակը, մեր նախնիներից վերջին թագաւորը, դիջաւ իր տէրութիւնը Թէոդոս կայսրին ինքնարերաբար մի պայմանով միայն, որ նրա մերձաւորները բոլորը ապրեն մշտապէս ազատ և չենթարկուեն որեւէ հարկատուութեան: Այս համաձայնութիւնը ոյժի մէջ էր մինչեւ վերջին տիրահոչակ դաշինքը, որ կնքեցիք և որը կարելի է անուանել, առանց սխալուելու, համաշխարհային չարիք: Այդ օրից է, որ անտեսելով բարեկամ թէ թշնամի, ամեն ինչ խառնում և խառնակում է նա, որ միայն անուամբ է քեզ բարեկամ, ո՛վ թագաւոր, իսկ յիրականին անսուտ թշնամիդ է: Շուտով կը համոզուես ինքդ, հէնց որ յաջողութեամբ վերջացնէ արեւմտեան ազգերի նուաճումը: Արդարեւ, ի՛նչեր չի արել այս մարդը, որ օրէնքի հակառակ չլինէր»:

Խօսքը Յուստինիանոս կայսրի մասին է: Հայ բողոքաւորները այնուհետեւ թւում են մի առ մի, թէ ինչպէս կայսրը խափանեց հարեւան Ծանների եւ Լազերի ազատութիւնը, ձեռք կարկառեց դէպի Հոները մի կողմից եւ դէպի Եթովպացիք միւս կողմից: Աղիտաբեր եղաւ Լիբիայում, Իտալիայում, խորտակեց Վանդալներին, Գոթերին, Մաւրուսներին եւ վերջապէս փորձեց գայթակղեցնել արաբ ցեղապետին Ալամունդարին, որ Պարսից հպատակ էր: Բոլոր այս ազգերին ընկճելուց յետոյ Յուստինիանոսին մնում է միայն նուաճել Պարսից պետութիւնը: Վասակն ուզում է ապացուցանել, որ կայսրը անհաւատարիմ է գտնուել 532 թուին կնքուած դաշինքին: «Յուստինիանոսը ինքն է աւերել դաշինքը, չարունակում է հայ ճառախօսը, որովհետեւ խաղաղութիւնը վրդովում է ոչ թէ նա, որ առաջինն է զէնք առնում, այլ ով որ խաղաղութեան օրերում չարիք է նիւթում իր հարեւաններին: Ով խորհում է ոճիր, նա արդէն գործած է համարւում, եթէ անգամ չյաջողի ոճիրն իրագործել: Ինչո՞վ են վերջանում պատերազմները, յայտնի է: Յաղթում են սո-

վորաբար նրանք, որ առիթ չեն տուել կռուի, այլ որ պաշտպանում են ընդդէմ կռուարարի»:

Հայերն չեչտում են, որ Ցուստինիանոսի դրութիւնը բարեյաջող չէ: Զօրքերի մեծ մասը ցրուած է արեւմտեան հեռաւոր ծայրագաւառներում: Երկու նշանաւոր զօրապետներից մէկը, Սիտտան, սպանուած է իրենց Հայերի ձեռքով, միւսը, Վելիսարը, կորած է ընդմիշտ Ցուստինիանոսի համար: «Արդ, ելնելով թշնամու դէմ, եղրափակում է իր խօսքը Վասակը, դիմադրութեան չես պատահի, իսկ յանձին մեր կը գտնես հաւատարիմ եւ երկրին քաջածանօթ առաջնորդներ զօրքերիդ համար»:

Հայերի առաջարկը ընդունելի էր Պարսից արքայի համար եւ մանաւանդ հաճելի նրանց զինակցութիւնը:

Նոյն առաքելութեամբ Խոսրովի մօտ եկաւ մի ուրիշ դեսպանութիւն Գոթաց թագաւորի կողմից: Նա եւս տրտնջում էր Ցուստինիանոսի աշխարհակալական քաղաքականութիւնից եւ յորդորում էր Պարսից թագաւորին պատերազմ սկսել:

Քիչ յետոյ Լազերը դիմեցին Խոսրովին, ոյժ տալով նախորդ խնդիրքներին: Սրանց ճառերը եւս նոյն ոճով են յօրինուած ինչ որ Հայերինը: Հարկաւ, ճառերը չինծու են, եւ պատկանում են իրեն, պատմագրին, եւ ոչ թէ ճառախօսներին: Սակայն այս հանգամանքը չի նսեմացնում նրանց պատմական արժէքը: Հին պատմագրութեան մէջ ընտանեցած ձեւ է, որի միջոցով եւ մեր հեղինակը պարզում է Ցուստինիանոսի թշնամիների դիրքը նրա հետեւած քաղաքականութեան հանդէպ: Ընկճուած մանր ազգերը քաջածանօթ էին մեծ պետութեան ամենակուլ ախորժակին եւ անտեղեակ չէին բնաւ թէ ի՞նչ է անցնում պետութեան զանազան անկիւններում:

Պարսից դուռը ուզեց օգտուել կայսրութեան ներքին խլրտումներից ու դժգոհութիւններից եւ յայտարարեց պատերազմ: Ցոյս ունէր մի քանի հարուածով տիրանալ Բիւզանդական հողերին մինչեւ Եփրատ:

Հայերը ներկայացան 539 թուի աշնան: Զմեռը պատրաստութեան մէջ անցաւ եւ յաջորդ գարնան սկսուեցին պատերազմական գործողութիւնները: Առաջի երեք տարին ռազմական դաշտն էր Միջագետք եւ Լազիկէ, այսինքն Հայաստանի հարաւային եւ հիւսիսային կողմերը: Միայն 543 թուին հակառակորդ բանակները ճակատեցին Հայաստանի հողի վրայ: Կայսերական զօրքերը երեք առաջով վերեւ յիշուած կայաններից դիմեցին դէպի Դուին: Բախումը տեղի

ունեցաւ Անդղ գիւղի մօտ եւ Պարսիկները չարաչար պարտուեցին:

Ապստամբ Հայերը Վասակի եւ Արտաւանի գլխաւորութեամբ մասնակցում էին պարսկական չարժումներին: Սակայն նախ քան պարսկական զօրքերի Հայաստան անցնելը նրանք լքեցին Պարսիկներին եւ հաչտուելով կայսեր հետ քաչուեցին մայրաքաղաք եւ մտան պետական ծառայութեան մէջ: Արտաւանի առաջ բացւում էր նոր եւ լայն ասպարէզ:

* * *

Արտաւանը մենակ չէր: Նրա հետ էին իր եղբայր Ցովհաննէսը եւ մի գունդ հայ քաջեր:

Բիւզանդական Աֆրիկայի նուաճումը եւ խաղաղեցումը տակաւին վերջացած չէր: Մերձ 545 թուականին կայսրը ուղարկեց Լիբիա Արիոբինդ ծերակուտականին, որ իր քրոջ աղջկայ, Պրիեկտայի, ամուսինն էր: Նրա բանակի մէջ էին ի միջի այլոց եւ Արտաւան ու Ցովհաննէս Արշակունի եղբայրները իրենց կտրիճներով: Հասնելով Կարթագէն, Արիոբինդ իմացաւ որ Մաւրուսների (Մաւրեր) պետերը՝ Ստոդա եւ Անտալ(աս) իրենց ոյժերով կանգնած են երեք աւուր հեռաւորութեան վրայ: Բախումը անխուսափելի էր: Հարեւան Նումիդիայից կայսերական զօրքերը օգնութեան չեկան հակառակ Արիոբինդի հրամանին: Տեղի ունեցաւ արիւնահեղ ճակատ: Բիւզանդական գունդը մեծ չէր եւ նրա զօրավարն էր Ցովհաննէս Արշակունի, որ կռուեց հերոսաբար եւ ընկաւ պատերազմի դաշտում: Նրա կորուստը մեծ կսկիծ պատճառեց կայսեր:

Շուտով պարզուեց, որ Նումիդիայի զօրքերը դիտաւորեալ չէին եկել օգնութեան: Նրանց պետը՝ Գոնթար(իս) յանդուգն եւ փառատենչ անձն էր եւ չար ծրագիրներ էր որոճում՝ յափշտակել Աֆրիկայի իշխանութիւնը եւ իրեն թագաւոր հռչակել: Պէտք էր նախապէս կործանել Արիոբինդին, ուստի գաղտնի յարաբերութեան մէջ մտաւ Մաւրուսների հետ եւ նրանց դրդեց արշաւել Կարթագէն ընդդէմ Արիոբինդի: Մաւրուսների գլխաւոր Անտալին խոստացել էր յաջողութեան դէպքում նրան զիջանել Կարթագէնի նահանգը, Բիզակը:

Անտալի հետ էր եւ արշաւին մասնակից Մաւրուսների մի ուրիշ պետը, Կուցին, որ թագաւորում էր Նումիդիայում: Արիոբինդը կարողացել էր սրան իր կողմը քաչել եւ

համաձայնութեան գալ, որ կռուի ժամանակ դաւաճանէ ընկերոջը եւ անցնի Բիւզանդական բանակը:

Արիոբինդ, որ անտեղեակ էր Գոնթարի դաւերին, յայտնեց նրան իր եւ Կուցինի գաղտնիքը: Իսկ Գոնթար չտապեց նախազգուշացնել Անտալին:

Այսպէս երկու Մաւրուս իշխանները արշաւեցին Կարթագէնի վրայ ընդդէմ Արիոբինդի, մէկը՝ պատրաստ դաւաճանելու իր ընկերոջ եւ անցնելու Արիոբինդի կողմը, միւսը՝ կուսակից Գոնթարին, որ պիտի դաւաճանէր իր զօրավարին՝ Արիոբինդին:

Գոնթար, կամենալով կռուի ընթացքին վերացնել մէջտեղից Արիոբինդին, համոզեց նրան անցնել զօրքի գլուխը եւ անձամբ յարձակուել ճակատը Մաւրուսների դէմ:

Արիոբինդը, որ զինուորական արհեստին անփորձ էր բոլորովին, երբեք զէնք ու զրահ չէր առած ձեռքը, վարանում էր պատերազմի ելնել եւ իր անձը անխոհեմաբար փորձանքի ենթարկել: Այս դանդաղկոտութիւնը կարծել տուեց Գոնթարին, որ Արիոբինդը գլխի է ընկել եւ ուրեմն իր դաւադրութիւնը բացուել է: Գոնթար չտապեց դիմակը հանել, մտաւ Կարթագէն, զօրքը դրդուեց Արիոբինդի դէմ, ամբաստանելով նրան, որպէս մի վեհերոտ անձն, որ խուսափում է կռուել թշնամու դէմ եւ պատրաստւում է փախչել, հետը տանելով այն գանձը, որ նշանակուած է զօրքերի համար: Գոնթար առաջարկեց դրդուած զօրականներին ձերբակալել Արիոբինդին եւ տիրանալ նրա գանձին:

Զօրքը հուշակեց Գոնթարին սպարապետ Արիոբինդի տեղ: Այս կացութեան հանդէպ Արիոբինդը ուզում էր փախչել դէպի մայրաքաղաք: Ահա այստեղ է, որ Արտաւան յառաջ նետուեց, խորհուրդ տուեց գնալ ապստամբ Գոնթարի դէմ եւ խեղդել խռովութիւնը իր սաղմի մէջ: Արշակունի իշխանը հաւաքեց իսկոյն հայ կտրիճներին, առաւ եւ մի քանի այլ զինուորներ, որ մնացել էին հաւատարիմ, և նետուեց Գոնթարի վրայ: Արտաւանը քաջութեան հրաշքներ գործեց կոտորելով բազմաթիւ թշնամիներ: Սակայն Արիոբինդը որ երբեք արիւն չէր տեսած, սարսափելով սոսկալի կոտորածից, խոյս տուաւ եւ թաղնուեց ծովափեայ մի եկեղեցու մէջ, ուր պահուած էին նրա կինը եւ ընտանիքը: Գունդը հետեւեց Արիոբինդին: Արտաւան չկարողացաւ փախուստի առաջն առնել, մնաց մենակ եւ ստիպուեց ինքը եւս թողնել կռուի դաշտը:

Գոնթար տիրացաւ Արիոբինդի տան եւ գանձերին: Քաղաքի եպիսկոպոսին միջնորդ ուղարկեց նրա մօտ, որ գայ

իրեն ներկայանալու, խոստանալով նրան ապահովութիւն: Ժամանակի սովորութեան համաձայն բռնակալը երդում կերաւ մկրտութեան աւազանի վրայ, որ չարիք չի հասցնի Արիոբինդին: Սա հաւատաց եւ գնաց ընկաւ յաղթողի ոտքերը: Գոնթար խօսք տուաւ արձակել նրան եւ ուղարկել մայրաքաղաք կնոջ հետ միասին, այլ եւ դարձնել գրաւած գանձերը: Այնուհետեւ ընթրիքի կանչեց և առաջարկեց վերջին գիշերը անցնել իր նախկին բնակարանում եւ առաւօտեան ուղեւորուել մայրաքաղաք: Սակայն այս լոկ թակարդ էր: Գոնթար դրժեց իր խոստման եւ գիշերը խողխողել տուաւ միամիտ հիւրին:

Սպանուածի կինը եւ քոյրը ընկան Գոնթարի ձեռքը, որոնց սակայն պատուով պահեց եւ կնոջը, Պրիեկտային, ստիպեց գրել կայսրին, որ Գոնթարը միանգամայն անպարտ է իր ամուսնու, Արիոբինդի, կորստեան համար եւ որ ինքը զոհ է նրա վերաբերմունքից: Գոնթար յոյս ունէր այս կերպով թագաւորին հաճոյանալ եւ նրա հաւանութիւնը առնել ամուսնանալու Պրիեկտայի հետ հարուստ օժիտով:

Արիոբինդի հետ Արտաւանը եւս հնազանդուել էր Գոնթարին: Զօրավարի սպանութիւնը եւ նրա ընտանիքի գերութիւնը դէպքեր էին, որ չէին կարող չազդել դիւրազգաց հայ իշխանի վրայ: Պատժել չարագործին իր կրկնակի ոճիրի, բռնութեան եւ սպանութեան, համար Արտաւանը համարում է մի սրբազան պարտք: Նա խորհում է սպանել Գոնթարին:

Արտաւանի մտերիմներն էին իր ազգական Գրիգորը, որ թւում է թէ իր քեռորդին էր, Վասակ Մամիկոնեանի որդին, եւ իր նիզակակիրը՝ Արտաշիրը, հաւանօրէն, նոյնպէս Արշակունեաց տոհմից: Արտաւանը իր գաղտնիքը մերկացաւ այս երկու անձերին:

Մամիկոնեան զաւակը իսկոյն բորբոքուեց իր ցեղին յատուկ արկածախնդրական ոգով և սկսեց աւելի եւս դրդուել իր քեռուն, վառել նրա մէջ փառասիրական տենչերը:

Ահա ինչպէս էր խօսում Գրիգորը. «Արտաւան, այժմ քեզնից է կախուած միայն օգտուել քեզ վիճակուած առիթից եւ պսակել գլուխդ փառքով, որպէս Վելիսարը, եւ անգամ մեծապէս գերազանցել նրան: Արդարեւ, Վելիսարը եկաւ այստեղ մեծաքանակ զօրքով, խոշոր դրամական միջոցներով, ընկերակցութեամբ բազմաթիւ աշխատակիցների եւ զօրականների: Թողնենք ուժեղ նաւատորմը, որ այժմ մեզ անմատչելի է: Նա ունէր իր ձեռքի տակ զօրաւոր հեծելագունդ, շատ եւ շատ գործիքներ եւ ամեն տեսակ պատրաստութիւն, վայել հռովմէական պետութեան արժանապատ-

ութեան: Այսպիսի պայմաններում Վելիսարը նուաճեց Լիբիան եւ այն մեծ դժուարութեամբ:

Սակայն նրա ջանքերը ի զուր անցան: Այժմ այնպիսի դրութեան մէջ է պետութիւնը, կարծես ոչինչ չէ կատարուել, բացի այն որ Վելիսարի յաղթութիւնները թանգ նստան անհամար մարդկանց կորուստով եւ պետական միջոցների վատնումով ու ստեղծեցին մի վիճակ, որ պետութիւնն անկարող է այլեւս պաշտպանել իր շահերը: Ճար անել այս կացութեան, բարուոքել կայսրի գործերը կարող ես միմիայն դո՛ւ: Ամեն ինչ կախուած է քո տրամադրութիւնից: Պէտք չէ մոռնաս մանաւանդ, որ դու Արշակունեաց տոհմից ես: Խորհի՛ր, մարդիկ, որ ազնուական ծագում ունեն, պարտաւոր են ամեն տեղ եւ ամեն ժամանակ փայլել արիութեամբ: Դու արդէն մեծ եւ քաջ գործեր ես կատարել ազատութեան համար: Տակաւին երիտասարդ, դու սպանեցիր Ակակին, Հայաստանի կառավարչին, եւ Սիտտային, հռովմէական սպարապետին: Անցար Խոսրով թագաւորի կողմը եւ մասնակցեցիր նրա արշաւանքներին ընդդէմ կայսրի:

Արդ, քանի որ այդպէս կտրիճ ես եղել, քո պարտքն է՝ թոյլ չտալ, որ արբած չունը իշխէ Հռովմէական կայսրութեան: Ցոյց տուր այժմ, ո՛վ քաջ, որ բոլոր նախկին սխրագործութիւններդ կատարել ես միմիայն հոգուդ ազնուութիւնից եւ արիութիւնից: Ինչ վերաբերում է ինձ եւ Արտաշիրին, մենք քո ձեռքին ենք եւ կ՝օժանդակենք քեզ մեր բոլոր ոյժերով»:

Պատմագրի յերիւրած ճառը ամեն պարագայի բնորոշում է հայերի լարուած դրութիւնը Գոնթարի բանակում: Գոնթար գժտուել էր իր դաւադրութեան մասնակից Անտալ մաւրուս իշխանի հետ: Հակառակ պայմանի նա բաժին չէր հանել Անտալին յաղթուած թշնամու գոյքից եւ զինուորներից: Գոնթար բաւականացել էր միայն Արշոբինդի գլուխը ղրկելով Անտալին որպէս նուէր: Մաւրուս իշխանը գայրացած լքել էր արդէն իր երրեմնի զինակցին եւ միացել կայսերական զօրքերի մնացորդներին Բիզակում:

Գոնթար պատուիրեց Արտաւանին գնալ Անտալի վրայ եւ ջարդել նրա ոյժերը: Արտաւան արդարեւ յաղթեց Անտալին եւ ի փախուստ դարձրեց նրա զօրքը: Սակայն փոխանակ հետապնդելու, Արտաւան հրամայեց իւրայիններին յետ դառնալ: Գոնթարի զինակիրներից մէկին, Ուլիթէ(ոս) անունով, այս բանը կասկածելի թուաց: Ուզում էր ամբաստանել Արտաւանին որպէս դաւաճանի: Արշակունի իշխանը հարկաւոր բացատրութեամբ ցրեց ամեն մի կասկած եւ

միեւնոյն ժամանակ խորհուրդ տուեց Գոնթարին ելնել աւելի մեծ զօրքով ընդդէմ վտանգաւոր թշնամու եւ ջախջախել ընդմիշտ նրա ոյժերը:

Գոնթար վճռեց հետեւել Արտաւանի խորհրդին: Արշաւանքի նախօրեակին նա մեծ ինչոյք սարքեց եւ հրաւիրեց բոլոր զօրականներին, նրանց թւում էր եւ Արտաւանը իր մերձաւորներով:

Սեղանը յարդարուած էր մեծ դահլիճում, ուր հնուց կային երեք բազմոց: Առաջնի վրայ բազմեց ինքը Գոնթար իր համախոհներով, Արտաւանը եւ Պետրոս անունով մի թրակացի, որ զինակիր էր եղած Սողոմոնի, Լիբիայի նախկին կառավարչի: Միւս երկու բազմոցները բռնեցին վանդալ զօրագնդի առաջնորդները: Բարեյաջող առիթ էր սպանելու բռնակալին: Այս միտքն էր որ խռովում էր Արտաւանին, վաղուց ծրագրած լինելով սպանութիւնը: Գրիգորին եւ Արտաշիրին, ինչպէս եւ իր միւս զինակիր հայերին յայտնեց իր մտադրութիւնը, եւ պատուիրեց, որ նրանք ճաշի ժամանակ, ինչպէս ընդունուած էր, կանգնեն իր ետեւը, սրերը ձեռքին:

Դաւադրութեան ծրագիրը մշակուած է պարագայօրէն: Նախայարձակը պիտի լինէր Արտաշիրը: Գրիգորը պատուէր ունէր ընտրել հայ տղաներից ամենաքաջերին եւ տանել արքունիք ու թողնել նախասրահում, Գոնթարի պահապանների կողքին: Կարիք չկար նրանց յայտնելու գործի էութիւնը: Նրանց ասելու էր, որ կասկած կայ թէ մի գուցէ Արտաւանին ճաշկերոյթի են հրաւիրել՝ նրա կեանքի դէմ դաւ սարքելու դիտաւորութեամբ: Ուստի նախազգուշութեան համար պէտք է որ Գոնթարի պահակի մօտ կանգնած սպասէին: Այլ եւ ձեւանալու էին իբրեւ թէ կատակ են անում, վահանները ձեռքերին խաղացնելով, վեր ու վայր ձգելով, պտտցնելով, եւ հէնց որ խառնաշփոթի աղաղակներ լսուէին ներսից, պէտք է վահանները հագած՝ օգնութեան վազէին:

Բուն սպանութեան գործը յանձնուած էր Արտաշիրին որ Գրիգորի հետ որպէս թիկնապահ կանգնելու էր Արտաւանի ետեւը սեղանի շուրջը: Այս դիրքում թիկնապահները իրաւունք չունէին վահան կրելու: Ուստի Արտաշիր պաշտպանութեան մի այլ միջոց խորհեց: Սլաքի կոթերը կոորտելով շարեց ձախ արմուկի վրայ, փաթաթեց կաշիով եւ սքօղեց վերարկուի թեզանիքով: Կռուի ժամանակ այդ ձեռքը կարող էր վահանի տեղ ծառայել հակառակորդի հարուածի դէմ:

Այս պատրաստութիւնից յետոյ Արտաշիր դարձաւ Ար-

տաւանին հետեւեալ խնդրով. «Ահա այս սրովս կը հարուածեմ Գոնթարին, իսկ թէ հետեւանքը ի՞նչ կը լինի, չգիտեմ: Արդեօք Աստուած, բարկանալով բռնակալի վրայ, կ՚օգնէ՞ ինձ այս խիզախ գործում, թէ ուզենալով ինձ պատժել որեւէ մեղքիս համար կը խանգարէ ձեռնարկս: Իսկ դու, եթէ տեսնես որ հարուածս մահացու չէ, մի կասիր իսկոյն խողխողել ինձ նոյն սրով: Ապա թէ ոչ կարող են ինձ կտտել եւ բերանիս խօսք հանել, որ ոճիրը կատարել եմ քո խորհուրդով եւ այսպէս կը կորչեմ ես նշաւակութեան մահով եւ կը կործանեմ քեզ ակամայ մատնութեամբ»:

Արտաշիր, Գրիգոր եւ մի ուրիշ նիզակակիր մտան սրահը եւ կանգնեցին Արտաւանի ետեւը: Հացկերոյթը սկսուեց: Արտաշիրը մտահոգ սպասում էր յարմար վայրկեանին: Ահա արդէն ձեռքը տանում էր դէպի սուրը: Սակայն Գրիգորը չթողեց եւ ասաց հայերէն լեզուով, թէ Գոնթարը դեռ զգաստ է, բաւական չափով գինի չէ խմել:

Արտաշիր հառաչ քաշեց եւ ասաց. «Լսի՛ր, ինձ խանգարեցիր այն պահուն, երբ ես սիրտ էի առել հարուածելու. լաւ չարիր»:

Խրախճանքը շարունակւում էր, Գոնթարն արդէն զբաւարթացել էր գինուց եւ առատաձեռնօրէն սեղանից բաժին էր հանում զինակիրներին: Ով որ ստանում էր, հեռանում էր դուրս սրահը, այնտեղ ճաշակելու: Բոլորը քաշուեցին, մնացին երեք հոգի, որոնցից մէկն էր վերեւ յիշած Ուլիթէ(ոս)ը:

Արտաշիր եւս դուրս էր եկել իր ընկերների հետ: Ցանկարծ միտքը եկաւ, որ եթէ սուրը պատեանից հանէր, ոչ ոք նրան չէր կարող արգելել: Անմիջապէս սուրը հանեց, պատեանը մի կողմը նետելով, թեւի տակ ծածկեց վերարկուով եւ մտաւ դահլիճը: Մօտեցաւ Գոնթարին, որպէս թէ գաղտնիք ունէր յայտնելու:

Արտաւանը նկատեց եւ սկսեց յուզուել: Ներքին կռիւը վոթորկում էր նրա հոգեկան անդորրորութիւնը: Գլուխը թափահարում էր, գունատւում եւ թւում էր թէ միեւնոյն ժամանակ ոգեւորուած էր գործի փառահեղութեամբ:

Թրակացի Պետրոսը գլխի ընկաւ, բայց ոչինչ չասաց, որովհետեւ ի ներքուստ համակրում էր գործին:

Երբ որ Արտաշիրը մօտեցաւ Գոնթարին, սպասաւորներից մէկը հրեց նրան, Արտաշիրը թեքուեց այնպէս որ սպասաւորի աչքին ընկաւ մերկացած սուրը. «Այդ ի՞նչ է, բարեկամ», գոռաց նա: Գոնթար ձեռքը աջ ականջին դրած՝

դարձաւ դէպի Արտաշիրը: Ճիշտ այդ պահին իջաւ սուրը նրա գլխին, եւ կտրեց գանկի կէսը մատերի հետ:

Պետրոսը բարձրաձայն խրախուսում էր փչրել մեծագոյն չարագործին:

Գոնթար ցատկեց տեղից: Արտաւանը, որ նստած էր ոչ հեռու, հանեց երկայրի սուրը եւ մխեց նրա աջ կողքը մինչեւ կոթը եւ թողեց ցցուած: Գոնթարը ի զուր փորձեց վեր կենալ: Հարուածը մահացու էր եւ նա թաւալեց տեղնուտեղը:

Ուլիթէ(ոս) շարժեց սուրը, որ զարկէ Արտաշիրին: Սակայն վերջինս դէմ դրաւ սլաքի կտորներով զրահաւորուած ձեռքը, հարուածը յետ մղեց եւ ինքը յարձակուելով սպանեց Ուլիթէին առանց դժուարութեան:

Արտաւանը եւ Պետրոսը վերցրին մէկը՝ Գոնթարի եւ միւսը՝ Ուլիթէի սուրը եւ սկսեցին կոտորել մնացած նիզակակիրներին: Բարձրացաւ, բնականօրէն, մեծ ժխոր: Այն հայերը, որ կանգնած էին դուրսը Գոնթարի մարդկանց կողքին, հէնց որ լսեցին աղմուկը, սուրացին ներս, ինչպէս որ հրամայուած էր, եւ ջարդեցին Գոնթարի կողմնակից Վանդալ իշխաններին առանց լուրջ դիմադրութեան:

Գոնթարի պահակը, կատարուած եղելութեան առաջ, ստիպուած էր յարել յաղթական հայերին:

Այսպիսի եղերական վախճանով կործանուեց ապրստամբ Գոնթարը, թագաւորելով միմիայն երեսուն եօթն օր: Յուստինիանոսի տասներեւիններորդ տարին էր, այսինքն՝ 545 թիւը:

Արտաւան այս գործով մեծ անուն հանեց ամբողջ կայսրութեան մէջ: Արիոբինդի կինը, Պրիեկտան, պարգեւեց նրան մեծ գանձ, իսկ կայսրը նշանակեց Լիբիայի ընդհանուր սպարապետ:

Շատ չանցաւ, եւ Արտաւանը խնդրեց կայսեր թոյլատրել վերադառնալ մայրաքաղաք: Կայսրը կատարեց խնդիրը եւ նրա տեղ նշանակեց Լիբիա մի ուրիշ անձն, որ կոչւում է Յովհաննէս, եղբայր Պապի: Կարծիք կայ, որ սա եւս հայ էր: Բայց հարցը մեր ներկայ խնդրից դուրս է:

Մայրաքաղաքում սկսւում է Արտաւանի կեանքի մի նոր արարը:

* * *

Արտաւանը, Արշակունեաց վտարանդի զաւակը, գեղեցիկ էր եւ բարեկազմ, կեցուածքը՝ ազնուական, շարժումները՝ վեհ, խօսքը՝ չափած: Լիբիայի արկածից յետոյ ժողո-

վերդական պաշտելի հերոս դարձաւ: Պերճ մայրաքաղաքը խոնարհել էր նրա առաջ:

Անտարբեր չէր դէպի քաջարի Արտաւանը մանաւանդ Պրիեկտա, Արիոբինդի կինը, որին փրկել էր հայ կտրիճը Գոնթարի անհաճոյ գրկից: Արտաւանը սիրահարուած էր: Տակաւին Լիբիայում իրար խօսք էին տուել: Երբ Պրիեկտան վերադարձաւ իր գերութիւնից մայրաքաղաք, Արտաւանը քիչ յետոյ հետեւեց նրան: Թողեց Լիբիայում այն բարձր պաշտօնը, որ արդար գիւնն էր իր մեծագործութեան: Այժմ Արտաւանը համարւում էր արդէն Պրիեկտայի նշանածը եւ ցանկանում էր ամուսնանալ:

Բոլոր նշաններից երեւում է որ Արտաւանի տարփանքն է իսկապէս խմորել Գոնթարի սպանութեան դաւադրութիւնը: Պրիեկտայի սէրն է, որ մղել է նրան դէպի եղեռնը: Ժամանակակից պատմագիրը ոչ մի բանաւոր հիմք չէ յիշում Արտաւանի գործի համար: Ի՞նչ էր սպանութեան իրական շարժառիթը, մնում է մութ: Պէտք է ասել, որ Պրոկոպ պատմագիրը մի տեսակ հեղնանքով է պատմում Լիբիայի արկածը: Հեգնանք, որ երբեմն ծաղրի է փոխւում: Ինքը յայտնի Վելիսար զօրավարի քարտուղարն է եղել, մեծ պաշտամունք ունի դէպի իր տէրը եւ նախանձով է վերաբերում դէպի ամեն մի անձ, որ կարող էր նսեմացնել Վելիսարի անունը որեւէ սխրագործութեամբ: Այս է պատճառը, որ պատմագրի հեգնութիւնը միշտ միեւնոյն աստառն ունի, որ Արտաւանը կամ Արտաշիրը ուրիշ մղում չունէին իրենց դաւադրութեան քան աշխարհք զարմացնել, Վելիսարին նմանել: Պատմագիրն այս դէպքում հանդէս է գալիս, անտարակոյս, որպէս մի հետեւակ հոգեբան քան անաչառ դիտող: Նա տրամադիր չէ արժէք տալու Արտաւանի եւ Պրիեկտայի սիրային մտերմութեան, այլ ընդհակառակը աշխատում է վարկաբեկել նրանց սէրը: Արտաւան որպէս թէ յարել էր Պրիեկտային, յուսալով որ այնուհետեւ հեշտ է ձեռք մեկնել կայսերական թագին: Ցիշենք, որ Պրիեկտան Յուստինիանոսի քրոջ աղջիկն էր, ուրեմն կայսերական տանից էր: Իսկ Պրիեկտայի մասին ասում է, որ ոչ թէ իսկական սէրն էր, այլ աւելի երախտագիտութեան զգացումը, որ տանում էր նրան դէպի Արտաւանը, իր ազատարարը: Նա էր, որ Պրիեկտայի ամուսնու վրէժն էր լուծել, նա էր, որ ազատել էր իրեն՝ Պրիեկտային Գոնթարի ճիրաններից: Թէ յիրաւի սիրային կիրքը կարող էր ներշնչած լինել Լիբիայի դուքը, երեւում է նրանից, որ նոյն կիրքը ընդունակ եղաւ գրգռելու Արտաւանին դէպի անհամեմատ աւելի խիզախ եւ աւելի մեծ

գործ: Այդ էր դաւադրութիւն Յուստինիանոսի դէմ իր մայրաքաղաքի մէջ:

Պատմագիրը սկսում է Արտաւանի յանդուգն ծրագրի պատմութիւնը մի բարոյական խորհրդածութեամբ: Երբ մարդ բարձրանում է անսպասելի կերպով բախտի թեւերի վրայ, նա չի կարողանում կանգ առնել ստացած երջանկութեան վրայ. նայում է յառաջ, ձգւում է աւելի հեռուները, մինչեւ որ կորցնում է ամեն ինչ տարապարտուց: Արտաւանը հասել էր փառքի բարձունքին: Կայսրը զարդարեց նրան մեծամեծ պատիւներով: Լիբիայի զօրապետութիւնը թողնելուց յետոյ նա նշանակուեց մայրաքաղաքի ոյժերի գլխաւոր: Կայսրը պարգեւեց հիւպատոսութեան պատիւ: Բախտը ժպտում էր նրան ամեն կողմից: Մնում էր միայն Պրիեկտայի սէրը վայելել, եւ այդ չյաջողեց:

Արտաւանը ամուսնացած էր երիտասարդ հասակում: Կինը հայ էր և մինչեւ իսկ Արշակունեաց ցեղից: Արտաւանը թողել էր նրան իր հայրենիքում: Կինը հլու՝ տարել էր անջատման ծանրութիւնը: Բայց երբ լսեց որ Արտաւանը շնորհիւ իր քաջագործութեան, հանգամանքների յաջող բերումով, հոչակուել էր ամբողջ կայսրութեան մէջ, չդիմացաւ այլեւս իր անփառունակ վիճակին եւ ճանապարհ ընկաւ դէպի Բիւզանդիա: Նա ներկայացաւ կայսրուհուն եւ խնդրեց նրան դարձնել իրեն իր ամուսնուն: Կայսրուհին, որ ամեն կերպ հովանաւորում էր անբախտ եւ լքուած կանանց, ստիպեց Արտաւանին հաշտուել կնոջ հետ և առնել նրան իր մօտ:

Պրիեկտան անցաւ ուրիշի ձեռքը: Սիրելի կնոջ կորուստը դառն կսկիծ թողեց Արտաւանի սրտում: Խոր խոցուած էր հայ իշխանը: Զայրացած յաճախ լսելի էր անում իր տրտունջը, որ այնքան ծառայութիւնների փոխարէն, որ մատուցել էր կայսրութեան, թոյլ չտուին անգամ առնել սիրած կնոջ եւ բռնադատեցին ապրել մէկի հետ, որ ատելի է եւ թշնամի իրեն:

Արտաւանը տանջւում էր ներքուստ: Անկարող էր ամոքել իր ցաւը: Հպարտ իշխանը վիրաւորուած էր, խայթուած: Ատում էր զրկանքի հեղինակներին: Հազիւ սանձում էր իր բորբոքուած կրքերը, որ սպառնում էին պայթելու:

Կար մի ուրիշ անձ, որ նոյնպէս դժգոհ էր եւ լի անհուն ատելութեամբ դէպի կայսրը: Դա իշխան Արշակն էր, որ նոյնպէս հայ էր եւ անգամ ազգակից Արտաւանի, այսինքն Արշակունեաց տոհմից էր:

Արշակը եւս նոր էր հեռացել հայրենիքից եւ թւում է թէ Արտաւանի հետ միաժամանակ եւ միեւնոյն պայմաննե-

րում: Ասում էին, որ Արշակը մեղանչել էր Յուստինիանոսի դէմ: Իբրեւ թէ միաբանելով Պարսից Խոսրով թագաւորի հետ, փորձել էր պետական յեղաշրջում յառաջ բերել կայսրութեան մէջ: Երեւի, ակնարկը վերաբերում է կայսրի դէմ լարուած որեւէ որոգայթի: Ինչ եւ է, կայսրը ներողամիտ էր գտնուել Արշակի նկատմամբ, ոչ դոյքն էր յափշտակել և ոչ էլ բանտ էր ձգել: Սակայն ծանր վիրաւորանք էր հասցրել նրան: Հրամայել էր ծեծել մտրակով, եւ յետոյ ուղտի վրայ դրած՝ ման ածել քաղաքը:

Արշակը խորապէս առնուած էր կայսեր վարմունքից և հնար էր որոնում խարդաւանել նրա եւ պետութեան դէմ: Բնական է, որ կարեկցութիւն գտաւ նախ եւ առաջ իր հայրենակցի, Արտաւանի, կողմից:

Արշակը սկսեց այնուհետեւ դրդուել Արտաւանին, խայթելով նրա ինքնասիրութիւնը, շարժել, ոտի հանել նրան Յուստինիանոսի դէմ: Նախատում էր Արտաւանին նոյնիսկ այն բանի համար, որ նրա փառք ու պարծանքն էր նկատւում: «Ցղամարդութիւնը, որ ցոյց տուիր, ասում էր Արշակը, բնաւին անդէպ էր եւ վայել միմիայն կնոջ: Հերոսի անուն վաստակեցիր ուրիշների թշուառութեան գնով, հռչակ ստացար որպէս տապալիչ ապօրինի իշխանութեան, մինչ յօժարեցիր սպանել ի զուր տեղը Գոնթարին, որ բարեկամդ էր եւ հիւրասիրողդ: Իսկ այժմ արիութիւնդ կորցրած՝ նստել ես այստեղ վեհերոտ, այն ինչ մեր հայրենի երկիրը, բռնուած ամենուրեք պահնորդ զօրքերով, հեծում է անլուր հարկերի ծանրութեան տակ: Հօրդ սպանեցին բանակցութեան եւ հաշտութեան հրապուրով, ցեղակիցներիդ ստրկացրին գլխովին, և այժմս ցրում են նրանց շարունակ կայսրութեան բոլոր ոլորտները: Այսպիսի պայմաններում ահա, դու Արտաւան, կարծում ես որ մեծ բան է, որ հռոմէական զօրավար ես և կամ կրում ես հիւպատոսի տիտղոս: Դու նոյն իսկ կարեկցութիւն չես ցոյց տալիս ինձ, որ ազգականդ եմ, այն դառնագին անարգանքի համար, որ ես կրեցի: Ինչ վերաբերում է ինձ, ես ցաւում եմ, ո՛վ բարեկամ, որ այնպէս անբախտ եղար կանանց խնդրում, մինչ մէկից զրկուեցիր անարժանապէս, իսկ միւսի հետ ապրել հարկադրուեցիր հակառակ կամքիդ: Այս բոլորից յետոյ ի՞նչ կասկած, որ ամեն ոք, որ դոյզն ինչ ինքնասիրութիւն ունի, չի սասանի, որքան էլ անվճռական լինի կամ երկչոտ, ձեռք բարձրացնել Յուստինիանոսի վրայ, որը նստած իր սենեակում առանց թիկնապահների, օրն ի բուն մինչեւ խոր գիշերը ծերունի

եպիսկոպոսների հետ ծամծմում է եռանդով քրիստոնէական դաւանանքները»:

Այսպիսի ճառերով Արշակը գլխից հանեց Արտաւանին: Երբ տեսաւ որ մեծ զօրավարը կակղել է, դիմեց մի ուրիշ հայի, որ Պարսկական Հայաստանիցն էր, եւ որի անունն էր Քանարանդ, եւ ջանաց նրան եւս խառնել գործին: Քանարանդը երիտասարդ տղայ էր, շատ գեղեցիկ, բայց ոչ խելահաս եւ բնաւորութիւնը բաւականին երեխայական էր: Դժուար չէր նրան համոզել:

Արշակը երկու հայրենակիցների հաւանութիւնը երաշխաւորելուց յետոյ, փորձեց թեքել իր կողմը նաեւ Գերմանին, որ կայսեր եղբօրորդին էր եւ դրան ազդեցիկ անձերից մէկը:

Արտաւանի հետ խօսելիս Արշակը ակնարկել էր որ Յուստինիանոսը մէն մենակ է, ազգականների հետ գժտուած եւ ուրեմն օգնութիւն յուսալ նրանցից չէ կարող: Ակնարկը վերաբերում է խսկապէս Գերմանին: Սրա եղբայրը մեռնելիս՝ թողել էր իր ժառանգութիւնը Գերմանին պայմանով որ իր կինը եւ աղջիկը ստանան իրենց օրինական բաժինը: Յուստինիանոսը միջամտել էր, հովանաւոր ձեւանալով հանդուցեալի կնոջ եւ դստեր շահերի: Այս առթիւ Գերմանի յարաբերութիւնները կայսրի հետ լարուել էին եւ անգամ դարձել թշնամական:

Գերմանը երկու որդի ունէր, երկուսն էլ տակաւին երիտասարդ, տաքարիւն եւ դրդռուած կայսեր դէմ: Արշակը յոյս ունէր, ինչպէս հաւատացնում էր Արտաւանին, որ այս երկու եղբայրները ոչ միայն կը միանային դաւադրութեան, այլ եւ նախաձեռնութիւնը իրենց վրայ կառնէին: Աւագ եղբայրը, Յուստին, տղայ էր, մօրուսը հազիւ բողբոջած, բայց յայտնի էր ձեռնարկու եւ ներհուն ոգւով: Հիւպատոսութեան տիտղոսի էր արժանացել:

Սրան դիմեց Արշակը եւ խնդրեց ժամադրութիւն գաղտնի եւ կարեւոր խօսակցութեան համար: Հանդիպումը տեղի ունեցաւ եկեղեցու մէջ:

Արշակը նախ երդում տուաւ Յուստինին, որ խօսակցութիւնը իրենց մէջ կը մնայ եւ ոչ ոքի՞չի յայտնի բացի թեբեւս իր հօրից: Այնուհետեւ սկսեց պարսաւել, երեսովը տալ, որ այնպէս անտարբեր է դէպի քաղաքական կեանքը: Կայսեր մօտ ազգական լինելով, ներելի է համարում, որ պետական բարձր պաշտօնները վարեն աննշան եւ ստորին ծագումով անձեր: Ինքը պարապ նստած գոհանում է հանդիսատեսի ամուլ դերով: Կայսրը պարզապէս քամահրում է,

բանի տեղ չէ դնում ոչ միայն իրեն Յուստինին, այլ անգամ հօրը, որ անպայման վաստակաւոր ոք է, եւ կրտսեր եղբօրը, որին վիճակուած է մնալ ամբողջ իր կեանքում մանաւոր մարդու համեստ դերի մէջ: Շարունակելով իր խօսքը, Արշակը յիշեցնում է Յուստինին, ինչպէս իր ապիկարութեան պատճառով չկարողացաւ անգամ ստանալ իր հօրեղբօր ժառանգութիւնը, որ կտակով իրեն էր թողած եւ որի մեծ մասը ձեռքիցը ընկաւ շնորհիւ կայսեր անարդար միջամտութեան: Արշակի կարծիքով, Յուստինի եւ իւրայիններին վիճակը աւելի եւս պիտի վատթարանայ, երբ Իտալիայից վերադառնայ Վելիսարը, որ արդէն, լուրերի նայելով, ճանապարհին է եւ հասել է Իլիրիա:

Այսպիսի դրդռիչ ճառերով Յուստինի միտքը պղտորելուց յետոյ Արշակը առաջարկեց նրան ծառանալ Յուստինիանոսի դէմ, միանալով ծրագրուած դաւադրութեան: Պարզեց գործի էութիւնը, չծածկեց նաեւ ինչ որ խօսել էր Արտաւանի եւ Քանարանգի հետ:

Յուստինը լսելով այս բոլորը չփոթուեց, այլայլուեց, եւ յայտնեց պարզ եւ պարզ, որ ոչ ինքը եւ ոչ իր հայրը չեն կարող այդպիսի առաջարկ ընդունել:

Արշակը պատմեց ամեն ինչ Արտաւանին, իսկ Յուստինը լուրը տարաւ իր հօրը: Վերջինս հաղորդեց որդու խօսակցութիւնը պալատական զօրքերի պետին՝ Մարկելլ անունով անձին: Գերման եւ Մարկելլ խորհուրդ արին եւ որոշեցին, որ վաղաժամ է եւ իրենց համար թերեւս վտանգաւոր այս մասին զեկուցում տալ կայսեր:

Մարկելլը լրջմիտ, ծանր բնաւորութեան տէր մարդ էր· սիրում էր գործել լռելեայն: Անշահասէրի համբաւ ունէր իր պաշտօնէութեան մէջ, թեթեւամիտ ճառերի եւ գործերի կողմնակից չէր: Մասնաւոր կեանքում եւս բաւականին խստակեաց էր, հեռու զուարճութիւններից և խրախճանքներից: Նախանձախնդիր էր մանաւանդ արդարութեան եւ ճշմարտութեան: Ահա այս մարդն էր, որ չթողեց որ գործը հասնի կայսեր: «Ի՞նչ օգուտ քեզ, ասաց նա Գերմանին, մատնութիւն անել այս գործում: Եթէ փորձես խօսել կայսեր հետ ծածուկ, Արտաւանի կուսակիցները իսկոյն եւ եթ պէտք է կասկածեն, որ մատնիչը դու ես: Եւ եթէ Արշակը փախչի, ամբաստանութիւնը կը մնայ անապացոյց: Գալով ինձ, ես սովոր չեմ հաւատ ընծայել մի բանի, որ ինքս անձամբ չեմ ստուգել, եւս առաւել տեղեկացնել կայսեր: Կը ցանկայի ականջովս լսել այդ մարդու խօսակցութիւնը· կամ սարքելու է այնպէս որ լսի իմ վստահելի եւ հաւատարիմ անձերից մէկը»:

Գերմանը պատուիրեց իր որդուն, Յուստինին, կատարել Մարկելլի ցանկութիւնը: Սակայն Յուստին այլեւս չէր կարող յուսալ տեսակցել Արշակի հետ, քանի որ բացէ ի բաց մերժել էր նրա առաջարկը: Խորհեց դիմել Քանարանգին և նրան հարցնել, արդեօք Արտաւանի գիտութեա՞մբ էր Արշակը եկել իր մօտ:

«Այսպիսի գործերում, դարձաւ նա Քանարանգին, իմ կողմից մեծ անզգուշութիւն կը լինէր վստահանալ Արշակի նման մի մարդու: Այլ է, եթէ դու հաճես բերանդ բանալ, այն ատեն, թերեւս, միասին ընդհանուր ոյժերով գործը գլուխ բերենք»:

Քանարանդ նախապէս Արտաւանի հաճութիւնն առաւ եւ ապա կրկնեց Յուստինին ինչ որ իրեն Արշակն էր ասել: Յուստինը ձեւացաւ, որպէս թէ հաւանեց ծրագիրը եւ խոստացաւ համոզել իր հօրը եւս:

Հայրը, Գերմանը, ցանկացաւ անձամբ բանակցել Քանարանգի հետ: Նշանակեցին տեսակցութեան օրը: Գերմանը իմաց տուաւ Մարկելլին եւ խնդրեց, որ մի վստահելի մարդ ղրկէ լսելու Քանարանդին իր ականջով: Մարկելլը գործը յանձնեց Ղեւոնդ անունով մի անձի, որ յայտնի էր արդարասիրութեամբ եւ ճշմարտախօսութեամբ: Գերմանը սրան թաղցրեց իր տանը վարագոյրի ետեւ եւ հնարաւորութիւն տուաւ նրան հետեւելու Քանարանգի խօսակցութեան: Անգէտ, որ ծուղակի մէջ է, Քանարանդը պատմեց ինչ որ խորհել են Արտաւանը, Արշակը եւ ինքը: Ցիչեց, որ վտանգաւոր են համարել գործը սկսել Վելիսարի բացակայութեան, երկիւղ կրելով, որ սա քաղաք հասնելով կարող է իրենց դէմ ելնել եւ վնասել: Մինչեւ անգամ եթէ յաջողեն տապալել Յուստինիանոսին նախքան Վելիսարի դայր, դարձեալ վստահ չեն, որ Վելիսարը անգործ մնայ: Հաւանական է, որ մեծ զօրք կը հաւաքէ Թրակիայում եւ կը յարձակուի մեզ վրայ: Ահա ինչու աւելի նպատակայարմար են նկատել դաւադիրները՝ սպասել Վելիսարի գայստեան: Այն ատեն միայն նշանակուած օրը սուսերամերկ եւ յանկարծակի խուժել դէպի արքունիք, երեկոյեան դէմ երբ մութը կը կոխի, եւ խողխոդել կայսրին, Մարկելլին եւ Վելիսարին միաժամանակ: Այսպիսով ամեն մի վտանգ փարատուած կը լինի եւ յաղթական դաւադիրները տէր կը դառնան գահին եւ տէրութեան:

Թաղնուած Ղեւոնդը լսեց այս բոլորը եւ հաւատարմութեամբ տեղ հասցրեց: Սակայն Մարկելլը պատշաճ չգտաւ

անմիջապէս զեկուցանել կայսրին: Հապճեպ վճռականութիւնը կարող էր վնասել Արտաւանին տարապարտուց: Մարկելլը արդարասէր էր: Գերմանը տեսնելով, որ Մարկելլը ձգձգում է գործը եւ վախենալով որ ինքն էլ կասկածի տակ կ'ընկնի, չտապեց բանալ գաղտնիքը Կոստանդին եւ Բուզ անձերին:

Գերմանի երկիւղն արդարացաւ: Մի քանի օրից յետոյ լուր եկաւ, որ Վելիսարը մօտ է քաղաքին: Մարկելլը, որ հաւանօրէն նրա գալուն էր սպասում, պատմեց կայսեր դրծի էութիւնը: Արտաւանի մարդիկը խսկոյն եւ եթ կալանաւորուեցին: Նշանակուեց քննութիւն: Երբ հարցուփորձը վերջացաւ եւ արդիւնքը արձանագրութեամբ ներկայացրին կայսրին, սա նշանակեց իր պալատում յատուկ ատեան ծերակուտականներից: Ատեանը մեղապարտ հռչակեց Գերմանին եւ իր որդուն, Յուստինին: Պատմագիրը, որ ամեն կերպ աշխատում է սպիտակացնել այս երկու անձերին, ստիպուած է խոստովանել, որ բարձր ատեանը ամբաստանեց նրանց: Սակայն երբ Կոստանդինը և Բուզը վկայեցին որ Գերմանն իրենց իրազեկ էր արել սկզբից եւ եթ, դատարանը անպարտ հռչակեց ամբաստանուածներին: Հանդէս եկաւ նաեւ Մարկելլը, թէեւ ուշ, եւ խոստովանեց, որ ինքն է պատասխանատուն, որ չհրապարակեց ոճիրը իր ժամանակին, այլ քաշքշեց միմիայն նրա համար, որ մօտէն ծանօթանայ գործի բոլոր հանգամանքներին: Հաւատացրեց, որ Գերմանն ու Յուստինը իրեն իմաց էին տուել վաղօրօք առանց բան թաղցնելու:

Մարկելլը այսպիսով փրկեց Գերմանին եւ Յուստինին: Ծանրութիւնը մնաց Արտաւանի վրայ: Կայսրը խլեց նրանից բոլոր պաշտօնները եւ պատիւները, բայց ուրիշ անախորժութիւն չպատճառեց ոչ նրան եւ ոչ ընկերներին: Անդամ սովորական բանտ չձգեց նրանց, այլ պահեց ի դիպահոյ իր մօտ պալատում:

Տարին չլրացած կայսրը ներումն շնորհեց Արտաւանին:

Թւում է որ դաւադրութեան պատմութիւնը մեղանչում է ճշմարտութեան դէմ: Պատմիչը Արտաւանի համակիրներից չէ եւ ճշմարտութիւնը գոհել է ինչ ինչ նկատումների: Արդարեւ, կայսրը նշանակում է քննիչ մասնաժողով, որ ուսումնասիրէ գործը եւ կազմում է մանրամասն արձանագրութիւն: Բարձրագոյն ատեանը քննութեան հիման վրայ ճանաչում է յանցաւոր Գերմանին եւ Յուստինին: Եւ յանկարծ հրապարակ են գալիս վկաներ՝ Բուզը եւ Մարկելլ, մարդիկ, որ ամենից յառաջ պիտի հարցաքննուէին, մնում են լուռ եւ հանգիստ եւ խօսում են, երբ արդէն վճիռն արձակուած է:

Աւելի քան կասկածելի դատավարութիւն է: Անշուշտ, յոյն պատմիչը մի բան ծածկել է ուզում, ուստի եւ ստիպուած է յեղյեղել դատավարութիւնը:

Գերմանն ու Յուստինը փոխադարձաբար ատելի էին կայսեր եւ կայսրուհուն: Գերմանի փեսան, Յովհանը, նոյն զգացումն ունէր եւ լի էր ոխակալութեամբ ընդդէմ Յուստինիանոսի, որ նենդօրէն սպանել էր նրա հօրեղբայր Վիտալիանին: Բուզը եւս ոչ մի հիմ չունէր սիրելու մանաւանդ կայսրուհուն: Դաւադրութիւնից հինգ տարի յառաջ, ուրեմն 543 թուին, կայսրը ծանր հիւանդացել էր գրեթէ մահամերձ: Բուզը եւ Վելիսարը անզգոյշ խօսքեր էին ասել, խրոխտացել էին, որ Յուստինիանոսի յաջորդի բախտը կախուած է իրենցից: Լուրը հասել էր կայսրուհուն: Մի օր սա կանչում է Բուզին արքունիք եւ յանկարծ հրամայում է ձգել նրան գետնափոր մի նկուղ, խաւար եւ անելք, ուր փակում էին մահապարտներին: Թշուառ Բուզը մնում է այս վիրապում երկու տարի եւ չորս ամիս: Դիպուածով լոյս աշխարհ է տեսնում, որպէս թէ մեռելութիւնից կենդանանում: Հասկանալի է որ այս անձը չէր կարող քնքոյշ սէր եւ հաւատարմութիւն ունենալ դէպի կայսերական տունը:

Արդ, երբ այսպիսի կասկածելի անձեր յիշւում են դաւադրական ձեռնարկի մէջ, դժուար է երաշխաւորել, որ նրանք անմեղ զոհեր լինէին: Հակառակ ենթադրութիւնը աւելի հիմնաւոր կը լինէր, ինչպէս եւ ցոյց տուաւ բարձրագոյն ատեանը:

Յիշուած անձերը հաւանօրէն մասնակից են եղել դաւադրութեան: Յետոյ ինչ ինչ պատճառներով, երկիւղից թէ մի այլ նկատումով, հրաժարուել են: Արշակի մի ակնարկից կարելի է եզրափակել, որ Գերմանը յուսադրուած է եղել, որ գահի թեկնածուն ինքը պիտի լինէր: Թերեւս հետագայում համոզուելով, որ դժուար է մրցել Արտաւանի հետ, անպատակ է համարել նրան գործակցել և ի զուր տեղը փորձանքի ենթարկել իր կեանքը:

Ամեն պարագայի Արտաւանի շնորհազրկութիւնը երկար չտեւեց: Վելիսարի հեռանալուց յետոյ Իտալիան ընկաւ նորից Գոթերի ձեռքը: Այստեղից արշաւեցին Սիկիլիա: Կայսերական նաւատորմը ճանապարհ ընկաւ նրանց դէմ Լիբերը(իոս)ի գլխաւորութեամբ: Սակայն կայսրը չուտով զգաց, որ սխալ էր գործել: Լիբերը դառամ հասակի մէջ էր և անվարժ զինուորական արուեստի: Ահա այդ ատեն էր, որ ներումն շնորհեց Արտաւանին, դարձնելով նախկին պաշտօն-

ները եւ պատիւները, եւ նշանակեց Թրակիայի ընդհանուր սպարապետ:

Լիբերին անմիջապէս յետ կանչեց եւ նրա տեղ առաքեց Արտաւանին: Նաւատորմը հասել էր արդէն Սիրակուզա, երբ Արտաւանը մեկնեց մայրաքաղաքից: Ուղեւորութիւնը աղետալի վախճան պիտի ունենար: Ծովը յուզուած էր եւ սոսկալի ալեկոծութիւնը պիտի կլանէր հռչակաւոր զօրավարին, եթէ մի հրաշքով կատաղի ալիքները չնետէին նրան Մելիտէ, արդի Մալտա, կղզին:

Այստեղից Արտաւանը դնաց Սիկիլիայի վրայ, մաքրեց կղզին Գոթերից եւ վերահաստատեց օրինական իշխանութիւնը:

Վերջին անգամ յիշատակւում է Արտաւան Իտալիայի Կրոտոն քաղաքի պաշարման առթիւ, երբ քաղաքացիք մարդ են ուղարկում Արտաւանին եւ աղերսում օգնութեան հասնել իրենց:

Հետագայ կեանքի մասին ոչինչ յայտնի չէ:

Դաւադրութիւնը եղաւ 548 թուին: Յաջորդ 549 թուին Արտաւանը ստացաւ ներում, իսկ 559 թուին Սիկիլիա էր: Այնուհետեւ լռում է պատմութիւնը:

Արտաւան իշխանի կեանքը նման է վէպի: Այդպէս են իսկապէս բոլոր այն կեանքերը, որոնք ծաւալւում են նոր ուղիների վրայ: Նորութիւն ասածդ ինքնին այլ բան չէ քան մի տեսակ պատահականութիւն: Բնական է որ նոր ճանապարհների վրայ հրաշագործող կեանքերն էլ հիւսուած են յաճախ դիպուածական, ասենք, արկածաւոր թելերից:

Սակայն Արտաւանի ուղին արկածախնդրական չէր. այն մի պատուանդան էր ապագայ մեծ արձանի որ կանգնելու էին հայերը Բիւզանդական պատմութեան մէջ:

Յուստինիանոսի օրից եւ նրա քաղաքականութեան հետեւանքով կայսրութեան դռները լայն բացուեցին հայութեան առաջ, առաւելապէս տիրող դասի, ազնուականութեան: Իրար ետեւից քաշուեցին արեւմուտք մանաւանդ Արշակունի եւ Կամսարական տան ներկայացուցիչները:

Արտաւան եւ Յովհան Արշակունիք, Ներսեհ, Հրահատ եւ Իսահակ Կամսարական երեք եղբայրներ, Գղակ, Արտաւազդ, Վարազ, մի ուրիշ Յովհան, այլ եւ Արշակ, Արտաշիր եւ Քանարանգ — ահա հայ ասպետութեան այն շարանը, որ իրենց այրուձիով Բիւզանդական զօրքի գարդն էին կազմում Յուստինիանոսի օրով: Իսկ հռչակաւոր Ներսէսը, որ Յուստինիանոսի տէրութեան իսկական սիւնն էր:

Հայ անունն արդէն դուրս էր եկել իր նեղ ձորերից ու

կիրճերից եւ թնդում էր մեծ պետութեան ծաւալուն տարածութեան մէջ:

Հայութիւնը մի գետ է, որի ջրերը ոռոգում են ոչ միայն իր հարազատ հողն ու անդաստանը, այլ և թաւալում են հուժկու ալիքներ դէպի ընդհանուր քաղաքակրթութեան ովկեանը:

Արտաւան, Ներսէս եւ նրա շուրջը գործող իշխանների պարը, առաջին մեծ ալիքներն էին, որ զարկեցին Բիւզանդական արքունիքի պատերին:

Հայաստանի լեռների այդ վայրի ծաղիկները պատուաւոր տեղ գրաւեցին Բիւզանդական չքեղութեան մէջ:

Արտաւանի առանձնայատուկ արժանիքն այն է, որ առաջին հայն էր, որ ձեռք կարկառեց կայսերական թագին: Արշակունի զաւակը մի ոստինով ուզեց թառել Կոստանդին Մեծի գահի վրայ: Համարձակութիւն էր, բայց ոչ երազական թռիչք: Այս համարձակութիւնը եղաւ պատուանդան Հայոց մեծ եւ հոյակապ վերելքի Բիւզանդիայում:

ՎԱՐԴ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(8 5 6 — 8 6 6)

Թէոդորա կայսրուհու հարազատ եղբայրն էր Վարդը, պետական առաջնակարգ անձ, լուսաւոր դէմք:

Պէտք է զարմանալ որ պատմութիւնն այնքան անարդար եւ ապերախտ է գտնուել այս մեծ, կորովամիտ մարդու նկատմամբ, ջանալով ամեն կերպ պղտորել, անփառունակել նրա յիշատակը, ստուերել նրա լուսափայլ ճակատը: Այսպէս է եղած հերոսների վիճակը պատմութեան մէջ:

Վարդը խորտակուեց հակառակորդի դաւադիր սրից այն պահին, երբ հասել էր փառքի դագաթնակէտին եւ ձեռքը պարզել դէպի կայսերական գայիսոնը: Միքայէլ կայսրը անորդի էր, եւ Վարդը հռչակուած էր կեսար եւ ուրեմն առանց ճիգի, իրերի բնական բերումով, կայսերական ծիրանին պիտի դար փաղփաղէր նրա ծանրավաստակ ուսերին:

Սակայն, Վոսփորի ափին քաղաքական կեանքի ելեւէջները նոյնքան յեղյեղուկ էին եւ անտեւական, որքան խռովայոյզ ծովի յորձանքները, որոնք մի ակնթարթում փշրուում խորտակուում են չարախինդ հողմերից:

Վարդը Մամիկոնեան չառաւիղ էր, սրով էր հարթել իր ճանապարհը: Թէոփիլ կայսրի մահից յետոյ կառավարութեան դեկն անցաւ նրա կնոջ Թէոդորայի ձեռքը: Թագաժառանգ Միքայէլը դեռ եռամեայ մանուկ էր: Մայրը՝ Թէոդորան խսկապէս խնամակալուհի էր: Նրա առաջին մինիստրը եւ աջ ձեռքն էր ներքինի Թէոկտիստը: 856 թուին Միքայէլը մտնում էր իր 17–18 տարին: Իշխելու, հրամայելու զգացումը արթնացել էր նրա մէջ: Ուզում էր տիրանալ իր գահակալական իրաւունքներին:

Վարդը օգտուելով իր պատանի քեռորդու տրամադրութիւնից եւ առաւել եւս գրգռելով նրա ինքնիշխանական տենչերը, համոզեց վճռական քայլ անել վերջ տալու տիրող կացութեան: Ամենակարող ներքինի եւ լոգոթետ Թէոկտիստը սուսերահար եղաւ: Թէոդորայի իշխանութիւնն ընկաւ: Նրա տեղն անցաւ օրինական թագաժառանգը, Միքայէլը, իսկ Թէոկտիստին փոխարինեց Վարդը:

Թէոկտիստը երկու պաշտօն ունէր, լոգոթետ էր պոստի եւ կանիկլիոնի (= կալամդանի) քարտուղար կամ դիւանապետ: Երկու պաշտօններն էլ ստանձնեց Վարդը: Հետագայում լոգոթետութիւնը զիջաւ իր փեսային, Սմբատին: Վարդն իր ձեռքն առաւ, ինչպէս երեւում է, նաեւ պալատական հեծեալ գնդերի հրամանատարութիւնը, սքոլների դոմեստիկութիւնը: Թէոդորան չխորշեց դաւել իր եղբօր Վարդի կեանքի դէմ, համաձայնութեան գալով Միքայէլի պրոտոսպաթարի կամ առաջին ախոռապետի հետ: Անյաջող մահափորձից յետոյ Միքայէլը մեծարեց Վարդին կիւրապաղատութեան բարձր պատուով, իսկ դաւաճան ախոռապետի պաշտօնը յանձնեց Վասիլ Հային, այն մարդուն, որին բախտը ղրկել էր կործանելու Վարդին եւ նրա վերաթռիչ ակնկալութիւնները:

Վարդն արդէն կիւրապաղատ էր, երբ Միքայէլը ցանկացաւ երիտասարդական կորովը փորձել պատերազմի դաշտում, եւ Վարդի առաջնորդութեամբ արշաւեց Արաբների դէմ: Կայսերական զօրքերը յառաջացան մինչեւ Եփրատի ափերը եւ շրջապատեցին Սամոսատ քաղաքը: Երեքօրեայ պաշարումից յետոյ, մի կիրակի, երբ կայսրը զբաղած էր եկեղեցական պաշտամունքով, Արաբները բացին բերդի դռները եւ սուրացին թշնամու վրայ: Անսպասելի յարձակումով պարտութեան մատնեցին կայսերական զօրքը եւ ի փախուստ դարձրին: Միքայէլ կայսրը հազիւ ճողոպրեց, թողնելով իր վրանը և գոյքը յաղթական թշնամուն աւար[1]:

Երկու տարուց յետոյ Օմարը դարձեալ ասպատակեց երեք բիւր զօրքով: Վարդը հաւաքեց Թրակիայի, Մակեդոնիայի եւ Ասիական թեմերի զօրքերը, քառասուն հազարանոց մի բանակ, եւ շարժուեց թշնամու դէմ: Մելիտինէի ամիրը Սեբաստիայի գծով գնում էր դէպի ծովափ Ամիսոսի (Սամսոնի) շրջանը: Նրա առաջը կտրելու համար Վարդը եկաւ եւ բանակեց Դազիմոնի մօտ (այժմ Թոկատ) Կելլարիոն կոչուած դաշտում: Շուտով հասաւ եւ Օմարի բանակը եւ դիրք բռնեց Դազիմոնից քիչ արեւմուտք Զելա քաղաքի մօտ Խոնարիոն ասուած վայրում: Կայսերական գնդի դրութիւնը վտանգուած էր: Պարտութեան դէպքում չպիտի կարողանար նահանջել, ճանապարհը կտրուած էր արեւմուտքից:

Առաջին բախումից յետոյ կայսրը յետ քաշուեց վեց մղոն եւ օրուան տապից նեղուած բարձրացաւ մօտիկ բլուրը, Անզէս (կամ Անզեն): Ամիրի զօրքերը անմիջապէս շրջա-

1 Genesius, 91; Theophanes Continuatus, 176, հրատ. Bonn.

փակեցին բլուրը: Կայսրի կեանքը վտանգի մէջ էր: Ահա մի օրհասական բլուր, ուր որոգայթի մէջ էր ընկել Միքայէլի հայր Թէոփիլը 838 թուի աշչաւանքին եւ փրկուել չնորհիւ Մանուէլ զօրավարի անձնուէր քաջութեան: Այժմս կրկնւում էր նոյն ադէտը եւ ազատարարը նորէն նոյն արիասիրտ զօրավարն էր: Միքայէլը ի տես իր յուսահատ դրութեան ձայնեց.

«Ո՛վ Մանուէլ, ի՞նչ պիտի անենք, տե՛ս, կորչում ենք»:

Հայ զօրավարը պատասխանեց. «Հանի՛ր, տէ՛ր, ծիրանի տաբատդ, որ մատնում է կայսերական անձիդ ով լինելը, և հագի՛ր սեր, հանի՛ր, քեզնից նաև կայսերական սպասազինութիւնդ: Ես կ՚առնեմ հինգ հարիւր ընտիր, կտրիճ զինուոր, կր ճեղքեմ թշնամու գիծը և այս կերպ կր փրկուենք»:

«Իսկ զո՞րքը, հարցրեց կայսրը, ի՞նչ կը լինի նրա վիճակը»:

Մանուէլն ասաց. «Կայսերական մեծութիւնդ ինչ կերպ եւ լինի պէտք է որ ազատուի եւ դերի չընկնի թշնամու ձեռքը: Եթէ այս պատահի, վա՜յ քրիստոնէութեան: Ինչ վերաբերում է զօրքին, կ՚անենք ինչ որ Աստուծու կամքը սահմանել է»:

Մանուէլն ընտրեց հինգ հարիւր հոգի քաջ զինուոր, ամբողջ ուժով ընկաւ թշնամու գծի մի կէտի վրայ, եւ գոչելով «Փրկչի խաչը յաղթող է», պատռեց շարքերը եւ անցաւ անվրէպ եւ անվնաս:

Սակայն, մեծապէս զարմացաւ, երբ յետ նայելով տեսաւ որ կայսրը չէ հետեւել իրեն, այլ երկիւղից մնացել է կառչած տեղը: Անձնուրաց զօրավարը ստիպուած էր յետ դառնալ, նորէն ճակատել թշնամու դէմ, եւ աջ ու ձախ դիակներ սփռելով ճանապարհ հարթել դէպի կայսրը: Այս անգամ դժուար չէր հանել Միքայէլին իր արգելարանից: Արեւի կիզիչ ճառագայթները, ջրի եւ խոտի պակասութիւնը նեղում էին Արաբներին եւ հարկադրեցին նրանց քաշուել հարեւան Դորա անուն մարգագետինը: Կայսրը կարող էր անարգել ելնել թշնամու օղակից եւ փախչելով ամբողջ օրը ազատուեց կորուստից:

Երկու տարի եւս անցաւ: Միեւնոյն յամառ թշնամին Օմար ամիրը քառասունհազարանոց բանակը վարեց դէպի Արմենեակոն թեմը եւ հասաւ մինչեւ Ամիսոսի ծովեզրը: Զայրացած որ ծովը խոչընդոտ էր իր յառաջխաղացման, արաբ իշխանը, նոր Քսերքսէս ձեւանալով, հրամայեց ծեծել ջուրը, որ յանդգնել էր կասեցնել իր արշաւը:

Միքայէլ կայսրը լսելով անհանգիստ հակառակորդի

նոր ասպատակութիւնը, հառաչեց. «Վա՜յ ինձ, կրկնում էր ստէպ, մի՞թէ չկայ մէկը որ մեր թագաւորութեան եւ քրիստոնէութեան սիրուն համար գնայ եւ ջարդէ այս անողորմ եւ ամբարիշտ անհաւատին»:

Այս խօսքի վրայ յառաջ եկաւ հայազն զօրավար Պետրոնը, կայսրուհու եղբայրը եւ ասաց. «Տէ՛ր, մեծափառ տէրութեանդ Աստուած տուել է շատ եւ շատ հպատակներ, որոնք սիրում են քեզ ջերմ սիրով եւ լի են բուռն ցանկութեամբ մեռնել քո սիրուդ համար: Պատերազմը, հարկաւ, մերթ յաջող է լինում, մերթ ձախորդութիւններ են պատահում: Ոչ ոք չի կարող դուշակել թէ ելքը յաղթական կը լինի, բայց եթէ ոչ կանխագէտ Աստուածը»:

Կայսրը պատասխանեց. «Գնա՛, Պետրո՛ն, դիմագրաւէ՛ թշնամուն եւ վտանգի՛ր անձդ, քրիստոնէութեան եւ իմ թագաւորութեան սիրուն»:

«Պատրաստ եմ, արքա՛յդ իմ, ասաց Պետրոնը, թափել արիւնս մինչեւ վերջին կաթիլը թագաւորութեանդ եւ հաւատակիցներիդ համար»:

Կայսրը ոգի առաւ: Իսկոյն եւ եթ Պետրոնին նշանակեց սքոլաների դոմեստիկ, այսինքն պալատական կանոնաւոր և հեծեալ գնդերի զօրապետ: Պետրոնի ծրագիրն էր սակաւաթիւ բայց ընտիր ոյժերով յարձակուել արագօրէն թշնամու վրայ եւ մի հարուածով ջախջախել նրան: Սակայն, մի փախստական հոռոմ յայտնեց ամեն ինչ ամիրին եւ նախազգուշացրեց, որ Պետրոնը մեծ զօրքով գալիս է նրա դէմ:

Ամիրի մերձաւորները խորհուրդ տուին նահանջել խոհեմաբար եւ, եթէ Պետրոնը հետապնդէր, այն ատեն միայն ճակատել նրա դէմ: Ամիրը վանեց այս վեհերոտ առաջարկը եւ չարժուեց Ամիսոսից եւ բանակ զարկեց Պոսոն (կամ Պոսոնտա) վայրում, որ գտնւում էր Արմենեակոն թեմի եւ Պափլագոնիայի սահմանագծի վրայ:

Պոսոնի տեղը ստուգիւ յայտնի չէ: Պատմագրի ցուցումը թէ հինգ հարիւր մղոն հեռու էր Ամիսոսից, սխալ է, գոնէ անյարուչ է իր իսկ վկայութեան թէ Պոսոնը Պափլագոնիայի սահմանումն էր: Ամիսոսից (Սամսոնից) Պափլագոնիա 500 մղոն չի կարող լինել: Հաւանօրէն գրչագրի վրիպակ կայ. (արդեօք յոյն φ (=500) տառի փոխարէն կարդալու չէ ρ (=100): Ցայտնի է միայն որ Պոսոնը Ալիս գետի ձախ ափին էր:

Նոյն տեղն էր բանակել եւ Պետրոնը: Երկու բանակները բաժանուած էին միմեանցից մի բլրով: Պետրոնը յաջողեց

գիշերային մի գրոհով գրաւել բլուրը եւ ամուր դիրք բռնել: Սրանով արդէն նախորոշուած էր պատերազմի հետեւանքը: Կատաղի ճակատամարտում Արաբները դէմովին պարտուեցին, դոռ ամիրը սպանուեց, իր որդին փորձեց փախչել, բայց Խարսիան Թեմի պետը՝ ոմն Մախիրաս բռնեց նրան եւ յանձնեց Պետրոնին[1]:

Արաբները այսպիսի ջարդ դեռ չէին կերել: Ցաղթութիւնը վճռական էր եւ արդիւնք Պետրոնի ռազմագիտութեան: Հակառակ սկզբնական ծրագրին, Պետրոնը գումարեց գրեթէ բոլոր զօրաբանակները եւ շրջապատեց Թշնամուն: Արմենեակեան, Բուկելլարեան, Կոլոնիայի եւ Պափլագոնիայի գնդերը կտրեցին հիւսիսային կողմը: Անատոլիկեան, Օփսիկեան եւ Կապպադոկեան Թեմերի սպարապետները, այլ եւ Սելեւկիայի եւ Խարսիանի կլեսուրարխները (կապանապետները) իրենց ոյժերով՝ հարաւային կողմը: Կայսերական չորս գնդերը, Թրակեսեան, Թրակեան եւ Մակեդոնական զօրքերի հետ Պետրոնի հրամանատարութեան տակ՝ արեւմտեան կողմը: Արաբները երկաթէ օղակի մէջ էին. արեւելքից բնական արգելք էր Ալիս գետը: Օմարը, ինչպէս Թակարդում փակուած գազան, ելք էր որոնում: Ցուսաբեկ եղաւ մանաւանդ, երբ գերիներից մէկին հարցրեց տեղի, դաշտի եւ գետի անունը եւ նա ասաց, տեղի անունն է Պտոնսոնորա (փոխանակ Պոսոնտա), գետի անունը՝ Լալակոն և դաշտինը՝ Գիւրին: Ամիրը նախազգաց, որ առաջին անունը ակնարկում է իր անկումը (ptosis) երկրորդը՝ իր զօրքի փչացումը (Laou Kakosiv) եւ երրորդը՝ զօրքի շրջապատումը Հռոմներից (Juristhenai). ժողովրդական բառախաղ է: Օմարը տեսաւ որ ուրիշ ճար չունի քան ճակատ մտնել եւ չափել իր ոյժերը Պետրոնի հետ: Բայց չուտով դառն փորձերը համոզեցին նրան, որ անհնար էր պատռել շրջապատող զինուորական ամուր պատնէշը եւ խոյս տալ կռուից: Սկսուեց մարտը եւ գոռոզ արաբը գերադասեց ընկնել սուրը ձեռքին: Որդին փորձեց փախչել բայց ձախողեց եւ դերուեց:

Այսպէս՝ Վարդի իշխանութեան միջոցին երեք արշաւանք տեղի ունեցաւ Արաբների դէմ երկամեայ ընդմիջումներով[2]:

Արաբական աղբիւրներից յայտնի է որ Պոսոնի ճակատը սեպտեմբերի 3ին էր 863 թ.: Հետեւապէս միւս երկու արշաւանքները պէտք է կատարուած լինէին 859ին և 861ին:

1 Genesius, 94-97.

2 Նկատելու է որ Դենեսիոսի (91, 94) «երկու տարի յետոյ» խօսքերը միւս պատմագիրը, Թէոփանէս Շար. (177, 179) փոխում է՝ «երկրորդ տարին», առանց հիմքի:

Արաբական աղբիւրներից երեւում է որ Վարդի օրով Բիւզանդացիք երկու անգամ են արշաւել Սամոսատ:

Առաջին արշաւանքը վերաբերում է Հիջրի 242 թ. (որ է 856 մայիսի 10 սկսած մինչեւ 857 ապրիլի 299: Ալի իբն Եահեա զօրավարի ամարային ասպատակութիւնից դրդուած կայսերական զօրքերը հակայարձակումով հասան մինչեւ Սամոսատ քաղաքը, անցան Ամիդի մօտերքը, դարձին մտան Տեփրիկ (այժմ Դիւրիկ) քաղաքը որ Պաւլիկեան աղանդաւորների առաջնորդ Կարբէասի նստոցն էր:

Կարբէասը եւ Օմարը, Մելիտինի ծանօթ ամիրը, նրանց ետեւից ընկան, բայց չկարողացան հասնել: Արաբների ամարային ասպատակութիւնը սկսւում էր սովորաբար յուլիսի 15ից յետոյ եւ յառաջ քան 15 սեպտեմբերի: Սամոսատի արշաւանքը կատարուած պիտի լինի հետեւապէս ամառուան վերջը 856 թուին:

Երկրորդ անգամ Սամոսատի վրայ արշաւեցին Հիջրի 245 կամ 859–860 տարին: Բիւզանդացիք աւերումներ գործեցին եւ դարձան 500 մարդ գերելով[1]:

Բիւզանդական յիշողութեան մէջ այս երկու արշաւանքները ձուլուել են ի մի: Եթէ արշաւանքի ժամանակ Վարդը կիւրապաղատ էր, ինչպէս վկայում է Թէոփան պատմագիրը, Շար. 176, նշանակում է խօսքը 859 թուի արշաւանքի մասին է, քանի որ Վարդի կիւրապաղատութիւնը 858 թուից էր, իր անձի դէմ ուղղուած մահափորձից յետոյ, ինչպէս տեսանք վերեւ:

Սակայն նոյն պատմագիրը հաւատացնում է, որ Սամոսատի կռուին Թշնամու բանակումն էր Կարբէասը, որ մեծամեծ նշաններ ցոյց տուաւ քաջութեան եւ գերեց աւելի քան հարիւր սպաներ, որոնց թւում եւ Աբեսալոմ (Աբիսողոմ) եւ Սիոն զօրավարները. tzangotoubos է կոչւում առաջինը եւ palatinos երկրորդը, որ անյայտ տիտղոսներ են[2]:

Տեսանք, որ արաբական տեղեկութեամբ Կարբէասը մասնակցել էր Սամոսատի առաջին արշաւանքին 856ին և ոչ թէ երկրորդին, ինչպէս ներկայացնում է բիւզանդացի պատմագիրը: Ասել է թէ երկու արշաւանքները շփոթուած են եւ ձուլուած:

Արաբական աղբիւրներից չի հետեւում, որ կայսերական զօրքերը պարտուած լինեն Սամոսատի պաշարման ժամանակ, ինչպէս հաղորդում են Բիւզանդացիք բաւականին անհեթեթ պատճառաբանութեամբ, անյաջողութիւնը վե-

1 Վասիլիեւ, Բիւզանդիա եւ Արաբներ (ռուսերէն), էջ 54–55:

2 Theoph. Contin., 176-177.

բագրելով ժամերգութեան: Առանց արաբական տուեալների եւս կարելի էր կասկածի տակ առնել այդօրինակ փաստաբանութեամբ յերիւրած զրոյցը: Քաղաքը պաշարուած էր զօրքերի կողմից եւ կայսրի անձնական ներկայութիւնը այնքան կարեւոր հանգամանք չէր զինուորական տեսակէտից որ նրա բացակայութեամբ, այն էլ ժամերգութեան առթիւ, պաշարուած քաղաքի բախտը փոխուէր:

Ցիրականին մենք գործ ունենք մի բարուրանքի հետ, որ նպատակաւոր է, թէեւ զուրկ հնարամտութեան չնորհից: Այն չինուած է ի հեճուկս Վարդի: Ցաջողակ պաշարումը փոխելով ձախորդութեան ուղեցել են նսեմացնել Վարդի անունը, զլացել են յաղթական պսակ հիւսել նրա գլխին:

Նոյն միտումը նկատելի է նաեւ Դազիմոնի կռուի պատմութեան մէջ: Միքայէլ կայսրը վտանգի մէջ էր: Նրան ազատելու համար բեմ է հանւում յանկարծ Մանուէլ զօրավարը: Ոչ մի խօսք Վարդի մասին: Մանուէլը, որ տակաւին 813 թուին Արմենեակ թեմի սպարապետն էր, Դազիմոնի արշաւանքի ժամանակ լինելու էր 75–80 տարեկան ծերունի: Դժուար թէ կարելի է վերագրել այսպիսի մի զառամ հասակի այն շահատակութիւնը, որի չնորհիւ փրկուեց Միքայէլը: Թող որ անգամ տարակուսական է, արդեօք կենդանի էր այդ ժամանակ Մանուէլը: Անտեսելու չէ այն վկայութիւնը, որի համաձայն Մանուէլ մեռել էր այն վէրքից, որ ստացել էր Թէոփիլ կայսրին նման փորձանքից ազատելու ժամանակ: Այս վկայութիւնը, որքան և տկար, ամեն պարագայում ցոյց է տալիս որ Մանուէլի կեանքը շատ էլ երկարատեւ պէտք չէ եղած լինէր: Մոռանալու չէ նաեւ որ Դազիմոնի դէպքը աւելի դիւրին է ժխտել քան պաշտպանել: Պարզ կրկնութիւն է Թէոփիլի յայտնի արկածի: Եթէ անգամ եղելութիւն համարենք այդպիսի մի օրհասական զուգադիպութիւն, իրաւունք ունէինք փրկարարի դերում տեսնելու ոչ թէ Մանուէլին, այլ Վարդին, որ Միքայէլի հաւատարիմն էր, մշտական ուղեկիցը եւ անբաժան ընկերը տանը թէ արշաւանքներին: Մանուէլի անունը մէջ է բերուած լոկ այն դիտաւորութեամբ, որ նրանով վարագուրուի Վարդի խիզախութիւնը, իրական թէ վիպական:

Զարմանալի է որ արաբ աղբիւրները չեն յիշատակում Դազիմոնի արշաւանքը: Նրանցից գիտենք, որ Հիջրի 246 թուին = 860 մարտի 28 — 861 մարտ 16, Մելիտինի ամիր Օմարը պաւլիկեան Կարբէասը, Ալի իբն Եահեա եւ ուրիշները ասպատակեցին առանձին առանձին կայսերական հողերը եւ գերիներով ու աւարով դարձան իրենց տեղերը: Օմարը

հանեց մօտ եօթ հազար գերի, Կարբէասը՝ հինգ հազար, Ալին՝ եւս հինգ հազար գերի եւ տասն հազար գրաստ[1]:

Նոյն 860 տարին էր, որ Ռուսները առաջին անգամ երեւացին Բիւզանդիոնի առաջ: Երկու հարիւր նաւով անցան Սեւ ծովը, մտան Վոսփորը, սկսեցին աւերումներ գործել և սպառնալ մայրաքաղաքին: Այժմ արդէն հաստատուած է որ Ռուսների արշաւանքը դնելու է ոչ 866 թուին, ինչպէս կարծւում էր յառաջ, այլ 860ին, համաձայն վերջերս յայտնուած պատմական յիշատակարանի անսուտ վկայութեան: Անցքը տեղի է ունեցել արարչութեան 6368 թուին, ինդիկտիոնի 8 և Միքայէլի 5րդ տարին, յունիսի 18ին[2]: Միքայէլի կառավարութիւնը հաշուած է նրա միապետութեան տարուց, այսինքն 856 թուից, Թէոկտիստի սպանութիւնից: Միւս թուերը համերաշխ են, 6368 հաւասար է 860ին, ինչպէս եւ ինդիկտիոն 8:

Արդ Ռուսների յարձակման պահին Միքայէլը բացակայ էր մայրաքաղաքից: Վարդի ընկերակցութեամբ ուղի էր ընկել դէպի Արեւելք Արաբների դէմ: Արդէն հասել էր Մաւրոպոտամոն, որ Կեսարիայից հիւսիս Ալիս գետի հովտումն էր գտնւում երբ լսեց ռուսական աղէտի զոյժը: Անմիջապէս կայսրը վերադարձաւ մայրաքաղաք վանելու յանդուգն թշնամուն, վերադարձաւ առանց «արքայավայել գործ» կատարած լինելու Արաբների հանդէպ[3]:

Արդեօք Միքայէլի արշաւանքը պատասխան էր Օմարի, Կարբէասի եւ Ալի իբն Եահեայի նոյն 860 թուի ամառուան ասպատակութիւններին, թէ՞ ընդհակառակը, նախայարձակը կայսրն էր եղել, մնում է մութ:

Միքայէլի այս ընդհատուած ձեռնարկը չի կարելի նոյնացնել Դազիմոնի արշաւանքի հետ: Եթէ չենք ուզում ուրանալ վերջնիս զոյութիւնը, որ անխոհեմութիւն կը լինէր, պէտք է ընդունենք, որ Դազիմոնի ճակատը տեղի է ունեցել հետեւեալ 861 տարին, համաձայն վերեւ յիշուած պատմական ցուցումին:

Դեռ եւս հնում կարծում էին որ Վարդը մասնակից էր Պոսոնի յաղթական ճակատամարտին, երբ հրամանատարն էր իր եղբայր Պետրոնը, եւ որպէս թէ այս մասնակցութեան համար էր որ կայսրը վարձատրեց Վարդին, նշանակելով նրան կեսար ինդիկտիոնի 10ին, Զատկի օրերին, աւելի ստոյգ, Նոր Կիրակիին[4]:

1 Վասիլիեւ, *Բիւզանդիա եւ Արաբներ* (*ռուսերէն*):
2 **Cumont**, Anecdota Bruxellensia, I, Chroniques Byzantines.
3 **Georgius**, 326 (*հրատ.* Bonn).
4 **Genesius**, 97, *Զատկին*, *իսկ* **Georgius**, 824, *Նոր Կիրակի*:

Սակայն ինդիկտիոնի 10 հաւասար է 862 թուին: Զատիկը այդ տարին ապրիլի 19ին էր և ուրեմն Նոր Կիրակին՝ մի շաբաթ յետոյ ապրիլի 26ին: Իսկ տեսանք, որ Պոսոնի կռիւը պատահեց 863 թուին սեպտեմբերի 3ին: Հետեւապէս, Վարդն արդէն կեսար լինելով այդ ժամանակ, չէր կարող կռուի հետեւանքով ստանալ կեսարութեան պատիւը:

Անկախ այս չփոթութիւնից, պատմագրի վկայութիւնը ինքնին ուշագրաւ է այն մտքով, որ Վարդի կեսար նշանակուելը կապւում է պատերազմական ծառայութեան հետ: Ո՞րն էր այդ ծառայութիւնը: Իրաւունք ունենք կարծելու, որ խօսքը վերաբերում է Դազիմոնի ճակատամարտին, ուր Միքայէլ կայսրի կեանքը կախուած էր մազից: Եւ ի՞նչ կասկած, որ այն անձը որ ինքնազոհ արիութեամբ փրկեց նրան մահից Մանուէլը չէր, այլ Վարդը: Ճիշտ այս անձնուիրութեան համար էր որ հայ զօրավարը արժանացաւ կայսերական գահը ժառանգելու մեծ պատուին, հռչակուելով կեսար, յաջորդ անզաւակ Միքայէլի:

Մուտավաքիլ պատերազմասէր ամիրապետը մեռաւ 861 թուի վերջերին: Գուցէ կայսերական կառավարութիւնը օգտուելով Բաղդատի խառնակ դրութիւնից պատերազմ է յայտարարել 862 թուի սկիզբներին: Արդեո՞ք այս ժամանակ չէր Դազիմոնի կռիւը եւ Միքայէլի դէպքը: Վարդը այս առթիւ կեսարութեան հասնելով, զիջեց իր պաշտօնը, պալատական այրուձի գնդերի դոմեստիկութիւնը, Պետրոնին: Իբրեւ այդպիսին Պետրոնը ստանձնեց ընդհանուր հրամանատարութիւնը 863 թուին Պոսոնի արշաւանքին:

Վարդին աւելորդ անգամ խայթելու համար, նենգամիտ պատմագիրը ուզում է հաւատացնել որ Վարդը անյագ տենչ ունէր «ամեն ինչ լափելու, իրեն քաշելու», ուստի եւ սքոլաների դոմեստիկ նշանակել տուաւ իր մանկահասակ որդուն, Անտիգոնին, որ հազիւ 9–10 տարեկան էր: Իսկ Պետրոնին նշանակեց ժամանակաւոր փոխանորդ Անտիգոնին[1]: 863 թուի յաղթութիւնից յետոյ միայն Պետրոնը տիրացաւ նոյն պաշտօնին կայսեր հրամանով[2]:

Իրողութիւնն այն է սակայն որ Վարդի յաջորդը դոմեստիկութեան պաշտօնում եղաւ Պետրոնը եւ յաղթական արշաւանքից յետոյ վարձատրուեց մագիստրոսութեան պատուով[3]:

Պատերազմից յառաջ Պետրոնը մի տեղեկութեամբ

1 Theoph. Contin., 179-180.
2 Նոյն, անդ, 183:
3 Genesius, 95, 97.

Թրակեսեան թեմի ստրատեգ էր, միւս տեղեկութեամբ Անատոլիայի, այսինքն Անատոլիկեան թեմի[1]: Հիմք կայ կարծելու որ Պետրոնը տակաւին 860 թուին պալատական կարեւոր պաշտօնեայ էր: Միքայէլ կայսրը 859 թուին մայիս ամսին ուղարկեց Արաբների մօտ ոմն ծերունի Ատրուբիլիս (հաւանօրէն, Կոստանդին Տրիփիլիոս), որպէսզի բանակցէ գերիների արձակման մասին[2]: Արաբների կողմից մայրաքաղաք եկաւ նոյն յանձնարարութեամբ Նասր անունով արաբ դեսպան:

Նասրը թողել է մեզ իր ընդունելութեան նկարագրութիւնը: Երբ արաբը սեւազգեստ, փաթեթը գլխին, սուրը եւ դաշոյնը կապած, եկաւ պալատ եւ կամեցաւ այդպէս ներկայանալ կայսեր, Պետրոնը չթողեց, առարկելով որ օրէնք չէ այդ կերպ մօտենալ կայսեր, այլ պէտք է սև զգեստը փոխել և սպառազինութիւնը մերկանալ: Նասրը բողոքեց և գերադասեց հեռանալ: Պետրոնը յետ կանչեց նրան, զիջանելով խալիֆի ներկայացուցչին: Նասրին քիչ սպասել տուաւ, որովհետեւ կայսեր մօտ ունկնդրութեան էր բուլղարական դեսպանութիւնը, ապա հրաւիրեց ներս: Կայսրը բազմած էր գահի վրայ, պատրիկները շրջաբոլոր, եւ առաջին՝ կանգնած երեք թարգմանիչ: Նասրին նստեցրին կայսրի դէմ յանդիման գահի վրայ, որի առաջ դրուած էր իր բերած նուէրները, հազար սրուակ մուշկ, մետաքսէ զգեստեղէն, չափրան եւ թանկարժէք գոհարներ: Բանակցութիւնը վարում էր կայսեր ներկայութեան նրա քեռին: Նասրը հաւատացնում է, որ ամբողջ ժամանակ ոչ մի խօսք չլսեց կայսրից: Սա բնաւ չէր խօսում, այլ իր հաւանութիւնը կամ մերժումը յայտնում էր գլխի շարժումով: Քեռին էր որ տնօրինում էր գործերը:

Նասրը կատարեց իր առաքելութիւնը ամենայն յաջողութեամբ քառամսեայ աշխատութիւնից յետոյ: Գերեփոխութիւնը կայացաւ 860 թուին մարտ ամսին:

Այդ պահին Պետրոնը պալատում պաշտօն ունէր: Նասրը անուանում է նրան Միքայէլի քեռի: Այդպէս է կոչում նաեւ այն անձին, որ վարում էր բանակցութիւնը կայսեր անունով եւ նրա ներկայութեան: Արդեո՞ք խօսքը նոյն Պետրոնի մասին է, թէ վերաբերում է Վարդին: Ի նկատի ունենալով այն դիրքը, որ վայելում էր պալատում Վարդը որպէս Միքայէլի մեծազօր մինիստր, հաւանական է կարծել որ բա-

1 Theoph. Cont., 179; Georgius, 825.
2 Ibid. 122.

նակցողը Վարդն էր եւ թերեւս նրա անունը ընկած է Նասրի յիշատակարանից եւ կամ չփոթուած Պետրոնի հետ, քանի որ երկուսն էլ կայսեր քեռիներն էին:

Պետրոնին վերագրած դերը ներում է ենթադրել որ նա սքոլաների դոմեստիկ պիտի լինէր տակաւին Նասրի ժամանակ: Այս դէպքում ստիպուած ենք ընդունել, որ Պետրոնը դոմեստիկ նշանակուեց այն պահին, երբ Վարդը բարձրացաւ կիւրապաղատութեան աստիճանին, այն է՝ 857-8 թուերին:

Այս մանրամասնութիւններն աւելորդ բծախնդրութիւն չեն: Դոմեստիկութիւնը կամ պալատական հեծելազօր գընդերի, պետական մշակ կանոնաւոր զօրքի հրամանատարութիւնը մի բարձր եւ պատասխանատու պաշտօն էր, որ յանձնուում էր միշտ կարող եւ առաջնակարգ անձերի: Այն հանգամանքը, որ դոմեստիկ էր կարգուած Պետրոնը, ցոյց է տալիս որ նա բնաւ յետին դէմքերից չէր: Մինչդեռ ոչ միայն հին, այլ եւ նոր ժամանակուան հեղինակները դժուարանում են բարի խօսք ասել նրա յիշատակին, մինչեւ իսկ նուաստացրել են նրա գործերը պարսաւելի ջանքով: Պոսոնի նշանաւոր յաղթութիւնը 863 թ. Պետրոնի սխրալի գործն էր: Եթէ ուրիշ վաստակ չունենար, այս արդէն բաւ էր ոլորելու նրա ճակտին անթառամ պսակ: Սովորական յաղթութիւններից չէր: Պոսոնը պատմական խոշոր երեւոյթ էր: Զինական երկարատեւ եւ փոփոխ մրցութիւնից յետոյ, առաջին անգամն էր որ բիւզանդական ղէնքը գերիվերոյ փայլեց ռազմական ոյժի եւ մանաւանդ արուեստի առաւելութեամբ: Պետրոնը կարողացաւ արաբական բանակը ցանցի մէջ ձգել եւ ահեղ հարուածով ջարդել խսպառ: Կործանուեցին երեք մարտագոռ զօրավարները, որոնք տարիների ընթացքում կատարեալ պատուհաս էին դարձել պետութեան համար: Օմարը եւ Կարբէասը ընկան Պոսոնի կռուում, իսկ Ալի իբն Եահա սպանուեց մի ամիս յետոյ Նէփրկերտի (Մուֆարդին) մօտ խռնուելով կայսերական զօրքերի հետ, որոնք յաղթութիւնից յետոյ յառաջացել էին եւ մտել արաբական հողերը: Առաջին երկուսը ընկան 863 սեպտեմբերի 3ին, իսկ Ալին՝ ռամադան ամսում որ է հոկտեմբերի 18 – նոյեմբերի 16:

Պետրոնի յաղթութիւնը սրբեց այն արատը որ ծանրանում էր բիւզանդական անուան վրայ Ամորիայի անփառունակ պարտութիւնից յետոյ: Սթափեցրեց արաբ աշխարհը և ապահովեց Արեւելքի խաղաղութիւնը ընդերկար[1]: Պետրոնը վերադարձաւ մայրաքաղաք փառքով, տանելով իր հետ Օմարի գլուխը, այդ մեռեալ վկան իր կենդանի յաղթութեան: Զարակամ պատմագիրները լաւ են համարել մունջ կենալ այն մեծ ընդունելութեան մասին, որ ցոյց տուած պիտի լինի մայրաքաղաքը յաղթական զօրավարին: Դիպուածաբար պահուել է մի տեղեկութիւն, որից երեւում է որ կրկէսում մեծ հանդէսներ են տեղի ունեցել, ժողովրդական ցոյցեր եղել: Եւ ինչ որ հետաքրքրական է իր նորութեամբ, յատուկ երդ է յօրինուած եղել հզօր ամիր Օմարի սպանութեան առթիւ[1]:

Կայսրը մեծարեց օրուան հերոսին, Պետրոնին, մագիստրոսութեան պատուով, որ կիւրապաղատութիւնից յետոյ ամենաբարձր աստիճանն էր: Ժողովրդական երեւակայութիւնը պարուրել է Պետրոնի մահը առասպելի հրաշագան քողով: Պատմում են որ պատերազմից յառաջ նա գնացել էր Յովհաննէս անունով մի ճգնաղդեաց և սրբակրօն վանականի մօտ, որ նոր էր հաստատուել Եփեսոսի չրջակայքում, Սուրբ Լեառն կոչուած բարձրութեան վրայ: Զօրավարը խնդրել էր նրան աղօթել եւ մաղթել յաջողութիւն: Միայնակեացը դուշակել էր յաղթութիւն այն պայմանով որ Պետրոնը զօրքի ասպարների վրայ նկարել տայ իր, Յովհաննէսի, պատկերը որպէս մի տեսակ պահպանիչ յուռութք (թլիսիմ): Պատմում են որ կռուից դառնալով Պետրոնը յիշեց սուրբ հօրը եւ գնաց չնորհակալութիւն յայտնելու, գովելով եւ ամենուրեք հռչակելով նրա անունը որպէս մարգարէ: Ճգնաւորը ասաց Պետրոնին, որ իր՝ ճգնաւորի վախճանը մօտեցել է եւ չուտով պիտի թողնէ այս աշխարհը: Պետրոնը վշտացաւ եւ ասաց.

«Ինչպէս ես թողնում ինձ, զառնդ, այս աշխարհում, ով սիրելիդ իմ հովիւ. վախենում եմ, որ առանց քեզ գլորւեմ նախկին զառիթափով եւ վերջս աւելի վատ լինի քան յառաջ էր»:

Վանականը ասաց. «Կ'ուզես, հետեւիր ինձ»:

«Ուրախութեամբ»,— պատասխանեց Պետրոնը:

Այնուհետեւ հիւանդացաւ Պետրոնը եւ տուն դառնալով պատմեց իր զրոյցը վանականի հետ, յայտնելով որ մօտ է իր վախճանը: Շատ չանցաւ, մեռաւ կանխատես սուրբ հայրը, մեռաւ նաեւ Պետրոնը: Մահն այնպէս տարաւ երկուսին, որ մէկը միւսի վախճանի լուրը չառաւ:

Ի՞նչ է այն զառիթափը կամ սայթաքումը, որ անհանգըստացնում էր Պետրոնին, մնում է մութ: Վանականի խորհուրդը որ Պետրոնը կրէ նրա նկարը ասպարի վրայ, կարծես թէ մի խուլ ակնարկ է զօրավարի պատկերամարտութեան:

1 Georgius, 825.

1 Const. Porphig. De Cerimon., I, 332.

Այս մեկնութեամբ Պետրոնի երկիւղը հասկանալի կը դառնայ: Հայ զօրականը վստահ չէր որ վանականի մահից յետոյ նորից չէր ուրանայ պատկերների զօրութիւնը եւ սրբութիւնը:

Այս ցոյց է տալիս որ հայ գործիչների դիրքը պատկերների խնդրում առանձին վստահութիւն չէր ներշնչում անգամ պատկերապաշտութեան վերահաստատումից յետոյ: Պատմագիրների վճռական հաստատիացումները, որ Թէոդորայի ընտանիքը եւ մերձաւորները մոլեռանդ պատկերապաշտներ էին, ամեն պարագային չի կարելի ընդունել առանց վերապահութեան:

Այսպէս է ներկայանում Պետրոնը պատմական տուեալների ճշմարիտ լուսաբանութեամբ:

Տարօրինակ է տեսնել, որ նոր ժամանակների գիտունները ոչ միայն որդեգրել են հների կանխակալ կարծիքները, որ դժուար չէ հերքել նրանց իսկ տուած փաստերով, այլ հնարաւոր են գտել աւելի եւս չեշտել ժխտական վերաբերումը բացէ ի բաց կամածին ենթադրութիւններով:

«Պետրոնը ռազմիկ(?) չէր,— ասում է նրանցից մէկը, — բայց թափուր չէր խոհեմութիւնից: Նա առաւ իր Նազարին որպէս խորհրդատու, որ Գաղատիայի կառավարիչն էր եւ աւելի վարժ(?) պատերազմական գործողութիւնների, քան ինքը. եւ նրան մասնակից արեց հրամանատարութեան: Անտարակոյս(?) նրա խորհուրդովն էր որ Պետրոնը գերադասեց կազմ զօրքը բազմաթիւ զօրքից եւ տարաւ իր հետ միմիայն ընտիր եւ քաջամարտ զինուորներ»:

Պատմագիրը ասում է միմիայն որ Պետրոնի հետ էր նաեւ Բուկելլարեան թեմի ստրատեգ Նասարը[1]: Ուրիշ ոչինչ:

Ֆրանսացի պատմաբանի յաւելումները պատուաբեր են դուցէ իր երեւակայութեան, բայց ոչ ճշմարտասիրութեան: Պոռոնի ճակատում Պետրոնի հրամանատարութեան տակ էին գտնւում կայսերական բոլոր թեմերի ստրատեգները եւ նրանց թւում Բուկելլարեան թեմի: Նասարի անունը յիշուած է միմիայն նրա համար որ հետագայում եւս յիշատակւում է:

Պատմական վկայութիւնը ամեն պարագային հիմ չի տալիս պարապ ենթադրութիւնների, որ Նասարը կարող մարտիկ ոյժ էր եւ այն էլ բարձր Պետրոնից եւ նոյնիսկ նրա խորհրդատուն:

1 Georgius, 828.

* * *

Պետրոնից աւելի վաստակաւոր եւ անհամեմատ բարձր էր իր երէց եղբայրը, Վարդը, որքան բարձր, այնքան առաւել վատաբանուած նոյն պատմագիրների կողմից:

Այս վատաբանութիւնը իսկապէս բամբասանքի երեւոյթ ունի քան լուրջ ամբաստանութեան: Արձակուած թունաւոր սլաքները մնում են խօսքի, լեզուական եռանդի սահմաններում, անկարող անցնել եւ խոցել այս նշանաւոր պետական մարդուն իր գործունէութեան մէջ: Երեւում է որ անուանարկումի ջանքերը յստակ համոզումի եւ կամ իրականութեան համակերպ մտածումի արդիւնք չեն, այլ կողմնակի թելադրանքի ստիպողական մի հարկ, ինչպէս կը բացատրենք ստորեւ:

Վարդը առաջին դէմքն էր եւ միակ պատասխանատու անձը Միքայէլի կայսրութեան ժամանակ, որպէս նրա խնամակալ կամ աւելի ճիշտ, առաջին մինիստր: Միքայէլը լոկ անունով էր կայսր: Ոչ ընդունակութիւն ունէր եւ ոչ ցանկութիւն զբաղելու պետական գործերով: Զուարճութեանց և խրախճանքների մարդ էր: Մանուկ հասակից անձնատուր էր ցոփ եւ անառակ կեանքի եւ, եթէ բարի սերմեր էին եղել ի բնէ նրա մէջ, խեղդուել էին չուայտութեան եւ ախտաւոր հակումների մէջ: Պետութեան բախտը թողել էր իր քեռուն, Վարդին, տածելով անհուն վստահութիւն եւ հաւատ նրա հմտութեան:

Վարդն օժտուած էր անպայման այն յատկութիւններով, որ պահանջում էր իր բարձր դիրքը: Թշնամի գրիչներն անգամ վկայում են որ նա վարչական մեծ ձիրք ունէր, չեն ուրանում, որ իրաւախոհ էր եւ արդարադատ: Անկաշառ մարդու համբաւ ունէր: Հպարտ էր իր ոյժի և արժանիքների գիտակցութեամբ եւ բաւականին իմացական, որ խոհեմութեան չափերը պահէր: Կեսար էր, թագի մօտալուտ ժառանգորդ, եւ գիտէր թէ ի՞նչ է նշանակում ամբոխի աչքում իշխանաւորի շուքն ու չքեղութիւնը, ուստի եւ սիրում էր պերճութիւն եւ փառահեղ շրջապատ:

Այս գծերը թւում են մի առ մի պատմագիրները, երեւի, օգտուելով անկողմնակալ եւ հին աղբիւրներից: Բայց գտնուելով որոշ ներշնչումների ճնշման տակ, աշխատում են գունատել, թուլացնել Վարդի նկարագիրը իրենց անձնական վերապահ նկատողութիւններով: Այսպէս, Վարդի անկաշառութիւնը չեշտելուց յետոյ աւելացնում է պատմագիրը որ այդ կեղծ էր, առերեւոյթ, ψιθύρι Ἐπίπλαστος, որովհետեւ

Վարդը ընչաքաղց էր եւ սիրում էր ձեռք բերել կալուածներ եւ թանկարժէք իրեր:

Վարդի խոհեմութիւնը եւս կասկածի տակ է առնւում: Պատմագրին թւում է որ Վարդի այս յատկութիւնը ցուցական էր, դերասանական, այսինքն՝ նա միայն ձեւանում էր խոհեմ, բայց իրօք այդպէս չէր:

Վարչական կարողութեան առթիւ ուրիշ աւելի կծու բան չէ կարողանում ասել քան այն որ այս կէտում Վարդը «ստոր էր լաւագոյններից»: Խոստովանում են որ մեծ խնամք ունէր, մեծ աշխատանք էր թափում պետութեան վրայ, բայց կարծում են նսեմացնել նրա եռանդը, ասելով որ նա գործում էր իրեն համար, որովհետեւ կայսրութեան վրայ նայում էր որպէս իր սեփականութեան վրայ, որին կոչուած էր տիրանալու վաղ թէ ուշ:

Հարկաւ, այս կարգի խայթոցներով կարելի չէ բծաւորել մի անուն, որն իր փայլի համար ունի աւելի վստահելի եւ պերճախօս վկաներ, որպիսիք են իր լուսաչափ գործերը, իր իսկ հակառակորդների ղրչով արձանագրուած:

Իր միահեծան տասնամեայ շրջանում Վարդը վարեց պետական գործերը, τὰ πολιτικά, տնօրինեց տէրութեան բախտը այնպիսի հմտութեամբ եւ այնպէս յաջողակ, որ տհաճութեան եւ բողոքի մասին խօսք չէր կարող լինել:

Եզակի է իր տեսակի մէջ նրա բեղուն գործունէութիւնը լուսաւորութեան ասպարէզում եւ իրապէս արժանի ամենայն գովեստի եւ հիացման: Քրիստոնէութիւնը կործանելով հեթանոս աշխարհահայեացքը չէր խնայել նաեւ հեթանոս գիտութիւնները եւ մտաւոր խոշոր յանգումները: Ս. Գիրքն էր յայտարարուել իմաստութեան յատակ աղբիւր եւ նրա հեղինակութիւնը մի ոյժ էր, որի առաջ պիտի նահանջէին և թաղնուէին ձեռագրական պահարանների մէջ որոնող մտքի լաւագոյն վաստակները, հելլէն իմաստութեան աւանդները: Հին Կտակարանը ի հարկէ խոտելի գիրք չէ բնաւ: Այն մի տեսակ աւազան է, ուր ամբարուած են Արեւելքի հին քաղաքակրթութեանց հոսուն գետերից շատ ջրեր, պիտանի եւ ընդունակ յագեցնելու ծարաւ ոգիներ: Սակայն, մարդկութիւնը արդէն թեւակոխել էր յառաջդիմութեան նոր եւ հելլենական շրջանը, գերազանց քան բոլոր նախընթացները: Հելլէն միտքը անբաւ նուաճումներ էր արել գիտութեան բոլոր մարզերում: Հին Կտակարանի տեսութիւնները հնացած էին իրենց նախնական պարզութեան մէջ:

Քրիստոնէական եկեղեցու կողմից, անտարակոյս յետադիմական քայլ էր, երբ Աւետարանի դինու հետ պարտադրեց աշխարհին նաեւ Մեռեալ ծովի անկենդան ջրերը: Այն օրից նուազեց, հիւծեց յոյն իմաստասիրութիւնը եւ իր ամբիոնից իջնելով դարձաւ աղախին աստուածաբանութեան: Մեռաւ գիտութեան կենդանի շունչը: Ծաղկեց եւ ուռճացաւ աստուածաբանութեան անպտուղ ծառը, չորացան հին փիլիսոփայութեան ատոք սերմերը: Դարեր շարունակ մարդկային քննական և յառաջխաղաց միտքը մնաց շղթայուած կրօնական նախապաշարումներին ստրկական նկուն վիճակի մէջ:

Առաջին անգամ ըմբոստութեան նշաններ երեւացին իններորդ դարում: Ըմբոստութեան կարապետները հայ էին ազգով եւ նրանցից ամենանշանաւորը, Լեւոն մեծ փիլիսոփան: Վարդը ինքը եւս ուսեալ եւ կրթասէր անձ էր եւ քաջ գիտակցում էր դասական գրականութեան արժէքը: Տեսնելով հին, թաղուած գիտութեան նորաբողբոջ ծիլերը, հարկ համարեց խնամել եւ պետութեան հովանու տակ առնել: Այս նպատակով հիմնեց առաջին բարձրագոյն դպրոցը, անդրանիկ համալսարանը Բիւզանդիոնում: Նրան յատկացրեց Մագնաւրա կոչուած պալատը: Հրաւիրեց Լեւոն մեծ գիտնականին եւ նրա տեսչութեան յանձնեց նորաբաց դպրոցը:

Լեւոն հայ էր եւ Յովհաննէս պատրիարքի (832–843) եղբօրորդին: Յովհաննէսը, ինչպէս եւ իր եղբայր Արշաւիր պատրիկը նմանապէս ուսումնասէր եւ գիտուն անձեր էին: Լեւոնի կեանքը եւ գործունէութիւնը զարդարուած են հրաշապատումներով, որոնց կ'անդրադառնանք առանձին յօդուածով: Այստեղ յիշենք միայն այն, որ Լեւոնը մեծ համբաւ ունէր գիտութեանց մէջ: Ոչ միայն հմուտ մասնագէտ էր փիլիսոփայութեան, ճարտասանութեան, և քերթողական ու քերական արուեստների, այլ եւ առաջինն էր որ ուշք դարձրեց մոռացութեան տրուած բնական գիտութիւնների վրայ և այնպիսի կատարելութեան հասաւ երկրաչափութեան, աստղաբաշխութեան, համարողութեան այսինքն՝ մաթեմատիկայի եւ մինչեւ իսկ երաժշտութեան մէջ, որ սկսեց ուսուցչութեամբ պարապել եւ վերջը կոչուեց Մագնաւրի համալսարանի պրոֆեսոր: Լեւոնը շատ բան էր պարտական իր գիտուն հօրեղբօր, Յովհաննէս պատրիարքին: Ոչ միայն Յովհաննէսը, այլ եւ իր հայրը, Բաղարատը, գիտութեան մեծ սէր են ունեցել եւ յայտնի են եղել մանաւանդ աստղաբաշխութեան մարզում:

Անշուշտ Յովհաննէսի ազդեցութեան է վերագրելու եւ այն, որ Լեւոնը հոգեւոր կոչում ստացաւ եւ Թեսալոնիկէի եպիսկոպոս եղաւ մօտ երեք տարի (840–843): Սակայն, իր

հօրեղբօր անկումից յետոյ ինքը եւս ստիպուած էր թողնել իր աթոռը: Ինչպէս երեւում է, անգամ հրաժեշտ տուաւ եկեղեցական կոչումին, որի համար առանձին սէր եւ հակում չունէր, եւ նորից դարձաւ դասատուութեան: Քիչ յետոյ ստանձնեց Վարդի համալսարանում ուսուցչութեան պաշտօն:

Լեւոնի գործունէութիւնը բեղմնաւոր էր: Շուտով նշանաւոր աշակերտներ ունեցաւ, որոնցից մի քանիսին պատրաստեց դասատուութեան նոյն համալսարանում: Այսպէս, Թէոդոր անունով մէկը ուսուցանում էր երկրաչափութիւն, Թէոդեղիոսը՝ աստղաբաշխութիւն եւ Կոմիտասը՝ քերականութիւն: Լեւոնի աշակերտներից էր նաեւ Կոստանդին, որ յետոյ հռչակուեց որպէս սլաւոնական առաքեալ Կիրիլ վերակոչումով:

Վարդը գովական հոդածութեամբ համալսարանի ուսուցիչներին արքունի թոշակ կապելով ապահովեց մշտապէս նրանց նիւթական վիճակը եւ հնարաւորութիւն տուաւ ամբողջովին նուիրուել գիտական եւ մանկավարժական զբաղումների: Նա այնքան մօտ էր համարում իր սրտին նորաբաց կրթարանը, որ շարունակ այցելում էր դասախօսութիւնները, հետեւում էր նաեւ աշակերտների յառաջադիմութեան, խրախուսելով նրանց պարապմունքները լաւագոյն յուսադրութեամբ և խոստումներով: Այսպիսով Վարդը կարողացաւ ստեղծել գիտութեան մի հրաշալի պարտէզ, որը աճելով եւ ծաղկելով արդիւնաշատ եղաւ, արդարացնելով հիմնադրի յոյսերը:

Մագնաւրի համալսարանը պատմական մի անժխտելի կոթող է Վարդի լուսաւոր անուան:

Պատմագիրները խոստովանում են ոչ առանց դժկամակութեան Վարդի արժանիքը գիտութեանց մեկենասի պատուաւոր դերում, աւելացնում են որ այդ բաւական չէր մոռանալ տալու նրա սխրագործութիւնները: Խօսքը գլխաւորապէս եկեղեցական քաղաքականութեան մասին է:

Հները կատաղի թշնամի են Վարդին եւ նրա բռնած ուղղութեան: Կարծում են որ նա էր սկզբնապատճառը այն դժտութիւնների, որոնք վրդովեցին եկեղեցու անդորրութիւնը գրեթէ տասը տարի (859–869): Հաւատացնում են որ շարժառիթն էր Վարդի ընդհարումը Իգնատիոս պատրիարքի հետ անձնական գետնի վրայ:

Սակայն, խնդիրը աւելի խոր արմատներ ունէր և պատմագիրների լուսաբանութիւնն ու տեսակէտը ներշնչուած են կուսակցական նեղ եւ ըստ էութեան թիւր ոգով:

Յովհաննէս հայ պատրիարքը գահընկէց եղաւ 843 թուին պատկերապաշտութեան վերականգնումով: Նրան յաջորդեց Մեթոդիոսը, որ կառավարեց միայն չորս տարի: 847 թուին երեք արժանաւոր թեկնածու կար, երեքն էլ արքայազն ծագումով, Միքայէլ Ռանդաբէի որդի Իգնատիոսը եւ Լեւոն Հայի երկու որդիները՝ Վասիլ եւ Գրիգոր: Առաւելութիւն տրուեց Իգնատիոսին ոչ այն հաշուով որ աւելի արժանաւոր էր քան միւս ընտրելիները: Իգնատիոսն իր յաջողութիւնը պարտ էր յատկապէս ներքինի Թէոկտիստին, Թէոդորա կայսրուհու ամենազօր մինիստրին: Նրան բնաւ ձեռնտու չէր եւ նրա քաղաքական նկատումների մէջ չէր մտնում յառաջ քաշել հայ ոյժերին: Արտաքուստ կարող էր վարագուրել իր ընտրութիւնը այն բարեմիտ պատրուակով, որ Վասիլ եւ Գրիգոր պատկերամարտի որդիներ էին եւ ուրեմն անբաղձալի ժառանգորդներ հայրապետական աթոռին մի այնպիսի ժամանակ, երբ յաղթանակել էին պատկերները: Թէոկտիստը ինքն էր հեղինակը պատկերանպաստ քաղաքականութեան եւ այժմ էլ ինքն է Իգնատիոսի ընտրողն եւ հովանաւորը:

Վարդը որպէս քաղաքական հակառակորդ Թէոկտիստի չէր կարող բարեկամ լինել նրա արբանեակներին, որոնց թուում եւ պատրիարք Իգնատիոսին: Հռչակաւոր ներքինու տապալումից յետոյ բնական է որ պատրիարքի դիրքը եւս պիտի խախտուէր:

Իգնատիոսը ջերմեռանդ կրօնաւոր էր, ո՛չ խոր միտք ունէր եւ ո՛չ սուր աչք: Փոխանակ զգալու իր փափուկ դրութիւնը եւ ըստ այնմ շարժուելու, բաւականին անչրջանկատ գտնուեց եւ ինքն իսկ պատճառ եղաւ իր անկման եւ յաջորդող խռովութեանց:

Ինչի՞ց պայթեց Վարդի եւ Իգնատիոսի ընդհարումը: Հները պատմում են եւ նորերը երկրորդում առանց քննութեան երկու դէպք, որոնցից մէկը աւելի զրպարտութեան մօտ է թւում քան իսկութեան:

Վարդը երկու որդի ունէր եւ մի դուստր: Աւագ որդին, որի անունը չէ պահել պատմութիւնը, նշանակուած էր մոնոստրատեգ, այսինքն մի քանի թեմերի սպարապետ, արեւմտեան երկրներում: Այսպիսի պաշտօն ունէր մի ժամանակ Վարդան անունով հայ զօրավարը արեւելեան թեմերում: Կրտսեր որդին կոչւում էր Անտիգոն եւ մանուկ հասակից կարգուած էր սխոլների դոմեստիկ, պալատական հեծեալ գնդի զօրապետ: Դստեր անունն էր Իրինէ և ամուսնացած էր Սմբատ հայ իշխանի հետ, որ Թէոկտիստի սպանութիւնից յետոյ ստանձնել էր լոգոթետի բարձր պաշտօնը: Իրինէի

դամբարանը գտնուում էր Գասորիա վանքում, ուր թաղուած էին նաեւ իր հօրեղբայրը՝ Պետրոնը, հօրաքոյրը՝ Թէոդորա կայսրուհին իր երեք աղջիկներով[1]:

Մայրաքաղաքում չարաշչուկ լուրեր էին պտտում որ Վարդ կեսարը կենակցում էր իր նուի հետ, այն է աւագ որդու կնոջ հետ: Անփառունակ չչուկները հասան նաեւ պատրիարքին: Իգնատիոսը չհամբերեց, իսկոյն կանչեց Վարդին եւ յորդորեց յետ կենալ պիղծ յարաբերութիւնից: Վարդը սովոր չէր նախատինքի: Իգնատիոսը դայրացաւ եւ վճռական քայլ արեց: Ցայտնութեան մեծ ոնին, երբ կեսարը մօտեցաւ ս. հաղորդութեան, պատրիարքը հնարաւոր դտաւ մերժել եւ այսպիսով հրապարակաւ մեծ անարգանք հասցրեց ամենազօր կեսարին: Վարդը վրդովուած եկեղեցու պետի թեթեւամիտ եւ անխոհեմ վարմունքից, հանեց սուրը խելքի բերելու բարձրավիզ եկեղեցականին, բայց կարողացաւ ինքն իրեն զսպել: Այն օրից վճռեց քշել պատրիարքին աթոռից:

Այս զրոյցը գտնւում է բոլոր պատմագիրների մօտ[2]: Միայն մէկը վկայում է, որ Վարդը բաժանուեց իր կնոջից եւ ամուսնացաւ իր նուի հետ, արհամարհելով եկեղեցական օրէնքները[3]:

Մեզ թւում է որ նուի պատմութեան իսկական աղբիւրը Իգնատիոսի վարքն է, գործ Նիկետաս Պափլագոնացու[4]: Այստեղից են քաղել պատմագիրները: Արդեօ՞ք կարելի է անպայման հաւատ ընծայել մի ծանր ամբաստանութեան, երբ նա բխում է հակառակորդ բանակից: Եւ ո՞վ էր այս նուն:

Թէոդորա կայսրուհին իր որդու Միքայէլի համար հարս գտնելու նպատակով դիմել էր նոյն միջոցին, ինչպէս ինքն էր ընտրուել: Ամեն կողմից մատղահաս աղջիկներ էր բերել տուել պալատ եւ նրանց միջից ընտրել Դեկապոլիտ անունով մի մարդու դստեր, Եւդոկիային: Հարսնացուների թւում էին նաեւ երկու Կապպադովկիացի աղջիկներ, երկու քոյրեր, որոնցից մէկի անունն էր Իրինէ, միւսինը յայտնի չէ: Մայրաքաղաք գնալիս քոյրերը այցելել էին Ոլիմպոս լերան վրայ Յովհաննիկ մենակեացին, հայցել նրա օրհնութիւնը եւ աղօթքը յաջողութեան համար: Յովհաննիկը հիասթափեցրել էր Իրինէին, գուշակելով որ նրան սպասում է ոչ կայսերական ծիրանին, այլ վանական սեւ զգեստը:

Արդարեւ, Իրինէն չարժանացաւ հարսնութեան եւ կուսակրօնութիւն ընդունեց, մտնելով Խրիսոբոլանտ (Ոսկէ պարկ) մենաստանը, Ասպարի աւազանի մօտ, ուրեմն հարեւան Մանուէլ Մամիկոնեանի տան, որ նոյն աւազանի մօտ էր գտնւում:

Իսկ ի՞նչ եղաւ միւս քոյրը: Իրինէի վարքից իմանում ենք, որ քոյրը «հետագայում ամուսնացաւ Միքայէլ կայսրի մօրեղբօր Վարդ կեսարի հետ»[1]:

Իրինէի քրոջ ծանօթացած պէտք է լինէր Վարդը Միքայէլի փեսայութեան տարին, որ պատահեց Թէոկտեստի սպանութիւնից քիչ յառաջ: Սպանութիւնը 856ին էր, ուրեմն Միքայէլի ամուսնութիւնը կ՚ընկնի 855ին, երբ նա 16-17 տարեկան էր: Սակայն, այդ ժամանակ Վարդն արդէն չափահաս աղջիկ ունէր, երկու որդի, որոնցից կրտսերը 9–10 տարեկան հասակ ունէր: Աղջիկը կարգուած էր Սմբատ իշխանի հետ: Հասկանալի է որ Իրինէի քոյրը Վարդի առաջին կինը լինել չէր կարող: Նա երկրորդ կինն էր: Վերեւ յիշուած վկայութեան համաձայն՝ Վարդը հեռացրել էր իր առաջին կնոջը եւ ամուսնութեան առել էր իր նուին, այն է որդու կնոջը: Այս կարծեցեալ նուն ոչ այլ ոք է ուրեմն եթէ ոչ Իրինէի քոյրը, ուրեմն նուի քոյրը:

Իրինէի վարքը ազատ է իգնատեան գրականութեան ազդեցութիւնից եւ նրա վկայութիւնը արժէքաւոր: Այստեղ ոչ մի ակնարկութիւն չկայ Վարդի ամուսնութեան արատաւորութեան վրայ: Անգամ խօսք չկայ այն մասին, որ Իրինէի քոյրը Վարդի նուն էր: Ապա ուրեմն որքա՞ն արժանահաւատ են հակառակ բանակի ամբաստանութիւնները:

Վարդի երկու որդիներից միայն երէցը կարող էր փեսայացած լինել, կրտսերը տակաւին տղայ լինելով: Փեսայութիւնը կանուխ չէր 855 թուից, երբ Իրինէ եւ իր քոյրը մայրաքաղաք եկան ներկայանալու կայսերական հարսնատեսութեան: Յաջորդ տարիները Վարդի երէց որդին գտնւում էր պաշտօնով արեւմուտքում և մնաց անդ և մեռաւ յառաջ քան 862 թիւը: Պէտք է կարծել որ եթէ ամուսնացել էր, կինը իրեն հետ էր լինելու:

Վարդի մասին պտտող անհաճոյ լուրերը յառաջ էին քան 858 թ. յունուարի վեցը: Նուն հաղիւ երկու տարուան նորահարս էր, գուցէ եւ պակաս: Եթէ ամուսինը արեւմուտք ղրկուեց Թէոկտիստի մահից յետոյ, ինքը նուն եւս արեւմուտք պէտք է լինէր 856-857 տարիները: Իսկ եթէ 858 յունուարից յետոյ գնացին արեւմուտք, դժուար է ենթադրել որ

1 Constantin Porphyrogenetes, De Cerimoni's I, 648.
2 Genes., 99; Georg. 826; Leo Gram. 240; Symeon, 667.
3 Teoph. Cont., 193.
4 Vita Ignati, Migne, P. G. 105, col. 504.

1 Acta Sanctorum, Iulis, 28, vol. VI, 602.

Վարդը որդու ներկայութեան ամօթալի սէր տածէր դէպի իր նուն, իր հարսը:

Զարամիտ զրոյցները ծագել են հաւանօրէն այն դեռնի վրայ, որ Վարդը որդուն պաշտօն էր տուել արեւմուտքում, եւ ենթադրել են, որ օգտուելով նրա բացակայութիւնից չնացել է նուի հետ: Մի բան ստոյգ է որ Վարդը իր որդու մահից յետոյ ամուսնացել է նրա կնոջ եւ կամ նշանածի քրոջ հետ: Այստեղից սկիզբ են առել զրաբանութիւնները, որոնք ամեն պարագային ոչ մի կապ չէին կարող ունենալ Իգնատիոս պատրիարքի անկման հետ, քանի որ անկումը 858 նոյեմբերին էր, իսկ Վարդի ամուսնութիւնը հաւանօրէն քիչ առաջ էր քան 862 թիւը իր կեսարութեան տարին:

Իգնատիոսի բերանից նրա արբանեակներից մէկը դանգատ էր գրել Հռոմայ պապին Վարդի դէմ: Այստեղ ոչ մի խօսք չկայ Վարդի արատաւոր սիրոյ մասին: Պատրիարքի անկման պատճառը համարւում է այն որ հրաժարուել էր կտրել Թէոդորայի եւ իր դուստրների մազը հակառակ Վարդի հրամանին[1]:

Այս պատճառաբանութիւնը ևս զուրկ է ճշմարտութիւնից: Թէոդորան ընկաւ 856 թուին, եւ պալատից հանուեց առ առաւելն մէկուկէս տարուց յետոյ, ինչպէս տեսանք վերեւ, ուրեմն 857 թուի կէսերին, արդէն վանք պիտի քաշուած լինէր: Այն ինչ պատրիարքի դահընկէցութիւնը վերաբերում է 858 թուի նոյեմբերին: Տարածութիւնը խիստ մեծ է, որպէսզի հնարաւոր լինի պատճառական աղերս գտնել երկու դէպքի մէջ:

Մեզ թւում է որ Վարդի եւ պատրիարք Իգնատիոսի թշնամութեան և ընդհարումի իսկական պատճառը թագցնելու եւ կամ սքօղելու համար է, որ հնարուած են Վարդի ապօրինի սիրոյ եւ Թէոդորայի մազը կտրելու զրոյցները: Եթէ անգամ դրական հիմք ունեցած լինեն, խիստ աննշան դէպքեր են հասարակական տեսակէտից, որպէսզի կարենային այնպիսի մեծ խռովութիւն յառաջ բերել: Ոչ բիւզանդական արքունիքը կարող էր պարծենալ բարոյական մաքրութեամբ և ոչ իսկ պատրիարքը այնքան նրբազգաց էր և խրատասիրտ, որ գլուխ բարձրացնէր մեծազօր մինիստրի դէմ եւ իր դրութիւնը վտանգէր ընդունայնաբար:

Վարդի ատելութիւնը եւ ոխը Իգնատիոսի դէմ կարելի է բացատրել եւ հասկանալի դարձնել միայն այն դէպքում, եթէ ենթադրենք որ պատրիարքը խառն է եղել Վարդի դէմ

1 **Theognostus**, Libellus ad Papam, **Migne**, P. G. 105, col. 857.

լարած վերջին դաւադրութեան: Գիտենք որ գահազուրկ Թէոդորան էր դաւադրութեան բուն հեղինակը եւ նպատակ ունէր իր եղբօր մահուան գնով վերստին տիրանալ գահին: Պատրիարքը Թէոդորայի եւ Թէոկտիստի մօտ բարեկամն էր եւ նրանց կողմից ընտրուած: Թէոկտիստի սպանութիւնից յետոյ խեթ աչքով պիտի նայէր Վարդի վրայ: Թէոդորայի հեռացումը եւս առաւել պէտք է դառնացնէր պատրիարքին եւ լարէր Վարդի դէմ:

Խելագար Գեբէոնի օրինակը ցոյց է տալիս որ Իգնատիոսը անտարբեր հանդիսատես չէր այն նենգաւոր փորձերին, որոնց նպատակն էր տապալել Վարդին: Անշուշտ Վարդը բանաւոր հիմք ունէր, երբ որ պատրիարքին կոչում էր Γεβοβασιλευτής, այսինքն մի մարդ, որ տենչում է Գեբէոնի թագաւորութեան[1]:

Գեբէոն անուն անձը Իլլիւրիայի (այժմ Ալբանիա) Դիրաքիում քաղաքից եկել էր մայրաքաղաք եւ յայտարարել, որ ինքը Թէոդորա կայսրուհու որդին է, ծնուած նախ քան նրա ամուսնանալը Թէոփիլի հետ: Ամբոխի միտքը խմորող երեւոյթ էր: Կարող էր խռովութիւն յարուցանել: Վարդի հակառակորդների ձեռքին մի նոր գործիք էր գժտութիւններ սերմանելու եւ Վարդի կառավարութիւնը վարկաբեկելու համար: Խռովարար խենթը բռնուեց եւ իր պատիժը կրեց մահուան դատապարտուելով: Նոյն օրը աթոռից նետուեց նաեւ Իգնատիոս պատրիարքը, 858 թ. նոյեմբեր ամսին:

Եթէ իրօք սոյն տարուան սկիզբը պատրիարքը մերժել էր հաղորդութիւն տալ Վարդին եւ կամ չէր կամեցել խուզել կայսրուհու մազերը, այս անհնազանդութիւնն որքան եւ անախորժ Վարդի համար, չէր կարող պատճառ համարուել պատրիարքի անկման:

Իգնատիոսի փոխարէն Վարդն առաջարկեց մի աչխարհիկ անձ: Այդ Փոտն էր: Իր դարու ամենից լուսաւոր միտքը, ամենագէտ, իբրեւ մարդ հաճելի շարժումներով եւ նիստուկացով: Այդ միջոցին նա պրոտոպաթար էր (սուսերակիր) և պրոտո-ասեկրետ (առաջին քարտուղար): Փոտը Վարդի սիրելին էր որպէս գիտուն եւ զարգացած գլուխ: Բացի դրանից Փոտը Արշաւիր պատրիկի քրոջ Իրինէի որդին էր, իսկ Արշաւիրը փեսայ էր Վարդին, սրա քրոջ Կալո-Մարիայի ամուսինն էր: Ընտանեկան մերձաւորութիւն ունէին:

Իգնատիոսի անկումից մի ամիս չանցած, նոյն 858 թ. դեկտեմբերի 25ին Ծննդեան օրը, Փոտը բարձրացաւ պատ-

1 Vita Ignatii, **Migne**, P. G. 105, col. 504.

ըիարքական աթոռ, մի քանի օրուան մէջ ստանալով եկեղեցական բոլոր աստիճանները: Իգնատիոս չյօժարեց եպիսկոպոս ձեռնադրել Փոտին: Դիմեցին Գրիգոր Ասբեստ անունով եպիսկոպոսին, որ Իգնատիոսի ոխերիմ թշնամին էր, եւ նա ձեռնադրութեան կարգը կատարեց: Այս քայլը աւելի եւս գրգռեց վշտացած պատրիարքին:

Գրիգոր Ասբեստը Սիկիլիայի եպիսկոպոսն էր: Մի զանցառութեան հետեւանքով կանչուել էր մայրաքաղաք համարաւութեան համար: Մի օր Ս. Սոֆիայի տաճարում, երբ հոգեւորականները շարուած, լուցեալ մոմերով սպասում էին պատրիարքին, եւ Գրիգորը ևս տեղ էր բռնել միւսների թւում, Իգնատիոս նկատելով Գրիգորին, դայրացաւ եւ հրամայեց հեռանալ եկեղեցուց եւ չհամարձակուել մասնակցել հանդէսներին, մինչեւ որ նրա գործը չքննուի: Գրիգոր եպիսկոպոսը խորապէս վիրաւորուած, հանդցրեց իր մոմը և գետին ձգեց ասելով բարձրաձայն. «սա հովիւ չէ, որ եկեղեցի է մտել, այլ գայլ»:

Եկեղեցականութիւնը բաժանուեց երկու բանակի, Իգնատիոսի եւ Գրիգորի շուրջը: Այժը առաջնի կողմն էր: Թէոդորայի և Թէոկտիստի կառավարութեան ժամանակն էր եւ Իգնատիոսը ամուր պատուար ունէր իր ետեւ յանձին նրանց: Ժողով գումարեց պատրիարքը և դատապարտեց Գրիգորին իր կողմնակիցներով: Սրանք դիմեցին Հռոմ, պապի միջնորդութեան: Պապը պահանջեց ժողովի արձանագրութիւնը: Իգնատիոսը մերժեց: Գրիգոր Ասբեստի համակիրների թւում էր Փոտ, տակաւին աշխարհական, որ յարգում էր Գրիգորի գիտութիւնը եւ որոշ խտրանք ունէր անուս եւ անխորագէտ Իգնատիոսի նկատմամբ:

Վարդը Գրիգորի և Փոտի կողմն էր ընդդէմ Իգնատիոսի, Թէոդորայի և Թէոկտիստի: Կուսակցական կրքերը եկեղեցու շուրջը դասաւորուել էին քաղաքական հակամարտութեան խողովակների մէջ:

Գրիգոր Ասբեստի մասնաւոր հարցը դեռ լուծուած չէր: Այսպիսով կուսակցական ներհակութեան սրերը արդէն սրրուած պատրաստ էին: Ասբեստի հարցը կախուել էր անորոշութեան մէջ: Կարդալոյծ եպիսկոպոսի յանկարծական երեւումը պատուաւոր դերում ալեկոծեց հակառակորդներին: Աշխարհական մի մարդ եպիսկոպոսացել էր մի քանի օրուան մէջ եւ պատրիարքական աթոռի վրայ բազմել: Այս եւս անհանդուրժելի էր իգնատիոսականների աչքում:

Փոտի ընտրութեան յաջորդ տարին Իգնատիոսը ժողով

գումարեց իր կուսակիցներից: Ժողովը որոշեց հեռացնել Փոտին պատրիարքութիւնից: Նոյն տարին Փոտը իր կողմից մի ուրիշ ժողով հրաւիրեց եւ նոյնպիսի վճիռ հանեց Իգնատիոսի դէմ:

Եկեղեցական կուսակցութիւնները, հարկաւ, վարում էին քաղաքական պատնէշների վրայ: Իգնատիոսի թիկունքում կանգնած էին յառաջ Թէոդորա եւ Թէոկտիստ, այժմ Փոտի յենարանն է Վարդը: Համաձայն Փոտի ժողովի որոշման, Վարդը աքսորեց Իգնատիոսին:

Խնդիրը բարդացաւ երբ Ստուդիոնի հռչակաւոր վանքի միաբանութիւնը բռնեց Իգնատիոսի կողմը, աւելի կնճռուեց մանաւանդ Հռոմի միջամտութեամբ: Ստուդիոնականները պաշտպանում էին եկեղեցու ազատութիւնը ընդդէմ պետութեան ճնշումի: Իսկ Հռոմայ պապը ձգտում էր օգտուել հանգամանքից եւ պղտոր ջրում ձուկ որսալ: Այդ ժամանակ գահի վրայ Նիկողայոս Ա. պապն էր, որ երազում էր Հռոմի համաշխարհային տիրապետութեան մասին, և պատեհ առիթ համարեց ձեռք դնել Բիւզանդական եկեղեցու վրայ:

Նոր պատրիարքի աթոռակալութիւնը հաղորդեցին, ընդունուած սովորութեան համաձայն, Անտիոքի, Երուսաղէմի, Աղեքսանդրիայի պատրիարքներին, ինչպէս Հռոմայ պապին: Արշաւիր սպաթարը (երեւի Վարդի կամ Փոտի ազգականներից) երեք եպիսկոպոսի ուղեկցութեամբ ներկայացաւ պապին 860 թ. ամառը եւ յանձնեց Միքայէլ կայսրի եւ Փոտի նամակները: Պապն ի պատասխան, երկու եպիսկոպոս ղրկեց Կ. Պոլիս, որ մօտէն ծանօթանան դործի էութեան եւ իրեն զեկուցանեն: Միեւնոյն ժամանակ պապը Միքայէլ կայսրին ուղղած նամակում հասկացրեց որ պատրաստ է վէճը լուծել նրա ցանկութեան համաձայն պայմանով որ իրեն, պապին, զիջանի Թեսալոնիկէի, Կալաբրիայի եւ Սիկիլիայի եկեղեցական վիճակները:

Հետեւեալ 861 տարին մայիս ամսին Կ. Պոլսում բացուեց ժողովը պապի նուիրակների եւ 318 այլ եպիսկոպոսների մասնակցութեամբ: Մի հայ պաշտօնեայ Վահան Անգորէս կոչեցեալ ուղարկուեց Իգնատիոսի յետեւից[1]: Յովհ. Պատրիկը, որ կոչւում էր Կոքսէս, բերեց Ծերակոյտի նախագահին Լեւոն պատրիկին, եւ Թէոդոտակ պատրիկին, որ յետոյ մագիստրոսութեան պատիւ ստացաւ: Հաւանօրէն Թէոդոտակ եւս հայ ծագում ունէր, դատելով անուան ձեւից, որ աւելի հայկական մասնիկ ունի քան յունական: Եօթանասուն

1 Vita Ignatii, Migne, P. G. 105, col. 577.

եւ երկու հոգի վկայեցին, որ ինքը Իգնատիոսը իր ժամանակին ընտրուել էր ոչ եկեղեցական կանոնի համաձայն, այլ Թէոդորա կայսրուհու ճնշմամբ, որպէս նրա հովանաւորեալը:

Նկատենք անցողակի, որ սրանով հաստատւում է վերև յայտնած մեր ենթադրութիւնը, որ Իգնատիոսը կայսրուհու եւ Թէոկտիստի թեկնածուն էր ընդդէմ Լեւոն Ե-ի որդիների՝ Վասիլ եւ Գրիգոր եպիսկոպոսների:

Ժողովը եկաւ այն որոշման, որ Իգնատիոսն անարժան է պատրիարքական աթոռին եւ նրա հեռացումը արդար է: Պապի նուիրակները եւս դրին իրենց ստորագրութիւնը ժողովի վճիռների տակ: Պապը գոհ էր: Տեսանք, որ նրան հետաքրքրում են առանձնապէս ոչ վէճերը ինքնին, այլ որոշ եկեղեցական թեմեր, որ Լեւոն Գ Իսաւրացին խլել էր Հռոմից եւ այժմ պապը պահանջում էր յետ դարձնել իրեն: Պապի այս աշխարհակալ ցանկութիւնը չէր յարգուել, ուստի եւ չրջաբերականներ ղրկեց արեւելեան պատրիարքներին, իր գայրոյթը արտայայտեց ընդդէմ մանաւանդ Փոտի, անուանելով նրան չարագործ, պահանջեց նրա հրաժարումը եւ Իգնատիոսի վերահաստատումը աթոռի վրայ:

Ճիշտ այդ ժամանակ Իգնատիոսի մերձաւորներից Թէոդոսոս անունով մէկը Հռոմ գնաց պապի մօտ, հետը տանելով Իգնատիոսի նամակը: Պապը ժողով գումարեց 863 թուին Լատերան եկեղեցու մէջ: Թէոդոսոսի մերկացումները մի պատրուակ էին, որպէսզի ժողովը պահանջէր Փոտի հրաժարականը ի նպաստ Իգնատիոսի: Փոտը վճռական քայլ արաւ եւ 865 թուին առանձին ժողովով նոյն կերպ վարուեց պապի հանդէպ: Եկեղեցական խզումը կատարեալ էր: Գործը այնտեղ հասաւ, որ Միքայէլ կայսրը, իմա՛ Վարդը, սպառնաց պապին որ զէնքի ոյժով կը հարկադրէ նրան հնազանդել կայսերական ժողովների որոշման:

Վարդի անակնկալ սպանութեամբ 866 թուին 21 ապրիլի Փոտի բախտը չրջուեց:

Վարդի աստղը թեքուեց այն օրից, երբ նա կործանեց իր վաղեմի բարեկամ Դամիանին: Սա Միքայէլի սենեկապետն էր (պարակիմոմեն) եւ Վարդից դժգոհ էր, երեւի, այն պատճառով, որ Վարդը մեծ դիրքի հասնելով հոգ չէր տարել իր բարեկամին եւս յառաջ քաշելու:

Մի օր Վարդը գոյնզգոյն սկարամանդը հագած (սկամարանդը մի տեսակ տունիկ էր, որ հագնում էին մանաւանդ ձի նստած ժամանակ), ծերակուտականների եւ դրանիկ մեծամեծների ուղեկցութեամբ անցնում էր ամենայն հան-

դիսաւորութեամբ հորոլոգիոնից (սրահ, ուր արեւացոյց կար) դէպի ոսկեսրահը (խրիսոտրիկլինոն) Միքայէլ կայսրի մօտ: Դամիանը նստած էր հանգիստ հորոլոգիոնում եւ զլացաւ վեր կենալ տեղից ու սովորական յարգանք մատուցանել կեսարին: Վարդը այլայլուեց եւ հազիւ զայրոյթը զսպած մտաւ կայսեր մօտ եւ պատմեց նրան իրեն հասցրած վիրաւորանքը: Կայսրը իրաւացի դտաւ իր սիրելի քեռու տրտունջը եւ անմիջապէս հրաման արձակեց բռնել Դամիանին եւ ղրկել մենաստան, նախապէս մազը խուզելով:

Դամիանի տեղ սենեկապետութեան պաշտօնին անցաւ, կայսեր հաճութեամբ, հայազն Վասիլը[1]:

Աւելորդ չէ նկատել, որ Դամիանի դէպքը մեծ հաւատ չէ ներշնչում: Դամիանը սկզբում դուրս է բերուած որպէս Վարդի բարերար: Նա էր որպէս թէ միջնորդել և հաշտեցրել Վարդին Միքայէլի հետ: Կարծես Վարդի ապերախտութիւնը ցուցադրելու համար է որ հնարուած է նրա տխուր վախճանի զրոյցը: Թերեւս Դամիանին վերագրուած ծառայութիւնը եւս չի համապատասխանում իրականութեան, այլ դիտաւորեալ պատմութիւն է:

Սենեկապետութիւնը տրւում էր սովորաբար ներքինիներին: Միքայէլ կայսրը բացառաբար յանձնեց այդ պաշտօնը Վասիլին, որի ազդեցութիւնը հետզհետէ զօրանում էր: Վարդը իրաւունք ունէր տրտնջալու այս կարգադրութիւնից: Վասիլը անկասկած աւելի վտանգաւոր էր քան թշուառ ներքինին, Դամիանը: Վարդին են վերագրում թեւաւոր խօսքը, թէ հաւատ ընծայելով նենգամիտներին, «աղուէսին հեռացրին եւ տեղը դրին մի առիւծ, որ բոլորիս լափելու է եւ կլանելու է»[2]:

Ասպարէզի վրայ էին այժմ երկու ահարկու մրցորդներ, Վարդ եւ Վասիլ, երկու նշանաւոր հայորդիք: Միքայէլ կայսրը կարծես թէ մրցութեան կչեռքի լծակն էր և նրա վերաբերումից կարելի էր դուշակել թէ որ կողմն է հակում յաղթող ծանրութիւնը:

Վարդը ականատես էր թէ ինչպէս կայսրի սիրելի տարփուհին Եւդոկիա Ինգերը եւ հարազատ քոյրը, Թեկլան, անցան Վասիլի դիրքը: Անվիճելի յաջողութիւն էր: Վասիլը մտերմացաւ կայսրին և ընկերակից էր նրա խրախճաններին: Կարող էր կայսրի հետ խօսել մինչև անգամ նրա քեռու Վարդի դէմ: Վասիլ սկսեց կասկած ցանել Միքայէլի սրտում, որ

1 Leo Gram, 241; Georg. 828.

2 Theoph. Cont. 235.

կեսարը այնքան էլ վստահելի անձը չէ եւ որ նրա մէջ փառասիրութիւնը գերակշռում է հաւատարմութեան զգացումին: Կայսրը ընդել էր քսութեան եւ նենգամիտ չչուկների: Արժէք չտուաւ Վասիլի բացայայտ ակնարկներին: Անխոհեմութիւն կը լինէր նրա կողմից երես դարձնել միանգամից իր բազմավաստակ քեռուց:

Վասիլ փորձեց խօսել Միքայէլի հետ ուրիշ եւ աւելի վստահելի բերանով: Նա խորամանկօրէն իր կողմը քաշեց Սմբատ լոգոթետին, որ Վարդի դստեր Իրինէի ամուսինն էր, եւ հաւանօրէն Բագրատունեաց տանից, դատելով անունից: Վասիլը պայթակղեց Սմբատին պատրիչ խոստումներով, հաւատացրեց որ եթէ Վարդը մէջտեղէն վերցուի ինքը կը բռնէ նրա տեղը: Խորհուրդ տուաւ չչնջալ կայսրի ականջին որ Վարդը մի սպառնալիք է նրա կեանքի եւ իշխանութեան համար: Փեսայի խօսքը աներոջ դէմ այլ կշիռ կ'ունենար կայսրի աչքում քան Վասիլի նախանձաւոր փսփսուքը: Միքայէլի խելքը մտաւ: Վարդի բախտը այլեւս նախորոշուած էր: Մնում էր սպասել յարմար առիթի:

Նախախնամութիւնը հների հասկացողութեամբ պատմական գործօն էր, որ յաճախ ազդարարում էր գալիքը զանազան նշաններով, ինչպէս տեսիլներ, երազներ, աստղաբաշխական երեւոյթներ եւայլն: Այդպիսի նշաններ են գտել եւ արձանագրել պատմագիրները նաեւ Վարդի կորստեան վերաբերեալ:

Միքայէլ կայսրը ծրագրել էր արշաւել Վարդի ուղեկցութեամբ Կրետէ կղզին Արաբների դէմ: Զօրքը եկաւ եւ կանգ առաւ Կեպի (Պարտէզներ) կոչուած տեղում Թրակեսեան թեմի մէջ Մենանդր գետի հովտում: Վարդը անձամբ ընդդէմ էր այս իջեւանումին: Անշուշտ լուրջ կասկածներ ունէր: Նախախնամութիւնն արդէն տեսակ տեսակ նշաններով պաշարել էր նրա միտքը: Մի անգամ երազ տեսաւ, որպէս թէ կայսրի հետ մտնում էր Ս.Սոփիայի տաճարը սովորական հանդիսաւորութեամբ: Երբ ներս մտան, Վարդի աչքին երեւացին երկու լուսազգեստ էակ, կարծես հրեշտակներ էին: Աւելի յառաջանալով նկատեց որ պատրիարքական աթոռի վրայ նստած է մի ծերունի մարդ: Այն՝ Պետրոս առաքեալն էր: Նրա առաջ ծնկաչոք ապերսում էր Իգնատիոս պատրիարքը, որ իրեն հասցրած անիրաւութիւնները անպատիժ չմնան: Առաքեալը խոստացաւ եւ կանչեց իր կողքին կանգնած երկու հրեշտակներից մէկին եւ մեկնելով նրան մի սուր, ասաց. «գնա՛ եւ խողխողիր այն մարդուն, որ ձախ կողմն է կանգնած, այն Թէորգիստին (ատելի աստուծուն). գնա՛ եւ յայտնի միւսին որ աջ կողմն է, այն ասեքոտեկնոն անձին (անիրաւ որդի), որ նման մահ սպասում է եւ նրան»:

Առաջին զոհը Վարդն էր, երկրորդը Միքայէլը:

Մի ուրիշ հրաշք: Նախ քան պատերազմի ելնելը, Վարդը գնաց Հոդիգի (Ուղեւորաց) կոչուած Տիրամօր վանքը: Երբ ճրագը ձեռքին աղօթում էր, յանկարծ քղամիդը սահելով ուսերից ընկաւ գետին: Վարդը զգաց այս չարագուշակ երեւոյթի խորհուրդը եւ արտասուաթոր աղերսեց Ս. Կուսին որ խափանէ չար վտանգը եւ փրկէ իրեն փորձանքից:

Պատմում են նաեւ, որ Թէոդորա կայսրուհին, որ տակաւին կենդանի էր, ուղարկեց Վարդին Կեպի բանակատեղը մի խորհրդաւոր պարգեւ: Մի սիրուն բայց կարճ զգեստ էր, վրան ոսկի թելով բանուած կաքաւի պատկեր: Տարօրինակ նուէրը զարմացրեց Վարդին, որ չէր հասկանում թէ ինչո՞ւ հագուստը կարճ է եւ ի՞նչ է նշանակում կաքաւը: Վշտով իմացաւ որ այդ թռչունը նենգութեան խորհրդանշան է եւ յիշեցնելու է ուղարկողի նենգաւոր ոխակալութիւնը Թէոկտիստի մահուան պատճառով, իսկ զգեստի կարճութիւնը ակնարկ է որ նրա օրերը կարճացել են: Երեւում է որ ո՛չ տարիների եւ ոչ էլ մենաստանի խաղաղութիւնը չէին մեղմել յիշաչար կնոջ վատախնդիր ոգին:

Ս. Աննա եկեղեցում, որ կոչւում էր Դեւտերոն (երկրորդ), մի անդրի կար սիւնի վրայ դրած: Երկրաչարժից անդրին վայր էր ընկել: Ասում են որ Լեւոն մեծ փիլիսոփան այս դէպքի մէջ նախատեսել էր Վարդի անկումը. ով որ կայսրից յետոյ երկրորդն էր պիտի ընկնէր, կործանուէր: Երկրորդը Վարդ կեսարն էր: Միեւնոյն ժամանակ փիլիսոփան մատնանշել էր, որ յաջորդը լինելու է Վասիլը:

Նման չարագուշակ երեւոյթները քաջալերիչ չէին Վարդի համար: Արշաւանքի նախօրէին կանչեց իր մտերիմ բարեկամներին ընթրիքի եւ կարծես նախազգում էր որ այլեւս տեսնելու չէ նրանց, ուստի նուէրներ բաշխեց բոլորին, խնդրեց որ պահեն իր յիշատակը: Վերջին ընթրիքն էր բարեկամների շրջանում եւ իր տանը:

Այս զրոյցները հաւաքել է Վասիլի թոռը, Կոստանդին Ծիրանածինը եւ մեզ աւանդել թէ ինքը, գրելով իր պապի կեանքը, եւ թէ Գենեսիոսը, որ կազմել է իր պատմական գործը նրա պատուէրով. զրոյցներ որ ոչ մի պատմական արժէք չունին[1]:

Վարդի երազը առնուած է Իգնատիոսի կեանքից[2]:

Զրոյցների իմաստն այն է որ Վարդի սպանութեան պա-

1 Genes. 103-105; Const. Porphyr. Vita Basilii; Theoph. Contin., 203-207.
2 Migne, P. G. 105, col. 533-536.

տասխանատուութիւնը բարդեն նախախնամութեան վրայ եւ չքմեղ ձեւացնեն իսկական ոճրագործին, Վասիլին: Նոյն նպատակով այլայլած են եւ խսպառ եղծած սպանութեան տեսարանը: Նրանց ասելով, Վարդը ատելի էր պալատականներին: Կեսար դառնալով այնքան զոհոզացել էր, որ բարձրից էր նայում կայսրի եւ արքունի պաշտօնէութեան վրայ: Միակ հոգսն էր յաղուրդ տալ իր անսահման փառասիրութեան: Երբ կայսերական զօրաբանակը հասաւ Կեպի, Միքայէլի վրանը զարկեցին հովտում, իսկ Վարդը ընտրեց իրեն համար մերձակայ բլուրը:

Այս հանգամանքը, պատահական էր թէ գիտակցական, սրեց նրա թշնամիների չարախօս լեզուն: Կայսրին հասկացրին որ Վարդը ի դուր տեղը չէ բարձրացել եւ դիրք բռնել բլրի վրայ: Կեսարը որպէս թէ դաղտնի միտք ունի գրոհելու նրա վրայ եւ կործանելու: Միքայէլը հաւատաց:

Դաւադիրները գործի անցան: Նրանց առաջնորդն էր Սմբատը, Վարդի փեսան: Նախ ձիարշաւ սարքեցին եւ սրանով ցրեցին Վարդի որդու Անտիգոնի ուշադրութիւնը: Անտիգոնը սխոլների, պալատական հեծելազնդի, դոմեստիկն էր եւ տխուր իր ձեռքի տակ գտնուած ոյժերով: Նրան հեռացնելուց յետոյ Սմբատը մտաւ Միքայէլի մօտ հերթական զեկուցումի պատրուակով այն ժամանակ երբ Վարդը նրա մօտ էր: Զեկուցումից յետոյ նշան արաւ դաւադիրներին երեսը խաչակնքելով, ինչպէս պայմանաւորուած էր: Ներս խուժեցին անմիջապէս թագաւորական պահուածները եւ սրախողխող արին կեսարին Միքայէլի աչքի առաջ: Սպանողների թիւմն էր ոմն Ցիփինարիտ, Խաղտեաց աշխարհից[1]: Այստեղ ոչ միայն Վասիլը անմասն է սպանութեան, այլ անունն անգամ չի յիշատակւում: Պատմողի զգուշութիւնը ծայրայեղ է:

Կոստանդին Ծիրանածին կայսրը այդքան հեռու չի գնում: Նա ընդունում է Վասիլի յանցագործութիւնը, միայն այլ գոյն է տալիս: Դաւադրութեան բուն հեղինակը Միքայէլն էր: Երբ նրա միտքը թունաւորեցին քսու և չարակամ անձեր թէ Վարդը մտադրութիւն ունի իր բարձրադիր վրանից յարձակուելու նրա վրայ, Միքայէլ վճռեց կարել Վարդի կեանքի թելը: Սակայն, չհամարձակուեց գործել բաց, ակնածելով կեսարի հեղինակութիւնից եւ ոյժից: Իրեն հաւասար անձ էր, զօրքը իր հրամանատարներով նրա ձեռքի տակ էր: Անտիգոնը, սխոլների դոմեստիկը, պատրաստ էր պաշտ-

1 Genes. 105-106.

պանելու իր հօրը: Միքայէլը ընտրեց նենգութեան ուղին: Խմբեց իր շուրջը կեսարի հակառակորդներին, որոնց թւում էր Սմբատը: Երբ վերջինս որպէս լոգոթետ ներկայացաւ Միքայէլին հերթական զեկուցումի համար, կայսրը պայմանաւորուած նշանը տուաւ, որ դաւադիրները ներս թողնուին: Սմբատը կատարեց կայսրի պատուէրը, բայց դաւադիրները, թուլամորթ եւ վեհերոտ չէին խիզախում գործի անցնել: Մինչդեռ յապաղելը վտանգաւոր էր: Վարդը կարող էր դիմի ընկնել եւ այնուհետեւ փրկութիւն չկար կայսեր համար: Առաջին զոհը լարուած դաւերի ինքը կայսրը պիտի լինէր: Խուճապը սկսուելու վրայ էր, երբ Միքայէլը անհրաժեշտ տեսաւ դիմել Վասիլի օգնութեան: Մտերիմներից մէկին ուղարկեց նրա ետեւից: Անմիջապէս երեւաց Վասիլը, հէնց որ լսեց որ կայսրի կեանքը վտանգի մէջ է: Վախկոտներին ոգի տուաւ, քաջալերեց եւ յարձակուեցին Վարդի վրայ: Եւ նրան սուսերահար արին Միքայէլի ոտքերի տակ[1]:

Այս պատմուածը եւս միտումնաւոր է: Վասիլը որպէս թէ սուր բարձրացրեց ոչ թէ սպանութիւն գործելու համար, այլ կատարելու իր պարտքը հանդէպ իր կայսրի:

* * *

Իսկական ճշմարտութիւնը որոնելու է հակառակ բանակի գրողների մօտ: Եղելութիւնը սովորական սպանութիւն էր քաղաքական բնոյթով, մերկապարանոց և թափուր պարտաճանաչութեան թէ ուրիշ որեւէ վեհ զգացմունքի զարդերից:

Վարդ կեսարի դէմ դաւեր նիւթողը Վասիլն էր, նրա մեծ ախոյեանը: Չհամարձակելով ձեռք բարձրացնել նրա վրայ մայրաքաղաքում, անչուչա, երկիւղ կրելով նրա զօրութիւնից, Վասիլը խորհուրդ էր տուել Միքայէլին դուրս դալ քաղաքից արշաւանքի պատրուակով:

Ինչպէս երեւում է մայրաքաղաքում գոնէ մի որոշ չբռնանում դաղտնիք չէր արշաւանքի իսկական նպատակը: Վարդի անձնական բարեկամը, Լեւոն մեծ փիլիսոփան, հակառակ էր որ իր բարեկամը մատնակից արշաւին եւ աշխատեց կասեցնել այդ քայլից ասելով, «գնացողը չպիտի վերադառնայ»: Վարդի միւս բարեկամը, Փոտ պատրիարքը, եւս կասկածում էր որ իր հովանաւորի եւ մտերիմի համար մի ծուղակ էր պատրաստւում:

Պատմում են, որ արշաւանքից քիչ առաջ, Աւետեաց

1 Vita Basilii = Theoph. Cont., 235-338.

տօնին, մարտի 25ին, եկեղեցական կարգը աւարտելուց յետոյ պատրիարքը կանչեց խորան Միքայէլ կայսրին եւ Վասիլին: Ներկայ էր նաեւ կեսարը: Պատրիարքը հանեց սուրբ հաղորդութեան սկիհը: Կայսրը եւ Վասիլը թաթախելով սուրբ մէջ իրենց խաչերը ստորագրութիւն տուին եւ երդումով հաստատեցին, որ Վարդը կարող է մասնակցել արշաւանքին անհոգ եւ աներկեւան:

Վարդը թեթեւամիտ չէր եւ ոչ դիւրահաւատ: Եթէ նա չանսաց իր մեծ բարեկամի խորհրդին եւ միացաւ իր թշնամիներին, պատճառը այն մեծ վստահութիւնն էր, որ ունէր իր քեռորդու Միքայէլի վրայ: Սա չատ բան էր պարտական Վարդին:

Զատիկը, որ այն տարին ապրիլի 7ին էր, տօնեցին մայրաքաղաքում եւ անմիջապէս մեկնեցին պատերազմ: Հասան Կեպի կոչուած տեղը եւ բանակեցին: Այստեղ Վասիլը վճռեց վերջ տալ Վարդի կեանքին: Դաւադրութիւնը սարքեց իր համախոհների հետ, որոնց անունները պահուել են: Բոլորն էլ հայեր էին:

Յովհաննէս Նեատոկոմիտ անունով մէկը իմացաւ Վարդի դէմ պատրաստուելիք փորձանքը: Երեկոյեան արեւը մայր մտնելուց յետոյ գնաց կեսարի վրանը եւ ասաց Պրոկոպին, որ Վարդի պրոտովեստիարն էր (հանդերձապետը), թէ «վաղը կտոր կտոր պիտի անեն ձեր տիրոջը, Վարդ կեսարին»:

Պրոկոպը յայտնեց անախորժ գաղտնիքը կեսարին: Սա բանի տեղ չդրաւ, եւ ասաց. «գնա՛, ասա՛ Նեատոկոմիտին որ ցնորում ես. գիտցի՛ր, որ երիտասարդ ես եւ քեզ դեռ վայել չէ ձգտել պատրկութեան պատուին: Պատրկութեան համար է անչուշտ, որ որոմներ ես ցանում»:

Սակայն, կեսարը չհանդստացաւ: Իր պատասխանը համոզիչ չէր: Գուցէ դուժկանը հիմ ունէր: Գիշերը նինջ չեկաւ աչքերին: Խռոված էր հոգին եւ երերուն: Դեռ լոյսը չբացուած՝ կանչեց իր մերձաւորներին, հաղորդեց սոսկալի տեղեկութիւնը եւ խորհուրդ հարցրեց: Իր վաղեմի բարեկամ Փիլոթէոսը, որ պրոտոսպաթար էր եւ կառնիկլէ (գանձապահ), առաջարկեց. «վաղը ա՛ռ ուսերիդ, ո՛վ տէր, ոսկեճամուկ քղամիդդ եւ այդպէս երեւա՛ թշնամիներիդ, տեսքիցդ կը փախչեն»:

Արեւածագին ելաւ Վարդը իր վրանից, և ուղղուեց դէպի կայսերական վրանը: Նստած ձիու վրայ, փայլուն զգեստները հագին, մեծ շքախումբը իր շուրջը բոլորած, ուներնալով իր մօտ որպէս պրոտոստրատոր ազնուատոհմ Արգիրին, կեսարը մօտեցաւ Միքայէլի վրանին: Կոստանդին Տոքսարը,

որ դաւադիրներից մէկն էր, դիմաւորեց կեսարին, եւ գնաց հաղորդելու Վասիլին նրա գալուստը: Վասիլն ընդառաջեց, ողջոյն տուաւ և ձեռքից բռնելով առաջնորդեց կայսեր մօտ: Վարդը բազմելով կայսրի կողքին ասաց. «զօրքերը կազմ ու պատրաստ են, ո՛ տէր, հրամայի՛ր որ նաւ նստեն դէպի Կրետէ»:

Վասիլը կանգնած էր եռեւը սպառնական դիրքում: Ցանկարծ Վարդը երեսը դարձրեց եւ աչքն ընկաւ Վասիլի վրայ: Դէմքը խոժոռած էր: Մի ակնթարթում չողչողաց Վասիլի սուրը, վազեցին դաւադիրները եւ պատառ պատառ արին անբախտ իշխանին: Միքայէլը լուռ հանդիսատես էր: Օրուայ երրորդ ժամն էր (մեր հաշուով առաւօտեան ժամի 9ը), 21 ապրիլի, 866 թուին:

Վասիլը մենակ չէր, այլ շրջապատուած էր մի խումբ մտերիմներով, որոնք բոլորն էլ հայեր էին եւ մասնակից դաւադրութեան: Նրանց անունները բարեբախտաբար պահուած են: Նախ Վասիլի հարազատ եղբայրը՝ Մարիան (կամ Մաւրիան), Վարդի փեսան՝ Սմբատը, ոմն Ասիլայ, որը կոչւում է մերթ Սմբատի եղբօրորդին, մերթ Վասիլի, Վարդ, եղբայր Սմբատի[1]: Ապա յիշւում են Պետրոս Բուլղար, Լեւոն Ասորի, սրա եղբօրորդին, Յովհաննէս Խալդը եւ Կոստանդին Տոքսարը:

Բուլղար, ասորի, խալդ յորջորջումները որոշիչ չեն ազգութեան, այլ փութ անուններ են: Այլապէս բուլղարի (Պետրոս) եղբօրորդին չէր կարող ասորի կոչուել (Լեւոն): Յովհաննէսը երեւում է նոյն անձն է, որ վերեւ կրում է Ցիփինարիտ անունը (Ցիփինարցի՞): Ցիփինար եւ հաւանօրէն Տոքսար տեղի անուններ են, թերեւս, Խաղտեաց աշխարհում: Այս անձերը եւս հայ են, հակառակ իրենց մոլորեցուցիչ յորջորջումներին:

Սպանութիւնից յետոյ կայսրը նամակ գրեց մայրաքաղաք, պատրիարք Փոտին, ուր բացատրում էր որ Վարդը սպանուեց իր յանցաւոր դիտումների պատճառով: Փոտի պատասխանը հասել է մեզ: Պատրիարքը չատ զգոյշ է: Վարդի կորուստը մեծ ցաւ էր, ոչ միայն անձնական բարեկամն էր եւ հովանաւորը, այլեւ գլխաւոր նեցուկը եկեղեցական վէճերում: Աւաղել նրա մահը դժուար էր առանց վտանգելու իր դրութիւնը արքունիքում: Զարմանք է յայտնում որ Վարդը, դրեթէ կայսր առանց անուան, անխոհեմ է գտնուել

1 Symeon, 678; Georg. 830, կոչում են Սմբատի եղբօրորդի, իսկ քիչ յետոյ՝ Վասիլի եղբօրորդի, Georg. 837; Symeon, 688.

եւ կամեցել է ձեռք բարձրացնել իր տիրոջ դէմ։ Միեւնոյն ժամանակ չի թագցնում իր կասկածամտութիւնը եւ հարց է տալիս, արդեօք նամակը կեղծուած չէ եւ եղելութիւնը իսկապէս ճիշտ է ներկայացրած։

Ուշադրութեան արժանի է մանաւանդ պատրիարքի յորդորը, որ կայսրը անմիջապէս վերադառնայ քաղաք։ Ոչ միայն սենատը, այլ եւ ժողովուրդը առանց խարութեան սուրի եւ հասակի որպէս թէ ցանկանում են տեսնել փութանակի կայսրին իրենց մէջ[1]։

Պատրիարքը հեռատես էր եւ կասկածում էր որ կայսրը եւս կարող էր գոհուել Վասիլի փառասիրական ձգտումին։ Կայսրը ուղղուեց դէպի մայրաքաղաք։ Ճանապարհին Ակրիտաս նաւահանգստի մօտ մեծ բազմութիւն էր հաւաքուել դիմաւորելու կայսրին։ Յանկարծ մի վանական, թռուցած մի քարաժայռի վրայ, գոչեց բարձր ձայնով. «լու արշաւեցի՛ր, ո՛վ կայսր, սպանեցիր հարազատ քեռուդ, որ քեզ համար հօր տեղ էր, սպանեցիր, վա՜յ քեզ, վա՜յ քեզ, որ այդպէս վարուեցիր»։

Կայսրը սրտմտեց եւ Մաւրոթէոդոր մանկլաւիկին հրամայեց դնալ եւ յանդուգն վանականի գլուխը կտրել։ Սմբոխը մէջ ընկաւ եւ փրկեց թշուառականին, պատճառաբանելով որ նա այսահար է[2]։

Եթէ ճշմարտութիւնը խօսում է մանուկների բերանով, խղճի ձայնը լսելի է լինում, երբեմն, խենդերի, բախտածների մօտ։ Հասարակական կարծիքը թւում է թէ Վարդի կողմն էր։ Այս էր պատճառը որ դաւադիրները չէին համարձակուել գործել քաղաքում եւ սոխպուել էին թատերական արշաւանք ծրագրել եւ այդ պատրուակով քաղաքից դուրս քաշել զոհին։ Մայրաքաղաքը կորցրել էր ցասումի եւ բողոքի ընդունակութիւնը։ Քաղաքական բեմը վաղուց դարձել էր նրա աչքում մի տեսակ կրկէս, ուր դերակատարների փոփոխութիւնը բերում էր նոր զուարճութիւն։ Անդիտակից բազմութիւնը թեքում է գլուխը յաղթողի առաջ։

Փոտի կասկածները իրաւացի էին։ Յաջորդ տարին Միքայէլը եւս ընկաւ Վասիլի սրից, 24 սեպտեմբերի 867 թուի։

Վարդի մահից յետոյ Միքայէլը պահեց եկեղեցական խնդիրը այն հունի մէջ, որ դնել էր մեծանուն կեսարը։ 867 թուի ժողովը նզովեց պապին, պարսաւելով նրա փառատենչ դիրքը Բիւզանդական եկեղեցու հանդէպ։ Վասիլը դահ բարձրանալով բարւոք համարեց խաղաղասէր քաղաքականութեան հետեւել և չխզել բարեկամական յարաբերութիւնները Արեւմուտքի հետ։ 869 թուին գումարեց մի նոր ժողով, այն որ կոչւում է Ութերորդ Տիեզերական, եւ վերջ դրաւ եկեղեցական պառակտումներին, հեռացնելով Փոտին և նորից առաջարկելով պատրիարքական աթոռը Իգնատիոսին։

Արեւմտեան գիտնականները, հին եւ նոր, բացասաբար են վերաբերում Վարդի եկեղեցական քաղաքականութեան, մեկնելով լատին եկեղեցու շահերի հասկացողութիւնից։ Սակայն, այլ է Բիւզանդական տեսակէտը, որ միայն ողջունել կարող է ամեն մի ձեռնարկ եւ ջանք, որի նպատակն է յետ մղել պապերի յաւակնոտ ձեռքը եւ պաշտպանել բիւզանդական եկեղեցու ազատութիւնն ու անկախութիւնը։ Ապագան խօսում էր Վարդի նպատակին։ Վասիլը միայն կասեցրեց այն ինչ որ ի վերջոյ պիտի յաղթանակէր։ 1042 թուի եկեղեցական խզումը այլ բան չէր քան Վարդի եւ Փոտի քաղաքական գծի բոլորումը։

Վասիլեան պատմագիրները և կղերական գրիչները միացած ջանք չեն խնայել սեւացնելու Վարդի անունը։ Մինչդեռ նրա երկու գործերը՝ ժողովրդական լուսաւորութիւն եւ հոգեւոր ազատութիւն եկեղեցու անկախութեան մէջ՝ բաւական են որ պատուոյ տեղ տրուի նրա անուան պատմութեան մէջ։ Անպայման պետական խոշոր դէմք էր։ Մարդ էր, որին վիճակուած էր հիմն դնել նոր հարստութեան, եւ զոհուեց խարդախութեան։ Ընկաւ անփառունակ մահով Մամիկոնեան որդին, մինչ արժանի էր փակել իր աչքերը փառքի անդորր բարձի վրայ։

1 Migne, P. G. 102, col. 717-719.

2 Georg., 831; Symeon, 679.

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԳԱՀԻ ՎՐԱՅ

I

Թէոփիլ կայսրը (829–842) դինակցութիւն էր որոնում հեռաւոր Արեւմուտքում ընդդէմ Արաբների: Յաջող պատգամաւորութիւն դրկեց այս նպատակով Լուդովիկ Բարեպաշտի եւ Սպանիայի ամիրի մօտ:

Պատգամաւորութեան գլուխն էր Թէոդոս Բաբուցիկ պատրիկը, որի անունը վկայում է նրա հայ ծագումը (Բաբոց): Սա ներկայացաւ Լուդովիկ կայսեր 839 թուին, յունիս ամսին, եւ հաւանօրէն միեւնոյն պատգամաւորութիւնն էր, որ այնտեղից անցաւ Սպանիա:

Բիւզանդական արքունիքը յոյզութեան ակն ունէր մանաւանդ սպանական ամիրից: Կորդովայում հաստատուած իշխանական տունը Օմմայեան հարստութեան մի ճիւղն էր, որերիմ թշնամի Բաղդատի Աբբասեան տոհմին: Թէոփիլն ուզում էր օգուտ քաղել այդ հանդամանքից: Պատգամաւորութիւնը պատուէր ունէր դրդռել Կորդովայի ամիրին եւ ոտքի հանել Աբբասեանների դէմ: Ամիրը այդ ատեն Աբդուր-Ռահմանն էր (815–850):

Նոյն 839 թուի վերջերը ամիրի կողմից պատասխան-պատուիրակութիւն եկաւ Բիւզանդիա դլխաւորութեամբ Եահեա-ալ-Ղազզալ անձի, որ դրանիկ նշանաւոր բանաստեղծներից մէկն էր: Եօթանասուն տարեկան ծերունի էր, բայց դեռ պահել էր առնական կորովը այն աստիճան, որ զարմանք էր յարուցանում եւ հիացում բիւզանդական պալատում: Անչուշտ ուրիշ աւելի յարդի արժանիք ունէր, որ այնպէս սիրելի եղաւ կայսեր եւ հրաւիրուում էր մասնակցել արքայական սեղանին, թէեւ ոգելից ըմպելիքների ներկայութիւնը դայթակղեցուցիչ էր ուղղափառ մուսուլմանի համար:

Եահեա-ալ-Ղազզալ մի անգամ կայսեր մօտ նստած խօսում էր, երբ յանկարծ հարեւան սենեակից ներս մտաւ Թագուհին ազնուական պճրանքով: Զնաչխարհիկ մի գեղուհի,

ասես «գեղեցկութեան արեւ էր, որ ծագեց»: Արաբ բանաստեղծը այլայլուեց զմայլանքից, աչքը մնաց սեւեռած այդ աննման պատկերին: Խելքը, ուշքը, կորցրել էր, այլեւս չէր լսում թէ ի՞նչ է խօսում կայսրը: Անուշադիր լինել կայսերական զրուցին աւելի քան անքաղաքավարութիւն էր եւ խորշելի պալատական նուրբ նիստ ու չարժի տեսակէտից: Կայսրը զարմացած՝ հարցրեց թէ ի՞նչ է նշանակում այս տարօրինակ վարմունքը: Եահեա-ալ-Ղազզալի պատասխանը անսպասելի չէր·

«Տէ՛ր կայսր, ես սքանչացայ, ապուշ կորեցի, Թագուհու կախարդական գեղեցկութիւնից ուշք ու միտք դլխից թռաւ, չկարեցայ այլեւս հետեւել խօսակցութեան: Հաւատացնում եմ, որ կեանքումս երբեք այսպիսի չքնաղութիւն չեմ տեսած»:

Այս ասելով արաբ բանաստեղծը սկսեց մի առ մի թուել եւ նկարագրել կայսրուհու հմայքները, յայտնել իր զեղուն հիացումը եւ վերջացրեց խօսքը չեչտելով որ գերուած, դիւթուած է մանաւանդ Թագուհու սեւորակ աչերից[1]:

Այդ սեւորակ աչերի տէրը հայուհի էր: Հայ աչերի հռչակը, ուրեմն, հասնում է մինչեւ Թ դարը: Կայսրուհին, Թէոդորա էր անունը, արդարեւ գեղանի էր ոչ միայն մայրաքաղաքի, այլ համայն պետութեան չափով: Նրա ընտրութեան եւ ամուսնութեան շուրջը կատարեալ առասպելներ են պատմում հները:

Երբ Թէոփիլ արքունքի հասաւ, մօր առաջին հոգն եղաւ արժանաւոր հարս ընտրել նրա համար: Հրաման ուղարկեց պետութեան ամեն կողմերը որ ամենագեղանի աղջիկներին հաւաքեն բերեն մայրաքաղաք: Լայնատարած կայսրութեան մէջ պակաս չէին դեռահաս գեղեցկութիւններ: Կայսերական պատուէրը կատարուեց եւ շուտով հատընտիր գեղուհիները ճանապարհ ընկան բախտի ետեւից դէպի մայրաքաղաք:

Թագուհի մայրը, Եւփրոսինէ, ժողովեց բոլորին պալատ եւ դահլիճներից մէկում նշանակեց հարսնատեսութեան հանդէս: Արքայական փեսացուի ձեռքը տուաւ մի խնձոր, ոսկէ խնձոր, որ աղջկան որ հաւանէր նրան պէտք է տար խնձորը: Մատաղ ընտրելիները կանգնած էին շարքով եւ սրտատրոփ սպասում էին այս նոր Պարիսի վճռին: Վայրկեանը յուզումնալից էր: Թէոփիլն անցաւ, նայեց, դիտեց, զննեց եւ կանգ առաւ մէկի առաջ, որի անունն էր Կասսիա:

---

1 **Ahmet Ibn Mohammet al Mokkari**, The History of the Mohammedan dynasties in Spain, II, 114-115.

Ընտրութիւնը կատարուած էր: Զեռքը մեկնեց խնձորը տալու եւ ասաց. «Արդարեւ, վատ բանը կնոջից է ծագում»:

Աղջիկն առանց քաշուելու վրայ բերեց. «Սակայն, լաւ բանը եւս կնոջից է ծագում»:

Թէոփիլի խօսքը, երեւի, մի ակնարկ էր Եւայի մեղսագործութեան: Ուզում էր ասել, որ ամեն մի կին մի նոր Եւա է, պատճառ մարդու անկման: Պէտք է կարծել, որ Կասսիայի պատասխանածն էլ նկատի ունի Մարիամ Աստուածածնին, որ վերածնեց մարդկութիւնը, սկիզբը եղաւ նոր կեանքի: Փեսայի ասածը, անշուշտ, ախորժ հաճոյախօսութիւն չէր, բայց հարսնացուի պատասխանը եւս հեռու էր պարկեշտ լինելուց: Պալատական խստապահանջ բարքերին հակառակ էր Կասսիայի վարմունքը եւ նա տուժեց: Թէոփիլին դիւր չեկաւ աղջկայ համարձակութիւնը: Հարսնութեան ոսկէ խնձորը տուաւ մի ուրիշ օրիորդի, որի անունն էր Թէոդորա: Պարտուած եւ վշտացած, Կասսիան հեռացաւ մի վանք ողբալու իր օրհասական սխալը կուսակրօն մենութեան մէջ:

Երեւակայութիւնը զգալի տեղ ունի այս պատմուածքի մէջ, բայց եւ այնպէս զուրկ չէ եւ լրական կորիզից: Կասսիա յայտնի է որպէս հեղինակ մի քանի գրուածքների, որոնց մէջ կարեւոր է մեզ համար այն չարամիտ երգիծաբանական տողերը որ ուղղուած են Հայերի հասցէին[1]: Հաւանական է, որ Թէոփիլ սկզբում աչք է ունեցել Կասսիայի վրայ, բայց յետոյ յաղթանակել է Թէոդորա: Վշտացած գեղուհին ստիպուած է եղել սրտի դառնութիւնը թափել Հայերի գլխին ընդհանրապէս:

Կայ եւ մի ուրիշ զրոյց նոյն նիւթի վրայ: Այստեղ Թէոփիլի հարսնացուները եօթ հոգի էին: Բոլորին մի մի խնձոր շնորհեց: Հետեւեալ օրը նորից հրաւիրեց նրանց արքունիք և հարցրեց, թէ ի՞նչ են արել խնձորները: Բանից դուրս եկաւ, որ միայն Թէոդորան էր բերել խնձորը: Ստացած խնձորը ներկայացրեց Թէոփիլին եւ իր կողմից էլ մի ուրիշ խնձոր նուիրեց նրան: Կայսրը զարմացաւ, չէր հասկանում նուէրի խորհուրդը: Թէոդորա բացատրեց, որ առաջին խնձորը նշանակ է իր կուսական անարատութեան, երկրորդը՝ գրաւական լումայ իրենից ծնելի որդուն: Երբ Թէոփիլ հարցրեց, ի՞նչ է նշանակում այս գուշակութիւնը, Թէոդորա պատմեց, որ մայրաքաղաք գալուս ճանապարհին այցելել է մի սիւնակեաց սուրբ ճգնաւորի Նիկոմիդիայում: Նա է որ իրեն

1 Տես յօդուածս Կասսիա միանձնուհի եւ Հայերը, «Հանդէս Ամսօրեայ», 1901:

խնձորը տուաւ եւ ասաց կանխատեսութեամբ որ պիտի արքայական գահի արժանանայ[1]:

Զրոյցիս ծագումը բոլորովին արհեստական է, առաջին պատմուածքի դիտաւորեալ փոփոխակը: Այն օրից, երբ Թէոդորա մեծ համբաւ ստացաւ եւ պատկերապաշտութիւնը վերականգնելուց յետոյ արդէն սրբանալու չաւղի վրայ էր, նրա ջերմեռանդ կողմնակիցներին անախորժ է թուել որ բարեպաշտ թագուհին իր բախտը պարտական լինէր Կասսիայի թեթեւամիտ անզգուշութեան: Ուստի եւ բարեփոխել են նախորդ զրոյցը:

Բիւզանդական պատմութիւնից յայտնի են ուրիշ օրինակներ, երբ գահաժառանգի համար վայելուչ հարս ընտրելու նպատակով գեղեցիկ թեկնածուներ են ժողովում արքունիք: Այս եղանակով էր ընտրուել Կոստանդին Զ կայսրի կինը, Մարիամ, 788 թուին, Ստաւրակի կին Թէոփանօ 807 թուին, եւ Միքայէլ Գի կինը Եւդոկիա 855 թուին: Վերջինս Թէոդորայի որդին էր եւ ուրեմն մայրը փեսայացրել էր իր որդուն նոյն ձեւով ինչպէս որ ինքն էր հարսնացել:

Բիւզանդական բարքերի տեսակէտից հետաքրքրական է յիշել, որ երբեմն յատուկ հրահանգներ էին տրւում կայսերական շրջիկներին, որ ուշադրութեան առնեն թեկնածու աղջիկների ինչ ինչ յատկութիւնները, օրինակ հասակի, գլխի եւ կամ ոտների ու ձեռքերի մեծութիւնը, եւ որ ընտրութիւնը կատարեն համաձայն յանձնարարուած չափերի: Արքայական փեսայի պահանջկոտ ճաշակին յարմար էր եկել այս տեսակէտից վերոյիշեալ Մարիամը, որ Արմենեակոն թեմից էր եւ Թոռն Փիլարետի, որ հայ ծագում ունէր եւ առաքինի ու ողորմած կեանքի համար դասուեց սրբերի շարքը: Սրա վարքի մէջ է յիշատակուած ընտրութեան այս պարագան[2]:

Եթէ ուզում ենք հաւատ ընծայել հարսնընտրութեան այս եղանակի իսկութեան, պէտք է ենթադրենք, որ ընտրութիւնը սահմանափակուած էր որոշ հասարակական շրջանում: Պետական ասպարէզներում փայլող ականաւոր ընտանիքների գեղանի դուստրներն էին, հաւանօրէն, որ հրաւիրւում էին արքունիք այս կամ այն եղանակով, ցանկալի ընտրութիւնը կատարելու նպատակով: Ամեն պարագային Թէոդորայի հարսնութիւնը արդիւնք չէր միայն իր բնական գեղեցկութեան: Թուում է որ և՛ քաղաքական աստառ կար:

1 Vita Theodorae Imperatricis, **Analecta Byzantino-russica**, éd. Regel, p. 4.
2 Vita Philareti, Իզվեստիա Ռուսկաւս Արխիոլոգիչեսկաւս Ինստիտուտա = Պոլսի Ռուսական Հնագիտական Ինստիտուտի հանդէս, V, 76:

Թէոդորա ծննդեամբ Եբիսսա քաղաքիցն էր, որ գըտնըւում էր Պափլագոնիայում: Տեղը յայտնի չէ, հաւանօրէն Եբիսսա կապ ունի Աբիսիան կոչուած գաւառի հետ, որը յիշուում է 863 թուի արշաւանքի տեղագրութեան մէջ եւ որը գտնուում է Պափլագոնիայի եւ Արմենեակոն թեմի սահմանագլխին:

Թէոդորայի հօր անունն էր Մարին(ոս) եւ մօր՝ Թէոկտիստէ, վերակոչեալ Փլորինա[1]:

Մարինը հասարակ մարդ չէր, դրունդարի թէ տուրմարքի կոչում ունէր, որ սպարապետից (ստրատեգոս) յետոյ բարձրագոյն աստիճանն էր զինուորական: Բացի Թէոդորայից Մարինը ունէր երկու որդի՝ Վարդ(աս) եւ Պետրո(ս): Մատենագիրները ոչինչ չեն ասում թէ ի՞նչ ծագում ունէր այս տունը: Սակայն, Վարդաս, որ է հայերէն Վարդ անունը, արդէն պերճախօս եւ անսուտ վկայ է Մարինի ազգութեան: Բարեբախտաբար, դրական ցուցում եւս կայ: Մարինի եղբայրն էր Մանուէլ սպարապետը, անուանի անձն, պետութեան ամենակարկառուն դէմքը: Մատենագիրները աւանդում են միաբերան որ սա հայ էր[2]: Վկայում են նաեւ, որ Մանուէլը Թէոդորայի հօրեղբայրն էր, Θεῖος [3]:

Մանուէլ եւ Վարդ անունները տանում են մեզ դէպի Մամիկոնեան տունը: Նախարարութիւններն իրենց յատուկ տոհմական անուններն ունէին: Այս երկու անունները Մամիկոնեան են առաւելապէս:

Մեր մատենագիրները ընդհանրապէս ժլատ են բիւզանդական հայերի նկատմամբ, չեն սիրում նրանցով զբաղել, գուցէ եւ հայ չեն համարում այդ «հոռոմներին», որ հեռացել էին մայրենի եկեղեցուց: Մանուէլը այն բացառիկ անձերիցն է, որոնց յիշատակը արժանացել է ուշադրութեան: Մանուէլը գժտուեց բիւզանդական արքունիքի հետ եւ հեռացաւ առժամանակ Բաղդատի դուռը: Վարդան պատմիչը յիշելով այս հանգամանքը, Մանուէլին անուանում է Մամիկոնեան. «ելանէր ի խնդիր մեծ զօրավարին Մանուէլի Մամիկոնենոյ եւ նորա աճապարեալ հարիւր եւ յիսուն արամբք անկանի ի կամաս և անտի առ Մամուն իշխանն Իսմայէլի»[4]:

Այս վկայութիւնը կարեւոր է, որովհետեւ ծագում է

1 Theoph. Continuatus, 89; Symeon, 625: Սկզբնական աղբիւրն է վերոյիշեալ Vita Theodorae էջ 2:

2 Theoph. Cont. 110; Genesius, 52.

3. Ibid, 148.

4 Վարդան, էջ 77:

հաւանօրէն, Շապուհ Բագրատունի պատմագրից, որ նոյն դարու մարդ էր և թերեւս ծանօթ իսկ նշանաւոր զօրավարին:

Սրանով հաստատւում է որ Թէոդորա, Մանուէլի եղբօր Մարինի աղջիկը հայ էր եւ այն էլ Մամիկոնեան իշխանուհի:

Հակառակ զրոյցներին, Թէոդորա իր բախտը պարտական չէր միմիայն իր դեղեցկութեան: Բիւզանդական արքունիքում այնքան զօրեղ էին փառասիրական տենչանքները եւ այնքան կատաղի հակամարտութիւնը անհատների եւ խմբակցութիւնների միջեւ, որ միայն դեղեցիկ սեւ աչերը բաւական չէին, որ մի գաւառական համեստ աղջիկ արժանի համարուէր կայսերական թագին: Թւում է որ Մամիկոնեան իշխանների հռչակը, այն դիրքը, որ նրանք կարողացել էին ստեղծել Բիւզանդիայում, մասնաւորապէս Մանուէլի պատկառելի անձը եւ բարձր անունը, վճռական դեր են կատարել Թէոդորայի ընտրութեան մէջ:

Թէոդորան ունէր երեք քոյր, Սոփիա, Կալո–Մարիա կամ գեղանի–Մարիամ եւ Իրինէ: Սոփիան ամուսնացաւ Կոստանդին Բաբուցիկ հայ իշխանի հետ, որին մօտ արենակից էր այն Թէոդոս Բաբուցիկը, որ դեսպանութեան գնաց աեմուտք 839 թուականին: Բաբուցիկ փաղաքշական էր Բաբոց անուան:

Մարիամը եւս հայ ամուսին առաւ, որ էր Արշաւիր պատրիկ եւ մագիստրոս, հաւանօրէն Կամսարականներից: Արշաւիրը մի քոյր ունէր Իրինէ անունով, որ մայր դարձաւ հռչակաւոր Փոտ պատրիարքին, յոյն եկեղեցու պարծանքին: Այս Իրինէի հետ մատենագիրները չփոթել են Թէոդորայի քոյր Իրինէին, որ բոլորովին տարբեր անձ է: Սա Թէոդորայի այն քոյրն է, որ յետոյ ամուսնացաւ Թէոփոբ նշանաւոր զօրավարի հետ: Հիմք կայ կարծելու, որ Թէոփոբ պարսիկ չէր, այլ արաբական Հայաստանից փախած հայ:

Մարինի տան խնամութիւնը հայերի հետ ցոյց է տալիս որ օտարացած հայերից չէր եւ հաւանական է որ Մարինի կինը՝ Թէոկտիստէ-Փլորինան եւս հայ էր որ իր դուստրներին կնութեան տուաւ հայ մարդկանց:

Մարին եւ Մանուէլ միակ Մամիկոնեաններն չէին: Կային եւ ուրիշները, նոյնպէս օժտուած բախտից, որոնցից մէկին փեսայացրեց Թէոդորան իր դստեր Մարիամին: Դա Ալէքսիոս–Մուշեղ ականաւոր Մամիկոնեանն էր, որ կեսար էր յայտարարուած եւ ուրեմն գահ պիտի բարձրանար, եթէ Թէոդորան մեռնէր առանց արու ժառանգի:

Հայ ոյժի եւ ազդեցութեան շրջանն էր: Ութերորդ

դարու վերջերն էր, երբ հորդան տուեց հայութեան ամենի ալիքը, որպէսզի յաջորդ դարում ողողէր բիւզանդական արքունիքը եւ հիմն ձգէր հայկական պերճ հարստութեան եւ Բիւզանդիոնի իսկական մեծութեան: Շարժման դրօշակակիրները Մամիկոնեան զաւակներն էին: Սակայն, այստեղ եւս, ինչպէս Հայաստանում, նրանք կարողացան միայն ցանել մեծագործութիւններ, իսկ հունձքը քաղեցին ուրիշները:

Արդեօք նոյն յամառ եւ տոկուն հակառակորդը չէ՞ր, որ Հայաստանում եւս խլեց նրանցից արքայական թագը:

II

Ութերորդ դարու վերջերից սկսած Մամիկոնեան տունը հետզհետէ ընթանում է դէպի չքացում: Բուղայի գերութեան մէջ էր Մամիկոնեաններից մի հոգի՝ Գրիգոր իշխանը, որ յաջողեց փախչել դալ հայրենիք: Մինչ Բագրեւանդից ուզում էր անցնել հարեւան Գաբեղեան գաւառը, յանկարծակի մեռաւ: Արաբ ոստիկանը հետապնդում էր Գրիգորին:

Աշոտ Բագրատունին, ապագայ թագաւորը, «կտրեց մեռածի գլուխը, ասում է պատմագիրը, եւ առաքեց ոստիկանին ասելով թէ Գրիգորը կամենում էր անցնել Ցունաց կողմերը եւ ինքը մարդ ղրկեց ետեւից եւ սպանեց եւ ահա նրա գլուխը»:

Խորհրդաւոր պատմութիւն, անկախ պատմական ստուգութիւնից: Գրիգորը անձամբ կենդանի էր թէ մեռած, երբ Աշոտի դահիճը կտրեց նրա գլուխը, այդ չէ կարեւորը: Մամիկոնեան տունը այդ պահին արդարեւ քամուած, ջլատուած ոյժ էր, եւ նրա գլուխը կտրել նշանակում էր մեռածի գլուխ կտրել: Ընկան Մամիկոնեանները, հանգաւ հայ իշխանութեան դարաւոր ճրագը: Պատմիչը արձանագրելով Գրիգորի տխուր վախճանը, աւելացնում է. «Եւ այնմ հետէ բարձաւ ի Հայոց աշխարհէս ազգն Մամիկոնէից»[1]:

Այսպէս, երբ հայ հայրենիքը հրաժեշտ էր տալիս Մամիկոնեան տան, նրա վերջին դերեզմանն էր յարդարում, նոյն տան տարագիր զաւակները չարունակում էին փայլել իրենց տոհմական տաղանդով Բիւզանդական պետութեան մէջ:

Հարեւան քրիստոնեայ տէրութիւնը վաղուց է որ ապաստարան էր դարձել հայ քաղաքական տարագիրների

1 Վարդան, էջ 81:

համար: Կեանքի դժնդակ պայմանները, անդադրում մաքառումը արաբ բռնութեան դէմ եւ այս գետնի վրայ բուսած ներքին տարաձայնութիւններն ու կուսակցական բախումները յաճախ դուրս էին նետում հայրենի ոլորտներից մարտական կարող ոյժեր, անհատական խոշոր տիպարներ եւ երբեմն նոյնիսկ ժողովրդական մեծամեծ հատուածներ:

Քաղաքական մթնոլորտը պղտորուած էր եւ կրքերը լարուած, երբ Կոստանդին կայսրը (740–775) խլեց Կարինը Արաբներից եւ շատերը ցանկացան գաղթել կայսրութեան սահմանները: «Եւ բազումք ի բնակչաց գաւառացն խնդրեալ յարքայէն, զի... գնասցեն զկնի նորա: Եւ նորա տուեալ հրաման, վաղվաղակի հանդերձեալ զաղխս իւրեանց խաղացին յառաջ... Թողին զերկիրն ծննդեան իւրեանց եւ հատուածեալք անկան ի կողմն արքային բարեբաշտի»[1]:

Ցոյն պատմիչների վկայութեամբ, երբ Կոստանդինը առաւ Կարին եւ Մելիտինէ քաղաքները, ինքն էր, որ տեղական ժողովրդից մեծ գաղթականութիւն հանեց եւ բնակեցրեց Թրակիա[2]:

Նոյն կայսեր օրով էր դարձեալ որ նախարարներից շատերը «մերժեալք լքին զժառանգութիւնս իւրեանց եւ փախստեայ անկան յաշխարհն Ցունաց, ապաւինեալք առ կայսրն Կոստանդին»:

Ցայտնի է նաեւ Շապուհ Ամատունեաց իշխանի եւ իր որդու Համամի մեծ գաղթը տասն եւ երկու հազարանոց բազմութեան գլուխն անցած նոյն կայսրի վերջին տարիները: Տեղափոխութիւններ ստէպ են կատարուել մասնական թէ զանգուածային սկսուած Զ դարուց:

Իշխանական տներից շատ շատերին վիճակուեց ճաշակել պանդխտութեան դառնութիւնը: Ոմանք կորան պատերազմի դաշտերում, ոմանք ընտելացան նոր հայրենիքին եւ ծառայեցին նրա փառքին: Արշակունի, Բագրատունի, Մամիկոնեան, Կամսարական, Խորխոռունի, Գնունի, Ամատունի, Անձեւացի եւ այլ տներ, ունեցան ամենեքեան իրենց չողչողուն ներկայացուցիչները: Սկզբում հայ անունները սփռուած էին որպէս հատ հատ ծաղիկներ կայսերական զօրականութեան մէջ, յետոյ խտանում են եւ կազմում հայկական մի սեղմ միջավայր:

Ութերորդ դարու երկրորդ կէսին կայսերական բանակը արդէն հայերի ձեռքին էր: Լեւոն կայսրի օրով 778 թուին

1 Ղեւոնդ, գլ. իբ եւ լբ:
2 Theophanes էջ 662 (հրատ. Բոննի) Nicephore Patriarche, 60.

հարիւր հազարանոց բանակը չարժուեց դէպի արաբական սահմանները եւ գրաւեց Գերմանիկէ, արդի Մարաշ քաղաքը: Զօրքի հրամանատարներն էին Միքայէլ Լախանոդրակոն, սպարապետ Թրակեսեան գնդի, Արտաւազդ, սպարապետ Անատոլիկեան գնդի, Տաճատ, սպարապետ Բուկելլարեան գնդի, Վարազտիրոց, սպարապետ Արմենեակեան գընդի, (ո՛չ Կարիստիրոց, ինչպէս տպագրուած է), Գրիգոր, որդի Մուշեղակի, սպարապետ Օփսիկեան:

Հինգ զօրավարներից չորսը հայեր են, չորս նշանաւոր թեմերի ստրատեգներ, այսինքն զինուորական պետեր:

Թեմ էին կոչւում Բիւզանդիոնում զինուորական մեծ շրջանները: Սկզբնապէս թեմ նշանակում էր որոշ զօրամաս՝ բաղկացած մերձ տասը հազար հոգուց, հետագայում ստացաւ աշխարհագրական իմաստ, համազօր այն շրջաններին, ուր ընկնում էին նրանց մշտական կայանները: Արմենեակեան թեմը տարածւում էր Հայաստանի սահմաններից մինչեւ Սինոպ, իր մէջ ունենալով եւ Ալիսի գետաբերանի արեւմտեան շերտերը, այն որ հնում բռնում էր Պափլագոնիան: Այս է պատճառը, որ Թէոդորայի մասին ասում են որ Պափլագոնացի աղջիկ էր, գործ ածելով հին անունը փոխանակ նորի՝ Արմենեակոնի կամ Արմենեակեանի:

Միւս կարեւոր թեմն էր Անատոլիկեանը, որ ընկնում էր Արմենեակեանից արեւմուտք, տարածուելով Ալիս գետից մինչեւ Եգէական ծովափը: Սրանից զատուեց արեւմտեան ծովեզրեայ մասը, Զմիւռնիայի շրջանը, կազմեց նոր թեմ Թրակեսեան անունով, որովհետեւ այստեղի զօրամասը բաղկացած էր Թրակացի Գոթերից:

Կայսերական անձնապահ գունդը նստում էր մասամբ մայրաքաղաքում եւ մասամբ ասիական ցամաքի վրայ: Մայրաքաղաքին հպած ասիական հողամասերը կրում էին այս պատճառով Օփսիկեան (լատ. obsequium բառից) անունը: Օփսիկեան թեմի արեւելեան մասը, Անգորայի շրջանը, կազմեց ինքնուրոյն թեմ Բուկելլարեան անունով, ստանալով իր անունը bucelum բառից, որ նշանակում է զինուորական հաց: Այստեղ նստած գունդը զբաղուած էր զօրքի պարենաւորման գործով:

Այսպէս ուրեմն ամբողջ Փոքր-Ասիան բաժանուած էր չորս թեմերի 778 թուի արշաւանքի ժամանակ: Բացի Թրակեսեան փոքր թեմից, միւս բոլորը գտնւում էին հայ զօրավարների իշխանութեան տակ: Զօրավարները կամ յունական բառով ստրատեգները թեմերի միահեծան կառավարիչներն էին:

Աւելորդ չէ յիշել, որ արշաւանքը չյաջողեց չնորհիւ Միքայէլ Լախանոդրակոնի խարդաւանութեան: Զօրքը պաշարեց Մարաշը, բայց չկարողացաւ առնել, որովհետեւ Արաբները կաշառելով Միքայէլին, այլ ելք տուին գործին:

Ցիշուած հայ զօրավարները տակաւին նոր էին թողել հայրենի հողը: Արտաւազդը, Անատոլիկեան թեմի տէրը, այն համանուն Մամիկոնեան իշխանն էր, որ 771 թուին խիել էր արաբ հարկահանին եւ փախել արեւմուտք: Արտաւազդը Հմայեակի որդին էր և ունէր եղբայրներ, եթէ միայն «յորդւոցն Հմայեկի» չկարդանք «յորդւոյն Հմայեկի»[1]:

Տաճատը ևս ծանօթ է մեզ Ղեւոնդից: Սա Անձեւացեաց իշխան Գրիգորի որդին էր, անցել էր Բիւզանդիոն, հռչակ ստացել Թրակիայում Բուլղարների դէմ մղած ճակատներում եւ 778 թ. Բուկելլարեան թեմի սպարապետն էր:

Լեւոն կայսեր մահից յետոյ, երբ պետութեան գլուխ անցաւ Իրինէ թագուհին, որ Աթենացի յոյն աղջիկ էր, սկըսուեց հակահայ շարժում: Առաջին զոհը եղաւ Տաճատը եւ փախաւ Արաբների մօտ եւ մեծ ընդունելութիւն գտաւ: Փախուստի առթիւ, որ եղաւ 782 թուին, Ղեւոնդն ասում է, որ Տաճատը ծառայել էր կայսեր 22 տարի: Ասել է թէ Հայաստանից հեռացել էր 760 թուականներին, ուրեմն հայ–արաբական կռիւների շրջանում:

Վարազտիրոցը եւ Մուշեղակի որդի Գրիգորը թւում է թէ Աշոտ կոյրի անբախտութեան հեղինակների զաւակներն էին: Աշոտի հակառակորդներն էին «Սմբատայ որդիք» եւ Դաւիթ ու Գրիգոր իշխանները: Սմբատը որդի էր Վարազտիրոցի և կիւրապաղատութեան պատիւ էր ստացել Վարդանակերտի յաղթութիւնից յետոյ: Ըստ Մովսէս Կաղանկատուացու Սմբատը մեռաւ 727 թուին[2]: Արդ՝ սրա որդին էր հաւանօրէն Արմենեակեան թեմի զօրավար Վարազտիրոցը, որ կրում էր իր պապի անունը, ինչպէս սովորութիւն էր, և Բագրատունեաց տոհմիցն էր:

Դաւիթ եւ Գրիգոր Մամիկոնեանները սպանուեցին 749 թուին: Իսկ սրանց երրորդ եղբայրը Մուշեղը Գրիգորի մահից յետոյ նրա տեղը բռնեց կարճ ժամանակով («եւ կացուցին իշխան զեղբայր նորին զՄուշեղ սակաւ ինչ ժամանակս»[3]:

Այս Մուշեղին պէտք չէ շփոթել համանուն անձի հետ, որ 775 թուի ապստամբութեան ղեկավարն էր: Սա Հրահատ կոմսի որդին էր Մամիկոնեան տանից, մինչդեռ Գրիգոր,

1 Ղեւոնդ, էջ 138:
2 Մովսէս Կաղանկատուացի (Փարիզ, 1860 թ.) Գ. ժգ:
3 Ղեւոնդ, էջ 124:

Դաւիթ եւ Մուշեղ եղբայրների մասին պատմագիրը նոյն ցուցումը չէ տալիս: Երեւում է, տարբեր անձեր են:

Թւում է թէ Գրիգորի եղբօր Մուշեղի որդին պէտք է լինէր այն Գրիգորը, որ Օփսիկեան թեմի զօրավարն էր 778 թուի արշաւանքին: Գրիգոր անունը կարող է որոշ հիմ ծառայել այս նոյնացման:

Հրահատեան Մուշեղի որդին չէր կարող լինել Գրիգոր զօրավարը, որովհետեւ Մուշեղ երկու որդի թողեց, երկուսն էլ սպանուեցին Մեհրուժան Արծրունու ձեռքով:

Գրիգոր զօրավարը խառն էր այն դաւադրութեան, որ կազմուած էր 782 թուին ընդդէմ Իրինէ կայսրուհուն: Գրիգորը այդ միջոցին պոստի լոգոթետ էր, այսինքն հաղորդակցութեան մինիստր, որը սակայն աւելի համապատասխանում է արդի ներքին գործերի մինիստրութեան:

Դաւադիրները չորս հոգի էին պալատական մեծամեծներից, որոնցից երեքը հայ էին, Գրիգորը, Վարդ եւ Կոստանդին:

Վարդը պատրիկ էր եւ Արմենեակեան թեմի զօրավար: Սա Արծրունեաց տոհմից էր և յայտնի դարձաւ մանաւանդ իր հռչակաւոր որդով, որ գահ բարձրացաւ Լեւոն Ե Հայ անունով: Ղեւոնդ պատմագրից յայտնի են Վահան Արծրունու որդիները՝ Սահակ, Համազասպ ու Գագիկ և վերջինիս որդիները Համազասպ, Սահակ և Մեհրուժան: Սրանք բոլորը մեռան հայ հողի վրայ մինչեւ 785 թ., կենդանի մնաց միայն Մեհրուժանը: Սակայն միւսների սերնդի մասին տեղեկութիւն չունինք: Անհաւանական չէ, եթէ Վարդը նրանց զաւակներից լինէր, հեռացած արեւմուտք, նման միւս իր ժամանակակից գործիչներին, Արտաւազդին, Գրիգորին եւ Տաճատին:

Միւս դաւադիրը՝ Կոստանդին որդի էր Վարդան պատրիկի եւ հրապարակի վրայ էր 765 թուից, երբ դեռ սպաթար էր եւ կայսեր պրոտոստրատոր: Այժմ պալատական հեծեալ գնդերից մէկի, եկսկուբիտորների, պետն էր որ կոչւում էր Դոմեստիկոս (մեր պատմիչների Դոմեսլիկոսը): Վարդանը զօրավար էր Արմենեակեան թեմի նախ քան Վարդը եւ գոնէ անունից դատելով եւս Մամիկոնեան տան զաւակ էր: Նոյն տոհմը այդ միջոցին մի ուրիշ եւ աւելի փառաւոր ներկայացուցիչ ունէր, որ կրում էր կրկնակի անուն Ալէքս(իոս) - Մուշեղ:

Ցիշեալ դաւադրութիւնը ուղղուած էր Իրինէ կայսրուհու դէմ, որ իր ամուսնու՝ Լեւոն կայսեր մահից յետոյ 780ին

նշանակուած էր խնամակալ իր տակաւին մանուկ որդուն, Կոստանդինին:

Իրինէ Աթենացի էր եւ ձգտում էր ուժեղացնել յոյն տարրը եւ յետ մղել հայերին: Պայքարը անխուլ չէր: Մոլեռանդ կայսրուհին հեռացրեց իրենից հայ նշանաւոր մարտական ոյժերին, շրջապատեց արքունիքը ապիկար եւ նենգամիտ ներքինիներով: Նա էր որ վերականգնեց 787 պատկերների պաշտումը, որին հակառակ էին հայերը: Առաջին դաւադրական փորձը, թէեւ անյաջող անցաւ, խրատական նախազգուշացում էր կայսրուհուն իր բռնի քաղաքական գծի համար:

Թագաժառանգ Կոստանդինը արդէն չափահաս էր: Մայրը ամուսնացրեց նրան Մարիամ անունով մի գեղեցիկ աղջկայ հետ, որ Արմենեակեան թեմիցն էր: Այստեղ նշանաւոր տները հայկական էին եւ Մարիամը եւս հայ ընտանիքից էր:

Ընտրութիւնը պատահական չէ թւում: Կայսրուհին թերեւս փորձում էր մեղմել իր վերաբերումը դէպի հայերը: Այս միջոցին էր նաեւ, որ պալատական գնդի դրունդարն էր հայազն Ալէքսիոս-Մուշեղը:

Իրինէ թագուհին ոչ միայն չէր ուզում զիջանել գահը իր որդուն, որ արդէն հասակաւոր էր, այլ երբ պալատական մի անյաջող փորձ եղաւ յօգուտ որդուն, փառասէր մայրը պատժեց յանցաւորներին եւ փակեց պալատում իր որդուն, մեկուսացնելով նրան պետական գործերից: Արմենեակեան թեմը ընդդիմացաւ թագուհուն, պաշտպան հանդիսանալով թագաժառանգի բռնաբարուած իրաւունքներին: Իրինէ դիմեց Ալէքսիոս-Մուշեղի օգնութեան եւ նրան դրկեց խաղաղացնելու ըմբոստ թեմը: Սակայն, Մուշեղը անցաւ ապըստամբների կողմը: Կայսրուհին ստիպուած էր դիջել եւ արձակել բանտարկուած որդուն, Կոստանդինին: Սա կառավարութեան ղեկը ստանձնեց, բայց ընկաւ նոյն ներքինիների ազդեցութեան տակ, եւ ականջ կախելով նրանց դաղտադողի չչուկներին, որպէս թէ Ալէքսիոս-Մուշեղը փառասիրական մեծ ծրագրեր ունի, տմարդօրէն կուրացնել տուեց մեծ իշխանին, որին պարտական էր իր գահը:

Մուշեղն այդ ժամանակ Արմենեակեան թեմի զօրավար էր: Հայերը դրդռուեցին, նորից ոտքի ելան, այս անգամ ապերախտ Կոստանդինի դէմ: Սա ուղարկեց երկու հայի՝ Կոստանդին-Արտաշիրին եւ Քրիստոբեր անունով Պաւլիկեան աղանդաւորին, որ Բուկելլարեան թեմի զօրավար էր, զսպելու Արմենեակեան թեմի խռովարարներին: Իրինէ եւ իր ներ-

քինները յաջողեցին գժտեցնել Կոստանդինին հայերի հետ: Իրինէի թելադրութեամբ էր նաեւ, որ Կոստանդինը բաժանուեց իր հայ կնոջից եւ ամուսնացաւ ուրիշի հետ:

Մայրը որդուն կղզիացրեց, զրկեց իսկական պաշտպաններից, եւ ապա գրաւեց նորից գահը, կուրացնելով իր որդուն եւ ընդ միշտ հեռացնելով մրցութիւնից 797 թուին: Հինգ տարի միայն վայելեց իր յաղթութիւնը, 802 թուին Իրինէ տապալուեց ինքը եւ կործանեց ընդ միշտ Իսաւրեան տունը: Դժգոհ տարրերը կազմեցին դաւադրութիւն, որին մասնակից էր եւ վերոյիշեալ Գրիգորը, Օփսիկեանի զօրավարը եւ յաջողեցին: Իրինէ պարտաւորուեց վանք քաշուել եւ քաւել իր սխալները:

Իրինէ զոհ գնաց իր ձախորդ քաղաքականութեան: Նա չեղուեց այն քաղաքական եւ կրօնական շաւղից, որ գծել էին իր նախորդները եւ կամեցաւ ծառայել յունական ազգային շահերին աւելի քան ներում էին իրական պայմանները: Այս է պատճառը, որ յոյն եկեղեցին չի վարանել սրբացնել նրան, մի կնոջ, որ ընդունակ էր խարանել հարազատ որդու աչքերը, եւ ցայժմ էլ տօնում է նրա յիշատակը օգոստոսի 15ին:

Ազգերի մրցութիւնն իր տեղն ունի բիւզանդական պատմութեան մէջ, մանաւանդ հայ եւ յոյն անխուլ պայքարը: Անկարելի էր անտեսել հայ ոյժերը առանց ծանր հետեւանքների:

Տեսանք, թէ ինչ ականաւոր դէմքեր էին խմբուած հայ նախարարական ասպետութիւնից Իսաւրեան տան վերջայոյսին: Նրանք գլխաւորապէս Մամիկոնեան զաւակներ էին, արծիւներ, որ վաղուց ճախրում էին կայսերական թագի շուրջը: Արտաւազդ, Գրիգոր, Մուշեղ, Վարդան, Վարդանունները մի բան աւելի են նշանակում, երբ պատկանում են Մամիկոնեան տան: Ահա մի տուն, որ ունի պատմական ուրոյն նկարագիր՝ կերտուած քաղաքական փոթորիկների մէջ, ունի տոհմական յատուկ խորհրդներ իր ճակատին:

Հայ ոյժերի յենարանն էր Արմենեակեան թեմը իր զօրաբանակով, որ բաղկացած էր մեծ մասամբ հայերից եւ գտնւում էր հայ զօրավարների իշխանութեան տակ: Այս զօրաբանակը կայսրութեան ռազմական ոյժերի փայլն էր սկզբից եւ եթ, իսկ հայ զօրավարներն էին և մնացին մինչեւ վերջը զինուորական արուեստի անգերազանցելի վարպետներ:

Իսաւրեան տան բնական յաջորդները հայերն էին: Գործող ոյժերի փոխադարձ յարաբերականը այս էլ թելադրում: Մի պատահմունք էր որ Իրինէից յետոյ գահն ընկաւ ոմն

Նիկիփորի ձեռքը, որի ծագման մասին բիւզանդական երեւակայութիւնը աւելի ցնցող առասպել չէր կարող յերիւրել քան այն, որ նա արաբ էր եւ այն էլ թագաւորական ցեղից: Հանրական համակրութիւնը Նիկիփորի կողմը չէր եւ հետագայում նա ստելի դարձաւ իր կեղեքիչ արծաթասիրութեան համար: Հազիւ թէ գահ բարձրացաւ, սկսան խռովութիւնները:

Գահի թեկնածու ելաւ 803 թուին Վարդան հայազն, առաջին զինուորական դէմքը պետութեան մէջ: Միաժամանակ հինգ թեմերի զօրավար էր, μονοστράτηγος այսինքն մենասպարապետ: Իր իսկական թեմը Անատոլիկեանն էր: Նիկիփորի հակապատկերն էր Վարդանը որպէս մարդ: Ազնուական բնաւորութեան տէր էր, վսեմ շարժուածքով, արդարամիտ եւ անշահասէր: Այս ընտիր յատկութիւններով բնաւ չէր նմանում պալատական արծաթամոլ եւ քծնի արարածներին եւ սիրելի էր ընդհանրութեան:

Վարդանը ունէր որպէս գործակից երեք երիտասարդ սպայ, որոնք հռչակուեցին ապագայում, Լեւոն, Միքայէլ եւ Թոմաս: Երբ Վարդանը զօրքով շարժուեց դէպի մայրաքաղաք, Լեւոնը եւ Միքայէլը լքեցին նրան եւ անցան Նիկիփորի կողմը: Ուստի որոշեց վայր դնել զէնքը եւ քաշուեց վանք: Ձախորդութեան պատճառներից մէկն, անշուշտ, այն էր, որ Արմենեակեան թեմը չեղոք դիրք բռնեց: Երեւի, Գրիգոր, որդի Մուշեղակի, այդ միջոցին զօրավար Արմենեակեանի, չուզեց ելնել ընդդէմ Նիկիփորի, որի բարձրացման գործակից էր եղել: Նիկիփորը հակառակ իր հանդիսաւոր խոստման մարդ ղրկեց եւ կուրացրեց Վարդանին, կամենալով ազատուել միանգամ ընդ միշտ երկիւղալի ոսոխից:

Վարդանի մականունն էր Թիւրք, հաւանօրէն, Քերսոնի ճակատում երբեւէ թիւրքերի դէմ կռուած լինելու համար: Հետաքրքրական է, որ բիւզանդական մի ժամանակագրի, Սիմէոն Լոգոթետի, գործի սլաւոն թարգմանութեան մէջ Թիւրքի փոխարէն կարդացւում է Կուրտ, Kourtl: Հետաքրքրական է, որովհետեւ Կուրտ նոյնն է թւում ինչ որ Կուրդիկ, կամ Քուրդիկ անունը, որ սեփական էր Մամիկոնեան տան: Կուրտ կարող էր Վարդանի հօր անունը լինել:

Վանական կեանքում ընտրեց Սաբբա անունը եւ այնքան փայլեց սրբակեցութեամբ որ յոյն եկեղեցին սրբերի կարգը դասեց նրան և յիշատակը տօնում է ցայժմ սեպտեմբերի 8ին:

---

1 Հրատ. Սրեզնեւսկի, էջ 88:

Անցաւ հինգ տարի եւ 808 թուին նորից մի հայ իշխան ծառացաւ Նիկիփորի դէմ միեւնոյն դիտաւորութեամբ: Արշաւիր պատրիկն էր, դիտուն եւ բարեմիտ անձ, պաշտօնով քուեստոր (quaestor), բարձր պաշտօն էր, որի համար պահանջւում էր գրական եւ օրէնսգիտական մեծ պատրաստութիւն, որովհետեւ քուեստորն էր, որ խմբագրում էր օրէնքները եւ կազմում կայսերական թղթակցութիւնները:

Արշաւիրի կուսակիցներն էին բազմաթիւ ծերակուտականներ եւ բարձրաստիճան հոգեւորականներ: Դաւադրութիւնը սակայն անժամանակ բացուեց եւ յեղաշրջական փորձը վիժեց:

Անցաւ նորէն հինգ տարի եւ 813 թուին այս Արշաւիրի փեսան, սրա թէոդոսիա դստեր ամուսին Լեւոնը վրէժխնդիր եղաւ եւ խլեց գահը Նիկիփորի տանից:

Նիկիփորին յաջորդեց իր միակ որդին՝ Ստաւրակ, որ շուտով մեռաւ: Ունէր եւ մի դուստր, որ ամուսնացաւ Միքայէլ Ռանգաբէի հետ: Սա ժառանգեց գահը:

Վերեւ տեսանք, որ 780 թուի դաւադիրները չորս հոգի էին, Գրիգոր որդի Մուշեղակի, Վարդ, Կոստանդին, որդի Վարդանի, չորրորդն էր Թէոփիլակտ Ռանգաբէ: Միքայէլը սրա որդին էր, որ փեսայանալով Նիկիփորին, տիրացաւ գահին:

Միքայէլը պարտութիւն կրեց բուլղարական արշաւանքին եւ զօրքը կայսր հռչակեց Լեւոնին, որ դաւադիր Վարդի որդին էր:

Տեսանք, որ Կոստանդնի հայրը, Վարդան եւս փորձեց գահ բարձրանալ: Գրիգորը յիշւում է վերջին անգամ 802 եւ 803 թուերին: Արդեօք Ալէքսիոս-Մուշեղը սրա մօտ ազգականը չէ՞ր, թերեւս եղբայրը:

Չորս դաւադիրներից երեքը արժանացան գահի յանձին իրենց մերձաւորների: Ալէքսիոս-Մուշեղը, որ նմանապէս թեկնածու եղաւ կայսերական թագին, անհաւանական չէ որ չորրորդ դաւադրի՝ Գրիգորի տանից լինէր եւ նրա իրաւունքների թէ յաւակնութեան արտայայտիչը:

Լեւոն Հային սպանեց Միքայէլը, որ իր լեզուական թերութեան համար կոչւում է Թլուատ: Միքայէլի օրով սակայն հայոց յառաջադիմութիւնը չկասեց, այլ սկսուեց մի շրջան, երբ Մամիկոնեան տունը հասաւ իր զօրութեան բարձրագոյն կէտին, դառնալով փաստօրէն պետութեան ղեկավարը:

III

Միքայէլ Թլուատը, իր նախորդ Լեւոն Հայը եւ մի ուրիշ հայ՝ Թոմաս անունով, սկսել էին իրենց ասպարէզը Վարդանի բանակում, այն զօրավարի, որ 803 թուին փորձեց դրաւել կայսերական գահը: Երեքն էլ Վարդանի դորիւփորներն էին, այսինքն թիկնապահները:

Բիւզանդական պատմագիրները սիրում են առասպելախառն զրոյցներով զարդարել նշանաւոր անձերի կեանքը: Վարդանի մասին պատմում են, որ նախ քան ապստամբելը գնացել էր մի ճգնազգեաց վանականի մօտ, յայտնել նրան իր փառատենչ ծրագիրը եւ խնդրել, որ աղօթէ գործի յաջողութեան համար: Վանականը առանց քաշուելու խորհուրդ էր տուել Վարդանին հրաժարուել իր ձեռնարկից, որովհետեւ մարգարէական աչքով տեսնում է որ գործը պէտք է ձախողի եւ ինքը զօրավարը պէտք է զրկուի աչքի լոյսից:

Վարդանը հեռանում է եւ մինչ նրա սպաթարները՝ Լեւոն, Միքայէլ և Թոմա քարշում էին ձին որ զօրավարը նստէ, վանականը յետ է կանչում Վարդանին եւ ասում, որ երեք սպաթարներից առաջինը եւ երկրորդը պէտք է յաջողին գահ բարձրանալ, իսկ երրորդը պէտք է տապալուի նոյն շաւղով գնալու յանդուգն փորձի մէջ:

Այս եւ նման գուշակութիւնները, որ յերիւրուած են ի հարկէ յետին թուով, post factum, մի տեսակ նախագիծ են գալիք իրադարձութեան: Արդարեւ Վարդանը չյաջողեց, Լեւոնը թագաւորեց, այժմ հերթը Միքայէլին էր եւ յետոյ Թոմային:

Այս անձերը բոլորն էլ հայ են, անդամ յառաջատես կրօնաւորը թւում է թէ հայ էր: Երբ Լեւոնը գրաւեց գահը, պատմում են որ յիշեց վանականի գուշակութիւնը եւ շնորհակալութեան նուէրներ ուղարկեց նրան: Սակայն, վանականը արդէն մեռել էր եւ նրա խուցը բռնել էր մի ուրիշ մենակեաց, որի անունն էր Սմբատ եւ ոչ Սաբբատիոս, ինչպէս եղծում են միւսները[1]:

Վարդ կեսարի փեսան եւս մի հայ էր Սմբատ անունով, որի անունը եւս փորձում են յունացնել, գրելով Սաբբատիոս[2]:

Հիմք կայ կարծելու որ Սմբատ վանականի նախորդը նմանապէս հայ էր եւ որ Վարդանի այցելած մենաստանը հայ հիմնարկութիւն էր: Հայ զօրականը ասել է թէ վստա-

1 Theoph. Cont. 26 ունի Συμβάτιος, իսկ Genes. 3 և Symeon, 604, Σαββάτιος, հայ անուան յունական ձեւ տալու համար:
2 Genesius 106.

հացել էր հետապնդելի քաղաքական դաղտնի ծրագիրը ի հայրենակից կրօնաւորին:

Միքայէլի ծագումը մութ է: Նա Ամորիա քաղաքից էր որ Անատոլիկեան թեմի կենդրոն էր և յայտնի՝ Աքինգան կոչուած աղանդաւորներով: Կար եւ Աթինգաններին եւ հրուութեան մօտիկ մի ուրիշ կրօնական համայնք: Կարծես թէ խօսքը Պաւլիկեան աղանդի մասին է:

Անհաւանական չէ, որ Միքայէլը Պաւլիկեան հայերից լինէր: Պատմագիրները նրա ազգութեան խնդիրը թողնում են անորոշ, յիշում են միայն, որ Ամորիայի աղանդաւոր հասարակութիւնից էր: Այն հանգամանքը, որ Միքայէլ ծառայել էր հայ զօրավարի մօտ, ընկերակից էր մանկութիւնից Լեւոնին եւ Թոմային, եւ յետոյ, ինչպէս կը տեսնենք, մնում է շրջապատուած հայերով, իրաւունք է տալիս ենթադրելու, որ արիւնով եւս մօտ էր Հայերին: Գահի թեկնածուները սովորաբար հայեր էին դարեր շարունակ:

Պաւլիկեան համայնքից էր նաեւ Քրիստոքեր անձը, որ Բուկելլարեան թեմի զօրավարն էր եւ Տաճատ Անձեւացու յաջորդը 790 թուականներին, Ալեքս-Մուշեղի ապստամբութեան ժամանակ: Միքայէլ Թլուատը հակառակ էր պատկերապաշտութեան եւ անտարբեր դէպի պետական եկեղեցին: Եթէ անտեսենք այն անհեթեթութիւնները, որ ուղղափառ պատմագիրները բարդում են նրա վրայ, մի բան կը մնայ ստոյգ, որ նա խմորուած է եղել Պաւլիկեան հակաեկեղեցական հայեացքներով:

Միքայէլը թաղ կապեց թէ չէ Թոմա զօրավարը նրա դէմ ելաւ եւ երեք տարի անընդհատ կռիւ մղեց, կամենալով կորզել իշխանութիւնը: Թոման ծնուել էր Գաղուրա կամ Գազիւրա աւանում, որի տեղը ճշտիւ յայտնի չէ, բայց հաստատ է որ գտնւում էր Արմենեակեան թեմում Իրիս գետի հովտում: Ենթադրւում է որ արդի Թուրխալ քաղաքի մօտերն է եղել, Թոկատի եւ Ամասիայի միջեւ: Լեւոնը եւս թւում է թէ այս կողմերից էր: Նա Պիդրա քաղաքից էր: Պատմագիրների ասելով Պիդրան գտնւում էր Անատոլիկեան թեմում: Այլուստ յայտնի չէ Պիդրա: Մեզ թւում է թէ չփոթութիւն կայ եւ խօսքը Պիդա աւանի մասին է, որ գտնւում էր Լիկոս (=Գայլ) եւ Իրիս գետերի խառնարանի մօտ եւ ցայժմ էլ պահել է հին անունը Ֆիդի: Լեւոնը ծառայել էր Վարդանի մօտ Անատոլիկեան թեմում: Նրան ուղեկցել էր Գուշակ կրօնաւորի մօտ, որն ապրում էր նոյն թեմում, այն է Փիլոմելիոն աւանում (մերձաւորապէս արդի Ակ-շեհիր քաղաքի Իկոնիայի երկաթուղային գծի վրայ): Ասել է թէ Լեւոնի

կեանքի սկզբնական շրջանը անցել էր Անատոլիկեան թեմում: Գուցէ այս է պատճառը, որ նրա ծննդավայրը եւս կարծել են նոյն թեմում:

Թոմայի ազգութիւնը վիճելի է համարւում հնուց ի վեր: Արդեօ՞ք Հայ էր թէ Սլաւոն: Պատմական վկայութիւնները հակասական են եւ դիտնականներից ոմանք, առանց փորձելու հակասութեան աղբիւրը պարզելու, արտայայտւում են ի նպաստ սլաւոն ծագման:

Գենեսիոս պատմագիրը, որ ինքն եւս հայի զաւակ էր, ասում է դրականօրէն որ Թոման հայ էր, ἐκ ἀρμενίων τὸ γένος[1] եւ մանկութիւնից ընկերակից Լեւոնին:

Նոյն պատմագիրը, բերելով մի ուրիշ վարկած Թոմայի նախնական կեանքի վերաբերեալ, եւ կամենալով բացատրել նրա յաջողութիւնը, տալիս է նրա նկարագիրը, ուր գովում է նրա բարի գծերը եւ ասում որ համակրելի էր, ընկերական եւ քաղաքացի կրթութեամբ, հակառակ որ, աւելացնում է պատմագիրը «սկիւթանման էր ծագումով», και σκυθίζων τοι γένει[2]:

Արդ Թէոփանի Շարունակողը, որ այս կէտում ուրիշ աղբիւր չունի քան Գենեսիոսը, կրկնում է սրա ասածները, և այնտեղ ուր Գենեսիոս ասում է թէ Թոման հայ էր, Թէոփանի Շարունակողը փոխում է և հայի տեղ դնում է սլաւոնածին, σκλαβογενσν եւ որպէսզի հաւատ ներշնչէ իր այս կարծիքին, աւելացնում է, որ սլաւոնածինները ցրուած էին շատ տեղ արեւելքում: Իսկ ուր Գենեսիոս խօսում է սկիւթանման ծագման մասին, Թէոփանի Շարունակողը այնտեղ գործ է ածում մի ուրիշ դարձուած, «թէեւ ծագումով բարբարոս էր»: Իսկապէս σκυθίζων այլ բան չէ նշանակում քան բարբարոս, մի մարդ, որ չի պատկանում յոյն ցեղին:

Թէոփանի Շարունակողը երեւում է այստեղից այն եզրակացութիւնն է հանել, թէ սկիւթ եւ բարբարոս նշանակում է իրապէս Սլաւոն, քանի որ այդ ժամանակները հին սկիւթական տափաստանները բռնուած էին սլաւոն ցեղերի կողմից: Նոյն պատմագիրը խոստովանում է որ ինքը անձամբ հաւատում է Թոմայի սլաւոն ծագման, «հիմն ունենալով ինչ ինչ գրութիւն»[3]:

Գրաւոր աղբիւրի յիշատակութիւնը հակասում է նոյն հեղինակի խորհրդածութեան, որ անում է Թոմայի մասին

1 **Genes.**, 8.
2 **Ibid.**, էջ 32:
3 **Theoph. Cont.**, 50 և 53; ἐξ ἐγγράφων τινῶν ἔχων τὸ βέβαιον, p. 50.

եղած զրոյցների առթիւ եւ ուր խոստովանում է որ այլ աղբիւր չկայ քան լուրեր եւ ենթադրութիւններ:

Պէտք է կարծել, որ աղբիւրի ակնարկը վերաբերում է Գենեսիոսին, որից արդարեւ օգտուել է: Արդ քանի որ Թէոփանի Շարունակողի հաղորդութիւնը Թոմայի սլաւոն ծագման մասին արդիւնք է Գենեսիոսի սկիւթանման բառի կամայական մեկնութեան, միակ դրական վկայութիւնը մնում է այն ինչ որ տալիս է Գենեսիոս թէ Թոման Հայ էր:

Մեզ թւում է որ Թոման եւ Միքայէլը Վարդանի փեսաներն էին, նրա դուստրների ամուսինները: Այս երեւում է Միքայէլի կենսագրական մի զրոյցից:

Նոյն երկու պատմագիրները պատմում են որ Միքայէլը սնուել եւ մեծացել էր Աթինգան կոչուած աղանդաւորների միջավայրում, մանկութիւնը անցել էր ախոռներում եւ յետոյ մտել էր իր թեմի զօրավարի մօտ ծառայութեան: Սակայն, թլուատութեան պատճառով յաջողութիւն չի ունենում եւ զօրավարը ուզում էր արձակել, երբ Աթինգաններից մէկը, որ մտերիմ էր զօրավարին, յայտնում է նրան թէ պէտք չէ Միքայէլին հեռացնել, որովհետեւ նրան եւ իր ընկերոջը մեծ ապագայ է սպասում եւ որ երկուսն էլ գահ պիտի բարձրանան:

Զօրավարը հաւատում է այս մարգարէութեան եւ անմիջապէս մեծ խնջոյք է պատրաստում եւ հրաւիրում Միքայէլին եւ նրա ընկերոջը: Կերուխումից յետոյ զօրավարը ցանկութիւն է յայտնում, որ նրանք փեսայանան իրեն, առնելով կնութեան իր երկու դուստրները: Այդպէս էլ լինում է[1]:

Տարակոյս չկայ, որ Աթինգան գուշակը ոչ այլ ոք է եթէ ոչ Փիլոմելիոնի վանականի մի ուրիշ պատկեր եւ զրոյցը՝ վանականի եւ Վարդանի դէպքի մի այլ վարկած: Վանականը, ինչպէս եւ իր յաջորդ Սմբատը պատկերապաշտութեան դէմ էին եւ այս արդէն բաւական է, որ վանականը նմանեցնուէր Աթինգան աղանդաւորի: Անանուն զօրավարը հէնց ինքը Վարդանն է: Միքայէլի ընկերը, որի անունը չէ յիշուած, կամ Լեւոնն է եւ կամ Թոման, ինչպէս դատելու է Փիլոմելիոնի զրոյցից: Լեւոնը չէր կարող լինել, որովհետեւ նա ամուսնացած էր Արշաւիր պատրիկի դստեր Թէոդոսիայի հետ: Ուրեմն չէր կարող փեսայ լինել Վարդանի: Մնում է ընդունել, որ Միքայէլի ընկերը Թոման էր, հետեւապէս, սրանք էին Վարդանի փեսաները: Միքայէլի կնոջ անունը Թիկլա էր, իսկ Թոմայինը՝ յայտնի չէ:

1 Genes., 31, Theoph. Cont., 44.

Մեր այս մեկնութիւնը տալիս է ստոյգ բանալին լուծելու Թոմայի վերաբերեալ առասպելները:

Պատմում են, որ Թոման աննշան եւ աղքատ տան զաւակ էր, մի օր վճռում է գնալ մայրաքաղաք բախտ որոնելու եւ յաջողում է մտնել մի ծերակուտականի մօտ սպասաւորութեան: Սակայն, Թոման անազնիւ է գտնւում իր տիրոջ նկատմամբ, յանցաւոր տարփանք տածելով նրա կնոջ, որի հետեւանքով զրկւում է տեղից եւ փախչում Արաբների մօտ:

Միւնոյն պատմիչները գիտեն եւ մի ուրիշ զրոյց, որի համաձայն անանուն ծերակուտականը ինքը Վարդանն է, եւ Թոման ուրիշ անձ չէ քան նա, որ Լեւոնի եւ Միքայէլի հետ ուղեկցել էր Վարդանին յայտնի վանականի մօտ Փիլիմիլիոնում[1]:

Եթէ իրաւ խօսքը Վարդանի մասին է, ստայոդ պէտք է համարել այն լուրը, որպէս թէ Թոման փորձել էր արատաւորել նրա կնոջ պատիւը և ակամայ փախուստ տուել: Խոտելի է այս պատմութիւնը, որովհետեւ Թոման Վարդանի հետ էր և հաւատարիմ մնաց նրա ապստամբութեան ժամանակ 803ին մինչեւ վերջը, իր անձը հաւասարապէս փորձանքի ենթարկելով, եւ հեռացաւ ոչ Վարդանից, այլ նրա անձնատուր լինելուց յետոյ փախաւ, երկիւղ կրելով կայսեր վրէժխնդրութիւնից:

Ժողովրդական երեւակայութեան մէջ քաղաքական յանցաւորի փախուստը ստացել է սիրային արկածի բնոյթ, որպէս թէ Թոմայի փախչելու պատճառը եղած լինի իր տրոփանքը դէպի զօրավարի կինը:

Թէ որքան անհեթեթ է այս փաստաբանութիւնը, հարցիւ թէ պէտք կայ բացատրելու: Սիրային որեւէ զանցառութեան համար վտարուել հայրենիքից եւ այն էլ կայսեր միջամտութեամբ, խելքից դուրս բան է: Պարզ է որ իսկութիւնը խեղաթիւրուած է, մանաւանդ որ գիտենք փախուստի բուն քաղաքական հանգամանքը: Եթէ ընդունենք որ Թոման արդարեւ Վարդանի փեսան էր, ինչպէս տեսանք վերեւ, այն ժամանակ սիրային ամբաստանութիւնը կը ներկայանայ մեզ իր իրական լոյսի մէջ: Ենթադրենք, որ Թոման, փախչելով հեռու արեւելք Արաբների մօտ, չէր կարողացել կամ չէր կամեցել կնոջը տանել իր հետ եւ ուրեմն կնաթող էր եղել տարիների ընթացքում, ապրելով Արաբների մօտ օտարութեան մէջ: Կնաթողութիւնն արդէն ամուսնական խաբէութիւն է: Այս պարագան զրոյցի մէջ այնպէս է անդրադար-

1 Genes., 35.

ձել, որպէս թէ Թոման գործել էր մի անբարոյական քայլ, մի սիրային սայթաքում, Վարդանի ընտանիքի հանդէպ, այսինքն, պատրել էր նրա կնոջ (իմա՛ դստեր) եւ փախել:

Պատրաստուելով ապստամբութեան, Թոման յայտարարել էր Արաբներին, որ ինքը հասարակ ոմն չէ, այլ Խաւրեան տան վերջին շառաւիղն է եւ փախել է իր մօր Իրինէի ձեռքից, որ ուզում էր կուրացնել նրան, եւ այժմ ցանկանում է տիրանալ հայրենի ժառանգութեան: Թոմայի շարժումը սկիզբն առաւ 821 թուին, դեկտեմբեր ամսին: Կոստանդնի աղէտը պատահեց 797 թուին, ուրեմն Թոման փախած պիտի լինէր այս ժամանակ, որպէսզի հիմ ունենար ասելու որ ինքն է Կոստանդինը: Միւս կողմից, Թոմայի շարժումը սկսուեց 821 թուին դեկտեմբեր ամսին: Այստեղից պատմագիրները այն եզրակացութիւնն են հանել, որ Թոման մնացել է օտարութեան մէջ 25 տարի, 797 մինչեւ 821 տարին, մինչդեռ նոյն պատմագիրները վկայում են որ Թոման մասնակցել էր Վարդանի ապստամբութեան 803 թուին, այլ եւ Լեւոնի դահակալելուց յետոյ 813 թուին նշանակուել էր Ֆեդերատների տուրմարխ, այսինքն օտարականներից կազմուած գնդի պետ, մի պաշտօն, որ երբեմն վարել էր ինքը Լեւոնը եւ այժմ նոյն պատիւը տուել էր իր վաղեմի ընկերոջ Թոմային:

Այստեղից հետեւում է որ Թոման օտարութեան մէջ մնացած պիտի լինէր տասը տարի 803 մինչեւ 813 տարին, եւ ոչ թէ քսան եւ հինգ տարի, որ արուեստական հաշուի արդիւնք է, Թոմայի փախուստի կարծեցեալ թուից, որ է Կոստանդնի կուրացման տարին մինչեւ նրա դարձը, այսինքն՝ 797–821 ժամանակամիջոցը:

Ոմանք ուզում են պատմական արժէք տալ քսան և հինգ տարուան եւ յետ տանել Թոմայի փախուստը մինչեւ 788 թիւը, ենթադրելով, որ երկու անգամ մնացել է տասն եւ հինգ տարի 788ից մինչեւ 803, եւ երկրորդ անգամ տասը տարի 803ից 813 թ.: Այդպէս է կարծում Բրոի, անգլիացի յայտնի բիւզանդագէտ եւ նորերս մեռած[1]:

Սակայն, Թոման Արաբների մօտ էր, երբ ծառացաւ Միքայէլի դէմ 821 թուին, ուրեմն պէտք է ենթադրել եւ մի երրորդ փախուստ եւ համապատասխան ժամանում Արաբների մօտ: Այս ժամանումը, որքան եւ տեւած լինի, արդէն խանգարում է 25 տարուան հաշիւը: Բացի դրանից, եթէ Թոմայի առաջին փախուստը դնենք 788 թուին, ստիպուած ենք ընդունելու, որ այն ծերակուտականը, որի ընտանիքում

1 **Bury**, Eastern Roman Empire, 84, ծանօթ. 2:

տեղի էր ունեցել Թոմայի սիրային արկածը, Վարդանը չէր: Հարկաւ, չէր կարող Թոման զինակից լինել մի մարդու, որի ձեռքից փախել էր օտարութիւն: Ծերակուտականը պէտք է որ ուրիշ անձ լինէր այս դէպքում:

Անգլիացի դիտնականի ենթադրութիւնը ներշնչուած է գլխաւորապէս Միքայէլ կայսեր նամակից, գրուած Լուդովիկ բարեպաշտին 824 թուին, այսինքն Թոմայի ապստամբութիւնը խեղդելուց յետոյ: Թոմայի մասին Միքայէլը գրում է.

«Ոմն Թոմա անունով անձը, նա որ լինելով ստորադրեալ մեծ պատրիկներից մէկի, այն ժամանակ երբ իշխանութիւնը Իրինէի ձեռքին էր, խարէութիւն է գործում իր տիրոջ նկատմամբ, այն է խառնակւում է իր տիրոջ կնոջ հետ եւ փախչում Պարսիկների մօտ: Այնտեղ մնում է յիշեալ Իրինէի ժամանակից մինչեւ Լեւոնը, ուրանում է քրիստոնէական հաւատը... հաւատացնում է նրանց որ ինքն է Կոստանդին, որդի Իրինէի, եւ որ ուրիշ մէկն է զրկուել աչքերից եւ ինքը փախել ազատուել է»[1]:

Այստեղ ուշադրութեան արժանի է այն պարագան, որ Միքայէլը չէ տալիս պատրիկի անունը եւ Թոմայի ոճիրը իրական է համարւում եւ գործուած Իրինէի ժամանակ:

Այստեղից անգլիացի դիտնականը այն եզրակացութիւնն է հանել, որ պատրիկը չէր կարող Վարդանը լինել: Սակայն, նամակի մէջ չէ ասուած որ Թոման մնաց Արաբների մօտ 25 տարի, որպէսզի կարելի լինէր փախուստը յետ տանել մինչեւ 788 թիւը, մի կերպ արդարացնելու համար կասկածելի տարեթիւը:

Միքայէլին անպայման հաւատալը վտանգաւոր է: Բարեպաշտ կայսեր ուղղած նամակում, նրան հաճոյանալու համար, ստիպուած է ծածկել կամ խեղաթիւրել ճշմարտութիւնը: Բաւական է յիշել, որ Լեւոնի սպանութեան մասին ասում է որ մի քանի խռովարար զինուորների գործ էր, այնինչ ինքն էր իսկական հեղինակը: Միքայէլը, անշուշտ, մեղանչում է դիտմամբ ճշմարտութեան դէմ, աշխատելով թաղցընել Թոմայի ով լինելը: Հակառակորդի արժէքը նսեմացնելու նպատակով ուրանում է որ Թոման իր մօտ ծանօթն էր եւ ընկերը եւ անգամ քենեկալը համաձայն մեր լուսաբանութեան: Ծածկում է որ Թոման նշանաւոր Վարդան զօրավարի փեսան էր, ինչպէս ինքը եւ ուրեմն նոյնանման իրաւունք

1 **Mansi**, XIV, 417.

ունէր գահի թեկնածութեան: Արհամարհական դարձուածք է կիրառում նրա վերաբերմամբ:

Հասկանալի է որ պատմագիրները, որ ծանօթ էին այս նամակին, չեն կարողացել բացատրել Միքայէլի տարօրինակ վերաբերումը իր ընկեր Թոմային քան ենթադրել, որ մանկութիւնից նրանք սիրելի չէին միմեանց:

Իրինէ թագուհին ընկաւ գահից 802 թուին հոկտեմբերի 31ին: Վարդանի խռովութիւնը պայթեց 803 թուին յուլիսի 19ին, որեմն մի քանի ամիս յետոյ, եւ տեւեց մինչեւ սեպտեմբերի 8, հաղիւ ուրեմն երկու ամիս: Անհաւանական է, որ 15 տարի յառաջ փախած եւ այդքան տարիներ օտարութեան մէջ դեգերած Թոման վերադառնար հայրենիք մասնակցելու մի ապստամբութեան և իսկոյն և եթ նորից փախչէր վերստին: Իսկ փաստ է որ նա մասնակցել էր ապստամբութեան Միքայէլի եւ Լեւոնի ընկերակցութեամբ եւ փախել անյաջողութիւնից յետոյ, մինչդեռ իր երկու ընկերները դաւաճանել էին Վարդանին եւ անցել հակառակ կողմը: Միքայէլ թագցնում է այս կարեւոր հանգամանքը իր նամակում և երեւի ինքն է առաջինը, որ Թոմայի փախուստի քաղաքական բնաւորութիւնը փորձում է վարադուրել սիրահարական անհեթեթ զրոյցով:

Թէ յիրաւի Թոմայի փախուստը կապ ունէր Վարդանի ապստամբութեան հետ, երեւում է Սամուէլ Անեցու տեղեկութիւնից, որի համաձայն, «Պէ թուականին սուտ թագաւորն Թովմաս ի Կարնոյ քաղաքն եկն»: Միքայէլ Ասորին քաջածանօթ է Թոմային, եւ յիշում է երկու փախուստ. մէկը՝ Հարուն-ալ-Ռաշիդի օրով (786–809), նրա վերջին տարիները, միւսը՝ Մամունի ժամանակ (813–833): Առաջին դէպքում տալիս է Թոմայի անունը եւ հօր անունը, որ էր Մոսմար, եթէ ճիշտ է ընթերցումը: Հայ թարգմանութեան մէջ բաց է թողուած, տարաբախտաբար, հօր անունը, էջ 362: Երկրորդ անգամ պատմում է որ մի Հոռոմ էր եկել Մամունի մօտ, խնդրում էր օգնել իրեն վերստանալ հայրենի թագը: Այս անանուն Հոռոմը, հաւանօրէն նոյն Թոման է եւ չփոթմամբ նրա երեւումը Արաբների մօտ հաշւում է 831 թուին, փոխանակ 821ին:

Միքայէլը իր նամակում ասում է որ Թոման որպէս թէ ըմբոստացել էր տակաւին Լեւոնի ժամանակ: Այս վկայութիւնը եւս կասկածելի է: Կայ մի ուրիշ տեղեկութիւն, որի համաձայն Թոմայի ապստամբութեան շարժառիթն էր նախ՝

վրէժ լուծել Լեւոնի սպանութեան համար եւ երկրորդ՝ ելք տալ եւ յագուրդ իր սրտմտութեան ընդդէմ Միքայէլի[1]:

Թոման փախչելով արեւելք, յաջողում է հակել իր կողմը «Հայաստանի իշխանութիւնը, Խաղտեաց իշխանութիւնը եւ Արմենեակեան թեմի զօրավարին»:

Թէ ինչ ոյժերից էր բաղկացած Թոմայի բանակը, յայտնի է Միքայէլի նամակից, ուր ասուած է թէ Թոման «շարժուեց Պարսկաստանից, ունենալով հետը Սարակինոսներ, Պարսիկներ, Իվերներ, Հայեր, Աբխազներ և ուրիշ այլազան ցեղեր»[2]:

Եթէ իրօք Թոմայի ձեռքի տակ եղել են սարակինոս եւ պարսիկ ոյժեր, պէտք է կարծել, որ արաբական խալիֆի կողմէն տուած օգնական զունդն էր: Պատմագիրները, որ Թոմայի նկատմամբ ընդունակ են ամեն ինչ չափազանցելու, թւում են մի շարք ցեղեր եւ ժողովուրդներ, որ Թոմայի բանակում լինել չէին կարող աշխարհագրական պայմանների հետեւանքով: Այսպէս, բացի Հայերից եւ պոնտական կամ կովկասեան մի քանի ցեղերից հաշւում են՝ Հագարացի, Եգիպտացի, Հնդիկ, Պարսիկ, Ասորեստանցի, Կաբիր Ալան, Վանդալ, Սլաւոն, Հոն եւ Գոթ ժողովուրդներ[3]:

Այստեղ թուած են գրեթէ բոլոր այն ժամանակ յայտնի ժողովուրդները: Անխոհեմութիւն կը լինէր որեւէ պատմական արժէք տալ այս շարանին: Միքայէլի նամակի «և մնացեալ այլազան ցեղերը» խօսքը առիթ է տուել պատմագիրներին ցուցադրելու իրենց աշխարհագրական գիտութիւնը աւելի մեծ չափով քան պահանջում էր Թոմայի բանակի կազմը:

Առասպելական չափազանցութիւնները մի կողմ թողած, Թոմայի բանակը բաղկացած էր Հայաստանի, Խաղտիքի եւ Արմենեակեան թեմի ոյժերից: Chaldaace quae gens montem Caucasum incolit, ասելով, նամակը հասկանում է Պոնտոսի եզրածիր տարածութիւնները մինչեւ Կովկասեան լեռնաշղթան: Այստեղ Խաղտիքը փոխարինում է հին Լազիկա, որ Տրապիզոնից ձգւում էր մինչեւ Աբխազիա:

Թէեւ Միքայէլը իր նամակում Խաղտիքը կոչում է ducatum, բայց դժուար թէ այդ ժամանակ Խաղտիքը վարչապէս կազմակերպուած միութիւն ներկայացնէր: Խաղտիքը թեմ դարձաւ Միքայէլից յետոյ նրա որդու և յաջորդի՝ Թէոփիլի օրով: Մինչ այն մտնում էր Արմենեակեան թեմի մէջ այն մասով որ պատկանում էր կայսրութեան:

1 Theoph. Cont., 50.
2 Mansi, XIV, 417.
3 Genes. 32, Theoph. Cont. 55.

Armeniae ducatum, *Հայաստանի իշխանութիւն թէ զօրավարութիւն, եւս մութ է թէ իրապէս ի՞նչ է նշանակում: Թոմայի ապստամբութեան ժամանակ Հայաստանում իշխում էին Աշոտ Մսակերը եւ իր եղբայր Շապուհը: Հաւանական է որ եթէ ոչ Մսակերը, գէթ Շապուհը, որ տիրում էր Սպերի շրջանում, աջակցութիւն ընձեռած լինէր Թոմային որեւէ կերպ:*

Արմենեակեան թեմի dux *կամ զօրավարը նմանապէս յարել էր Թոմային: Ո՞վ էր այդ զօրավարը, դժուար է ասել: Բայց որ արդարեւ նա Թոմայի հետ է եղել, երեւում է նաեւ այն բանից, որ հանւում է պաշտօնից: Ապստամբական շարժումը մեծ ծաւալ էր ստացել, բոլոր թեմերը յարել էին Թոմային, բացի Արմենեակեան թեմից: Այս երեւոյթը բացատրելու է նրանով, որ Միքայէլը հայ զօրավարին հեռացրել էր եւ նրա տեղ նշանակել ոմն Օլբիան(ոսի)ի (=Աղբիանոս): Հարեւան Օփսիկեան թեմը եւս յանձնել էր Կատակիւլ(աս)ին, որ իր եղբօր որդին էր: Կայսեր հաւատարիմ էին մնացել նոյնպէս Քրիստափոր մագիստրոսը իր երկու որդիներով, որոնց անուններն էին Վարսակ(իոս) եւ Նասոր,* Barsakios, Nasor: *Անունները արեւելեան բնոյթ ունին:*

Երբ Թոման յաղթական ոգեւորութեամբ մօտեցաւ մայրաքաղաքին եւ պաշարեց, Միքայէլի հետ կուում էին ներսից նրա դէմ յիշեալ Օլբիանը եւ Կատակիւլը: Թւում է թէ Արմենեակեան եւ Օփսիկեան զօրքերը լքել էին նրանց, թերեւս, համակրանք ցոյց տալով շարժումին: Սակայն երեւում է որ այս երկու զօրավարները իրենց գնդերովն էին Միքայէլի մօտ[1]:

Երկուսից մէկը, կամ յիշեալ թեմերի զօրքերը անցել էին Թոմայի կողմը, կամ իրենց զօրավարների հետ քաշուել էին մայրաքաղաք: Այլապէս Թոման չէր կարող Արմենեակեան թեմի վրայից անցնել անարգել եւ յարձակուել մայրաքաղաքի վրայ:

Թոմային զինակից էր նաեւ Գրիգոր Պտերոտ կոչուած զօրավարը, որ Լեւոն թագաւորի քեռորդին էր[2]: *Երբ տեսաւ որ պատերազմը երկարում է, Գրիգորը վճռեց թողնել Թոմային եւ անցնել Միքայէլի կողմը, որպէսզի փրկել կարենար իր կնոջը եւ որդիներին, որ Միքայէլի ձեռքին պատանդ էին: Թոման զգաց վտանգը եւ սպանել տուաւ Գրիգորին:*

Թոմայի խռովութիւնը տեւեց երեք տարի 821-824 *թ.:*

1 **Theoph. Cont.** 67.
2 **Ibid.** 57: ἀδελφιδοῦς *նշանակում է այստեղ քրոջ որդի եւ ոչ եղբօր:*

Ցաջողութիւնը մեծ էր եւ անչուշտ պիտի յաղթանակէր եւ գահը գրաւէր, եթէ եռեւից չհարուածէր անակնուելի կերպով բուլղարական թագաւորը Մորտագոն, որ մեծ զօրքով եկաւ Թոմայի դէմ և փրկեց Միքայէլին վերահաս անկումից:

Թոմային կողմնակից էին նաեւ երկու զինուորականներ Քիրէաս եւ Գաղարենոս, որոնցից երկրորդը կոչւում էր Կոլոնիացի: Ասել է թէ ծնուած էր Պոնտոսի Կոլոնիա քաղաքում, (*արդի Շապին-Կարահիսար*): *Սրանք գործում էին Կաբալա եւ Սանիանա վայրերում եւ Թոմայի անկումից յետոյ շարունակեցին իրենց խռովարար գործունէութիւնը:*

Կարծում են որ Սանիանա գտնւում էր Անկիւրայից հարաւ-արեւելք Ալիսի ակ ափին, իսկ Կաբալա — Իկոնիայից հիւսիս-արեւմուտք[1]: *Սակայն թւում է թէ աւելի հիմ ունինք որոնելու Կոլոնիայի շրջանում: Միքայէլը խոստացել էր նուիրել Գաղարենի ծառային, եթէ դաւաճանէր իր տիրոջ, Սանիանա եւ Նէո-Կեսարիոյ եպիսկոպոսութիւնը*[2]: *Այսուղից հետեւում է որ Սանիանա մօտ պիտի լինէր Նէո-Կեսարիային* (*արդի Նիկսար*): *Ենթադրում ենք, որ Գաղարենի Սանիանան կապ չունի Գալատիայի համանուն բերդի հետ եւ հաւանօրէն այլ բան չէ, եթէ ոչ արդի Ճանիկի կամ Ջանիկի շրջանը եւ սրա հին անունը, որ նշանակում է Ճանների երկիր: Ճան, հնում Սան, այժմեան Լազ ժողովուրդի անունն է: Կաբալա եւս որոնելու է նոյն կողմերը, Խաղտեաց աշխարհի եւ Փոքր Հայքի սահմաններում: Սպերի շրջանում կար համանուն տեղ, յայտնի ոսկէ հանքերով: Թւում է որ Փոքր Ասիայում տարածուած անուն է եղել եւ կարող էր նոյնանուն տեղ լինել եւ յիշածս շրջանում, քանի որ Թոմայի գործունէութեան կուռանն էին հայ-պոնտական երկրները:*

Այս հանգամանքը բնաւ նպաստաւոր չէ Թոմայի սլաւոն ծագման տեսութեան: Ապստամբը եկաւ Կարին և կազմակերպելով հայ, խաղտ և Արմենեակեան դժգոհ տարրերը, նրանց վրայ յենուելով, գլուխ բերեց մի մեծ քաղաքական եւ հասարակական շարժում: Օտարական, տեղական պայմաններին եւ ժողովրդին խորթ մի Սլաւոն, չէր կարող ոչ վստահութիւն ներշնչել եւ ոչ համակրութիւն գէթ այն չափով, որ անհրաժեշտ էր մեծածաւալ եւ տեւուն ամբոխային ըմբոստութեան համար:

Սլաւոնները բիւզանդական Արեւելքի մէջ դեր չեն կատարել երբեք անհատապէս եւ թէ հաւաքաբար: Ամբողջ

1 **Ramsay,** Asia Minor, 248, 359.
2 **Thoeph. Cont.,** 72.

պատմութեան ընթացքին յայտնի չէ եւ ոչ մի դէպք, ուր սլաւոնը դուրս գար քաղաքական ասպարէզ Փոքր Ասիայի մէջ: Մինչդեռ սովորական երեւոյթ է Հայերի գրեթէ անդադրում խիզախումը կայսերական թագի շուրջը, սկսուած Յուստինիանոսի դարաշրջանից:

Թոման ծնուած էր պոնտական հողերի այն մասում, որը հնուց բռնուած էր զանազան փոքր ցեղերով: Սրանք դիւրութեամբ չէին ենթարկւում քաղաքակրթութեան, ուստի եւ համարւում էին բարբարոս: Նոյն համբաւն ունէին եւ սկիւթական ցեղերը: Ուշադրութեան արժանի է որ Ս. Գրքի մէջ յունարէնի Սկիւթ անուան դէմ հայերէնը ունի Խաղտիք: Ուրիշ անգամ նոյն բառը թարգմանած է խուժ եւ դուժ, այսինքն՝ վայրենի, բարբարոս[1]:

Հասկանալի է թէ ինչու Թոման, լինելով Խաղտեաց աշխարհից կամ դրացի, կոչւում է սկիւթացի կամ բարբարոս: Այստեղ սկիւթացի բառը ուրիշ բան չէ նշանակում քան խաղտեացի, Խաղտեաց աշխարհից:

Հարկաւ, պատմագրի բերանում այս մի վիրաւորական կոչում է, մի հայհոյանք Թոմայի հասցէին: Այս բնաւ չի պատասխանում իսկութեան, քանի որ Թոմա, ինչպէս որ նոյն պատմագիրն է վկայում, բարեկիրթ էր եւ քաղաքացի կենցաղի եւ բարքի տէր: Նրա արտասովոր յաջողութեան պատճառներից գլխաւորը հէնց բարեկրթութիւնն է համարում, որ նրա անձին տալիս էր որոշ հմայք ամբոխի աչքին, մինչ Միքայէլ կայսրը զուրկ էր այդ յատկութիւններից:

IV

Թոմայի յարուցած մեծ շարժումը նշան էր որ Միքայէլը ժողովրդական չէր եւ չէր վայելում ընդհանուրի համակրութիւնը: Քաղաքական ոճիրները արդարանում են կամ մեղմանում են ստէպ, նայելով թէ իրենց հեղինակները որչափ գերազանց են զոհերից: Միքայէլի գործած սպանութիւնը դատապարտելի էր, քանի որ ինքը ոչ մի կէտում չէր կարող հաւասարուել իր նախորդին, Լեւոն Հային: Սա նշանաւոր գահակալներից էր, օժտուած բազմակողմանի ընդունակութիւններով: Պատերազմի դաշտում առաջնակարգ զօրական էր, պետական ասպարէզում՝ վարչական մեծ կարողութիւնների տէր: Նրա արդարադատութեան մասին առասպելներ էին պատմում, իսկ կրօնական ջերմեռանդութիւնը անվիճելի էր, հակառակ որ պատկերամարտ լինելով չէ խուսափել հակառակորդների անլուր լուտանքից: Ձերծ էր արծաթասիրութեան տարածուած արատից, և առատաձեռն էր: Նիկիփոր պատրիարքը, որ քնքոյշ սէր չունէր բնաւ դէպի Լեւոնը եւ չէր կարող ունենալ, որպէս կատաղի հակառակորդ նրա եկեղեցական քաղաքականութեան, որի պատճառով եւ գահընկէց էր եղել, երբ լսեց Լեւոնի մահը, գոչեց. «պետութիւնը կորցրեց մի մեծ, թէեւ ամբարիշտ, պետական մարդ»[1]:

Մեծագոյն զոլջասանք, որ կարելի էր լսել մի թշնամուց:

Այսպիսի մի արժանաւոր անձի սպանութիւնը, բնական է, դժուար կացութիւն պիտի ստեղծէր սպանիչ Միքայէլի համար: Առանձին շրջանկատութիւն էր հարկաւոր եւ խոհեմութիւն, որ կարենար վայելել իր յանցագործութեան արդիւնքը:

Միքայէլ Թլուատը խստութեամբ չվարուեց Լեւոնի ընտանիքի հետ: Լեւոնը իր նախորդի Միքայէլ Ռանգաբէի որդիներին ներքինացրել էր եւ վանական դարձրել: Նրանցից մէկը հետագայում պատրիարքական դահը բարձրացաւ Իգնատիոս անունով: Միքայէլը բաւականացաւ նոյն պատիժը տալով եւ Լեւոնի որդիներին: Կրտսերը՝ Թէոդոսը մեռաւ, չդիմանալով ծանր գործողութեան, իսկ Վասիլը եւ Գրիգորը մեծ անուն վաստակեցին եկեղեցական ասպարէզում իրենց առաքինի վարքով եւ 847 թուին երկուսն էլ թեկնածու էին պատրիարքական աթոռին, երբ առաւելութիւն տրուեց յիշեալ Իգնատիոսին, անշուշտ, այն պատճառով միայն որ Լեւոնի պատկերամարտութեան ստուերը տակաւին ծանրանում էր որդիների վրայ:

Մենաստան ղրկուեցին նաեւ Լեւոնի մայրը եւ կինը, կայսրուհի Թէոդոսիան: Լեւոնի աւագ որդու անունն էր Սմբատ, որ Աւգուստ, այսինքն թագաժառանգ էր հռչակուել եւ այս առթիւ վերակոչուել էր Կոստանդին[2]:

Ուրիշ անգամ յիշւում է որ Կոստանդինը վերակոչուել էր Վասիլ[3]: Անշուշտ սխալմունք է: Այս Կոստանդին վերակոչեալ Վասիլ որդու մասին պատմւում է, որ ներքինացումի գործողութեան ժամանակ կորցրեց խօսելու ընդունակու-

1 Բ. Մակ. դ, 47, Թէպէտ առաջի Խաղտեաց դատ վարէին: Գ. Մակ. է. 3, խուժ եւ դուժ:

1 Genes. 17, Theoph. Cont. 30.
2 Theoph. Cont., 41; Genes., 26.
3 Ibid., 47.

թիւնը, բայց յետոյ ողջացաւ շնորհիւ Գրիգոր Աստուածաբանի, որի պատկերը կրում էր իր կրծքին (արդեօ՞ք խօսքը Աստուածաբանի մասին է թէ Լուսաւորչի)։ Լեւոնի մայրը, կինը ղրկուեցին Տերանց (Δεσποτῶν) վանքը, իսկ որդիները՝ Պրոտէն կղզին։

Միքայէլ Թլուատը ջանաց մօտենալ հայ չրջաններին, որոնք, անշուշտ, չէին կարող համակրիլ իրենց ազգակցի սպանողին։ Նրանց իրեն քաշելու յուսով Միքայէլը դիմեց խնամիական միջոցի։

Տեսանք որ Մանուէլ Մամիկոնեանը առաջնակարգ դէմք էր եւ Արմենեակեան թեմի զօրավարն էր Լեւոնի ժամանակ։ Արմենեակեան դունդը վտանգաւոր էր Միքայէլի համար եւ կարող էր նրա բոլոր հաշիւները խառնել։ Հարկաւոր էր սպառնալիքը չեզոքացնել։ Միքայէլը որոշեց խնամիանալ Մանուէլի տան հետ։ Մանուէլի աւագ եղբայրն էր Մարինը, որի դուստր Թէոդորան յայտնի էր իր սքանչելի գեղով եւ, թերեւս, ծանօթ արքունիքին Լեւոնի օրերից։

Կայսրը ընտրեց նրան հարս իր որդու Թէոփիլի համար։ Եթէ ճշմարիտ է մեր ենթադրութիւնը, որ Միքայէլի կինը Թեկլա Վարդանի դուստրն էր, ուրեմն հայ, առաւել եւս հասկանալի կը դառնայ Թէոդորայի ընտրութիւնը։

Թէոդորան միայն իր գեղեցկութեան չէր պարտ այն մեծ բախտը, որին արժանացաւ, այլ եւ իր տոհմի քաղաքական եւ պետական կշռին։ Թէոդորան երեք քոյր ունէր եւ երկու եղբայր։ Քոյրերն էին Կալոմարիա կամ գեղանի Մարիամ, Սոփիա եւ Իրինէ, եղբայրները՝ Վարդ եւ Պետրոն։

Թէոդորայի ամուսնութիւնը տեղի ունեցաւ Միքայէլի գահակալութիւնից մի քանի ամիս յետոյ։ Հները չփոթելով աւգուստութեան և ինքնակալութեան տարբերութիւնը, կարծել են որ Թէոփիլը ամուսնացել է իր ինքնակալութեան առաջին տարին 829ին, հօր մահից յետոյ։ Այս չփոթութիւնը չէր ներդաշնակում պատմագիրների այն վկայութեան թէ 837ին Թէոփիլն ունէր արդէն չափահաս դուստր, նշանուած Ալեքսիոս Մուշեղի հետ։ Նոր ժամանակուան քննադատներին էր վերապահուած ճշտել պսակադրութեան իսկական տարեթիւը։ Վենետիկի դուքս Յուստինիան Պարտիկիակը թողել է կտակ թուագրուած՝ «Ինդիկտիոնի եօթներորդ տարին, Միքայէլ կայսեր՝ իններորդ եւ Թէոփիլի՝ ութերորդ»։ Ինդիկտիոնի եօթներորդ տարին համապատասխանում է 829 թուին (մինչեւ սեպտեմբեր)։ Միքայէլը գահ էր բարձրացել 820 թուի դեկտեմբերի 25ին։ Հետեւապէս 829 տարին իրօք նրա իններորդ տարին է։ Եթէ նրա իններորդ տարին հաւասար է Թէոփիլի ութերորդին, նշանակում է Թէոփիլի առաջին տարին է 821 թիւը[1]։

Գիտենք, որ պսակադրութիւնը եւ թագակապութիւնը կատարուել են միաժամանակ Հոգեգալստեան օրը[2]։ Զատիկը 821 թուին էր մարտի 24ին եւ Հոգեգալուստը մայիսի 12ին, երկուշաբթի օր։

Ասել է թէ Միքայէլը հազիւ գահ բարձրացած, չտապել է թագաժառանգ հռչակել իր որդուն՝ Թէոփիլին։ Ճիշտ նոյն օրը տեղի է ունեցել եւ Թէոդորայի պսակադրութիւնը, այն է 821 թուին, մայիս ամսին։

Եթէ ենթադրենք որ Թէոդորան այդ ժամանակ մօտ 16-17 տարեկան էր, ծնունդը պիտի տանենք մինչեւ իններորդ դարու սկզբի տարիները։ Այս հաշուով եւ նրա հայրը Մարինը ծնուած պէտք է լինէր յառաջ քան 780 թուականները։

Յոյն եկեղեցին հոկտեմբերի 13ին տօնում է Նիկետասի յիշատակը։ Սա պատկերամարտութեան զոհերից էր եւ կենսագրութեան մէջ ասուած է որ Պոլիս էր եկել 780 թուականին, ծնուել էր Պափլագոնիա 763 թուին, եւ որ կարեւորն է, համարւում էր Թէոդորայի ազգական, ուրեմն հայ ծագումով[3]։ Ասել է թէ Նիկետաս Մամիկոնեան տանից էր և Մարինի մերձաւորը, եւ որովհետեւ ծնուած էր 763ին Պափլագոնիա, հետեւապէս Մարինի եւ Մանուէլի տունը հաստատուած էր Արմենեակեան թեմում, ութերորդ դարի կէսին։ Անհիմն չէ ենթադրել, որ նոյն ժամանակուան Հայաստանում ծաւալուող կուսակցական պայքարի հետեւանքով է որ այս ընտանիքը քաշուել է կայսրութեան սահմանները։

Միքայէլի հաշուով, գեղանի Թէոդորան, Արմենեակեան թեմի զինուորական նշանաւոր ընտանիքի զաւակը, Մանուէլ Մամիկոնեանի եղբօր դուստրը, իր հարսնութեամբ արքունիք պիտի բերէր հայրենի համակրութիւնը եւ մեղմացնէր Լեւոն Հայի սպանիչի յանցաւորութիւնը։

Միքայէլը բայց եւ այնպէս անպատուհաս չմնաց։ Թէոդորայի պսակից մի քանի ամիս յետոյ պայթեց Թոմայի ապստամբութիւնը նոյն տարուայ վերջին ամսին եւ տեւեց երեք տարի մինչեւ 823 թիւը։ Թոմայի անկումից յետոյ,

---

1 **Romanin,** Storia documentata di Venezia, I, 348. *Միայն բնագրի 18րդ տարին ուղղելու է 8րդ, համաձայն* Բրուկի, Byz. Zeit. X, 542.

2 **Georg.** 790.

3 **Acta Sanctorum,** III, 448. *Բնագիրը աղաւաղուած է. պէտք է կարդալ* φασὶ δὲ αὐτοῦ (եւ ո՛չ αὐτὸν) ἀπόγονον εἶναι, Θεοδώραν (եւ ո՛չ Θεοδώρας).

տեսանք, խռովութիւնը չարունակեց դեռ մի տարի յուզել ընդհանուր խաղաղութիւնը եւ դադրեց 824 թուին:

Միքայէլը չորս տարի թագաւորելուց յետոյ, կորցրեց իր առաջին կնոջը եւ երկրորդ անգամ ամուսնացաւ Եփրեսինէի հետ: Ցունական օրէնքով որպէս թէ կրկնապսակ թագաւորը իրաւունք չունէր իշխելու, ուստի նա թագը զիջաւ իր որդուն[1]:

Վերջին տեղեկութիւնը, որ կատարեալ առասպել է, ծագել է նրանից, որ Թոմայի ապստամբութիւնը խեղդուել էր 824 թուին, ուստի Թէոփիլի թագաւորութիւնը հաշուել են այս տարուց: Միքայէլը իրօք վերամուսնացաւ Եւփրոսինէի հետ, բայց այս առթիւ նա չհրաժարուեց գահից: Իսկ որ կրկնապսակը որպէս թէ իրաւունք չունէր թագաւորելու, ստոյգ չէ:

Եւփրոսինէն միանձնուհի էր: Վերջին Իսաւրեան կայսեր՝ Կոստանդին Զ-ի դուստրն էր: Մայրը Մարիամը հայ էր, ամուսնուց բաժանուելով վանք էր քաշուել իր դստեր Եւփրոսինէի ընկերութեամբ:

Այժմ Միքայէլը բռնի հանեց մենաստանից եւ կնութեան առաւ Եւփրոսինէին: Նպատակն էր, անշուշտ, օրինական կերպարանք տալ գահի յափշտակութեան: Հանդած տան վերջին շառաւիղի՝ Եւփրոսինէի հետ նա տիրանում էր եւ Իսաւրեան թագին որպէս օրինաւոր ժառանգ: Այլ իմաստ չունէր նաեւ ապստամբ Թոմայի խաբեբայ յայտարարութիւնը, թէ ինքը ոչ այլ ոք է եթէ ոչ Կոստանդին Զ կայսրը եւ փախել ազատուել է մօր ձեռքից եւ ուզում է վերադրաւել կորցրած գահը:

Արդեօք Թէոդորայի հարսնութիւնը փրկեց Միքայէլին Արմենեակեան զինուորական տան թշնամութիւնից, դժուար է որոշ բան ասել: Թոմայի չարժման ժամանակ Արմենեակեան թեմի զօրավարն էր ոմն Օլբիան(ոս): Մինչդեռ սպասելի էր նոյն պաշտօնում տեսնել Մանուէլին: Լեւոն կայսեր պատմութեան մէջ յիշւում է որ Մանուէլ նշանակուեց զօրավար Արմենեակեան թեմի[2]: Իսկ Միքայէլի որդու Թէոփիլի պատմութեան մէջ նոյն պատմագիրը աւանդում է որ Լեւոնի օրով Մանուէլը Անատոլիկեան թեմի զօրավար էր: Կամ ընդունելու է որ վերջին վկայութեան մէջ Անատոլիկեանի յիշողութիւնը սոսկ սխալ է փոխանակ Արմենեակեանի, կամ

1 Michel le Syrien, éd. Chabot, p. 72.
2 Theoph. Cont., 24.

որ իրօք Արմենեակեան թեմից տեղափոխուել էր Անատոլիկեանը Միքայէլի օրով:

Մանուէլի կեանքը ընդհանրապէս մութ է: Ցայտնի չէ, թէ ե՞րբ եւ ինչի՞ց ստիպուած փախչում է Արաբների մօտ եւ յետոյ վերադառնում:

Պատմում են, որ պատճառը պալատականների քսութիւնն էր: Մանուէլ մեծամեծ ծառայութիւն էր մատուցել Թէոփիլին, փրկելով նրան մահուան ճիրաններից արաբական մի արշաւանքի ժամանակ: Արաբները արդէն շրջապատել էին կայսրին եւ գերի պիտի վերցնէին, երբ յանկարծակի Մանուէլը առաջ նետուեց, ձայնելով իր զինուորներին. «տղայք, ամաչեցէք մեղուներից, որոնք իրենց թագուհու սիրուն համար թռչում են նրա ետեւից»:

Ասաց եւ սլացաւ թշնամու վրայ փրկելու իր կայսեր, որպէս մի «առիւծ որ կռւում է իր կորիւնների համար»: Ճեղքեց արաբական գիծը եւ մօտենալով կայսեր, գոչեց. «ով թագաւոր, հետեւիր ինձ, դիակների վրայից ճանապարհ կը հորդեմ քեզ համար»:

Թէոփիլը դանդաղում էր: Մանուէլը քանի անգամ յիշեցնելուց յետոյ վերջապէս մօտեցաւ, բռնեց նրա ձիու սանձից, եւ սպառնալով որ ինքը կը սպանէ եթէ չհնազանդուի իրեն, քաշեց հանեց թշնամիների միջից եւ այսպիսով փրկեց նրան դերուելու խայտառակութիւնից:

Կայսրը երախտագիտօրէն մեծամեծ պատիւների արժանացրեց Մանուէլին եւ յաճախակի կոչում էր նրան «բարեբար եւ փրկիչ»:

Մանուէլի դիրքը չար նախանձ չարժեց պալատականների շրջանում: «Եւ այն մարդը, նկատում է պատմագիրը, որ ճակատել էր բիւրաւոր թշնամիների դէմ եւ ազատել իր թագաւորի կեանքը, ընկճուեց մի քանի վատահոգի անձանց քսութեան առաջ»: Կայսերական մի մատռուակ, որ առաջ ծառայ էր եղել Մանուէլի մօտ, նախազգուշացրեց նրան: Մանուէլը բարւոք համարեց տեղի տալ չարութեան եւ հեռանալ արքունիքից: Մինչեւ իսկ թողեց կայսրութեան սահմանները եւ ծածուկ փախաւ արաբական դուռը[1]:

Մի ուրիշ աղբիւր, որ Մանուէլին անուանում է ամենից հռչակուած զօրավարը ամբողջ Արեւելքի մէջ և չատ յարգուած թագաւորի կողմից, պահել է մեզ նրա բանսարկուների անունները: Կայսեր ականջին չչնջողը Վասիլ անունով մի անձն էր, որ գործում էր սակայն ուրիշ, աւելի ազդեցիկ,

1 Genes. 61; Theoph. Cont. 116, 118.

մարդու թելադրութեամբ: Դա Միրոնն էր, հաղորդակցութեան լոգոթետը եւ Պետրոնի անները: Պետրոնը Մանուէլի եղբօրորդին էր եւ թագուհու եղբայրը:

Թէոփիլի միտքը պղտորել էին թէ Մանուէլը որպէս թէ ձգտում է գահի եւ այս ուղղութեամբ դաղտնի աշխատանքներ է կատարում: Արքունի մատուռակի բարեխօսութիւնը այստեղ վերագրւում է թագաւորի առաջին հանդերձապահին, պրոտովեստիարին, որի անունը Լեւոն էր: Սա չի յաջողում ցրել անհիմն դրպարտութիւնները եւ Մանուէլը, անզօր կուռելու ստոր մեքենայութեանց դէմ, ստիպւում է հեռանալ պալատից եւ փախչել Ասորիք, այնտեղից ամիրապետի դուռը[1]:

Թէոփիլը յետոյ ղղջաց եւ միջոցներ ձեռք առաւ յետ բերելու հռչակաւոր զօրավարին:

Մանուէլի կեանքի մէջ մութ դծեր շատ կան: Փախուստի պատմութիւնը նրանցից մէկն է: Տակաւին հնում տարաձայնութիւն կար այն մասին, արդեօք Թէոփիլի ժամանա՞կ է տեղի ունեցել փախուստը թէ նրա հօր՝ Միքայէլ Թլուատի: Ոմանց ասելով, Մանուէլը փախել էր «Միքայէլի օրով կամ ատելութիւնից եւ կամ երկիւղալով նրա հին թշնամութիւնից»[2]:

Հայ տեղեկութիւնները, որ անտես են արուած հարցովս զբաղուած նորագոյն գիտնականների կողմից, ոյժ են տալիս վերջին վարկածին: Լեւոնի սպանութիւնից յետոյ, ասում է հայ պատմագիրը. «Թագաւորեաց (—եա՞լ) Միքայէլն, ելանէր ի խնդիր մեծ զօրավարին Մանուէլի Մամիկոնենոյ. եւ նորա աճապարեալ հարիւր և լիսուն արամբ անկանի ի կամախ եւ անտի առ Մամուն իշխանն Իսմայէլի, որ սպանեալ զեղբայրն Մահմէտ ինքն տիրէր Տաճկաց: Եւ նորա յոյժ պատուեալ զնա, կոչեաց ոռճիկս աւուրն հազար երեք հարիւր եւ վեց կշիռ արծաթոյ եւ զայլ օր ըստ օրէ պարգեւս անչափ եւ անկշիռ»[3]:

Այս տեղեկութիւնը խիստ արժէքաւոր է, որովհետեւ ծագում է Շապուհ Բագրատունու կորսուած երկից, որից քաղել է Վարդանը: Շապուհը ոչ միայն անցքերին ժամանակակից էր, այլ եւ լինելով իշխող տան անդամ մօտէն ծանօթ էր քաղաքական իրադարձութեանց: Ըստ օտար աղբիւրների, Մանուէլը փախել է Արաբների մօտ Կիլիկիա-Ասորիքի վրայից, մինչդեռ հայ պատմագիրը գիտէ որ հալածական

1 Georg., 796; Symeon, 632.
2 Theoph. Cont., 121.
3 Վարդան, էջ 77–78:

իշխանը եկել է նախ Կամախ, Հայաստան, յետոյ միայն անցել է Արաբների մօտ: Գիտէ որ փախել է Միքայէլի օրով եւ մեծ ընդունելութիւն գտել ամիրապետի կողմից: Թուչակի խնդիրը եւս ցոյց է տալիս որ մեր պատմագիրը իրազեկ աղբիւրից է քաղել իր տեղեկութիւնները:

Այս դէպքում նախանձի եւ բանսարկութեան պատճառանքը ընկնում է: Փախուստի բուն շարժառիթը մնում է որոնելի: Ամենից հաւանականն է ենթադրել, որ Թոմայի շարժման խառն է եղել Մանուէլը գործով թէ լոկ համակրանքով: Խռովութիւնը դսպելուց յետոյ է որ «Միքայէլ ելանէր ի խնդիր մեծ զօրավարին Մանուէլի»:

Հիմ չկար վստահելու յանցապարտ կայսրին, ուստի եւ հայ զօրավարը խոյս տուաւ իր հայրենիքը: Եթէ ճիշդ է այս ենթադրութիւնը, Թոմայի շարժումի հայկական բնաւորութիւնը մի նոր ապացոյց է ստանում Մանուէլի մասնակցութեամբ:

Մի ուրիշ հայ պատմագիր յիշելով Միքայէլի կռիւը Թոմայի հետ եւ վերջնիս պարտութիւնը հայոց 272 (=823 յ. Ք.) թուին, աւելացնում է. «Եւ ապա պատերազմեալ Միքայէլի ընդ տաճիկ զօրուն եւ զբազումս ի նոցանէ սատակեաց ի Կուռն աւանին եւ յաղթեաց նոցա եւ Անկիւռիան»[1]:

Հաւանօրէն եւ այս տեղեկութիւնը առնուած է Շապուհ Բագրատունուց: Դժբախտաբար, բնագիրը աղճատուած է թւում, թերեւս Անկիւռիան ուղղելու է առ Կիւռիոն:

Կուռն աւանը բիւզանդական պատմագիրների Կորոն եւ արաբական Կուռու կոչուած վայրն է, որ գտնւում էր Կիլիկեան դռներից հիւսիս Արդէ լերան լանջերի վրայ[2]: Զարմանալի է, որ արաբացի Եակուբի պատմագրի մօտ եւս Կուռու անուան փոխարէն կարդացւում է Անկիւռա[3]: Սա ասում է որ Մամունը գրաւեց այս աւանը 830 թուին, որտեղից փախաւ Մանուէլը:

Մի այլ վկայութեամբ, Թէոփիլ կայսրը արշաւեց Արաբների դէմ եւ առաւ Զուպատրա բերդը 1141 սելեւկեան (=829 յ. Ք.) թուին, իսկ հետեւեալ տարին, ուրեմն 830ին, պատրիկ Մանուէլը գլուխ բարձրացրեց կայսեր դէմ եւ անցաւ Արաբների կողմը: Նոյն տարին հակայարձակում գործեց եւ խլեց չորս բերդ հազիրան (= յունիս) ամսին[4]:

Այս չորսի թւումն էր հաւանօրէն եւ Կորոնը:

1 Ղազարիկ (Ս. Պետերբուրգ, 1885 թ.), էջ 144:
2 Ramsay, Asia Minor, 355.
3 Վասիլեւ, «Բիւզանդիա եւ Արաբներ», I, 85:
4 Michel le Syrien, 78.

Երեւում է որ այս ժամանակ տեղի ունեցել է եւ Մանուէլի փախուստը համաձայն արաբ պատմագրի վկայութեան: Ասել է թէ արաբ եւ ասորի աղբիւրները գրեթէ համերաշխ են, դնելով Մանուէլի փախուստը 830 թուին եւ կորոնի գրաման ժամանակ:

Սրանց եւ հայ տեղեկութեան հակասութիւնը կարելի է մասամբ հարթել, ընդունելով որ նախ Միքայէլն է արշաւել եւ առել Կորոն բերդը, ինչպէս Հայն է ասում, յետոյ Մամունը յետ է դրաւել, եւ այս ատեն է, որ փախել է Մանուէլը: Հայը համաձայն չէ վերջին կէտում, եւ փախուստը դնում է աւելի առաջ եւ Միքայէլի կենդանութեան:

Նորագոյն գիտնականներից մէկը, առանց ծանօթ լինելու հայ տեղեկութեան, արդէն այն միտքն է յայտնել, որ Մանուէլ փախած պիտի լինէր Միքայէլի ժամանակ: Անհաւանական է գտնում որ հալածական զօրավարը վստահէր վերադառնալ այն գահակալի մօտ, որից փախուստ էր տուել[1]:

Ինչ վերաբերում է դարձին, բոլոր աղբիւրների վկայութեամբ, այդ տեղի է ունեցել Լուլոն բերդի առումից յետոյ: Լուլոն կամ Լուլու մի կարեւոր ամրութիւն էր Կիլիկեան դռների կամ Կապանի հիւսիսային մուտքի առաջ պաշտպանելու համար Կապանը:

Վարդան պատմագիրը հաղորդում է որ «Մամուն էր ի կողմանս Յունաց զամս(°) եօթն և առնոյր զանհպելի ամուրն Լուլուայ եւ դառնայ ի Միջագետս. եւ Մանուիլ երթայր դարձեալ ի Յոյնս»[2]:

Ըստ Միքայէլ Ասորու, Մամուն արշաւեց եւ պաշարեց Լուլոն բերդը 1142 սելեւկեան թուին այսր ամսին, որ է 831 մայիս, բայց չկարողացաւ առնել: Հետեւեալ 1143 թուին, երբ պատրաստւում էր գնալ Եգիպտոս, լսեց, որ բերդը անձնատուր է եղել: 1143 տարին հաւասար է 831 հոկտեմբերից մինչեւ 832 հոկտեմբերը: Մամունը փետրուար ամսին 832 թուին արդէն Եգիպտոս էր գտնւում, հետեւապէս բերդն ընկած պիտի լինէր աւելի յառաջ, այն է 831 հոկտեմբերից մինչեւ 832 փետրուարը[3]:

Վարդանի տեղեկութիւնը թւում է թէ հաստատում է եւ ճշտում այս ժամանակամիջոցը: Հայ պատմագրի խօսքը թէ Մամունը մնաց Յունաց կողմերում զամս եօթն, պատմական հիմ չունի: Հաւանօրէն կարդալու է զամիսս եօթն եւ

1 **E. W. Brook**, Byz. Zeit. X, 297.
2 Վարդան, էջ 79:
3 **Bury**, Roman. Empire, 473.

ենթադրելու որ եօթն ամիսը Լուլուայ ամրոցի պաշարման եւ անկման տեւողութիւնն է: Եթէ պաշարումը սկսուած է մայիսից, ինչպէս վկայում է ասորին, ապա առումը կ՝ընկնի եօթն ամիս յետոյ՝ նոյեմբերին, նոյն 831 թուին:

Մանուէլի դարձը ուրեմն 831 թ. նոյեմբերից յետոյ է:

V

Մանուէլի դարձի պարագաները եւս անվիճելի չեն:

Պատմում են որ Թէոփիլը, երբ դեսպան ղրկեց Արաբների մօտ խաղաղութեան դաշն կնքելու, միաժամայն պատուէր տուաւ դեսպանին խօսել Մանուէլի հետ եւ համոզել նրան վերադառնալ: Դեսպանը Յովհաննէս Սինկելլն էր, մի նշանաւոր եկեղեցական եւ ծագումով Հայ, որ յետոյ պատրիարք ընտրուեց:

Ուրիշներն աւանդում են որ դեսպանութիւնը խաղաղութեան համար չէր եւ ոչ բաց եւ արձակ, այլ գաղտնիք էր, շատերին անծանօթ, եւ յատկապէս Մանուէլին յետ բերելու նպատակով էր: Կայսեր գիտութեամբ Յովհաննէսը իբերական (վրական) հնամաչ շոր հագած՝ յարեց Երուսաղէմ ուխտի գնացող կրօնաւորներին, իբրև նրանցից մէկը և այդպէս ծպտուած հասաւ Բաղդադ: Յաջողեց մուրացիկի կերպարանքով ներկայանալ Մանուէլին եւ կատարել կայսեր յանձնարարութիւնը: Որպէս երաշխիք կայսերական խօսքի, տուաւ նրան կայսեր կրծքի խաչը և կնքուած նամակը: Մանուէլ մեծապէս յուզուեց եւ խոստացաւ դառնալ հայրենիք պատեհ առթիւ:

Հայ զօրավարը իր քաջագործութեամբ արդէն գրաւել էր ամիրապետի վստահութիւնը: Մի օր խնդրեց թոյլ տալ արշաւել դէպի Կապպադովկիա պատժելու իր թշնամիներին, որոնք ամբաստանել էին իրեն կայսեր առաջ և այն պահուն գտնւում էին Կապպադովկիա: Մանուէլ արշաւեց: Նա ծածուկ յայտնեց իր դիտաւորութիւնը Կապպադովկիայի զօրավարին եւ խնդրեց որ մի ջոկատ զինուոր դարանամուտ լինեն ապահովելու իր փախուստը:

Յարձակման պահին Մանուէլ չեղուեց դէպի դարանակալ զինուորները եւ անցաւ նրանց կողմը: Մանուէլի հետ էր այդ ժամանակ ամիրապետի որդին: Մանուէլ հրաժեշտ առաւ նրանից, ասելով. «այժմ դու դարձիր, զաւակս, հօրդ մօտ, իսկ ես գնում եմ ոչ այլ ուրեք, բայց եթէ առ իմ կայսրը եւ տէրը»:

Թէոփիլ ընդունեց Մանուէլին գրկաբաց, մեծամեծ պատիւների արժանացրեց, մագիստր(ոս)ութեան աստիճան տուաւ եւ նշանակեց սքոլորների դոմեստիկ(ոս)[1]:

Ուրիշները պատմում են, որ Յովհաննէսը ինքն է առաջարկում կայսրին իր պատրաստակամութիւնը գնալ Մանուէլին բերելու: Խնդրում է տալ իրեն բաւականաչափ դանձ, որպէս թէ զերիներին եւ բանտարկեալներին օգնելու, յուսալով որ այդ պատրուակի տակ կը յաջողի տեսակցել նաև Մանուէլի հետ: Կայսրը յօժարում է եւ Յովհաննէսը ուղի է ընկնում Բաղդադ եւ ողորմածութեան քօղի տակ յաջողութեամբ կատարում է իր առաքելութիւնը: Կայսեր ինքնագիր նամակի հետ տալիս է նրան նաեւ կրծքի խաչը, որով Մանուէլը համոզւում է, որ հրաւէրը անկեղծ է եւ խոստանում է վերադառնալ:

Մանուէլը խնդրում է ամիրապետին, որ թոյլ տայ արշաւել նրա որդու հետ թշնամու դէմ: Արշաւանքը վերջանում է յաջողութեամբ եւ Մանուէլը հաճելի է դառնում ամիրապետի աչքին եւ աւելի մեծ պատուի արժանանում:

Այսպէս ամիրապետի հաւատքն է ձեռք բերում եւ երբ ծրագրում է փախուստ տալ, նորից առաջարկում է նրան թողնել իրեն մեծ զօրքով եւ նրա որդու ընկերութեամբ գնալ եւ նուաճել ամբողջ Բիւզանդիան: Անատոլիկեան թեմին մօտենալուց յետոյ Մանուէլը զատւում է բանակից որպէս թէ որսի եւ զբօսանքի աղագաւ, առնելով իր հետ ամիրապետի որդուն: Սրան յայտնում է իր ցանկութիւնը, ասելով, որ իր աչքում «աւելի լաւ բան չկայ կեանքում քան հայրենիքը եւ ազգակիցները»: Այնուհետեւ բաժանւում է մանուկ ընկերակցից արտասուքով եւ վերադառնում մայրաքաղաք:

Կայսրը մագիստրոսութեան պատիւ չնորհեց Մանուէլին եւ սքոլաների, այսինքն՝ պալատական զօրքերի, դոմեստիկ նշանակեց, այլ եւ նրա երեխաներին գրկեց մկրտութեան աւազանից[2]:

Վերջին հանգամանքը պարզում է միւս պատմագրի συντέκνος բառի բուն նշանակութիւնը որպէս կնքահայր[3]:

Ցիշատակւում է նաեւ Յովհաննէսի մի ուրիշ դեսպանութիւնը Արաբների մօտ: Սրա նպատակն էր յայտնել ամիրապետին Թէոփիլի գահակալութիւնը հօր մահից յետոյ,

1 Genes., 63. Theoph. Cont. 119-121.
2 Georg, 796-798; Symeon, 632-634.
3 Theoph. Cont., 120.

«համաձայն հինաւուրց սովորութեան»: Դեսպանը տարաւ իր հետ թանկագին նուէրներ, մօտ չորս կենդինար ոսկի արաբական դրան պաշտօնեաներին բաշխելու համար: Ամիրապետը գոհ մնաց նուէրներից եւ Յովհաննէսի արտակարգ առատաձեռնութիւնից:

Արեւելցիներին շլացնելու եւ կայսեր հարստութիւնը ցուցադրելու կրկնակի մտահոգութեամբ դեսպանը տարել էր հետը, ի միջի այլ պարգեւների, երկու ոսկէ կոնք, լական, թանկագին քարերով ընդելուզուած: Ճաշից յետոյ ձեռքերը լուանալու համար էին: Կայսերական առաքեալը արդէն ցընցող տպաւորութիւն էր գործել, չսայլելով աջ եւ ձախ հարուստ նուէրներ ամեն մէկին, որ գալիս էր չնորհաւորելու նրա գալուստը: Ոսկիով լի արծաթէ ման էր պարգեւում նրանց: Իսկ կոնքի դէպքը միանգամայն ապշեցրեց արաբներին:

Մի անգամ ճաշից յետոյ, երբ Յովհաննէսը ձեռքերը լուաց կոնքում, պատուիրեց սպասաւորին, որ անփութօրէն մի կողմ նետէ ոսկէ կոնքը եւ հնարաւորութիւն տայ գողանալու: Կոնքը անյայտացաւ: Ի զուր անցան բոլոր որոնումները, ամեն ինչ տակնուվրայ արին եւ չկարողացան գտնել: Հասարակութիւնը ցաւ էր յայտնում չքնաղագեղ իրի կորստեան առթիւ: Ամիրապետը պատրաստ էր փոխարինել արժանաւոր ընծաներով:

Սակայն, Յովհաննէսը ձեւացաւ որ իրեն համար մեծ բան չէ կորուստը: Եւ հրամայեց, որ հետեւեալ օրը միւս կոնքը բերեն ձեռքերը լուանալու, կամենալով ցոյց տալ, որ այդպիսի ամաններ չատ ունի: Այս վարմունքը, մանաւանդ վեհանձն վերաբերումը դէպի միւս կոնքի կորուստը, սքանչացրեց նոյն իսկ ամիրապետին: Սա հրամայեց փոխարէնը հարիւր գերի ազատ արձակել, հանել նրանց ցնցոտիները եւ հագցնել նոր և վայելուչ զգեստներ և ընծայաբերել կայսերական դեսպանին: Յովհաննէսը մի անգամ եւս աղնուական դիրք բռնեց, յայտնելով ամիրապետին, որ այդպիսի մի մեծ չնորհ չի կարող ընդունել առանց փոխադարձը վկայելու: Ուստի խնդրեց սպասել, մինչեւ որ մայրաքաղաքից հասնեն նոյնչափ արաբ գերիներ, ազատ արձակուած կայսեր կողմից: Յովհաննէսի այս արդարամիտ շարժուածքը մեծ հիացում յառաջ բերեց արաբների մօտ և մտերմական յարաբերութիւն հաստատեց, որից յետոյ մեծ հոչակով եւ ընծաներով վերադարձաւ մայրաքաղաք[1]:

1 Theoph. Cont. 95-98.

Եթէ արդարեւ այս դեսպանութիւնը Թէոփիլի ինքնակալութեան առթիւ էր, ապա տեղի պիտի ունեցած լինէր առաջին տարին: Թէոփիլի հայրը մեռաւ, ինչպէս տեսանք, 829 թուի հոկտեմբեր ամսին: Հետեւապէս սրանից յետոյ է դնելու առաջին դեսպանութիւնը: Իսկ եթէ երկրորդը եւս պատմական է, չէր կարող ուշ լինել քան 832 թ. ապրիլ ամիսը, որովհետեւ այս ժամանակ Յովհաննէսը պատրիարքական աթոռը նստաւ, մինչդեռ դեսպան էր գնացել որպէս սոսկ սինկելլ:

Հաւանական չէ որ կարճ միջոցում բիւզանդական դուռը կրկնակի դեսպանութիւն ղրկած լինի Արաբներին: Թւում է որ առաւելութիւն պէտք է տալ միւս տեղեկութեան, որ գիտէ միայն մի դեսպանութիւն: Սրա գլխաւոր նպատակն է եղել միջազգային մի պարտք կատարել, ծանուցանելով նոր կայսեր գահակալութիւնը: Երեւում է որ առաքելութիւնը գաղտնի թելադրութիւն ունէր հոգալ միեւնոյն ժամանակ փախստական զօրականի դարձի մասին:

Սրանով հաստատւում է այն աւանդութիւնը, թէ Մանուէլը փախել էր ոչ թէ Թէոփիլի ժամանակ, այլ նրա հօր, քանի որ դեսպանութեան պահին նա արդէն Արաբների մօտ էր: Միւս կողմից աւանդութիւնն ինքը ենթադրել է տալիս որ այն դեսպանութիւնը, որի նպատակն էր Մանուէլի դարձը, կարող էր նոյնը լինել գահակալութեան դեսպանութեան հետ:

Մտադրութեան արժանի է պատմագրի այն խօսքը թէ դեսպանը «աւետեց Մանուէլին կայսեր կարեկցութիւնը եւ ներումը չարիքների»[1]: Այս նախադասութեան միտքն այն չէ թէ կայսրը վատութիւն չի արել Մանուէլին, այլ որ կը ներէ Մանուէլին արդէն կատարած վատութեան համար:

Այս մի ակամայ խոստովանութիւն է որ հայ զօրավարը լոկ զրպարտութեան զոհ չէր, այլ որ լուրջ մեղադրութիւն էր ծանրանում նրա վրայ: Ի՞նչ կարող էր լինել նրա յանցանքը: Արդեո՞ք մեղսակից չէր Թոմայի խռովութեան: Պատմագիրները շատ մեծ համարում ունին Մանուէլի վրայ եւ ամեն բան չեն յայտնում մեզ, գիտեն լռել: Երեւում է որ մահապարտ Միքայէլը չէր կարողացել գրաւել Մանուէլի բարեկամութիւնը, անգամ խնամիանալով նրա տան հետ: Զօրավարի փախուստը թշնամական լարման հետեւանք էր:

Թէոփիլ խոստանում էր ներում: Արդեո՞ք խօսքը վերաբերում է Թէոփիլի հետեւեալ դատաստանին:

1 Theoph. Cont., 119.

Նոր գահին տիրանալուց յետոյ Թէոփիլը ժողովեց Մագնաւրա պալատում մեծամեծներին եւ յայտարարեց, որ կանխահաս մահը խափանեց իր հօր Միքայէլի մտադրութիւնը վարձատրելու արժանապէս բոլոր այն անձերին, որոնք ձեռնտու էին եղել իրեն Լեւոնի սպանութեան գործում: Աւելացրեց որ վարձատրութեան խնդիրը մի պարտք է որ հօրից մնացել է իր վրայ եւ ինքը կ՚ուզէր պարտաճանաչ լինել: Ուստի խնդրեց բոլորին, ով որ մասնակից է եղել Լեւոնի սպանութեան, չթաքցնէ, այլ յայտնէ այդ մասին: Ժողովականների միջից իսկոյն բարձրացան յանցագործները եւ պարծենալով խոստովանեցին իրենց մեղսակցութիւնը:

Թէոփիլը հրամայեց անմիջապէս կալանաւորել այդ մարդկանց եւ յանձնել եպարքոսին, որպէսզի արժանի պատիժ ստանան, քանի որ համարձակուել են Աստուծոյ տաճարը պղծել եւ ձեռք բարձրացնել նրա օծեալի վրայ: Եպարքոսը գլխատել տուեց յանցաւորներին[1]:

Մի ուրիշ պատմուածով դատաստանը այլ կերպ է եղել: Թէոփիլը ձիարշաւ սարքեց կրկէսում եւ յետոյ ծերակուտականներին կանչեց կայսերական օթեակը կրկէսում, այսպէս կոչուած Կաթիսմա: Միեւնոյն պահին պատուիրեց պրոտովեստիար Լեւոն Քամայդրակոնին բերել այն ջահը, որ կոպրբուել էր սրի հարուածից Լեւոն կայսեր սպանութեան ժամանակ: Ապա դառնալով ժողովականներին հարց տուաւ. «ով որ տաճար է մտնում եւ սպանում Աստուծոյ օծեալին, ի՞նչ պատժի է արժանի»: «Մահուան պատժի», գոչեցին հլու ծերակուտականները:

Քաղաքի եպարքոսը չյապաղեց գործադրելու դատավճիռը: Ի զուր անցաւ մահապարտների բողոքը եւ բացարութիւնը թէ իրենց ոճիրի չնորհիւ է որ Թէոփիլը գահի վրայ է[2]:

Ի՞նչ է նշանակում այս անադան դատաստանը, աւելի քան անսպասելի: Պատմագիրները չեն ուզում տեսնել այստեղ արդարասիրութեան մի գերագոյն տուրք կայսեր կողմից: Ընդհակառակը յետին միտք են որոնում կայսեր վարմունքի մէջ: Մէկի կարծիքով, կայսրը կողմնակից էր Լեւոնի պատկերամարտ ամբաստութեան, ուստի եւ վճռեց վրէժխնդիր լինել նրա մահուան[3]:

Միւս պատմագիրը աւելի խորն է նայում եւ ենթա-

1 Theoph. Cont. 85-86.
2 Georg. 791. Symeon, 625.
3 Georg. 791.

դրում է, որ կայսրի միակ մտահոգութիւնն էր այդպիսի խիստ միջոցով պաշտպանել եւ ապահովել իր թագը նման ոճիրներից[1]:

Գուցէ ճշմարտութեան աւելի մօտ կը լինէր ենթադրել, որ Թէոփիլը ձգտում էր յետնեալ դատաստանով գոհացում տալ հակադիր ոյժերին, եւ իրեն մերձեցնել: Գործուն ոյժերը կենդրոնացած էին հայ շրջաններում առաւելապէս: Սրանց համար Լեւոն Հայի սպանութիւնը քաղաքական մեծ ոճիր էր: Ապացոյց՝ Թոմայի խոշոր շարժումը, որ մեծ ժողովրդականութիւն ունէր: Միքայէլը արդէն մի կարեւոր քայլ էր արել մօտենալու Մամիկոնեան ազդեցիկ տան, պսակելով իր որդուն Թէոդորայի հետ: Թէոփիլի ապաժամ դատավարութիւնը մի ուրիշ փորձ է նոյն ուղղութեամբ և նպատակ ունի խմբելու իր շուրջը իր հայ ազգականութիւնը:

Աննշանակ երեւոյթ չէ, որ կոտրած ջահը ցուցադրողը պրոտովեստիար Լեւոնն է: Սա ճիշտ այն անձն է, որ նախապէս ծառայել էր Մանուէլի մօտ, եւ յետոյ, որպէս պաշտօնեայ Թէոփիլի արքունիքում, հետամուտ էր ջրելու Մանուէլի դէմ յարուցած ամբաստանութիւնները: Կարծես թէ Լեւոնի սպանողների պատիժը մի նոր քայլ էր գոհացնելու Մանուէլին եւ նրա շրջապատին:

Եթէ այդ քայլը որեւէ կերպ դիւրացրեց Մանուէլի դարձը, Թէոփիլ սխալուած չէր: Պատմագիրների միահամուռ վկայութեամբ Մանուէլը Թէոփիլի թագաւորութեան ամենակարող դէմքն էր, նրա զինուորական փառքն էր:

VI

Մամիկոնեան տոհմիցն էին նաեւ երկու եղբայրներ՝ Ալեքս–Մուշեղ եւ Թէոդոս, բայց ոչ Մանուէլի եւ Թէոդորայի ընտանիքից:

Նախ՝ կանգ առնենք մի ուրիշ անձնաւորութեան վրայ, որ որքան նշանաւոր, նոյնքան եւ առեղծուածային է: Դա պարսիկ կոչուած Թէոփոբն է: Առասպելական թանձր մշուշ է նստած սրա ծագման եւ գործունէութեան վրայ, մշուշ, ուր հաղիւ են թափանցում պատմական իսկութեան քանի մի շող:

Պատմում են, որ Թէոփոբը Պարսից արքայական տանից էր: Երբեմն բիւզանդական մայրաքաղաքն էր եկել դեսպանութեամբ մի ազնուական պարսիկ, ապօրինի սիրային

1 Theoph. Cont., 85.

կապ հաստատել մի կնոջ հետ, որդի ունեցել և հեռացել քաղաքից: Պարսից մօտ որպէս թէ հին սովորութիւն կար, որ թագաւորել կարող էր միայն այն անձը, որ սերուած էր իրենց արքայական ցեղից: Սակայն, անընդհատ պատերազմների մէջ թագաւորական տունը բնաջինջ էր եղել եւ թեկնածու չունէին: Հարցուփորձ անելով իմացան, որ բիւզանդական մայրաքաղաքում Թէոփոբ անունով մէկը կար որ արքայական արիւն ունէր: Պարսիկները մարդ ղրկեցին կայսեր քաղաքը, որ որոնեն եւ գտնեն յիշեալ անձին: Խնդրակները տեղեկացան, որ Օքսիա կղզում (Իշխանաց կղզիներից մէկը) ապրում էր իր մօր հետ մի երեխայ, որի դէմքի գծագրութիւնից եւ շարժումներից երեւում էր, որ որոնելի անձը պիտի լինէր: Հարեւանները արդարեւ վկայեցին, որ ժամանակով այդ կնոջ հետ կենակցել է մի պարսիկ և նրանց սիրոյ պտուղն էր երեխան: Այս մասին հաղորդեցին կայսրին եւ խնդրեցին, որ երեխային դարձնէ Պարսիկներին: Կայսրը ուրախութիւն յայտնեց գիւտի առթիւ եւ Թէոփոբին ընդունեց արքունիք ազնուավայել կրթութիւն տալու համար:

Ըստ նոյն պատմուածքի մի ուրիշ փոփոխակի, պարսիկը դեսպան չի եղել, այլ մի անձ, որ պատերազմական չփոթի ժամանակ թողել էր հայրենիքը եւ հեռացել կայսերական հողը: Ցայտնի չէ, թագաւո՞ր էր թէ թագաւորական տան մերձաւոր: Մայրաքաղաքում ապրել էր չքաւորութեան մէջ եւ վերջը մտել ծառայութեան մի խանութպան կնոջ մօտ: Սրա հետ կապուել էր սիրով եւ ունեցել մի արու զաւակ: Մայրաքաղաքում էլ մեռել էր:

Պարսիկները աստեղագիտութեան թէ դիւթութեան միջոցով երեւան են հանում իրենց արենակից մանկան գոյութիւնը օտար երկրում: Խուզակներ են ուղարկում և համոզում են որ իրօք այդպէս է: Կայսեր հաղորդում են եւ նրա հաւանութիւնը առնում, որ Պարսիկները ապստամբեն Արաբների դէմ եւ անցնեն կայսերական հողը, որպէսզի վայելեն նորագիւտ հայրենակցի իշխանութիւնը, հպատակուեն նրան որպէս արքայական տան շառաւիղի:

Ճիշտ այդ ժամանակները Պարսից առաջնորդը՝ Բաբեկը, հայ պատմիչների Բաբանը, հինգ տարի Արաբների դէմ մաքառելուց յետոյ, փախել ապաստանել էր կայսրութեան սահմաններում ոչ միայն թշնամու ահից, այլ եւ կարօտալով տեսնել Թէոփոբին: Բաբեկ եկել էր մինչեւ Սինոպ եւ իր հետեւորդներով, որ 7 հազար հոգի էին, հպատակութիւն էր յայտնել կայսեր:

Աւելացնում են նաեւ, որ Թէոփիլը 12 տարեկան էր, երբ յայտնուեց եւ արծուաքիթ էր Կիւրոսի նման որ նշան էր նրա պարսիկ ծագման:

Հաւատացնում են որ Թէոփիլ մեծամեծ պատիւներ տուեց պարսիկներին, Թէոփիլին մեծարեց պատրկութեան պատուով և իր քրոջ հետ ամուսնացրեց: Փախստական պարսիկներին եւս թոյլատրեց կնութեան առնել հոռոմ աղջիկները, եւ Բաբեկի գունդը ցրեց բիւզանդական թեմաների մէջ, առանձին տուրմաներ կազմելով[1]:

Մեր միւս աղբիւրները բաւականանում են հակիրճ տեղեկութեամբ, թէ Թէոփիլը իր հօր հետ փախաւ եկաւ Թէոփիլի մօտ 14 հազար հոգու հետ: Սրանց կայսրը դնեցեց միւս թեմաների մէջ առանձին տուրմաներ կազմելով, իսկ Թէոփիլին կնութեան տուաւ իր քեռուն, այսինքն Թէոդորայի քրոջը[2]:

Ամբողջ պատմութիւնը առասպելական է, բաւական չէ պատում ժողովրդական մի զրոյց: Այս ակներեւ է: Սակայն, դժուար է քրքրել եւ որոշել այն պատմական կորիզը, որի շուրջը կծկուել են վիպական թելերը:

Թէոփիլ կայսրի ժամանակ Պարսկաստանը գտնւում էր Արաբների իշխանութեան տակ եւ ուրեմն խօսք չի կարող լինել արեւէ արքայական տան մասին: Ասենք, Բաբեկի անունն արդէն երաշխիք է որ հարցը վերաբերում է ոչ թէ Պարսիկներին, այլ պարսիկ ապստամբներին, որ կոչւում էին Խուռամ, կամ Խուռամեան: Այս մի կենսունակ եւ ծաւալուն շարժում էր կրօնական եւ հասարակական բնոյթով: Ունէր նաեւ կոմունիստական ձգտումներ: Այս ապստամբները յայտնի էին նմանապէս Մուխամմիր անունով, որ նշանակում է կարմրաղեստ, որովհետեւ սիրում էին կարմիր գգեստ հագնել: Հաւատում էին, որ մի օր իրենց միջից մի թագաւոր պիտի ծնի, որպէս նոր մեսիա կամ մահդի, եւ իրենց առաջնորդէ:

Այս ժամանակները արդարեւ ոմն Ջաւիդան որդի Սահլի յայտարարել էր եւ ճանաչուել որպէս ակնկալեալ մահդի, բայց սպանուել էր եւ նրա տեղը անցել էր Բաբեկ հիջրի 201 = 816–817 թուին:

Ապստամբը ծագել էր Ատրպատականում եւ այստեղից տարածուել, լայն ծաւալ ստացել: Հայաստանը եւս տուժեց այս շարժումից: Բաբեկը ամուսնացած էր Սիւնեաց Վասակ իշխանի դստեր հետ: Հայերը մեծագոյն հարուածը տուին ապստամբներին, սպանելով նրանց առաջնորդներին: Բաբեկի նախորդին սպանեց Իսահակ Աշոտեան (Աշոտ Մսակերի որդին) Կորդուաց լեռներում: Բաբեկին ձերբակալեց Սահլ Սմբատեանը եւ յանձնեց Արաբներին: Եւ վերջապէս Բաբեկի եղբօրը Աբդալլահին բռնեց իշխան Եսայի Աբու-Մուսէ եւ մատնեց Արաբներին:

Խոսովութեան ընթացքին հաւանական է որ ապստամբները երբեմն անցնէին բիւզանդական հողը անյաջողութեան դէպքում: Յայտնի է որ այդպիսի փախուստ տեղի է ունեցել 829 թուին, այլ եւ 837 թուին: Այս ժամանակն էր որ բռնուեց Բաբեկը եւ նրա հետեւորդների մի մասը անցաւ սահմանը ոմն Նասրի առաջնորդութեամբ[1]:

Այն լուրը թէ Բաբեկը նմանապէս փախած լինի Բիւզանդիա եւ հաստատուած Սինոպ, հարկաւ, զուրկ է որեւէ պատմական հիմքից:

Մի ուրիշ աղբիւր վկայում է որ Բաբեկը, տեսնելով որ իր կողմնակիցները անցան սահմանը, ինքը եւս ինն հոգով գնաց Beth Romaya Ստեփանոսի մօտ[2]: Եթէ միայն սխալ ընթերցում չէ Romaya, Հոռոմ փոխանակ Ranaya, Առան, այսինքն Աղուանք, պէտք է ենթադրել որ հոռոմ բառը գործ է ածուած լայն իմաստով, որպէս քրիստոնեայ աշխարհ, քանի որ յիշուած Ստեփանոսը Աղուանից իշխան Ստեփանոս Աբու-Աստդն է եւ Եսայի Աբու-Մուսէի քեռին: Ստեփանը բերել էր տուել Բաբեկին եւ հարուածել Բաղակացիներին, Բայլականցիներին, ուստի եւ սպանուել էր Դաւոն եւ Շապուհ իշխանների կողմից: Սպանութիւնը կատարուել էր 276 հայ թուականից երեք տարի յետոյ, ուրեմն 279 թ. որ է 830[3]:

Ասորի պատմագիրը Բաբեկի փախուստը Ստեփանի մօտ դնում է սելեւկեան 1148 թ. = 837 յ. Ք.: Այս ժամանակ Ստեփանն կենդանի չէր: Ասորի բնագիրը թերի է: Արաբ մատենագիրների ասելով Բաբեկը ապաստանեց ոչ թէ Ստեփանոսի, այլ Իսա իբն Իւսուֆ իբն Ստեփանոսի մօտ[4]: Սա ոչ այլ ոք է եթէ ոչ Եսայի Աբու-Մուսէն, որ Յովսէփի որդին էր: Իսկ Յովսէփը Ստեփանոսի որդին չէր, այլ քեռայրը, եւ Եսային քուերորդի էր Ստեփանոսի, ինչպէս վկայում է յիշեալ հայ մատենագիրը:

Այսպիսով բիւզանդական վերեւ յիշուած զրոյցի մէջ

1 Genes. 53-57. Theoph. Cont. 110-112.
2 Leo Gram. 215. Georg, 797. Symeon, 625.

1 Michel le Syrien, III, 79-88.
2 Նոյն. էջ 90:
3 Մովսէս Կաղանկատուացի. Գ. 19:
4 Tabari, III, 1223; Weib. II, 301.

պատմական տարբն այն է, որ Խուռամ ապանդաւորներից կամ Բաբեկի հետեւորդներից մի խումբ անցել է բիւզանդական հողը: Բայց աղբիւրները չեն յիշում որ սրանց առաջնորդը եղել է Թէոփոբը: Տալիս են ոմն Նասրի անունը, իսկ արաբական պատմիչը Նասրի փոխարէն ունի Բասիս[1], թերեւս, կարդալու է Նասիս:

Շատոնց կարծիք է յայտնուած, թէ փախստականները առաւելապէս հայերից էին, որ հաւատարապէս տառապում էին թէ՛ Բաբեկի եւ թէ՛ Մամունի խժդուժութիւններից[2]:

Արդարեւ, Բիւզանդացիք յաճախ պարսիկ էին անուանում քաղաքական իմաստով նախկին պարսկական, հետագայում արաբական, բաժնի հայերին:

Ուշադրաւ է, որ պարսիկ փախստականները զետեղւում են Սինոպի շրջանում, այսինքն՝ Արմենեակեան թեմում, ուրեմն յարում են հայ միջավայրի: Այս կողմնակի նշան է որ դէթ մասամբ հայ պէտք է լինէին նրանք:

Գալով Թէոփոբին, մի քան հաստատ է, որ սա նշանակուած է եղել փախստականների պետ եւ տնօրէն: Բայց որ ինքը նրանց հետ եկած լինի կամ դաւանական առնչութիւն ունեցած լինի, աւելի քան տարակուսելի է: Հակասական վկայութիւններն արդէն փաստ են որ ճշմարտութիւնը կորած է, տեղի տալով մտահաճ հնարարանութեան:

Սակայն, կայ մէկ ցուցում, որ դուրս է մնացել առասպելական հիւսուածքից եւ հէնց դրա համար մօտ է իսկութեան: Պատմագիրներից մէկն ասում է, որ Թէոփոբի հայրը ծառայելիս է եղել բիւզանդական զօրքի մէջ[3]:

Ասել է թէ Թէոփոբը փախստական չէր, այլ զօրականի որդի. ուրեմն կրթուած եւ սնուած Բիւզանդիայում:

Գիտնականներից անգամ նրանք, որոնք Թէոփոբի զրոյցները համարում են անպատմական եւ հնարածոյ, հակամէտ են ընդունելու նրա պարսիկ ծագումը[4]:

Հիմք չենք տեսնում միանալու այս կարծիքին: Այնուհետ, ուր պակասում են ստոյգ պատմական տեղեկութիւնները եւ դաշտը մնում է ենթադրութիւնների, պէտք է նախընտրութիւն տալ այն ենթադրութեան, որը համերաշխ է տիրող շրջապատի ընդհանուր պայմաններին:

Արդ մեզ հետաքրքրող շրջանում Հայոց ազդեցութիւնը զանուում էր իր վերասլացքի մէջ: Շուրջը ամենուրեք վրիտում էին հայ նշանաւոր դէմքեր արքունիքում եւ թէ դուրսը պետական անուի բոլորտիքը: Պարսիկ կամ արաբ գործիչներ չենք տեսնում ասպարէզի վրայ եւ դժուար հանգամանք է, որ Թ դարում, երբ քրիստոնեայ եւ մուսուլման աշխարհների յարաբերութիւնները այնպէս լարուած էին, մի մուսուլման, թէկուզ պարսիկ, կրօնափոխ լինելով ծառայէր կայսրին եւ առաջնակարգ դիրք գրաւէր: Բացի զրանից անտեսելու չէ բնաւ այն, որ Թէոփոբը ամուսնացած էր կայսրուհի Թէոդորայի քրոջ հետ, այսինքն խնամիացած էր հայ ընտանիքի հետ: Տեսանք, որ Թէոդորայի երեք քոյրերից Կալո-Մարիա ամուսնացաւ Արշաւիր պատրիկի հետ, Սոփիա՝ Բարուցիկի: Երրորդ քրոջ, Իրինէի, ամուսնութեան մասին ուղղակի յիշատակութիւն չկայ: Բայց իրաւունք ունինք ենթադրելու որ Իրինէն էր ճիշտ այն անձը, որը Թէոդորայի քոյրն էր եւ որին Թէոփիլը կնութեան տուաւ Թէոփոբին: Քանի որ Մամիկոնեան տան միւս երկու փեսաները՝ Արշաւիրը եւ Բարուցիկը հայ էին, հաւանական է կարծել նոյնը եւ երրորդ փեսայի՝ Թէոփոբի նկատմամբ: Կայսրուհին չէր կարող իր քրոջը տալ մի փախստական պարսիկի: Նա իր հարազատ դստեր համար փեսայ էր ընտրել, ինչպէս կը տեսնենք, Ալեքս-Մուշեղ ականաւոր հային, որ նոյնպէս Մամիկոնեան որեարներից էր:

Թէոփիլի ինքնակալութեան առաջին տարին, 829–830 թուին, Թէոփոբը մասնակից էր նրա արեւելեան առաջին արշաւանքին Մանուէլ զօրավարի հետ:

Հեռեւապէս այդ ժամանակ Թէոփոբը չէր կարող 12 տարեկան երեխայ լինել, ինչպէս հաւատացնում է վիպասան զրոյցը, այլ հասակն առած տղամարդ էր եւ պէտք է չատ յառաջացած, զինուորական սանդուղի բարձր աստիճանները կոխած լինէր, որպէսզի կարենար կայսրի եւ մեծահռչակ զօրավար Մանուէլի հետ խորհրդի նստել եւ ռազմական ծրագրներ մշակել:

Եթէ ընդունենք որ առաջին արշաւանքին Թէոփոբը տասնուաղն 30–35 տարի հասակ ունէր, պէտք է ծնուած լինէր դարու սկզբներին կամ նախորդ ութերորդ դարու վերջերին:

Ստուգապէս յայտնի է որ Հարուն Ռաշիդի (786–809) եւ Կոստանդին Զ կայսեր (780–796) օրով, ուրեմն 786–796 տասնամեակի ընթացքին Հայաստանից մի ստուար գաղթականութիւն անցաւ բիւզանդական հողը Շապուհ Ամատունի իշխանի եւ իր որդու Համամի առաջնորդութեամբ: Բազմութեան քանակը 12 հազար էր, այր եւ կին, նախարարներ եւ հեծեալներ: Տայքի վրայից անցան Պոնտոս: Կոստանդին

1 Tabari, 1235; Վասիլիեւ. I, 114.
2 Finlay, History of Greece, II, 153.
3 Genes., 54.
4 Hirch., Byz. Studien., 139; Bury, O. C. 253; Վասիլիեւ, I, 82:

նրանց ընդունեց, «պատիւ տուաւ նախարարներին եւ նրանց հեծեալներին, եւ միւս խառնիճաղանճ ամբոխը բնակեցրեց բերրի եւ արգաւանդ տեղում»[1]:

Թէոփոբի մասին եւս ասուած է որ իր հօր հետ եկաւ կայսեր մօտ 14 հազար փախստականների հետ: Այս դաղթը Թէոփիլի օրով չէր եւ ուրեմն կապ չունէր Խուռամ աղանդաւորների իրական թէ ենթադրական փախուստի հետ: Ոչինչ անպատեհութիւն չեմ տեսնում Թէոփոբի եւ իր հօր դաղթը 14 հազար մարդով նոյնացնելու Շապուհի եւ իր որդու Համամի դաղթի հետ, որ հաշւում էր 12 հազար մարդ: Թէոփոբի պատմութիւնը դրի է առնուած տասներորդ դարի կէսերին: Դարուց աւելի ժամանակամիջոցը բաւական էր որպէսզի հին անցքերը տեղահան լինէին յիշողութեան մէջ եւ Շապուհի դէպքը շփոթուէր եւ ձուլուէր խուռամ պարսիկներին վերագրուած կրկնակի փախուստի հետ:

Զարմանալի է որ արաբական աղբիւրները անծանօթ չեն Թէոփոբին, ինչպէս եւ Բիւզանդացիք չեն յիշատակում Նասրին, խուռամեանների առաջնորդին: Զենք ուզում հետեւցնել որ Թէոփոբը նոյն Նասրն է, այլ որ կլանել է վերջինիս պատկերը:

Շապուհի առաջին հանդրուանը եղել է Խաղտեաց կամ Պարխար լեռների այն մասը որը ցայժմ էլ կոչւում է Համշէն, այսինքն՝ Համամաշէն ի յիշատակ Համամի: Այս դեռ չէ նշանակում որ Համամը չէր կարող միւս իշխանների նման կայսերական ծառայութեան մէջ մտած լինել:

Հնարաւոր է Թէոփոբի առեղծուածային պատկերը մերձեցնել եթէ ոչ Համամին, գոնէ իր որեւէ եղբօր:

Շապուհ պարսիկ անունը, որ նշանակում է արքայորդի, դիւրութեամբ կը լուծէր հանելուկը թէ ինչո՞ւ Թէոփոբը համարւում էր թագաւորական ցեղից սերուած մի այնպիսի ժամանակ, երբ Արեւելքում պարսիկ թէ հայ թագաւորական տան հետք չկար:

Մեր այս ենթադրութիւնը մի փորձ է հանելու Թէոփոբի խորհրդաւոր ծագումը առասպելների միջից եւ դնելու պատմական հողի վրայ:

Միւս կողմից՝ անուրանալի է որ որոշ նմանութիւն կայ Թէոփոբի եւ Մանուէլի կեանքի գլխաւոր գծերի միջեւ: Նմանութիւնը այնքան չօշափելի է որ ակամայ ծնում է կասկած, արդեօ՞ք Թէոփոբը նոյն Մանուէլի մի ուրիշ պատկերը չէ, նրա այսպէս ասած վիպական տուները:

1 Ղեւոնդ, *վերջին գլուխ*:

Ինչպէս Թէոփոբը, այնպէս եւ Մանուէլ յարակցութիւն ունի խուռամեանների հետ: Երբ Մանուէլ փախաւ Արաբների մօտ, հոռոմ գերիներից գունդ կազմեց ամիրապետի թոյլտուութեամբ եւ գնաց խուռամ կոչուած աղանդաւորների դէմ կռուելու Խորասանում[1]: Նման ձեւով Թէոփոբը ներկայանում է մեզ որպէս պետ այն աղանդաւորների, որոնք կայսրին էին ապաւինել:

Թէոփիլ սկզբի տարին արշաւեց Արաբների դէմ: Զինուորական խորհրդին ներկայ էին Մանուէլ եւ Թէոփոբ: Մանուէլի կարծիքով կայսրը անձամբ չպիտի մասնակցէր կռուին վտանգից խուսափելու համար եւ ճակատը տեղի պիտի ունենար ցերեկը: Թէոփոբը, ընդհակառակը, առաջարկում էր որ կայսրը իր ներկայութեամբ խրախուսէ զինուորներին եւ որ կռիւը բարձր էր վարել գիշերով:

Ճակատամարտը կատաղի էր եւ արիւնահեղ: Կայսերական զօրքը կրունկ դարձրեց, կայսրը մնաց մենակ պատերազմի խոնարհանում թիկնապահ գնդով եւ Թէոփոբի ձեռքի տակ գտնուած երկու հազար պարսիկներով: Բայց կարողացան ճողոպրել եւ բռնել մօտիկ բլուրը: Երբ գիշերը վրայ հասաւ, Թէոփոբը խորամանկութեան դիմեց, հրամայեց գնդին ազմուկ հանել, փող հնչել, թմբուկ զարկել, ձեւացնելով թէ նոր զօրքեր են եկել օգնութեան: Արաբները խաբուեցին եւ երկիւղից մի կողմ քաշուեցին, որով հնարաւորութիւն տուին Թէոփոբին և կայսեր իջնել բլրից և գնալ միանալ գլխաւոր զօրքին: Շնորհիւ այս հնարամտութեան Թէոփոբը սիրելի դարձաւ Թէոփիլ կայսրին:

Նոյնանման մի դէպք պատմւում է նաեւ Մանուէլի նկատմամբ, այն դէպքը, որ առիթ ունեցանք բերելու վերեւ թէ ինչպէս կայսրը նորից արշաւեց Կապպադովկիա Արաբների դէմ եւ խուճապի ժամանակ մնաց պարփակուած թշնամու օղակի մէջ: Մանուէլը խանդավառեց զինուորներին մեղուների օրինակով եւ սլացան փրկելու իրենց տիրոջը վտանգաւոր վիճակից: Հակառակ կայսեր կամքին, հաւատարիմ եւ տիրասէր զօրավարը բռնեց նրա ձիու սանձից եւ հանեց ապահով տեղ: Կայսրը շնորհապարտ եղաւ յաւէտ Մանուէլին:

Երկու դէպքն էլ, մեր կարծիքով, պատմական չեն, այլ հնարածոյ, աւելի ճիշտ ասած, զատ զատ անդրադարձումներ են այն իրողութեան, որ տեղի ունեցաւ մի քանի տարի յետոյ Դպիրմոնի ճակատում 838 թուին:

1 Theoph. Cont., 118.

Դաղիմոնը այժմեան Թոկատի մօտերքն էր: Արաբական բանակը զօրեղ էր եւ ահարկու: Կայսրը ստիպուած էր քաշուել եւ ամրանալ Անդեն կոչուած բլրի վրայ: Մանուէլը սքոլաների, այսինքն պալատական կանոնաւոր գնդերի դիմեստիկն էր: Թէոփորը պարսիկ գնդի հրամանատարն էր: Երկու զօրավարներն էլ խորհուրդ տուին յարձակողական գործողութիւններն սկսել դիշեր ատեն, բայց կայսրը և միւս զօրավարները ընդդիմացան: Կայսերական զօրքը չդիմացաւ արաբական դրոհին եւ նահանջեց: Պարտութիւնը ակնյայտնի էր: Պարսիկ գունդը յուսահատուած փորձեց դաղտնի բանակցել արաբների հետ, խոստանալով ոչ միայն լքել կայսրին, այլ եւ նրան մատնել արաբների ձեռքը, պայմանով որ իրենց թոյլատրուի դառնալ հայրենիք:

Մանուէլ զօրավարը, որ տեղեակ էր լեղուին, լսեց մատնիչների դաւադրական խօսակցութիւնը թշնամու հետ և անմիջապէս կարգադրեց, որ կայսրը հեռանայ, որպէսզի արաբների ձեռքը չընկնի: Կայսրը հակառակեց, բայց Մանուէլը բռնի ստիպեց փախչել:

Արդեօ՞ք Թէոփորը ինքը մասնակից էր իր գնդի դաւաճան ծրագրներին, պատմագիրները այս կէտում տարաձայն են: Կարծիք կար, որ Թէոփորը առաջարկել էր նախընտրել գիշերուան ճակատը, թագուն նպատակ ունենալով իր գնդով արաբների կողմը անցնել: Այս մասին ամբաստանութիւն եղաւ կայսեր եւ Թէոփորը վախենալով պատժից փախաւ Ամաստրիա կնոջով եւ երեխաներով: Կայսրը նաւատորմ ղրկեց նրա դէմ, որպէս ըմբոստի: Բայց չուտով ներեց եւ հաշտուեց նրա հետ[1]:

Պատմում են նաեւ որ Սողոպետրա քաղաքի վրայ յարձակուելուց և աւերելուց յետոյ Թէոփիլ եւ դարձաւ, ուղիղ բոնելով դէպի մայրաքաղաք, եւ պատուիրեց Թէոփորին, որ տանի պարսիկ գունդը Սինոպ, գնեցէք այնտեղ եւ յետոյ գայ իրեն մօտ: Պարսիկները որպէս թէ ապստամբեցին եւ ընդդատեցին Թէոփորին իրեն թագաւոր յայտարարել: Հաւատարիմ զօրավարը փախաւ մայրաքաղաք եւ յայտնեց կայսրին գործի էութիւնը: Կայսրը նրան սիրով ընդունեց, բայց հրամայեց ցրել պարսիկ գունդը, որ այդ ժամանակ աճել էր եւ հաշուում էր 30 հազար մարդ, միւս թեմաների (զօրամասերի) մէջ, կազմելով նրանցից ուրոյն տուրմաներ կամ վաշտեր[2]:

1 Theoph. Cont., 135. Symeon, 637. Georg, 803.
2 Theoph. Cont., 124.

Այս դէպքը ուրիշ բան չէ քան նախորդի կրկնութիւնը այն աննշան տարբերութեամբ որ փոխուած է տեղի անունը, Սինոպ փոխանակ Ամաստրիայի, և պարսից դաւաճանական բնոյթ:

Վաւերականը Ամաստրիայի արկածն է թուում, որպէս հետեւանք Դաղիմոնի պարտութեան: Իսկ Անդեն բլրի անցքի արձագանգներն են վերոյիշեալ վիճելի երկու համանման միջադէպերը, ուր մէկի հերոսն է ներկայանում Թէոփորը, միւսի՝ Մանուէլը (հակառակ Հիրշի, որ հաւատի է համարում Մանուէլի առաջին գործը եւ անվաւեր Անդեն բլրի դէպքը)[1]:

Ի նպաստ մեր մեկնութեան է արաբական մի տեղեկութիւն, որով հաստատւում է որ կայսրի կեանքը վտանգուած էր Դաղիմոնի ճակատում, միայն զարմանալի է որ ազատուելի դերում երեւան է գալիս ոչ թէ Մանուէլը, այլ Նասրը[2]:

Այսպիսով Մանուէլի եւ Թէոփորի կեանքի գլխաւոր գծերը, որչափ որ պատմութիւնը պահել է, խաչաձեւում են եւ գրեթէ ձուլւում: Եթէ անգամ Թէոփիլի ազատումը պատկանում է Նասրին, փաստը մնում է անհերքելի որ միեւնոյն երեւոյթները վերագրուել են թէ՛ Մանուէլին եւ թէ՛ Թէոփորին չնչին փոփոխակներով:

Աննշանակ չէ նաեւ այն պարագան, որ պատմագիրներից ոմանք ասում են որ Թէոփորը կայսեր քեռայրն էր, իսկ ուրիշները համարում են նրան թագուհու քեռայրը: Եթէ մտաբերենք որ Մանուէլը թագուհու հօրեղբայրն էր, կարող ենք կասկածել, արդեօք Թէոփորի անորոշ կապը կայսերական տան հետ մի պղտորուած արձագանգ չէ՞ Մանուէլի իրական ազգակցութեան:

Մանուէլի մահուան մասին երկու տեղեկութիւն կայ: Մէկին նայելով՝ նա կենդանի էր տակաւին 857 թուին Թէոկիստոսի սպանութեան ժամանակ: Միւսը ասում է, որ Մանուէլը մեռաւ այն վէրքից, որ նա ստացել էր Դաղիմոնի կռուում 838 թ. կայսրին պաշտպանելիս:

Այս կէտում եւս մի որոշ նմանութիւն ենք չշփոթում նրա եւ Թէոփորի մէջ: Պարսիկ զօրավարի մահը նոյնչափ առասպելախառն է որչափ եւ նրա կեանքը: Սրան սպանեց Թէոփիլ կայսրը իր մահուանից յետոյ, ուրեմն նախ քան 20 յունուարի 842 թիւը, երբ պատահեց կայսրի մահը: Պատմագիրն հաղորդում է որ Սինոպի դէպքի առթիւ կայսրը

1 Hirch., O. C. 145.
2 Masudi, Prairie d'Or, 68; Վասիլիւ, I, 65:

հրամայեց գլխատել Թէոփոբին և աւելացնում է որ մի ուրիշ պատճառ ևս կար սպանութեան:

Ակնարկը վերաբերում է Ամաստրիայի անցքին: Քիչ յետոյ անդրադառնալով այդ անցքին, նոյն պատմագիրը հաղորդում է որ կայսրը ներման պատրուակով իրեն մօտ բերել տուեց ապստամբ զօրավարին, փակեց պալատում, եւ մի օր հրամայեց սպանել, զգալով իր մօտալուտ մահը: Երբ դրժբախտ զօրականի գլուխը բերին կայսեր, սա փայելով ձեռքով մեռածի երեսը աւաղեց. «այժմ դու այլեւս այն Թէոփոբը չես եւ ո՛չ ես՝ այն Թէոփիլը»:

Նկատենք անցողակի, որ մեր ենթադրութիւնը թէ Սինոպի եւ Ամաստրիայի դէպքերը միեւնոյն իրողութեան տարբեր արտայայտութիւններն են, հաստատւում է պատմագրի ակամայ խոստովանութեամբ, որով սպանութիւնը անմիջական հետեւանք է համարւում ե՛ւ Սինոպի ե՛ւ Ամաստրիայի դէպքի, մի բան, որ ուրիշ ոչինչ չէ նշանակում քան այն, որ յիշած դէպքերը յար եւ նոյնն են:

Սպանութեան մասին չրջում էին եւ ուրիշ լուրեր: Որպէս թէ սպանութիւնը կատարուել էր ո՛չ թէ թագաւորի հրամանով, ապա այն ծովակալի, որը ղրկուած է եղել ղրսպելու ապստամբութիւնը: Սա ինքնագլուխ գիշերով սպանել էր տուել Թէոփոբին:

Երբ պարսիկ գունդը հարցրեց թէ ի՞նչ եղաւ անհետացած զօրավարը, խաբելով հաւատացրին թէ Թէոփոբը մեռած չէ, այլ ապրում է պալատում: Պարսիկները մնացին այն կարծիքին, որ Թէոփոբը տակաւին մահ չէ ճաչակել[1]:

Վերջին խօսքերից գիտնականները հետեւցրել են, որ Թէոփոբը իրօք յարակցութիւն է ունեցել պարսիկ աղանդաւորների հետ, գուցէ գերագոյն էակ է ճանաչուել, որի հետեւանքով եւ հաւատացել են որ Թէոփոբը ենթակայ չէ մահուան, այլ որպէս մի նոր Եղիա համբարձել է երկինք[2]:

Պատմագրի այն խօսքը, թէ Թէոփոբը ապրեց անապականութեան մէջ կարող էր հիմ ծառայել մոլար հասկացողութեան: Բարեբախտաբար, հնարաւորութիւն կայ ստուգելու այս կասկածելի տեղեկութիւնը ըստ այն աղբիւրի, որտեղից առնուած է: Այնտեղ ասուած է թէ Թէոփոբի մահը գաղտնի եղաւ, ոչ ոք չիմացաւ, ուստի եւ պարսիկները, աւելի ճիշտ պարսիկ աղանդաւոր գունդը որի գլուխն էր Թէոփոբը, մնաց այն հաւատի մէջ թէ զօրավարը տակաւին

1 Gen. 60; Theoph. Cont., 136.
2 Lebeau, Le Bas-Empire, XIII, 153; Bury, O. C. 253.

մահ չի ճաչակել մինչեւ այն ժամանակը. խօսքը այստեղ այն ժամանակուան մասին է, երբ հարցնում էր պարսիկ գունդը, եւ ոչ թէ երբ գրում էր պատմագիրը, ինչպէս հասկացել է միւս պատմագիրը[1]:

Հետաքրքրական է որ ոչ կոստանդինեան պատմագիրները ոչինչ չգիտեն Թէոփոբի անմահութեան զրոյցների մասին:

Թէոփոբի մարմինը թաղեցին իր սեփական տանը, Ներսէսի պալատի մօտ[2]: Թւում է որ այս տեղեկութիւնը եւս թիւր մեկնութեան արդիւնք է: Իսկական աղբիւրն ասում է որ Թէոփոբին թաղեցին Ներսէսի չէնքի մօտերքը մի տեղ, «որ այժմ կոչւում է τῆς θεωρίας»:

Արդ այս չէ նշանակում Թէոփոբի տուն, այլ երկիւղածութեան եկեղեցի: Ի՞նչ կապ կարող էր լինել Թէոփոբիա սրբարանի եւ Թէոփոբ անձի միջեւ, արդեօք սրբարա՞նն է պարտ իր անունը Թէոփոբին, թէ ընդհակառակը: Բնական կասկած է ծագում որ ժողովրդական ստուգաբանութիւնը Թէոփոբիա եկեղեցու մէջ տեսել է համանուն սրբի հանդիսարան եւ յերիւրել Թէոփոբի պատմութիւնը եւ մանաւանդ նրա անմահութեան առասպելը:

Այս խորհրդաւոր զօրավարի սպանութեան պարագան նմանապէս պարզ չէ: Զանազան լուրեր կային: Ցայտնի չէ որոշակի թէ ո՞վ էր սպանողը: Ասում էին որ թագուհու եղբայր Պետրոնն եւ լոգոթետը, այսինքն հոչակաւոր Թէոկրիստը էին որ գործեցին ոճիրը թագաւորի հրամանով: Ուրիշները վերագրում էին դահճի դերը ծովակալ Օրիփասին:

Թէոփոբը սպանուած էր գաղտնի և թաղուած գաղտնի, գիշերով: Անհասկանալի է այս արտակարգ զգուշութիւնը հանդէպ մի բուռն պարսիկների, այնպիսի դարում, երբ միահեծան կայսրները եւ ամենակարող պետական դէմքերը օր ցերեկով խողխողւում էին առանց որեւէ բողոքի:

Եթէ չարունակենք զուգահեռները, որ գծեցինք Մանուէլի եւ Թէոփոբի կեանքի միջեւ, կը տեսնենք որ որոշ աղերս կայ նաեւ նրանց վախճանի մէջ: Մանուէլի մասին նմանապէս լուրեր էին տարածուած, որ նա մեռել էր 838 թուի ճակատում ստացած խոցերից: Մինչդեռ պատմութիւնից երեւում է որ ապրել է այնուհետեւ ևս գոնէ քսան տարի պալատում:

1 Genesius՝ ἄχρι τῶν ὧνδε χρόνων, խօսքը, էջ 60. Theoph. Cont., 136, փոխել է μέχρι τῶνδε որ նոյնանշանակ է, բայց կարծես տարբերութեան երանգ ունի,
2 Symeon, 646.
3 Georg, 810.

Թէոփոբի «անմահութիւնը» ճիշտ այս կարդի երկարակեցութիւն էր, քանի որ սպանուել էր, բայց հաւատացնում էին թէ տակաւին ապրում է պալատում:

Ահա այս դիտողութիւններն են, որ մաքառում են Թէոփոբի դէմ: Եթէ նրա մէջ պատմական տարր կայ, բաղկացած մի կողմից Շապուհի որդու եւ միւս կողմից պարսիկ Նասրի իրական սուուերներից, ամեն պարագային, այդ տարրը Մանուէլի չուքի տակ այնքան է աղօտացել, որ Թէոփոբը դարձել է Մանուէլի վիպական մի երկուորեակը:

VII

Մանուէլից եւ Թէոփոբից աւելի պերճ դէմք կար բիւզանդական արքունիքում: Դա Ալեքս-Մուշեղն էր, Մամիկոնեան իշխաններից: Շատ գեղեցիկ երիտասարդ էր և փեսայացաւ կայսերական տան: Թէոփիլն ու Թէոդորան հինգ աղջիկ ունէին, բայց ոչ մէկ արու զաւակ: Որպէսզի ապահովեն գահի ժառանգութիւնը, որոշեցին դուստրներից մէկին՝ Մարիամին տալ կնութեան Ալեքս-Մուշեղին եւ յայտարարել նրան գահաժառանգ:

Նորափեսան մեծամեծ պատիւների արժանացաւ: Կայսրը նրա համար առանձին տիտղոս ստեղծեց, որ է պատրիկ անթիւպատ, այլ եւ մագիստրութեան պատիւը տուեց եւ կեսար հռչակեց: Նոյն նոր տիտղոսն էր, որ չնորհեց կայսրը նաեւ Բագրատունեաց իշխանին Աշոտին, որ էր որդի Շապուհի եւ թոռն Մսակերի:

Ասողիկ սխալմամբ անուանում է «հիւպատաւորութեան պատիւ, այսինքն ապուհիւպատ պատրկութիւն», փոխանակ «անթիւպատ պատրկութեան»: Մի ուրիշ անգամ ուղղում է իր սխալը, երբ Շապուհ Բագրատունուն, այսինքն մատենագրին, կոչում է «որդի Աշոտոյ անթիպատրիկի», միայն կարդալու է «անթի(պատ)պատրկի»[1]:

Ալեքս-Մուշեղի պատմութիւնը եւս ազատ չէ կնճիռներից: Նախ ո՞վ է այս իշխանը:

Վերեւ տեսանք որ համանուն մի անձն ըմբոստացաւ կայսրի դէմ 792 թուին: Նա պահան գնդի պետն էր պալատում կամ ինչպէս կոչում էին վիգլի դրունգարը, յետոյ նշանակուեց զօրավար Արմենեակեան թեմի: Հաւանօրէն սրա թոռն էր Ալեքս-Մուշեղը, Թէոդորայի փեսան, եթէ դատելու լինենք պապի անունը թոռան փոխանցելու սովորութիւնից:

1 Ասողիկ, էջ 144 եւ 138:

Ալեքս-Մուշեղի ընտանիքը ապրում էր Ակրոպոլ կամ միջնաբերդ թաղում մի տան, որ կոչւում էր Կրենիտիսսայի տուն: Կրենիտիսսա իգական ձեւն է Կրենիտէս անուան: Ալեքս-Մուշեղի տոհմը կրում էր Կրենիտէս մականունը, նոյն տան անունով, ինչպէս կարծում են հները:

Կրենիտիսսա, երեւի, Ալեքս-Մուշեղի մայրը կամ տատն էր: (Ի՞նչ է իսկապէս բառի ծագումը, դժուար է ասել: Արդեօք յունարէն կրենէ «աղբիւր» բառից է, տունը աղբիւրի մօտ գտնուելու համար: Այս դէպքում սպասելու էր Կրենիտիս, — տիդու, մինչդեռ Կրենիտէս, յոգ. սեռ. Կրենիտոն է: Եթէ աշխարհագրական ծագում ունենար, զարմանալի չէր լինի նրա մէջ տեսնել ոչ թէ Կարինի, այլ Դեգիք գաւառի Կռնի աւանի անունը):

Թէոդորայի առաջին երեխան տղայ է եղել, բայց մեռել է մանուկ հասակում խեղդուելով պալատին կից աւազանի մէջ[1]: Սրա դամբանը գտնւում էր Ս. Առաքելոց եկեղեցու մէջ իր քրոջ Մարիամի կողքին, եւ այստեղից էլ գիտենք, որ անունը Կոստանդին էր[2]: Մեզ հասել են դրամներ, որոնք կրում են Թէոփիլի հետ եւ մի անմօրուս պատկեր, որ Կոստանդին ինքն է[3]:

Այնուհետեւ Թէոդորան ընծայել է իր ամուսնուն հինգ դուստր, Թեկլա (Թեկղի), Աննա, Անաստասիա, Պուլքերիա եւ Մարիա (Մարիամ): Յատուկ յիշատակութիւն կայ, որ Մարիան ամենից կրտսերն էր, կամ, ուրիշ վկայութեամբ, ամենից սիրելին: Սակայն, Մարիան ոչ մի կերպ չէր կարող ամենից փոքրը լինել, եթէ իրօք ամուսնացած էր Ալեքս-Մուշեղի հետ:

Արդարեւ, Թէոդորան հարսնացել էր 821 թուին: Եթէ Մարիան վերջին երեխան էր, ուրեմն, հաշուած առաջին զաւակը Կոստանդինը, վեցերորդն էր: Հետեւապէս ծնուած կարող էր լինել ամենավաղ ոչ յառաջ քան 827 թիւը: Գիտենք որ 839 թուին արդէն մեռած էր: Այս հաշուով նա 12 տարեկանից պակաս պէտք է լինէր ամուսնութեան պահին, որ հաւանական չէ: Ճշմարտութեան աւելի մօտ կլինէր ընդունել, որ Մարիամը, ընդհակառակը, անդրանիկ աղջիկն էր: Ուրիշ առթիւ պատմագիրը խոստովանում է որ փոքր աղջիկը Պուլքերիան էր:

Երեխաները սովորութիւն ունէին յաճախ այցելելու

1 Theoph. Cont., 88.
2 De Cerimoniis, 645.
3 W. Wroth, Catalogue of the Imperial Byzantine Coins, XLIII.

իրենց տատին, Թէոկտիստէին, որ Թէոդորայի մայրն էր: Սա ապրում էր իր սեփական տանը Սամաթիա Թաղում: Տունը կոչւում էր Գաստրիա եւ գտնւում էր ոչ հեռու այժմեան Հայոց Ս. Գէորգ եկեղեցուց: Գաստրիա նշանակում է յունարէն ծաղկման: Որպէս Թէ Հեղինէ Թագուհին Երուսաղէմից բերել էր հետը մի ամանում այն ծաղիկները, որ քաղել էր Նաչգիւտի տեղում եւ ամանը ծաղիկներով դրել էր Գաստրրիա տան տեղը, որից եւ մնացել է անունը: Ժողովրդական զրոյց է, հարկաւ, առանց պատմական որեւէ ստուգութեան: Այս տունը պատկանում էր Թէոդորայի մօրը՝ Թէոկտիստէին, ասել է Թէ Մամիկոնեան տան սեփականութիւն էր: Տունը գնուած էր Նիկետաս պատրիկից եւ վերջը վերափոխուեց մենաստանի:

Թէոկտիստէի եւ Թէոդորայի մասին պատմագիրները գովեստով են խօսում, որպէս բարեպաշտ եւ կրօնասէր եւ մանաւանդ պատկերապաշտ կանանց: Նոյն ոգով կրթել էր աշխատում Թէոկտիստէն նաեւ իր մատաղ թոռներին: Թէոփիլն ինքը պատկերամարտ էր, ինչպէս եւ իր ամբողջ շրջապատը: Թէոկտիստէն պատկերները պահում էր ծածուկ մի փակ արկղում: Երբ երեխաները գալիս էին, հանում էր զգուշութեամբ սրբերի պատկերները եւ փոքրիկների գլխին դնում, երեսներին եւ շրթունքներին քսում, որպէսզի մանկութիւնից ընդելանան յարգելու պատկերների սրբութիւնը:

Հայրը մի օր հարցրեց երեխաներին, Թէ տատիկը ինչպէ՞ս ընդունեց նրանց եւ ի՞նչ պարգեւ տուաւ: Մեծերը լռեցին, իսկ Պուլքերիան, որ խելfով եւ տարիfով ամենից տրhասն էր պատմեց, որ տատիկը իրենց չատ միրգ տուաւ եւ յետոյ արկղից հանեց տիկնիկներ եւ նրանց երեսին ու գլխին դրեց գուրգուրանքով: Այստեղից երեւում է, որ Պուլքերիան էր կրտսերը եւ ոչ Մարիան:

Թէոդորա Թագուհին, Մամիկոնեան իշխանուհին, Մարիայի համար նշանած էր ընտրել իրեն արենակից Ալեքս-Մուշեղին, նոյն Մամիկոնեան տոհմից:

Բիւզանդական արքունիքը գաղտնի որոգայթների եւ դաւերի բոյն էր: Պակաս չէին բանսարկու մարդիկ, ընդունակ եւ պատրաստ թափելու չարախօսութեան թոյնը մեծութեան սանդուղի վրայ կանգնած անձերի գլխին:

Թէոփիլն ուղարկեց Ալեքս-Մուշեղին պատերազմական գործով Լոնգոբարդիա: Այսպէս էր կոչւում այն ժամանակ հարաւային Իտալիան: Հայ զօրավարը յաջողութեամբ կատարեց կայսերական պատուէրը, որով աւելի հաճելի դարձաւ արքունիքում: Սակայն, որքան աճում էր կայսեր սէրը, նոյնքան եւ զօրանում էր նախանձորդների չարակամութիւնը: Կայսեր ականջը հասաւ սովորական բամբասանքը, որպէս Թէ Ալեքս-Մուշեղ տենչում է Թագին եւ որ Այբը երեւի պիտի տիրանայ Թոյին, այսինքն Ա(լեքսը) պէտք է գրաւէ Թ(էոփիլի) գահը: Ամբաստանեալը, զգալով որ անկարող է կարկել չարաբանների բերանը, ցանկութիւն յայտնեց քաշուել քաղաքական ասպարէզից, նախընտրելով մենաստանի անդորրութիւնը: Սակայն, կայսրը ընդդիմացաւ, չուզեց որ իր սիրելի դուստրը այրիանայ: Ալեքս-Մուշեղը մնաց իր պաշտօնում:

Շուտով հանգամանքները փոխուեցին: Թէոդորան նոր որդու զաւակ ծնեց, որով ապահովեց գահի յաջորդութիւնը: Մինչ այն մեռաւ Ալեքս-Մուշեղի կինը, Մարիան: Թէոփիլը վերջին սէրն ու յարգանքը տուեց իր դստեր, Թաղելով նրան արծաթապատ դագաղի մէջ եւ նրա դամբարանը յայտարարելով պատսպարան նրան ապաւինող յանցաւորների համար: Սգաւոր ամուսինը հագաւ վանականի տեւ զգեստ:

Ուրիշ տեղեկութեան համաձայն, Ալեքս-Մուշեղը ուղարկուեց ոչ Թէ Լոնգոբարդիա, այլ Սիկիլիա կղզին, եւ ուղարկուեց ստրատելատի (զօրապետի) եւ դուքսի պաշտօնով: Նախանձը եւ դաւերը այստեղից սկիզբ առան: Սիկիլիացիներից ոմանք գնացին մայրաքաղաք եւ փսփսացին պալատում Թէ Ալեքս-Մուշեղը իբրեւ Թէ մատնում է քրիստոնէութեան շահերը սարակինոսներին, այլ եւ ինքը ձգտում է կայսրութեան:

Մինչ ամբաստանութիւնը տեղ հասաւ, Մարիան, սիրելի դուստրը, մեռաւ: Թէոփիլը Թաղեց նրան արծաթազարդ դագաղի մէջ եւ դամբարանի համար նոյն կարգադրութիւնն արեց, ինչ որ յիշուեց: Ինչ վերաբերում է Ալեքս-Մուշեղին, կայսրը ուղարկեց Թէոդոր(ոս) Կրիթին(ոս) եպիսկոպոսին Սիկիլիա նրա ետեւից: Եպիսկոպոսը տարաւ Մուշեղին կայսրի շնորհի հետ և նրա անձնական լանջախաչը որպէս երաշխիք կայսերական խոստումին: Ալեքս-Մուշեղը հաւատաց եւ ուղիղ ընկաւ մայրաքաղաք: Սակայն, Թէոփիլը դրժեց իր ուխտը եւ հրամայեց խարազանել Մուշեղին որպէս ապստամբի եւ նետել բանտ, այլ եւ գրաւեց յարքունիքս նրա ինչքը:

Մի օր կայսրը մեծ թափօրով ծերակուտականների ուղեկցութեամբ ելաւ պալատից գնալու Վլաքերնի Սուրբ Աստուածածնի եկեղեցին: Թէոդոր եպիսկոպոսը եւս մտաւ թափօրի մէջ զգեստաւորուած: Երբ կայսրը ծերակոյտի հետ մօտեցաւ սեղանին, Թէոդոր եպիսկոպոսը կարդաց բարձրա-

ձայն 44 Սաղմոսի 5րդ տան առաջին մասը. «լարեա՛, ուղղեա՛ եւ թագաւորեա՛», եւ դառնալով կայսեր, հարցրեց՝ «վասն որոյ, ո՛վ թագաւոր»:

Սա ամօթահար չարունակեց Սաղմոսը. «վասն ճշմարտութեան, հեզութեան եւ արդարութեան»:

«Եւ ո՞ւր է քո արդարադատութիւնը, երբ իմ միջոցով խօսք տուիր Ալեքս-Մուշեղին եւ յետոյ դրժեցիր», ասաց յանդիմանութեամբ եպիսկոպոսը:

Կայսրը սրտմտած, հրամայեց արտաքսել եկեղեցուց յանդուգն հոգեւորականին, անողորմ ծեծ տուեց եւ աքսորեց:

Հուսկ յետոյ, երբ մի օր կայսրը մտաւ մայր եկեղեցին, Յովհաննէս պատրիարքը նախատեց նրան եւ յետ կանչել տուեց եպիսկոպոսին: Վերջինս այն անարգանքից յետոյ իրեն արժանի չհամարեց այլեւս եպիսկոպոսութեան, և կայսեր հրամանով յանձն առաւ էկոնոմի (տնտեսի) պաշտօնը տաճարում:

Հետաքրքրական է որ 824 թուի պատուիրակութեան մէջ որ Միքայէլ կայսրը ուղարկեց արեւմուտք Լիւդովիկ կայսեր յիշւում է Թէոդոր, էկոնոմ Ս. Սոփիայի[1]: Արդեօ՞ք Թէոդոր Կրիթին եպիսկոպոսը չէր, որ նախապէս էկոնոմ էր եղել եւ այժմ նորից դառնում էր հին պաշտօնին:

Միաժամանակ կայսրը հանեց բանտից Ալեքս - Մուշեղին, վերադարձրեց նրան գրաւած գոյքերը եւ նախկին պատիւը:

Այս պատմուածքը զանազանւում է առաջնից: Այնտեղ կայսրը հաւատ չէ ընծայում չարախօս լեզուներին, իսկ այստեղ, ընդհակառակը, ոչ միայն ականջ է կախում, այլ եւ ծանր պատիժ է տալիս: Բացի դրանից երկրորդ պատմուածը ոչինչ չգիտէ Ալեքս-Մուշեղի կրօնաւորութեան մասին: Մինչդեռ առաջնում ասուած է որ Մուշեղը կնոջ մահից յետոյ վանք մտաւ, հակառակ թագաւորի ցանկութեան: Վերջինս ստիպուած տեղի տուաւ եւ իր սիրելի իշխանին նուիրեց Քրիսոպոլի կայսերական վանքը, նաեւ մերձակայ երկու վանքերը:

Քրիսոպոլը այժմեան Սկիւտարն է, ծովի միւս ափին քաղաքի դէմ յանդիման: Ոչ հեռու գտնւում էին պետական զինանոցները Անթիմոս կոչուած վայրում: Ալեքս-Մուշեղը մի օր պտոյտի ելնելով տեսաւ այս տեղը եւ շատ հաւանեց: Ցանկացաւ սեփական մենաստան ունենալ եւ նրանով իր յիշատակը անմահացնել: Թէոդորայի, իր թագակիր զոքանչի, միջնորդութեամբ յաջողեց պարգեւ ստանալ կայսրից Անթիմոսի տեղը եւ կառուցեց մի նոր վանք: Այստեղ անցկացրեց իր կեանքը եւ մեռաւ: Նրա գերեզմանը եւ գերեզմանի վերեւ կախուած սրբի պատկերը, նրա կողմից նուիրուած, անվնաս մնացել էին մինչ ԺԱ դարու կէսերը, ինչպէս վկայում է մեր պատմագիրը[1]:

Ալեքս-Մուշեղը ունէր մի եղբայր, Թէոդոս անունով: Սա եւս նշանաւոր պատրիկ էր եւ վերջը եղբօր վանքը մտաւ, առաքինի կեանքի հրաշալի օրինակ տուաւ: Վախճանեց նոյն վանքում եւ թաղուեց եղբօր մօտ:

* * *

Պալատական առաջնակարգ դէմքերից էին նաեւ Կոստանդին Բաբուցիկ եւ Թէոդոր Բաբուցիկ: Հաւանօրէն եղբայրներ էին եւ Բաբուցիկ իրենց հայրանունն էր: Ո՞վ էր Բաբուցիկը եւ երբ էր տարագրուել, յայտնի չէ: Անունը՝ Բաբ, Բաբիկ, Բաբոց, Բարգէն, Ժաբան կամ Բաբեկ չարքից, որ հին պապ բառի միջին–պարսկական բաբ ձեւից ածանցականներ են տոհմական որոշ դրոշմ չէ կրում, որ կարելի լինէր մերձեցնել այս կամ այն նախարարական տան:

Աւելորդ չենք համարում յիշել, որ հնարաւոր է զուգադրել Բաբուցիկին այն ըմբոստ իշխանի հետ, որ յայտնի է վրաց Տարեգրքից, եւ որի անունը, թէեւ կարդացւում է Գաբլուց, բայց դիւրութեամբ կարելի է ուղղել՝ Բաբուց: Նա որպէս թէ Սմբատ Աբլաբասի կամ Խոստովանողի եղբայրն էր, ուրեմն Աշոտ Մսակերի որդիներից մէկը: Մի ուրիշ իշխան, Գուառամ, ելաւ Գաբուցի դէմ եւ fշեց նրան հnոռմոց աշխարհը[2]:

Դժբախտաբար բնագիրը խանգարուած է եւ որոշ կէտերում գոնէ հաւատ չէ ներշնչում: Անվաւեր է եւ ժամանակագրութիւնը, որ կարող ենք անտեսել, արժէք տալով միմիայն այն ցուցումներին որ Գաբլուցը Մսակերի որդին է և Գուառամը Բագրատ Կիւրապաղատի եղբայրն է, ուրեմն Աշոտ Կիւրապաղատի որդին: Աշոտ Մսակերը մեռած է մինչեւ 826 թիւը, իսկ Աշոտ Կիւրապաղատը իր այս կոչումը պարտական էր Լեւոն Հայ կայսեր (813-820): Երկու ժամանակակից այս Աշոտների զաւակները, Գաբլուց եւ Գուառամ,

1 Mansi, XIV, 417.

1 Theoph. Cont., 109.
2 Brosset, Histoire de la Géorgie, I, 268-269.

կարող են հասակակից լինել եւ 830 թուականներին արդէն հասուն տարիքի մէջ լինել:

Թւում է որ անպատեհութիւն չկայ նոյնացնելու Գաբլուցին Բաբուցի հետ: Սակայն, մի մեծ խոչընդոտ կայ: Վրաց Տարեգրքի ասելով, Գաբլուցը քշուած պէտք է լինի արեւմուտք Բուղայի արշաւանքներից յետոյ, ուրեմն իններորդ դարի կէսերին: Մինչդեռ Բաբուցի որդիները այդ ժամանակ արդէն յայտնի գործիչներ էին արեւմուտքում:

Արդ՝ եթէ հաւատ ընծայենք Տարեգրքի ժամանակագրական նշաններին, պէտք է հրաժարուենք մեր առաջադրած համեմատութիւնից: Բայց քանի որ հիմք չկայ վստահելու Տարեգրքին, պէտք չկայ արհամարհելու մեր ենթադրութիւնը, որքան եւ երկբայական:

Երկու Բաբուցիկների յարաբերութիւնը որոշ չէ: Եղբայրներ համարեցինք ի նկատի ունենալով այն պարագան, որ միաժամանակ են երեւում պատմութեան մէջ: Բայց անհաւանական չէ կարծել, որ նրանք հայր եւ որդի են եւ որ Բաբուցիկ ոչ թէ Կոստանդնի հօր, այլ իր իսկ հայ անունն է, և որդին Թէոդոս պահել է իր վրայ: Սրանով մի աստիճան կը դիւրանայ Բաբուցիկի եւ Գաբլուցի ենթադրական համեմատութիւնը ժամանակագրական տեսակէտից:

Կոստանդին Բաբուցիկը ամուսնացած էր Թէոդորայի քրոջ, Սոփիայի հետ, ուրեմն կայսեր քենակալն էր: Ամորիայի պաշարումի ժամանակ գերի ընկաւ արաբների ձեռքը եւ միւս զօրավարների հետ ընդունեց մարտիրոսութեան պսակ 845 թուին[1]:

Թէոդոս Բաբուցիկը ուղարկուեց արեւմուտք Լիւդովիկ Բարեպաշտի մօտ դիւանագիտական կարեւոր յանձնարարութեամբ եւ մեռաւ առաքելութեան ընթացքին 840 թուին:

Կոստանդինը պատրիկ էր եւ պալատական չորս գնդերից մէկի, որ կոչւում էր Վիդլա, պետն էր, դրունդարը: Այս պաշտօնը գրեթէ միշտ հայ զօրականների ձեռքին էր:

Կոստանդնից յառաջ թէ յետոյ նոյն պաշտօնում գտնում ենք Թադուհու եղբօրը, Պետրոնին: Սա դրունդար է յիշւում Թէոփիլի կեանքից առնուած մի դէպքում: Մի օր, երբ կայսրը իր սովորութեան համաձայն անցնում էր Միջին փողոցով դէպի Վլաքերնի ս. տաճարը եւ ամեն ոք իրաւունք ունէր մօտենալ եւ իր ցաւը յայտնել երկրի տիրոջ, մի կին դատուեց կայսեր, որ Պետրոնը նորոգում է իր տունը, բայց այնքան է բարձրացրել, որ բոլորովին կտրել է իր աղքատիկ

1 Theoph. Cont., 135.

հիւղի լոյսը և ուշք չի դարձնում իր բողոքին, քանի որ խեղճ եւ այրի կին է: Կայսրը նշանակեց անմիջապէս մի յանձնաժողով, երեք հոգուց կազմուած, քննելու բողոքը: Քննութիւնը պարզեց որ դանդատաւորը արդար էր: Պետրոնի տունը քանդել տուեց կայսրը և մթերքը յանձնեց այրի կնոջ[1]:

Ի դէպ, յանձնաժողովի երեք հոգուց մէկը հայ էր Լեւոն-Սմբատ անունով: Դարձեալ կրկնակի անուն, հայ եւ հոռոմ, եթէ ոչ իր եւ հօր անունը: Կարծում ենք որ սա նոյն անձն է լինելու որ մի ուրիշ տեղ կոչւում է Լեւոն Քամաղրակոն: Այս Լեւոնը Թէոփիլ կայսրի պրոտովեստիարն էր, այսինքն հանդերձապահը, եւ յիշւում է Լեւոն Ե Հայի սպանութեան գործը քննելու պատմութեան մէջ: Երկու դէպքումն էլ Լեւոնի տրուած յանձնարարութիւնը կրում է դատական բնոյթ եւ հաւանօրէն խօսքը միեւնոյն անձի մասին է:

Կոստանդին Բաբուցիկի հետ չփոթելու չէ համանուն անձը՝ Կոստանդին - Մանիակ: Երկուսն էլ ժամանակակից գործիչներ էին եւ Կոստանդին-Մանիակը եւս Վիդլի դրունդար էր: Կրկնակի անուններից Մանիակը, թերևս, հայ Մանակն է: Նշանաւոր ընտանիք էր Բիւզանդիայում: Մանիակի թոռն էր հռչակաւոր Յովսէփ Գենեսիոս պատմագիրը, որ մեր աղբիւրներից մէկն է, եւ որի հօր անունը Թոմա էր:

Գենեսիոսը չէ մոռանում շեշտել որ Կոստանդին-Մանիակը հայ էր եւ մի մութ ակնարկ է անում նրա Բիւզանդիա գալու առթիւ: Որպէս թէ Մանիակը դրկուած լինէր Թէոփիլի մօտ պատանդի ձեւով եւ յետոյ իր հոգու եւ մարմնի զեղեցկութեան եւ կատարեալ բարեսրտութեան համար նշանակուեց Վիդլի դրունդար, այլ եւ պատուեց պատրկութեան պատուով եւ դարձաւ պոստի լոգեթետ[2]:

Ուշագրաւ է պատմագրի ակնարկը որ Կոստանդինը ուղարկուած էր «իշխանների եւ եղբայրակիցների կողմից» եւ ուղարկուած էր որպէս ἐπιχειρουκεύσεως ὄμηρον: Ի՞նչ բանակցութեան մասին է խօսքը, մութ է: Թէոփիլի օրով (829-842) Հայաստանի զօրաւոր իշխաններն էին Աշոտ Մսակերի որդիները, Սմբատը Շիրակում, Բագարատը Տարօնում, նաև Մսակերի եղբօրորդին Աշոտ Անթիւպատ պատրիկը Սպերում: Վերջինս իր տիրոջոսը ստացել էր Թէոփիլից 837 թուի արշաւանքի հետեւանքով: Հաւանական է որ կայսրը բանակցութեան մէջ եղած լինի Սպերի իշխանի հետ նախ քան արշաւանքը նրա աջակցութիւնը ապահովելու համար: Այս առ-

1 Symeon, 627-628; Georg, 793.
2 Genes., 81.

թիւ և Մանիակը կարող էր ուղարկուած լինէր կայսեր իբրև երաշխիք խոստացած օգնութեան: Բագրատունեաց արտաքին քաղաքականութեան համար կարեւոր այս կէտը մնում է վարագուրուած:

Գենեսիոսը ներկայացնում է իր պապին համակրելի գծերով եւ առիթ չէ փախցնում գովելու, ինչպէս կը տեսնենք, նրա մարդասէր ոգին: Գիտենք հաստատապէս որ Մանիակը վիգլի դրունգար էր 843 թուին Յովհաննէս պատրիարքի գահընկեցութեան ժամանակ: Մանիակը ամբաստանւում էր, որ վիրաւորանք էր պատճառել պատրիարքին: Երևում է որ նա անմիջապէս յաջորդել էր դրունգարութեան պաշտօնում Կոստանդին Բաբուցիկին որ գերի էր ընկել 838 թուին: Պետրոնի ստանձնումը նոյն պաշտօնի մնում է խնդրական, եթէ չընդունենք որ 838 և Թէոփիլի մահուան 842 տարուան մէջ է դնելու նրա պաշտօնավարութիւնը: Կարելի է կարծել որ Մանիակը իր երկրորդ անունը պարտական է Կոստանդին-Բաբուցիկին այն մտքով, որ նա դրունգարական պաշտօնի հետ կարող էր իւրացրած լինել եւ անունը:

Գենեսիոսը հաւատացնում է, որ իր պապը նաեւ լոգոթետ եղաւ եւ նոյնը կրկնում է նրան հետեւելով Թէոփանի Շարունակողը[1]: Աւելի քան երկբայելի է: Այդ պաշտօնը երկար տարիներ վարեց Թէոկտիստ ներքինին: Նրա մահից յետոյ լոգոթետութիւնն անցաւ Սմբատին, Վարդ կեսարի աղջկայ ամուսնուն: Մինչդեռ Կոստանդին-Մանեակը դրունգար է յիշւում այդ ժամանակները եւ մնաց այդպէս մինչեւ Վասիլի գահակալութիւնը: Ոչ թէ Մանիակը, այլ իր որդի Թոման նշանակուեց պոստի լոգոթետ Լեւոն Զ (886-911) օրով: Իսկ Թոմայի որդին, պատմագիր Յովսէփը կանիկլիոնի քարտուղար էր, այսինքն դիւանապետ Կոստանդին Ծիրանածինի ժամանակ, տասներորդ դարու կէսերին:

Յովսէփ Գենեսիոսի հօրեղբայրը, Թոմայի եղբայրը, եւս կոչւում էր Գենեսիոս[2]:

VIII

Քաղաքական անցքերով հարուստ չէ Թէոփիլի թագաւորութիւնը: Առժամեայ դադարից յետոյ վերսկսուեցին թշնամական գործողութիւնները արեւելեան սահմանների վրայ: Պատմագիրները հաւատացնում են, որ տասնեւութ

1 Theoph. Cont., 198.
2 Léo Gram., 249.

ճակատ է մղել թշնամու դէմ եւ ամեն անգամ անփառունակ նահանջել: Ահա ինչո՞ւ համար շատերը անուանում էին նրան անբախտ կամ անյաջողակ:

Այս դէպքում անհասկանալի են դառնում մեզ այն գովեստները, որ այնպէս առատօրէն չռայլում են Մանուէլի կամ Թէոփոբի հասցէին որպէս քաջակուռն ռազմիկների, մանաւանդ Մանուէլի, որի անունը դղրդում էր ամբողջ Արեւելքում: Ո՞ր դաշտերում եւ ե՞րբ էր վաստակել այդ հռչակը: Պարտութիւնները պակաս չեն բերում եւ ոչ հերոսներ ստեղծում:

Թւում է թէ պատմագիրները չափազանցնում են Թէոփիլի «անբախտութիւնը»: Պատճառը, անտարակոյս, կայսրի ամբարիշտութիւնն է: Թէոփիլը պատկերամարտների բանակումն էր, ուստի եւ բարեպաշտ պատմագիրները չեն ուզում որ նա աջողակ լինի արտաքին թշնամու դէմ: Նրանց հաւատով, պատկերների դէմ կռուող իշխանը չէր կարող հաճոյ լինել Աստուծուն, որից կախուած է զէնքի յաջողութիւնը: Տասնեւութ ճակատների հաշիւը չկայ մէջտեղը, որ կարելի լինէր դատել եւ ճշտել վկայութիւնը: Այն արշաւանքները, որ յիշւում են, այնքան էլ ճախորդ չեն: Երկու անգամ Թէոփիլը փայլուն յաջողութիւն ունեցաւ եւ մեծ շուքով ու հանդիսաւոր թափօրով տօնեց իր յաղթական դարձը եւ մուտը մայրաքաղաք:

Երկու դէպքումն էլ արշաւանքի մերձաւոր առիթը փախստական խուռամ աղանդաւորներն էին, ինչպէս տեսանք վերեւ: Թէոփիլն ուզեց օգտուել Արաբների ներքին խռովութիւններից եւ դուրս ելաւ նրանց դէմ: Ռազմական բեմը սովորաբար կիլիկեան բարձունքների վրայ էր, Տարսոն-Մարաշ-Մելետինէ գծի սահմաններում: Առաջին յարձակումով կայսերական զօրքերը գրաւեցին Զապեդրա և Մասիս (Մոպսուեստա) քաղաքները եւ աւարի հարկանելով նահանջեցին 830-831 թ.:

Երեւում է, մի ուրիշ մեծ յաջողութիւն ունեցաւ Խարսիանում, ուր Արաբները դերի տուին մինչեւ քսան եւ հինգ հազար մարդ: Պարզ չէ, թէ ինչպէս էին յառաջացել Արաբները մինչեւ Խարսիան, եթէ նախընթաց ընդհարմանը իրօք իրենք պարտութիւն էին կրել: Խարսիան, Արմենեակեան թեմի հարաւ-արեւմտեան մասն է, Կեսարիայից հիւսիս:

Աւելորդ է կրկնել խնդիրը: Թողնենք արշաւանքի մանրամասնութիւնները: Ամեն պարագայում Թէոփիլն իրեն յաղթող էր համարում եւ թւում է որ հիմք չկայ կասկածելու որ

բաւականաչափ դերիներ եւ հարուստ կողոպուտ էին ընկել նրա ձեռքը: Կայսրը հարկաւոր էր համարել տօնելու իր յաղթութիւնը:

Հանդիսական թափօրի նկարագրութիւնը հասել է մեզ: Երբ Թէոփիլը վերադառնալով պատերազմից հասաւ Հիերիա պալատը, որ գտնւում էր Քաղկեդոնի մօտ ուրեմն ասիական ափի վրայ քաղաքի յանդիման, ընդառաջեցին նրան կայրուհին, քաղաքի եպարքոսը, եւ ամբողջ ծերակուտական կազմը: Գերիները դեռ չէին եկել, ուստի եօթն օր սպասեց այստեղ կայսրը եւ որպէսզի կայսրուհին մենակ չմնայ, քաղաքից բերել տուեցին ծերակուտականների կանանց: Եօթն օրից յետոյ կայսերական շքահանդէսը շարժուեց դէպի Ս. Մամասի վանքը, ուր մնաց եւս երեք օր եւ յետոյ անցնելով Ոսկէ եղջիւրը կանգ առան Վլաքերնի պալատում: Գերիների կարաւանը միացաւ կայսերական խմբին: Վլաքերնի պալատից կայսրը ձիով գնաց մինչեւ Ոսկէ դուռը, ուրեմն պարբսպի հիւսիսային անկիւնից մինչեւ հարաւայինը, արդի Եղիկուլէ դուռը: Ոսկէ դռնից սկսւում էր մեծ պողոտան, որ է մեսա, այսինքն միջից փողոց, եւ ձգւում էր ուղիղ մինչեւ Ս. Սոփիայի մայր տաճարը եւ կայսերական մեծ պալատը:

Դրան առջեւ քաղաքի բարձր պաշտօնեաները գլուխ ունենալով եպրաքոսին ընծայաբերեցին կայսեր թանկագին քարերից չինուած մի թագ: Այնուհետեւ շարժուեց թափօրը դէպի Ս. Սոփիա: Փողոցը ամբողջ երկայնութեամբ զարդարուած էր սկարամանդ եւ սնդուս կոչուած պաստառներով, գոյնզգոյն ծաղիկներով եւ վարդերով: Քաղաքը համայն պճնուած էր որպէս հարսանեկան առագաստ, ինչպէս ասում է պատմագիրը: Կայսրը իր վեհութեան մէջ էր, ճերմակ ձի նստած գոհարազարդ տապճակով, գլուխը զարդարած թագով (տիարա), ձեռքին գայիսոն, մէջքը գօտեպնդած սրով, ամբողջ իրանը զրահապատ, թագնուած ոսկեճամուկ պատմուճանի (քիտոն) տակ:

Նրա կողքից գնում էր Ալեքս-Մուշեղը, Մամիկոնեան իշխանը, մեծանուն կեսարը, նմանապէս սպիտակ ձի հեծած, թանկագին տապճակով, գլխին՝ սաղաւարտ (կասիս) ոսկեհուռ գլխակապով (պերիկեփալայ), սուրը՝ մէջքին, ամբողջապէս զրահաւորուած հանդերձ զանգապաններով եւ բազպաններով, ձեռքին՝ ոսկէ նիզակ:

Կայսրի եւ կեսարի առջեւից գնում էին սենեկապանները (կուբիկուլար) եւ սենեկապետները (պրեպոշիտ), ետեւից՝ ներքինի պրոտոսպաթարները:

Ամբոխը ողջունում էր ցնծութեան ձայներով յաղթական թագաւորին: Թափօրը հասաւ մայր տաճարի Ս. Սոփիայի առաջ, կանգ առաւ: Կայսրը մտաւ եկեղեցի աղօթելու եւ յետոյ դիմեց դէպի մեծ պալատը: Քալկի կամ պղնձէ դրան դէմուդէմը պատրաստուած էր մի ամբիոն, վրան՝ մի ոսկէ գահ, ոսկէ երգեհոն եւ սրանց միջեւ մի բարձր խաչ, նոյնպէս ոսկէ ընդելուզուած թանկագին քարերով: Երբ կայսրը կոխեց ամբիոնը, ժողովրդականները երգեցին «միայն սուրբ»:

Քաղաքի բնակչութեան կողմից կայսրին նուէր տուին զոյգ ոսկէ բազկանոցներ, որից յետոյ խօսել սկսեց ամբիոնից ինքը կայսրը, պատմելով եւ նկարագրելով իր յաղթութիւնը[1]:

Հանդէսը այն յաղթութեան առթիւ էր, որ տեղի էր ունեցել Թէոփիլի առաջին տարիները 831-32ին, հաւանօրէն, Կիլիկիայի ճակատում:

Նոյն հանդէսները կրկնուեցին մի քանի տարի յետոյ, 837 թուին, մի նոր յաղթութեան առիթով, որ տարել էր Թէոփիլը դարձեալ արեւելեան ճակատում: Վարդ կեսարի մասնակցութիւնը հանդէսին վերաբերում է այս թուին:

Արշաւանքի դրդիչը փախստական Նասրն էր: Աղանդաւորական շարժումը իր վճռական փուլի մէջ էր եւ կլանել էր Արաբների ուշադրութիւնը: Կայսրը յարմար դատեց խաղալ դէպի արեւելք եւ ասպատակել թշնամու անպաշտպան սահմանները եւ այնու օգնել, թերեւս, իր դաշնակից խռովարարներին: Արշաւանքի մասին շատ բան չգիտենք: Կայսերական զօրքերը աւերեցին Զապետրա եւ Սամոսատ քաղաքները: Վերջինս համբաւաւոր էր իր հարստութեամբ, եւ որպէս թէ ամիրապետի հայրենիքն էր[2]:

Ուրիշ վկայութեամբ, մի քանի քաղաքներ գրաւեցին, երկուսը բոլորովին աւերեցին, իսկ Սոզոպետրա կամ Զապետրա, պաշարեցին, որը իբրեւ թէ ամիրապետի հայրենիքն էր[3]:

Ոչ Սամոսատը եւ ոչ Զապետրան ոչ մի նկատումով հայրենիք չեն կարող նկատուել ամիրապետի համար:

Հայ մատենագրութիւնը պահել է կարեւոր տեղեկութիւն նոյն այս արշաւանքի վերաբերեալ: Թէոփիլի օրով «եղեւ գալուստ հոռոմդիերոյն ի գաւառն Բասեան եւ զբազումս խողխողեցին սրով ի վերայ յարուցեալ գեղաքաղաքին Գոմաձորոյ: Իսկ Թէո(վ)փիլոս գնաց ի Խաղտիս եւ ել ի

1 De Cerimoniis, I, 503-505.
2 Georg, 798.
3 Theoph. Cont., 127.

ցամաք-կամուրջ և գերեաց զրաղումս ի հայոց հանդերձ ընտանեօք իւրեանց. եւ տուեալ զհիւպատաւորութեան պատիւն, այսինքն ապուհիւպատ պատրկութեան Աչոտոյ որդւոյ Շապհւոյ եւ թողու ի Սպեր գաւառի: Եւ ինքն առեալ հարկս ի Թէոդուպոլսեցեաց դարձաւ անդրէն: Եւ ապա եկեալ հոռոմդի արանցն ի Վանանդ ի գիւղն Կաճկաբար կոտորեցան ի ձեռն Սահակայ որդւոյ Իսմայէլի: Եւ ի նոյն ամի եմուտ Թէոփիլոս յԱսորիս եւ էառ զքաղաքն Ուրբելի եւ պատերազմեցաւ ընդ տաճկաց յԱլմուլատ եւ յաղթեաց: Սա ի խաղալն իւրում յարեւելս կոյս ի սահմանս հայոց առնու զԾմու բերդն հայոց, զԱսաղին, եւ զՄեծկերտ եւ զԱլբերդ ի գաւառին Գեղամայ եւ զԽողան եւ զՁորրորդ Հայս անապատ առնէ ի մարդոյ եւ յանասնոյ»[1]:

Ամբողջ հատուածը բաւական մութ է: Հոռոմդիեր կամ հոռոմդի արանց սուղ ձեւն է ռամիկ հոռոմ դեհ, դեհ-եր, բառի, որ նշանակում է հոռոմ կողմ:

Այս բառը յաճախակի պատահում ենք Շապուհ Բագրատունու անունով հրատարակուած գործի մէջ: Սա Շապուհի կորսուած երկը չէ, այլ նրա հետեւութեամբ կազմուած պատմութիւն է Արծրունեան միջավայրից: Հոռոմդի բառը բնորոշ է Շապուհի գեղջուկ լեզուի համար եւ տեղիք է տալիս կարծելու որ մեր հատուածը քաղուած է Շապուհից: Նոյն գլխի մէջ Ասողիկը Դաւթի թագի պատմութեան առթիւ յիշում է Շապուհին եւ անուանում է նրան «որդի Աչոտոյ Անթիպատրիկի», սոուղիւ «անթի(պատ)պատրիկի»:

Մի քանի էջ յետոյ, մեզ զբաղեցնող հատուածում, նոյն պատմագիրը Շապուհի հօր Աչոտի ստացած պատիւը, հիւպատաւորութիւնը, բացատրում է որպէս «ապուհիւպատ պատրկութիւն», փոխանակ «անթիպատ պատրկութեան»:

Պէտք է կարծել որ հատուածը մի աղբիւրից չէ առնուած: Տարբեր աղբիւրների նշան է եւ այն, որ Թէոփիլի մասին ասուած է «գնաց ի Խաղտիս» (փոխ. եկն), մինչ միւս մասերում՝ «եղեւ գալուստ» հոռոմդիերոյն կամ եկեալ հոռոմդի արանց»:

Հատուածը թւում է թէ խօսում է երկու արշաւանքի մասին: Հոռոմները եկան Բասեան եւ Թէոփիլը գնաց (արդեօք Բասենի՞ց, որով հասկանալի կը դառնար «գնաց»ը) Խաղտիք, Աչոտին թողեց Սպեր, հարկ առնելով Կարինցիներից դարձաւ մայրաքաղաք: Երկրորդ անգամ Հոռոմները

1 Ասողիկ, էջ 144:

եկան Վանանդ եւ պարտութիւն կրեցին, իսկ Թէոփիլը արշաւեց Զորրորդ Հայք:

Սակայն, ուրիշ հաւաստի տեղեկութիւն ունինք, որ Զորրորդ Հայքի աւերումը եւ Կարինի հարկապահանջը միաժամանակ եղաւ: Այսպէս, 1148 սելեւկեան տարին որ է 836-837 թիւը, Թէոփիլ արշաւեց եւ աւերեց Զապետրա քաղաքը, Հանձիթ, Արշամուշատ եւ մարդ ուղարկեց Հայաստան հարկ ժողովելու[1]:

Մեր հատուածի վերջին մասը վերաբերում է ճիշտ այս արշաւին: Ուրբելի երեւում է տեղական անունն է այն քաղաքի որ Բիւզանդացիք կոչում էին Զապետրա, աւելի լրիւ ձեւով, Սոզոպետրա: Ալմուլատ կարդալու է Աշմուշատ, Ասաղին՝ Պաղին եւ Ալբերդ հաւանօրէն թերի ընթերցումն է Ա(նդ)զբերդ նշանաւոր ամրութեան, ինչպէս եւ ի գաւառին Գեղամայ պէտք է կարդալ, թերեւս, Անգեղայ:

Այստեղից էր որ կայսրը «գնաց» Խաղտիք, երբ Կարինցիներից հարկ պահանջեց եւ Աչոտին նշանակեց տէր Սպերի: Պարզւում է նաեւ որ Զապետրայի հետ յիշուած Սամոսատը իսկապէս Հանձիթի Արշամուշատն է եւ ոչ Կոմմուգենի Սամուսատը, ինչպէս չփոթել է յոյնը:

Ինչ վերաբերում է Բասենի եւ Վանանդի դէպքերին, դրանք պատկանում են մի ուրիշ արշաւանքի: Երեւում է Բասենից Հոռոմներն անցել էին Վանանդ եւ ջարդ կերել արաբ իշխան Սահակից: Սա Թիփլիսի տէրն էր, Շուայբ տանից, յաջորդել էր իր հօրեղբօր Ալիի: Ալի եւ աւագ եղբայրը Իսմայէլ Մամունի օրով էին: Իսահակը կամ Սահակը որ Իսմայէլի որդին էր Մուտասիմի ժամանակակից էր: Սա թւում է թէ հետզհետէ յառաջացել էր դէպի արեւմուտք, կայսրութեան սահմանակից հողերը: Վանանդը հասկանալի էր, ուստի եւ կայսերական զօրքերը պատուէր էին ստացել յետ մղելու յաւակնոտ արաբ իշխանին, բայց յաջողութիւն չունեցան:

Արդեօ՞ք այս ընդհարումները կապ չունին Աբխազեան արշաւանքի հետ, որի մասին խօսում են պատմագիրները: Երկու պատերազմ է յիշատակւում Աբխազիայի դէմ, մի անգամ Վարդի եւ Թէոփոբի հրամանատարութեամբ եւ միւս անգամ՝ Թէոկտիստ ներքինու: Վերջինս տեղի ունեցաւ Թէոփիլի մահից յետոյ, նրա կնոջ Թէոդորայի կառավարութեան առաջին տարին: Իսկ նախորդ արշաւանքի ժամանակը խնդրական է: Թէոփիլի առաջին տարին բիւզանդական նաւատորմը պարտուեց Թասոս կղզում Արաբների դէմ կռուելիս:

1 Michel le Syrien, III, 88-89.

Այս դէպքից անմիջապէս յետոյ յիշատակւում է Վարդի եւ Թէոփոբի արշաւանքը դէպի Աբխազները, ուստի եւ կարծում են որ արշաւանքը տեղի է ունեցել նոյնպէս Թէոփիլի առաջին տարին, 830 թուին:

Պատմագիրը, պէտք է նկատել, յոռետես է Թէոփիլի թագաւորութեան վերաբերմամբ: Յոռետեսութիւնը միտումնաւոր է, կանխակալ: Թէոփիլը պատկերամարտ էր, ուրեմն ամբարիշտ, իսկ ամբարիշտն անարժան է յաջողութեան: Աբխազեան արշաւանքը յիշելուց յետոյ աւելացնում է, որ բնութիւնն անդամ փոխուել էր Թէոփիլի թագաւորութեան ժամանակ, անսովոր չորութեան հետեւում էին հեղեղներ, անպակաս էին սովն ու կարօտութիւնը եւ անդամ երկրաշարժը[1]:

Ասել է թէ Վարդի եւ Թէոփոբի պարտութիւնը եւս արդիւնք էր բնութեան աղետաբեր խաղերի:

Սելեւկեան 1151 թ. = 839 թ. իսկապէս մեծ երկրաշարժ տեղի ունեցաւ Կարինի շրջանում[2]: Եթէ յոյն հեղինակի ակնարկը վերաբերում է այս երկրաշարժին, ապա Աբխազիայի արշաւանքը տեղափոխելու է երկրաշարժի տարին, 839 թիւը: Հաւանական է որ այս արշաւանքը նոյնն է, ինչ որ յիշում է Ասողիկը թէ կայսերական զօրքերը պարտութիւն կրեցին Վանանդում Սահակ Իսմայէլացու կողմից: Կարծես թէ աւելի հիմք կայ Աբխազիայի առաջին արշաւանքը դնելու 839 թուին, քան 830, երբ Վարդը դեռ հրապարակ չէր իջած եւ ոչ էլ Թէոփոբը, որը, նոյն պատմագրի ասելով, Թէոփիլի ժամանակ էր անցել Արաբներից կայսեր կողմը:

Թէոփիլի 837ի արշաւանքը յաղթական էր: Այս առթիւ նորից կրկնուեցին, ինչպէս յիշեցինք վերեւ, այն հանդէսները, որ կատարուել էին առաջին յաղթութեան ժամանակ: Երեխաները դիմաւորեցին կայսեր, զարդարուած ծաղկէ պսակներով: Կրկէսում ձիարշաւին մասնակցեց ինքը կայսրը եւ այստեղ եւս յաղթեց: Ժողովուրդը ողջունում էր ցնծալից աղակներով, գոչելով. «բարեւ եկար, անյաղթելի ախոյեան»[3]:

Ուրախութիւնը երկար չտեւեց: Արաբները չէին կարող անպատասխան թողնել ասպատակութիւնները: Նոյն 837ին նրանք վերջ դրին Բաբիկի խռովութեան, բռնեցին հռչակաւոր ապստամբին եւ 838ի յունուար ամսին սպանեցին Բաղդադում: Խալիֆն այժմ ազատ էր և կարող էր մտածել վրէժ-

1 Theoph. Cont., 137.
2 Michel le Syrien, III, 95.
3 Georg, 798-799. De Cerimoniis, 507-508.

խնդրութեան մասին: Գարնանը մեծ զօրքով շարժուեց դէպի կայսերական հողերը, կէտ նպատակի ունենալով հասնել Ամորիա, կայսերական տան հայրենի քաղաքը: Զօրքի հրամատարներն էին երկու նշանաւոր զօրավարներ՝ Ափշին եւ Աշնաս: Սրանց հետ էին իշխանաց իշխանի (Բագարատի) եւ Վասպուրականի իշխանի (Աշոտի) զօրքերը[1]:

Առաջին մեծ ընդհարումը կայսերական զօրքերի հետ պատահեց Դազիմոնի մօտ (այժմեան Թոկատի շուրջը): Կայսրը պարտուեց եւ հազիւ ճողոպրեց չնորհիւ Մանուէլ զօրավարի (ըստ այլ տեղեկութեան Նասրի):

Արաբները անցան Անկիւրիա եւ այնտեղից սուրացին դէպի Ամորիա: Թէոփիլը փորձեց խաղաղութիւն կնքել, խոստանալով վերաշինել Զապետրան, դարձնել գերիներին և անդամ մատնել ասպատակութեան ղեկավարներին: Մուտասիմ ամիրապետը մերժեց եւ հրաման արձակեց բանակին շարժուել: Օգոստոսի սկզբին Ամորիա քաղաքն էլ արդէն պաշարուած էր:

Քաղաքի պաշտպանութիւնը յանձնուած էր Անատոլիկեան թեմի զօրավարին՝ Այետիոսին: Նրան օգնութեան ուղարկեց կայսրը Կոստանդին Բաբուցիկին վիգլա գնդի դրունդարին եւ Թէոդոր Կրատեր(ոս)ին, որ ներքինի էր եւ պրոտոսպաթար: Սա նախապէս ղրկուած էր պաշտպանելու Անկիւրա քաղաքը, բայց նախ քան տեղ հասնելը քաղաքը արդէն ընկել էր արաբների ձեռքը: Ենթադրւում է որ ինքը Բուկելլարեան թեմի զօրավարն էր այդ ժամանակ, քանի որ իրեն էր յանձնուած Անկիւրայի պաշտպանութիւնը, որ թեմի գլխաւոր քաղաքն էր: Չնայելով որ քաղաքը ապահովուած էր հարկաւոր զինական ոյժերով, բայց և այնպէս տասն եւ հինգօրեայ պաշարումից յետոյ ընկաւ թշնամու ձեռքը: Պատճառը վերագրւում է մատնութեան եւ յիշում են անդամ մատնիչների անունները եւ դաւաճանութեան պարագաները: Կարիք չկայ կանգ առնելու նրանց վրայ:

Յաղթողները վայրագաբար վարուեցին քաղաքի հետ: Բնակիչներին կոտորեցին, մի մասը միայն գերի առան, ամբողջ քաղաքը աւերեցին, կողոպտեցին: Զոհերի թիւը հասնում էր մինչեւ երեսուն հազարի, արաբների ասելով, իսկ իրենք բիւզանդացիք հաշւում էին եօթանասուն հազար:

Գերեալների թուումն էին քառասուն եւ երկու նշանաւոր զօրականներ, որոնք տարուեցին Սամառա, Բաղդադի մօտ, եւ բանտի մէջ մնացին գրեթէ եօթն տարի: Արաբների նպա-

1 Genes., 62. Theoph. Cont. 127.

տակն էր բարձր փրկանք ստանալ կայսրից գերիների ազատութեան համար, բայց տեսնելով որ մեծ բան չէր կարելի յուսալ կայսերական առատաձեռնութիւնից, հրամայեցին գլխատել բոլոր 42 նահատակներին յաջորդ ամիրապետի օրով 845 թուին, մարտի 6ին: Անունով յայտնի են միայն վեց հոգի՝ Թէոդոր Կրատեր, Կոստանդին Բաբուցիկ, Թէոփիլ, Բասոյ (կամ Վասոյ) Վաղող, Կալլիստ, Դուկ Փոքր Հայքի Կոլոնիա քաղաքի: Այետիոս զօրավարը գլխատուել էր աւելի կանուխ Ամորիայի առումից անմիջապէս յետոյ 224 հիջրի = 839 թուին[1]:

Կալլիստը, որ Մելլիսին յայտնի տոհմիցն էր եւ Կոլոնիայի (այժմ Կարա-Հիսար) տուրմարք կամ դուկ (դուքս), Ամորիայի գերիներից չէր իսկապէս, այլ իր պաշտօնատեղում մատնուել էր արաբ իշխանութեան տեղացի Պաւլիկեան աղանդաւորների կողմից եւ մարտիրոսացաւ 42 գերիների հետ մարտի 6ին:

Ամորիայի աղէտը ծանր էր Թէոփիլի եւ ընդհանրապէս քրիստոնեայ աշխարհի համար: Կատաղի թշնամուց վրէժ լուծելու այլ միջոց չկար՝ եթէ ոչ դիմել արտաքին օգնութեան: Թէոփիլ պատգամաւորութիւն ուղարկեց Ֆրանսիա Լիւդովիկ Բարեպաշտի մօտ:

Ինչպէս յիշեցինք վերեւ, պատգամաւորն էր Թէոդոս Բաբուցիկ պատրիկը, եղբայր թէ որդի Կոստանդին Բաբուցիկի, որ այդ ժամանակ տակաւին տառապում էր արաբական բանտում: Թէոդոս արդէն համոզել էր Լիւդովիկին, երբ իր յանկարծահաս մահը ի չիք դարձրեց բոլոր աշխատանքը: Շուտով մեռաւ եւ Լիւդովիկը: Այնուհետեւ շատ չապրեց եւ Թէոփիլը. մի տարուց յետոյ յուսահատ մեռաւ 842 թուին յունուարի 20ին, թողնելով գահը իր կնոջ Թէոդորային եւ տակաւին մանուկ որդուն՝ Միքայէլին: Նոյն տարին մեռաւ նաեւ Մուտասիմ ամիրապետը:

Երկու հակառակորդների մահով դադարեց ժամանակաւորապէս և թշնամութիւնը երկու պետութիւնների միջեւ:

IX

Միքայէլը հազիւ երեք տարեկան էր, երբ հայրը, Թէոփիլը, մեռաւ: Մայրը, Թէոդորան էր նրա օրինական խնամակալը: Մահուան անկողնում Թէոփիլը կանչեց իր մօտ մեծամեծներին եւ պատուիրեց նրանց հաւատարմութեամբ ծառայել իր որդուն եւ կնոջը:

1 Վասիլեւ, «Բիւզանդիա եւ Արաբներ», I, 46 (ռուսերէն):

Ամորիայի 42 մարտիրոսների վկայաբանութիւններից մէկի մէջ, որը խմբագրուած է Սոփրոնիոս արքեպիսկոպոսի ձեռքով, ասուած է որ նահատակութիւնը կատարուեց Միքայէլի, Թէոդորայի եւ Թեկլայի թագաւորութեան ժամանակ[1]:

Թեկլան Թէոդորայի աւագ դուստրն էր: Ասել է թէ նա յայտարարուած է եղել գահաժառանգ: Նոյնը հաստատում են եւ այն դրամները, որոնց մի երեսին Թէոդորայի գլուխն է, իսկ միւս երեսին՝ Միքայէլի եւ Թեկլայի[2]:

Սակայն, իրական կառավարիչները ուրիշ անձինք էին, նշանակուած նոյն Թէոփիլի կողմից որպէս «հոգածուներ եւ խնամակալներ»: Դրանք էին Թէոկտիստ ներքինին, որ այդ ատեն պոստի լոգոթետ էր, Մանուէլ Մամիկոնեան հռչակաւոր զօրավարը, թագուհու հօրեղբայրը, այլ եւ Վարդ Մամիկոնեան, թագուհու եղբայրը[3]:

Թէոկտիստն այն անձն էր, որ նպաստել էր Միքայէլին սպանելու Լեւոն Ե-ին, եւ որպէս այդպիսին վայելել էր Միքայէլի եւ նրա որդու Թէոփիլի վստահութիւնը եւ այժմ կայսերական տան հաւատարիմ պաշտօնեայ էր համարւում եւ թագուհու ամուր նեցուկը: Մանուէլի և Վարդի աշխատակցութիւնը բացատրելու է ոչ միայն նրանով, որ թագուհու արենակիցներն էին, այլ եւ որ նշանաւոր դէմքեր էին իրենց անհատական կարողութեամբ:

Թէոփիլի խնդիրը՝ պաշտպանել իր որդուն եւ կնոջը ուղղուած էր իսկապէս երեք խնամակալներին: Անշուշտ, հեռատեսութիւն չէր նրա կողմից բաժանել իշխանութիւնը երեք անձի մէջ եւ փառատենչ մրցութեան ու հակառակութեան դուռ բանալ: Բիւզանդական արքունիքը այն միջավայրը չէր, ուր յարգուէր իրաւունքը եւ կամ պէսպէս հակումներն ու ձգտումները սովոր լինէին միաչափ ընթանալու: Ընդհարումը խնամակալների մէջ անխուսափելի էր:

Երբ Թէոփիլը փչեց իր վերջին շունչը, Մանուէլը, որի հեղինակութիւնը եւ դիրքը ընդգծելու համար պատմագիրը կոչում է պրոտոմագիստրոս, առաջին մագիստրոս, հաւաքեց ժողովուրդը եւ զօրքի հաւատարիմ եւ վստահելի գնդերը մեծ կրկէսը եւ դարձաւ նրանց մի ճառով, ուր յիշեցնելով իր

1 «Skazanie o 42 moutchenikakh», հրատարակուած ակադեմիկոս Նիկիտինի ձեռքով Պետերբուրգի Գիտութեանց Ակադեմիայի զրքերում, Zapiski Ak. Naouk, série VIII, t. VII, 2 (= 905), p. 52.

2 W. Wroth, Catalogue of the Imp. Byzantin Coins, I, XLII և II հատորի տախտակը:

3 Theoph. Cont., 148. ὑποστίστας καὶ ἐπίτροπος. Առաջին երկուսը յիշում են Գենեսիոսի մօտ, էջ 77, երրորդը աւելացնում է Theoph. Cont., 148.

մեծամեծ վաստակները, մշտական սէրն ու խնամքը եւ թէ ինչպէս ինքը միշտ զօրավիգ է եղած եւ երբեք չէ թերացած իր պարտականութեանց մէջ, ասաց, որ այժմ ժամանակ է որ նրանք էլ վկայեն իրենց երախտագիտութիւնը եւ վկայեն ոչ թէ խօսքով միայն հապա եւ գործով: Դրա համար մի բան է լոկ պահանջւում, չարունակեց ճառախօսը, որ ուխտեն հաւատարիմ մնալ կառավարութեան եւ հնազանդուեն նրա կարգադրութեանց-

Ամբոխը կարծում էր որ հռչակաւոր զօրավարը ուզում է դրաւել գահը, եւ պատրաստ էր ցնծութեամբ ողջունել նրա քայլը, երբ անսպասելի կերպով հնչեց նորա ձայնը, «կեցցեն Միքայէլ եւ Թէոդորա»:

Հիասթափումը ընդհանուր էր եւ տխուր: Ժողովուրդը ցրուեց գլխիկոր եւ յուսաբեկ[1]: Անմեկնելի էր թւում Մանուէլի վեհանձն շարժումը, եւ անհասկանալի թէ ինչպէս կարելի էր կամովին հրաժարուել մի փառքից, որի համար ուրիշները արիւն էին թափում եւ ոճիրներ գործում:

Ահա այսպիսի մի անձի վիճակուած էր լծուել աշխատանքի Թէոկտիստի հետ, որ Մանուէլի հակապատկերն էր: Ներքինի էր, ոչ մտաւոր կար ունէր եւ ոչ զինուորական շնորհք եւ բաւական խոհեմ չէր, որ զգար իր նուաստութեան չափը[2]:

Ներքինիներին յատուկ քսութիւնն ու խարդաւանքը Թէոկտիստի զէնք էր: Ուրիշ հնար չգիտէր պահելու իր դրանիկ բարձր դիրքը քան նենգել և զրպարտել վտանգաւոր մրցողներին: Թէոկտիստի ստորութեան առաջին զոհն եղաւ ինքը Մանուէլը: Դաւեր սարքեց, ստուեր ձգելու նրա հռչակի վրայ, կասկածի տակ առնելով նրա հաւատարմութիւնը: Մանուէլը ալեւորել էր ռազմական դաշտերում եւ ընդել չէր դրանամուտ գործունէութեան: Զգաց, որ խարդախութեան ճակատում լաւ զինուոր չէր, գերադասեց տեղի տալ: Թողեց պալատը, թողեց այնտեղ իրեն յատկացուած բնակարանը եւ քաշուեց իր մասնաւոր տունը Ասպարի աւազանի մօտ (այժմ Զուխուր Բոստան, Կեֆելէ կոչուած մզկիթի մօտ):

Մանուէլը չարունակեց վարել իր խնամակալական պաշտօնը, յաճախելով արքունիք ամեն անգամ երբ պահանջում էին պետական գործերը:

Թէոկտիստը արժանացաւ թագուհու անսահման վստահութեան: Դրութեան տէրն էր: Պատմութիւնը այնպիսի յիշատակներ չէր արձանագրել, որոնցով կարելի լինէր չափել

1 Genes., 77-78.
2 Theoph. Cont., 202.

ամենազօր ներքինու արժէքը: Ինչ որ յայտնի է, պատուաբեր չէ: Պատերազմական հմտութիւն չունէր, թէեւ ինքնավստահ էր: Սկզբի տարին պէտք էր զօրք ուղարկել Աբխազիա: Թէոկտիստը գլուխ անցաւ եւ չարաչար պարտուեց: Նաւատորմի մի մասը ջախջախուեց փոթորիկից, մի մասն էլ ափ նետուեց, եւ գլխովին ոչնչացաւ: Վատաբախտ զօրավարը դարձաւ ամօթահար եւ ձեռնունայն:

Պատմագիրը Թէոկտիստի յանցանքը մեղմացնելու համար պատրաստ է ձախորդութիւնը վերագրել արեւի կրկնակի խաւարման[1]: Սակայն խաւարումը տեղի է ունեցել 840 ապրիլի 15 եւ 841 հոկտեմբերի 18ին: Եթէ պատմագրի ակնարկը վերաբերում է այդ դէպքերին, ապա Աբխազիայի արշաւը կատարուած պէտք է լինի Թէոփիլի օրով եւ ոչ Թէոդորայի: Կարծես թէ խօսքը նոյն արշաւանքի մասին է, որը վերեւ յիշուեց որպէս Թէոփոբի եւ Վարդի գործ, և որը մենք տրամադիր էինք դնելու 841 թուին, երկրաշարժի տարին:

Անյաջողութեան դիպեց եւ միւս արշաւանքը, որը առաջնորդեց նոյն Թէոկտիստը դէպի Կրեակ կղզին: Արաբները կորզել էին այս կղզին եւ Թէոդորա կայսրուհին ուզում էր վերագրաւել: Թշնամին անպատրաստ էր դիմադրելու, բայց խորամանկութեան դիմեց, ստայօդ լուր տարածելով, որպէս թէ պալատական յեղաշրջում է կայացել եւ թագուհին, վտարելով իր որդուն, տալիս է գահը մի անձի, որի հետ մտադիր է ամուսնանալ: Թէոկտիստն անմիջապէս թռաւ մայրաքաղաք, ձգելով զօրքը իր բախտին: Անցքը տեղի ունեցաւ 843 թուին մարտ ամսին:

Այս դասը եւս անօգուտ անցաւ ներքինի զօրավարի համար, որ ձգտում էր անպատճառ փայլել զինուորական մարզում: Մելիտինի ամիրը յարձակուեց պետական հողերի վրայ: Թէոկտիստը վերստին դաշտ նետուեց: Տաւրոսի լանջերին, Կեսարիայից հիւսիս, Մաւրոպոտամոն (Սեւ Զուր) կոչուած վայրում զարկուեց թշնամու հետ արիւնահեղ մարտում, պարտութիւն կրեց, վեհերոտութեամբ փախաւ մայրաքաղաք, թողնելով 40 հազարանոց բանակը սոսկալի վտանգի մէջ: Զօրքի մի մասը անցաւ թշնամու կողմը եւ ընդունեց իսլամ: Զօրավարներից մէկը, Թէոփան Փարպանցի, նմանապէս դաւաճանեց, թէեւ հետագայում փախաւ Արաբներից եւ մտաւ նորից կայսերական ծառայութեան մէջ: Թէոփանը թշնամացաւ Թէոկտիստի հետ եւ այս թշնամութիւնը, ինչպէս կը տեսնենք, անհետեւանք չմնաց:

1 Theoph. Cont., 203.

Թէոկտիստը, այդ ապիկար զօրավարը, կարողացաւ յանցանքը բարդել ուրիշների վրայ եւ մի անգամ եւս արդարանալ թագուհու առաջ: Քաւութեան նոխազ դարձաւ Վարդը, Թէոդորայի հարազատ եղբայրը: Թէոկտիստը չքաշուեց գործը այնպէս ներկայացնել կայսրուհուն, որպէս թէ Վարդի սադրանքով է որ զօրքերը կրունկ են դարձրել և ցրուել[1]: Եւ կան պատմաբաններ, որ հնարաւոր են գտնում հաւատ ընծայել այս հրէշաւոր ամբաստանութեան: Թէոկտիստը ոչ միայն համոզեց կայսրուհուն, այլև յաջողեց հրաման հանել, որ Վարդը անմիջապէս հեռանայ քաղաքից: Վարդը քաշուեց արուարձաններից մէկը եւ այնտեղ հաստատուեց, հեռու արքունիքից: Այսպիսով նա եւս մատնուեց չնորհազուրկ վիճակի, ինչպէս իր հօրեղբայր Մանուէլը:

Վատամարդ ներքինին նենգ եւ պատիր միջոցներով ամրապնդեց իր դիրքը պալատում եւ առաւել եւս հաճոյացաւ թագուհուն: Վտանգաւոր հակառակորդներին հեռացնելուց յետոյ, պետական առաջին դէմքը դարձաւ, միահեծան տէր չնորհիւ իր հլութեան եւ կայսրուհու կոյր վստահութեան:

Մի մեծութիւն, որ ձեռք է բերւում միջոցների անխտրութեամբ, կայուն չէ և պատճառած երջանկութիւնը՝ կարճատեւ: Որքան բարձրանում էր Թէոկտիստը, այնքան սաստկանում էր նրա չուրջը ատելութիւնը: Որպէսզի իր անձը զերծ պահէ սպառնացող փորձանքներից, արտօնութիւն ստացաւ Թէոդորայից յատուկ տուն չինել Ափսիդ կոչուած տեղում, առընթեր կայսերական ապարանքին: Շէնքը պարզապափակ պարտէզի մէջ էր, բաղանիքով եւ ուրիշ յարմարութիւններով: Երկաթէ մեծ դուռը կապում էր անմիջապէս կից Դափնէ պալատի հետ, որ մեծ ապարանքի մերձաւոր բաժինն էր: Բացի դրանից դրան հսկողութիւնը յանձնուած էր պալատական պահնորդին կամ ինչպէս կոչում էին պապիասին (այսինքն հայրիկին), առաւել ապահովութեան համար[2]:

Ուր չկայ բարոյական հեղինակութիւն, նիւթական պատնէշները անզօր են սաստելու:

Թէոկտիստը պոստի լոգոթետ էր, որ համազօր էր գրեթէ արդի ներքին գործոց մինիստրութեան: Թէոփիլի թագաւորութեան սկզբում այս պաշտօնը գտնւում էր Միրոնի ձեռքին, որ թագուհու կրտսեր եղբօր, Պետրոնի, անունն էր: Նոյն թագաւորի վերջին տարին Թէոկտիստն արդէն ստանձնել էր լոգոթետութիւնը[1]: Նա էր այն լոգոթետը, որ խատն էր Թէոփոբի սպանութեան[2]:

Թւում է որ Միրոնը եւս զոհ է եղել խարդախ ներքինու մեքենայութեան, որի հետեւանքով տիրացել է նրա պաշտօնին: Թերեւս այս է պատճառը, որ Միրոնի փեսան, Պետրոնը, չի երեւում հրապարակի վրայ Թէոկտիստի իշխանութեան ժամանակ: Մինչեւ Թէոփիլի օրով կարեւոր դիրք ունէր եւ պաշտօն որպէս վիգլի դրունգար: Թէ որքան յարգի էր այդ պաշտօնը, կարելի է դատել այնու, որ նրանից յետոյ նոյն պաշտօնում տեսնում ենք Կոստանդին Բաբուցիկին, որ պատրիկ էր եւ թագուհու քեռայրը: Միմիայն Թէոկտիստի անկումից յետոյ է որ Պետրոնը նորից ասպարէզ ելաւ անգործութիւնից եւ հռչակուեց որպէս տաղանդաւոր զօրական:

Տեսանք, որ Պետրոնի եղբայրը, Վարդը, նոյնպէս հալածուեց պալատից Թէոկտիստի ջանքով 843 թուին: Այս նշանաւոր մարդու անունը պէտք է վերջապէս մաքրել այն սեւ գծերից, որոնցով բծաւորել են նրա յիշատակը հակառակ բանակի պատմագիրները: Թէոկտիստը յաղթուեց պատերազմում, մեղաւորը Վարդն է: Թէոկտիստը գժտուեց Մանուէլի հետ, յանցանքը դարձեալ Վարդի վրայ է ծանրանում: Տակաւին Թէոփիլի օրով որպէս թէ Վարդը մեղանչել է, ո՞ւր եւ ինչպէս, յայտնի չէ եւ սրա համար ծեծ էր կերել կայսրից[3]:

Ամեն ատիւ պատրաստ են չարաբանելու այն մարդուն, որի տասնամեայ կառավարութիւնը հանդիսանում է ամենափայլուն եւ ամենալուսաւոր չերտերից մէկը բիւզանդական պատմութեան մէջ:

Կայսրուհու քոյրերը եւս խրախուսուած չէին, նման եղբայրներին: Սոփիայի ամուսինը, Կոստանդին Բաբուցիկ, նահատակուեց 845 թուին: Կալոմարիայի ամուսինը, Արշաւիր Պատրիկը, նոյնպէս մեռել էր, թողնելով երկու որդի, Ստեփան եւ Վարդ: Սրանք ասպարէզի վրայ չեն: Այրի Կալոմարիան ապրում էր քրոջ մօտ արքունիքում եւ իր անձը նուիրել էր ողորմածութեան: Ցաճախում էր բանտերը եւ մխիթարում էր խեղճերին ոչ միայն բարոյապէս, այլ եւ նիւթական օգնութիւն հասցնելով կարօտեալներին: Ժամանակակից Կարմիր խաչի անդրանիկ դաղափարաբանը հեռաւոր անցեալում եւ փաստացի հիմնադիրը պէտք է համարել

1 Georg, 814-815. Theoph. Cont., 203.
2 Ibid. 815-816

1 Theoph. Cont., 122.
2 Georg, 810.
3 Theoph. Cont., 168.

գեղանի Մարիային, Մամիկոնեան դշխոյի բարեսիրտ աղջկանը:

Կայսերական տան մերձաւորների զսպուած վիճակը վերադրելու է անչուշտ մեծազօր լոգոթետի քաղաքականութեան: Սակայն, սխալ կը լինէր կարծել որ այդ քաղաքականութեան դարբնողն ինքն էր միայնակ: Թագուհի Թէոդորան անմասն չէր: Մամիկոնեան զաւակ էր, ամբարհաւաճ և ինքնավստահ, սիրում էր իշխել և հրամայել: Անկախութեան եւ ինքնիշխանութեան տենչը սոխպել էր նրան թօթափել խնամակալների ճնշող լուծը: Երկու թէ երեք խնամակալներից Թէոկտիստոս ներքինին նուազ վտանգաւոր էր, և համակերպուող հաւատարիմ ապաստարի հրութեամբ: Մանուէլը եւ Վարդը, թէև ազդակից, երկիւղալի էին, որպէս ինքնուրոյն նկարագրի տէր եւ արդէն ազդեցիկ անձեր: Թէոկտիստի անձնուիրութիւնը կասկածից դուրս էր, այն անձնուիրութիւնը, որով ծառայել էր Ամորեան տան թագաւորներին, առանց զգալի յաւակնութեան: Նրա համար դժուար չէր համոզել Թէոդորային որ Մանուէլի և Վարդի նման կարող և համբաւաւոր դէմքերը վտահելի յենարաններ չեն գահի համար: Կայսրուհուն մնում էր ընտրութիւն անել իր ազգականների եւ Թէոկտիստի միջեւ: Նա գերադասեց ներքինուն:

Այս հարցը արդէն դրուած եւ վճռուած էր 843 թուին պատկերապաշտութեան վերականգնումով: Պատկերամարտ քաղաքականութիւնը, որ վերսկսել էր Լեւոն Հայը, եւ որին հետեւել էին Ամորեան կայսրները, լքեց Թէոդորան: Լոգոթետ Թէոկտիստը, չբնապատուած յոյն հոգեւորականութեամբ, յաջողեց 843ի յեղաշրջումը առանց դժուարութեան: Թեթեւ վարանումից յետոյ Թէոդորան զիջաւ Թէոկտիստին, հակառակ իր ամուսնու բռնած դիրքին եւ թողած աւանդին, որ նոյնն էր ինչ որ ընդունուած էր հայ շրջաններում: Հայադգի Յովհաննէս պատրիարքը զահընկեց եղաւ, հաւատարիմ մնալով իր համոզման: Թէոդորան երես դարձրեց իւրայիններից, յարեց Թէոկտիստի եւ յոյն շրջաններին, յուսալով նրանց միջոցով ապահովել իր դիրքը եւ գահը: Յոյն եկեղեցին, ի տրիտուր, սրբերի կարգը դասեց նրան եւ ցայժմ էլ ոնում է յիշատակը:

Ունկնդրելով հաւատարիմ ներքինու չչունչներին, այնուհետեւ Թէոդորան չեղոքացրեց Մանուէլին: Պատերազմական փոդերին ընդել մարդը չկարողացաւ տանել պալատական դաղտնի փսփսուքը եւ մի կողմ քաշուեց: Հերթը հասաւ Վարդին: Սա եւս մեկուսացաւ, բայց ոչ Մանուէլեան ներողամտութեամբ, այլ լի ցասումով ճակատ դնել այդ չար

ոգուն, ամենակար ներքինուն, նրան կործանելու համար: Վարդը աշխատեց մօտենալ մանուկ թագաժառանգին: Թէոդորայի եւ Թէոկտիստի համար եւս Միքայէլը մտահոգութեան նիւթ էր:

Գահի բուն տէրը աճել էր եւ արդէն թեւակոխել այն տարիքը, երբ գրագիցնում էին նրան որս, ձիարշաւ եւ կեանքի միւս զուարճութիւնները: Անգամ կարողացել էր սիրային կապեր հաստատել: Յափշտակութեան տարիքն դեղանի Եւդոկիան էր, Մարտինակ ընտանիքից, դուստր Ինդերի: Պատանի Միքայէլը կաշկանդուած էր բուռն սիրով: Եւդոկիան չքնաղագեղ էր եւ խելացի:

Թէոդորայի մեծագոյն հոգսն էր՝ պահել իր ձեռքին որդու զեկը եւ չթողնել որ ուրիշների ազդեցութեան տակ ընկնէր: Այլապէս կը վտանգուէր իր եւ իր մինիստրի, Թէոկտիստի, դրութիւնը: Պէտք էր ջանալ նախ խզել Միքայէլի կապը Եւդոկիայից, որը նրա կարծիքով պատշաճ ընկերուհի չէր թագաժառանգի համար եւ խորապէս տանջի էր թագուհուն եւ Թէոկտիստին իր անպարկեշտութեան պատճառով (ἀναιδεία անդգամութիւն) : Մայրը ուզի ոչ ցանկալի հարս գտաւ որդու համար: Անունը նոյնպէս Եւդոկիա էր, դուստր ամն Դեկապոլիտ անձի: Պատկի հանդէսը կատարուեց Դափնէ պալատի Ս. Ստեփանոս եկեղեցում, հարսանեկան տարազատը պատրաստուած էր Մագնաւրա պալատում, ծերակուտական կոչունքը՝ 19 opng (accubitum) անուն դահլիճում:[1] Այս մանրամասնիքը ցոյց է տալիս որ պատմագիրը տրամադրել է վաւերական աղբիւր:

Ինչպէս երեւում է, Թէոդորան ընտրել էր իր հարսնացու Եւդոկիային նոյն եղանակով, ինչպէս ինքն էր ընտրուել: Պետութեան ամեն կողմերից դեղեցիկ աղջիկներ էր հաւաքել արքունիք եւ նրանց միջից ընտրել Եւդոկիային: Թեկնածուների թւում յիշւում են նաեւ երկու կապադովկիացի (իմա՛ Արմենեակեան թեմ) քոյրեր, մէկը ամուսնացաւ յետոյ Վարդի հետ, միւսը, Իրինէն, ընտրեց միանձնական կեանք մրոնելով Քրիսոբալանտ վանքը[2]:

Մայր թագուհու հաշիւները չարդարացան: Ամուսնութիւնը չանջատեց Միքայէլին «անպարկեշտ» Եւդոկիայից: Թէոդորան հեռատես էր եւ իր նախազգացումը ճշմարիտ: Եւդոկիան խելքը գլխին աղջիկ էր, գիտէր ինչ էր անում: Ի զուր չէր Թէոդորայի վրդովը, «անպարկեշտ աղջիկը» չարագուշակ էր:

1 Leo Gram., 225-230. Georg. 816.
2 Vita Eirenes, Acta Sanctorum, 28 julii.

Միքայէլն արդէն գիտակցութեան էր հասել որ գահը պատկանում է իրեն, մինչդեռ իշխում էր մայրը եթէ ոչ Թէոկտիստը: Հիմք ունէր տրտնջալու: Ողոքել դեռատի արքային հնազանդութեան մէջ պահելու համար, մօր ջանքն էր: Այն ինչ թշնամիները չահագրգռուած էին քաջալերելու նրա ընդվզումը: Պայքարն այժմ Միքայէլի շուրջն էր:

Եթէ կար մէկը, որ «մտքի լծակով» կշռում էր մոմենտի ամբողջ կարևորութիւնը, դա Վարդն էր: Արդարեւ օրինական գահակալն էր միակ հաստատուն յենակէտը տապալելու ներքինի լոգոթետի գերիշխանութիւնը: Վարդը աշխատեց եւ յաջողեց մօտենալ Միքայէլին: Սրա սենեկապանն էր ոմն Դամիան(ոս), ազգով սլաւոն: Թւում է որ այս բնորոշիւնը անխորհուրդ չէ եւ ոչ պատահական: Սլաւոն անձնաւորութիւնը նկատուած է որպէս մի անթափանցիկ պատնէշ հայ ազդեցութիւնների հանդէպ: Վարդը սէր եւ բարեկամութիւն հաստատեց սենեկապանի (պարակիմոմենոս) հետ: Սա էլ բարեխօսեց Միքայէլի առաջ, որ թոյլ տրուի վերջապէս Վարդին վերադառնալ քաղաք: Ապա նուէրներ տալով թագաւորին չրջապատող անձերին նոյն Դամիանի ձեռնտուութեամբ յաջողեց մուտ գործել արքունիք Միքայէլի մօտ:

Վարդը մտերմացաւ նաեւ Միքայէլի առաջին հանդերձապահի (պրոտովեստիար) հետ, որ էր Թէոփան Փարզանը կամ Փարզանցին, մի կորիճ մարդ: Փարզանը — արդի Անդրկովկասեան Ֆերզան կոչուած երկիրն է: Եթէ լոկ մականուն չէ (ինչպէս Վարդան Թիւրքը), պէտք է կարծել որ Թէոփանը իրօք Ֆերզանցի թուրք կամ պարսիկ էր[1]: Ուշագրաւ է. թուրքը հանդերձապահ է կարգուած նոյն դիտաւորութեամբ ինչ որ սլաւոնը՝ սենեկապան:

Վարդը խորհուրդ արեց Դամիանի հետ եւ որոշեցին Թէոկտիստին մէջտեղից վերացնել: Դամիանը խօսեց Միքայէլի հետ, բացատրեց գործի նշանակութիւնը եւ նրա հաւանութիւնն առաւ: Վարդը սենեկապանի բերանով հասկացրեց պեռահաս թագաւորին, որ ցորժամ Թէոկտիստը թագուհու հետ է, ունայն պիտի լինի երազել իշխել կամ ինքնագլուխ լինել[2]: Պարզեց նրան, որ գահի օրինական ժառանգը միշտ հեռու պիտի պահուի իշխանութիւնից, քանի որ կենդանի է նենդամիտ լոգոթետը, այդ անարդ ներքինին, որ մտադիր է ամուսին գտնել Թէոդորայի կամ նրա դուստրներից մէկի համար եւ նրան յանձնել իշխանութիւնը:

1 Georg, 715 և 820.
2 Leo Gram., 226-236. Georg, 821-822

Միքայէլի սիրտը նեռի պէս խոցեց այս մերկացումը: Հրաման տուեց փութով գլուխ բերել դաւադրական գործը:

Վարդն ունէր եւ ուրիշ կուսակիցներ: Նախ իր քոյրը, այրի Կալո-մարիան, ապա իր փեսան, Սմբատը, երեւի, Բագրատունի իշխան, այլ եւ Մելիսեն տանից մի նախկին զօրավար: Սպանութեան ներկայ էր նաեւ Կոստանդին-Մանիակը: Թէոկտիստը սովորութիւն ունէր Արիոբենդի բաղանիքը դնալ, յետոյ մտնում էր դիւանատուն, առնում օրուան թղթերը եւ ուղղւում կայսրուհու ապարանքը զեկուցման համար:

Կայսերական պալատը, որ բաղկացած էր մի չարք ընդարձակ չէնքերից, գտնւում էր հիպոդրոմի կամ կրկէսի (այժմեան Աթ-մայդանի) կողքին արեւելեան կողմից: Թագուհին ապրում էր Քրիստորիկլինոն կամ ոսկեսրահ կոչուած բաժնում, որի մուտքը կամ դուռիթը կազմում էր հորոլոգիոնը, (այսինքն ժամատունը), ուր գտնւում էր արեւի ժամացոյց: Իսկ դուռիթը մտնում էին լաւսիակոն սրահից: Թէոկտիստը, ուրեմն, թագուհու մօտ գնալու համար պէտք է անցնէր լաւսիակոն սրահից հորոլոգիոն: Երբ նա մտաւ յիշեալ սրահը, տեսաւ դարմացմամբ որ Վարդը նստած էր այնտեղ: Կարծես թէ Միքայէլի մօտ էր գնում, կամ արդէն գնացել, դառնում էր տուն: Սաստիկ խռովեց, բայց ոչինչ չասաց, լուռ անցաւ խորհելով յայտնել թագուհուն եւ նրա հրամանով քշել այնտեղից անկոչ եւ կասկածելի այցելուին:

Կալո-մարիան վերնայարկ սենեակի լուսամուտից, որտեղից երեւում էր Միքայէլի բնակարանը նոյն Քրիստորիկլինի բաժնում, պայմանաւորուած նշանը արեց Միքայէլին թէ Թէոկտիստը դալիս է: Հազիւ ոտ դրաւ լոգոթետը հորոլոգիոն, նրա առաջ դուրս եկան Միքայէլը եւ Դամիանը, չթողին որ թագուհու մօտ գնայ եւ պահանջեցին որ հերթական զեկուցումը ներկայացնէ Միքայէլին: Ցիշենք, որ Թէոկտիստը ոչ միայն պոստի լոգոթետ էր, այլ եւ այսպէս կոչուած կանիկլիոնի պետն էր: Բառացի նշանակում է թանաքման կամ գրչման պահող, եւ իմաստով համազօր է դիւանապետի պաշտօնին: Թէոկտիստը կարդաց թղթերը տհաճութեամբ եւ բռնադատուեց չգնալ թագուհու մօտ, այլ յետ դառնալ: Դառնապէս վիրաւորուած, արցունքն աչքերին, քրթմնջալով ընկրկեց եւ մտաւ լաւսիական սրահը: Այդ միջոցին տեղից ցատկեց Վարդը, յարձակուեց Թէոկտիստի վրայ, սկսեց հարուածել երեսին եւ փետտել մազերը: Վիգլի դրունգարը, Մանիակը, միջամտել փորձեց, գոչելով, «մի

զարկիր լոգոթետին»: Դաւագիրները քարշեցին իրենց զոհին մօտիկ Սկիլա սրահը եւ անիծեալ խոլխոզեցին[1]:

Մի ուրիշ տեղեկութեամբ, երբ Թէոկտիստոս գնում էր զեկուցում տալու, լաւսիակոն սրահում Վարդը, որ նստած որպէս թէ հանգստանալու, յանկարծ, դարանամուտ առիւծի նման, նետուեց նրա վրայ: Իսկոյն օգնութեան վազեցին պաշտօնական զօրավարներ (ապոստրատեգոս): Կալո-մարիայի նշանի վրայ Միքայէլը ելաւ իր բնակարանից եւ հրամայեց սպանել Թէոկտիստին: Մինչ այն գետնաքարշ տարան լոգոթետին Սկիլա սրահը եւ փակեցին այնտեղ: Թէոդորա կայսրուհին, լսելով որ սիրելի մինիստրի կեանքը վտանգի մէջ է, եկաւ նրան փրկելու, բայց ի զուր ջանք: Պաշտօնական զօրավարներից մէկը, Մելիսսեն տոհմից, կանգնեցրեց թագուհուն գոչելով բարկացայտ, «յետ կա՛ց, քաշուիր սենեակդ, այսօր կուսանների օր է»:

Կոստանդին հայ իշխանը, մարդասիրութիւնից մղուած, պահեց Թէոկտիստին Սկիլայի մէջ փակուած եւ չթողեց որ ներս խուժեն զինուորները, որոնք սպասում էին կարգադրութեան հարեւան չէնքում: Կոստանդինը յոյս ունէր որ ընդհարումը կը լուծուէր Թէոկտիստի աքսորով եւ պէտք չէր լինի արիւն թափել տարտարոսում: Նոյն կարծիքին էր նաեւ Վարդը: Սակայն Միքայէլն ուրիշ խորհրդատուների ազդեցութեամբ աճապարեց սպանել տալ նախ քան թագուհին կը կարենար ազդուկ բարձրացնել: Անմիջապէս ներս թափուեցին զինուորները, որոնք տաւրիկեան սկիւթներ էին կամ խազարներ օտարական կոչուած գնդից ἑταιρεία: Հակառակ Կոստանդինի ջանքերին, որ պահում էր դուռը նրանց դէմ, ուրացին ներս, բռնեցին դժբախտ ներքինուն, որ թաղնուել էր սեղանի տակ, եւ սրահաբ արին[2]:

Կոստանդին բարեսիրտ իշխանը, որ ուզում էր մի կերպ դիւրացնել Թէոկտիստի վիճակը, նոյն դերումն էր ինչ որ վերոյիշեալ Մանիակը, ուրեմն միեւնոյն անձը: Դաւադրութեան մասնակից պաշտօնական զօրավարը Մելիսսեն տոհմից Վարդի մերձաւորներիցն էր եւ հաւանօրէն այն Փիլոթէոսն էր, որ դաւադրութիւնից յետոյ պրոտոսպաթար նշանակուեց, անշուշտ, ի տրիտուր իր աջակցութեան[3]: Նա մնաց հաւատարիմ Վարդին մինչեւ վերջը եւ յիշատակւում է վերջինիս սպանութեան ժամանակ որպէս նրա բարեկամ, πρωτοσπαθάριος:

1 Georg, 822.
2 Genes., 87-90.
3 Ibid., 91.
4 Georg, 830; Symeon, 678.

Մելիսսեն տոհմը խնամի էր Վարդի հետ: Սրա հօրեղբօր Մանուէլի դուստրը ամուսնացել էր ոմն Թէոփիլի հետ, նոյն Մելիսսեն տանից, մականունը Լիդիատէս[1]: Այսպիսով Փիլոթէի բարեկամութիւնը Վարդի հետ աւելի հասկանալի է դառնում:

Վարդի ոճիրը աւելի եւս ծանրացնելու նպատակով, նրան թշնամի պատմագիրները դիմում են Մանուէլի բարձր հեղինակութեան եւ նրա բերանով Սիբիլեան մի անէծք են տալիս Վարդին: Որպէս թէ Մանուէլ Թէոկտիստի սպանութեան առթիւ ասած լինի. «սուրդ մերկացրիր, Վարդ, պատում, պահիր վերադ մարմին կոտորելու համար»[2]:

Այս պլիթիական պատգամը կրկնում է մի ուրիշ պատմագիր աւելի պարզելով. «սուրդ մերկացրիր սպանելու Թէոկտիստին, պահիր վերադ ամենօրեայ սպանութեան համար»[3]:

Ակնարկը վերաբերում է Վարդի սպանութեան, որ եղաւ 866 թուին: Մանուէլ այդ ժամանակ արդէն մեռած էր եւ անտեղի է նրան վերագրել մի գուշակութիւն, որ այլ բան չէ քան յերիւրանք post eventum: Ցիշենք նաեւ որ հայ զօրավարը հիմք չունէր քնքոյշ սէր տածելու դէպի մի ներքինի, որի պատճառով հեռացել էր արքունիքից, եւ ոչ էլ մեծ կարծիք ունենալու նրա վարչական կամ պետական կարողութեան մասին:

Թէոկտիստի կորուստը զգալի էր միմիայն Թէոդորայի համար, որը համարում էր նրան իր իշխանութեան սիւնը: Գահազուրկ թագուհին ապրեց երկար եւ ականատես եղաւ որդու եւ եղբօր անկման եւ աղետալի վախճանին: Նրան եւս վերագրում են յետնեալ գուշակութիւն: Երբ լսեց սիրելի ներքինու մահը, Թէոդորան որպէս թէ վազեց հերարձակ իր ապարանքից դէպի սպանութեան տեղը, չկարողացաւ զսպել սրտի դառնութիւնն ու խորին վիշտը եւ նետեց որդու եւ եղբօր երեսին վիրաւորական խօսքեր, «անամօթ եւ ամբարիշտ դաղաններ» անուանելով նրանց: «Դո՛ւ, ապերախտ ծնունդ, ասաց իր որդուն, Թէոկտիստը քեզ համար երկրորդ հայր էր եւ բարիքի փոխարէն չարիք հատուցիր»: Իսկ «դո՛ւ, նախանձոտ եւ չարախինդ դեւ, դարձաւ իր եղբօրը, դու արատաւորեցիր իմ մաքուր եւ անբիծ իշխանութիւնս: Վերեւ Աստուած կայ, որ տեսնում է գործած ոճիրները եւ երկուսիդ համար էլ նոյն բռնի մահ է նախապատրաստում»:

1 Vita Nicolai, Migne, P. G., 105, col. 916.
2 Genes., 90.
3 Theoph. Cont., 171.

Լաց ու նզովք անօգուտ էին: Թագուհու խնամակալական իշխանութեան բախտը որոշուած էր ընդմիշտ: Միքայէլ եւ Վարդ անմիջապէս կանչեցին ծերակոյտը եւ նրա հաւանութեամբ յայտարարեցին որ Միքայէլն այսուհետեւ միահեծան ինքնակալ է:

Թէոկտիստի երկու պաշտօնից մէկը, կանիկլիոնի քարտուղարութիւնը, ստանձնեց Վարդը եւ միեւնոյն ժամանակ նշանակուեց սքոլների դոմեստիկ, այսինքն պալատական կրեւոր գնդի պետ: Թէոկտիստի միւս պաշտօնը, լոգոթետութիւնը, քիչ յետոյ տեսնում ենք Վարդի փեսայի, Սմբատի, ձեռքին: Պէտք է կարծել որ անմիջապէս յաջորդել էր Թէոկտիստին:

Թէոդորան չէր ուզում հաշտուել իրականութեան հետ: Շարունակում էր արտայայտել իր տնտունջն ու ցաւը: Միքայէլը սկզբում աշխատեց մխիթարել մօրը եւ ամոքել նրա վիշտը, բայց դահրնկեց իշխանուհու բարկութիւնը չէր նրատում եւ աւելի եւս սաստկանում էր որպէս «յորձանք ծովի»:

Կայսրը հարկադրուեց փոխել իր վարմունքը եւ սկսեց նախատել մօրը նոյնչափ, որչափ յառաջ ձեւանում էր սփոփիչ: Ապա կտրուկ միջոցի դիմեց, բաժանեց նրան իր աղջիկներից: Երեք աւագ դուստրներին, Թեկլա, Աննա եւ Անաստասիա, հանեց Կարիան կոչուած պալատից, որ իրենց հայր Թէոփիլ կայսրը չինել էր յատուկ նրանց բնակութեան համար մեծ պալատի շրջանում, և ուղարկեց համանուն մենաստանը Ոսկեղջուրի ափին Վլաքերնի եւ Դեքսոկրատ դրան (այժմ Այա-Կապու) միջեւ: Իսկ կրտսեր աղջկան Պուլքերիային թնակեցրեց իր տատի վանքում որ կոչւում էր Գաստրիա:

Թագուհի Թէոդորան առայժմ մնաց մեծ պալատում իր նախկին բնակարանում: Բայց շատ չանցած, սրան եւս հեռացրին Գաստրիա, ուր բերին և միւս աղջիկներին եւ հրամայեցին ընդունել վանական սքեմ:

Այս բռնութեան պատճառը որոնելու է Թագուհու անհանդիստ բնաւորութեան մէջ: Նա դեռ չէր հրաժարուել իր կորցրած դիրքը վերականգնելու ունայն յոյսերից: Բաւականին վճռական էր դաւեր նիւթելու համար, թէեւ ժամանակակից պատմագիրը վճռականութիւն չէ տեսնում, այլ լրջմտութեան պակասութիւն այն վտանգաւոր փորձում, որին խիզախեց Թագուհին: Տակաւին պալատում, եթէ ոչ վանք քաշուելուց յետոյ, Թէոդորա մտածեց դաւադրութիւն կազմել Վարդի կեանքի դէմ: Կարողացաւ կուսակիցներ գտնել նոյնիսկ կայսրի մօտիկ շրջապատում: Իր կողմը ձգեց ախոռապետին (պրոտոստրատոր): Վարդը քաղաքի արուարձանում կալուած ունէր Կոսմիդիա կոչուած: Դաւադիրները վճռել էին յարձակուել նրա վրայ կալուածից քաղաք գալուս եւ սպանել: Սակայն, դաւադրութիւնը բացուեց նախ քան գործի անցնելը եւ յանցաւորները զլխատուեցին հրապարակաւ մեծ կրկէսում: Սպանուեց նաեւ ախոռապետը: Սրա տեղն անցաւ Վասիլ Մակեդոնացի Հայր, այն անձը, որին վիճակուած էր կործանել Վարդին եւ հիմը դնել կայսերական նոր հարստութեան: Վարդը արժանացաւ կիւրապաղատութեան մեծ պատուին[1]:

Պատմում են որ Թէոդորա սովորութիւն ունէր ստէպ այցելելու Վլաքերնի Ս. Աստուածածնի եկեղեցին, որ քաղաքի հիւսիս արեւմտեան ծայրումն էր: Մի օր այնտեղ գնալիս, Պետրոնը, Միքայէլի և Վարդի հրամանով, բռնեց նրան եւ աղջիկների հետ փակեց Կարիան պալատում: Քիչ յետոյ մեռաւ Թէոդորան եւ աղջիկների հետ տեղափոխեցին Գաստրի վանքը նաեւ նրա մարմինը, Վասիլ կայսեր կարգադրութեամբ[2]:

Այստեղ անճշտութիւններ կան: Խօսքը Կարիան պալատի մասին չէ, այլ համանուն վանքի, ինչպէս տեսանք վերեւ: Թագուհին փոխադրուեց իր մայրական Գաստրիա վանքը իր դուստրների հետ, երբ դեռ կենդանի էր, եւ ոչ թէ մեռնելուց յետոյ մարմինը տարան այնտեղ: Շուտ չմեռաւ, այլ ապրեց եւ տեսաւ իր որդու սպանութիւնը: Ինչ որ կարեւոր է այս պատմութեան մէջ, այդ Պետրոնի յիշատակութիւնն է, որից հետեւում է որ Թէոդորան չէր վայելում նաեւ իր այս եղբօր համակրանքը:

Թէոդորայի տապալման տարին բացորոշ չէ: Պատմական տեղեկութիւնները հակասական են եւ խառնաշփոթ: Հաստատ է որ Միքայէլը եւ նրա հետ Թէոդորան գահ բարձրացան 842 թուին յունուարի 20ին, երբ մեռաւ Թէոփիլը: Միքայէլը սպանուեց 867 թ. սեպտեմբերի 24ին[3]: Ասել է թէ Միքայէլը թագաւորեց 25 տարի եւ ութ ամիս: Ստոյգ է նաեւ որ 866 թուի մայիսի 26ից նրան թագակից դարձաւ Վասիլը եւ միասին իշխեցին մի տարի եւ չորս ամիս: Հետեւապէս Միքայէլը մօր հետ և միայնակ թագաւորեց 24 տարի և չորս ամիս: Բայց քանի տարի տեւեց մօր ընկերակցութիւնը կամ խնամակալութիւնը եւ երբ սկսուեց իր անկախութիւնը, այստեղ է որ սկսւում են աղաղակող տարաձայնութիւնները:

1 Georg, 822-823; Symeon, 657-658.
2 Theoph. Cont., 174.
3 Ibid, 210.

Տրամադրելի վեց աղբիւրներից իւրաքանչիւրը իր սեփական հաշիւն ունի, որ անյարիր են միմեանց:

Հաշտեցնել այդ թուերը միմեանց հետ առանց բռնազբօսիկ ճիգերի դժուար է: Նոյնքան դիւրին է նկատել որ աղբիւրներից եւ ոչ մէկը գոհացուցիչ չէ: Արդարեւ, Թէոդորային եւ Միքայէլին զատ զատ տալիս են այնքան տարիներ, որ գումարը դերազանցում է երկուսի թագաւորութեան իսկական տեւողութիւնը:

Ուշադրաւ է որ վեցերորդ աղբիւրը յատկացնում է Թէոդորային 15 տարի եւ ութ ամիս, իսկ Միքայէլին 9 տարի, ուրեմն միասին 24 տարի եւ ութ ամիս: Գումարը չի համապատասխանում ո՛չ Թէոդորայի եւ Միքայէլի տարիներին որ է 24 տարի եւ 4 ամիս, եւ ո՛չ իսկ Միքայէլի ամբողջ թագաւորութեան, այսինքն Վասիլի մէկ տարի եւ 4 ամիս ընկերութիւնը եւս հաշուած, որ կազմում է 25 տարի և 8 ամիս: Մի դէպքում աւելի է չորս ամիս, միւս դէպքում պակաս մի տարի:

Ամեն պարագային կարեւոր է 15 տարի եւ 8 ամիս թիւը, փոխանակ 14 տարի 1 ամիս եւ 22 օրուան: Իրաւամբ ենթադրւում է որ այստեղ հաշուի է առնուած նաեւ այն ժամանակը, որ Թէոդորան մնացել էր պալատում, Թէոկտիստի սպանութիւնից յետոյ, մինչեւ որ քաշուեց Գաստրիա մենաստանը: Երկու թուերի տարբերութիւնը մօտ մէկ ու կէս տարի է: Հետեւապէս թագուհին 856 թ. մարտի 12ից յետոյ չարունակել է ապրել պալատում եւս մէկ ու կէս տարի, մինչեւ 857 թուի սեպտեմբերի 12:

Ժամանակակից պատրիարքը, Իգնատիոսը, Հռոմայ պապ Նիկողայոսին ուղղած գրութեան մէջ հաղորդում է, որ Միքայէլը Վարդի դրդմամբ հրամայեց խուզել Թէոդորայի եւ դուստրների մազը, բայց ինքը բացէ ի բաց մերժեց, տեսնելով որ թագուհին եւ իր դուստրները ցանկութիւն չունէին կրօնաւորական կեանքի և լոկ մի բռնութիւն էր որ գործում էր նրանց վրայ: Պատրիարքը աւելացնում է որ այս իսկ պատճառով իրեն եւս քշեցին աթոռից[1]:

Արդ պատրիարքին հեռացրին 858 թուին նոյեմբերի 23-ին, որով եւ թագուհու մազ կտրելու հարցը ընկնում է նոյն ժամանակները: Այստեղից հետեւցնում են որ Թէոդորան թողած պիտի լինի պալատը ոչ թէ 857 թուին, այլ 858ին մինչեւ նոյեմբերի 23: Ուրիշ խօսքով, 15 տարի 8 ամիսը սըրբագրւում է 16 տարի եւ 8 ամիս եւ ուրեմն պակաս տարին լրանում է[1]:

1 Migne, P. G., 105, col. 857.

Հաւանական կարծիք է: Սակայն ապացոյց չունինք որ պալատից արտաքսուելը եւ կրօնաւորելու բռնութիւնը կատարուած լինի միաժամանակ: Հնարաւոր է որ միմեանցից անջատ վայրկեաններ են: Թէոդորային նախ բնակեցնում են Գաստրիա, ուր բերւում են Կաբիան վանքից երեք դուստրներն եւս, եւ բոլորը մի տարուց յետոյ բռնադատւում են հագնել վանականի սքեմ: Այս դէպքում պակասորդ տարին աւելցնելու է Միքայէլի թագաւորութեան թուին, ինն ուղղելով տասն:

Իսկապէս Թէոկտիստի սպանութեամբ է որ վերջ դրուեց Թէոդորայի կառավարութեան: Պալատից վտարումը եւ կամ կրօնաւորելը երկրորդական պարագաներ են: Յուսահատ թագուհին ապրեց այնուհետեւ դեռ երկար տարիներ անզօր հանդիսատեսի համեստ դերում եւ անհաղորդ քաղաքական եռուզեռին:

X

Ի՞նչ է Թէոդորայի պատմական կշիռը:

Վերյիշենք որ նա կայսերական տուներ մտաւ 821 թ.: Այդ օրուանից պետական եւ քաղաքական կեանքին հետեւելու հնարաւորութեան մէջ էր, մանաւանդ որ իր ամուսինը, Թէոփիլը, թագակից էր հօրը նոյն 821 թուից սկսեալ: Զինուորական առաջնակարգ ընտանիքից էր: Մամիկոնեան արիւն ունէր եւ զուրկ չէր տոհմական գծերից: Ինքնուրոյն շարժուածքը, խիզախ ու հրամայական ոգին եւ իշխելու տենչը, յատկութիւններ որ միայն ուռճանալ կարող էին նրա ամբասիր գեղեցկութեան հովանու տակ: Կանացի արտակարգ հմայքը, կնոջ այդ տիրական զէնքը, մնաց ընտանեկան սրբութեան չրջանում եւ հրապարակ չհանուեց փառասիրական եւ քաղաքական նպատակների սպասարկութեան համար: Թէոդորան առաքինի էր եւ այն ժողովրդական մեծ համբաւը, որ վայելում էր, պարտական էր իր մաքրութեան: Թէոփիլը որ ի քնէ հակում ունէր զեխութեան եւ չուայտութեան, սեղմուեց վայելչութեան սահմանների մէջ չնորհիւ իր ամուսնու սրբակեցութեան:

Պատմում են, որ մի անգամ միայն Թէոփիլը թուլութիւն ունեցաւ սայթաքելու գգաստութեան ուղիից եւ մեղ-

1 Bury, History of the Eastern Roman Empire, App. VII.

սասէր կապ հաստատեց իր կնոջ նաժիշտներից մէկի հետ, յափշտակուած նրա սքանչելի գեղով: Վշտի եւ նախատինքի ամպերը նստեցին վիրաւորուած թագուհու դէմքին եւ զղջման բերին անառակ ամուսնուն: Դաւաճանը ստիպուած էր խոնարհել եւ թողութիւն խնդրել նրա տխրամած եւ վհատ պատկերի առաջ[1]:

Թէոդորան անպայման ազդեցութիւն ունէր իր մարդու վրայ եւ անմասն չէր նրա գործունէութեան: Մի բնորոշ դէպք է յիշւում որպէս թէ ի փառաբանութիւն Թէոփիլի, բայց էապէս Թէոդորան է, որ արժանի է գովքի: Մեծ պալատի ծովահայեաց պատին յենուած մի վայր կար, ուր յառաջ աւազան է եղել, բայց այն օրից երբ թագաւորի մանուկը խեղդուել է այնտեղ (խօսքը Թէոփիլի եւ Թէոդորայի անդրանիկ երեխայի, Կոստանդինի, մասին է), աւազանը ոչնչացրել էին եւ նրա տեղը չինել բարձրադիր մի պարտէզ առանձին պատշգամով: Այստեղից մի հրաշալի տեսարան էր բացւում դէպի քաղաքի շրջակայքը եւ ծովը, ուր յաճախ զբօսնում էր կայսրը ախորժանքով: Մի անգամ երբ Թէոփիլը զբօսնում էր այնտեղ, կամ ինչպէս ասողներ կան, ընթրում էր, նկատեց մի փարթամ նաւ, ծանրաբեռնուած, բարձրաբերձ կայմերով, որ ջրի վրայ սուրալով արագօրէն փոեց իր մեծութեան լայն ստուերը նաւահանգստի վրայ: Կայսրը զարմացաւ, որովհետեւ նաւահանգիստը պալատական Բուկոլիոնն էր, եւ հետաքրքրուեց իմանալ, ո՞ւմ էր պատկանում այն հարուստ նաւը: Ասացին, որ նրա տէրը ոչ այլ ոք է եթէ ոչ ինքը կայսրուհին: Թէոփիլը խռովեց, բայց սքօղեց իր վրդովմունքը, սպասեց մինչեւ այն օրը, երբ սովորութիւն ունէր շրջելով գնալ մինչեւ Վլաքերն եւ ամեն ոք կարող էր մօտենալ եւ իր ցաւը յայտնել երկրի տիրոջ: Երբ հասաւ օրը, կայսրը շեղեց իր ուղին դէպի Բոսպոր (Վոսփոր), ուր կանգնած էր նաւը եւ բարձրացաւ մտաւ նաւը, անցաւ ցռուկը եւ դառնալով իրեն ուղեկից ծերակուտականներին հարցրեց թէ նրանցից ով պէտք ունի գինու, հացի թէ այլ մթերքի: Երկիւղածօրէն պատասխանեցին թէ իրենք ոչ մի բանի կարօտութիւն չեն զգում, յորմէ հետէ գահի վրայ է կայսրը: Թէոփիլը ստիպուած էր պարզել իր միտքը. «մի՞թէ չգիտէք, որ ես, աստուածընտիր կայսրս, դարձել եմ նաւատէր շնորհիւ կնոջս», եւ հառաչելով աւելացրեց՝ «ես հռոմէական կայսրս եւ կինս առեւտրով ենք զբաղած»:

Այսպէս խօսելուց յետոյ հրաման տուաւ կրակ դնել եւ

1 Theoph. Cont., 95.

այրել ամբողջապէս նաւը իր ապրանքներով հանդերձ: Միեւնոյն ժամանակ կշտամբեց թագուհուն եւ անգամ սպառնաց մահուան պատիժ տալ, եթէ երբեւէ ձեռնարկէ նման մի գործի[1]:

Պատմագիրներից մէկը վկայում է որ նաւի ապրանքը մեծաքանակ էր եւ շատ յարգի եւ խնդրելի չուկայում, բայց եւ այնպէս կայսրը չխնայեց ոչնչացնել բոլորը յանուն արքայական պատուասիրութեան, որի համար թանգ է այն հարստութիւնը որ ձեռք է բերւում խնամելով ժողովուրդը եւ ոչ թէ կլանելով[2]:

Այս խօսքերի իմաստն այն է թէ Թէոդորայի առեւտրական ձեռնարկը մի տեսակ կեղեքումն էր, երեւի, այն նկատումով որ դրանով նա, ինչպէս ասում են, ուրիշի հացն էր կտրում: Նեղմիտ հայեացք է եւ հաւանօրէն խորթ Թէոփիլին: Կայսրի դժգոհութեան պատճառն այն էր որ թագաւորական տանը վայել չէր համարում վաճառականութեամբ զբաղել:

Երկու տեսակէտն էլ անհիմն են եւ անզօր ուղղելու կայսրուհու հասցէին որեւէ պարսաւ: Քաղաքերիչ առեւտուրը անհատական ձեռնարկութեամբ եւ հարստացնելու պետական գանձարանը մի գովական ջանք է, որի դէմ գինուել կարող է միմիայն հնամենի նախապաշարմունքը: Արքայական կնոջ այս համարձակ քայլը, նախաձեռնող ոգին, բացառիկ երեւոյթ է այն ժամանակների համար եւ պերճախօս վկայական նրա մտաւոր կարողութեան: Ընչաքաղցութիւնը չէր որ մղեց նրան սեփական առեւտրական նաւ ունենալ: Թէոդորան խնայող էր եւ տնտես: Ելմտական աչալուրջ քաղաքականութեամբ կարողացաւ լցնել պետական գանձարանը, որ իր ամուսնու օրով գրեթէ դատարկուած էր: Թէոփիլի բազմաթիւ փառահեղ շէնքերը ամենազնիւ եւ թանգ նիւթերից կլանել էին հսկայական գումարներ:

Երբ Թէոդորան թողնելով գահը պիտի քաշուէր մենաստան, հարկաւոր դատեց, նախ քան պալատից հեռանալը, կանչել ծերակոյտը եւ գանձարանի հաշիւը ներկայացնել: Երեւաց որ թագուհին կարողացել է ամբարել բաւականին խոշոր գումար, 1090 կենդինար ոսկեդրամ եւ երեք կենդինար արծաթ[3]: Կենդինարը հարիւր լիտր է, իսկ լիտրը պարունակում է 72 դրամ (նոմիսմա), որով 1090 կենդինարը հաւասար է 7,848,000 դրամի, հաշուելով ոսկեդրամը կամ

1 Gen., 76-77; Theoph. Cont., 88.
2 Gen., 76.
3 Gen., 90; Theoph. Cont., 171-172.

նոմիսմա մերձ 12 ոսկէ ֆր. կը ստանանք 94,176,000 ֆր.: Այն ժամանակները ոսկին մօտ հինգ անգամ աւելի թանգ էր քան ներկայումս, ուստի եւ Թէոդորայի պահեստի գանձը գնահատելու է մերձաւորապէս 470 միլիոն ֆրանկ: Եթէ ի նկատի առնենք, որ պետական ընդհանուր մուտքը տարեկան 100 միլիոնի չուրջն էր, Թէոդորայի խնայողութիւնը պակաւելի էր եւ նախանձելի ժամանակակից ֆինանսիստների համար:

Պետական գանձարանի բաւարար վիճակը իրաւունք է տալիս ենթադրելու որ Թէոդորայի նաւի զրոյցը պատմական հիմ ունի եւ եթէ խսկութիւն չէ, գրական հաւատարիմ զօղանջ է այն ջանքերին, որոնցով Թագուհին խրախուսած պէտք է լինի ծովային առեւտուրը, դիտակցելով նրա կարեւորութիւնը պետական տնտեսութեան բարգաւաճման համար: Զրոյցս ցոյց է տալիս նաեւ որ Թէոդորան հետաքրքրւում էր պետական գործերով դեռ ամուսնու օրով եւ ուրեմն այն վայրկեանին, երբ տէրութեան բախտն իր ձեռքն անցաւ, անփորձ եւ համբակ ոմն չէր: Պատասխանատու էր իր օրով տիրական քաղաքականութեան:

Թէոդորայի գործունէութեան հաշուեկշիռը բարդ չէ: Փայլուն գործեր չկան հրապարակի վրայ: Արտաքին ճակատում պարծենալու հիմ չունէր: Թշնամուն չէր ըմբերանել կամ ծունկի բերել, թէեւ խոստովանելու է որ խաղաղութիւնը չէր վտանգուել տարապարտուց եւ ոչ պետութեան սահմաններն էին տուժել:

Ի՞նչ որ կազմում է Թագուհու փառապսակը, այդ իր եկեղեցական քաղաքականութիւնն է: Նա էր պատկերապաշտութեան ախոյեանը: Երեսուն տարուց հետէ անտեսած պատկերները նորէն եկան եւ շարուեցին պաշտամունքի սեղանի վրայ չնորհիւ Թագուհու: Հների ասելով, բարեպաշտութեան յաղթանակն էր, եւ Թէոդորան արժանի ամէն փառաբանութեան, արժանի սրբերի դասը Թառելու: Նոյնը երկրորդում են եւ նոր պատմագէտներից շատերը:

Սակայն, յայտնի է, որ հակառակ բանակը եւս գործում էր բարեպաշտութեան անունով: Զգացումը, որքան եւ յարդի, բաւական չէ պատկերների հանդոյցը քակելու եւ մեկնելու համար: Մեր նպատակից դուրս է կրկնել հարցի տեսաբանութիւնը, կանգ առնել նրա ծագման եւ զարգացման վրայ: Մեզ հետաքրքրում է այժմ հարցի յեղաշրջումը Թէոդորայի օրով եւ Թէոդորայի դիրքը: Արդեօ՞ք լոկ բարեպաշտութեան մի տուրք էր պատկերների վերականգնումը թէ քաղաքական աստառ եւս կար նրա մէջ:

Սկսած 815 թուից եկեղեցական կեանքը հոսում էր խաղաղ իր ընդդրկած հունի մէջ: Ի՞նչ էր պատճառը որ յանկարծ զարթնեցին հանգած կրքերը եւ խմբուեցին Թէոդորայի չուրջը:

Հին պատմագիրները լուրջ պատասխան չունին այս հարցին: Երեւում է որ իրենք եւս տեղեակ չէին գործի հանգամանքներին: Հարկադրուած էին որոնել այս կամ այն մեկնութիւնը համաձայն իրենց հասկացողութեան: Տրամադիր են մեծ կշիռ տալու Թագուհու եւ իր մերձաւորների կրօնական համոզումներին:

Հաւատացնում են, որ Թէոդորան եւ իր մայրը Թէոկտիստէն ի ծնէ ջերմեռանդ պատկերապաշտներ էին, բայց ստիպուած էին գաղտնի պահել իրենց զգացմունքը Թէոփիլի կենդանութեան: Մի ենթադրութիւն, իսպառ կամայական, որը հաստատելու համար պէտք էր դիմել հնարածոյ եւ թեթեւամիտ զրոյցների օգնութեան:

Այսպէս, պատմում են որ պալատում ապրում էր մի խղճուկ արարած, մի ոչնչութիւն, նոյնքան արհամարհելի որքան Հոմերոսի Թերսիտը: Անունը Դենդեր(իս), ծաղրածու եւ զուարճախօս, որ կատակներով եւ անդուռն բերանով զուարթացնում էր Թէոփիլ կայսրին:

Մի անգամ մտնելով Թագուհու ննջարանը, այս խեղկատակը նկատեց որ Թագուհին համբուրում է պատկերներ եւ դնում իր աչերին: Կեղծելով որ իբրեւ Թէ ոչինչ չէ հասկանում, հարցրեց Թէ այդ ի՞նչ է: «Իմ անոյշ տիկնիկներս են, պատասխանեց Թագուհին, որոնց ես այնքա՜ն սիրում եմ»:

Թէոփիլը ճաշի վրայ էր երբ մօտեցաւ Դենդերիսը: «Ո՞ր ես կորել», հարցրեց կայսրը: Միմոսը պատասխանեց որ Մանայի մօտ էր (այդպէս էր կոչում Թէոդորային) եւ պատմեց իր տեսածը Թէ որպէս կայսրուհին հանում էր բարձի տակից փոքրիկ տիկնիկներ եւ համբուրում:

Կայսրը բարկացած վեր կացաւ տեղից եւ գնաց ուղիղ Թէոդորայի մօտ, սկսեց նախատինք Թափել եւ անուանել նրա արածը կռապաշտութիւն: Ամուսնուն հանգստացնելու համար Թագուհին ստեց ասելով որ կասկածներդ անտեղի են: «Ես եւ իմ նաժիշտներս նայում էինք հայելու մէջ եւ Դենդերը տեսնելով մեր փոքրիկ պատկերները հայելում, կարծել է Թէ տիկնիկներ են եւ եկել յիմարաբար մոլորեցրել է քեզ»:

Թէոփիլի բարկութիւնն իջաւ: Թէոդորան մի օր լաւ ծեծել տուեց Դենդերին, սաստելով որ խելքը գլխին պահէ և

տիկնիկների մասին չիսօսի այլեւս: Անցաւ մի քանի ժամանակ եւ կայսրը հարցրեց ծաղրածուին թէ արդեօք Մանան դարձեալ փաղաքշո՞ւմ է տիկնիկներին: Մի ձեռքը բերանին դնելով, միւսը՝ ետեւը, չչնջաց. ս՛ս, լո՛ւռ, լուռ կենանք տիկնիկների մասին[1]:

Նման կերպով ապացուցանել են փորձել եւ Թէոդորայի մօր, Թէոկտիստէի, բարեպաշտութիւնը պատկերների խնդրում: Արդէն առիթ ունեցանք յիշելու վերեւ, ինչպէս Թէոկտիստէն, երբ իր թոռները այցելութեան էին գալիս, հանում էր արկղի մէջ պահած սուրբը պատկերները եւ համբուրել տալիս երեխաներին:

Մանուէլ զօրավարը, Թէոդորայի հօրեղբայրը, որ կրօնական խնդիրներից հեռու կանգնած զինուորական էր, նա եւս որպէս թէ հակւում է պատկերների կողմը հետեւեալ առթիւ: Մի անգամ ծանր հիւանդացաւ, գրեթէ մահամերձ, և կանչեց Ստուդիոնի վանքի կրօնաւորներից մէկին որ թաղման պատրաստութիւն տեսնէ: Վանականը համոզեց հիւանդին որ անպայման կ'առողջանայ, եթէ խոստանայ վերահաստատել հալածուած պատկերները[2]:

Թէ որքան չինծու է այս զրոյցը, երեւում է նրանից որ մի ուրիշ տեղեկութեամբ հիւանդացողը Մանուէլը չէր, այլ իր կինը, Հեղինէն, եւ բուժողը՝ Նիկողայոս վանականը Ստուդիոնի միաբանութիւնից: Հիւանդութիւնն էլ այն էր, որ երեխաները մեռած էին ծնւում[3]:

Մանուէլը բուժուեց հիւանդութիւնից հրաշքով եւ ջանաց կատարել իր յանձնառութիւնը: Նախ դիմեց թագուհուն, նրան համոզելու համար: Ճնայելով այն հաւաստիացումին թէ Թէոդորան, իր մայրը եւ քոյրերն ու եղբայրները գլխովին համակիր էին պատկերապաշտութեան, Մանուէլի առաջարկը չոգեւորեց թագուհուն և չգայթակղեցրեց նրան իսկոյն եւ եթ: Պէտք էր բեկանել նրա ընդդիմութիւնը: «Իմ ամուսինս, երանեալ կայսրը, բաւականաչափ իմաստուն էր եւ գիտէր ինչ որ հարկաւոր էր անել, առարկում էր թագուհին: Արդ՝ ի՞նչպէս մենք անտեսենք նրա սահմանած կարգը եւ հետեւենք ուրիշ ուղղութեան»[4]:

Թէոդորայի վարանումը փայլուն փաստ է որ պատկերների խնդրում նա համերաշխ էր իր սիրելի ամուսնու հետ և այլ համոզմունք չէ դաւանել քան ինչ որ ընդունուած էր եւ

1 Theoph. Cont., 91.
2 Gen., 79; Theoph. Cont., 148.
3 Migne, P. G., 105, col. 916
4 Gen., 80.

հանրացած պետական շրջաններում նախորդ կայսրների օրով: Ակներեւ է որ նրա մասին յերիւրած զրոյցները պատմական հիմ չունին: Թէոդորան խոնարհեց Մանուէլի նախաձեռնութեան առաջ, երբ լսեց նրա սպառնական նախազգուշացումը: «Եթէ չհոդաս վերականգնել պատկերների պաշտումը, խրոխտաց Մանուէլը, այլ կերպ կը տնօրինուի, Աստուծոյ օգնութեամբ, այն ամենը ինչ վերաբերում է ողջմտութեան եւ քո թագաւորութեան»:

Այս խօսքերը մի ակամայ խոստովանութիւն են որ պատկերապաշտներն ունէին նաեւ քաղաքական շարժառիթներ: Կրօնական յեղաշրջումը նկատւում էր նրանց կողմից որպէս միջոց ապահովելու գահը: Միայն մի բան ուղղելու է, որ այս տեսակէտը չէր կարող պատկանել Մանուէլ զօրավարին եւ սպառնալից խօսքերը ի զուր են դրուած նրա բերանը: Խնամակալի կոչումով գահը պաշտպանելու համար նա պէտք չունէր որեւէ կողմնակի նեցուկի: Բաւական էր ժողովրդական ընդհանուր համակրութիւնը, որ նրա կողմն էր, ինչպէս երեւաց կրկէսի հանդէսում:

Մանուէլի դերը անպայման չափազանցրած է պատկերապաշտութեան խնդրում: Նա ոչ մի կերպ չէր կարող նախաձեռնողը լինել: Իսպառ արժէք չէ տալու այն տեղեկութեան, իբրեւ թէ Մանուէլին բժշկող վանականը նրա վաղեմի բարեկամն էր, ծանօթ տակաւին այն ժամանակից, երբ նա Արմենեակեան թեմի սպարապետն էր, եւ կամ այն որ Մանուէլը նախ խորհրդակցել է իր ընկեր-խնամակալների հետ եւ նրանց հաւանութիւնն առնելուց յետոյ դիմել Թէոդորային: Սրանք նոր աղբիւրի չիթեր չեն, այլ բանաքաղի ինքնաբուխ յաւելումներ մեզ արդէն ծանօթ, եւ նրա կողմից կրկնուած, տեղեկութեան[1]:

Մանուէլին վերապահած դերը և այս առթիւ հիւսուած պատմածները հեռու են իսկութիւնից: Անգամ վիճելի է, արդեո՞ք Մանուէլը կենդանի էր այդ ժամանակ: Կասկածը, տեսանք վերեւ, հնարաւոր է: Նրա վրայ շատ բան է կուտակուած: Պատկերապաշտութեան վերականգնումի պատիւն էլ աւելացրել են, ըստ երեւոյթին, այն պատճառով, որ հայ զօրավարը իր բարոյական նկարագրով մի հեղինակաւոր վեհութիւն էր, մի բարձունք, որտեղից դիւրին էր դիտել եւ նրա լոյսով մեկնել այն երեւոյթները, որոնց համար բաւարար բացատրութիւն չունէին այլուստ:

1 Theoph. Cont., 148-149.

Բարեբախտաբար, տրամադրելի է մեզ անցքերին ժամանակակից հեղինակի մի կարեւոր վկայութիւնը, որի համաձայն եկեղեցական նոր ուղղութեան մէջ որոնելու է առաւելապէս լոգոթետ Թէոկտիստի ազդեցութիւնը: Սրա «խորհրդով եւ յորդորով» էր, որ կայսրուհին հալածեց եկեղեցուց եւ քաղաքից Յովհաննէս պատրիարքին[1]:

Թէոկտիստի հետ միաբան էր վանականների մի վոհմակ Մեթոդիոս եպիսկոպոսի առաջնորդութեամբ: Մի տեղեկութեամբ շարժման իսկական թելադրիչներն էին Ողիմպոս լերան ճգնաւորները, Յովհաննիկ, Արշակ եւ Եսայի: Մեթոդիոս եպիսկոպոսի միջոցով սրանք որպէս թէ դիմեցին կայսրուհուն եւ առաջարկեցին վերահաստատել պատկերների պաշտամունքը[2]:

Պատմում են նաեւ որ կայսրուհին եւ ծերակոյտը հարցրել են Յովհաննիկին թէ ո՞վ է արժանի պատրիարքական գահին եւ նա պատասխանել է յանձնարարելով Մեթոդիոսին, մինչդեռ այդ ժամանակ աւելի ժողովրդական էր մի ուրիշ եպիսկոպոսի, Միքայէլ Սինկելլի, թեկնածութիւնը[3]:

Հարկաւ, թեթեւամտութիւն կը լինէր հաւատալ այն մեծ վարկին, որ յատկացրած է մի խղճուկ ճգնաւորի: Ճշմարտութիւնն այն է որ Մեթոդիոսը յաղթանակել է խլելով պատրիարքական գահը Միքայէլից, և յաղթանակել է ոչ թէ շնորհիւ Յովհաննիկ կրօնաւորի, այլ թիկունք ունենալով լոգոթետ Թէոկտիստին: Երեւում է որ վերջինս փառասէր եպիսկոպոսին իր կողմն էր ձգել, գայթակղեցնելով նրան հայրապետական աթոռով:

Մեթոդիոս գիտնական անձն էր: Տակաւին Լեւոն Հայի օրով յայտնի էր իր ելուստներով ընդդէմ պատկերամարտութեան: Հնարաւոր գտաւ մինչեւ անգամ ապաւինել Հռոմ եւ աշխատել ի նպաստ պապի միջամտութեան: Միքայէլ Բ-ի ժամանակ վերադարձաւ Կ. Պոլիս, բերելով հետը պապի դաւանաբանական մի գրութիւնը: Կայսրը գայրացած բանտ ձգեց Մեթոդիոսին, որը մնաց փակուած մի մութ նկուղում 821 մինչեւ 828 թիւը[4]:

Թէոփիլը գնահատելով նրա գիտութիւնը հանեց բանտից եւ պահեց պալատում իր մօտ: Անհաւանական է որ Թէոփիլը եւս նրան վերստին բանտարկած լինի[5]: Հաւանօրէն

1 Georg, 811.
2 De Theophilis, Imp. absolutione, Analecta Byzantino-russica, p. 25.
3 Vita Michaelis Syncellis, Izvestia Konst. Instituta, XI, 249 (ռուսերէն):
4 Մեթոդիոսի կեանքը, Mign, P. G. 100, col. 1249.
5 Symeon, 642.

նախընթաց բանտարկութեան արձագանգն է: Հնարածոյ է նմանապէս ազատութեան վերաբերեալ զրոյցը: Իբրեւ թէ Թէոփիլ, ուսումնասէր անձ լինելով, մատենադարանում գտաւ մի գիրք, որ ոչ ոք չկարողացաւ հասկանալ: Ոչ Յովհաննէս պատրիարքը և ոչ Լեւոն փիլիսոփան, որ բարորդին էր և մեծ գիտնական, չկարողացան լուծել գաղտնիքը: Թագաւորի սենեկապաններից մէկը, Յովհ. անունով ասաց, որ միմիայն Մեթոդիոսը կարող է բաւականութիւն տալ կայսեր: Անմիջապէս գիրքը տարան բանտարկեալի մօտ: Մեթոդիոսը հեռուից արդէն հասկացաւ գործի էութիւնը եւ գոչեց. «Սենեկապան Յովհաննէս, գիտեմ, Թէոփիլի կողմից ես գալիս, բե՛ր թուղթ եւ մելան»: Եպիսկոպոսը առաջարկեց եռակի լուծում: Կայսրը չատ գոհ մնաց եւ պատուիրեց ազատ արձակել բանտից եւ առանձին բնակարան յատկացնել պալատում[1]:

Մեթոդիոսը մտերմացաւ Թէոփիլի հետ: Արքայական փափուկ բազմոցների վրայ նրա նախկին մոլեռանդութիւնը մեղմացաւ: Պատկերապաշտութեան համար չարչարուած եպիսկոպոսը կարողացաւ պատկերամարտ կայսրի աչքը մտնել եւ նրա շնորհները վայելել: Անսպասելի մի համակեցութիւն, որ բնորոշում է Մեթոդիոսի բարոյական ճկունութիւնը աւելի քան Թէոփիլի ներողամտութիւնը:

Բարերար կայսրի մահով եպիսկոպոսի դրութիւնը կարող էր խախտուել, մինչդեռ նա արդէն ընդելացել էր պալատական կեանքին եւ դժուարութեամբ պիտի հաշտուէր վանական խուցի հետ: Պատրիարքական աթոռը մօտ էր և գրաւիչ: Ճարպիկ Թէոկտիստը, երեւում է, փայփայել էր նրա փառասէր ակնկալութիւնները եւ շլացրել խոստումներով: Մեթոդիոսը եւ Թէոկտիստը իրար մօտեցան եւ պարզեցին պատկերապաշտութեան դրօշակը: Համոզել սկսեցին Թագուհուն, վախեցնելով որ եթէ պատկերապաշտութիւնը չվերականգնուի, գահը պիտի վտանգուի, «այլ կերպ պիտի տնօրինուի նրա թագաւորութեան բախտը»: Այս սպառնալիքը տեղին է միմիայն Թէոկտիստի բերանում եւ ոչ Մանուէլի, ինչպէս թուացել է հետագայում բարեպաշտ ժամանակագիրներին:

Ի՞նչ է նշանակում այս սպառնալիքը եւ երկիւղը և կամ ի՞նչ վտանգի դէմ է որ զրահ պիտի ծառայէ պատկերապաշտութիւնը:

Գահի շրջապատը կազմում էին թագուհու մօտիկ աղ-

1 Symeon, 643-645.

գականները եւ մերձաւորները, հօրեղբայրը, եղբայրները, քոյրերը, փեսաները եւ մի շարք այլ հայեր: Պատրիարքական աթոռի վրայ էր Յովհաննէս հայ պատրիարքը, Թէոփիլի եւ Թէոդորայի անձնական բարեկամը եւ նրանց երեխաների կնքահայրը:

Եթէ դահին վտանգ կար, այդ կարող էր ծագել միայն այս շրջանից: Թէոկտիստի ակնարկը ուղղուած է դահի շուրջը վխտացող ոյժերի հասցէին եւ ամենից առաջ չօչափում է Մանուէլի, Վարդի անձնաւորութիւնները: Միւս կողմից պալատական մթնոլորտը եւ պետական շրջանները տոգորուած էին պատկերամարտ ոգիով: Եկեղեցու աչքում եւս պատկերամարտութիւնը համարւում էր կայունացած դրութիւն: Սակայն, Բիւզանդիան այնպիսի մի միջավայր էր, ուր փառքի եւ մեծութեան դռները բաց էին բոլորի առաջ, միայն խիզախել էր հարկաւոր, ուստի եւ տեւական երեւոյթները ձանձրալի էին թւում եւ ցնցումները պատրիչ: Կարելի էր նորից արծարծել պատկերների խնդիրը, ոժգոհ ոյժերը հրապարակ հանել: Հակառակորդներին ընկճելու եւ ոչնչացնելու միջոց է: Թէոկտիստ յոյս ունէր, որ Թէոդորային շրջապատող հայ կարող դէմքերը, որոնք վտանգաւոր էին Թէոկտիստի համար եւ ոչ թագուհու, պաշտպան կը հանդիսանան ընդունուած դաւանանքին եւ կ'ընդդիմանան պատկերների ընդունելութեան: Այս դէպքում դժուար չէր նրանց ամբարիշտ յայտարարել կայսերական հաճութեամբ եւ այսպիսով հարուածել եւ վարկաբեկել նաեւ նրանց քաղաքական հռչակը:

Այնուհետեւ Թէոկտիստի դիրքը կ'ամրանար արքունիքում եւ Մեթոդիոսը կ'արժանանար պատրիարքութեան: Այս հաշուի մէջ ենք տեսնում պատկերների անակնկալի վերակենդանութեան քաղաքական շարժառիթը:

Մեթոդիոսը դործի գլուխ անցած սկսեց նախապատրաստական աշխատանքները՝ յաջողցնելու նոր ժողովի գումարումը: Նախապատրաստութիւնը տեւեց մի տարի: Վերջապէս կայացաւ մեծ դատաստանը 843 թուի մեծ պասի առաջին կիրակին, մարտի 11ին: Թողնենք մանրամասնութիւնները: Ժողովը հրաժարեցրեց Յովհաննէս պատրիարքին եւ նրա տեղը ընտրեց Մեթոդիոս եպիսկոպոսին: Թագուհի Թէոդորայի հրամանով Կոստանդին Հայը, վիգլի դրունդար եւ պատմագիր Գենեսիոսի պապը, ներկայացաւ Յովհաննէս պատրիարքին եւ առաջարկեց միանալ ժողովին, ընդունել նրա որոշումները պատկերապաշտութեան մասին եւ մնալ

պատրիարքական աթոռի վրայ: Հակառակ դէպքում պէտք է թողնէր աթոռը: Յովհաննէսը դիտնական էր եւ սկզբունքի տէր, անյողդողդ մնաց կայսերական սպառնալիքի դէմ եւ իջաւ աթոռից, պահելով իր համոզումը, յամօթ բոլոր նրանց, որոնք ամեն ջանք ու ճիգ են թափել սեւացնելու նրա յիշատակը: Յովհաննէսի հաստատամտութեան առաջ գուցեաւ է այն լուսապսակը, որ կեղծ ջերմեռանդութիւնը հիւսել է Մեթոդիոսի գլխին: Նրա թշնամիները արատաւորեցին իրենք իրենց, ծանր և բիրտ վիրաւորանք հասցնելով հրաժարուած պատրիարքին: Զինուորներ ղրկեցին հեռացնելու նրան պատրիարքարանից: Նրանցից մէկը սրով վիրաւորեց պատրիարքին: Հակառակորդները ասում են, որ Յովհաննէսը ինքն է իրեն դանակով վիրաւորել եւ մեղը ուրիշների վրայ ձգել[1]:

Ուրիշ լուրերի համաձայն Յովհաննէս պատրիարքը իրօք ցանկացել էր վերջ տալ իր կեանքին: Այնչափ խռովել եւ վրդովել էին նրան ադետալի դէպքերը[2]:

Պատրիարքին վիրաւորել էին զինուորները, այս է ճշմարտութիւնը հակասական տեղեկութիւնների մէջ:

Մեթոդիոսի և ընդհանրապէս ժողովականների յեղյեղուկ նկարագրի համար շատ բնորոշ է եւս մի հանգամանք: Երբ ժողովը որոշեց նզովք կարդալ բոլոր պատկերամարտներին, կայսրուհին պահանջեց որ Թէոփիլի անունը հանուի ցուցակից եւ նրան մինչեւ անգամ ներումն չնորհուի: Ծառայամիտ հայրերը խոնարհեցին պահանջի առաջ: Թէոփիլ աղատ արձակուեց իր պատկերամարտ մեղքերից: Նրանց հլութիւնը եւ ապօրինի վարմունքը արդարացնելու համար հիւսուած են մի շարք զրոյցներ, որոնցից մի քանիսը դոնէ աւելի ծանրացնում են գործած յանցանքը քան մեղմացնում: Նախ որպէս թէ Թէոդորան յայտնել է ժողովին որ իր ամուսինը զղջացել է եւ վերջին շունչը աւանդելիս համբուրել է պատկերները, որ ինքը Թէոդորան մօտեցրել է նրա շուրթերին[3]:

Պատմում են նաեւ որ թագուհին գաղտնի խօսակցութեան ընթացքին հաւատացրել է Մեթոդիոսին և Լեսբոսցի երկու եղբայր Սիմէոն և Գէորգ կրօնաւորներին, որ Մեթոդիոսի անձնական բարեկամներն էին, թէ հանգուցեալ Թէոփիլ կայսրը թողել է eulogia, այսինքն աջահամբոյր, նրանց համար այն պայմանով, որ իրեն չանիծեն որպէս հերետի-

1 Theoph. Cont., 151; Acta Davidis, Analecta Bollandiana, XVIII, 209.
2 De Exsilio S. Nicephori, Migne, P. G. 100, col. 164.
3 Theoph. Cont., 153.

կոսի: Սիմէոնը համաձայնել է եւ նրան հետեւել են միւսները[1]:

Դարձեալ Թէոդորան համոզում է որ երազ է տեսել թէ ինչպէս Թէոփիլին չղթայակապ տանում են մի մարդու առաջ, որի ճակատին Քրիստոսի պատկերն էր: Թագուհին լալիս է եւ աղերսում իր ամուսնու համար եւ դատաւորը հրամայում է հրեշտակներին քակել նրա չղթաները:

Աջահամբոյրի խոստումը բաւական էր որ Մեթոդիոսը հնար գտնէր սէրը սպիտակացնելու: Մի անգամ նա կազմում է բոլոր հերետիկոսների ցուցակը և դնում սեղանի վրայ: Թէոփիլի անունը եւս մտցրած է լինում ցուցակի մէջ: Ցանկարծ երազ է տեսնում, մի մարդ մօտենում է նրան եւ ասում որ Թէոփիլին ներել է: Արդարեւ, երբ մօտենում է սեղանին, նկատում է որ ցուցակի մէջ Թէոփիլի անունը անյայտացել է եւ տեղը մնացել է բաց[2]:

Այս եւ նման զրոյցներ, որքան եւ տափակ եւ անարուեստ, մի մի հայելի են, ուր արտափայլում են ուղղափառութեան մասին ճառող, մեղաւորն ու արդարը զատող, եկեղեցականութեան դէմքերը իրենց սեպուհ խորշոմներով՝ դիւրաթեք բնաւորութիւն, չողոմարար եւ հաճոյակատար հակումներ, ուր իր տեղն ունի նաեւ կաշառակերութիւնը եւ անգամ անբարոյականութիւնը:

Նրանց բարքերի մասին դաղափար տալու համար բաւական է յիշել Մեթոդիոսի քստմնելի արկածը, որը պատմել իսկ խորշելի է: Նորընտիր պատրիարքին՝ Մեթոդիոսին վարկաբեկելու համար, պատկերամարտները լուր տարածեցին որ նա սիրային յարաբերութիւն է ունեցել մի կնոջ հետ, որը խոստովանում է իր մեղսակցութիւնը: Թէոկտիստը և Մանուէլը անյարմար դրութեան մէջ էին: Մեթոդիոսի բարեկամները հերքում էին մեղադրութիւնը, ասելով որ կինը կաշառուած է հակառակորդ բանակի կողմից եւ նրա վկայութիւնը ստայոդ է: Սակայն կինը անանուն ոմն չէր, այլ այն Մետրոփանի մայրն էր, որ յետոյ Զմիւռնիայի եպիսկոպոս եղաւ: Հասարակութիւնը չուարած էր եւ յուզումը տարածւում էր:

Մեթոդիոս պատրիարքը չուզենալով ուղղափառութեան վարկը ձգել եւ դայթակղութեան քար դառնալ, ուրիշ աւելի վայելուչ միջոց չգտաւ արդարանալու քան մերկանալ հրապարակաւ իր ամօթանքը եւ ցոյց տալ որ, մարմնապէս արատաւոր լինելով, անատակ էր վերագրուած յանցանքին: Սրբազան հայրը պատմեց նաեւ առանց ամօթխածութեան իր դժբախտութեան ծագումը, որ անվայել է մեզ կրկնել: Թագուհի Թէոդորան զիջեց, բայց փոխարէնը հրամայեց երկու հարիւր հարուած տալ մտրակով թշուառ պատրիարքին[1]:

Այսպիսի մի միջավայրում, ուր բարեպաշտութեան անունով կարելի էր ամեն ոճիր գործել, Թէոկտիստ եւ Թէոդորան, յենուելով Մեթոդիոսի և նման հայրերի հեղինակութեան, գլուխ բերին պատկերապաշտութեան յաղթանակը:

Ցոյն եկեղեցին եւ յունամիտ պատմաբանները հին եւ նոր կարող են ողջունել 843 թուի յեղաշրջումը: Բայց բիւզանդական պետականութեան եւ քաղաքակրթութեան հետեւող միտքը պէտք է եւ իրաւունք ունի մօտենալ հարցին այլ գնահատականով եւ չափով:

Պատկերամարտութիւնը ոչ այն ծամածուռ գծերով, ինչպէս ներկայացնում են նրա ոխերիմ եւ աչառու թշնամիները, այլ իր իրական պատկերով սեփականութիւն էր այն ժամանակուան լուսամիտ եւ կիրթ հասարակութեան: Պատկերապաշտութիւնը հրէշաւոր կերպարանք էր ստացել: Բաւական է յիշել, որ քահանաները քերում էին պատկերների ներկը, խառնում հաղորդութեան եւ տալիս հաւատացեալներին:

Պատկերամարտութիւնը մի նախարձակ ճառագայթ էր Պաւլիկեան զօրաւոր շարժման: Իսկ այս շարժումը ըստ էութեան ի՞նչ էր, եթէ ոչ անդրանիկ փորձ՝ մտցնել բանականութեան ճրագը եկեղեցու մէջ եւ նրա լուսով մաքրել, զտել կրօնական զգացումը եկեղեցական ծէսերի եւ անմբռնելի խորհուրդների ծանրութիւնից: Պատկերների վերականգնումը դարձաւ մի նշանաբան ընդդէմ մտքի եւ խղճի ազատութեան: Սկսուեց հալածանք:

Նոյն Թէոդորան և Թէոկտիստը մեծ զօրք ղրկեցին արեւելք Պաւլիկեանների դէմ և ոչնչացրին մօտ հարիւր հազար մարդ, ինչպէս արձանագրում են պատմագիրները: Հետեւանքները չատ ծանր եղան պետութեան համար: Բռնութիւնն ու հալածանքը նետեցին Պաւլիկեաններին հարեւան մուսուլման պետութեան գիրկը: Պաւլիկեանները որ բնական ամբարտակ էին Արաբների դէմ, դարձան նրանց դաշնակիցներ եւ մեծամեծ հարուածներ հասցրին կայսրութեան:

1 Acta Davidis, **Analecta Bollandiana**, XVIII, 244.
2 De Theophanis absolutione, **Analecta Byzantino-russica**.

1 **Genesius**, 82-83.

Ինչ վերաբերում է հարցի քաղաքական կողմին, նա թաղնուած է մեր աչքերից: Պատմագիրները լռում են, կամ ոչինչ չգիտեն: Նորագոյն գիտնականները եւս կարծես թէ տրամադիր չեն, գոնէ վարանոտ են, քաղաքական նշանակութիւն տալ պատկերների չուրջը եռացող հակամարտութեան:

Դժուար թէ կարելի է բաժանորդել այս տեսակէտը: Ամեն մի երեւոյթ որ ազդել է քաղաքական ոյժերի դասաւորման վրայ, նպաստելով թէ վնասելով, անպայման քաղաքական ազդակ է: Ուրանալ պատկերների հարցի նմանօրինակ ազդեցութիւնը դէմ է պատմութեան տուեալներին: Իր ծագումից մինչեւ անկումը այդ հարցը բոլոր քաղաքացիական կռիւների ժամանակ բեմի վրայ է եւ գործօն դերում: Լեւոն Իսաւրացու մահից յետոյ, երբ Արտաւազդ հայ իշխանը յափշտակել ուզեց գահը օրինաւոր ժառանգի ձեռքից, յայտարարեց իրեն հետեւորդ պատկերապաշտութեան եւ 742 թուին վերականգնեց նախորդի օրով խափանած պաշտամունքը: Այս գործողութիւնը ուրիշ նպատակ չունէր քան քարշել իր կողմը ընդդիմադիր եւ դժգոհ տարրերը: Արտաւազդը Լեւոնի փեսան էր եւ մերձաւոր գործակիցը: Նրա կենդանութեան չխոյացաւ պատկերամարտութեան դէմ, պէտք չունէր, կրօնական զգացումը չվրդովեց: Բայց ապստամբելով գահաժառանգի Կոստանդին Կոպրոնիմի դէմ, յանկարծ փոխեց իր կրօնական դէմքը: Պատճառը միմիայն քաղաքական նկատումներն էին եւ ոչ եկեղեցական որեւէ նախանձախնդրութիւն: Թումա Գազիւրացին, որ շատ հեռու էր կրօնական խնդիրներից, ծառանալով Միքայէլ Ամորացու դէմ 821-824 թուերին, հնարաւոր դտաւ կոչ անել ուղղափառութեան ընդդէմ պատկերամարտ կայսրի:

Քաղաքական հաշիւ կար եւ Թէոկտիստի քայլի մէջ եւ ուղղուած էր պալատական հայ չրջանների դէմ: Կրկնում ենք, հակամարտ բանակների բախումը չէ արձանագրուած եւ վարագուրուած է մեզնից: Բայց յաջորդող դէպքերը բարձրացնում են վարագոյրը եւ ցոյց են տալիս որ Թէոկտիստի վարկը մեծապէս շահեց նոր քաղաքականութիւնից: Դիրքը ամրացաւ պալատում: Անհամեմատ աւելի փայլուն և վաստակաւոր դէմքերը կամայ թէ ակամայ քաշուեցան հրապարակից, թողին իրենց բարձր դիրքերը: Յովհաննէս պատրիարքից յետոյ չքացան պալատական սրահներից եւ պետական դիւաններից պրոտոմագիստր Մանուէլը, մեծ պատրիկ Վարդ եւ Պետրոն եղբայրները եւ միւս հայ նշանաւոր գործիչները:

Թէոկտիստը դարձաւ Թէոդորայի ամենազօր մինիստրը: Սակայն նրան վիճակուած չէր վայելել իր յաղթութիւնը լիովին:

Մամիկոնեան կտրիճները սովոր չեն անպատիժ թողնել ո՛չ ուրիշների անարդ յաղթութիւնները եւ ո՛չ իրենց անարժան պարտութիւնները:

Վարդ Մամիկոնեանը սպանեց Թէոկտիստին 856 թուին: Գրաւեց նրա բարձը եւ սկսեց մի փայլուն գործունէութիւն, որպէսզի պանծացնի իր արիւնոտ ձեռքը՝ գրելով նրանով իր անունը բիւզանդական քաղաքակրթութեան ոսկեմատեանի մէջ:

ՎԱՍԻԼ ՀԱՅԱԶՆ

(ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱՅՍՐ 867–886)

I

Անողորմ սպանութիւն էր, որ կատարուեց սեպտեմբերի 4ին 867 թուին:

Ս. Մամաս պալատում մեծ կոչունք էր: Պալատը գտնուում էր Ոսկեղջիւրի միւս ափին, այժմեան Գալատայում, որն այն ատենները դեռ քաղաքի մէջ չէր, արուարձան էր: Երիտասարդ եւ զուարճասէր Միքայէլ կայսրը սիրում էր մերթ ընդ մերթ վրդովել մենաւոր ապարանքի լռութիւնը աղմկալից խնջոյքներով:

Այս անգամ վերջին խրախճանքն էր որ վայելում էր կենսասէր թագակալը: Գինուց արբած, ախորժանքից թմրած, կայսրը քաշուեց ննջարան: Խոնջութեան նիրհը արդէն կոխել էր, երբ շառաչիւնով ներս խուժեցին չարամիտ դաւադիրները: Մի խումբ հայեր էին Վասիլի առաջնորդութեամբ: Կայսրը արթնեց, կարծես, նրա համար որ տեսնէ ողբերգական վախճանը իր տակաւին երիտասարդ կեանքի: Մահապարտ սուրերը չողացին եւ թշուառ զոհն ընկաւ անշընչացած:

Մինչ սպանուածի մայրը, գահազուրկ Թէոդորան, եւ սեւազգեստ քոյրերը արցունք էին թափում արենաշաղախ դիակի վրայ, չարագործները չտապեցին անցնել Ոսկեղջիւրը: Մութ գիշեր էր, փոթորիկը ոռնում էր, ծովը խռովայոյզ՝ զարկում էր կատաղի ալիքները նաւին, որ տանում էր դաւադիրներին միւս ափը, ուր սպասում էին համախոհները: Միասին սուրացին եւ մտան Բուկոլէոն, մեծ պալատի նաւամատոյցը: Այնտեղ եւս սպասողներ կային: Շարժուեցին դէպի մեծ պալատը եւ անարգել գրաւեցին:

Վասիլը հռչակուեց կայսր միահեծան:

Միքայէլին շատ բան էր պարտական նոր կայսրը: Սպանել բարերարին ապերախտ, ծանր գործ է: Սակայն սովորութիւն է արմատացած՝ դատել գործը ըստ հետեւանքների: Վասիլի ոճիրը տանում էր դէպի մեծութիւն, բաց էր անում պետութեան համար մի նոր եւ փառաւոր շրջան, երբ բիւզանդական քաղաքակրթութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Արիւնոտ ձեռքերը չգտան դատապարտողներ: Հասկանալի է: Պատմութեան լաւագոյն էջերը, փայլուն մեծագործութիւնները, վերասլացիկ երազները, գրեթէ բոլորը ողողուած են արիւնով:

Վասիլը, շատերի նման, անպարտ էր: Ասում են, պատասխանատուն ինքը չէր իր գործերի համար, այլ նախախնամութիւնը, որի հլու գործիքը լինելով, կատարում էր միայն այն, ինչ որ թելադրում էր վերին անտեսանելի զօրութիւնը: Այսպէս է ներկայանում մեզ Վասիլը հէնց սկզբից այն սքանչելի զրոյցի մէջ, ուր նա երեւում է առաջին անգամ պատմութեան բեմի վրայ:

Տակաւին պատանի, լքեց Վասիլը հայրենի տունը եւ ճանապարհ ընկաւ դէպի մայրաքաղաք: Ցոյս ունէր աշխատանք գտնել եւ օգնութեան գալ իր մօրը եւ դեռահաս եղբայրներին ու քոյրերին: Ցուպը ձեռին, մախաղն ուսին, ոտով կտրեց երկար ուղին եւ կանգ առաւ մայրաքաղաքի պարիսպների առաջ: Ոսկի դրան մօտ էր, ուր եւ Ս. Դիոմեդի վկայարանը: Երեկոյեան դէմ էր, արեւը քաշում էր իր վերջին ճառագայթները: Շուտով մութը կոխեց: Ուղեւորը, յոգնած ճանապարհի նեղութիւնից, պառկեց վանքի պատի տակ եւ քուն մտաւ:

Գիշերը աստուածային մի ձայն արթնացրեց վանականներից մէկին. «վե՛ր կաց, գնա, ներս հրաւիրի՛ր կայսրին»: Կոստանդին Ծիրանածնի ասելով, վանականը մենաստանի վանահայրն էր եւ խորհրդաւոր ձայնը Ս. Դիոմեդ վկայինն էր: Վանականը գնաց, բայց դրանը կայսր չտեսաւ, այլ մի գեղջուկ փոչոտ ճանապարհորդ: Դարձաւ եւ քնեց:

Երկրորդ անգամ հնչեց միեւնոյն ձայնը նոյն պատուէրով: Վանականը նորից վեր կացաւ, գնաց, բայց դարձեալ կայսր չտեսաւ, փակեց դուռը եւ պառկեց քնելու: Շատ չանցաւ եւ մի ուժգին հարուած իջաւ նրա կողքին եւ լսուեց նոյն ձայնը. «գնա՛ եւ ներս բե՛ր նրան, որ պառկած է դրան մօտ: Նա ինքն է կայսրը»:

Երկիւղած վանականը գնաց եւ հրաւիրեց ներս աղքատ ուղեւորին: Յաջորդ օրը տարաւ բաղանիք, մաքրեց փոչուց, դարմանեց հոգածութեամբ եւ եղբայրական ուխտ կնքեց նրա հետ:

Այսպէս, նախախնամութեան ընտրեալը մտաւ քաղաքը

Ոսկէ դռնից, ոսկէ երազով եւ յառաջեց դէպի կայսերական մեծութիւն նոյն անտես աջի առաջնորդութեամբ:

Ո՞վ էր եւ ո՞րտեղից էր գալիս այս երկնառաք խորհրդաւոր ճանապարհորդը, յայտնի չէ ստուգապէս: Արդեօ՞ք նրա անցեալը փայլուն չէր, ուստի եւ ծածկուած դիտաւոր անգիտութեան քօղով: Կամ թէ Վասիլն խոյացաւ գահի վրայ այնպիսի արագութեամբ, առանց նախապէս մեծ անուն հանելու քաջութեան թէ խոհականութեան մարզերում, որ ո՛չ ժամանակ եւ ոչ առիթ չտուեց հետաքրքրուելու իր անցեալով:

Ինչ եւ լինի պատճառը, Վասիլի կեանքի սկզբնական շրջանը, ծագումը, ընտանեկան պայմաններն եւ առաջին քայլերը մնացել են մութ կամ հազիւ նշմարելի աղօտ լոյսի մէջ: Այս մասին շատ բան չգիտէ նոյնիսկ նրա թոռը Կոստանդին Ծիրանածին կայսրը, որ պաշտում էր իր պապին եւ մեծ ջանք է թափել գրելու նրա լիակատար պատմութիւնը: Պապի հօր անունն անգամ անծանօթ է պատմաբան եւ կենսագիր թոռին: Անյայտն ու անորոշը թեւ են տալիս երեւակայութեան, ծնում տեսակ տեսակ զրոյցներ, արթնած հետաքրքրութեան գոհացում տալու համար: Այս կարգի զրոյցներ, անհաւատի լուրեր, բռնի մեկնաբանութիւններ նախախնամութեան հաշուին, տեղ են գտել այն վաւերական նիւթերի մէջ, որ հաւաքել է մեծ խնամքով Ծիրանածին պատմագիրը, կարգաւորել եւ հիւսել մի կուռ եւ կազմ պատմութիւն, եւ վրան դրել իր հեղինակութեան դրոշմը:

Պապի պատմութիւնը գրուած է յատուկ նպատակով, «որպէսզի հետնորդները չանգիտանան կայսերական տան, այդ երկարաձիգ շառաւիղի, բուն արմատն ու աղբիւրը», որ է Վասիլը: Նա «պէտք է օրինակ ծառայէ իր ժառանգորդներին, օրինակ արիութեան, մի տիպար, որին պիտի հետեւեն եւ նմանեն»:

Նպատակաւոր գրութիւնները անաչառ չեն լինում: Վասիլից գաղափարական դէմք ստեղծելու ձգտումով, իր անձնուէր թոռը դիմել է երբեմն արհեստական միջոցների, վիպական չպարի: Որպէսզի իսկական դիմագծերը բացուին, հարկ է հանել հեռացնել անհարազատ, վերադիր, ներկերը: Բարեբախտաբար կան աղբիւրներ, որոնք միջոց են տալիս հետեւելու Ծիրանածին պատմագրի դրչին, ինչ ինչ էջեր ուղղելու, կամ նորապէս լուսաբանելու կարելիութեամբ:

Ցիշելի է մանաւանդ Գէորգ վանականի պատմութեան շարունակողը: Գէորգ իր գործը հասցրել է մինչեւ Թէոդորայի առաջին տարիները 842 թ.: Այնուհետեւ մի անանուն հեղինակ շարունակել է մինչեւ 950 թուականները: Կարծում են, որ Սիմէոն Մետափրաստն է հեղինակը:

Ինչ որ պատմում են Վասիլի ծննդեան եւ մանկութեան մասին, նման է վէպի քան ստոյգ պատմութեան:

Վասիլը ծնուած է որպէս թէ «Մակեդոնիայում», Ադրիանուպոլ քաղաքի շրջակայ գիւղերից մէկում, Միքայէլ Թանգաբէ կայսրի (811-813) օրով: Սրա ժամանակն էր որ Բուլղարները Կրում թագաւորի առաջնորդութեամբ յարձակուեցին կայսրութեան վրայ եւ եկան պաշարեցին մայրաքաղաքը: Միքայէլ կայսրը կորցրեց թագը եւ նրա տեղն անցաւ Լեւոն Հայը 813 թուին: Բուլղարները ստիպուեցին հանել պաշարումը եւ հեռանալ: Երբ հասան Ադրիանուպոլ քաղաքը, աւերեցին եւ դերեցին բնակիչներից տասնեակ հազար մարդ, չհաշուած կանայք եւ երեխաներ, եւ տարան բնակեցրին Դանուբ գետի միւս եղերքին: Գերիները, թէեւ թրակիայի Ադրիանուպոլ քաղաքից էին, կոչւում են Մակեդոնացիք, ինչպէս եւ քաղաքը համարւում է Մակեդոնիայում, եւ նոր գաղթավայրը Դանուբի ափին եւս կոչւում է Մակեդոնիա:

Վասիլի ծնողները գերիների թւում էին: Ինքը Վասիլը գերութեան ժամանակ խանձարբապատ մանուկ էր: Կրումի արշաւը 813 թուին էր, հետեւապէս Վասիլ ծնուած պիտի լինէր այդ կամ նախընթաց տարում, 812-13 թուերին: Գերութիւնը յետ դարձաւ Թէոփիլ կայսրի օրով, դարձաւ նաեւ Վասիլ իր ծնողների հետ: Այդ ժամանակ Վասիլը 25 տարեկան էր, ուրեմն դարձը տեղի է ունեցել 837-38 թուերին:

Հետաքրքրական է գերեդարձի պատմութիւնը, որ չէ յիշում Վասիլի թագակիր կենսագիրը:

Գերութեան պետը Դանուբի ափերին, կամ ինչպէս կոչում է մեր աղբիւրը, Մակեդոնիայի զօրավարը Կորդիլ (Κορδύλης) անունով մի անձն էր: Սա ունէր մի որդի, անունը Վարդ, յայտնի իր քաջութեամբ: Կորդիլ թողնում է իր տեղը Վարդին, վստահելով նրա կարողութեան եւ ինքը մի հնարքով անցնում մայրաքաղաք յայտնելու Թէոփիլ կայսրին, որ տարագիրները կ՚ուզէին դառնալ իրենց նախկին տեղերը: Կայսրը հրաման է տալիս որ նաւատորմը դնայ դէպի գերիները, առնէ եւ բերէ մայրաքաղաք:

Բուլղարների թագաւորը այդ ժամանակ «Վալդիմերն» էր, Կրումի թոռը: Երբ «Միքայէլ Բուլղարը» արշաւում է Թեսսալոնիկէի վրայ, գերիները որոշում են օգտուել հան-

գամանքից եւ դլուխ բերել իրենց ծրագիրը: Անցնում են Դանուբ գետը, ուղղուելով դէպի ծովափ, ուր սպասում էին կայսերական նաւերը:

«Մակեդոնացիք», ուրեմն, գերիները, առաջնորդ էին ընտրել Կորդիլին, որը, ինչպէս երեւում է, գաղտնի յանձնարարութիւնը կատարելուց յետոյ, վերադարձել էր մայրաքաղաքից իր տեղը: Բուլղարները փորձում են արգիլել գերիների փախուստը, բայց պարտւում են կռւում: Նրանց օգնութեան է գալիս հարեւան մի ժողովուրդ, որ մի անգամ կոչւում է Հունգար, երկրորդ անգամ՝ Թուրք, եւ երրորդ՝ Հոնն: Սրանց դէմ եւս արիաբար պաշտպանւում են փախստականները, կռուելով երեք օր շարունակ եւ չորրորդ օրը յաջողում են նաւ նստել: Մի վերջին յարձակում է տեղի ունենում Թշնամու կողմից, բայց մի կտրիճ երիտասարդ, Լեւոն Գոմոստ անունով, իր մի քանի ընկերներով դիմադրում է եւ քշում: Այս Լեւոնը յետոյ նշանակւում է Ֆեդերատների, կամ օտարներից կազմուած գնդի պետ, հետերաբք:

Ինչպէս երեւում է, այս պատմութիւնը քաղուած է մի վաւերական լաւ աղբիւրից, բայց քաղողը շատ բան չփոթել է: Թէոփիլի ժամանակ Բուլղարաց Թագաւորը Վալդիմերը չէր, այլ Մալամիր եւ սա էր Կրումի Թոռը, մինչդեռ Վալդիմեր (Վլադիմիր) Բորիսի որդին էր եւ յաջորդը:

Հաւանօրէն Վալդիմեր սխալ ընթերցումի արդիւնք է: Միեւնոյն ժամանակ յիշւում է եւ Միքայէլ Բուլղարը, այսինքն Բուլղարաց Թագաւորը: Միքայէլ քրիստոնէական անուն է Բոգորիսի (Բորիսի), որ Մալամիրի եղբօրորդին էր եւ յաջորդը: Շատ կարելի է որ Միքայէլ ընթերցումը եւս վրիպակ է փոխանակ Մալամիրի, եթէ միայն չենք ուզում ենթադրել, որ Միքայէլ Բոգորիսը կարող էր արշաւանքի վարող լինել ոչ իբրեւ Թագաւոր, այլ զօրավար, Մալամիրի Թագաւորութեան ժամանակ: Միքայէլ Բոգորիս գահ բարձրացաւ, հաւանօրէն, 852 Թուին: Հետեւապէս չէր կարող մասնակից լինել 837 Թուի անցքերին որպէս Թագաւոր:

Գերութեան առաջնորդները հայեր են: Կորդիլը հայ է, ինչպէս վկայում է որդու Վարդ անունը: Հայ է նաեւ Τξάντξης որ երեւում է հայ բառ է: Սա նշանակուած էր Կորդիլի կողմից իրեն տեղապահ, եւ չի յիշատակւում հետագայում թէ ի՛նչ եղաւ: Իսկ փախուստի ժամանակ զօրավարներ են յիշւում Կորդիլ եւ Ցանց թէ Ճանճ:

Արդեօ՞ք Վարդը սպանուել էր կռւում: Այս մասին յի-

չատակութիւն չկայ: Հաւանական է որ Ցանց թէ Ճանճ հէնց նոյն Վարդն լինի: Կրկնակի անուններից մէկն իսկական անունն է, միւսը մականուն, փութ անուն:

Ճշմարտութիւնից հեռու չենք լինի, եթէ ասենք որ Լեւոն Գոմոստը եւս հայ պէտք է լինէր: Հետերաբքները սովորաբար հայերից էին, եւ նրանց ձեռքի տակ գտնուած գնդի մէջ հայերը նուազ թիւ չէին կազմում:

Բուլղարները գերեցին 813 Թուին տասնեակ հազար մարդ Ադրիանուպոլից: Ուրիշ աղբիւրից գիտենք, որ հետեւեալ տարին նոյնպէս մեծ գերութիւն հանեցին, ասպատակ սփռելով մինչեւ Արկադիոպոլ եւ դարձին գերի տարան 50 հազար ամբոխ: Թէ սրանց ոչ աննշան մասը հայեր էին, երեւում է ոչ միայն նրանից, որ առաջնորդները, ինչպէս տեսանք հայ էին, այլ եւ որ տարի եւ կողոպուտի մէջ յիշատակւում են յատկապէս «հայկական բանուածներ եւ ազնիւ զորդեր, զգեստեղէն եւ պղնձեղէն»:

Ադրիանուպոլի գերիների մէջ էր նաեւ քաղաքի եպիսկոպոսը, Մանուէլը: Նրա հետ էին նաեւ Վասիլի ծնողներն ու ինքը մանուկ Վասիլը: Մանուէլ եպիսկոպոսը բուլղարներից շատերին դարձրեց քրիստոնեայ: Սակայն, Կրումի յաջորդը Մուտրագոն Թշնամացաւ եպիսկոպոսին, փորձեց ուրանալ տալ քրիստոնէական հաւատը եւ վերջը մարտիրոսական մահով սպանեց նրան: «Վասիլի ազգականներից շատերը եւս նահատակուեցին, անմասն չմնալով մարտիրոսութեան պատուից», աւելացնում է պատմագիրը:

Գերիների թւում էր եւ մի անձն Կինամոն անունով: Սկզբում սիրելի եղաւ Օմուրտագին (որ նոյն Մուտրագոնն է) Բուլղարաց Թագաւորին, բայց յետոյ բանտարկուեց, չուզենալով կրօնափոխ լինել եւ սպանուեց յաջորդ Թագաւորի Մալամիրի օրով նմանապէս մարտիրոսական մահով:

Կինամ(ոն) պարթեւական անուն է, Kinnama, որ նշանակում է «մարդ, որի անունը քէն է», քինախնդիր: Պէտք է ենթադրել որ Կինամը եւս հայ էր: Հաւանօրէն Մանուէլ եպիսկոպոսն իսկ հայ էր: Անունը թէեւ սուրբգրենական է, բայց այդ ձեւով աւելի հայկական է, ընդունուած շատ հնուց Մամիկոնեան տան մէջ: Նրա հետ են Վասիլի ծնողները եւ ազգականները, որոնցից ոմանք բաժնակից եղան նրա մարտիրոսութեան:

Գերութեան զոհերը, ինչպէս երեւում է, մեծ մասամբ հայեր էին:

Երբ Վասիլը վերադարձաւ իր բուն երկիրը, մտաւ ծառայութեան Մակեդոնիայի զօրավարի մօտ, որ մեղ ծանօթ

ցանցն էր: Այստեղից հետեւում է որ Վասիլը Մակեդոնիայից էր:

Փոտի կազմած ծննդաբանութեան մէջ եւս Վասիլի նախնիք հաստատւում են Մակեդոնիայի Նիկէ քաղաքում, յետոյ տեղափոխւում են Փիլիպպիոն քաղաքը, որ նոյնպէս Մակեդոնիայումն է: Երբ Վասիլը հարստացաւ Դանէլիս կնոջ շնորհիւ, կալուած գնեց Մակեդոնիայում եւ ապահովեց իր ազգականներին: Այս երեւոյթները ցոյց են տալիս որ Վասիլի սկզբնական բնակութիւնը եղել է Մակեդոնիայում: Գուցէ այս է պատճառը որ մակեդոնացի են կոչւում Ադրիանուպոլի դերիները, որոնց մէջ էին Վասիլի ծնողները: Կարելի էր կարծել որ Մակեդոնիա կիրարկուած է լայն մտքով, մէջն ունենալով եւ Թրակիան, ինչպէս հայերէն երկաթագիր մի աւետարանում, գրուած ՆԾԶ հ. թ. = 1011 թուին «ի գաւառին Մակեդոնիոյ ի քաղաքն որ կոչի Անդրոնապալիս ի թագաւորութեան Վասլին»:

Բայց Թ դարում Մակեդոնիա եւ Թրակիա երկու զատ թեմեր էին եւ չփոթութեան հիմ չկար: Թւում է որ Ադրիանուպոլցու եւ Մակեդոնացու նոյնացումը կապ ունի Վասիլի ծննդաբանութեան հետ: Ըստ պատրիարք Փոտի, Վասիլի մայրը Ադրիանուպոլցի էր, հայրը՝ Մակեդոնիայից: Այս երկուութիւնը հնարամիտ պատրիարքի կողմից մի մեկնութիւն է հաշտեցնելու Ադրիանուպոլցու մակեդոնացի կոչումը: Նուազ ընդունելի է հակառակը, այսինքն որ ծննդաբանական երկուութիւնը ազդած լինի գերեվարութեան պատմութեան վրայ: Առաջնութիւնը այստեղ չի պատկանում պատրիարքին, որին հաւանօրէն ծանօթ էր այն սկզբնական աղբիւրը, որից մեր պատմագիրը քաղել է գերեվարութեան հատուածը:

Որտեղացի էր Վասիլը, պարզ չէ: Մակեդոնիան ամեն պարագային աւելի իրաւունք ունի այդ պատուին քան Ադրիանուպոլը: Նրա ծնողների գերեվարութիւնը, որքան որ կապ ունի Ադրիանուպոլի անցքերի հետ, տարակուսելի է: Վասիլը չէր կարող ծնուած լինել 812 թուին, եթէ այս է պատմուածքի նպատակը: Ինչպէս կը տեսնենք ստորեւ, աւելի հիմ կայ կարծելու որ Վասիլը ծնուած էր գերեդարձի ժամանակ 836-7 թուին:

Ուշագրաւ է որ Վասիլի կենսագիրը, Կոստանդին Ծիրանածինը, չգիտէ կամ անտես է արել գերիների վերադարձի պատմութիւնը: Ցիշում է որ Վասիլի ծնողները գերիների մէջ էին 813 թուին եւ Վասիլը՝ մանուկ: Բայց նրանց վերադարձը կատարուած է համարում խաղաղ պայմաններում եւ

ոչ այնքան ուշ: Բուլղար թագաւորը թոյլ է տալիս գերիներին վերադառնալ հայրենիք, «խոնարհելով կայսերական զօրութեան առաջ»:

Երբ գերիները պատրաստուել էին հեռանալ, Բուլղարաց թագաւորը նկատեց ամբոխի մէջ մանուկ Վասիլին, կայտառ եւ ազնիւ դէմքով, եւ մի արտասովոր մեծութեան խնձոր տուեց նրան: Երեխան առանց քաշուելու մօտեցաւ թագաւորին եւ փարելով ծնկան ցոյց տուաւ այնպիսի քնքշութիւն, բնածին եւ ազնիւ, որ թագաւորը հիացաւ, այն ինչ իր չրջապատը դժգոհում էր: Այստեղից հետեւում է որ Վասիլը երեխայ էր դարձի ժամանակ և ոչ գերեվարութեան:

Ծնողները վերադարձան լրենց տեղը մանկան հետ: Երբ մի անգամ դաշտ գնացին հսկելու հնձուորներին և միասին աշխատելու, մայրը տատասկներից հովոց պատրաստեց երեխային պաշտպանելու կիզիչ արեւի դէմ: Ցանկարծ մի արծիւ իջաւ եւ թեւարձակ հովանի եղաւ երեխային: Մայրը երկիւղ կրելով որ թռչունը կարող է վնասել երեխային, քարով քշեց: Բայց քիչ յետոյ նորէն եկաւ արծիւը: Մայրը դարձեալ քշեց: Թռչունը երրորդ անգամ երեւաց մանկան գլխավերեւը: «Այսպիսի մարգարէական նշաններ չատ են պատահել, ասում է կենսագիրը, բայց ինքը չի ուզում կանգ առնել նրանց վրայ»:

Վարդան, որ կայսր դարձաւ Փիլիպպիկ անունով 711 - 713 թուին, նախ քան դահակալելը, նման երազ էր տեսել թէ ինչպէս արծիւը փռել էր թեւերը նրա գլխին: Նոյնը պատմում է Խորենացին Արծրունիների մասին նրանց անուան ստուգաբանութեան առթիւ:

Վասիլը հազիւ մանկութիւնից ելած կորցրեց հօրը: Ընտանիքի ծանրութիւնը մնաց նրա վրայ: Պէտք էր խնամել մօրը եւ եղբայրներին: Տեսնելով որ երկրագործութիւնից մեծ շահ չկայ, մտածեց գնալ մայրաքաղաք: Մեծ քաղաքները հնարաւորութիւն են տալիս երեւան հանելու մարդու ընդունակութիւնները, նկատում է պատմագիրը, այն ինչ գիւղերը կլանում, խեղդում են լաւագոյն ձիրքերը: Մայրը դժուարանում էր թողնել որդուն, բայց մի շարք երազներ ստիպեցին խոնարհել եւ օրհնել Վասիլին դէպի պանդխտութիւն:

Մի օր մայրը երազ տեսաւ, ինչպէս երբեմն Կիւրոսի մայրը, որպէս թէ մի մեծ ծառ էր բուսել: Ծառը բարձրացաւ տանից վեր, ծաղկած էր եւ պտուղներով ծանրաբեռնուած: Ծառի բունը ոսկի էր, ճիւղերն ու տերեւները եւս ոսկենման:

Իր մերձաւորներից մէկը, որ գիտէր մեկնել երազներ, բացատրեց թէ այս զարմանալի երազը գուշակում է որդուն մեծ եւ փայլուն ապագայ: Մի ուրիշ անգամ երազում տեսաւ թէ ինչպէս մի ծերունի մարդ, որի բերանից բոց էր ելնում, ասաց պարզ եւ որոշակի թէ սիրելի որդիդ Վասիլը մի օր պիտի ստանէ իր ձեռքը կայսերական իշխանութեան գայիսոնը: Մայրը ապշած՝ հարցրեց թէ ո՞վ է խօսողը: Պատասխանեց, «ես եմ Եղիա» եւ չքացաւ: Այս աստուածային ներշնչումներից յետոյ մայրը համաձայնեց թողնել որդուն օտարութիւն:

Վասիլի կենսագիրը չի յիշում որ իր պապը, նախ քան մայրաքաղաք գալը, ծառայել է Մակեդոնիայի զօրավարի, Յանցի, մօտ:

Վասիլն ուղեւորուեց մայրաքաղաք «Թրակիական Մակեդոնիայից»: Ուշադրութեան արժանի է այս ասութիւնը, որով հեղինակն ուզում է հարթել ծանօթ աշխարհագրական դժուարութիւնը:

Պատանին կանգ առաւ Ոսկէ դրան մօտ Ս. Դիոմեդի եկեղեցում: Երազատես վանականի անունը Նիկողայոս էր: Սա մի եղբայր ունէր բժիշկ, որ դարմանում էր Թէոփիլից իշխանին: Թէոփիլիցը Վարդի եւ Թէոդորա կայսրուհու ազգականներից էր, ուրեմն հայ: Թէոփիլից նշանակում է փոքրիկ Թէոփիլ, այլապէս Թէոփիլիկոս, կամ Թէոփիլիդիոն, մականուն էր Paideuomenos: Բժիշկը դալով Ս. Դիոմեդ իր եղբօր մօտ, տեսաւ Վասիլին եւ հիացաւ նրա արտաքին տեսքից: Հետաքրքրուեց իմանալ, ո՞վ է նա: Եղբայրը պատմեց իր տեսիլը, խնդրելով գաղտնիք պահել:

Բժիշկը մի օր, երբ ճաշի էր Թէոփիլից մօտ, լսեց որ սա պէտք ունի մի կարիճ ձիապանի իր ախոռի համար: Առանց վարանելու յանձնարարեց Վասիլին: Տանտէրը խլոյն եւ եթ մարդ ղրկեց նրա ետեւից:

Թէոփիլից չատ հաւանեց Վասիլին: Խոշորագեղ երիտասարդ էր, դանդուր մազերով, մեծ գլխով, որի պատճառով եւ անուանեց նրան Kephalas, մեծագլուխ: Աւելի յարմար ձիապան չէր կարելի երեւակայել: Թէոփիլից կարգեց նրան պրոտոստրատոր, ախոռապետ:

Միքայէլ դեռահաս կայսրը նոր էր փեսայացել: Բուկելարեան թեմի զօրավարը նրան նուէր էր բերել մի քայլատոհմիկ եւ տաքարիւն նժոյգ: Մտադրութիւն ունենալով արշաւի հանել կրկէում, կայսրը ուզեց նախապէս քննել, նայել ատամներին եւ որոշել տարիքը եւ ընդհանրապէս ընդ-

լանալ բնաւորութեան: Սակայն, ոչ կայսրը եւ ոչ ուրիշ որ եւ է մէկը չկարողացան մօտենալ ձիուն, այնքան կատաղի էր: Թէոփիլիկ, որ ներկայ էր, ասաց կայսրին թէ իր մօտ մի պատանի կայ, որի եւ քաջ ձիավարժ, նա միայն կարող է սանձահարել այս ապերասան կենդանուն:

Միքայէլը պատուէր տուեց իր սենեկապանին, որ գնայ երկաթէ դուռը (Siderapyla – Դեմիր կապու) եւ բերի Վասիլին շտապով: Վասիլ եկաւ, մօտեցաւ ձիուն, մի ձեռքով բռնեց սանձը, միւսով սկսեց շփել ականջը: Կատաղի երիվարը հլու եւ խոնարհ էր որպէս ոչխար: Կայսրը զոհ մնաց, տուաւ արի երիտասարդին իր մօտ սորատորի, ձիապանի, պաշտօնով եւ միեւնոյն ժամանակ պատուիրեց հետերթը Անդրէասին ընդունել նրան օտարականներից բաղկացած դնդի մէջ:

II

Գէորգի Շարունակողը, առաջին անգամ յիշում է Վասիլին ձիու դէպքի առթիւ, Միքայէլի ամուսնութիւնից յետոյ: Ձիու դէպքը տեղի է ունեցել ամուսնութիւնից «քիչ յետոյ»: Միքայէլ ծնուած էր 839 թուին, ամուսնանալու համար պէտք է դնել 15 տարեկան լինէր, ընդունելով հանդերձ պատմագիրների վկայութիւնը, թէ Միքայէլը շուտ էր հասել արբունքի: Այս հաշուով ամուսնութիւնը կայացած պիտի լինի ոչ յառաջ քան 854–855 տարիները: Ենթադրենք որ ձիու պատմութիւնը վերաբերում է նոյն 855 թուին:

Թէոփիլիցը յանձնարարելով Վասիլին կայսրի ուշադրութեան, անուանում է սրան νεώτερον, այսինքն՝ պատանի, դեռահաս: Եթէ Վասիլը ծնուած էր 812 թուին, այդ պահուն, ուրեմն, 43 տարեկան պիտի լինէր: Արդ՝ ի՞նչպէս կարող էր Թէոփիլից 43 տարեկան մարդուն կոչել νεώτερον պատանի:

Հաւանական չէ նաեւ որ 15 ամեայ մատաղ կայսրը ձիապան վերցնէ 43 տարեկան, հասակն արդէն կոտրած մարդու: Ակներեւ է որ Վասիլը չէր կարող ծնուած լինել 812ին: Եթէ ծնունդը դնենք գերեդարձի տարին, 836ին, համաձայն վերեւ յայտնած ենթադրութեանս, Վասիլը մեծ կը լինի Միքայէլից միմիայն երեք տարով, 19 տարեկան պատանի, հասակակից եւ արդարեւ νεώτερον: Միքայէլը, երբ ներկայացրեց իր նոր ձիապանին կայսրուհուն, ասաց. «տե՛ս,

մայր իմ, ինչ կարիճ տղայ եմ բերել, agouron»: Հասակաւոր մարդ չէ նշանակում agouron, այլ երիտասարդ, դեռահաս: Այս տեսիլ էր որ կայսրուհին, ինչպէս հաւատացնում է պատմագիրը, մարգարէացաւ, ասելով. «սա է, որդեակս, որ պիտի ջնջէ մեր տունը»:

Կոստանդին Ծիրանածինը եւս դիտէ ձիու դէպքը, բայց այլ կերպ է պատմում: Միքայէլ կայսրը մի ձի ունէր, գեղեցիկ, բայց պնդագլուխ: Ամէն նկատումով ձին հրաշալի էր, բարձր, սիրուն, արագավազ եւ տոհմիկ: Մի թերութիւն ունէր: Երբ սանձը հանում էին գլխից, այլեւս անհնարին էր մօտենալ, խրտչում էր:

Մի անգամ կայսրը նստեց այս ձին եւ գնաց որսի: Ձին քշեց եւ մկունդով զարկեց մի նապաստակի: Կայսրը ուրախացած՝ իջաւ ձիուց որ վերցնէ սպանած որսը: Ձին փախաւ, աղաւ զգալով իրեն: Մարդիկ հեռուից ընկան և չկարողացան բռնել: Միքայէլը զայրացաւ եւ հրամայեց անհնազանդ կենդանու յետին ոտները կտրեն, եթէ բռնուի: Վարդ կեսարը խնդրեց կայսրին, այդպիսի ծանր պատիժ չտալ մի չնչին յանցանքի համար եւ չփչացնել ազնիւ ձիուն: Այդ միջոցին Վասիլը չշնջաց իր տիրոջ Թէոփիլիցին, արդեօք կայսրը չի՞ նեղանայ, եթէ ինքը քշէ իր ձին եւ քշած ժամանակ ցատկ կայսեր ձիու վրայ եւ այդպէս բռնէ նրան: Կայսրի հաւանութեամբ, Վասիլ յաջողեց սանձահարել ձիուն: Հրաչացաւ Միքայէլը եւ խնդրեց Թէոփիլիցին զինանել իրեն այդ քաջ տղային որպէս կայսերական ստրատոր, ձիապան: Վասիլը դրաւեց կայսրի սէրը եւ կարգուեց պրոտոստրատոր, ախոռապետ:

Մի նմուշ է, թէ ինչպէս Ծիրանածին պատմագիրը փոխում է, զարդարում հնարածոյ մանրամասներով պարզ եւ անպաճոյճ դէպքերը, որով եւ վտանգում է պատմական ճշմարտութիւնը: Ձի ոտնձգելու հասարակ եւ իրական դէպքը այնպէս է այլանդակուել Կոստանդնի գրչի տակ, որ վիպական կերպարանք է ստացել, կորցնելով իրական գծերը: Այստեղ չի յիշւում որ անցքը տեղի է ունեցել Միքայէլի ամուսնութիւնից յետոյ: Մեզ հետաքրքրում է այն հարցը թէ ե՞րբ մտաւ Վասիլ Միքայէլի մօտ որպէս ձիապան:

Որսի գնացող Միքայէլը պէտք է որ առնուազն 14-15 տարեկան լինէր, ուրեմն, մօտաւորապէս այն հասակում, երբ ամուսնացաւ: Միւս կողմից եթէ ճիշտ է որ Վարդը ընկերացել էր Միքայէլին որսի ժամանակ, այդ կարող էր պատահել ոչ յառաջ քան 856 թիւր, երբ Միքայէլն ու Վարդը անցան իշխանութեան գլուխ, ներքինի Թէոկտիստի սպանութիւնից յետոյ: Գիտենք որ 858ին, երբ մահափորձ եղաւ Վարդի դէմ, Վասիլն արդէն պրոտոստրատոր էր: Հաւանական է որ Վասիլ ստրատորի պաշտօնը ստացած լինէր 856ին պալատական մեծ յեղաշրջումի հետեւանքով, երբ Վասիլ, մեր հաշուով, մօտ 20 տարեկան երիտասարդ պէտք է լինէր:

Թէոփիլիցի մօտ Վասիլը մնաց մի քանի տարի: Առաջին անգամ նա հռչակուեց պալատական շրջանում ըմբշամարտութեան տեսիլ: Վասիլի այս քաջագործութիւնը պատմում է Կոստանդին կայսրը յառաջ քան ձիու դէպքը: ——

Վարդի որդին Անտիգոնը հրաւէրք ունէր պալատական չէնքում ի պատիւ իր հօր: Վարդի հետ եկան ծերակուտականներ, մօտիկ բարեկամներ և ի միջի այլոց մի քանի բուլղարացի, որ դեսպանութեան աղագաւ գտնւում էին մայրաքաղաքում: Հրաւիրուած էր նմանապէս Վասիլի տէրը, Թէոփիլոս կամ Թէոփիլից որպէս ազգական: Այնտեղ էր եւ Կոստանդին պատրիկը, Գենեսիոս պատմիչի պապը: Երբ բուլղարների գլուխը տաքացաւ գինուց, սկսեցին մեծախօսել եւ պարծենալ, որ իրենց մէջ մի ըմբիշ կայ, որի մէջքը դեռ գետնին չի կպչել: Թէոփիլից մօտեցաւ Վարդ կեսարին եւ ասաց որ մեզ համար խայտառակութիւն է նուաստանալ բուլղարների առաջ: Սրանք պիտի վերադառնան իրենց երկիրը եւ յոխորտան որ անյաղթելի են: Ասաց եւ առաջարկեց թոյլ տալ բերել Վասիլին, որ իր մօտ ձիապան էր, եւ որը միայն կարող էր խելքի բերել պոռոտախօս բուլղարներին:

Շուտով երեւաց Վասիլը: Կոստանդին պատրիկը սիրով վերաբերեց Վասիլին որպէս հայ եւ զգուշութեան համար պատուիրեց յարդ չապ տալ յատակի վրայ, որպէսզի մենամարտելիս իր հայրենակիցը չսայթաքի: Ըմբիշները իրար կպան թէ չէ, Վասիլը սեղմեց հակառակորդին իր բազուկներով, բարձրացրեց, կարծես մի խուրձ խոտ լինէր կամ չոր ու թեթեւ բուրդ, եւ նետեց սեղանի վրայ: Հանդիսականները դարմացան եւ Վասիլի համբաւը թնդաց:

Պէտք է կարծել որ ճշմարտութեան կորիզ կայ այս դէպքի մէջ, թէեւ մեր աղբիւրները այնքան տարբեր կերպով են ներկայացնում իրողութիւնը որ կասկածելի են դարձնում նոյնիսկ ենթադրեալ կորիզը:

Գենեսիոս պատմիչը երկու դէպք դիտէ ըմբշամարտութեան: Առաջինը տեղի ունեցաւ Թէոփիլիցի մօտ եւ ոչ Անտիգոնի: Թէոփիլիցն էր ճաշի կանչել Անտիգոնին եւ Կոստանդին պատրիկին, պատմիչի պապին: Թէոփիլից, ինչպէս եւ Վարդն ու Միքայէլ կայսրը, ունէին յատուկ ըմբիշներ: Այդ օրը Թէոփիլիցի ըմբիշները պարտութիւն են կրում Վար-

դի եւ Միքայէլի ըմբիշներից: Հանդէս է գալիս Վասիլը եւ փրկում իր տիրոջ ինքնասիրութիւնը: Կոստանդին պատրիկը երեւում է նոյն դերում, ինչ որ յիշում է Կոստանդին կայսրը, այսինքն յարդ է բերում եւ սփռում յատակի վրայ, որ պէսզի Վասիլի ոտքը չսահէ եւ չընկնի: Բուլղարը չզօրեց բարձրացնել Վասիլին, մինչդեռ վերջինս ոչ միայն բարձրացրեց, այլ եւ արագ շարժումով պատեց եւ գլորեց kata podrezan ձեւով, այսինքն ոտ տալով, այնպէս ուժգին որ բուլղարի ուշքը գնաց եւ ջրով սթափեցրին:

Վասիլի յաղթութեան մասին Անտիգոնը պատմում է իր հօրը՝ Վարդին, սա էլ Միքայէլին: Իսկոյն կանչում է կայսրը Վասիլին երկու ուրիշ ըմբիշների հետ: Հաւանում է մանաւանդ Վասիլին, որի արտաքին այնքան տպաւորիչ էր: Վասիլ արժանանում է մեծամեծ շնորհների եւ կարգւում ոտրատոր: Այդ ժամանակն էր որ Թէոդորա կայսրուհին պիչ պիչ նայելով Վասիլին բացագանչեց. «որդի՛ս, իցիւ թէ տեսած չլինէի այսօր սրան. այս մարդը քանդելու է մեր տունը, ինչպէս որ հայրդ նախագուշակել է»:

Երկրորդ դէպքը, նոյն պատմագրի ասելով, տեղի ունեցաւ, երբ Վասիլն արդէն գահի վրայ էր:

Բուլղար թագաւորը մի հուշակաւոր ըմբիշ ունէր, որ անպարտելի էր համարւում: Մի օր սրան դրկեց մայրաքաղաք մրցութեան: Վասիլ կայսրը չկարողացաւ տանել որ մի օտար ըմբիշ արատաւորէ հոռոմէական անունը: Ինքը ախոյեան ելաւ ծպտուած: «Սկիթը», ուրեմն բուլղարացին, փորձեց բարձրացնել «Մակեդոնացուն», բայց չկարողացաւ: Մինչ Վասիլը դրկեց նրան ուժեղ ձեռքերի մէջ, բարձրացրեց եւ դարկեց գետին այնպիսի սաստկութեամբ, որ բուլղարը ուշաթափուեց եւ «չատ ջուր ու գինու կաթիլներ եւ վարդաջուր սրսկեցին, մինչեւ որ ուշքի բերին: Ականջից եւ քթից արիւն էր հոսում»:

Կայսրի ըմբշութիւնն ինքն ըստ ինքեան անհաւատալի է: Ամբողջ պատմութիւնը այլ բան չէ քան արձագանգ առաջինի: Պատմիչի պապը Կոստանդին պատրիկը ներկայ է եղել մրցութեան եւ կարելի էր յուսալ որ իր թոռը ստոյգ տեղեկութիւն կ'ունենար եղելութեան մասին, հիմնուած ընտանեկան աւանդութեան վրայ: Թւում է թէ թոռը գերադասել է հաճոյակատար լինել քան ճշմարտասէր: Կոստանդին Ծիրանածնին, որի պատուէրով գրել է իր պատմութիւնը, դուր գալու համար, չափազանցրել է իր եռանդը գովաբանելու Վասիլին, յօրինելով նոր փաստ նրա ըմբիշական կարողութեան:

Ուշադրութեան արժանի է, որ Թէոդորայի մարդաբէական երկիւղը առաջին ըմբշամարտից յետոյ, Կոստանդին Ծիրանածինը յիշատակում է բոլորովին ուրիշ տոթիւ եւ ուրիշ պայմաններում: Նշա ասելով մի անգամ որոստէը Միքայէլ կայսրը գնաց որսի Արմամենտարիա կոչուած վայրը եւ յետոյ ճաշ պատուիրեց եւ հրաւիրեց իր մօրը, ոգեւորականներին եւ ծերակուտական մեծամեծներին: Կանչեց նաեւ Վասիլին, որ այդ պահին պրոտոսպաթարոր էր: Երբ Վասիլ սեղան նստեց, կայսրուհի Թէոդորան աչքերը սեւեռեց նրա վրայ, կարծես թափանցել էր ուզում նրա ներսը: Ցանկարծ ցնցուեց եւ ուշաթափ եղաւ: Ջրով եւ վարդաջրով ուշքի բերին: Հիւրերը չփոթուած հեռացան: Միքայէլը մօտեցաւ մօրը եւ հարցրեց ուշաղնացութեան պատճառը:

Ահա այդ ժամանակ էր, որ յուզուած կայսրուհին յայտնեց իր նախազգացումը Վասիլի նկատմամբ: «Ինձ թւում է, ասաց թագուհին, որ սա է այն անձը, որ կործանելու է մեր տունը: Հօրիցդ լսել եմ որ մէկը պիտի մեզ խորտակի: Նշաններից երեւում է որ Վասիլն է լինելու մեր ժառանգորդը: Կարծես, աչքովս տեսնում եմ մեր անկումը: Այս զգացումը այնպէս խռովեց ինձ, որ ուշքս կորցրի»:

Կայսրը հանգստացրեց մօրը ասելով. «կատակաբան անտեղի է, մա՛յր իմ: Այս մարդը հասարակ եւ անկիրթ ոմն է, օժտուած միմիայն ուժով ինչպէս հին Սամսոնը, եւ ուրիշ ոչինչ: Մի Ենոք է կամ Ներրոմթ մեր ժամանակներում ծրնած: Աւելորդ է երկիւղդ եւ կատականներդ»:

Այսպէս Վասիլը փրկուեց փորձանքից, Աստուծոյ խնամքով, եզրակացնում է պատմիչ-թոռը:

Թէոփիլին վերաբերեալ ակնարկը կապ ունի այն դուշակութեան հետ, որ արաբ հարցուկ կինը տրել էր Թէոփիլին, թէ իրենից յետոյ թագաւորելու են կիներ եւ որդին եւ ապա իշխանութիւնը անցնելու է Մարտինեակ տան:

Խրատական է տեսնել թէ որպիսի ազատութեամբ են վերաբերում պատմիչները միեւնոյն նիւթերին, վաւեր թէ անվաւեր: Ամեն մէկը իր ճաշակի համաձայն չրջանակ է յօրինել չրջուն զրոյցները զետեղելու համար: Վիպական վերաբերում է քան պատմական, եւ պատճառը Վասիլին գովաբանելու, հերոսացնելու ձգտումը չէ միայն, այլ եւ ստոյգ տեղեկութիւնների սղութիւնը, անիրազեկութիւնը:

Հարազատ չէ թւում մեզ նաեւ Վասիլի եւ տիկին Դանէլիսի բարեկամութեան միջադէպը, որ աւանդում է միմիայն իր թոռը, Կոստանդին Ծիրանածինը: Թէոփիլիցը մի անգամ գնաց Պելոպոնէս պետական գործով Միքայէլի եւ Վարդի

յանձնարարութեամբ: Վասիլ ուղեկցեց նրան: Աբեայլի Պատրաս քաղաքում Թէոփիլից այցելեց Անդրէաս առաքեալի տաճարը եւ աղօթեց: Վասիլ զրաղած լինելով, չկարողացաւ ընկերանալ նրան, այլ այցելեց նոյն տաճարը առանձին, քիչ յետոյ:

Հիւրընկալ վանականը ոչ մի յարգանք եւ ուշադրութիւն ցոյց չտուեց Թէոփիլիցի և կամ նրա միւս ուղեկիցների նկատմամբ: Իսկ երբ Վասիլն եկաւ, վանականը դիմաւորեց նրան եւ ընդունեց արքայավայել կերպով: Ներկաները զարմացան: Լուրը հասաւ տեղացի հարուստ եւ ազնուական կնոջ, որ այրի էր եւ ամուսնու անունով կոչւում էր Դանէլիս: Սա ճանաչում էր վանականին, գիտէր, որ մարգարէական շնորհ ունի: Կանչեց իր մօտ եւ հարցրեց թէ ի՞նչ է պատճառը, որ այնպէս ուշադիր է եղել մի անծանօթ օտարականի, եւ այնպիսի մեծարանք ցոյց տուել, որին երբեք չի արժանացրել ոչ իր որդուն եւ ոչ թոռին: Վանականը ասաց թէ հասարակ անձն չէ նա, որին ինքը տեսաւ, այլ հոռոմէական մեծ կայսր, Աստուծոյ ընտրածը պէտք է յարգուի եւ մարդկանց կողմից:

Թէոփիլիցը վերջացնելով իր գործերը դարձաւ քաղաք, Վասիլը տկարութեան պատճառով չկարողացաւ հետեւել նրան և մնաց այնտեղ մի առժամանակ: Տիկին Դանէլիսը այդ միջոցին համակրութեան եւ յարգանքի նշաններ ցոյց տուեց Վասիլին «որպէս մէկը, որ բարի հողում սերմեր է ցանում որպէսզի առատ հունձք ստանայ ժամանակին»: Մեծամեծ նուէրներով օժտեց, անթիւ ոսկի, հագուստեղէն, ծառաներ թւով 300, պարգեւեց: Փոխարէնը այլ բան չէր պահանջում քան որ հոգեւոր եղբայրութեան ուխտ հաստատէ իր որդի Յովհաննէսի հետ: Վասիլը դժուարութեամբ համաձայնեց ընդունել Դանէլիսի շնորհները և խոստացաւ նրան իր երկրի տէր դարձնել, եթէ երբ եւ է կայսր դառնայ, ինչպէս գուշակել էր վանականը: Այս անսպասելի դանձն էր որ հնարաւորութիւն տուեց Վասիլին կարուած գնել Մակեդոնիայում եւ ապահովել իր մերձաւորներին: «Նա, որ հարուստ էր առաքինութեամբ, այս կերպով ճոխացաւ նաեւ ինչքով եւ դրամով», նկատում է պատմագիրը:

Որպիսի՜ զուգադիպութիւն: Վասիլի հայրը գործ ունէր Ադրիանուպոլցի մի այրի կնոջ հետ, ինքը Վասիլը՝ մի ուրիշ այրիի հետ հեռաւոր Պատրասից: Մութ պատմութիւն է: Կարծես թէ այրի կնոջ մասին մի խուլ զրոյց է եղել, բաւականին անորոշ, մոռացուած, որ յայտնի չէ եղել ստուգօրէն, հօր հետ է կապ ունեցել թէ որդու: Կոստանդին Ծիրանածին

նը մշակել է այդ նիւթը ըստ իր սովորութեան մասն հանելով և՛ հօրը և՛ որդուն: Հայրը ամուսնանում է այրիի հետ, իսկ որդին միմիայն բարեկամ է, աւելի չուտով հոգեւոր որդի Դանէլիսի:

Արդեօք, որքա՞ն արժանահաւատ է վերջինս: Պատմագիրն ինքը եւս վստահ չէ, թէ ի՞նչ էր օտարուհու արտակարգ բարեսրտութեան շարժառիթը: Վախենալով որ չահի կամ արգելուած սիրոյ կասկածը չարատաւորէ նրանց յարաբերութիւնը, չտապում է կանխել, հաւատացնելով որ Դանէլիսը «սերմում էր որ յետոյ հնձի» և որ իր շնորհների փոխարէն այլ բան չէր պահանջում քան որ Վասիլը եղբայրանայ իր որդու հետ: Այս զգացումը աւելի եւս կասկած է յարուցանում: Երկու շարժառիթից եւ ոչ մէկը համոզիչ չէ: Վանականի գուշակութիւնը հնարուած է յետին թուով Վասիլի թագաւորելուց յետոյ, իսկ եղբայրութեան խնդիրը, հաւանօրէն, արձագանգ է այն իրողութեան, որ Դանէլիսի որդին պրոտոսպաթարի, առաջին սուսերակրի, պատիւ ստացաւ Վասիլի օրով:

Պատմուածքի իսկական իմաստը կայանում է նրանում, որ բացատրուի Վասիլի հարստութեան պարագան: Այս պատճառով եւ Դանէլիսի նիւթական միջոցները առասպելական չափազանցութեան են հասցրած: Այստեղից մի բան է հետեւում, որ Վասիլ իրապէս խոշոր կալուածատէր է եղել Մակեդոնիայում: Այն ինչ ժողովրդական երեւակայութեան մէջ Վասիլ դուրս է բերուած որպէս չքաւոր բնտանիքի զաւակ, որ իր անձնական աշխատանքով եւ ձեռներէցութեամբ նուաստ վիճակից բարձրանում է մինչեւ կայսերական գահը: Պատմագիրներն ընդունել են այս վիպական պատկերը հերոսի մանկութեան եւ որպէսզի կարելի լինի մեկնել նրա հարստութիւնը, այսինքն իրական վիճակը, Կոստանդին Ծիրանածինը յօրինել է Դանէլիսի զրոյցը: Այս խնդրին նորէն կը դառնանք ստորեւ: Այժմ հետեւենք դեռ Վասիլի յառաջդիմութեան:

Զիու դէպքից յետոյ, տեսանք, որ Վասիլ նշանակուեց կայսերական ստրատոր կամ ձիապան, մօտաւորապէս 856 թուին: Ըստ Գենեսիոսի, այս տեղի ունեցաւ ըմբշամարտութիւնից յետոյ: Վասիլ արդէն ձիապան էր Միքայէլի մօտ, երբ առիթ ունեցաւ զսպելու, կայսրի պատուէրով, նրա կատաղի ձին այնպիսի դիւրութեամբ «որպէս Ալեքսանդրը՝ Բուկիֆալին կամ Բելլերուֆոնը՝ Պեգասին»:

Երբ Վարդի դէմ մահափորձ եղաւ Թէոդորայի թելադրութեամբ և կայսեր պրոտոստրատորի մասնակցութեամբ,

վերջինս պատժուեց եւ նրա տեղն անցաւ Վասիլը մերձ 858 թուին: Վասիլի կեանքի այս շրջանից պատմում են հետեւեալ սքրալի գործը:

Մի անգամ Միքայէլ կայսրը որսի ելաւ Փիլոպատիոն տեղը: Պրոտոստրատորը, ախոռապետ Վասիլն ընթանում էր առջեւից, ընդունուած սովորութեան համաձայն, գօտիից կախած վարդը (bardoukion): Աղմուկի վրայ անտառից դուրս պրծաւ մի ամէհի գայլ: Բոլորը չփոթուած էին: Վասիլ նետեց վարդը եւ ճեղքեց գազանի գլուխը: Վարդ կեսարը, որ կայսրի ուղեկիցների թւումն էր, ասաց այս առթիւ իր մտերիմ բարեկամներին. «այս մարդը վերջ պիտի տայ մեր տոհմին»:

Պատմում են նաեւ որ Վարդը, անվստահ իր ապագային, հարցնում էր յաճախ Լեւոն մեծ փիլիսոփային որ հայ էր եւ համալսարանի տեսուչ, գալոց օրերի մասին: «Ես տեսնում եմ, պատասխանում էր իմաստասէրը, որ ձեր տոհմը պիտի ջնջուի մի չատ երիտասարդ անձից» νεανίσκος: Իսկ երբ տեսաւ Վասիլին, մատով ցոյց տուեց Վարդին ասելով. «սա է, որ պիտի լինի ձեր ժառանգորդը»:

Այնուհետեւ Վարդը սկսեց դաւեր սարքել Վասիլի դէմ, բայց ի զուր, որովհետեւ, ինչպէս կարծում է պատմագիրը, անկարելի է փոխել ինչ որ տնօրինուած է վերին նախախնամութեամբ: Այս զրոյցի ստաղձը տալիս է Գենեսիոս, յիշելով համառօտակի, որ մի անգամ կայսրը որսի էր եւ յանկարծ անտառից դուրս վազեց մի եղջերու: Վասիլը ձգեց վարդը եւ ջարդեց ետի ոտները: Նոյնն արեց եւ մի ահագին գայլի վերաբերութեամբ:

Կարեւորը զրոյցը չէ, այլ Լեւոն փիլիսոփային վերագրուած այն խօսքը թէ Վարդի կործանողը պիտի լինի մի չատ երիտասարդ մարդ: Մի նոր փաստ, մի ակամայ խոստովանութիւն, որ Վասիլն այնքան հասակաւոր չէր, երբ գահ բարձրացաւ: Մեր կասկածը եւ սրբագրութիւնը արդարանում է: Վերեւ պարզած հաշուով 866 թուին, երբ Վարդը սպանուեց, Վասիլ 30 տարեկան պիտի լինէր:

Պրոտոստրատոր Վասիլը յառաջանալով ստացաւ սենեկապետութեան բարձր պաշտօնը (parakoimomenos): Դամիանոս ներքինին, որ այդ պաշտօնն ունէր, նպաստել էր Վարդին սպանել թէոկտիստ ամենազօր մինիստրին եւ կառավարութեան ղեկը ստանձնել: Դամիանոսը, չստանալով ակնկալած պաշտօնն ու պատիւը, գժտուեց Վարդի հետ, որի հետեւանքով պաշտօնանկ եղաւ, կայսեր հրամանով, և քաշուեց մենաստան: Նրա տեղը բռնեց Վասիլ: Դամիանոսի արձակումին Վարդն արդէն կեսար էր, իսկ այդ պատուին արժանացել էր 862 թ. ապրիլի 26ին: Վասիլի սենեկապետութեան հասնելը այս թուից յետոյ է, հաւանօրէն, ոչ չատ ուշ: Միեւնոյն ժամանակ նա ստացաւ պատրկութեան աստիճան: Վասիլ չուտով չահեց կայսրի սէրն ու համակրութիւնը: Վարդը բաւականին փորձ ունէր եւ խորամտութիւն որ զգար թէ որքան վտանգաւոր ախոյեան էր նոր սենեկապետը: Իսկ վերջինս տեսնում էր որ երկրի իրական տէրը կայսրը չէր, այլ մեծազօր կեսարը: Սա միայն կարող էր խոչընդոտ լինել իր փառատենչ ձգտումներին:

Սկսում է սքօղուած մրցութիւնը երկու ախոյեանների մէջ: Վասիլ յաջողեց նախ անջատել Վարդից Սմբատին, որ մեծ լոգոթետի պաշտօնն ունէր եւ Վարդին մօտ մարդ էր, որպէս նրա փեսան: Սմբատը կուրացաւ Վասիլի խոստումից թէ Վարդի տապալուելուց յետոյ կեսարի մեծ դիրքը կը տուուի նրան:

Սմբատի միջոցով Վասիլ հասկացրեց Միքայէլին որպէս թէ կեսարը գաղտնի դաւեր է նիւթում նրա դէմ, կամենալով յափշտակել գահը: Անհիմն ամբաստանութիւնը թունաւորեց կայսրի միտքը: Միամտօրէն ձեռք տուեց իր հարազատ քեռու եւ ամուր նեցուկի թշնամիներին, կործանեց նրան առանց մտածելու որ իր արածը ոչ միայն ոճիր էր, այլ մի օրհասական սխալ, որ տանում էր դէպի իր սեփական կործանումը:

Վարդի սպանութեան պարագան պժգալի է: 866 թուի գարնան Միքայէլ կայսրը շարժուեց զօրքով դէպի Թրակեսեան թեմը եւ բանակեց Մեանդեր գետի հովտում Կիպի (պարտէզ) կոչուած տեղում: Ցայտարարուած էր, որ կայսրը գնում է Կրետէ կղզու մուսուլման իշխանութեան վրայ: Արդեօ՞ք լուրջ արշաւանք էր թէ լոկ պատրուակ նախագծած ոճրագործութեան համար, յայտնի չէ: Այստեղ Վարդը սպանուեց նենգօրէն: Մանրամասնութեանց մասին խօսելենք ուրիշ յօդուածում: Ցիշենք միայն, որ պատմագիրներից Գէորգի Շարունակողը սպանութիւնը վերագրում է Սմբատին եւ Վասիլին, Գենեսիոսը Վասիլի անունը չի տալիս, իսկ Կոստանդին Ծիրանածինը մեղապարտ է համարում Միքայէլին: Վասիլը սուրը մերկացնում է որպէս թէ կայսրի հրամանով եւ նրան պաշտպանելու համար: Գենեսիոսը նոյն դերը տալիս է Կոստանդին Հային: Երկու պատմիչներն էլ աշխատում են ի նպաստ իրենց պապերի, բայց ոչ ճշմարտութեան:

Սպանութեան մասին Միքայէլ կայսրը գրում է բանա-

կից Փոտ պատրիարքին: Հեռատես պատրիարքը խորհուրդ է տալիս կայսրին վերադառնալ անմիջապէս մայրաքաղաք: Անտարակոյս, հաւատ չունէր Վասիլի վրայ եւ կասկածում էր որ կայսրը եւս կարող է գոհ գնալ նրա փառասիրութեան: Միքայէլը վերադարձաւ: Մի ամիս չքաշեց եւ Վասիլը հրաչակուեց կայսր, դահակից Միքայէլին: Թագադրութեան հանդէսի նկարագրութիւնը հասել է մեզ:

Հոգեգալստեան շաբաթ երեկոյեան, 866 թուին մայիսի 26 կայսրը առաջին հանդերձապետի Ռենտակի միջոցով պատուիրեց Փոտ պատրիարքին որ Վասիլին յայտարարէ թագակից կայսր: Հետեւեալ օրը եկեղեցում երկու դահ էր պատրաստուած: Ժողովուրդը զարմացած էր թէ ի՞նչ է նշանակում այս անսովոր երեւոյթը: Շուտով երեւաց կայսրը, ետեւից գնում էր Վասիլը բռնած սկարամանգ եւ սուր, ինչպէս յատուկ էր պարակիմոնենի պաշտօնին: Կայսրը մտաւ կայսերական դռնից առանց հանելու թագը, ինչպէս սովորութիւն էր, այլ այնպէս անցաւ մինչեւ սեղան: Թագը գլխին բարձրացաւ աստիճանները, ստորեւ կանգնած էր Վասիլ եւ քիչ հեռու Վասիլից՝ Լեւոն Կաստոր անունով քարտուղարը ձեռքին մի թուղթ, ապա Միքայէլի սենեկապան Անգուրէսը, այլ եւ ժողովրդապետները իրենց կուսակիցներով:

Լեւոն քարտուղարը սկսեց կարդալ թուղթը, որի բովանդակութիւնն էր. «Վարդ կեսարը դաւեր էր սարքել ինձ սպանելու եւ այս նպատակով ինձ քաղաքից դուրս տարաւ: Եթէ պաշտպան չունենայի Սմբատին եւ Վասիլին, կենդանի չէի լինի: Մեռաւ Վարդը իր իսկ ոճիրի հետեւանքով: Այժմ ցանկանում եմ, որ պարակիմոնեն Վասիլը, նա որ հաւատարմութեամբ պաշտպանեց իշխանութիւնս եւ փրկեց ինձ թշնամուց սիրելով ինձ, ցանկանում եմ որ նա պահպան լինի տէրութեանս և հոգածու ու բոլորի կողմից փառաբանուի որպէս կայսր»:

Վասիլը յուզմունքից արտասուեց: Կայսրը հանեց գլխից թագը եւ տուաւ պատրիարքին: Պատրիարքը դրեց սեղանի վրայ, օրհնեց: Սենեկապանները հագցրին Վասիլին դիւեսիոն զգեստը եւ ցանգիա կօշիկները: Վասիլը հանեց իր քղամիդը եւ ձգեց կայսրի ոտքերի տակ: Ելաւ սեղանից պատրիարքը, առաւ թագը եւ դրեց կայսրի գլխին, յետոյ հանեց եւ տուեց թագը կայսրի ձեռքը եւ սա պսակեց Վասիլին: Ամբոխը ողջունեց աղաղակելով՝ կեցցէ Միքայէլը, կեցցէ Վասիլը:

III

Վարդի փեսան, Սմբատը, որ իր աջակցութեան փոխարէն յոյս էր տածում ստանալ կեսարի պատիւ, հիասթափուեց, երբ տեսաւ որ խաղալիկ է եղել Վասիլի ձեռքին եւ լրցուեց ատելութեամբ ու դառնութեամբ: Խորհուրդ արին Գէորգ Ստրատելատի հետ, որ Պեգանի որդին էր, եւ յաջորդ օրը խնդրեց որ իրեն ստրատեգ կարգեն, այսինքն թեմ տան: «Յաջորդ օրը» ասելով հասկացւում է խորհրդակցութեան յաջորդ օրը եւ ոչ թագադրութեան:

Սմբատի խնդիրը մնաց անհետեւանք: Ընդհակառակը, նրանից խլեցին լոգոթետի պաշտօնը եւ յանձնեցին ոմն Գուսմերի: Գէորգին տուին Օփսիկեան թեմը: Երկուսն էլ դժգոհ մնացին եւ ըմբոստացան իշխանութեան դէմ: Սկսեցին գրգռել ժողովուրդը, հրդեհել դաշտերն ու այգիները, բողոքելով Վասիլի կայսերացումի դէմ: Կայսրները հրաման արձակեցին միւս ստրատեգներին, այսինքն միւս թեմերի զօրավարներին, զսպել ապստամբութիւնը: Գործը յանձնեցին Նիկիփոր Մալէին զօրավարին: Սա խոհեմութեամբ վարուեց, գրաւոր շրջաբերականներ ցրեց զօրքերին յանձնարարելով գործել գաղտուկ, աշխատել խեղդել ըմբոստութիւնը աւելի խորամանկութեամբ քան արձակ դիմադրութեամբ, որպէսզի շարժումը մեծ ծաւալ չստանայ եւ քաղաքացիական խլրտումների առիթ չտայ: Շուտով բռնեցին Գէորգ Պեգանին: Բարձրագոյն հրամանով մայրաքաղաքի եպարքոսը, Կոստանդին Միարը (Myares), կուրացրեց նրան եւ բռնադատեց կանգնել հրապարակի վրայ եւ մի ման ձեռքին ողորմութիւն հայցել անցորդներից:

Երեսուն օր անցած նոյն Մալէինը ձերբակալեց Սմբատին Եկեղեաց գաւառում մի պանդոկի մէջ եւ բերեց ներկայացրեց կայսրին Ս. Մամաս պալատում: Պատմում են որ բերին նաեւ դժբախտ Գէորգ Պեգանին, ձեռը տուին մի խեցեմորթեայ ծխանոց (բուրվառ), մէջը ծծումբ, եւ ստիպեցին ծխել Սմբատի առաջ: Սմբատի աչքի մէկը հանեցին, աջ ձեռքը կտրեցին, նստեցրին Լաւսոս կոչուած պալատի առաջ եւ մի ման դրին թեւի տակ, որ անցորդները ողորմութեան լուման ձգեն որպէս մուրացիկի: Երեք օրից յետոյ արձակեցին երկու յանցաւորներին իրենց տները, նշանակելով նրանց վրայ յատուկ հսկողութիւն:

Ուրիշ տեղեկութեամբ Սմբատը չուզենալով ապրել քաղաքում խնդրեց Թրակեսեան թեմի զօրավարութիւնը եւ ստացաւ: Իսկ Պեգանը նշանակուեց Օփսիկեան թեմը: Նիկի-

փոր Մալէինի անունը չի յիշատակւում, ինչպէս եւ Եկեղեաց գաւառը: Սմբատը բռնում է Լայնաքար կոչուած բերդում Πλατεία πέτρα, որ յայտնի չէ թէ որտեղ է գտնւում: Հաւանօրէն Թրակեսեան Թեմում: Պեգանը փախաւ Կոտիայոն Κοτύαιον, երեւի արդի Քեօթահիա: Այս տեղեկութեանց հեղինակը, Կոստանդին Ծիրանածինը, հաւատացնում է որ Վասիլը յետոյ ներեց յանցաւորներին եւ մինչեւ անգամ հրաւիրում էր նրանց կայսերական սեղանին: Գենեսիոսը չէ յիշում Սմբատի եւ Պեգանի խռովութիւնը:

Երկար չտեւեց միասնական կառավարութիւնը զոյգ կայսրների: Մի տարի եւ մի քանի ամիս էր անցել, երբ Վասիլը սպանեց նաեւ Միքայէլին եւ տիրացաւ միայնակ կայսերական գահին:

Միքայէլը նկարագրի տէր անձ չէր: Մանուկ հասակից անճնատուր էր ցոփ եւ զեղխ կեանքի: Վարդի օրով քիչ էր պարապել պետական գործերով: Մոլի զուարճութիւնները աւելի մեծ տեղ էին բռնում նրա հոգսերի մէջ քան կառավարչական գործերը: Սիրում էր յատկապէս ձիարշաւ: Ս. Մամաս պալատում մասնաւոր արշաւարան կար, ուր անձամբ մասնակցում էր վազքին: Պատմում են որ մի անգամ խաղի ժամանակ հրանշանները ազդարարեցին որ թշնամին մտել է երկիրը: Լեւոն մեծ փիլիսոփան հնարել էր մի տեսակ ժամացոյց, որի միջոցով նշան էր տրւում Կիլիկիայից մայրաքաղաք, երբ Արաբները յարձակւում էին: Կայսրը հրամայել էր լռել եւ չհրապարակել գոյժը, մինչեւ որ ձիարշաւը չվերջանայ:

Անհաւատալի են թւում այն արտառոց զրոյցները որ հիւսուել են զուարճասէր կայսրի ժամանցի շուրջը: Տղայական խաղեր եւ կատակներ էր սարքում: Մօտիկ ընկերը եւ գործակիցը իր սիրելի խեղկատակն էր, անունը՝ Թէոփիլ, իսկ փութ անունը՝ Խոզ Γρύλλος: Միքայէլը կոչում էր նրան Հիմերիոս, որ նշանակում է յունարէն սիրելի: Խաղերը երբեմն անվայել և մինչև իսկ պիղծ բնաւորութիւն էին կրում: Հիմերիոսը ձեւանում էր պատրիարք, Միքայէլ Կոլոնիոյ արքեպիսկոպոս, 11 հոգի հագնում էին եպիսկոպոսական զգեստ եւ միասին ներկայացնում էին ծաղրանքով պատարագը, ձեռնադրութեան թէ կարգալուծութեան ծէսերը: Պատմում էին որ նրանց լկտիութիւնն այնտեղ էր հասնում որ ծաղրում էին անգամ հաղորդութեան խորհուրդը, մանանեխ եւ քացախ տալով որպէս սրբութիւն: Չէին խնայում նոյնիսկ պատրիարքին: Մի օր, երբ Իգնատիոս պատրիարքը եկեղեցական թափօրով գնում էր դէպի մօտիկ արուարձանը, յանկարծ տեսնում է իր դէմ ծպտեալ ծաղրապատրիարք, նստած էշի վրայ եւ շրջապատուած ընկերակիցներով, նրանց մէջ տեղը ինքը Միքայէլ կայսրը: Նուագով եւ երգեցողութեամբ ելնում են պատրիարքի առաջ որպէս թէ սաղմոս են երգում և իրենց անճոռնի ձայներով խանգարում իսկական թափօրը:

Միքայէլը չէր խորշում վիրաւորել մինչիսկ հարազատ եւ կրօնասէր մօր նուիրական զգացումները: Մի անգամ խաբեց մօրը թէ պատրիարքը սպասում է նրան պալատում եւ խնդրում է դալ օրհնութիւն ստանալ: Այն ինչ պատրիարքը այլ ոք չէր բայց եթէ ինքը Խոզ Թէոփիլը, կայսերական ծաղրածուն, որ պատրիարքի պէս հագնուած նստել էր գահի վրայ, Միքայէլի կողքին: Կայսրուհին արդարեւ եկաւ եւ պատրիարքի տեղ ընդունելով անարգ միմոսին, չոգեց առաջը օրհնութեան համար: Այդ միջոցին կեղծ պատրիարքը չրջեց եռեւը դէպի կայսրուհին... Թագուհին ամօթահար հեռացաւ անիծելով իր անարժան որդուն:

Ասում են, որ Միքայէլը սիրում էր կրկնել թէ Հիմերիոսը իր պատրիարքն է, Փոտը՝ կեսարի (Վարդի) եւ Իգնատիոսը՝ քրիստոնեաների:

Այսպիսի վատ գոյներով է նկարագրում Միքայէլին Կոստանդին Ծիրանածինը, որպէսզի արդարացնէ Վասիլի գործած ոճիրը: Իր հաւաքած զրոյցները Միքայէլի անվայել վարմունքների մասին, անշուշտ, գունաւորուած են, բայց անհիմն չեն: Ուրիշ եւ անկախ աղբիւրից վկայութիւն ունինք մայրաքաղաքում կատարուող նման այլանդակութիւնների վերաբերեալ: Ճիշտ այս խնդրին է նուիրուած 869 թուի եկեղեցական ժողովի կանոններից մէկը, ուր յիշատակւում է կեղծ-թափօրը, միայն Միքայէլի անունը չի տալիս, այլ վերագրւում է ծերակուտական աշխարհականներին: Սրանք սանրում էին իրենց մազերը հոգեւորականների նման, հագնում էին եպիսկոպոսական զգեստներ եւ ձեւացնում էին թէ ինչպէս են ընտրւում, ձեռնադրւում եւ կարգազուրկ լինում եկեղեցականները: Ժողովը յանցանքը բարդում է Փոտ պատրիարքի վրայ որ թոյլ է գտնուել եւ կտրուկ միջոցներ չէ ձեռք առել այս խեղկատակութիւնների դէմ:

Գէորգ վանականի շարունակողը, որ զերծ է կայսերական տան ազդեցութիւնից, չի յիշում Միքայէլի անպատիւ խեղկատակութիւնները եւ տալիս է նրա սպանութեան մանրամասն նկարագրութիւնը:

Միքայէլը ձիարշաւ ունէր Ս. Մամասի պալատական կրկէսում: Մասնակցում էր ինքը, Կոստանդին պատրիկ Հա-

լը՝ պատմագիր Գենեսիոսի պապը, եւ երկու ուրիշ անձ, Ագալիան եւ Կրուսաս անունով: Կայսրը կապոյտ կուսակցութեան կողմից էր, Կոստանդինը՝ սպիտակ, Ագալիան՝ կանաչ եւ Կրուսաս՝ կարմիր: Ցաղթողը կայսրն էր: Այս առթիւ ճաշ էր պատրաստուած եւ հրաւիրուած էին նաեւ Վասիլ եւ իր կինը՝ Եւդոկիա Ինգերին, կայսրի նախկին սիրուհին: Ճաշի ժամանակ Վասիլիսկիան կոչուած պատրիկը սկսեց շողոքորթել կայսրին, գովաբանելով նրա վարպետութիւնը կառարշաւի արուեստում: Աւելի մեծ հրճուանք չէր կարելի պատճառել ունայնասէր կայսրին:

Գովքից հիացած, Միքայէլ հրամայեց Վասիլիսկիանին հանել իր ոտներից ցանգիա (zangia) կայսերական կարմիր կօշիկները եւ ինքը հագնել: Վասիլիսկիան քաչուում էր կատարել ինքնակալի հրամանը, հայեացքը ձգելով Վասիլի կողմը: Կայսրը բարկացաւ եւ սաստեց հնազանդուել իր հրամանին: Թէեւ Վասիլ յօժարութեան նշան ցոյց չտուեց, բայց Վասիլիսկիանը հագաւ կօշիկները:

Կայսրը ձայնեց Վասիլին. «Ատուած վկայ, կօշիկները սրան աւելի են սազում քան քեզ: Մի՞թէ իրաւունք չունեմ, ինչպէս քեզ կայսր դարձրի, մի ուրիշին եւս նոյնն անել»:

Եւդոկիա, տեսնելով որ կայսրը զայրացած է Վասիլի վրայ եւ անմիտ քայլ է անում, ասաց նրան արտասուաթոր. «կայսերական պատիւը, ո՛ տէր իմ, վեհ բան է, եւ մենք անարժան ենք որ կրում ենք այդ պատիւը, բայց եւ այնպէս վայել չէ այդքան ստորացնել կայսերական պատիւը»:

Կայսրի պատասխանը մխիթարական չէր. «Մի՛ վշտանար, ասաց նա, ես ուզում եմ Վասիլիսկիանին եւս կայսր յայտարարել»:

Վասիլի զայրոյթն ու կսկիծը չափ չունէր: Երկու կայսրերների յարաբերութիւնները այդ օրից լարուեցին: Փոխադարձ վստահութիւնը կորաւ: Այդ հողի վրայ է ծագել, թերեւս, այն զրոյցը թէ երբ մի անգամ Միքայէլ որսի ելաւ, մի անծանօթ վանական մօտեցաւ եւ մի թուղթ տուեց նրան, որով զգուշացնում էր կայսրին Վասիլի դաւադրութիւնից:

Միքայէլի սիրտը ահ եւ ատելութիւն ընկաւ: Ինքը եւս հետամուտ եղաւ վերջ դնել վտանգաւոր կեանքին: Վասիլն աւելի վճռական գտնուեց:

Սեպտեմբերի 24ն էր, 867 տարին, եւ Միքայէլ նոյն Ս. Մամասի պալատում ճաշի էր հրաւիրել Վասիլին իր կնոջ Եւդոկիայի հետ: Միքայէլը սիրում էր խմել: Գինու ազդեցութիւնն զգալի էր, երբ Վասիլ վեր կացաւ սեղանից, գնաց կայսերական ննջարանը եւ ծռեց սողնակը իր ահռելի ուժով

այնպէս որ այլեւս չէր կարելի փակել դուռը: Դարձաւ եւ շարունակեց ճաշը:

Միքայէլ բոլորովին գինովցած էր, ելաւ սեղանից եւ կոթնած Վասիլի թեւին ուղղուեց դէպի իր ննջարանը: Վասիլ համբուրեց ձեռքը եւ հեռացաւ: Կայսրի ննջարանումն էր Վասիլիսկիանը, որ կայսեր հրամանով փոխարինում էր առաջին հանդերձապահին, Ռենատակին: Սա բացակայ էր, միւս սպասաւորների հետ գնացել էր որսի եւ պատուէր ունէր կայսրից արդիւնքը տանել մայր թագուհուն՝ Թէոդորային, որի մօտ ճաշի էր հրաւիրուած յաջորդ օրը:

Սենեկապաններից Իգնատիոսը ուզեց փակել ննջարանի դուռը, բայց տեսաւ որ հնարաւոր չէ: Կասկած ընկաւ սիրտը, նստեց անկողնու վրայ եւ սկսեց փնտռել իր մազերը:

Գինուց թուլացած կայսրը քնած էր որդէն խոր քնով որպէս մեռեալ: Ցանկարծ ներս մտաւ մեծ աղմուկով Վասիլ իր ընկերներով միասին: Դուռը բաց էր: Իգնատիոսը դողդողաց՝ բարձրացաւ տեղից որ արգիլէ մուտքը: Պետրոս Բուլղարը, դաւադիրներից մէկը, յառաջ անցաւ Վասիլի թեւի տակից դէպի կայսերական անկողինը, բայց արգելուեց նոյն Իգնատիոսի կողմից:

Շփոթից արթնեց կայսրը: Դաւադիրներից Յովհաննէս Խալդը իսկոյն վրայ բերեց սուրը եւ կտրեց կայսրի ձեռքը: Միւս դաւադիրը՝ Յակովբիկ Ἰακωβίτζης պարսիկ ապելատը ἀπελάτης վիրաւորեց սրով Վասիլիսկիանին եւ յետ մղեց:

Վասիլի երկու եղբայրները՝ Մարիան եւ Սմբատ եւ եղբորորդին՝ Ասիլայ Ἀσύλαιος, մի ուրիշ անձն Վարդ անունով, այլ եւ Կոստանդին Տոքսար պահպանում էին գլխաւոր մուտքը, որի հետեւանքով Միքայէլի սպասաւորներից ոչ ոք չիմացաւ թէ ի՞նչ է կատարուում ներսը, կայսեր ննջարանում:

Դաւադիրները մի վայրկեան տատամսեցին, չգիտէին, ի՞նչ անեն, սպանեն կայսրին թէ թողնեն այդպէս հաշմանդամ: Ասիլայ այն միտքը յայտնեց, որ եթէ Միքայէլ կենդանի մնայ, դժուար թէ իրենք կարողանան կենդանի մնալ: Վասիլին հաճելի լինելու համար, գնաց ննջարան, տեսաւ որ Միքայէլ թէեւ ձեռքերը կտրուած էին, բայց անկողնում ընկած, աղաչում էր խղճալ, ողորմել իրեն: Ասիլայ ուշ չդարձրեց, մօտեցաւ եւ սրի հարուածով թափեց փորոտիքը:

Դաւադիրները շտապեցին գնալ եւ գրաւել մեծ պալատը: Ծովը ալեկոծ էր: Իշան Ոսկեղջիւրի ափը, մտան պարսիկ Եւլոգի տունը, միասին շարժուեցին Բուկոլէոնի նաւահանգիստը եւ այնտեղից մտան պալատը: Եւլոգ ասաց իր

լեզուով Արտաւազդին, որ օտարական գնդի պետն էր, հետերարք, թէ Միքայէլ սուսերահար եղաւ, բաց արէք դուռը ընդունելու կայսրին:

Արտաւազդը վազեց եւ խլեց պալատի պահապանից παπίας բանալին եւ բացաւ դուռը: Վասիլ ներս մտաւ: Առաջին կարգադրութիւնն էր տալ բանալիները նոր պապիասին, Գրիգոր Փիլեմոն կոչուած անձին:

Անմիջապէս մարդ ղրկեց բերեց Ս. Մամասի պալատից իր կնոջ Եւդոկիային մեծ շքով եւ պատուով: Միեւնոյն ժամանակ միւս Եւդոկիային, որ Միքայէլի կինն էր, ղրկեց Յովհաննէս սենեկապանի հետ իր ծնողներին: Միւս սենեկապանին, անունը Պաւղոս, պատուիրեց գնալ եւ թաղել տալ Միքայէլի մարմիը: Պաւղոս Մամաս մտնելով տեսաւ, որ դժբախտ զոհի մարմինը փաթաթուած էր իր սիրելի ձիու տապճակի մէջ, փորոտիքը կախուած: Տեսաւ որ մայրը եւ քոյրերը լալիս էին և ողբում նրա մահը: Նաւ դրեց մարմինը եւ տարաւ թաղեց Քրիսոպոլի վանքում, որ գտնւում էր Ասիական ափի վրայ:

Այսպիսով Վասիլ դարձաւ միահեծան տէր Բիւզանդական կայսրութեան:

Նոր կայսրը մայրաքաղաքի եպարքոս նշանակեց Պետրոնի որդուն՝ Մարիանին եւ պատուիրեց նրան գնալ հրապարակ (ֆորում) եւ յայտարարել որ միակ կայսրը Վասիլն է: Պետրոնը Վարդ կեսարի եւ կայսրուհի Թէոդորայի եղբայրն էր: Պէտք է կարծել որ Մարիանը եւս մասնակից էր դաւադրութեան:

Մեր պատմագիրը հաւատացնում է որ դաւադիրները վատ վախճան ունեցան, կարծես պատժուելով նախախնամութիւնից:

Յակովբիկը, Վասիլիսկիանի սպանողը, որսի էր գնացել կայսեր հետ: Երբ իջնում էր ձիուց սուրը վերցնելու, ձին փախաւ, ինքն ընկաւ եւ անշնչացաւ:

Յովհաննէս Խալդը, նա, որ կտրել էր Միքայէլի ձեռքերը, նշանակուեց զօրավար Խաղտիքի: Համարձակուեց ըմբոստանալ կայսրի դէմ եւ վերջինիս հրամանով ցից հանուեց Անդրէաս ստրատելատի ձեռքով:

Ասիլայ(ոն) աքսորուեց մայրաքաղաքի Խարտոփիլակ անունով արուարձանը, գժտուեց ծառաների հետ եւ սրանք սպանեցին նրան գիշերը:

Ապելատ պարսիկը մեռաւ որդնակեր: Կոստանդին Տոքսարը ընկաւ սրից: Կայսրի եղբայրը՝ Մարիանը, ոտքից վէրք ստացաւ եւ մեռաւ որդնալից:

Կարեւոր է նկատել, որ Վասիլի ընկերակիցները բոլորն էլ հայ են: Ոչ միայն Սմբատը, Վարդի փեսան, որ յետոյ բռնուեց Եկեղեաց դաւառում, հայ իշխան էր, հաւանօրէն Բագրատունի տանից, այլ նրա համախոհը՝ Գէորգ Պեգանը եւս հայ էր: Պեգան, Παγάνης պարսիկ paigan բառն է, որ նշանակում է հետեւակ (դինուոր) եւ գործ է ածուած որպէս յատուկ անուն կամ մականուն:

Պետրոս Բուլղարը եւ իր եղբօրորդին՝ Լեւոն Ասորի նոյնպէս հայ են: Բուլղար եւ Ասորի կոչումները կապ չունին նրանց ծագման հետ: Բուլղարի եղբօրորդին չի կարող Ասորի լինել:

Յովհաննէս Խալդ եւ Կոստանդին Տոքսար, հաւանօրէն, նմանապէս հայ են: Խալդ է կոչւում, Խաղտիքում ծնուած, կամ ծառայած լինելու համար: Սա կրում է նաեւ Τζιφιναείτης մականունը, որ տեղի անուն է: Tziphi երեւի, Խաղտիքի (Լազերի) տեղական ձեւն է, հայերէն ճփնի, վրացերէն tsipéli բառի, որ նշանակում է ոփի ծառը: Tziphi-nari (կազմուած ինչպէս Mukh-nari մուխ-նարի «կաղնուտ», bucknari բուչք-նար, «մացառուտ», nadzv-nari նաձվ-նարի, «եղեւնուտ») նշանակում է ծիփի, ճփնի «ոփի ծառաստան», որ պարզապէս տեղի անուն է:

Յովհաննէս Խալդը կարող է իսկապէս խալդ, այսինքն՝ լազ լինել, բայց որովհետեւ միւս ընկերները հայ են, աւելի հաւանական ենք համարում նրա հայ լինելը: Կոստանդինը կոչւում է Տոքսար, աւելի ճիշդ Տոքսարա: Լուկիան Սամոսատցին յիշում է մի յայտնի սկիւթ գիտուն որպէս Անաքարսիսը, նման անունով Toxaris Տոքսարիս: Եթէ նոյն անունն է, հաւանօրէն ծաղրական մականուն է, Կոստանդինին տուած: Անտարակոյս, իրանական բառ է, դուցէ եւ ծանօթ խալդական ծովափում:

Դաւադիրների մէջ կարեւորագոյն են Վասիլի եղբայրները՝ Մարիան, Սմբատ, եւ եղբօրորդին Ասիլայ(ոն): Կարծում ենք որ մի երրորդ եղբայր ունէր Վարդ անունով: Միքայէլ կայսրի սպանութեան մասնակից էին, ըստ պատմիչի՝ «Մարիանոս եւ Վարդաս, հայր Վասիլ ռեկտորի, եւ Սմբատիոս, եղբայր Վասիլի եւ Ասիլայոն, եղբօրորդի Վասիլի»:

Վերջերս մի գիտնական այն միտքն էր յայտնել թէ այստեղ յիշուած Սմբատը Վասիլ կայսրի եղբայրը չէր, այլ Վասիլ ռեկտորի, որ էր որդի Վարդի, եւ Ասիլայը եւս ռեկտորի եղբօրորդին էր: Սխալ մեկնութիւն է: Նախ մի ուրիշ աղբիւր, Թէոդոս Մելիտինացի (Մալաթիացի) ասում է որ-

չակի. «Մարիանոս եղբայր նորա (Վասիլի), Սմբատիոս եւ Վարդաս եղբարք նորա, Ասիլէոն (Ասիլայոն) եղբօրորդի նորա»:

Գէորգի Շարունակողը, Ասիլայի սպանութեան պատմութիւնը անելիս անուանում է նրան «եղբօրորդի կայսեր»: Հետեւապէս վերեւ բերուած տողերում «եղբօրորդի Վասիլի» ասելով հասկացւում է Վասիլ կայսրը եւ ոչ Վասիլ ռեկտորը: Բացի դրանից յիշեալ դիտնականի ուշադրութիւնից սպրդել է այն հանգամանքը, որ Ս. Եւփիմէ վանքում թաղուած էին Վասիլ կայսրի մայրը եւ երկու եղբայրները՝ Մարիան եւ Սմբատ, որոնց մասին ասուած է, անշուշտ տապանագիրների հիման վրայ, թէ Մարիանոսն էր Դոմեստիկոս սքոլանների, Սմբատիոսը՝ եղբայր նորա, երկուսն էլ՝ եղբարք Վասիլի կայսեր:

Գիտնականի կասկածը ծագել է այն դիտողութիւնից թէ ինչու պատմագիրը յանձնարարում է Վարդին, որպէս հայր Վասիլ ռեկտորի և ոչ ուղղակի եղբայր Վասիլ կայսրի: Սակայն մեղ թւում է որ քննելի հատուածում եղբայր-ի փոխարէն պէտք է կարդալ եղբարք. այն ժամանակ կը հարթուի երկու պատմագիրների առերեւոյթ հակասութիւնը: Այսպէս՝ «Մարիանոս եւ Վարդաս՝ հայր Վասիլ ռեկտորի, եւ Սմբատ եղբարք ἀδελφοὶ (եւ ոչ եղբայր ἀδελφός) Վասիլի», որով եղբարք բառը կը վերաբերի ոչ միայն Սմբատին, այլ եւ Մարիանին ու Վարդին: Վարդը այլուստ յայտնի չէ եւ պատմագրի օրով նշանաւոր անձն է եղած նրա որդին՝ Վասիլ ռեկտորը:

Աւելորդ չենք համարում նկատել որ տապանագրերից ծանօթ է ոմն «Վարդ, որդի Վասիլի, Ծիրանածնի պապի»: Եթէ միայն Վարդը Վասիլի որդիներից մէկի՝ Կոստանդինի հայկական անունը չէ, պէտք է կարծել, որ խօսքը Վասիլի եղբօր Վարդի մասին է: Զարմանալի է որ Ասիլայի մասին ասուած է որ Վասիլի եղբօրորդին է, բայց հօր անունը չի յիշատակւում:

Ո՞ր եղբօր որդին էր: Արդեօ՞ք, բացի Մարիանից, Սմբատից և Վարդից, մի ուրիշ եղբայր եւս ունեցել է Վասիլը: Աւելի քան հաւանական է, որովհետեւ եթէ Ասիլայը այս երեքից որեւէ մէկի զաւակը լինէր, պատմագիրը ղանց չէր անի յիշելու:

Դաւադիրներից երկուսը՝ Եւլոգ եւ Ապելատ կոչւում են պարսիկ, բայց սրանք պարսիկ չեն, այլ պարսկահայ: Այդպէս էին կոչւում ոչ բիւզանդացի հայերը: Իններորդ դարում, արաբական իշխանութեան ժամանակ, դժուար է

երեւակայել որ մի պարսիկ բիւզանդական ծառայութեան մէջ մտնէ, քրիստոնէութիւն ընդունելով: Ապելատ յատուկ անուն չէ[1]:

Վասիլի հետ էր նաեւ Արտաւազդը, որ հետերաբք էր, այսինքն օտարներից կազմուած գնդի պետ: Արտաւազդից առաջ նոյն պաշտօնումն էր Անդրէասը, նա, որ Միքայէլ կայսրի հրամանով ընդունեց Վասիլին օտարական գնդի մէջ: Անդրէասը յետոյ ստատելատ էր նշանակուել, այսինքն թեմ էր ստացել կառավարելու եւ այդ պաշտօնումն էր երբ կալանաւորեց ապստամբ Յովհաննէս Խալդին, ինչպէս տեսանք վերեւ: Հաւանական է որ Խաղտիքի մօտիկ թեմերից մէկի պետն էր:

Վասիլի եղբայր Մարիանը պալատական հեծեալ գնդերի, սքոլաների, դոմեստիկ էր: Արտաւազդը օտարական գնդի գլուխն էր: Պետական երկու կարեւոր զօրագնդերն էին եւ բնական է որ նրանց աջակցութեամբ դիւրին էր յեղաշրջում կատարել: Վերեւ թուած անձերը Վասիլին ծանօթ եւ բարեկամ էին, անշուշտ, երբ ինքը ծառայում էր օտարական գնդում Անդրէասի օրով: Յեղաշրջումը պատահական արկած չէր, այլ ծրագրուած գործ էր, որ համակրութիւն էր վայելում զինուորական շրջաններում: Պակաս չէին, հարկաւ, եւ թշնամիները, որոնք աշխատել են ամեն միջոցով թէ՛ աղաւաղել յեղաշրջումի բնաւորութիւնը եւ թէ՛ եղծել Վասիլի պատկերը:

Խառն ու չփոթ տեղեկութիւնները եւ նպատակաւոր զրոյցները, յօրինուած Վասիլի անուան շուրջը չար թէ բարի դիտաւորութեամբ, գովելու թէ դատելու ցանկութեամբ, ծածկել են մեզնից նրա իսկական ծագումը եւ յաջողութեան պատճառներն ու պարագաները:

IV

Ծագման վերաբերող զրոյցները կապուած են Փոտ պատրիարքի անուան հետ: Վասիլի իշխանութեան առաջին տարին Փոտը ընկաւ պատրիարքական գահից եւ վերստին դրաւեց 877 թուին, իր հակառակորդ Իգնատի մահից յետոյ: Փոտի գահընկեցութիւնը հետեւանք էր Վասիլի ընդդրկած եկեղեցական քաղաքականութեան: Հռոմի հետ հաշտ և խաղաղ ապրելու համար, նոր կայսրը չկասեց զոհել պատրիարք

1 Տես այս մասին մեր յօդուածը, Les fonds historiques de l'époppée byzantine, Byz. Zeit. XXIX.

Փոտին, որ պապականութեան թշնամի էր եւ պառակտման գլխաւոր պատճառը: Շնորհազուրկ պատրիարքը չատ ջանք թափեց վերականգնելու իր դիրքը, որի համար ամենից յառաջ հարկաւոր էր ձեռք բերել կայսրի սէրն ու համակրութիւնը:

Իգնատի, Փոտի ախոյեանի, կենսագիրը, Նիկիտ Պափլագոնացին, պատմում է որ կայսրին հաճոյանալու դիտաւորութեամբ Փոտը կազմել էր կեղծ եւ կայսրի ինքնասիրութիւնը շոյող մի ծննդաբանութիւն:

Գահազրկութիւնից յետոյ նախկին պատրիարքը աքսորուեց Սկեպի վանքը: Այստեղ էր որ նա գործեց հռչակաւոր կեղծիքը, հնարելով մի զրոյց, որի հիմամբ Վասիլը սերում էր հայոց Տրդատ թագաւորից, Լուսաւորչի նշանաւոր գործակցից: Փոտը մտերիմ էր կայսերական մատենադարանի պետ ոմն Թէոփան Սփենոդեմոն կոչուած վանականին, որ պալատական հոգեւորականութեան մէջ էր հաշւում եւ յայտնի էր խորին գիտութեամբ ու իմաստութեամբ: Սրա միջոցով Փոտը իր կազմած ծննդաբանական գրութիւնը անցրրեց կայսերական մատենադարան: Գրութիւնը մագաղաթի վրայ էր, աղեքսանդրեան տառերով, այսինքն երկաթգիր: Հեղինակը աշխատել էր տալ հնամենի դրքի ձեւ: Ծննդաբանութիւնը հասցրած էր մինչեւ Վասիլի հայրը, որի մասին ասուած էր թէ մի որդի պիտի ունենայ, որպիսին է Վասիլը եւ անունը պիտի լինի Բեկլաս (BEKLAS):

Նիկիտ Պափլագոնացին մեկնում է թէ Բեկլաս արուեստական բառ է, կազմուած Վասիլի (B-), իր կնոջ Եւդոկիայի (E-), եւ նրանց Կոստանդին (K-), Լեւոն (L-), Աղեքսանդր (A-) ու Ստեփան (-S) որդիների անուան սկզբնատառերից՝ B-e-k-l-a-s :

Մատենադարանապետ Թէոփանը մի օր, երբ որոնում էր կայսեր պահանջած մի գիրք, յայտնեց նրան, որ դիպուածով մի գիրք է գտել, հին գրերով գրուած և դժուար վերծանելի: Թէոփանը ի նկատի ունէր Փոտի գիրքը: Ցոյց տալով կայսրին նորագիւտ հնութիւնը, աւելացրեց որ մի մարդ կայ միայն որ կարող է կարդալ այս գիրքը: Այդ մարդը աքսորական Փոտ պատրիարքն է: Անմիջապէս գիրքը ղրկեցին Փոտին: Սա պատրուակ բռնեց թէ մինչեւ կայսրին անձամբ չտեսնէ, չի կարող ասել թէ ի՞նչ գիրք է եւ ի՞նչ է նրա բովանդակութիւնը: Վասիլ կայսրի հետաքրքրութիւնը չարժուած էր: Պատուիրեց բերել աքսորական պատրիարքին արքունիք: Փոտը կարդաց խորհրդաւոր գիրքը որպէս թէ հրեշ-

տակի թելադրութեամբ եւ մեծ բաւականութիւն պատճառեց կայսրին: Այս առթիւ նորից սիրելի դարձաւ Վասիլին:

Այս տափակ զրոյցի մէջ մի բան կայ ստոյգ, որ Փոտ գիտնական պատրիարքը աշխատել է լուսաբանել Վասիլի ծագումը: Մնացածը անմիտ յերիւրանք է: Փոտը ոչ միայն որպէս գիտուն անձ, այլ եւ հայորդի լինելու հանգամանքով որպէս Արշաւիր Կամսարականի քրոջ որդի և Վարդ կեսարի մտերիմը մօտիկ ծանօթ էր հայ չրջաններին եւ ուրեմն ի վիճակի էր ստուգել և պարզել Վասիլի ծննդաբանութիւնը:

Գիտութեամբ հռչակուած պատրիարքն այնքան զուրկ չէր հնարագիտութիւնից որ չկարողանար աւելի իմաստալից բան առաջարկել կայսրին քան BEKLAS խղճուկ բառախաղը: Վասիլն էլ այնքան պարզամիտ չէր, որ հաւատար եւ ուշադրութեան առնէր այս ակներեւ խաբկանքը:

Զրոյցը զուրկ է մինչեւ իսկ ինքնօրինակ լինելու թարմութիւնից:

Ճիշտ այդպիսի մի դէպք պատմում են Մեթոդ(իոս) եպիսկոպոսի կեանքից: Թէոփիլ կայսրի օրով Մեթոդը բանտարկուած էր մի նկուղի մէջ երկու աւազակի հետ եւ ազատուեց հետեւեալ առթիւ: Կայսր Թէոփիլը, որ սիրում էր գիր ու գրականութիւն, մի անգամ պալատական մատենադարանում մի դիրք տեսաւ, բայց չկարողացաւ կարդալ: Դիմեցին Ցովհաննէս պատրիարքին եւ Լեւոն նշանաւոր փիլիսոփային, երկուսն էլ հայ էին: Սրանք խոստովանեցին որ դժուարանում են վերծանել: Կայսրը չատ վշտացաւ եւ անհանդգստութիւնից կորցրեց ախորժակը: Այդ միջոցին սենեկապաններից մէկը խորհուրդ տուաւ դիմել չնորհազուրկ եւ բանտի մէջ փակուած Մեթոդ եպիսկոպոսին: Այդպէս էլ արին: Երբ սենեկապանը մօտենում էր գիրքը ձեռին, Մեթոդը գոչեց հեռուից. «ողջամբ դալդ, եղբայր Ցովհաննէս (այսպէս էր սենեկապանի անունը), գիտեմ որ ղրկուած ես Թէոփիլի կողմից: Բե՛ր թուղթ եւ թանաք»: Մեթոդը առաւ գրիչը եւ գրեց երեք տեսակ մեկնութիւն: Թէոփիլ կայսրը գոհ մնաց, ազատեց բանտից, բնակեցրեց իր մօտ պալատում եւ չատ մտերմացաւ հետը:

Այս պատմութիւնը եւս հեռու է վաւերական լինելուց: Մեթոդը եւ Փոտը մեծ գիտութեան տէր էին եւ այդպէս էլ ճանաչուած էին ընդհանրութեան կողմից, ուստի եւ միեւնոյն զրոյցը կառչել է նրանց անուան որպէս ապացոյց նրանց անբաւ գիտութեան: Զրոյցի իմաստն է վեր հանել գիտութեան նշանակութիւնը: Գիտութիւնը նկատւում է մի այնպիսի ոյժ, որի առաջ բացւում են պալատական դռները նոյն

իսկ չնորհազուրկների համար: Մեթոդի զրոյցը, հաւանորէն, նախագոյն է քան Փոտի: Ծանօթ զրոյցը յարմարացրել են Փոտին, աշխատելով միեւնոյն ժամանակ չողոքորթութեան ստուեր ձգել նրա գիտութեան վրայ:

Ինչպէս երեւում է, Փոտի թշնամիները զգացել են զրոյցի տկարութիւնը, ուստի հնարել են մի ուրիշ եւ աւելի խակամիտ զրոյց նոյն խնդրի առթիւ, այսինքն թէ ինչպէս Փոտը վերագրաւեց Վասիլի սէրն ու բարեհաճութիւնը:

Փոտը մի բարեկամ վանական ունէր, անունը Թէոդոր Սանդաբարեն: Ստուդիոն վանքի միաբաններից էր եւ Փոտի առաջին պատրիարքութեան ժամանակ (858-867) վանահայր էր կարգուել նոյն հաստատութեան: Երբ Փոտը գահընկեց եղաւ, Սանդաբարենը եւս քշուեց վանքից: Փոտի երկրորդ պատրիարքութեան ժամանակ Սանդաբարենը եպիսկոպոս նշանակուեց Եւխայիտ քաղաքի Արմենեակեան թեմում (Ամասիայի մօտ, այժմեան Զորում):

Պատմում են որ Սանդաբարենը հրաշագործ էր եւ վհուկութեան ձիրք ունէր: Նա հաշտեցրեց Փոտին Վասիլ կայսրի հետ, դիմելով հետեւեալ կախարդութեան: Սանդաբարենը խորհուրդ տուաւ Փոտին մերձենալ կայսերական սենեկապաններից մէկն ու մէկին եւ նրա միջոցով սրսկել կայսեր անկողնու վրայ այն ջուրը, որ ինքը կը պատրաստէ: Ազդեցութիւնը կը լինի բարերար: Կայսրը կը սկսէ վերաբերել նրան առաջուան պէս սիրով: Յետոյ պէտք է աշխատէր որ Սանդաբարենը տեսնէ անձամբ կայսրին: Այն ժամանակ Փոտը կը վերահաստատուէր իր նախկին դիրքում:

Փոտը կատարեց իր բարեկամի մոգական խրատները: Ներգործութիւնը անյապաղ էր: Յաջորդ առաւօտեան կայսրը զրկեց իր երեխաներին Փոտի մօտ ստանալու նրա օրհնութիւնը: Այնուհետեւ սկսեց չնորհել ոսկի եւ այլ պարգեւներ, հրաւիրեց Մագնաւրա պալատը բնակութեան, եւ մտերմացաւ հետը սերտ բարեկամութեան կապերով:

Կախարդ վանականը, Թէոդոր Սանդաբարենը, երեւում է, արեւելցի էր: Վկայ է ոչ միայն անունը, այլ եւ այն պարագան, որ կոչւում է «մանիքեցի եւ որդի Մանիքեցու», «մոդպետ» (արքիմադ): Նրա առաջարկած վհկութիւնը ծանօթ է եւ գործ է ածւում հայ ժողովրդի մօտ, սիրած տղայի կամ աղջկայ փոխադարձ սէրը գրաւելու նպատակով: Հաւանական է որ Սանդաբարենը հայ է ծննդեամբ թէ ծագումով: Այս զրոյցի համաձայն Փոտի և Վասիլի հաշտութիւնը պէտք է վերագրել Սանդաբարենի վհկութեան:

Կեղծ ծննդաբանութեան մասին խօսք չկայ: Ոչ մէկը եւ

ոչ միւսը արժանի չեն որեւէ վստահութեան: Թւում է որ Փոտը երբեք չէր գժտուել կայսրի հետ, որ հաշտութեան պէտք ունենար: Պատրիարքական գահը թողնելուց յետոյ էլ նա շարունակեց վայելել կայսրի սէրն ու յարգանքը որպէս գիտուն և առաքինի անձն: Կայսրի պատուէրով, Փոտը հաստատուեց պալատում եւ ստանձնեց նրա որդիների դաստիարակութիւնը:

Վասիլը հեռացրեց Փոտին գահից քաղաքական նպատակներով, չուզենալով լարել իր յարաբերութիւնները Պապի հետ, որի համակրութիւնը պէտք էր ծրագրուած նուաճումների համար: Անձնական թշնամութիւն չունէր, թէեւ հիմ ունէր կասկածով նայել նրա վրայ, որպէս Վարդ կեսարի բարեկամի:

Այս բոլորը չեն ժխտում որ Փոտը իրօք կազմել էր Վասիլի ծննդաբանութիւնը: Շարժառիթը ամեն դէպքում այն չէր, ինչ որ թելադրում են յիշեալ զրոյցները: Նախ ծանօթանանք Փոտին վերագրած գործին: Ի՞նչ է նրա հնարած ծննդաբանութիւնը:

Փոտի իսկական գործը մեզ չի հասել: Թշնամիների ասելով, նա աշխատել էր ցոյց տալ որ Վասիլը Տրդատ Թագաւորի ցեղից էր: Նրան են վերագրում նաեւ Beklas անհանճար գիւտը:

Վասիլին մօտիկ պատմագիրները եւս նոյն կարծիքին են որ Վասիլը Արշակունեաց տոհմից է, բայց չեն յիշում Փոտի անունը: Գիներսիոսը վկայում է որ Վասիլ սերում էր Պարթեւաց Արշակ եւ նրա շառաւիղ Տրդատ Թագաւորներից եւ միեւնոյն ժամանակ ցեղակից էր Փիլիպպոս եւ Աղեքսանդր Մակեդոնացիներին: Վերջին կապը զուտ աշխարհագրական է:

Կոստանդին Ծիրանածինը միակ պատմագիրն է որ տալիս է իր պապի ծննդաբանութիւնը, թէեւ դարձեալ առանց պատրիարք Փոտի անունը յիշելու: Բայց երեւում է որ քաղուած է Փոտին վերագրուած գործից:

Ըստ այդ ծննդաբանութեան Վասիլը ծագում էր «Մակեդոնների երկրից», իսկ ցեղով հայ Արշակունիներից էր: Առաջին Արշակը, որ Թագաւորեց Պարթեւների վրայ եւ մեծ հռչակ ստացաւ փառքի եւ առաքինութեան ասպարէզում որպէս թէ օրէնք էր սահմանել, որ ոչ ոք չէր կարող իշխել Պարթեւների, Հայերի եւ Մարացիների վրայ, եթէ Արշակունի ծագում չունէր: Այս օրէնքի համաձայն Արշակի սերունդները տիրեցին երկար ժամանակ յիշեալ ժողովուրդնե-

րին։ Երբ մեռաւ նա, որ Թագաւորում էր Հայոց վրայ, խուվութիւն ծագեց ժառանգների մէջ։

Ահա այս միջոցին էր որ Արտաւան եւ Կլիէն Κλεῖνης *ոչ միայն զրկուեցին հայրական իշխանութիւնից, այլ եւ զգացին որ իրենց կեանքը վտանգի մէջ է։ Հարկադրուած Թողին հայրենի երկիրը եւ չուեցին դէպի կայսերական մայրաքաղաքը։ Գահի վրայ էր Լեւոն կայսրը* (457-474)։ *Սա ընդունեց փախստական իշխաններին, սիրալիր վերաբերում ցոյց տուաւ եւ իրենց ազնուական ծագման վայել բնակութիւն եւ ապրուստ տրամադրեց մայրաքաղաքում։ Երբ Պարսից Թագաւորն իմացաւ, որ իշխանները ապաստանել են կայսեր մօտ եւ բարեմիտ ընդունելութիւն գտել, անմիջապէս ապսպրեց գրով որ վերադառնան հայրենիք, խոստանալով դարձնել նրանց սեփական իշխանութիւնը։ Թագաւորը յոյս ունէր այդ զիջումով պահել հայ ժողովուրդը հպատակութեան մէջ։ Լուրը հասաւ կայսրին։ Սա հասկացաւ Պարսից Թագաւորի գաղտնի նպատակները եւ կարգադրեց որ ընթացք չտան իշխանների դարձի խնդրին, որ բնաւ չէր համապատասխանում կայսերական շահերին։ Կայսրի հրամանով նրանց փոխադրեցին աւելի հեռու եւ ապահով տեղ, Մակեդոնիայի Նիկէ քաղաքը։*

Անցան տարիներ։ Սարակինոսների տէրութիւնը զօրացաւ եւ Ամիր-ալ-Մումինը միեւնոյն փորձը կրկնեց յետ բերելու փախստական Արշակունի իշխաններին։ Թղթով հրաւիրեց նրանց գալ եւ տիրանալ իրենց նախնիքների ժառանգութեան։

Այդ ժամանակ կայսրը Հերակլն էր (610-641)։ *Սա եւս ընդդիմացաւ փախստականների դարձին, որը պիտի ծառայէր Արաբների քաղաքական նպատակներին։ Հայ ժողովուրդը կապուած էր անխզելի սիրով Արշակունիների տան և եթէ սրանց ժառանգները վերադառնային եւ յարէին արաբական իշխանութեան, կայսերութեան շահերը պիտի տուժէին։ Այս նկատումով Հերակլ կայսրը հրամայեց Նիկէից տեղափոխել Մակեդոնիայի Փիլիպպոն քաղաքը, աւելի հեռու եւ աւելի անդորը բնակավայր։ Մի առժամանակ այդտեղ մնացին, յետոյ անցան եւ հաստատուեցին Ադրիանուպոլ քաղաքում, աւելի լուսաւոր կենտրոնում։*

Տարիներ յետոյ, երբ գահի վրայ էր Կոստանդին կայսրը իր մօր Իրինէի հետ (780-797), Maiktes *անուն մի անձ, Արշակի արիւնից, եկաւ մայրաքաղաք դեսպանութեան թէ ուրիշ գործի աղագաւ։ Սա պատահեց Լեւոն անունով մի հայի եւ տեսնելով որ նա եւս հասարակ ոմն չէ, այլ ազնուական նշանաւոր ծագում ունի, մտերմացաւ հետը։ Լեւոնը ընդունեց նրան իր ընտանիքը եւ վերջը իր աղջիկներից մէկին փեսայացրեց։ Այդ ամուսնութիւնից ծնեց Վասիլի հայրը։*

Վասիլի հայրը մարմնով գեղեցիկ էր եւ ուժեղ, հոգով առաքինի, շատ շատերի համար նախանձելի փեսայ։ Ադրիանուպոլ կար մի ազնուական եւ գեղանի կին, որ ամուսնու մահից յետոյ ապրում էր ամբասիր այրիութեան մէջ։ Լուրեր էին պտտում, ո՛չ արհամարհելի, որ նա Կոստանդին Մեծի արիւնից էր։ Այրին շատ հաւանեց Վասիլի հօրը եւ իր դստերն կնութեան տուաւ նրան։ Ազնիւ և ամօթխած կին էր։

Ահա այս զոյգից ծնեց Վասիլը, հօր կողմից Արշակի շառաւիղներից, մօր կողմից՝ Մեծն Կոստանդինի, երկու կողմից էլ՝ Աղեքսանդր Մեծի փայլն ունէր։ Ծննդեան ժամանակ նախագուշակ նշանները երեւացին ապագայ փառքի։ Առաջին մազի հետ տեսան գլխի շուրջը կարմիր թելեր, եւ խանձարուրքը՝ ծիրանագոյն։ Մինչեւ այդ ժամանակ Արշակի սերունդները պահել էին Ադրիանուպոլում իրենց ազգային բնոյթը, կազմելով առանձին տուն, թէեւ յաճախ խառն ամուսնութիւններ էին կայացել։ Պատմում է ապա Կրումի արշաւանքը Ադրիանուպոլ քաղաքի վրայ եւ Վասիլի ծնողների գերութիւնը եւ դարձը, որին արդէն ծանօթ ենք։

Անվստահելի պատմութիւն է։ Պատմողն ինքը անհաւանական է գտել, որ Արտաբանի եւ Կլիէնի սերունդը հայ մնային օտար միջավայրում դարերի ընթացքում, ուստի կանխում է ցրել ամեն տարակուսանք, ասելով որ Արշակի սերունդները պահել էին իրենց ազգութիւնը Ադրիանուպոլսում հակառակ խառն ամուսնութեան դէպքերին։ Թրակիայում, անտարակոյս, շատ հայ կար։ Զ դարու վերջերը Մաւրիկ կայսրը հոծ գաղթականութիւն հանեց Հայաստանից եւ հաստատեց Թրակիա հայ իշխանների հրամանատարութեան տակ։ Նոյնն արեց Ը դարում Կոստանդին կայսրը (741-775), *Կարինի շրջանից հայեր տեղափոխելով Թրակիա։*

Բազմաթիւ հայ գործիչներ կային պետական բոլոր ասպարէզներում, մասնաւորապէս զինուորական։ Երկու դէպք գիտենք միայն երբ յիշւում են յատկապէս Արշակունի իշխաններ։ Յուստինիանոսի դարաշրջանում յայտնի եղաւ Արտաւանը, Յովհաննէս Արշակունի Թագաւորազնի որդին, որ տիրում էր Կարինի շրջանում։ Արտաւանը սկզբում թշնամի էր կայսերական իշխանութեան, յետոյ հաշտուեց եւ անցաւ

մայրաքաղաք, ուր այնքան յառաջացաւ որ անգամ փորձեց տիրանալ կայսերական գահին:

Ցաջորդ է դարում ծանօթ է Վաղենտիանոս կամ Վաղենտին պատրիկը, որը պաշտպանեց Հերակլի թոռի Կոստանդինի գահակալական իրաւունքը եւ յաջողեց նրան գահ նստեցնել: Շուտով սակայն ըմբոստացաւ նրա դէմ, եւ ուզեց գահը խլել, բայց ձախողեց զոհուելով իր յանդուգն ձեռնարկին:

Բիւզանդական պատմիչները, որ մեծ ուշադրութեան են արժանացրել Վաղենտինին, չեն յիշում նրա հայ ծագումը: Բարեբախտաբար Սեբէոսը պահել է մեզ նրա յիշատակը եւ անուանում է նրան Արշակունի. «կարգէ ի վերայ զաւրաց իւրոց զաւրավարս զՎաղենտիանոսն, որ կոչէր Արշակունի»:

Արշակունեաց տանից էր նաեւ Մանուէլ զօրավարը որ ժամանակակից էր Վաղենտինին: Նոյն հայ պատմագիրն ասում է որ Կոստանդին կայսրը սիրեց Սմբատ իշխանին, որ Բագրատունի էր եւ որդի Վարազտիրոցի, որդւոյ Սմբատի Բազմայաղթի: Կայսրը Սմբատին դրունգար նշանակեց եւ «ետ նմա կին ի տանէն Արշակունեաց եւ յիւրոց մերձաւորաց»: Սմբատի կինը Մանուէլի դուստրն էր, ինչպէս վկայում է նոյն Սեբէոսը անուանելով Մանուէլին աներ Սմբատի. «սպանեն զԳէորգ մագիստրոս եւ զՄանուէլ զայրն առաքինի որ էր աներ Սմբատայ ասպետի որդւոյ մեծի Սմբատայ Խոսրովայ Շումն կոչեցելոյ»: Սմբատ ասպետը Վարազտիրոցի որդին էր եւ սա որդի էր Սմբատի Խոսրով-Շնումի, այսինքն Բազմայաղթի: Ուստի ընագիրը պէտք է ուղղել՝ «աներ Սմբատայ ասպետի որդւոյ Վարազտիրոցի որդւոյ մեծին Սմբատայ» եւայլն:

Ուրիշ Արշակունի անձեր չեն յիշւում ոչ Հայաստանում եւ ոչ դուրսը: Բիւզանդական հայերի տոհմական ծագումը դժուար է որոշել հաստատապէս, եթէ օգնութեան չեն գալիս հայ աղբիւրները դրական ցուցումով: Նախարարական տները տոհմական անուններ ունէին մի յայտնի չափով իւրայատուկ, որոնց միջոցով կարելի է երբեմն որոշել թէ ով ո՞ր տոհմին է պատկանում: Սակայն յաճախ անունները փոխանցւում են ամուսնութեան հետ, որով աւելի դժուարանում է օգտուել անունների ուղեցոյցից: Լեւոն Իսաւրացու փեսան Արտաւազդը, որ նրա մահից յետոյ թեկնածեց գահին 742 թուին, մի հօրեղբօր որդի ունէր, անունը Տրդատ: Արդեո՞ք Արտաւազդն ու Տրդատը Արշակունի տան չառաւիղ էին:

Արտաւազդը, ճշմարիտ է, Մամիկոնեան անուն է, բայց

կարող էր անցած լինել Արշակունի իշխանի: Տոհմական անունները երբեմն ցատկում էին մի տոհմից միւսը, հաւանօրէն, ամուսնութեան միջոցով: Սմբատ ասպետի աները, ինչպէս տեսանք, Արշակունի լինելով հանդերձ, կրում էր Մամիկոնեան անուն՝ Մանուէլ: Ցայտնի է այս անունով եւ մի Բագրատունի իշխան, որ էր հայր Սմբատ ասպետի, այն իշխանի որ 591 թուին ապստամբեց կայսեր դէմ եւ կրկէսում հոչակուեց անօրինակ սիրագործութեամբ:

Ըստ անունների որոշել տոհմը կարելի է փոքր ի շատէ վստահօրէն միայն այն ժամանակ, երբ յայտնի են հօր եւ որդու եւ կամ եղբայրների անունները: Այլապէս եզրակացութիւնները կը մնան միշտ խնդրական, ինչպէս Արտաւազդի դէպքում:

Ինչ եւ լինի, բացի Արտաւանից եւ Վաղենտինեանից, այլ եւ Մանուէլից, ուրիշ Արշակունի դէմքեր ծանօթ չեն ոչ ազգային եւ ոչ օտար մատենագրութեան մէջ:

Վասիլի ծննդաբանութեան մէջ յիշուած երկու անձերից Արտաւանը, հաւանօրէն, արձագանգ է Յովհաննէսի որդու Արտաւան Արշակունու: Ժամանակով իրարից հեռու չեն: Ըստ ծննդաբանութեան, Արտաւանը փախաւ Հայաստանից Բիւզանդիա Լեւոն կայսրի (457-474) ժամանակ: Իսկ պատմական Արտաւանը ապրում էր Զ դարի առաջին կէսին:

Արտաւանի ընկերն էր ոմն Կլիէն, Κλεένης անծանօթ այլուստ, եւ անունը խորթ, անպայման խաթարուած: Ցայտնի են Արտաւան եւ Դղակ, ուղղելի Գղակ, Gylakes իշխանները, որոնց սպանեց Պապ թագաւորը: Սրանք համապատասխանում են Փաւստոսի Մուշեղ Մամիկոնեանին եւ Գղակ մարզպետին եւ, ի հարկէ, չեն կարող նոյնանալ Արտաւանի եւ Կլիէնի հետ: Մի ուրիշ Gilakios Գղակ հայ իշխան ժամանակակից էր Զ դարի Արտաւան Արշակունուն, նոյնպէս բիւզանդական բանակի մէջ: Վասիլի ծննդաբանութեան հեղինակը կարող էր այստեղից առած լինել Արտաւան եւ Կլիէն անունները, եթէ միայն վերջինս աղաւաղ եւ կամ սխալ ընթերցում է Գիլակի:

Նոյն ծննդաբանութեան մէջ Արշակունիների նախահաւին վերագրւում է մի օրէնք, որ մտացածին է, բայց համապատասխան իրական դրութեան, որով Պարթեւների ժամանակ Պարսից, Մարաց եւ Հայոց թագաւորները Արշակունեաց տոհմից էին: Արտաւան Արշակունին նախ քան Բիւզանդիա անցնելը իր փեսայ Վասակ Մամիկոնեանի հետ, կռուել էր Ցուստինիանոսի դէմ, դժգոհ նրա քաղաքականութիւնից:

Այս առթիւ դիմել էին Պարսից թագաւոր Խոսրովի օգնութեան, որին ի միջի այլոց գանգատւում էին որ վերջին Արշակունի թագաւորը զիջել է Թէոդոս կայսրին իր իշխանութիւնը մի պայմանով որ իր մերձաւորները մնան ազատ եւ չենթարկուին որեւէ հարկատւութեան:

Թւում է թէ այս արտունջի մի այլ ձեւակերպումն է այն օրէնքը որ վերագրւում է առաջին Արշակին եւ որի համաձայն նրա սերունդը պիտի թագաւորէր, բայց վերջին հայ Արշակունի թագաւորի մահից յետոյ խլրտումներ ծագեցին եւ պատճառ եղան Արտաւանի եւ Կլիէնի տարաբրութեան: Վասիլի կենսագիրը թագաւորի անկումը եւ խռովութիւնները դնում է Լեւոն կայսրի ժամանակ (457-474), այսինքն՝ Վարդանանց շարժումից յետոյ եւ Վահանանցի սկիզբը: Գիւտ կաթողիկոսի օրով պարսկից կարգերից դժգոհ հայ իշխանները գաղտնի ժողովներ էին ունենում կաթողիկոսի մօտ, որպէսզի մի հնար գտնեն օրուան շարիքի դէմ: Մրագրում էին «վախչել յօտարութիւն եւ երբեմն ի խնդիր լինել օգնականութեան եւ ապստամբել: Առաքէին գաղտ եւ պատգամաւորս միանգամ եւ երկիցս առ թագաւորն Յունաց Լեւոն (457-474), որոյ թէպէտ եւ յանձն առեալ կամէր օգնել յերկարէր ժամն եւ խափանէին խորհեալքն»[1]:

Գործի ղեկավարներն էին Բաբիկ Սիւնի և Առնակ Ամատունի: Հաւանօրէն, սրանք էին նաեւ Լեւոն կայսրի մօտ գնացող պատգամաւորները: Եթէ Արտաւան եւ Կլիէն պատմական անձերի ստուերներ լինէին, կարող էինք նրանց համեմատել Բաբիկի և Առնակի հետ: Սակայն, ոչ մի երաշխիք չկայ պատմական համարելու այս անձերը և եթէ անդամ համարենք, անկարելի է ընդունել որ նրանց սերունդն յարատեւէր Բիւզդիայում մինչև Հերակլի ժամանակ, այնուհետեւ տեղափոխուէր մակեդոնական Նիկէ եւ Փիլիպպոն քաղաքները, ապա անցնէր Ադրիանուպոլ, եւ երեք դար շարունակ օտարութեան մէջ դեգերելով, պահէր անաղարտ ոչ միայն իր հայ ազգութիւնը, այլ եւ Արշակունի արիւնը: Այս կատարեալ առասպել է:

Կենսագիրը հաւատացնում է որ Ադրիանուպոլի Արշակունիներից Մայքէս եկաւ մայրաքաղաք և ծանօթացաւ Լեւոն Հայի հետ և ամուսնացաւ նրա դստեր հետ: Այս պատահեց Կոստանդինի եւ Իրինէի օրով, պէտք է կարծել, նրանց միասնական կառավարութեան տարիները 780-797 թուին: Maiktes, անկասկած, Հմայեակ անուան սխալ ընթերցումն

1 Ղազար Փարպեցի (Թիֆլիս, 1907 թ.), էջ 247։

է: Պէտք է կարդալ Maiakes կամ Maikes, Հմայեակ կամ Հմայեկ (ժողովրդական ձեւ): Արդեօ՞ք Հմայեակը եւ Լեւոնը նոյնպէս հնարած անձնաւորութիւններ են, ինչպէս Արտաւան եւ Կլիէն, թէ առնուած են իրականութիւնից:

Կոստանդինի հօր Լեւոն կայսրի (775-780) օրով հարիւր հազարանոց բանակը շարժուեց դէպի արեւելք Արաբների դէմ: Հինգ զօրավարներից չորսը հայ էին. Արտաւազդ, ստրատեգ Անատոլիկեան թեմի, Տաճատ Անձեւացի՝ Բուկելարեանի, Վարազտիրոց Բագրատունի՝ Արմենեակեանի եւ Գրիգոր Մուշեղակ՝ Օփսիկեանի: Արտաւազդը Հմայեակ Մամիկոնեանի որդին էր: Maiktes կարծես թէ պահել է այս Հմայեակ Մամիկոնեանի յիշողութիւնը: Իսկ եթէ ուզենք արժէք տալ այն ցուցումին թէ Maiktes-ը մայրաքաղաք եկաւ Կոստանդինի եւ Իրինէի (780-787) ժամանակ, ապա պէտք է ենթադրել որ խօսքը Արտաւազդի որդու մասին է, որը կարող էր իր պապի անունով Հմայեակ կոչուած լինել:

Գալով Հմայեակի աներոջ Լեւոնին, թւում է թէ այլ ոք չէ եթէ ոչ այն անձը, որ յետոյ գահ բարձրացաւ Լեւոն Ե անունով: Լեւոնը Արմենեակեան թեմի ստրատեգ Վարդ պատրիկի որդին էր: Վարդն ընկաւ 791 թուին բուլղարական ճակատում: Նրա որդին Լեւոնը մասնակից էր Միքայէլ Ռանգաբէ կայսեր արշաւանքին ընդդէմ Բուլղարաց Կրում թագաւորի 813 թուին:

Միքայէլը պարտութիւն կրեց Ադրիանուպոլի ճակատամարտում, զօրքերը ձգեցին նրան գահից եւ կայսր հռչակեցին Լեւոն Հային 813 թուին: Հաւանական է կարծել, որ Հմայեակը, Լեւոնի փեսան, նրա բանակում լինէր եւ մասնակից Ադրիանուպոլի կռիւներին: Թերեւս այս է պատմական հիմ ծառայել այն աւանդութեան որով Հմայեակը համարւում է Ադրիանուպոլցի եւ չառաւիղ հնում ասո հաստատուած Արշակունի իշխանների:

Ադրիանուպոլումն է որ Հմայեակի որդին ամուսնացաւ տեղացի մի այրի կնոջ աղջկայ հետ, որից ունեցաւ Վասիլին: Շատ զարմանալի է որ Վասիլի կենսագիրը չգիտէ կամ գոնէ չի տալիս նրա հօր եւ մօր անունը: Մակեդոնացի դերութեան դարձի հերոսների՝ Կորդուլի, իր որդու Վարդի, Ցանցի եւ Լեւոն Գոմոստի անունները պահուել են, բայց Վասիլի ծնողների անունը անտես է արուել, մինչդեռ դերութեան ամբողջ պատմութիւնը ուրիշ նպատակ չունի քան ցոյց տալ որ Վասիլի ծնողները դերիների թւում էին եւ ինքը Վասիլը այդ ժամանակ նորածին մանուկ էր:

Վասիլի մօր անունը գիտենք նրա տապանագրից: Նա

կոչւում էր Պանկալօ, Ամենագեղ և թագուած էր Ս. Եփիմէի եկեղեցում իր միւս երկու որդիների՝ Սմբատի եւ Մարիանի հետ: Հնարաւոր է որ Պանկալօ Ադրիանուպոլցի այրի կնոջ դուստրն էր, բայց այրին, հարկաւ, ոչ մի կապ չունէր Կոստանդին Մեծի հետ: Հօր կողմից արենակից Տրդատ թագաւորի, ի՞նչ արգելք, եթէ մօր ղծով էլ սերէր Տրդատի ժամանակակից Կոստանդին Մեծից: Աւելի պանծալի ծննդական չէր կարելի յօրինել Վասիլի համար, սերելով նրան երկու անդրանիկ քրիստոնեայ թագաւորներից: Դժուար է հաւատալ այս վառ երեւակայութեան թռիչքին:

Պանկալօ, անպայման, հայ էր ծագումով, ինչպէս երեւում է իր որդիների անուններից, որոնցից Սմբատը զուտ հայկական է, իսկ Մարիանը՝ ընդունուած Մամիկոնեան տան: Մանուէլ, Վարդ կեսար եւ Պետրոն եղբայրների հայրը կոչւում էր Մարիան: Նոյն անունը կրում էր Պետրոնի որդին, որին Վասիլ եպարքոս նշանակեց մայրաքաղաքի: Բացի դրանից, հայ աղբիւրից դրական տեղեկութիւն ունինք, որ Վասիլի մայրը հայ էր: «Վահան ոմն եպիսկոպոս Տարօնոյ ասէր նմա թէ Արշակունի իցէ, զի մայրն հայ էր եւ կատարել թուէր տեսլեանն Սահակայ սրբոյ՝ նստիլ թագաւոր Արշակունի»:

Այս վկայութիւնն այն իմաստը չունի թէ Վասիլը հայ էր միայն մօր կողմից: Հօր ծագումը վէճի նիւթ չէր, ուստի եւ պատմագիրը ոչինչ չէ ասում այս մասին: Տարաձայնութիւնը վերաբերում էր մօրը, որը ծնուած լինելով Ադրիանուպոլ, կարծւում էր ոմանց կողմից թէ հայ չէ: Ահա այս կարծիքը հերքելու եւ ամեն կասկած փարատելու համար շեշտում է որ մայրը եւս հայ էր, համաձայն Տարօնի եպիսկոպոս Վահանի վկայութեան:

Ո՞վ էր Վասիլի հայրը եւ ինչո՞ւ նրա անունը չգիտէ կամ չի յիշում Կոստանդին Ծիրանածինը: Զարմանալի չէ, որ պապի անունը գիտէ թէ՛ հօր թէ՛ մօր կողմից, բայց հօր անունը չգիտէ: Արդեո՞ք գերութեան զրոյցի մէջ յիշուած Կորդուլն ու իր որդին Վարդը ազգական չէին Վասիլին:

Եթէ Լեւոնը, Վասիլի հաւը, իրաւ Լեւոն Ե կայսրն է, ինչպէս մեզ թւում է, հասկանալի է թէ ինչո՞ւ Վասիլի կենսագիրը սքօղել է իր պապի արենակցութիւնը պատկերամարտ կայսրին: Բնաւ ցանկալի չէր բարեպաշտ Վասիլին կապել աւելի քան ամբարիշտ համարուած Լեւոն Ե-ի հետ: Բայց որ հաւանական է նրանց մէջ ցեղակցութիւն որոնել, որոշ հիմ են տալիս նաեւ յատուկ անունները, որ ընդհանուր են երկու տներին: Լեւոն Ե-ի որդիներից մէկը կոչւում էր Սմբատ, միւսը՝ Վասիլ: Երբ Սմբատը յայտարարուեց գահաժառանգ, անունը փոխեց Կոստանդին: Արդ՝ Լեւոն, Սմբատ, Կոստանդին, Վասիլ անունները սեփական են Վասիլի տան: Նրա եղբայրը կոչւում էր Սմբատ, աւագ որդին՝ Կոստանդին, որի ծննդեան անունը թերեւս Վարդ էր, ինչպէս մեկնեցինք վերեւ: Լեւոն Ե-ի հօր անունը եւս Վարդ էր:

Աւելորդ չէ թերեւս յիշել նաեւ այն հանգամանքը, որ Լեւոն Ե թաւ մօրուս ունէր եւ գանգուր մազեր: Վասիլի մասին եւս ասուած է որ մազերը գանգուր էին: Արդեո՞ք դիպուածական երեւոյթ է թէ ժառանգական նշան:

Եթէ իրաւացի է մեր ենթադրութիւնը, որ Վասիլ Լեւոնի աղջկայ թոռն էր, ապա նա չէր կարող ծնուած լինել 812 թուին: Պատմում են որ 866 թուին մայիսի 25ին, երբ Միքայէլ կայսրը յաջորդ օրը պիտի հռչակէր Վասիլին թագակից, կատակասէր կայսրը հրամայեց պառկեցնել նոր կայսրին եւ 30 հարուած տալ մտրակով: Կատակը ծանր եկաւ Վասիլին, բայց դիմացաւ, որովհետեւ երիտասարդ էր, ասում է պատմագիրը:

Որքան եւ արտառոց է թւում այս կատակը, բայց պատշաճում է թեթեւսոլիկ եւ տղայամիտ Միքայէլին, եւ տարակուսանքի տեղիք չի տալիս: Պատմողը լսել է, անշուշտ, իրենց տանը, իր Կոստանդին պապից, որ Վասիլի բարեկամն էր եւ ականատես նրա յաջողութեան: Թւում է թէ կատակը մի իմաստ ունէր. Վասիլը, հաւանօրէն, թեւակոխում էր 30 տարին, եւ 30 հարուած նրա 30 տարուան թիւն էր: «Երիտասարդ լինելով, դիմացաւ ցաւին» խօսքերը ապացուցանում են որ ամեն պարագային «երիտասարդը» 30 տարուց աւելի չէր կարող լինել:

Այս հաշուով Վասիլ ծնուած պիտի լինէր 836 թուին, հակառակ որ աւանդութիւնը տալիս է 812 թիւը: Իսկ Միքայէլ ծնուած էր 839 թուին, ասել է թէ երեք տարով միայն կրտսեր էր Վասիլից: Գրեթէ հասակակից էին, որով հասկանալի է եւ նրանց ընկերական մերձաւորութիւնը եւ միասնական զուարճութիւններն ու խաղերը:

V

Վասիլը, եթէ իրօք Հմայեակի եւ Լեւոնի սերնդից էր, չէր կարող Արշակունի համարուել: Հմայեակը Մամիկոնեան

տանից էր եւ Լեւոնը՝ Արծրունեաց: Գիտնական պատրիարքը, անպայման, մեղանչել է ճշմարտութեան դէմ, եւ ստիպուած է եղել դիմելու մարգարէական տեսիլի օգնութեան: Վասիլի թագադրութեան տարին 866 թուին, նրա կենսագիրը նկատում է. «Եւ այսպիսով կատարուեց այն մարգարէութիւնը որ արել էր 350 տարի առաջ Խառնակ նշանաւոր հոգեւորականը, նա որ ինքն եւս Արշակունեաց ցեղից ծագելով տեսել էր երազ թէ այնքան տարուց յետոյ Արշակի սերնդից մէկը պիտի առնէ Հռոմէական կայսրութեան գայիսոնը»:

Հայ մատենագիրը եւս պատմում է որ 325 հ. թ. = 876 Վասիլի կողմից եկաւ Աշոտ իշխանաց իշխանի մօտ Նիկիտ անուն կայսերական ներքինին խնդրելու Աշոտից թագ: Տարօնի եպիսկոպոս Վահանը «ասէր նմա թէ Արշակունի իցէ եւ կատարիլ թուէր տեսլեանն Սահակայ սրբոյ՝ նստիլ թագաւոր Արշակունի եւ կամէր պսակել ի Բագրատունւոյն»:

Ս. Սահակի տեսիլը յայտնի է: Վերջին Արշակունի թագաւորի Արտաշէսի հետ ընկաւ նաեւ Ս. Սահակը: Երբ նախարարները եկան նորից խնդրելու որ ոտանձնէ հայրապետութիւնը, Ս. Սահակը հրաժարուեց, ասելով որ շատ վաղ տեսիլ է երեւացել իրեն, որով վերին կանխասացութիւնը յայտնում է թէ թագաւորութիւնը եւ հայրապետութիւնը զատարելու են Արշակունի եւ Գրիգորի տանից, «լուսցէ մերձ ընդ մերձ թագաւորութիւն յազգէդ Արշակունեաց եւ քահանայութիւն ի ցեղէ սրբոյն Գրիգորի»: Տեսիլն երեւացել է «յառաջ քան զձեռնադրելն զիս յեպիսկոպոսութիւն», այսինքն՝ նախ քան կաթողիկոսանալը:

Սակայն, միեւնոյն տեսիլն աւետել է, որ դարձեալ պիտի նորոգուէր թէ Արշակունի թագաւորութիւնը եւ թէ հայրապետութիւնը Գրիգորի տան. «մերձ յերեւումն պղծոյն անապատի դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց եւ նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւիղէ սրբոյն Գրիգորի»: Թէ երբ պէտք է կատարուի, որոշուած է ճշտիւ. «Յայսմհետէ մինչեւ ի վախճան աշխարհիս երեք տասներեակք ամաց և կէս տասներեկի համառօտեսցի ի վերայ ամենայն աշխարհի մինչեւ յերեւումն պղծոյն անապատի եւ լինին սոքա յայտնապէս թուով ամք երեքհարիւր յիսուն»:

Ս. Սահակի տեսիլի ազդերը Վասիլի թագաւորելուն աւելի քան խորհրդաւոր է: Շատ կարեւոր է բանասիրական տեսակէտից: Խնդիրը կնճռոտ է: Վասիլ գահ բարձրացաւ 866ին: Այստեղից 350 տարի յետ հաշուելով, կը ստանանք

516 թիւը, այն ինչ Սահակը ապրում էր մի դար յառաջ: Եթէ յառաջանանք տեսիլից, որ երեւացել է նախ քան Սահակի հայրապետանալը, ուրեմն ոչ ուշ քան 400 թիւը, կը հասնենք մինչեւ 750 թուականը: Այս դէպքում տեսիլի ակնարկը չի կարող վերաբերուել Վասիլին:

Ուշադրութեան արժանի է, որ ութերորդ դարի կէսերին, հայ-արաբական ընդհարումների սուր վայրկեանին, լուրեր էին տարածուած թէ արաբական պետութեան վերջը հասել է. «մի ոմն Մոնոզոն, մոլորութեան հոգւոն չարժեալ, մարգարէանայր սնոտիս եւ ընդունայն ասելով. «ահա մերձեալ է ժամանակ փրկութեան ձերոյ, զի այժմ ընդհուպ դարձցի զաւազան թագաւորութեանն միւս անգամ ի տուն Թորգոմայ»:

Ութերորդ դարի կէսին, ուղիղ 750 թուականին Օմմայեան տունը զիջաւ իշխանութիւնը Արաբասեաններին ներքին կռիւներից յետոյ: Այս յեղաշրջումի շրջանին է վերաբերում կամ աւելի ճիշտ այստեղից են ծայր տուել յիշեալ լուրերը արաբական իշխանութեան մասին: Հայոց ապստամբական շարժումը 750-775 տարիներին գուցէ սնուած էր մասամբ այն հաւատով որ Արաբների վերջը մօտենում է: Հիմք կայ կարծելու որ այս ատենները յօրինուած լինի մեզ հետաքրքրող տեսիլը Ս. Սահակի անունով:

Վասիլի շրջապատում, գլխաւորապէս Փոտի ջանքերով, փորձել են տեսիլը յարմարեցնել Վասիլի դէպքին եւ նրանով հիմնաւորել նոր կայսրի Արշակունի ծագումը:

Տեսիլի թելադրանքն այն է թէ Արշակունի եւ Լուսաւորչի տոհմերը պիտի վերստին ծաղկեն Հայաստանում: Եթէ ընդունենք որ Բիւզանդիան եւս խնդրի նիւթ է, այն ժամանակ կարելի է աւելի յառաջ գնալ եւ ենթադրել որ տեսիլը պարտական է իր ծագումը Վասիլի դահակալութեան:

Ուրիշ խօսքով՝ Փոտին վերագրուած գաղտնի դրութիւնը, որ կայսերական դրադարանի մէջ պահել էր, այլ բան չէր եթէ ոչ Սահակի տեսիլը, որ յօրինել էր դիտուն պատրիարքը ցոյց տալու համար, որ Վասիլը արքայական եւ այն էլ պարթեւական ծագում ունէր եւ արժանի էր իրեն վիճակուած մեծութեան:

Այս կեղծիքը Փոտը կատարած պիտի լինէր 867-875 տարիների ընթացքում, այսինքն դահրնկէցութիւնից մինչեւ Նիկիտի գալուստը Աշոտի մօտ: Վենետիկի հայրերից Կարապետ Տէր Սահակեան որ նահատակուեց Տրապիզոնում մեծ եղեռնի օրերին, այն կարծիքն էր պաշտպանել իր մի

ուշագրաւ յօդուածում թէ Սահակի տեսիլը յօրինուած է Բիւզանդիայում Վասիլի գահակալութեան առթիւ:

Այս կարծիքին դէմ է թւում, սակայն, այն պարագան որ տեսիլն արդէն ծանօթ է Սահակ Զորափորեցի կաթողիկոսի օրով խմբագրուած մի գործի, որ հասել է մեզ յունարէն թարգմանութեամբ: Սահակի տեսիլը, ὀπτασία, յիշատակուած է այնտեղ: Խորենացին եւս տեղեակ է տեսիլին. «Հարկաւորեալ պատմեաց զտեսիլն որ յառաջ քան զբազում ժամանակս երեւութացաւ նմա ի քուն ապագայիցն յայտնութիւնք»:

Սակայն ոչ յոյն գործի եւ ոչ Խորենացու հակիրճ խօսքերից չի երեւում թէ ի՞նչ էր տեսիլի էութիւնը: Արդեօ՞ք նրանց գիտցած տեսիլի մէջ յիշատակութիւն կար Արշակունեաց գահի եւ Լուսաւորչի տան վերանորոգման մասին, թէ խօսքը վերաբերում էր միմիայն այդ երկու տոհմերի մօտալուտ անկման: Այս է կարեւորը:

Մեզ թւում է որ տեսիլքի հին հարազատ խմբագրութեան մէջ ոչ Արշակունի եւ ոչ Լուսաւորչի տոհմի վերերեւման մասին խօսք չէր կարող լինել, այլ միմիայն նրանց անկման: Ս. Սահակ իր հրաժարականը հիմնաւորելու համար պատմում է թագաւորութեան եւ հայրապետութեան տխուր վախճանը եւ բնաւ պատճառ չունէր սփոփել ըմբոստ աղերսողներին լաւագոյն ապագայի յուսով:

Տեսիլն կարող էր վերախմբագրուած լինել Վասիլի գահակալութեան առթիւ եւ հետեւապէս Փոտին վերագրելու միտքը բնաւ անհաւանական չէ:

Ամեն պարագային Վասիլի Արշակունի ծագումը երկբայելի է: Ի հարկէ հայ նախարարական տներից շատերը արենակցական կապեր ունենալով Արշակունի տան հետ կարող էին յաւակնել արքայական ծագման, ինչպէս օրինակ Սենեքերիմ Արծրունու դուստրը որ հարս գնաց Վրաց արքունիք, իրեն համարում էր Արշակունի: Գոնէ վրաց աւանդութիւնն այդպէս է ներկայացնում: Թերեւս նման երեւոյթով Վասիլն եւս իրեն Արշակունի էր հռչակել: Իր որդի եւ յաջորդ Լեւոն կայսրը ակնարկում է իր հօր ազնուական ծագումը իր դամբանականի մէջ: Կայսերական տան մէջ, երեւում է, ընդունելութիւն էր գտած որ Վասիլ սերում է Տրդատից: Ժամանակները մեծ հաւատ չէին ընծայում այս յաւակնութեան եւ գաղափարը վերագրում էին Փոտ պատրիարքին:

Միայն արաբացի մատենագիր Տաբարին է թւում համամիտ Փոտին, ընդունում է որ Վասիլն արքայական չառաւիղ էր, բայց անուանում է նրան սլաւոն, «որովհետեւ մայրը սլաւոն էր»:

Տաբարին գտնւում է, անտարակոյս, Փոտի կազմած ծննդաբանութեան ազդեցութեան տակ: Սլաւոն բառով ակնարկում է Վասիլի մօր Ադրիանուպոլցի լինելը: Թրակիան եւ Մակեդոնիան ողողուած էին այդ ժամանակները սլաւոնական ազգաբնակութեամբ, ուստի եւ յաճախ Սլաւոնիա անունն են տալիս այդ երկրներին:

Տաբարիին (923) ժամանակակից էր Եւտիքիոս Աղեքսանդրիոյ պատրիարքը, յայտնի Սայիդ-իբն-ալ-Բադրիկ անունով (940): Սա ասում է որ Վասիլը «արքայական ծագում չունէր, որովհետեւ սլաւոն էր»: Նոյնը կրկնում է եւ Մասուդի (950), որ Վասիլն արքայական տնից չէր, այլ սլաւոն էր, կամ երկրորդում է Տաբարիի խօսքերը թէ Վասիլը սլաւոն էր կոչւում, որովհետեւ մայրը սլաւոնուհի էր:

Սլաւոն այս դրդածութեամբ նոյնանիշ է Վասիլի մակեդոնացի կոչման: Նման վկայութիւնները առանձին արժէք չունին, քանի որ սոսկ ենթադրութիւններ են բացատրելու թէ ինչո՞ւ մակեդոնացի էր կոչւում Վասիլը: Պատճառը միայն այն չէր որ մայրը որպէս թէ մակեդոնացի էր, այլ Աղեքսանդր Մակեդոնացուն նմանելու յաւակնութիւնն եւս կար: Մայրը ամեն պարագային սլաւոն չէր ազգով, այլ շատ շատ սլաւոն երկրից էր, այսինքն՝ Ադրիանուպոլցի: Այս լուրերի դէմ էր բողոքում Վահան եպիսկոպոսը, ինչպէս վերեւ յիշեցինք, յայտարարելով որ Վասիլն Արշակունի էր, «զի մայրն հայ էր»:

Վասիլի ծագման մասին մի ուրիշ աւանդութիւն է եղել հայ չրջաններում, որ պահուել է Ասողիկի մօտ. «Զսա ասեն ի Տարօնոյ ի դեղջէն Թլայ»: Այս խօսքերն այնպէս չպիտի հասկանալ թէ Վասիլ հասարակ գիւղացի էր: Մի անգամ ընդ միշտ թողնելու է այն միտքը թէ Վասիլն աննչան ծագում ունէր, ինչպէս տրամադիր են ցոյց տալու եւ բիւզանդական աղբիւրները: Բոլոր այն հայերը որոնք դերակատարներ են հանդիսանում բիւզանդական պատմութեան մէջ, գրեթէ բացառապէս պատկանում էին հայ ազնուականութեան դասին: Նրանց խոշոր մասը Մամիկոնեան տանից էին: Ութերորդ դարից, երբ ասպարէզը զիջան Բագրատունիներին, ստիպուեցին քաշուել Բիւզանդիա: Իսկ դրանից յառաջ Մամիկոն-

հանները մղում էր արեւմուտք իրենց հակումը դէպի քրիստոնեայ մեծ պետութիւնը:

Տարօնը Մամիկոնեանների սեփականութիւն էր հնուց, բայց հետագայում անցաւ Բագրատունի տան: Ութերորդ դարի քաղաքական շարժումների ժամանակ Տարօնը արդէն Բագրատունիների իշխանութեան տակ էր: Այստեղ տիրում էր Աշոտ Բագրատունին, որդի Իսահակի, այն Աշոտը որ հակառակ կացաւ ապստամբութեան: Տարօնի շրջանի նոր կենտրոնն էր Խլաթ քաղաքը: Տակաւին նախընթաց դարում Բագրատունիները ոտ էին դրել Տարօնում: Այստեղ փախաւ Վարազ-Տիրոց ասպետը պարսկական հալածանքից, անչուշտ ապաստան որոնելով իր կալուածում:

Հաւանական է որ Մամիկոնեան հանդէսող տան վերջին կայծերը մնացած լինէին Թիլ աւանում, եւ այստեղից քաշուած Բիւզանդիա, Բագրատունիների ճնշման տակ: Եթէ փոտի յիշած Հմայեակ անձը եւեւակայութեան պտուղ չէ, նա է որ հեռացած պիտի լինի Տարօնի Թիլ գիւղից: Հակառակ դէպքում, այսինքն՝ եթէ Հմայեակը պատմական դէմք չէ, պէտք է կարծել, որ Թիլից գաղթած ընտանիքը Բագրատունի տոհմից էր:

Այսպիսով Վասիլի Արշակունի ծագումը անպաշտպանելի է պատմանօրէն, քանի որ այդ տոհմը վաղուց մարած էր:

Հրապարակի վրայ էին երկու հինաւուրց եւ ականաւոր իշխանական տները՝ Մամիկոնեան եւ Բագրատունի, մին վայելում էր Բիւզանդիայում, միւսը՝ Հայաստանում: Սրանցից էր ծագում հաւանօրէն եւ Վասիլի ընտանիքը: Հմայեակ անունը ի նպաստ Մամիկոնեան արեան է իսկ Սմբատ, որ Վասիլի եղբօր անունն էր, թեքում է դէպի Բագրատունի տունը:

Մակեդոնական քաղաքները եւ Ադրիանուպոլը լոկ առժամեայ բնակավայր էին Վասիլի ծնողների համար: Այստեղի ռազմական ճակատներում սովորական էր զօրականների համար սրել իրենց սրերը եւ ապա ճանապարհ բաց անել դէպի պետական բարձր պաշտօնները, անդամ դէպի կայսերական գահը:

Կան գիտնականներ, որոնք ժխտելով Վասիլի Արշակունի ծագումը, պատրաստ են ուրանալու անխոհեմաբար եւ նրա հայ լինելն ընդհանրապէս: Մանաւանդ սլաւոն պատմագէտները դիւրաթեք են տեսնելու Վասիլի մէջ սլաւոնական արիւն: Մի շարք գիտուններ, ինչպէս Շաֆարիկ, Խոմեակով, Դրինով, Զերակով եւայլն, չեն քաշուել յայտարարելու որ Վասիլը զուտ սլաւոն էր կամ յունացած սլաւոն ընտանիքից:

Այս կանխակալ կարծիքներին մի անգամ ընդ միշտ վերջ տուեց մի նոր աղբիւր, Եւթիմիոսի Վարքը, որտեղ ասուած է. «Ստիլիանոսը որ կոչւում էր հայերէն Ζαούτζης մականունցի էր, բայց ծագումով հայ, ինչպէս եւ ինքը կայսրը»:

Այս անձը Վասիլի եւ իր որդու եւ յաջորդի՝ Լեւոնի սիրելին էր եւ վերջինս օրով հասաւ պետական բարձր դիրքի, կոչուելով Թագաւորահայր: Այլ եւ զուստրը ամուսնացաւ Լեւոն կայսրի հետ: Ստիլիանոսի հայ անունը՝ Զաուցաս կարծում են որ չաւուշ բառն է: Սխալ է: Թւում է թէ Ստիլիանոսը մեզ ծանօթ Τζάντζης զօրավարի որդին կամ մօտ ազգականն է եւ Ζαούτζη կարդալու է Τζάντζης: Տեսանք, որ նա Մակեդոնիայի ստրատեգ էր եւ նրա մօտ ծառայել էր պատանի Վասիլը:

Եւթիմիոսի Վարքի բացորոշ վկայութիւնը այլեւս կասկած եւ դեղեւումն չի թողնում Վասիլի հայ ծագման նկատմամբ:

Տարաձայնութիւններ կան հնուց նաեւ Վասիլի ընտանեկան կամ աւելի ճիշտ ամուսնական կեանքի մասին: Վասիլ գահ բարձրացաւ այնպիսի պայմաններում, որ համակրութիւն վայելել չէր կարող լայն շրջաններում: Գործած ոճիրը ծանր էր եւ տպաւորութիւնը դեռ թարմ: Նպաստաւոր գետին կար չար սերմնացանների համար: Վասիլի թշնամի բերանները չյամեցին վայրահաչ զրոյցներով եւ ստայոդ լուրերով արատաւորել նրա անունն ու ընտանեկան պատիւը:

Վասիլը ամուսնացած էր, երբ մտերմացաւ Միքայէլ կայսրի հետ: Պատմում են որ Միքայէլ բաժանեց նրան իր կնոջից, որի անունն էր Մարիամ, եւ ամուսնացրեց Եւդոկիա Ինգերի հետ, որ իր հարճն կամ սիրուհին էր: Ասում են որ Միքայէլը պայման էր դրել Վասիլին, որ սա լոկ անուանական ամուսին լինէր, թողնելով ամուսնական իրաւունքը Միքայէլին: Ի տրիտուր վերջինս դրեց Վասիլի տրամադրութեան տակ իր քրոջը՝ Թեկլային:

Վասիլ չորս որդի ունէր եւ չորս դուստր: Զար լեղուները զրպարտում էին, որպէս թէ առաջին երկու որդիները Կոստանդին եւ Լեւոն Միքայէլից էին եւ ոչ Վասիլից:

Կոստանդինը համարւում էր Լուդովիկի դստեր Իրմին-

գարդի փեսայ: Այս առթիւ Պոլիս էր եկել Լուդովիկի դեսպանը:

Կոստանդին մեռաւ 879 թուին, խնամախօսութիւնը վերաբերում է 870 կամ 871 տարիներին: Այս միջոցին Կոստանդինը գոնէ 15 տարեկան պիտի լինէր, որպէսզի փեսայացու համարուէր: Ասել է թէ ծնուած պէտք է լինէր 855 թուին, մինչդեռ Վասիլ ամուսնացաւ Եւդոկիայի հետ Վարդ կեսարի սպանութիւնից քիչ յառաջ, մերձ 865 թ.: Վարդի եւ Վասիլի թշնամութիւնը ծագեց Միքայէլի եւ Վասիլի մտերմական յարաբերութեան պատճառով եւ յանդեց Վարդի սպանութեան: Արդ Վասիլի եւ Եւդոկիայի ամուսնութիւնից 10 տարի յառաջ ծնուած Կոստանդինը ինչպէ՞ս կարող էր կապ ունենալ այդ ամուսնութեան հետ: Պարզ է որ Կոստանդինը առաջին կնոջից էր, Մարիամից, եւ ոչ Եւդոկիայից եւ հետեւապէս անտեղի և անհիմն էին տարածուած չարամիտ լուրերը: Պատմագիրները, արձանագրելով հանդերձ այս լուրերը, աւելի հաւանական են համարում, որ Կոստանդինը Վասիլի որդին է:

Նոյնչափ եւ անհիմն է եւ Լեւոնի վերաբերեալ լուրը: Եթէ հաւատանք պատմագիրներին, Միքայէլ կայսրը մերձաւոր կապեր ունէր Եւդոկիա Ինգերի հետ նախ քան իր օրինաւոր ամուսնութիւնը: Այս կապը խզելու համար էր որ Թէոդորա կայսրուհին եւ ներքինի Թէոկտիստը որոշեցին ամուսնացնել դեռահաս Միքայէլին մի ուրիշ Եւդոկիայի հետ, որ աւելի համեստ էր, Դեկապոլիտ բնտանիքից: Թէոկտիստը սպանուեց 856 թուին: Ուրեմն Միքայէլի ամուսնութիւնը դնելու է գոնէ 855 կամ 854 թուին: Իսկ Վասիլն կնութեան առաւ Եւդոկիա Ինգերին, ինչպէս յիշեցինք, 865ին կամ քիչ յառաջ: Արդ Միքայէլն ապրում էր Եւդոկիայի հետ աւելի քան 10 տարի եւ ոչ մի զաւակ չունեցաւ նրանից, եւ ոչ իր օրինաւոր կնոջից: 865ին Եւդոկիան անցաւ Վասիլի գիրկը եւ հետեւեալ 866 թուին սեպտեմբերի 1ին ծնեց Լեւոնին: Եւ այնուհետեւ պարգեւեց նրան եւս երկու որդի եւ չորս դուստր: Կարելի՞ է կասկածել, որ հայրը Վասիլը չէր, այլ Միքայէլը: Հարկաւ ոչ, եթէ միայն չենք ուզում մեղանչել ուղղամտութեան դէմ:

Աւելին կ'ասենք: Եւդոկիայի պատմութիւնն ամբողջապէս զրպարտութիւն է: Վասիլի պատճառով ատելի են դուրս բերել եւ Եւդոկիային, որ իր բախտը կապել էր Վասիլին: Վերջնիս վիրաւորելու եւ ստորացնելու նպատակով է որ նրա կնոջը ներկայացնում են որպէս Միքայէլի հարճ: Եթէ Միքայէլ կայսրը այնպէս սիրում էր Եւդոկիային, ի՞նչն էր արգելում ուղղակի կին առնել նրան եւ ոչ թէ գիջանել ուրիշին, վերապահելով իրեն կենակցելու դաղտագողի իրաւունքը մի անբնական և աւելի քան կատակերգական ձեւի տակ:

Մայրաքաղաքի թեթեւամիտ զրոյցները հասել էին մինչեւ Աղեքսանդրիա: Եւտիքիոս պատրիարքը պատմում է որ Վասիլին հարցրին թէ ինչո՞ւ սպանեց Միքայէլին եւ պատասխանն եղաւ հետեւեալը: Միքայէլը որպէս թէ սիրահարուել էր մի կնոջ և Վասիլին հրամայեց ամուսնանալ նրա հետ, պայմանով որ մերձենալու իրաւունքը պատկանի իրեն Միքայէլին: Չէր ուզում որ իր կինը իմանայ իր ապօրինի կապը, իսկ պսակուել նրա հետ չէր կարող իր կնոջ կենդանութեան: Վասիլը կատարեց կայսրի պատուէրը, բայց յետոյ զղջաց եւ սպանեց նրան:

Այս պատճառաբանութիւնը ոչ մի արժէք չունի: Բիւզանդական արքունիքը առաքինութեան պարտէզ չէր եւ ոչ էլ օրինապահութեան: Ինքը Միքայէլ ցոփ եւ անառակ իշխանի տիպար էր: Եթէ լուրջ ցանկութիւն ունենար, կը թողնէր կնոջը եւ այլ կին կ'առնէր, ինչպէս արել են ուրիշ կայսրներ իրենից առաջ եւ յետոյ: Կինը, մայրը անզօր էին խափանել նրա քմահաճոյքը: Պատրիարքներն անգամ խաչով ու անէծքով նահանջում էին կայսերական կրքերի առաջ:

Եւտիքիոսի պատմութիւնը մի բան է ցոյց տալիս, որ չրջուն լուրերի համաձայն քաղաքական յեղաշրջումը տեղի է ունեցել սիրային հողի վրայ: Ուրիշ խօսքով, Միքայէլ արգելեալ տափանք է տածել դէպի Վասիլի կինը եւ պատժուել է իր ապօրինի վարմունքի համար ամուսնուց:

Այս պարագան եւս առաւել ոյժ է տալիս մեր տարակուսանքին որ Եւդոկիան բնաւ այնպիսի թեթեւամիտ կին չէր, ինչպէս մեզ աւանդում են, եւ գուցէ երբեք հարճ չէ եղած Միքայէլի: Եւդոկիան յօժարակամ եւ ոչ Միքայէլի հրամանով ընտրել էր Վասիլին: Հակառակ դէպքում, վերջինս, զահ բարձրանալուց յետոյ, նրան չէր պահի:

Վասիլի կեանքը պէտք ունի աւելի քննական ուսումնասիրութեան եւ անկողմնակալ լուսաբանութեան քան եղել է ցարդ: Մեզ հասած պատմութիւնը մի ստամած կոյտ է զրոյցների, ամբաստանութիւնների եւ խեղաթիւրումների: Պէտք է քրքրել, քննել անաչառ աչքով, նպատակաւոր յերիւրանքներից պատմական եղելութիւնները յստակօրէն վեր հանելու համար: Վասիլի եւ նման գործիչների ծագման խնդիրը աւելորդ մանրակրկտանք չէ պատմութեան համար, ինչպէս կա-

րող է թուել չատերին: Բիւզանդականութիւնը ինչով որ զանազանւում էր իր նախորդ քաղաքակրթութիւնից պարտական էր այլազգեղ ազգերի միահամուռ գործակցութեան միեւնոյն պետական օղակում: Որոշել այս կամ այն ազգային տարրի բերած նպաստը նշանակում է լուսաբանել, հասկանալ բիւզանդականութիւնը:

Մանաւորելով խօսքս հայերի վրայ, մեր նպատակն է պարզել, թէ ի՞նչ էին ներկայացնում հայ գործիչները, որ փայլում էին պետութեան պատասխանատու դիրքերում արտասովոր եւ անօրինակ կորովով մտքի եւ զէնքի: Արդեօ՞ք բախտի սահակներ էին, թափառաշրջիկ ասպետներ, որ հայրենիքից հալածական, արկածներ էին որոնում մեծ ճանապարհների վրայ, առանց փոյթ ունենալու հետեւանքների մասին, թէ ընդհակառակը հայ շինարար ոգու կրողներն էին, գիտակից աշխատաւորներ, որ ջանք չէին խնայում պետական նոր շէնքի կառուցման համար եւ իրաւամբ հանդիսանում են նրա իսկական ճարտարապետները:

ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ ԲԻԻԶԱՆԴԻԱՅՈՒՄ

I

Իններորդ դարը շատ նշանաւոր շրջան է Բիւզանդիայի պատմութեան մէջ: Ոչ միայն քաղաքական այլ եւ մտաւոր կեանքը նոր ոգի եւ չունչ առաւ: Դարաւոր թմրութիւնից յետոյ վերջապէս սթափուեց գիտական միտքը եւ հին, մոռացած դիտութիւնները երեւան եկան, թափ տալով իրենցից անտարբերութեան փոշին:

Այս մեծ գործում եւս, ինչպէս քաղաքական ասպարէզում, կարապետող ոյժերը հայ արիւն ունէին: Նրանց ենք պարտական, նրանց նախաձեռնող ոգուն եւ մտաւոր կարողութեան գիտութեանց յառնումը Բիւզանդիայում:

Կրթութեան հին ճրագները, որ տակաւին աւկայծում էին Ե դարում պետութեան զանազան կենտրոններում, հանգան գրեթէ բոլորքեան յաջորդ դարում Յուստինիանոսի օրով: Բացի Կոստանդինուպոլսի համալսարանից, որ հաստատուած էր 425 թուին Թէոդոս Բ-ի ժամանակ, կային բարձրագոյն դպրոցներ նաեւ Աթէնք, Ալեքսանդրիա, Անտիոք, Բերիւթ (Բեյրութ), Եդեսիա եւ Կեսարիա[1]:

Յուստինիանոսը իր կենտրոնաձիգ քաղաքականութեամբ աղետաբեր եղաւ գիտութեան համար: Նա փակեց Աթէնքի համալսարանը 529 թուին, աւելի ճիշտ արգելեց փիլիսոփայութեան և իրաւագիտութեան դասաւանդութիւնը: Վերացրեց իրաւագիտութեան ուսուցումը բոլոր քաղաքներում, վերապահելով այդ միմիայն մայրաքաղաքին եւ մասամբ Բերիւթին:

Եթէ չհաշուենք Եդեսիայի դպրոցը որ փակուեց Զենոն կայսրի հրամանով 489 թուին, միւսները մեծապէս տուժեցին Յուստինիանոսի դարաշրջանում և անչքացան: Խղճալի

1 Սեբէոսը, էջ 131, խօսելով Քաղքեդոնի ժողովի մասին ասում է որ ներկայ էին մեծ առաջնորդ վարդապետներ «արուեստաւոր քաղաքացն Եգիպտացւոց եւ Աղեքսանդրացւոց եւ Հռովմայեցւոց և Կեսարացւոց եւ Աթենացւոց եւ Կիլիկեցւոց»:

Այստեղ արուեստաւոր բառը համապատասխանում է յոյն τεχνικός τέχνης, եւ նշանակում է դիտական: Այսպէս է կոչում մեր պատմագիրը այն քաղաքները, ուր բարձրագոյն դպրոցներ կային եւ յայտնի էին իրենց հռչակով:

պայմաններում քարշ տուին իրենց գոյութիւնը մինչեւ որ կուլ գնացին խսպառ արաբական հեղեղի մէջ: Մնաց միայն մայրաքաղաքի համալսարանը, որպէս եղակի հնոց գիտութեան: Սակայն եւ նա չուտով կորցրեց իր փայլը եւ չնորհիւ մի չարք անգրագէտ եւ անուսումնասէր գահակալների բոլորովին մոռացութեան տրուեց եւ բնաջինջ եղաւ: Ուսումն ու գրագիտութիւնը, զրկուելով պետական հովանաւորութիւնից եւ խնամքից, քաշուեցին վանքերը, տանելով իրենց հետ եւ գիտութեան վերջին բեկորները:

Այլեւս խնդիր չկար հելլէն գիտութիւնների մասին եւ չէր էլ կարող լինել: Մենաստանի պատերը, բնական է, որ չէին կարող հիւրընկալել այն գիտական յանգումները որոնք հեթանոս աշխարհայեացքի ծնունդ էին: Քրիստոնեայ գիտունին խորթ պիտի թուէին եւ խորշելի հեթանոս մտքի բնագիտական նուաճումները, տեսական կառուցումներն ու փիլիսոփայական յայտնութիւնները: Ս. Գիրքը իր սեփական պատասխաններն ունէր այն հարցերին, որոնք տոչորում էին հին մարդկութիւնը:

Թէոդոսեան համալսարանի ծրագրից կարելի է տեսնել թէ քրիստոնեայ պետութիւնը ի՞նչ էր կարեւոր համարում իրեն համար հին գիտութիւններից: Համալսարանը ունէր 31 պրոֆեսոր. 3 հոգի աւանդում էին լատին ճարտասանութիւն, 10 հոգի՝ լատին քերականութիւն, 5 հոգի՝ յունական ճարտասանութիւն եւ 10 հոգի՝ յունական քերականութիւն, 2 հոգի՝ իրաւաբանական գիտութիւններ և մի հոգի՝ փիլիսոփայութիւն:

Գլխաւոր առարկաներն են ուրեմն քերականութիւն եւ ճարտասանութիւն կամ հռետորական արուեստ, եւ մասամբ օրէնքների գիտութիւն: Ցիշեալ համալսարանի բացման ժամանակ 425 թուին պետական լեզուն լատիներէնն էր, իսկ յունարէնը պետական եկեղեցու լեզուն էր: Երկուսն էլ պէտք էր գիտենալ, ուստի եւ համալսարանական դասաւանդութեան առարկայ էին:

Սակայն, լատիներէնը չուտով վերացաւ, եւ յունարէնը գրաւեց նաեւ պետական լեզուի պատիւը: Այն երկիրները, որոնք կազմում էին Բիւզանդական տէրութիւնը, իսկապէս լայնատարած կապեր չունէին Լատինների եւ Ցոյների հետ ո՛չ լեզուական եւ ո՛չ արենական: Սրանց իրաւունքը պետութեան վրայ գլխաւորապէս քաղաքակրթական էր եւ ո՛չ ցեղային: Եթէ ի վերջոյ նախընտրութիւնը տրուեց յունարէնին, պատճառը, անշուշտ, եկեղեցին էր: Քրիստոնէութիւնը ընտրել էր յոյն լեզուն որպէս իր քարոզչութեան գործիք:

Սելեւկեան շրջանից սկսած յունարէնը դարձել էր միջազգային յարաբերութեանց եւ մանաւանդ կիրթ քաղաքացիութեան լեզու Առաջաւոր Արեւելքում: Նա մտաւ բնակաւորէն նաեւ եկեղեցին: Իսկ եկեղեցին պարտադրեց նրան պետութեան: Բիւզանդական պետականութիւնը արդէն իսկ հռովմէականի եկեղեցականացումն էր որոշ չափով եւ իմաստով: Բնակչութեան հոծ մեծամասնութիւնը չգիտէր յունարէն լեզուն: Ցոյները որ հաստատուած էին ծովեղրեայ եւ մասամբ ներքին վաճառաշահ քաղաքներում իրենք եւս պէտք ունէին սովորելու զրական յունարէնը, որից բաւականին հեռացել էր խօսուն բարբառը:

Այսպիսի պայմաններում հասկանալի է թէ ինչո՞ւ քերականութիւնը այնպիսի կարեւոր տեղ է բռնում դասաւանդութեան մէջ: Ընդունուած ձեռնարկ էր Դիոնեսիոս Թրակացու քերականութիւնը: Դիոնեսիոս ապրում էր երկրորդ դարում Քրիստոսից առաջ, բայց նրա երկը մեծ հռչակ եւ ժողովրդականութիւն ստացաւ բիւզանդական շրջանում: Ցոյներին հետեւեցին Հայերը, Ասորիները եւ թարգմանեցին իրենց լեզուով Թրակացու քերականութիւնը: Քերական գրականութիւնը շատ հարուստ է, որ նշան է թէ մեծ պահանջ կար:

Հների մօտ, ինչպէս եւ Դիոնեսիոսի, քերականութիւն չէր նշանակում միայն այն, ինչ որ այժմ հասկանում ենք այդ բառով, այլ աւելի ընդարձակ իմաստ ունէր: Նա ամփոփում էր իր մէջ նաեւ գրականութիւնն ու պատմութիւնը, այսինքն, մօտ էր արդի բանասիրութեան, կամ պատմա-բանասիրական գիտութեանց: Թէոդոսեան համալսարանի 31 պրոֆեսորներից 25ը զբաղուած էին քերական դասերով:

Միւս նշանաւոր առարկան ճարտասանութիւնն էր, որից անբաժան էր տրամախօսութիւնը կամ դիալեկտիկան: Վերջինս ոչ այլ ինչ էր եթէ ոչ վիճաբանելու արուեստը հարց ու պատասխանի ձեւով: Կուռ լեզու, ճարտար խօսք, ներհուն գիր, ահա ինչ էր պէտք մանաւանդ քրիստոնէական եկեղեցուն: Սրանք գնահատելի զէնքեր էին պաշտպանելու քրիստոնէական վարդապետութիւնը ընդդէմ հեթանոս իմաստասէրների, որոնք գիտէին գործ ածել նոյն զէնքերը կատարեալ հմտութեամբ: Ճարտասանական ու վիճաբանական արուեստը հարկաւոր էր ոչ միայն հեթանոս աղանդաւորների, այլ եւ քրիստոնեայ հերձուածների դէմ պայքարելիս: Ճարտասանութեան վերջին գործածութիւնը մուսուլման ուլեմաների դէմ էր, որոնց հետ ստէպ ընդհարում էին եկեղեցու ջատագովները:

Բնորոշ է Բարսեղ Կեսարացու այն նշանաւոր համեմատութիւնը թէ ինչպէս որ քաղաքները բարձր պարիսպներ ունին պաշտպանութեան համար, այնպէս էլ կրօնն ունի պարիսպ եւ այդ պարիսպն է դիալեկտիկան, որը թոյլ չէ տալիս թշնամիներին աւերում գործել եւ կամ յափշտակել այնպէս դիւրութեամբ կրօնական դաւանանքը:

Դիալեկտիկայի կարողութիւնը ձեռք բերելու համար պէտք էր դիմել Արիստոտէլի երկերին: Պորփիւրի ներածութիւնը, Արիստոտէլի Ստորոգութիւնը, Պերիարմէնիասը եւ միւս աշխատութիւնները դարձան ուսումնասիրութեան առարկաներ: Գրականութեան այս ճիւղը շատ զարգացաւ եւ ոչ միայն յոյն, այլ և ասորի և հայ լեզուներով: Մերձաւոր նպատակը կրօնական - եկեղեցական խնդիրների եւ վէճերի մէջ հմտութիւն ձեռք բերելն էր: Կարելի է կրկնել, որ գիտութիւնը արդարեւ աստուածաբանութեան աղախինն էր եւ ծառայում էր նրա անմիջական շահերին:

Հնութեան իսկական նուաճումները ստոյգ գիտութեանց ասպարէզում օրուայ պահանջ չէին համարւում, այնպիսի գանձեր էին, որ գնահատող չունէին, ապրանքներ, որ սպառող չունէին: Դրանք էին համարողութիւն (մաթիմատիկէ), երկրաչափութիւն, աստեղաբաշխութիւն, որոնք երաժշտութեան հետ միասին կազմում էին մի միութիւն Tetraktus կամ quadri vium կոչումով, այսինքն՝ քառեակ կամ ինչպէս Գրիգոր Մագիստրոսն է կոչում քառիցն արուեստք: Այս գիտութեանց է նայում յայտնի վակագիրը Խորենացու մօտ, որպէս զԱ առ Ք, զԹ առ Փ, զԵ առ Ե, զԵ առ Թ, այսինքն է Աստղաբաշխութիւն առ Քաղդէացիս, Թուականութիւն առ Փիւնիկեցիս, Երկրաչափութիւն առ Եգիպտացիս, Երաժշտութիւն առ Թրակացիս:

Եկեղեցական իմաստութիւնը պէտք չզգաց այս գիտութեանց եւ սրանք մնացին ձեռագիրների մէջ, հեռու հանրային հարցասիրութեան շրջանից:

Հելլէն գիտութեան վիճակը քրիստոնէութեան միջավայրում նկարագրում է մի արաբ մատենագիր հետեւեալ խօսքերով: «Հին Յոյների ժամանակ եւ բիւզանդական միապետութեան առաջին դարերում, գիտութիւնը շարունակեց աճել եւ զարգանալ: Գիտնականները եւ փիլիսոփաները, որ մեծ յարգանք եւ ուշադրութիւն էին վայելում, պարապում էին բնագիտութեամբ, մարդու մարմնի, մտքի եւ հոգու ուսումնասիրութեամբ: Պարապում էին նաեւ քառեակ գիտութիւններով, այսինքն՝ ուսողութեամբ (մաթիմատիկէ), որ է թուերի գիտութիւն, երկրաչափութեամբ, որ է ծաւալի

եւ ձեւերի չափումը, աստղաբաշխութեամբ կամ երկնային մարմինների գիտութեամբ, եւ երաժշտութեամբ, որ է հընչիւններ դաշնաւորելու արուեստ: Գիտութիւնները պատիւ ունէին եւ համաշխարհային համարում: Նստած հաստատուն եւ փառահեղ պատուանդանի վրայ, նրանք բարձրանում էին օրէցօր, երբ քրիստոնէական կրօնը երեւան եկաւ Յոյների մօտ: Օրհասական մի հարուած էր գիտութեան շէնքի համար: Նրա բարձունքը տապալուեց, եւ վարդապետութիւնները անհետացան: Ինչ որ պարզել էին հին Յոյները չքացաւ, եւ այն գիտերը որ արդիւնք էր հների հանճարին, այլանդակուեցին»[1]:

Նոյն միտքը յայտնում է նաեւ Գրիգոր Մագիստրոսը իր նամակներից մէկում հետեւեալ համարձակ խօսքերով. «Եթէ ձկնորսացն եմ աշակերտ, սակայն ոչ եմ անտեղեակ Աթենացւոցն ստորոգութեանց եւ հելլենական հանճարոյ, սակայն հաւատք մեր ծածկեցին զիմաստութիւն»: Նրան քաջածանօթ են «քառիցն արուեստք»:

Գիտութեանց անմխիթար դրութիւնը տեւեց դարեր, մինչեւ որ Թ դարում վերածնեց գիտական միտքը եւ գործունէութիւնը: Հին ծառը բողբոջեց անհատական ջանքերով եւ արժանացաւ պետական հովանաւորութեան: Անդրանիկ գիտնականը եւ մեկենասը, երկուսն էլ հայ էին:

II

Հայկական շրջանը բիւզանդական պատմութեան մէջ սկսւում է ոչ թէ Վասիլ Մակեդոնացուց, այլ Լեւոն Ե կայսրից, այսինքն ոչ թէ Թ դարու վերջից, այլ սկզբից:

Լեւոն կայսրի սպանութեամբ հայ ազդեցութիւնը չտկարացաւ: Միքայէլ Թլուատը այն անձը չէր, որ կարենար որեւէ մեծագործութեամբ մեղմացնել իր գործած ոճիրը: Ամեն նկատումով ցած էր իր զոհից: Թէոփիլն աւելի կարող եւ գիտակից իշխան էր քան իր անկիրթ հայրը Միքայէլ Թլուատը, եւ աւելի զգաստ եւ շրջանկատ քան իր որդին Միքայէլ արբշիռը: Ամեն պարագային նրա յաւակնութիւնները աւելի զօրեղ էին քան իր կարողութիւնները: Թէոփիլի կինն էր Թէոդորա, Մամիկոնեան իշխանուհին: Սրա հօրեղբայրը Մանուէլ Մամիկոնեանը Արմենեակեան թեմի ստրատեգ էր տակաւին Լեւոն Ե-ի ժամանակ եւ պետութեան առաջին զինուորական դէմքն էր եւ մնաց մինչեւ իր կեանքի վերջը Միքա-

1 Masoudi, Les Prairies d'Or, II, 320.

յէլ Գ-ի օրով: Թէոդորայի քոյրերը իրենց ամուսիններով՝ Արշաւիր պատրիկ եւ Կոստանդին Բաբուցիկ, եւ եղբայրները՝ Վարդ եւ Պետրոն ամենագործօն ոյժերն էին Ամորբեան հարստութեան ժամանակ:

Կարելի է ասել որ Մամիկոնեան տան փայլուն շրջանն էր: Վարդ Մամիկոնեանը այնքան պերճացաւ, որ օրինական ճանապարհով պիտի յաջորդէր վերջին Ամորբացուն, իր քեռորդուն, եւ նոր հարստութեան հիմը պիտի ձգէր, եթէ միայն քմահաճ բախտը այլապէս չտնօրինէր եւ չխլէր նրանից կայսերական թագը մատուցանելու նրա աւելի երջանիկ ախոյեանին եւ հայրենակցին, Վասիլ մեծագործ Հային:

Ահա այս Վարդն էր, որ մեկենաս հանդիսացաւ գիտութեանց: Կիրթ եւ ուսումնասէր մարդ էր, սիրում էր գիտութիւնը եւ գիտնականների հասարակութիւնը: Նրա մեկենասութիւնը անհատական համակրութեան սահմանում չմնաց, այլ հասաւ պետական բարձրութեան: Պետական հովանաւորութիւնը սփռեց գիտութեանց վրայ, բաց անելով առաջին համալսարանը Մագնաւրա կոչուած պալատում: Վարդի թշնամիներն անգամ խոստովանում են նրա արժանիքը, նրա խոշոր եւ անգնահատելի ծառայութիւնը կրթութեան ասպարէզում: Այն գիտնականը, որ նորաբաց դպրոցի գլուխն անցաւ, Լեւոն մեծ փիլիսոփան էր: Նա եւ հայ էր եւ ինչպէս կը տեսնենք նախարարական մեծ տոհմից: Վարդի մտերիմ բարեկամն էր, գուցէ եւ գիտական հաստատութեան բուն հեղինակը: Նրան հաւատաց Վարդը իր ձեռնարկի տեսչութիւնը: Ո՞վ էր Լեւոնը:

Նշանաւոր կեանքերը ներկայանում են ստէպ նոյնիսկ մերձաւոր սերնդի յիշողութեան մէջ, մանաւանդ Բիւզանդիայում, վիպախառն գծերով: Լեւոնի պատմութիւնը եւս ազատ չէ զրուցային պաճուճանքներից:

Մեծ գիտնականը ապրում էր սկզբում գրեթէ անյայտութեան մէջ կամ ծանօթ էր անձուկ շրջանում: Ուսումնասիրել էր բոլոր գիտութիւնները եւ յաջողել ձեռք բերել այնպիսի մի խոր հմտութիւն որ անմատչելի էր ուրիշ որեւէ մէկին: Փիլիսոփայութիւնը եւ իր քոյր գիտութիւնները՝ թուաբանութիւն, աստեղաբաշխութիւն, երկրաչափութիւն եւ երաժշտութիւն հաւասարապէս ընտանի էին նրան: Բնական հարուստ ձիրքերը, տոկուն աշխատութիւնը եւ մենաւոր կեանքը, ահա այն պայմանները, որոնց շնորհիւ դիզել էր իր մտաւոր գանձերը եւ հասել գիտութեան ծայր կէտին: Քաշուելով կեանքի ժխորից, ընտրել էր մի աղքատ տնակ, ուր ընդունում էր եւ ուսուցանում ամեն մարդու, որ դալիս

էր նրա մօտ սովորելու ինչ որ ցանկանում էր: Բազմաթիւ աշակերտողներ ունեցաւ: Նրանցից մէկը պատճառ եղաւ, որ մեծավաստակ գիտնականը, այդ թաքուն գանձը, յայտնի դառնար պետական շրջաններում եւ իր չքաւոր հիւղից փոխադրուէր կայսերական պալատը:

Լեւոնի աշակերտներից մէկը, որ սովորել էր երկրաչափութիւն, մտել էր մի սորատեղի (զօրավարի) մօտ գրագրի պաշտօնով: Երբ զօրավարը պատերազմի գնաց Արաբների դէմ, առաւ իր հետ նաեւ գրագրին: Սա գերի ընկաւ եւ տրուեց մի նշանաւոր արարի որպէս սպասաւոր:

Այդ ժամանակ ամիրապետը Մամունն էր: Նա յայտնի էր իր կրթասիրութեամբ: Մասնաւոր սէր ունէր յունական գիտութեանց եւ մանաւանդ երկրաչափութեան: Մի անգամ խօսակցութեան ընթացքին գերի սպասաւորը իմացաւ իր տիրոջից, որ ամիրապետը հետաքրքրւում է գիտական հարցերով: Առանց քաշուելու յայտնեց, որ ինքը գիտէ երկրաչափութիւն եւ կ՝ուզենար ծանօթանալ ամիրապետի ուսուցիչ գիտնականներին: Արաբ իշխանը լուրը հասցրեց Մամունին: Սա, որ ծարաւի էր գիտութեան, հրամայեց բերել տղային եւ հարցրեց թէ որքան ճիշտ է նրա ասածը: Խալիֆը չծածկեց իր թերահաւատութիւնը, ասելով որ երկնքի տակ աւելի կարող գիտուններ չկան, քան իր ուսուցիչները: Երիտասարդ ծառան աւելի եւս ցանկացաւ անպատճառ ծանօթանալ այդ գովուած գիտնականներին: Ամիրապետը յարգեց նրա խնդիրը եւ տեսակցութիւնը կայացաւ: Արաբ գիտնականները գծեցին եռանկիւնիներ եւ քառանկիւնիներ, թուեցին Եւկլիդի կանոնները և սկսեցին գիտնականի յրջութեամբ շարել անուններ թէ այս բանը այսպէս է կոչւում, այն՝ այնպէս: Բայց թէ ինչո՞ւ է այդպէս կոչւում, եւ կամ ի՞նչ է իմաստը եւ պատճառը, չգիտէին: Լեգուներն էին, որ շարժւում էին, բայց էութիւնը չէին ըմբռնում:

Հոռոմ գերին հասկացրեց որ նրանց գիտութիւնը թերի եւ անկատար է, քանի որ պատճառաբանել չեն կարող: Ցետոյ ինքը սկսեց տալ հարկաւոր մեկնութիւնը եւ բացատրութիւնը: Ամենքը ապուշ կտրեցին եւ հիացումով հարցրին թէ ո՞րտեղ է ամբարել այդ գիտութիւնը եւ թէ արդեօք իրեն նման գիտուններ շատ կա՞ն Բիւզանդիայում: Գերին պատասխանեց, որ ինքը ուրիշ շատ շատերի հետ համարւում է աշակերտների թւում եւ ոչ իսկական ուսուցիչների: Հետաքրքրուեցին իմանալ, ո՞վ է եղել իր ուսուցիչը: Աւելի եւս զարմացան, երբ լսեցին որ ուսուցիչը Լեւոն անունով մեծ փիլիսոփան է, որ դեռ կենդանի է եւ ապրում է չքաւորու-

թեան մէջ, բազմութեան անյայտ եւ անծանօթ վիճակում:

Մամունը շատ յուզուեց եւ իսկոյն եւ եթ նամակ գրեց Լեւոնին հետեւեալ բովանդակութեամբ.

«Պտղից ճանաչեցինք ծառը, աշակերտից՝ ուսուցիչը: Քանի որ փիլիսոփայական խորունկ գիտութեամբ, առաքինի վարքով անծանօթ ես մնացել հայրենակիցներիդ, եւ ցայժմ չես քաղել գիտութեանդ եւ իմաստութեանդ պտուղները, այլ եւ ոչ մի մեծարանքի չես արժանացել նրանց կողմից, լաւ կը լինի որ բարեհաճես գալ մեզ մօտ և հաղորդակից անես մեզ քո վարդապետութեանդ: Եթէ յօժարես գալ, համակ սարակինոսաց ազգը կը ճկէ իր վիզը ձեր առաջ եւ այնպիսի հարստութեամբ, այնպիսի ճոխ նուէրներով կը պատուէ ձեզ, որին ոչ մէկ մահկանացու չէ արժանացել»:

Մամունը նամակը տուաւ հոռոմ ծառային, սիրաշահեց ընծաներով եւ պատուիրեց տանել նամակը իր ուսուցչին: Խոստացաւ նորից ընծաներ տալ եւ անդամ ազատ արձակել գերութիւնից, միայն թէ ողոքէ, համոզէ փիլիսոփային թողնել հայրենի հողը:

Գերին եկաւ կայսերական քաղաքը եւ գտաւ իր ուսուցչին: Երբ տեսաւ նրա պայծառ եւ ջերմ երեսը, խանդաղատեց, սկսեց լալ եւ ողջագուրել, թանալ արտասուքով երեսը, վիզն ու կուրծքը: Ուսուցիչը չճանաչեց եւ մնաց ապշած օտարականի վարմունքից: Գերութեան մէջ քաշած տարիները փոխել էին նրա կերպարանքը: Երբ երիտասարդը յիշեցրեց իր անունը եւ թէ ե՞րբ եւ ի՞նչ է սովորել, փիլիսոփան ճանաչեց: Նամակը յանձնեց նրան: Սակայն Լեւոնը վախենալով որ թշնամի վեհապետից ստացած նամակը կարող էր կասկածներ յարուցանել անախորժ հետեւանքներով, բարւոք համարեց հաղորդել եղելութիւնը մեծ լոգոթետին, որ էր Թէոկտիստ ներքինին:

Այս առթիւ լոգոթետը ծանօթացաւ Լեւոնին եւ իր կողմից յայտնեց ամեն ինչ Թէոփիլ կայսրին: Սա հետաքրքրուեց գործով, կանչեց իր մօտ Լեւոնին, թոչակ կապեց նրան, պատուիրելով դասախօսել Քառասուն Մանկանց եկեղեցում: Ահա այս կերպ մեծ փիլիսոփան դուրս եկաւ անյայտութիւնից եւ հռչակ ստացաւ մայրաքաղաքի մտաւորական եւ պաշտօնական շրջաններում:

Պատմում են նաեւ, որ Մամունը տեսնելով որ իր հրաւէրը ձախողեց եւ Լեւոնին չթողին հեռանալ իր տեղից, նամակ գրեց նրան, ուր առաջադրեց մի քանի երկրաչափական, աստեղագիտական և ուրիշ խրթին հարցեր, և խնդրեց ուղարկել նրանց լուծումը: Լեւոնը բացատրեց ինչ որ պահանջում

էր, լուծեց դիւրութեամբ խնդիրները եւ միեւնոյն ժամանակ մի քանի դուշակութիւններ արեց և բոլորը նամակով ուղարկեց ամիրապետին:

Նամակը մեծ հիացք պատճառեց ամիրապետին: Այնպիսի բարդ եւ խրթին խնդիրների լուծումը որ տուել էր Լեւոնը, մի նոր ապացոյց էր նրա անզուգական գիտութեան:

Մամունը մի անգամ եւս փորձեց իր մօտ բերելու այդ նշանաւոր գիտունին եւ նամակ գրեց ոչ նրան, այլ այս անգամ կայսրին:

«Կը կամենայի ինքս գալ ձեզ մօտ, գրում է Խալիֆան, բարեկամութիւնս վկայելու եւ միեւնոյն ժամանակ աշակերտելու ձեզ: Բայց Աստուծուց տրուած իշխանութիւնս եւ բազմաթիւ հպատակներս չեն ներում հեռանալ, ուստի խնդրեմ ղրկես ինձ մօտ կարճ ժամանակով այն մարդուն, որ այնպէս հռչակուած է փիլիսոփայութեան եւ միւս գիտութիւնների մէջ: Թող գայ ապրէ ինձ մօտ եւ որպէս ուսուցիչ աւանդէ իր գիտութիւնն ու հաղորդ անէ ինձ իր առաքինութեան, ինձ, որ այնպէս սիրահար եմ թէ մէկին թէ միւսին: Չի կարելի բնաւ մերժել այն պատճառով, որ ես միեւնոյն լեզուն չունիմ ձեզ հետ եւ օտար եմ ձեր հաւատին: Խնդիրները յարգւում են բարի եւ ազնիւ բարեկամների մէջ, մանաւանդ երբ խնդրողը այնպիսի ոք է որպէս ես: Պատրաստ եմ նաեւ ի տրիտուր նուիրաբերել քսան կենդինար ոսկի եւ դաշն եւ խաղաղութիւն կնքել ընդմիշտ եւ անքակտելի»:

«Այսպէս բարձր էր գնահատում Մամունը, նկատում է պատմագիրը, Լեւոնի գալուստը եւ հասարակութիւնը»:

Թէոփիլ կայսրը մերժեց ամիրապետի խնդիրը: Նա գտաւ որ խելօք բան չէ ընտանի բարիքը տալ թշնամուն, զիջանել օտարին այն գանձը, որով Բիւզանդացիք միշտ փայլել են եւ զարմանքի եւ յարգանքի նիւթ եղել:

Կայսրը մեծ փառքի արժանացրեց Լեւոնին, հրամայելով Յովհաննէս պատրիարքին ձեռնադրել նրան մետրոպոլիտ Թեսսալոնիկէի: Պատրիարքը կատարեց կայսերական պատուէրը, մօտէն ճանաչելով Լեւոնին որպէս իր ազգականի:

Թեսսալոնիկէ Լեւոնը մեծ հռչակ ստացաւ մի դէպքի առթիւ: Տարիներ շարունակ անբերրիութիւն էր տիրում երկրում, սերմերը չորանում էին և ոչինչ չէին տալիս: Ժողովուրդը թշուառութեան մէջ էր և տառապում էր սովից: Լեւոնը ինչ ինչ աստեղագիտական դիտողութեանց հետեւելով, ճշտիւ որոշեց թէ երբ պէտք է սերմել որպէսզի արդիւնք տայ: Գիւղացիք այնպէս էլ վարուեցին: Առատ հունձք ու-

նեցան եւ զոհունակութեամբ փառաբանեցին իրենց գիտնական մետրոպոլիտի անունը:

Լեւոնի համբաւը այնքան մեծացաւ, որ շատ շատերի համար հանելուկ էր թէ ի՞նչպէս մարդ կարող է հասնել այդպիսի կատարելութեան բոլոր գիտութիւնների մէջ: Լեւոնն ինքը պատմել էր իր մտերիմներից մէկին թէ ի՞նչ կերպ էր ձեռք բերել իր գիտութիւնը: Քերականութիւն եւ քերթողութիւն սովորել էր Կոստանդինուպոլսում, ճարտասանութիւն, փիլիսոփայութիւն եւ թուականութիւն՝ Անդրոս կղզում:

Այստեղ մի գիտուն մարդ կար, որի մօտ պարապեց Լեւոնը, բայց չգտաւ ինչ որ որոնում էր: Սկզբնական գիտելիքներ ձեռք բերեց միայն եւ հեռացաւ: Շրջեց զանազան վայրեր, անցաւ վանքից վանք, քրքրեց թափթփած ձեռագիրներ, քննեց զննեց եւ ինչ որ հարկաւոր համարեց առաւ հետը եւ բարձրացաւ լեռների գագաթները եւ խորին առանձնութեան մէջ սկսեց ուշի ուշով ուսումնասիրել հաւաքած գրքերը: Այս եղանակով հասաւ ծայր գիտութեան եւ վերադարձաւ մայրաքաղաք եւ հետամուտ եղաւ գիտութեան սերմերը ցանել ուսումնատենչ հոգիներում:

Այս էր Լեւոնի զբաղմունքը մինչեւ եպիսկոպոսանալը: Երեք տարի միայն վարեց մետրոպոլիտութիւն եւ երբ դահընկեց եղաւ, վերադարձաւ վերստին գիտական եւ մանկավարժական գործին: Մագնաւրա պալատի դպրոցի պետ նշանակուեց: Երեք աշակերտներից Թէոդորոսը աւանդում էր երկրաչափութիւն, Թէոդիգիոսը աստղաբաշխութիւն եւ Կոմիտասը քերականութիւն:

Նրանց հովանաւորն էր Վարդը իր առատաձեռն օգնութեամբ եւ գիտութեան սիրով: Ցաճախ այցելում էր դպրոցը, խրախուսում էր աշակերտներին, որով «թեւեր տուեց գիտութիւններին»: Նրանք թեւաւորուեցին և յառաջ սլացան:

Այս պատմութեան մէջ կան ստոյգ և անվաւեր կէտեր: Կասկածելի է ամենից առաջ Լեւոնի եւ Մամունի ծանօթութեան պարագան: Մի ուրիշ տեղեկութեամբ միջնորդի դեր կատարողը Լեւոնի աշակերտներից այն անձն էր, որ Ամորիայի պաշարման ժամանակ 838 թուին պաշարուած բանակի մէջ էր: Կամենալով անցնել Արաբների կողմը եւ այդպիսով փրկուել վերահաս կորուստից, նա, որ աստղաբաշխ էր, մի կերպ իմաց տուաւ թշնամուն, որ եթէ երկու օր եւս չարունակեն պաշարումը, քաղաքը կ'առնեն: Այդպէս էլ եղաւ: Ամորիան ընկաւ, նշանաւոր զինուորական դէմքերը մասամբ կոտորուեցին, մի մասն էլ գերի ընկան Արաբների ձեռքը:

Մատնիչ աշակերտը Լեւոն փիլիսոփայի, փրկեց իր կեանքը անարդ գնով եւ ապաւինեց Արաբներին: Նրանից էր որ ամիրապետը իմացաւ Լեւոն գիտնականի գոյութեան մասին: Նամակ գրեց Թէոփիլին եւ գերիներից մէկի ձեռքով ղրկեց Կոստանդինուպոլիս եւ խնդրեց թոյլ տալ մեծ փիլիսոփային դալ իր մօտ, խոստանալով մեծամեծ պատիւներ: Թէոփիլը այդ ժամանակ միայն իմացաւ որ իր պետութեան մէջ այդպիսի մի խոշոր գիտնական կայ եւ փոխանակ ամիրապետին ուղարկելու, կարգադրեց որ Մագնաւրա պալատում դասախօսութիւններ կարդայ աշակերտներին: Ամեն դիւրութիւն տուաւ նրան: Լեւոնը Թեսալոնիկէի մետրապոլիտ եղաւ:

Նոյնը կրկնում է բառացի մի ուրիշ պատմագիր աւելացնելով միայն որ Լեւոնը ձեռնադրութիւն ստացաւ Մեթոդիոս պատրիարքից[1]:

Այս վերջին տեղեկութիւնը միանգամայն սխալ է: Լեւոնը մետրոպոլիտական աթոռից ընկաւ որպէս պատկերամարտութեան առաջնորդներից մէկը 843 թուին, երբ պատկերապաշտութիւնը վերահաստատուեց: Եւ որովհետեւ միայն երեք տարի մնաց աթոռի վրայ, հետեւապէս ընտրուած պէտք է լինէր 839-40 թուին: Մեթոդիոսը յաջորդեց Յովհաննէս պատրիարքին, որ նոյն պատճառով գահը թողեց 843 թուին, եւ մնաց չորս տարի ուրեմն 843-847: Պարզ է որ նա չէր կարող Լեւոնի ձեռնադրութեան հեղինակը լինել:

Առաջին աղբիւրը ոչինչ չէ ասում թէ երբ գերի ընկաւ Լեւոնի աշակերտը, մինչդեռ երկրորդը գիտէ որ Ամորիայի պաշարումի ժամանակ էր, 838 թուին: Այս դէպքում գերին չէր կարող դործ ունենալ Մամունի հետ, որ մեռել էր 833 թուին եւ ոչ էլ թուղթ բերել Լեւոնին: Անհաւանական է որ անցքը տեղի ունեցած լինէր Մամունի օրով, երբ Լեւոնը տակաւին երիտասարդ էր, ինչպէս կը տեսնենք, և անպատրաստ ապադայ կոչման: Մամունի միջամտութիւնը Լեւոնի կեանքի մէջ, նրա նամակագրութիւնը, ոչ մի հաւատ չեն ներշնչում եւ համարելու է հնարածոյ զրոյց: Հիմը կամ առիթն այն է եղել որ Մամունը իրօք սիրող էր գիտութեան եւ մեծ հովանաւոր: Թերեւս գիտական որեւէ առաքելութիւն ունեցած լինի Բիւզանդիա: Արաբները յարգում էին յոյն գիտութիւնը եւ աշխատում էին թարգմանութեամբ իւրացնել: Միւս կողմից, իրենց գիտութեան ծարաւը, եթէ ոչ պաշարը, կարող էր արձագանդ տալ բիւզանդական մտաւոր շրջանակներ:

1 Symeon, 640.

ջաններում։ Երկու հարեւան պետութեանց աղերսը կրթութեան ասպարէզում այս կամ այն չափով բնական է եւ գրեթէ անվիճելի։ Հաւանական է որ այս գետնի վրայ բուսած լինի Լեւոնի եւ Մամունի գրագրութեան զրոյցը։

Վստահելի չէ թւում Լեւոնի կենսագրութեան մէջ նաեւ այն տեղեկութիւնը, թէ նա կարօտութեան մէջ էր ապրում եւ ստիպուած էր իր կեանքը հայթայթել մասնաւոր դասաւանդութեամբ մինչեւ որ ծանօթացաւ արքունիքին։ Վստահելի չէ այս պարագան, որովհետեւ Լեւոնը հասարակ տանից չէր։ Նա մեծատան զաւակ էր։ Բաւական է ասել, որ Յովհաննէս պատրիարքի եղբօրորդին էր, ἐξάδελφος, ինչպէս վկայում է իր կենսագիրը[1]։ Իսկ Յովհաննէսը «եկեղեցական եւ կամ օտարական չէր, այլ բնիկ էր, կայսերական քաղաքի շառաւիղ, եւ ոչ աննշան, այլ խիստ ազնուական տոհմից, որ կոչւում էր Մորաքարցամ»[2]։

Յովհաննէսը մի եղբայր ունէր, անունը Արշաւիր, որին Թէոփիլ կայսրը պատրկութեան պատիւը չնորհեց։ Արդեօ՞ք սրա որդին էր Լեւոն փիլիսոփան թէ մի ուրիշ եղբօր զաւակ էր։

Այստեղ պիտի կանգ առնենք Յովհաննէս պատրիարքի կեանքի եւ գործունէութեան վրայ։ Այս կարեւոր է ոչ միայն Լեւոնի ընտանեկան միջավայրը պարզելու նկատումով, այլ եւ այն պատճառով, որ Յովհաննէս ինքը մի կարկառուն դէմք է իր կրթութեամբ եւ գիտական պատրաստութեամբ։

III

Յովհաննէս երեւան եկաւ Լեւոն Ե Հայի ժամանակ եւ խոշոր դեր ունեցաւ նրա եկեղեցական քաղաքականութեան մէջ։ Յաւ է որ պատմագիրները պատկանում են հակառակ ուղղութեան, ուստի եւ անկողմնակալ չեն Յովհաննէսի եւ նման խորհողների վերաբերմամբ։ Փառաբանել իրենց կուսակիցներին եւ լուտանք թափել հակառակորդների գլխին բնական բան է համարւում։ Այն լեզուն, որ գործ են ածում Յովհաննէսի դէմ, ինքնին վկայում է որ արհամարհելի սխոյեան չէ եղել։

Երբ Լեւոնը գահ բարձրացաւ 813 թուին եւ հետամուտ էր վերականգնել պատկերամարտութիւնը, որ խափանուել էր 787 թուի ժողովով, աչք ածեց շուրջը քաջ տեսաբան գըտնելու, ընտրութիւնն ընկաւ մի երիտասարդ եկեղեցականի վրայ։ Այդ Յովհաննէսն էր, անբաւ գիտութեան տէր, որի համար եւ կոչւում է Քերական։

Յաջորդ 814 թուին կայսրի պատուէրով Յովհաննէսը ձեռնամուխ եղաւ նախապատրաստական աշխատանքների։ Պէտք է նիւթեր հաւաքել յառաջիկայ ժողովի համար։ Կայսերական դրատունները նրա տրամադրութեան տակ էին։ Գլխաւոր աղբիւրը կազմում էին 753 թուի ժողովի արձանագրութիւններն ու գործերը, ուր ամբարուած էին հին հայրերից քաղած բոլոր կարեւոր վկայութիւնները ընդդէմ պատկերների։ Աշխատանքը կատարւում էր պալատում, ուր յատուկ սենեակ էր յատկացրած եւ անպակաս էր ճոխ սեղանը, ինչպէս կծու ակնարկում են հակառակորդ գրիչները[1]։

Ժողովը կայացաւ։ Նիկիփոր պատրիարքը ընկաւ աթոռից։ Հարկաւոր էր նոր ընտրութիւն։ Թեկնածուների մէջ էր նաեւ Յովհաննէսը, բայց չընտրուեց, որովհետեւ դեռ երիտասարդ էր[2]։ Յովհաննէսի մերձաւոր էր Թէոդոտիոս Կասիտերաս Մելիսսեն տնից, որի հայրը Միքայէլ ստրատեգ էր Անատոլիկեան թեմի եւ Կոպրոնիմ կայսեր քենեկալը։ Միւս գործակիցն էր մի երրորդ կարեւոր դէմք, Կոստանդին Կասիմատ, կարգաթող քահանայի որդի, որ սկզբում ուսուցիչ էր քերականութեան եւ իրաւաբանութեան եւ վերջը հոգեւոր կոչում ընդունեց Անտոն անունով։

Պատրիարք ընտրուեց նախ Թէոդոտիոս, նրա մահից յետոյ Անտոնը և յետոյ աթոռն անցաւ Յովհաննէսին 832 թուին։ Միքայէլ չարունակեց իր նախորդի յարգալիր վերաբերումը դէպի Յովհաննէս, գնահատելով նրա դիրքը պատկերների խնդրում և նրա խորին գիտութիւնը։ Նաեւ նշանակեց նրան դաստիարակ իր որդու Թէոփիլին։ Յովհաննէսին ենք պարտական Թէոփիլի լաւագոյն յատկութիւնները, մանաւանդ նրա սէրը դէպի գիտութիւնն ու արուեստը։ Թէոփիլ սիրեց իր ուսուցչին, կարդեց նրան սինկելլ եւ յետոյ բարձրացրեց պատրիարքական աթոռ։

Յովհաննէսը անմասն չմնաց քաղաքական կեանքին։ Երբ Թէոփիլը կամեցաւ իր գահակալութեան առթիւ ընդունուած դեսպանութիւն ուղարկել արաբական արքունիքը, յարմարագոյն անձը դատեց այս առաքելութեան համար Յովհաննէսին։ Կատարեալ հմտութիւն ունէր քաղաքական եւ պետական գործերի մէջ, ճարտարախօս էր եւ անհամեմա-

1 Theoph. Cont., 185.
2 Ibid., 154.

1 Vita Nicephori, ed. Boour, 165.
2 Scriptor incertus, 359.

տելի վիճաբան: Հայ լինելով, ծանօթ էր արեւելեան բարքերին եւ նիստ ու կացին, թերեւս, անտեղեակ չէր անդամ արաբական լեզուին: Դեսպանական պատասխանատու պաշտօնի համար աւելի յաջող ընտրութիւն չէր կարելի անել:

Մեր խնդրից դուրս է թէ ի՞նչպէս կատարեց իր յանձնարարութիւնը, մանաւանդ որ ուրիշ տեղ խօսել ենք այս մասին[1]: Ցիշենք միայն, որ Յովհաննէսը բերեց Բաղդատից տեղական արքունիքի յատակագիծը և կայսրը նոյն ոճով չինել տուեց Բրիասի պալատը: Շէնքը կառուցուեց համաձայն Յովհաննէսի բերած օրինակի, եւ հսկողութիւնը յանձնուեց Պատրիկ անունով ճարտարապետին: Շէնքը այնքան հարազատ էր իր կաղապարին ձեւով եւ զարդարանքներով, որ դժուար էր զանազանել: Թէոփիլը պատուեց ճարտարապետին պատրկութեան աստիճանով[2]:

Երկրորդ անգամ վիճակուեց Յովհաննէսին գնալ Բաղդատ: Այս անգամ խաղաղութեան դաշն կնքելու նպատակով էր եւ միեւնոյն ժամանակ գաղտնի յանձնարարութիւն ունէր բանակցել Մանուէլ Մամիկոնեան հռչակաւոր զօրավարի հետ, եւ համոզել վերադառնալ հայրենիք եւ կայսերական ծառայութեան[3]: Թէոփիլ գոհ մնաց նրա յաջողակ դեսպանութիւնից եւ երբ մեռաւ Անտոն պատրիարքը, Յովհաննէս աթոռը ժառանգեց որպէս միակ արժանաւոր թեկնածու: Պատրիարքութիւնը վարեց 832-843 տարիները: Թէոփիլի մահից յետոյ նրա այրին, կայսրուհի Թէոդորան, անսալով Թէոկտիստ լոգոթետի սադրանքին, վերականգնեց պատկերների պաշտամունքը: Պատրիարքը մնաց անսասան իր համոզումների մէջ եւ դերադասեց թողնել աթոռը: Նրան հեռացրին Կլիդիոն անունով մի վանք Վոսփորի ափին եւ մեռաւ, հաւանօրէն, յառաջ քան 860 թիւը:

Յովհաննէսի վրայ ծանրանում է վատանունութեան արատը: Կրօնաւորները, մանաւանդ միջնադարեան, անդրադարձնելի վարպետներ են հակառակորդներ վատաբանելու, ամեն գնով սեւացնելու յոսի արուեստի մէջ: Վա՜յ նրան, ով որ չար բախտ կ՝ունենայ նրանց լեզուի եւ գրչի տակ ընկնելու: Քրիստոնէական ներողամտութեան եւ կամ սոսկ արդարադատութեան սովորական պահանջը մոռացուում է: Յովհաննէսը պատկերաջարդ բանակումն էր: Այս արդէն բաւական է որ հակախոհները դրախօսեն եւ ամեն տեսակ

1 «Մամիկոնեան իշխանուհին բիւզանդական գահի վրայ» յօդուածում:
2 Theoph. Cont., 98.
3 Genes., 63; Theoph. Cont., 119.

մեղքեր բարդեն մի եկեղեցականի վրայ, որն արժանացել էր պատրիարքական մեծ կոչման:

Պատկերների խնդրում իսկապէս մեծ տարբերութիւն չկար բարեկամ եւ թշնամի կոչուած բանակների մէջ: Վէճը յարգելու թէ պաշտելու շուրջն է եւ միջին հաշտարար կէտ գտնելը դժուար չէր: Սակայն կրօնաւորները դիտեն բորբոքել կրքեր եւ սերմանել ատելութիւն այնտեղ, ուր փոքր ինչ զգաստ վերաբերումը բաւական է որ սանձէր չարաթոյն բերանները:

Յովհաննէսը, ինչպէս յիշեցինք վերեւ, մեծատան զաւակ էր, համբաւաւոր տոհմից: Պատանի օրերից սքեմ էր հագել և հետագայում վանահայր էր Ս. Սարգիս և Բակքոս վանքի, որ պալատական եկեղեցիների թեւումն էր եւ հոգեւորականութիւնը հաշւում էր կայսերական կղերի մէջ[1]:

Ընտանեկան պայմանները հնարաւորութիւն էին տուել նրան ստանալ բազմակողմանի եւ խոր կրթութիւն: Յովհաննէսի սովորական մականունն էր Grammatikos, Քերական[2]: Նշանակում է իր ժամանակուայ գիտութեանց ամբողջական շրջանն անցել էր, որովհետեւ քերական բառը ընդարձակ իմաստ ունի, ինչպէս վերեւ բացատրեցինք: Նրա կատաղի թշնամիները, որ կամովին կուրութեամբ զլանում են նրա մէջ որեւէ լաւ յատկութիւն տեսնել, չեն վարանում խոստովանելու նրա բարձր կրթութիւնը եւ մտաւոր գերազանցութիւնը:

Շեշտում են նրա logiotes, մտացի պերճախօսութիւնը, որի համար սիրելի էր Միքայէլ Թլուատին[3]:

Շեշտում են որ նա հմուտ էր քաղաքականութեան, գիտէր ի՞նչ է նշանակում քաղաքական բարեկարգութիւն, անվեհեր ընդդիմախօս էր, վարպետ հակաճառութեան արուեստում:

Բարձր կարողութիւն ունէր իմաստասիրական եւ դիալեկտիկան, ուստի եւ նրան էին յանձնում խելքի բերելու այն յամառ կրօնաւորներին որոնք հակառակ էին տիրող եկեղեցական գծին[4]:

Այս այսպէս լինելով հանդերձ Յովհաննէսի թշնամի պատմագիրները, կրօնական թէ կուսակցական կրքերից կուրացած, անուանում են նրան ոչ թէ Յովհաննէս, այլ Յաննէս: Այսպէս էր կոչում Մովսէսի հետ մրցող եգիպտական

1 Genes., 83; Theoph. Cont., 154
2 Theoph. Cont., 32; Georg, 766; Symeon, 635.
3 Theoph. Cont., 154.
4 Ibid., 96 և 102.

կախարդ քուրմերից մէկը: Ասել է թէ Յովհաննէսը սովորական մարդ չէր, այլ կախարդ էր: Անուանում են նաեւ Սիմովն, ակնարկելով այսանուն մոգին: Հաւատացնում են որ մանկութիւնից դեւ ունէր եւ խելագար էր: Փութ անունը որպէս թէ Հիւլիլաս էր կամ Հիզիլաս, որ նշանակում է երբայեցերէն իբրեւ թէ կարապետ կամ արքանեակ սատանայի[1]: Համբաւուած էր լեկանոմանտեան λεκανομαντεία, դեղագիտութեան θαρμακεία եւ պղծագործութեան արուեստի մէջ[2]:

Պատմում են դարձեալ, որ Յովհաննէսը մի եղբայր ունէր Արշաւիր անունով: Սա պատրիկ էր եւ քաղաքից դուրս Վոսփորի ափին մի տուն ունէր Փոկասի վանքի մօտ: Հոյակապ չինութիւն էր, սիւնազարդ գաւթով, բաղանիքով եւ ամեն այն յարմարութեամբ, որ վայել էր ազնուական մի ձեռակերտի: Յովհաննէս պատրիարքը յաճախ այցելում էր այս տունը եւ օթեւանում: Նա ունէր այստեղ նաեւ մի աշխատանոց ստորերկրեայ յարկի մէջ, ուր իջնում էին առանձին սանդուղով եւ դռնով: Մի տեսակ թաքստոց էր, ուր Յովհաննէսը որպէս թէ անձնատուր էր լինում զեղխութեան, «պղծելով միանձնուհիներ եւ այլապէս պարկեշտ աղջիկներ»: Այնտեղ պարապում էին նաեւ գուշակութիւններով, դիմելով զանազան հնարքների եւ կախարդական միջոցների, ինչպէս լեարդազննութիւն, լեկանոմանտիա, դիւթութիւն, հոգեխօսութիւն, այսինքն մեռածների ոգիները կանչելով: Թէոփիլ կայսրն իսկ մասնակցում էր այդ խորհրդաւոր զբաղմունքներին չատերի թւում[3]:

Թեթեւամտութիւն կը լինէր որեւէ արժէք տալ այս վայրախօսութիւններին: Երբ Յովհաննէսն ընկաւ եւ աթոռ բարձրացաւ Մեթոդիոս եպիսկոպոսը, սրա դէմ ամբաստանութիւն եղաւ որ սիրային կապ է ունեցել մի կնոջ հետ: Կարծում են որ ամբաստանողները Յովհաննէսի բանակիցն էին: Մեթոդիոսը արդարացաւ, թոյլ տալով անվայել վարմունք, այսինքն մերկացրեց իր ամօթանքը եւ ցոյց տուաւ որ ինքը մարմնապէս անընդունակ էր վերագրուած մեղսագործութեան:

Արդ եթէ Յովհաննէսը իրօք սիրային արատ ունենար, Մեթոդիոսի կողմնակիցները չէին խնայի և նոյն նախատինքը կը կարդային իրենց հակառակորդին: Սակայն այսպիսի բան չեղաւ: Պարզ է որ Յովհաննէսին վերագրուած խայտառակութիւնները ստոյգ չեն եւ չաղփաղփ բերանների ու թունոտ մտքերի յերիւրանք են:

1 Scriptor incertus de Leone Bordae filio, 349; Symeon, 606.
2 Georg, 766; Symeon, 606.
3 Theoph. Cont., 156-158.

Պատրիարքի վհուկութիւնը ապացուցանելու համար բերում են մի օրինակ: Մի անգամ մի բարբարոս ժողովուրդ յարձակուեց եւ աւերեց բիւզանդական հողերը երեք թագաւորների կամ պետերի առաջնորդութեամբ: Թէոփիլ կայսրը լքուած, չգիտէր ինչ անէր: Դիմադրելու ոյժ չունէր: Յովհաննէսը քաջալերեց կայսրին եւ խոստացաւ կատարեալ յաջողութիւն, եթէ լսէ հետեւեալ խորհրդին:

Կրկէսի պղնձէ արձաններից մէկի վրայ ցցեց երեք գլուխ եւ հմայեց որ նրանք երեք հրոսակների գլուխներ դառնան: Յետոյ ընտրեց երեք կտրիճ եւ ուժեղ երիտասարդ մի մուրճ ձեռքերին եւ պատուիրեց որ դիշերով նշանակած ժամին մօտենան արձանին եւ այնպէս ուժգին զարկեն որ միանգամից երեք գլուխներն էլ թռցնեն: Այդպէս էլ արին: Յովհաննէսը ինքը եւս գնաց այնտեղ ծպտուած աշխարհիկ հագուստով, որ չճանաչեն նրան եւ սկսեց հմայել. մուրճաւորները խփեցին հուժկու թափով: Արձանի երկու գլուխը ընկան եւ փշրուեցին, իսկ երրորդը մնաց կախ արձանից հարուածի թուլութիւնից:

Քիչ ժամանակից յետոյ երեք հրոսակ թագաւորները դժտուեցին, երկուսը կործանուեցին, իսկ երրորդը փախաւ վիրաւորուած: Մնացածները վհատուեցին, թողին եւ հեռացան[1]:

Յովհաննէս պատրիարքը զարգացած մարդ էր եւ որքան էլ ենթակայ լինէր իր դարու նախապաշարումներին եւ սնոտի հաւատալիքներին, դժուար է ենթադրել, որ այսպիսի խորհուրդներ տար Թէոփիլին: Ուշադրութեան արժանի է որ նոյնպիսի մի դէպք պատմում է մի ուրիշ Յովհաննէսի վերաբերեալ, որ աստղաբաշխական գիտութիւն ունէր եւ ապրում էր Ռոմանոս Լեկապէնի ժամանակ: Բուլղարաց թագաւոր Սիմէոնը 927 թուին եկաւ Բիւզանդիայի վրայ եւ նեղ դրութեան մէջ ձգեց կայսրին: Այն ժամանակ Յովհաննէս աստղաբաշխը ասաց նրան, թէ այսինչ արձանը, որ նայում է արեւմուտք, Սիմէոնի անդրին է, եթէ նրա գլուխը կտրես, նոյն ժամայն կը մեռնի Սիմէոնը: Այդպէս էլ արին եւ Սիմէոնը մեռաւ[2]:

Երկու Յովհաննէսների կախարդութեան դէպքերը միմեանց հետ առնչութիւն ունին: Թւում է որ մէկը ձեւուած է միւսի վրայ: Որի՞ն է տալու առաջնութիւնը, պարզ է: Յով-

1 Theoph. Cont., 155-156; Symeon, 649-650.
2 Theoph. Cont., 41; Symeon, 740.

հաննէս աստղաբաշխի օրինակը վերաբերում է որոշ ժամանակի եւ որոշ արշաւանքի եւ զոհի անունը եւ ազգութիւնը նմանապէս պահուած են: Մինչդեռ Յովհաննէս պատրիարքի դէպքը միանգամայն դիմազուրկ է. «ոմն ազգ անհաւատ եւ եղջերիկ», երեք անանուն պետ, անյայտ է արշաւանքի ժամանակը: Այս անհաւատ ազգը, հարկաւ, Բուլղարացիք են: Հաւանական ենք համարում, որ պատրիարքի դէպքը ուրիշ բան չէ եթէ ոչ Յովհաննէս աստղաբաշխի փորձի ընդօրինակումը, պատրիարքին վարկաբեկ անելու նպատակով:

Երեւում է որ արեւելքից հին կրօնական հաւատալիքների եւ նախապաշարմունքների տակաւին կենդանի մնացած հետքերը սփռուել էին մինչեւ Բիւզանդիայի մայրաքաղաքը: Ուշադրաւ է մի ուրիշ օրինակ նոյն մտաչխարհից: Թէոդոր Սանդաբարեն անձը, որ Փոտ պատրիարքի բարեկամն էր, երբ որ Փոտը կորցրեց աթոռը եւ շնորհազուրկ եղաւ Վասիլ կայսրի աչքում, աշխատեց վերականգնել Փոտի եւ Վասիլի բարեկամութիւնը: Այս նպատակով խորհուրդ տուեց Փոտին, որ կայսրի սենեկապաններից մէկի մտերմութիւնը դրաւէ եւ նրա միջոցով սրսկել տայ կայսրի անկողնու վրայ այն ջուրը, որ ինքը հմայել է: Սրանով իսկոյն եւ եթ կայսրի սէրը կը վերադառնայ դէպի Փոտը: Այնուհետեւ բաւական է որ Սանդաբարենը մի խօսք ասէ կայսրին, և Փոտը նորից կը ստանայ իր նախկին դիրքը[1]:

Արդ այսպիսի մի սովորութիւն ցայժմ գոյութիւն ունի հայ ժողովրդի մէջ: Երբ մատաղ աղջիկ կամ տղայ ուզում են սիրած էակի սէրը շահել կամ ինչպէս ասում են սիրտը գողանալ, միջնորդ բարեխօս կանանց ձեռքով աշխատում են ջուր սրսկել անկողնու վրայ այն անձի, որի սէրը պէտք է գրաւել: Թէոդոր Սանդաբարենը, որ կոչւում է «Մանիքեցի եւ որդի Մանիքեցու», «հրաշագործ եւ կանխասաց», հաւանօրէն արեւելցի է եւ թերեւս հայ: Իրեն վերագրուած հմայութիւնը եւս պէտք է կարծել որ արեւելքից է մտել Բիւզանդիա, ինչպէս եւ զոյգ Յովհաննէսների՝ Քերականի եւ Աստղաբաշխի առաջարկած եւ սարքած կախարդանքը:

Հետաքրքրական է որ Վասիլ կայսրի որդու Ալեքսանդրի մասին եւս պատմում են որ վհուկները հաւատացրել էին, որ վարազի պղնձէ արձանը, որ կար կրկէսում, նրա պատկերն է, στοιχεῖον, յուռութ[2]: Այս նշանակում է եթէ արձանը կոտրուի, Ալեքսանդրը կը մեռնի:

1 Symeon, 693-694.
2 Theoph. Cont., 379.

Στοιχεῖον բառը յուռութքի իմաստով գործածուած կարելի է համեմատել հայերէն գիր եւ գիր կապել դարձուածների հետ: Յունարէն բառը նշանակում է τιμή, գիր: Այժմ էլ գիւղերում ընդունուած է որ գիր կապող պառաւները որ եւ է խորհրդաւոր եւ չատ անգամ անիմաստ բառեր գրում են, փաթաթում մի կտոր չորի մէջ եւ կարում օրինակ երեխաների մէջքին որ չար աչքը խափանուի եւ այլն:

Յովհաննէս Քերականին եւ պատրիարքին կախարդ համբաւելու եւ նրան դերբնական զօրութիւն վերագրելու պատճառը բացատրելու է նրանով որ նա արեւելցի էր, մոգերի եւ քաւդեաների աշխարհից, եւ գիտուն էր: Յովհաննէսը հայ էր, եղբօր անունն Արշաւիր էր: Այս արդէն բաւական է որ նրա հայ ծագումը ամեն տարակուսանքից վեր համարուի: Հօր անունը նոյնպէս յայտնի է եւ հայկական է: Յովհաննէսը որդին էր Պանկրատիոս Սկիւտէսի[1]:

Պանկրատիոս յունական ձեւն է հայերէն Բագրատ անուան: Ո՞վ է այս Բագրատը եւ ի՞նչ է նշանակում Սկիւտէս մականունը: Կոստանդին Զ կայսրը 792 թուին արշաւանք գործեց Բուլղարների դէմ: Նրա բանակումն էին ի միջի այլոց Վարդ հայազն իշխանը, Արմենակեան թեմի ստրատեղը և ապագայ կայսրի՝ Լեւոն Ե Հայի հայրը և ոմն «Պանկրատ(իոս) սուտ-մարգարէ եւ աստղաբաշխ»: Պանկրատը կանխասացութեան շնորհ ունէր եւ գուշակել էր որ կայսրը պիտի յաղթէ Բուլղարներին: Կոստանդինը վստահանալով իր բարեկամի այնքան քաջալերիչ գուշակութեան, հոգ չտարաւ ճակատը յարդարելու որպէս հարկն էր և անխոհեմ ու անզգոյշ յարձակումով պարտութիւն կրեց: Բուլղարները Կարդամ թագաւորի առաջնորդութեամբ մեծ ջարդ տուին կայսրին: Շատ չատերն ընկան եւ նրանց թւում Վարդ զօրավարը եւ աստղաբաշխ Պանկրատը[2]:

Այս Պանկրատը Յովհաննէս Քերականի հայր Պանկրատն է, հայ Բագրատը: Լեւոն Ե կայսրի եւ Յովհաննէսի մերձաւորութիւնը, հետեւապէս, ոչ միայն գաղափարական համերաշխութեան արդիւնք էր, այլ ընտանեկան մտերմութեան: Նրանց հայրերը, որ ընկան միեւնոյն ճակատամարտում, չէին կարող ծանօթ չլինել միմեանց, որպէս զէնքի ընկերներ եւ մանաւանդ հայեր:

Յովհաննէս 815 թուին համարւում էր երիտասարդ հայրապետական աթոռը գրաւելու համար: Եթէ ընդունենք որ

1 Symeon, 606, քաղած անանուն հեղինակի De Leone Bardae (Լեւոն Ե մասին) գործից, էջ 349:
2 Theophanes, 725 (հրատ. Բոննի):

այդ ժամանակ 25-30 տարեկան էր, որ մեծ հասակ չէ պատրիարքութեան համար, նա ծնուած պէտք է լինի 785-790 տարիները: Ասել է թէ հօր սպանութեանը մի քանի տարեկան երեխայ էր: Յովհաննէսի հօր Բագրատի փութ անունը՝ Սկիւտաէս նոյնպէս մի թել է որ տանում է մեզ դէպի աստղաբաշխ եւ սուտ-մարգարէ Բագրատը: Σκιάστης Ապոլլոնի մակդիրներից մէկն է, եթէ միայն յունարէն բառ է, եւ գործ է ածուած Ապոլլոնի փոխարէն եւ նշանակում է գուշակ, գուշակութեան ձիրք ունեցող: Այս մտքով Սկիւտէս կատարելապէս նոյնն է ինչ որ սուտ-մարգարէ, ψευδοπροφήτης որպէս կոչում են աստղաբաշխ Բագրատին: Միեւնոյն անունը, միեւնոյն կամ հոմանիշ կոչումը: Բնական է կարծել որ խօսքը միեւնոյն անձի մասին է:

Ուսումնական մարդիկ, մանաւանդ արտաքին գիտութեանց հետեւողները, յաճախ էին կնքւում նման ծաղրական կոչումներով: Յովհաննէս Քերականին նմանեցնում էին Տրոփոնիոսի, այն անձի որ համարւում էր Դելփեան տաճարի հիմնադիրը եւ որի անունը հոմանիշ է պատգամախօս բառին[1]: Սանդարարենը, անշուշտ, գիտնական դէմք էր, գուցէ եւ այդ էր պատճառը նրա եւ Փոտի բարեկամութեան: Նա եւս «հրաշագործի եւ կանխատեսի», τεράστιος καὶ προορατίκος համբաւ ունէր եւ համեմատւում էր Ապոլլոնի հետ[2]:

Ապոլլոնեան արուեստը քրիստոնէի աչքում մի տեսակ կախարդութիւն էր, ուստի եւ գիտնականները, որոնց վերագրւում է այդ արուեստը, կախարդներ են: Նրանք գաղտնի կապ ունեն դեւերի հետ: Յովհաննէսի հովանաւորն էր Հիւլիլոս (թէ Հիւզիլոս) դեւը: Փոտ պատրիարքը իր անբաւ գիտութիւնը ստացել էր Լեբուփաս կոչուած սատանայից[3]:

Ով որ որակւում է այսպիսի յատկութիւններով, կրելի է ասել, նա գիտուն անձն է, հմուտ մանաւանդ արտաքին գիտութեանց եւ ոչ միայն Ս. Գրքի: Արտաքին գիտութիւնները համարւում էին հեթանոսական ժառանգութիւն, սատանայի գեղմունք: Գուշակութեան եւ հմայութեան ձիրքերը նոյնպէս սատանայական են, որպէս հեթանոս գիտութիւնների ծնունդ:

Բագրատը, որ սուտ-մարգարէ է կոչւում, այն կարգի գիտնականներից էր, որ զբաղւում էին արտաքին եւ մասնաւորապէս բնական գիտութեամբ: Ապացոյց որ նա աստղաբաշխ էր:

1 Theoph. Cont., 156.
2 Symeon, 693; Georg, 846.
3 Symeon, 672-673.

Եթէ ճշմարիտ է մեր ենթադրութիւնը որ այս Բագրատը ուրիշ չէր եթէ ոչ Բագրատ Սկիւտէս կոչուածը և Յովհաննէս Քերականի հայրը, ապա պարզ է, որ Յովհաննէս եւ իր եղբայր Արշաւիրը ոչ միայն ազնուական տոհմից էին, այլ եւ ուսումնական ընտանիքից: Հօրից ժառանգել էին սէր եւ ծարաւ գիտութեան եւ նրա ստեղծած չրջապատից քաղել առաջին հոգեւոր պտուղները:

Արշաւիրը, ինչպէս տեսանք, Վոսփորի ափին Ս. Փոկաս վանքի մօտ մի չքեղ ապարանք ունէր, ուր գտնւում էր եւ Յովհաննէսի աշխատանոցը[1]:

Ուրիշ տեղեկութեամբ, Յովհաննէսը մի տուն ունէր քաղաքից դուրս, որ կոչւում էր Տրուլոս (Troulos) եւ ուր կատարւում էին սատանայական զոհաբերութիւններ եւ գուշակութիւններ[2]:

Այսպիսի զբաղմունքներ տեղի էին ունենում Արշաւիրի տանը: Թւում է որ խօսքը նոյն տան մասին է և Տրուլոս ուրիշ տուն չէ եթէ ոչ Արշաւիրի ապարանքը Վոսփորի ափին (Troulos, երեւի, troullos բառն է, որ նշանակում է գմբէթ: Թերևս, Արշաւիրի տունը գմբէթաւոր էր արևելեան ոճով): Արշաւիրի տան համար ասուած է, որ հետագայում գնեց Արշաւիրից Վասիլ Հայը, երբ պարակիմոմենոս էր, եւ մենաստան դարձրեց ինչպէս եւ Փոկասի վանքը հիմնովին նորոգեց[3]: Մինչդեռ Յովհաննէսի տունը՝ Տրուլոս մնաց անբնակ եւ անտէր որպէս երբեմնեան սատանայական բոյն[4]: Կարծես, տարբեր տներ են: Սակայն պէտք է նկատել, որ Կոստանդին Միրանածինը, թուելով մի առ մի Վասիլի շինութիւնները, լիշում է Փոկասի վերանորոգութիւնը, բայց ոչինչ չէ ասում Արշաւիրի տան մասին[5]: Ուստի չի կարելի աներկբայ համարել, որ Վասիլը իրօք վանք դարձրած լինի հռչակաւոր ապարանքը:

Պատրիարքական աթոռից ընկնելուց յետոյ Յովհաննէսի կեանքը մութ է, ոչինչ յայտնի չէ: Գիտենք միայն որ իր աքսորում՝ Կլիդիոն վանքում ինչ ինչ պատկերներ էր փճացրել, որի պատճառով Թէոդորա կայսրուհին հրամայել էր երկու հարիւր հարուած տալ և քշել Փսիքա վանքը[6]: Մահից յետոյ եւս հանգիստ չգտաւ դժբախտ եկեղեցականը: Պատմում են որ Միքայէլ արբշիռ կայսրը հանեց նրա մարմինը

1 Theoph. Cont., 156.
2 Georg, 799; Symeon, 635.
3 Theoph. Cont., 157.
4 Georg, 799; Symeon, 635.
5 Vita Basilii,, 340.
6 Theoph. Cont., 151.

դերեզմանից Կոստանդին Կաւալին կայսրի աճիւնի հետ եւ կրկէսում ձիարշաւի ժամանակ մերկացրեց քահանայական զգեստներից, ինչպէս Թաղել էին, անարգեց անչունչ դիակը բարբարոսաբար խարազանելով եւ յետոյ կրակի ճարակ տուեց[1]:

Մեղաւորը Միքայէլ կայսրը չէր: Նա, անշուշտ, բարոյականութեան տիպար չէր, բայց այն հիւանդոտ մոլեռանդութիւնը չունէր կրօնական խնդիրներում, որ ընդունակ լինէր այսպիսի մի քստմնելի գործի առանց կողմնակի սադրանքի: Նրա ետեւ Թաքնուած էին Յովհաննէսի ոխերիմները, որոնք զինուորագրուել էին պատկերներին, բայց մոռացել քրիստոնէական ոգին: Ի՞նչ պայծառ հայելի է նրանց հրէշաւոր պատկերի համար այս մի հատիկ դէպքը: Սրանից յետոյ ի՞նչ արժէք կարող են ունենալ այն անմիտ եւ չարամիտ վայրաբանութիւնները Յովհաննէսի անուան շուրջը այդպիսի մի խայտառակ մթնոլորտում:

Միքայէլը սպանուեց 867 թուին: Հետեւապէս, Յովհաննէսի մահը սրանից յառաջ է: Չի կարելի ասել, որ նոր էր մեռած, երբ Միքայէլ հանեց նրա մարմինը: Միաժամանակ անարգուեց եւ Կոստանդին Կոպրոնիմի մարմինը, իսկ սա մեռած էր 775 թուին: Հաւանական է թերեւս կապել Յովհաննէսի մահը Արշաւիրի տան վաճառման հետ: Հոչակաւոր ապարանքի վաճառումը բացատրելու է թերեւս նրանով, որ Յովհաննէսը մեռել էր: Նրա կենդանութեան դժուար թէ վաճառուէր այն օթեւանը, ուր գտնւում էր նրա աշխատանոցը: Տունը գնեց Վասիլը երբ պարակեմոմին էր (սենեկապետ): Այդ պաշտօնին նա հասել էր Վարդի դէմ կատարուած մահափորձի հետեւանքով 858-9 թուերին: Յովհաննէսի մահը եւ տան վաճառումը դնելու է այդ թուից յետոյ եւ 867ից յառաջ: Այժմ դառնանք նորէն Լեւոն փիլիսոփային:

IV

Լեւոնը Յովհաննէս Քերականի եղբօրորդին էր եւ ուրեմն Բագրատ աստղաբաշխի թոռը: Յովհաննէսի եղբայրը պատրիկ Արշաւիրն էր, նշանաւոր ապարանքի տէրը: Արդեօք Լեւոնը սրա որդի՞ն էր թէ մի ուրիշ եղբօր, որի անունը չեն տալիս պատմագիրները:

Բագրատ անունը բացառապէս Բագրատունեաց տոհմական սեփականութիւնն է: Աստղաբաշխը անտարակոյս

1 Georg, 834; Symeon, 681.

նոյն տոհմիցն է: Արշաւիր անունը յատուկ է Կամսարական տան: Եթէ Բագրատի որդին կրում է Արշաւիր անունը, այդ կարելի է բացատրել մայրական գծով, այսինքն՝ որ մայրը, ուրեմն Բագրատի կինը Կամսարական տոհմից էր:

Վարդան մոնոստրատեգից յետոյ, որ փորձեց գրաւել կայսերական գահը 802 թուին, մի ուրիշ հայ Արշաւիր անունով նոյն քայլն արեց 808 թուին: Սա պատրիկ էր եւ պաշտօնով քուեստոր: Սրա դուստրը՝ Թէոդոսիա կնութեան էր տրուած Լեւոն Ե Հային: Անհաւանական չէ որ Բագրատը նոյնման կապով խնամացած լինէր Արշաւիրի տան հետ եւ այստեղ Արշաւիր անունն անցած Բագրատի որդուն: Արշաւիր քուեստորը կարող էր որդի եւ մօտ ազգական լինել Ներսեհ Կամսարականի, որ ընկաւ 785 թուին, Բագրատ սպարապետի եւ Տաճատ Անձեւացու հետ: Վերջինս Բուկելլարեան թեմի զօրավար էր եւ Իրենէ կայսրուհու դաւերից խուսափելով ապաստանեց Արաբների մօտ 782 թուին եւ յիշեալ երկու հայ իշխանների հետ ելաւ կռուի ընդդէմ Հոնաց եւ Խազարաց եւ երեքն էլ մնացին պատերազմի դաշտում Դերբենտի մօտ 785 թուի ամառը:

Այս իշխանների՝ Ներսեհ Կամսարականի եւ Բագրատ սպարապետի որդիներն (եւ կամ մօտ ազգականներն) ենք համարում Արշաւիր քուեստորին եւ Բագրատ աստղաբաշխին: Վերյիշենք որ Բագրատը սպանուեց բուլղարական ճակատում Արշաւիրի փեսայի՝ Լեւոն Ե կայսրի հօր՝ Վարդ պատրիկի հետ: Վարդը Արծրունեաց տնից էր: Թւում է թէ այս երեք տները՝ Կամսարական, Բագրատունի եւ Արծրունի մօտ էին միմեանց խնամէական կապերով: Միայն այս կերպ կարելի է մեկնել, որ Բագրատի որդին կրում էր Արշաւիր անունը: Գուցէ Բագրատի թոռը՝ Լեւոն փիլիսոփան իր անունը պարտական է Լեւոն Ե կայսրին: Արդեօ՞ք Լեւոնը Արշաւիրի որդին էր, թէ Յովհաննէս Քերականը մի երկրորդ եղբայր ունէր, եւ սա էր հայրը Լեւոն փիլիսոփայի — մնում է մութ:

Այս Արշաւիրը չփոթելու չէ այն համանուն մեծ պատրիկի հետ, որ Թէոդորա կայսրուհու քրոջ՝ Կալոմարիայի ամուսինն էր, ուրեմն Մամիկոնեան փեսայ: Թէոկտիստ նեբքինու սպանութեանը, 856 թուին, Կալոմարիան ապրում էր պալատում իր քրոջ մօտ և գործակից էր իր եղբօր Վարդին ընդդէմ Թէոկտիստի: Երեւում է որ այդ միջոցին Կալոմարիան արդէն կորցրել էր իր ամուսնուն եւ որպէս այրի կին քաշուել էր արքունիք քրոջ մօտ: Մինչդեռ Յովհաննէսի եղբայր Արշաւիրը տակաւին կենդանի էր, երբ Վասիլ պարա-

կիմոմեն էր: Իսկ այդ պաշտօնը նա ստացաւ Թէոկտիստի սպանութիւնից եւ Վարդի մահափորձից յետոյ մօտ 858-9ին: Ասել է թէ Կալոմարիայի ամուսին Արշաւիրը ուրիշ անձ է քան Յովհաննէսի եղբայր Արշաւիրը: Հնարաւոր է որ առաջինը կապ ունենար Արշաւիր քուեստորի հետ որպէս որդի կամ թոռն կամ մօտ ազգական: Նախարարական անուններն իրենց տոհմական իրաւունքներն ունէին եւ պահում էին ցորչափ որ յիշում էին իրենց ծագումը:

Եթէ ընդունենք որ Յովհաննէսը եւ Արշաւիրը կարող էին Արշաւիր քուեստորի աղջկայ թոռներն լինել, դուրս կը գայ որ Լեւոն Ե նրանց մօրաքրոջ ամուսինն էր: Այս դէպքում եւս հասկանալի կը դառնայ Յովհաննէսի եւ Լեւոն Ե-ի բարեկամութիւնը, որպէս արդիւնք ոչ միայն կրօնական համերաշխութեան (պատկերների խնդրում), այլ եւ ընտանեկան ծանօթութեան:

Յովհաննէսի մասին ասուած է որ «ծագում էր ոչ որեւէ աննշան, այլ չափազանց ազնուական շառաւիղից»[1]: Եթէ արդարեւ Յովհաննէսը արենակից էր Արշաւիր քուեստորին, ինչպէս ենթադրեցինք, ապա հասկանալի է որ Յովհաննէսի ծագումը որակւում է այսպիսի բառերով: Արշաւիր քուեստորը հասարակ անձ չէր, դահի թեկնածու, ազդեցիկ ծերակուտական: Քուեստորի պաշտօնը պահանջում էր յոյն եւ լատին լեզուների քաջ գիտութիւն և գրական շնորհք և իրաւաբանական հմտութիւն:

Աստղաբաշխ Բագրատի, Քերական Յովհաննէսի եւ օրէնսգէտ քուեստոր Արշաւիրի կիրթ եւ ուսումնական տանից էր Լեւոն փիլիսոփան: Մեծատան զաւակ բառի իսկական մտքով: Եթէ անգամ թողնենք մեր ենթադրութիւնները Արշաւիր քուեստորի եւ Նոյնիսկ Բագրատի վերաբերեալ, բաւական է յիշել Յովհաննէսի եւ Արշաւիրի գրական շրջանը, նրանց Տրուլոս տունը որ մտաւորական մի ժամատեղի էր, որպէսզի կարելի լինի ասել որ Լեւոնը՝ նրանց եղբօրորդին, սնուել եւ մեծացել էր վերին աստիճանի նպաստաւոր պայմանների մէջ: Մանկութիւնից արդէն հնարաւորութիւն ունէր հետաքրքրուելու եւ ապրելու մտաւոր կեանքով: Աղքատութեան մասին եւս խօսք չի կարող լինել: Կենսագրի այն խօսքերը թէ Լեւոնը կարօտութեան մէջ էր ապրում եւ իր կեանքը հայթայթում էր մասնաւոր դասերով մի թշուառ տնակում եւ անյայտութեան մէջ կորած, ոչ մի կերպ չեն համապատասխանում իրականութեան: Տրուլոսի ապարան-

1 Theoph. Cont., 254.

քի մթնոլորտը հեռու էր և՛ չքաւորութիւնից և՛ անյայտութիւնից: Այնտեղ էր մեծացած Լեւոնը: Ոչ միայն նիւթապէս անկարօտ էր, այլ ընդհակառակն շնորհիւ նիւթական հնարաւորութիւնների նա կարողացել էր շրջել կարևոր կենտրոնները, հասնել մինչեւ Անդրոս, քրքրել հին ձեռագրատուններ եւ յաղուրդ տալ իր ուսումնական ծարաւին: Քերականութիւն, քերթողութիւն եւ ճարտասանութիւն սովորել էր մայրաքաղաքում եւ աւելի հմուտ ուսուցիչ չէր կարող ունենալ քան իր հօրեղբայրը որ Քերական էր կոչւում, անշուշտ, իր հմտութեան համար: Այնուհետեւ շրջեց հեռաւոր տեղեր, գիտութեան պակասը լրացնելու սեփական աշխատանքով եւ ուսումնասիրութեամբ: Աղքատութեան եւ անյայտութեան պատկերը, որ տալիս է մեզ նրա կենսագիրը, լոկ վիպական զարդարանք է, զուրկ պատմական հիմքից:

Ընտանեկան բարենպաստ պայմաններն էին պատճառ որ Լեւոն Թեսսալոնիկէի մետրոպոլիտ նշանակուեց, ինչպէս երեւում է, տակաւին երիտասարդ հասակում: Եթէ իր հօրեղբայրը հարկաւոր տարիքը չունէր պատրիարքութեան համար 815 թուին, ուրեմն պակաս էր քան 25-30 տարեկան, ապա նրա եղբօրորդին՝ Լեւոնը նոյն 815ին մանուկ պէտք է եղած լինէր եւ 840 թուին, երբ մետրոպոլիտ եղաւ, հազիւ 30 տարեկան: Կենսագրի պատմութիւնը որ Լեւոնը յարաբերութեան մէջ էր Մամունի հետ, երբ մի աղքատ հիւղում դասեր էր տալիս, նոյնպէս մեղանչում է իսկութեան դէմ: Մամուն մեռաւ 833 թուին: Լեւոնը չէր կարող ծնուած լինել յառաջ քան 810 թուականը: Մամունի օրով, հետեւապէս, տակաւին պատանի էր եւ չէր կարող ոչ դասատու լինել եւ ոչ էլ նրա հետ թղթակցել:

Լեւոնի գիտական եւ մանկավարժական գործունէութիւնը սկսւում է ամենայն հաւանականութեամբ մետրոպոլիտութիւնից հրաժարելուց յետոյ 843 թուին: Այդ ժամանակ Վարդը թէեւ Միքայէլ Թագաժառանգի երեք խնամակալներից մէկն էր, բայց քաղաքական գործերում ազդեցիկ չէր: Թէոկտիստ ներքինին լոգոթետի պաշտօնում գրաւել էր Թէոդորա թագուհու վստահութիւնը եւ չեզոքացրել Վարդի ազդեցութիւնը պետական գործերում: Վարդը ստիպուած սահմանափակել էր իր գործունէութիւնը նուիրուելով գլխաւորապէս կրթական աշխատանքի: Մեծ հոգ տարաւ վերակենդանացնելու արտաքին կամ աշխարհիկ գիտութիւնները[1]: Այս նպատակով հիմնեց դպրոց նախ Քառասուն Ման-

1 Theoph. Cont., 185.

կանց եկեղեցում եւ ապա Մագնաւրա պալատում եւ ղեկավարութիւնը յանձնեց Լեւոն փիլիսոփային:

Լեւոնի յայտնութիւնը չէր կարող տեղի ունեցած լինել Թէոփիլի օրով, ինչպէս հաւատացնում է նրա կենսագիրը: Նոյնպէս սխալ է թէ Թէոկտիստոն էր նրա առաջին հովանաւորը[1]: Կենսագիրը բարեկամ չէ Վարդին: Նա կողմնակից է Վասիլի եւ ներշնչուած Կոստանդին Միրանածնի կողմից: Վարդի անունը նսեմացնելու մտահոգութեամբ, Լեւոնի պաշտպան է դուրս բերում Թէոկտիստին եւ նրան է վերագրում Քառասուն Մանկանց եկեղեցու դասաւանդութեան նախաձեռնութիւնը: Թէոկտիստը չէր կարող նեցուկ լինել Լեւոնին Թէոփիլի կենդանութեան՝ ժամանակագրական տեսակէտով: Չէր կարող նրան հովանաւորել նաեւ Թէոփիլից յետոյ՝ եկեղեցական քաղաքականութեան հետեւանքով: Լեւոնը զրկուեց եպիսկոպոսական աթոռից որպէս պատկերամարտ 843 թուին պատկերապաշտութեան յաղթանակով: Նոր քաղաքականութեան ոգին ինքը Թէոկտիստն էր: Ի՞նչպէս կարելի է ընդունել, որ մոլեռանդ ներքինին խրախուսէր իր ընկած հակառակորդին թէկուզ մի ուրիշ ասպարէզում: Յովհաննէս պատրիարքի օրինակը, որ ընկաւ աթոռից նոյն պայմաններում, հիմք չէ տալիս կարծելու որ այլապէս եւ աւելի ներողամտօրէն պիտի վարուէին նրա եղբօրորդու Լեւոնի հետ:

Լեւոնի գիտական եւ մանկավարժական գործունէութիւնը 843ից յետոյ է և նրա մեկենասը Վարդն է: Եթէ ճիշտ է որ սկզբում Լեւոնը դասախօսում էր Քառասուն Մանկանց եկեղեցում, (ինչպէս հաւատացնում է Թէոփանի Շարունակողը, մինչդեռ Գէորգ եւ Սիմէոն չեն յիշում), այս եւս վերագրելու է Վարդին:

Մագնաւրայի համալսարանի բացումը նոյն պատմագիրը[2] դնում է 843 թուին: Քանի որ այս թուից առաջ հնարաւոր չենք համարում Լեւոնի դասախօսութիւնը, աւելի հեշտ կը լինէր այս թուից հաշուել Քառասուն Մանկանց եկեղեցու դպրոցի գործունէութիւնը, իսկ Մագնաւրայի դասընթացքը դնել Վարդի խնամակալութեան տարիները՝ 856-866: Այս տասնամեակում Վարդը միահեծան տէր էր իշխանութեան և կառավարում էր երկիրը իր քեռորդու՝ Միքայէլի անունով: Այս շրջանին է պատկանում Լեւոնի եւ իր դպրոցի փայլուն եւ բեղմնաւոր գործունէութիւնը: Նրա մերձաւոր աշխատակիցներն էին Թէոդոր, Թէոդեգիոս եւ Կոմիտաս,

1 Theoph. Cont., 189.
2 Ibid., 192.

որոնք ստանձնել էին երկրաչափութեան, աստղաբաշխութեան եւ գրականութեան դասերը: Սրանք Լեւոնի պատրաստած աշակերտներից էին, հաւանօրէն, Քառասուն Մանկանց դպրոցի շրջանաւարտներից:

Դպրոցի տեսչութիւնը կեդրոնացած էր Լեւոնի ձեռքին: Տարաբախտաբար նրա գրուածներից գրեթէ ոչինչ չի հասել մեզ: Բայց թէ ի՞նչ ուղղութիւն ունէր նոր ուսմունքը եւ ի՞նչ ոգի, այդ մասին շատ պայծառ գաղափար է տալիս մի երգիծաբանութիւն, որ ուղղուած է նրա դէմ: Երգիծաբանական գրուածքի հեղինակը այլ ոք չէ թէ ոչ Լեւոնի աշակերտներից մէկը, ոմն Կոստանդին: Սա հիասթափուած այն գիտութիւնից, որ ստացել էր, հրապարակ է գալիս, իր ուսուցչի մահուանից յետոյ, մերկացնելու նրա գիտութեան հակաքրիստոնէական ոգին: Այս խնդրին է նուիրուած իր գործը, որ կրում է հետեւեալ վերնագիրը՝ Լեւոն փիլիսոփայի դէմ, Կոստանդին աշակերտից: Գրուած է Հոմերեան չափով:

Աւելորդ չենք համարում բերել ամբողջական թարգմանութիւնը տող առ տող:

1

Հազար ու մի բան գիտես, որչափ նախնի մարդիկ
Աւանդել են պերճախօս ճառերում արտաքին իմաստութեան մասին:
Բայց հոգիդ կորաւ, երբ որ խմեցիր աղի ջուրը,
Ո՛վ թշուառական, ամբարշտութեան ծովում լողալիս:
Դու թողիր ամենապայծառ եւ գերափառ հաւատը
Քրիստոնէութեան, լուսաւոր աւազանից յետոյ, ո՛վ եղո՛ւկ:
Ուրանալով սարսափելի եւ վսեմ խորհուրդը,
Սուրբ Գրքի ամենաղօր հրաշագործութիւնը,
Գլորուեցիր հելլեն (հեթանոս) ապականութեան հրէշաւոր վիհը,
Եւ կուր եղար հոգեկուլ գազանների, ո՛վ Լեւոն:
Ով չի խղճայ քեզ, չի ողբայ անկումդ,
Ով է որ չի արտասուի, տեսնելով թէ ի՞նչ օրի ես հասել:
Այլեւս չես կարող յենել տկարացած ոտդ այն վէմին,
Ուր քայլելը հաստատուն է եւ անխափան:
Այժմ պաշտում ես, ո՛վ մորոս, անթիւ աստուածներ,
Հրաժարուելով լուսացնցուղ երրորդութիւնից:
. . . . . .

2

Լսեցէք, ծնունդք մարդկան, Քրիստոսի մեծանուն ժողովուրդ,
Դուք անգէտ էք այս մարդու ուրացութեան.
Զեւսն է նրա աստուածը, որի կինն է Հերա,
Զեւսը, որ անչափ սիրահար է կուսական անկողիններին,
Զեւսը եւ մի ամբողջ վոհմակ երկնայիններին,
Որպէս թւում է հռչակաւոր Մելեսածինը (=Հոմերը):
Արդ եկէ՛ք, բոլորեքեանդ ազնիւ ընկերներ,
Այսպէ՛ս ասենք նրան միաբերան.
Կորի՛ր, չարագլուխ, իջի՛ր Հադէսի խաւար տունը,
Կորի՛ր հանդերձ իմաստութեամբդ եւ ամբարշտութեամբդ,
Գնա՛ չարաղետ Պիրիփլեգեթոնի մօտ, լայնարձակ Տարտարոսը,
Ուր կարող ես տեսնել Քրիսիպպներ, Սոկրատներ,
Պրոկլներ, Պղատոններ, Արիստոտէլներ, Եպիկուրներ,
Եւ քո բարեկամ՝ Եւկլիդներ եւ աստղաբաշխ Պտղոմէոսներ,
Այլ եւ իսկական իմաստութեան թագուհի՝
Հոմերեան մուսան, ինչպէս եւ Հեսիոդներ եւ Արատներ:

3

Արժանի ես, որ յաւիտենական հուրը քեզ բոլորէ
Այն զարմանալի խմբի հետ,
Որոնց մարգարէ ես համարում, սիրում,
Եւ համախոհ ես նրանց գաղտնի խաբէութեանց:
Այս ամենը, ե՛ս Կոստանդինս, քո Կալլիոպի կաթով
Կուչտ սնուած, գիտութիւն ամբարեցի.
Եւ սրտիդ գաղտնիքը ուսումնասիրելով
Հուսկ ուրեմն հասկացայ սքօղուած չարիքը[1]:

Ապերախտ աշակերտի գրութիւնը բոլորովին հակառակ նպատակի է ծառայում, քան կարծում էր հեղինակը: Աւելի պերճախօս ապացոյց չէր կարելի տրամադրել բնորոշելու Լեւոնի եւ իր համալսարանի գիտական ոգին: Երգիծանք չէ, այլ լաւագոյն վկայականը Լեւոնի ազատ եւ անկաշկանդ մտածութեան:

Նախ ուշադրութեան արժանի է դասախօսութեան ընդարձակ շրջանակը: Դասական գրականութիւնը խոշոր տեղ էր բռնում համալսարանի ծրագրում: Ոչ միայն Հոմեր եւ Հեսիոդ, ապա գրեթէ բոլոր կարեւոր փիլիսոփայական ուղղութիւնների հիմնադիրները՝ Սոկրատ, Պղատոն, Արիստոտէլ, Եպիկուր եւ Պրոկլ ուսումնասիրութեան նիւթ էին: Առանձնապէս չեշտուած են Եւկլիդն ու Պտղոմէոսը, որպէս բարեկամ Լեւոնի: Ասել է թէ Լեւոնի մասնագիտութիւնն էր երկրաչափութիւնն ու աստղաբաշխութիւնը:

Դասաւանդութիւնը ներշնչուած է եղել ազատամիտ ոգով, զերծ կրօնական մտքի որեւէ կապանքից, կանխակալ կարծիքներից: Այսպիսի վերաբերումն կարող էր այն տպաւորութիւնը գործել մանաւանդ քրիստոնէական ոգով տոգորուած մտքերի վրայ թէ դասախօսը համակրում է հեթանոս կրօնական աշխարհայեացքին: Մինչդեռ ճշմարտութիւնն այն է որ բուն գիտական մերձեցում են ցոյց տուել ուսումնասիրելի խնդիրների նկատմամբ:

Կոստանդինի մերկացումները աշակերտական ոխի, վիրաւորուած ինքնասիրութեան ժայթքում չեն: Նրա տրտունջը անհատական, մասնակի երեւոյթ չէ, այլ հասարակական որոշ խաւերի տրամադրութեան արտայայտութիւն: Հելլեն գիտութիւնները խորշելի էին նկատւում, աւելի ճիշտ երկիւղալի: Կարծում էին որ նրանք խարխլում են քրոստոնէական հաւատի հիմքը, գայթակղեցնում են ճշմարիտ հաւատացեալներին: Հարկաւ, չափազանցութիւն է այն մեղադրանքը թէ Լեւոնը երկրպագում էր Զեւսին եւ նրա երկնային փառակիցներին: Հաւաստին այն է, որ Լեւոնի մեկնակէտը քրիստոնէական դաւանանքը չէ եղել:

Կոստանդինի գրութիւնը առաջին ակնարկից այն տպաւորութիւնն է թողնում, կարծես երգիծանքը ուղղուած է ոչ թէ Լեւոնի դէմ, այլ մի տեսակ հեգնութիւն է այն անձերի հասցէին, որոնք հռչակաւոր գիտունի մասին վայր ի վերոյ կարծիքներ ունէին: Սակայն նոյն հեղինակից մնացել է մեզ մի երկրորդ գրութիւն նոյն նիւթի մասին, որից երեւում է որ խայթոցը ուղղուած է իրօք Լեւոնի դէմ:

Ինչպէս երեւում է, Կոստանդինի ամբաստանութիւնը ծանր է եկել գոնէ որոշ շրջաններում: Դատապարտելի են համարել, որ աշակերտը այդպիսի ապերախտ գործ կատարէ իր հոգեւոր ծնողի վերաբերեալ: Այս տրտունջները ստիպել են Կոստանդինին հանդէս գալ մի պատասխան-գրութեամբ: Վերնագիրն է՝ «Լեւոն փիլիսոփայի պաշտպանութիւնը, որի համաձայն նա պաշտում է Քրիստոսին եւ անիծում հելլեն կամ հեթանոս աստուածներին»:

1 Migne, P. G., 107, c. LXI.

Այս վերնագիրը վաւերական չէ, քանի որ չէ համապատասխանում գրութեան բովանդակութեան: Լեւոնը չէ որ պաշտպանում է իրեն Կոստանդինի դէմ, ինչպէս հասկացել է վերնագրի հեղինակը, անտարակոյս, անուշադիր ընթերցումի հետեւանքով: Նոյն Կոստանդինն է, որ յիշելով իր դէմ եղած դժգոհութիւնները, նորից սկսում է խայթել իր ուսուցչին եւ ապացուցանել որ ինքը արդար է եւ հիմնաւոր իր ամբաստանութեանց մէջ: Ահա ի՞նչ է գրում Կոստանդինը:

«Շատեր նախատում են ինձ չար լեզուով, այսպէս ծաղրելով. ա՛յ քեզ գրութիւն, ի՛նչ պատուական վարձատրին հատուցիր ուսմանդ համար. լաւ դասագին տուիր նրան, որ երկրորդ հայրդ էր, ո՛վ քաջ, ստացած կրթութեանդ փոխարէն արձան կանգնեցիր մշանջենական, ասելով՝ ի՛նչ մորս, ի՛նչ հայրոյիչ, ի՛նչ ուրացող է քրիստոնէական հաւատի նա, Լեւոնը: Ուրիշներն էլ մեղադրում են ինձ, թերեւս անդէտ լինելով իմ լուրջ եւ հաստատուն հիմքերիս: Համարձակւում են ասել որ սուտ են խօսքերը, թշնամիներից թելադրուած չարամտորէն, որոնցից ես որպէս թէ կաշառուած ամբաստանել եմ ի զուր տեղը իմ հանդուցեալ ուսուցչիս: Ես ականջ եմ դնում նման դատարկաբանութիւնների որքան հնարաւոր է, դիմանում եմ համբերութեամբ»[1]:

Կոստանդինը անցնում է այնուհետեւ յարձակողականի: Բացատրում է հանգամանօրէն իր վերաբերումը դէպի հելլէն գիտութիւնն ու հեթանոս աշխարհը: Յայտարարում է որ «ճշմարտութեան միակ աղբիւրն է Աստուծոյ բանը, վկայ է Քրիստոսը»: Նզովք է կարդում նրանց, որոնք ժխտում են այս ճշմարտութիւնը, որոնք չեն երկրպագում «աստուծուն յերիս անձինս եւ մի բնութիւն»:

Ուշագրաւ են մանաւանդ հետեւեալ խօսքերը, որով վերջացնում է գրութիւնը. «Ահա ինչու այժմեանից սիրում եմ ճարտասանութիւնը, ընտրեցի Փոտ եպիսկոպոսին ծերունի ուսուցիչ, որն ինձ սնեց աստուածային բխմանց կաթով»:

Հետաքրքրական է Լեւոնի եւ Փոտի հակադրութիւնը: Լեւոնը հելլէն գիտութեան ներկայացուցիչ է, Փոտը՝ քրիստոնէական: Սակայն, գիտենք, որ Փոտը, հռչակաւոր Գրադարանի հեղինակը, մեծ սիրահար էր դասական գրականութեան: Հակադրութեան իմաստն այն է որ Լեւոն հելլէն քառեակ կոչուած գիտութիւնների մասնագէտ էր, մինչ Փոտը՝ գերադասում էր պատմական գործերը: Սրանից հետեւում է որ թշնամանքի առարկան դասական գրականութիւնը չէր ընդհանուր առմամբ, այլ միմիայն բնական գիտութիւնները: Կարծում էին որ այս գիտութիւնները համաձայն չեն Սուրբ Գրքի չատ կէտերին: Հելլէն գրականութիւնը միշտ ուսումնասիրութեան նիւթ է եղել այս կամ այն չափով բիւզանդական շրջանում եւս: Ինչ որ արհամարհուած էր կամ անտեսուած, այդ քառեակ կոչուած գիտութիւններն էին: Եւ սրանց յարութիւնն է որ տրտունջի տեղիք է տալիս եկեղեցական շրջաններում: Լեւոնի նշանակութիւնը կենդրոնանում է հէնց այս կէտում:

Կոստանդինի ակնարկից երեւում է որ Լեւոնն արդէն մեռած էր, երբ վատամարդ աշակերտը ելաւ նրա դէմ: Լեւոնի մահուան տարին յայտնի չէ: Գիտենք որ կենդանի էր դեռ Վասիլի կայսրութեան առաջին տարիները: Թւում է թէ այնուհետեւ երկար չէ ապրել: Վասիլի օրով մեծ երկրաշարժ տեղի ունեցաւ մայրաքաղաքում, Պոլիեւկտոսի տօնին, եւ տեւեց 40 տիւ եւ գիշեր: Շատ եկեղեցիներ փլեցին, ի թիւս որոց եւ Սիգմա կոչուած Ս. Աստուածածնի եկեղեցին: Պատմում են որ Լեւոն փիլիսոփան եւս Սիգմա եկեղեցումն էր երկրաշարժի ժամանակ: Նա անմիջապէս նախազգուշացրեց աղօթողներին խորհուրդ տալով դուրս գալ եկեղեցուց: Նրանք չլսեցին, մնացին եկեղեցում և զոհ գնացին մեծ արկածին: Ինքը Լեւոնը սակայն փրկուեց, ապաստանելով ուրիշ երկու անձի հետ եկեղեցու սիւներից մէկի տակ[1]:

Պոլիեւկտոսի յիշատակը տօնւում է յունուարի 9ին: Երկրաշարժը տեղի ունեցաւ Վասիլի երրորդ տարին, ուրեմն 870 թուին[2]: Հաւանական է հակառակ իմաստով ըմբռնել այս պատմութիւնը, այսինքն՝ ենթադրել որ Լեւոնը ինքը կործանուել է երկրաշարժի ժամանակ միւս հաւատացեալների հետ Սիգմա տաճարում: Տարօրինակ է, որ Լեւոնը ուրիշներին խրատում է ելնել եկեղեցուց, բայց ինքը մնում է եկեղեցում:

Լեւոնին վերագրած խրատը եւ իր փրկութիւնը համաբելու է հնարածոյ: Գիտնականի մեծ հռչակը չէ ներել որ բնութեան գաղտնիքներին գիտակ անձը զոհ համարուի երկրաշարժի: Ուստի խեղաթիւրել են իսկական պատահարը, Լեւոնին փրկութիւն տալով սիւնի տակ, եւ աղօթողների կործանումը վերագրելով այն հանգամանքին, որ չեն անուսցել

1 Migne, P. G. 107, c. 606.

1 Georg, 840; Symeon, 688.

2 Sym. 688: Սրա ժամանակագրութիւնը վստահելի չէ, բայց այս դէպքում ճիշտ է թւում նշանակած տարին:

Լեւոնի կանխիչ խորհրդին: Զրոյցի մէջ, կրկնում ենք, պահւած ենք համարում Լեւոնի մահուան պարագան Սիգմայի Ս. Աստուածածնի եկեղեցում երկրաշարժի ժամանակ 870 թուի յունուարի 9ին:

Կոստանդինը իր գրութեան մէջ, որ երեւացել է Լեւոնի մահից յետոյ, վկայում է որ ինքը այնուհետեւ ուսուցիչ է ընտրել Փոտին: Սա կարող էր դասերով զբաղուել, հարկաւ, ոչ պատրիարքութեան ժամանակ, այլ երբ հրաժարուած էր գահից: Արդ, Փոտը թողեց գահը 867ին եւ նորից գրաւեց 879ին: Ուրեմն այս միջոցին պէտք է Կոստանդինը նրա մօտ ուսանէր, եւ այս միջոցին, ուրեմն, Լեւոնը պէտք է արդէն մեռած լինէր: Այս դիտողութիւնը եւս նպաստաւոր է մեր ենթադրութեան, որ Լեւոնը վախճանած էր 870ին:

V

Լեւոնը բիւզանդահայ էր, ծնուած եւ մեծացած մայրաքաղաքի մթնոլորտում: Իր ձգտումներով, ուսումնատենչ ոգով, կարելի է ասել, տեղական պտուղ է: Սակայն մոռանալու չէ որ նրա պապն էր Բագրատ աստղաբաշխը, որ իր գիտութիւնը պարտական չէր բիւզանդական մայրաքաղաքին, այլ բերել էր իր հետ իր հայրենիքից՝ Հայաստանից: Իրաւունք ունենք ենթադրելու որ նրա արիւնը խօսում էր որոշ չափով եւ Լեւոնի մէջ: Խօսքս միայն ժառանգականութեան մասին չէ, այլ եւ ընտանեկան աւանդութեան:

Առանց նպատակ ունենալու հայ եւ բիւզանդական մտաւոր յարաբերութիւնների խնդիրը չօշափելու, կ'ուզէի միայն մի զուգահեռ գծել Լեւոնի եւ մի ուրիշ հայ գիտնականի միջեւ, երկուսի հոգեկան սերտութիւնը երեւան բերելու համար: Այդ գիտնականը Անանիա Շիրակացին է: Սա ապրել է եօթներորդ դարում եւ հայ դպրութեան մէջ նոյն տեղն է գրաւում, ինչ որ Լեւոնը՝ բիւզանդական: Նա է ստոյգ գիտութիւնների առաջին սերմնացանը հայ անցեալում: Բարեբախտաբար, նրա կեանքը ծանօթ է մեզ աւելի քան որեւէ ուրիշ հին մատենագրի, եւ ծանօթ է չնորհիւ իր իսկ գրչի: Ահա ի՞նչ է պատմում Անանիան իր մասին:

Իր կրթութիւնը մի քանի շրջան ունի: Առաջին շրջանը որակում է հետեւեալ կարճ եւ իմաստալից խօսքերով. «Բովանդակեցի զդպրութիւն մերոյ ազգիս Հայաստանեայց եւ հմուտ եղեալ Աստուածաշունչ Գրոց»...

Ասել է թէ ուսումնասիրեց նախ հայրենի դպրութիւնը,

իրենից յառաջ յայտնի գրական գործերը, եւ Ս. Գրքի հմտութիւն ձեռք բերեց:

Սակայն սրանով չյագեցաւ իր ուսումնական ծարաւը: Ուզում էր ծանօթանալ համարողական արուեստին, «յոյժ կարօտեալ արուեստիս համարողական, խորհեցայ թէ ոչինչ համարի բան իմաստասիրութեան առանց թուոյ, կարծելով զսա մայր ամենայն իմաստից»:

Ճիշտ Լեւոն փիլիսոփայի վիճակը, որ մայրաքաղաքում ճարտասանութիւն եւ քերականութիւն ուսանելուց յետոյ, երազում էր բնական գիտութիւններ ձեռք բերել: Ինչպէս որ Լեւոնը Կ. Պոլսում մարդ չգտաւ, որի մօտ սովորէր, նոյնպէս եւ Անանիան. «ի Հայս ոչ գտի, ասում է նա, մարդ գիտակ իմաստասիրութեան եւ ոչ գիրք արուեստից գտի յաշխարհիս»: Ի՞նչ անէր: Լեւոնի պէս սկսեց ճանապարհորդել, ուրիշ տեղ հայթայթելու գիտութիւնները:

Ճանապարհ ընկաւ դէպի Յունաց աշխարհը, հասաւ Թէոդոսիուպոլիս: Այստեղ ծանօթացաւ Եղիազարոս անունով մի մարդու, որ շատ հմուտ էր եկեղեցական գիտութեան: Սրանից իմացաւ որ Զորրորդ Հայքում մի նշանաւոր գիտնական կար, համարող, այսինքն՝ մաթիմատիկ, անունը Քրիստոսատուր: Անանիան գնաց Քրիստոսատուրի մօտ եւ պարապեց վեց ամիս, ոչ աւելի, որովհետեւ չուտով համոզուեց, որ Քրիստոսատուրը առանձին գիտութիւն չունէր, «ոչ ունէր զբովանդակ արուեստ այլ աստի եւ անտի ծայրաքաղ»:

Անանիա վճռեց գնալ Կ. Պոլիս: Այստեղ պատահեց ծանօթների, որոնք տեղեկանալով նրա նպատակներին, ասացին, որ ի զուր նեղութիւն է կրել եւ այսքան հեռաւոր ճանապարհ եկել: Զարմացան, որ Անանիան չգիտէր որ Տրապիզոն քաղաքում կար շատ նշանաւոր գիտնական անձ՝ անունը Տիւքիկոս, որ քաջ գիտակ էր նաեւ հայերէն դպրութեան: Այնքան հռչակուած էր, որ մայրաքաղաքից այնտեղ են գնում ուսումնածարաւ պատանիները իրենց կրթութիւնը կատարելագործելու համար:

Արդարեւ, Պոլսի պատրիարքի պատուէրով, ոմն Փիլագր սարկաւագ մի խումբ տղաներ պիտի տանէր Տրապիզոն Տիւքիկոսի մօտ ուսանելու: Անանիան օգտուեց բարեյաջող դէպքից եւ միացաւ խմբին, «նաւակից եղաւ»: Եկաւ Տրապիզոն եւ ներկայացաւ Տիւքիկոսին, որ Ս. Եւգինեայ կոյսի վկայարանում հաստատուած, պարապում էր դասաւանդութեամբ:

Անանիան մնաց այնտեղ ութ տարի եւ մեծ հմտութիւն

ձեռք բերեց իր ցանկացած գիտութիւնների մէջ: Բազմակողմանի կրթութիւն ստացաւ, ծանօթանալով շատ և շատ գրութեանց «որ չէին թարգմանեալ ի Հայս, զի կայր անչափ գրեանք, գաղտնիք եւ յայտնիք, արտաքինք, արուեստականք եւ պատմագիրք, բժշկականք եւ ժամանակագիրք, զի չինչ գիրք որ առ նմա ոչ գտանէր»:

Տիւքիկոսը գիտէր նաեւ հայերէն եւ ծանօթ էր հայ դպրութեան: Անանիան հիացումով է խօսում նրա հայերէնի մասին: Այնքան քաջ հայագէտ էր, որ յունարէնից թարգմանելիս, չէր քաշքշում ուրիշ թարգմանիչների պէս, այլ այնպէս սահուն էր թարգմանում եւ արագ, կարծես թէ չի թարգմանում, այլ հայերէն գրած բան է կարդում («ոչ դեղերումն առնէր որպէս զայլ թարգմանիչսն, հայերէն ի թեռնոյր լեզու իբրեւ զհայերէն գրեալսն»):

Այս փայլուն գիտնականի մօտ Անանիան գտաւ ինչ որ որոնում էր, չտեմարանեց անբաւ գիտութիւն եւ դարձաւ հայրենիք ուսուցանելու ուրիշներին: «Հզօր արուեստս արբերի մեր աշխարհը, ասում է Անանիան, առանց որեւէ մէկի ձեռնտուութեան, եւ ոչ ոք շնորհակալութիւն անգամ չայտնեց աշխատութեանցս համար»: Տրտունջով արձանագրում է, որ շատերը եկան աշակերտելու, բայց դեռ ուսումը չաւարտած, հեռացան աւանդելու ուրիշներին այն, ինչ որ իրենք տակաւին լաւ չէին իւրացրած: «Կեղծաւորք եւ սնափառք ցուցանել զկերպարանս գիտութեան եւ կոչել ի մարդկանէ ռաբբի: Եւ ասին ի վերայ իմ պարսաւանս որք յինքին յերիւրեալք»:

Պարսաւողներն, անշուշտ, իր նախկին աշակերտներից էին, որոնք ստայօդ լուրեր էին տարածում իրենց ուսուցիչ մասին: Արդեօք նոյն կարգի յերիւրանք չէի՞ն, ինչ որ Լեւոնի աշակերտ Կոստանդինը եւ իր նմաններն էին տարածում: Անանիան շատ դառնացած է երեւում այդ յերիւրանքի համար եւ տրտունջը թափում է Հայերի գլխին, ասելով՝ «ոչ սիրեն Հայքս իմաստ կամ գիտութիւն, այլ ծոյլք են եւ ծանրացողք»: Եթէ «իմաստ եւ գիտութեան տակ» մեր հեղինակը հասկանում է բնագիտական ուսմունքները, թերեւս, իրաւունք ունի տրտնջալու, այլապէս վշտացած սրտի չափազանցութիւն է, եթէ ոչ բացարձակ ամբաստանութիւն, ուրանալ Հայի հարցասիրութիւնը: Անանիայի մասնագիտութիւնն էր «Արուեստք քառիցն», ինչպէս կոչում է Գրիգոր Մագիստրոսը, բաղկացած՝ թուաբանութիւնից, երաչժտանութիւնից, երկրաչափութիւնից եւ աստեղաբաշխութիւնից:

Որքան էլ մոռացութեան տրուէին Անանիայի սիրած գիտութիւնները, բայց եւ այնպէս չէին կարող անհետանալ բնաւին: Սակաւաթիւ հետեւորդների միջոցով կը պահուէր նրա աւանդը: Բազրատ աստղաբաշխը հաւանօրէն Անանիայի թանկագին աւանդի պահնորդներից է եւ իր գիտութիւնը պարտական է ոչ մայրաքաղաքին, այլ տարել էր այնտեղ Հայաստանից:

Մագնաւրայի դպրոցի ոգին, որ պատուաստել էր Լեւոնը, չհանգաւ նրա մահից յետոյ: Հայերը եւս անմասն չմնացին հետագայ յառաջադիմութեան: Ցաջորդ 10րդ դարում գիտութիւնն ու համալսարանը լուսամիտ մեկենաս ունեցան յանձին թագակալ գիտնականի՝ Կոստանդին Ծիրանածնի, որ Վասիլ Հայի թոռն էր: Նպատակ չունենք հետեւելու գիտութեանց զարգացման հետագայ դարերում: Կ'ուզէինք յիշել միայն մի ուրիշ հայ անուն, մի ականաւոր մաթիմատիկ, որ ապրում էր բիւզանդական քաղաքակրթութեան վերջալոյսին: Գիտութեան աշխալոյս եւ վերջնական խաւարում — երկու շրջանում էլ առկայծում են հայ անուններ:

Փարիզի Ազգային Մատենադարանում կայ մի յունարէն ձեռագիր թիւ 2428, որ բովանդակում է մաթիմատիկական երկեր: Ի միջի այլոց կայ երկու յօդուածք, աշխատութիւն մի հայ թուաբանի: Անունն է Նիկողայոս Արտաւազդ Ռաբդաս (նոր արտասանութեամբ Ռաւդաս): Առաջին յօդուածի, թուղթ 194, վերնագիրն է. «Կարճ եւ պարզ դաս համարողական գիտութեան, գրեց Կ. Պոլսում Զմիւռնացի Նիկողայոս Արտաւազդ, Ռաբդաս կոչեցեալ, թուաբան եւ երկրաչափ, ի խնդրոյ յոյժ յարգելի պաշտօնեայի խնդրագրոյ տէր Գէորգ Χατζύκη:

Միւս յօդուածի, թուղթ 225, վերնագիրն է. «ամենասիրեցեալ բարեկամիս Կլաղոմենցի Թէոդոր Τζαβούχη ինդրում է Նիկողայոս Արտաւազդ Զմիւռնացին, Ռաբդասը, Բիւզանտիսից»: (Կ. Պոլսից)

Կրկնակի անուններից մէկը զուտ հայկական է՝ Արտաւազդ, որից երեւում է որ արեւելքից նոր է եկած եւ Զմիւռնիայում վերակոչուած Նիկողայոս: Մականունը՝ Ռաբդաս: Արտաւազդը գրել է իր գործը ոմն Գէորգի խնդիրքով, որ կոչւում է Χατζύκη: Դժուար չէ կռահել, որ Խաչիկ անուն է, փաղաքշականը Խաչատուր անուան, եւ ծաթ 10րդ դարում, երբ նոյնիսկ կաթողիկոսներից մէկը կրում էր նոյն

անունը: Ոչ միայն Գէորգ Խաչիկը, այլ եւ միւս անձը՝ Թէոդորը հայ են: Τζαβούχη ոչ այլ ինչ է եթէ ոչ Զաւուշ բառը: Թէոդորը այդպէս է կոչւում, երեւի, այն պատճառով, որ պալատական չաւուշ է եղել: Գէորգ Խաչիկը նմանապէս պալատական պաշտօնեայ էր, որպէս պետ այն դիւանի, ուր մտնում էին կայսեր անունով տուած խնդրագիրները:

Այսպէս մի հայ գիտնական գրում է իր աշխատութիւնները իր երկու հայրենակիցների առաջարկութեամբ: Խրթին գրութիւններ չեն: Մի յօդուածում բացատրում է թուաբանական չորս գործողութիւնները՝ գումարում, հանում, բաժանում եւ բազմապատկում: Միւսը վերաբերում է կոտորակների բաժանման եւ բազմապատկման կանոններին եւ թէ ի՛նչպէս պէտք է հանել քառակուսի արմատ:

Ֆրանսացի մի գիտնական մի փոքրիկ հետազօտութիւն է նուիրել Նիկողայոս Արտաւազդի Ռաբդասին, ուր ծանրանում է գլխաւորապէս քառակուսի արմատ հանելու եղանակի վրայ: Դուրս է գալիս որ այն եղանակը որ գերմանացի Գիւնթեր գիտնականը վերագրում է նոր ժամանակուան մաթիմատիկներին՝ Օպպերմանին եւ Ալեքսէեւին, իսկապէս պատկանում է Արտաւազդին[1]: Այս արդէն հայկական մի հին համեստ տուրք է մաթեմատիկական գիտութեան:

Արտաւազդը ծանօթ է նաեւ իր մէկ երկրաչափական աշխատութեամբ, որ գտնւում է Փարիզի մի ուրիշ յոյն ձեռագրի մէջ God. Suppl. Grec.682: Ապրել է մեր գիտնականը 14րդ դարում, Անդրոնիկ Պալէոլոգ կայսեր ժամանակ: Նա կենդանի էր տակաւին 1341 թուին, ինչպէս երեւում է իր մէկ հաշուից: Որոշելով Զատիկը Քրիստոսի 6849 տարին, երբ արեւի 17րդ շրջանն էր եւ լուսնի 9րդ, Արտաւազդ կոչում է այդ տարին ներկայ: Հաշուից երեւում է որ խօսքը 1341 թուի մասին է, երբ Զատիկն ընկաւ ապրիլի 8: Յայտնի է որ Անդրոնիկ Պալէոլոգի որդին Միքայէլը ամուսնացած էր Հայկական Կիլիկիայի թագաւոր Հեթում Բ-ի քրոջ Մարիամի հետ, որից ունեցաւ մի որդի՝ Անդրոնիկ Գ, որ դահ բարձրացաւ 1328 թուին եւ կառավարեց մինչեւ 1341:

Բնական հարց է ծագում, արդեօք Գէորգ Խաչիկը, Թէոդոր Զաւուշը եւ ինքն Արտաւազդ Ռաբդասը այն անձերից չէի՞ն, որոնք ուղեկցել էին հայ արքայադստեր դէպի կայսերական մայրաքաղաքը: Մարիամի հետ էր եւ իր քոյրը, որ պիտի հարսնանար Արեւմտեան մի իշխանազունի, բայց ճանապարհին մեռաւ: Ռաբդաս մականունը թուում է ինձ որ այլ բան չէ քան կրճատում ռաբդոֆորոս բառի, որ նշանակում է մանկլաւիկ, (բառացի դաւազանակիր): Հաւանական է որ Խաչիկի եւ Զաւուշի նման Արտաւազդը եւս կայսերական պալատի պաշտօնեաներից էր: Հայ անունները, որ տակաւին չեն կորցրել այս անձերը, նշան են, որ նոր են եկել արեւելքից եւ հնաբնակ չեն Բիւզանդիայում:

Այսպիսով ստոյգ գիտութեանց այն ջահը, որ տեսնում ենք Անանիա Շիրակացու ձեռքին 7րդ դարում, և որը Բագրատի միջոցով, Թերեւս, անցաւ Լեւոն փիլիսոփային եւ փայլեց Մագնաւրա պալատում, տակաւին առկայծում էր մի համեստ հայ շրջանում Բիւզանդիայի մայրաքաղքի մէջ կայսրութեան կործանման նախօրէին:

1 **P. Tannery**, Manuel Moshopoulos et Nicolas Rhabdas, Bulletin des Sciences Mathématiques; 2 Série, 8. 1884.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
ԵՐԿՈՒ ԽՕՍՔ	7
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ	9
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	17
ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՓԱՌՔԸ	49
ՀԱՅ ՀԻՆ ՇԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ	157
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵՀԱՆՔԸ	206
ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ	223
ԱՐՏԱՒԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ	297
ՎԱՐԴ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ	320
ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԳԱՀԻ ՎՐԱՑ	354
ՎԱՍԻԼ ՀԱՅԱԶՆ	452
ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ ԲԻԶԱՆԴԻԱՅՈՒՄ	501

Impr. de Navarre. 11. rue des Cordelières. Paris (13e)